



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am

Հ. ՈՒ. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

**ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌԻ
ԱՌՆՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ
ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ
(1920—1980 թթ.)**

Գրախոս՝ Հայկ. ՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի
հայ գաղթավարների պատմության բաժին

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մելիքսեթյան Հ. ՌԻ.

Մ511 Հայրենիք—սփյուռք առնչությունները և հայրենա-
դարձությունը (1920—1980 թթ.).— Ծր.: Երևանի
համալս. հրատ., 1985.—476 էջ.

Վերնախորագր.՝ Երևանի. պետ. համալս.

Աշխատության մեջ լուսարանվում են թուրքական կառավարու-
թյան կազմակերպած հայոց եղեռնի ողբերգական իրադարձու-
թյունները և հայկական սփյուռքի կազմավորման հարցերը: Ցույց
է տրվում սովետական իշխանության մտահոգությունը հայ
գաղթականների ճակատագրով և նրանց որոշ մասի հայրենա-
դարձության իրազործումը, ինչպես նաև դրա նկատմամբ քա-
ղական տարրեր հոսանքների վերաբերմունքը: Այդ կասկածա-
թյամբ քննադատվում է նաև արևմտյան տերությունների և Ազգե-
րի լիգայի քաղաքականությունը: Միաժամանակ շարադրվում է
հայրենիք—սփյուռք առնչությունների պատմությունը:

0505040000—33 64—85
704(02)—85

ԳՄԴ 63.3(22) + 63.3(22Մ)

МЕЛИКСЕТЯН ОВИК УХТАНЕСОВИЧ
ВЗАИМОСВЯЗЬ РОДИНА—СПЮРК И
РЕПАТРИАЦИЯ
(1920—1980 гг.)
(На армянском языке)
Издательство Ереванского университета
Ереван—1985

Հայաստանը գտնվելով Եվրոպայի և Ասիայի սահմանա-
գծում՝ վաղուց ի վեր եղել է բազում զավթիչների ավերիչ աս-
պատակությունների անեղ ուղիղ ազդեցության տարածք: Թեպետ հայ ժողովր-
դի պատմությունը հարուստ է օտար նվաճողների դեմ մղված
հերոսական պայքարի բազմաթիվ դրվագներով, սակայն երկար
ժամանակ զրկված լինելով սեփական պետականությունից, ան-
խրճա հրի ու սրի է մատնվել հայոց աշխարհը, կոտորվել է
բնակչությունը, քաղաքները նրա ունեցվածքը, ամայացվել եր-
կիրը:

Այդպիսի դժնդակ պայմաններում հայ ժողովրդի որոշ մա-
սը հաճախ հարկադրված է եղել բռնի կամ կամովին հեռանալ
հարազատ երկրից, գաղթել դեպի օտար հորիզոններ: Ժամա-
նակի ընթացքում այդպես են հիմնադրվել հայկական գաղթ-
օջախներն աշխարհի տարբեր անկյուններում, մինչդեռ հայկա-
կան լեռնաշխարհում աստիճանաբար հաստատվել են մահ-
մեղական ցեղերը:

Երկրի ավերումներն ու ժողովրդի արտագաղթը պարբերա-
կան բնույթ ստացան հատկապես XVI դարից սկսած, երբ
Հայաստանը կռվախնձոր դարձավ երկու գիշատիչ հարևանների՝
Օսմանյան Թուրքիայի և Սեֆևյան Պարսկաստանի միջև: Մոտ
մեկուկես դար ենթարկվելով նրանց կործանարար ասպատա-
կումներին՝ 1639 թվականին Հայաստանը բաժանվեց երկու մա-
սի: Նրա մեծագույն՝ արևմտյան մասն անցավ Թուրքիային, իսկ
արևելյանը՝ Պարսկաստանին:

1828 թ. Արևելյան Հայաստանը մտավ Ռուսաստանի տի-
րապետության տակ և հայության այդ հատվածը, իր բախտն
ընդմիջտ կապելով ռուս ժողովրդի հետ, Հոկտեմբերյան սոցիա-
լիստական մեծ հեղափոխության շնորհիվ ձեռք բերեց ազգա-
յին ու սոցիալական վերածննդի լայն հնարավորություններ:

Իժբախտաբար, հայ ժողովրդի մի զգալի հատվածը մնաց բուրժուական բռնակալության նիրաններում և շարունակում էր ենթարկվել դաժան հալածանքների: Թուրքական շովինիստները, հետևողականորեն կենսագործելով համաբուրժական-համամահմեդական ֆաղափական որոշակի ծրագիր, պարբերաբար կազմակերպվող կոտորածներով, կրոնափոխությամբ ու բռնագաղթեցումներով աստիճանաբար նվազեցնում էին հայության թիվը նրա իսկ պատմական հայրենիքում:

Իայց այն, ինչ կատարվեց առաջին համաշխարհային պատերազմի թոհուրոհի օրերին, իր նախընթացը շունեք համաշխարհային պատմության մեջ: Սգովելով պատերազմի խառնակ իրադրությունից՝ երիտթուրքական բարբարոսներն իրականացրին ահավոր ցեղասպանություն՝ ուղղակի հայազրկելով Արևմտահայաստանը: Զանգվածային բռնագաղթի միջոցով նրանք դեպի արաբական անապատներն արտասեղցին հայ ժողովրդի արևմրայան հատվածին և այդ ընթացքում ոչնչացրին մեկուկես միլիոն հայերի:

Իրենց հայրենի օջախներից բռնությամբ զրկված հարյուր հազարավոր հայ մանուկներ, կանայք ու ծերունիներ, անցնելով մարդկության պատմության մեջ իր նախընթացը շունեցած գող-գոթայով և արաբական անապատներում հազարավոր նոր գոհներ տալով՝ ցրվեցին դեպի տարբեր երկրներ, բազմապատկելով ու սովորացնելով հայկական նախկին գաղթօջախները: Առաջին համաշխարհային պատերազմից հետո այդպես կազմավորվեց հայկական «Յրոնքը» կամ «Սփյուռքը»: Այսուհետև մեր լեզվի մեջ մտավ մի տերմին, որը մեզ համար ունի աշխարհագրական ու ֆաղափական որոշակի իմաստ, արտահայտում է հայ ժողովրդի աշխարհասփյուռ վիճակը:

Այսպիսով, ժամանակակից հայկական սփյուռքը, կազմավորվելով առաջին համաշխարհային պատերազմից անմիջապես հետո, արդեն 20-ական թվականներին ստացավ որոշակի դիմագիծ: Սակայն, բնականաբար, այն անփոփոխ ու փարացած վիճակում չի մնացել: Տարբեր երևույթների, իրադարձությունների ու պատճառների հետևանքով սփյուռքը անընդհատ ենթարկվել է փոփոխությունների, այսպես ասած՝ մակընթացությունների ու տեղափոխությունների: Ժամանակի հոլովությամբ նվազել ու խամրել են որոշ գաղթօջախներ, գոյացել ու աշխուժացել են նորերը: Այսպես, վերջին տասնամյակներում աստիճանաբար

ձևավորվեցին ու սովորացան Կանադայի, Ավստրալիայի, Քուվեյթի և այլ հայկական համայնքները: 60—70-ական թվականներին նոր վերածնունդ ապրեցին Անգլիայի, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի հայկական գաղթավայրերը՝ հատկապես ի հաշիվ ազգային դիմագիծը համեմատաբար լավ պահպանած Մերձավոր արևելքի հայության դեպի այդ երկրները կատարած գաղթերի:

20-ական թվականների սկզբին արևմտահայության տարագիր բեկորները, որոնք հայրենագուրկ դեգերում էին օտար ու անհյուրընկալ հորիզոններում, միամտորեն կարծում էին, թե պատերազմից հետո, մեծ տերությունները, որոնք «ազատության ու անկախության» վերաբերյալ բազում խոստումներ էին շոյել նրանց, հաշվի կառնեն հայերի ծառայություններն ու տառապանքները և հնարավորություն կստեղծեն վերադառնալու հայրենիք: Սակայն դրանք սին պատրանքներ էին, փանի որ իմպերիալիստական տերություններին հետաքրքրում էր ոչ թե ննչված ու իրավազրկված ժողովուրդների ճակատագիրը, այլ իրենց շահը: Հայ գաղթականության վիճակը շարունակում էր մնալ ծանր ու անորոշ: Մի շարք երկրներից հայ տարագիրներն ուղղակի զանգվածաբար դուրս էին մղվում և ոչ մի տեղ հաստատուն ասպնչականություն չէին կարողանում գտնել: Այդ պայմաններում բոլոր «բարեկամներից» խաբված ու լված սփյուռքահայերի համար նուսալի ապավեն դարձավ 1920 թ. նոյեմբերին Արևելյան Հայաստանում հաղթանակած սովետական իշխանությունը:

Հայաստանի սովետական կառավարությունը, որպես աշխատավոր զանգվածների շահերի իսկական պաշտպան, իր գոյության հենց սկզբից երբեք անտարբեր չմնաց դժնդակ պայմաններում գտնվող և օգնություն հայցող պանդուխտ հայերի դառն ճակատագրի հանդեպ: Սովետական կառավարությունը ելնում էր այն պարզ փաստից, որ այն ժամանակ Հայաստանի սահմաններից դուրս գտնվում էր ավելի մեծ թվով հայություն, քան ներսում, և որի ննչող մեծամասնությունը կազմում էին աշխատավորական տարրերը:

Ի դեպ, անհրաժեշտ ենք համարում շեշտել, որ, ցավոք, մինչև այժմ էլ կան մարդիկ, ովքեր անտեղյակ լինելով հայ ժողովրդի պատմությանը, սփյուռքահայերին համարում են փաղափական վտարանդիներ: Միեղդե՛ր հանրահայտ է, որ վտարանդիները նրանք են, ովքեր թշնամի լինելով տվյալ երկրում հաս-

առաված սոցիալ-ֆաղափական կարգին, հետևում են հայրենիքից, անցնում արտասահման և շարունակում տարբեր միջոցներով պայքարել նրա դեմ: Հայ ժողովրդի 1/3-ից ավելին հանդիսացող սփյուռֆահայ ավելի քան երկու միլիոնանոց զանգվածը կազմված է ոչ թե ֆաղափական վտարանդիներից, թեպետ նրանում կան նաև աննշան թվով իսկապես վտարանդիներ, այլ պատմական անավոր անարդարության՝ երիտթուրքերի կուսակցության ու կառավարության, իսկ ապա նաև ֆեմալականների կազմակերպած ցեղասպանության պնմեղ զոհերից: Նրանք, զրկվելով հայրենի օջախներից, բռնագաղթի միջոցով սփռվել են աշխարհով մեկ, բայց շարունակում են իրենց ամենամիջրական իղձը համարել հայրենիք վերադարձը, մայր հայրենիքում համախմբումը: Հետևապես նրանց չի կարելի նույնացնել ֆաղափական վտարանդիների հետ:

Սփյուռֆահայությունը, իր բացարձակ մեծամասնությամբ, հակառակ հայրենի հողից բռնությամբ կտրված լինելուն, հակառակ այն բանին, որ բաժան-բաժան է, ցրված աշխարհի տարբեր կողմերում և ենթակա զանազան ազդեցությունների, այնուամենայնիվ շարունակում է մնալ որպես հայ ժողովրդի անկապտելի մասը: Կերմարդկային ճիգերի գնով նա ձգտում է պահպանել իր ազգային դիմագիծը, մշտապես լինել հայրենիքի հետ, գորավիզ նրան, հպարտ նրանով:

Իրենց հայրենիքի մի մասում սովետական իշխանության հաստատումից անմիջապես հետո, հայրենաբաղձ սփյուռֆահայ աշխատավորները դասակարգային հստակ տրամաբանությամբ վճռականորեն դիմուղղվեցին դեպի Սովետական Հայաստան: Հենց սկզբից նրանք Սովետական Հայաստանը համարեցին իրենց հուսալի հանգրվանը, անվերապահորեն կանգնեցին նրա պաշտպանության դիրքերում և ցանկություն հայտնեցին ներգաղթելու հայության ազատագրված ու սոցիալիզմի ուղին թևակոխած հայրենիք:

Ահա այդ ամենը հաշվի առնելով, Հայաստանի կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը հենց սկզբից լրջորեն մտահոգվեցին արևմտահայության տարագիր բեկորների նակատագրով, հետևողականորեն անդրադարձնելով այն բարցին, թե դեպի ո՞ր են բեկվում սփյուռֆահայ զանգվածների մտքերն ու հայացքները, ի՞նչ անցողորձեր են կատարվում նրանց մեջ և ինչպե՞ս կարելի է թեթևացնել նրանց վի-

նակը՝ հնարավորության սահմաններում կազմակերպելով նաև նրանց հայրենադարձությունը:

Սփյուռֆահայերի մեջ Սովետական Հայաստան ներգաղթելու ձգտումը առավել հրամայական դարձավ 1922—1923 թթ. տեղի ունեցած Լոզանի կոնֆերանսից հետո, ուր արևմտյան տերություններն ու ֆեմալական Քուրֆիան փորձեցին վերջնականապես գերեզմանել իրենց կողմից նենգափոխված հայկական հարցը՝ այն ձևականորեն կապելով Ազգերի լիգայի տնօրենությանը:

Ինչ խոսք, որ սփյուռֆահայերի դեպի հայրենիք բեկվելու գործում հսկայական դեր ու նշանակություն ունեցան նաև Սովետական Հայաստանում կուտակված տասնյակ հազարավոր արևմտահայ գաղթականների, որք ու անապաստան երեխաների նկատմամբ սովետական կառավարության ցուցաբերած շեղ հոգատարությունը, նրանց հարցի արմատական լուծման և սփյուռֆահայերի հետ սերտ կապեր հաստատելու ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները:

Սովետական Հայաստանի գոյությունը արմատական բեկում մտցրեց հայ ժողովրդի բազմադարյան պատմության մեջ: Այն ոչ միայն ազատարար նշանակություն ունեցավ ֆիզիկական բնաջնջման անմիջական սպառնալիքից փրկված արևելահայության կյանքում, այլև լուսատու փարոս դարձավ դաժան նակատագրի բերումով աշխարհով մեկ սփռված գաղութահայ աշխատավորության համար: Սովետական Հայաստանը հենց սկզբից ոչ միայն իր հնարավորությունների սահմաններում իրականացրեց սփյուռֆահայ աշխատավորների առավել դժվարին կացության մեջ զտնվողների հայրենադարձությունը, այլև բազմաթիվ միջոցներով, ու հենց իր գոյության փաստով, օգնեց գաղթաշխարհում ազգապահպանության դժվարին գործին, գորավիզ եղավ ապագայնացման դեմ սփյուռֆահայ զանգվածների մղած պայքարին:

Հայ ժողովուրդը, որը դարեր շարունակ տեսել ու զգացել էր միայն կոտորածների և բռնագաղթերի սարսափներն ու դառնությունները, սովետական կարգերի շնորհիվ, եղբայրական սովետական մյուս ժողովուրդների, առաջին հերթին ռուս մեծ ժողովրդի բազմակողմանի օգնության շնորհիվ, հնարավորություն ստացավ հավաքվելու իր նոր, սոցիալիստական հայրենիքում: Իրանում ակնառու կերպով դրսևորվեցին սոցիալիստական սիս-

տեմի մեծ առավելությունները, նախկինում ամեն կողմից հալածված ու բզկտված հայ ժողովրդի նկատմամբ կոմունիստական կուսակցության լենինյան ազգային ֆաղափականության կենսագործման փայլուն վկայությունն ու էաստատումը:

«Կատմության դասերն ու փորձը միշտ էլ խորիմաստ են և ուսանելի: Հայ գաղթականության հարյուրամյակների պատմության փորձն ու դասերը վկայում են, որ վերջիվերջո, վաղ թե ուշ, սփյուռֆահայությունը, որքան էլ հայրենասեր ու ավանդապան լինի, դատապարտված է անխուսափելի ուժացման և անհետացման: Հայկական գաղթօջախները, ցրված լինելով աշխարհի բոլոր կողմերում, ենթակա են նրանց ընդգրկած երկրների անխուսափելի ազդեցություններին, որոնք ամեն ժամ, ամեն օր նրանց տանում են դեպի ձուլում: Ուստի գաղութահայության փրկության միակ ու իրական ուղին հայրենադարձությունն է, մայր հայրենիքում ապրող հայության հետ վերամիավորումը, ազգանավաճումը:

Այսպիսով, գաղութահայ ազգային կյանքի վրա որոշակի դեր ու ազդեցություն ունի Սովետական Հայաստանը, հայրենի հողի վրա ապրող ժողովուրդը: Որքան մեծ լինի մայր հայրենիքում ապրող հայոց թիվը, որքան զարգացած ու զորեղ լինի նրա տնտեսությունը, ծաղկուն մշակույթը, այնքան ավելի կծավալվեն գաղութների կապերը հայրենի երկրի հետ, այնքան ավելի կնարստանա ու բովանդակալից կդառնա նրանց ազգային հասարակական և մշակութային կյանքը, ուստի և այնքան ուշ կկատարվի ձուլումը:

Ա.Ն.ա թե ինչու, ինչպես սովետական կառավարությունը, այնպես էլ սփյուռֆահայ բոլոր առաջադիմական, հայրենասեր ուժերը ամեն կերպ շահագրգռված են մայր հայրենիքի և ըսփյուռֆի միջև սերտ կապերի հաստատմամբ ու զարգացմամբ, անվերապահորեն պաշտպանում են հայրենադարձության գաղափարը, աշխատում որքան կարելի է ավելի շատ տարագիրների ներգաղթի միջոցով փոխադրել հայրենիք: Սփյուռֆում ներգաղթի դեմ հանդես են գալիս դաշնակցությունը և նրա հետ կապված հետադիմական խավերը, դրա մեջ տեսնելով իրենց վերջնական մահավերջը:

Աշխարհով մեկ սփռված տարագիր հայության հայրենադարձությունը, որն սկսվել է դեռևս սովետական իշխանության արշալույսին և շարունակվում է մինչև օրս, սոցիալիզմի շնորհիվ

մեր ժողովրդի ձեռք բերած մեծագույն նվաճումներից մեկն է, պատմական բազմակերպական մի իրադարձություն մեր բազմադարյան պատմության մեջ: Հայրենադարձությունը հայ ժողովրդի ազգանավաճման, ազգային կոնսոլիդացիայի ու հետագա զարգացման կարևոր գործոններից մեկն է:

Սակայն պետք է խոստովանել, որ ինչպես ընդհանրապես սփյուռֆահայության պատմությունը, այնպես էլ մասնավորապես հայրենիք—սփյուռֆ առնչությունների և սփյուռֆահայերի հայրենադարձության պատմությունը մինչև այժմ բավարարուսումնասիրության չեն ենթարկվել և գիտականորեն լուսաբանվել: Սգտվելով այդ հանգամանքից, բուրժուա-ազգայնական, եվրոպական, ամերիկյան ու թուրքական պատմագրությունը և պետական գործիչները հանախ միտումնավոր կերպով խեղաբյուրել են էարցերը, չարախոսել սովետական իշխանության հասցեին, զրպարտել նրան: Այդ գործում հատկապես ակտիվորեն են հանդես գալիս Հայաստանից ընդմիշտ վտարված բուրժուա-ազգայնական դաշնակցություն կուսակցության գրչակները: Նրանք, կամայականորեն կեղծելով փաստերը, փորձում են մեղադրել սովետական կառավարությանը սփյուռֆահայության նկատմամբ անտարբերության ու աննոգատարության մեջ:

Հայրենիք—սփյուռֆ առնչությունների և հայրենադարձության պատմության լուսաբանումը ոչ միայն բացահայտում է կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության հոգատարությունը հայ տարագիրների նկատմամբ, այլև մերկացնում է դաշնակների ու նրանց օտարերկրյա հովանավորների լարախաղացությունների էությունն ու նպատակը:

Այստեղից էլ բխում է վերոհիշյալ պրոբլեմների ֆաղափական ու պատմագիտական կարևոր նշանակությունը, դրանց լուսաբանման խիստ անհրաժեշտությունն ու կարևորությունը:

Եթե սփյուռֆահայերի հայրենադարձության պատմությունը, մասնավորապես 1920—1940 թվականների ժամանակահատվածը, ինչ-որ չափով լուսաբանվել է, ապա 1946—1948 թվականների և հետագա տարիների հայրենադարձության պատմությունը միայն թուուցիկ կերպով է շոշափվել ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի կողմից հրատարակված «Հայ ժողովրդի պատմություն» բազմահատորյակի 8-րդ հատորում¹, «ՀԿ պատ-

¹ «Հայ ժողովրդի պատմություն», Կ. 8, «Հայ ժողովուրդը Հայրենական

մաթյան ուրվագծերում»² և որոշ մենագրություններում ու հոդվածներում³: Առանց սխալվելու կարելի է ասել, որ ուղղակի բաց է մնացել հայրենիք—սփյուռք առնչությունների ավելի քան 60-ամյա պատմությունը՝ գրեթե երբեք չզառնալով հատուկ ուսումնասիրության նյութ:

Ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին տեղի ունեցած սփյուռքահայ աշխատավորների հայրենադարձությունը որոշ շափով լուսարանվել է ՀՍԽՀ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի կողմից հրատարակված «Խորհրդային Հայաստան—1920—1925» ժողովածուի մեջ⁴, Հովհ. Հակոբյանի «Խորհրդային Հայաստան» գրում⁵, Ս. Խոլզարյանի «Ներգաղթը և գաղթականության բնակեցումը Հայաստանում» հոդվածում⁶, ինչպես նաև այդ ժամանակաշրջանի պատմությանը նվիրված մի շարք այլ մենագրություններում և սովետահայ ու սփյուռքահայ պարբերական մամուլում, գիտական հանդեսներում⁷:

Մեծ պատերազմի և ետպատերազմյան կոմունիստական շինարարության տարիներին (1941—1965)», ՀՍՄՀ ԳԱ հրատ., Երևան, 1970:

² «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր», «Հայաստան» հրատ., Երևան, 1967:

³ Կ. Յ. Ավագյան, Հայկական ՍՍՀ բնակչությունը, Երևանի համալսարանի հրատ., Երևան, 1975, Ն. Սարգսյան, ՀԿԿ և կառավարության միջոցառումները սփյուռքահայերի հայրենադարձությունը նախապատրաստելու ուղղությամբ (1946—1948 թթ.), տե՛ս «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 1983 թ., № 1, էջ 152—159, Նույնի՝ «ՀԿԿ գործունեությունը սփյուռքահայերի հայրենադարձության կազմակերպման և նրանց սոցիալիստական շինարարության մեջ ներգրավելու ուղղությամբ (1946—1948)», տե՛ս ՀՍՄՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», ամսագիր, 1983 թ., № 8, էջ 13—19:

⁴ «Խորհրդային Հայաստան—հինգ տարի՝ 1920—1925», հոդվածների ժողովածու, հրատ. ՀՍԽՀ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի, Երևան, 1926:

⁵ Հովհ. Հակոբյան, Խորհրդային Հայաստան (տպավորություններ և ուսումնասիրություններ), Փարիզ, 1929:

⁶ Ս. Խոլզարյան, Ներգաղթը և գաղթականության բնակեցումը Հայաստանում, տե՛ս «Նոր ուղի», ամսագիր, Երևան, 1929 թ., № 6, էջ 122—131:

⁷ Ա. Մ. Հակոբյան, Սովետական Հայաստանը ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանում (1921—1925 թթ.), ՀՍՄՀ ԳԱ տպուկ, Երևան, 1955, էջ 315—317: Շ. Վ. Խարմանդարյան, Армјанская ССР в первый год новой экономической политики, изд. АН Арм. ССР, Ереван, 1955, стр. 144—151. Վ. Ն. Ներկարյան, Հայաստանի կոմունիստական պարտիան երկրի ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանում, Հայպետհրատ, Երևան, 1956, էջ 279—284: Հ. Մ. Էլիքեկյան, Վաս-

Նախապատերազմյան հնգամյակների տարիներին կառավարված հայրենադարձությունը շոշափվել է նաև «Ուրվագծեր Սովետական Հայաստանի պատմության» պրակներում⁸, «Հայ ժողովրդի պատմություն» բազմահատորյակի 7-րդ հատորում⁹ և «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր»¹⁰ կոլեկտիվ աշխատություններում: Սակայն վերոհիշյալ աշխատություններից ոչ մեկը նպատակ չի ունեցել ամբողջական ձևով ներկայացնել սփյուռքահայերի հայրենադարձության պատմությունը և միայն կողմնակի ու հպանցիկ կերպով է անդրադարձել դրան:

Այդ ժամանակաշրջանի հայրենադարձության և նրան առնչվող հարակից այլ հարցերի ամբողջական պատմությունը շարադրելու առաջին փորձը կատարվել է մեր կողմից հրատարակված մի շարք հոդվածներում¹¹ և «Արևմտահայերի բռնագաղ-

պտրականի հայերը Միջագետքում և նրանց վերադարձը Սովետական Հայաստան, տե՛ս ՀՍՄՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ. սերիա), Երևան, 1949 թ., № 2, էջ 17—26 և այլն:

⁸ Հ. Մ. Էլիքեկյան, Ա. Մ. Հակոբյան, Ուրվագծեր Սովետական Հայաստանի պատմության, պրակ 1-ին, ՀՍՄՀ ԳԱ հրատ., Երևան, 1954, Վ. Գ. Մելիքեկյան, Հ. Ս. Կարապետյան, Ուրվագծեր Սովետական Հայաստանի պատմության, պրակ 2-րդ, ՀՍՄՀ ԳԱ հրատ., Երևան, 1958, Մ. Պ. Աղայան, Ն. Մ. Խալեյան, Ուրվագծեր Սովետական Հայաստանի պատմության, պրակ 3-րդ, ՀՍՄՀ ԳԱ հրատ., Երևան, 1960:

⁹ «Հայ ժողովրդի պատմություն», հ. 7, «Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում. ՀՍՄՀ սոցիալիստական շինարարության ժամանակաշրջանում (1917—1941)», ՀՍՄՀ ԳԱ հրատ., Երևան, 1967:

¹⁰ «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր», «Հայաստան» հրատ., Երևան, 1967:

¹¹ Հ. Ու. Մելիքեկյան, 204-ը և նրա դերը հայրենիքի հետ սփյուռքահայ աշխատավորների կապերի ամրապնդման գործում, տե՛ս ՀՍՄՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ. սերիա), Երևան, 1959 թ., № 8, էջ 31—48, Նույնի՝ «Սովետական իշխանության առաջին քաջերը հայ գաղթականության հարցի լուծման ուղղությամբ (1921—1922)», տե՛ս ՀՍՄՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ. սերիա), Երևան, 1960 թ., № 3, էջ 3—20, Նույնի՝ «Հայ գաղթականության հարցը Ազգերի լիգայում», տե՛ս ՀՍՄՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ. սերիա), Երևան, 1961 թ., № 9, էջ 43—60, Նույնի՝ «Սփյուռքահայերի հայրենադարձությունը Սովետական Հայաստան 1921—1925 թթ.», տե՛ս ՀՍՄՀ ԳԱ «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 1961 թ., № 2, էջ 142—149:

թը և սփյուտֆահայերի հայրենադարձությունը Սովետական Հաստան (1915—1940 թթ.)» մենագրության մեջ¹²։

Ուղղակի պետք է խոստովանել, որ ոչ միայն Լայրենիֆ—սփյուտֆ առնչությունների և հայրենադարձության պատմության լուսաբանումը, այլև ընդհանրապես սփյուտֆահայության պատմության ուսումնասիրությունը դեռևս գոհացուցիչ վիճակի չի հասցված։ Սովետահայ պատմաբանները միայն վերջին քանամյակում են ձեռնամուխ եղել այդ պրոբլեմների արմատական հետազոտմանը, սակայն մինչև այժմ արվածը դեռևս բավարար համարել չի կարելի։ Ներկայումս հայ ժողովրդի մի զգալի հատվածը շարունակում է մնալ գաղթաշխարհում, իր հայրենիքից դուրս։ Մտա հինգ տասնյակ երկրներում կան հայկական համայնքներ, որոնք ունեն որոշակի ազգային կյանք, ֆաղաֆական կուսակցություններ, կրթական հաստատություններ, մշակութային, բարեգործական, հայրենակցական, երիտասարդական, մարզական և այլ բնույթի կազմակերպություններ ու միություններ, պատկանելի ֆանակ կազմող պարբերական մամուլ և այլ հրատարակություններ, որոնց գործունեության լուսաբանումն ու գնահատումը պետք է լինի սովետահայ պատմագիտության կարևոր խնդիրներից մեկը։

Այս ամենը նկատի ունենալով, կարելի է վճռականորեն պնդել, որ բնավ հնարավոր չէ ներկայացնել հայ ժողովրդի ամբողջական ու գիտական պատմությունը առանց սփյուտֆահայության բազմաբովանդակ կյանքի ու անցած ուղու ընդգրկման, որքան էլ դա կապված լինի գործնական դժվարությունների հետ։

Այժմ Սովետական Հայաստանի տարբեր գիտական հիմնարկներ և զգալի թվով գիտնականներ ձեռնամուխ են եղել սփյուտֆահայության պատմության առանձին հարցերի ուսումնասիրությանը։ ՀՍՍՀ ԳԱ նախագահությանն առընթեր ստեղծվել է սփյուտֆահայ համայնքների և մշակույթի պատմության բաժին, որն անմիջականորեն զբաղված է հայկական գաղթօջախների պատմության ու մշակույթի ուսումնասիրությամբ։ Այդ պրոբլեմով են զբաղվում նաև ՀՍՍՀ ԳԱ պատմության և

¹² Հ. Ու. Մելիքեթյան, *Արևմտահայերի բռնազաղթը և սփյուտֆահայերի հայրենադարձությունը Սովետական Հայաստան (1915—1940 թթ.)*, Երևանի համալսարանի հրատ., Երևան, 1975։

արևելագիտության ինստիտուտների մի խումբ պատմաբաններ, ուստի պետք է հուսալ, որ առաջիկայում սփյուտֆահայության պատմության վերաբերյալ հրապարակ կգան գիտական լուրջ հետազոտություններ։

Սփյուտֆ—հայրենիք առնչությունների լուսաբանման ուղղությամբ մինչև այժմ մեզանում հրատարակված գործերից պետք է նշել ակնավոր կուսակցական և պետական գործիչներ Ալ. Մյասնիկյանի (Մարտունի) և Աշ. Հովհաննիսյանի մի շարք աշխատությունները, որոնք գործնական կարևոր նշանակություն ունենալուց բացի, որոշակի դեր խաղացին էական սփյուտֆագիտության զարգացման ուղղությամբ¹³։

«Կուսակցությունները գաղութահայության մեջ» խորագիրը կրող աշխատության մեջ Ալ. Մյասնիկյանը, իրեն հատուկ ֆաղաֆական նպատակասլացությամբ և գիտական խորությամբ, վերլուծելով սփյուտֆահայ կուսակցությունների գործունեությունը, անդրադառնում է նաև գաղութահայության սոցիալ-տնտեսական կյանքին, ցույց տալիս նրա հետագա պայքարի ճշմարիտ ուղին։

Աշ. Հովհաննիսյանը «Գաղութահայ խնդիրներ» գրքով, անդրադառնալով սփյուտֆահայության նկատմամբ տարվող ֆաղաֆականությանը և նշելով այդ բնագավառում եղած որոշակի թերությունները, ցույց է տալիս գաղութահայ աշխատավորության ինֆանկազմակերպման, հայրենիք—սփյուտֆ կապերի զարգացման գործնական ուղիները։

Ակնավոր մարֆսիստ-լենինյաններ Ալ. Մյասնիկյանի և Աշ. Հովհաննիսյանի վերոհիշյալ գործերից հետո, գրեթե չորս տասնամյակ, հատկապես անհատի պաշտամունքի տարիներին, սովետահայ պատմագրությունը սփյուտֆի վերաբերյալ որևի լուրջ գործ չտվեց։ Միայն ՍՄԿԿ XX համագումարից հետո սովետահայ պատմաբանները ձեռնարկեցին սփյուտֆի հարցերի ուսումնասիրության գործը։ Այդ բնագավառում երևան եկած առաջին ուսումնասիրություններից մեկը եղավ Ս. Գասպարյանի «Սփյուտֆահայ գաղթօջախներն այսօր» խորագրով աշխատու-

¹³ Ալ. Մյասնիկյան (Մարտունի), *Կուսակցությունները գաղութահայության մեջ*, Գեորգրատ, Բիֆլիս, 1924, նույնի՝ *Գաղութահայ աշխատավորությանը*, Նյու Յորք, 1923, Աշ. Հովհաննիսյան, *Գաղութահայ խնդիրներ*, Երևան, 1925։

թյունը¹⁴, որը, քեպետ համառոտ, այնուամենայնիվ ամփոփ տվյալներ է պարունակում հիմնական հայկական գաղթօջախների հասարակական-ֆաղափական կյանքի, կրթական օջախների և այլ հարցերի մասին: Ժամանակին այն լավ ընդունելություն գտավ, սակայն իր պարունակած տվյալներով ներկայումս բավականին հնացած է:

Սփյուռում գործող հայկական ֆաղափական կուսակցությունների, մասնավորապես երկրորդ համաշխարհային պատերազմից մինչև 60-ական թվականների կեսերն ընկած ժամանակաշրջանի գործունեության վերլուծությանն է նվիրված Լ. Խուրշուդյանի «Սփյուռահայ կուսակցությունները ժամանակակից էտապում»¹⁵ շահեկան, փաստական հարուստ նյութերով հագեցած և միանգամայն ճշմարտացի եզրահանգումներ պարունակող մենագրությունը: Ի դեպ, վերջաբանում հեղինակը համառոտակի անդրադարձել է նաև սփյուռահայերի 1946—1948 թվականների զանգվածային հայրենադարձությանը և դրան կատարված գաղութահայ կուսակցությունների դիրքորոշմանը:

Հայ գաղթավայրերի մինչև հոկտեմբերյան ժամանակաշրջանի պատմությունը շարադրելու հետ մեկտեղ Ա. Գ. Աբրահամյանը «Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության» երկրորդ հատորի վերջում¹⁶ թուցիկ ակնարկով անդրադարձել է Սովետական Հայաստանի և սփյուռահայության փոխհարաբերություններին, շոշափելով նաև սովետական իշխանության տարիներին՝ մինչև 1948 թվականը, կատարված հայրենադարձությունը:

Շտպատերազմյան տարիներին հանուն խաղաղության, դեմոկրատիայի և սոցիալական արդարության սփյուռահայության մղած պայքարը իր արտացոլումն է գտել Հր. Սիմոնյանի «Սփյուռահայությունը սոցիալ-ֆաղափական պայքարի ողբի-

ներում» ծավալուն մենագրության մեջ¹⁷: Որպես այդ գրքի կարևոր արժանիք պետք է նշել այն հանգամանքը, որ հեղինակն աշխատել է սփյուռահայ առաջադիմական ուժերի գործունեությունը բննարկել տեղաբնակ ժողովուրդների և նրանց ֆաղափական կազմակերպությունների հետ սերտ առնչության մեջ:

Սովետահայ պատմագրության մեջ որոշ ֆայլեր են կատարվել նաև սփյուռահայ առանձին գաղթօջախների ու նրանց հասարակական-ֆաղափական կյանքի ուսումնասիրության ուղղությամբ:

Սփյուռահայության ժամանակակից պատմության տարբեր կողմերն իրենց լուսաբանությունն են գտել Կ. Գալլաֆյանի երկու աշխատություններում՝ «Սփյուռահայ առաջադիմական կազմակերպությունները խաղաղության և դեմոկրատիայի համար մղվող պայքարում» և «Լիբանանահայ դեմոկրատական մամուլի պատմությունից»¹⁸: Կիտական որոշակի հետաքրքրություն է ներկայացնում հատկապես նրա վերջին մենագրությունը, որտեղ հեղինակը բնության ենթարկելով իբրևանահայ «Ժողովուրդի ձայն» և «Մեր նշանաբանն է հառաչ» կոմունիստական թերթերի գործունեությունը, նրանց միջոցով ցույց է տալիս իբրևանահայության տնտեսական, հասարակական-ֆաղափական ու մշակութային կյանքը:

Ուշագրավ գործ է նաև Ռ. Խաչատրյանի «Արտասահմանի հայ կոմունիստական մամուլի պատմությունից» մենագրությունը¹⁹: Նրանում հեղինակը Բուլղարիայի կոմկուսի կենտրոնական կուսակցական արխիվում հայտնաբերած նոր վավերագրերի և «Կարմիր լուրեր» արտասահմանյան առաջին կոմունիստական հայ թերթի նյութերով ցույց է տալիս բուլղարահայ աշխատավորության մասնակցությունը երկրի 1919—1923 թվականների հեղափոխական շարժումներին: Այդ իմաստով, կարելի է ասել, որ Ռ. Խաչատրյանի տվյալ աշխատությունը փաս-

¹⁴ Ա. Գասպարյան, *Սփյուռահայ գաղթօջախներն այսօր*, Հայպետհրատ, Երևան, 1962:

¹⁵ Լ. Ա. Խուրշուդյան, *Սփյուռահայ կուսակցությունները ժամանակակից էտապում*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1964:

¹⁶ Ա. Գ. Աբրահամյան, *Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության*, Հ. Ա., Հայպետհրատ, Երևան, 1964, Հ. Բ., «Հայաստան» հրատ., Երևան, 1967:

¹⁷ Հր. Սիմոնյան, *Սփյուռահայությունը սոցիալ-քաղաքական պայքարի ողբիներում*, «Հայաստան» հրատ., Երևան, 1968:

¹⁸ Կ. Գալլաֆյան, *Սփյուռահայ առաջադիմական կազմակերպությունները խաղաղության և դեմոկրատիայի համար մղվող պայքարում*, ՀՍՍՀ «Գիտելիք» ընկերության հրատ., Երևան, 1962, նույնի՝ «Լիբանանահայ դեմոկրատական մամուլի պատմությունից», «Հայաստան» հրատ., Երևան, 1964:

¹⁹ Ռ. Հ. Խաչատրյան, *Արտասահմանի հայ կոմունիստական մամուլի պատմությունից*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1960:

տարեւ մեզանում հիմք դրեց սփյուռֆահայ կոմունիստական շարժման պատմության գիտական ուսումնասիրությանը:

Սովետական պատմաբանների հատուկ հետաքրքրությանն են արժանացել արաբական արևելքի ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարին սփյուռֆահայերի մասնակցության հարցերը: Արաբական արևելքի երկրներում ապրող հայության սոցիալ-տնտեսական իրավիճակի, մշակութային ու կրթական կյանքի մասին բավականին հանգամանալից տեղեկություններ է տալիս Լ. Տեր-Մկրտչյանի «Հայերը արաբական արևելքի երկրներում» գիրքը²⁰:

Սփյուռֆահայ առաջադիմական ուժերին հակադիր գործում են նաև հետադիմական, արևմուտքի իմպերիալիստական տերությունների հետ գործակցող ուժեր, որոնց գործունեության մերկացմանն են նվիրված սովետահայ հեղինակների մի շարք աշխատություններ: Իրանցից պետք է նշել հատկապես Ջ. Կիրակոսյանի և Հ. Հակոբյանի «Պաշտակներն իմպերիալիզմի գործակալներն են Մերձավոր արևելքի երկրներում»²¹ և Ա. Թադևոսյանի «Իսլամական դատավարության հետքերով»²² գրքերը: Այդ աշխատություններում մերկացված է Մերձավոր արևելքում դաշնակների օտարերկրյա իմպերիալիստական հետախուզական գործակալություններին մատուցած ծառայությունը, նրանց հակահեղափոխական գործունեությունը, որն զգալի վնաս է պատճառում նաև մերձավորարևելյան ժողովուրդների հակաիմպերիալիստական ազգային-ազատագրական պայքարին:

Լիբանանյան և սիրիական ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի և դրանում հայության մասնակցության հարցերն են լուսաբանված նաև Ն. Հովհաննիսյանի և Հ. Թոփուզյանի մենագրություններում²³:

Եզրափակաբար գաղութի ներքին կյանքը, սոցիալ-տնտեսական

ու ֆաղաֆական դրույթները և հայ-եզրիստական հարաբերությունների պատմությունն է հետազոտված Հ. Թոփուզյանի «Եզրիստների հայկական գաղութի պատմություն (1805—1952)» ծավալուն և փաստալից մենագրության մեջ²⁴:

Հունաստանի հայ գաղութի 20-ական թվականների պատմությանն է նվիրված Պ. Կոկինոսի «Հունահայ գաղութի պատմությունից (1918—1927)» աշխատությունը²⁵: Գրքում հեղինակը մանրամասնորեն շարադրել է տվյալ ժամանակաշրջանում հունահայ աշխատավորության սոցիալ-տնտեսական վիճակը, ինչպես նաև առաջադիմական ուժերի, մասնավորապես հայ կոմունիստների ծավալած բազմակողմանի գործունեությունը հայ աշխատավորությանը երկրի հասարակական-ֆաղաֆական կյանքի մեջ ներգրավելու ուղղությամբ:

Իսլուր և հայ ժողովուրդների բարեկամության, օսմանյան լծի դեմ համատեղ պայքարի և հատկապես համաշխարհային երկրորդ պատերազմի տարիներին ֆաշիզմի դեմ ակտիվորեն մարտնչած բուլղարահայության հերոսական սխրագործություններն են լուսաբանված Ջ. Ղազարյանի «Հայ-բուլղարական բարեկամության պատմությունից» գրքովյալում²⁶:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ֆաշիզմի դեմ ֆրանսահայության մղած պայքարին են նվիրված Տ. Իրամբյանի «Ֆրանսահայ կոմունիստները դիմադրության տարիներին (1941—1944)» և «Նրանք մարտնչել են հանուն Ֆրանսիայի» գրքերը²⁷, որոնցում արխիվային փաստաթղթերի, պարբերական մամուլի և դիմադրության շարժման մասնակիցների հուշերի միջոցով հեղինակը ցույց է տվել Ֆրանսիայում ապրող հայերի անձնագոն պայքարը ֆաշիստական զավթիչների և նրանց վիշիական դրածոների լծից երկիրն ազատագրելու գործում:

²⁰ Л. Х. Тер-Мкртчян, Армяне в странах арабского востока, изд. «Наука», М., 1965.

²¹ Ջ. Կիրակոսյան, Հ. Հակոբյան, Պաշտակներն իմպերիալիզմի գործակալներն են Մերձավոր արևելքի երկրներում, Հայպետհրատ, Երևան, 1960:

²² Ա. Թ. Թադևոսյան Պամասկոսյան դատավարության հետքերով, «Հայաստան» հրատ., Երևան, 1968:

²³ Ն. Հ. Հովհաննիսյան, Ազգային-ազատագրական պայքարը Լիբանանում (1939—1958), ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1967, Հ. Թոփուզյան, Հայերի մասնակցությունը Սիրիայի և Լիբանանի ազգային-ազատագրական շարժումներին, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1968:

²⁴ Հ. Թ. Թոփուզյան, Եզրիստների հայկական գաղութի պատմություն (1805—1952), ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1978:

²⁵ Պ. Կոկինոս, Հունահայ գաղութի պատմությունից (1918—1927), ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1965:

²⁶ Ջ. Մ. Ղազարյան, Հայ-բուլղարական բարեկամության պատմությունից «Հայաստան» հրատ., Երևան, 1978:

²⁷ Տ. Ս. Իրամբյան, Ֆրանսահայ կոմունիստները դիմադրության տարիներին (1941—1944), «Միտք» հրատ., Երևան, 1967, նույնի «Они сражались за Францию», изд. Ереванского университета, Ереван, 1981.

Սփյուտֆահայ բուժուական փիլիսոփայության, հասարակական-ֆաղափական մտքի ուսումնասիրության ուղղությամբ որոշ գործ է կատարել Հ. Գաբրիելյանը «Ժամանակակից սփյուտֆահայ բուժուական ռեակցիոն փիլիսոփայությունը» մենագրության մեջ²⁸: Սակայն հարկ է նշել, որ հեղինակը հաճախ սուրբ է տվել գոեհիկ-սոցիոլոգիզմին և սփյուտֆահայ բուժ ֆաղափական կուսակցություններն ու հոսանքները, անշուշտ, բացառյալ կոմունիստներին, մտցվել են միևնույն կաղապարի մեջ: Չկա նրանց հայացքների նկատմամբ տարբերակված մոտեցում, որն, իհարկե, նիշտ չէ:

Սփյուտֆահայության սոցիալ-ֆաղափական պատմության մի շարք հարցեր են շոշափված նաև Գ. Գալոյանի «Անդրկովկասում սոցիալիստական հեղափոխության և կոմունիստական շինարարության պատմության կեղծարարության դեմ» աշխատության մեջ²⁹: Մենագրության մեջ հեղինակը փաստական հարուստ նյութերով մերկացրել է սոցիալիստական հեղափոխության և սովետական իշխանության հասցեին բուժուական պատմագրության գրպարտությունները, անդրադարձել է դեպի հայրենիք սփյուտֆահայ առաջադիմական ուժերի ունեցած դրական վերաբերմունքին:

Սփյուտֆահայության պատմության և սփյուտֆ-հայրենիք առնչությունների վերաբերյալ ուշագրավ մի շարք հոդվածներ են լույս տեսել նաև գիտական հանդեսներում ու պարբերական մամուլում, մասնավորապես Սփյուտֆահայության հետ մշակութային կապի կամիտի օրգաններ «Սովետական Հայաստան» ամսագրում և «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթում: Դրանցից կարելի է հիշատակել հատկապես Ս. Գասպարյանի «Սփյուտֆ հայրենիքի կողմին» և Գ. Խրլոպյանի «Սփյուտֆի մի ֆանի էիմնական խնդիրների մասին» հոդվածները³⁰:

²⁸ Հ. Գաբրիելյան, Ժամանակակից սփյուտֆահայ բուժուական ռեակցիոն փիլիսոփայությունը, Երևանի համալս. հրատ., Երևան, 1960:

²⁹ Գ. Գալոյան, Անդրկովկասում սոցիալիստական հեղափոխության և կոմունիստական շինարարության պատմության կեղծարարության դեմ, Հայպետհրատ, Երևան, 1961:

³⁰ Ս. Գասպարյան, Սփյուտֆ հայրենիքի կողմին, տե՛ս «Լենինյան ուղիով», ամսագիր, 1963 թ., № 5, էջ 44—52, և Գ. Խրլոպյան, Սփյուտֆի մի քանի հիմնական խնդիրների մասին, տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ. սերիա), 1963 թ., № 8, էջ 63—76:

Սփյուտֆահայ գաղթօջախները կատարած իր երկու ուղևորություններից ստացած անմիջական տպավորություններն է հաղորդել սովետահայ բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը «Քարավանները դեռ քայլում են» և «Խճանկար հոգու և ֆառտեզի գույներից» գրքերում³¹: Դրանցից առաջինը նվիրված է Մերձավոր արևելքի երկրների՝ մասնավորապես Լիբանանի, Սիրիայի և Եգիպտոսի, իսկ երկրորդը՝ ԱՄՆ-ի և Կանադայի հայկական գաղթօջախների կյանքին ու ազգապահպանման համար մղվող պայքարին:

Մեծ հայրենադարձության տարիներին Սովետական Հայաստան եկած և հայրենիքում իրենց նոր կյանքն ստեղծած բազմաթիվ բանվորների, գյուղացիների, բժիշկների, գիտնականների ու արվեստագետների մասին է պատմում գրող Ստեփան Կուրտիկյանի «Հայրենի հողի վրա» վավերագրական ակնարկների ժողովածուն³²:

Թեպետ հարևանցիորեն, այնուամենայնիվ, սփյուտֆահայության կյանքի, սփյուտֆ-հայրենիք կապերի հարցերին են անդրադարձել նաև Մանվել Բաբլոյանը³³ և Գեղամ Սևանը³⁴ ըսփյուտֆահայ մամուլին և գրականությանը վերաբերող իրենց ուսումնասիրություններում:

Հայկական գաղթօջախների պատմության ուսումնասիրության ուղղությամբ որոշակի աշխատանք է կատարվել նաև սփյուտֆահայ մտավորականների կողմից: Սփյուտֆում գործող հայրենակցական միությունները, հատկապես վերջին երեսնամյակում, լույս են բնծայել Արևմտյան Հայաստանի տարբեր գավառների ու ֆաղափների, ինչպես նաև առանձին գաղթօջախների պատմությունը լուսաբանող բազմաթիվ սովարածավալ հատորներ, որոնց մեջ զգալի տեղ է հատկացված նաև այդ ֆաղափների ու գավառների վերապրող սերունդների ժամանակակից

³¹ Ս. Կապուտիկյան, Քարավանները դեռ քայլում են, «Հայաստան» հրատ., Երևան, 1964, «Խճանկար հոգու և քարտեզի գույներից», «Սովետական գրող» հրատ., Երևան, 1976:

³² Ստ. Կուրտիկյան, Հայրենի հողի վրա, Հայպետհրատ, Երևան, 1960:

³³ Մ. Բաբլոյան, Սփյուտֆահայ մամուլի պատմությունից. «Անի» (1946—1955), ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1965:

³⁴ Գեղամ Սևան, Սփյուտֆահայ գրականության պատմության ուղիղ գծեր (1920—1945), ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1980:

գործունեությանը քե՛ սփյուռփում և քե՛ հայրենիքում³⁵։

Հայ գաղթականության և գաղթօջախների պատմության ուսումնասիրության³⁶ բնագավառում մեծ աշխատանք է կատարել հատկապես սփյուռփահայ բազմավաստակ պատմաբան Ա. Ալպոյանյանը։ Առանձնապես մեծաճանակ փաստական նյութ է պարունակում նրա «Պատմություն հայ գաղթականության» եռահատոր աշխատությունը³⁶։ Արժեքավոր է նաև նույն հեղինակի «Արարական Միացյալ Հանրապետության Եգիպտոսի նահանգը և հայերը» մենագրությունը³⁷։

Սփյուռփահայության պատմության և սփյուռփ—հայրենիք փոխհարաբերությունների լուսարանման իմաստով ուշագրավ աշխատություն է Ա. Անդրեասյանի «Սփյուռփը և հայրենիքը» գիրքը³⁸, որտեղ հեղինակը հանգամանորեն վերլուծում է սփյուռփահայության տրամադրությունները, նոր սերնդի հոգեբանական դիմափոխությունը և այլ երևույթներ։ Հեղինակը իրավացիորեն ընդգծում է սփյուռփ—հայրենիք կապերի ամրապլընդման կենսական կարևորությունը ազգապահպանման դժվարին

³⁵ Ա. Ալպոյանյան, Պատմություն Եվրոպիո հայոց։ Տեղագրական և ազգագրական տեղեկություններով, Հրատ. Նյու Յորքի Եվրոպիո կրթասիրաց միության, Գահիրե, 1952։ Նույնի՝ Պատմություն Մալաթիո հայոց։ Տեղագրական, պատմական և ազգագրական տեղեկություններով։ Պեյրուս, 1961։ «Պատմություն Արևմտյան հայոց», աշխատասիրեց և խմբագրեց Վեորգ Ա. Սարաֆյան, հ. Ա—Բ, Լոս Անձեղես—Գալիֆորնիա, 1953։ «Հուշարձան եղզդատցիներու (Ենդկաթ)», աշխատակցությունը տիկ. Նուրիցա Մ. Փիլիպոսյանի և Ավետիս Կեսեմբյանի (Ա. Կապենց), խմբ. Վահե Հայկ, Յրեզնո, 1955։ Վահե Հայկ, Խարբերդ և անոր ոսկեղեն դաշտը։ Հուշամատյան ազգային, պատմական, մշակութային և ազգագրական, Յրեզնո, ԱՄՆ, 1957։ Պատմություն Տարոնի աշխարհի, Պեյրուս, 1957, Գ. Երևանյան, Պատմություն Չարսանձակի հայոց, Պեյրուս, 1956։ Պատմություն հայոց Արարկիրի, կազմեց և երկասիրեց Ա. Լ. Փոլաթյան, Նյու Յորք, 1969։ Ս. Գ. Փաշանյան, Հուշամատյան Ռոդոստոյի հայերուն (1906—1922), Պեյրուս, 1971։ Ս. Հ. Վարժապետյան, Հայերը Լիբանանի մեջ, հ. 1, Պեյրուս, 1957, հ. 2—3, Պեյրուս, 1980։ Անն Չորմիսյան, Համայնապատկեր արևմտահայոց մեկ դարու պատմության, հ. Ա—Ե, հ. Գ, Հայ սփյուռքը, գիրք Ա, Յրանսահայերու պատմությունը, Պեյրուս, 1975, և այլն։

³⁶ Ա. Ալպոյանյան, Պատմություն հայ գաղթականության, հայերու ցրումը աշխարհի զանազան մասերը, հ. Ա, Գահիրե, 1941, հ. Բ, Գահիրե, 1955, հ. Գ, Գահիրե, 1961։

³⁷ Ա. Ալպոյանյան, Արարական Միացյալ Հանրապետության Եգիպտոսի նահանգը և հայերը, Գահիրե, 1960։

³⁸ Ա. Անդրեասյան, Սփյուռքը և հայրենիքը, հրատ. «Զարթոնք» օրաթերթի, Պեյրուս, 1962։

պայմանում, ֆենաղիկով նաև հայրենադարձության հետ արդշվող մի շարք հարցեր։ Այդ նույն ոգով է շարադրված նաև Գ. Անարոնյանի «Մեծ երազի ճամփին վրա» գիրքը³⁹, որտեղ հեղինակը, սրափ կերպով վերլուծելով հայ ժողովրդի վերջին հարյուրամյակի պատմությունը, ռեալիստորեն գնահատում է իրադարձությունները և հիմնականում հանգում նիշտ եզրակացությունների։ Սակայն հարկ է նշել, որ վերջին երկու հեղինակները, իննելով ուսմկավար—ազատական կուսակցության ներկայացուցիչներ, երբեմն փաստերը վերլուծում և գնահատում են զուտ ուսմկավարական պատմագրության դիրքերից, ուստի նրանց եզրահանգումները ոչ միշտ են համոզեցուցիչ և ընդունելի։

Հայրենիք—սփյուռփ առնչությունների և հայրենադարձության պատմության որոշ հարցեր շոշափվել են նաև Ա. Մառուկյանի⁴⁰, Հարություն (Արթուր) Հելվանյանի⁴¹, Զ. Մարրյանի⁴² և ուրիշների աշխատություններում։

Վերոշարադրյալը ակնբախորեն վկայում է, որ սփյուռփահայության պատմության և հայրենիք—սփյուռփ առնչությունների ուսումնասիրության բնագավառում, հատկապես վերջին ֆանամյակում, որոշակի աշխատանք է կատարված։ Սակայն արվածը դեռևս բավարար չէ։ Այսօրվա դրությամբ շատ անելիքներ կան մեր ժողովրդի սփյուռփահայ բազմաթի պատմության ուսումնասիրման և գիտական իմաստավորման ուղղությամբ։ Այդ նպատակն է հետապնդում նաև մեր սույն աշխատությունը, որը մի փորձ է լուսարանելու առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Թուրքիայում կազմակերպված հայկական ցեղասպանությունից փրկված և բռնագաղթի միջոցով արարական անապատները հշված ու աշխարհով մեկ սփռված տարագիր հայության և Սովետական Հայաստանի փոխհարաբերությունների և սփյուռփահայերի հայրենադարձության իրականացման պատմությունը։ Այդ առնչությամբ մենք աշխատել ենք մերկացնել նաև հայ ժողովրդի նկատմամբ արևմտյան տերությունների իմպերիալիստական ֆաղափականությունը, հայ գաղթականության

³⁹ Գ. Անարոնյան, Մեծ երազի ճամփին վրա, Պեյրուս, 1964։
⁴⁰ Ա. Մառուկյան, Նոր Հայաստան, Նոր հայեր, Պեյրուս, 1981։
⁴¹ Վեր. Հր. Հելվանյան, Մեր աշխարհեն, Պեյրուս, 1966։
⁴² Զ. Մարրյան, Մկրտիչ Մարրյանի ազգային-քաղաքական գործունեությունը, Պեյրուս, 1981։

հարցում Ազգերի իրգայի երկդիմի խաղերը: Միաժամանակ ցույց է տրված օտարերկրյա բարեգործական մի շարք հաստատությունների, Հայաստանի օգնության կոմիտեի, հայրենակցական, վերաշինաց և այլ անուններով սփյուռում գործող միությունների ու կազմակերպությունների գործունեությունը, մեծ հումանիստ Ֆր. Նանսենի ջանքերը հայ գաղթականության հարցի լուծման ուղղությամբ⁴³: Աշխատության մեջ առանձին գլուխ է հատկացված հայրենիք—սփյուռք անշուքությունների և հայրենադարձության նկատմամբ սփյուռում գործող ֆաղափական կուսակցությունների վերաբերմունքի բացահայտմանը, Սփյուռահայության հետ մշակութային կապի կոմիտեի գործունեության և հարակից այլ հարցերի լուսաբանմանը:

Ներկա ուսումնասիրության համար որպես հիմնական աղբյուր են ծառայել Հայկական ՍՍՀ Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության արխիվի, ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի կուսակցական արխիվի և Հայկական ՍՍՀ Կենտրոնական պետական պատմական արխիվի մի շարք ֆոնդերում եղած նյութերը, սովետահայ և սփյուռահայ պարբերական մամուլը, թեմային փոքր ի շատե անընչող գրականությունը: Աշխատության մեջ օգտագործված են կուսակցական ու պետական բազմաթիվ որոշումներ, հրապարակված սկզբնաղբյուրներ և այլ նյութեր: Սակայն հիմնական աղբյուրներ են ծառայել արխիվային վավերագրերը և պարբերական մամուլից ֆաղված նյութերը, որոնց ննչող մեծամասնությունը առաջին անգամ բարձրացվում և գիտական շրջանառության մեջ է դրվում մեր կողմից:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ տվյալ թեմայի լուսաբանումը կապված է մի շարք դժվարությունների և բարդությունների հետ, որոնք, անշուշտ, իրենց կնիքն են թողնում հետազոտության ընդհանուր ընթացքի վրա: Ամենից առաջ խիստ պակասում են սփյուռահայության սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող նյութերը՝ անգամ հիմնական գաղթօջախների վերաբերյալ: Սովետահայ պատմաբանների համար սփյուռահայության պատմության ուսումնասիրության կարևոր աղբյու-

րը սփյուռահայ պարբերական մամուլն է: Սակայն հատկապես նախապատերազմյան շրջանում խիստ անկանոն է եղել մեզ մոտ սփյուռահայ մամուլի ստացումը, որը հնարավորություն չի ընձեռում վերը նշված հարցերի մասին գտնել անհրաժեշտ նյութեր: Խիստ անբավարար են պահպանվել և մշակվել նաև արխիվային նյութերը, հաճախ, միևնույն հարցի շուրջը եղած տարբեր փաստաթղթերում, հանդիպում են միանգամայն հակասական տվյալներ: Չեն պահպանվել և մեզ չեն հասել բազմաթիվ փաստաթղթեր, որոշումներ և այլ նյութեր, հանրապետությունում կուտակված արևմտահայ գաղթականության հարցի լուծման և սփյուռահայերի հայրենադարձության իրականացման վերաբերյալ:

Հատկապես սկզբնական շրջանում դա հետևանք էր այդ աշխատանքների էազանց կատարման, սովետական պետական ապարատի նոր կազմակերպվածության, էամապատասխան կարգերի ու անհրաժեշտ միջոցների բացակայության և այլ գործոնների:

Պետք է նշել, որ 70-ական թվականների կեսերից սկսած, որոշ հիմնարկությունների ու կազմակերպությունների գործերը դեռևս չեն մշակված ու պետական արխիվներին հանձնված, որը, ինչ խոսք, նույնպես որոշակի դժվարություններ ու բարդություններ է առաջ բերում հետազոտողի համար: Մեր կարծիքով ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր արխիվային վարչությունը պետք է խստորեն հետևի հատկապես պատմագիտական մեծ կարևորություն ու արժեք ներկայացնող նյութերը ժամանակին մշակելու և համապատասխան արխիվներին հանձնելու սահմանված կարգին, որը մեծապես կնպաստի ավելի հարուստ սկզբնաղբյուրների օգտագործմամբ գիտական ուսումնասիրությունների ստեղծման գործին:

Հարկ է եղել կատարել հիրավի տեղաշարժում ու բազմակողմանի պրպտումներ, որպեսզի հնարավորին չափ նշմարտացիորեն վերակառնվող գերագույն ջանքեր կլանած անձնուրաց ու հայրենանվեր աշխատանքի այն պատկերը, որն ակնառու կերպով ցուցադրում է հայ ժողովրդի, մասնավորապես նրա սփյուռահայ հատվածի, նակատագրի նկատմամբ կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության ջերմ հոգատարությունն ու ուշադրությունը:

Սփյուռահայերի հայրենադարձությունը մենք բաժանել ենք

⁴³ Մյդ մասին տե՛ս նաև Մ. Արզումանյան, Նանսենը և Հայաստանը, «Հայաստան» հրատ., Երևան, 1977:

երեւ հիմնական փուլերի: Առաջին փուլն ընդգրկում է 1921—1936 թթ., երբ տարբեր երկրներից հայրենիք եկան մոտավոր տվյալներով 42286 տարագիրներ: Երկրորդ փուլն ընդգրկում է հիմնականում 1946—1948/49 թթ.: Այդ տարիներին տեղի ունեցավ սփյուռֆահայերի ամենամեծ ու զանգվածային ներգաղթը, որը հայտնի է մեծ հայրենադարձություն անունով: Կարճ ժամանակամիջոցում արտասահմանյան 12 երկրից Սովետական Հայաստան եկավ 20646 ընտանիք (89750 մարդ): 1950-ական թվականներին անհատական կարգով հայրենիք են ներգաղթել ավելի քան 4000 սփյուռֆահայեր:

Հայրենադարձության երրորդ փուլն սկսվել է 1962 թ. և շարունակվում է առ այսօր: 1962—1982 թթ. ընթացքում աշխարհի 30 երկրից հայրենադարձվել է 6795 ընտանիք (31920 մարդ):

Հայրենիք—սփյուռֆ առնչությունները և սփյուռֆահայ աշխատավորների հայրենադարձությունը, որոնք ծայր առան սովետական իշխանության հաստատման հենց սկզբից, շարունակվում ու ծավալվում են մինչև օրս: Ազգապահպանման ու ազգահավաքման հայրենասիրական այդ իրադարձությունների վերաբերյալ դեռ շատ ասելիք ունի սովետահայ պատմագիտությունը, ուստի սույն աշխատությունը մենք դիտում ենք միայն որպես այդ ուղղությամբ զգված առաջին հիմնավոր ակոսներից մեկը: Լինելով սփյուռֆահայերի հայրենադարձության և հայրենիք—սփյուռֆ առնչությունների 60-ամյա ծավալուն ժամանակաշրջանի պատմության ուսումնասիրության առաջին փորձը, մեր աշխատությունը բնավ հավակնություն չունի ներկայացնելու այդ կենդանու պրոբլեմների հետ աղերսվող բոլոր հարցերի սպառիչ ու անթերի լուսաբանումը:

Գ Լ Ո Ւ Խ Ա Ռ Ա Ջ Ի Ն

**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՍՓՅՈՒՌՔԻ ԱՌԱՋԱՅՈՒՄԸ ԵՎ ՆՐԱ
ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄԸ ԳԵՊԻ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ**

Հայ ժողովրդի արևմտյան հատվածը, որը երկար ժամանակ հեծում էր թուրքական վայրագ տիրապետության տակ, XIX դարի վերջին քառորդից սկսած պարբերաբար ենթարկվում էր բնաջնջման ու իր բնօրրանից արտաքսման: Դա ուղղակի հարցականի տակ էր դնում նրա ֆիզիկական գոյությունը:

Աբդուլհամիդյան արյունոտ ռեժիմին փոխարինած երիտթուրքական կառավարությունը ոչ մի դրական քայլ չկատարեց ազգային հարցում և Օսմանյան կայսրության կողմից նվաճված ժողովուրդները, այդ թվում նաև հայերը, շարունակում էին ենթարկվել վայրենի ճնշման ու հալածանքների:

Երիտթուրքերը, որոնք որոշել էին ազգային հարցը լուծել այլազգիների ասիմիլացման ու ֆիզիկական բնաջնջման եղանակով, հատկապես առաջին համաշխարհային պատերազմը հարմար պահ համարեցին իրենց հայաչինը ծրագիրն իրականացնելու համար: Պատերազմին մասնակցելու թուրքական ռազմական պլանի բաղկացուցիչ մասն էր կազմում իր պատմական հայրենիքից հայության զանգվածային տեղահանումն ու ոչնչացումը, որը պետք է հիմնականում կատարվեր հարյուր հազարավոր անմեղ մարդկանց դժոխային տարագրության ընթացքում:

Եվ այն, ինչ տեղի ունեցավ պատերազմի ժամանակ թուրքիայում հայ ժողովրդի նկատմամբ, իր չափերով ու վայրագություններով միանգամայն բացառիկ ու աննախադեպ երևույթ էր ընդհանրապես համաշխարհային պատմության մեջ: Դա փաստորեն XX դարի առաջին անավոր ցեղասպանությունն էր (գենոցիդ), որն իրականացվեց ամբողջ քաղաքակիրթ մարդկության աչքի առաջ:

Հայ ժողովրդի երկարատև ու դաժան մարտիրոսագրությունը թուրքական բռնակալության ճիրաններում լեցին է հոգեվարքի ու մահվան օրհասական բազում ճիգերով: Բայց այն, ինչ կատարվեց համաշխարհային պատերազմի թոհուրոհի օրերին, երբ ոչնչացվեց մեկուկես միլիոն հայություն և կորստյան մատնվեցին դարերի ընթացքում ստեղծված տնտեսական ու մշակութային բազմաթիվ գանձեր, իր նախընթացը շուներ նույնիսկ սուլթանների երկրի, մեծատաղանդ բանաստեղծ Պարույր Սևակի խոսքերով ստած՝ և մինչև անգամ իրենց՝ թուրքերի արյունով հունցված սև պատմության մեջ:

Պատերազմի ժամանակ հայ ժողովրդի նկատմամբ ունենալիք վերաբերմունքի հարցը նախապես մանրամասն քննարկվել էր «Միություն և առաջադիմություն» («Իթթիհատ վե Թերաբբը») կուսակցության ղեկավար օրգաններում, թուրքական կառավարական շրջաններում և մտել Թուրքիայի ռազմական շտաբի պլանների մեջ: Ինչպես ծրագրվել էր, հայերի կոտորածները հիմնականում իրականացվելու էին սկզբում երկրի ներսում տղամարդկանց ոչնչացմամբ, իսկ ապա մնացած բնակչությանը իր պատմական դարավոր հայրենիքից զանգվածորեն դեպի արաբական անապատներն աքսորելու ժամանակ: Այդ բարբարոսական ծրագրի կենսագործումը բազմակողմանիորեն նախապատրաստվում էր ոչ միայն թուրքական շովինիստների, այլև գերմանական կառավարող շրջանների կողմից: Անհրաժեշտ ու հանրահայտ փաստ է այն իրողությունը, որ համաշխարհային պատերազմի տարիներին հայ ժողովրդի ապրած սոսկալի ողբերգության կազմակերպման ու իրականացման գործում որոշակի դեր են խաղացել գերմանական իմպերիալիստները և վիլհելմյան կառավարությունը²:

Երիտթուրքական շովինիստները, հետևելով գերմանական իմպերիալիստների խորհուրդներին, որոշեցին դաժան տարագրության միջոցով հայերին ոչ թե սոսկ աքսորել արաբական անապատների խորքերը, այլև, այդ պատրվակի տակ քողարկված, ֆիզիկապես ոչնչացնել նրանց և հայկական չահանգնե-

րում բնակեցնել մահմեդականների, որպեսզի իրենց համար մեկընդմիշտ ապահով թիկունք ստեղծեն Կովկասից սպառնացող ռուսական վտանգից³:

Դեռևս պատերազմն սկսվելուց առաջ, ռուսական և եվրոպական մամուլն ահազանգում էր հայության նկատմամբ թուրքիայում նախապատրաստվող շարագործությունների՝ սպառնող կոտորածների և խաղաղ բնակչության՝ կանանց, երեխաների ու ծերերի զանգվածային տարագրության դիվային ծրագրի գոյության մասին: Սակայն թուրքական մամուլն ու պաշտոնական շրջանները խորամանկ շողոքորթությամբ փորձում էին հերքել հայաչինջ ծրագրի առկայությունը վկայող հաղորդագրությունները⁴:

Ինչպես ցույց տվեցին հետագա դեպքերը, օտարերկրյա մամուլը միանգամայն իրավացի էր այդ հարցում, քանի որ պատերազմի մեջ մտնելու առաջին իսկ օրվանից թուրքական կառավարությունն անցավ հայ ժողովրդի բնաջնջման իր նողկալի ծրագրի իրականացմանը: 1914 թվականի նոյեմբերից թուրքական իշխանությունները թուրք-ռուսական և թուրք-պարսկական սահմանների մոտ սկսեցին բռնությամբ ամայացնել հարյուրավոր հայկական բնակավայրեր: Գավառներն ուղարկվեց հայերի կոտորածների ու տարագրության վերաբերյալ երիտթուրքական շարդարարների նախօրոք մշակած բարբարոսական հրամանը, որն ամփոփված էր շուրջ տասը կետերում և մանրամասնորեն նախատեսում էր, թե որտեղ և ինչ եղանակներով պետք է իրականացվեր հայկական եղեռնը⁵:

Հայ ժողովրդի տարագրությունն ու բնաջնջումը կազմակերպելու ուղղությամբ թուրքական կառավարության ու «Իթթիհատ վե Թերաբբը» կուսակցության գործունեության բացահայտման իմաստով խիստ կարևոր է ներքին գործերի մինիստր Թալեաթի, ռազմական մինիստր էնվերի և Իթթիհատի Կենտկոմի գլխավոր քարտուղար ղոկտոր Նազըմի ստորագրություններով հաստատված ու 1915 թ. ապրիլի 15-ին

³ Տե՛ս Ան, Թուրքահայ հեղափոխության զաղափարարանությունը, Կ. թ., Փարիզ, 1935, էջ 82:

⁴ Տե՛ս «Հուլարձան ապրիլ տասնըմեկի», հավաքեց և խմբագրեց Թեղդիկ, Կ. Պոլիս, 1919, էջ 96:

⁵ Տե՛ս Ան, նշվ. աշխ., էջ 153—154:

¹ Տե՛ս Պարույր Սևակ, Անլուի զանգակատուն, «Հայաստան» հրատ., Երևան, 1966, էջ 195:

² Տե՛ս Հաճոհի Պառոյի (Հաճոհի Բարբի), Սարսափի երկրին մեջ, Կ. Պոլիս, 1919, էջ 10:

որպես կառավարական խստագույն գաղտնի դիրքերով բոլոր նահանգապետներին, գավառապետներին և այլ պաշտոնյաներին ուղարկված հրամանը: Այդ փաստաթղթում հրամայված էր՝ օգտվելով պատերազմական իրադրության ընձեռած հնարավորություններից, վերջնականապես հաշվեհարդարի ենթարկել հայությանը «բնաջնջելով այդ անհարազատ տարրը, քշելով գանոնք գեպի Արաբիո անապատները, համաձայն տրված մեր գաղտնի հրահանգին»: Այդ հրամանում այնուհետև ասված էր. «Արդ, կառավարությունն ու իթթիհատի մեծ կոմիտեն, կոչ կրենք ձեզ և ձեր հայրենասիրության և կհրամայենք, որ ձեր բոլոր տրամադրելի ուժերով աջակցեք իթթիհատի տեղական մարմիններուն, որոնք 24 ապրիլի արևածագեն սկսյալ, գաղտնի ծրագրի մը համաձայն, գործադրության պիտի դնեն այս հրամանը:

Որևէ պաշտոնատար ու անհատ, որ կհակառակի այս սրբազան ու հայրենասիրական գործին ու չի տրամադրվիր իրեն հանձնված պարտականության, և որևէ ձևով այս կամ այն հայր պաշտպանելու կամ պահելու փորձը կընեն, հայրենիքին ու կրոնքին թշնամի կնկատվի և ըստ այնմ ալ կպատժվի»⁶: Այստեղ ամեն ինչ պարզ ու որոշակի է ասված, ուստի բնավ կասկած չի թողնում, որ երիտասարդ թուրքերի կուսակցությունն ու կառավարությունը հայության բնաջնջման գործը դարձրել էին իրենց պետական քաղաքականության կարևոր խնդիրներից մեկը: Դեռևս Թուրքիայի պատերազմի մեջ մտնելուց առաջ իթթիհատի Կենտկոմը մանրամասնորեն մշակել ու նախապատրաստել էր հայերի ջարդի ու բռնագաղթի ծրագիրը: Այդ ծրագիրն իրականացնելու համար հայկական նահանգներում ստեղծվել էին հատուկ գաղտնի կոմիտեներ, որոնց մեջ մտնում էին նահանգապետները, ոստիկանապետները և տվյալ նահանգի զինվորական միավորման հրամանատարները: Այդ կոմիտեների անմիջական տրամադրության տակ էին դրվում ոստիկանական ու կանոնավոր ղորամասեր, զանազան ոճրագործներից բաղկացած այսպես կոչված «հատուկ կազմակերպության» ուժեր, թուրքական ու քրդական հրոսակախմբեր, անսահմանափակ քանակությամբ զենք և այլ միջոցներ:

Ինչպես վկայում է հայկական եղեռնի կազմակերպմանը լավատեղյակ Մեվլան Զադե Ռիֆաթը, մարդասպան ոճրագործների գործունեությունն անմիջականորեն ղեկավարում էր երեք հոգուց բաղկացած գործադիր կոմիտեն, որի մեջ մտնում էին իթթիհատի Կենտկոմի գլխավոր քարտուղար զոկտոր Նազըմը, ղոկտ. Բեհաեդդին Շաքիրը և կրթական նախարար Միդհատ Շյուքրի բեյը⁷: Ամբողջությամբ վերցրած՝ հայերի կոտորածներն ու տարագրությունները ղեկավարում էր Թուրքիայի ռազմական կարիները, որի կազմի մեջ մտնում էին մեծ վեդիր Սայիդ Հալիմ փաշան, ներքին գործերի մինիստր Թալեաթ փաշան, ռազմական մինիստր էնվեր փաշան, ժողային մինիստր Զեմալ փաշան, ֆինանսների մինիստր Զավիդ բեյը և արդարագատության մինիստր Խալիլ բեյը: Հենց այդ կարիների կողմից էր, որ հրաման ուղարկվեց տեղական բոլոր իշխանություններին՝ ձեռք առնել «պատշաճ միջոցներ», որպեսզի իր թե նախօրոք կանխվի ու ճնշվի հայերի «հնարավոր ապստամբությունը»: Այդ հրամանում նշված էր, որ հայերն «սպառնում են» կայսրության միասնությանն ու անվտանգությանը, հետևապես, պետության անվերտանգությունը պաշտպանելու նպատակով, անհրաժեշտ է ամենայն խստությամբ ու անխնա միջոցներով անվնաս դարձնել թշնամուն, այսինքն՝ հայերին: Մի կողմ թողնելով հազվադեպ բացառությունները, պետք է ասել, որ թուրք պաշտոնյաների բացարձակ մեծամասնությունը աննկարագրելի ուրախությամբ արձագանքեց հայերի բնաջնջման վերաբերյալ Կ. Պոլսից ստացված գաղտնի հրամանին և ձեռնամուխ եղավ դրա կենսագործմանը:

Թուրքական ջարդարարները նպատակահարմար էին գտել առաջին հերթին ոչնչացնել հայ բնակչության արական մասը և հատկապես մտավորականությանը, որպեսզի այնուհետև հեշտությամբ հաշվեհարդար տեսնեին նաև անպաշտպան մնացած խաղաղ բնակչության՝ ժերերի, կանանց ու երեխաների անմեղ զանգվածի հետ: Ինչպես այդ առթիվ դիպուկ կերպով նկատել է այն ժամանակ Կ. Պոլսում ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաունը՝ «ցեղ մը բնաջնջելու այս ծրագիրը հաջողացնելու համար երկու նախաքայլեր պետք էին առնվիլ. անհրաժեշտ էր բոլոր հայ

⁶ «Դրվագներ հայկական եղեռնի և վերածնունդ», Փարիզ, 1947, էջ 180—181:

⁷ Տե՛ս Մեվլան Զադե Ռիֆաթ, Օսմանյան հեղափոխության մոլթ ծալքերը, Պեյրոթ, 1938, էջ 183—187:

զինվորները անզոր դարձնել և ամեն քաղաքներու հայերուն ձեռքեն զենքերը առնել: Հայաստանը խեղդաման ընելե առաջ, Հայաստանը անպաշտպան դարձնել»⁸ (ընդգծումը մերն է.—Ն. Մ.): Թուրք ոճրագործները իրականում հենց այդպես էլ վարվեցին: Սկզբում, որպես իբր թե «դավաճանների», զինաթափեցին բանակում գտնվող հայ զինվորներին, չնայած նրանք միանգամայն քարեխղճորեն կատարում էին իրենց պարտականությունները: Հայ զինվորները միայն այն ժամանակ սկսեցին կասկածամտությամբ և թշնամանքով վերաբերվել թուրքական հրամանատարությանը, երբ տեսան ու համոզվեցին, որ իրենց ազգակիցներին զանգվածաբար հանում են ուղղամահակատից և գաղտնաբար կոտորում⁹:

Հայ զինվորներին գազանաբար կոտորելուց հետո, որպեսզի հեշտությամբ իրականացնեին նաև քաղաքացիական բնակչության տարագրության ու բնաջնջման ավելի ընդարձակ ծրագիրը, թուրքական ջարդարարներն անցան հայերի զորահավաքից հետո գյուղերում և քաղաքներում մնացած արական բնակչության ոչնչացմանը: Միտումնավոր կերպով կատարված զորահավաքից հետո առանց այն էլ տեղերում մնացել էր տղամարդկանց այն մասը, որից փոքր ինչ դիմադրություն, առավել ևս հակահարված, չէր կարելի սպասել: Բնակչության այդ մասի ոչնչացումն իրականացվեց 1915 թվականի փետրվարից սկսած, զինաթափման անվան տակ: Նենգ ու խարդախ խաբեություններ ոչնչացնելով հայկական արական բնակչության մեծ մասին ու կեղծելով իրողությունը, ջարդերի կազմակերպիչ Թալեաթին ամեն կողմից հեռադրեր էին հղվում «հայկական ապստամբությունները» հաջողությամբ կանխելու և ճնշելու մասին: Ի պատասխան դրանց, տեղական իշխանությունները կենտրոնից շնորհավորանքներ էին ստանում իրենց հաջող գործողությունների առթիվ: Այդ կեղծ գրագրությունները, որպես թուրքական պետությանն սպառնացող անխուսափելի վտանգի կանխման անժխտելի ապացույցներ, ցույց էին տրվում Կ. Պոլսում զբտնրվող օտարերկրյա այն թղթակիցներին ու դիվանագետներին,

որոնց լուրեր էին հասնում հայերին կոտորելու անընդհատ կրկնվող դեպքերի մասին, և որոնք այդ առթիվ երբեմն հարցումներ էին անում թուրքական կառավարությանը:

Հայության արական բնակչության հիմնական զանգվածի ոչնչացմանը զուգընթաց, թուրքական կառավարությունը իրագործեց նաև իր նողկալի ծրագրի մի այլ կարևոր կետը: 1915 թվականի ապրիլի 11-ին (նոր տոմարով 24-ին), գրեթե մի գիշերվա մեջ, Կ. Պոլսում մեկեկն ձերբակալվեց արևմտահայ մտավորականության ընտրանին՝ մոտ 235 մարդ, նետվեց մութ զրնդաններն ու թշվեց դեպի մահ: Ապրիլի 11—13-ին (ն. տ. 24—26-ին), ընդամենը երեք օրվա ընթացքում, Կ. Պոլսում և գավառներում ձերբակալված հայ մտավորականների թիվը, ներառյալ նաև եկեղեցականներին, անցնում էր 760 հոգուց¹⁰: Ձերբակալվածներին Կ. Պոլսից տեղափոխեցին Անկարայի բանտը, այնտեղից էլ մի մասին աքսորեցին Այաշ, մյուսին՝ Չանղըրը և գրեթե բոլորին, առանց դատ ու դատաստանի, սպանեցին հենց աքսորի ճանապարհին: Ձերբակալվածների թվում էին հայ մշակույթի անզուգական մշակներ՝ Կոմիտասը, Սիամանթոն, Վարուժանը, Զոհրապը, Երուխանը, Ռուբեն Սևակը, Ռուբեն Զարդարյանը և բազմաթիվ ուրիշ ականավոր դեմքեր, որոնցից հազիվ միայն 15 մարդ փրկվեց:

1915 թ. ապրիլի 20-ին հայերի ընդհանուր կոտորածներն սկսելու ազդանշան տրվեց Վան քաղաքում: Այնտեղ հաջող ինքնապաշտպանության կազմակերպման, ռուսական զորքերի ու հայ կամավորների մասնակի առաջխաղացման և Վանի գրավման շնորհիվ թուրքական յաթաղանից փրկվեցին տասնյակ հազարավոր հայեր: Բայց շուտով կասեցվեց ռուսական զորքերի առաջխաղացումը, որոշ տեղերում նրանք դիմեցին նույնիսկ նահանջի, և թուրքերն սկսեցին հայերի բնաջնջման նախօրոք մշակված ծրագրի հետևողական իրագործումը:

1915 թ. մայիսի 20-ին (նոր տոմարով հունիսի 2-ին) թուրքական կառավարությունը հրաման արձակեց այսպես կոչված դեպորտացիաների, այսինքն՝ հայերին արաբական անապատներն աքսորելու մասին: Այդ հրամանը պաշտոնապես նախա-

⁸ Տե՛ս «Ամերիկյան դեպուտատների և հայկական եղեռնի գաղտնիքները», Կ. Պոլիս, 1919, էջ 250:

⁹ Տե՛ս Հայկական ՍՍՀ Կենտրոնական պետական պատմական արխիվ (այսուհետև՝ ՀՍՍՀ ԿՊՊԱ), ֆ. 43, ց. 1, գ. 76, թ. 40:

¹⁰ Տե՛ս «Հուշարձան ապրիլ տասնըմեկի», Կ. Պոլիս, 1919 և «Դատավարություն Թալեաթ փաշայի», սղագրական զեկուցում, Վիեննա, 1921, էջ 95—96:

տեսում էր մերձազմանակատային գոտու բնակիչների էվա-
կուացիան՝ նկատի ունենալով իբր թե նրանց համակրանքը ուս-
ների նկատմամբ, դավաճանությունը թուրքական հայրենիքին և
զինված համագործակցությունը թշնամու հետ: Իրականում այդ
հրամանը նշանակում էր հայկական բնակչության քողարկված
մահավճիռը: Ինչպես իրավացի կերպով նկատել է Իոհաննես
Լեփսիուսը՝ գաղտնի տեղեկագրերի ու ականատեսների վկայու-
թյունների հիման վրա գրած իր «Հայաստանի շարդերը» գրք-
քում, թուրքական կառավարությունը երբեք փաստերով չէր
հաստատել հայ ժողովրդի դավաճանությունը, թապատմբելու
նրա տրամադրությունը կամ թշնամու հետ համագործակցու-
թյունը: Ընդհակառակը, փաստերը վկայում էին «օսմանյան
հայրենիքի» նկատմամբ հայերի պարտաճանաչությունն ու հա-
վատարմությունը¹¹: Չնայած այդպիսին էր իրականությունը.
թուրքական իշխանությունները դեռևս մարտի վերջերից սկսել
էին Կիլիկիայի՝ ռազմաճակատից հարյուրավոր կիլոմետրերով
հեռու գտնվող այդ երկրամասի, հայ ազգաբնակչության տա-
րագրությունը¹²:

Իրենց հայաչինջ ծրագիրն իրականացնելու համար թուր-
քական շովինիստներին հարմար պատրվակ էր պետք, և ահա
հորինվում էր շինծու պատճառաբանությունն այն մասին, թե
«հայերը համակրում են ռուսներին», ուստի հարկավոր է ռազ-
մաբեմը մաքրել այդ վնասակար տարրերից: Դրա համար առաջ
էր քաշվում հայերի տեղահանության ծրագիրը, որը գործնակա-
նում նշանակում էր նրանց զանգվածային բնաջնջում: Բնութա-
գրելով հայերի տեղահանության թուրքական ծրագրի էություն-
ը, Լեփսիուսը նշում է, որ «տարագրության ձեռնարկը շուտով
և ամենեն հաճախ վերածվեցավ կանոնավոր բնաջնջումի մը»¹³:

Թուրքական ներքին գործերի մինիստրության 1915 թ. Լո-
յնմբերի մի ծածկադիր հեռագրում ուղղակի նշված էր. «Մանոթ
անձնավորությանց (գաղտնի փաստաթղթերում այդպես էին ան-
վանում հայերին.— Լ. Մ.) առաքման (աքսորի.— Լ. Մ.) նպա-
տակը հայրենիքին ապագա բարօրության ապահովությունն է,

որովհետև ատոնք՝ ուր որ ալ բնակեցվեն՝ դարձյալ ետ չպիտի
կենան իրենց անիծապարտ գաղափարներեն: Պետք է աշխատիլ,
որ կարելի եղածին շափ նվազի՝ անոնց թիվը»¹⁴:

Նվ համատարած շարդերից, բաղդից ու հիվանդություննե-
րից ամեն օր հազարավոր հայեր էին զոհվում, որը և նրանց
ընդհանուր տարագրության վերջնական նպատակն էր: Այդ մա-
սին կառավարական հրահանգներից մեկում ուղղակի ասված էր.
«Իարերև ի վեր պետության ամուր հիմը քանդելու բաղձացող և
կառավարության համար կարևոր փորձանքի՝ մը երևույթը ա-
ռած հայ տարրին ջնջումը թեև նախապես մտադրված էր, բայց
ժամանակին ստիպումները այս սրբազան մտադրությունը իրա-
կանացնելու կարելություն չէին՝ ընծայել: Հիմա, բոլոր արգելք-
ները վերացած և հայրենիքը այս վնասակար տարրեն փրկելու
ժամանակը հասած նկատելով, կարևորությամբ կհանձնարարվի,
որ անոնց արգահատելի վիճակին հանդեպ գութի զգացումնե-
րու շհանձնվեք, և անոնց ընդհանուրին գոյության վերջ տալով,
Թուրքիո մեջ հայ անունին շմեալուն ոգի ի բոին աշխատիք: Ու-
շադրություն ընեք, որ այս նպատակը իրականացվելու կողմից
պաշտոնյաները հայրենասեր և վստահելի մարդիկ ըլլան»¹⁵:

Իոհաննես Լեփսիուսի վկայությամբ «հայերու տարագրու-
թյունը տեղի ունեցավ երեք տարբեր մարզերու մեջ և երեք հա-
ջորդական ժամանակամիջոցներու» ընթացքում: Երեք տարբեր
մարզեր ասելով Լեփսիուսը նկատի ուներ Արևմտահայաստանը
(Կարին, Տրապիզոն, Սեբաստիա, Խարբերդ, Տիգրանակերտ,
Վան, Բաղեշ վիլայեթներով), Արևմտյան Անատոլիան (Նիկո-
մեդիա, Պրուսա, Գասթեմունի, Գալաթիա, Կոնիա և այլն) և,
վերջապես, Կիլիկիան ու Սիրիան (Ադանա, Մարաշ, Հալեպ,
Անտիոք, Սուեդիա, Քեսսապ, Իսկենդերուն, Քիլիս, Այնթապ,
Ուրֆա)¹⁶: Ահա հատկապես այս վայրերի հայությունն էր, որ
ենթարկվեց ամենավայրենի շարդերի ու տարագրությունների:

1915 թվականի մարտից մինչև հոկտեմբերն ընկած ժամա-
նակամիջոցում, թուրքական կառավարությունը հետևողակա-
նորեն կենսագործեց հայ ժողովրդի բռնազաղթեցման ու բնաջնջ-
ման իր ոճրագործ մտադրությունը: Երբ արդեն հիմնականում

¹¹ Տե՛ս Տոֆ. Եսե. Լեփսիուսի գաղտնի տեղեկագրերը. Հայաստանի շար-
դերը, Կ. Պոլիս, 1919, էջ 9:

¹² Տե՛ս նույն տեղում, էջ 170:

¹³ Տե՛ս նույն տեղում, էջ 142:

¹⁴ Ա. Անտոնյան, Մեծ ոճիրը, Բոստոն, 1921, էջ 23:

¹⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 26:

¹⁶ Տե՛ս Տոֆ. Եսե. Լեփսիուս, Հայաստանի շարդերը, էջ 9:

ոչնչացված էին հայ տղամարդիկ, անպաշտպան կանանց ու երեխաներին հրամայվում էր ճանապարհ ընկնել դեպի անհայտ հեռուները, դեպի արաբական անապատները: Գյուղերում ու քաղաքներում մոռնեալները հայտարարում էին կառավարական խստագույն հրամանը՝ այսինչ օրը, այսինչ ժամին պատրաստ լինել մեկնելու: Ոչ մեկին բացառություն չէր արվում. ոչ հիվանդներին, ոչ ծերերին, ոչ էլ հղի կանանց: Միայն նրանք, ովքեր անհապաղ կրնորունեին մահմեդականություն և կհրաժարվեին հայությունից, կարող էին խուսափել ընդհանուր ճակատագրից: Տարագրվողներին թույլատրվում էր իրենց հետ վերցրնել նվազագույն շափով սնունդ և հագուստեղեն: Նրանց առաջ էին քշում ոտքով, սովորաբար հեծյալ պահակախմբերի ուղեկցությամբ: Տարագրվողներին վիճակվեց այդ ձևով անցնել երեքից մինչև վեց շաբաթ տևողությամբ ճանապարհ, ճյուղապատ լեռներով ու կիզիչ արևի տակ, այրող անապատներով: Հիվանդները, ծերերն ու երեխաները ուժասպառ ընկնում էին այդ տառապալից ճանապարհներին, շկարողանալով այլևս վեր բարձրանալ: Սակայն ուղեկցող ժանդարմները, մտրակահարելով նրանց, ստիպում էին նորից առաջ գնալ: Ակահատեսները վկայում են, որ անգամ երկուսի տանջանքների մեջ գտնվող կանանց գազանաբար առաջ էին քշում, մինչև որ վրա կհասներ ծննդաբերության պահը և այդ վիճակում նրանց անօգնական թողնում էին մեռնելու ճանապարհին¹⁷: Շատ թե քիչ գրավիչ աղջիկները վերցվում էին հարեմները կամ ուղեկցող պահակների կողմից ենթարկվում ամեն տեսակ անարգանքի, մինչև որ մահը նրանց կազատեր այդ տանջանքներից: Այդ պատճառով էլ ով կարող էր՝ վերջ էր տալիս իր կյանքին: Խելակորույս մայրերը երեխաներին նետում էին գետը կամ ցած գլորում ժայռերից, որպեսզի վերջ տային նրանց տառապանքներին: Հարյուր հազարավոր աքսորյալներ այդ տաժանակիր ճանապարհին մեռան քաղցից, ծարավից, ցրտից, արևահարությունից ու լիակատար հյուծվածությունից: Հենց այդ էլ տարագրության իսկական նպատակն էր: Դա լավ էին հասկացել նաև քարավաններին ուղեկցող պահակախմբերը, որոնք իրենց հերթին բոլոր միջոցներով նպաստում էին հայերի ոչնչացմանը: Կառավարություն

անշուշտ գիտեր, թե ինչ է նշանակում այդպիսի «ճանապարհորդությունը», և տարագրվողներին առաջնորդող նրա կամակատարները անում էին ամեն բան, որպեսզի ավելի բազմապատկեին նրանց ֆիզիկական ու բարոյական տանջանքները: Անտանելի պայմանների պատճառով այդ դժբախտների շարքերը ճանապարհի սկզբում հավլում էին ամեն օր, ճանապարհի վերջում՝ ամեն ժամ: Նրանց ամենամեծ ցանկությունն էր մեռնել որքան կարելի է շուտ, որովհետև ի՞նչ հույս կամ ուժ կարող էր մնալ նույնիսկ ամենադիմացկունների մոտ, երբ չէր երևում այդ սոսկալի տաժանակրության վերջը:

Գետանցումները, հատկապես Եփրատի անցումը, հայերի տարագրության ժամանակ հարմար տեղ են համարվել զանգվածային սպանություններ կատարելու համար: Հենց միայն Երզրնկայի և նրա շրջակայքի հայերից ավելի քան 30000 մարդ խեղդամահ է արվել Եփրատում¹⁸:

Շատ քերիկ էր հաջողվում ինչ-որ հրաշքով փրկվել անխուսափելի մահից և հասնել մինչև «նշանակված վայրը»: Սակայն իրականում հայ գաղթականների համար տարագրության որոշակի ու մշտական վայրեր չէին նախատեսված: Թուրքական կառավարության բոլոր հրահանգները միշտ հանձնարարում էին՝ «կարավաններու ընկերացնելով դրկեցեք անապատները»: Այս անորոշ դարձվածքը նշանակում էր «ոչնչացրեք», որովհետև «նույնիսկ անապատներու մեջ հայ գաղթականները որոշ տեղ մը շունեին: Միշտ պետք էր քալել, երթալ, ո՛ւր, մարդ չէր գիտեր: Կբավեր, որ տեղ մը շմնային երկար ատեն և քալելով հատնեին»¹⁹, — հետագայում պատմում է թուրքական պաշտոնյա Նայիմ բեյը, որն այդ ժամանակ գաղթականների Հալեպի տեսչության գլխավոր քարտուղարն էր և որի ձեռքով էին անցել հայերի տարագրությանը վերաբերող շատ փաստաթղթեր:

Իրենց պատմական բնօրրանից ու հայրենի օջախներից բռնությամբ արտաքսված հայ տարագիրների բեկորները հանգիստ չգտան նաև հեռավոր արաբական անապատներում: Տարագրության տառապալի ճանապարհն անցած և անմարդաբնակ անապատներում կուտակված հայությունը 1916 թվականին և

¹⁷ Տե՛ս «Ամերիկահայ հանրագիտակ տարեգիրք», Բոստոն, 1925, էջ 46—

¹⁸ Տե՛ս «Армянский вестник», շաբաթական հանդես, Մոսկվա, 1916 թ., № 28, էջ 16:

¹⁹ Ար. Անտոնյան, Մեծ ոճիրը, էջ 88:

հետո ենթարկվեց թուրքական իշխանությունների նոր, զարհուրելի հեղեղնագործություններին: Արաբական անապատներում թուրքերը կազմակերպեցին հայության երեք մեծ ու սուկալի ջարդեր, որոնց զոհ գնացին հարյուր հազարավոր տարագիրներ: Առաջին ջարդը տեղի ունեցավ Ռասսու-Այնում, ուր զոհվեցին մոտ 70000 հայեր: Երկրորդ ջարդն իրականացվեց Ինթիլի մեջ, ուր սրի քաշվեցին մեծ մասամբ Բաղդադի երկաթուղագծի վրա աշխատող ավելի քան 50000 հայ տարագիրներ: Երրորդը, որը եղավ անապատները հասցված հայության ամենազարհուրելի սպանողը, կատարվեց Տեր-Չորում, ուր կառավարիչ Ջեքի-բեյի հրամանով ոչնչացվեց ավելի քան 200 հազար մարդ²⁰: Եթե դրանց ավելացնենք նաև հիվանդությունների և սովի հետևանքով տեղի ունեցած կորուստները, ապա անապատների մեջ զոհվածների թիվը շատ ավելին կլինի: Տասնյակ հազարավոր հայ տարագիրներ նահատակվել են Հալեպում, Մեսքենեում, Մարաթում, Շետատեում, Սուվարի ավազուտներում և Եփրատի երկայնքով ձգված գաղթականական մյուս ճամբարներում²¹: Ահա թե ինչ դաժան մեթոդներով էին թուրքական շովինիստները արաբական անապատներում ոչնչացնում հայ կանանց ու երեխաներին, որպեսզի «արմատախիլ» անեին մտացածին «հայկական ապստամբությունը» Փոքր Ասիայում:

Այսպիսով, արևմտահայության մեծամասնության բնաջնջումը իրականացվեց հաջորդական երեք էտապներով՝ երկրում կազմակերպված ջարդերի միջոցով, տարագրության քարավանների ուղեգնացության ընթացքում և արաբական ամայի անապատներում: Տարագրությունը բնավ չսահմանափակվեց մերձազամակատային գոտով, այլ տարածվեց թուրքիայի հայաբնակ բոլոր բնակավայրերի և նույնիսկ Կ. Պոլսի վրա: Ընդունված ընդհանուր կարծիքի համաձայն: թուրքական կառավարության կազմակերպած հայկական ցեղասպանության վերջնական արդյունքը եղավ համաշխարհային պատմության մեջ նորագույն ժամանակներում աննախընթաց պլանաչափ ոչնչացումը հայ ժողովրդի մի խոշոր հատվածի²²:

²⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 18:

²¹ Տե՛ս նույն տեղում, էջ 18—19:

²² Հայերի տարագրության և ջարդերի մասին ավելի մանրամասն տե՛ս

«Геноцид армян в Османской империи», сборник документов и материа-

лов, под ред. М. Г. Нерсисяна, изд. «Айастан», Ереван, 1982. Զ. Ս. Կիրակոսյան, Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը (1914—1916 թթ.) աշխատությունը, Երևան, 1965, էջ 217—356:

թուրքիայում հայության բնաջնջման վերաբերյալ հաղորդումները խոր զայրույթով ընդունեցին բոլոր առաջադեմ մարդիկ: Շատերն իրենց արդար բողոքի ձայնը բարձրացրին հարյուր հազարավոր անմեղ մարդկանց նկատմամբ գազանային դատաստանի հեղինակների դեմ և անարգանքի սյունին գամեցին հանցագործներին: Հայության ոչնչացման դեմ իրենց ցասումնալից բողոքի խոսքն ասացին Մարսել Կաշենն ու Անատոլ Ֆրանսը, Վալերի Բրյուսովն ու Յան Ռայնխսը, Կարլ Լիբկնեխտն ու Իոհաննես Լեփսիուսը, Հանրի Բարբին ու Հերբերտ Գիբոնսը, անգլիացի ուսանող Թոլիբբին ու ամերիկյան գրող Ջոն Ռիդը, լեհ բանաստեղծ Վալերի Յազվեցկին և շատ ուրիշներ: Սակայն, հասկանալի է, որ դա այն ժամանակ չէր կարող կասեցնել թուրքական ջարդարարների վայրագությունները: Պրոֆ. Իոհ. Լեփսիուսը վճռականորեն բողոքեց թուրք ջարդարարների հետ համագործակցած գերմանական կառավարության դեմ և հրատարակեց հայկական կոտորածների իսկությունը պարզաբանող ու

лов, под ред. М. Г. Нерсисяна, изд. «Айастан», Ереван, 1982. Զ. Ս. Կիրակոսյան, Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը (1914—1916 թթ.) աշխատությունը, Երևան, 1965, էջ 217—356:

այն իրականացնողներին մերկացնող փաստաթղթերի արժեքավոր ժողովածուներ²³:

Արդեն իրենց շարագործություններն ավարտելուց հետո Քալեաթը ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուին բացեիբաց խոստովանել էր, որ հայերի նկատմամբ իրենց քաղաքականությունը նախօրոք որոշված էր և ոչինչ չէր կարող այն փոխել: Բնավ պատահական չէր, որ այդ ծրագրի կենսագործումից հետո նա լիտիաբար պարծենում էր, թե «հայկական խնդիրը լուծելու տեսակետով երեք ամսվա մեջ ես ավելի գործ կատարեցի, քան Ապտոլու Համիտ երեսուն տարվա մեջ»²⁴ և «հայկական հարցն այլևս գոյություն չունի, քանի որ Թուրքիայում հայեր այլևս գոյություն չունեն»²⁵:

* * *

Չնայած լուրջ դժվարություններին, անհրաժեշտ է գտնել մոտավորապես պարզել, թե համաշխարհային պատերազմի տարիներին, մասնավորապես 1915—1916 թվականներին, որքան հայեր զոհ գնացին զանգվածային կոտորածների ժամանակ, տարագրության ճանապարհին և արաբական անապատների ավազուտներում, որպեսզի ավելի պարզ ու որոշակի դառնա երիտթուրքական կլիկի ոճրագործությունների ամբողջ պատկերը:

Այս խնդրի լուծումը դժվարանում է ոչ միայն այն պատճառով, որ անհնար է վերականգնել զոհերի ճշգրիտ թիվն ընդհանրապես, այլև այն բանի հետևանքով, որ անգամ նախքան պատերազմն ստույգ տվյալներ չկան արևմտահայության թվի մասին: Հայության թիվը Թուրքիայում որոշելիս, բնավ չի կարելի վստահել թուրքական աղբյուրներին, որովհետև դրանք միշտ էլ դիտավորյալ կերպով խեղաթյուրել ու նվազեցրել են քրիստոնյաներին վերաբերող վիճակագրական տվյալները և ուռճացրել մահմեդականների թիվը, որպեսզի ցույց տան, թե իբր

վերջիններս մեծամասնություն են կազմում առաջինների համեմատությամբ: Այնինչ մինչև XIX դարի կեսերը հայերն Արևմտահայաստանում կազմել են բնակչության բացարձակ մեծամասնությունը: Սակայն այդ ժամանակներից արդեն սկսվեց հայ ժողովրդի սիստեմատիկ բնաջնջման քաղաքականությունը, որը հասցրեց ողբերգական հետևանքների: Աբդուլ Համիդի և ապա երիտթուրքերի տիրապետության տարիներին զանգվածաբար կոտորելով ու դուրս մղելով հայերին, թուրքական կառավարությունը նրանց տեղում բնակեցնում էր թուրք մուհաջիրներին, քրդերին, շերքեզներին և այլոց: Մյուս կողմից՝ կյանքի ապահովության երաշխիքի բացակայության, սիստեմատիկ բռնությունների ու հետապնդումների հետևանքով հայերն իրենք հարկադրված գաղթում էին Ռուսաստան, Բալկաններ, Ամերիկա և այլուր: Չնայած այդ ամենին, այնուամենայնիվ, մինչև առաջին համաշխարհային պատերազմի եղբրական իրադարձությունները արևմտահայության հիմնական զանգվածն ապրում էր իր հայրենիքում:

Համաձայն Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի վիճակագրության, Օսմանյան կայսրության սահմաններում 1912 թվականին ապրում էր 2,1 միլիոն հայ, որից 1,018 հազար՝ Արևմտահայաստանում, 145 հազար՝ հայկական վեց նահանգներին սահմանակից տերիտորիաներում, 407 հազար՝ Կիլիկիայում և 530 հազար՝ երկրի այլ շրջաններում: Արևմտյան Հայաստանում հայերը կազմում էին ամբողջ բնակչության 38,9 տոկոսը, մինչդեռ թուրքերի թիվը այդտեղ հասնում էր 666 հազարի կամ 25,4 տոկոսի, քրդերը կազմում էին 16,3 տոկոս, մնացած ժողովուրդները՝ 19,4 տոկոս: Բոլոր քրիստոնյաները միասին կազմում էին Արևմտյան Հայաստանի ազգաբնակչության ընդհանուր թվի 45,2 տոկոսը²⁶:

Հայկական պատվիրակների կողմից 1919 թ. փետրվարին Փարիզի խաղաղության կոնֆերանսին ներկայացված հուշագրում հայության թիվը Թուրքիայում 1914 թվականին ցույց է տրված 2,026 հազար մարդ, որից հայկական նահանգներում՝ 1,403 հազար, Կիլիկիայում՝ 440 հազար և Կ. Պոլսում ու կայսրության

²³ Տե՛ս J. Lepsius, „Bericht über Lage des armenischen Volkes in der Türkei“, Potsdam, 1916. և „Deutschland und Armenien 1914—1918. Sammlung diplomatischer Aktenstücke“. Hrsg. von der Dr. J. Lepsius, Potsdam, 19.9.

²⁴ Տե՛ս «Մորկընթաուի հիշատակները», էջ 284:

²⁵ E. B. Tarle, Сочинения, т. V, М., 1958, էջ 308:

²⁶ Տե՛ս «Сборник дипломатических документов. Реформы в Армении», Петроград, 1915, էջ 289:

եվրոպական մասում՝ 183 հազար²⁷, Արևմտահայ անվանի բանասեր Թեոդիկը Թուրքիայում հայերի թիվը՝ պատերազմից առաջ հաշվում էր 2.026.700 մարդ²⁸: Այսպիսով, ինչպես վկայում են հայկական աղբյուրները, կարելի է վստահորեն պնդել, որ նախապատերազմյան Թուրքիայում ապրող հայության թիվն անցնում էր երկու միլիոնից:

Մտաւորապես վերականգնելով նախապատերազմյան շրջանում թուրքական տիրապետութեան տակ ապրող հայութեան ընդհանուր թիվը, անհրաժեշտ է պարզել նաև նրա կրած կորուստները: Ուրեմն դառնանք այն հարցին: Թե որքա՞ն հայեր զոհվեցին Թուրքիայում առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ: Ուրիշ ժողովուրդների կորուստները այդ պատերազմի տարիներին սակավ դեպքերում են գերազանցել նրանց ընդհանուր թվի 10 տոկոսին, մինչդեռ հայութեան զոհերը կազմում են նրա ընդհանուր թվի ավելի քան մեկ շորորդը, իսկ արևմտահայութեան՝ երկու երրորդը: Պատերազմի տարիներին հայ ժողովրդի կրած նյութական վնասները ևս հսկայական են ու անվերադարձ:

Նվրոպական, մասնավորապես անգլիական ու ֆրանսիական աղբյուրները՝ համաձայն, համաշխարհային պատերազմի ժամանակ թուրքական ջարդարարների ձեռքով զոհվել են 800 հազար հայեր, մի այդքան էլ բռնագաղթի միջոցով հեռացվել են երկրից, բայց նրանց հազիվ 1/3-ն է անվնաս տեղ հասել ու ողջ մնացել: Հենրի Մորգենթաունը նշում է, որ վեց ամսվա ընթացքում՝ 1915 թ. ապրիլից մինչև հոկտեմբեր, դեպի արաբական անապատներն են քշվել 1.200 հազար հայեր, որոնց մեծ մասը զոհվել է հենց ճանապարհին: Ըստ Իոհ. Լեփսիուսի, 1915—1916 թթ. Թուրքիայից տեղահանվել են մոտ 1.400 հազար հայեր, որոնց հազիվ 10 տոկոսն է աքսորվալը հասել, իսկ մնացած 90 տոկոսը ոչնչացել է տարագրութեան ճանապարհին²⁹:

Հակառակ այս անկողմնակալ ու անհերքելի փաստերին, կեղծելով իրականությունը, թուրքական պաշտոնական աղբյուր-

ները զոհված հայերի թիվը ցույց են տալիս ընդամենը 300 հազար: Հարկ չկա ապացուցելու, որ դա խիստ միտումնավոր ու նվազեցված թիվ է և պետք է առնվազն հնգապատկել, ավելացնելով նաև թիվն այն զոհերի, որոնք եղան ոչ միայն անմիջականորեն թուրքական յաթաղանից, այլև տարագրության ճանապարհներին ու արաբական անապատներում կրած տանջանքներից, քաղցից և հիվանդություններից:

Պողոս Նուբար փառալուսի գլխավորած Ազգային պատվիրակության հավաքած տվյալների համաձայն արևմտահայերի ընդհանուր կորուստը հասնում է մեկուկես միլիոն մարդու: Ումանք հաշվում են մեկ միլիոն երկու հարյուր հազար, ուրիշները՝ մոտ մեկ միլիոն:

Այդ հարցը պարզելու դժվարությունը նաև այն է, որ ստույգ տվյալներ չկան պատերազմից հետո Թուրքիայում մնացած հայերի թվի մասին, և խիստ թերի են տեղեկությունները գաղութահայութեան վերաբերյալ: Այդ մասին գրեթե չկան անհրաժեշտ վիճակագրական տվյալներ ու աղբյուրներ, որոնք գեթ մոտավոր շահով բավարարեին գիտական նվազագույն պահանջները և համապատասխանեին իրականությանը: Հայտնի չէ նույնպես թիվն այն հայերի, որոնք հարկադրաբար մահմեդականացած կամ առանց կրոնափոխության ապրել են թուրքերի, քրդերի և արաբների մեջ: Պատերազմից հետո Թուրքիայում մնացած հայերի վերաբերյալ սկզբնական շրջանում հանրային գործածության մեջ էր 100 հազար թիվը, բայց ակնհայտ է դրա խիստ նվազեցված լինելը: Պետք է ենթադրել, որ նրանց թիվն անհամեմատ ավելի մեծ էր:

Վերոհիշյալ կնճոտ հարցերին ժամանակին փորձել է պատասխանել Թեոդիկը: Նա հավաքել ու հրատարակել է տեղահանությունից առաջ և հետո, 1921 թ. ապրիլի 1-ի դրությամբ, Օսմանյան կայսրության մեջ ապրող հայ բնակչության բաղադատական վիճակագրությունը: Դրա համաձայն պատերազմից առաջ Թուրքիայի հայ բնակչության թիվը կազմում էր 2.026.700 մարդ, իսկ ջարդերից ու տեղահանությունից հետո վերապրողներինը՝ 592.200³⁰: Վերապրողների մեջ Թեոդիկը հաշվել է նաև նրուսաղեմում, Բեյրութում, Բաղդադում, Բասրայում, Մոսկուում, Դամասկոսում և Հալեպում եղած հայությունը: Մյուս կողմից՝

²⁷ Տե՛ս «Армянский вопрос перед мирной конференцией», Екатеринбург, 1919, էջ 21 — 23:

²⁸ Տե՛ս Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Կ. Պոլիս, 1922, էջ 263:

²⁹ Տե՛ս Տոֆ. Նոն. Լեփսիուս, Հայաստանի ջարդերը, էջ 312:

³⁰ Տե՛ս Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1922, էջ 261—263:

այդտեղ նկատի է առնված նաև պատերազմից հետո Կիլիկիա, Կ. Պոլիս և այլուր վերագաղթած հայութունը: Նկատի ունենալով այդ հանգամանքները, Քուրքիայում մնացած հայերի թվի հտպատերազմյան ժամանակաշրջանին վերաբերող տվյալները պետք է ընդունել խիստ վերապահությամբ: Ինչպես ասվեց, նրանցից շատերը զինադադարից հետո հատկապես Կիլիկիա վերադարձածներն էին, որոնք հետագայում կրկին ենթարկվեցին անմարդկային ջարդերի՝ այս անգամ արդեն քեմալականների կողմից: Համեմատելով նախապատերազմյան ու հտպատերազմյան տարիների հայ բնակչության թիվը ցույց տվող տվյալները, պարզվում է, որ 1915—1916 թթ. տեղի ունեցած հայկական ջարդերի հետևանքով զոհվել են մոտ մեկուկես միլիոն հայեր, իսկ մնացածները՝ մեծ մասամբ կանայք ու երեխաներ, ցրվել են արաբական անապատներում³¹: Արևմտահայության այդ հալածական բեկորները, ձգտելով խույս տալ անխուսափելի ոչնչացումից, փորձում էին ամենափոքր իսկ հնարավորության դեպքում հեռանալ արաբական անապատներից, մեկնել արևմտաեվրոպական երկրներ, Բալկաններ, Ամերիկա և այլուր, հուսալով գտնել փրկություն: Սակայն ամենուրեք նրանք հանդիպում էին անասելի դժվարությունների և, ցրվելով զանազան երկրներում, անտուն ու անհույս դեգերում էին, կրելով բազում զրկանքներ:

Սրբ այսպես օրեցօր հալվում էին արևմտահայության վերջին բեկորներն արաբական անապատներում և այլ երկրներում, ողբալի վիճակում էին գտնվում նաև Անդրկովկասում ապաստանած հայ փախստականները, որոնց թիվը անցնում էր 400 հազար մարդուց: Ծիշտ է, այստեղ չկար թուրքական արյունոտ յաթաղանի անխնա բնաջնջումը, բայց այստեղ էլ իրենց սև գործն էին կատարում սովն ու համաճարակային հիվանդությունները: Այդ տարիների հայկական մամուլը լեցուն է գաղթականների աղեկտուր վիճակի նկարագրություններով, որոնց վերհիշումն անգամ այսօր սարսուռ է առաջացնում:

Սվ այսպես, դեպի անխուսափելի մահ էր գնում թուրքական յաթաղանից հազիվ ազատված արևմտահայ գաղթականությունը, սակայն չէր երևում ոչ մի ուժ՝ նրան փրկելու համար: Անտանտի տերությունները, որոնք կեղծավորաբար ի-

րենց «փոքրիկ դաշնակիցն» էին անվանում հայ ժողովրդին, և որոնց քաղաքականության զոհն էր դարձել վերջինս, անտարբերությամբ ու նույնիսկ թշնամանքով էին վերաբերվում նրա արդարացի պահանջներին:

Այդպիսի պայմաններում հայ ժողովրդի համար փրկության և ազգային վերածննդի իրական ուղի նշեց 1917 թվականի հոկտեմբերին Ռուսաստանում հաղթանակած սոցիալիստական հեղափոխությունը, որը նոր դարագլուխ բացեց մարդկային հասարակության պատմության մեջ: Հոկտեմբերյան հեղափոխությունը խառնեց իմպերիալիստական տերությունների ու խմբավորումների բոլոր հաշիվները համաշխարհային պատերազմի ետևն օրերին և արմատապես փոխեց միջազգային դրությունը նաև Մերձավոր արևելքում: Աշխարհում առաջին սովետական կառավարությունը հանդես եկավ արտաքին քաղաքականության միանգամայն նոր սկզբունքներով: Կտրականապես հրաժարվելով ցարական և ժամանակավոր կառավարությունների վարած զավթողական քաղաքականությունից, Սովետական Ռուսաստանը բոլոր ժողովուրդներին ու պետություններին դիմեց արդարացի հաշտության կնքման և խաղաղության հաստատման կոչով: Ծնշված, իրավազուրկ ու շահագործվող ժողովուրդների և ազգությունների համար հսկայական նշանակություն ունեցան Սովետական Ռուսաստանի ներքին ու արտաքին քաղաքականության մի շարք կարևորագույն ակտերը, այդ թվում՝ խաղաղության մասին դեկրետը, «Ռուսաստանի և Արևելքի բոլոր աշխատավոր մահմեդականներին» ուղղված դիմումը, ռուսական զորքերի դուրս բերումը ուրիշ երկրներից, Արևմտյան Հայաստանի վերաբերյալ դեկրետը և այլն³²:

Բազմաշարժար արևմտահայությունը, ինչպես և ամբողջ հայ ժողովուրդը, խորին գոհունակությամբ ընդունեց տվյալ պայմաններում իր շահերին ու բաղձանքներին համապատասխանող այդ դեկրետը:

Սակայն մի կողմից գերմանա-թուրքական ու անգլո-ամերիկյան իմպերիալիստների զավթողական քաղաքականության, իսկ մյուս կողմից՝ ռուսական ու անդրկովկասյան հակահեղափոխական ուժերի ծավալած հակասովետական գործունեության

³¹ Տե՛ս նույն տեղում, էջ 264:

³² Տե՛ս «Декреты Октябрьской революции», М., 1933, էջ 393:

հետևանքով հնարավոր չեղավ իրականացնել հայ ժողովրդի համար պատմական բացառիկ կարևոր նշանակություն ունեցող այդ դեկրետը, որը հուշակամ էր արևմտահայության ազատ ինքնորոշման անկապտելի իրավունքը՝ ընդհուպ մինչև լիակատար անկախության հաստատումը: Օգտվելով Սովետական Ռուսաստանի համար ստեղծված լուրջ դժվարություններից և անդրերկրկապյան հակահեղափոխական բլոկի անձարակությունից, թուրքական շովինիստները շուտով կրկին զավթեցին Արևմուտքյան Հայաստանը: Ավելին, թուրքական զորքերը ներխուժեցին Անդրերկրկապ և իրենց շարդարարական գործունեությունը ծավալեցին նաև արևելահայության նկատմամբ, չնայած վերջինիս օրհասական դիմադրությանը և փայլուն հերոսամարտերին 1918 թ. մայիսին Սարդարապատում, Բաշ Ապարանում և Ղարաքիլիսայում:

Ինչ խոսք, որ այդպիսի իրադրության մեջ ամեն կողմից թշնամիներով շրջապատված հայությունը փրկություն չէր կարող բերել արկածախնդրական պլաններով ասպարեզ մտնող դաշնակցական կառավարությունը, որի օրոք ոչ միայն արևմտահայ գաղթականությունը, այլև ամբողջ հայ ժողովուրդը արագորեն գնում էր դեպի մահ:

Դաշնակցության անիրականանալի երազանքներն ու անհեռատես քաղաքականությունը իրենց ողբալի հետևանքներով դրսևորվեցին նաև գաղթականության հարցում: Սպասելով Անտանտի կողմից Հայաստանի սահմանների իբր թե որոշմանը (ծայրահեղ պարագայում գեթ մոտակա երեք-չորս վիլայեթները Արևելյան Հայաստանին կցելու ձևով), դաշնակցական կառավարությունը լավագույն դեպքում սահմանափակվում էր երբեմն-երբեմն մի կտոր հացի կամ հնամաշ հագուստեղենի ու նպաստի բաշխման միջոցով արևմտահայ գաղթականությանն իրեն որպես հուսալի հենարան ծառայեցնել:

Ուժերի ուժալ հարաբերակցությունը երբեք հաշվի չառնելու դաշնակների անհեռատես քաղաքականության հետևանքով 1915 թվականից ի վեր տառապող արևմտահայ գաղթականության վիճակը ոչնչով չբարելավվեց: Ընդհակառակը, հետագայում նրան ավելացան նաև քեմալականների կողմից Հայաստանից նրան ավելացան նաև քեմալականների կողմից Հայաստանից գրավված նոր տերիտորիաների հայ, բուրգ, եզդի, ասորի և ռուս-մոլդկան բնակիչների զանգվածները:

Այսպիսով, հարյուր հազարավոր անարտադրող ու անօթևան

գաղթականությունը ծանր բեռի նման ընկած էր փոքրիկ ու աղքատ Հայաստանի հանրապետության տեղական բնակչության ուսերին: Տարիներ շարունակ կտրված լինելով հողից ու տրնտեսությունից և օտարանալով օգտակար աշխատանքից, գաղթականությունը վեր էր ածվել թշվառ մուրացկանների մի հոծ զանգվածի, որը նպաստավոր միջավայր էր նաև ամեն տեսակ հանցագործ տարրերի ու խմբերի առաջացման համար:

Դաղթականության վիճակի թեթևացման գործում դաշնակցական կառավարության անհոգի վերաբերմունքն ու լիակատար անձարակությունը բացահայտ կերպով դրսևորվեց Միջագետքում ապաստան գտած հայ տարագիրների նկատմամբ նրա բռնած դիրքով: Այնտեղ կուտակված գաղթականությունը, որը գտնվում էր շատ ծանր պայմաններում, դժվարին կացությունից դուրս գալու ելք էր որոնում: Երբ այդ գաղթականությունն իր թշվառ դրուության մասին Ամենայն հայոց կաթողիկոսի միջոցով տեղեկացրեց դաշնակցական կառավարությանը, վերջինս նրան օգնելու փոխարեն դիմեց ուղղակի խաբեության³³:

Դաշնակների կառավարությունը ըստ էության ոչինչ չէր անում երկրում կուտակված գաղթականության հարցը արմատապես լուծելու կամ զանազան գաղթօջախներում դեգերող տարագիրների դրուությունը փոքր ի շատե բարվոքելու ուղղությամբ: 1920 թ. օգոստոսին դաշնակցական կառավարությունը քննարկեց արտաքին գործերի նախարարի զեկուցումը գաղութներում տարվելիք աշխատանքների մասին և որոշում կայացրեց նույն նախարարության կազմում հիմնել գաղութային բաժին՝ նրանց «նյութական ու բարոյական ուժերը Հայաստանի օգտին օգտագործելու նպատակով»³⁴:

Դաշնակների կառավարության արտաքին գործերի նախարարության գաղութային բաժնի կազմակերպման վերաբերյալ հրահանգներ պարունակող փաստաթղթերը ակնհայտորեն ցույց են տալիս, թե ամենից առաջ ինչ ունալ նպատակներ էին հետապնդում նրանց հեղինակները: Այդ մասին եղած փաստաթղթերից մեկում ասված է, որ գաղութային բաժինը «կկազմակերպի Հ. (այստանի) Հ. (անրապետության) օժանդակիչ

³³ Տե՛ս ՆՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 68/200, ց. 1, գ. 204, թ. 107—108 և «Երևան», Էնօրյա թերթ, Փարիզ, 28 ապրիլի, 1929 թ., № 498:

³⁴ ՆՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 68/200, ց. 1, գ. 448, թ. 182:

միություններ 2. 2. արտասահմանյան դիվանագիտական ներկայացուցիչների հսկողութիւն տակ, Հայաստանի վերաշինութեան և ներգաղթի գործին աջակցելու համար (թղթի վրա գրված լինելու և միամիտներին խաբելու նպատակով.—2. Մ.) և կրհաստատի ու կգանձի հայրենիքի տուրք հայ գաղութներու անդամներին»³⁵ (մի բան, որն առանց գրվելու էլ գանձվում էր և մուտք արվում դաշնակցական պարագլուխների գրպանները՝ հատկապես արտասահմանում եղած ժամանակ հաճույքներից զուրկ շմնալու համար): Եվ իրոք, դաշնակները տարբեր անուններով (բանակի, ճակատը պաշտպանելու, անկախութեան փոխառութեան և այլ ֆոնդերի անվան տակ) հսկայական գումարներ էին կորզում հայկական գաղթավայրերից և դրանք ծառայեցնում իրենց կուսակցական ու անձնական շահերին³⁶:

Խիստ անմխիթարական էր հայ գաղթականութեան վիճակը նաև Վրաստանում և Ադրբեջանում, որտեղ կուտակված հայ տարագիրների նկատմամբ մենշևիկներն ու մուսավաթականները բացահայտ թշնամական վերաբերմունք էին դրսևորում:

Այդ տարիներին հայ գաղթականութեանը միակ ռեալ օգնություն ցույց տվող երկիրը Սովետական Ռուսաստանն էր, ուր ապաստան էին գտել տասնյակ հազարավոր գաղթականներ ու որբեր: Անկասկած է, որ թուրքական արշավանքների սարսափներից, դաշնակցական կառավարութեան անհոգատարութեանից և մենշևիկների ու մուսավաթականների բացահայտ թշնամական քաղաքականութեանից բացի, հայ տարագիրներին դեպի հյուսիս մղող զորավոր պատճառներից մեկն էլ Սովետական Ռուսաստանի անշահախնդիր ու հոգատար վերաբերմունքն էր նրանց նկատմամբ: Չնայած քաղաքական ու տնտեսական իր դժվարին կացութեանը, Սովետական Ռուսաստանն աշխատում էր որքան հնարավոր է թեթևացնել նրանց վիճակը և ստեղծել տանելի պայմաններ: Հենց միայն Հյուսիսային Կովկասում; ոչ լրիվ տվյալներով, 1920 թվականի աշնանը կուտակված էին ավելի քան 130 հազար հայ գաղթականներ, որոնց նյութական ու բարոյական զգալի աջակցություն էր ցույց տալիս ՌՍՖՍՀ

Կենտրոնական վերաբնակեցման Կովկասյան հատուկ լիազորությունը³⁷:

ՌՍՖՍՀ Ազգությունների գործերի ժողովմատի հայկական կոմիսարիատը Ռուսաստանի և Ուկրաինայի բազմաթիվ քաղաքներում, որոնք ողողված էին հայ գաղթականներով ու որբերով, բացել էր տասնյակ որբանոցներ, դպրոցներ, հիվանդանոցներ, արտելներ, սննդակայաններ և այլն: Միայն 1918—1919 թվականների տասն ամսվա ընթացքում ՌՍՖՍՀ ժողովմախորհի կողմից հայ գաղթականութեան համար կենտրոնացված կարգով բաց էր թողնվել ավելի քան 10 միլիոն ռուբլի նպաստ, 200 հազար արշին կտորեղեն, 30 հազար կտոր պատրաստի հագուստ, մեծ քանակությամբ կոշիկեղեն և այլ պարանքներ: Հայ գաղթականների համար մայրենի լեզվով հրատարակվում էին թերթեր, գրքույկներ և այլն, որոնք պրոպագանդում էին կոմունիստական կուսակցության ու սովետական կառավարության քաղաքականությունը, նրանց համախմբում սովետական իշխանության շուրջը: Եվ բնավ պատահական չէր, որ երախտապարտ հայ գաղթականները բազմաթիվ նամակներով ու հեռագրերով իրենց շնորհակալութեան անկեղծ խոսքն էին հղում ռուս ժողովրդին, կոմունիստական կուսակցությանն ու սովետական կառավարությանը, անձամբ Վ. Ի. Լենինին՝ ցուցաբերած ջերմ հոգատարութեան և հսկայական օգնության համար³⁸:

Մինչդեռ գաղթականութեան անունը ամենուրեք շահագործող դաշնակների կառավարությունը ոչ միայն արմատական միջոցներ չէր ձեռնարկում նրա հարցի լուծման ուղղությամբ (ասենք, նա իրականում չէր էլ կարող այդ անել), այլև իմպերիալիստական տերությունների օգնության հույսի վրա կառուցած իր արկածախնդրական քաղաքականությամբ ուղղակի ապակողմնորոշում էր ժողովրդին:

Միայն Հակոբեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության ծնունդ 1920 թվականի նոյեմբերին Հայաստանում հաղ-

³⁷ Տե՛ս Հայկական ՍՍՀ Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պետական կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՀՍՍՀ ՀՀՄԾ ՊԿԱ), ֆ. 40/113, ց. 3, գ. 21, թ. 49—54:

³⁸ Տե՛ս «Հայ փախստականներին» գրքույկը, հրատ. հայկական կենտրոնական կոմիսարիատի, Մոսկվա, 1919: Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Ս. Ս. Ալիսանյան, Հայկական գործերի կոմիսարիատի գործունեությունը (1917—1921), Հայպետհրատ, Երևան, 1958, էջ 86—127:

³⁵ Նույն տեղում, գ. 403, թ. 6:

³⁶ Տե՛ս «Ենթահրդային Հայաստան», օրաթերթ, Երևան, 24 մարտի, 1923 թ.,

Թանակած սովետական իշխանությունը փրկության ուրի բացեց ամբողջ հայ աշխատավորության, այդ թվում՝ ինչպես երկրում գտնվող արևմտահայ գաղթականության, այնպես էլ սփյուռքում դեզերող տարագիր հայության համար:

Սովետական Հայաստանի կառավարությունը, որպես հայ աշխատավորության շահերի իսկական պաշտպան, երբեք անտարբեր չմնաց դաժան ճակատագրի բերումով դժնդակ պայմաններում գտնվող և օգնություն հայցող պանդուխտ հայության հանդեպ: Սովետական կառավարությունը հենց սկզբից հետևողականորեն շարունակ անդրադառնում էր այն հարցին, թե ղեպի ո՞ւր է թեքվում նրա հայացքը, ի՞նչ անցուղարձեր են կատարվում սփյուռքահայության մեջ:

Սովետական կառավարությունը երբեք չէր կարող աչքաթող անել այն պարզ իրողությունը, որ այն ժամանակ Հայաստանի սահմաններից ներս ապրում էր ավելի քիչ հայություն (1920 թվականին Սովետական Հայաստանի ժառանգած ամբողջ բնակչության թիվը կազմում էր ընդամենը 720 հազար մարդ), քան դրսում և որի ճնշող մեծամասնությունը կազմում էին թուրքական յաթաղանից մի կերպ փրկված աշխատավորական տարրերը: Մինչև 1915 թ. եղերական իրադարձությունները հայրենիքից դուրս ապրող հայության թիվը (առաջ բուն ռուսական և օսմանյան կայսրությունների լայնածավալ տերիտորիաներում բնակվողների) հասնում էր մոտ 200 հազարի, որից մոտ 100 հազարը՝ Իրանում, 25 հազարը՝ Բուլղարիայում, 10 հազարը՝ Ռումինիայում, 20 հազարը՝ Եգիպտոսում և Հաբեշտանում (Եթովպիա), իսկ մնացածը՝ ավելի փոքր զանգվածներով ցրված էր Եվրոպայի, Ասիայի և Ամերիկայի այլևայլ երկրներում³⁹: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ և դրանից հետո, զանգվածային կոտորածներից փրկված ու բռնազաղթի միջոցով Թուրքիայից արտաքսված հայության բեկորները անհամատ ստվարացրին ու բազմապատկեցին հայկական գաղթօջախներն աշխարհի տարբեր անկյուններում, ստեղծելով ընդարձակածավալ հայկական սփյուռքը: Ի դեպ, սփյուռք տեղմինը մեր լեզվում լայն գործածության մեջ մտավ փաստորեն առաջին համաշխարհային պատերազմից հետո և մեզ համար ունի

մեր ժողովրդի աշխարհացրիվ վիճակն արտահայտող աշխարհագրական ու քաղաքական որոշակի իմաստ:

Մեր կարծիքով անհրաժեշտ է որոշակի ճշգրտում կատարել գաղութահայ և սփյուռքահայ հասկացությունների հարցում: Իրանք երկուսն էլ մեզանում հավասարապես օգտագործվում են արտահայտելու համար հայրենիքից դուրս ապրող հայկական համայնքների գոյությունը: Սակայն այդ հին ու նոր համայնքներն իրարից տարբերվում են ոչ միայն իրենց ծագումով, այլև ընդհանրապես հայ իրականության մեջ ունեցած դերով ու բնույթով: Ուստի տարաշխարհի ներկա հայկական համայնքների համար, մեր կարծիքով, ավելի նպատակահարմար է օգտագործել սփյուռքահայ բառը:

Հայկական նախկին գաղութներն առաջացել և գոյություն են ունեցել այն ժամանակ, երբ դեռևս հայ ժողովրդի ճնշող մեծամասնությունն ապրում էր իր հայրենիքում: Մինչդեռ ժամանակակից հայկական սփյուռքը ձևավորվեց թուրքական կառավարության կազմակերպած գենոցիդի հետևանքով, արևմտահայության զանգվածային տեղահանությունից հետո, երբ հայ ժողովրդի պատմական հայրենիքի մի մեծ մասը ուղղակի հայազրկվեց: Արևմտահայության կենդանի մասցած բեկորներն ու նրանց նոր շառավիղները կազմեցին ժամանակակից սփյուռքահայությունը:

Հայկական սփյուռքի կազմավորումը փաստորեն զուգահեռապես Արևելյան Հայաստանում հայկական սովետական սոցիալիստական պետականության հաստատման հետ, որը չէր կարող իր կնիքը չդնել արտերկրի հայության կողմնորոշման և հետագա ճակատագրի վրա: Իր գոյության հենց սկզբից Սովետական Հայաստանը փրկության խարիսխ դարձավ ոչ միայն հանրապետությունում եղած հայության համար, այլև աշխարհասփյուռ արևմտահայության տարագիր հատվածի համար: Բոլոր «բարեկամներից» խաբված ու լքված սփյուռքահայության համար Սովետական Հայաստանը դարձավ հույսի կարևոր ապավեն: Հայաստանում սովետական իշխանության հաղթանակի լուրը ուրախությամբ ընդունվեց հայրենաբաղձ սփյուռքահայ աշխատավորների կողմից, որոնք դասակարգային որոշակի տրամաբանությամբ հենց սկզբից վճռականորեն դիմուղղվեցին դեպի Սովետական Հայաստան, անվերապահորեն կանգնեցին

³⁹ Տե՛ս շՄՍՀ 22ՄԵ ՊԿԱ, ֆ. 4/114, ց. 2, գ. 88, թ. 47—48 և ֆ. 113, ց. 3, գ. 53, թ. 72:

Նրա պաշտպանութան դիրքերում, նրանում տեսնելով իրենց իշ-
ձերի իրականացման միակ հնարավորությունը:

Այժմ փորձենք, գոնե մտաւոր կերպով վերականգնել
սփյուռքահայության թիվը 20-ական թվականների սկզբների
տվյալներով, շնայած այդ հարցում եղած դժվարություններին
ու բարդություններին:

20-ական թվականների սկզբի տվյալներով բնակչության
թվով ամենամեծը Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախ-
ներն էին: Այն ժամանակ այնտեղ ապաստան էին գտել շուրջ
150 հազար հայեր, որից մոտ 90 հազարը՝ Հալեպում և նրա
շրջակայքում, 18 հազարը՝ Բեյրութում, 8 հազարը՝ Դամասկո-
սում, իսկ մնացածները ցրված էին այլ բնակավայրերում⁴⁰: Մի
կողմից հայության այդ հոծ զանգվածի առկայությունը, փակ մյուս
կողմից արաբ բնակչության հյուրընկալ վերաբերմունքի շնորհիվ
ստեղծված նպաստավոր պայմանները Սիրիայի և Լիբանանի
հայկական գաղթավայրերը դարձրին սփյուռքահայ կարևոր օ-
ջախներ: Հենց այն ժամանակվանից Հալեպն ու Բեյրութը դար-
ձան Մերձավոր արևելքի հայության նշանավոր կենտրոններ՝
իրենց հայկական վարժարանների լայն ցանցով, մտավորական
կարող ուժերով, պարբերական մամուլով, կուսակցական, մշա-
կութային, մարզական միություններով ու ակումբներով:

Իր մեծությունը և ազգային-հասարակական ակտիվ գործու-
նեությունը այնուհետև աչքի էր ընկնում ԱՄՆ-ի հայկական
գաղթօջախը, որի կազմավորումը սկիզբ էր առնում դեռևս անց-
յալ դարի 70-ական թվականներից: Ամերիկյան մայրցամաքի
երեք հայկական գաղթավայրերում, 20-ական թվականների
սկզբում ապրում էր 128 հազար հայ: Դրանից 125 հազարը
կենտրոնացած էր ԱՄՆ-ում և Կանադայում, իսկ շուրջ 3 հա-
զարը՝ Լատինական Ամերիկայի մի քանի երկրներում՝ Արգենտի-
նայում, Ուրուգվայում, Բրազիլիայում, Մեքսիկայում, Կուբա-
յում և այլուր⁴¹: Կանադայի և Լատինական Ամերիկայի հայ-
կական համայնքները բազմացան ու աշխուժացան հատկապես
1922 թվականից հետո, որպես հետևանք Միացյալ Նահանգների
կողմից հայերի զանգվածային ներհոսման դեմ ընդունված օ-
րենքի: Մերձավոր արևելքից ու Եվրոպայից դեպի նոր աշխարհ

⁴⁰ Տե՛ս «Հայաստանի կոչակ», շաբաթաթերթ, Նյու Յորք, 1923 թ., №
25, էջ 794:

⁴¹ Տե՛ս նույն տեղում, 1923 թ., № 3, էջ 85-86:

ուղղված տարագիր հայերի քարավանները, իրենց առջև փակ-
ված գտնելով ԱՄՆ-ի դարպասները, շրջվում էին դեպի Կանա-
դայի և Լատինական Ամերիկայի ափերը: Դեպի Լատինական
Ամերիկա հայերի հոսանքն ուժեղացավ հատկապես Տրանսիլվի-
կոլմից Կիլիկիան լքելուց և այն քեմալականների տնօրինությա-
նը հանձնելուց հետո: Կիլիկիայում քեմալականների կազմակեր-
պած ջարդերից փրկված մարաշցի, այնթապցի, հաճնցի ու
գեյթունցի տարագիրները, որոնք ժամանակավոր ապաստան
էին գտել Սիրիայի ու Լիբանանի գաղթականական կայաննե-
րում, զանգվածորեն ձգվում էին դեպի Ամերիկա: Նրանք էլ
հենց, հաստատվելով Լատինական Ամերիկայի երկրներում,
դարձան այդ շրջանի հայկական գաղթօջախների հիմնական կո-
րիզը: Այդտեղ արագորեն աճում էր հայության թիվը նաև ի
հաշիվ Բալկանների, Իրանի և Թուրքիայում մնացած հայու-
թյան: Այդ մասին է խոսում այն փաստը, որ արդեն 1925 թվա-
կանին Լատինական Ամերիկայում հայության թիվը հասել էր 15
հազարի, իսկ Բուենոս Այրեսը դարձել էր գաղութահայ կյանքի
կարևոր կենտրոններից մեկը: Ինչ խոսք, որ Մերձավոր արևելքի
ու Եվրոպայի մի քանի երկրներում հայության համար ստեղծ-
ված անբարենպաստ պայմանների հետևանքով հեռավոր ամե-
րիկյան աշխարհամաս մեկնող տարագիրները երբեք էլ այնտեղ
չգտան ավելի նպաստավոր պայմաններ: Ինչպես մյուս երկրնե-
րում, այնպես էլ Լատինական Ամերիկայում որոշ շափով ունե-
վոր ու ինքնաբավ վիճակի հասած փոքրաթիվ ընտանիքների
կողքին հսկայական զանգված էին կազմում ծայրահեղ թըշ-
վառություն մեջ արվարձանային խղճուկ հյուղականներում իրենց
գոյությունը հազիվ պահպանող հայ տարագիրները: Չնայած
հայության թվի անընդհատ ավելացմանը, այնուամենայնիվ
Լատինական Ամերիկայի երկրներում մեծ շափերի էր հասնում
ապազգայնացումը, ուղղակի ձուլումը:

Քսանական թվականներին, ըստ իրենց մեծության, հա-
յության հոծ համախմբման տեսակետից, երրորդ տեղը գրա-
վում էին Բալկանյան երկրների՝ բուլղարահայ, ռումինահայ և
հունահայ գաղութները: Բուլղարիայում ապրում էր 46 հազար,
Ռումինիայում (Տրանսիլվանիայի և Բեսարաբիայի հետ միա-
սին)՝ 43 հազար, Հունաստանում և Կիպրոսում՝ 79 հազար
հայ⁴²: Առաջին համաշխարհային պատերազմին հաջորդած զի-

⁴² Տե՛ս նույն տեղում:

նազադարից և հատկապես Ձմյունիայի աղետից հետո, Հունաստանը, ուր վաղուց ի վեր կար հայկական գաղութ, դարձավ լայն բացված դարպասներով հյուրընկալ ապաստան ահավոր սպանդից ճողպարած բյուրավոր հայերի համար: Սակայն այդ տարիներին խիստ հարափոփոխ ու անկայուն էր հայերի թիվը Հունաստանում: Տասնյակ հազարավոր խուճապահար տարագիրներ, հասնելով Պիրեյա, այնտեղից տարածվում էին դեպի Աթենք, Սալոնիկ ու դրանց շրջակայքի գաղթականական կայանները: Թուրքիայում կազմակերպված հայկական որբանոցների հազարավոր որբերը նույնպես, քեմալական հետապնդումների հետևանքով, էվակուացվեցին և տեղավորվեցին Քեֆալոնիայում, Կորնթոսում, Կորֆու կղզում և այլ վայրերում: Բայց օրվա հացի կարոտ, ցնցոտիների մեջ ծայր թշվառության մատնված, տեղի ունեցած սարսափների արհավիրքները վերապրող ու վաղվա անստույգ վիճակի էղձավանջից տանջվող անտուն պանդուխտները խիստ անկայուն վիճակի մեջ էին Հունաստանում, ուստի այնտեղ երկար չէին մնում: Մինչ մի կողմից գաղթականների նորանոր խմբեր էին ապաստանում Հունաստան, նույն ժամանակ նախկիններից հազարավորները այնտեղից մեկնում էին դեպի Ամերիկա, Ֆրանսիա և այլ երկրներ, հուսալով գտնել ավելի բարվոք պայմաններ: Այսպիսով, այդ տարիներին Հունաստանում ապաստանած հայ գաղթականների թիվը խիստ փոփոխական էր:

1922 թվականի վերջերին կատարված հաշվարկումների համաձայն արտասահմանյան մյուս երկրներում գնդութահայությունը տեղաբաշխված էր հետևյալ կերպ. Եգիպտոսում, Սուդանում և Եթովպիայում՝ 28 հազար, Հնդկաստանում, Ճավայում և Հեռավոր արևելքի այլ երկրներում՝ 12 հազար, Եվրոպայում (Ֆրանսիա, Անգլիա, Իտալիա, Հունգարիա, Ավստրիա, Գերմանիա, Չեխոսլովակիա, Հարավսլավիա, Բելգիա, Հոլանդիա և այլն)՝ 38 հազար⁴³:

Սակայն գնալով անընդհատ ստվարանում էր եվրոպական երկրների հայությունը: Օրինակ, արդեն 1925 թվականին միայն Ֆրանսիայում հայերի թիվը հասել էր մոտ 45 հազարի: Ընդհանրապես ֆրանսահայ համայնքը, Մերձավոր արևելքի և ԱՄՆ-ի գաղթօջախներից հետո, ամենահոծ հայկական գաղթօջախը եղավ արտասահմանում:

⁴³ Տե՛ս նույն տեղում:

Բացի վերը թվարկած երկրներից, զգալի թվով՝ մոտ 15 հազար հայեր էլ ապրում էին Միջագետքում (Իրաք) և Պաղեստինում: Եթե այս բոլորին ավելացնենք նաև Իրանի (մոտ 100 հազար) և Թուրքիայում մնացած հայության թիվը, որը հասնում էր 281 հազարի⁴⁴ (150 հազարը Կ. Պոլսում, իսկ 131 հազարը՝ փոքրասիական գավառներում), ապա կարելի է ասել, որ 1920—1922 թվականների տվյալներով սփյուռքահայության ընդհանուր թիվը կազմում էր մոտ 920 հազար մարդ⁴⁵:

Իհարկե, այս թվերը միայն մոտավոր գաղափար կարող են տալ սփյուռքահայության թվի վերաբերյալ, քանի որ եղած աղբյուրները միանգամայն տարբեր տվյալներ են ներկայացնում: Դրա կարևոր պատճառներից մեկն այն է, որ այդ տարիներին չի եղել ճշգրիտ վիճակագրություն: Աննպաստ պայմանների հետևանքով հայությունը շատ երկրներում երկար չէր կարողանում մնալ մեկնույն տեղում, այլ վարում էր թափառական կյանք և հնարավոր չէր լինում որոշել նրա իրական թիվը: Այնուհետև, տարբեր երկրներում գաղթականության հաշվառումը միանգամայն տարբեր սկզբունքներով էր կատարվում և անհնարին էր ստույգ տվյալներ ձեռք բերել: Օրինակ, ԱՄՆ մեկնածների ազգային հատկանիշը որոշվում էր ներգաղթի վարչության գրանցումներով, իսկ երկրի ներսում հետագայում կատարված աճը չէր ավելացվում կոնկրետ ազգության թվին: Այնտեղ ծնվածներն ըստ ամերիկյան վիճակագրության պարզապես համարվում էին ԱՄՆ-ի քաղաքացիներ և ոչ այս կամ այն ազգի ներկայացուցիչներ: Նույնն էր դրությունը նաև Ֆրանսիայում և մի շարք ուրիշ երկրներում: Ահա թե ինչու այդ տարիներին գաղութահայության թիվը զանազան աղբյուրներում տատանվում էր 600 հազարից մինչև մեկ միլիոն:

Չնայած սփյուռքահայությունն իրենից ներկայացնում էր այդքան ստվարաթիվ մի զանգված, այնուամենայնիվ, նրա գլխին օպառնալից կախված էր ուժացման շարագուշակ վտան-

⁴⁴ Տե՛ս նույն տեղում:

⁴⁵ Տե՛ս Հայկ. ՍՄԷ ԿՊՊԱ, ֆ. 43, ց. 1, գ. 41, ք. 13, ֆ. 68/200, ց. 1, գ. 514, ք. 270 և 274, հմտ. նաև՝ Հայկ. ՍՄԷ ՀՀՍԵ՝ ՊԿԱ, ֆ. 4/114, ց. 1, գ. 3, ք. 38—41 և 115, «Հայաստանի կոչնակ», 1923 թ., № 3, էջ 85—86 և № 25, էջ 794, «Հայրենիք», ամսագիր, Բոստոն, 1925 թ., № 2, էջ 90—102, Խեղդիկ, Ամենուս տարեցույցը, Վենետիկ, 1926, էջ 577—590, Ա. Անգրեստյան, Սփյուռքը և հայրենիքը, էջ 7:

զք, որովհետև նա կտրված էր հարազատ երկրից, ցրված տարբեր վայրերում և ենթակա ամեն տեսակ ազդեցությունների: Ապազգայնացման ու ձուլման պրոցեսը մեծապես պայմանավորված էր այնպիսի գործոններով, ինչպես հյուրընկալող երկրի տնտեսական ու մշակութային զարգացման մակարդակը, տիրող քաղաքական մթնոլորտը, գաղթօջախի ներսում սեփական մտավորական ուժերի պակասությունը, կրթական ու մշակութային օջախների բացակայությունը և այլն: Սփյուռքում հայապահպանման հիմնական և կարևոր գործոններից մեկն, անշուշտ, գաղթօջախների և մայր երկրի փոխադարձ կապերի ամրության ու շփումների հաճախականության մեջ է:

Ապազգայնացման ու օտարացման ամենից ավելի ենթակա էր հայությունը Ամերիկայում, Բալկաններում, Ֆրանսիայում և եվրոպական մյուս երկրներում: Այդ գաղթօջախներում մի շարք պատճառներով նոր սերունդը հեշտությամբ մոռանում էր իր մայրենի լեզուն, իր ժողովրդի պատմությունը, մշակույթը, արագորեն խորթանում հայությունից և կորցնում իր ազգային դիմագիծը: Ապազգայնացման վտանգի դեմ սփյուռքահայության դիմագրավման համար հսկայական ու վճռական նշանակություն ունեցավ Հայաստանում հաղթանակած սովետական իշխանությունը: Սովետական Հայաստանի գոյության փաստըն ինքնին օտարության մեջ դեգերող տարագիր հայությանը տվեց պայքարի ուժ, փրկության հույս և աներեր հավատ՝ ապագայի նկատմամբ:

Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտկոմն ու սովետական կառավարությունը հենց սկզբից ըմբռնումով և հոգատարությամբ վերաբերվեցին սփյուռքահայությանը: Սփյուռքահայության նկատմամբ ճիշտ քաղաքականության մշակման ու իրականացման գործում կարևոր ավանդ ունեն Ալ. Մյասնիկյանը (Ալ. Մարտունի), Ս. Սրապիոնյանը (Ս. Լուկաշին), Ս. Համբարձումյանը, Ասք. Մոսվյանը, Աշ. Հովհաննիսյանը, Ալ. Բեկզադյանը, Ար. Երզնկյանը, Դ. Շահվերդյանը, Պ. Մակինցյանը, Ս. Փիրումյանը և պետական-կուսակցական ու մտավորական ուրիշ ականավոր գործիչներ, որոնք իրենց պրակտիկ գործունեությամբ, ելույթներով ու հոդվածներով նպաստում էին սփյուռքահայ զանգվածների շրջանում տարվող աշխատանքներին, հայրենիք—սփյուռք կապերի ստեղծմանն ու զարգացմանը և այլ խնդիրների լուծմանը: Այդ իմաստով հատկապես մեծ

են կուսակցական ու պետական ականավոր գործիչ, ՀՍՍՀ ժողկոմխորհի անդրանիկ նախագահ Ալ. Մյասնիկյանի ծառայությունները: Հայաստանում և Անդրկովկասում աշխատած տարիների նրա գրեթե բոլոր ելույթներում, հոդվածներում ու աշխատություններում շոշափվել են սփյուռքահայության և Սովետական Հայաստանի հարաբերությունների հետ կապված խնդիրները: Սփյուռքահայ զանգվածներին նրա կողմից գործիմացաբար պարզաբանված են նրանց հուղող հարցերը և ցույց տրված պայքարի ճիշտ ուղիները: Ալ. Մյասնիկյանը գրտնում էր, որ սփյուռքահայ աշխատավորության և Սովետական Հայաստանի միջև պետք է ձգված լինի ամուր կամուրջ, որովհետև «խորհրդային Հայաստանը այն կայանն է, որը ապահովում է հայի ֆիզիկական գոյությունը, հայ աշխատավորի ազատությունը և բարեկեցությունը», որովհետև նա նաև գաղութահայ աշխատավորության և առհասարակ գաղթականական հայության, փրկության, ազատության և երջանկության առհավատչյան է⁴⁶:

Մինչև Հայաստանում սովետական իշխանության հաստատումը, օտար երկրներում հայրենագուրկ դեգերող արևմտահայ տարագիրները կրկին իրենց հայրենի օջախները վերադառնալու որոշ հույսեր էին կապում մեծ տերությունների հետ, որոնք ժամանակին «ազատության ու անկախության» վերաբերյալ բազում խոստումներ էին տվել նրանց: Սակայն պատմության դառը փորձը սփյուռքահայ զանգվածներին հանգեցրեց այն ճշմարիտ եզրակացությունը, որ փրկության միակ խարիսխը Սովետական Հայաստանն է: Ահա թե ինչու նրանք որոշակիորեն շրջադարձ կատարեցին դեպի Սովետական Հայաստան, կանգնեցին նրա պաշտպանության դիրքերում և վճռական ցանկություն հայտնեցին ներգաղթել իրենց ազատագրված ու սոցիալիզմի ուղին թևակոխած նոր հայրենիքը: Այսպիսով, Սովետական Հայաստանն իր գոյության հենց սկզբից դարձավ համայն հայ աշխատավորների մայր հայրենիքը, նրանց վերջնական հանգրվանը:

Սփյուռքահայության մեջ լայն արձագանք գտավ և նրան դեպի հայրենիք կողմնորոշելու գործում հսկայական նշանա-

⁴⁶ Տե՛ս Ալ. Մյասնիկյան (Մարտունի), Գաղութահայ աշխատավորությանը, էջ 13—14:

կուսից ունեցավ Հայաստանի բանվորների, գյուղացիների և կարմիր բանակայինների պատգամավորների խորհուրդների առաջին համագումարի (30-ը հունվարի—4-ը փետրվարի 1922 թ.) դիմումը՝ ուղղված սփյուռքահայությանը: Ազատագրված հայ ժողովրդի պետական իշխանության բարձրագույն օրգանը այդ դիմումի մեջ սրտագին ողջուններ էր հղում արտասահմանում ցրված բոլոր հայ տարագիրներին: Դիմումի մեջ միաժամանակ հույս էր հայտնվում, որ երկրի վերաշինության և նրա լավագույն ապագայի կերտման գործում իրենց արժանի ավանդը կներդնեն նաև սփյուռքահայ աշխատավորները, որովհետև միայն այդ ուղիով, միայն Սովետական Հայաստանի հզորացմամբ ու բարգավաճմամբ կգա նաև նրանց փրկությունը⁴⁷: Այդ տարիներին դադութահայ միջավայրում անցյալի վերաքննության, նոր դիրքորոշման և ապագա գործունեության շուրջը համառ պայքար էր գնում տարբեր հոսանքների միջև: Նման պայմաններում սփյուռքահայ աշխատավորությանը ճիշտ կողմնորոշելու համար կարևոր նշանակություն ուներ Սովետական Հայաստանից նրան ուղղված ամեն մի ճշմարիտ խոսք, առավել ևս հայ ժողովրդի պետական իշխանության բարձրագույն օրգանի դիմումը:

Սփյուռքի տարբեր անկյուններում պրոսովետական մտայնության առաջացման ու զորացման գործում մեծ նշանակություն ուներ Սովետական Հայաստանի մասին ճշմարիտ ու բազմակողմանի ինֆորմացիայի տարածումը: Այդ իմաստով կարևոր դեր էին կատարում սփյուռքահայ առաջադիմական կազմակերպություններն ու մամուլը, մի շարք երկրների՝ ԱՄՆ-ի, Բուլղարիայի, Ֆրանսիայի կոմունիստական կուսակցություններին մեջ ստեղծված հայկական մասնաճյուղերը, ինչպես նաև եվրոպական երկրներում առաջ եկած հայկական ուսանողական միությունները:

Մայր հայրենիքի և սփյուռքահայության միջև որպես կապի կարևոր օղակներ էին ծառայում Սովետական Ռուսաստանի և Հայկական ՍՍՀ դիվանագիտական, տնտեսական ու առևտրական ներկայացուցչությունները, առանձին պատվիրակությունները, սովետահայ մամուլը և այլ միջոցներ:

⁴⁷ Տե՛ս «ՀՍԽՀ բանվորների, գյուղացիների և կարմիր բանակայինների խորհուրդների Ա համագումարը», Երևան, 1922, էջ 150—151:

Սովետական Հայաստանի և սփյուռքահայության միջև կարևոր կամուրջ դարձավ նաև 1921 թ. սեպտեմբերին կազմակերպված Հայաստանի օգնության կոմիտեն (դրա մասին ավելի մանրամասն խոսք կլինի իր տեղում), որի մասնաճյուղերը տարածվեցին հայկական գրեթե բոլոր գաղթօջախներում և որոշակի դեր կատարեցին սփյուռքահայությանը մայր հայրենիքի հետ կապելու, բուրժուա-ազդայնական հոսանքների վնասակար ազդեցությունից դուրս հանելու գործում:

Գաղթաշխարհի հետադիմական ուժերը, հատկապես դաշնակցությունը, շատ զոհ էին, որ սկզբնական շրջանում թույլ էին կապերը Սովետական Հայաստանի և սփյուռքի միջև: Այդ հանգամանքը նրանց հնարավորություն էր տալիս շարախոսել սովետական կառավարության հասցեին, զրպարտել իրան, թե իբր «բուլշևիկները չեն ուզում կապ պահպանել գաղութների հետ»: Դաշնակներն աղմուկ էին բարձրացնում և հոխորտում, թե միայն «իրենք են հոգում ազգի շահերի մասին» և այլն: Իսկ երբ այդ կապը ստեղծվեց, և օրըստօրե ավելի էին սերտանում հայրենիքի և սփյուռքի միջև փոխհարաբերությունները, նրանք սկսեցին խիստ անհանգստանալ: Դաշնակցությունն սկսեց փոխել իր «երգի» եղանակը և, դիմելով ամեն տեսակ խարդախումների, ճգնում էր մոլորության մեջ զցել սփյուռքահայությանը, պնդելով, ինչպես պատկերավոր կերպով Ա. Մյասնիկյանն է գրել իր «Կուսակցությունները գաղութահայության մեջ» գրքում, թե իբր «բուլշևիկները քեզ ուզում են շահագործել, դու նրանց փորացավն ես, իսկ քո դարդը նրանց չի զբաղեցնում, մի լսիր նրանց, այլ՝ մեզ, չէ՞ որ մենք ենք քո հարազատները» և նման կարգի այլ բարբաջանքներ: Իրականում դաշնակցությունն այդպիսի մեքենայությունների ու կեղծիքների էր դիմում այն պարզ պատճառով, որ եթե Սովետական Հայաստանի ազդեցության ուժեղացման հետևանքով գաղութահայությունը լիովին երես դարձներ իրենից, ապա նրա գոյությունը կշառնար անհնարին:

Սփյուռքում որոշակի դիրք ունեին ռամկավար ազատական և հնչական կուսակցությունները, որոնք դեռ այն ժամանակվանից հիմնականում կողմնակից էին սփյուռքահայության պրոսովետական կողմնորոշմանը: Նրանք մերկացնում էին դաշնակցության ազգավնաս գործունեությունը և պաշտպանում Սովետական Հայաստանը:

Պետք է նշել, որ Հայաստանում սովետական իշխանության հաստատումից հետո, սփյուռքահայ հասարակական-քաղաքական հոսանքների և ուժերի միջև մղվող պայքարի հիմնական առանցքը, կարևոր հանգույցը դարձավ վերաբերմունքը դեպի մայր հայրենիքը: Այդ պահից սկսած «ո՞վ ում» հարցը գաղթաշխարհում լուծվում էր Սովետական Հայաստանի նկատմամբ ունեցած դիրքորոշմամբ: Ժողովրդական զանգվածները այս կամ այն հոսանքի ու գործիչ դերը, նրա նկատմամբ իրենց վերաբերմունքը որոշում էին այն բանով, թե տվյալ հոսանքն ու գործիչը թե՞ դե՞ ո՞վ են Սովետական Հայաստանին:

Դեպի Սովետական Հայաստան՝ որպես համայն հայության հայրենիքի սփյուռքահայության կողմնորոշման գործում հսկայական զգաստացնող նշանակություն ունեցավ նաև Լոզանի կոնֆերանսը, որը վերջնականապես ցրեց արևմտյան տերություններից ունեցած բոլոր սպասելիքները: Լոզանի 1922—1923 թթ. տեղի ունեցած միջազգային կոնֆերանսը, ուր արևմտյան տերություններն ու քեմալական Թուրքիան իջեցրին հայկական հարցի իրենց սարքած «վերջին» ու քստմենլի արարի արյունաշաղախ վարագույրը, վերջնականապես սթափեցրեց ու լիովին զգաստացրեց սփյուռքահայությանը: Հայկական հարցը Լոզանում փաստորեն փոխարինվեց աշխարհով մեկ ցրված արևմտահայ գաղթականներին իրենց նախկին բնակավայրերը վերադառնալու թույլտվություն տալու կամ էլ այսպես կոչված «հայկական օջախ» ստեղծելու գաղափարով:

Այս բոլորն, ինչ խոսք, չէին կարող լիովին շքացել սփյուռքահայ աշխատավորների աչքերը՝ տեսնելու համար տարիներ շարունակ իրենց «բարեկամներ» հայտարարած մարդկանց ու կառավարությունների իսկական դեմքը, նրանց ստոր խաբեությունը: Ահա թե ինչու տարագիր հայությունը վերջնականապես ու վճռականորեն շրջադարձ կատարեց այդ կեղծ բարեկամներից և իր հայացքն ուղղեց դեպի վերածնվող Սովետական Հայաստանը:

Սփյուռքահայ աշխատավորները գործնականում տեսան ու համոզվեցին, որ սովետական կառավարությունը և կոմունիստական կուսակցությունը, շնայած երկրի քայքայված ու դժվարին վիճակին, սովետական իշխանության առաջին իսկ օրերից անում են ամեն բան, որպեսզի կարճ ժամանակամիջոցում բուժեն այն

խոր վերքերը, որ տարիներ շարունակ առանց սպիանալու իր վրա կրում էր հայ ժողովուրդը:

Ուստի պատահական չէր, որ լքված ու անդեկ մնացած սփյուռքահայ զանգվածների հայացքները աներկբայելիորեն ու աննահանջ կերպով լիովին դարձան դեպի Սովետական Հայաստան, որտեղից առկայծում էին լույսի ու հույսի կենարար ճառագայթները: Սովետական իրականության մասին որքան ավելի շատ ճշմարտացի ու փաստալից տեղեկություններ էին երևան գալիս արտասահմանյան մամուլում ու հայկական շրջաններում, այնքան ավելի էր աճում սփյուռքահայերի ձգտումը դեպի Սովետական Հայաստան: Այդ գործում, անշուշտ, վճռական դեր խաղացին նաև Սովետական Հայաստանում կուսակցված արևմտահայ գաղթականության նկատմամբ դրսևորված հոգատարությունը, նրա հարցի արմատական լուծման ուղղությամբ ձեռնարկված գործնական առաջին միջոցառումները:

Այսպիսով, գաղթաշխարհում օրըստօրե ավելի էր զորանում սովետական օրինատացիան և ծավալվում էր սփյուռքահայերի անկեղծ ու նվիրական ձգտումը «դե՛պի տուն, դե՛պի հայրենիք, դե՛պի Հայաստան», նրանց պատկերավոր խոսքերով ասած՝ «դե՛պի ավետյաց երկիր»: Մնունդ էր առնում հայրենադարձության հայրենասիրական շարժումը, որը շարունակվում է առ այսօր:

**ԱՌԱՋԻՆ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ
ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ**

Սովետական իշխանությունը Հայաստանում հաղթանակեց մի այնպիսի ժամանակ, երբ երկիրը գտնվում էր ուղղակի անդունդի եզրին: Առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմը և դաշնակների արկածախնդրական ու անճարակ քաղաքականությունը լիակատար քայքայման էին հասցրել Հայաստանը: Նախապատերազմյան առանց այն էլ ցածր մակարդակի համեմատությամբ խիստ անկում էր ապրել տնտեսության գլխավոր ճյուղը հանդիսացող գյուղատնտեսությունը: Ահռելի չափերով կրճատվել էին ցանքատարածությունները, շարքից դուրս եկել ոռոգման սիստեմները, պակասել էր անասունների գլխաքանակը: Գրեթե արտադրանք չէին տալիս եղած հատ ու կենտ արդյունաբերական ձեռնարկությունները: Մի խոսքով, ամբողջ տնտեսության մեջ թագավորում էին կատարյալ քաոսն ու քայքայվածությունը:

Գրա հետ միասին Սովետական Հայաստանը ժառանգություն ստացավ սովի մատնված ու համաճարակային հիվանդությունների ճիրաններում գալարվող բնակչությամբ ավերված գյուղեր ու քաղաքներ: Հայաստանում չկար մի անկյուն, որը ենթարկված չլիներ համատարած ավերածությունների, բնակչությունն ապրած չլիներ զանգվածային ներգաղթի կամ արտագաղթի հետ կապված դժվարությունները: Նախկին Երևանի նահանգի ոչ մեծ տարածքը ողողված էր Արևմտյան Հայաստանի բազմաթիվ գավառներից եկած գաղթականներով: 1920 թվականի աշնանը քեմալականների կողմից զավթված Կարսի, Կաղզըվանի, Սուրմալուի և այլ շրջանների բնակչության թուրքական ասկյարների յաթաղանից փրկված մասը նույնպես

գտնվում էր հանրապետության տերիտորիայում: Երկրում կուտակված արևմտահայ գաղթականության թիվը անցնում էր 200 հազարից: Գրան ավելանում էր նաև տասնյակ հազարավոր որբ ու անապաստան երեխաների զանգվածը:

Տասնյակ հազարավոր հայ գաղթականներ էլ գտնվում էին Վրաստանում, Ադրբեջանում, Ռուսաստանում, Ուկրաինայում, Միջին Ասիայում և այլուր, որոնք Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո ձգտում էին վերադառնալ հայրենի երկիր, հարազատ միջավայր:

Ծանր էր Հայաստանի վիճակը, որն իրենից ներկայացնում էր բանաստեղծի խոսքերով ասած՝ «գարկված ու զրկված որբի հայրենիք, ողբի հայրենիք»: Եվ բնավ պատահական չէր, որ ամենուրեք մոլեգնում էին սովն ու համաճարակային հիվանդությունները, որոնք օրական հարյուրավոր մարդկային զոհեր էին կլանում:

Կոմունիստական կուսակցության և սովետական պետության ականավոր գործիչ Գ. Կ. Օրջոնիկիձեն 1920 թ. դեկտեմբերի 1-ին, Բաքվի սովետի հանդիսավոր նիստում ունեցած ելույթում, ողջունելով Հայաստանում սովետական կարգերի հաղթանակը և նշելով գոյություն ունեցող դժվարությունները, դիպուկ կերպով ասել է. «...է՛լ ավելի դժվար է, միլիոն անգամ ավելի դժվար է այդ իշխանությունը կառուցել այնտեղ՝ տանջված, ծախտված Հայաստանում, որը քիչ է մնացել վերածվի գաղթականների հանրապետության»¹ (ընդգծումը մերն է. — Ն. Մ.):

Այդքան մեծ թվով գաղթականության առկայությունը Հայաստանի վիճակը սովետական մյուս հանրապետությունների հետ համեմատած դարձնում էր բացառիկ: Կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը քաջ գիտակցում էին, որ գաղթականության հարցը ամենադժվար լուծելի հարցերից մեկն է: Նրանք լիովին ըմբռնում էին, որ առանց երկրում կուտակված հարյուր հազարավոր գաղթականության տեղավորման, բնակարաններով, հողով, գյուղատնտեսական գործիքներով և այլ միջոցներով ապահովելու, մի խոսքով, առանց նրան սեփական տնտեսության հետ կապելու, չէին կարող իրականացվել նաև սովետական իշխանության առջև ծա-

¹ Գ. Կ. Օրջոնիկիձեն, Հետիւր հոգիւածներ և ճառեր, Երևան, 1950, էջ 34-

ապագա քաղաքական ու տնտեսական կարևորություն ունեցող մյուս խնդիրները՝ այդ թվում հայրենիք ներգաղթելու վերաբերյալ սփյուռքահայ աշխատավորների ցանկություններն ու պահանջները:

Ինչպես քաղաքական ու տնտեսական լուրջ դժվարությունների հաղթահարման, այնպես էլ գաղթականության հարցի լուծման գործում, անշուշտ, հսկայական նշանակություն ունեցավ Սովետական Ռուսաստանի և եղբայրական մյուս հանրապետությունների բազմակողմանի օգնությունը Հայաստանին:

Չնայած իր տնտեսական ու քաղաքական դժվարին կացությանը, հայ աշխատավորությանը եղբայրական օգնության ձեռք մեկնեց ռուս ժողովուրդը, որը ոչ միայն շարունակում էր ապաստան տալ Ռուսաստանում ցրված հայ գաղթականներին, այլև ամեն կերպ օգնում էր Սովետական Հայաստանին: Սովետական Հայաստանին նյութական լայն օգնություն էր ցույց տալիս նաև եղբայրական ուկրաինական ժողովուրդը²: Վրաստանում և Ադրբեջանում գտնվող հայ գաղթականներին, հնարավորության սահմաններում, ապաստան էին տվել և բազմապիսի օգնություն կազմակերպել սովետական իշխանության տեղական օրգանները³:

Սովետական Ռուսաստանի ու եղբայրական մյուս հանրապետությունների համակողմանի օգնությունը վճռական դեր խաղաց հայ ժողովրդի համար ճակատագրական այն օրերին, հնարավորություն ընձեռելով նրան արագորեն դուրս գալու տրևտեսական դժվարին վիճակից և վստահորեն ընթանալու ժողովրդական տնտեսության վերականգնման ու սոցիալիզմի կառուցման ուղիով:

Ակնհայտ է, որ առանց եղբայրական այդպիսի անշահախնդիր օգնության, Հայաստանի կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը մենակ ի վիճակի չէին լինի կարճ ժամանակամիջոցում վճռելու իրենց առջև ծառայած քաղաքական ու տնտեսական բարդ խնդիրները, այդ թվում երկրում գտնվող բազմահազարանոց գաղթականական զանգվածին տեղավորելու, բնակարաններով, հողով, գյուղատնտեսական

գործիքներով, անասուններով, սերմացուով բավարարելու և այլ հարցերը: Պետք է ուղղակի նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ տվյալ պահին Հայաստանի բնակչության գրեթե մեկ երրորդը կազմում էին անտուն ու անհող, թափառական ու մուրացկանային վիճակով իրենց գոյությունը մի կերպ քարշ տվող արևմտահայ գաղթականները:

Դեռևս 1920 թ. դեկտեմբերի 8-ին, այսինքն՝ Հայհեղկոմի Երևան ժամանելուց շորս օր հետո, արևմտահայ գաղթականների գործադիր մարմնի անդամները, երևանաբնակ արևմտահայերի դեկտեմբերի 2-ին տեղի ունեցած խորհրդակցության որոշման համաձայն, դիմեցին Հայհեղկոմի նախագահ Ս. Կասյանին՝ առաջարկելով միջոցառումներ մշակել համատեղ ջանքերով տառապյալ գաղթականության վիճակը բարելավելու ուղղությամբ⁴: Հաջորդ օրը, դեկտեմբերի 9-ին, Ս. Կասյանն ընդունեց արևմտահայ գաղթականների գործադիր մարմնի անդամներին և մանրամասն զրույց ունեցավ նրանց հետ: Ս. Կասյանը հայտարարեց, որ սովետական իշխանությունը, որպես աշխատավոր ժողովրդի շահերի պաշտպան, ամեն ինչ կանի գաղթականության վիճակի թեթևացման և նրա հարցի շուտափույթ լուծման համար⁵:

Սակայն պետք է նշել, որ իր գոյության առաջին ամիսներին նորաստեղծ սովետական իշխանությունն ի վիճակի չէր անհրաժեշտ չափով բավարար աշխատանք տանել գաղթականության մեջ, որովհետև չկային հարկ եղած միջոցները, պակասում էին համապատասխան կադրերը, չկար աշխատանքի կազմակերպման անհրաժեշտ փորձ և այլն: Այդ ամենը այնքան զգալի էր, որ Արագածի ստորոտի գյուղերում վերաբնակվող մշեցիներն ու սասունցիները 1921 թ. սկզբներին դիմել էին ՀՍԽՀ Հեղկոմին և պահանջել, որ իրենց մոտ նույնպես ստեղծվեն հեղկոմներ, ուղարկվեն պրոպագանդիստներ, գրականություն, թերթեր և այլն⁶:

Սովետական իշխանությունը դեռ նոր էր կազմակերպում

² Տե՛ս «Восстановление народного хозяйства Армянской ССР» (сборник документов и материалов), Ереван, 1958, էջ 91—100:
³ Տե՛ս ՀՍՍՀ ՀՄՍՇ ՊԿԱ, ֆ. 40/113, ց. 3, գ. 21, թ. 49:

⁴ Տե՛ս նույն տեղում, գ. 16, թ. 49:
⁵ Տե՛ս նույն տեղում:
⁶ Տե՛ս Ա. Մ. Հակոբյան, Սովետական Հայաստանը ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանում (1921—1925 թթ.), էջ 70:

Վյանքի տարբեր բնագավառներում աշխատանքը, երբ տապալված դաշնակցությունը 1921 թ. փետրվարի կեսերին կազմակերպեց ավանտյուրիստական հակասովետական խռովություն և քաղաքացիական կռիվ մեջ քաշեց առանց այդ էլ քայքայված երկիրը: Չխոսելով մյուս հարցերի մասին, ասենք, որ դրանով դաշնակցությունը զգալի վնաս հասցրեց նաև արևմտահայ գաղթականության հարցի շուտափույթ բարելավմանը: Հայաստանի կոմունիստական կուսակցությունն ու կառավարությունը հարկադրված էին ընդհատել ավերված երկրի վերաշինության ու երկրում կուտակված գաղթականության հարցի լուծման ուղղությամբ ձեռնարկված աշխատանքները և զբաղվել սովետական իշխանության պաշտպանությամբ:

Դաշնակցության փետրվարյան ավանտյուրան նաև ուրիշ աղետներ պատճառեց բազմաշարժար հայ ժողովրդին: Դրանցից մեկն էլ դաշնակների տարածած սուտ լուրերին, պրովոկացիաներին ու սպառնալիքներին զոհ գնացած ավելի քան մեկ տասնյակ հազար աշխատավորների խուճապահար փախուստն էր դեպի Զանգեզուր, դեպի Իրան: Դաշնակների «Հայրենիքի փրկության կոմիտեի» տխրահռչակ դիկտատուրայի լիկվիդացումից հետո սովետական կառավարությունը որոշ ժամանակ հարկադրված էր զբաղվելու մոլորված փախստականների այդ զանգվածի վերադարձի կազմակերպմամբ, որը նույնպես զգալի ջանքեր ու միջոցներ կլանեց⁷:

Այսպիսով, Հայաստանում քաղաքացիական կռիվների ավարտից հետո միայն սովետական կառավարությունը կարողացավ ըստ ամենայնի զբաղվել գաղթականության, ինչպես նաև արդեն սկիզբ առնող ներգաղթի հարցերով: Այդ աշխատանքները կենտրոնացնելու և ավելի կազմակերպված ձևով իրականացնելու նպատակով 1921 թվականի հուլիսի կեսերին ՀՍԽՀ Ժողովուրդների դեկրետով վերացվեց ներքին գործերի ժողովմատի կազմում եղած կենտրոնական վերաբնակեցման բաժինը և ստեղծվեց Ժողովուրդների առընթեր գաղթականական գործերի գլխավոր վարչություն (գաղթվար): Գաղթվարին տրվեցին ժողովրդական կոմիսարիատներին հավասար իրավունք-

ներ⁸: Գաղթականական գործերի գլխավոր վարչության նախագահ նշանակվեց սոցալժողկոմ Ն. Տեր-Ղազարյանը, նախագահի տեղակալ՝ Հովհ. Գուրգերյանը, անդամներ՝ Շահգեղյանը, Թոնոնցը և Քալանթարը⁹: Գաղթվարը կարևոր դեր խաղաց գաղթականության տնտեսական դրուժյան բարելավման, նրա տեղավորման, ինչպես նաև ներգաղթի կազմակերպման ուղղությամբ: 1921 թվականի վերջերին, երբ արդեն որոշ շափով նորմալ հունի մեջ էր դրվել գաղթականական հարցի լուծումը, գաղթվարը՝ որպես իր խնդիրները կատարած մի արտակարգ օրգան, լուծարքի ենթարկվեց: Նրա ֆունկցիաների մի մասը հանձնվեց ներքգործողկոմատում կազմակերպված գաղթականական բաժնին, մի մասն էլ՝ սոցալժողկոմատին¹⁰:

Ինչպես ասվեց, քաղաքացիական կռիվներն ավարտելուց և Իրան մեկնած փախստականության վերադարձն իրականացնելուց հետո սովետական կառավարությունը ավելի հիմնավոր աշխատանք ծավալեց արևմտահայ գաղթականության շրջանում: Ամենից առաջ անհրաժեշտ էր նրան համախմբել սովետական իշխանության շուրջը: Հայաստանում և Վրաստանում կուտակված արևմտահայերի մեջ կազմակերպական աշխատանքներ տանելու նպատակով, ՀՍԽՀ Ժողովուրդների նախագահության որոշմամբ, հատկացվեց 30 միլիոն ռուբլի¹¹: Այս հրավիրվեցին արևմտահայ գաղթականների բազմամարդ ժողովներ, որոնք մեծ նշանակություն ունեցան դեպի սովետական իշխանությունը նրանց վերաբերմունքի մեջ բեկում առաջացնելու խմաստով:

Այսպես, 1921 թ. մայիսի 21—23-ը Թալինում տեղի ունեցավ էջմիածնի գավառի արևմտահայերի համագումարը, որտեղ լավեցին Հայհեղկոմի անդամ Գր. Տեր-Սիմոնյանի, էջմիածնի հեղկոմի նախագահ Ար. Շահգեղյանի, էջմիածնի գավառի գաղթականական գործերի կոմիսար Գր. Վարդանյանի և ուրիշների ղեկուցումները գաղթականությանը հուզող խնդիրների և նրանց օգտին սովետական իշխանության ձեռնարկումների մասին: Համագումարը լիովին հավանություն տվեց սովետական

⁸ Տե՛ս ՀՍՄՀ ՀՄՇ ՊԿԱ, ֆ. 40/113, ց. 3, գ. 50, թ. 26 և 34:

⁹ Տե՛ս նույն տեղում, ֆ. 4/114, ց. 1, գ. 17, թ. 84:

¹⁰ Տե՛ս նույն տեղում, ֆ. 40/113, ց. 3, գ. 25, թ. 37:

¹¹ Տե՛ս նույն տեղում, թ. 35:

⁷ Այդ մասին մանրամասն տե՛ս Հ. Ու. Մելիսեթյան, Արևմտահայերի բռնագաղթը..., էջ 82—87:

կառավարության վարած քաղաքականությանը և կոչ արեց արևմտահայ բոլոր գաղթականներին՝ կապվել հողի հետ ու լծվել երկրում ծավալված վերաշինական աշխատանքներին, որովհետև, ինչպես ասված էր ընդունված բանաձևում, «միայն ՀՍԽ հանրապետության հարատև գոյության ու ամրապնդման միջոցով Հայաստանի աշխատավորությունը կարող է իր իղձերն ու փափագները իրագործված տեսնել»¹²: Համագումարի մասնակիցները Հայհեղկոմին և Վ. Ի. Լենինին ուղարկեցին ողջույնի հեռագրեր, ուր իրենց պատրաստակամությունն էին հայտնում ամեն կերպ զորավիգ լինել սովետական իշխանությանը¹³:

Նման բազմամարդ ժողովներ ունեցան նաև Ղուբդուղուլիի (այժմ՝ Հոկտեմբերյան), Ղամարուլուի (այժմ՝ Արտաշատ), Ալեքսանդրապոլի (այժմ՝ Լենինական) և այլ գավառների արևմտահայ աշխատավորները¹⁴:

Սովետական իշխանության պաշտպանությամբ հանդես եկան նաև Թիֆլիսում ապաստան գտած արևմտահայ գաղթականները: Նրանց առաջին ժողովը, որը տեղի ունեցավ 1921 թ. մարտի 27-ին, վերագնահատելով արևմտահայության ոչ հեռու անցյալի դիրքորոշումը, հատուկ կոչով դիմեց արևմտահայ բոլոր աշխատավորներին, որտեղ նշում էր, թե «բավ է, որքան արևմտահայ աշխատավորական մասսաներս տասնյակ տարիներ գործիք ու խաղալիք եղանք դաշնակցություն կոչված ավանտյուրիստական կուսակցության միջոցով՝ եվրոպական գիշատիչ իմպերիալիստների ձեռքին. հերիք է, ինչքան արյուն ու ավյուն զոհաբերեցինք այդ լպիրշ, ստորաքարշ, խաբեբա դիպլոմատների գրպանները էլ ավելի պարարտացնելու համար»¹⁵:

Այնուհետև, մերկացնելով արևմտյան տերությունների խաբեությունները և դաշնակցության ավանտյուրիստական գործունեությունը հայ ժողովրդի բախտի նկատմամբ, կոչի հեղինակները գրում էին. «Այսպես ուրեմն, մեզ համար այլևս պարզ

է ամեն ինչ. մենք միանգամ ընդմիշտ մեր թիկունքն ենք դարձնում Հայաստանի աշխատավորության միակ թշնամիներին՝ իմպերիալիստական աշխարհին, դաշնակցական և մնացած բոլոր ազգայնական շովին ու ոճրագործ կուսակցություններին: Թո՛ղ հավետ կորչեն նրանք»¹⁶:

Ապա, նշելով, որ հայ աշխատավորության փրկությունը կախված է սովետական իշխանության ամրապնդումից, կոչի հեղինակները արևմտահայ գաղթականությանը հրավիրում էին համախմբվել սովետական կառավարության շուրջը և լծվել երկրի վերաշինության վեհ գործին:

1921 թ. օգոստոսի 21-ին կայացավ Թիֆլիսաբնակ արևմտահայ աշխատավորների կոնֆերանսը, որը քննարկեց նրանց դիրքորոշման, Սովետական Հայաստանի վերաշինության, արտասահմանյան հայկական գաղթօջախների հետ կապեր հաստատելու և ընդհանրապես գաղթականությանը հուզող մի շարք այլ հարցեր: Կոնֆերանսն ընտրեց 15 հոգուց բաղկացած Թիֆլիսի արևմտահայ բյուրո: Վերջինս, դիմելով արտասահմանի հայ աշխատավորներին և նկարագրելով Հայաստանի տնտեսական դժվարին կացությունն ու սովետական կառավարության ջանքերը արևմտահայ գաղթականների տեղավորման ու նրանց ամեն կերպ օգնելու ուղղությամբ, կոչ արեց նպաստել երկրի վերաշինության գործին, չհավատալ նրա շուրջը տարածվող զրպարտություններին, այլ գալ երկիր, տեսնել և համոզվել¹⁷:

Իսկ տեսնելու շատ բան կար և համոզվելու բազմաթիվ առիթներ: Դեռևս 1921 թ. ապրիլի սկզբներից Թիֆլիսում հրատարակվում էր «Կարմիր օրեր» թերթը, որը արևմտահայ աշխատավորների համար մատչելի ձևով լուսաբանում էր կոմունիստական կուսակցության ու սովետական պետության քաղաքականությունը, նրանց վերաբերմունքը դեպի արևմտահայության բեկորները և ընդհանրապես բացատրական լայն աշխատանք էր տանում գաղթականության շրջանում¹⁸:

Ընդառաջելով արևմտահայ գաղթականների ժողովներում արտահայտված ցանկություններին, ՀԿԿ Կենտկոմի և սովետական կառավարության աջակցությամբ 1921 թ. հուլիսի սկզբնե-

¹² Տե՛ս նույն տեղում, ֆ. 4/114, ց. 1, գ. 5, թ. 2 և ֆ. 40/113, ց. 3, գ. 22, թ. 104—113:

¹³ Տե՛ս նույն տեղում, ֆ. 40/113, ց. 3, գ. 31, թ. 58:

¹⁴ Տե՛ս նույն տեղում, ֆ. 4/114, գ. 5, թ. 25—26 և 43, նաև՝ ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի կուսակցական արխիվ (այսուհետև՝ ՄԻ ՀՄԿԱ), ֆ. 1, ց. 1, գ. 178, թ. 3 և 12:

¹⁵ Տե՛ս «Կոմունիստ», օրաթերթ, Երևան, 23 ապրիլի, 1921 թ., № 71:

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՀ ՊԿԱ, ֆ. 4/114, ց. 1, գ. 5, թ. 37—39:

¹⁸ Տե՛ս նույն տեղում, թ. 43:

րին ստեղծվում է ՀՍԽՀ տերիտորիայում ապրող արևմտահայերի ընդհանուր համագումար հրավիրող հանձնախումբ՝ Գր. Վարդանյանի նախագահությամբ¹⁹։ Սահմանված կարգի համաձայն 18-ից բարձր տարիք և արևմտահայ ծագում ունեցող բոլոր քաղաքացիները պետք է մասնակցեին համագումարի պատգամավորների ընտրություններին, որոնք լինելու էին ուղղակի և բաց բվեարկություններ։ 1921 թ. օգոստոսի կեսերից Հայաստանի բոլոր շրջաններում սկսվում են պատգամավորների ընտրությունները²⁰։ Նախատեսված էր համագումարի աշխատանքներն սկսել սեպտեմբերի 10-ին, էջմիածնում, սակայն մի շարք պատճառներով այն տեղի ունեցավ ավելի ուշ՝ Եոջմեքերին, Երևանում։

Արևմտահայ գաղթականների համագումարի նախապատրաստման օրերին հրապարակվեցին մի շարք կոչեր, որոնցում աշխատավորներին բացատրվում էին նրանց անելիքներն ընտրությունների ժամանակ։ Հրատարակվեց նաև «Կարմիր օրեր» թերթի բացառիկ համար՝ նվիրված համագումարին, ուր հոդվածներով հանդես եկան Ասք. Մուսվաթյանը, Պ. Մակինցյանը, Հ. Ազատյանը և ուրիշներ²¹։ Այդ համագումարը, որին մասնակցում էին մոտ 400 պատգամավորներ, քննարկեց գաղթականությանը հուշող մի շարք կարևոր հարցեր և ստեղծեց Սովետական Հայաստանի Արևմտահայ աշխատավորների կենտրոնական վարչություն, որի նախագահ ընտրվեց Գր. Վարդանյանը²²։

Այս բոլոր միջոցառումները հսկայական դեր խաղացին գաղթականությանը սովետական իշխանության շուրջը համախըմբելու և նրան շինարար աշխատանքի ներգրավելու գործում։ Այսպիսով, սովետական կառավարությունը կարճ ժամանակամիջոցում գործով ապացուցեց, որ նա իսկապես շահագրգռված է գաղթականության վիճակի բարելավմամբ և նրա հարցի արմատական լուծմամբ։

ՀՍՀՍ ժողկոմխորհի հատուկ դեկրետի համաձայն, 1921 թ. դարնանից սկսած, հողագործության ժողովրդական կոմիտեի ատրիատը տեղացիներին հավասար շահով հող է հատկաց-

նում հանրապետությունում գտնվող արևմտահայ գաղթականներին՝ սակավահող շրջաններից նրանց փոխադրելով այլ վայրեր։ Դրա հետ միասին, ձրի կամ արտոնյալ պայմաններով, գաղթականներին տրամադրվում են նաև գյուղատնտեսական գործիքներ, սերմացու, անասուններ, բնակարաններ, շինարարական ու գույքավորման վարկեր և այլն²³։

Գաղթականության կարիքները հոգալու և նրա համար պարենի ու սերմացուի կայուն ֆոնդ հիմնելու նպատակով, 1921 թ. օգոստոսի 24-ին ժողկոմխորհը որոշում է կայացնում պարենավորման ժողկոմատի ընթացիկ միջոցներից պարբերաբար հատկացնել հացահատիկ։ Միաժամանակ որոշվում է գաղթականական տնտեսություններին սերմացուով ապահովելու համար ստեղծել հատուկ ֆոնդ, դրան տրամադրելով բերքն այն բոլոր հողատերերի, որոնք անմիջականորեն իրենք չէին մշակում հողը, այլ զանազան պայմաններով՝ վարձակալությամբ և այլն, մշակել էին տալիս սակավահող գյուղացիներին²⁴։

Ժողկոմխորհի մի այլ դեկրետով (22 հոկտեմբերի 1921 թ.) հաստատվում է 15 միլիարդ ռուբլու միանվագ և արտակարգ, այսպես կոչված գաղթականական տուրք՝ հանրապետության սահմաններում գտնվող գաղթականներին նյութական ծանր կացությունից դուրս բերելու համար։ Գաղթականական տուրքը զանձվում էր աղզաբնակչության միայն ունեոր խավերից. այն տնտեսություններն ու անձնավորությունները, որոնց եկամտի միակ աղբյուրն իրենց աշխատանքն ու աշխատավարձն էր՝ ազատվում էին այդ տուրքը վճարելուց։ 1922 թ. ամռանը, երբ արդեն որոշ չափով բարելավվել էր գաղթականության նյութական դրությունը, ժողկոմխորհի որոշմամբ դադարեցվում է գաղթականական տուրքի գանձումը, և լիկվիդացվում են այդ կապակցությամբ գոյացած ապառքները²⁵։

Գաղթականության հարցի արմատական լուծմանը զուգընթաց սովետական կառավարությունը լուրջ ջանքեր էր գործադրում նաև նրա առօրյա հոգսերի թևեկացման ուղղությամբ՝ բացելով սննդակայաններ, որբանոցներ, հիվանդանոցներ, ար-

¹⁹ Տե՛ս ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 1, գ. 111, թ. 5, և գ. 76, թ. 69։

²⁰ Տե՛ս նույն տեղում, գ. 76, թ. 1—34։

²¹ Տե՛ս նույն տեղում, թ. 94—97։

²² Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 4/114, ց. 1, գ. 5, թ. 25—26։

²³ Տե՛ս նույն տեղում, ֆ. 112, ց. 1, գ. 26, թ. 60 և ֆ. 4/114, ց. 1, գ. 5, թ. 20 և 25—26։

²⁴ Տե՛ս նույն տեղում, ֆ. 4/114, ց. 1, գ. 5, թ. 59։

²⁵ Տե՛ս նույն տեղում, թ. 60։

տելներ և այլն: Առանց այդպիսի ամենօրյա օգնութեան ու հոգատարութեան անհնարին կլինէր բազմահազար գաղթականներին ու որբերին կարճ ժամանակամիջոցում դուրս բերել սովահար վիճակից և նրանց փոխադրել տնտեսութեան վերականգնման ու դարգացման ուղին:

Այդ գործում սովետական կառավարութիւնը շրջահայաց ու խելամիտ կերպով օգտագործում էր նաև օտարերկրյա մի շարք բարեգործական հաստատութիւններին՝ Մերձավոր արևելքի օգնութեան Ամերիկյան նպաստամատուց կոմիտեի (կրճատ՝ Ամերկոմ), Անգլիական կոմիտեի և այլն, ինչպես նաև Հայաստանի օգնութեան կոմիտեի (ՀՊ) ու սփյուռքահայ այլ բարեգործական կազմակերպութիւններին ուժերն ու միջոցները: Սովետական Հայաստանի այն ժամանակվա տնտեսական վիճակը հրամայաբար թելադրում էր օգտագործել բոլոր հնարավոր աղբյուրները բնակչութեան, մասնավորապես տուն ու տեղից զերկված արևմտահայ գաղթականութեան ու որբերի կարիքները որոշ չափով բավարարելու համար: Այդ էր պատճառը, որ սովետական կառավարութիւնը, հաշվի առնելով նաև Սովետական Ռուսաստանի փորձը, զանազան առանձնաշնորհումների ու արտոնութիւնների միջոցով նպաստեց օտարերկրյա բարեգործական հաստատութիւնների գործունեութեան շարունակմանը այստեղ: Իրա շնորհիվ հնարավոր եղավ նրանց ուժերն ու միջոցները ծառայեցնել հատկապես տասնյակ հազարավոր որբ ու անապաստան երեխաներին անխուսափելի կորստից փրկելու և մասամբ էլ կարիքավոր բնակչութեանն օգնելու գործին²⁶:

Երկրում գտնվող արևմտահայ գաղթականութեան տնտեսական դրութեան բարելավման և նրա հարցի արմատական լուծման ուղղութեամբ այն՝ ինչ կատարեց նորաստեղծ սովետական իշխանութիւնը, ունեցավ քաղաքական ու տնտեսական կարևոր նշանակութիւն: Դա միաժամանակ ակնառու կերպով ցույց տվեց, որ միայն սովետական կառավարութիւնն է իրոք շահագրգռված անկեղծորեն լուծելու երկար տարիներ թափառական կյանք վարող արևմտահայ գաղթականութեան հարցը:

Ահա թե ինչու սփյուռքահայ աշխատավորները ևս լրենց հայացքներն ուղղեցին դեպի Սովետական Հայաստան, այստեղ

տեսնելով իրենց փրկութիւնը: Արտահայտելով սփյուռքահայութեան այդ կարգի տրամադրութիւնները, Նյու Յորքում հրատարակվող «Հայաստանի կոչնակ» շաբաթաթերթը գրում էր. «Գաղութներու մեջ հետզհետե ավելի կշեշտվի համակրանքը դեպի Հայաստանի ներկա կառավարութիւնը», դեպի «Խորհրդային Հայաստանը, որուն դարձած են հիմա բնագոյաբար բոլոր հայոց աչքերը»²⁷: Վերլուծելով սփյուռքահայութեան ընդհանուր գոյավիճակը, շաբաթաթերթը միանգամայն ճիշտ կերպով հանգում էր այն եզրակացութեանը, որ «քաղաքական արդի դժբախտ պայմաններու մեջ իրապես ալ հայերը չէին կրնար ուրիշ հենակետի մը վրա հույս դնել, եթե ոչ Խորհրդային Հայաստանի Հանրապետութեան վրա, քանի որ հոն միայն կարելի էր ազգին համար ստեղծել կեդրոն մը, որ միևնույն ատեն շաղկապ մը ըլլար բոլոր ցրված հայերու միջև»²⁸:

Սփյուռքահայութեան մեջ մեծ գոհունակութեամբ ընկալվեց այն փաստը, որ սովետական կառավարութիւնը ամենայն հոգատարութեամբ էր վերաբերվում Հայաստանում գտնվող գաղթականութեանը, օգնում նրան ստեղծելու իր օջախը, իր տնտեսութիւնը: Կ. Պոլսում հրատարակվող «Երկիր» թերթի ստորև բերվող տողերում առավել խտացված ձևով են արտահայտված արևմտահայ գաղթականութեանը հող հատկացնելու վերաբերյալ սովետական կառավարութեան որոշման կապակցութեամբ սփյուռքում եղած արձագանքները: «Նախորդ կառավարութիւնը (խոսքը վերաբերում է դաշնակցական կառավարութեանը.— Ն. Մ.),— գրում է «Երկիր»-ն իր խմբագրականներից մեկում,— իր տիրապետութեան երեք տարիներու ընթացքին արևմտահայ փախստականութեան վրա խորթ աչքով նայեցավ և բնավ չի մտածեց արևմտահայ գյուղացիութեան հող տրամադրելու մասին», մինչդեռ Սովետական Հայաստանի «դեկավարները սկիզբն ի վեր իրենց գլխավոր մտահոգութիւններն մեկն ալ դարձուցին արևմտահայ գյուղացիութիւնը հողի հետ կապելու խնդիրը»²⁹:

Այնուհետև թերթն իր ուրախութիւնն էր հայտնում, որ «Մյասնիկյանի կառավարութեան որոշումով Խորհրդային Հա-

²⁶ Այդ մասին մանրամասն տե՛ս Ն. Ու. Մելիքեթեան, Արևմտահայերի բռնագաղթը..., էջ 93—107:

²⁷ «Հայաստանի կոչնակ», 28 հուլիսի, 1923 թ., № 30, էջ 937—938:

²⁸ Նույն տեղում:

²⁹ «Երկիր», Կ. Պոլիս, 16 սեպտեմբերի, 1921 թ., № 585:

յաստանի սահմաններուն մեջ գտնվող արևմտահայ գյուղացիներուն պիտի բաշխվի հող այն չափով, ինչ չափով որ կտրվի բնիկ գյուղացի աշխատավորներուն: Ահա հիմնական և բարվոք կարգադրութիւն մը, որուն շնորհիվ արևմտահայութիւնը կազատվի դարձականի թափառական կյանքեն, կլծվի շինարար, ստեղծագործող աշխատանքի և այդ կերպով ոչ միայն հնարավորութիւն կունենա իր ապրուստը իր ճակատի քրտինքովը հայթայթելու, այլ նաև նպաստելու հայրենիքի տնտեսական վերաշինութեան կենսական դործին»³⁰:

Պետք է շեշտել, որ սփյուռքահայ առաջադիմական շրջանները, ըստ արժանվույն գնահատելով գաղթականութեան նկատմամբ սովետական կառավարութեան հողատարութիւնը, միաժամանակ դիտակցում էին իրենց պարտքն ու պարտականութիւնը հայրենիքի հանդէպ: Այդ իմաստով ուշագրավ են նույն «Երկիր» թերթի խմբագրականներից մեկի հետևյալ տողերը. «Հայաստանի կառավարութիւնը իր պարտքը կատարած է. նախապէս իրավազուրկ մեր եղբայրները՝ հիմա իրավատերներ կըլլան, իրենց խրճիթը, իրենց օճախը կունենան, իրենց քրտինքին արդունքը կվայելեն»:

Կարող դադութիւնն է, մինչև դարուն գաղութն ալ իր բոլորանվեր օգնութիւնը պետք է փութացնեն, որպեսզի մեր գյուղացի եղբայրները ճիշտ ժամանակին ունենան իրենց բահը և բրինձը, խոփն ու արորը»³¹:

Թեպետ դադութիւնների օգնութիւնը շեղավ «բոլորանվեր» ու խիստ նշանակալից, բայց դրանով սկիզբ առավ սփյուռքահայութեան աստիճանական ու արմատական բեկումը դեպի հայրենիք: Օրրստօրն սփյուռքում աճեց ու պայծառացավ Սովետական Հայաստանի հմայքը, որն այլևս չէին կարող մթագնել հակասովետական ոչ մի զրպարտութիւն և պրովոկացիա: Հասունացավ ու օրակարգի հարց դարձավ սփյուռքահայերի հայրենադարձութիւնը:

³⁰ Նույն տեղում:

³¹ Նույն տեղում, 23 նոյեմբերի, 1921 թ., № 620:

Վ Լ Ո Ւ Ե Ե Ր Ր Ո Ր Գ

ՍՓՅՈՒՒԲԱՀԱՅԵՐԻ ՀԱՅՐԵՆԱԳԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ 1921—1936 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Սովետական Հայաստանում ապաստան գտած արևմտահայ գաղթականութեան նկատմամբ ցուցաբերված ջերմ ու հողատար վերաբերմունքը և դրա շնորհիվ կարճ ժամանակամիջոցում նրա համար ստեղծված համեմատաբար բարվոք պայմանները օտարութեան մեջ դեզերող հայ աշխատավորներին թելադրում էին լրջորեն խորհել իրենց հետագա ճակատագրի մասին: Նրանք սկսեցին կերպով հետևում էին հարագատ երկրի վերաշինութեանը և օրեցօր ուրախալի լուրեր ստանալով կատարվող վերափոխութիւնների մասին, ձգտում էին ներգաղթել հայրենիք, փրկվել օտարութեան մեջ իրենց բաժին ընկած տառապանքներից:

Հայրենիքը հզոր մագնիսի նման դեպի իրեն էր գրավում մեծ թվով տարագիրների ոչ միայն Մերձավոր ու Միջին արևելքի երկրներից, ուր խիստ աննպաստ էին տնտեսական պայմանները, այլև համեմատաբար բարվոք վիճակում գտնվող գաղթօջախներից: Սովետական կառավարութիւնը հայրենիք ներգաղթելու ցանկութեամբ մեծ թվով կոլեկտիվ և անհատական խրճիթաբեր, նամակներ ու դիմումներ էր ստանում սփյուռքի տարբեր անկյուններից: Սովետական կառավարութեանն ուղղված այդ դիմումների մեջ որոշակիորեն արտահայտվում էր ցիր ու ցան սփյուռքահայ զանգվածների հայրենադարձվելու անկեղծ ձգտումը, հայրենիքում հավաքվելու նրանց վճռական կողմնորոշումը:

Չնայած գոյութիւն ունեցող ամեն տեսակ դժվարութիւններին, Հայաստանի կոմունիստական կուսակցութիւնն ու կառավարութիւնը երբեք անտարբեր չմնացին սփյուռքահայ աշ-

խատավորների ցանկութունների նկատմամբ, անպատասխան շեղիչ նրանց խնդրանքները: Հանրապետության ժողովրդական տնտեսության վերականգնման վիթխարի ջանքեր ու հսկայական միջոցներ պահանջող աշխատանքներին զուգընթաց, երկրում կուտակված գաղթականությանը բնակեցնելու, հողով և այլ միջոցներով բավարարելու հետ մեկտեղ, իր գոյության առաջին իսկ օրերից սովետական կառավարությունը զգալի գործունեություն ծավալեց նաև սփյուռքահայ աշխատավորներին հայրենիք տեղափոխելու ուղղությամբ:

Անդառաջելով տարագիր հայության հայրենաբաղձ ցանկություններին, արդեն 1921 թվականի վերջերից սովետական կառավարությունը ձեռնամուխ եղավ սփյուռքահայերի հայրենադարձության իրականացման դժվարին գործին:

1. Սփյուռքահայերի հայրենադարձությունը ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին

Սկզբնական շրջանում հատկապես շատ դիմումներ էին ստացվում Միջագետքում (Իրաք) ապաստանած հայ տարագիրներից, որոնք գտնվում էին անասելի դժնդակ պայմաններում և իրենց փրկության միակ հույսը կապում էին Սովետական Հայաստանի հետ: Դրանք հիմնականում Վասպուրականի հայերն էին, որոնք թուրքական զորքերի վայրագ հարձակումներից խույս տալով, 1918 թ. վաղ գարնանը զանգվածաբար փորձեցին անցնել Անդրկովկաս: Սակայն Վան—Իգդիր ճանապարհը թուրքական զորքերի կողմից փակվելուց հետո, նրանք հարկադրված եղան բազմաթիվ զրկանքներ կրելով ու զոհեր տալով, երկար ու տառապալից ուղի անցնել դեպի Իրան, հույս ունենալով այնտեղից տեղափոխվել Անդրկովկաս: Բայց նրանց այդ մտադրությունը ևս չհաջողվեց իրականացնել, քանի որ թուրքական զորքերը ավելի շուտ մտան Իրան և փակեցին Անդրկովկաս տանող նաև այդ ճանապարհը: Վասպուրականցիները և նրանց միացած խոյի, Սալմաստի, Ուրմիայի հայերն ու նեստորական ասորիները, ստիպված շարժվեցին դեպի Հարավային Իրան: 1918 թ. հունիսի վերջերին, Իրանում գտնվող անգլիական զորքերի հրամանատարությունը, գաղթականական այդ զանգվածը իրեն ծառայեցնելու նպատակով, նրան վերցրեց

իր «հովանավորության» տակ: Խուճապահար նահանջող գաղթականները օգոստոսի սկզբներին հասան Համադան, ծակայն անգլիական իշխանությունները արգելեցին նրանց մտնել քաղաք¹:

Անգլիացիները աշխատում էին ամեն կերպ համոզել գաղթականներին, թե ստեղծված իրադրության մեջ ամենահարմար էլքն այն է, որ նրանք տեղավորվեն Միջագետքում, միառժամանակ մնան այնտեղ, խոստանալով հետագայում նրանց փոխադրել Հայաստան²:

Միջագետք հասնելուց հետո անգլիական իշխանությունները անմիջապես ղինաթափեցին գաղթականությանը պաշտպանող հայկական ու ասորական ղինված ջոկատները, բացի նրանցից, ովքեր համաձայնեցին ընդգրկվել անգլիական զորքերի մեջ: Այդ ձևով կազմավորվեցին հայ-ասորական մի քանի գումարտակներ և ուղարկվեցին Զենջան՝ օգնելու համար թուրքերի դեմ կռվող անգլիական զորքերին³:

Գաղթականությունը կարճ ժամանակամիջոցում համոզվեց, որ անգլիական ռազմական իշխանությունները իրեն մասին հոգալու ոչ մի մտադրություն չունեն, այլ նրանց նպատակն է ստեղծել հայերից ու ասորիներից բաղկացած ղինված ուժեր և դրանց միջոցով իրենց դիրքերն ամրապնդել արաբների շրջանում, միաժամանակ անձեռնմխելի պահել Հարավային Իրանի ու Միջագետքի նավթահանքերը:

Շուտով հայ գաղթականությունը ծառայեց անգլիացիներին այդ նեղ մտադրությունների դեմ, պահանջելով իրագործել Հայաստան փոխադրելու մասին իրեն տրված խոստումները: Զգալով գաղթականության բուռն ըմբոստացումը, անգլիական իշխանություններն սկսեցին բռնություններ գործադրել: Զերբակալեցին և պատիժների ենթարկեցին առավել ակտիվ անձանց, իսկ գաղթականության հիմնական զանգվածին ղինված պահակախմբերի հսկողության տակ փոխադրեցին Բաղդադի շրջանը, որտեղ նրան տեղավորեցին վրանների տակ, հատուկ ճամբարներում, այսպես կոչված՝ քեմբերում:

Տարագիրների մեծ մասը՝ ավելի քան 15 հազար մարդ, տեղա-

¹ Տե՛ս ՆՍՄՀ ՀՍՍՀ ՊԿԱ, ֆ. 114, ց. 1, գ. 267, թ. 119—121:

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս ՆՍՄՀ ԿՊՊԱ, ֆ. 68/200, ց. 1, գ. 125, թ. 9 և 16:

վորված էր Բաղդադից ոչ հեռու գտնվող Բաքուբա ավանում⁴։ Ճամբարաբնակներին անգլիացիները տալիս էին աննշան քանակությամբ անորակ մթերքներ, որով մի կերպ իրենց գոյությունն էին քարշ տալիս գաղթականները։ Գաղթականներին տրվող շնչին նույնպեստի դեմաց անգլիացիները տղամարդկանց ձրի աշխատեցնում էին երկաթուղու շինարարության վրա, ուր նրանք ենթակա էին վերահսկող սպաների ամեն տեսակ կամայականություններին։ Գաղթականական ճամբարները շրջափակված էին փշալարերով և գտնվում էին հնդիկ զինվորների խիստ հսկողության տակ։ Հայերին արդիվում էր դուրս դալ ճամբարից և աշխատանք փնտրել Բաղդադում կամ մի այլ վայրում։ Գաղտնի կերպով Բաղդադ կամ Բասրա աշխատանքի մեկնողներին անգլիացիները հետապնդում էին, գտնում և ենթարկում բանտարկության կամ ուղարկում տաժանակիր աշխատանքի։ Իսկ եթե չէր հաջողվում այդպիսիներին բռնել, այդ դեպքում փախածի ընտանիքն էին վտարում ճամբարից դեպի անապատ։ Տարածված սովն ու համաճարակային հիվանդությունները օրական տասնյակ դոհեր էին պատճառում անապատի կիզիչ արևի տակ տառապող ու հյուծված վրանաբնակներին, որոնց ոչ մի բժշկական կամ այլ օգնություն ցույց չէր տրվում։

Անգլիական իշխանությունները գաղթականության մի մասին 1920 թ. աշնանը փոխադրեցին Բասրայի նահանգի Նահր էլ Օմար գետափնյա ավանը՝ տեղի նավթահանքերում և ստրատեգիական նշանակություն ունեցող շինարարական օբյեկտներում աշխատեցնելու նպատակով, ուր ավելի վատթարացավ առանց այն էլ թշվառության մեջ գտնվող հայ տարագիրների վիճակը։ Արաբական աշխարհում իրենց դիրքերն ամրապնդելու և կայուն հենարան ստեղծելու նպատակով, անգլիական գաղութարարները ձգտում էին քրիստոնյա հայերին ու ասորիներին կապել հողի հետ, հակադրություն ստեղծել վերջիններիս և արաբների միջև, մյուս կողմից՝ զենքի ընդունակներին օգտագործել իրենց զինված ուժերի կազմում։ Այդ հողի վրա և քեմալական գործակալների հրահրումների հետևանքով, տեղական արաբները մի քանի անգամ զինված հարձակումներ գործեցին հայ գաղթականների ճամբարների վրա և բավականին վնասներ պատճառեցին նրանց։

⁴ Տե՛ս 2002 ՀՀՍԵ ՊԿԱ, ֆ. 114, ց. 1, գ. 267, թ. 119—121։

Այս մղձավանջային կացությունից դուրս գալու նպատակով Միջագետքում կուտակված հայությունը անընդհատ քայլեր էր կատարում Բաղդադի, Կ. Պոլսի ու Երևանի բարեգործական և ազգային հիմնարկությունների հետ հարաբերությունների մեջ մտնելու ուղղությամբ։ Վերջապես, 1919 թ. ամռանը նրանց հաջողվում է կապվել էջմիածնի Ամենայն հայոց կաթողիկոսի հետ և նրան տեղեկացնել իրենց աննախանձելի կացության մասին։

1919 թ. հուլիսի 9-ին Ամենայն հայոց կաթողիկոսի դիվանը հայտնում է դաշնակցական կառավարությանը, որ Բաղդադի հայոց առաջնորդական փոխանորդի ապրիլի 27-ի գրության համաձայն «Միջագետքում այժմ գտնվում են 25 հազար⁵ հայ փախստականներ, որոնք ապրում են շատ դառն պայմանների մեջ և եթե նոցա դեպի իրենց հայրենիք գաղթը շուտով չկատարվի հայակեր Միջագետքը կուլ պիտի տա այդ մեկացյալ փոքր հայությանը ևս»⁶։ Ներկայացնելով գաղթականության թշվառ վիճակը, կաթողիկոսի դիվանն առաջարկում էր դաշնակցական կառավարությանը՝ արագացնել նրանց ներգաղթի կազմակերպումը։ 1919 թվականի հուլիսի 17-ին դաշնակցական կառավարությունը կաթողիկոսին պատասխանում է՝ թե «ներգաղթն առայժմ հնարավոր չէ, վասն որոյ կառավարությունն ուղարկում է Բաղդադ իր ներկայացուցիչը՝ նրանց դրությունը պարզելու»⁷։

Ինչպե՛ս, սա տիպիկ խուսադրության կոնկրետ օրինակ է, որը ոչինչ չէր փոխում տառապյալների վիճակի մեջ։ Տեղի տալով հատկապես պառլամենտի արևմտահայ անդամների պահանջներին, դաշնակցական կառավարությունը ձեռնադրեց որոշեց արևմտահայ հասարակական գործիչ Արսեն Կիտուրիս ուղարկել «Միջագետք՝ հոն գտնվող տառապակոծ գաղթական

⁵ Հավանաբար այստեղ որոշ շափով շափաղանցված է Միջագետքում եղած հայերի թիվը։ Ավելի հավաստի աղբյուրների համաձայն այն կազմում էր մոտ 15 հազար մարդ։ Միջագետքահայ գաղթականների թվերի այդ տարբերությունը հետևանք է մի կողմից՝ ստույգ վիճակագրության բացակայության, իսկ մյուս կողմից՝ վարչատեղիտարիալ տարբեր շրջանների ընդգրկման, որի հետևանքով էլ այն տատանվում է 12 հազարից մինչև 25 հազարի միջև։ Մեր կարծիքով իրականությանը ավելի մոտ է 15 հազարը։

⁶ ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 68/200, ց. 1, գ. 284, թ. 107։

⁷ Նույն տեղում, թ. 8։

նությանը Հայաստան փոխադրելու նպատակով»⁸: Սակայն հենց իրեն՝ Ա. Կիտուրի հայտարարութեամբ, դաշնակցական կառավարութիւնը գաղթականութեանը խաբելու համար միայն պատճառաբանում անվանապես 3 միլիոն ռուբլի ներգաղթին հատկացնելու որոշում կայացրեց: Իրականում ոչ մի կոպեկ էլ չտրամադրվեց այդ գործին, և, ինչպես ճիշտ կերպով հետագայում գրում է Ա. Կիտուրը, դա կատարվեց «տաճկահայ պատգամավորներուս, հետևաբար մեր ետևը կանգնած 400,000 դաղթականութեանը քնացնելու» և ոչ թե իսկապես միջազգայնապես տարագիրներին օգնելու համար⁹:

Եվ այսպես, անխուսափելի կորստյան ճիրաններում դալարվում էր միջազգայնապես գաղթականութիւնը, երբ նրան հասավ Հայաստանում սովետական կարգերի հաստատման լուրը: Այն ցնծութեամբ ընդունեցին տարագիրները և նրանց մոտ վերակենդանացավ հայրենիք վերադառնալու հույսը: Շուտով նրանք կապ հաստատեցին Իրանում ՌՍՖՍՀ լիազոր ներկայացուցչութեան, ապա նաև Սովետական Հայաստանի հետ:

Հայաստանի կոմունիստական կուսակցութեան Կենտկոմը և ՀՍԽՀ ժողովրդական ծանոթանալով Միջազգայնապես հայրենիքի ծանր կացութեանը, անմիջապես միջոցներ ձեռնարկեցին նրանց վիճակը թեթևացնելու, ապա նաև հայրենիք վերադարձնելու ուղղութեամբ: 1921 թ. հուլիսի 2-ին ՀԿԿ Կենտկոմը կոչով դիմեց Համադանի, Քիրմանշահի, Մոսուլի, Նահր էլ Օմարի և Միջազգայնապես այլ շրջաններում ապաստանած հայ գաղթականներին: Կոչում ասված էր, որ «ՀԿԿ-ը, ամենամեծ համակրանքով և նույնքան խորունկ վշտով, հետևում էր ձեր գերմարդկային գողգոթային, անասելի տառապանքներին, որ կտանիք ամբողջ երեք երկար տարիներն ի վեր:

Հայաստանի կոմունիստական կուսակցութիւնը, մինչև այսօր ամբողջապես կտրված ըլլալով ձեզմե՝ չըսավ և չէր կարող ըսել իր պատմական խոսքը՝ մինչև այն ատեն, երբ տակավին Հայաստանի և հայ աշխատավորութեան բախտը իրենց ձեռք բռնած ունեին ազգային-բուրժուական կուսակցութիւնները:

... Ձեռք առնելով Հայաստանի իշխանութիւնը— հայ գյուղացիութեան և աշխատավոր ժողովրդի կամքով, այժմ մեր ա-

ռաջին աշխատանքների հետ միասին ձեռնարկում ենք նաև ձեր տառապանքներուն այլևս միանգամայն ընդմիջտ վերջ տալու անխուսափելի և անհրաժեշտ պահանջին»¹⁰:

Հայաստանի կոմկուսի Կենտկոմը, գնահատելով ոչ հեռու անցյալի դեպքերը և հայ ժողովրդին հասած աղետները, ոչ միայն միջազգայնապես տարագիրներին, այլև համայն աշխարհով մեկ ցրված հայրենիքը կոչ էր անում վերադառնալ հայրենիք և նվիրվել շինարար աշխատանքի: «Կոչ անելով վերադառնալ դեպի հայրենի երկիր, ի խնդիր անոր շինարարութեան, ի խնդիր ձեր աստանդական կյանքին, Հայաստանի կոմունիստական կուսակցութիւնը և խորհրդային իշխանութիւնը պիտի ի գործ դնեն իրենց բոլոր հնարավոր միջոցները, ապաստան տալու, վերաբնակեցնելու համար ձեզի, գյուղերու թե քաղաքներու մեջ, պիտի տան իրենց բոլոր կարելի և անկարելի միջոցները, անելով իրենց լավագույն ձիգը՝ ընդառաջելու համար ձեր կարիքներին, մինչև որ դուք ևս ձեր հերթին կարողանաք նվիրվել մեր երկրի վերաշինութեան սրբազան գործին:

Հայաստանի կոմունիստական կուսակցութիւնը, զրկելով իր ներկա կոչ-դիմումը, կգիտակցե իր անելիք աշխատանքի մեծութեան վրա, բայց ան կգիտակցե նաև իր պարտքի, պարտականութեան վրա, որ անհրաժեշտորեն կնեղկայանա իրեն և կդառնա հերթական հարց»¹¹:

Միջազգայնապես հայ գաղթականութեան վիճակը օրըստօրե ավելի էր մտահոգիչ դառնում: Գեոևս 1921 թ. մարտին անգլիական իշխանութիւնները հայտարարել էին, որ ապրիլից գաղթականներին այլևս նյութական օգնութիւն չի տրվելու, ուստի նրանք պետք է կապվեն հողի հետ, զբաղվեն հողագործութեամբ, միջոցներ վաստակեն, որով իբր թե հնարավորութիւն կունենան վերադառնալու հայրենիք: Հողին կապվելով, գաղթականները պարտավոր էին 4—5 տարի դարձյալ մնալ այնտեղ: Բայց իրականում ոչ միայն 4—5, այլև 14—15 տարում էլ հնարավոր չէր այնքան գումար կուտակել, որ նրանք կարողանային սեփական միջոցներով վերադառնալ հայրենիք: Հայ

¹⁰ ՉՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 4/114, ց. 1, գ. 89, թ. 38—39: Գաղթականական զանգվածներին ավելի հասկանալի լինելու նպատակով կոչը գրված է արևմտահայերենով:

¹¹ Տե՛ս նույն տեղում:

⁸ «Երեան», եօրյա թերթ, Փարիզ, 28 ապրիլի, 1929 թ., № 498:
⁹ Տե՛ս նույն տեղում:

գաղթականները ճիշտ կռահեցին անգլիական գաղութարարների իսկական նպատակները, ուստի կտրականապես հրաժարվեցին ցրվել Միջազգետքի անապատներում և կապվել հողին:

Այն ժամանակ Միջազգետքում անգլիական բարձրագույն կոմիսար Ռ. Զ. Քոքսի՝ գաղութների մինիստր Ուինստոն Չերչիլին ներկայացրած մի զեկուցագրից երևում է, որ 1921 թ. ամռանը որոշված է եղել Միջազգետքում ցրել հայ գաղթականությունը՝ ամեն մի ընտանիքին տալով 65 ֆուրլի, իսկ ամեն մի անձին՝ 13 ֆուրլի երկու շաբաթվա օրապահիկ: Սակայն այդ մտադրությունը, Քոքսի ասելով, չհաջողվեց ամբողջությամբ գործադրել, որովհետև գաղթականները մերժեցին թե՛ օրապահիկն ստանալ և թե՛ ճամբարները վրանները քանդել: Իսկ երբ անգլիական վարչությունը ոստիկաններ հրավիրեց և փորձեց նրանց օգնությունը քանդել վրանները, նահր էլ Օմարի ճամբարավանի բնակիչները միահամուռ կերպով ընդդիմացան դրան և սկսեցին քարկոծել ոստիկաններին: Զգալով, որ հայ տարագրները բոլորովին էլ մտադրություն չունեն ճամբարը թողնելու, անգլիացիները որոշեցին ժամանակավորապես նրանց օգտագործել Աբադանի նավթահանքերում: Սակայն հայերը մերժեցին անգլիացիների նաև այդ առաջարկը: Այն ժամանակ անգլիական վարչությունը դիմեց մի այլ խորամանկության: Նա վրանները վաճառեց տեղացի արաբ վաշխառուներին և հայտարարեց, որ այլևս երկու շաբաթվա օրապահիկ չի տրվի հայերին: Կոմիսար Քոքսը, այս բոլորը ներկայացնելով գաղութների մինիստրին, վճառականորեն զգուշացնում էր, որ անգամ հիվանդների պատճառով չի կարելի հետաձգել վրանների քանդումը¹²:

1921 թ. ամռանը Միջազգետքի գաղթականության ներկայացուցիչները բանակցությունների մեջ մտան Սովետական Հայաստանի կառավարության Թավրիդում դսնվող գաղթականական գործերի լիազոր Գր. Վարդանյանի, ինչպես նաև Երևան մեկնած իրենց պատվիրակների միջոցով ՀՍԽՀ Ժողովուրդի նախագահ Ա. Մյասնիկյանի հետ և խնդրեցին շուտափույթ կերպով գաղթականությանը փոխադրել Հայաստան¹³: 1921 թ. սեպտեմբերի 4-ին Միջազգետքի հայ գաղթականության ներկայացուցիչ Ա. Սիմոնյանը սովետական կառավարությանը ներկայացրեց

լով նրանց ծանր վիճակը, Թեհրանից դրում էր. «Գաղթականությունը իր անտանելի դրությունից դուրս բերելու համար պարտք են համարում ձեր ուշադրությունը հանձնել տեղի ունեցած հետևյալ պարագաները. հուլիսի 20-ից անգլիացիների կողմից դադարեցված են մեր գաղթականությանը տրվող միերթները, ժողովուրդը մատնելով աներևակայելի տնտեսական ճրգնածամբ: Սրանով ալ չբավականանալով, նրանք, գաղթականության հավաքականությունը միանգամայն անկարելի դարձնելու համար, վերցրել են քեմբերի ջրամբարները և ջրի խողովակները: Փորձել են վերցնել նաև վրանները, բայց կին ու երեխաները դառնալին խնդրանքի վրա, մի քանի օրով հետաձգվել է այդ:

Մեր գաղթականությունը ցրելու և միևնույն անգամ նրանց Միջազգետքից հեռացումը անկարելի դարձնելու նպատակով անգլիացիները հայ գաղթականության տված են անձագուլիս 13 ֆուրլի միայն, մինչդեռ ասորի գաղթականներին՝ յուրաքանչյուրին 122-ական ֆուրլի:

Ահա անգլիական կառավարության մտայնությունը և նրանց ճիգերը. մեր 12 հազարանոց գաղթականությունը, որ 7—8 տարիների բաղմատեսակ տառապանքներին և տանջանքներին դիմազրաված է, ներկայիս հետին մտքերով ձգտում են կապել իրենց համար անհարազատ և օտար հողին՝ խեղդելով նրանց մեջ հայրենիք վերադառնալու իրեալը:

Բնաջնջումի նախօրյակին այս բաշմաշարչար գաղթականությունը կսիրե հուսալ իր փրկությունը միայն իր հարազատ հայրենիքից: Այժմ լիահույս ենք, որ հորձրդային Հայաստանի կառավարությունը ոչ մի զոհողության և դժվարության առաջ կանգ չի առնի փրկելու համար գաղթականության այդ բեկորները, տեղափոխելով Թասրայից դեպի հարազատ հայրենիք, որտեղ միայն հնարավորություն պիտի ունենա լծվելու խաղաղ և շինարար աշխատանքի»¹⁴:

Սովետական կառավարությունը, ստանալով այս տեղեկությունները, 1921 թ. հոկտեմբերի 7-ին հատուկ նոտայով դիմում է Մեծ Բրիտանիայի արատքին գործերի մինիստրությանը և առաջարկում միջոցներ ձեռնարկել գաղթականությանը Հա-

¹² Տե՛ս նույն տեղում, թ. 43—48:

¹³ Տե՛ս նույն տեղում, ֆ. 114, ց. 1, գ. 267, թ. 122:

¹⁴ Նույն տեղում, ֆ. 4/114, ց. 1, գ. 5, թ. 61:

յաստան փոխադրելու համար¹⁵, ՀՍԽՀ Արտգործոժողովում Ասք. Մոսվյանի ստորագրությամբ հղված այդ նոտայում ասված էր. «Ստույգ տեղեկություններ առնելով Բաղդադի հայերից՝ Միջագետքի անգլիական իշխանություններից կախում ունեցող 14 հազար տարագիր գաղթականության վատթար վիճակի մասին, որը հետևանք է գաղթականությանը տրվող նպաստի դադարեցմանը և նրա բռնի տեղահանմանը սկսած օգոստոսի 1-ից, սորանով պատիվ ունեմ դիմելու ձեզ Հայաստանի Սոցիալիստական խորհրդային Հանրապետության կառավարության անունից հետևյալով.

Օգնության գործի դադարեցումը Միջագետքի անգլիական իշխանությունների կողմից փաստորեն համալոր է գաղթականությանը մասվան դատապարտելուն: Այն տարերային ու աղետաբեր գաղթը, որին ճարահատյալ դիմել են այսօր հայ գաղթականները Բասրայի անբարեհամբույր շրջավայրերից, որտեղ նրան ներփակել են անգլիական տեղական իշխանությունները, մղում է նրանց սովի, համաճարակ հիվանդությունների և մասվան գիրկը: Եվ հագիվ թե այդ 14 հազար տառապող ժողովրդից ազատվեն մի քանի խղճուկ բեկորներ»¹⁶:

Ներկայացնելով հայ տարագիրների նկատմամբ անգլիական գաղութարարների քաղաքականության հետևանքով առաջացած ծանր վիճակը, Սովետական Հայաստանի արտաքին գործերի՝ ժողովրդական կոմիսարն առաջարկում էր Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի մինիստրին՝ համապատասխան կարգադրություն անել Միջագետքի անգլիական իշխանություններին, որպեսզի դադարեցվեն գաղթականությանը Միջագետքում ցրելու և նրանց համար օտար ու անհարազատ հողին կապելու ուղղությամբ կատարվող ձեռնարկումները, ինչպես նաև շարունակվի նրանց օգնություն ցույց տալու գործը: «Այդ գործը, — այնուհետև ասված էր նոտայում, — կարող է կատարել և պարտական է անել Բրիտանիայի ներկա կառավարությունը, որը մինչև այսօր կապված է եղել վերոհիշյալ հայ գաղթականական զանգվածի հետ: Իսկ եթե Բրիտանիայի ներկա կառավարությունը հրաժարվի ստանձնել իր վրա այդ դժբախտ գաղթականների հոգա-

ցողությունը, կինդրեի գեթ կատարել նրանց վերջին իղձը և միջոցներ ձեռք առնել նրանց տեղափոխելու Պոլսի վրայով դեպի Բաթում, որպեսզի Հայաստանի կառավարությունը հնարավորություն ունենա տեղավորել նրանց իր սահմաններում»¹⁷:

Սովետական կառավարության ձեռք առած վճարական միջոցները՝ շնորհիվ և հասարակական կարծիքի ճնշման տակ, անգլիական իշխանություններն ստիպված եղան համաձայնվել գաղթականներին իրենց նավերով հասցնել Բաթում: Նրանց ընդունելու և տեղավորելու համար սովետական կառավարությունը ձեռք առավ արտակարգ միջոցներ: 1921 թ. դեկտեմբերի 13-ին ՀՍՀՍ Ժողովխորհի նախագահությունը քննարկեց Միջագետքից Հայաստան ժամանող 3000 գաղթականների ընդունելության հարցը և հանձնարարեց հողագործության ժողովում Ար. Երզնկյանին նրանց բնակեցնել հարմար շրջաններում, ապահովել հողով և ցույց տալ նյութական լայն աջակցություն¹⁸:

1921 թ. դեկտեմբերի 20-ին վրաստանում ՀՍԽՀ դիվանագիտական ներկայացուցիչ Հ. Սուրխաթյանը Թիֆլիսից հեռագրում է Երևան՝ ժողովխորհին, որ արդեն Բաթում է հասել շոգենավը՝ մոտ 3000 միջագետքահայ ներգաղթողներով, Մեծ Բրիտանիայի ներկայացուցչի ուղեկցությամբ¹⁹: Դա փաստորեն հայրենադարձների առաջին քարավանն էր, որով սկիզբ դրվեց ազգահավաքման հայրենասիրական այն մեծ գործին, որը շարունակվում է մինչև օրս: Այդ խմբում ներգաղթածների մեծ մասը տեղավորվեց Ալեքսանդրապոլի, Բասարգեշարի (այժմ՝ Վարդենիս) և Ղամարլուի շրջաններում²⁰:

Նկատի առնելով Հայաստանի այն ժամանակվա տնտեսական ծանր պայմանները, բնակարանների ու կենսամթերքների պակասը, պետք է ասել, որ սովետական կառավարության այդ քայլը սփյուռքահայ տարագիրների նկատմամբ ցուցաբերած վառ հոգատարության մի ակտ էր, որը կատարվում էր Միջագետքի անապատներում անխուսափելի ոչնչացման դատապարտված հայերի կյանքը փրկելու համար:

Հակառակ նախապես ձեռք բերված համաձայնությանը,

¹⁷ Նույն տեղում:

¹⁸ Տե՛ս ՀՍՀՍ ՀՍՀՍ ՊԿԱ, ֆ. 40/113, ց. 3, գ. 25, թ. 56:

¹⁹ Տե՛ս Նույն տեղում, ֆ. 4/114, ց. 1, գ. 96, թ. 654:

²⁰ Տե՛ս Նույն տեղում, թ. 641:

¹⁵ Տե՛ս նույն տեղում, ֆ. 114, ց. 1, գ. 97, թ. 7:

¹⁶ «Խորհրդային Հայաստան», օրաթերթ, Երևան, 16 հոկտեմբերի, 1921 թ., № 197, տե՛ս նաև ՀՍՀՍ ՀՍՀՍ ՊԿԱ, ֆ. 114, ց. 1, գ. 97, թ. 197:

որպեսզի սովետական կառավարության նկատմամբ դժգոհու-
թյուն առաջ բերին ներգաղթողների մեջ, անգլիական իշխանու-
թյունները որոշում են Միջագետքում մնացած գաղթականնե-
րին եւույնպես Հայաստան փոխադրել հենց ձմեռվա ամիսնե-
րին, երբ այստեղ ավելի դժվար կլինեն հոգալ նրանց բազմա-
տեսակ կարիքները:

1921 թ. դեկտեմբերի 27-ին ՀՍԽՀ ժողովուրդը կրկին
անդրադարձավ միջադեպահայերի նոր խմբերի ընդունելության
հարցին և որոշեց ձմեռվա ամիսներին միանգամայն անհնարին
համարել դաղթականներին Հայաստան ընդունելը, հավանու-
թյուն տալ արտգործո՞ղկոմատի ձեռնարկումներին՝ առնվազն
մինչև 1922 թ. գարունը ներգաղթ չկատարելու ուղղությամբ²¹;
ՀՍԽՀ ժողովուրդը միաժամանակ խնդրում է Սովետական
Ռուսաստանի կառավարությանը, որպեսզի նա Թեհրանի իր
դիվանագիտական ներկայացուցչության միջոցով գաղթականնե-
րին ցույց տա նյութական օգնություն, մինչև որ գարնանը
նրանք փոխադրվեն Հայաստան²²: Նույն օրը արտգործո՞ղկոմ
Ասք. Մասովյանը նոտայով դիմում է Մեծ Բրիտանիայի արտա-
քին գործերի մինիստր Քերզոնին, նշելով, որ ՀՍԽՀ կառավարու-
թյունը իր նախորդ դիմումով, «հանուն 14 հազար միջագետ-
քահայ գաղթականության կյանքի փրկության, որոնք անելանե-
լի դրության մեջ էին ընկել բրիտանական իշխանությունների
կողմից նրանց տրվող նպաստի հանկարծակի դադարեցման
(հետևանքով), խնդրել էր բրիտանական կառավարությանը այդ
գաղթականությանը նավերով փոխադրել Բաթում, այնտեղից
նրանց Հայաստան տեղափոխելու համար: Իր երկրորդ գրու-
թյան մեջ ՀՍՀ կառավարությունը համաձայնվելով նրանց ա-
ռաջին խմբի՝ 3000 հոգու ընդունմանը, որովհետև նրանք ար-
դեն գտնվում էին ճանապարհին, իր ժամառակին, սակայն, նա-
խազգուշացրեց բրիտանական կառավարությանն այն մասին,
որ տրանսպորտի բացակայությունը և բնակարանների սղու-
թյունը՝ մեծ թվով գաղթականության համար, հարկադրում են
խնդրել դադարեցնելու գաղթականության փոխադրությունը
մինչև 1922 թ. ապրիլը և այնուհետև տեղափոխել ավելի փոքր
խմբերով, հազար հոգուց ոչ ավելի ամեն խմբում, ամսական

մեկ անգամ: Բայց ՀՍԽՀ կառավարությանը հայտնի է դարձել,
որ արդեն սպասվում էր 7000 հոգու մուտքը Բաթում, մի բան,
որն անհնարին է ընդունել ներկայումս»²³:

ՀՍԽՀ արտգործո՞ղկոմատը տեղեկացնելով այդ մասին,
կրկին առաջարկում էր բրիտանական կառավարությանը դադա-
րեցնել գաղթականների տեղափոխությունը և շարունակել նրանց
նյութական օգնություն ցույց տալու գործը մինչև 1922 թ. ապ-
րիլ ամիսը: Հաշվի չառնելով այդ դժվարությունները, անգլիա-
կան իշխանությունները հայձեպորեն իրագործում են իրենց ո-
րոշումը: 1922 թ. հունվարի 2-ին ՀՍԽՀ արտգործո՞ղկոմատը Կ.
Պոլսում բրիտանական գերատույն կոմիսարին հղում է մի հու-
շագիր, ուր նշվում է, որ թեպետ մինչև 1922 թ. ապրիլը Սովե-
տական Հայաստանը ի վիճակի չէր միջագետքահայ տարադիր-
ների ընդունել բնակարանների և այլ անհրաժեշտ միջոցների
պակասության պատճառով, այնուամենայնիվ, կընդունի ար-
դեն ժամանող գաղթականությանը՝ հանուն նրա անխուսափելի
կորստից փրկության²⁴:

1922 թ. հունվարի 10-ին Բաթում ժամանեց մոտ 3000
մարդուց բաղկացած միջագետքահայերի երկրորդ քարավանը,
որին ընդունելու և տեղավորելու համար սովետական կառավա-
րությունը ձեռք առավ արտակարգ միջոցներ: Այդ խմբում ներ-
գաղթածները ժամանակավորապես տեղավորվում են Ղամար-
լուի շրջանի գորանոցներում, որպեսզի գարնանը տեղափոխվեն
Վեդու (այժմ Արարատ) շրջանը²⁵:

Չնայած բազմատեսակ կարիքներին ու հոգսերին, բոլոր
ներգաղթածներն էլ զոհ և ուրախ էին, որ երկարատև դեղերում-
ներից ու անլուր զրկանքներից հետո բախտ ունեցան հաստատ-
վելու հայրենի հողի վրա:

Արևելքի երկրներում Միջագետքի և Պարսկաստանի հայ գաղ-
թականության ցրումը կանխելու և նրան հայրենիք վերադարձ-
նելու գործում լուրջ օգնություն ցույց տվեց Սովետական Ռու-
սաստանի կառավարությունը Թեհրանի իր դիվանագիտական
ներկայացուցչության միջոցով²⁶:

²³ Նույն տեղում, ֆ. 4/114, ց. 1, գ. 51, թ. 113:

²⁴ Տե՛ս նույն տեղում, գ. 96, թ. 748:

²⁵ Տե՛ս նույն տեղում, գ. 5, թ. 78:

²⁶ Տե՛ս նույն տեղում, գ. 16, թ. 89:

²¹ Տե՛ս նույն տեղում, ֆ. 40/113, ց. 3, գ. 25, թ. 60:

²² Տե՛ս նույն տեղում:

Ներգաղթողներին, ինչպես ճանապարհին, այնպես էլ երկրում տեղավորելուց հետո սովետական կառավարության և տեղական իշխանությունների ու աշխատավորների կողմից ցույց էր տրվում լայն օգնություն: Նրանք օգտվում էին առանց մաքսի ու տուրքի մեծ քանակությամբ բեռների ձրի փոխադրության իրավունքից, ստանում էին անվճար բժշկական օգնություն և այլն: Այնտեղ, ուր նրանք մշտական բնակություն էին հաստատում, ստանում էին անհրաժեշտ շահիով հող, լժկաններ, գյուղատնտեսական գործիքներ, սերմացու, բնակարաններ, վարկեր, շինանյութեր և այլ միջոցներ²⁷:

Միջազգետրում մնացած հայ դաղթականության մեծ մասը Սովետական Հայաստան վերադարձավ հաջորդ տարիներին և նույնպես հնարավորություն ստացավ կարճ ժամանակամիջոցում թոթափելու իր անցած տառապալից ճանապարհների փոշին ու մասնակցելու երկրի վերաշինության գործին²⁸:

Այսպիսով, առաջին համաշխարհային պատերազմի տարիներին՝ Վասպուրականից, Սալմաստից, Ուրմիայից, Խոյից և այլ վայրերից Միջազգետրում կուտակված հայ գաղթականության մեծ մասը՝ ավելի քան 9000 մարդ, Բաթումով և Զուլֆայով Սովետական Հայաստան ներգաղթեց 1921 թ. վերջերին և 1922 թ. սկզբներին: Հայրենադարձները տեղավորվեցին հիմնականում Վեդու, Բասարզեշարի, Ալեքսանդրապոլի, Ղամարլուի շրջաններում և հնարավորություն ստացան նոր կյանք կերտելու հայրենի հողի վրա²⁹:

Երբ Միջազգետրի հայ տարագիրների առաջին քարավանների հայրենադարձության լուրը հասավ հայկական գաղթօջախները, էլ ավելի բուռն դարձավ Սովետական Հայաստան ներգաղթելու սփյուռքահայ աշխատավորների ձգտումը: Սկսվեց դիմումների ու խնդրագրերի մի լայն հոսանք, որով արտահայտվում էր տարագիր հայերի ներգաղթելու վճռական ցանկությունը: Ահա դրանցից մեկը. 1923 թ. մարտի 20-ին Ալեքսանդրիայից մի խումբ հայ տարագիրներ գրում էին. «Ծգիպատահայ գաղութի մեջ ապրող հայրենակիցներեն շատեր կփափազին փոխադրվիլ

խորհրդային Հայաստան իրենց ամբողջ ունեցվածքով, ձանձրացած ըլլալով օտարներու ծառայելի, անոնց գյուղերը և քաղաքները շինացնելի, մանավանդ վերջերս հայ թերթերու մեջ երևցած կարգ մը գրությունները խորհրդային Հայաստանի մասին ավելի մեծ զարկ մը տվին այս մտածման»³⁰: Նման տրամադրություններն ու ցանկությունները օրըստօրե ավելի էին ուժեղանում և լայն արձագանք գտնում մոտիկ ու հեռու բոլոր գաղթօջախներում: Հայրենիք ներգաղթելու ցանկությամբ սովետական կառավարության հասցեով ստացվող նամակների ու դիմումների հեղինակները մեծ մասամբ աշխատավոր մարդիկ էին, որոնք նկարագրելով օտարության մեջ իրենց ծանր վիճակը, խնդրում էին շուտափույթ կերպով փրկել իրենց և հնարավորություն տալ ներգաղթելու Հայաստան: Դիմում էին տարբեր խավերի ու զբաղմունքների տեղ մարդիկ, կոշտացած ձեռքերով երկրագործրն ու բանվորը, ուսումնաստենչ պատանին ու բազմավաստակ ինժեները, և յուրաքանչյուրն իր կյանքի ողիսականը շարագրելուց հետո հավաստիացնում էր, որ երբեք «բեռ մը չպիտի ըլլա խորհրդային կառավարության վրա», այլ իր ուժերով հաղորդակից կլինի երկրում ծավալված շինարար աշխատանքին և օգտակար գործակից՝ իր նվիրական հայրենիքին:

Չնայած նման բովանդակությամբ ստացվող բաղմամբիվ խնդրանքներին, սովետական կառավարությունը 1923 թ. կարողացավ իրականացնել միայն մոտ 1000 հոգու ներգաղթը Վանից, Իրանից և այլ վայրերից³¹: Պետք է նկատի առնել այն հանգամանքը, որ այդ ժամանակ մի կողմից հանրապետությունը դեռևս գտնվում էր տնտեսական դժվարին վիճակում, իսկ մյուս կողմից՝ 1921—1922 թթ. ներգաղթածները, բոլորն էլ առանց բացառության, խիստ չքավորներ էին և կարիք ունեին տեղավորման ու նյութական մեծ օգնության: Նման օգնության կարիք էին զգում նաև հանրապետությունում եղած արևմտահայ գաղթականները: Ահա այս հանգամանքները լրջորեն կաշկանդում էին սովետական կառավարությանը՝ ավելի լայն մասշտաբներով սփյուռքահայ տարագիրներին ընդառաջելու և ավելի մեծ թվով ներգաղթողների ընդունելու գործում:

²⁷ Տե՛ս նույն տեղում, ֆ. 40/113, ց. 3, գ. 374, թ. 18:

²⁸ Տե՛ս նույն տեղում, գ. 297, 377 և այլն:

²⁹ Տե՛ս «խորհրդային Հայաստան—հինգ տարի՝ 1920—1925», ժողովածու, էջ 69:

³⁰ «խորհրդային Հայաստան», 16 մարտի, 1924 թ., № 63:

³¹ Տե՛ս ՀՍՍՀ ՀՄՍՄ ՊԿԱ, ֆ. 30/116, ց. 1, գ. 2352, թ. 23:

Բայց դեպի հայրենիք մի անդամ արդեն ծայր առած շար-
ժույթը այլևս անհնար էր կասեցնել, և սովետական կառավարու-
թյանն ուղղված նորանոր դիմումներով սփյուռքահայ աշխա-
տավորները խնդրում էին թույլատրել ներգաղթելու Սովետա-
կան Հայաստան: 1924 թ. հունվարին հունահայ տարագիրնե-
րից մեկը Աթենքից գրում էր. «Սրտի անսահման ուրախու-
թյամբ այսօր կուզամ հայտնելու այն փափագը, զոր ծնունդ է
առած հայրենաբաղձ կուրծքիս տակ: Այդ փափագը մեր դարա-
վոր երազներու իրականացման արդյունքն է: Բառ մը միայն—
Հայաստան երթալ, ուրիշ ոչինչ»³²:

«Մենք պատրաստ ենք ձեր առաջին կոչին ու հրամանին,
որպես գաղափարի ընկերներ ու հպատակներ, ահա կերկրոր-
դենք մեր աղերսն ու առաջարկը, որ ժամ առաջ փրկած ըլլաք
մեզ ստույգ ու իրական մահեն, որ է սով ու զուլում ներկա պա-
րագաներու տակ: Մենք ամեն կերպ զոհողություններու, ի
հարկին ամեն կերպ աշխատանքներու պատրաստ ենք»,—այս-
պես էին գրում հայրենիք գալու մասին Կալամաթիայից 600
հայ տարագիրները³³:

Բեյրութից մի խումբ հայ արհեստավորներ 1924 թ. ապրի-
լին ՀՍԽՀ Ժողկոմխորհի նախագահ Ս. Լուկաշինին հասցեագրած
դիմումի մեջ գրում էին. «Փափագելով հայրենիքի հողին վրա
վերաշինել մեր ավերված բունները, մենք 4—6 ընտանիքներ,
բաղկացյալ 4—5 հոգիե յուրաքանչյուր ընտանիք, և արհեստա-
վոր՝ որպես դերձակ, կոշկակար, մշակ-եաղմաճի, կառավարու-
թյան վրա որևէ բեռ չենք (լինի), արդյոք պիտի արտոնեի՞ք
մեր հոն գալը և ինչ ձևակերպություններ պետք է արտոնագիրը
ստանալու (համար)»³⁴:

Հայ տարագիրները, որպես օտարագիրներ, բաղմաթիվ հա-
լածանքների էին ենթարկվում կապիտալիստական երկրներում,
ուստի ձգտում էին անպայման ներգաղթել Սովետական Հա-
յաստան, գտնել հարազատ միջավայր: Այսպես, օրինակ, բուլ-
ղարական կառավարության որոշմամբ Ֆիլիպեի և Թաթար-Բա-
ղարձիկի շրջաններում հաստատված հողագործությանը զբաղ-
վող հայերը 1923—1924 թթ. տեղահանվում էին այդ վայրերից

այն բանի համար, որ մրցակցության մեջ նեղում էին մակեդո-
նացի ծխախոտագործ վերաբնակիչներին: Այդ կապակցությամբ
վերջիններս բաղմիցս բողոքել էին կառավարությանը, որը և
որոշել էր այդտեղից հեռացնել հայերին, նրանց դնելով միան-
գամայն ծանր վիճակի մեջ³⁵:

Այդ տարիներին առանձնապես ծանր կացության մեջ էին
գտնվում Հունաստան ապստամանած հայ տարագիրները: 1923 թ.
հունվարին հունական կառավարության ընդունած օրենքի հա-
մաձայն բոլոր օտարահպատակները ազատվում էին պետական
ծառայությունից, գործարաններից և այլ աշխատավայրերից
հույն գաղթականներին աշխատանքով ապահովելու նպատա-
կով: Հույն գաղթականներին ավելի բարեբեր վայրերում տեղա-
վորելու համար հայերին Թրակիայից տեղափոխում էին Մա-
կեդոնիայի և Պելոպոնեսի անմշակ շրջանները: Տնտեսական ու
քաղաքական անտանելի վիճակի մեջ էին գրվում քիչ թե շատ
հարմար տնտեսություններ ստեղծած հայ գաղթականները: Հայ
որբերը նույնպես հեռացվում էին հունական քաղաքներից, և
նրանք հարկադրված ցրվում էին Ֆրանսիայում, Եգիպտոսում
ու այլ երկրներում: Եվ ահա Հունաստանի որբանոցների փոքրիկ
մանչուկները ևս, դիմելով սովետական կառավարությանը, իրենց
անվարժ գրիչներով ու մանկական թոթովանքներով փորձում
էին նկարագրել այն արյունոտ ուղին, որը նրանց հասցրել էր
որբանոցները և այն տառապանքները, որ նրանք կրում էին այդ
հաստատություններում: «Տարե՞ք մեզ Հայաստան, տարե՞ք
տուն»³⁶,— այսպես էին եղբափակում իրենց աղերսանքը հու-
նահայ որբուկները:

1924 թ. սեպտեմբերին ՀՍԽՀ Ժողկոմխորհի նախագահ Ս.
Լուկաշինին հասցեագրած դիմումի մեջ Աթենքի հայոց առաջ-
նորդարանի կենտրոնական վարչությունը գրում էր, որ հունա-
կան կառավարությունը ձեռնարկել է «Թրակիո կողմերը բարե-
բեր հողերու վրա հաստատված և իրենց աշխատասիրության
շնորհիվ ինքնաբավ եղած հայությանը տեղահան ընել ու նետել
զանոնք Բելոբոնեսի շրջանին ապերախտ ապառաժներուն վրա,
զրկելով զանոնք նույնիսկ հունձքեն և արդյունքեն այն աշխա-

³² «Նորհրդային Հայաստան», 16 մարտի, 1924 թ., № 63:

³³ Տե՛ս նույն տեղում:

³⁴ ՀՍՍՀ ՀՄՍՇ ՊԿԱ, ֆ. 40/113, ց. 3, գ. 258, թ. 43:

³⁵ Տե՛ս «Նորհրդային Հայաստան», 29 ապրիլի, 1924 թ., № 98:

³⁶ Նույն տեղում, 16 մարտի, 1924 թ., № 63:

տուժյուններուն, զորս սպասված էին հասցնելու համար հացահատիկ, ծխախոտ և այլ երկրագործական բերքեր:

Կհուսանք թե մեր սույն հակիրճ տողերը բավական կըլլան հասկնցնելու, թե տեղս գտնվող հայութեան գյուղացի, բանվոր և արհեստավոր մասը մատնված է վերջին ծայր թշվառութեան³⁷: Դիմումի մեջ այնուհետև շեշտվում էր, թե «այս թըշվառ գաղթականները իրենց սպառնացող ստույգ մահէն փրկելու միակ միջոցը նկատած ենք անոնց Հայաստան փոխադրվելը: Այս եզրակացութեան կհասնինք մանավանդ տեսնելով գաղթականներու դեպի հայրենի երկիր ձգտումը ու սերը և օր առաջ հոն նետվելու ջերմ փափագը»³⁸:

1924 թ. մարտին Հունաստանի Սալոնիկ քաղաքից մեքենավար Հ. Տեր-Նիկողոսյանը նույնպես դիմում է սովետական կառավարութեանը: Նկարագրելով հայ տարագիրների թշվառ վիճակը օտար երկնակամարների տակ, նա գրում է, թե «...այսուհետև կուխտենք շմնալ այս բուրժուական կարգ ու սարքերով կառավարված երկիրներու մեջ և անդիմադրելի ցանկություն կզգանք վերագառնալ ամենուս մայր հայրենիքն եղող Երևան և հոն ապրիլ խաղաղությամբ մեր բանվոր ընկերներու և աշխատավոր եղբայրներու հետ»³⁹:

1924 թ. մայիսին Սալոնիկից մի խումբ արհեստավորներ ևս դիմում են ՀՍԽՀ Ժողկոմխորհի նախագահ Ս. Լուկաշինին՝ Հայաստան փոխադրվելու թույլատրություն ստանալու համար: Դիմումն ստացվելուն պես, Ս. Լուկաշինը մակագրում է՝ պատճենն ուղարկել Կ. Պոլսում Անդրկովկասի առևտրական ներկայացուցիչ և ՀՍԽՀ Ժողկոմխորհի ներգաղթի լիազոր Գ. Շահվերդյանին՝ որպես բանվորների նրանց առաջին հերթին վիզա տալու համար⁴⁰:

Դիմումի հեղինակները, վերլուծելով իրենց անցած ուղին, գրում էին. «Դարեր ամբողջ ազատություն և անկախություն երազեցինք: Տարիներ անընդհատ մարդու և քաղաքացիի իրավունքներ ձեռք բերելու համար պայքարեցանք, որուն համար ենթարկվեցանք ահավոր զրկանքներու և հարստահարությանց: Եվրոպական անբարոյիկ քաղաքականությունը, հայ իրա-

կանություն մեջ գոյություն ունեցող կուսակցական սխալ և հակամարտ պայքարները, կապիտալիստական պետություններն նոր օրենստասիտներ և նորանոր «օջախներ» որոնելը, մեծ Հայաստան մը երազելու մեր սին ու պարապ հույսերը, այսօր մի անգամ ընդմիջող գերեղմանված կնկատենք, ընդունելով մեր սխալները կկանգնինք հպարտորեն մեր միակ խարիսխը եղող Խորհրդային Հայաստանի կողքին որպես հարազատ քաղաքացիներ»⁴¹:

Նրանք հայտնում էին, որ իրենք ներկայումս լավ են ճանաչում իրենց այսօրվա գոյավիճակի բոլոր պատասխանատուներին, որոնց զոհը դարձան հայ աշխատավորները, որ իրենք այլևս չեն կարող հանդուրժել, որպեսզի շարունակվեն կուսակցական նորանոր շահատակությունները և երկարաձիգ տառապանքներից հետո իրենք կանգնում են Խորհրդային Հայաստանի ու Անդրկովկասյան Տեղեկագրայի փրկարար դրոշի տակ:

Այնուհետև խնդրելով օր առաջ փրկել իրենց պանդխտության դառն վիճակից, դիմումի հեղինակները վճռականորեն եզրակացնում էին. «Մենք մեր բովանդակ հույսը լուսո և ապագա մեր երջանկության փառահեղ աստղը Կովկասյան կարմիր հորիզոնին վրա կտեսնենք, մեր և մեր նոր սերունդի ապագան հող, միայն հող է, որ պիտի կարենանք տեսնել»⁴²:

Սալոնիկում ժամանակավորապես ասպնջականություն գտած 25 հայ արհեստավորներ 1924 թ. հունիսին ՀՍԽՀ Ժողկոմխորհին ուղարկած դիմումի մեջ նկարագրելով, որ շրջապատող քաղաքական ու տնտեսական պայմանները չափազանց անտանելի են դարձնում իրենց կյանքը, խնդրում էին հնարավորություն տալ իրականացնելու իրենց անհուն քաղաքացիական խնդիրները:

Դիմումի մեջ նրանք գրում էին. «Հիացած ձեր շորս տարվա կատարած հսկայական գործերուն, համակված այս մեծ ու փրկարար ճշմարիտ իրավակարգին, խանդավառված բանվորի, գյուղացու ու արհեստավորի գտած հանգստության ու վայելած ասպնջականությանը մեր պաշտելի հայրենիք՝ մեջ, կզանք մեր երկար ու տանջալի ուղևորութենեն վերջ մեր գաղթականի բռններն ուսին, հոգնած ու ուժասպառ, բայց վերապ-

³⁷ ՀՍՍՀ 220Ծ Կ՝Ա, ք. 40/113, ց. 3, գ. 259, թ. 15—17:

³⁸ Նույն տեղում:

³⁹ Տե՛ս նույն տեղում, գ. 258, թ. 8—9:

⁴⁰ Տե՛ս նույն տեղում, թ. 15—17:

⁴¹ Նույն տեղում, թ. 83—84:

⁴² Նույն տեղում:

րելու հույսերով ու մեր սիրելի երկիրը տնտեսելու հավատքով լեցուն, սրտագին օրերն գոտեպնդված կհամբուրենք այն գրոշակը, որու վրա մակագրված է աշխատանքի ու վայելքի, մարդու ու քաղաքացու նշանաբանն իր բոլոր ստորագելիներով»⁴³:

Ապա ներկայացնելով իրենց տեղահանելու վերաբերյալ հունական կառավարության որոշման հետևանքով ստեղծված անհլանելի վիճակը, դիմումի հեղինակները վերջում դարձյալ խընդրում էին, որ իրենք, լինելով բնիկ սեբաստացի երկրագործներ ու արհեստավորներ, պատրաստ են ամեն կարգի զոհողությունների, միայն թե վայրկյան առաջ փրկվեն տանջալից մղձավանջից:

Այդ դիմումն ստացվելուց անմիջապես հետո, 1924 թ. հուլիսին, ՀՍԽՀ ժողկոմխորհը պատասխանում է խնդրատուներին, որ «ձեզ՝ ինչպես բանվորների և բանվորա-գյուղացիական երկրին հարազատ տարրերի, կառավարությունը կարող է ընդունել իր սահմանները, չնայած որ մեր երկիրը, հողի սղություն պատճառով, թույլ չի տալիս բավարարել նման բազմաթիվ դիմումներ: Պետք է իմանաք, որ մեր երկրում ուժեղ թափով ընթանում է սոցիալիստական շինարար աշխատանքը և միայն նոքա կարող են հարազատ քաղաքացիներ լինել ՀՍԽ Հանրապետության մեջ, որոնք կմասնակցեն այդ աշխատանքներին:

Ձեր տեղափոխության մասին հայտնված է Պոլիս՝ ընկ. Շահվերդյանին և հրահանգված է նրան՝ ցույց տալ ձեզ լայն աջակցություն»⁴⁴:

Սովետական կառավարության ամեն մի այսպիսի սլատասխանը արագորեն տարածվում էր քաղաքից քաղաք, երկրից երկիր, առաջ բերելով դիմումների նոր հոսանք: Եվ ահա սփյուռքահայերի մի այլ խումբ ՀՍԽՀ ժողկոմխորհին ուղարկած նամակում գրում էր. «...Գաղթականի ցուպը ձեռքին, օտար երկիրներում տակ հուսաբեկ ու գլխիկոր, գրեթե կյանք մուրացող հայության բեկորները իրենց աչքերը հառած են պատմական Արարատի ստորոտը հարություն առնող, վերածնվող մայր հայրենիքին, անշուշտ այն խոր հավատքով, որ նրա իմաստուն վարիչները միշտ նկատի կունենան արտասահմանի իրենց տառապող և զբայրակիցներու ցավն ու թշվառությունը:

... Ահավոր է տնտեսական տագնապը, որ համաշխարհային բնույթ է ստացել, որուն հետևանքը, իբրև օտարահպատակ, նանսենյան հայ բանվորներու (խոսքը նանսենյան անձնագրեր ունեցող տարագիրների մասին է.— Ն. Մ.) գործազրկությունն է: Ցավալի է ըսել, որ բացարձակապես իրավունք չտրվիր մեզ աշխատելու ոչ մեկ մարզին մեջ: Թշվառությունը յուր ավերիչ ճիրաններուն զոհն է դարձուցել մեզ բոլորիս: Կան բանվորներ, հակառակ իրենց երկաթե բազուկներուն, անոթի ու անսնունդ, չոր հացի մը կարոտ... Ո՞վ պիտի օգնե մեզ, այս օտար երկրի տակ, ո՞վ պիտի սրբե այս թշվառ բազուկորույսներու դառն արցունքը...»⁴⁵:

Միայն ներգաղթի մեջ տնտեսվող իրենց իսկական փրկությունը, նրանք գրում էին. «Ներգաղթ, ներգաղթ կպոռան հայ խլյակներ: Բյուրալորներ անպատասպար կթափառեն ու գործ կմուրան: Միակ և գլխավորադույն սպեղանին ներգաղթն է, որ հնարավորություն պիտի տա բազմաթիվ շինարար բանվոր բազուկներու գործ հայթհայթելու, ի փոխարեն նույնիսկ չոր հացի մը, հոգ չէ թե դաշտերու մեջ ժամանակավորապես վրաններու տակ պատասպարվելով, միայն թե մեր երկրքին տակ դառնվելու միջոցառությունը ունենանք:

Մեր միակ հույսը կմնա ներգաղթը՝ որուն փութով իրականացման համար պաղատագին կխնդրենք ձեր ընկերական հեղինակությունը, ձեր միջամտությունը: Ամեն օր դժբախտություն ունինք լսելու անպատմելի թշվառություններ, շվարուն և անել կացության մը մատնված ենք, հույսի միակ ակը և լույսի միակ փարոսը ներգաղթն է:

Ակընդեռ կսպասենք ձեր ընկերական արդյունավետ պատասխանին և ներգաղթը ավետող պատվական գրություն»⁴⁶:

1924 թվականին միանգամայն տագնապալի վիճակ էր ստեղծվել նաև Թուրքիայում բնակվող հայերի համար: Դա 1922 թ. հետո երկրորդ լուրջ տագնապն էր, որ ապրում էր Թուրքիայում մնացած հայությունը: 1924 թ. հուլիսի 21-ին ՀՍԽՀ ժողկոմխորհին ուղարկած զեկուցագրում Գ. Շահվերդյանը խնդրում էր արագացնել նախատեսված ներգաղթի իրականացումը, որովհետև «ըստ երևույթին գաղտնի կարգադրության

⁴³ Նույն տեղում, ֆ. 113, ց. 3, գ. 54, թ. 34:

⁴⁴ Նույն տեղում, թ. 36:

⁴⁵ Նույն տեղում, ֆ. 178, ց. 1, գ. 975, թ. 19:

⁴⁶ Նույն տեղում:

համաձայն, այնպիսի անտանելի դրություն է ստեղծվել Անատոլիայում, որ հայերը մնալ իրենց տեղերը չեն կարողանում» և ստիպված հեռանում են երկրից, թողնելով ամեն ինչ, միայն թե ազատվեն այդ ծանր պայմաններից: Դ. Շահվերդյանը նշում էր, որ «հեռանալիս տաճիկ իշխանությունը անցադրերի վրա գրում է՝ երկրի (Տաճիկաստանի) սահմանից հեռանալու պայմանով»: Երբ նրանք հասնում են Պոլիս, գաղթականներին նպաստավորող ազգային-բարեգործական հաստատությունները մի կերպ հաջողացնում են մի առժամանակ նրանց պահել Պոլսում: «Այդ ժամանակամիջոցին,— գրում է Շահվերդյանը,— սկզբում տրվում են ինձ, որպեսզի նրանց ուղարկեմ Հայաստան կամ մի որևէ անկյուն հորհրդային Միության, բայց, որովհետև այդպիսի հնարավորություն չկա, նրանք ընկնում են զանազան ազգենտների ձեռքը, որոնք ուղարկում են նրանց Ֆրանսիա և Աֆրիկայի գաղութները կամ Հարավային Ամերիկա, գլխավորապես Արգենտինա»: Նկարագրելով Թուրքիայում մնացած հայության այս անմխիթարական վիճակը, Դ. Շահվերդյանը խնդրում էր ժողովուրդին՝ ըստ հնարավորին արագացնել նրանց հայրենադարձության կազմակերպման գործը⁴⁷:

Այս բոլոր փաստերը ակնբախորեն խոսում են այն մասին, որ 1923—1924 թթ. ևս սփյուռքահայությունը գտնվում էր խիստ տագնապալի վիճակում, դարձյալ շարունակվում էին անհույս դեգերումները, բռնի կամ կամավոր մակընթացություններն ու տեղատվությունները: Շատ դեպքերում հայ տարագիրները հազիվ էին իրենց ասպնջականություն տված երկրներում արմատներ ձգած լինում, հազիվ էին փորձում ծիլեր արձակել ու փոքր-ինչ ապահովություն ստեղծել և ահա նորից արմատահան էին արվում: Նրանց գլխին կրկին կախվում էին նոր տեղահանությունների արհավիրքները՝ իրենց բոլոր սարսափներով: Ու դարձյալ սկսվում էր սփյուռքահայ տարագիրների անժանոթ ուղիներով հալածական երթը դեպի նոր ու անհայտ հանգրվաններ:

Այսպիսի պայմաններում, չնայած գոյություն ունեցող լուրջ դժվարություններին, սովետական կառավարությունն անհրաժեշտ ու նպատակահարմար գտավ շարունակել սփյուռքահայ աշխատավորների հայրենադարձությունը:

ՀՍԽՀ Ժողովուրդների միջնորդությունը, 1924 թ. մարտի 3-ին, Անդրկենտրոնի նախագահությունը որոշում կայացրեց 1924—1925 թթ. ընթացքում արտասահմանից՝ հիմնականում Հունաստանից, Միջագետքից և Թուրքիայից, Սովետական Հայաստան ընդունել 10.000 գաղթականներ և նրանց տեղավորել Սարդարապատի արևելյան մասում, նախապես այն դարձնելով ոռոգելի: ՀՍԽՀ հողագործության և ներքին գործերի ժողովմատները կազմեցին 10.000 գաղթականների փոխադրության և տեղավորման հետ կապված ծախսերի նախահաշիվը՝ մոտ 1,7 միլիոն ռուբլի: 1924 թվականի մայիսից սկսվեց ներգաղթողների ժամանումը Բաթում և Զուլֆա⁴⁸:

1924 թ. հոկտեմբերի 15-ին ՀՍԽՀ Ժողովուրդները քննարկեց Հայաստան ներգաղթող 10.000 տարագիրների ընդունման, տեղավորման, հողի հետ կապելու և այլ միջոցառումների մասին ներքոթոնոլոգիայի գեկուցումը: Որոշվեց այդ նպատակով լրացուցիչ գումար խնդրել Անդրֆեդերացիայի ժողովուրդներից և միութենական կառավարությունից: Միաժամանակ առաջարկվեց գյուղատնտեսական և կոմունալ բանկերին՝ ներշնչողներին համար բացել երկարաժամկետ վարկեր՝ գյուղատնտեսական գործիքներ, սերմացու և շինանյութեր ձեռք բերելու նպատակով: Որոշվեց նաև հողժողովուրդի ֆոնդերից ներգաղթողներին տրամադրել շինափայտ՝ երկաթուղային կայարաններին մոտիկ վայրերում⁴⁹:

1924 թ. ընթացքում Հունաստանից, Կ. Պոլսից, Միլիթից, Միջագետքից և Ֆրանսիայից հայրենիք եկան 4167 տարագիրներ՝ այդ թվում և որք երեխաներ: Նրանց մեծ մասը՝ 3051 մարդ, հայրենիք ժամանեց Բաթումով, 1924 թ. մարտի 29-ից մինչև 1925 թ. հունվարի 19-ն ընկած ժամանակամիջոցում⁵⁰: Ժամանածների 50 տոկոսը արհեստավորներ էին, 12 տոկոսը՝ ծխախոտագործներ, 16 տոկոսը՝ շերամապահներ, 2 տոկոսը՝ մտավորականներ, իսկ մյուսները՝ այլ զբաղմունքների տեր աշխատավորներ⁵¹:

1924 թ. ներգաղթած տնտեսություններին տեղավորելուց

⁴⁸ Տե՛ս նույն տեղում, գ. 410, թ. 153:

⁴⁹ Տե՛ս նույն տեղում, թ. 147:

⁵⁰ Տե՛ս նույն տեղում, գ. 418, թ. 28:

⁵¹ Տե՛ս նույն տեղում, թ. 20:

⁴⁷ Տե՛ս նույն տեղում, ֆ. 40/113, ց. 3, գ. 305, թ. 39:

հետո, ներքգործողկոմատը և հողօրհողկոմատը մանրամասն ուսումնասիրեցին նրանց վիճակը և 1925 թ. մարտին այդ մասին զեկուցագիր ներկայացրին ՀՍԽՀ Ժողկոմխորհին առընթեր աշխատավորական ներգաղթի հանձնաժողովին: Այդ ղեկուցագրում նշված էր, որ 1924 թ. Կ. Պոլսից, Հունաստանից և այլ վայրերից Հայաստան եկած դաղթականները գտնվում են ծայրահեղ կարիքի մեջ: Այսպես, Կ. Պոլսից ժամանած և Լենինականի գավառի գյուղերում տեղավորված 77 տնտեսությունների (291 շունչ) և Ստեփանավանի շրջանից այնտեղ տեղափոխված 172 տնտեսությունների (703 շունչ) 80 տոկոսը չբավորներ էին: Լենինական քաղաքում բնակություն հաստատած 205 ընտանիքներից (862 շունչ), որոնց աշխատունակ անդամները մեծ մասամբ Կ. Պոլսից ներգաղթած արհեստավորներ էին, կարիքավորներ էին 70 տոկոսը: Մայրահեղ չբավոր վիճակում էին գտնվում նաև Երևանի գավառում տեղավորված Կ. Պոլսից և Միջագետքից ներգաղթած շուրջ 100 ընտանիքները (438 շունչ)⁵²:

Թե՛ գյուղերում և թե՛ քաղաքներում տեղավորված հայրենադարձները կարիք ունեին բնակարանների, շինանյութերի, վարկերի, որպեսզի կարողանային վերանորոգել իրենց հասկացված հին տները կամ կառուցել նորերը, զբաղվել արհեստներով և երկրագործությամբ:

Նկատի ունենալով ներգաղթածների այդ վիճակը, ՀՍԽՀ Ժողկոմխորհը հատուկ քննարկման ենթարկեց այն: Հանձնարարվեց աշխատավորական ներգաղթի հանձնաժողովին՝ մշակել առաջարկներ ու կազմել նախահաշիվ՝ 1925 թ. գաղթականությանը տեղավորելու, հողի հետ կապելու և նրանց օգնություն ցույց տալու ծախսերի վերաբերյալ:

Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ շուտափուլյժ օգնության կարիք սնեցող գաղթականների թիվը կազմում է ավելի քան 9 հազար մարդ, որի համար հանձնաժողովի ներկայացրած նախահաշիվով անհրաժեշտ է 636 հազար ռուբլի, որով միջին հաշվով յուրաքանչյուրին կհասնեն 75 ռուբլի, իսկ մեկ տնտեսությանը՝ 212 ռուբլի⁵³: Ահա այսպես մշտական հոգատարություն էր ցուցաբերում սովետական կառավարությունը հայրենադարձների նկատմամբ, իր սուղ բյուջեից զգալի

գումարներ հատկացնելով նրանց դրուժյան բարեկաման գործին:

1924 թ. վերջերից հայրենադարձությունն ավելի զանգվածային բնույթ ստացավ և հանրապետությունում եղած գաղթականության շրջանում տարվող աշխատանքի ծավալը նույնպես մեծացավ: Նկատի ունենալով այդ հանգամանքները, 1925 թ. հունվարի 28-ին ՀՍԽՀ Ժողկոմխորհը որոշում ընդունեց ստեղծել Ժողկոմխորհին առընթեր գաղթականական հանձնաժողով: Հանձնաժողովի նախագահ հաստատվեց Ժողկոմխորհի նախագահի տեղակալ Ասք. Մռավյանը, անդամներ՝ Գ. Պարզյանը, Ս. Շաղունցը, Ա. Կոստանյանը և քարտուղար Գ. Անտելեպյանը: Այդ հանձնաժողովի միջոցով լուծում էին ստանում գաղթականությանը և ներգաղթին վերաբերող սկզբունքային բնույթ կրող բոլոր հարցերը, իսկ ներքգործողկոմատը դրանք կիրառում էր գործնականում: Այդ հանձնաժողովի գործունեության շնորհիվ հայրենադարձության և ընդհանրապես գաղթականության հետ տարվող աշխատանքները ընթանում էին ավելի կազմակերպված ու պլանավորված կերպով: 1925 թ. սեպտեմբերին գաղթականական հանձնաժողովը վերակառուցվեց և այն կոչվեց Ժողկոմխորհին առընթեր աշխատավորական ներգաղթի հանձնաժողով, որն ստացավ ավելի լայն իրավունքներ ու լիազորություններ: Ասք. Մռավյանը շարունակեց գլխավորել նաև այդ հանձնաժողովը, իսկ անդամներ դարձան Հովհ. Գուրգերյանը, Հ. Բալյանը, Ար. Երզնկյանը, Ս. Մելիք-Հովսեփյանը և Գ. Գողթունին⁵⁴:

1925 թ. ապրիլի 21-ին Ժողկոմխորհին առընթեր գաղթականական հանձնաժողովը, ի կատարումն ՀԿԿ Կենտկոմի նախագահության նույն թվականի հունվարի 19-ի և ապրիլի 6-ի, ինչպես նաև Ժողկոմխորհի հունվարի 28-ի որոշումների, քննարկեց Միջագետքից և Հունաստանից նոր հայրենադարձություն կազմակերպելու հարցը⁵⁵: Որոշվեց 1925 թ. ընթացքում վերոհիշյալ երկրներից ընդունել 10 հազար տարագիրներ, այդ թվում՝ 8000-ը Հունաստանից: Ներգաղթողների ընդունման, տեղավորման և նրանց բնակարաններով ու նյութական միջոցներով ապահովելու համար ներքգործողկոմատին և

⁵² Տե՛ս նույն տեղում, Գ. 123, ց. 1, գ. 998, թ. 40:

⁵³ Տե՛ս նույն տեղում, Գ. 40/113, ց. 3, գ. 421, թ. 55—56:

⁵⁴ Տե՛ս նույն տեղում, գ. 415, թ. 13 և գ. 518, թ. 90—91:

⁵⁵ Տե՛ս նույն տեղում, գ. 463, թ. 3—5:

հողօրդկոմատին առաջարկվեց մեկ շաբաթվա ընթացքում ներկայացնել մանրամասն մշակված միջոցառումների ծրագիր⁵⁶։ Ներգաղթողների բժշկական սպասարկման գործը դրվեց առողջապահության ժողկոմատի և Կարմիր խաչի ընկերության վարչության վրա⁵⁷։

Հունաստանում և Միջագետքում եղած հայ գաղթականության նկատմամբ սովետական կառավարության դրսևորած այս նոր մարդասիրական քայլը թելադրված էր այն դժվարին կացությամբ, որի մեջ շարունակում էին տառապել նրանք։ 1924 թ. ամենածանր տարին եղավ հունահայության կյանքում։ Հունաստանում ասպնջականություն գտած հայությունը, ներքին տարուբերումներից հետո, հազիվ էր սկսել ինքնուրույնաբար տեղավորվել Արևմտյան Թրակիայի և Մակեդոնիայի շրջաններում, երբ հանկարծ, կառավարական կտրուկ հրամանով, պետք է 15 օրվա ընթացքում լքեր իր տուն ու տեղը, իր կատարած ցանքն ու մշակած այգիները և հեռանար դեպի Հին Հունաստանի անբերրի ապառաժները։ Դրանով հունահայ գաղութի ինքնաբավ դարձած մասը փաստորեն վերստին մուրացիկ ու թափառական վիճակի մեջ էր դրվում։

Այդ ժամանակ խիստ ծանր կացություն էր ստեղծվել նաև Միջագետքում մնացած հայ տարագիրների համար։ Հայրենիք ուղարկած դիմումի մեջ նկարագրելով իրենց վիճակը, նրանք հույս էին հայտնում, որ սովետական կառավարությունը անտարբեր չի մնա իրենց «ցավերուն և աղաղակներուն հանդեպ», նկատի կունենա բարոյապես ու ֆիզիկապես ոչնչացման դատապարտված միջագետքահայ տարագիրների դժբախտ ճակատագիրը և «օր առաջ նպաստավոր ու փրկարար կարգադրություն մը ընելով, մի անգամ ընդմիշտ կազատե գիրենք իրենց ներկայի հուսահատ կացութենեն»⁵⁸։

Եվ ահա, նկատի առնելով այդ հանգամանքները, սովետական կառավարությունը որոշում կայացրեց 1925 թվականին հունահայ և միջագետքահայ զգալի թվով տարագիրների հայրենադարձությունն իրականացնելու վերաբերյալ։ Նախօրոք մշակված պլանի համաձայն 1925 թ. ընթացքում Բաթումով և

Ջուլֆայով հայրենիք ներգաղթեցին 5016 մարդ, այդ թվում Հունաստանից՝ 1098 ընտանիք (3656 մարդ), Կ. Պոլսից՝ 201 ընտանիք (780 մարդ), Բաղդադից և ընդհանրապես Միջագետքից՝ 160 ընտանիք (385 մարդ)⁵⁹։

Սիյուլուքահայ աշխատավորների հայրենադարձությունը 1925 թվականին տեղի ունեցավ ավելի հաջող և կազմակերպված։ Դրան ղգալի շափով նպաստեց այն հանգամանքը, որ այդ ուղղությամբ արտասահմանում որոշակի աշխատանք կատարեցին սովետական դեսպանություններն ու Հայաստանի օգնության կոմիտեի մասնաճյուղերը։ Այդ տեսակետից ուշագրավ է Իրանում և Հունաստանում ՍՍՀՄ ներկայացուցչությունների ծավալած գործունեությունը Միջագետքի և Հունաստանի հայ գաղթականների հայրենադարձությունն իրականացնելու ուղղությամբ։

Չնայած Միջագետքի հայ տարագիրներին սովետական կառավարությունը վաղուց էր թույլատրել ներգաղթել Հայաստան, սակայն նրանք երկար ժամանակ չէին կարողանում իրականացնել այդ հնարավորությունը՝ անգլիական իշխանությունների հարուցած դանազան բանսարկությունների և գաղտնի արգելքների պատճառով⁶⁰։ Քիչ խոչընդոտներ չէին ստեղծում նաև իրանական իշխանությունները։ Վերջիններս, խախտելով 1922 թ. ամռանը Թեհրանում շտեյլիազոր-ներկայացուցչության հետ կնքված համաձայնագիրը՝ իրենց տերիտորիայով Միջագետքից Սովետական Հայաստան ներգաղթողներին դյուրություններ ընձեռնելու մասին, հաճախ փակում էին սահմանը հայրենիք մեկնողների առջև և այլ արգելքներ հարուցում⁶¹։ Հարկ եղավ գործադրել Թեհրանում ՍՍՀՄ լիազոր-ներկայացուցիչ Բ. Շումայացիու և ներկայացուցչության հայկական գործերով քարտուղար Ս. Առաքելյանի ամենագործուն միջամտությունը, որպեսզի վերջապես տեղի տային իրանական իշխանությունները։

Ինչպես վկայում են հունահայերի ներգաղթի իրականացման վերաբերյալ եղած նյութերը, մասնավորապես արտգործօժողկոմատին Աթենքում ՍՍՀՄ լիազոր-ներկայացուցիչ Ա. Մ. Ուստինովի ներկայացրած զեկուցագրերը, Հունաստանում ևս

⁵⁶ Տե՛ս նույն տեղում, գ. 418, թ. 142։

⁵⁷ Տե՛ս նույն տեղում, թ. 127։

⁵⁸ Նույն տեղում, թ. 169։

⁵⁹ Տե՛ս նույն տեղում, գ. 377, թ. 3 և գ. 486, թ. 19։

⁶⁰ Տե՛ս նույն տեղում, գ. 418, թ. 167—168։

⁶¹ Տե՛ս նույն տեղում, գ. 377, թ. 3 և գ. 486, թ. 19։

կատարվել է կազմակերպական լարված ու հետևողական աշխատանք, 1925 թվականին հունահայերի հայրենադարձությունը գլուխ բերելու համար⁶²:

1925 թ. սեպտեմբերին սովետական և հունական կառավարությունների միջև համաձայնություն կայացվեց հունահայերի հայրենադարձության վերաբերյալ⁶³, Կարճ ժամանակամիջոցում ավարտվեցին նախապատրաստական աշխատանքները և սովետական դեսպանության ու ՀՊԿ-ի տեղական մասնաճյուղերի ջանքերով կազմվեցին ներգաղթողների ցուցակները: Ներգաղթողները երկաթուղով և փոխադրական այլ միջոցներով իրենց բնակավայրերից հասցվեցին նավահանգիստ, տեղավորվեցին նավի վրա, ապահովվեցին սննդով և այլն⁶⁴, Եվ ահա, 1925 թ. նոյեմբերի 7-ին, Հունաստանից ներգաղթողների 3016 հոգուց բաղկացած առաջին խումբը «Խարալամբոս» նավով Դեղեաղաջից ուղղություն վերցրեց դեպի Բաթում, այնտեղից էլ երկաթուղով փոխադրվեց Սովետական Հայաստան⁶⁵:

Այդ ցնծալից իրադարձության առթիվ, Հունաստանի ՀՊԿ-ի կենտրոնական վարչության նախագահ Բոյաջյանը, կատարելով ներգաղթողների ջերմ ցանկությունը, սրտագին շնորհակալություն հայտնեց ՍՍՀՄ դեսպանությանը այն անձնվեր ջանքերի համար, որոնց շնորհիվ զգալի շափով դյուրացվեց տարագիրներին հայրենիք ճանապարհելու դժվարին գործը⁶⁶:

1925 թ. նոյեմբերի 13-ին ՍՍՀՄ դեսպան Ուստինովը Աթենքից պատասխան հեռագիր հղեց Սալոնիկ՝ Բոյաջյանին, որտեղ ասված էր. «Սրտանց շնորհակալություն եմ հայտնում ձեր հեռագրի, ինչպես և այն աջակցության համար, որ կոմիտեի ցույց է տվել տեղափոխությունը կազմակերպելու գործում: Խորհրդային Հայաստանի, ինչպես և ԽՍՀՄ կառավարությունները արին այն բոլորը, ինչ հնարավոր էր ընդունելու 3000 հայ նոր հայրենիքում, որտեղ նրանց սպասում են եղբայրաբար: Հույս ունեմ, որ նորեկները կմասնակցեն հայ բանվոր-գյուղացիների հետ միասին Հայաստանի տնտեսական և կուլտուրական վերածնության մեծ գործին, որը կարելի դարձավ Հայաստանի բանվորնե-

րի և գյուղացիների աշխատանքային անձնվիրությամբ և զոհողությամբ, ղեկավարվելով Լենինի ոգով»⁶⁷:

1925 թ. նոյեմբերի 10-ին շՍԽՀ Ժողկոմխորհին առնթեր աշխատավորական ներգաղթի հանձնաժողովը քննարկում է Հունաստանից և Միջագետքից ժամանած գաղթականությանը տեղավորելու և նյութական ու այլ օգնություն ցույց տալու հարցերը: Որոշվում է նրանց հիմնականում տեղավորել Արազդայանում: Ստեղծվում է հատուկ հանձնաժողով՝ Ժողկոմխորհի նախագահ Ս. Համբարձումյանի գլխավորությամբ և ներքգործողկոմ Հ. Դուրգերյանի, հողժողկոմ Ար. Երզնկյանի ու ջրային տնտեսության վարչության պետ Ս. Շաղունցի անդամակցությամբ⁶⁸:

Հողժողկոմատին հանձնարարվում է գաղթականության հարցերով Մոսկվայում կայանալիք խորհրդակցությանը ներկայացնելու համար նախապատրաստել անհրաժեշտ նյութեր և կազմել նախահաշիվ՝ 1925—1926 թթ. բյուջետային տարում գաղթականների ընդունելության և տեղավորման մասին: Հայկոպին առաջարկվում է Արազդայանի շրջանին պարբերաբար մատակարարել այլուր և այլ կենսամթերքներ: Ներգաղթածների բազմազան կարիքները հոգալու կապակցությամբ համապատասխան առաջադրանքներ են տրվում նաև աշխժողկոմատին, ջրային տնտեսության վարչությանը, առժողկոմատին և այլ կազմակերպությունների: Հայրենադարձների տեղավորման համար բաց է թողնվում 50.000 ռուբլի⁶⁹: Նրանց շրջանում ընթացիկ աշխատանքներ տանելու համար ստեղծվում է Արազդայանի ներգաղթի հանձնաժողով, որը և նախքան հայրենադարձների ժամանումը նրանց համար նախապատրաստում է վրաններ, դույր, վառելիք և այլն⁷⁰:

1925 թ. ներգաղթողների մեծ մասը հայրենիք ժամանեց ուշ աշնանը՝ նոյեմբերի վերջերին, երբ վրա էին հասել ցրտերը և նախօրոք որպես ժամանակավոր բնակարաններ պատրաստված վրաններում ապրելն արդեն հնարավոր չէր: Այդ պատճառով էլ ներգաղթածների մի մասը տեղավորվեց Երևան և Լենինա-

⁶² Տե՛ս նույն տեղում, գ. 418, թ. 167—168:

⁶³ Տե՛ս նույն տեղում, գ. 494, թ. 83:

⁶⁴ Տե՛ս նույն տեղում, գ. 517, թ. 37—80:

⁶⁵ Տե՛ս նույն տեղում, գ. 396, թ. 81:

⁶⁶ Տե՛ս նույն տեղում, գ. 494, թ. 83:

⁶⁷ նույն տեղում, գ. 396, թ. 84:

⁶⁸ Տե՛ս նույն տեղում, գ. 377, թ. 1:

⁶⁹ Տե՛ս նույն տեղում:

⁷⁰ Տե՛ս նույն տեղում, գ. 494, թ. 38:

կան քաղաքներում, իսկ մոտ 1500 հոգի՝ Արաղդայանում: Այդտեղ շուտափույթ կարգով նրանց համար կառուցվեցին փայտյա ժամանակավոր տներ, բաղնիք, հիվանդանոց, դպրոց, արհեստանոց, խանութ և այլն: Հայրենադարձների մի զգալի մասը, լինելով չքավոր, բնականաբար սիստեմատիկ օգնության կարիք էր զգում: Ուստի ժողկոմխորհին առընթեր աշխատավորական ներգաղթի հանձնաժողովի որոշմամբ ավելի քան 500 հոգի սնվում էին պետության հաշվին, իսկ մյուս մասին էժան գներով տրվում էին հաց և այլ մթերքներ⁷¹: 1926 թ. գարնանը Արաղդայանի շրջանում հայրենադարձներին տրամադրվում են 4 գյուղեր, հողամասեր, սերմացու և վարկեր՝ իրենց սեփական տնտեսություններն ստեղծելու համար: Նրանց տրամադրված գյուղերն էին՝ Արաղդայանը, որտեղ տեղավորվեց 99 ընտանիք (290 մարդ), Արմաշը՝ 114 ընտանիք (334 մարդ), Սուրենավանը՝ 34 ընտանիք (112 մարդ) և Սմոն՝ 47 ընտանիք (172 մարդ)⁷²:

Հայրենադարձներին պետության կողմից ցույց էր տրվում զգալի աջակցություն, որպեսզի կարճ ժամանակամիջոցում նրանք կարողանային ստեղծել իրենց սեփական տնտեսությունները: Գարնանը նրանց հատկացված հողերը հերկվեցին պետական միջոցներով կամ վարկային սկզբունքներով: Չորս գյուղերում հերկվեց ավելի քան 397 դեսյատին տարածություն, որից 235 դեսյատին՝ գյուղբաժնի միջոցով, 65 դեսյատին՝ Արաղդայանի աշխատավորական ներգաղթի հանձնաժողովի կողմից և 97 դեսյատին՝ Դավալուի վարկային ընկերության կողմից: Միաժամանակ հայրենադարձներին տրվում են զգալի քանակությամբ անասուններ, գյուղատնտեսական գործիքներ, բամբակի ու բանջարեղենի սերմեր և այլն⁷³:

Քանի որ ներգաղթածներն անձանոթ էին տեղական բնակիչ-մայական պայմաններին, հողժողկոմատը նրանց օգնելու համար առանձնացնում է գյուղատնտեսներ և այլ մասնագետներ: Արաղդայանի շրջանում տեղավորված հայրենադարձներին հատկացված հողամասերը ոռոգման ջրով ապահովելու համար ջրային տնտեսության կողմից վերանորոգվում է նախկին «Կախա-

նովի» ջրանցքը և Արաքսից խմելու ջուր է մատակարարվում: Հողասակավությունը վերացնելու և մշակելի տարածություններն ընդարձակելու նպատակով Սուրենավան և Արմաշ գյուղերի շուրջը ոռոգելի է դարձվում 150 դեսյատին հողամաս: Նկատի առնելով, որ ներգաղթածների մեջ կային հմուտ ծխախոտագործներ և ծխախոտի մշակությունը Հայաստանում ուներ մեծ հեռանկարներ, Արմաշ գյուղում կազմակերպվում է ծխախոտագործների կոոպերատիվ միություն, ուր ընդգրկվում է 57 տնտեսություն: Ծխախոտի մշակությամբ էին զբաղվում նաև մի քանի մասնավոր տնտեսություններ, որոնք նույնպես արտոնյալ պայմաններով պետությունից ստանում էին վարկեր ու այլ միջոցներ՝ ծխախոտագործությունը ավելի զարգացնելու համար:

1925 թվականին ներգաղթածների համար մինչև 1926 թ. կեսերը կատարվում են նաև շինարարական աշխատանքներ: Արաղդայան գյուղում կառուցվում է 12 նոր տուն և վերանորոգվում է նախկին Շերեմետևի ընկերության գործարանի շենքերից 63 սենյակ, ուր տեղավորվում են 93 տնտեսություն՝ 271 շնչով: Արմաշում կառուցվում է 34 շենք, որտեղ բնակություն են հաստատում 104 ընտանիք՝ 311 բնակիչներով: Ավշար գյուղում կառուցվում է 12 շենք՝ 35 տնտեսությունների համար, որոնց անդամների թիվը հասնում էր 112 մարդու: Սմո ներգաղթածները իրենց տրամադրված շինանյութերով վերանորոգում են քանդված ու լքյալ շենքերը, ուր տեղավորվում է 172 հոգուց բաղկացած 47 ընտանիք⁷⁴:

Հայրենադարձության կազմակերպման, ներգաղթողների տեղափոխման, նրանց տեղավորման և այդ կապակցությամբ կատարվող մյուս աշխատանքների իրականացման համար պահանջվում էին նյութական հսկայական միջոցներ: Սովետական կառավարությունը միշտ էլ զգալի գումարներ էր տրամադրում այդ նպատակների համար: Բավական է ասել, որ միայն 1923 թվականին ներգաղթած 953 հոգու համար ՀՍԽՀ ներք-գործժողկոմատի գաղթականական բաժնի կողմից ծախսվել է 22.500 ռուբլի ոսկու կուրսով, շահված հացահատիկով և այլ մթերքներով նրանց ցույց տրված օժանդակությունը⁷⁵: 1925 թ.

⁷¹ Տե՛ս նույն տեղում, ֆ. 30/116, ց. 1, գ. 335, թ. 121—127:

⁷² Տե՛ս նույն տեղում, ֆ. 123, ց. 1, գ. 1576, թ. 13—15:

⁷³ Տե՛ս նույն տեղում, ֆ. 30/116, ց. 1, գ. 335, թ. 121—127:

⁷⁴ Տե՛ս նույն տեղում:

⁷⁵ Տե՛ս նույն տեղում, ֆ. 112, ց. 1, գ. 1490, թ. 21:

ներգաղթած և գյուղական վայրերում տեղավորված հայրենադարձների կարիքները հոգալու նպատակով ծախսված գումարը կազմել է 418,250 ուրլի⁷⁶: Արտասահմանից ներգաղթող տրեստեսությունները, համաձայն ՆՍԽՀ Կենտրոնի 1925 թ. հունվարի որոշման, առնվազն 3 տարի ազատվում էին ամեն տեսակ հարկերից և օգտվում էին առանց մաքսի ու վարձի բեռների փոխադրության վերաբերյալ ԽՍՀՄ աշխատանքի և պաշտպանության խորհրդի 1923 թ. օգոստոսի 16-ի որոշմամբ ընձեռված արտոնություններից⁷⁷: Սովետական Հայաստան ներգաղթած բանվորները, արհեստավորներն ու այլ մասնագետները լայն հնարավորություններ էին ստանում վայելելու ազատ աշխատանքի պտուղները: Նրանց տրվում էին համապատասխան դյուրություններ և արտոնություններ, աշխատանքով ապահովվում էին առաջին հերթին, ստանում էին վարկեր և այլ միջոցներ:

Հայրենադարձների շնորհիվ հանրապետության ժողովրդական տնտեսությունը ձեռք էր բերում հմուտ ու առաջնակարգ մասնագետներ, որովհետև նրանցից շատերը որակյալ արհեստավորներ, բանվորներ ու հմուտ երկրագործներ էին: Մինչև Սովետական Հայաստան ներգաղթելը սփյուռքահայ աշխատավորների ապրած շարքաշ ու աստանդական կյանքը նրանց դարձրել էր տոկուն և աշխատասեր: Մի կողմից այդ հանգամանքը, իսկ մյուս կողմից՝ նրանց նկատմամբ սովետական կառավարության ամենօրյա հոգատարությունը, կարճ ժամանակամիջոցում ներգաղթածների տնտեսական վիճակի բարելավման իսկական երաշխիքներն էին: Քաղաքական ազատ ու լիիրավ կյանքը հայրենիքում, ինչպես նաև տնտեսական բարեկեցության ստեղծումը ռեալ երաշխիքն էին այն բանի, որ նրանք կարճ ժամանակամիջոցում ապաքինեին իմպերիալիստական պատերազմի ու թուրքական վայրագությունների պատճառած վերքերը, մոռանալին մոտիկ անցյալի դաժան օրերի բոլոր տխուր մտապատկերներն ու արհավիրքները:

Մտավորապես այսպիսին է բնավ ոչ լրիվ պատկերն այն աշխատանքների, որ կատարել է սովետական կառավարությունը 1921—1925 թթ. հայրենիք վերադարձած սփյուռքահայ աշխա-

տավորներին տեղավորելու և սկզբնական շրջանում նրանց կարիքները հոգալու ուղղությամբ: Այդ աշխատանքներն ավելի ակնառու են դառնում այն ժամանակ, երբ նկատի են առնվում մեր երկրի ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին գոյություն ունեցած բոլոր դժվարությունները և այդ պայմաններում տեղի ունեցած ամբողջ ներգաղթն ու գաղթականական շարժումն ընդհանրապես:

Այդ դժվարին ժամանակաշրջանում՝ 1921—1925 թթ., իրականացված հայրենադարձությունը տարագիր հայության ճակատագրի նկատմամբ ջերմ հոգատարության դրսևորման մի վառ օրինակ է, որ ցուցաբերեցին Հայաստանի կոմունիստական կուսակցությունն ու սովետական կառավարությունը, Անդրֆեդերացիայի և ՍՍՀՄ կառավարությունների ամենալայն աջակցությամբ: Տասնյակ հազարավոր սփյուռքահայ աշխատավորների հայրենիք վերադառնալու նվիրական իղձերի իրականացումը 1921—1925 թթ. ակնառու կերպով ցույց տվեց, որ աշխարհով մեկ սփռված տարագիր հայության փրկության միակ կայանը Սովետական Հայաստանն է: Պետք է ասել, որ խիստ դժվար գործ է այժմ վերականգնել այդ տարիներին ներգաղթածների ստույգ թիվը: Բազմաթիվ աղբյուրների համադրմամբ մենք փորձել ենք պարզել 1921—1925 թթ. ընթացքում արտասահմանից ներգաղթածների թիվը, կազմելով ստորև բերված աղյուսակը⁷⁸:

Տարեթիվը	Ո՞ր տեղից են ներգաղթել	Ընտանիքների թիվը	Ներգաղթածների թիվը
1921	Միջագետքից	—	3000
1922	Միջագետքից, Իրանից, Կ. Պոլսից և այլ վայրերից	2001	6552
1923	Վանից, Իրանից և այլ վայրերից	258	953
1924	Հունաստանից, Սիրիայից, Կ. Պոլսից և այլ վայրերից	783	4167
1925	Հունաստանից, Միջագետքից, Կ. Պոլսից և այլ վայրերից	1459	5016
Ընդամենը		4501 ընտանիք	19688 մարդ

⁷⁸ Տե՛ս ՆՍՍՀ ՆՍՍՀ ՊԿԱ, ֆ. 40/113, գ. 377, թ. 3, գ. 494, թ. 7, և 33—35, գ. 518, թ. 10, ֆ. 123, գ. 1, գ. 1576, թ. 13—15, գ. 1640 թ., թ. 31—35, ֆ. 30/116, գ. 1, գ. 335, թ. 121—127, գ. 2352, թ. 19—28: Հմմտ. նաև՝

⁷⁶ Տե՛ս նույն տեղում, ֆ. 123, գ. 1, գ. 1576, թ. 13—15:

⁷⁷ Տե՛ս նույն տեղում, ֆ. 113, գ. 13, գ. 4, թ. 1—2:

Սակայն պետք է նշել, որ աղյուսակում բերված տվյալները միայն մոտավոր գաղափար կարող են տալ ներգաղթածների իրական թվի մասին: Անկասկած է, որ 1921—1925 թթ. ընթացքում ներգաղթածների թիվը շատ ավելին է եղել: Աղյուսակում բերված թվերի մեջ չեն մտել արտասահմանից անհատական վիզաներով, առանձին ընտանիքներով կամ փոքր խմբերով եկած շատ հայրենադարձներ: Այնուհետև որոշակի անհամամասնություն է նկատվում աղյուսակում բերված ընտանիքների և շնչերի թվի միջև: Դա հետևանք է այն բանի, որ ներգաղթողների մեջ հաճախ եղել են մեծ թվով որբեր, որոնք որպես առանձին տնտեսություններ չեն հաշվվել:

1921 թ. տեղի ունեցած ներգաղթի և ընդհանրապես գաղթականության տեղաշարժերի վերաբերյալ ստույգ տվյալներ չեն պահպանվել այդ աշխատանքների նոր կաղմակերպման և հապճեպ կատարման հետևանքով: Մինչդեռ հայտնի է, որ 1921 թ. իրականացվեց փետրվարյան արկածախնդրության լիկվիդացման ժամանակ դաշնակների տարածած բանսարկությունների հետևանքով Իրան անցած ավելի քան մեկ տասնյակ հազար փախստականության, ինչպես նաև Հայաստանից հեռացած աղբբեջանցի և այլազգի գաղթականության վերադարձը⁷⁹:

Վերը բերված աղյուսակի մեջ չեն արտահայտված նաև սովետական մյուս հանրապետություններից Հայաստան տեղափոխվածները, որոնք նույնպես զգալի թիվ էին կազմում: Թեպետ նախկինում նրանք Հայաստանից դուրս ապաստան էին գտել, սակայն հայրենի երկրում սովետական իշխանության հաղթանակից հետո դանգվածաբար վերադառնում էին հարազատ վայրերը, հաճախ ոչ մի տեղ հաշվառման չենթարկվելով: Իրականում, այսպիսով, 1921—1925 թվականներին Սովետական Հայաստան են ներգաղթել շատ ավելի մեծ թվով տարագիրներ, քան արտահայտված է վերը բերված աղյուսակում:

Ինչ խոսք, որ այնքան էլ մեծ չէ երկրի ժողովրդական տրնտեսության վերականգնման տարիներին արտասահմանից Սովետական Հայաստան ներգաղթածների թիվը: Բայց, երբ նկատի են առնվում այն դժվարին պայմանները, որոնց մեջ սկզբնա-

կան շրջանում իրականացվում էր ներգաղթը և հիմք դրվում ազգահավաքման հայրենասիրական շարժմանը, այդ դեպքում արդեն հասկանալի են դառնում հայրենադարձության հսկայական կարևորությունն ու անգնահատելի նշանակությունը, որպես սովետական իշխանության շնորհիվ հայ ժողովրդի ձեռք բերած մեծագույն նվաճումներից մեկի:

Այսպիսով, սովետական կառավարությունը, ժողովրդական տնտեսության վերականգնմանը ղուգընթաց, մեծ ուշադրություն և հոգատարություն ցուցաբերեց ինչպես հանրապետությունում գտնվող արևմտահայ գաղթականության, այնպես էլ սփյուռքահայ տարագիրների բախտի նկատմամբ: Եվ գործադրելով գերագույն ջանքեր, սովետական կառավարությունը լուծեց ինչպես երկրում եղած արևմտահայ գաղթականության հարցը, այնպես էլ կազմակերպեց սփյուռքահայ աշխատավորների առավել դժվարին կացության մեջ գտնվող մասի ներգաղթը:

Սփյուռքահայ աշխատավորները Հայաստան տեղափոխվելուց հետո, զգալով սովետական կառավարության ջերմ վերաբերմունքն իրենց նկատմամբ, երախտագիտությամբ լի, անմիջապես լծվում էին ստեղծարար աշխատանքի և ջանում շուտով վերականգնել իրենց ավերված օջախները ազատագրված հայրենիքում: Հայրենադարձները միաժամանակ կոչ էին անում իրենց նախկին բախտակիցներին՝ նույնպես վերադառնալ Սովետական Հայաստան և ձեռնամուխ լինել նրա վերաշինության վեհ գործին:

Ահա այդ երախտագիտության կոնկրետ վկայություններից մեկը, որ արտահայտել են 1924 թ. ամռանը Կ. Պոլսից հայրենիք ներգաղթած մի խումբ աշխատավորներ արտասահմանի իրենց տարագիր եղբայրներին ուղղված նամակում. «Այն մարդավայել վերաբերմունքը, որ մենք վայելեցինք խորհրդային երկրում ընդհանրապես, և այն ջերմ, սիրալիք ընդունելությունն ու հոգատար վերաբերմունքը, որ իր սուղ միջոցներով մեզ ցույց տվեց մասնավորապես խորհրդային Հայաստանը, մեզ միանգամայն հիացրեց, մենք զգացված՝ մեր անկեղծ երախտագիտական շնորհակալությունն ենք հայտնում խորհրդային Հայաստանի կառավարությանը, հայտնելով մեր պատրաստակամությունը՝ բովանդակ ուժերով լծվելու նրա ձեռնարկած կուլտուր-շինարարական աշխատանքներին:

Թող լսեն օտար երկրներում թափառող մեր աստանդական

«Խորհրդային Հայաստան—հինգ տարի՝ 1920—1925», ժողովածու, էջ 69 և Հովհ. Հակաբյան, Խորհրդային Հայաստան, էջ 255:

⁷⁹ Տե՛ս ՀՍՍՀ ՀՍՍՀ ՊԿԱ, ֆ. 112, ց. 1, գ. 8, թ. 135:

եղբայրները, որ միայն և միայն հորհրդային Հայաստանում Վերջ գտան մեր տառապանքները և մենք տեսանք մարդկային, ընկերական վերաբերմունք, որին մինչև այժմ այնքան ծարավի էինք: Այստեղ միայն գնահատվեց մեր աշխատանքը և կարելիություն տրվեց լծվելու շինարարության հսկա գործին...»⁸⁰:

Սովետական կառավարությունը, ընդառաջելով սփյուռքահայ աշխատավորների ցանկություններին և կազմակերպելով մեծ թվով տարագիրների հայրենադարձությունը, միաժամանակ չէր կարող աչքաթող անել այն հանգամանքը, որ գաղթականական շատ տնտեսություններ դեռևս լիովին ապահովված չէին հողով, հարմար բնակարաններով և այլ միջոցներով: Հաշվի առնելով այդ ամենը, ՀՍԽՀ Ժողկոմխորհը 1926 թ. հունվարի 21-ին հատուկ քննարկման ենթարկեց աշխատավորական ներգաղթի հանձնաժողովի նախագահ Ասք. Մոավյանի գեկուցումը գաղթականության դրույթյան մասին: Նկատի ունենալով հանրապետությունում գոյություն ունեցող խիստ սակավահողությունը և 1925 թ. ժամանած գաղթականների տեղավորման հետ կապված դժվարությունները, նյութական խոշոր միջոցների անհրաժեշտությունը և այլն, Ժողկոմխորհը որոշում կայացրեց սփյուռքահայերի վանգվածային հայրենադարձությունը ժամանակավորապես դադարեցնելու մասին⁸¹:

Միաժամանակ Ժողկոմխորհը հաստատեց գաղթականության տեղավորման միջոցառումների 1926/27—1930/31 թթ. հնգամյա հեռանկարային պլան, որի իրականացումը լիովին ու վերջնականապես կբարելավեր գաղթականության տնտեսական դրույթյունը և իսպառ կվերացներ «գաղթական» անունը սոցիալիզմի ուղին թևակոխած Սովետական Հայաստանի արդեն լիիրավ քաղաքացիներ դարձած տասնյակ հազարավոր նախկին տարագիրների վրայից:

Չնայած սփյուռքահայերի հայրենադարձությունը ժամանակավորապես դադարեցնելու մասին ՀՍԽՀ Ժողկոմխորհի վերը նշված որոշմանը, 1926 թ., ինչպես և հետագա տարիներին, դարձյալ շարունակվեց հայրենադարձությունը: Տարաբախտ պանդուխտներն իրենց փրկությունը տեսնում էին Սովետական Հայաստանում: Արտահայտելով գաղութահայ աշխատավորների

հայրենակարոտ մտքերի ու իղձերի խտացած հանրագումարը, Մարտիում հրատարակվող «Հայ սիրտ» թերթը գրում էր. «Մեղ համար ինչ կա ավելի դյուրեկան, ավելի հանկուցիչ՝ քան վերածնվող հայրենիքի մը լուսատու պատկերը:

Հեռու ենք այդ պատկերեն, բայց նա կա, կմնա, նա մարմնացած հույսն է, որ կուսուցանե մեր կյանքին իմաստը, առանց այդ հայրենիքին, առանց անոր բարգավաճ գոյություն՝ ինչ միտք կրնար ունենալ մեր կյանքը. ինչ արժեք ապրիլ առանց սեփական բույնի, առանց ինքն իր կամքին տեր ըլլալու, այսինքն՝ առանց մարդկային արժանապատվության:

Ուրեմն նոր հույսերու այս լուսածագին մեջ մեր իղձերն ու մաղթանքները կուղղվին միայն և միայն մեր սեփական բույնին. մեր Հայաստանին»⁸²:

«Հայ սիրտը» նշում էր, որ չնայած դեռևս «դրախտային» չեն հայրենիքի տնտեսական պայմանները, բոլորը չէ, որ ունեն իրենց «երդիկը», բայց, այնուամենայնիվ, նա լեցուն է լինելիության մեծ հույսերով, հույսեր, որոնք կոթողված են շինարար ու ազատ աշխատանքի և հեռատես ու խոհուն քաղաքականության հիմքի վրա: Ահա սրա շնորհիվ էր, որ սփյուռքահայ աշխատավորությունը անվերապահորեն կանգնել էր Սովետական Հայաստանի կողքին: Արտահայտելով տասնյակ հազարավոր պանդուխտների տենչանքը, թերթը մաղթում էր, որպեսզի որքան կարելի է արագ գոյանան ավելի մեծ ու ցանկալի կարելություններ, «որպեսզի հայրենաբաղձ հայ հոգիները կարենան երթալ Հայաստան, այլևս այնտեղ աշխատելու, այնտեղ ապրելու և այնտեղ ալ մեռնելու համար», որովհետև դա է նրանց հայրենիքը, նրանց «փրկության միակ կայանը»⁸³ (ընդգծումը մերն է.—Ն. Մ.):

Այսպիսով, իր գոյության առաջին իսկ օրերից Սովետական Հայաստանը դարձավ համայն հայ աշխատավորների իսկական օրրանը, այն հանգրվանը, որտեղ հետագա տարիներին ավելի մեծ թվով սփյուռքահայեր վերջնականապես գերեզմանեցին գաղթականի իրենց անիծյալ ցուպը և դարձան սովետական լիիրավ քաղաքացիներ, սոցիալիստական շինարարության գործուն մասնակիցներ:

⁸⁰ «Խորհրդային Հայաստան», 7 հոկտեմբերի, 1924 թ., № 229:

⁸¹ ՏԵՍ ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 112, ց. 1, գ. 318:

⁸² «Հայ սիրտ», շաբաթաթերթ, Մարտի, 1 հունվարի, 1926 թ., № 36:

⁸³ Նույն տեղում:

2. Հայրենակցական միությունների գործունեության աշխուժացումը և սփյուռփահայերի հայրենադարձությունը 1926—1936 թվականներին

Սփյուռքահայության նկատմամբ կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության շրջահայաց քաղաքականությունը սփյուռքում աստիճանաբար առաջ բերեց մի շատ խրախուսելի հայրենասիրական շարժում: Դա այնտեղ գոյություն ունեցող հայրենակցական, վերաշինաց, կրթասիրաց և այլ անուններով հայտնի միությունների ու ընկերությունների կողմից Սովետական Հայաստանում ներգաղթողների համար նոր ավաններ, շենքեր ու զանազան ձեռնարկություններ հիմնելու ձգտումն էր, որի շնորհիվ հնարավոր կլինեք հայրենիք փոխադրել ավելի շատ տարագիրներ:

Սփյուռքում գործող բազմաթիվ ու բազմաբնույթ կազմակերպությունների շարքում հայրենակցական միությունները կատարում են շատ շնորհակալ ու խրախուսելի աշխատանք: Դրանց մեծ մասը հայկական գաղթօջախներում հանդես է եկել դեռևս նախքան առաջին համաշխարհային պատերազմը և նպատակ է ունեցել օգնել իր հայրենի գյուղի, քաղաքի կամ գավառի կրթական-մշակութային գործին: Սակայն արևմտահայության մեծ եղեռնից հետո, երբ գրեթե լիովին հայազրկվեց ու ավերակների վերածվեց Արևմտյան Հայաստանը, այդ միությունները փոխեցին իրենց բնույթն ու նպատակը: Դրանք սկսեցին հաշվառման վերցնել կոտորածներից փրկված իրենց հայրենակիցներին, ճշտել նրանց հասցեները, օգնել նրանց կյանքի ճիշտ ուղի ընտրելու գործում և այլն: Այդպես սփյուռքում կազմակերպվեցին մոտ 300 միություններ, որոնք կրում էին Արևմտյան Հայաստանի տարբեր գավառների, քաղաքների ու գյուղերի անունները:

Հայրենակցական միությունների գործունեությունը նոր իմաստ ու բովանդակություն ստացավ, երբ տարագիր հայությունը զանգվածաբար ուղղվեց դեպի Սովետական Հայաստան՝ այն դիտելով որպես համայն հայության մայր հայրենիքը: Այդ պայմաններում հայրենակցական միությունները որդեգրեցին «Հայաստանի վերաշինման ու կառուցման» նշանաբանը, քանի որ վերածնված հայրենիքի մեջ էին նրանք տեսնում նաև տարագիր հայության փրկությունն ու ապագան:

Հայաստանում սովետական իշխանության հաստատումից հետո հայության համար ստեղծված նոր իրադրությունը հայրենակցական միություններին թելադրում էր որդեգրել գործունեության նոր ուղեգիծ, ամեն կերպ գորավիզ լինել Սովետական Հայաստանին և նպաստել ի սփյուռք աշխարհի իրենց հայրենակիցների հայրենադարձության իրականացման գործին:

Սակայն այդ մտադրությունը հեշտությամբ չէր գլուխ գալիս: Դաշնակները ամեն ճիգ ու ջանք գործադրում էին, որպեսզի խափանեին հայրենակցական միությունների այդ ճիշտ դիրքորոշումը: Նրանք հայրենակցական միություններին խորհուրդ էին տալիս նույնիսկ Աֆրիկայում կամ Ամերիկայում փոշիացնել հայրենակցական միությունների միջոցները, քան թե Հայաստանում անցկացնել մի ջրանցք կամ կառուցել մի տուն հենց իրենց՝ սփյուռքից հայրենիք դարձող տարագիրների համար:

Դաշնակների նման բանասարկությունների հետևանքով էր, որ ԱՄՆ-ում գտնվող Հաճընցիների հայրենակցական միության ղեկավարները 20-ական թվականների կեսերին մտադրվել էին Սիրիայում կառուցել «Նոր Հաճըն» ավանը և այնտեղ հավաքել բոլոր հաճընցիներին: Սակայն հաճընցի տարագիրները ճիշտ կռահեցին այդ հայրենադավ մտադրության իրական հետևանքները և ժամանակին հակահարված տվին այդ որոշման իրականացմանը⁸⁴: Նրանց միահամուռ բողոքները ցույց տվեցին, որ սփյուռքահայության հիմնական ղանգվածը իր ապագան անվերապահորեն կապել է Սովետական Հայաստանի հետ և ոչ մի խաբեություն չի կարող սասանել նրա հավատը հայրենիքի նկատմամբ:

Ահա հենց այդ ժամանակ էլ սկիզբ առավ հայրենակցական միությունների վճռական շրջադարձը դեպի Սովետական Հայաստան, որտեղ աստիճանաբար առաջացան պատմական Հայաստանի մի շարք գավառների, քաղաքների և գյուղերի անուններով նոր ավաններ ու թաղամասեր: Հայրենակցական միությունների այդ ճիշտ ուղիով ընթանալու հայրենասիրական միություններից մեկը եղավ ԱՄՆ-ում գտնվող Արաբկիրցիների հայրենակցական միությունը: Արաբկիրցիների դիմումը հարգվեց սովետական կառավարության կողմից և

⁸⁴ Տե՛ս «204-ի տեղեկատու», Երևան, 1927 թ., № 1, էջ 13—14:

նրան թույլատրվեց այն ժամանակվա Երևանի հյուսիս-արևմտյան ծայրամասում կառուցել «Նոր Արաբկիր» ավանը, ուր կկարողանային հավաքվել տարագիր նախկին արաբկիրցիները⁸⁵։

Նոր Արաբկիրը, որի հատակագիծը պատրաստել էր ակադեմիկոս Ալ. Թամանյանը, մեծ հանդիսավորությամբ համադրվեց Հայաստանում սովետական կարգերի հաստատման հինգերորդ տարեդարձի օրը՝ 1925 թ. նոյեմբերի 29-ին⁸⁶։

Սովետական կառավարության հետևողական օգնության և հայրենակցական միության ջանքերի շնորհիվ արագորեն աճեց Նոր Արաբկիրը։ Արդեն 1928 թ. վերջերին այնտեղ կառուցվել էր 51 տուն և հայրենադարձ բնակիչների թիվը հասել էր 762-ի։ Ավանն ուներ մանածագործների, պղնձագործների, դերձակների, կոշկակարների, գուլպայագործների արտելներ, դպրոց, մանկապարտեզ, ակումբ, գրադարան և այլ օջախներ⁸⁷։

Դեռևս 1925 թ. գարնանը, էջմիածնի շրջանում, էվզիլարի ջրանցքով ոռոգվող մի ընդարձակ հողամասի վրա, ՀՕԿ-ի կենտրոնական վարչության ջանքերով և տարիներ առաջ եվզոկիացիներին կտակված 2500 ֆունտ ստերլինգ գումարով (մոտ 25000 ռուբլի) հիմնադրվել էր Նոր Եվզոկիա գյուղը, որտեղ բնակություն էին հաստատում Հայաստան ներգաղթող եվզոկիացիները⁸⁸։

Գրեթե նույն ժամանակ, Երևանի հարավ-արևելյան արվարձանում, Թոխմախան լճի մոտ, հիմնադրվեց «Նոր Բյութանիա» ավանը՝ Հունաստանից ներգաղթած բյութանիացի, զմյուռնիացի, ատաբաղարցի, սեբաստացի և բիլեճիկցի հայրենադարձների կողմից։ Սկզբում Նոր Բյութանիայում բնակություն հաստատեցին մոտ 60 հայրենադարձ տնտեսություններ, որոնք զբաղվում էին ծխախոտագործությամբ, շերամապահությամբ և այլ թանկարժեք կուլտուրաների մշակությամբ։ Նրանք բնակելի տներ կառուցելու, գյուղատնտեսական գործիքներ և սերմեր ձեռք բերելու համար արտոնյալ պայմաններով վարկեր էին

ստանում Երևանի գավառովումից, գյուղբանկից և ուրիշ հաստատություններից⁸⁹։

ՀՍԽՀ ժողովուրդների առընթեր գաղթականական հանձնաժողովը դեռևս 1925 թ. մարտին ընդառաջել էր նաև Սեբաստիայի վերաշինաց միության ցանկությանը և թույլատրել Սովետական Հայաստանում հիմնել գորգագործական արհեստանոց և այնտեղ տեղափոխել մոտ 1200 գորգագործ սեբաստացիների ու մեծահասակ որբերի։ Այնուհետև բավարարվեց սեբաստացիների խնդրանքը՝ Սովետական Հայաստանում Նոր Սեբաստիա անունով ավան հիմնադրելու մասին։ Ինչպես նախատեսվում էր, հենց այդ ավանում էլ պետք է կառուցվեր գորգագործական արհեստանոցը և միաժամանակ հող հատկացվեր երկրագործությամբ զբաղվել ցանկացողներին⁹⁰։

Սովետական Հայաստանում հետագայում այդպիսի հնարավորություններ ստացան նաև Մալաթիայի կրթասիրաց ընկերությունը⁹¹, Քորբեցիների ուսումնասիրաց ընկերությունը⁹², Դատեմի լուս-ուսումնասիրաց ընկերությունը⁹³, խարբերցիները, թոմարզացիները, կեսարացիները, երզնկացիները և Արևմտյան Հայաստանից ու ընդհանրապես Թուրքիայի այլևայլ անկյուններից աշխարհի տարբեր կողմեր ցրված բազմաթիվ ուրիշ հայ տարագիրներ⁹⁴։

Ահա այդպես, սովետական կառավարության, համապատասխան հայրենակցական միությունների և որոշ նվիրատվությունների ու կտակների միջոցներով ձեռնարկվեցին Նոր Մալաթիայի (1927), Նոր Սեբաստիայի (1928), Նոր Խարբերդի (1930), Նուբարաշենի (1930), Նոր Թոմարզայի (1931), Նոր Կեսարիայի (1934), Նոր Տիգրանակերտի (1934), Նոր Տարոնի, Նոր Երզնկայի, Նոր Յոզղատի, Նոր Ամասիայի և այլ ավանների հիմնադրման աշխատանքները⁹⁵։

⁸⁹ Տե՛ս նույն տեղում, ֆ. 40/113, ց. 3, գ. 418, թ. 19—20 և գ. 518։

⁹⁰ Տե՛ս նույն տեղում, գ. 493, թ. 44—45։

⁹¹ Տե՛ս նույն տեղում, թ. 62։

⁹² Տե՛ս նույն տեղում, թ. 23։

⁹³ Տե՛ս նույն տեղում, թ. 15, և գ. 421, թ. 152։

⁹⁴ Տե՛ս նույն տեղում, ֆ. 178, ց. 1, գ. 578, թ. 2—11։

⁹⁵ Տե՛ս նույն տեղում։ Հետագայում այդ ավաններից մի քանիսը տարբեր պատճառներով ենթարկվեցին անվանափոխության, իսկ շատերը մինչև օրս էլ կրում են իրենց պատմական անունները։

⁸⁵ Տե՛ս ՀՍՍՀ ՀՍՍՀ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 54, թ. 30։

⁸⁶ Տե՛ս «Նորհրդային Հայաստան», 1 դեկտեմբերի, 1925 թ., № 273։

⁸⁷ Տե՛ս «Երևան», հոբոյա թերթ, Փարիզ, 17 դեկտեմբերի, 1929 թ., № 468։

⁸⁸ Տե՛ս ՀՍՍՀ ՀՍՍՀ ՊԿԱ, ֆ. 178, ց. 1, գ. 320, թ. 1—10։

ՀՍԽՀ ժողովրդաբանական հատուկ որոշմամբ հայրենակցական միությունների կողմից Հայաստանում կատարվող շինարարական աշխատանքների ղեկավարությունը հիմնականում դրված էր 204-ի կենտրոնական վարչության վրա: 204-ը ոչ միայն կազմակերպական, այլև նյութական իմաստով հսկայական օգնություն էր ցույց տալիս հայրենադարձների համար նոր ավանների շինարարական աշխատանքներին⁹⁶:

Հայրենակցական միությունների և սփյուռքահայ առաջադիմական այլ կազմակերպությունների այս նոր վերաբերմունքը հնարավորություն տվեց սովետական կառավարությանը շարունակելու հայրենադարձությունը: Եվ ահա 1926 թ. Հունաստանից հայրենիք ներգաղթեց 3120 մարդ, 1927 թվին՝ դարձյալ Հունաստանից 1200 մարդ և Կ. Պոլսից՝ 400 մարդ: 1928 թ. 700 հոգի ներգաղթեցին Հունաստանից, 90 հոգի՝ Կ. Պոլսից, 70 հոգի՝ Մարսելից: 1929 թվականին Ֆրանսիայից (Մարսել) և Թուրքիայից (Կ. Պոլիս) Սովետական Հայաստան ներգաղթեց 106 տնտեսություն՝ 282 մարդ: Այսպիսով, 1926—1929 թթ. ընթացքում Հունաստանից, Թուրքիայից և Ֆրանսիայից եկած հայրենադարձների թիվը, անշուշտ ոչ լրիվ տվյալներով, կազմեց 5863 մարդ⁹⁷:

Սփյուռքահայ աշխատավորների հայրենադարձությունը ավելի մեծ թափ ստացավ ՀՍԽՀ Կենտրոնականի և ժողովրդաբանական 1931 թ. օգոստոսի 10-ի «ՀՍԽՀ սահմանները արտասահմանի աշխատավոր հայերի մասսայական նոր ներգաղթ արտոնելու մասին» որոշումից հետո⁹⁸: Այդ որոշման մեջ նշված էր, որ ընստացած Սովետական Հայաստանի դեմ արտասահմանում բուրժուական կառավարությունների ու կուսակցությունների կողմից նյութավոր դավերին և երկրի ներսում դասակարգային թշնամիների համառ դիմադրությանը, սոցիալիստական շինարարության բոլոր ճակատներում ձեռք բերված նվաճումների հետևանքով վերացվել է գործազրկությունը ինչպես ամբողջ Սովետական Միության մեջ, այնպես էլ Հայաստանում: Դրա շնորհիվ հնարավոր է դառնում արտասահմանյան երկրներում տառապող հայ

աշխատավորների նոր զանգվածների հայրենադարձության իրականացումը: Այդ նպատակով կազմակերպվում է ՀՍԽՀ ժողովրդաբանական առընթեր ներգաղթի հատուկ հանձնաժողով՝ ժողովրդաբանական նախագահի տեղակալ Ար. Երզնկյանի ղեկավարությամբ:

ՀՍԽՀ Կենտրոնականի և ժողովրդաբանական վերջին որոշման մեջ ներգաղթի հանձնաժողովին հանձնարարվում էր սահմանել ներգաղթողների թիվը, նրանց ընդունման ժամկետները, մատակարարման և ֆինանսավորման հետ կապված բոլոր խնդիրների մշակումն ու լուծումը, հայրենադարձներին ըստ մասնագիտությունների աշխատանքով ապահովելը, հանրապետության սահմաններում բնակեցնելը և այլն:

Ի կատարում վերոհիշյալ որոշման, ավելի կազմակերպված ձևով, 1932—1933 թթ. ընթացքում Հունաստանից, Բուլղարիայից և Ֆրանսիայից Սովետական Հայաստան ներգաղթեցին շուրջ 8007 մարդ: Ֆրանսիայից առավել մեծ ներգաղթ կատարվեց հատկապես 1936 թվականին: Այդ ժամանակ հայրենիք եկավ ավելի քան 1800 մարդ⁹⁹:

Բացի մեծ խմբերով կատարված հայրենադարձությունից, 1926—1936 թթ. ընթացքում անհատական վիզաներով արտասահմանյան տարբեր երկրներից Սովետական Հայաստան են ներգաղթել ևս 6926 մարդ¹⁰⁰:

Այսպիսով, 1926—1936 թթ. ներգաղթածների ընդհանուր թիվը կազմում է 22598 մարդ: Եթե դրան ավելացնենք նաև 1921—1925 թթ. ներգաղթածների թիվը՝ 19688 շունչ, մոտավոր ճշտությամբ կարելի է ասել, որ 1921—1936 թթ. ընթացքում օտարությունից հայրենիք են վերադարձել 42286 տարագիրներ: Մոտավորապես նույն թիվն է նշված նաև ՀՍՍՀ արտգործող կոմատի կողմից 1944 թ. նոյեմբերին այդ մասին կազմված տեղեկանքի մեջ, որի համար հիմք են ծառայել ինչպես արխիվային վավերագրերը, այնպես էլ Փարիզում լույս տեսնող «204» ամսագրի 1935 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսների համարները և «Խորհրդային Հայաստան» օրաթերթի 1936 թ. մայիսի 20-ի համարում եղած հաղորդումը¹⁰¹:

⁹⁶ Տե՛ս «204», ամսագիր, Փարիզ, 1934 թ., № 3, էջ 133:

⁹⁷ Տե՛ս ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 25, գ. 9, թ. 34—36 և ՀՍՍՀ ՀՄՍՇ ՊԿԱ, ֆ. 123, ց. 1, գ. 1588:

⁹⁸ Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 20 օգոստոսի, 1931 թ., № 194:

⁹⁹ Տե՛ս ՀՍՍՀ ՀՄՍՇ ՊԿԱ, ֆ. 123, ց. 1, գ. 1588:

¹⁰⁰ Տե՛ս նույն տեղում:

¹⁰¹ Տե՛ս նույն տեղում, ֆ. 326, ց. 1, գ. 44, թ. 1:

1932—33 և 1936 թվականներին ներգաղթած տնտեսությունները հիմնականում տեղավորվեցին հայրենադարձների համար կառուցված ավաններում, Երևանում ու նրա արվարձաններում, Լենինականում, Կիրովականում, Անի-Պեմզայում, Իջևիվանում, Ստեփանավանում, Լամբալուի (այժմ՝ Բագրատաշեն) սովխոզում և այլ վայրերում:

Չնայած 204-ի, հայրենակցական միությունների և բարեգործական այլ հաստատությունների կողմից ներգաղթողներին ցույց տրվող օգնությանը, առանց սովետական կառավարության քաղաքականության, նրանց կարիքների նկատմամբ ամենօրյա հոգատարության, անհնարին կլինեք հայրենադարձների դրույթյան շուտափույթ բարելավումը: Սովետական կառավարությունը զգալի գումարներ տրամադրեց մասնավորապես 1932—1933 թթ. ներգաղթածների ձանապարհածախսի, սննդի, նրանց համար բնակարաններ, դպրոցներ կառուցելու և այլ միջոցներ ձեռք բերելու գործին¹⁰²:

Սակայն հարկ է նշել, որ հայրենադարձների ավանների շինարարությունը, նրանց կոմունալ-կենցաղային կարիքների բավարարումը որոշ տեղերում այնքան էլ լավ չէր կազմակերպված, որը երբեմն արդարացի դժգոհությունների տեղիք էր տալիս:

Նյութական ու կենցաղային վատ պայմանների հետևանքով հայրենադարձների որոշ մասի մեջ, հատկապես 1932—1933 թթ. ներգաղթածների մոտ, առաջ էին եկել դժգոհություններ: Նման տրամադրությունների առաջացման հիմնական պատճառներից մեկը բնակարանային վատ պայմաններն էին: Օրինակ, 1933 թ. հունվարին Հունաստանից ներգաղթած և Անի-Պեմզայի բանավանում տեղավորված 138 տնտեսություններ 2—3 բնտանիքով միասին բնակվում էին մի սենյակում, որոշ մասը՝ դպրոցի շենքում և այլ տեղերում¹⁰³: Երբեմն վրիպումներ էին թույլ տրվում հայրենադարձներին աշխատանքի տեղավորելու ժամանակ: Այդ կարգի հարցերի լուծման ժամանակ ոչ միշտ էին ուշադրության առնվում հայրենադարձների մասնագիտությունները: Բարձր որակավորում ունեցող շատ մասնագետներ՝ մեխանիկներ, ար-

հեստավորներ, ծխախոտագործներ և այլն, աշխատանքի էին ուղարկվում որպես սևագործ բանվորներ: Այդ պատճառով էլ այդպիսիներից շատերը թողնում էին այլ վայրերում իրենց տրված աշխատանքը և տեղափոխվում Երևան կամ Լենինական: Դրա հետևանքով լրացուցիչ դժվարություններ էին առաջանում նրանց ինչպես բնակարանով, այնպես էլ համապատասխան աշխատանքով ապահովելու գործում: Օրինակ, 1932—1933 թթ. սկզբում Ղարաբեյլիսայում (այժմ՝ Կիրովական), Անի-Պեմզայում, Իջևանում և Ղափանում տեղավորված 471 տնտեսություններից 414-ը կարճ ժամանակ անց հեռացել էին իրենց տեղերից, մեկնել Երևան կամ Լենինական¹⁰⁴:

Տեղական որոշ կազմակերպությունների ղեկավարության կողմից երբեմն ոչ հոգատար, բյուրոկրատական վերաբերմունք էր ցուցաբերվում ներգաղթածների կարիքների նկատմամբ (ՔանաքեռՆէկի շինարարություն, Անի-Պեմզա և այլն)¹⁰⁵:

Բայց, չնայած այս թերություններին, հայրենադարձների հիմնական դանգվածը ճիշտ էր ըմբռնում եղած պակասությունների ու անհարմարությունների պատճառները և համբերատար ձևով հաղթահարում այդ ժամանակավոր դժվարությունները: Ահա թե ինչ է ասում այդ կապակցությամբ 1936 թ. Լիոնից ներգաղթածներից մեկը, որը բնակություն էր հաստատել Նոր Մալաթիայում. «Այնտեղ (Լիոնում.—Չ. Մ.) ունեի շորս սենյակ,— գրում էր այդ հայրենադարձը,— ստանում էի օրական 30 ֆրանկ. այստեղ դեռ նեղվում ենք, բայց վնաս չունի, մեր հայրենիքն է, մենք պետք է կառուցենք և մեզ համար լավ կյանք ստեղծենք: Մեր գալու ժամանակ (Ֆրանսիայից հայրենիք գալու ժամանակ.—Չ. Մ.) ինձ բարձր ոռճիկով առաջարկվեց մնալ, սակայն ես նրանց պատասխանեցի, որ ես մտադիր եմ իմ հայրենիքին ծառայել և մերժեցի նրանց առաջարկը»¹⁰⁶:

Այդպես էր մտածում ու գործում հայրենադարձների ճշնշող մեծամասնությունը և հայրենիքում իր համար բարեկեցիկ կյանք ապահովում իր սեփական ջանքերով: Իսկ այդ ջանքերը անկասկած հաջողությամբ էին պսակվում, որովհետև միահյուսվում էին այն մեծ աշխատանքների հետ, որ կատարում

¹⁰² Տե՛ս նույն տեղում, ֆ. 40/113, ց. 3, գ. 1428, 1432, 1770, 1777 և այլն:

¹⁰³ Տե՛ս ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 24, գ. 72, թ. 63—64:

¹⁰⁴ Նույն տեղում, գ. 162, թ. 1—2:

¹⁰⁵ Տե՛ս նույն տեղում:

¹⁰⁶ Նույն տեղում, գ. 72, թ. 63—64:

էին Հայաստանի կոմունիստական կուսակցութիւնը և կառավարութիւնը հայրենադարձների դրութեան բարելավման ուղղութեամբ:

1933 թ. սեպտեմբերի 21-ին ՀԿԿ Կենտկոմի քարտուղարութիւնը քննարկեց «Ներգաղթածների դրութեան և նրանց հետ տարվող աշխատանքների մասին» հարցը և ընդունեց կոնկրետ ու ծավալուն որոշում, որը կուսակցական ու սովետական օրգանների ուղարկութեան կենտրոնում էր դնում այդ գործը:

Կենտկոմի քարտուղարութիւնը գտավ, որ ներգաղթածների դրութիւնը և նրանց հետ տարվող աշխատանքները միանգամայն անբավարար են մի շարք շրջաններում ու ձեռնարկութիւններում (Ղուրղուղուլի, Ամասիա, Լենինականի մսի կոմբինատ, 3-րդ սովխոզ և այլն): Խիստ քննադատութեան ենթարկվեց այն հանգամանքը, որ շնայած ներգաղթածների շրջանում տարվելիք աշխատանքների մասին Կենտկոմի բազմաթիւ որոշումներին, մի շարք կենտրոնական մարմիններ, շրջկոմներ և շրջսովետներ (լուսժողովատ, հողժողովատ, առժողովատ և հատկապէս Երևանի, Լենինականի, Ղուրղուղուլիի, Վաղարշապատի (այժմ՝ Էջմիածին) և այլ քաղկոմներն ու շրջկոմները) չեն կենսագործել այդ որոշումները:

Փոյլութիւն ունեցող անցանկալի դրութիւնը շտկելու նպատակով ՀԿԿ Կենտկոմի քարտուղարութիւնը որոշում է ժողովուրդին առընթեր ստեղծել ներգաղթածների շրջանում աշխատանքի հատուկ կոմիտե, մշտական աշխատողների ապարատով: Ժողովուրդին հանձնարարվում է այդ կոմիտեին հատկացնել դրամական և այլ միջոցների զգալի ֆոնդեր, արագացնել հայրենադարձների բնակարանային շինարարութիւնը, բարելավել նրանց բժշկական սպասարկումը, օգնել հագուստեղենով ու կոշիկեղենով, դպրոցահասակ բոլոր երեխաներին ընդգրկել դպրոցներում և այլն:

Որոշման մեջ հանձնարարվում է ՀԿԿ քաղկոմ-շրջկոմներին՝ ուժեղացնել քաղմասսայական և կուլտուրական աշխատանքները ներգաղթածների շրջանում, այդ նպատակով առանձնացնելով հատուկ աշխատակիցների և այլն¹⁰⁷:

Հայրենադարձների շրջանում տարվող աշխատանքների և նոր ներգաղթի կազմակերպման հարցը 1936 թ. հուլիսի 21-ին

հատուկ քննութեան է ենթարկվում նաև ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի և ԽՍՀՄ Ժողկոմխորհի կողմից¹⁰⁸: ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի և ԽՍՀՄ Ժողկոմխորհի ընդունած որոշման մեջ մեծ ուղարկութեան էր հատկացվում հայրենադարձների տնտեսական դրութեան բարելավման և նրանց կուլտուրական կյանքի կազմակերպման հարցերին: Հանձնարարվում է ՀՍԽՀ Ժողկոմխորհին՝ անմիջապէս ձեռնարկել և կարճ ժամկետներում, մինչև 1937 թ. ամառը, իրականացնել շինարարական մի շարք կարևոր աշխատանքներ, այդ թվում՝ Նուբարաշենում (այժմ՝ Սովետաշեն) կառուցել մեկ սենյականոց 100 բնակարան, դպրոցի, մանկապարտեզի, մանկամսուրի, թատրոնի և հրվանդանոցի շենքեր՝ 1,8 միլիոն ուրլու ընդհանուր արժեքով: Այդ որոշման համաձայն մեծ շինարարութիւն է ծավալվում նաև Նոր Սեբաստիայում, Նոր Տիգրանակերտում, Նոր Կեսարիայում և հայրենադարձների համար հիմնադրված մյուս ավաններում:

ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի և ԽՍՀՄ Ժողկոմխորհի որոշմամբ հայրենադարձների համար ստեղծված ավաններում կազմակերպված կուլտնտեսութիւնների ու հայրենադարձ կուլտնտեսականների, ինչպէս նաև աշխատավոր մեծատնտեսների համար սահմանվում են լրացուցիչ մի շարք արտոնութիւններ: Սկսած 1936 թվականից, հայրենադարձների բոլոր կուլտնտեսութիւններն ու նրանց անդամները չորս տարով ազատվում են պետական ամեն տեսակ բնատուրքերից, գյուղատնտեսական ու կուլտուրական հարկերից և այլն:

Համապատասխան օրգանները միաժամանակ նախապատրաստում էին 1937—1938 թվականներին իրականացնել նոր ավելի մեծ զանգվածային հայրենադարձութիւն Փրանսիայից, Մերձավոր արևելքի ու Բալկանյան երկրների հայկական գաղթօջախներից: Սակայն մի կողմից բացահայտ պատերազմական միջոցառումի առաջացումը միջազգային ասպարեզում, մյուս կողմից՝ երկրի ներսում անհատի պաշտամունքի բացասական հետեանքների դրսևորումը, սոցիալիստական օրինականութեան խախտումները, արտասահմանյան երկրների՝ ուստի նաև սփյուռքահայ գաղթօջախների հետ կապերի պահպանման գործում առաջացած դժվարութիւնները, 204-ի լիկվիդացումը, կուսակցական ու պետական բազմաթիւ աշխատողների նկատ-

¹⁰⁷ Տե՛ս ՀՍՍՀ ՀՍՍՀ ՊԿԱ, ֆ. 40/113, ց. 3, գ. 1777, թ. 5:

¹⁰⁸ Տե՛ս նույն տեղում, ֆ. 178, ց. 1, գ. 943, թ. 1—3:

մամբ ձեռնարկված անհիմն ռեպրեսիաները և այլն, ուղղակի անհնարին դարձրին նոր հայրենագարձության իրականացումը:

Միայն համաշխարհային երկրորդ պատերազմից հետո վերսկսվեց սփյուռքահայ տարագիրների վանգվածային հայրենագարձությունը, որի շնորհիվ հայրենիք վերադարձան տասնյակ հազարավոր պանդուխտներ:

Կ Լ Ո Ւ Խ Ե Չ Ո Ր Ր Ո Ր Կ

ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱՅՈՒՄ ԵՎ ՆԱՆՍԵՆՅԱՆ ՄՐԱԳԻՐԸ

Սփյուռքահայերի հայրենագարձության իրականացման և ընդհանրապես արևմտահայ տարագիրների հարցի լուծման ուղղությամբ սովետական կառավարության դրական գործունեությունը էլ ավելի ակնառու է դառնում, երբ այն դիտվում է հայ գաղթականության նկատմամբ արևմտյան տերությունների ու Ազգերի լիգայի վարած երկդիմի քաղաքականության հետ զուգահեռ:

Արևմուտքի իմպերիալիստական տերությունները, որոնք թուրքական կառավարության հետ միասին առավել կամ պակաս պատասխանատվություն էին կրում արևմտահայության ցեղասպանության և աշխարհով մեկ սփռվելու գործում, պատերազմի ավարտից հետո նույնպես դրական ոչ մի քայլ չարեցին նրա հարցի լուծման ուղղությամբ: Ավելին, ինչպես ցույց տվեց Լոզանի միջազգային կոնֆերանսը, նրանք վերջնականապես լքեցին հայկական հարցը, որը այդտեղ անամոթաբար փոխարինվել էր հայ գաղթականությանը այսպես կոչված մի «ազգային օջախ» տրամադրելու համեստ պահանջով:

Մինչև Լոզանի, որոշ ընդհատումներով 1922 թ. նոյեմբերից մինչև 1923 թ. հուլիսը տևած, կոնֆերանսը սփյուռքահայության գրեթե բոլոր խավերում տակավին ապրում էր այն հույսը, թե միգուցե մեծ տերությունները իրենց համար որևէ հնարավորություն ստեղծեն հայրենի օջախները վերադառնալու: Սակայն ևս զանում կատարվեց անխուսափելին: 1920 թ. օգոստոսի 10-ի Սևրի պայմանագիրը գերեզմանելու հետ մեկտեղ այնտեղ «մոռացության» տրվեց նաև հայկական հարցը: Բայց հասարակական կարծիքի առջև իրենց լիովին շմերկացնելու

նպատակով, արևմտյան տերութիւնները այն ձեւակերպումն փոխանցեցին Ազգերի լիգայի տնօրինութեանը: Պայմանագրերի ու համաձայնագրերի վերստի ստեղծման ծնունդ հանդիսացող և հիմնականում իմպերիալիստական մեքենայութիւնների քողարկիչ դարձած Ազգերի լիգան երկար ժամանակ ու ապարդյուն կերպով դբադվում էր հայ, հույն և այլազգի գաղթականները թշուառ կացութիւնն իբր թէ բարելավելու գործով: Սակայն օտար երկրներում անտուն ու անտեր տարիներ շարունակ դեգերող հայ տարագիրների վիճակը, իհարկե, դրանից բնավ չէր թեթևանում:

Դեռ իր առաջին նստաշրջանում, 1920 թվականի գարնանը, Ազգերի լիգան անդրադարձավ հայ գաղթականութեան հարցին և հայտարարեց, թէ անհրաժեշտ է, որ տերութիւնները միջոցներ ձեռնարկեն «ըստ կարելիույն շուտ վերջ տալու հայկական սարսափելի ողբերգութեանը» և ապահովեն այդ ժողովրդի ապագան՝ նրա համար ստեղծելով մի ազգային օջախ¹:

Այնուհետև համանման որոշումներ կայացվեցին Ազգերի լիգայի հաջորդ մի քանի նստաշրջաններում՝ ապարդյուն կերպով շարունակելով հոլովել հայ գաղթականութեան հարցը: Այդ որոշումներում մասնավորապես խոսվում էր այն մասին, որ սփյուռքահայ այն տարագիրների համար, որոնք գտնվում են առավել դժվարին ու անկայուն դրութեան մեջ և դուրս են մղվում արդեն հաստատված մի շարք երկրներից (Հունաստան, Բուլղարիա, Սիրիա, ինչպես նաև Թուրքիայում մնացած հայերը), անհրաժեշտ է գտնել մի հաստատուն բնակավայր և այնտեղ հավաքել նրանց:

1923 թ. աշնանը դարձյալ անդրադառնալով այդ խնդրին, Ազգերի լիգան որոշում կայացրեց՝ ուսումնասիրել մոտ 50 հազար հայ գաղթականների Սովետական Հայաստանում տեղավորելու հնարավորութիւնը²: Թեպետ այդ առթիվ սովետական կառավարութիւնը վաղուց և բազմիցս հայտնել էր իր պատրաստակամութիւնը, արևմտյան տերութիւնների և Ազգերի լիգայի մեղքով այդ որոշումը ևս երկար ժամանակ մնում էր թղթի վրա:

Չնայած գոյութիւն ունեցող բազում դժվարութիւններին, սովետական կառավարութիւնը պատրաստակամութիւն էր

հայտնել լրացուցիչ ընդունել ևս մի քանի տասնյակ հազար սփյուռքահայ աշխատավորների, եթէ նրանց տեղափոխութեան և հատկացվելիք հողամասերի ոռոգման համար պահանջվող գումարները հայթայթելին գաղթականութեան անունից հաճախ խոսող արտասահմանյան բարեգործական հաստատութիւնները կամ Ազգերի լիգայի անդամ պետութիւններն ու եվրոպական բանկերը՝ երկարաժամկետ փոխառութիւնների ու վարկերի ձեւով:

Երկրից վտարված դաշնակցութիւնը և արևմտյան միշարք տերութիւնների ներկայացուցիչներ, որոնք հաճախ էին փորձում սովետական կառավարութեանը մեղադրել գաղութահայութեան նկատմամբ անտարբերութեան ու անհոգատարութեան մեջ, այլևս չէին կարող ոչինչ ասել: Սովետական կառավարութեան այս հստակ ու գործնական առաջարկութիւնը մեկընդմիշտ փակում էր բոլոր այն դրայարտիչների բերանը, ովքեր սփյուռքահայութեան մեջ լուրեր էին տարածում, թէ իբր նա չի հոգում հայ տարագիրների մասին, դեմ է ներգաղթին, փակել է երկրի դռները և այլն:

Եվ ահա Ազգերի լիգան, որպեսզի հասարակայնութեան առջև լիովին չվարկաբեկեր իրեն, ստիպված էր դիմել որոշ քայլերի: Ազգերի լիգայում եղած խոսակցութիւններից դատելով, կարելի էր հանգել այն մտքին, թէ մոտ 50 հազար հայ գաղթականների Սովետական Հայաստան տեղափոխելու, նրանց սովետական կառավարութեան կողմից առաջարկված Սարգարապատի դաշտում տեղավորելու (նախօրոք այն դարձնելով ոռոգելի), բնակարաններով, գյուղատնտեսական գործիքներով, անասուններով ապահովելու և այլ միջոցառումներ իրականացնելու համար անհրաժեշտ է 4,7 միլիոն դոլար կամ 1 միլիոն ֆունտ ստերլինգ: Այդ գումարը ձեռք բերելու համար տարբեր առաջարկներ էին արվում: Ոմանք առաջարկում էին վերոհիշյալ գումարը ձեռք բերել կամ դանազան կառավարութիւններից խնդրելով, կամ էլ մշակվելիք հողամասերից ստացվող եկամուտներով երաշխավորված ներկարաժամկետ փոխառութեան միջոցով: Փոխանակ ռեալ և կտրուկ միջոցներ մտածելու այդ խնդրի լուծման ուղղությամբ, 1923 թ. սեպտեմբերին Ազգերի լիգայի խորհուրդը որոշում է՝ սկզբունքով ընդունել հայ գաղթականներին Սովետական Հայաստան տեղափոխելու ծրագիրը և հանձնարարել լիգայի ընդհանուր քարտուղարութեանը՝ այդ

¹ St' u Fridtjof Nansen, Betrogenes Volk, Leipzig, 1928, էջ 330.

² St' u «Վերջին լուր», 4. Պոլիս, 1 հոկտեմբերի, 1923 թ., № 2917:

մասին նախապատրաստել մանրամասն տեղեկագիր և այն ներկայացնել հաջորդ նստաշրջանի քննարկմանը³:

Իրականում ոչ ոքի ոչինչ չպարտավորեցնող նման բազմաթիվ որոշումներ ընդունելով, լիզան փաստորեն տարեցտարի ձգձգում էր հայ գաղթականությանը Հայաստան տեղափոխելու համար անհրաժեշտ միջոցների հայթայթման հնարավորությունը պարզելու հարցը: Վերջապես, 1924 թ. սեպտեմբերի 25-ին, Ազգերի լիգայի հինգերորդ ընդհանուր ժողովը որոշում է հանձնարարել աշխատանքի միջազգային բյուրոյին՝ Ֆրիտյոֆ Նանսենի ղեկավարությամբ Սովետական Հայաստանում ձեռնարկել մի ուսումնասիրություն, որը նպատակ պիտի ունենար քննելու մեծ թվով հայ գաղթականների այնտեղ տեղավորելու հնարավորությունը⁴: Այս որոշման համաձայն աշխատանքի միջազգային բյուրոն կազմում է էքսպերտների մի հանձնաժողով, որը պետք է մեկնեի Սովետական Հայաստան և բազմակողմանի ուսումնասիրությունների հիման վրա Ազգերի լիգային ներկայացնեի մեծ թվով գաղթականների Հայաստանում տեղավորելու մասին հիմնավորված առաջարկներով գեկուցագիր:

Ազգերի լիգային առընթեր աշխատանքի միջազգային բյուրոյի հատուկ հանձնարարականով հանձնաժողովի Սովետական Հայաստան գալուց, հանուն հայ գաղթականության տառապանքների շուտափույթ լիկվիդացման, դրականապես են վերաբերվում ՀամԿ(բ)Կ Կենտկոմը և ԽՍՀՄ կառավարությունը, թեև մեծ հույսեր ու սպասելիքներ չունենին իմպերիալիստական դիվանագիտության կամակատար Ազգերի լիգայից⁵:

Եվ ահա 1925 թ. հունիսի 14-ին Բաթում ժամանեց հայ գաղթականներին Սովետական Հայաստանում տեղավորելու հետ կապված հարցերի ուսումնասիրման համար Ազգերի լիգայի հանձնաժողովը՝ Ֆրիտյոֆ Նանսենի գլխավորությամբ: Մի երկու օր Վրաստանում անցկացնելուց հետո, հունիսի 17-ին հանձնաժողովը ժամանեց Հայաստան: Հանձնաժողովի անդամներին լենինականում դիմավորեցին ՀՍԽՀ հողագործության ժողովրդական կոմիսար Ար. Երզնկյանը, ներքործողում Հովհ.

Դուրգերյանը և պաշտոնական այլ անձինք⁶: ՀՍԽՀ կառավարության անունից ողջունելով հանձնաժողովին, Ար. Երզնկյանն ասաց, որ Նանսենն արդեն վաղուց հայտնի է սովետական ժողովուրդներին որպես հին բարեկամի և մեծապես գնահատվում է սովի դեմ ուս ժողովրդի մաքառման ծանր տարիներին նրա ցույց տված օգնությունը:

Իր պատասխան խոսքում Ֆր. Նանսենն ուրախություն հայտնեց այն բանի համար, որ հայ ժողովրդին, որի անցյալի տառապանքներին ինքը լիովին ծանոթ է, հանդիպում է Արարատի ստորոտում, նրա հայրենիքում, որտեղ արագորեն վերականգնվում է երկրի ավերված տնտեսությունը և վերածնվում կուլտուրան: Այնուհետև նա նշեց իր գլխավորած հանձնաժողովի նպատակը⁷: Նույն օրը Նանսենի հանձնաժողովը ժամանեց Երևան, ուր նրան դիմավորեցին ժողկոմխորհի նախագահի տեղակալ Ասք. Մռավյանը և մայրաքաղաքի հասարակայնության բաղձաթիվ ներկայացուցիչներ:

Այնուհետև Նանսենը և հանձնաժողովի մյուս անդամները այցելեցին ՀՍԽՀ ժողկոմխորհի նախագահ Ս. Լուկաշինին և Կենտգործկոմի նախագահ Ս. Համբարձումյանին: Վերջիններս Նանսենի հանձնաժողովին հավաստիացրին, որ սովետական կառավարության կողմից լայն հնարավորություններ կտրվեն նրան հետաքրքրող բոլոր հարցերը մանրամասնորեն ուսումնասիրելու համար, ինչպես նաև տեղում ծանոթալու այն բոլոր հողամասերին, որոնց վրա նախատեսվում է բնակեցնել երկիր ներգաղթող սփյուռքահայերին: Միաժամանակ հայտնվեց, որ այդ հողամասերի ոռոգման վերաբերյալ կան պատրաստ նախագծեր, որոնք նույնպես կտրամադրվեն հանձնաժողովին: Ապա Ասք. Մռավյանի նախագահությամբ տեղի է ունենում ՀՍԽՀ կառավարական հատուկ հանձնաժողովի (ժողկոմխորհին առընթեր աշխատավորական ներգաղթի հանձնաժողով) և Նանսենի հանձնաժողովի համատեղ նիստը՝ մի խումբ հայ մասնագետների մասնակցությամբ:

Ֆր. Նանսենը հաղորդում է, որ հատկապես վերջին շրջանում Հունաստանում, Սիրիայում, Թուրքիայում (Կ. Պոլիս) և այլ երկրներում հայ գաղթականության վիճակը խիստ վատ-

³ Տե՛ս «Վերջին լուր», 8 հոկտեմբերի, 1923 թ., № 2923:

⁴ Տե՛ս ՀՍՍՀ ՀՄՇ ՊԿԱ, ֆ. 40/113, ց. 3, գ. 372, թ. 7:

⁵ Տե՛ս նույն տեղում, գ. 454, թ. 200:

⁶ Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 16 հունիսի, 1925 թ., № 135:

⁷ Տե՛ս ՀՍՍՀ ՀՄՇ ՊԿԱ, ֆ. 40/113, ց. 3, գ. 518, թ. 7:

թարացել է և այդ կապակցութեամբ իրենց նպատակն է ուսում-նասիրել մոտավորապես 50 հազար տարագիրների Հայաստան տեղափոխելու հնարավորութունը: Օրինակ, Հունաստանում, ուր հունական կառավարությունը սկզբում բարյացակամորեն էր ընդունում հայերին, այժմ 1,5 միլիոն հույն գաղթականներին տեղավորելու համար հայերին հանում է նրանց հաստատված վայրերից և նույնիսկ արտաքսում երկրից: Նանսենը նշում է, որ սփյուռքահայ աշխատավորները ձգտում են տեղափոխվել Սովետական Հայաստան և ոչ ուրիշ տեղեր: Հետևապես, պետք է լրջորեն հաշվի առնել նրանց այդ օրինական ցանկությունը ևս: Ելնելով դրանից, նիստում նախնական քննարկման են ենթարկվում սփյուռքահայ տարագիրներին Հայաստանում տեղավորելու հետ կապված ծրագրերը, մասնավորապես մանրամասն ուսումնասիրության առարկա է դառնում Սարդարապատի դաշտի ոռոգման նախագիծը: Այնուհետև նանսենի հանձնաժողովի անդամները ՀՍԽՀ ժողկոմխորհի աշխատավորական ներգաղթի հանձնաժողովի ներկայացուցիչների և մի խումբ հայ մասնագետների ուղեկցությամբ տեղում ուսումնասիրում են ոռոգման ենթակա հողամասերն ու նախագծերը, շրջագայում հանրապետությունում, դարձյալ նիստեր ունենում ՀՍԽՀ կառավարական հանձնաժողովի հետ և, ընդհանուր համաձայնության գալով, հուլիսի 2-ին մեկնում Երևանից: Եվրոպա ուղեվորվելու ճանապարհին Մոսկվայում Ֆր. Նանսենը հանդիպումներ ունեցավ ՍՍՀՄ արտգործոցկոմ Չիչերինի և հողագործության ժողկոմի տեղակալ Սվիրդերսկու հետ, նրանց հաղորդեց Հայաստանից ստացած իր տպավորություններն ու հետագա ծրագրերը:

Երևանից մեկնելուց առաջ, բանակցությունների ընթացքում ձեռք բերված համաձայնության հիման վրա, նանսենը ՀՍԽՀ կառավարությանը ներկայացրեց մոտ 50 հազար տարագիրների Հայաստանում տեղավորելու վերաբերյալ իր հուշագիրը, որը հայտնի է «Նանսենյան ծրագիր» անունով⁸: Այդ հուշագրում նանսենը հայտնում էր, որ Արարատյան դաշտում ոռոգման ու ճահիճների շորացման միջոցով նոր հողերի յուրացման և դրանց վրա մեծ թվով ներգաղթողների տեղավորման վերաբերյալ Հա-

յաստանի կառավարության առաջադրած բոլոր նախագծերն էլ իր գլխավորած հանձնաժողովը գտնում է իրագործելի և ընդհանուր առմամբ միանգամայն նպատակահարմար: Նա միաժամանակ ընդգծում է, որ հայ գաղթականության խնդրի արմատական լուծման լավագույն միջոցը կլինե՞ր սովետական կառավարության առաջադրած բոլոր նախագծերի իրագործումն ու Հայաստանի արդյունաբերական հնարավորությունների հետազարգացումը: Սակայն, քանի որ իրենք դժվարանում են բոլոր նախագծերի միաժամանակյա ֆինանսավորման համար բավարար միջոցներ գտնել, ուստի նպատակահարմար են համարում առայժմ մի կողմ թողնել Սարդարապատի դաշտի ոռոգման ընդարձակ պլանը և սկզբում սահմանափակվել ավելի քիչ ծախս պահանջող մյուս ծրագրերի իրագործման: Համար դրամի ձեռք բերումով: Նանսենի կարծիքով դրանք էին՝ Երևանի արևելյան և արևմտյան մասերում եղած 19 հազար դեսյատին տարածությամբ դռերի ոռոգման համար ջրանցքի կառուցումը, որը պահանջում էր 2 միլիոն ռուբլի և Սև ջրի հովտի ու Զանգիբասարի շրջանի 14 հազար դեսյատին ընդհանուր տարածությամբ ճահիճների շորացումն ու այդ հողերի ոռոգելի դարձնելը, որի համար անհրաժեշտ էր ներդնել 2,1 միլիոն ռուբլի¹⁰:

Այսպիսով, նանսենի հանձնաժողովի կարծիքով 33 հազար դեսյատին տարածությամբ նոր հողերի յուրացման համար, նախնական հաշվումներով, պահանջվում էր 4,1 միլիոն ռուբլի: Նանսենը դրան ավելացնում էր ևս 900 հազար ռուբլի՝ որպես շնախատեսված ծախսերի գումար: Բացի այդ, ներգաղթող տնտեսություններին այդ հողերի վրա տեղավորելու, բնակարաններ, գյուղատնտեսական գործիքներ, սերմացու, անասուններ և այլ միջոցներ տրամադրելու համար անհրաժեշտ կլինե՞ր ունենալ ևս 3 միլիոն ռուբլի: Հետևաբար, ընդհանուր գումարը կկազմեր 8 միլիոն ռուբլի՝ առանց ներգաղթողներին մինչև սովետական երկիր տեղափոխելու ծախսերի, որոնք, ըստ նանսենի, կարելի կլինե՞ր ստանալ այլ աղբյուրներից, ասենք՝ շահագրքոված կառավարություններից:

Հիմնական ծախսերի 8 միլիոն ռուբլին ձեռք բերելու և նախատեսված ծրագիրն իրականացնելու համար նանսենի կարծիքով գոյություն ունե՞ր երեք ուղի: Առաջինը բարեգործական

⁸ Տե՛ս նույն տեղում, գ. 373, թ. 1—5:

⁹ Տե՛ս նույն տեղում, գ. 820, թ. 3—5:

¹⁰ Տե՛ս նույն տեղում, գ. 373, թ. 6—7:

հաստատությունների միջոցով հանգանակություններ անցկացնելու ուղին էր, երկրորդը՝ եվրոպական կառավարություններից վարկի կամ նպաստի ձևով ստանալու և երրորդը՝ եվրոպական բանկերից փոխառություն վերցնելու միջոցով: Սակայն հենց ինքը նանսենը իրավացիորեն նշում է, որ առաջին երկու ուղիները դժվար իրագործելի են, որովհետև այդքան մեծ գումարն անհնարին է բարեգործական հաստատությունների կազմակերպած հանգանակության միջոցով կամ եվրոպական կառավարություններից վարկերի ու նպաստի ձևով ստանալը: Հունաստանում գաղթականությանը տեղավորելու իր փորձից ելնելով, նանսենը գտնում էր, որ միակ նպատակահարմար ելքը անհրաժեշտ գումարը փոխառությունների միջոցով ձեռք բերելու ուղին է: Հայտնելով իր մասնավոր կարծիքը, նա խորհուրդ էր տալիս օգտվել նաև կոնցեսիոն ձեռնարկների կազմակերպման հնարավորությունից: Ենթադրվում էր, որ փոխառությունը կլինի երկարատև՝ 15—20 տարի ժամանակով, 10 տոկոսից ոչ ավելի շահով և երաշխավորված ԽՍՀՄ և ՀՍԽՀ կառավարությունների կողմից: Փոխառության գումարների նպատակային ծախսմանը հսկելու համար նանսենն առաջարկում էր թույլատրել Հայաստանում ունենալու փոխատուների ներկայացուցիչների հատուկ կոմիտե¹¹:

Չհամաձայնվելով նման կոմիտեի ստեղծման նանսենի առաջադրած գաղափարին, ՀՍԽՀ Ժողկոմխորհի նորրեստի Նախագահ Ս. Համբարձումյանը հավանություն է տալիս մյուս բոլոր առաջարկություններին և հայտնում, որ ինչպես բոլոր ներգաղթողները, այնպես էլ այդ 50 հազար հայ տարագիրները Հայաստան տեղափոխվելիս կօգտվեն մի շարք գյուղություններից ու արտոնություններից: Նրանց բեռները ազատ կլինեն մաքսից և այլ տուրքերից¹²: Ներգաղթողները Բաթումից մինչև Հայաստանում իրենց հատկացվելիք բնակավայրերը կփոխադրվեն առանց ճանապարհավարձի, հողը կստանան ձրի, առաջին երեք տարիների ընթացքում ազատ կլինեն հարկերից, մեկ-երկու տարի՝ նաև զինվորական ծառայությունից և այլն¹³: Ստանալով այդ հավաստիացումները, նանսենը հույս է հայտ-

նում, որ նշված բոլոր միջոցառումների իրականացման շնորհիվ կարելի է վերը նշված վայրերում առայժմ բնակեցնել շուրջ 25—30 հազար մարդ, որով կլուծվի արտասահմանում տվյալ պահին ամենադժվարին կացության մեջ գտնվող հայ գաղթականների հարցը: Այդ ծրագրի կենսագործումից հետո, նանսենի կարծիքով, հնարավոր կլինեն ձեռնամուխ լինել ավելի մեծ միջոցներ պահանջող մյուս նախագծերի՝ այդ թվում նաև Սարգարապատի դաշտի ոռոգման իրականացմանը¹⁴:

Եվրոպա վերադառնալուց հետո, նանսենը և նրան ուղեկցող մասնագետները Հայաստանում կատարած իրենց ուսումնասիրությունների հիման վրա կազմեցին մի ծավալուն դեկուցագիր և այն ներկայացրին Ազգերի լիգայի ընդհանուր ժողովի քննարկմանը: Այդ դեկուցագրի հիմնական եզրակացությունը հանգում էր այն մտքին, որ միանգամայն ռեալ ու նպատակահարմար է Սովետական Հայաստանում ընդարձակ հողամասերի ոռոգման ու ճահիճների շորացման միջոցով ստեղծել հարմար բնակավայրեր տասնյակ հազարավոր սփյուռքահայ տարագիրների համար: Դրա համար անհրաժեշտ է Սովետական Հայաստանին տրամադրել մեծ մեկ միլիոն ֆունտ ստերլինգի փոխառություն:

Ֆր. նանսենի գլխավորած հանձնաժողովի դեկուցումը Ազգերի լիգայի գլխավոր խորհրդում և նրա մի քանի հանձնաժողովներում ենթարկվեց մանրակրկիտ քննարկման: 1925 թ. սեպտեմբերի 10-ին այդ դեկուցումը լսվեց Ալ. Թոմայի նախագահությամբ գործող աշխատանքի միջպղպային բյուրոյի գաղթականների բաժնին առնթևեր խորհրդակցական կոմիտեում, ուր ներկա էին նաև սփյուռքահայ մի շարք կազմակերպությունների և հայ տարագիրներին օգնող օտարերկրյա քնկերությունների ներկայացուցիչներ: Նանսենի դեկուցումն ու ներկայացրած նախագծերը արժանացան սփյուռքահայ աշխատավորների ջերմ համակրանքին ու միահամուռ հավանություն: Սփյուռքահայ հասարակայնության ներկայացուցիչներն իրենց ելույթներում հայտարարեցին, որ լիովին պաշտպանում են նանսենի նախագծերը և խոստացան ցույց տալ ամեն տեսակ նյութական ու բարոյակա՛ն աջակցություն: Նույն ոգով են արտահայտվում նաև հայասերների լիգայի և օտարերկրյա բարեգործական ընկե-

¹¹ Տե՛ս նույն տեղում:

¹² Տե՛ս նույն տեղում, գ. 494, Թ. 12, և ֆ. 113, ց. 13, գ. 4, Թ. 1—2:

¹³ Տե՛ս նույն տեղում, ֆ. 40/113, ց. 3, գ. 820, Թ. 3—5:

¹⁴ Տե՛ս նույն տեղում, գ. 373, Թ. 10—17:

րություններին ներկայացուցիչները՝ գտնելով, որ այդ նախագծերի իրականացումը պետք է կատարվի հանուն «հայերի հանդեպ տարրական արդարության» վերականգնման, հայերի, որոնց «շատ բան է խոստացվել և ոչինչ չի տրվել»¹⁵:

1925 թ. սեպտեմբերի 12-ին, հանդես գալով Ազգերի լիգայի պլենար նիստում, Նանսենը զեկուցեց հայ գաղթականների վիճակի մասին և ներկայացրեց Սովետական Հայաստանում գաղթականության նկատմամբ ցուցաբերվող հոգատարությունը: Իր բոլոր ելույթներում Նանսենը մեծագույն գովասանքով է արտահայտվում Սովետական Հայաստանի կառավարության մասին, որպես լիակատար վստահության արժանի մի իշխանության, որի ընդունակութունները, եռանդն ու գործունեությունը, մասնավորապես գաղթականության նկատմամբ ցուցաբերված հոգատարությունը, առաջ են բերել իր անկեղծ հիացմունքը:

Անդրադառնալով իր գլխավորած հանձնաժողովի հիմնական եզրակացություններին և Հայաստանից ստացած տպավորություններին, Նանսենը հայտարարում է. «Մենք քննեցինք բոլոր հնարավորությունները (հայ գաղթականների տեղավորման. — Շ. Մ.) և եկանք այն եզրակացության, միաձայն և մեր ճշտության մասին առանց որևէ կասկածի, որ միակ վայրը, ուր այժմ Եվրոպայում թափառող մի մեծ մաս— շեշտում եմ, մի մեծ մաս— կարող է տեղափոխվել՝ դա Երևանի Հայ Հասարակությունն է: Եթե ժողովը, մի րոպե անդրադառնա խնդրին՝ ես կարծում եմ, որ պետք է համաձայնի, որ մենք ճիշտ ենք»¹⁶: Ապա Նանսենը նշում է, որ պետք է անպայման նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ գաղթականներն իրենք ցանկանում են գնալ Հայաստան, այնտեղ կառուցել իրենց ազգային հայրենիքը և ո՛չ ուրիշ տեղ:

Այնուհետև Նանսենը պատմում է Հայաստանում իրենց կատարած ուսումնասիրությունների մասին, նշելով, որ իրենք այնտեղ են գնացել խիստ երկյուղով, կասկածելով. թե հաղիվ մի բան ստացվի իրենց ուղևորությունից: Սակայն Սովետական Հայաստանից վերադարձել են այն խոր համոզմունքով, որ այնտեղ ծավալված է հույժ կարևոր տնտեսական մի ծրագիր, որը խաղաղ աշխատանքի հոյակապ հնարավորություններ կըն-

ձեռի ոչ միայն արդեն հայոց հողի վրա գտնվող հազարավոր գաղթականների, այլև դեռևս աշխարհում թափառող մեծ թվով սփյուռքահայ տարագիրների:

Շարունակելով իր ճառը, Նանսենն ասում է, որ իր նպատակն է «համոզել հանձնաժողովին, որ հայ ժողովուրդը, որի հետ այնքան վատորեն են վարվել և որը շատ է տանջվել, որ հատկապես ոչ մի ժողովուրդ արդի պատմության մեջ չի տեսել որևէ բան, որը կարելի լինի բաղդատել նրա քաշածների հետ», որ այս ժողովուրդը բարձր զարգացմամբ և օժտված ու աշխատասեր ժողովուրդ է, «որը իսկապես վերջին երեք տարիների ընթացքում հրաշքներ է գործել՝ վարգացնելով դեռևս մի քանի տարի առաջ թշվառության մեջ գտնվող երկիրն այն ժամանակ, երբ ամեն օր սայլերը մեռած երեխաներ և շափահասներ էին հավաքում քաղաքների փողոցներից»¹⁷:

Խոսելով Սովետական Հայաստանի տնտեսական կյանքի օրավուր աճող բարելավման մասին, Ֆր. Նանսենը հայտարարում է. «Եվ վերջապես՝ ես պետք է ջանամ համոզել հանձնաժողովին, որ Երևանի հանրապետությունը իրական Հայաստան է... Իսկապես այս փոքրիկ հանրապետության մեջ գոյություն ունի վերջապես հայկական օջախը, և ես խնդրում եմ նստաշրջանի անդամներին իրենց խղճի առաջ դնել այն հարցը, թե արդյո՞ք նրանք անկեղծորեն և լրջորեն չեն հավատում, որ որևէ ուրիշ ազգային օջախ կարելի չէ հուսալ: Ես հավատում եմ, ես գիտեմ, թե ինչ պետք է պատասխանեն նրանց խղճերը, և ես դիմում եմ նստաշրջանին՝ վավերացնել այս ջանքը՝ գլուխ բերելու (համար) հայ ազգին ազգային օջախի վերաբերմամբ անցյալում տրված խոստումները»¹⁸:

Ապա Նանսենը շատ դիպուկ զուգահեռ է անցկացնում, նշելով, որ վերջերս եվրոպական երկրներից մեկում ջուրն է իջեցված մի մեծ մարտանավ, որի վրա ծախսվել է 7 միլիոն ֆունտ ստերլինգ, իսկ նրա պահպանման ծախսը տարեկան կազմում է կես միլիոն ֆունտ ստերլինգ, մինչդեռ հայ գաղթականության համար պահանջվող փոխառությունը հավասար է այդ նավի պահպանման համար պահանջվող երկու տարվա գումարին: Առաջինը պատերազմի համար է, երկրորդը՝ մի ղժբախտ ժողո-

¹⁵ Տե՛ս նույն տեղում, գ. 453, թ. 10—12:

¹⁶ Տե՛ս նույն տեղում:

¹⁷ Տե՛ս նույն տեղում:

¹⁸ Նույն տեղում, թ. 17—18:

վերջի: Ուստի նանսենը հայտարարում է. «Ես կոչ եմ անում նատաչըջանին՝ չկորցնել այս պատեհությունը (Հայաստանի փոխառությունն իրացնելու մասին է խոսքը.—Ն. Մ.): Մեր օրերում շատ հաճախ մոռացվում է հայկական ողբերգությունը, կամ վրայից անցնում են ինչ-որ ա. տարբեր ոճրական ժեստով», սակայն եվրոպական տերությունները պատասխանատվություն են կրում հայ ժողովրդի ապրած ողբերգության մեջ և այժմ անհրաժեշտ է, որ նրանք ձեռք առնեն ունի միջոցներ՝ անցյալի ձախողանքի փոխարեն ստեղծելու ավելի պայծառ մի ապագա՝ ոտնահարված իրավունքներով այդ ազգի համար¹⁹:

Իր ընդարձակ ճառի վերջում նանսենն առաջարկում է զեկուցման մեջ առաջ քաշված հարցերը հանձնել լիգայի հինգերորդ՝ հումանիտար հանձնաժողովին, դրանց հետագա ընթացք տալու համար²⁰: Սեպտեմբերի 18-ին նանսենի ծրագիրը քննարկվում է հինգերորդ հանձնաժողովում, ուր հայ գաղթականությանը Սովետական Հայաստան տեղափոխելու միջոցառումների հիմնավորմամբ ու պաշտպանությամբ հանդես են գալիս Ֆր. նանսենը, Ալ. Թոման, Չարլզ Դյուպուտին ու ուրիշներ:

Նանսենյան ծրագիրն իբր ավելի մանրամասնորեն ուսումնասիրելու նպատակով այնուհետև այն հանձնվեց 9 հոգուց կազմված մի ենթակոմիտեի, ուր և ծավալվեցին գլխավոր ելույթները և բացահայտվեց նախագծի նկատմամբ մեծ տերությունների իսկական, անսրող վերաբերմունքը: Այնտեղ Մեծ Բրիտանիայի պատվիրակ լեդի Ատտոլն իր կառավարության անունից հայտարարեց, որ նա չի կարող ոչ իրացնել և ոչ էլ երաշխավորել որևէ սովետական հանրապետության բաց թողած փոխառությունը²¹: Արտահայտելով ֆրանսիական կառավարության տեսակետը, նրա պատվիրակ Պաման ասաց, թե իր երկիրը պատրաստ է երաշխավորել փոխառությունը, բայց այն անառարկելի պայմանով, որ Անգլիան ևս համաձայնի համատեղ երաշխիքներ տալուն: Իտալական պատվիրակը հայկական ներկայացուցիչներին և Ֆր. նանսենին մասնավոր կերպով հայտնեց, որ նա այդ հարցում բաժանում է ֆրանսիական տե-

սակետը: Ենթակոմիտեի մնացած անդամները նանսենի նախագծին և փոխառության հարցին վերաբերվում են կարեկցաբար ու համակրանքով, սակայն գործնական ոչ մի բայլ չեն անում: Անգլիական կառավարության այդպիսի անբարյացակամ դիրքը՝ հայ գաղթականության համար անհրաժեշտ փոխառության նկատմամբ, ինչպես արտահայտվում է նանսենը, իր համար անսպասելի էր: Փոխառության կողմնակիցները ստիպված հետաձգում են ենթակոմիտեի աշխատանքները՝ մինչև որ գտնվեր փոխառության իրացման մի այնպիսի հարմար եղանակ, որը ընդունելի լիներ անգլիական պատվիրակության համար:

Հայ գաղթականներին Սովետական Հայաստան տեղափոխելու հետ կապված միջոցառումների իրականացման համար պահանջվող փոխառության գործը զուլխ բերելու նպատակով Ֆր. նանսենը, Ալ. Թոման, բելգիական ներկայացուցիչ Դեբրուկերը և Ազգերի լիգայի ֆրանսիական քարտուղարության շեֆ Արթուր Սոլտերը մասնավոր տեսակցություն են ունենում Փարիզում ԽՍՀՄ լիազոր-ներկայացուցչության քարտուղար Ս. Փիրումյանի հետ: Զրույցի ընթացքում նրանք փորձում են պարզել, թե Հայաստանի կառավարությունը փոխառության ապահովման ի՞նչ նոր առաջարկներ կարող է ներկայացնել, որոնք բավարար լինեին առանց անգլիական երաշխիքների այն իրացնելու համար: Նրանց խոսակցություններից հասկանալի է դառնում, որ դա է հիմնական դժվարության պատճառը, բանի որ նախկին երաշխիքները մերժվել են անգլիական պատվիրակության կողմից: Ինչպես հաղորդում է 1925 թ. սեպտեմբերի 22-ին ՀՍԽՀ ժողկոմխորհին գրած իր զեկուցագրում Ս. Փիրումյանը, իրեն հետ բանակցողները, բացահայտ առաջարկ չանելով, փորձել են պարզել, թե արդյո՞ք Հայաստանի կառավարությունը չէր համաձայնի նախատեսվող փոխառությունը երաշխավորել գրեթե մշտական բնույթ կրող նյութական պարտավորություններով: Ի պատասխան դրա, Ս. Փիրումյանը վճռական կերպով հայտարարել է, որ սովետական կառավարությունը երբեք չի կարող գնալ այդպիսի քայլի: ԽՍՀՄ կառավարությունը համաձայնություն էր հայտնել ՀՍԽՀ անունից բաց թողնել փոխառություն Մոսկվայի կենտրոնական բանկի երաշխավորությամբ, իսկ այլ կարգի պարտավորություններ, որոնք կարող էին խախտել Սովետական Հայաստանի սուվերենիտետը, սո-

¹⁹ Նույն տեղում, թ. 19—20:

²⁰ Տե՛ս նույն տեղում, թ. 20:

²¹ Տե՛ս նույն տեղում, գ. 454, թ. 206—207, և «Նորհրային Հայաստան»,

27 սեպտեմբերի, 1925 թ., № 219:

վետական կառավարության համար միանգամայն անընդունելի են:

Այնուհետև Ալ. Թոման և Ֆր. Նանսենը առաջարկում են գտնել փոխառության իրացման մի ուրիշ եղանակ, որը գուցե ընդունելի լիներ Անգլիայի համար: Նրանք առաջարկում են ստեղծել մի ինքնավար կազմակերպություն, որը մի կողմից որոշակի պայմանագրային հիմունքներով Հայաստանի կառավարությունից կստանար Նանսենի ծրագրով նախատեսված հողամասերի ոռոգման, ճահիճների շորացման ու այդ վայրերում ներգաղթողների տեղավորման գործը, իսկ մյուս կողմից՝ փոխառությունն իրացելու համար հարաբերությունների մեջ կըմբռնեն եվրոպական ֆինանսական շրջանների հետ²²:

Այդ առաջարկի հեղինակները ըստ երևույթին կարծում էին, թե այդ ինքնավար կազմակերպությունը կկարողանա Անգլիայից ստանալ այն երաշխիքը, որը նա չհամաձայնեց տալ ամիջականորեն Սովետական Հայաստանի կառավարության բաց թողնելիք փոխառությանը: Նանսենի կարծիքով դա կլիներ մարդասիրական բնույթի յուրահատուկ մի կոնցեսիա, որը կբողարկեր Հայաստանի կառավարության փոխառությունը²³: Նանսենը և Թոման հայտարարում են, որ եթե այդ կապակցությամբ շուտափույթ կերպով մի կոմպրոմիսային որոշում չկայացվի, ապա անգլիական դիմադրությունը կարող է գործը ամբողջովին ու վերջնականապես ձախողել:

1925 թ. սեպտեմբերի 23-ին տեղի է ունենում ենթակոմիտեի վերջին նիստը, ուր ընդունված որոշման համաձայն ստեղծվում է հինգ հոգուց բաղկացած մի նոր օրգան: Նրա խնդիրն էր վերջնականապես պարզել Նանսենի առաջարկած ծրագրի տեսիլներիական լրագործելությունը, բանակցություններ վարել Հայաստանի և մյուս շահագրգռված կառավարությունների, կազմակերպությունների ու մասնավոր անձանց հետ և լիզայի խորհրդին ներկայացնել մանրամասն առաջարկներ՝ ինքնավար կազմակերպության ֆունկցիաների մասին: Ազգերի լիզայի խորհրդի կողմից հաստատված ստատուտով այդ ինքնավար կազմակերպությունը իրավունք կունենար հարկ եղած դեպքում Հայաստանի կառավարության հետ կնքել պայմանագրեր, ոռոգ-

վելիք հողամասերի վերաբերյալ կոնցեսիոն համաձայնագրեր և ընդհանրապես զբաղվել փոխառության իրացման հարցերով²⁴:

Սեպտեմբերի 25-ին հայկական փոխառության հարցը ենթակոմիտեից նորից փոխադրվում է Ազգերի լիզայի հինգերորդ հանձնաժողով, ուր ղեկուցումով հանդես է գալիս Բելգիայի ներկայացուցիչ Դեբբուկերը: Ենթակոմիտեի ընդունած որոշման պաշտպանությամբ տոգորված իր ճառում, որը մեծ տպավորություն է թողնում ներկաների վրա, նա նշում է, որ պետք է մի կողմ դնել քաղաքական մոտիվները և օգնել տարադիր հայության մի սովոր զանգվածի, որը դեռևս օթևան չի գտել օտարության մեջ, վերադառնալու իր հայրենիքը, հայրենիք, որն արդեն շատ բան է արել գաղթականության մի զգալի մասին իր միջոցներով երկիր տեղափոխելու, իսկ այնտեղ դառնալով տասնյակ հազարավորներին հողով, բնակարաններով և այլ միջոցներով ապահովելու ուղղությամբ:

Արտասահմանի էմիգրանտական, հակասովետական շրջաններում Դեբբուկերի ճառը խիստ դժկամությամբ ընդունվեց: Ռուս վտարանդի կազետ Աստրովը, այդ առթիվ խորին վրդովմունք և ցավակցություն հայտնելով իր հայ բախտակիցներին, ասում է, թե ենթակոմիտեում ընդունված բանաձևը ըստ էության ներկայացնում է «սովետների փոխառության միջազգային հանձնարարական»²⁵:

ՀՍԽՀ Ժողկոմխորհին ուղարկած իր ղեկուցագրում Ս. Փիրումյանը նշում է, որ Ազգերի լիզայի շրջանակներում փոխառության հարցի շուրջը տեղի ունեցած այդ բոլոր խորհրդակցությունները, ղեկուցումներն ու ելույթները, ինչպես և պետք էր սպասել, գործնական ոչինչ չտվեցին հայ գաղթականության ներգաղթի կազմակերպման օգտին: Սակայն դրանք օբյեկտիվորեն մեծ դեր խաղացին սովետական հանրապետությունների հեղինակության, նրանց կայունության, կազմակերպվածության, կյանքի բոլոր բնագավառներում ձեռք բերված հսկայական նվաճումների, ինչպես նաև ազգային հարցի լուծման դրական փորձի պրոպագանդման տեսակետից: «Սովետական իշխանության այնպիսի հակառակորդների հայտարարությունները, — գրում է Ս. Փիրումյանը, — ինչպիսիք են Ալ. Թոման ու Դեբբուկերը, որ

²² Տե՛ս ՀՍԽՀ ՀՍՍՀ ՊԿԱ, ֆ. 40/113, ց. 3, գ. 454, թ. 206—207:

²³ Տե՛ս նույն տեղում:

²⁴ Նույն տեղում, գ. 820, թ. 3—5:

²⁵ Տե՛ս նույն տեղում, գ. 454, թ. 206—207:

Հայաստանի սովետական կառավարությունը հիրավի ժողովրդական է, որ նա իրագործել է կազմակերպական հսկայական խնդիրներ և արժանի է վստահության, Ազգերի լիգայի կուլուարներում ունեցել են հսկայական ազդեցություն: Կրգայում երեվացած ուսական և վրացական էմիգրանտական հակահեղափոխական գործիչները շճմել էին Սովետական Հայաստանի ու նրա կառավարության օգտին ծավալված պրոպագանդայից, դեպի: սովետական իշխանությունը բոլոր հայկական րնկերությունների դրական վերաբերմունքից և նույնիսկ փորձեր էին անում նվազեցնել մեր այդ բարոյական հաղթանակի էֆեկտը՝ դ-ր նանսենի ու սովետական հանրապետությունների դեմ հարձակումներով»²⁵:

Վերջապես, 1925 թ. սեպտեմբերի 26-ին, Ազգերի լիգայի խորհրդի 35-րդ նստաշրջանի 16-րդ նիստում, հայ գաղթականների տեղավորման հանձնախմբի ղեկուցման հիման վրա, որոշվում է՝ նկատի առնելով հայ տարագիրներին կովկասում կամ այլուր տեղավորելու վերաբերյալ ընդհանուր ժողովի 1924 թ. սեպտեմբերի 25-ի հանձնարարականը, հաստատել հայ գաղթականների տեղավորման հինգ հանձնակատարներ, որոնք պետք է վերջնականորեն պարզեն ու ճշտեն նանսենի ծրագրի իրագործելիության տեխնիկական կարելիությունը, կարծիքների փոխանակություն կատարեն Հայաստանի և ուրիշ կառավարությունների ու կազմակերպությունների հետ՝ փոխառության իրացման և վերահսկիչ օրգանի ստեղծման հարցի շուրջը: Հայ գաղթականների տեղավորման հանձնախմբի մեջ մտնում են Ֆրիայոֆ նանսենը, Կ. Բերդմանը, Սարգուի Մակդոնալդը, ժյուլ Պամսը և Խալապցի Պոման, որին սկզբում փոխարինում է Պետրեկին, ապա կոնտաի Ռոստինին²⁶:

Հանձնախումբն իր առաջին նստաշրջանում, որ տեղի ունեցավ 1925 թ. հոկտեմբերի 30-ից մինչև նոյեմբերի 1-ը, լսում է Հայաստանի կառավարության ներկայացուցիչ Ս. Փիլոմյանի և Հայկական բարեգործական ընդհանուր միության կենտրոնական վարչության պատվիրակության: (Լ. Բաշալյան, Գր. Սինապյան, Մ. Պապաջանյան) հաղորդումները՝ հայ գաղթա-

կանությունը Սովետական Հայաստանում տեղավորելու առթիվ նրանց տեսակետները պարզելու նպատակով:

Նստաշրջանի վերջում հանձնախումբը որոշում է «առաջարկել պր.-ն Ուիլյամ Մակինտոշին՝ ինչքան կարելի է շուտ մեկնել Երևան՝ վերահսկելու համար ոռոգման պլանի վերջնական նախապատրաստության վրա՝ Ղոերի արևելյան և արևմտյան կողմում, Կարասուի և Զանգիբասարի շրջանում, որ նկարագրված է դոկտ. Նանսենի ղեկուցման մեջ, ինչպես և հանձնախմբին տեղեկագրելու պլանի տեխնիկական կողմի մասին»²⁸: Այդ որոշման համաձայն 1925 թ. դեկտեմբերի 15-ին Երևան է ժամանում ինժեներ Ու. Մակինտոշը, որը մինչև 1926 թ. փետրվարի 1-ը պետք է լիգայի գաղթականական հանձնաժողովին ներկայացնեի իր ղեկուցումը²⁹:

Սովետական կառավարությունն ընդառաջում ու նպաստում է նաև այս որոշման կատարմանը, ամեն կերպ օգնելով, որպեսզի Ազգերի լիգայի հայ գաղթականների տեղավորման հանձնաժողովի առաջիկա նիստին հասցվի Մակինտոշի ղեկուցագիրը: Ու. Մակինտոշը, հայ մասնագետների համագործակցությամբ, Երևանում աշխատում է մի բանի ամիս և 1926 թ. գարնանը հանձնաժողովին ներկայացնում իր ղեկուցագիրը՝ նանսենի նախագծերի տեխնիկական հիմնավորմամբ: Մակինտոշի ղեկուցագրի գլխավոր եզրակացությունն այն էր, որ նանսենի ծրագիրը տեխնիկապես միանգամայն իրագործելի է, տրնտեսական տեսակետից՝ շահավետ ու ընդունելի, եթե կարելի լինի բավականաչափ երաշխիքներ տրամադրել այդ նպատակով անհրաժեշտ փոխառությունը բաց թողնելու համար: Միաժամանակ Մակինտոշը հայտնում է, որ նախագծերի իրագործման դրամական միջոցների վերաբերյալ ինքն ի վիճակի չէ դրական առաջարկ անելու, որովհետև սոսկ սովետական պետական կենտրոնական բանկի երաշխավորությունը իրեն բավարար չի թվում փոխառության իրացման համար: Նրա կարծիքով նպատակահարմար կլինեի, եթե այն երաշխավորված լինեի ոռոգվելիք հողամասերից ստացվող բերքով, որը բավարար կլինեի նաև պարտքի հատուցման համար: Մակինտոշի հետ վարած բանակցությունների ժամանակ սովետական կառավարությունը

²⁵ Նույն տեղում:

²⁷ Տե՛ս նույն տեղում, թ. 161:

²⁸ Նույն տեղում:

²⁹ Տե՛ս «Նորհրդային Հայաստան», 17 դեկտեմբերի, 1925 թ., №287:

հայտնել էր, որ Մոսկվայի պետական բանկը պատրաստ է երաշխավորել հայ գաղթականության համար նախատեսվող փոխառությունը: Բայց սովետական Հայաստանի սովետներիտետր խախտող ներքին բնույթի ոչ մի այլ պարտավորության մասին խոսք անդամ լինել չէր կարող, ինչպես նաև չէր թույլատրվի երկրի ներսում Ազգերի լիգայի կամ որևէ պետության միջամբտությունն ու վերահսկողությունը³⁰:

1926 թ. մարտի 19-ին Փարիզում տեղի է ունենում հայ գաղթականների տեղավորման հանձնաժողովի նիստը՝ ֆրանսիական սենատոր Ժյուլ Պամսի նախագահությամբ: Նիստին ներկա էին նաև Մարդու Մակդոնալդը (Անգլիա), Ֆր. Նանսենը, դոկտ. Մայերը (Գերմանիա), Խալապան ներկայացուցիչ Կոնտտի Ռոսսինին, լիգայի մի խումբ տեխնիկական էքսպերտներ և Սովետական Հայաստանի ներկայացուցիչը՝ Ֆրանսիայում ԽՍՀՄ ներկայացուցչության քարտուղար Ս. Փիրումյանը:

Նախագահող Ժ. Պամսն իր ելույթում հաղորդում է, որ հանձնաժողովն ստացել է Հայաստան ուղարկված էքսպերտի ղեկուցագիրը, որը լիովին հաստատում է Նանսենի ծրագրի իրագործելիությունը: Ըստ նրա վկայության, հնարավոր է կարճ ժամանակամիջոցում ոռոգելի դարձնել 37450 դեսյատին լավագույն հողամասեր, այնտեղ փոխադրել մեծ թվով հայ գաղթականների, սկզբնական շրջանում նյութապես ապահովել նրանց և օգնել կառուցելու բնակարաններ, ձեռք բերելու գյուղատնտեսական գործիքներ, սերմացու և այլն: Այդ բոլոր միջոցառումների իրականացման համար պահանջվում է ընդամենը 15 միլիոն ուրլի, այսինքն՝ նախապես հաշվարկվածից մոտ 5 միլիոն ուրլով ավելի³¹: Ապա Պամսը հիշեցնում է, որ հանձնաժողովն սկզբում մտածում էր այդ գումարն ստանալ լիգայի անդամ պետությունների կողմից երաշխավորված փոխառության ձևով: Սակայն անգլիական կառավարության հրաժարումից հետո (որին չբնեղանքով հետևեցին նաև ֆրանսիական ու իտալական պատվիրակությունները), անհրաժեշտ համարվեց այդ փոխառության համար առաջադրել Ազգերի լիգայի երաշխավորությունը: Գծբախտաբար այդ էլ անհաջողությամբ վերջացավ, և անհրաժեշտ միջոցներ ձեռք բերելու խնդիրն այնուհետև կրկին

քննարկվեց լիգայի հինգերորդ հանձնաժողովում: Այդ հանձնաժողովի առաջարկությամբ լիգայի խորհուրդը որոշում կայացրեց ստեղծել մի կոմիտե՝ պահանջվող գումարը հավաքելու խնդիրըն ուսումնասիրելու համար: Միաժամանակ որոշվեց Նանսենին կամ նրա ներկայացուցչին վարկ տրամադրել՝ Եվրոպայում և Ամերիկայում հայ գաղթականների օգտին հանգանակություն անցկացնելու հնարավորությունը պարզելու նպատակով³²:

Այսպիսով, Ազգերի լիգան, իմպերիալիստական տերությունների խարդախություններն ընդօրինակելով, հայկական հարցը փոխարինեց գաղթականական հարցով, իսկ գաղթականության հայրենադարձությանը նպաստելու խնդիրը՝ նրա օգտին ինչ-որ հանգանակություն անցկացնելու, իրականում ողորմություն մուրալու խղճուկ միջոցառումով:

Հայ գաղթականության հարցի վերաբերյալ իրադարձությունների այդ ամբողջ շղթան կամ ավելի ճիշտ կլինի ասել՝ երկարաձիգ այդ քաշքուշկը, մանրամասնորեն արտացոլվել է Ազգերի լիգայի կողմից 1927 թ. Ժնևում ֆրանսերեն և անգլերեն հրատարակված «Հայ գաղթականության տեղավորման պլան» հավակնոտ վերնագրով փաստաթղթերի ու նյութերի ժողովածուի մեջ³³:

Սովետական կառավարությունը, անկեղծորեն մտահոգված լինելով բազմաշարժար հայ գաղթականության ճակատագրով, ամեն կերպ ընդառաջում էր նրա հարցի լուծմանը, թեկուզ Ազգերի լիգայի միջոցով: Սակայն միանգամայն պարզ ու որոշակի էր, որ սկզբունքային հարցերում նա երբեք չէր կարող զիջումներ անել իմպերիալիստական շահերի արտահայտիչ Ազգերի լիգայի խաբկանքներին: Ինչպես հասարակայնությանը հուզող մյուս հարցերը, այնպես էլ հայ գաղթականության խնդիրը Ազգերի լիգան իրականում առաջ էր քաշում, սովորական աղմուկ բարձրացնում, որպեսզի պահպանի «մարդասիրության» կեղծ տիտղոսը և ճնշված ու փոքր ազգերի աչքին թող փչի: Ամեն

³⁰ Տե՛ս «Նոր ուղի», ամսագիր, Երևան, 1929 թ., № 1, էջ 342:

³¹ Տե՛ս ՆՄՄՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 40/113, ց. 3, գ. 502, թ. 44—47:

³² Տե՛ս «Նոր ուղի», 1929 թ., № 1, էջ 342:

³³ Այդ դեբե՛ք՝ „Plan d'etablissement des refugies Armentiens“ կամ „Scheme for the settlement of Armenian Refugies. General Survey and pri. doc“. Geneva, 1927, դժբախտաբար չգտնվեց ո՛չ Երևանի, ո՛չ էլ Մոսկվայի գրադարաններում, ուստի մենք չկարողացանք մանրամասնորեն անդրադառնալ դրան:

անգամ հայ գաղթականների հարցը Ազգերի լիգայի խորհրդում ու նրա գանազան հանձնաժողովներում քննարկելիս իմպերիալիստական դիվանագետները պիղատոսյան արցունքներ էին թափում այդ «ղժբախտ ու շարշարված» ժողովրդի կրած տառապանքների և, անշուշտ, նրան օգնելու անհրաժեշտության համար: Իսկ երբ իրոք հարկ էր լինում գործով ապացուցել գեթ իրենց պարտքի զգացումն այդ ուղղությանը, ընդհակառակը, ինչ-որ կասկածելի հաշիվներ էին ներկայացնում հայ ժողովրդի:

Նրբ խորամուխ ենք լինում փաստերի էություն մեջ, պարզ է դառնում, որ իմպերիալիստական տերությունների իսկական նպատակը հայ գաղթականությանն իր հայրենիքը վերադառնալու գործում օգնելը չէր, այլ այդ անվան տակ, եթե հնարավոր էր, Սովետական Հայաստանն անմիջականորեն իրենց տնտեսական, ապա նաև քաղաքական շահագործման ոլորտի մեջ առնելը: Դրա համար էլ նրանք չէին ցանկանում գործ ունենալ անմիջականորեն ՍՍՀՄ կառավարության հետ, այլ մեկուսացված Հայաստանի, որին, նրանց կարծիքով, հեշտ կլիներ ենթարկել իրենց ազդեցությանը: Հենց այդտեղ էր, որ նրանք շարաշար սխալվում էին իրենց հաշիվների մեջ:

Հայ ժողովրդի ճակատագրի, նրա ողբերգական անցյալի և պանդխտության մեջ տառապող գաղթականության դառն վիճակի հանդեպ այդ դաժան խաղերը բոլորովին էլ նորություն չէին: Հայ աշխատավորությունը դեռ տասնամյակներ առաջ իր մաշկի վրա զգացել էր գլադատոնների և դիզրայելիների, այժմ էլ տեսնում էր լլոյզ ջորջերի ու լորդ քերզոնների իրեն «օգնելու», «աղատադրելու» մասին դատարկ խոսքերի ու կեղծ ձառերի արյունոտ հետևանքները: Ըստ էության այդ փարիսեցիական խոսքերից ու ձառերից երբեք էլ այն կողմ շանցավ Եվրոպայից հայ ժողովրդի ակնկալած օգնությունը և Ազգերի լիգայի «բարերարությունը»: Փաստորեն մի քանի տարի շարունակ հայ գաղթականության հարցը և նանսենի ծրագիրը «քննարկելուց» հետո Ազգերի լիգան այն մոռացության տվեց:

Ուստի միանգամայն իրավացի էր սովետական կառավարությունը, որ նանսենի միսիայի Հայաստան գալուց առաջ ու առավել ևս դրանից հետո, ռեալ սպասելիքներ չունեք Ազգերի լիգայից և երբեք էլ ինչ-որ հույսեր չէր կապում նրա հետ: Այդ մասին շատ տեղին է արտահայտվել ՀՍԽՂ հողագործության

ժողովում Ար. Երզնկյանը, որը լավատեղյակ էր գաղութականության հարցին և սփյուռքի կյանքին: «Խորհրդային Հայաստան» թերթի աշխատակցի հետ ունեցած զրույցում Ար. Երզնկյանն ասել է. «Մենք նանսենին, որպես մեր և առհասարակ խորհրդային Միության բարեկամի, անկասկած, հարգանքով ենք վերաբերվում և երբեք չենք կասկածում նրա բարի արամագրությունների և ցանկությունների մասին, սակայն նրա միսիայից մեծ բան չենք սպասում: Չէ՞ որ նա չէ որոշողն այդ խնդիրը, այլ Ազգերի լիգան:

Եթե մենք ընդունել ենք նանսենի միսիան, ունեցել ենք երկու ճիմնական նպատակ, որը չենք թաքցնում:

Դեռ արտասահմանում գաղութահայության մեջ կան կազմակերպություններ, որոնք գիտակցաբար և թե անգիտակցաբար միազնում են գաղութահայ աշխատավորության գիտակցաբերունը, օրոտելով նրան սին հույսերով, թե մեծ պետություններից և Ազգերի լիգայից մեծ սպասելիքներ ունենք:

Մենք բոլոր հնարավորությունները ավեցինք նանսենին, առաջարկեցինք բոլոր թե մեծ և թե գյուրին ծրագրերը, որպեսզի գաղութահայության աշխատավոր մասսաները տեսնեն, թե մեծ պետություններից և լիգայից սպասելիքներ չկան...

Տալով նանսենին բոլոր հնարավորությունները, մենք փակեցինք արտասահմանում գտնված մեր բոլոր հակառակորդների պրոպոկացիաների բոլոր դռները: Մենք պարզ և որոշակի ասացինք նանսենին— մենք մուրալու ցանկություն չունենք, եթե դուր և ձեզ ուղարկողներն ուզում եք, որ ներդաղի հարցը լուծվի, տվեք մեզ փոխառություն, մենք պատրաստ ենք ձեր փոխառությունն ապահովելու նույնիսկ արտասահմանյան բոլոր բանկերի միջոցով, մենք այդ հնարավորությունը կստեղծենք: Մենք պատրաստ ենք լավ տոկոս վճարել, որովհետև ուզում ենք, որ գաղթականության հարցը լուծվի»³⁴: Սակայն, ինչպես տեսանք, Ազգերի լիգան և նրանում եղանակ ստեղծող տերությունները շահագրգռված չէին այդ հարցի արդարացի լուծմամբ:

Դատապարտելով հայ գաղթականության հարցում Ազգերի լիգայի երկերեսանի ու անճարակ վերաբերմունքը, սովետական կառավարությունը և ողջ հայ աշխատավորությունը միաժամանակ արժանին են հատուցել հայ ժողովրդի լավագույն բարեկամ,

³⁴ «Խորհրդային Հայաստան», 11 սեպտեմբերի, 1925 թ., № 210:

մեծ մարդասեր Ֆր. Նանսենին, որի անկեղծությունը երբեք չի կարելի կասկածել: Անկախ Ազգերի լիգայի խաղաքած դերից, հայ գաղթականության թշվառ կացության բարելավման ուղղությամբ խոշոր ծառայություններ ունի Ֆր. Նանսենը, մի մարդ, որի գիտական անխոնջ գործունեությունը անխզելիորեն կապված է եղել հասարակական համարձակ պայքարի հետ: Չնայած որ նա իր քաղաքական հայացքներով մանր-բուրժուական դեմոկրատ էր, մեծ համակրանքով վերաբերվեց Ռուսաստանում հաղթանակած Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությանը և դարձավ սովետական ժողովրդի անկեղծ բարեկամը: Նանսենը մեծ մարդասեր էր: Նրա պայծառ մարդասիրությունը դրսևորվեց շատ վաղ, դեռևս նրա դեպի Հյուսիսային բևեռ կատարած ճանապարհորդությունների դժվարին օրերին: Ուստի պատահական չէր, որ նա խորապես ցնցվեց 1914—1918 թթ. իմպերիալիստական սպանդից և հետագայում իր ուժերն ամբողջովին նվիրաբերեց պատերազմի զոհերին օգնելու վե՛հ գործին:

Սկսած 1920 թ. գարնանից Ֆր. Նանսենը Նորվեգիան ներկայացնում էր Ազգերի լիգայում և որպես ռազմագերիների գործերով լիգայի գերագույն կոմիսար մեծ ջանքեր գործադրեց օտարության մեջ տառապող հարյուր հազարավոր ռազմագերիներին իրենց ընտանիքները վերադարձնելու ուղղությամբ: Ֆր. Նանսենի ծավալած եռանդուն գործունեության շնորհիվ կարճ ժամանակամիջոցում հաջողությամբ իրականացվեց ռազմագերիների փոխանակությունն ու հայրենադարձությունը: Այնուհետև Նանսենն աչքի ընկավ դաժան երաշտի պատճառով 1921 թ. Սովետական Ռուսաստանում բռնկված սովի դեմ պայքարում՝ մարդասիրական օգնություն կազմակերպելով հազարավոր սովյալներին:

Նանսենը հազիվ էր վերջացրել Պոլուժիեի սովյալներին օգնելու իր դժվարին աշխատանքը, երբ ստիպված եղավ ձեռնամուխ լինել մարդասիրական մի այլ գործի: 1922 թ. սեպտեմբերին, ժնևում ներկա գտնվելով Ազգերի լիգայի նիստերին, Կոնստանդնուպոլսի իր ներկայացուցչից Նանսենն ստացավ հետևյալ բովանդակությամբ մի հեռագիր. «Անատոլիայի գաղթականների դրությունը շատ լուրջ է: Սպառնում է սովը: Առա-

ջարկում եմ օգնություն կազմակերպել: Հեռագրեցեք ձեր համաձայնությունը»³⁵:

Այդ կապակցությամբ Ազգերի լիգան Նանսենին առաջարկեց դբադվել հույն գաղթականությանն օգնություն կազմակերպելու գործով: Նանսենն ընդունեց այդ առաջարկությունը, անմիջապես մեկնեց Բալկաններ և այնտեղ լայն օգնություն կազմակերպեց հույն և այլազգի գաղթականներին:

Այնուհետև Նանսենի մարդասիրական հետագա գործունեությունը կապվում է հայ ժողովրդի՝ մասնավորապես սփյուռքահայ գաղթականության հետ: Մինչև 1925 թ. ամառը, երբ Նանսենն անձամբ եղավ Հայաստանում, նա բաղմիցս առիթներ էր ունեցել ծանոթանալու ինչպես հայկական հարցին, այնպես էլ աշխարհով մեկ ցրված հայ գաղթականության վիճակին:

Դեռևս 1922 թ. մարտի 1-ին սովյալներին օգնող Նանսենյան միջազգային կոմիտեի Մոսկվայի ներկայացուցիչ Ջոն Կորվինի և Մոսկվայում ՀՍԽՀ լիազոր-ներկայացուցիչ Ս. Տեր-Փարրիելյանի միջև ստորագրվել էր մի համաձայնագիր, ըստ որի՝ Սովետական Ռուսաստանի արտգործժողովում Գ. Վ. Չիչերինի և Ֆր. Նանսենի միջև 1921 թ. օգոստոսի 27-ին կնքված պայմանագիրը պետք է տարածվեր նաև Սովետական Հայաստանի վրա³⁶:

Նանսենը լավատեղյակ էր եվրոպայի, Մերձավոր արևելքի և այլ երկրների բազմահազար հայ գաղթականների ծանր վիճակին, որը մի քանի տարի շարունակ քննարկման առարկա էր Ազգերի լիգայի նիստերում ու նրա զանազան հանձնաժողովներում: Սակայն, մինչև Ազգերի լիգայի և իմպերիալիստական դիվանագիտության այլ ամբիոններից սոսկ «սփոփանքի» խոսքեր էին շոյվում հայ գաղթականության հասցեին և շարունակում խաբել նրան, գնալով ավելի էր վատթարանում տարագիրների վիճակը: Նրանցից շատերը հապճեպ կերպով երկրից փախած ու թուրքական սպանդից հազիվ փրկված լինելով, զուրկ էին անգամ իրենց քաղաքացիությունը հաստատող փաստաթղթերից, և նրանց իրավունքները չէին ճանաչվում օրենքի առջև: Միջազգային իրավունքի տեսակետից նրանք համարվում էին

³⁵ Տե՛ս Ֆր. Նանսեն, «Ֆրամ»-ը Բևեռային ծովում, Երևան, 1958, էջ 41—42:

³⁶ Տե՛ս ՀՍՍՀ ՀՍՇ ՊԿԱ, ֆ. 40/113, ց. 3, գ. 18, թ. 29—31:

պարզապես հայրենազուրկներ և ոչ որևէ պետության քաղաքացի կամ հպատակ³⁷։

Գաղթականությանը այդ անորոշ վիճակից հանելու նպատակով հայկական Ազգային պատվիրակության նորրնտիր Նախագահ Գ. Նորատունկյանը դիմեց Ազգերի լիգային՝ հայ տարագիրներին միջազգային ճանաչում ունեցող նանսենյան անձնագրերով ապահովելու խնդրանքով։ 1923 թ. սեպտեմբերին քննարկելով այդ հարցը, Ազգերի լիգան սկզբունքորեն ընդունեց հայ տարագիրների քաղաքացիությունը օրինականացնելու անհրաժեշտությունը³⁸։

Լիգայի խորհուրդը որոշեց Թուրքիայից հեռացած հայ տարագիրների համար նույնպես ստեղծել Ազգերի լիգայի հովանավորությունը վայելող մասնավոր անձնագրեր՝ այդ գործը հանձնարարելով Ֆր. Նանսենի գլխավորած կոմիտեին³⁹։

Ազգերի լիգայի խորհուրդը, 1924 թ. հունիսի 12-ին քննելով գաղթականության բարձրագույն կոմիսար Ֆր. Նանսենի ներկայացրած ղեկուցագիրը, որոշեց հանձնարարել լիգայի անդամ պետություններին՝ ընդունել լիգայի անունից հայ տարագիրներին տրվող ինքնության թղթերի՝ այսպես կոչված նանսենյան միջազգային անձնագրերի օրինականությունը⁴⁰։ Դրա շնորհիվ մի շարք երկրներում երկար տարիներ հազարավոր հայ գաղթականների քաղաքացիությունն ու իրավունքները ճանաչվեցին օրինական։

Հետագայում մի շարք այլ դյուրություններ ստեղծվեցին հայ գաղթականներին նանսենյան անձնագրեր տալու գործում։ Ազգերի լիգայի 1925 թ. նոր հրահանգի համաձայն, «երկար ատեն ի վեր Թուրքիայեն հեռացած և Թուրքիո հետ իրենց բոլոր կապերը խզած հայերեն անոնք, որ փափագ հայտնեն, իրավունք պիտի ունենան իրենց նանսենյան անձնագրերու վրա արձանագրել տալու իրենց միայն ծննդավայրը և հայ ազգությունը»⁴¹, այնուհետև անձնագրերի դիմաց հայ գաղթականներից գանձվող

գումարը հասցվում է նվազագույնի և այլն⁴²։ Նանսենյան անձնագրերը դրական նշանակություն ունեցան հայ տարագիրների արտասահմանյան թափառական կյանքը որոշ շահով թեթևացնելու իմաստով։ Այդ առումով միանգամայն զրվատանքի են արժանի այն մեծ ջանքերը և ջերմ հոգատարությունը, որ ցուցաբերեց Ֆր. Նանսենը հայ գաղթականներին իր անվամբ միջազգային լայն ճանաչում ունեցող անձնագրերով ապահովելու ուղղությամբ։

Ընդհանրապես, թե որքան ջերմ հոգատարություն էր տաժում Ֆր. Նանսենը հայ ժողովրդի հանդեպ, ի հակադրություն Ազգերի լիգայի, պարզ կերպով երևում է 1927 թ. հուլիսի 5-ին ՀՍԽՀ Ժողկոմխորհի նախագահին նրա գրած նամակի հետևյալ տողերից. «Ես կարծում եմ, որ հազիվ թե կարիք կա հայտնելու ձեզ, որ իմ սրտանց ցանկությունն է անել այն բոլորը, ինչ ես կարող եմ հայ գաղթականների և ձեր հիանալի ժողովրդի համար, որին ես ճանաչեցի Հայաստանում իմ կատարած անմոռանալի ճանապարհորդության ընթացքում։

Մի գրքում, որ ես արդեն ավարտում եմ, հույս ունեմ ծանոթացնելու ձեզ և համայն աշխարհին այն մասին, թե ինչ եմ մտածում ես ձեր ժողովրդի և նրա ապագա հնարավորությունների մասին»⁴³։

Հայաստանում եղած կարճ ժամանակամիջոցում Ֆր. Նանսենը ծանոթացավ մեր երկրի բազմաբեղուն կյանքի գրեթե բոլոր բնագավառներին, այցելեց գյուղատնտեսական շրջաններն ու արդյունաբերական ձեռնարկությունները, բնության տեսարժան վայրերն ու պատմական հնագույն հուշարձանները, ազգային թանգարաններն ու նորաբողոք ուսումնական հաստատությունները, տեսավ հայ աշխատավորի շինարարական տաղանդի կերտած կոթողներն ու լսեց ժողովրդական զուլալ մեղեդիները։ Այցելելով մեր երկիրը և տեղում ծանոթանալով նրա աշխատասեր ժողովրդին ու դարավոր մշակույթին, մեծ մարդասեր իր ստացած անմիջական տպավորությունների ու եվրոպական լեզուներով մինչ այդ լույս տեսած աշխատությունների հիման վրա հետագայում գրեց «Խաբված ժողովուրդ» գիրքը, որը շնա-

³⁷ Տե՛ս «Միություն», ՀԲԸՄ երկամսյա պաշտոնաթերթ, Փարիզ, 1929 թ., № 125, էջ 73—74։

³⁸ Տե՛ս «Վերջին լուր», 8 հոկտեմբերի, 1923 թ., № 2923։

³⁹ Տե՛ս նույն տեղում, 21 հունվարի, 1924 թ., № 3012։

⁴⁰ Տե՛ս նույն տեղում, 23 հունիսի, 1924 թ., № 3124։

⁴¹ Տե՛ս «Հայաստանի կոչակ», 3 հոկտեմբերի, 1925 թ., № 40, էջ 470։

⁴² Տե՛ս նույն տեղում, 27 փետրվարի, 1926 թ., № 9, էջ 410, նաև՝ 27 նոյեմբերի, 1926 թ., № 48, էջ 1658։

⁴³ ՀՍԽՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 40/113, ց. 3, գ. 820, թ. 15։

յած իր մեջ պարունակող որոշ ակնհայտ, բայց և անխուսափելի սխալներին, հայ ժողովրդի պատմության, նրա ողբերգական, բայց և հերոսական անցյալի, ինչպես նաև լուսավոր ու պայծառ ապագայի մասին եվրոպացի ուսումնասիրողների գրած լավագույն գործերից մեկն է: Հեռանալով Հայաստանից, Նանսենը շմոռացավ հայ ժողովրդին, այլ իր գրած գրքով ցույց տվեց, որ նրա հոգսերը շատ մոտ ու հասկանալի են իրեն: Նրա գիրքը տալիս է հայոց պատմության վերաբերյալ թեպետ համառոտ, բայց և հետաքրքիր մի ակնարկ:

Սակայն մեզ համար առավել ուշագրավ են Նանսենի գրքի այն մասերը, որոնք նվիրված են Սովետական Հայաստանի 20-ական թվականների առօրյային ու հայ գաղթականության հարցին: Այդտեղ նա զրվատանքով նկարագրում է սովետական իշխանության շինարար գործունեությունը Հայաստանում և մեղադրում Անտանտին ու Ազգերի լիգային, որոնք զրծելով իրենց բոլոր խոստումները, չկատարեցին իրենց պարտքը հայ ժողովրդի հանդեպ:

Չնայած Ազգերի լիգայում հօգուտ հայ գաղթականության ծավալած իր բազմամյա եռանդուն գործունեությանը, Նանսենին չհաջողվեց նրա հարցի լուծման ուղղությամբ շատ թե քիչ շոշափելի արդյունքների հասնել: Եվ իմպերիալիստական մեքենայությունների հետևանքով Ազգերի լիգայում հայ գաղթականության խնդրի վերջնական տապալումից վրդովված՝ Նանսենը նորվեգերեն, գերմաներեն, անգլերեն և ֆրանսերեն լույս ընծայեց իր գիրքը, որն ինչպես դիպուկ կերպով որակել է գերմանական հրատարակիչը՝ «մեղադրական է Անտանտի և Ազգերի լիգայի դեմ»⁴⁴:

Նանսենը փաստորեն խաբվեց իր բարի մտադրությունների մեջ, Ազգերի լիգայից ունեցած ակնկալությունների մեջ: Բայց խաբվելով հանդերձ, այդ ազնիվ մարդասերն իր հրատարակած գրքով վրեժխնդիր եղավ իրեն խաբողներից: Ինչպես բնութագրել է անգլիական «Թայմս» թերթը, «խաբված ժողովուրդը» «կարիճի պես իր պուշի մեջ խայթոց ունի, որ վիրավորում է հաճոյակատարությունը բոլոր նրանց, ովքեր խոստացան ավելին, քան ի վիճակի էին կատարելու»⁴⁵:

Դա բնավ պատահական բնութագրում չէր, այլ պատկերավոր կերպով ակնարկվում էր այն սուր քննադատությունը, որ Նանսենը ծավալել էր իր գրքի վերջին էջերում անգլիական կառավարության ու պետական գործիչների, ինչպես նաև Ազգերի լիգայի հասցեին: Ազգերի լիգայի մասին Նանսենը մասնավորապես գրել է. «Ինչո՞ւ է Ազգերի լիգան հանձնաժողովներ նշանակում հարցն ուսումնասիրելու համար, թե ի՞նչ նվազագույն բան կարելի է անել հայրենազուրկ հայ գաղթականների օգտին»: Արդյոք ոմանց անմաքուր խիղճը հանգստացնելու՞, իբր թե որևէ բան է արվում:

Բայց ի՞նչ նպատակով, քանի որ եղելությանը լավատեղյակ և գործը հասկացողների բարեխիղճ ուսումնասիրությունների հետևանքով արված ու շատերի կողմից ջերմորեն ընդունված առաջարկությունները շարժանացան մեծ տերությունների պաշտպանությանը, որոնք սառնասրտորեն մերժեցին ամենափոքր զոհողությունը՝ օգնելու համար ողորմելի՛ գաղթականներին, որոնց նկատմամբ նրանք հանձն էին առել այնքան ծանր պարտականություններ: Այս հարցին պատասխանում են, թե չի կարելի զոհողություններ կատարել ուրիշի համար, երբ մարդիկ հազիվհազ իրենց ցավն են հոգում: Բայց արդյոք ավելի լավ չէ՞ր լինի այդ մասին խորհել այն ժամանակ, երբ հաստատ խոստումների և պատվի անուճով կոչ էր արվում այդ դժբախտներին՝ Անտանտի գործի համար զոհաբերել ոչ միայն իրենց դրամը և ունեցվածքը, այլև իրենց կյանքը»⁴⁶:

Այնուհետև, վերլուծելով հայ գաղթականության հարցի շուրջը տեղի ունեցած անց ու դարձը, եղած, բայց չիրականացված բազմաթիվ խոստումները, Նանսենը գրում է. «Մարդ տարակուսած հարցնում է, թե ի՞նչն էր իրոք այդ բոլորի նպատակը: Արդյո՞ք այդ ամենը իսկապես դատարկ խոսքեր էին: Դատարկ խոսքեր, առանց լուրջ հիմքերի:

Իսկ Ազգերի լիգա՞ն: Միթե նա նույնպես չէր զգում ոչ մի պատասխանատվություն»⁴⁷:

Իմպերիալիստական տերությունները Ազգերի լիգայում դրնելով հայ գաղթականության հարցը, իրականում ցանկանում էին խաբել հասարակայնությանը, թե իբր իրենք մտածում են

⁴⁴ Տե՛ս «Նոր ուղի», 1929 թ., № 1, էջ 350:

⁴⁵ Նույն տեղում, 1930 թ., № 4—5, էջ 48:

⁴⁶ Fridtjof Nansen, Betrogenes Volk, էջ 331:

⁴⁷ Նույն տեղում, էջ 333:

հայ տարագիրների մասին: Այդ ճանապարհով նրանք ցանկանում էին Սովետական Հայաստանում երկարատև ժամանակով իրենց ձեռքը դրել տնտեսական կարևոր ձեռնարկներ և, այնուհետև կախման մեջ դրելով սովետական իշխանությունը, իրենց կամքը թելադրել նրան: Սովետական կառավարությունը, հանուն օտարության մեջ տառապող աշխատավոր հայ գաղթականության հարցի լուծման, ընդառաջելով Ազգերի լիգային, միաժամանակ ճշտորեն կռահեց իմպերիալիստական սերույթյունների իսկական նպատակները, ժամանակին հակահարված տվեց նրանց ստոր մեքենայություններին և կանխեց նրանց սպեկուլյատիվ հաշիվների իրականացումը: Ահա թե ինչու Ազգերի լիգան և այնտեղ բազմած դիվանագետները հրաժարվեցին որևէ բան անել հանուն հայ գաղթականության: Ահա թե ինչն էր իրոք այդ բոլորի նպատակը: Հենց այս էր, որ ժամանակին չէր կարողացել ըմբռնել Տր. Նանսենը: Հետո միայն նա հասկացավ, որ հայ գաղթականության հարցում Ազգերի լիգայի բռնած դերը ոչնչով չի տարբերվում մեծ տերությունների վերաբերմունքից և խիզախորեն բողոքեց Անտանտի ու լիգայի դեմ, կըրքոտ կերպով մերկացրեց նրանց ստոր գործունեությունը:

Վերջում Նանսենը գրում է. «Եվրոպայի ժողովուրդները և պետական գործիչները հոգնել են հավերժական հայկական հարցից:

Ինքնին հասկանալի է:

Այս հարցում նրանք միայն ձախողում կրեցին: Հայերի անունն անգամ նրանց նիրհող խիղճերում արթնացնում է հիշողություն խորտակված կամ անկատար հանդիսավոր խոստումների ծանր շղթաների մասին, խոստումներ, որոնց կատարման համար նրանք մատը մատին չէին խփել:

Այժմ խոսքը վերաբերում է այն փոքր, արյունոտ, սակայն նվիրված ժողովրդին, առանց նավթի ու ոսկու:

Վա՛յ հայ ժողովրդին, որ նրան ներքաշեցին եվրոպական քաղաքականության մեջ: Նրա համար ավելի լավ կլիներ, որ նրա անունը երբեք ոչ մի եվրոպական դիվանագետի շուրթերին չլիներ:

Սակայն հայ ժողովուրդը երբեք չհուսահատվեց: Մշտական,

համառ աշխատանքում նա սպասում էր, սպասում երկար: Նա սպասում է մինչև օրս էլ»⁴⁸:

Այո՛, հայ ժողովուրդն սպասում էր, սպասում էր, բայց արդեն ոչ երբեք եվրոպական իմպերիալիստներից, այլ ուսական հորիզոնում վեր բարձրացած կարմիր ու հրաբորբ դրոշից և Արարատի ստորոտում ծնունդ առած Հայաստանի անկախ ու սոցիալիստական պետությունից էր ակնկալում իր բաղձանքների իրականացումը:

Հայաստանում կատարած իր ուսումնասիրությունների ընթացքում Նանսենը եկավ այն հաստատ համոզման, որ «միակ վայրը, ուր ներկայումս կարելի է տեղավորել բնագործ հայ գաղթականներին՝ դա Սովետական Հայաստանն է: Այստեղ, ուր մի քանի տարի առաջ թագավորում էին ավերածությունը, թըշվառությունը, սովը, այժմ, սովետական կառավարության հոգատարության շնորհիվ, հաստատված է խաղաղություն և կարգ ու կանոն, բնակչությունը որոշ չափով նույնիսկ ունևոր է դարձել»⁴⁹:

1927 թ. կեսերին Նանսենը տեղեկություն է ստանում, որ Սովետական Հայաստանի կառավարությունը, այլևս չսպասելով Ազգերի լիգայի կեղծ որոշումներին, մտադիր է իր ներքին հնարավորությունների մոբիլիզացումով միջոցներ կուտակել Ղոբրի, Սև ջրի, Զանգիբասարի և մյուս հողամասերի ճահիճների շորացման ու ոռոգման համար: Ստանալով այդ ուրախալի լուրը, Նանսենն անմիջապես դիմում է ՀՍԽՀ Ժողկոմխորհին, հայտնելով, որ, եթե այդ ճիշտ է, ապա չնայած ինքը դեռևս չի կարողացել ոռոգման ծրագրի իրագործման և գաղթականների տեղավորման նպատակով գումար ձեռք բերել, պիտի փորձի վարկեր ստանալ՝ գոնե գաղթականությանը Սովետական Հայաստան տեղափոխելու համար⁵⁰:

Նանսենը մեծ գովասանքով է խոսում դեպի հայ գաղթականությունը սովետական կառավարության ցուցաբերած ուշադիր և հոգատար վերաբերմունքի մասին՝ նշելով, թե «մենք տեսնում ենք, որ դուք գաղթական եղբայրների համար անում եք ավելին, քան կարող եք: Ցանկանում ենք, որպեսզի ձեր գաղ-

⁴⁸ Ելույն տեղում, էջ 333—334:

⁴⁹ Տր. Նանսեն, «Տրամ»-ը Բեռոային ծովում, էջ 42:

⁵⁰ Տե՛ս ՀՍՍՀ ՀՄՄՇ ՊԿԱ, ֆ. 40/113, ց. 3, գ. 320, թ. 4:

թական եղբայրները շուտով միանան ձեզ հետ»⁵¹։ Նա միաժամանակ Ազգերի լիգայի խորհրդում հայտարարում է, որ եվրոպական տերությունների քաղաքականությունը ոչնչով չի նրպաստում հայ գաղթականներին Սովետական Հայաստան տեղափոխելու հարցի լուծմանը, հետևապես պետք է վերջ տալ այդ խաբեությունը⁵²։

Հայ ժողովրդի տարագիր հատվածի նկատմամբ հոգսը նանսենը մոռացության չտվեց մինչև իր կյանքի վերջը։ 1928 թ. նա շրջագայություն կատարեց ԱՄՆ-ում, որի ընթացքում դասախոսություններ ու զեկուցումներ կարգաց հայերի օգտին հանգանակություն ծավալելու նպատակով⁵³։ Այդ ժամանակ էլ հենց վերջնականապես համոզվելով, որ կապիտալիստական աշխարհը քար անտարբերությամբ է վերաբերվում հայ գաղթականության տառապանքներին և չհանդուրժելով, որ Ազգերի լիգան շարունակի խաբել հայ տարագիրներին, նանսենը 1929 թ. աշնանը առաջարկ մտցրեց լիգայի ընդհանուր ժողով՝ այլևս անօգուտ կերպով չբարդվել Սովետական Հայաստանում հայ գաղթականների տեղավորման ծրագրով։ Ազգերի լիգայի 1929 թ. սեպտեմբերի 21-ի նիստում ընդունվում է նանսենի առաջարկը, և 1920 թ. ի վեր լիգայի շրջանակներում ապարդյուն կերպով արծարծված այդ հարցը հանվում է օրակարգից⁵⁴։

Միաժամանակ որոշվում է Գերմանիային, Նորվեգիային, Լիւմբինիային և Հունաստանին «զերծ կացուցանել նախապես իրենց ստանձնած հանձնառություններեն» և կյուբսեմբուրգի կառավարությանն ու երկու անհատ անձնավորությունների ետ վերադարձնել հայ գաղթականների տեղափոխության ֆոնդին հատկացրած շնչին գումարները⁵⁵։

Ըստ տեղեկությունների, մոտ մի հնգամյակի ընթացքում (1925—1929 թթ.) նանսենին հաջողվել էր հայ գաղթականների տեղափոխման և նախատեսված հողամասերի ոռոգման համար հավաքել հազիվ 1,6 միլիոն ուրբի⁵⁶, աննշան մի գումար նման

ձեռնարկի իրականացման համար։ Այնպես որ, բնավ չարդարացան այդ ճանապարհով հայ գաղթականության հարցի լուծման նանսենի հույսերը։ Ինչպես ժամանակին ճիշտ կերպով նշվել է սովետահայ մամուլում, մեծ մարդասերի բոլոր ձեռնարկումները՝ օգնության հասնելու հայ գաղթականներին՝ «շարժելով Եվրոպայի և Ամերիկայի գուլթը», չուրն ընկան։ Դա մի ավելորդ անգամ ապացուցեց, որ միանգամայն արդարացի է եղել սովետական կառավարությունը՝ իմպերիալիստական տերություններին և նրանց դիվանագետներին համարելով հայ ժողովրդի ոխերիմ թշնամիներ՝ ոչ մի հույս չկապելով նրանց հետ և ուրիշներին թողնելով նրանցից «բարիքներ» ակնկալելու պարտականությունը։

Ինչպես տեսանք, օտարության մեջ դեգերող սփյուռքահայ աշխատավորների մի զգալի մասի հայրենադարձությունը իրականացվեց ոչ թե Ազգերի լիգայի միջոցով (որին սովետական կառավարությունը ամեն կերպ ընդառաջում էր հանուն հայ գաղթականության հարցի շուտափույթ լուծման, բայց որն իրականում ոչինչ չկարողացավ կամ շցանկացավ զլուխ բերել), ոչ թե իմպերիալիստական տերությունների օգնությամբ (որոնք ուղղակի պատասխանատվություն էին կրում հայ գաղթականության աննախանձելի վիճակի համար), այլ սովետական կառավարության գործադրած գերագույն ջանքերի շնորհիվ և Սովետական Հայաստանի աշխատավորների՝ դեպի իրենց տարագիր եղբայրներն ու քույրերն ունեցած ջերմ հոգատարության և հանուն նրանց կատարած զոհողությունների։

⁵¹ Նույն տեղում, գ. 373, թ. 17։

⁵² Տե՛ս «Правда», 28 սեպտեմբերի, 1927 թ., № 221։

⁵³ Տե՛ս «Հայաստանի կոչնակ», 12 մայիսի, 1928 թ., № 19, էջ 599։

⁵⁴ Տե՛ս «Միություն», 1929 թ., № 135, էջ 237։

⁵⁵ Տե՛ս նույն տեղում։

⁵⁶ Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 11 ապրիլի, 1929 թ., № 83։

Կ Լ Ո Ւ Ե Ն Զ Ի Ե Գ Ե Ր Ո Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԿՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅՐԵՆԻՔ—ՍՓՅՈՒՒՔ ԿԱՊԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ
ՀԱՅՐԵՆԱՒԱՐՁՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

Քայքայված երկիրը վերաշինելու, հանրապետությունում կուտակված արևմտահայ գաղթականությանն օգնելու, հայրենիքի և սփյուռքի միջև կապերը զարգացնելու, ինչպես նաև հայրենագարծությունն իրականացնելու գործում որոշակի դրական դեր է կատարել Հայաստանի օգնության կոմիտեն (204):

Հայաստանի օգնության կոմիտեն կազմակերպվել է 1921 թ. սեպտեմբերին, Երևանում, մի խումբ հասարակական գործիչների ու մտավորականների նախաձեռնությամբ, որոնք խորապես մտահոգված լինելով մեր ժողովրդի ճակատագրով, ցանկանում էին միավորել ազգի բոլոր կենսունակ ուժերը՝ շուտափույթ կերպով երկիրը ոտքի կանգնեցնելու նպատակով:

204-ի հիմնադիր անդամների թվում էին Ս. Կասյանը, Ս. Համբարձումյանը, Ս. Տեր-Գաբրիելյանը, Ար. Երզնկյանը, Գ. Շահվերդյանը, Ս. Փիրումյանը, Ս. Մարտիկյանը, Հովհ. Թումանյանը, Նար-Դոսը, Գ. Դեմիրճյանը, Մ. Սարյանը, Եղ. Թաղևոսյանը, Ռ. Մելիքյանը, Հ. Մանանդյանը, Մ. Աբեղյանը, Լեոն, Ստ. Մալխասյանը, Վ. Արծրունին, Գր. Զուբարյանը և ուրիշներ:

204-ի հիմնադիրների նպատակն էր մի կողմից՝ շինարար աշխատանքի ներգրավել այն բոլոր խավերին, որոնք զանազան պատճառներով հեռու էին կանգնել երկրում կատարվող վերափոխություններից, իսկ մյուս կողմից՝ ճշմարտացի ինֆորմացիայի բազմազան միջոցներով ցրել սովետական իշխանության

շուրջը թշնամական տարրերի կողմից տարածվող զրպարտությունների ու ստահող լուրերի հետևանքով սփյուռքում ստեղծված անվստահության մթնոլորտը: Այն ժամանակվա դժվարին պայմաններում նման մի անկուսակցական, հասարակական կազմակերպության միջոցով հատկապես սփյուռքահայության կենսունակ ուժերը միավորելու, նրան հայրենիքի շուրջը համախըմբելու խնդիրը ուներ խիստ կարևոր նշանակություն:

204-ի նման մի կազմակերպության ստեղծումը, անշուշտ, արդյունք էր նաև այն շրջահայաց ու խոհեմ քաղաքականության, որն իրականացվում էր սփյուռքահայության նկատմամբ հանրապետության կուսակցական ու պետական ղեկավարության կողմից: Այն ժամանակ ՄԽՀ Ժողկոմխորհի նախագահ Ալ. Մյասնիկյանը, կուսակցական ու պետական մեծ գործչին հատուկ հեռատեսությամբ և նրբանկատությամբ, 204-ին մեծ կարևորություն էր տալիս ոչ այնքան նրա բերելիք նյութական օժանդակության, որքան արտասահմանի հայ դանդաղածներին Սովետական Հայաստանի մասին ճշմարտացի տեղեկություններ հաղորդելու և հայրենիքի հետ նրանց կապերը զարգացնելու իմաստով: Իր առջև զրված նպատակներն իրականացնելու համար 204-ը պետք է ունենար իր կենտրոնական վարչությունը Երևանում, իսկ սկզբնական կազմակերպությունները կամ մասնաճյուղերը՝ սովետական մյուս հանրապետությունների հայաբնակ վայրերում ու արտասահմանյան հայկական դաղձօջախներում, որոնց միջոցով էլ արտերկրի հայությունը կկարողանար կապվել մայր հայրենիքի հետ:

204-ի հիմնադիր համագումարից անմիջապես հետո ստեղծվեցին նրա տեղական մասնաճյուղերը՝ Թիֆլիսում (1921 թ. հոկտեմբեր), Բաթումում (1921 թ. նոյեմբեր), Մոսկվայում և Բաքվում (1922 թ. փետրվար): 204-ի բազմաթիվ մասնաճյուղեր կազմակերպվեցին հատկապես նրա երրորդ համագումարից (1923 թ. հոկտեմբեր) հետո՝ Աստրախանում, Խարկովում, Կիևվում, Օդեսայում և Հյուսիսային Կովկասի ու Միջին Ասիայի գրեթե բոլոր հայաշատ քաղաքներում:

Գաղութահայությանը դեպի Սովետական Հայաստան տրամադրելու, նրա կողմից երկրին օգնություն կազմակերպելու և 204-ի մասնաճյուղեր հիմնադրելու տեսակետից կարևոր նշանակություն ունեցավ 204-ի կենտրոնական վարչության կողմից 1921 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին 204-ի առաջին

¹ Տե՛ս 2ՍՍՀ 22ՍՀ ՊԿԱ, ֆ. 178, ց. 1, գ. 249, թ. 21—26:

նախագահ, բանաստեղծ Հովհ. Թումանյանի գլխավորած պատվիրակության առաքելություններ Կ. Պոլիս: Պատվիրակության նպատակն էր, ինչպես այդ մասին գրել է Հովհ. Թումանյանը, «...մեր կոմիտեին համանման մի մարմին ստեղծել Պոլսում, կապել մերին հետ, և նրա հետ միասին ազդել ավելի հեռու մեր գաղութներին վրա, առաջ բերելու նույն տեսակի մարմիններ»²: 204-ի պատվիրակությանը հաջողվեց միավորել մինչ այդ Կ. Պոլսում գոյություն ունեցող մի շարք բարեգործական ու մշակութային կազմակերպությունների միմյանցից անջատ ծավալած գործունեությունը և այն ուղղել հայրենիքի օգտին: Հովհ. Թումանյանի պատվիրակությունը հատկապես սերտ կապեր հաստատեց այսպես կոչված «Հայրենիքի օգնության մարմնի» (20Մ) հետ, որն ստեղծվել էր 1920 թ. հոկտեմբերին և բացի Կ. Պոլսից մասնաճյուղեր ունեցր նաև Ռումինիայում, Բուլղարիայում և այլ վայրերում: 20Մ-ի նպատակն էր նյութական ու բարոյական աջակցություն կազմակերպել Հայաստանին: Սակայն, երբ 204-ի պատվիրակությունը Կ. Պոլիս հասավ, 20Մ-ին գտավ խիստ երերուն, փաստորեն անգործության մատնված վիճակում՝ դաշնակների հակասովետական պրոպագանդայի և որոշ շահող նաև ուսման վարձերի անտարբեր վերաբերմունքի հետևանքով: 204-ի պատվիրակությանը հաջողվեց կարճ ժամանակամիջոցում պոլսահայությանը ծանոթացնել հայրենիքի իրական դրությանը և սովետական կառավարության ճիշտ քաղաքականությանը՝ բեկում առաջ բերելով դեպի Սովետական Հայաստանն ունեցած նրանց վերաբերմունքի մեջ: Այդ ամենի շնորհիվ զգալի շահով ամրապնդվեցին նաև 20Մ-ի դիրքերը, շախտածացավ նրա գործունեությունը: 1921 թ. դեկտեմբերի 1-ին 204-ի և 20Մ-ի ներկայացուցիչների ստորագրություններով Կ. Պոլսից մի շրջաբերական ուղարկվեց գաղութահայ բոլոր կարևոր կենտրոնները: Այդ շրջաբերականում կոչ էր արվում տեղերում ստեղծել Հայաստանի օգնության կոմիտեի մասնաճյուղեր, կապվել նրա կենտրոնական վարչության հետ և ամեն կերպ նպաստել երկրի վերաշինության ու գաղթականության նյութական վիճակի բարելավման գործին³: Վերոհիշյալ կոչը լայն արձագանք գտավ սփյուռքահայության մեջ: Ամենուրեք սկսեցին կազմակերպվել հայրենիքի օգտին հանդանակու-

թյուններ ու նվիրատվություններ: Չանցավ մի երկու ամիս և Հայաստան հասան այլուր, դեղորայք, հագուստեղեն և այլ միջոցներ⁴: Շուտով Կ. Պոլսի հայկական կարմիր խաչի ընկերությունը Երևան ուղարկեց հինգ հոգուց բաղկացած բժշկական միջուկ՝ երեք վագոն դեղորայքով և հիվանդանոցի ու դեղատան սարքավորումներով: 20Մ-ը Հայաստան գործուղեց հատուկ պատվիրակություն՝ երկրի դրությանը ծանոթանալու և ավելի արդյունավետ օգնություն կազմակերպելու միջոցառումներ մշակելու նպատակով⁵:

Սակայն մինչև 1924 թ. սկզբները 204-ը արտասահմանում գրեթե չկարողացավ մասնաճյուղեր կազմակերպել: Ինչպես և պետք էր սպասել, գաղութահայ ունևոր խավերն ու հետադիմական հակասովետական ուժերը մեծ մասամբ բացահայտ թշնամական, մասամբ էլ անտարբեր դիրք բռնեցին «պոլշեկյան» Հայաստանի հանդեպ և նրան համակրող կազմակերպությունների ստեղծման գործում: Այդ տեսակետից բացառություն էր կազմում իրանահայ գաղթօջախը, ուր շնորհիվ Սովետական Հայաստանի լիազոր-ներկայացուցչության և տեղի առաջադիմական ուժերի ջանքերի 204-ի մասնաճյուղեր էին կազմակերպվել դեռևս 1922 թ. փետրվարին: Նման վիճակը, հասկանալի է, որ 204-ի կենտրոնական վարչությանը բավարարել չէր կարող, ուստի նա վճռական քայլեր էր կատարում արտասահմանում մասնաճյուղեր ստեղծելու ուղղությամբ, մանավանդ որ այդ գործում մեծ ակտիվություն էին ցուցաբերում նաև սփյուռքահայ լայն զանգվածները: Ահա այդ համատեղ ջանքերի շնորհիվ 1924—1925 թթ. 204-ի արտասահմանյան մասնաճյուղեր կազմակերպվեցին Մերձավոր արևելքի, Բալկանների, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի և այլ երկրների հայկական գաղթօջախներում⁶: Հունաստանի հայ աշխատավորները առաջիններից մեկը հիմնեցին 204-ի տեղական մասնաճյուղեր և, չնայած իրենց քաղաքական ու տնտեսական անբարենպաստ կացությանը, զգալի միջոցներ ու տրամադրեցին 204-ի կենտրոնական վարչությանը⁷: Եվ այս-

⁴ Տե՛ս նույն տեղում, ֆ. 4/114, ց. 1, գ. 3, թ. 101—102:

⁵ Տե՛ս նույն տեղում:

⁶ Տե՛ս «204-ի տեղեկատու», ամսագիր, օրգան 204-ի կենտրոնական վարչության, Երևան, 1928 թ., № 1, էջ 56—60:

⁷ Տե՛ս «Հրավիրակ», ամսագիր, օրգան 204-ի կենտրոնական վարչության, Երևան, 1925 թ., № 1, էջ 18:

² Տե՛ս նույն տեղում, գ. 393, թ. 15:

³ Տե՛ս նույն տեղում:

պես գնալով աշխուժանում էր 204-ի գործունեությունը, այն դառնում էր հայրենիքի և սփյուռքի միջև կապի կարևոր օղակ:

* *

Հայաստանի օգնության կոմիտեն իր 16-ամյա գոյության ընթացքում անցել է գործունեության երեք հիմնական փուլ: Առաջին փուլն ընդգրկում է 1921—1923 թթ., երբ 204-ի հիմնական ուշադրությունը կենտրոնացվում էր կազմակերպական հարցերի վրա, ինչպես նաև բնակչության՝ հատկապես գաղթականության համար պարեն, հագուստ, դեղորայք և առաջին անհրաժեշտության այլ ապրանքներ ձեռք բերելու ու բաշխելու վրա:

204-ի գործունեության աշխուժացման իմաստով կարևոր նշանակություն ունեցավ նրա երկրորդ համագումարը, որը կայացավ 1922 թ. հուլիսին, Երևանում: Համագումարի աշխատանքներին մասնակցում էին նաև 20Մ-ի և գաղութահայ այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ: Ամփոփելով կատարված աշխատանքները, համագումարը հանձնարարեց կենտրոնական վարչությանը՝ այսուհետև ևս շարունակելով կարիքավոր բնակչությանն օգնություն ցույց տալու գործը, առաջիկայում առավել գործուն մասնակցություն ունենալ երկրում ծավալված շինարարական աշխատանքներին:

204-ի գործունեության այդ կողմը ավելի շեշտվեց նրա երրորդ համագումարի կողմից (հոկտեմբեր, 1923 թ.), որին նույնպես մասնակցում էին արտասահմանյան տարբեր երկրների հայկական գաղթօջախների ներկայացուցիչներ: Համագումարը, նկատի ունենալով բնակչության նյութական դրության որոշ բարելավումը, խնդր դրեց վերջ տալ միջոցների օգտագործման սպառողական բնույթին և որդեգրել գործունեության այնպիսի ուղիներ, որոնք մնայուն ազդակ հանդիսանային երկրի տնտեսական ու մշակութային կյանքում:

204-ի գործունեության երկրորդ փուլում՝ 1923—1931 թթ., ուշադրության կենտրոնում էր սփյուռքահայ աշխատավորներին կազմակերպչորեն համախմբելու գործը: Երկրի ներսում 204-ը այդ շրջանում իրականացրեց շինարարական ու մշակութային կարևոր միջոցառումներ: Կազմակերպական եռանդուն գործունեության ծավալման շնորհիվ արդեն 30-ական թվականների

սկզբին 204-ն արտասահմանում ուներ մոտ 200 մասնաճյուղեր, ավելի քան 10.000 անդամներով⁸:

Այդ փուլում 204-ի կենտրոնական վարչության կողմից արտասահման մեկնեցին մի շարք պատվիրակություններ ու անհատ գործիչներ, պրոպագանդայի համար օգտագործվեցին գրականությունը, կինոնկարները, Հայաստանի տնտեսական ու մշակութային նվաճումների շրջիկ ցուցահանդեսները, հրատարակվեցին գեղարվեստական զանազան լաբումներ ու բացիկներ, պարբերականներ և այլն, որոնց շնորհիվ երկրի մասին սփյուռքում միակ ճիշտ և հանգամանորեն տեղեկություն տվող կազմակերպությունը դարձավ 204-ը:

204-ի գործունեության երրորդ փուլն սկսվեց 1931 թվականից, երբ մեծ թափ ու լայն ծավալ ստացավ նրա կենտրոնական վարչության ղեկավարությամբ հայրենակցական միությունների կողմից նախորդ տարիներին սկսված նոր ավանների կառուցումը Հայաստանում: Երկրի տնտեսական կյանքի բարելավմանը զուգընթաց՝ լայն հնարավորություններ ստեղծվեցին նաև ավելի մեծ մասշտաբով ներգաղթի կազմակերպման համար: Հայրենադարձության իրականացման գործում 204-ի կենտրոնական վարչությունն ու նրա արտասահմանյան մասնաճյուղերը ունեցան գործուն մասնակցություն: 204-ի նախաձեռնությամբ 1933 թ. հունիսին Փարիզում ստեղծվեց համագաղութային մասշտաբով «Ներգաղթի և բնակարանային շինարարության ֆոնդ», որի կենտրոնական մարմնի կազմում ընդգրկված էին Արշակ Չոպանյանը, այն ժամանակ Փարիզում տարագրության մեջ գտնվող Ավետիք Իսահակյանը և ուրիշներ: Այդ ֆոնդում հավաքվող գումարները 204-ի կենտրոնական վարչության միջոցով հատկացվում էին ներգաղթի իրականացմանը և հայրենադարձների համար բնակարանների կառուցմանը⁹:

• • •

1926 թ. սկզբներին, երբ արդեն 204-ը լայնորեն իր կազմակերպություններն էր տարածել արտասահմանյան հայկական

⁸ Տե՛ս «204», ամսագիր, օրգան արտասահմանյան 204-երի, Փարիզ, 1935 թ., № 2, էջ 583—584:

⁹ Տե՛ս 2ՍՍ2 22ՍԵ ՊԿԱ, ֆ. 326, ց. 1, գ. 45, թ. 1—5:

գաղթօջախներում, երբ արդեն երկրի բնակչությունը բնավ կարիք չունենր ՍՍՀՄ-ում գոյություն ունեցող մասնաճյուղերից ստացվող աննշան օժանդակությունների, կենտրոնական վարչությունը որոշեց դադարեցնել վերջիններիս գործունեությունը:

Այդ շրջանում զգալի շափով փոխվել էր նաև ՀՕԿ-ի արտասահմանյան մասնաճյուղերի գործունեության բովանդակությունը: Նրանք հիմնականում դարձել էին գաղութահայությունը մայր հայրենիքի հետ կապող առաջադիմական մասսայական կազմակերպություններ: Սփյուռքահայությունը Սովետական Հայաստանի հետ կապելու և նրա մասին ճշմարտացի տեղեկություններ տալու իմաստով այդ տարիներին մեծ դեր են կատարել ՀՕԿ-ի կենտրոնական վարչության կողմից արտասահման մեկնած պատվիրակությունները: Այսպես, 1924 թ. վերջերի՝ արտասահման գործուղվեց ՀՕԿ-ի կենտրոնական վարչության նախագահ, ՀՍԽՀ հողագործության ժողկոմ Ար. Երզնկյանը: Նա եղավ Գերմանիայում, Ֆրանսիայում, Բելգիայում և Անգլիայում: Ամենուրեք նա բազմաթիվ հաղիպումներ ունեցավ գաղութահայ աշխատավորության ներկայացուցիչների հետ, հանդես եկավ Սովետական Հայաստանի մասին հանգամանալից զեկուցումներով ու ելույթներով, օգնեց հիմնելու ՀՕԿ-ի մասնաճյուղեր և Բարեգործական միության հետ կնքեց մի շարք համաձայնագրեր՝ Հայաստանին կտակված որոշ գումարների օգտագործման վերաբերյալ¹⁰:

Հայաստան վերադառնալուց հետո, 1925 թ. փետրվարին, ՀՕԿ-ի կենտրոնական վարչության ընդլայնված պլենումում Ար. Երզնկյանը հանդես եկավ հանգամանալից զեկուցումով, որի մեջ մանրամասնորեն անդրադարձավ իր ուղևորության արդյունքներին: Նա իր զեկուցման մեջ ներկայացրեց գաղութահայության թշվառ կյանքի տխուր պատկերը, նրա աշխատավորական խավերի անվերապահ համակրանքը Սովետական Հայաստանի նկատմամբ: Ար. Երզնկյանը նշեց, որ սփյուռքահայության ամենահիմնական հոգսերից մեկը որևէ տեղ դեռևս չհիմնավորված տարագիրների ու որբերի խնդիրն է:

Հատկապես խիստ մտահոգիչ էր հայ որբերի հարցը, քանի որ նրանց խնամքով զբաղվելու կոչված գաղութահայ բարեգործական հաստատությունները փաստորեն նրանց ցրում էին զա-

նագան ֆիրմաների ու անհատների միջև՝ Ֆրանսիայից մինչև Կանադա: Հասկանալի է, թե ինչ տխուր հետևանքների կարող էր հասցնել հայ որբուկների ճակատագրի նկատմամբ նման անհոգի վերաբերմունքը: Զեկուցողը խնդիր դրեց, որպեսզի ներգաղթողների մեջ ավելի շատ որբեր բերվեն հայրենիք, որտեղ նրանք կկարողանան ստեղծել սեփական օջախներ՝ վայելելով պետական լայն հոգատարություն¹¹:

Սովետական Հայաստանի և սփյուռքահայության կապերի ամրապնդման, ինչպես նաև արտասահմանում ՀՕԿ-ի մասնաճյուղերի գործունեության հետագա աշխուժացման իմաստով կարևոր դեր խաղաց ՀՕԿ-ի կենտրոնական վարչության կողմից 1925 թ. վերջերին հայկական գաղթավայրերը մեկնած նոր պատվիրակությունը: Այդ պատվիրակությունը, որի կազմի մեջ մտնում էին կենտրոնական վարչության քարտուղար Գրիգոր Վարդանյանը, վարչության անդամ Կարեն Միքայելյանը և Հայաստանի կարմիր խաչի նախագահ բժիշկ Սպանդարատ Կամսարականը, արտասահման մեկնեց 1925 թ. նոյեմբերի 5-ին և հայրենիք վերադարձավ 1926 թ. դեկտեմբերի 1-ին, գրեթե 13 ամիս շրջագայելով հայկական գաղթօջախներում: Պատվիրակությունը եղավ Գերմանիայի, Բելգիայի, Շվեյցարիայի, Ֆրանսիայի, Անգլիայի ու Ամերիկայի գրեթե բոլոր հայաշատ քաղաքներում և ծանոթացավ սփյուռքահայության կյանքի տարբեր կողմերին: Պատվիրակության անդամները հանգամանորեն ուսումնասիրեցին ՀՕԿ-ի արտասահմանյան մասնաճյուղերի գործունեությունը, հիմնադրեցին նորերը և այլ ազգագույն գործեր կատարեցին: Նրանք ամենուրեք հանդես եկան Սովետական Հայաստանի նվաճումների և ՀՕԿ-ի հետագա անելիքների մասին դասախոսություններով ու զեկուցումներով, որոնք ուղեկցվում էին Հայկինոյի նկարահանած ֆիլմերով կամ ուրիշ ցուցադրական նյութերով: Պատվիրակությունն իր հետ արտասահման էր տարել նաև մի փոքրիկ շրջիկ ցուցահանդես, գեղարվեստական բազմաթիվ պատկերազարդ ալբոմներ ու դիագրամներ, որոնք որոշակի գաղափար էին տալիս հանրապետության տնտեսական ու մշակութային վերելքի մասին: Հատկապես մեծ հաջողություն ունեցավ ՀՕԿ-ի կենտրոնական վարչության պատվերով Հայկինոյի նկարահանած «Խորհրդային Հա-

¹⁰ Տե՛ս նույն տեղում, ֆ. 178, ց. 1, գ. 66, թ. 66—68:

¹¹ Տե՛ս նույն տեղում:

յաստան» վավերագրական կինոնկարը, որն ընդգրկում էր հանրապետության բազմաբովանդակ կյանքի բոլոր բնագավառները: Ինչպես հաղորդում են պատվիրակության անդամներն իրենց տպավորություններում, ամեն անգամ, երբ դահլիճում մատում էր լույսը և խավարի մեջ պայծառորեն երևում էին Սովետական Հայաստանի գերբն ու պետական դրոշը, հայրենակարոտ հուզված սրտերը հրճվանքի գերազույն պահ էին ապրում և խանդավառ օվացիա սարքում ի պատիվ ազատագրված հայրենիքի: Սփյուռքահայության վրա այդ կինոնկարի գործած ազդեցությունն այնքան ուժեղ էր, որ մի շարք երկրներում դաշնակները դիմել էին տեղական իշխանություններին, խնդրելով արգելել նրա ցուցադրումը:

Պատվիրակության ծավալած եռանդուն գործունեության շնորհիվ ամրապնդվում են ՀՕԿ-ի մասնաճյուղերը, կազմակերպվում են նորերը: Այդ շրջանում արդեն դրանց թիվը Ֆրանսիայում հասնում էր 32-ի, ԱՄՆ-ում՝ 45-ի, բազմաթիվ մասնաճյուղեր էին ստեղծվել նաև հայկական այլ գաղթավայրերում: ՀՕԿ-ի շուրջն էին համախմբվում հատկապես աշխատավորական տարրերը, որի շնորհիվ այն դառնում էր սովետական օրինատացիայով սփյուռքահայ զանգվածների անկուսակցական ամենաբազմանդամ կազմակերպությունը:

Հայրենիք—սփյուռք կապերի ամրապնդումից և սփյուռքահայության բարոյական աջակցությունից բացի, պատվիրակությունը ձեռք բերեց նաև նյութական որոշակի արդյունքներ: ՀՕԿ-ի Ֆրանսիայի, Անգլիայի և ԱՄՆ-ի մասնաճյուղերը զգալի գումարներ տրամադրեցին ներգաղթողների համար Հայաստանում բնակարաններ կառուցելու ֆոնդին: Այդ միջոցներով հետագայում Երևանում կառուցվեցին մի քանի շենքեր, որտեղ օթևան գտան տարագրությունից հայրենիք վերադարձած հարյուրավոր ընտանիքներ: Այսպես, օրինակ՝ ԱՄՆ-ում կազմակերպված Մալաթիայի հայրենակցական միությունը Հայաստան ներգաղթող մալաթիացիների համար պատվիրակությանը հանձնեց 30000 դոլար: Էջմիածնի շրջանի Էվջիլարի նորակառույց ջրանցքով ոռոգվող հողերի վրա հիմնադրված նոր Եվդուկիա ավանի համար Բելգիայի հայ գաղութը տրամադրեց 27000 ֆելգիական ֆրանկ: Այլ գաղութներից ու հաստատություններից ստացվեց 20000 դոլար Հայաստանում մի քանի գյուղական դպրոցներ կառուցելու համար, 24000 ուրբի՝ մեղվաբուծական

դպրոց հիմնելու, 70000 ֆրանկ՝ Երևանում ակնաբուժական կլինիկա կազմակերպելու համար և այլն: Պատվիրակությունը Հայաստան բերեց նաև մեծ քանակությամբ լաբորատոր սարքավորումներ՝ Երևանի համալսարանի համար և ժողովրդական հերոս Անդրանիկի սուրը, որը զորավարը նվիրել էր հայրենի թանգարանում պահելու համար¹²:

Պատվիրակության անդամները արտասահմանում զբաղվեցին նաև մի քանի տասնյակի հասնող հայկական կտակների, նվիրատվությունների և ազգային այլ գումարների խնդրով: Նրանց հավաքած նյութերի և ՀՍԽՉ Ժողկոմխորհին առընթեր «կտակների ուսումնասիրության հանձնաժողովի» ձեռք բերած փաստաթղթերի հիման վրա 1928 թ. ՀՕԿ-ը Մոսկվայում հրատարակեց պատվիրակության անդամ Կարեն Միքայելյանի գրած «Հայ ժողովրդական հարստությունները արտասահմանում» գրքույկը: Վերջինս մեծ իրարանցում ու շփոթ առաջացրեց գաղութահայ «բարեգործների» շրջանում: Այդ գրքույկը հնարավորություն տվեց սփյուռքահայությանը ճանաչելու իր կեղծ «բարեգործներին», որոնք տարիներ շարունակ ժողովրդից թաքցրած էին պահում իրականում հենց նրան պատկանող ազգային հսկայական գումարները: Դրա շնորհիվ սփյուռքահայ առաջադիմական խավերը հնարավորություն ստացան իրենց արդար բողոքի ձայնը բարձրացնելու հանրային միջոցները շոսյուղներին դեմ և ըստ կարելիության այն օգտագործելու ազգային մշակութային նպատակներով:

1928 թ. ամռանը ՀՕԿ-ի կենտրոնական վարչությունը մի նոր պատվիրակություն (Գրիգոր Վարդանյան, Արամայիս Մուսայելյան) գործուղեց արտասահման: Այդ պատվիրակությունը նույնպես շուրջ մեկ տարի շրջադայեց Եվրոպայի և Ամերիկայի հայկական գաղթօջախներում, ծանոթացավ սփյուռքահայ աշխատավորության վիճակին և ՀՕԿ-ի արտասահմանյան մասնաճյուղերի գործունեությանը: Պատվիրակությունը ղեկուցումներով, ելույթներով, լուսանկարների և ցուցադրական այլ նյութերի միջոցով սփյուռքահայությանը ներկայացրեց հանրապետության

¹² Մանրամասն տե՛ս ՀՍՍՀ ՀՍՍՀ ՊԿԱ, ֆ. 178, ց. 1, գ. 298, թ. 10—14 (պատվիրակության հաշվետվությունը տրված 204-ի կենտրոնական վարչության 1926 թ. դեկտեմբերի 31-ի նիստում), նաև՝ «Նորհրդային Հայաստան», 21 դեկտեմբերի, 1926 թ., № 291:

կյանքը¹³։ Պատվիրակությունն էր հետ արտասահման էր տարել նաև «Խորհրդային Հայաստանն այսօր» վավերագրական ֆիլմը, որը մեծ հետաքրքրություններ էր սփյուռքահայերի կողմից։ Այդ նույն ժամանակ ԱՄՆ-ում և այլ երկրներում հաջողությամբ ցուցադրվում էին Հայպետլուսկինոյի արտադրած «Նամուս» և «Չար ոգի» գեղարվեստական կինոնկարները¹⁴։

Այսպիսով, ՀՊԿ-ի պատվիրակությունների, ինչպես նաև Սովետական Հայաստանի ղեկավար գործիչների ու մտավորականների արտասահմանյան ուղևորությունները, պրոպագանդայի և ինֆորմացիայի այլ բազմազան միջոցները արդեն 20-ական թվականների վերջերին մեծապես ուժեղացրին ՀՊԿ-ի դիրքերը հայկական գաղթօջախներում գոյություն ունեցող ուրիշ կազմակերպությունների համեմատությամբ։

Սփյուռքահայությանը Սովետական Հայաստանի մասին ճշմարտացի ինֆորմացիա տալու տեսակետից կարևոր դեր էին կատարում ՀՊԿ-ի պարբերականներն ու այլ հրատարակությունները։ ՀՊԿ-ի կենտրոնական վարչության առաջին պարբերականը «Հրավիրակ» ամսագիրն էր, որը լույս էր տեսնում 1925—1926 թվականներին։ Ընդառաջելով արտասահմանյան մասնաճյուղերի և սփյուռքահայ աշխատավորների ցանկություններին՝ ՀՊԿ-ի կենտրոնական վարչությունը 1928 թ. հրատարակում է «ՀՊԿ-ի տեղեկատու» ամսագիրը։ Տարբեր ժամանակներում մի քանի պարբերականներ են լույս ընծայել նաև ՀՊԿ-ի Թիֆլիսի և Մոսկվայի մասնաճյուղերը («Օգնիր Հայաստանին», «Հայրենաշեն», «Вестник комитета Помощи Армении», «Возрождающаяся Армения», «Լրաբեր»)։

Իրենց տպագիր օրգաններն ունեին նաև ՀՊԿ-ի Ամերիկայի կենտրոնական վարչությունը («Շինարար» հանդեսը, որը լույս էր տեսնում 1927 թ. սկսած), Եգիպտոսի մասնաճյուղը («ՀՊԿ» ամսագիրը)։ ՀՊԿ-ի Ֆրանսիայի կենտրոնական վարչությունը 1933—1935 թթ. ֆարիզում հրատարակում էր «ՀՊԿ» ամսագիրը՝ որպես ՀՊԿ-ի արտասահմանյան մասնաճյուղերի օրգան։ Սովետական Հայաստանի վերելքը, սփյուռքահայության կյանքը և ՀՊԿ-ի գործունեությունը մանրամասնորեն լուսաբանում էր նաև 1925—1930 թթ. ֆարիզում հրատարակվող «Երևան» թերթը։ ՀՊԿ-ի բոլոր պարբերականները, ինչպես նաև

սփյուռքահայ ամբողջ առաջադիմական մամուլը նպաստում էին հայրենիք—սփյուռք կապերի ամրապնդմանը, Սովետական Հայաստանի համակիրների աճին, ՀՊԿ-ի մասնաճյուղերի գործունեության հաջող ծավալմանը և հայրենադարձության իրականացմանը։

1925 թ. սկզբին ՀՊԿ-ի կենտրոնական վարչությունը հիմնեց գեղարվեստական հրատարակչության բաժին, որը մեծ թվով ուսումնասիրություններ, գեղարվեստական երկեր, նկարներ, ալբոմներ և այլ գործեր լույս ընծայեց, դրանով իսկ խթանելով երկրի մշակութային կյանքի վերելքին։ Այդ բոլոր հրատարակությունների միջոցով ՀՊԿ-ը նպատակ ուներ աշխարհով մեկ ցրված հայությանը բազմակողմանի ու ճիշտ գաղափար տալ Սովետական Հայաստանի մասին և նրա մեջ վառ պահել սերը հայրենի երկրի նկատմամբ, վերջին հաշվով նպաստել հայապահպանության գործին։

ՀՊԿ-ի հայրենասիրական գործունեությունը առաջ էր բերում գաղութահայ հետադիմական ուժերի և հատկապես դաշնակցության կատաղի թշնամանքը։ Բազմաթիվ փաստեր կան դաշնակների կողմից ՀՊԿ-ի մասնաճյուղերի ու անդամների նկատմամբ կատարված մատնությունների, զրպարտությունների ու սպանությունների մասին։ Դեռևս 1921 թ. վերջերին, երբ նոր էր կազմակերպվել ՀՊԿ-ը, Կ. Պոլսում հրատարակվող դաշնակների «Ճակատամարտ» թերթը պրովոկացիոն լուրեր էր տարածում, թե իբր նրա հիմնադիրները «Չեկայի սպանուլիքների տակ են ստորագրել և անդամագրվել կոմիտեին» և ոչ թե իրենց կամքով ու ցանկությամբ¹⁵։

Հենց նման պրովոկացիաների ու բանասարկությունների պատճառով էր, որ ՀՊԿ-ը սկզբում իր նյութական առաքումները Հայաստան կատարում էր ոչ թե ուղղակի ՀՊԿ-ի կենտրոնական վարչության հասցեով, այլ Մերձավոր արևելքի Ամերիկայի Էպաստամատույց կոմիտեի Երևանի բաժանմունքի միջոցով¹⁶։

Դաշնակները լավ էին տեսնում, որ սփյուռքահայ զանգվածների շրջանում Արվետական Հայաստանի ձեռք բերած լայն համակրասքի և ՀՊԿ-ի մասնաճյուղերի մասսայականության

¹³ Տե՛ս ՉՍՄՀ ՀՍՄՀ ՊԿԱ, ֆ. 178, ց. 1, գ. 463, թ. 7—10։

¹⁴ Տե՛ս նույն տեղում, գ. 432, թ. 6։

¹⁵ Տե՛ս նույն տեղում, գ. 6, թ. 5—6։

¹⁶ Տե՛ս նույն տեղում, թ. 24։

204-ը սկսեց էական դեր կատարել սփյուռքահայութեան ղեկավարման գործում: Գաշնակները՝ տեսնելով, որ դրսից չկարողացան խանգարել 204-ի գործունեությանը, փորձեցին թափանցել նրա մասնաճյուղերի ղեկավարության մեջ և իրենց ձեռնադրուհիները տանել դրանց աշխատանքը, այսինքն՝ 204-ի կազմակերպությունները հակադրել Սովետական Հայաստանին: Այդ վտանգի դեմ պայքար կազմակերպելու նպատակով 204-ի կենտրոնական վարչությունը 1926 թ. մարտին քննարկեց արտասահմանյան մասնաճյուղերում տիրող դրության հարցը: Այդ առթիվ ընդունված որոշման մեջ նշվում էր, որ 204-ի ղեկավար օրգաններում անթույլատրելի է այն մարդկանց մասնակցությունը, ովքեր թշնամական վերաբերմունք ունեն Սովետական Հայաստանի հանդեպ: Կենտրոնական վարչությունն իր արտասահմանյան մասնաճյուղերին ցուցում տվեց, որ 204-ի ղեկավար օրգաններում մասնակցության իրավունք չեն կարող ունենալ նաև այն անձինք, ովքեր անորոշ կամ երկդիմի դիրք են բռնել Սովետական Հայաստանին պատկանող գումարներն ու գույքը նրանց օրինական տիրոջը հանձնելու հարցում²¹: Այդ ժամանակ արտասահմանում կային հայ ժողովրդին պատկանող, նրան կտակված խոշոր գումարներ, որոնց միակ օրինական տերը Սովետական Հայաստանն ու հայ գաղթականությունն էին: Սակայն այդ գումարները, գտնվելով զանազան բարեգործական հիմնարկների ու կտակակատարների տրամադրության տակ, մեծ մասամբ ծառայում էին ոչ իրենց անմիջական նպատակներին: Մինչդեռ այդ գումարների ձեռք բերումով կարելի կլիներ Սովետական Հայաստանում տեղավորել տասնյակ հազարավոր նոր տարագիրների: Նկատի ունենալով այդ հանգամանքը, 204-ի կենտրոնական վարչությունն իր վերոհիշյալ որոշման մեջ հանձնարարում է բոլոր մասնաճյուղերին՝ հաշվի առնելով գաղթականական հարցի սրությունը, պայքար ծավալել, որպեսզի «արտասահմանում կուտակված բոլոր հասարակական, ազգային գումարները և կտակները հատկացվեն գերազանցորեն գաղթականական հարցի լուծմանը և խորհրդային Հայաստանում այն հիմնական շինարարությանը, որը հնարավորություն կտա

լուծելու գաղթականների հարցը և ստեղծելու նրանց համար անտեսություն»²²:

Այս որոշումն ստանալուց հետո 204-ի մասնաճյուղերը ամենուրեք ալտիվ գործունեություն ծավալեցին նրա իրականացման ուղղությամբ: Ազգային գումարները Սովետական Հայաստանին տրամադրելու մասին 204-ի մասնաճյուղերի ու ներքին շուրջը համախմբված սփյուռքահայ աշխատավորների միահամուռ պահանջները վկայում էին, որ 204-երը իրոք դարձել էին սփյուռքահայության կենսական շահերի արտահայտիչները և Սովետական Հայաստանին աջակցող խավերի բարոյական շեփորները արտասահմանում:

Հարկ է նշել, որ այդ բուռն բողոքների շնորհիվ հաջողվեց անտեղի փոշիացումից փրկել Մելքոնյան ֆոնդի որոշ մասը և այն տրամադրել Սովետական Հայաստանում շինարարական մի շարք կարևոր ձեռնարկների իրականացման (հանրային գրադարանի կահավորման և այլն), Կովկասի ու Մերձավոր արևելքի վերաբերյալ եղած գրականության ձեռք բերման և հայագիտական արժեքավոր ուսումնասիրությունների հրատարակման գործին:

Սփյուռքահայ զանգվածների զգոնության բարձրացման շնորհիվ դաշնակները չկարողացան շատ թե քիչ հաջողության հասնել: Ձախողվեցին նրանց մտադրությունները՝ խանգարելու 204-ի ժողովրդականացմանը հատկապես գաղութահայ կարևորագույն կենտրոններում: Բոստոնում հրատարակվող դաշնակցական «Հայրենիք» թերթում Ս. Մասուրյանը (Ս. Վրացյանը) 1925 թ. դեկտեմբերին լույս ընծայած իր մի հոդվածում անզուսպ շարությամբ փորձում էր ապացուցել, թե իբր 204-երը ԱՄՆ-ում ժողովրդականություն չունեն: Բայց փաստերը միանգամայն հակառակն էին վկայում: Ահա դրա կոնկրետ ապացույցներից մեկը. 1925 թ. հոկտեմբերի 25-ին, իրենց կուսակցության հիմնադրման 35-ամյակի առթիվ, դաշնակները Նյու Յորքում հայտարարել էին «դաշնակցական օր»: Սակայն 10 հազարից ավելի հայություն ունեցող գաղութից հազիվ 300—350 մարդ էր հավաքվել նրանց «ձրի մուտքով» երեկույթին: Մինչդեռ նույն օրը 204-ի կազմակերպած հանդեսին, որի տոմսերն, ի դեպ, արժեին 1—2 դոլար, մասնակցելու էր եկել

²¹ Տե՛ս ՀՍՍՀ ՀՍՍՇ ՊԿԱ, ֆ. 178, ց. 1, գ. 418, թ. 4—5:

²² Նույն տեղում:

ավելի քան 1000 մարդ և հենց նույն տեղում էլ 75 հոգի անդամագրվել 204-ին²³։

204-ի դեմ պայքարում դաշնակները նույնիսկ դիմում էին նրա ակտիվ շահամաների նկատմամբ տեղորոշման ակտերի։ 30-ական թվականներին դաշնակ թափթփուկների այդ նողկալի գործունեությունն այնպիսի շահերի էր հասել, որ առաջադիմական ուժերը անհրաժեշտ համարեցին այդ տեղորոշման պայքարելու համար ստեղծել հատուկ կոմիտե։ 1933 թ. Փարիզում հիմնվեց «Դաշնակ տեղորոշման գործունեության կենտրոնը», որը սփյուռքահայության ուշադրությունը հրավիրեց դաշնակների կազմակերպած տեղորոշման գործունեության դեմ ավելի վճռական պայքար մղելու անհրաժեշտության վրա։ Սփյուռքահայությանն ուղղված նրա կոչերից մեկում նշված էր, որ շուրջ 10 տարվա ընթացքում դաշնակ տեղորոշումների ձեռքով 204-ի շարքերից բազմաթիվ զոհեր ընկան Բելյուսթում, Աթենքում, Լիոնում և այլ վայրերում²⁴։ 1933 թ. փետրվարի 26-ին ֆրանսիական Գրենոբլ քաղաքում դաշնակներն սպանեցին 204-ի ակտիվիստ Մանուկ Մարուքյանին և վիրավորեցին հինգ ուրիշ անդամների այն բանի համար, որ նրանք ժողովի ժամանակ, հակառակ Սովետական Հայաստանի նկատմամբ դաշնակների զրպարտչական ելույթներին, բացականչել էին՝ «Կեցցե՛՛ նորհրդային Հայաստանը»։ «Դաշնակ տեղորոշման գործունեության կենտրոնը», անդրադառնալով այդ փաստերին, իր հրապարակած կոչերից մեկում գրում է. «Գրենոբլի զոհ Մարուքյանից հետո զոհվեց Գլըճյանը Աթենքում. Ալեքսանդրիտ մեջ կհարվածվի տոթթ. Թաշճյան, մինչ Ամերիկա Գույումճյան հարձակման կենթարկվի եռագույնի (դաշնակների դրոշմ.— Ն. Մ.) դեմ արտահայտված ըլլալու համար»²⁵։ Այնուհետև կոչում սփյուռքահայ աշխատավորներին խորհուրդ էր տրվում ամենուրեք ստեղծել դաշնակցական տեղորոշման գործունեության հանձնախմբեր և միասնական պայքար մղել այդ ազգաբազմաբանության դեմ, «...որովհետև միայն ժողովրդական ցասումի հսկա ալիքին առջև է, որ վրացյանները և ջամալյանները պիտի մտնեն իրենց որջերը ու պիտի շվրտվեն՝ իրենց քա-

ղաքական արկածախնդիր խաղերով, գաղութահայ հասարակության հանգիստն ու ապագան»²⁶։

Միջազգային ասպարեզում ռեակցիայի հետագա ուժեղացումը, մասնավորապես ֆաշիզմի հանդես գալը, մեծ աշխուժություն առաջ բերեց դաշնակցության գործունեության մեջ՝ բնորոշ հայկական առաջադիմական դեմոկրատական կազմակերպությունների։ Ամենուրեք դաշնակցությունն աշխատում էր կեղծ ամբաստանությունների ու մատնությունների միջոցով հասնել առաջադիմական կազմակերպությունների, այդ թվում և 204-ի մասնաճյուղերի լիկվիդացմանը։ Դրա հետևանքով 1934 թ. վերջերին և 1935 թ. սկզբներին հայկական մի շարք գաղթօջախներում լայն հարձակում սկսվեց 204-երի դեմ։ Ահա նման բազմաթիվ փաստերից մեկը. 1934 թ. վերջերին անգլո-եգիպտական իշխանությունները դաշնակների մատնությունների հիման վրա ձեռքարկվեցին 204-ի Ալեքսանդրիայի մասնաճյուղի ղեկավարներին ու բազմաթիվ անդամների՝ մոտավորապես 80 հոգու։ Ձերբակալվածների դեմ որպես մեղադրող հանդես էր գալիս Սովետական Հայաստանի երդվյալ թշնամիներից մեկը՝ դաշնակների «Հուսաբեր» թերթի արտոնատեր Օննիկ Մաճառյանը։ Վերջինս նախաքննության ժամանակ եգիպտական դատախազին անպատկառորեն հայտարարում է, թե «204-իստները համայն աշխարհի մեջ 204-ի դիմակին տակ գործող ամենավտանգավոր համայնավարներն են»²⁷։

Գնալով ուժեղանում են հալածանքները 204-ի մասնաճյուղերի դեմ՝ նաև Եվրոպայում, Ամերիկայում և այլ վայրերում։ Սակայն, չնայած դրան, 204-ի շարքերում համախմբված սփյուռքահայ աշխատավորները դժվարին պայմաններում շարունակում էին իրենց պայքարը հանուն հայապահպանության և Սովետական Հայաստանի հետ հարաբերությունների սերտացման։ Եվ, թեպետ «Հայաստանի օգնության կոմիտե» անվանումը այլևս չէր համապատասխանում այդ կազմակերպության էությունը, այնուամենայնիվ, այն շարունակում էր կարևոր դեր կատարել հայրենիքի հետ սփյուռքահայության կապերի ամրապնդման ու զարգացման գործում։

²³ Տե՛ս «Երևան», Փարիզ, 3 դեկտեմբերի, 1925 թ., № 18։

²⁴ Տե՛ս «204», Փարիզ, 1933 թ., № 8, էջ 56—59։

²⁵ Նույն տեղում։

²⁶ Նույն տեղում։

²⁷ Նույն տեղում, 1935 թ., № 2, էջ 88, տե՛ս նաև «Միություն», շարա-
թաթերթ, Հայֆա, 3 փետրվարի, 1946 թ., № 21։

Ուստի անհատի պաշտամունքի շրջանում առաջ եկած կամայականություններով ու Անդրկովկասում ղեկավար դիրքեր գրաված ժողովրդի թշնամի Բերիայի ստոր գործունեությամբ պետք է պայմանավորել 204-ի նման կարևոր դեր խաղացող առաջադիմական մի կազմակերպության լիկվիդացիան 1937 թվականին: Անհիմն կերպով 204-ը որակվեց որպես օտարերկրյա գործակալությունների ու լրտեսների կազմակերպություն, իսկ նրա ղեկավարները՝ «ժողովրդի թշնամիներ»: Շինծու մեղադրանքներով ձերբակալվեցին 204-ի ղեկավար շատ գործիչներ: ՀՍԽՀ ժողովրդախորհի 1937 թ. դեկտեմբերի 3-ի որոշմամբ դադարեցվեց 204-ի գործունեությունը²⁸: Չնայած նման անհիմն ու զրպարտչական պիտակավորմանը, 204-ի շարքերում համախմբված սովետական օրիննտացիա ունեցող սփյուռքահայ աշխատավորները երբեք չկորցրին իրենց հավատը արդարության վերականգնման և մայր հայրենիքի նկատմամբ: Շատ երկրներում նրանք ստեղծեցին առաջադիմական նոր կազմակերպություններ («Ֆրանսահայ ժողովրդական միություն», «Ամերիկահայ առաջադիմական լիգա» և այլն) և շարունակեցին իրենց պայքարը սփյուռքահայ աշխատավորության ու Սովետական Հայաստանի ամեն գույնի ու երանգի թշնամիների դեմ:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ սփյուռքի հայության նյութական ու բարոյական աջակցությունը մեր հայրենիքին, որոշակի իմաստով արդյունք էր նաև նախորդ տարիներին արտասահմանում 204-ի ծավալած հայրենանվեր գործունեության: 204-ի շարքերում թրծված ու կոփված սփյուռքահայ հազարավոր աշխատավորներ ակտիվորեն պայքարի ելան մարդկության մեծագույն թշնամու՝ ֆաշիզմի դեմ: Նրանցից շատերը իրենց կյանքը զոհեցին օտար ափերում, հանուն ազատության ու առաջադիմության, հանուն մայր հայրենիքի անկախության, հանուն սփյուռքահայության փրկության:

Այսպիսով, Հայաստանի օգնության կոմիտեն իր գործունեությամբ որոշակի դրական դեր կատարեց, նպաստելով սոցիալիստական հայրենիքի հետ սփյուռքահայ աշխատավորների կապերի ամրապնդմանը, նրանց սովետական օրիննտացիայով դաստիարակմանը և հայրենադարձության իրականացմանը:

²⁸ Տե՛ս ՀՍՍՀ ՀՍՍՇ ՊԿԱ, ֆ. 178, ց. 1, գ. 939, ք. 2:
170

Կ Լ Ո Ւ Ե Վ Ե Յ Ե Ր Ո Ր Գ

ՍՓՅՈՒՒԲԱՀԱՅՆԻ ԶԱՆԿՎԱՄԱՅԻՆ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ
1946—1948/49 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Համաշխարհային երկրորդ պատերազմում Սովետական Միության տարած պատմական հաղթանակից հետո Սովետական Հայաստանի կուսակցական ու պետական մարմինները և ողջ աշխատավորությունը, հանրապետության առջև ծառայած սոցիալ-տնտեսական կարևոր խնդիրների լուծման հետ մեկտեղ, մեծ ու լարված աշխատանք կատարեցին նաև օտարության մեջ դեգերող սփյուռքահայության զանգվածային հայրենադարձություն իրականացնելու ուղղությամբ: Սփյուռքահայերի զանգվածային հայրենադարձության կազմակերպումը, անշուշտ, թելադրվում էր մի շարք հանգամանքներով:

Երկրորդ համաշխարհային պատերազմի դժվարին տարիներին սփյուռքահայ աշխատավորներն ամենուրեք ակտիվորեն հանդես եկան որպես Սովետական Միության և նրա անբաժան մասը կազմող Սովետական Հայաստանի անկեղծ պաշտպաններ: Նրանք արիաբար մարտնչեցին ֆաշիզմի դեմ ոչ միայն զանգվածաբար զինվորագրվելով մեր դաշնակիցների բանակներում, այլև շատ երկրներում զենքը ձեռքներին հանդես եկան դիմադրական-պարտիզանական շարժման մեջ: Նրանցից շատերն իրենց կյանքը զոհաբերեցին հանուն ազատության՝ այն հաստատ համոզմամբ, որ դրանով իսկ պաշտպանում են իրենց մայր հայրենիքի և ժողովրդի պատիվն ու անկախությունը:

Այդպես գործեցին Միսաք Մանուշյանն ու Գեղամ Աթմաճյանը, Արփեն Դավթյանն ու Հայկ Դպիրյանը՝ Ֆրանսիայում, Հակոբ Պարոնյանն ու Հերմինե Ռազգրադյանը՝ Բուլղարիայում, Անդրանիկ Ղուկասյանն ու Վահրամ Սաքայանը՝ Հունաստանում:

նում, բազմաթիվ ուրիշ պայծառ հայտրողներ Հարավարևմտյանում, Բուսիանիայում և այլուր:

Միևուր արձագանքելով մայր հայրենիքի կոչին, Հայրենական մեծ պատերազմի ամբողջ ընթացքում, սփյուռքահայ աշխատավորները, բոլոր երկրներում անխտիր, հանդես եկան Սովետական Միության պաշտպանության դիրքերում, նրա հերոսական դիմված ուժերի հաջողություններով ուրախացողի ու հպարտացողի դերում: Նրանք միաժամանակ նյութական ու բարոյական ամեն տեսակ օգնություն ու աջակցություն կազմակերպեցին մեր երկրին՝ այն դիտելով որպես նաև իրենց իսկական հայրենիքը: Դրա կոնկրետ վկայությունները հանդիսացան սովետական բանակի համար դուրսգնական «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան ստեղծման և այլ նպատակներով գումարների հանգանակումը, հազուտեղների, դեղորայքի, սննդամթերքի և այլ միջոցների առաքումը մեր երկիրը: Այդ ամենը ցույց տվեց, որ սփյուռքահայությունը չերմորեն համակրում է և անկեղծորեն նվիրված է իր սովետական հայրենիքին: Ահա սա էր այն հիմնական զրգապատճառներից մեկը, որը պատերազմից հետո սովետական կառավարությանը թելադրեց ընդառաջել հայրենասիրաբար տրամադրված սփյուռքահայության հայրենադարձվելու բուռն ցանկություններին և կազմակերպել նոր զանգվածային ներգաղթ:

Սփյուռքահայերի զանգվածային հայրենադարձության մյուս կարևոր զրգապատճառը հանդիսացավ Թուրքիայի կողմից զավթված հայկական հողերի ետ պահանջումը, որը այդ ժամանակ առաջ քաշեց սփյուռքահայությունը, և այն ըմբռնումով ընդունեց ու պաշտպանեց սովետական կառավարությունը:

Ինչպես հայտնի է, երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ և առավել ևս ֆաշիզմի ջախջախումից հետո, սփյուռքահայ գաղթօջախների մեծ մասում հայկական առաջադիմական ուժերը կազմակերպեցին ազգային միասնական ճակատներ, Սովետական Հայաստանի բարեկամների միություններ ու ընկերություններ, հայկական ազգային խորհուրդներ, որոնք առաջ քաշեցին Թուրքիայի կողմից ապօրինաբար զավթված տերիտորիաները Սովետական Հայաստանին վերադարձնելու պահանջը, որպեսզի դրանով իսկ ստեղծվի աշխարհասփյուռ հայությունը իր հայրենիքում համախմբվելու իրական հնարավորություն:

Թուրքիայի կողմից զավթված հայկական տերիտորիաների՝ մասնավորապես Կարսի, Արդվինի, Արդահանի շրջանների ետ պահանջումը կոնկրետ քննարկման առարկա դարձավ 1945 թ. ՍՍՀՄ-ի և Թուրքիայի կառավարությունների միջև, ինչպես նաև դաշնակից երեք մեծ տերությունների ղեկավարների Բեռլինի («Պոտսդամի») կոնֆերանսում (հուլիս—օգոստոս, 1945 թ.):¹

1925 թ. դեկտեմբերի 17-ի սովետա-թուրքական բարեկամության և շեղորության պայմանագրի ժամկետը լրանալու կապակցությամբ, 1945 թ. մարտի 19-ին սովետական կողմը Թուրքիային ծանուցում տվեց նրա դենոնսացիայի մասին: Այդ առիթով տեղի ունեցան բանակցություններ՝ սկզբում Անկարայում, իսկ ապա Մոսկվայում, որտեղ թուրքական կողմն առաջարկեց կնքել սովետա-թուրքական նոր պայմանագիր: Ի պատասխան դրա, սովետական կառավարությունը պայման դրեց վերանայել և կարգավորել սովետա-թուրքական սահմանը Կարսի, Արդվինի և Արդահանի շրջաններում: Սովետական կառավարությունը հայտարարեց, որ 1921 թ., թուրքերն օգտվելով սովետական պետության թուլությունից, անարդարացի կերպով զավթեցին Սովետական Հայաստանի տերիտորիայի մի մասը: Ինչպես 1945 թ. Պոտսդամի կոնֆերանսի ժամանակ Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի մինիստր Ա. Իդենի հետ ունեցած զրույցում նշել է ՍՍՀՄ արտաքին գործերի ժողկոմ Վ. Մ. Մոլոտովը, դրանից հայերը վիրավորված են, որի համար էլ սովետական կառավարությունը բարձրացրել է օրինական կերպով ՍՍՀՄ-ին պատկանող այդ տերիտորիաները իրենց իսկական տիրոջը վերադարձնելու հարցը: ՍՍՀՄ արտաքին գործերի ժողկոմը միաժամանակ հայտնեց, որ պետք է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ արտասահմանում գտնվում է մեկ միլիոնից ավելի հայ և, երբ այդ հողերը վերադարձվեն Սովետական Հայաստանին ու նրա տերիտորիան ընդարձակվի, շատ սփյուռքահայեր, որոնք ցանկություն են հայտնել վերադառնալ հայրենիք, հնարավորություն կունենան կրկին հաստատվելու իրենց պապենական օջախներում: Դա միանգամայն արդարացի կլինի, ուստի անգլիական կառավարությունը, որը նախկինում բազմիցս հանդես է եկել թուրքական տիրապետության տակ գտնվող հայ

¹ Տե՛ս «Советский Союз на международных конференциях периода Великой Отечественной войны (1941—1945 гг.)», сборник документов, т. 6, изд. политической литературы, М., 1980.

բնակչության պաշտպանություն, ներկայումս շպետք է զլանա այդ հարցում նրան աջակցել²:

Հայկական հողերը Թուրքիայից պահանջելու և տարագիր հայության հայրենադարձությունը կազմակերպելու անհրաժեշտության հարցը սովետական կառավարության առջև որոշակիորեն դրեցին նաև 1945 թ. ամռանը Ամենայն հայոց կաթողիկոսի ընտրությանը մասնակցելու համար սփյուռքահայ գրեթե բոլոր համայնքներից ժամանած աշխարհիկ ու հոգևոր պատգամավորները³:

Այդ հարցը քննարկվեց նաև 1947 թ. ապրիլին Նյու Յորքում բացված հայկական համաշխարհային կոնգրեսում, որին մասնակցում էին սփյուռքահայ շատ գաղթօջախների և հասարակական-քաղաքական հոսանքների ու կազմակերպությունների ներկայացուցիչներ: Քննարկելով ներգաղթի ու հայրենիքի վերաշինության շուրջը բոլոր հայ գաղութների միջև միություն և համագործակցություն ստեղծելու հարցերը, կոնգրեսը որոշեց ավելի զորացնել մշակութային ու հոգևոր կապերը գաղութների ու մայր հայրենիքի միջև և հասարակական նպաստավոր կարծիք ստեղծել հայկական հողային իրավունքների նկատմամբ, հետապնդելով դրանց արդարացի լուծումը Միավորված ազգերի կազմակերպության միջոցով: Կոնգրեսն ավարտվեց 3 հազար մարդու մասնակցությամբ կայացած մասսայական մեծ միտինգով, որտեղ ընդունված բանաձևում նույնպես խնդիր դրվեց ՄԱԿ-ի միջոցով հասնել հայկական տերիտորիալ պահանջների բավարարմանը, որպեսզի հնարավոր լինի կազմակերպել սփյուռքահայերի հայրենադարձությունը⁴:

Ընդառաջելով սփյուռքահայ առաջադիմական ուժերի արդարացի ցանկություններին, հայկական տերիտորիալ պահանջները ամենայն սրությամբ և հետևողականությամբ առաջ քաշվեց նաև Սովետական Հայաստանի ղեկավարության կողմից: Թեպետ այդ հարցը քննարկվեց ՄԱԿ-ում, սակայն Թուրքիային հովանավորող արևմտյան տերությունների բռնած բացասական

դիրքի հետևանքով հնարավոր չեղավ հասնել դրական արդյունքի:

Այսպիսով, սփյուռքահայերի ետպատերազմյան զանգվածային հայրենադարձության կազմակերպման կարևոր շարժառիթներից մեկն էլ հանդիսացավ Թուրքիայից հայկական տերիտորիաների պահանջումը, որի դրական ընթացքը իրական հնարավորություն կստեղծեր դրանց օրինական տերերի՝ աշխարհով մեկ սփռված տարագիր հայերի հայրենիք վերադառնալու բնական ցանկության իրականացման համար:

Երրորդ կարևոր պատճառը, որը թելադրում էր սովետական կառավարությանը վերսկսել արտասահմանում ապրող հայերի զանգվածային ներգաղթը, մի շարք երկրներում նրանց զգալի մասի տնտեսական ու քաղաքական ծանր կացությունն էր: Այդ հանգամանքը մի շարք այլ գործոնների հետ միասին պայմանավորված էր նաև երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ առաջադիմական ուժերի հակաֆաշիստական պայքարին սփյուռքահայերի ակտիվ մասնակցությամբ: Ետպատերազմյան շրջանում շատ երկրներում իշխանության գլուխ անցած ռեակցիոն կառավարությունները խիստ թշնամական ու անհանդուրժողական վերաբերմունք էին դրսևորում հայերի նկատմամբ: Պատահական չէ, որ սփյուռքի տարբեր անկյուններից ստացվում էին բազմաթիվ դիմումներ, որոնցում թախանձագին խնդրվում էր վերսկսել ներգաղթը, թույլատրել վերադառնալ մայր հայրենիք՝ Սովետական Հայաստան, դրանում տեսնելով իրենց փրկության միակ ուղին:

Ահա թե ինչ էին գրում այդ մասին 1945 թ. հունիսի 18-ին Երևան ուղարկած իրենց դիմումի մեջ մի խումբ հայ երիտասարդներ Միրիայի Հալեպ քաղաքից: Ներկայացնելով օտարության մեջ իրենց թշվառ վիճակը, նրանք հայտարարում էին. «...Մենք կպահանջենք՝ հանուն որդիական իրավունքներու, հանուն հայրենաբաղձ ղավակներու իղեալներու գոհացման արդար հատուցումի՝ հայրենի պետութենեն մեր երազին իրականացումը: Կպահանջենք, անշուշտ, այնպե՛ս, ինչպես զավակը իր հորմեն:

... Այլապես մենք մահվան ետին հարվածը ստացած կլլանք արդեն: Կմեռնի՛նք, հայրենիքի և ուսումի կարոտը մեր

² Տե՛ս նույն տեղում, էջ 39—41:

³ Տե՛ս «Լրաբեր», երկօրյա թերթ, Նյու Յորք, 8—15 հունվարի, 1946 թ., № 73—76:

⁴ Տե՛ս «Էջմիածին», ամսագիր, 1947 թ., մայիս-հունիս, էջ 82—83:

բա՛ց աչքերուն: Այլապես մենք կդառնանք հողմակոծ, մենք կը-
դառնանք փոշի, մենք կդառնանք անիմա՛ստ»⁵:

Իրենց տանջալից վիճակից փրկությունը նույնպես ներ-
գաղթի մեջ տեսնելով, մի խումբ հունահայեր, որոնք զրկված
էին աշխատանքից և վաճառել էին իրենց վերջին ունեցվածքը
սովից շմեռնելու համար, 1946 թ. մարտին սովետական կառա-
վարությանը հղած դիմումի մեջ գրում էին. «Այլևս ոչինչ ու-
նինք ծախելու, որպեսզի կարենանք մեր գոյությունը քաշկոտել
գոնե մինչև այն ատեն, երբ ներգաղթի կենսատու լուրը վերջ
պիտի տա մեր առօրյա տառապանքին»⁶: Դիմումի հեղինակներն
այնուհետև նշում էին, որ հունահայությունը գտնվում է քաղա-
քական ու տնտեսական խիստ աննպաստ պայմանների մեջ, ո-
րովհետև հակաֆաշիստական պայքարին ակտիվորեն մասնակ-
ցելու համար հալածվում է իրար հաջորդող ոչ հանրապետական
կառավարությունների կողմից և հունահայ աշխատավորների
հանդեպ սաստիկ հակակրանք է առաջացել բոլոր ուսուցիչներին
ընդհանրապես մեջ⁷: Հունաստանի տնտեսական ողբալի վիճակը ա-
ռաջին հերթին առավել ծանր էր անդրադառնում հայ աշխա-
տավորների վրա, որոնք մեծ մասամբ մատնված էին գործա-
զրկության, ինչպես «նանսենյան անձնագրեր» ունեցողները,
որոնք կազմում էին հունահայության 95 տոկոսը: Տնտեսական
ու քաղաքական այդպիսի հեղձուցիչ կացության մեջ ընկած
հարյուրավոր հայ ընտանիքներ Հունաստանի տարբեր գավառ-
ներից եկել, կուտակվել էին Աթենքում և այլ քաղաքներում, հու-
սալով որևէ աշխատանք գտնել կամ մեկնել հայրենիք, ինչի
մասին նրանք բազմիցս դիմել էին տեղի սովետական դեսպա-
նությանը և հայրենի կառավարությանը: Այդ տագնապալի վի-
ճակը, որը վերաբերում էր ողջ հունահայությանը, շատ ճշմար-
տացի է ներկայացրել Աթենքի «Նոր կյանք» օրաթերթը իր բազ-
մաթիվ հոդվածներում⁸:

Սակայն հունահայությունը բացառություն չէր կազմում:

⁵ ՀՍՍՀ 22ՄԾ ՊԿԱ, ֆ. 362, ց. 2, գ. 3, թ. 70—72:

⁶ Նույն տեղում, գ. 18, թ. 13:

⁷ Տե՛ս նույն տեղում:

⁸ Տե՛ս «Նոր կյանք», օրաթերթ, Աթենք, 15 փետրվարի, 1946 թ., № 266
և այլն:

Նման ծանր վիճակում էին գտնվում հայերը նաև Իրանում, Սի-
րիայում, Լիբանանում, Եգիպտոսում, Իրաքում, Պաղեստինում,
Կիպրոսում և այլ երկրներում:

Ահա այս ամենը նկատի առնելով, սովետական կառավա-
րությունը ձեռնարկեց սփյուռքահայերի նոր, զանգվածային հայ-
րենադարձության իրականացումը:

1. Սփյուռքահայերի հայրենադարձության նախապատրաստումը

Խորապես մտահոգված լինելով բազմահազար տարագիր-
ների ճակատագրով՝ Սովետական Հայաստանի կուսակցական և
պետական ղեկավար մարմինները դիմեցին ՀամԿ(բ)Կ կենտ-
կոմին և ՍՍՀՄ Ժողկոմխորհին՝ առաջարկելով կազմակերպել
սփյուռքահայերի զանգվածային հայրենադարձություն: Ընդա-
ռաջելով արտասահմանի հայության հայրենադարձվելու բուռն
ցանկություններին և ՀՍՍՀ ղեկավարության միջնորդությանը, ի
նշանավորումն Հայաստանում սովետական իշխանության հաս-
տատման 25-ամյակի, ՍՍՀՄ Ժողովրդական կոմիսարների խոր-
հուրդը 1945 թ. նոյեմբերի 21-ին որոշում ընդունեց սփյուռքա-
հայերի զանգվածային ներգաղթ կազմակերպելու մասին: Այդ
պատմական որոշման մեջ ասված էր. «Ուշադրության առնելով
արտասահմանում ապրող հայերի դիմումները նրանց հայրենիք՝
Սովետական Հայաստան վերադառնալու թույլտվության մասին
և ՀՍՍՀ ղեկավար մարմինների միջնորդությունը, թույլատրել
ՀՍՍՀ Ժողկոմխորհին կազմակերպել արտասահմանյան երկրնե-
րում ապրող հայերի վերադարձը, որոնք այդ մասին ցանկու-
թյուն են հայտնել»⁹:

Ի կատարումն ՍՍՀՄ կառավարության վերոհիշյալ որոշ-
ման և ներգաղթի աշխատանքների գործնական իրականացման
համար ՀՍՍՀ Ժողկոմխորհը 1945 թ. դեկտեմբերի 8-ին ստեղ-
ծեց Ժողկոմխորհին առընթեր արտասահմանից ներգաղթող հա-
յերի ընդունման և տեղավորման կոմիտե, հետևյալ կազմով:

⁹ ՀՍՍՀ 22ՄԾ ՊԿԱ, ֆ. 326, ց. 1, գ. 74, թ. 1, տե՛ս նաև «Սովետական
Հայաստան», օրաթերթ, Երևան, 2 դեկտեմբերի, 1945 թ., № 259: Քաղվածքը
մեջ է բերված ըստ արխիվային փաստաթղթի:

պետական-կուսակցական ճանաչված գործիչ Բ. Ա. Աստվածատրրյան (նախագահ), ՀՍՄԸ Ժողկոմխորհի նախագահի տեղակալ Շ. Ն. Մարչանյան (նախագահի տեղակալ), ժողովրդակառնկարիչ Մ. Ս. Սարյան (նախագահի տեղակալ), ՀՍՄԸ արտաքին գործերի ժողկոմ Ս. Կ. Կարապետյան և բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արտ. Ալ. Մելիք-Աղամյան՝ անդամներ¹⁰: Մի փոքր անց՝ 1946 թ. հունվարին, կոմիտեի կազմի մեջ մտցվեց նաև ՀՍՄԸ ներքին գործերի ժողկոմ Ի. Ի. Մաթևոսովը¹¹:

Հրապարակելով ներգաղթի կոմիտեի ստեղծման մասին ՀՍՄԸ Ժողկոմխորհի որոշումը, «Սովետական Հայաստան» թերթի իր 1945 թ. դեկտեմբերի 9-ի համարում «Պատմական որոշում» խորագրով ընդարձակ խմբագրականում գրել է. «Մեր հանրապետության կուսակցական, սովետական և հասարակական կազմակերպությունների առաջ կանգնած է պատասխանատու, ոչ հեշտ, բայց շնորհակալ խնդիր՝ բարձր կազմակերպվածությունամբ նախապատրաստել և իրագործել քաղաքական հսկայական կարևորություն ունեցող սովետական կառավարության որոշումը:

Մեր հանրապետության յուրաքանչյուր աշխատավոր, յուրաքանչյուր հայրենասեր պետք է բազմակողմանի օգնություն ցույց տա հայրենիք վերադարձող մեր հայրենակիցներին ընդունելու և տեղավորելու գործին»¹²:

Միաժամանակ կազմակերպվեց ՀՍՄԸ Ժողկոմխորհին առընթեր վերաբնակեցման վարչություն (նախագահ՝ Գ. Տ. Գևորգյան) և կատարվեց վերջինիս ու ներգաղթի կոմիտեի ֆունկցիաների սահմանազատում¹³: Ներգաղթի կոմիտեի խնդիրն էր սփյուռքահայերի հայրենադարձության կազմակերպումը արտասահմանում և նրանց ընդունումը ՍՍՀՄ տերիտորիայում ստեղծված կայաններում (Բաթում, Զուլֆա և Բաբու), իսկ վերաբնակեցման վարչությանը՝ ներգաղթածների տեղաբաշխումը հանրապետությունում, նրանց բնակարանային ու աշխատանքային

հարցերի կարգավորումը, նոր ավանների և բնակելի տների կառուցումը:

Շուտով մշակվեց և հաստատվեց ՀՍՄԸ Ժողկոմխորհին առընթեր արտասահմանից ներգաղթող հայերի ընդունման և տեղավորման կոմիտեի կանոնադրությունը¹⁴:

1945 թ. դեկտեմբերի 25-ին ՀՍՄԸ Ժողկոմխորհին առընթեր ներգաղթի կոմիտեն սփյուռքահայ առաջադիմական հասարակական-քաղաքական կազմակերպություններին և բարեգործական հաստատություններին հղեց ներգաղթի նախապատրաստման աշխատանքներն սկսելու մասին իր հրահանգ-դիմումը, որը ցնծությամբ ընդունվեց գաղթաշխարհի բոլոր անկյուններում: Այդ փաստաթղթի մեջ ասվում էր, որ ընդառաջելով տարագիր հայության հայրենիք վերադառնալու բուռն ձգտումներին, ՍՍՀՄ Ժողկոմխորհը որոշում է ընդունել թույլատրել նրա ներգաղթը Սովետական Հայաստան: Միաժամանակ հաղորդվում էր, որ սովետական կառավարությունը ձեռնարկել է ներգաղթողների համար բնակարանային լայն շինարարություն՝ ինչպես պետական, այնպես էլ անհատական միջոցներով: Ընդ որում անհատական կարգով բնակարանային շինարարություն կատարողներին պետության կողմից հատկացվելու էր երկարաժամկետ վարկ՝ կառուցվող բնակելի տան արժեքի 50 տոկոսի չափով կամ քաղաքներում 30 հազար, իսկ գյուղական վայրերում՝ 25 հազար ռուբլու սահմաններում¹⁵:

Այնուհետև ներգաղթի կոմիտեն նշում էր, որ արտասահմանում գործող հայկական բոլոր առաջադիմական և բարեգործական կազմակերպությունների համար ներկայումս չկա ավելի կարևոր ու պատվավոր խնդիր, քան սփյուռքահայերի հայրենիք վերադառնալու գործի կազմակերպումը, դրան նպաստումը: Առաջադիմական ու բարեգործական կազմակերպությունների գործունեությունը, ասված էր դիմումի մեջ, որը մինչև այժմ ընթացել է հիմնականում Սովետական Հայաստանի հետ կուլտուրական կապեր պահպանելու ուղղությամբ, այսուհետև պետք է ամբողջովին ենթարկվի ներգաղթի կազմակերպման և հայրենադարձների նյութական ապահովման հարցերին:

¹⁰ Տե՛ս ՀՍՄԸ ՀՄԸ ՊԿԱ, ֆ. 362, ց. 1, գ. 4, թ. 1, նաև՝ «Սովետական Հայաստան», 9 դեկտեմբերի, 1945 թ., № 264: Հետագայում ներգաղթի կոմիտեի նախագահի տեղակալներ են եղել նաև Վ. Ն. Մաղիկյանը և Բ. Ա. Ներսիսյանը:

¹¹ Տե՛ս ՀՍՄԸ ՀՄԸ ՊԿԱ, ֆ. 362, ց. 1, գ. 4, թ. 19:

¹² «Սովետական Հայաստան», 9 դեկտեմբերի, 1945 թ., № 264:

¹³ Տե՛ս ՀՍՄԸ ՀՄԸ ՊԿԱ, ֆ. 362, ց. 1, գ. 15, թ. 40—42:

¹⁴ Տե՛ս նույն տեղում, թ. 79—80:

¹⁵ Այստեղ և հետագայում բերված գումարների չափերը արտահայտված են այն ժամանակվա դրամական կուրսով:

Ենելով ահա այդ նկատառումներից, ներգաղթի կոմիտեն անհրաժեշտ էր գտնում, որպեսզի այն գաղթօջախներում, որոնցից նախատեսվում էր առաջին հերթին հայրենադարձություն կազմակերպել, անմիջապես ստեղծվեն ներգաղթին աջակցող տեղական կոմիտեներ: Դրանց հիմնական խնդիրը պետք է լինեն հայրենիք վերադարձողների նյութական ապահովման և տեղերում հայրենադարձության նախապատրաստման հետ կապված բոլոր հարցերի լուծումը: Այդ կոմիտեները փաստորեն պետք է գործեին ՀՍՍՀ Ժողկոմխորհին առընթեր արտասահմանից ներգաղթող հայերի ընդունման և տեղավորման կոմիտեի տեղական մարմինների իրավունքներով: Ահա թե ինչու խորհուրդ էր տրվում, որպեսզի դրանց գլխավորեին տվյալ գաղութի հայկական առաջադիմական կազմակերպությունների ղեկավարները, մարդիկ, որոնք ֆաշիզմի դեմ մղվող պայքարում ցույց էին տվել իրենց նվիրվածությունը սովետական հայրենիքին, ունեին կազմակերպչական որոշակի ունակություններ և վայելում էին մեծ հեղինակություն: Ինչպես ցույց տվեց պրակտիկան, այդ կոմիտեները մեծ դեր կատարեցին ներգաղթողների ցուցակագրման, նրանց օտարեկրյա բաշխարարությունից դուրս գալու, փոխադրության կազմակերպման, անհրաժեշտ միջոցների հայթայթման, բացատրական աշխատանքներ տանելու և այլ հարցերում:

Ներգաղթի տեղական կոմիտեների ստեղծումից հետո առաջարկվում էր ձեռնարկել հայրենիք վերադառնալ ցանկացողների ցուցակագրման աշխատանքները, դրանք ավարտելով ըստ կարելիության կարճ ժամկետներում և ցուցակների մեկ օրինակը ուղարկել Երևան, որպեսզի ՀՍՍՀ Ժողկոմխորհին առընթեր ներգաղթի կոմիտեն կարողանար պլանավորել իր հետագա անելիքները:

Միաժամանակ նշվում էր, որ բարեգործական և այլ կազմակերպությունների կողմից հօգուտ ներգաղթի հանգանակվող գումարների հաշվին պետք է հոգալ հայրենիք վերադարձող կարիքավոր ընտանիքների հօգուտի, փոխադրության, ճանապարհի սննդի ծախսերը և հայրենադարձության հետ կապված մյուս պետքերը:

Ներգաղթողների ցուցակագրման և ընդհանրապես հայրենադարձության նախապատրաստման ընթացքում ժազող բոլոր հարցերում համապատասխան օժանդակություն ստանալու հա-

մար խորհուրդ էր տրվում դիմել տվյալ երկրում սովետական ղեկավարություններին և հյուպատոսություններին: Դրանց այդ մասին անհրաժեշտ հրահանգներ էին տրված ՍՍՀՄ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատում 1946 թ. սկզբներին ստեղծված հայրենադարձության հանձնաժողովի կողմից, որը ՀՍՍՀ կառավարության հետ մեկտեղ ղեկավարում էր սփյուռքահայերի ներգաղթի առնչությամբ արտասահմանում իրականացվող գործնական ամբողջ աշխատանքը¹⁶: Այդ հանձնաժողովի կազմի մեջ մտնում էին ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստրության մերձավորարևելյան բաժնի վարիչ Ի. Վ. Սամիլովսկին (նախագահ), Գ. Ա. Հովհաննիսյանը (ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի ներկայացուցիչ) և Գ. Բ. Հովակիմյանը (ՍՍՀՄ ՊԱՄ ներկայացուցիչ)¹⁷:

Սովետական կառավարությունը շատ մեծ ուշադրություն էր դարձնում սփյուռքահայերի ներգաղթի իրականացման գործին և բազմիցս անդրադառնում էր նրա նախապատրաստման ընթացքին: 1946 թ. փետրվարի 22-ին ՍՍՀՄ Ժողկոմխորհը ծավալուն որոշում ընդունեց «Արտասահմանից հայերի Սովետական Հայաստան ներգաղթելու պրակտիկ միջոցառումների մասին»¹⁸: Այդ որոշման համաձայն մշակվեցին կոնկրետ հրահանգներ, որով ղեկավարվելու էին ինչպես ԱԳԺԿ-ի հայրենադարձության հանձնաժողովը, այնպես էլ արտասահմանում ՍՍՀՄ ներկայացուցչությունները՝ 1946 թ. ներգաղթի պրակտիկ աշխատանքները նախապատրաստելու և իրականացնելու ժամանակ: ՍՍՀՄ ներկայացուցչությունների խնդիրն էր նաև ըսփյուռքահայ առաջադիմական կազմակերպությունների հետ համատեղ ներգաղթին աջակցող տեղական կոմիտեների ստեղծումը և նրանց գործունեությանը անհրաժեշտ ուղղություն տալը:

Հայրենադարձությունը նախապատրաստելու, մասնավորապես համապատասխան կոնստիտուցիոնալ ընտրության համար Բուլղարիա, Ռումինիա, Հունաստան, Սիրիա, Լիբանան և Իրան գործուղվեցին ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի երկուական ներկայացուցիչներ, իսկ այդ երկրների ՍՍՀՄ ղեկավարություններում (միսիաններում) առանձնացվեցին երկուական պատասխանատու աշ-

¹⁶ Տե՛ս ՀՍՍՀ ՀՍՍՀ ՊԱՄ, ֆ. 362, ց. 2, գ. 2, թ. 5 և գ. 8, թ. 2-4:
¹⁷ Տե՛ս նույն տեղում, ֆ. 326, ց. 1, գ. 145, թ. 1:
¹⁸ Տե՛ս նույն տեղում, ֆ. 362, ց. 2, գ. 20, թ. 1-8:

խատակիցներ՝ խորհրդականներ կամ առաջին քարտուղարներ և հյուպատոսական բաժնի վարիչներ:

ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի վերոհիշյալ որոշմամբ, այսպիսով, 1946 թ. նախատեսված ներգաղթի իրականացման ամբողջ պատասխանատվությունը դրվեց սովետական ներկայացուցչությունների և ՀՍՍՀ ժողկոմխորհի վրա: Սովետական ներկայացուցչություններին հանձնարարվեց վերը նշված երկրներէ արտաքին գործերի մինիստրությունների առջև հարց հարուցել հայերի ներգաղթին աշակցելու, նրանց հպատակության փոփոխության, շարժական ու անշարժ գույքի տնօրինման և այլ հարցերում գյուրություններ ստեղծելու կապակցությամբ¹⁹:

Հանրապետության կուսակցական և պետական մարմինները մեծ կարևորություն էին տալիս և ամենայն լրջությամբ նախապատրաստվում սփյուռքահայության զանգվածային հայրենադարձության իրականացմանը: Ահա թե ինչու 1946 թ. փետրվարին ՀԿ(Բ)Կ Կենտկոմի հերթական պլենումը հատուկ քննարկեց «Արտասահմանյան երկրներից վերադարձող հայերի ընդունումը և տեղավորումը նախապատրաստելու միջոցառումների մասին» ՀՍՍՀ ժողկոմխորհի նախագահ Ա. Ս. Սարգսյանի զեկուցումը²⁰:

Սփյուռքահայերի նոր, զանգվածային հայրենադարձություն թույլատրելու վերաբերյալ ՍՍՀՄ ժողկոմխորհի որոշումը ՀԿ(Բ)Կ Կենտկոմի պլենումը գնահատեց որպես հսկայական քաղաքական կարևորություն ունեցող ակտ, որպես Սովետական Հայաստանի և ամբողջ հայ ժողովրդի նկատմամբ մեծ ուշադրության ու հոգատարության կոնկրետ արտահայտություն²¹: Պլենումը արձանագրեց, որ ՍՍՀՄ կառավարության այդ պատմական որոշման կենսագործումը, արտասահմանյան մի շարք երկրներից մեծ թվով հայրենադարձների ընդունումը, տեղավորումը և աշխատանքով ապահովումը պետք է լինի հանրապետության կուսակցական, սովետական ու տնտեսական կազմակերպությունների առջև կանգնած կարևորագույն և առաջնահերթ խնդիրներից մեկը: Պլենումը գտավ, որ արտասահմանից վերադարձող

հայերին ընդունելու և բնակարաններով ու աշխատանքով ապահովելու գործում պետք է անմիջականորեն ամենագործուն մասնակցություն ունենան բոլոր կուսակցական, սովետական, հասարակական կազմակերպությունները, արդյունաբերական ձեռնարկությունները, կոլտնտեսությունները, սովխոզները և հանրապետության բոլոր աշխատավորները: Պլենումը այդ գործը ուղղակի հայտարարեց համաժողովրդական հայրենասիրական կարևոր միջոցառում: ՀԿ(Բ)Կ Կենտկոմի պլենումը հանրապետության կուսակցական, սովետական և տնտեսական մարմինների առջև խնդիր դրեց ծավալել բնակարանային լայն շինարարություն, առանձնացնել ֆինանսական ու նյութական անհրաժեշտ միջոցներ՝ հայրենադարձների կենցաղային և կուլտուրական կարիքները հոգալու համար:

Սփյուռքահայերի զանգվածային հայրենադարձության վերաբերյալ սովետական կառավարության որոշումը անհուն գոհունակությամբ և մեծ ոգևորությամբ ընդունեց համաքն հայությունը ինչպես հայրենիքում, այնպես էլ սփյուռքում: Այդ առթիվ սովետական կառավարությանն ուղղված շնորհակալական ջերմ խոսքով և սփյուռքահայ տարագիրներին հասցեագրված ողջույններով հանդես եկան մեր մտավորականության անվանի դեմքեր Ավ. Իսահակյանը, Դ. Դեմիրճյանը, Հր. Աճառյանը, Մ. Սարգյանը, Ա. Խաչատրյանը, Ա. Սարգսյանը, բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության բազմաթիվ ներկայացուցիչներ:

Հայ գրականության ճանաչված նահապետ Ավետիք Իսահակյանը «Բարի գալուստ թանկագին հարազատներին» վերնագրով էր ողջույնի խոսքում այդ առթիվ գրեց. «Արտասահմանից հայերի Սովետական Հայաստան վերադառնալու մասին ՍՍՀՄ ժողկոմխորհի որոշումը մեր բոլորի սրտերը լցնում է շատ մեծ ուրախությամբ: Անվերապահ խնդրությամբ ողջունում ենք այս նշանակալից ակտը: Ոչ մի ազնիվ հայ, բացի ցնծագին գնահատականից, ուրիշ վերաբերմունք չի կարող ունենալ այս որոշման հանդեպ»²²: Մեծ գրողը սրտի ցավով արձանագրում էր, որ բռնությունների, կոտորածների և հայրենիքից վտարումների հետևանքով հայ ժողովրդի կեսը հարկադրված է եղել ցրվել աշխարհով մեկ, սակայն ոչ մի թշնամական ուժ

¹⁹ Տե՛ս նույն տեղում, ֆ. 326, ց. 1, գ. 117, թ. 1—5:

²⁰ Տե՛ս ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 35, գ. 1, թ. 111—161, նաև՝ «ՀԿ կառավարության ուրվագծեր», էջ 568:

²¹ Տե՛ս ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 35, գ. 3, թ. 26—32:

²² «Սովետական Հայաստան», 4 դեկտեմբերի, 1945 թ., № 260:

չի կարողացել մեոցնել նրա ազգային միասնության զգացումը, հանգցնել նրա սերն ու կարոտը դեպի հայրենի երկիրը և վերջստին հայրենիքում հավաքվելու ձգտումը: Գաղութահայության հայրենաբաղձ հայացքները միշտ ուղղված են եղել Սովետական Հայաստանին, ուր ապրում և աշխատում են իր արյունակից եղբայրներն ու քույրերը: Թափառական հայ բազմությունների անպարտելի տենչանքն է օր առաջ թողնել օտար երկրները, ուր մաշվում է նրանց կյանքը և գալ հայրենիք, միանալ իրենց եղբայրներին, միասին աշխատել ու կառուցել և իմաստավորել իրենց վաստակը միահամուռ ջանքերով ծաղկող հայրենիքում: «Մեր վերագարձող եղբայրների սիրակարոտ զգացմունքներին, մենք՝ Սովետական Հայաստանի հայերս,— այնուհետև գրում էր Ավ. Իսահակյանը,— կդիմավորենք նույն եղբայրակարոտ զգացմունքներով: Դաժան ճակատագրով իրարից բաժանված քույրեր և եղբայրներ, որ կովիլ ենք զանազան ճակատներում մեր թշնամիների դեմ, մեր ընդհանուր նպատակի համար՝ հայրենիքի և ազատության, ազգային և մարդկային միեկնույն իդեալների, այսօր երկու իրավատեր հարազատներ գրկարաց փարվում ենք իրար ազատագրված հայերի տան մեջ»²³:

Բազմավաստակ վիպասան Դերենիկ Դեմիրճյանն իր խոսքում գրեց. «Հայրենագուրկ հայությունը հայրենիք է վերադառնում: Դա ամենաբնական գործն է: ... Նա պիտի ապրի իր հայրենիքում, ջանա, ստեղծագործի իր սեփական տանը: Այստեղ միայն իմաստ ունի նրա կյանքը: Միայն Սովետական Հայաստանի բախտի հետ կարող է կապել իր կյանքն ու հույսերը համայն հայությունը: ... Թող գա տուն և ծաղկի տարագիր հայությունը»²⁴:

Ավելի քան երկու տասնամյակ առաջ հայրենիքում տարագրության ցուպը դեն նետած ականավոր լեզվաբան Հրաչյա Աճառյանը, հայրենադարձության առթիվ դիմելով սփյուռքահայերին, գրում է. «Այն օրից, երբ տաճկական յաթաղանից հազիվ ազատված, ձեր սիրտն արյունով և ձեր աչքերը արցունքով լցված հայրենի տան ծխացող կրակներից փախաք՝ ապաստան որոնելու օտար աստղերի տակ,— սպասում էինք ձեզ: ... Դուք շմուռացաք ձեր երկիրը, ձեր մարմնական վերքերը բուծվեցին,

բայց ձեր ոգին շրուծվեց. դուք միշտ հիշում էիք հայրենի երկիրը: ... Ձեր սրտի իղձը կատարվեց. դուք իրավունք և արտոնություն ստացաք հայրենիք վերադառնալու: Մեր սրտերը հույզերով, մեր աչքերը լույսերով, մեր հոգիները անձկալի կարոտով ու մնր ձեռքերը ծաղկի պսակներով լցված, սպասում ենք ձեզ»²⁵:

Ֆրանսահայ մշակութային ու հասարակական անվանի գործիչ Արշակ Չոպանյանը, արձագանքելով իր հայրենի գրչեղբայրների խոսքին և անդրադառնալով հայ տարագիրների նկատմամբ սովետական կառավարության ուշադրությանն ու հոգատարությանը, գրեց. «Խորհրդային Հայաստանը մեր մեկ հատիկ կենդանի հայրենիքն է, մեր մայրն է. մայր մը խտրություն չի դնել իր զավակներուն միջև. կսպասենք ուրեմն ու կհուսանք, որ ան ամենուս հանդեպ վարվի մայրաբար»²⁶:

Սփյուռքահայերի հայրենադարձության վերաբերյալ որոշումը հայրենասիրական մեծ վերելք առաջ բերեց հանրապետության աշխատավորության մեջ: Արդյունաբերական ձեռնարկություններում, կոլտնտեսություններում, սովխոզներում, ուսումնական ու գիտական հիմնարկներում տեղի էին ունենում աշխատավորների միտինգներ, որոնցում գոհունակություն էր հայտնվում այդ առթիվ: 1946 թ. ապրիլի սկզբին Արտաշատի շրջանի կոլտնտեսականները, բանվորներն ու ծառայողները հատուկ կոչով դիմեցին հանրապետության բոլոր աշխատավորներին՝ առաջարկելով ամեն ինչով աջակցել ներդաղթին: Այդ կոչի մեջ նրանք գրում էին. «Մենք, Արտաշատի շրջանի աշխատավորներս, որոշել ենք ստեղծել արտասահմանից վերագարձող հայերի տեղավորմանը օգնելու ֆոնդ, այդ նպատակով տալով բանվորների ու ծառայողների 4—5 օրվա աշխատավարձը և յուրաքանչյուր աշխատունակ կոլտնտեսականի խնայողություններից որոշ գումար: ... Մենք արդեն հավաքել ենք ավելի քան մեկ միլիոն ութբլի և շրջանի 44 դուղերում ու շրջակա տրոնում առանձնացրել ենք 569 սենյակ՝ վերագարձող հայերին տեղավորելու համար, սկսել ենք 156 նոր բնակարանի շինարարությունը: Մենք՝ արտաշատցիներս կոչ ենք անում մեր շահրա-

²⁵ Նույն տեղում:
²⁶ «Անահիտ», հանդես, Փարիզ, հուլիս-դեկտեմբեր, 1946 թ., № 5—6,

²³ Նույն տեղում:
²⁴ Նույն տեղում:

պետության բոլոր աշխատավորներին, բանվորներին, ծառայողներին, կոլտնտեսականներին, մտավորականությանը, հետեվել մեր օրինակին...»²⁷:

Արտաշատցիները այնուհետև վստահություն էին հայտնում, որ հանրապետության ոչ մի աշխատավոր հեռու չի մ.ա հայրենասիրական այդ մեծ գործից և ամեն ինչ կանի տարագիր հայության հայրենադարձությունը հաջողությամբ իրականացնելու համար:

Եվ իրոք, սովետական Հայաստանի բոլոր շրջաններում ու քաղաքներում արագորեն ծավալվեց հայրենասիրական լայն շարժում՝ հայրենադարձների համար բնակարաններ առանձնացնելու, նրանց համար տներ կառուցելու և նյութական ու դրամական միջոցներ կուտակելու ուղղությամբ: Ահա այդ մասին վկայող մի քանի կոնկրետ փաստեր: Հայրենադարձության ֆոնդի օգտին Սիսիանի շրջանում մեկ օրվա՝ 1946 թ. ապրիլի 5-ի հատկացումների գումարը կազմեց 700 հազար, Երևանի Լենինյան շրջանի միայն 12 արդյունաբերական ձեռնարկությունների կոլեկտիվների բանվոր-ծառայողները տրամադրեցին 630 հազար²⁸, Բասարգեշարի շրջանի աշխատավորները՝ 300 հազար ուրբի²⁹ և այլն: Մայրաքաղաքի շինարարները պարտավորվեցին իրենց միջոցներով հայրենադարձների համար կառուցել 500 նոր բնակարան, իսկ Կոտայքի (այժմ՝ Արմավյանի) շրջանի աշխատավորները հատկացրին 350 հազար³⁰, Ստեփանավանի շրջանի կոլտնտեսականները՝ կես միլիոն, բանվոր-ծառայողները՝ 150 հազար, Հոկտեմբերյանի աշխատավորները՝ 850 հազար³¹, Լենինականցիները՝ 1 միլիոն 22 հազար ուրբի³²: Այդպես էր պատկերը նաև հանրապետության մյուս շրջաններում ու քաղաքներում: Ջերմորեն պաշտպանելով արտաշատցիներին հայրենասիրական նախաձեռնությունը, հանրապետության բանվոր դասակարգը, կոլտնտեսային գյուղացիությունը, գիտության ու արվեստի մշակները, սովետական ծառայողները իրենց խնայո-

ղություններից սիրով հատկացումներ էին կատարում հայրենադարձության ֆոնդի օգտին:

Հայրենադարձությանն աջակցելու գործում միանգամայն խրախուսելի դիրքորոշում ցուցաբերեց նաև էջմիածնի Ամենայն հայոց կաթողիկոսությունը: Սովետական կառավարության վերոհիշյալ որոշումը հայ առաքելական եկեղեցին ողջունեց սրբտանց, խորին երախտագիտության անկեղծ զգացմունքով: Մայրաթոռի օրգան «էջմիածին» ամսագիրը, հայրենադարձությունը համարելով ազգահավաքման կարևորագույն միջոց, գրեց. «Վերջապես իրականանում է սփյուռքի ցիրուցան հայության նվիրական իղձը, նրա վեհ տենչը՝ հավաքվել իր պատագրված պապենական օջախի շուրջը և իր հարազատ եղբայրների հետ ձեռք-ձեռքի տված լծվել նրա վերելքին, ապրել նրա բարձր աղագային կուլտուրայով»³³: Կաթողիկոսական տեղապահ Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանը այդ առթիվ արտասահմանյան հայկական եկեղեցական թեմերի առաջնորդներին հղած կոնդակներում և ուղերձներում կոչ արեց գործարար կերպով օգնել ներգաղթի տեղական կոմիտեներին՝ հայրենադարձության նվիրական գործը կազմակերպված ձևով և հաջողությամբ իրականացնելու համար:

Հայրենիքի ջերմ ու հոգատար վերաբերմունքը աննախընթաց խանդավառության ու հայրենասիրության ալիք առաջ բերեց սփյուռքահայ բոլոր գաղթօջախներում: Այդ առթիվ կայացած բազմաթիվ միտինգներում ու ժողովներում ընդունված բանաձևներում, անհատ ու կոլեկտիվ նամակներում և հեռագրերում սփյուռքահայ աշխատավորները խորին երախտագիտություն էին հայտնում սովետական կառավարությանը՝ օտարության մեջ դժնդակ պայմաններում տառապող, քաղաքական ու քաղաքացիական ամենատարրական իրավունքներից զուրկ հայությանը փրկության ձեռք մեկնելու և հայ ժողովրդի ազգային վերամիավորման բաղձանքը իրականացնելու համար:

Հայրենադարձության մասին սովետական կառավարության որոշումը առաջին ողջունողներից մեկը եղավ Իրանի Ղազվին քաղաքի հայությունը: 1945 թ. դեկտեմբերի 9-ին Երևանում ստացվեց ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության և Ժողովուրդի հասցեով Ղազվինի հայերի դեկտեմբերի 6-ին

²⁷ «Սովետական Հայաստան», 5 ապրիլի, 1946 թ., № 81:

²⁸ Տե՛ս նույն տեղում, 7 ապրիլի, 1946 թ., № 83:

²⁹ Տե՛ս նույն տեղում, 6 ապրիլի, 1946 թ., № 82:

³⁰ Տե՛ս նույն տեղում, 7 ապրիլի, 1946 թ., № 83:

³¹ Տե՛ս նույն տեղում, 9 ապրիլի, 1946 թ., № 84:

³² Տե՛ս նույն տեղում, 10 ապրիլի, 1946 թ., № 85:

³³ «էջմիածին», ամսագիր, 1946 թ., հունվար-փետրվար, էջ 9:

կայացած միտինգում 300 հայ ընտանիքների անունից ընդունված հեռագիրը, ուր անկեղծ գոհունակություն էր հայտնվում ներգաղթի թույլատրման առթիվ³⁴։

Անդրադառնալով ներգաղթի վերաբերյալ սովետական կառավարության որոշմանը, հեռավոր Ամերիկայից գրում էին. «Այս մեծ ավետիսը էլեկտրականացուց բովանդակ հայությունը: Մեր պատմական և պատվական երազը իրականացած է այլևս: Այս արևափառ իրականության ի տես մեր աչքերը ցընծուծության արցունքներով լեցվեցան, մեր սիրտերը տրտմանույշ սարսուռներով փրձկեցան և մեր վտարանդի հոգիները սկսան բոցավառվիլ»³⁵։ Այնուհետև նշվում էր, որ հայը երկար ու ձիգ հարյուրամյակներ անդադրում ստիպված էր հեռանալ «իր հայրենիքեն պանդխտության երկաթե ցուպը ձեռքը՝ թափառելով անհայրենիք՝ հյուսիսեն դեպի հարավ, արևելքեն դեպի արևմուտք, ապահովության և ազատության ի խնդիր»: Սակայն «հայ գաղութներու ճակատագիրը ամենուրեք եղած է դժնդակ, անողորմ և մոռյլ, ինչպես Ճենովայի, Լեհաստանի, Հունգարիո, Ռումինիո և այլ գաղութները պատմության թատերաբեմին վրա եկան ու գացին իրենց ետին թողնելով հազիվ ցուրտ տապանաբարեր միայն»: Իսկ այժմ, ներգաղթի վերաբերյալ սովետական կառավարության կայացրած որոշմամբ, «հայկական գաղթականական կառքին անիվը վերջապես հետաշրջեցավ միանգամայն ընդմիջտ: Հայը այլևս օտարութենեն դեպի մայր հայրենիք կը վերադառնա: Արդարև, ինչ լուսավոր և աննախընթաց դարաշրջան, գոր կպարտինք ևս. Հայաստանի կառավարության իմաստուն ղեկավարներուն և ուսս մեծ ազգին անշեղ բարեկամության: Փառք ու պատիվ անոնց, որոնք երկնեցին այս ներանավետ օրը»³⁶։

Արտահայտելով սփյուռքահայերի իղձերն ու ցանկությունները, բուլղարահայ «Երևան» առաջադիմական թերթը գրում էր. «Սովետական կարգերի շնորհիվ հայ ժողովրդի համար փակվեցավ արտագաղթի և պանդխտության ողբալի շրջանը և սկսավ վերադարձը դեպի մայր Հայաստանի խանդակաթ գիրկը: Տեսնելի հետո սույն պայծառ իրողությունը, ամեն ողջամիտ հայու ու-

րիշ բան չի մնար ընել, եթե անվերապահ համակրությամբ ողջունել Հայաստանի կառավարության վարած քաղաքականությունը, որը հայ ազգային քաղաքականությունն է: Ծշմարիտ հայրենասիրությունը այս կսլահանջն: Տարբեր վերաբերում կնշանակե դեմ երթալ հայկական շահերուն»³⁷։

1945 թ. դեկտեմբերի 18-ին Պլովդիվից «Սեան» կոշկակարական արտելի վարչությունը ՀՍՍՀ Ժողովխորհին առընթեր ներգաղթի կոմիտեին գրում էր, թե բուլղարահայությունը անսպասան հրճվանքով տեղեկացավ հայրենադարձության մասին սովետական կառավարության որոշմանը, որը «գալիս է վերջ դնելու դաղթականի ու օտարականի անարգ մակդիրի տակ տվալտող հայերի աստանդական, անորոշ վիճակին ու միաժամանակ գոհացում տալիս նրանց հայրենատուր սրտերի հայրենակարոտ պապակին»³⁸։ Հայրենիք վերադառնալու շարժումը բուլղարահայ գաղթօջախում այնքան լայն թափ էր ստացել, որ արդեն մինչև 1946 թ. մայիսը ներգաղթելու համար ցուցակագրվել էր 3256 ընտանիք կամ 11532 մարդ, և այդ թիվը շարունակում էր աճել³⁹։

Սովետական Հայաստան կատարված նախորդ ներգաղթից արդեն անցել էր շուրջ մեկ տասնամյակ և սփյուռքահայ զանգվածներին այն մի տեսակ հեռու և անիրականանալի երազ էր թվում: Այժմ ահա այն նորից շոշափելի իրականություն էր դառնում և ոտքի հանում համայն սփյուռքահայությունը: Անդրադառնալով վերսկսվող հայրենադարձությանը, Ալեքսանդրիայում հրատարակվող «Արաբս» շաբաթաթերթը գրում էր. «...ներգաղթի խնդիրը այլևս իրականություն դարձած է, և այդ մասին պաշտոնական հրահանգը արդեն հասած է արտասահման և մոտ է այն օրը, որ սփյուռքի հայությունը պիտի վերադառնա իր մայր հայրենիքը և ձեռք ձեռքի տված Հայաստանի մեր եղբայրներուն հետ, պիտի շենցնեն ու ծաղկեցնեն հայուն պատմական հայրենիքը»⁴⁰։

Ներգաղթ թույլատրելու վերաբերյալ սովետական կառավարության որոշման հրապարակումից կարճ ժամանակ անց, ար-

³⁴ Տե՛ս ՀՍՍՀ ԶՍՄ ՊԿԱ, ֆ. 362, ց. 1, գ. 4, թ. 6—7։

³⁵ Նույն տեղում, ց. 2, գ. 9, թ. 97—98։

³⁶ Նույն տեղում։

³⁷ «Երևան», եօրյա թերթ, Սոֆիա, 2 փետրվարի, 1946 թ., № 21։

³⁸ ՀՍՍՀ ԶՍՄ ՊԿԱ, ֆ. 362, ց. 2, գ. 14, թ. 44—46։

³⁹ Տե՛ս նույն տեղում։

⁴⁰ «Արաբս», շաբաթաթերթ, Ալեքսանդրիա, 9 փետրվարի, 1946 թ., № 5։

դեն 1946 թ. փետրվարին, հայրենիք վերադառնալու ցանկության ինչ հայտնել ավելի քան 130 հազար հայեր, այդ թվում՝ Սիրիայում և Լիբանանում՝ 50 հազար, Հարավային Ամերիկայի գաղթօջախներում՝ 32 հազար, Իրանում՝ 21 հազար, Թուրքիայում՝ 19 հազար, Հունաստանում՝ 8 հազար մարդ⁴¹:

Դիմում էին թե՛ անհատորեն, թե՛ խմբերով՝ ամբողջ արտելներով ու հայրենակցական միություններով: Բոլորը միաբերան խնդրում էին որքան հնարավոր է արագացնել հայրենադարձության վերսկսումը: Ահա թե ինչ էր գրում Իրանից Հրանտ Համբարձումյանը Երևան ուղարկած իր դիմումի մեջ. «Բառեր չեմ գտնում հայտնելու մեր անսահման շնորհակալությունը ձեզ՝ Սովետական Հայաստանի ղեկավարներին, որ ի կատար ածեցիք մեր դարավոր երազը՝ դառնալ դեպի հայրենիք: Երջանիկ ենք մենք և անհամբեր... Խնդրում ենք արագացրեք ներգաղթը...»⁴²:

Բեյրութի ֆրանսիական համալսարանի շուրջ 50 հայ ուսանողներ, ցնծությամբ տեղեկանալով հայրենադարձության վերսկսման մասին, նամակով դիմեցին շՍՍՀ Ժողկոմխորհին առընթեր ներգաղթի կոմիտեին, խնդրելով իրենց առաջին հերթին հայրենիք վերադառնալու հնարավորություն տալ, «...որպեսզի մեր ջանքերը միացուցած մեր բախտավոր եղբայրներու աշխատանքներուն, հաճույքով և անձնվիրությամբ կատարենք Սովիետ Հայաստանի մշակութային ու գիտական ապագայի կերտումը»⁴³:

Նորապես հուզիչ է Բեյրութի ամերիկյան համալսարանի 41 հայ ուսանողուհիների դիմումը՝ ուղղված ներգաղթի կոմիտեին, ուր նրանք գրում էին. «Լացին մեր հոգիները հաճախ ու մսեցան հայ հողին, հայ գիրին, հայ պատմության կարոտով, և սակայն քաղցր հույս մը, երջանիկ օր մը անոնց մոտ ըլլալու հույսը, սովալ տոկալու կորով մեզի: Սպասեցինք քաղցրաշունչ կանչի մը, հայրենիքի կանչին, և ահա լսեցինք այդ շատ սիրելի, երազված կոչը: Եվ հիմա կբոցավառի մեր մեջ խանդավառությունը շուտով մեր քույրերուն միանալու: Կուղենք քայլ մեր հայրենիքի ճամբաներեն, քսանհինգ տարվան անոր մեծասքանչ

վերելքին դրոշմած հպարտությունը մեր ճակատներուն, և մոռանալ, մոռանալ մեր կրած անտիրական հալածանքը»⁴⁴:

Ամերիկահայ ազգային խորհրդին կից հայերն ներգաղթի օգնության հանձնախումբը հայրենակիցներին ուղղված իր կոչերից մեկում գրում էր. «Դեպի երկիր, Նորհրդային Հայաստան, երկիր դրախտավայր:

Ի՛նչ անուշ և ի՛նչ հոգեպարար շեշտ մը կա այդ խոսքին մեջ: Այդ հայրենավանդ խոսքը Երևանի արևափառ երկինքեն մեզի կուգա ծավալվելով հորիզոնե հորիզոն, հույսի և լույսի սարսուռներով աուլեցուն:

Դարերով աղոթեցինք, դարերով երազեցինք և դարերով երգեցինք այս նվիրական օրը: Մեր հայրերը անցյալին մեջ, մեր քույրերն ու եղբայրները դեռ երեկ այս երանավետ օրվան համար ողջակիզվեցան և զոհաբերվեցան հավատքի կայծը իրենց հոգիին խորը և հույսի ժպիտը իրենց շուրթերուն վրա:

Ներգաղթը շՍՍՀ կառավարության պատմական մեկ որոշումն է, որ թե՛ Նորհրդային Հայաստանի մեջ և թե՛ սփյուռքի հայերուն վտարանդի հոգիները անհուն խանդավառությամբ կբոցավառե: Ներգաղթի շարժումը արտասահմանի մեջ օվկիանոսի հոսանքներուն պես կտարածվի ալիք ալիք: Բովանդակ արտասահմանի հայ գաղութը ոտքի ելած է դեպի երկիր»⁴⁵:

ՇՍՍՀ Ժողկոմխորհին առընթեր արտասահմանից ներգաղթող հայերի ընդունման և տեղավորման կոմիտեի հրահանգների հիման վրա շուտով սփյուռքահայ գաղթօջախներում ստեղծվեցին ներգաղթի տեղական կոմիտեներ, որոնք և ձեռնամուխ եղան նախապատրաստական աշխատանքներին և հայրենիք վերադառնալ ցանկացողների ցուցակագրմանը: Ներգաղթին աջակցող տեղական առաջին կոմիտեներից մեկը կազմակերպվեց Սիրիա-Լիբանանում: 1946 թ. փետրվարի 16-ին Բեյրութից Երևան՝ ՇՍՍՀ Ժողկոմխորհին առընթեր ներգաղթի կոմիտեին ուղարկված նամակում հայտնվում էր, որ «Սովետ Հայաստանի Լիբանանի բարեկամներու ընկերության և Սուրիո ու Լիբանանի հայ ազգային խորհուրդներու նախագահներուն ուղղած 25/12—1945 թվակիր ձեռ նամակը ստացված է և հրատարակված Սուրիո և Լիբանանի հայկական մամուլին մեջ»: Այդ նամակի հրա-

⁴¹ Տե՛ս ՄԼԻ ՇՄԿԱ, ֆ. 1, ց. 35, գ. 1, թ. 113—114:

⁴² ՇՍՍՀ շՍՍՀ ՊԿԱ, ֆ. 362, ց. 2, գ. 17, թ. 15—16:

⁴³ «Արարատ», օրաթերթ, Բեյրութ, 8 փետրվարի, 1946 թ., № 1475:

⁴⁴ «Չարթոնք», օրաթերթ, Բեյրութ, 8 փետրվարի, 1946 թ., № 2730:

⁴⁵ ՇՍՍՀ շՍՍՀ ՊԿԱ, ֆ. 362, ց. 2, գ. 9, թ. 66—67:

հանգնեցին համապատասխան կազմվել է ներգաղթի կենտրոն, «որուն մաս կկազմեն առաջադիմական կազմակերպությանց և միութեանց ղեկավար անդամները»⁴⁶: Միրիայի և Լիբանանի ներգաղթի կենտրոնի կազմի մեջ մտնում էին Մկրտիչ Մսրրլյանը (պատվավոր նախագահ), Հրանտ Դեհեճյանը (նախագահ), Հրաչ Սեդրակյանը (Ա քարտուղար), Վահրիճ Ճերեճյանը (Բ քարտուղար), Բագրատ Պաղպալյանը (գանձապահ), Եփրեմ էլլեզյանը, Գևորգ Պապոյանը, Ադամ Մանվելյանը, Լևոն Ալթունյանը, Հարություն Զպլաքյանը, Հովսեփ Ծողղատլյանը, Հարություն Պեղճյանը՝ խորհրդականներ: Հետագայում այդ կազմի մեջ որոշ փոփոխություններ եղան ոմանց հայրենիք մեկնելու կամ ոմանց հրաժարվելու պատճառով: Մ. Մսրրլյանի փոխարեն կոմիտեի պատվո նախագահ դարձավ Բ. Պաղպալյանը⁴⁷, անդամներ՝ Հակոբ Թրյանցը, Հայկաշեն Ուզունյանը, Նահապետ Նահապետյանը, Արմենակ Փոլատյանը, Արմեն Ղարիպյանը, Խաչատուր Փիլավճյանը, Հարություն (Արթին) Մատեյանը և ուրիշներ⁴⁸:

Ներգաղթի տեղական կոմիտեներ ստեղծվեցին նաև Դամասկոսում և Հալեպում: Դամասկոսի կոմիտեն կազմվել էր 1946 թ. փետրվարի 10-ին, հետևյալ կազմով. Հրանտ Գրիգորյան՝ նախագահ, Ավագ Զեքեճյան՝ փոխնախագահ, Հարություն Մատեյան՝ Ա քարտուղար, Լևոն Փոթուզյան՝ Բ քարտուղար, Ավետիս Եսզուպյան՝ գանձապահ, Պողոս Պեշիրյան, Հովհաննես Սիմոնյան և Մեսրոպ Մեսրոպյան՝ հաշվեքննիչներ, Հովհաննես Մաճառյան, Գրիգոր Հարությունյան, Հայկ Զիպեյան, Նուպար Նաճարյան և Երվանդ Մարգարյան՝ խորհրդականներ⁴⁹: Դամասկոսում ներգաղթի նախապատրաստական աշխատանքներին ղգալի չափով նպաստում էին նաև կոմիտեին կից ստեղծված պրոպագանդայի, հպատակության փոփոխության, հանգանակիչ, արդյունաբերական, կալվածական, առողջապահական, փոխադրական, գեղարվեստական և այլ հանձնախմբերը, որոնցից յուրաքանչյուրը ղեկավարվում էր կոմիտեի մեկ անդամի կող-

մից: Այդ հանձնախմբերում ակտիվ աշխատանք էին կատարում Ճեպեճյանը, Ինճեյանը, Մարգարյանը, Մեհրապյանը, Գոճայանը և ուրիշներ⁵⁰: 1946 թ. փետրվարի 10-ին կազմվում է նաև Հալեպի և շրջակայքի հայերի ներգաղթի կոմիտեն, հետևյալ կազմով. Արշակ Գալեմքեարյան՝ Ա ատենապետ, Ահարոն Խաչատուրյան՝ Բ ատենապետ, Ավետիս Տեր-Սահակյան՝ Ա ատենադպիր, Հարություն Մախյան՝ Բ ատենադպիր, Խաչիկ Թուխմանյան՝ Գ ատենադպիր, Հակոբ Ներսոյան՝ հաշվակալ, Գուրգեն Համալյան՝ գանձապահ: Կոմիտեին կից կազմվել էին նաև կալվածական, բժշկական-առողջապահական, փոխադրական և տնտեսական հանձնախմբեր, որոնցում ակտիվ աշխատանք էին կատարում վերապատվելի Տիգրան Խրլոպյանը, Դանիել Յուսուֆյանը և ուրիշներ⁵¹:

Նույն ժամանակ ներգաղթի ենթակոմիտեներ կազմվեցին Զեղիբեում և Հոմսում: Հոմսի ենթակոմիտեի մեջ մտան Միսաք Ճերեճյանը՝ նախագահ, Սուրեն Կարճյանը՝ քարտուղար, Փանոս Երնեքյանը՝ փոխնախագահ, Աբրահամ Թոփճյանը՝ փոխքարտուղար, Տիրան Մալումյանը՝ գանձապահ, Միհրան Ազանիբյանը՝ հաշվապահ, Գևորգ Հիտոյանը, Սարգիս Թեքերյանը, Լեվոն Քեոսյանը՝ խորհրդականներ⁵²: Զեղիբեի ենթակոմիտեի կազմում էին՝ Նորայր Ինճեյանը, Խաչո աղա Շառոյանը, Մուրատ աղա Ղազարյանը և ուրիշներ⁵³:

1946 թ. փետրվարի 18-ին բուլղարահայ «Երևան» առաջադիմական միութեան կենտրոնական վարչության ատենապետ Գաբրիել Գաբրիելյանը և ատենադպիր Գրիգոր Դարբինյանը հայտնում են ՀՍՍՀ ներգաղթի կոմիտեի նախագահ Բ. Աստվածատրյանին, որ կազմված է Բուլղարիայի հայերի ներգաղթի կոմիտե, հետևյալ կազմով. Գաբրիել Գաբրիելյան՝ նախագահ, Մարտիրոս Խաչիկյան՝ նախագահի տեղակալ, Գրիգոր Դարբինյան՝ քարտուղար, Դավիթ Դավթյան՝ փոխնախագահ, Հակոբ Զաքրբով, Լևոն Մեծատուրյան, Գևորգ Մեքթուպճյան, Պարույր Մալլեմյան, Վարդան Սարգիսով, Սարգիս Փաշաճյան և Արմենակ Գալաճյան՝ անդամներ: Կոմիտեի պատվո անդամ էր բուլ-

⁴⁶ Տե՛ս նույն տեղում, գ. 4, թ. 13:

⁴⁷ Տե՛ս 2. Մսրրլյան, Մկրտիչ Մսրրլյանի ազգային-քաղաքական գործունեությունը, էջ 314:

⁴⁸ Տե՛ս ՀՍՍՀ ՀՍՍՀ ՊԵԱ, ֆ. 362, ց. 2, գ. 4, թ. 13 և 66, գ. 30, թ. 76, գ. 32, թ. 46:

⁴⁹ Տե՛ս նույն տեղում, գ. 4, թ. 57:

⁵⁰ Տե՛ս նույն տեղում, թ. 58:

⁵¹ Տե՛ս նույն տեղում, թ. 64—65:

⁵² Տե՛ս նույն տեղում, թ. 64:

⁵³ Տե՛ս նույն տեղում, գ. 30, թ. 76:

դարահայ թեմի առաջնորդ գեր. Գրիգոր եպիսկոպոս Կարապետ-
յանը: Բուլղարահայ ներգաղթի կոմիտեն իր մասնաճյուղերն
ունենր հայաշատ բոլոր քաղաքներում⁵⁴:

Ինչպես Բուխարեստից հայտնում էր Հայաստանյան ճակատ
առաջադիմական կազմակերպության նախագահ Վահան Գանիել-
յանը, 1946 թ. սկզբներին կազմակերպվել էր նաև Ռումինիայի
հայերի ներգաղթի կոմիտեն Հարուսթյուն Պապոյանի նախագա-
հուկամբ⁵⁵: Կոմիտեի անդամները մի մասի 1946 թ. հայրենիք
մեկնելու կապակցությամբ, 1947 թ. գարնանը ընտրվում է կո-
միտեի նոր կազմ՝ վարչական, արձանագրական և ֆինանսա-
կան բաժիններով: Նրանում ակտիվ աշխատանք էին կատարում
Ադասի Ժամկոչյանը (վարչական բաժնի նախագահ), Գևորգ
Եղիգարյանը (արձանագրական բաժնի նախագահ), Հարուսթյուն
Գազազյանը (ֆինանսական բաժնի վարիչ), Արտաշես Գասարճ-
յանը, Երվանդ Իսրայելյանը, Հակոբ Գայսերլյանը, Անդրանիկ
Յուրուճյանը, Միհրան Մեսրոպյանը, Եզնիկ Գարագաշյանը,
Ստեփան Պայպուրթլյանը, Գևորգ Տիրացյանը, Երվանդ Սրա-
պիոնյանը և ուրիշներ⁵⁶:

1946 թ. մայիսի 10-ին Փարիզից Ֆրանսահայ ազգային
ընդհանուր միության նախագահ Հանրի (Գևորգ) Մարմարյանը
և քարտուղար Մեսրոպ Ասատուրյանը հայտնում են Երևան՝ ՀՍՍՀ
Մինիստրների խորհրդին առընթեր արտասահմանից ներգաղթող
հայերի ընդունման և տեղափոխման կոմիտեին, որ Ֆրանսահայ
ազգային ճակատը, որը մինչ այդ ղեկավարում էր ներգաղթի
նախապատրաստական աշխատանքները, ստեղծել է ֆրանսա-
բնակ հայերի ներգաղթի կենտրոնական կոմիտե՝ բաղկացած 21
հոգուց: Կենտկոմի կազմում ընդգրկված էին կոմունիստներ
Շահե Տատուրյանը, Ազատ Ադամյանը, Միհրան Մավլանը,
Ալեքսանդր Կոստանդինյանը և ուրիշներ: Կենտկոմի ղեկավանի
կազմում էին Արտակ Դարբինյանը՝ նախագահ, Հայկ Գալճյա-
նը և Պողոս Արսլանյանը՝ փոխնախագահներ, Դավիթ Դավթ-
յանը՝ քարտուղար, Կարապետ Թուլումճյանը՝ փոխքարտուղար,
Վահե Ֆրենկյանը, Առաքել Չաքրյանը (մի կարճ ժամաակ անց

վերջին երկուսին փոխարինեցին Մանուել Ոսկերիչյանը և Սար-
գիս Սաղըրյանը), Աբրահամ Տեր-Անդրեասյանը, Լեոն Չորմիս-
յանը, Անդրանիկ Կենճյանը և Մեսրոպ Ասատուրյանը՝ անդամ-
ներ: Ֆրանսահայ գաղթօջախը բաժանվել էր չորս շրջանի՝ Փա-
րիզի, Մարսելի, Լիոնի և Վալանսի, որոնք նույնպես ունենին ներ-
գաղթի տեղական կոմիտեներ: Սրանց ենթարկվում էին ենթա-
կոմիտեները, որոնք ստեղծվել էին հայաբնակ բոլոր վայրերում:
Այդ ձևով ֆրանսահայերի ներգաղթի կոմիտեների մեջ ընդգրկ-
ված էր շուրջ 70 մարդ⁵⁷:

Ֆրանսահայերի ներգաղթի կենտկոմը իր հրապարակած ա-
ռաչին կոչում գրում էր. «Հայ ժողովրդի պատմության մեջ ներ-
գաղթը եզակի երևույթ մըն է: Հայ ժողովուրդը միշտ իր երկ-
րեն գաղթել ստիպված է պատմության ընթացքին: Այսօր սա-
կայն, շնորհիվ եղբայրական Սովետական մեծ Միության աջակ-
ցության, փառավոր էջ մը կբացվի մեր ժողովուրդի պատմու-
թյան մեջ: Ի սփյուռս աշխարհի ցրված հայերը այսօր կպատ-
րաստվին հայրենիք վերադառնալ: Գաղութի մեջ արդեն ար-
ձանագրված են տասնյակ հազարավոր հայեր և արձանագրու-
թյունները կշարունակվին: Վստահ ըլլալով գաղութիս հայ-
րենաբաղձության զգացումներուն, կսիրենք հուսալ, որ ամեն
հայ պարտականություն պիտի համարն բարոյական և նյութա-
կան իր օժանդակությունը բերել ներգաղթի կեդրկոմիտեին,
դյուրացնելու և հաջողությամբ գլուխ հանելու համար այս մե-
ծապես հայրենասիրական պարտականությունը»⁵⁸:

1946 թ. հունվարի 24-ին Հայֆայից Պաղեստինի Սովե-
տական Հայաստանի պաշտպանության լիգայի ատենապետ
Սարգիս Աստուրը և ատենադպիր Կարապետ Չալըզյանը ՀՍՍՀ
ներգաղթի կոմիտեի նախագահ Բ. Աստվածատրյանին գրում
էին. «Անհուն ուրախությամբ ողջունեցինք պատվարժան կոմի-
տեիդ կազմության լուրը, որը արտասահմանի հայրենաբաղձ և
տարագիր հայության միակ բաղձանք ներգաղթը եկավ իրակա-
նացնելու... Այս երջանիկ առթիվով Սովիետ Հայաստանի պաշտ-
պանության լիգան կուզա շնորհավորելու և մաղթելու ձեզ հա-
ջողություն: և արդյունավորություն: Այս բարեպատեհ առիթով

⁵⁴ Տե՛ս նույն տեղում, գ. 14, թ. 2—3, գ. 32, թ. 17, նաև՝ «Երևան»,
19 փետրվարի, 1946 թ., № 26:

⁵⁵ Տե՛ս ՀՍՍՀ ՀՄԾ ՊԿԱ, ֆ. 362, ց. 2, գ. 13, թ. 2—5 և 22:

⁵⁶ Տե՛ս նույն տեղում, գ. 28, թ. 51:

⁵⁷ Տե՛ս նույն տեղում, գ. 6, թ. 36, գ. 31, թ. 43, գ. 32, թ. 16, նաև՝
«Արևմուտք», շաբաթաթերթ, Փարիզ, 26 մայիսի, 1946 թ., № 63:

⁵⁸ ՀՍՍՀ ՀՄԾ ՊԿԱ, ֆ. 362, ց. 2, գ. 6, թ. 33:

ձերդ ուշադրության կհանձնենք մեր գաղութին բացարձակ մեծամասնության իղձը՝ օր առաջ հայրենիք վերադառնալու...»⁵⁹։ 1946 թ. փետրվարի 16-ին կազմվում է Պաղեստինի հայերի ներգաղթի կոմիտեն՝ Հովհաննես Թորեյանի նախագահությամբ և Հովհաննես Գաֆեսյանի քարտուղարությամբ⁶⁰։ Կոմիտեին անդամակցում էին նաև Ջորջ Կարապետյանը (հետագայում դարձավ կոմիտեի նախագահ), Գուրգեն Եալընըզյանը, Կարապետ Չալըզյանը, Ճենոն Ճըռյանը, Եզնիկ Պոյաճյանը, Պետրոս Նշանյանը, Սարգիս Ատուրը, Սարգիս էլպեբյանը, Հակոբ Մարտիրոսյանը, Հրանտ Չալըզյանը, Նուպար Տետլյանը, Պողոս Տըրդատյանը, Պետրոս Խանճյանը, Գևորգ Փոլատյանը, Գրիգոր Աբարտյանը, Լևոն Ունճյանը և Պարգև Պլպուլյանը⁶¹։

Շուտով ներգաղթի հանձնախմբեր են կազմվում նաև Երուսաղեմում, Յաֆայում և Հայֆայում։ Յաֆայի հանձնախմբի մեջ մտնում էին ներկայացուցիչներ ՀԲԸՄ մասնաճյուղից, Հայաստանի օգնության հանձնախմբից, Հայկաշեն միությունից, գեղարվեստասիրաց միությունից, ՀԵՄ-ից։ Հանձնախմբի ղեկավան ուներ հետևյալ կազմը. Թ. Թաղևոսյան՝ ատենապետ, Ս. Հովհաննիսյան՝ փոխատենապետ, Պ. Լեփեճյան՝ ատենադպիր, Կ. Գարաճյան՝ փոխատենադպիր, Ա. Սարգիսյան՝ գանձապահ, Դ. Մարգարյան և Ա. Աշճյան՝ խորհրդականներ⁶²։

Քանի որ նախատեսված էր 1946 թ. ամենազանգվածային հայրենադարձությունն իրականացնել Իրանից, ուստի ներգաղթի տեղական անդրանիկ կոմիտեներից մեկը կազմվեց հենց այդ գաղթօջախում։ Իրանահայերի ներգաղթին աջակցող կենսական կազմված էր 31 հոգուց։ Այն իր բաժանմունքներն ուներ Համադանում, Փեհլեղում, Մեշեղիում, Արաբում, Ռեշտում, Ահվազում, Սպահանում և երկրի այլ հայաբնակ նահանգներում ու գավառներում։ Գեռևս 1946 թ. փետրվարի 16-ին կազմվել էր Ատրպատականի նահանգի 15 հոգուց բաղկացած ներգաղթի կենտկոմ՝ Բաբկեն Ղուրուխչյանի նախագահությամբ և Հրաչ Հովհաննիսյանի քարտուղարությամբ⁶³։

Իրանահայերի ներգաղթին աջակցող կենտկոմի նախագահության մեջ մտնում էին գերապատիվ Վահան եպիսկոպոս Կոստանյանը՝ պատվոնախագահ, Ռոման Իսաևը (Ռոմանոս Ծասյան)՝ նախագահ, Հովսեփ խան Ղարախանյանը, Հայկ Գարագաշը և Ղազար Սիմոնյանը՝ փոխնախագահներ, Սեդրակ Աբրալյանը՝ պատասխանատու քարտուղար, Հովհաննես Բարսեղյանը՝ գանձապահ, Սուրեն Սևոյանը և Խաչիկ Աբրահամյանը՝ անդամներ⁶⁴։

Իրանահայերի ներգաղթի կենտկոմը Երևան ուղարկած իր առաջին իսկ գրության մեջ նշում էր, որ հայրենադարձության վերաբերյալ սովետական կառավարության որոշումը գաղութի հայության կողմից ընդունվել է մեծ ցնծությամբ, առաջ բերելով աննախընթաց հայրենասիրական վերելք։ Այն բնութագրվում էր որպես հայ ժողովրդի պատմության մեջ նոր վտռ էջ, որի շնորհիվ իրականություն կդառնա աշխարհասփյուռ հայ տարագիրների իրենց հայրենիքում վերամիավորվելու դարավոր իղձը։ Այդ առթիվ իրանահայերը «սրտանց երախտագիտություն են հայտնում սովետական իշխանությանն ու ռուս մեծ ժողովրդին օգնության և արտասահմանյան հայերին նորից իրենց հայրենիքը ձեռք բերելու հնարավորություն ընձեռնելու համար»⁶⁵։

1946 թ. սկզբին Նյու Յորքում կազմվում է Ամերիկահայ ազգային խորհրդին կից հայերի ներգաղթի օգնության հանձնախումբ (ՀՆՕՀ), որի մեջ մտան՝ Զեմա Չանդալյան (ատենապետ), Արմեն Միրիճանյան (փոխատենապետ), Մկրտիչ Բնակունի (վարիչ-քարտուղար), Մարտիրոս Թարայան (քարտուղար), Տիգրան Սմսարյան (գանձապահ), Մանիկ Խոճասարյան, Արշավիր Քաղցրունի, Սարգիս Սարգսյան, Արմենակ Վասպուրականցի և Հակոբ Ուրլյան՝ անդամներ⁶⁶։

1946 թ. մայիսի կեսերից սկսվեց ներգաղթել ցանկացողների արձանագրումը։ Այդ առթիվ հանձնախումբը հրատարակեց

⁵⁹ Նույն տեղում, գ. 32, թ. 3—15։

⁶⁰ Տե՛ս նույն տեղում, գ. 17, թ. 87—88։

⁶¹ Տե՛ս նույն տեղում, գ. 9, թ. 52ա—53։ «Լրաբեր» թերթի 1946 թ. փետրվարի 16-ի № 113-ում հրատարակված է Ամերիկայի հայերի ներգաղթի օգնության հանձնախմբի կազմը, որտեղ վերը թվարկածներին ավելացված են վերապատվելի Եզնիկ Ազնակյան, Պետրոս Պոնտացի, վեր. Մ. Թ. Գալաճյան, տիկ. Արուսյակ Ճերահյան, տիկ. Ոսկինե Եանեկյան, Միհրդատ Թիրեարյան, Արմենակ Կյուրեղյան, Հայկ Պարոնյան, Սահակ Ավետիսյան, Ս. Մ. Արտունի և Արամ Միրիճանյան։

⁵⁹ Նույն տեղում, գ. 16, թ. 3—4։

⁶⁰ Տե՛ս նույն տեղում, թ. 8—9։

⁶¹ Տե՛ս նույն տեղում, նաև՝ գ. 32, թ. 18 և «Միություն», շաբաթաթերթ, Հայֆա, 2 հունիսի, 1946 թ., № 38։

⁶² Տե՛ս «Արարատ», 10 օգոստոսի, 1946 թ., № 1648։

⁶³ Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 362, ց. 2, գ. 17, թ. 3—5։

կեց և Ամերիկահայ ազգային խորհրդի մասնաճյուղերի միջոցով ԱՄՆ-ի հայաշատ վայրերում տարածեց 50 000 հարցարաններ: Ինչպես հայտնում էր ՀՆՕԸ-ը, «արձանագրվողներն շատեր, մայր երկրի վերելքին նպաստել կարենալու համար կփափագին միասին զանազան գործիքներ, մեքենայական կազմվածներ, ապրանքներ բերել և արտել կազմել»⁶⁷:

Հայրենիք ներգաղթելու բուռն ցանկություն են հայտնում նաև եգիպտոսում ապրող հայերը: 1946 թ. ապրիլի 14-ին եգիպտահայ երիտասարդական 9 կազմակերպություններ, բացառությամբ դաշնակցական երիտասարդական միություն, հեռագիր են ուղարկում ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր ներգաղթի կոմիտեին՝ խնդրելով Եգիպտոսից նույնպես հայրենադարձություն կազմակերպել⁶⁸: Շուտով կազմվում է եգիպտահայ ներգաղթի կենտրոն՝ եգիպտահայոց կրոնական թեմի առաջնորդ գերաշնորհ Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյանի նախագահությամբ: Կենտրոնին անդամակցում էին Հակոբ Արամյանը, Խաչիկ Հովհաննիսյանը, Ասատուր Պողիկյանը, Լևոն Տաճյանը, Հրաչ Գալընյանը, Համբար Դավիթը, Ստեփան Շահպալը և Պերճ Պապիկյանը⁶⁹: Ներգաղթողների արձանագրման համար կաշիբեում կազմվել էին նաև թաղային ենթակոմիտեներ. որոնցում ակտիվ աշխատանք էին կատարում Առաքել Պատրիկը, Ստեփան Ումետյանը, Հարություն Մեքերյանը, Հովսեփ Թուխունճյանը, Նորայր Պեյլերյանը և ուրիշներ: Ներգաղթել ցանկացողների ցուցակագրումն սկսելու հրահանգը մամուլում հրապարակվելուց կարճ ժամանակ անց, օգոստոսի 15-ից մինչև հոկտեմբերի սկիզբն ընկած ժամանակամիջոցում, արձանագրվածների թիվը հասավ 10 հազար մարդու: Եգիպտահայ զաղթյալները նույնպես լայն ծավալ ստացավ արտադրական արտելների կազմակերպման գործը⁷⁰:

Եգիպտահայ ներգաղթի կենտրոնի հետ սերտ համագործակցության մեջ էին նաև Եթովպիայի, Սուդանի և աֆրիկյան մի քանի այլ երկրների հայկական զաղթյալները, որոնք կրոնական առումով մտնում էին եգիպտահայոց թեմի մեջ: Նրան-

ցում նույնպես բազմաթիվ հայեր հայրենիք ներգաղթելու ցանկություն հայտնեցին, ուստի կազմվեցին ներգաղթի տեղական կոմիտեներ, որոնք և ղեկավարում էին այդ աշխատանքը:

Այսպես. եթովպահայ ներգաղթի կոմիտեն, որն ստեղծվել էր 1946 թ. հոկտեմբերին, ուներ հետևյալ կազմը. Հովհաննես քահանա Կեհերյան՝ նախագահ, Գևորգ Քեհեայան՝ Ա տեսնապետ, Վահան Փողարյան՝ Բ տեսնապետ, Հակոբ Նալպանտյան՝ Ա տեսնաղպիր, Արշակ Խաչատուրյան՝ Բ տեսնաղպիր, Արսեն Աճեմյան՝ խորհրդական: 1946 թ. աշնան վերջին ներգաղթելու համար Եթովպիայում ցուցակագրվել էր 464 մարդ⁷¹:

Սուդանահայ ներգաղթի կոմիտեի մեջ ընդգրկված էին Վահրամ Մալումյանը, Ժիրայր Պալյանը և Կարապետ ՕՏանյանը: Մինչև 1947 թ. մարտը հայրենադարձվելու համար Սուդանում ցուցակագրվել էր 502 մարդ⁷²:

Մեծ էր հայրենադարձվելու ձգտումը նաև իրաքահայերի մեջ: Իրաքում նույնպես ստեղծվել էր ներգաղթի հանձնաժողով, որի կազմի մեջ մտնում էին՝ Թորոս Բարաղամյանը, Սեդրակ Տեր-Նդիայանը, Սարգիս Զոլուպյանը, Իսրայել Զոբյանը, Հակոբ Վարդապետյանը, Հովհաննես Իսպիրյանը, Հովհաննես Զիվանյանը և Կոստան Զարխուրյանը⁷³: Մինչև 1947 թ. գարունը այդ հանձնաժողովը ներգաղթելու համար արձանագրել էր Իրաքում ապրող շուրջ 14000 հայերից ավելի քան 9000 հոգու⁷⁴:

Նկատի ունենալով հունահայության խիստ ծանր կացությունը, սովետական կառավարությունը լրջորեն մտահոգված էր նրա հոգսերի թեթևացմամբ: Մինչև հունահայ ներգաղթի կոմիտեի ստեղծումը հայրենադարձության հարցերով զբաղվում էր 1945 թ. հոկտեմբերին կազմակերպված Հունահայերի ազգային ժողովրդական միության (ՀԱԺՄ) կենտրոնական վարչությունը (ատեսնապետ՝ Ստեփան Քյուլնեքյան, ատեսնաղպիր՝ Սրբուհի Պերպերյան)⁷⁵: Միության նպատակն էր «անկեղծ սեր և գործակցության ոգի մշակել Սովետական Հայաստանի հան-

67 ՀՀՍՀ ՀՀՍՀ ՊԿԱ, ֆ. 362, ց. 2, գ. 9, թ. 53:

68 ՏԵ՛ս նույն տեղում, գ. 10, թ. 23:

69 ՏԵ՛ս նույն տեղում, ց. 8, գ. 3, թ. 8—10:

70 ՏԵ՛ս նույն տեղում:

71 ՏԵ՛ս նույն տեղում, գ. 8, թ. 2 և 5—12:

72 ՏԵ՛ս նույն տեղում, գ. 4, թ. 6:

73 ՏԵ՛ս «Նփրատ», օրաթերթ, Հալեպ, 3 օգոստոսի, 1946 թ., № 2698:

74 ՏԵ՛ս ՀՀՍՀ ՀՀՍՀ ՊԿԱ, ֆ. 362, ց. 1, գ. 198, թ. 1—3:

75 ՏԵ՛ս նույն տեղում, ց. 2, գ. 18, թ. 13:

դեպ», նրա հետ հաստատել մշակութային կապ և կազմակերպել ներգաղթ⁷⁶։

1946 թ. մարտի 13-ին «Նոր կյանք» առաջադիմական թերթում հրատարակվում է ՀԱԺՄ կենտրոնական վարչության հայտարարությունը՝ հայրենիք ներգաղթել ցանկացողների ցուցակագրումը սկսելու մասին⁷⁷։ 1946 թ. մայիսի վերջերին կազմվում է հունահայ ներգաղթի կենտրոնական հանձնախումբը՝ մասնակցությամբ ՀԱԺՄ-ի, Բարեգործականի, Ազգային կենտրոնական վարչության, ինչպես նաև մի խումբ ազգային դործիչների⁷⁸։ Հունահայ ներգաղթի կենտրոնական հանձնախումբի կազմում էին ՀԱԺՄ կենտր. վարչության փոխատենապետ Առաքել Պետրոսյանը (ատենապետ), Պետրոս Հովնանյանը (փոխատենապետ), Ն. Կյուրունլյանը (ատենադպիր)⁷⁹, Վահան Գաբելյանը, Մովսես Պաղարյանը, Ստեփան Քյուլենբերյանը, Ստեփան Ֆեսչյանը, Փ. Գոլանճյանը, Պ. Սարգիսյանը և ուրիշներ⁸⁰։ ՀԲԸՄ նախաձեռնությամբ Հունաստանում կազմակերպվեց նաև ներգաղթի ֆոնդի հանդանակիչ մարմին (ատենապետ՝ Ա. Գալփադյան), որի մասին հունահայ ներգաղթի կենտրոնական հանձնախումբը 1946 թ. հունիսի 20-ին հանդես եկավ այդ կապակցությամբ հունահայությանն ուղղված հատուկ կոչով⁸¹։

Հայրենիք ներգաղթելու բուռն ցանկություն էին հայտնում նաև կիպրոսում ապաստանած հայերը, մասնավորապես Մելքոնյան կրթական հաստատության աշակերտները, որոնք 1946 թ. փետրվարի 22-ին այդ մասին կոչեկտիվ նամակ էին ուղարկել Երևան՝ ներգաղթի կոմիտեին, հակառակ որոշ տարրերի խանգարիչ դործունեությանը⁸²։

Կիպրոսի Հայաստանի բարեկամների միության վարիչ-բարտուղար Սմբատ Տեովլաթյանը, ՀՍՍՀ ներգաղթի կոմիտեի նախագահ Բ. Աստվածատրյանին հասցեագրած դիմումի մեջ հայտնելով կիպրահայերի ծանր դրության մասին, նույնպես խնդրում էր իրականացնել նրանց հայրենադարձությունը։ «Կիպ-

րահայությունը,— գրում էր Ս. Տեովլաթյանը,— մեծ հուշումով հետևեցավ ամբողջ 25 տարի արյունով և քրտինքով շահված մեր հայրենիքի հրաշափառ վերելքին և պատերազմի ժամանակ ան իր կարելին ըրավ՝ իր մասնակցությունը և օգնությունը հայտնելու հայրենիքի եղբայրներուն՝ կազմակերպելով Սասունցի Գավիթ հրասայլային շարասյունը, Ստալինկրատի (ճակատամարտի) և հայրենական պատերազմի ընթացքին ինկած ուղամիկներու զավակներու ֆոնտերուն ի նպաստ հանգանակությունը», ուստի հույսով է, որ այժմ հայրենիքն իր գիրկը կառնի կիպրահայ տարագիրներին⁸³։

1947 թ. ամռանը կազմվում է կիպրահայ ներգաղթի կոմիտե, որը օգոստոսի 1-ից սկսում է ներգաղթողների ցուցակագրումը։ Կիպրահայ ներգաղթի կոմիտեի մեջ ընդգրկված էին Սամվել Մուրատյանը, Էդվարդ Պոտիկյանը, Կարապետ Թաշճյանը, Հակոբ Աճեմյանը և Սմբատ Տեովլաթյանը⁸⁴։

Ինչպես հայտնում էր 1946 թ. հոկտեմբերի 18-ին Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Զ-ին գրած իր նամակում Կ. Պոլսի հայոց պատրիարքական տեղապահ Գևորգ արքեպիսկոպոս Արսլանյանը, հայրենիք ներգաղթելու մեծ փափագ ունեին նաև Թուրքիայում գտնվող հայերը, որոնք «տեղվույս ՍՍՀ Միության ընդհանուր հյուպատոսարանը ներկայացած և արձանագրված են», ուստի «...անհրաժեշտ է, առաջին առիթով, որ հոսկե ներգաղթելիքներու փոխադրության հնարավորությունը ներկայանա, նախապատվություն տալ այն բազմահազար հայերուն, որոնք Անատոլուի զանազան գավառներու մեջ, առավելապես գյուղերու և շեներու մեջ, ցրթուն ու դառն վիճակի մը մեջ կգտնվին»⁸⁵։

Հայրենադարձությունը վերսկսելու լուրը խանդավառությամբ համակեց նաև հեռավոր Լատինական Ամերիկայի հայկական գաղթօջախներին, որոնք նույնպես ձեռնամուխ եղան ներգաղթի նախապատրաստական աշխատանքներին։ Այդ առթիվ ահա թե ինչ էր գրում «Հայ մամուլ» շաբաթաթերթը. «Ներգաղթի արտոնության բերկրալի լուրը անսահման ուրախությունը կհամակե սրտերը բոլոր անոնց, որոնք մաքուր համո-

⁷⁶ Տե՛ս նույն տեղում, թ. 11—13։

⁷⁷ Տե՛ս «Նոր կյանք», Աթենք, 13 մարտի, 1946 թ., № 287։

⁷⁸ Տե՛ս նույն տեղում, 2 հունիսի, 1946 թ., № 354։

⁷⁹ Տե՛ս նույն տեղում, 27 դեկտեմբերի, 1946 թ., № 530։

⁸⁰ Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՄԾ ՊԿԱ, ֆ. 326, ց. 1, գ. 200, թ. 5—9։

⁸¹ Տե՛ս «Նոր կյանք», 22 հունիսի, 1946 թ., № 354։

⁸² Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՄԾ ՊԿԱ, ֆ. 362, ց. 2, գ. 19, թ. 22—23։

⁸³ Տե՛ս նույն տեղում, գ. 18, թ. 74—78։

⁸⁴ Տե՛ս «Նոր Արաքս», շաբաթաթերթ, Նիկոզիա, 2 օգոստոսի, 1947 թ., № 31—140։

⁸⁵ ՀՍՍՀ ՀՀՄԾ ՊԿԱ, ֆ. 362, ց. 2, գ. 22, թ. 13—15։

զումը ունեցան Սովետ Հայաստանի լուսապայծառ իրականության, և որոնք Սովետ Միության Հայրենական պատերազմի դժվարին օրերուն անխախտ հավատքը ունեցան ժողովուրդներու արշար դատի հաղթանակին, անձկանոք սպասելով բախտավոր ու երջանիկ օրվան, դեպի հայրենիք ներգաղթին»⁸⁶:

Արգենտինայում ՄՍՀՄ լիազոր-դեսպանորդ Մ. Գ. Սերգեևի և ղլխավոր ճյուղատոս Բուդարինի հետ համատեղ հայկական գաղթօջախի առաջադիմական կազմակերպությունները 1947 թ. օգոստոսին կազմակերպում են Արգենտինայի հայերի ներգաղթին աշակցող կենտրոն, հետևյալ կազմով. Թոմսիկ Շիրակյան՝ նախագահ, Կարապետ էքշիյան՝ փոխնախագահ, Արամ Գեյրիմենջյան՝ քարտուղար, Պարզե էֆեյան՝ փոխքարտուղար, Բյուզանդ Գուշյան՝ գանձապահ, Պողոս էրմեճյան՝ փոխգանձապահ, Գեորգ Սարաֆյան, Աբրահամ էլմեսեկյան և Մուշեղ Արխանյան՝ խորհրդականներ⁸⁷:

Ներգաղթի ենթահանձնախմբեր են կազմվում նաև Ռոսարիոյում և Կորդոպայում, որոնցում ընդգրկված էին Տիրան Եուսուֆյանը, Մովսես Աբղարյանը, Հովհաննես Գրաճյանը, Եսայի Տումանյանը և ուրիշներ⁸⁸:

Արգենտինահայերի ներգաղթին աշակցող կոմիտեն Երևան ուղարկած էր ղիմումի մեջ նշում էր, որ հայրենադարձության անշեղ կայծը սկսել է «...կիրել սփյուռքի հայրենակարոտ գաղթականներու սիրտը», ուստի ինքը թարգման է դառնում «հայրենաբաղձ հասարակության համառ պնդումներուն ու անգամ մը ևս ղիմում ձեզի՝ խնդրելու համար, որ գեթ սակավագույն թվով հայրենադարձի շարժում սկսի Լատին Ամերիկայեն»⁸⁹: Կոմիտեն միաժամանակ հայտնում էր, որ Արգենտինայի հայության 80 տոկոսը ցանկանում է մեկնել Սովետական Հայաստան և կազմակերպվել են մի շարք արտելներ՝ հայրենիքում աշխատելու համար⁹⁰:

Նույնն էր պատկերը նաև Ուրուգվայի և Բրազիլիայի հայկական գաղթօջախներում: Ուրուգվայում հայերի ներգաղթի կոմիտեի նախագահն էր Հարուստյուն Երկաթգործյանը, քարտուղարը՝ Կարպիս Կեցոյանը⁹¹, իսկ Բրազիլիայի հայերի ներգաղթի հանձնախմբի նախագահն էր Թազվոր Կիրակոսյանը, քարտուղարը՝ Ներսես Պոյաճյանը⁹²: Ինչպես վկայում են եղած փաստերը, 1947 թ. Լատինական Ամերիկայի հայկական գաղթօջախներում արձանագրված ներգաղթել ցանկացողների թիվը հասնում էր շուրջ 32 հազարի⁹³:

ՀՄՄ կառավարության մշակած նախնական պլանով որոշված էր 1946 թ. հայրենադարձնել 8930 ընտանիք կամ 28800 մարդ, այդ թվում Իրանից՝ 4930 ընտանիք (15800 մարդ), Սիրիայից և Լիբանանից՝ 1450 ընտանիք (4950 մարդ), Հունաստանից՝ 600 ընտանիք (3450 մարդ), Ռումինիայից՝ 800 ընտանիք (2550 մարդ) և այլ երկրներից՝ 50 ընտանիք (150 մարդ)⁹⁴: Սակայն, հաշվի առնելով Իրանի, Սիրիայի, Լիբանանի և Հունաստանի հայության դժվարին կացությունը, արդեն 1946 թ. մայիսի 10-ին ՀՄՄ Մինիստրների խորհուրդը լրացուցիչ որոշում կայացրեց սփյուռքահայերի հավելյալ ընդունելության մասին և մշակեց կոնկրետ միջոցառումներ այդ ուղղությամբ⁹⁵:

Արդեն 1946 թ. փետրվարից Միրիայում, Լիբանանում, Իրանում, Հունաստանում, Բուլղարիայում, Ռումինիայում և այլ երկրներում սկսվել էր ներգաղթողների արձանագրումը: Այդ աշխատանքները մեծ թափով էին ընթանում հատկապես Սիրիայում և Լիբանանում, ուր ներգաղթի տեղական կոմիտեները կազմվել էին լայն ներկայացուցչական հիմունքներով: Հայաշատ բնակավայրերում բացվել էին ցուցակագրման բազմաթիվ գրասենյակներ, որոնք ամբողջ օրը լեցուն էին արձանագրվելու եկած հոծ բազմությամբ: Հենց միայն Հալեպում կազմակերպվել էր ցուցակագրման 21 գրասենյակ⁹⁶: Ներգաղթել ցանկացողների ցուցակագրումն սկսելու առաջին երկու օրվա

⁸⁶ «Հայ մամուլ», շաբաթաթերթ, Բուենոս Այրես, 8 դեկտեմբերի, 1945 թ., № 14:

⁸⁷ Տե՛ս ՀՄՄ ՀՀՍՀ ՊԿԱ, ֆ. 362, ց. 2, գ. 41, թ. 5—7, նաև՝ «Հայ մամուլ», 23 օգոստոսի, 1947 թ., № 100:

⁸⁸ Տե՛ս «Հայ մամուլ», 4 և 11 սեպտեմբերի, 1947 թ., №№ 106 և 107:

⁸⁹ ՀՄՄ ՀՀՍՀ ՊԿԱ, ֆ. 362, ց. 2, գ. 44, թ. 13:

⁹⁰ Տե՛ս նույն տեղում, գ. 41, թ. 7:

⁹¹ Տե՛ս նույն տեղում, թ. 8:

⁹² Տե՛ս նույն տեղում, գ. 44, թ. 6:

⁹³ Տե՛ս նույն տեղում, գ. 9, թ. 67:

⁹⁴ Տե՛ս նույն տեղում, գ. 12, թ. 7:

⁹⁵ Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 12, թ. 5—7:

⁹⁶ Տե՛ս «Ժողովուրդի ձայն», օրաթերթ, Բեյրութ, 28 փետրվարի, 1946 թ., № 1073:

ընթացքում Գամասկոսում ապրող 1800 հայ ընտանիքներից շուրջ Նազարը արձանագրվեցին⁹⁷: Հալեպում և նրա շրջակայքում բնակվող հայերից կարճ ժամանակամիջոցում արձանագրվեցին: 15500 ընտանիք կամ շուրջ 75000 մարդ, որը կազմում էր այդ շրջանի հայության գրեթե 92 տոկոսը⁹⁸:

1946 թ. մայիսի 2-ի տվյալներով ներգաղթելու համար Լիբանանում արձանագրված ընտանիքների թիվը հասել էր 14 հազարի, որը կազմում էր Լիբանանահայության մոտ 90 տոկոսը⁹⁹: Սիրիայում և Լիբանանում ներգաղթի նախապատրաստական աշխատանքները շատ ավելի գործնական բնույթ ստացան և կալմահերպոված հունի մեջ գրվեցին ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի հատուկ ներկայացուցիչ, ՀՍՍՀ արդարադատության մինիստր Գառնիկ Նազարյանի այնտեղ ժամանելուց հետո, որը գաղթօջախներում առաջ բերեց մեծ ոգևորություն: Գ. Նազարյանը բազմաթիվ հրապարակային բանախոսություններով, զեկուցումներով, հարցադրույցներով հանդես եկավ Բեյրութում, Հալեպում, Գամասկոսում և այլուր, սփյուռքահայությանը պարզաբանելով ներգաղթի հետ կապված բազմաթիվ հարցեր¹⁰⁰:

Խիստ հույզիչ, սրտաշարժ դեպքեր ու խոսակցություններ էին տեղի ունենում ցուցակադրման գրասենյակներում: Օրինակ, Աճարլուխի գրասենյակի առաջ վաթսուհամյա մի զեյթունցի խնդրում էր իրեն անպայման արձանագրել, որովհետև «գեռ Հայաստանի մեջ զինվոր կրնամ ըլլալ»,— ասում էր նա: Իսկ մի ուրիշը, զիմելով Կիլիկյան վարժարանի առջև ցուցակագրվելու համար հերթի սպասողներին, թախանձագին խնդրում էր՝ «Քառասուն տարի է, որ կսպասեմ այսօրվան, ձգեցեք, որ առաջին անգամ ես արձանագրվիմ»¹⁰¹: Թե ինչպիսի ոգևորությամբ ու խանդավառությամբ էին ցուցակագրվում տարագիր հայերը հայրենիք մեկնելու համար, վկայում է այն փաստը, որ միայն Սիրիայում և Լիբանանում 25 օրվա ընթացքում՝ 1946 թ. փետրվարի 1-ից մինչև 26-ը, ցուցակագրվել էր 12600 ընտանիք կամ 65 հազար մարդ¹⁰²:

Ցուցակագրումը լայն ծավալ ընդունեց նաև Հունաստանում: Մոտ 30 հազար հայ ընդգրկող հունահայ գաղութում կարճ ժամանակամիջոցում, մինչև 1946 թ. մայիսը, ներգաղթելու համար արձանագրվել էր 23100 մարդ¹⁰³:

Պաղեստինում բնակվող 12 հազար հայերի 96 տոկոսը նույնպես արձանագրվել էր հայրենիք մեկնելու համար: Հետաքրքիր է, որ այդ օրերին անգլիական «Դեյլի տելեգրաֆ» թերթի Երուսաղեմի թղթակիցը ճգնում էր ապացուցել, թե իբր ներգաղթի արձանագրությունները Պաղեստինում ձախողվել են, քանի որ «հայ համայնքին 90 տոկոսը երջանիկ են Պաղեստինի մեջ և մտադիր չեն հեռանալու երկրեն»: Տեղի հայերից միայն «300-ը ցարդ արձանագրված են ներգաղթի ցանկին վրա»¹⁰⁴,— շարախնդորեն եննգափոխում էր իրականությունը անգլիական թղթակիցը: Սակայն, ինչպես նշվեց վերը, փաստերը միանգամայն հակառակն էին վկայում: Պաղեստինի Սովետական Հայաստանի պաշտպանության լիգան ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր ներգաղթի կոմիտեին այդ նույն ժամանակ գրում էր. «...Չեղ ուշադրության կհանձնենք մեր գաղութին բացարձակ մեծամասնության (որը գրեթե ամբողջությամբ բանվորներն են) քաղկացած է և քիչ է թիվը բարեկեցիկները»¹⁰⁵: օր առաջ հայրենիք վերադառնալու»¹⁰⁵:

Այսպիսով, արդեն մինչև 1946 թ. գարունը հայրենիք գալու ցանկություն էին հայտնել տասնյակ հազարավոր տարագիրներ, որը ակնհայտորեն վկայում էր սփյուռքահայության Սովետական Հայաստանում համախմբվելու հաստատվածությունը: Սփյուռքահայ աշխատավորները ամենուրեք տառաջիտներն գրոհում էին ներգաղթի արձանագրության գրասենյակների վրա, հակառակ որոշ ուժերի կողմից հարուցվող բոլոր խռընդոտներին ու դավերին:

Ինչպես պատկերավոր կերպով բնութագրել է Հալեպում հրատարակվող «Դեպի երկիր» ամսագիրը՝ «ժողովուրդն է, որ կու գա իր շունեցած ամբողջ հարստությամբ և ունեցած ամբողջ աղքատությամբ: Կու գա և՛ կուսակցականը, և՛ շեղբը, և՛ անհատը», մի խոսքով, բոլորն էլ ցուցակագրվում են «դեպի

⁹⁷ Տե՛ս ՀՍՍՀ ՀՍՍՀ ՊԿԱ, ֆ. 362, ց. 2, գ. 4, թ. 38:

⁹⁸ Տե՛ս նույն տեղում, թ. 64:

⁹⁹ Տե՛ս նույն տեղում, թ. 66:

¹⁰⁰ Տե՛ս նույն տեղում, թ. 67:

¹⁰¹ Տե՛ս «Ժողովուրդի ձայն», 28 փետրվարի, 1946 թ., № 1073:

¹⁰² Տե՛ս ՀՍՍՀ ՀՍՍՀ ՊԿԱ, ֆ. 362, ց. 2, գ. 4, թ. 12:

¹⁰³ Տե՛ս «Նոր կյանք», 12 մայիսի, 1946 թ., № 336:

¹⁰⁴ Տե՛ս «Եփրատ», 27 հոկտեմբերի, 1946 թ., № 2771:

¹⁰⁵ Տե՛ս ՀՍՍՀ ՀՍՍՀ ՊԿԱ, ֆ. 362, ց. 2, գ. 16, թ. 3—4:

նոր կյանք մը, դեպի անմահություն, դեպի Կարմիր Հայրենիք» մեկնելու համար¹⁰⁶։

Հայրենադարձության վերսկսման լուրը լայն արձագանք գտավ նաև նրանց մոտ, ովքեր դաժան ճակատագրի բերումով մոռացել էին իրենց մայրենի լեզուն, անվանափոխվել, և նրանց անուններն ավելի շուտ հիշեցնում էին թուրքի, արաբի և այլ ազգերի, քան հայի։ Այդպիսիք շատ կային հատկապես արաբական անապատներում, սիրիական հեռավոր գյուղերում։ Դրանց մասին էր ակնարկում «Արարատ» թերթը, գրելով. «Հայերեն շեն գիտեր, կթվեն անուններ՝ Ռաշո, Օսման, Պավել, Աբդըլ և այլն։ Ու չես հավատար, որ հայ են, սակայն ինքնության թուղթին վրա գրված է «էրմեն»¹⁰⁷։

Հայրենադարձության առաջ բերած խանդավառության ալիքը հասել էր Սիրիայի արաբախոս Արամո, Յողուբեհ, Ջըսըր, Շղուր հայկական գյուղերը, տարածվել մինչև հեռավոր Ղամբըլի և նրա շրջակայքի քրդախոս գյուղերի հայերը, որոնք «... ի լուր ՍՍՀՄ Գերագույն խորհրդի պատմական մեծ որոշման» չէին կարողանում «զսպել ուրախության արցունքները» և պաղատագին խնդրում էին արագացնել ներգաղթը, իրենց փրկել անխուսափելի ուժացման դաժան վտանգից¹⁰⁸։

Ամերիկահայ «Լրաբեր» թերթի թղթակիցը Ղամբըլիից հաղորդում էր, որ երբ արձանագրող հանձնախմբերը շրջում են գյուղերում, ամենուրեք նրանց դիմավորում են «տավոլով-զուռնայով։ Ոչխարներ կմորթվին, բաժակներ կպարպվին գաղթական հայը իր ծոցը ընդունող մայր հայրենիքի կենացը» և «ղամբըլլեցիները սրտատրոփ կսպասեն այն օրվան, երբ ոտք պիտի դնեն հայրենի հողի վրա, այնտեղի իրենց բուլբուրուն և եղբայրներուն հետ լծվելու համար շինարար աշխատանքի»¹⁰⁹։

Ձանգվածային ներգաղթի իրականացումը դեպի դաժան պատերազմի բոցերից նոր դուրս եկած մեր երկիրը, պահանջում էր նյութական հսկայական միջոցներ ու ջանքեր։ Ուստի միանգամայն տեղին ու օրինական կլինեք, որպեսզի այդ մեծ

նպատակն իրականացնելու համար օգտագործվեին եղած բոլոր նյութական միջոցներն ու աղբյուրները, այդ թվում նաև սփյուռքահայ բարեգործական հաստատությունների տրամադրության տակ եղած ազգային գումարները։ Հայտնի է, որ Հայկական բարեգործական ընդհանուր միությունը սփյուռքահայ ֆինանսապես ամենահարուստ կազմակերպությունն է։ Այդ հանգամանքը նկատի ունենալով, ՆՍՍՀ Ժողկոմխորհին առընթեր ներգաղթի կոմիտեն 1945 թ. դեկտեմբերի 25-ին դիմեց ՀԲԸՄ՝ Նյու Յորքի կենտրոնական և Փարիզի եվրոպական վարչություններին՝ առաջարկելով գործուն մասնակցություն ցուցաբերել զանգվածային հայրենադարձության իրականացման գործում։ Ներգաղթի կոմիտեն գտնում էր, որ ՀԲԸՄ, ինչպես և մյուս բոլոր բարեգործական ու հասարակական կազմակերպությունների համար տվյալ պահին ամենակարևոր ու պատվավոր խնդիրը և նրանց տրամադրության տակ եղած գումարների օգտագործման լավագույն եղանակը կլինի օգնությունը արտասահմանի հայերի հայրենիք վերադառնալու գործի կազմակերպմանն ու նրանց տեղավորմանը¹¹⁰։

1946 թ. մարտի 19-ին ՀԲԸՄ կենտրոնական վարչության նախագահ Արշակ Կարազյոզյանը Նյու Յորքից հայտնեց ՆՍՍՀ Ժողկոմխորհին առընթեր ներգաղթի կոմիտեի նախագահ Բ. Աստվածատրյանին, որ ՀԲԸՄ ողջունում է հայրենադարձությունը վերսկսելու որոշումը, քանի որ դրա շնորհիվ «աշխարհի շորս անկյունները ցրված վտարանդի հայության երաշխ է, որ կկատարվի...», ուստի իրենք սիրահոժար ընդունում են ներգաղթողներին օգնելու առաջարկ¹¹¹։ Այդ նպատակով «միությանս կեդրվարչ. ժողովը, — այնուհետև գրում էր Ա. Կարազյոզյանը, — որոշեց ձեռնարկել ներգաղթի մեկ միլիոն տոլարի հանգանակություն», ինչպես նաև «նախորդ հանդանակութենեն Խ. Հայաստանին տրամադրելի գումարները ևս ներգաղթի հատկացնել, որպես անմիջական վարկ...»¹¹²։

1946 թ. մարտի 6-ին ՀԲԸՄ կենտրոնական վարչությունը հրատարակեց կոշ-շրջաբերական՝ ներգաղթի օգտին մեկ մի-

¹⁰⁶ Տե՛ս «Դեպի երկիր», պարբերագիրք, Հալեպ, ապրիլ, 1946 թ., № 4 — 5, էջ 201։

¹⁰⁷ «Արարատ», 11 մայիսի, 1946 թ., № 1562։

¹⁰⁸ Տե՛ս «Ժողովուրդի ձայն», 8 փետրվարի, 1946 թ., № 1060։

¹⁰⁹ «Լրաբեր», 11 մայիսի, 1946 թ., № 123։

¹¹⁰ Տե՛ս ՆՍՍՀ ՆՍՍՀ ՊԿԱ, ֆ. 362, ց. 2, գ. 30, թ. 1—3։

¹¹¹ Տե՛ս նույն տեղում, թ. 14։

¹¹² Նույն տեղում։

լիոն դոլարի հանգանակություն սկսելու մասին¹¹³, որն անց էր կացվում «արտագաղթին և բնագաղթին տեղ ներգաղթ» և «ամեն հայ պետք է գոնե հայ մը, եթե ոչ ընտանիք մը, Հայաստան զրկելու երջանկությունը վայելե» նշանաբանով¹¹⁴: Հետագայում, 1947 թ. ապրիլին, ՀԲԸՄ կենտրոնական վարչությունը հայտարարեց ներգաղթի օգտին ևս կես միլիոն դոլարի լրացուցիչ հանգանակություն՝ «հայրենադարձը կմնա օրվան կարգախոսը» նշանաբանով, որպեսզի հնարավոր լիներ ավելի մեծ թվով տարագիրներ փոխադրել հայրենիք¹¹⁵:

Ներգաղթի նախապատրաստական աշխատանքները տեղեւորում ավարտելու և սփյուռքահայերի դեպի հայրենիք ճանապարհումը կատարելու համար շուտով Իրան, Սիրիա, Լիբանան, Հունաստան, Բուլղարիա և Ռումինիա մեկնեցին ՀՍՍՀ Մինիստրներին խորհրդի հայրենադարձության գծով երկուական ներկայացուցիչներ: ՀՍՍՀ ներգաղթի կոմիտեի 1946 թ. մարտի 3-ի նիստում հայրենադարձության գծով լիազոր-ներկայացուցիչներ հաստատվեցին Ռ. Քալանթարը և Ռ. Ղազարյանը (Իրանում), Հ. Հարությունյանը և Հ. Խաչատրյանը (Սիրիայում), Զ. Չարչյանը և Մ. Կարապետյանը (Լիբանանում), Գ. Գևորգյանը և Ս. Մանուկյանը (Հունաստանում), Ա. Խրիմյանը և Մ. Օթարյանը (Բուլղարիայում), Բ. Չարչյանը և Գ. Մուրադյանը (Ռումինիայում)¹¹⁶: Հետագայում որպես ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի հայրենադարձության գծով լիազոր-ներկայացուցիչներ են եղել նաև Ա. Հինայեկյանը (Ֆրանսիայում)¹¹⁷, Հ. Հակոբջանթանը¹¹⁸ և Թ. Կատարյանը¹¹⁹ (Եգիպտոսում), Ա. Շահնազարյանը (ԱՄՆ-ում)¹²⁰, Ալ. Հովհաննիսյանը¹²¹, Ռ. Ասրյանը, Ռ. Հակոբյանը¹²² (Սիրիայում և Լիբանանում), Հ. Մելքոնյանը և Գր. Ասատրյանը (Հունաստանում)¹²³ և ուրիշներ:

Իրենց բարդ ու դժվարին աշխատանքում ՀՍՍՀ կառավարության արտասահման գործուղված լիազոր-ներկայացուցիչները և ներգաղթին աջակցող տեղական կոմիտեները ամենօրյա բաղմակողմանի օգնություն էին ստանում տվյալ երկրում ՍՍՀՄ ղեսպանություններից ու հյուպատոսություններից: Այդ ուղղության մեջ գնահատելի աշխատանք են կատարել Լիբանանում ՍՍՀՄ միսիայի ղեկավար Գ. Սուլոբը, Բեյրութում ՍՍՀՄ հյուպատոս Ռ. Ահարոնովը, Դամասկոսում ՍՍՀՄ հյուպատոս Վ. Կիրիկը, Սիրիայում և Լիբանանում սովետական ներկայացուցչությունների աշխատակիցներ Կլիմովը, Ա. Սարգսյանը, Վ. Խանգուլովը, Իսազուլովը, Եգիպտոսում ՍՍՀՄ ղեսպան Ա. Շապորինը, ղեսպանության աշխատակից Գ. Շահնազարյանը, Իրանում ՍՍՀՄ ղեսպան Սաղաթկովը, Սպահանում ՍՍՀՄ հյուպատոս Կրյուլկովը, ղեսպանության աշխատակիցներ Զենինը, Գասպարովը, Միրզաբաբաևը, Սեիդ-Չաղեն, Սաղովը, Ֆրանսիայում ՍՍՀՄ ղեսպան Ա. Բոգոմոլովը, Հունաստանում ՍՍՀՄ ղեսպան Կ. Ռոդրիգոսովը, ղեսպանության աշխատակիցներ Ն. Չերնիշևը, Կուլաժենկովը, Ռումինիայում ՍՍՀՄ ղեսպան Ս. Քավթարաձեն, ղեսպանության աշխատակիցներ Յակովլևը, Ֆեոդորովը, Շուտովը, Իրանում ՍՍՀՄ միսիայի ղեկավար Գ. Զայցևը, Բուլղարիայում ՍՍՀՄ ղեսպանության աշխատակիցներ Լյովիչկինը, Շնյուկովը, առևտրական ներկայացուցիչ Վ. Զայցևը, Նյու Յորքում ՍՍՀՄ գլխավոր հյուպատոս Յա. Լոմակինը և ուրիշներ:

Սփյուռքահայ գաղթօջախներում ներգաղթի նախապատրաստման ուղղությամբ տարվող աշխատանքներին զուգընթաց Սովետական Հայաստանի կուսակցական, սովետական և տրեստեսական մարմինները լարված գործունեություն էին ծավալել նաև հանրապետությունում: Այստեղ ներգաղթողների համար պատրաստվում էին բնակարաններ, նրանց աշխատանքով ու նյութական միջոցներով ապահովելու պայմաններ: Կազմակերպվեցին, կահավորվեցին և լիովին նախապատրաստվեցին ներգաղթողներին ընդունող կայաններ Բաթումում, Զուլֆայում և Բաքվում (վերջինս 1946 թ. օգոստոսի 31-ին լուծարքի ենթարկվեց), ինչպես նաև Երևանում, Լենինականում, Կիրովականում և Արտաշատում¹²⁴:

1946 թ. հունիսի 21-ին ՍՍՀՄ Մինիստրների խորհուրդը

¹¹³ Տե՛ս նույն տեղում, գ. 29, թ. 33:

¹¹⁴ Տե՛ս նույն տեղում, գ. 30, թ. 16:

¹¹⁵ Տե՛ս նույն տեղում, գ. 29, թ. 1—3:

¹¹⁶ Տե՛ս նույն տեղում, գ. 12, թ. 5—6:

¹¹⁷ Տե՛ս նույն տեղում, գ. 31, թ. 43:

¹¹⁸ Տե՛ս նույն տեղում, գ. 8, գ. 23, թ. 29:

¹¹⁹ Տե՛ս նույն տեղում, գ. 6, թ. 44:

¹²⁰ Տե՛ս նույն տեղում, գ. 2, գ. 28, թ. 69—72:

¹²¹ Տե՛ս նույն տեղում, գ. 1, գ. 15, թ. 86:

¹²² Տե՛ս նույն տեղում, գ. 2, գ. 41, թ. 41:

¹²³ Տե՛ս նույն տեղում, գ. 18, թ. 83:

¹²⁴ Տե՛ս նույն տեղում, գ. 1, գ. 4, թ. 39:

անդրադարձավ արտասահմանից ներգաղթող հայերի ընդունման ու տեղավորման ուղղության մասին Հայկական ՍՍՀ-ում տարվող նախապատրաստական աշխատանքների ընթացքին և լրացուցիչ միջոցառումներ մշակեց հայրենադարձների համար մեծ ծավալի բնակարանային շինարարություն կատարելու նպատակով¹²⁵։ Որոշվեց այդ նպատակով հենց միայն 1946 թ. կառուցել 135 հազար բմ բնակելի տարածություն, որից 40 հազարը՝ գյուղական վայրերում։ Բացի այդ հանձնարարվեց համապատասխան մարմիններին՝ գոյություն ունեցող բնակարանային ֆոնդից առանձնացնել և վերանորոգել 3000 բմ տարածություն, ինչպես նաև կառուցել 3 նոր ավան՝ յուրաքանչյուրը 250 տնտեսության համար¹²⁶։ Դրա հետ մեկտեղ, ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշմամբ, սահմանվեց ներգաղթողների համար իրականացնել անհատական բնակարանային լայն շինարարություն։ Այդ նպատակով հատկացվեց 40 միլիոն ռուբլու վարկ, որից 34 միլիոն ռուբլի՝ գյուղատնտեսական և 6 միլիոն ռուբլի՝ կոմունալ բանկի միջոցով։ Սեփական բնակարան կառուցող յուրաքանչյուր հայրենադարձի տրվելու էր քաղաքներում 30 հազար ռուբլի, իսկ գյուղական վայրերում 25 հազար ռուբլի վարկ՝ 15 տարի ժամանակով, այն ստանալու 3-րդ տարվանից սկսած աստիճանաբար մարելու պայմանով¹²⁷։ ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշմամբ կոնկրետ միջոցառումներ մշակվեցին նաև հայրենադարձների համար կատարվող բնակարանային շինարարությունը անհրաժեշտ շինանյութերով ապահովելու ուղղությամբ։

ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր արտասահմանից ներգաղթող հայերի ընդունման և տեղավորման կոմիտեն, նախնական տեղեկություններ ստանալով հայրենիք մեկնելու ցասկություն հայտնաբերելու թվի մասին, լուրջ մտահոգությունների մեջ ընկավ, բանի որ դադութահայության ճնշող մեծամասնությունը ցանկանում էր հայրենադարձվել։ Հասկանալի է, որ հայրենի երկիրը ի վիճակի չէր այդքան մարդ միանգամից ընդունել, ուստի ներգաղթին աջակցող տեղական կոմիտեները զգուշաց-

վեցին, որ առաջին հերթին հայրենադարձներ կընդունվեն այն գաղթաօջախներից, որոնցում հայ բնակչությունը գտնվում է առավել ծանր վիճակում։ Այդ հանգամանքը ճիշտ բմբոնեցին նաև սփյուռքի առաջադիմական կազմակերպություններն ու գործիչները, որոնք սովետական կառավարությանը հասցևագրած իրենց դիմումների մեջ խնդրում էին «ներգաղթի ժամանակ նախընտրությունը տալ անգործներին»,— ինչպես գրում էր Սիրիայի և Լիբանանի հայերի ներգաղթի կենտկոմը, 1946 թ. փետրվարի 17-ին¹²⁸։ Նույն միտքն էր պաշտպանում Ալեքսանդրի 17-ին¹²⁹։ Նույն միտքն էր պաշտպանում «Արաքս» թերթը, գրելով. «Առաջին հերթին պետք է հորհրդային Հայաստան փոխադրել շունեները, կարոտյալները, զանոնք ամփոփելու, խնամելու, տեղավորելու, հայրենիքի թևերուն տակ պատսպարելու համար»¹²⁹։

2. Հայրենադարձների ֆառավանների տունդարձը և նրանց տեղավորումը հանրապետությունում

Եվ այսպես, լարված նախապատրաստական աշխատանքներից հետո, 1946 թ. հունիսի 23-ին, Բելյուսի նավահանգստից Բաթում ուղևորվեց «Տրանսիլվանիա» շոգենավը՝ հայրենադարձների առաջին քարավանով, որի մեջ գտնվում էր 1806 մարդ։

Սկսվեց սփյուռքահայերի զանգվածային մեծ հայրենադարձությունը։ Այդ մասին Սիրիայի և Լիբանանի հայերի ներգաղթի կենտկոմը, հեռագրելով Երևան, հատուկ «երախտապարտություն և շնորհակալություն» հայտնեց սովետական կառավարությանը¹³⁰։ Այդ «երախտապարտությունն ու շնորհակալությունը» արտահայտում էին ոչ միայն առաջին քարավանի անդամների զգացմունքները, այլև հայրենաբաղձ ողջ գաղութահայության անկեղծ երախտագիտությունը մայր հայրենիքին։

Այդ առթիվ սփյուռքահայ «Անի» ամսագիրը գրել է. «Կմեկնի առաջինը՝ հայրենադարձ հայերու մեծ կարավանին... Եվ ժամանակը կմնա ապշահար՝ երևույթի մը դեմ, որ օտա՛ր է իրեն»

¹²⁵ Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 5, թ. 7։

¹²⁶ Տե՛ս «Սովետական Հայաստան», 12 հուլիսի, 1946 թ., № 162։

¹²⁷ Տե՛ս ՀՍՍՀ ՀՄՍՇ ՊԿԱ, ֆ. 362, ց. 2, գ. 2, թ. 7։ Ի դեպ, հետագայում սովետական կառավարությունը բոլոր հայրենադարձներին ամբողջովին զիջվեց վարկերի գումարներն ու գույացած տոկոսները։

¹²⁸ Տե՛ս ՀՍՍՀ ՀՄՍՇ ՊԿԱ, ֆ. 362, ց. 2, գ. 4, թ. 30։

¹²⁹ Տե՛ս «Արաքս», 5 հոկտեմբերի, 1946 թ., № 38։

¹³⁰ Տե՛ս ՀՍՍՀ ՀՄՍՇ ՊԿԱ, ֆ. 362, ց. 2, գ. 4, թ. 82։

իմաստի և համեմատություններու այս մեծութեամբ: Կմեկնի առաջին նավը: Աւ կփոխվի պատմությունը հին ու հալածված, բայց ապրելու հանճարն ունեցող ժողովուրդի մը: Կփակվի պատմությունը, որ գրված էր արյունով ու արցունքով, հերով ու հառաչանքով— սե պատմությունը մը կորուստի և կորանքի:

Սկիզբ կառնե պատմությունը մը ուրիշ՝ որուն էջերուն մեջ արևը պիտի գա բնակիլ, և պիտի ըլլա անիկա շողարձակ, ժրպտուն, հպարտ: Տուն կղառնան պանդուխտ հայերը...»¹³¹:

1946 թ. հունիսի 27-ին «Տրանսիլվանիան» խորհրդի նախագահութեամբ, իր ուղեգնացությունների ընթացքում երեկ առաջին անգամ արժանանալով այդպիսի ջերմ ու հուզումնալից դիմավորման:

Հայրենադարձների առաջին քարավանի պետ բժիշկ Գևորգ Մանուչակյանը Բեյրութ—Երևան ճանապարհորդության ընթացքում կազմել է մի օրագրություն-տեղեկագիր, ուր շատ հուշիչ էջեր կան օտարությունից տուն դարձող հայրենակարոտ մարդկանց ապրած զգացմունքների, սովետական հողում նրանց ցույց տրված ջերմ ու սիրալիք ընդունելության մասին¹³²:

Հայրենադարձներին ընդունելու համար Բաթում էին ժամանել Հայաստանի կառավարության և աշխատավորության ներկայացուցիչներ, ներգաղթողների հարադատներ, գրողներ, մշակույթի գործիչներ:

Առաջին քարավանով հայրենիք վերադարձողները Բաթումից շնորհակալական հեռագրեր ուղարկեցին Մոսկվա և Երևան: ՄԱՄԿ կառավարությանը հասցեագրված հեռագրում ասված էր. «Մտնելով սովետական հողը, մեր սրտերը լցվեցին անսասման երախտագիտության զգացմունքներով... Սովետական Միության եղբայրական բոլոր ժողովուրդների և առաջին հերթին՝ հերոսական ու ազնիվ ուսուցիչների նկատմամբ, ...որը կորստից փրկեց հայությանը և ամեն կերպ օգնեց նրա ազգային լիակատար վերածնմանը: Մենք, առաջին քարավանով հարադատ Սովետական Հայաստան վերադարձող արտասահմանյան հայերս, հայտնում ենք... մեր խորին երախտագիտությունը» մայր հայ-

րենիք վերադառնալու մեր վաղեմի իղձը իրականություն դարձնելու համար¹³³:

24(բ) Կենտկոմի, ՀՍՍՀ Գերագույն սովետի և Մինիստրների խորհրդի հասցեով հղած հեռագրում ասված էր. «Մեր մայր հայրենիք՝ Սովետական Հայաստան մտնելուց առաջ մենք հայտնում ենք Ձեզ և Հայաստանի աշխատավորներին մեր երախտագիտության զգացմունքները, մեծ երջանկության՝ մեր արյունակից եղբայրների ու բույրերի հետ վերամիավորվելու մասին մեր լիզձերի լրագործմանը ցույց տված օգնության համար»¹³⁴:

22Գ-ի թղթակցի հետ ունեցած հարցազրույցում քարավանի պետ Գ. Մանուչակյանը հայտարարեց. «Արտասահմանյան հայերի առաջին քարավանի ուղևորությունը հեռավոր օտարությունից սովետական հայրենիք՝ շտեմնված ուղևորություն և հայրենասիրական լուսնավառություն առաջացրեց դադուքի բոլոր հայերի մեջ: Նրանք տառաջիորեն պաշարում էին մեզ բոլոր կողմերից: Չափազանցություն չի լինի, եթե ասեմ, որ յուրաքանչյուր հայ ցանկանում էր մտնել դեպի հայրենի ափերը գնացող առաջին քարավանի կազմի մեջ»¹³⁵:

Հունիսի 29-ին հայրենադարձների գնացքը Բաթումից շարժվեց դեպի Սովետական Հայաստան: Գ. Մանուչակյանը մանրամասնորեն նկարագրել է Սովետական Հայաստանի տերիտորիան մտնելուց հետո հայրենադարձների ապրած ուրախության հուշիչ պահերը: «Գնացքի Սովետական Հայաստանի սահմաններեն ներս մտնելը սրտահույզ դեպքերու պատճառ կը դառնա,— գրում է Գ. Մանուչակյանը:— Շոգեկառքը կանգ կառնի: Էրիկ մարդ, կին, երեխա, ծերունի վագոներեն դուրս կնետվին և կհամբուրեն հայրենի սրբազան հողը: Արտասահմանեն վերադարձողները և մեզ դիմավորելու եկող եղբայրները լալով, հեծկատալով իրար կհամբուրեն, ժողովուրդը իրարմե չի ուզեր բաժանվի, կուշանանք, շոգեկառքը կսուլե և վերջապես կբալենք»¹³⁶:

Հուլիսի 2-ին, ցերեկվա ժամը 11-ին, հայրենադարձների

133 Տե՛ս նույն տեղում, թ. 93—94:

134 Նույն տեղում, թ. 94:

135 «Սովետական Հայաստան», 30 հունիսի, 1946 թ., № 152:

136 ՀՍՍՀ ՀՄԿ ՊԿԱ, ֆ. 362, ց. 2, գ. 4, թ. 95:

¹³¹ «Անի», ամսագիր, Բեյրութ, հունիս, 1946 թ., № 3, էջ 160:

¹³² Տե՛ս ՀՍՍՀ ՀՄԿ ՊԿԱ, ֆ. 362, ց. 2, գ. 4, թ. 85—96:

գնացքը ուրախ աղաղակներով տակ հանդիսավոր կերպով մտավ Երևանի կայարան, ուր այդ օրը արտակարգ բազմություն էր հավաքվել: Հայրենիք վերագարձողների առաջին խմբին ուրախության արցունքներով և ծաղկեփնջերով է դիմավորում հայոց մայրաքաղաքը: Հանդիսավոր հնչում են ՍՍՀՄ և ՀՍՍՀ պետական հիմները, հպարտության և երջանկության սարսուռով լցնելով պանդխտությունից հայրենիք դարձած և սեփական պետականության դրոշին փարված մարդկանց հոգիները: Աննկարագրելի էր բոլոր հայրենագարձների ուրախությունը, ինչպես նախկին հաճրնցի Մինաս Օրուշյանի հուզմունքը, որն իր 360 հոգուց բաղկացած գերդաստանի թուրքական յաթաղանից հրաշքով փրկված միակ ներկայացուցիչն էր և երջանկությունից երեխայի նման արտասվում էր: Բեյրութից հայրենիք ներգաղթած մետաղագործ վարպետ Ղազարոս ձերեճյանը, որը կիլիկեցի էր, ՀՀԳ-ի թղթակցին հայտարարեց. «Տարագրության մեջ մեր սրբտուն մնվեց ու աճեց մեր միակ փափագը՝ ամեն լծից, ամեն կոտորածից ազատ մեր սովետական երկիրը գալ: Մեր փափագն էր տեսնել հայոց պետությունը, չէ՞ որ Կիլիկիո մեր պետության կործանումից հետո ահա վեց դար է, մենք հայկական ազատ պետություն կերտեցինք: Ու ահավասիկ մեր դեմ մեր պետության մայրաքաղաքն է»¹³⁷:

Ներգաղթն այնքան մեծ ոգևորություն էր առաջ բերել, որ շատերն իրենց ուրախությունն արտահայտում էին ձոն-բանաստեղծություններով: Դրանցից մեկում, որը վերածվել էր երգի և երգվում էր որպես ներգաղթի հիմն, ասված էր.

«Այ կարավան, ջան կարավան,
Քշե դեպի լույս Երևան,
Ինձի համար կյանքի մը նոր
Այ կ'երևա այգը բոսոր:
Նուև ձգած արցունք ու վիշտ
Նվ պանդխտի ցուպը ընդմիշտ
Նրթանք մեր մոր գրկին մեջ տաք
Նվ Մասիսի հովանույն տակ,
Տքնինք, կերտենք, ըլլանք վստահ,
Որ ալ չի կա մեզ համար վախ,

¹³⁷ «Սովետական Հայաստան», 3 հուլիսի, 1946 թ., № 154:

Թե մեր քիրտին վաստակն արդար
Պիտ վայելեն մարդիկ օտար...»¹³⁸:

Ներգաղթի առաջին քարավանին հետևեցին երկրորդը, երրորդը և բազմաթիվ ուրիշները: 1946 թ. հուլիսի կեսերին սկսվեց ուսման հայերի հայրենագարձությունը: Հուլիսի 19-ին Բուխարեստում տեղի ունեցավ փաստաթղթերի հանդիսավոր հանձնումը Սովետական Հայաստան մեկնող 1100 ուսման հայերի: Այդ արարողությունը վերածվեց խնկարան տոնախմբության: Տեղի ունեցած միտինգում ելույթ ունեցավ «Հայաստանյան ճակատ» կազմակերպության նախագահ Վահան Գանիելյանը, որը հայտարարեց. «Արտասահմանյան հայերը պատմական օրեք են ապրում, նրանք նորից հայրենիք են ձեռք բերել»¹³⁹:

Այդ նույն ժամանակ սկսվեց նաև բուլղարահայերի հայրենագարձությունը: 1946 թ. հուլիս-օգոստոս ամիսներին «Անիվա», «Ռոսիա» և «Վերխոյանսկ» շոգենավերով Բուլղարիայից Սովետական Հայաստան ժամանեցին 4383 հայրենագարձներ¹⁴⁰:

Ուշագրավ է, որ բուլղարական կառավարությունը հայերին թույլատրել էր իրենց հետ հայրենիք տանել եկեղեցական դուլք, սրբապատկերներ, գրքեր և ընդհանրապես հայկական ազգային մշակույթի համար արժեք ներկայացնող այլ առարկաներ: Դրանք մշածամանակ ազատվում էին մաքսից: Բուլղարահայ ներգաղթողներից շատերը կազմել էին մի շարք արտելներ, ինչպես սլովոլդիվցիները՝ կոշկակարական, մետաղմշակման, կարի, փայտամշակման, վառնացիները՝ մետաղաձուլական և այլն, հայրենիքում անմիջապես կազմակերպված աշխատանքի անցնելու և իրենց նվիրված ու համերաշխ գործունեությամբ երկրի վերելքին մասնակցելու համար¹⁴¹:

1946 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսների ընթացքում Հունաստանից հայրենիք եկավ 4974 մարդ¹⁴²: 1946 թ. ամենա-

¹³⁸ «Չարթոնք», 24 հունիսի, 1946 թ., № 2821:
¹³⁹ «Պահակ», շաբաթաթերթ, Բուխարեստ, 21 հուլիսի, 1946 թ., № 30:
¹⁴⁰ Տե՛ս ՀՍՍՀ ՀՍՍՀ ՊԿԱ, ֆ. 362, ց. 2, գ. 14, թ. 53—60:
¹⁴¹ Տե՛ս նույն տեղում, գ. 8, թ. 24—25:
¹⁴² Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 14, թ. 27:

մեծ թվով հայրենադարձությունը կատարվեց Իրանից՝ 20597 մարդ¹⁴³:

Այսպիսով, 1946 թ. հունիս-հոկտեմբեր ամիսներին Իրանից, Սիրիայից, Լիբանանից, Հունաստանից, Բուլղարիայից և Ռումինիայից Սովետական Հայաստան ներգաղթեց 10801 ընտանիք կամ 50945 մարդ, այսինքն՝ նախապես պլանավորվածից 22145 մարդով ավելի¹⁴⁴: Դրանից 20597 մարդ հայրենիք եկավ Ջուլֆայով, իսկ 30348 մարդ՝ Բաթումով: Այստեղ անհրաժեշտ է նշել, որ հայրենիք ժամանելուց կարճ ժամանակ անց, հայրենադարձ որոշ ընտանիքների տրոհման և բնական աճի հետևանքով վերջ բերված թվերը, ինչպես երևում է ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր ներգաղթի կոմիտեի կազմած մի շարք տեղեկանքներից, փոփոխություն են կրել և 1946 թ. ներգաղթած ընտանիքների թիվը ցույց է տրված 11035, իսկ շնչերի թիվը՝ 51060¹⁴⁵:

Ըստ առանձին երկրների 1946 թ. ներգաղթածների թիվը ներկայացնում է հետևյալ պատկերը. Իրանից՝ 3870 ընտանիք (20597 մարդ), Սիրիայից և Լիբանանից՝ 3794 ընտանիք (19253 մարդ), Հունաստանից՝ 1372 ընտանիք (4974 մարդ), Բուլղարիայից՝ 1248 ընտանիք (4382 մարդ), Ռումինիայից՝ 517 ընտանիք (1738 մարդ)¹⁴⁶:

Սովետական Հայաստանի աշխատավորությունը տուն վերադարձող իր տարագիր եղբայրներին ու քույրերին ընդունեց գրկաբաց, սիրով և գուրգուրանքով: Սովետական կառավարությունը հայրենադարձների տեղավորման ու աշխատանքով ապահովման համար ստեղծեց հնարավոր ու անհրաժեշտ բոլոր պայմանները: Չնայած առկա դժվարություններին, մեծ աշխատանք կատարվեց այդ ուղղությամբ, թեպետ եղանակն և որոշ վրիպումներ ու սխալներ: Մի խոսքով, կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը անում էին հնարավոր ամեն բան, որպեսզի հայրենադարձները որքան կարելի է արագ կարողանային ստեղծել իրենց սեփական օջախները, նրանց համար ապահովվեին ըստ մասնագիտության աշխա-

տանք և կրթություն ստանալու լիակատար պայմաններ: Սովետական հայրենիքը հայրենադարձների առջև բացեց իրենց ընդունակությունները լայնորեն դրսևորելու և նոր կյանքին ակտիվորեն հաղորդակից դառնալու մեծ հնարավորություններ:

1946 թ. ժամանած հայրենադարձները տեղաբաշխվեցին հանրապետության 32 քաղաքներում և շրջաններում: Քաղաքներում տեղավորվեց 21704 (այդ թվում Երևանում՝ մոտ 14000), շրջկենտրոններում՝ 3994, կուլտեստություններում՝ 17863, սովխոզներում՝ 3185 մարդ: Հայրենադարձների ընդհանուր թվի մեջ աշխատունակները կազմում էին 20855 մարդ: Ըստ զբաղմունքի նրանք բաժանվում էին հետևյալ կատեգորիաների. գյուղացիներ՝ 9405, տարբեր մասնագիտության շինարարական բանվորներ՝ 1138, դերձակներ՝ 1483, կոշկակարներ՝ 1459, տեքստիլ բանվորներ՝ 672, վարորդներ՝ 791, ոսկերիչներ՝ 191, այլ մասնագիտության բանվորներ և արհեստավորներ՝ 4280, մտավորականներ՝ 343, այդ թվում՝ ուսուցիչներ՝ 160, բժիշկներ և ատամնաբույժներ՝ 61, դերասաններ՝ 39, նկարիչներ և քանդակագործներ՝ 32, ինժեներներ՝ 15, երգիչներ և երաժիշտներ՝ 19, գրողներ և լրագրողներ՝ 12, պրոֆեսորներ՝ 2 մարդ¹⁴⁷: Նրանք աշխատանքի տեղավորվեցին արդյունաբերական ձեռնարկություններում, կուլտեստություններում, սովխոզներում, պետական հիմնարկներում, գիտություն, կուլտուրայի օջախներում: Ուշումնակարոտ երիտասարդները ընդգրկվեցին զանազան տիպի դպրոցներում, տեխնիկումներում ու բուհերում:

ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր ներգաղթի կոմիտեի 1947 թ. փետրվարի 1-ի տվյալներով գրեթե բոլոր աշխատունակ, ինչպես նաև սովորելու հասակ ունեցող հայրենադարձները տեղավորվել էին աշխատանքի կամ ընդգրկվել էին ուսումնական հաստատություններում:

Գյուղատնտեսության մեջ ընդգրկված էին 9405, արդյունաբերության մեջ՝ 3875, շինարարությունում՝ 1133, արհեստագործական կոոպերացիայի արտելներում՝ 3448, առևտրի ցանցում՝ 234 մարդ, մնացածները այլ հիմնարկ-ձեռնարկություններում¹⁴⁸:

ՀՍՍՀ լուսավորության մինիստրության 1947 թ. փետրվարի

¹⁴³ Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 25, թ. 1—3:

¹⁴⁴ Տե՛ս նույն տեղում, գ. 12, թ. 7 և գ. 25, թ. 1—3:

¹⁴⁵ Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 24, թ. 12—27 և գ. 25, թ. 32—35:

¹⁴⁶ Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 14, թ. 27—34:

¹⁴⁷ Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 25, թ. 1—3:

¹⁴⁸ Տե՛ս նույն տեղում, թ. 32—35:

1-ի տվյալներով 1946 թ. հայրենազարձ երեխաներից հանրակրթական դպրոցներում սովորում էին 7454-ը, բաներիտ դպրոցներում՝ 174 և գյուղերիտ դպրոցներում՝ 392 երիտասարդներ: Արհեստագործական ուսումնարաններում և ֆաբրիկայի գրպորոցներում ընդգրկված էին 704 հայրենազարձ պատանիներ ու աղջիկներ¹⁴⁹: Միաժամանակ հետևողական աշխատանք էր տարվում նաև մեծահասակ հայրենազարձների կիսագրագիտությունն ու անգրագիտությունը վերացնելու ուղղությամբ: Հաշվառման ենթարկված 4073 անգրագետներից առ 1-ը ապրիլի 1947 թ. 3833 մարդ ընդգրկված էին անգրագիտության վերացման խրմբակներում: Հաշվառման վերջված 2874 կիսագրագետներից 2719-ը նույնպես ներգրավված էին ուսուցման ցանցի մեջ, իսկ 544 մարդ արդեն դարձել էին լրիվ գրագետ: Այդ նույն ժամանակ հայրենազարձ երիտասարդներից 203 մարդ սովորում էր հանրապետության բուհերում, 94 մարդ՝ տեխնիկումներում¹⁵⁰:

1946 թ. ներգաղթածների մեծ մասը՝ 9865 ընտանիք, տեղավորվեց հիմնականում բնակչության կողմից տրամադրված վերանորոգված ու հարմարեցված սենյակներում, իսկ 936 ընտանիք՝ նոր կառուցված բնակարաններում¹⁵¹:

1946 թ. վերջերին, ներգաղթող քարավանները ընդունելուց հետո, ՀԿ(Բ)Կ Կենտկոմը և ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը կազմեցին հատուկ բրիգադներ՝ հայրենազարձների վիճակը մանրամասն ուսումնասիրելու համար: Դրա նպատակն էր որքան կարելի է ճիշտ պատկերացում կազմել հայրենազարձների իրական վիճակի մասին, միջոցառումներ մշակել նրանց համար կուլտուր-կենցաղային նորմալ պայմաններ ստեղծելու և նրանց լայնորեն սոցիալիստական շինարարության մեջ ներգրավելու համար: Միաժամանակ միջոցառումներ իրականացվեցին հայրենազարձ բանվորների վերավորակավորման, նրանց կուլտուր-տեխնիկական մակարդակի բարձրացման ուղղությամբ: Մասնագիտություն չունեցող հազարավոր հայրենազարձներ հնարավորություն ստացան ձեռք բերելու իրենց ցանկացած մասնագիտությունը և, կարճ ժամանակամիջոցում հմտանալով, դառնալու արտադրության որակյալ վարպետներ:

Որոշ ժամանակ անց ՀԿ(Բ)Կ Կենտկոմի և հանրապետության կառավարության հանձնարարությամբ ներգաղթի կոմիտեն և վերաբնակեցման վարչությունը կազմակերպեցին համապատասխան սովետների գործկոմներ՝ նախագահներից, կուսակցության քաղկոմ-շրջկոմների երկրորդ քարտուղարներից և ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի ներկայացուցիչներից բաղկացած հատուկ հանձնաժողովներ, որոնք մանրամասնորեն ուսումնասիրեցին բոլոր հայրենազարձների կենցաղային և աշխատանքային պայմանները: Այդ հանձնաժողովների կատարած ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ չնայած ընդհանուր առմամբ բավարար է հայրենազարձների բնակարանով և աշխատանքով ապահովման վիճակը, տեղական սովետները, հիմնարկ-ձեռնարկություններն ու ՀՍՍՀ ներգաղթի կոմիտեն սիստեմատիկ նյութական, դրամական ու այլ կարգի օգնություն են ցույց տալիս հայրենազարձներին, այնուամենայնիվ այդ գործում տեղ են գտել նաև մի շարք լուրջ թերություններ: Առանձին հայրենազարձ ընտանիքներ տեղավորված են ոչ հարմար բնակարաններում, ժամանակին չեն ապահովվել աշխատանքով և կարիք ունեն նյութական լուրջ օգնության¹⁵²:

Հատկապես ծանր էր Արտաշատի, Էջմիածնի, Վեդու, Զանգիբասարի (այժմ՝ Մասիսի) շրջաններում և «Արարատ» տրեստի ու կոնսերվատրեստի սովխոզներում տեղավորված Իրանից ներգաղթած գյուղացիական տնտեսությունների վիճակը: Նրանց մեծ մասը շքավոր էր, եկել էր առանց պարենի ու որևէ ունեցվածքի: Տեղական կազմակերպությունները զգալի օգնություն էին ցույց տվել նրանց, ներգաղթի կոմիտեն հատկացրել էր հագուստ, կոշիկ, օճառ և այլ ապրանքներ: Սակայն այդ շրջանները, չլինելով հացահատիկային, հնարավորություն չունեին հայրենազարձներին ապահովել հացով: Անհրաժեշտ էր այդ նպատակով ամսական մինչև 35 տոննա լրացուցիչ ալյուր հատկացնել այդ շրջաններին, որը և կատարվեց ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի 1947 թ. փետրվարի 3-ի կարգադրությամբ¹⁵³:

Երևանի Լենինյան շրջսովետի գործկոմում հայրենազարձներից ստացված դիմում-բողոքներին տրված ընթացքի ուսում-

¹⁴⁹ Տե՛ս նույն տեղում, թ. 1—3:

¹⁵⁰ Տե՛ս նույն տեղում:

¹⁵¹ Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 14, թ. 29:

¹⁵² Այդ մասին մանրամասն տե՛ս նույն տեղում, գ. 10, թ. 1—143, գ. 14, թ. 4—6, 10—15, 23—26, գ. 15, գ. 17, թ. 1—112, գ. 20, թ. 1—126 և այլն:

¹⁵³ Տե՛ս նույն տեղում, գ. 15, թ. 9—11 և 32—39:

նասիրությունը ցույց տվեց, որ 1946 թ. հուլիսից մինչև 1947 թ. ապրիլը այդ շրջանում տեղավորված 1260 հայրենադարձ տրևտեսություններից (4924 շունչ) ստացվել է տարբեր բնույթի 6398 դիմում: Այդ դիմումներից 1564-ը՝ հողամաս և 119-ը՝ շինանյութեր ձեռք բերելու խնդրանքով, 446-ը՝ դրամական օժանդակություն, 1100-ը՝ վառելիք, 260-ը՝ վառարաններ, 2967-ը՝ նյութական օգնություն ստանալու մասին էին, որոնցից բավարարվել էր 2927-ը¹⁵⁴:

Հանձնաժողովների կատարած ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ հայրենադարձների տեղավորման, աշխատանքային ու նյութական-կենցաղային ապահովման գործում նկատված թերություններն ու դժվարությունները հիմնականում հետևյալներն են.

1. Քաղաքներում բավականաչափ ազատ բնակելի տարածություն բացակայության հետևանքով որոշ թվով քաղաքաբնակ հայրենադարձներ տեղավորվել են գյուղերում: Թեպետ նրանց աշխատանք էր տրվել կոլտնտեսություններում, ինչպես նաև շրջանային կենցաղային սպասարկման կոմբինատներում ու արտելներում, այնուամենայնիվ, հասկանալի սյատճանկերով, բոլորին հնարավոր չէր եղել աշխատանքի տեղավորել հիմնական մասնագիտությամբ: Բնականաբար, այդպիսիները դժգոհ էին գյուղական շրջաններում տեղավորվելուց և ձգտում էին տեղափոխվել քաղաքներ, գլխավորապես՝ Երևան: Չնայած նրանց որոշ մասը հետագայում ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի վերաբնակեցման վարչության թույլտվությամբ փոխադրվել էր քաղաքներ, սակայն շատերն էլ նման քայլի էին դժմում ինքնակամ կերպով, տեղավորվելով ծանոթների ու աղականների մոտ կամ մասնավոր կարգով վարձակալած բնակարաններում: Նման ձևով քաղաքներում կուտակվելու հետևանքով հայրենադարձների որոշ մասն ընկնում էր բնակարանային վատ, հատկապես ձմռանը ապրելու համար աննպաստ պայմանների մեջ, որը առաջ էր բերում նոր դժգոհություններ:

2. Որոշակի դժվարություն էր առաջացել հայրենադարձ ընտանիքների որոշ մասին վառելիքով ապահովելու գործում: Չնայած քաղաքներում և շրջաններում նրանց համար նախապես առանձնացվել էր վառելիք (փայտ, քարածուխ, տորֆ և այլն),

սակայն 1946—1947 թթ. խիստ ձմռան պայմաններում տրամադրված քանակով վառելիքը չէր բավարարում հայրենադարձների պահանջարկը, որը նույնպես դժգոհությունների տեղիք էր տալիս:

3. Լուրջ թերություններ կային նաև հայրենադարձներին պարենամթերքներով ապահովելու գործում: Թեպետ միութենական կառավարությունը այդ նպատակով լրացուցիչ ֆոնդեր էր բաց թողել և տեղական կազմակերպությունները սխտեմատիկ օգնություն էին ցույց տալիս հայրենադարձներին, այնուամենայնիվ մի շարք կոլտնտեսություններում և սովխոզներում որոշակի դժվարություններ էին առաջացել նրանց պարենամթերք մատակարարելու գործում:

4. Որոշ դժվարություններ էին ծագել մի շարք մասնագիտությունների գծով (ոսկերիչներ, վարորդներ և այլն) հայրենադարձների աշխատանքի տեղավորման հարցում: Դա նույնպես առաջ էր բերում որոշակի դժգոհություններ:

Թեև հայրենադարձների հիմնական դանգվածը ֆիզիկապես առողջ էր, սակայն Իրանից եկած գյուղացիների մի մասի մոտ նկատվել էին անդրադարձ տիֆով և տրախոմայով հիվանդության փաստեր: ՀՍՍՀ առողջապահության մինիստրության ձեռնարկած միջոցառումների շնորհիվ կանխվեց տիֆի տարածման վտանգը և բուժվեցին հիվանդները: Կազմակերպվեցին հակատրախոմային մի քանի բրիգադներ, որոնք սխտեմատիկաբար լինելով համապատասխան շրջաններում, բուժում էին հիվանդներին և իրականացնում կանխարգելիչ միջոցառումներ: Արտաշատի, Հոկտեմբերյանի, էջմիածնի, Վեդու, Զանգիբասարի և այլ շրջաններում կազմակերպվել էին հակատրախոմային կայաններ և առանձնացվել լրացուցիչ ակնաբույժներ¹⁵⁵:

Չնայած նշված թերություններին ու դժվարություններին, հայրենադարձների բացարձակ մեծամասնությունը գոհ էր հայրենիք վերադառնալու համար, ճիշտ էր ըմբռնում վերաբնակման հետ կապված դժվարությունները և ձգտում հարմարվել կյանքի ու կենցաղի նոր պայմաններին, ջանում ոչ միայն սեփական աշխատանքով բարելավել իր դրությունը, այլև նպաստել հայրենի երկրի զարգացմանը:

¹⁵⁴ Տե՛ս նույն տեղում, գ. 14, թ. 23—26:

¹⁵⁵ Տե՛ս նույն տեղում, թ. 27—34:

Սակայն առանձին հայրենադարձների մոտ նկատվում էին նաև բացասական տրամադրություններ՝ կապված մասամբ կենցաղային և աշխատանքային դժվարությունների, մասամբ էլ նոր պայմանների ոչ ճիշտ ընկալման հետ։ Հանրապետության կուսակցական և սովետական ղեկավար մարմինները, անդրադառնալով նման երևույթներին, մշակեցին լրացուցիչ գործնական միջոցառումներ՝ հայրենադարձների աշխատանքային ու կենցաղային պայմանները բարելավելու, նրանց նկատմամբ ամենօրյա ուշադրություն և հոգատարություն ցուցաբերելու, ինչպես նաև նրանց շրջանում քաղաքական-դաստիարակչական աշխատանքները ուժեղացնելու ուղղությամբ։ Մեծ կարևորություն տալով այդ գործին, ՀԿԿ(Բ)Կ Կենտկոմի ագիտացիայի և պրոպագանդայի բաժնում ստեղծվեց հայրենադարձների շրջանում տարվող աշխատանքի սեկտոր¹⁵⁶:

Հայրենադարձներին օգնելու նպատակով ՀՍՍՀ կառավարության խնդրանքով ՍՍՀՄ Մինիստրների խորհուրդը 1946 թ. շորորդ եռամսյակում Հայաստանին հատկացրեց արդյունաբերական ապրանքների և պարենամթերքների լրացուցիչ ֆոնդ։ Այդ ֆոնդից, որպես միանվագ օգնություն, հայրենադարձներին տրվեց 600 տ ալյուր, 80 տ ձավար, 42,5 տ շաքար և հրուշակեղեն, 15 տ միս և ձուկ, 3 տ կենդանական և բուսական յուղ, 106,8 տ տնտեսական օձառ, 38050 մ բրդյա և բամբակյա կտոր, 16300 կտոր տղամարդու, կանացի և մանկական հագուստ, 8350 զույգ կոշիկ, 63,6 տ նավթ, 2600 հատ վառարան, 2268187 ռ. դրամ և այլն¹⁵⁷: Դրան զուգընթաց, արդյունաբերական ձեռնարկությունները, կոլտնտեսությունները, սովխոզները և հիմնարկությունները իրենց մոտ աշխատող հայրենադարձներին սեփական միջոցներից պարբերաբար ցույց էին տալիս դրամական, նյութական և այլ կարգի օգնություն¹⁵⁸: Բացի այդ, արտասահմանյան բարեգործական հաստատություններից ստացված և ՀՍՍՀ կառավարության տրամադրության տակ գտնվող միջոցներից 1946 թ. ներգաղթածներին տրվել է

7816 զույգ կոշիկ, 24555 կտոր հագուստ, 5212 մ կտոր, 8780՝ կտոր տնտեսական օձառ և այլն¹⁵⁹:

Սովետական կառավարությունը հայրենադարձների համար սահմանեց լրացուցիչ մի շարք արտոնություններ ու առանձնաշնորհումներ։ Այսպես, օրինակ, ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի 1946 թ. հունիսի 21-ի, ինչպես նաև ՀԿԿ(Բ)Կ Կենտկոմի ու ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի 1946 թ. հուլիսի 9-ի համատեղ որոշումների համաձայն գյուղական վայրերում բնակություն հաստատած հայրենադարձները 2—5 տարի ժամանակով ազատվում էին գյուղատնտեսական հարկից, մյուսները՝ անդավակության, եկամտի և այլ հարկերից¹⁶⁰: 1946 թ. հոկտեմբերի 8-ին ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը որոշում ընդունեց ներգաղթած բազմազավակ և միայնակ մայրերին պետական նպաստներ նշանակելու և վճարելու¹⁶¹, ինչպես նաև հայրենադարձներին թուշակավորելիս արտասահմանում աշխատած ժամանակամիջոցը նույնպես որպես ստած հաշվի առնելու մասին և այլն¹⁶²: Դեռևս 1946 թ. ապրիլի 23-ին ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը որոշում էր կայացրել թուշատրել կոլտնտեսություններին անբաժանելի ֆոնդերից հայրենադարձների համար բնակարաններ կառուցելու նպատակով միջոցներ առանձնացնելու։ Այդ որոշման համաձայն հանրապետության 28 շրջաններում հատկացվեց շուրջ 40 միլիոն ռուբլի¹⁶³:

1946 թ. մայիսի 14-ին ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը որոշում ընդունեց հայրենադարձների համար երեք նոր ավաններ կառուցելու մասին։ Դրանցից երկուսը կառուցվելու էին Ստորին Հրազդանի ջրանցքով ոռոգվող հողերի վրա, իսկ մեկը՝ Վեդու շրջանում, յուրաքանչյուրը 250 տնտեսության համար։ Այդ գործը ղրվեց ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր վերաբեակեցման վարչության վրա և հանձնարարվեց ղրանցում բնակելի տներ¹⁶⁴: շինարարությունն ավարտել մինչև 1946 թ. հոկտեմբերը¹⁶⁴:

159 Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 14 և ց. 2, գ. 25:

160 Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 18, թ. 103:

161 Տե՛ս նույն տեղում, գ. 8, թ. 96:

162 Տե՛ս նույն տեղում, գ. 13, թ. 4:

163 Տե՛ս նույն տեղում, գ. 4, թ. 30—32:

164 Տե՛ս նույն տեղում, թ. 53:

¹⁵⁶ Տե՛ս ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 35, կ. 7, գ. 73, թ. 2—9, նաև՝ ՀՍՍՀ ՀՀՍՀ ՊԿԱ, ֆ. 362, ց. 1, գ. 29, թ. 94 և 112:

¹⁵⁷ Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՀ ՊԿԱ, ֆ. 362, ց. 1, գ. 14, թ. 30—34 և ց. 2, գ. 25, թ. 32—35:

¹⁵⁸ Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 14:

ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի 1946 թ. հունիսի 7-ի կարգադրությամբ առաջարկվեց Հայկոնսերվտրեստին իր ենթակայության սովխոզներում հայրենադարձների ընդունումն ու տեղավորումը ապահովելու նպատակով հուլիսին ավարտել 47 անհատական տների և բազմահարկ շենքերում 34 բնակարանների շինարարությունը, ինչպես նաև եղած բնակարանային ֆոնդից հարմարեցնել 170 սենյակ¹⁶⁵։

1946 թ. սեպտեմբերի 6-ին ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը անդրադարձավ հայրենադարձների համար կատարվող բնակարանային շինարարության ընթացքին և արձանագրեց, որ ծայրահեղ անբավարար է վիճակը այդ բնագավառում։ Մինիստրների խորհուրդը գործնական միջոցառումներ մշակեց դրությունը կտրուկ կերպով բարելավելու ուղղությամբ¹⁶⁶։

Նկատի ունենալով բնակարաններով ապահովելու գործում առաջացած դժվարությունները՝ ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը 1946 թ. նոյեմբերի 25-ի որոշումով այլ կազմակերպություններին հատկացված միջոցներից կրճատեց կես միլիոն ռուբլի և այն ներդրեց քաղաքներում հայրենադարձների համար բնակելի տների կառուցման ֆոնդի մեջ։ 1600 ընտանիքներ ստացան հողամասեր և վարկ՝ անհատական բնակարաններ կառուցելու համար¹⁶⁷։

Կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության այս հոգատարությունը հայրենադարձների ճնշող մեծամասնությունը պատասխանում էր բարեխիղճ և նվիրված աշխատանքով։ Հանրապետության կոլտնտեսություններում տեղավորված հայրենադարձներից շատերը 3—4 ամսում վաստակել էին 150—200 աշխօր, տեր դարձել նյութական զգալի միջոցների։ Օրինակ, Թալինի շրջանի Զառինջա գյուղի կոլտնտեսությունում հայրենադարձ Վահան Ասլանյանը իր ընտանիքով վաստակել էր 700, Մինաս Երանյանը՝ 500, Փիրմալաք (այժմ՝ Արեգ) գյուղում Խաչիկ Թևանյանը՝ մոտ 450, Նղեգնաձորի շրջանում Զհանգիր Կասումյանը՝ 700 աշխօր¹⁶⁸։

Արդյունաբերության և շինարարության մեջ նույնպես շատ

հայրենադարձներ աչքի էին ընկնում իրենց ազնիվ աշխատանքով, կատարում էին 2—3 արտադրական նորմա։ Կարելի է հիշատակել Երևանի Ստ. Շահումյանի անվան կաշվի գործարանի բանվոր, Իրանից հայրենիք եկած Արշակ Սահակյանի, գյուղգործիքների գործարանի արտադրամասի վարիչ, Բուլղարիայից հայրենադարձ Գրիգոր Պապալեճյանի և այլոց հայրենանվեր աշխատանքը¹⁶⁹։

Հայրենիք վերադարձած սովետական նոր քաղաքացիները ակտիվորեն մասնակցում էին նաև երկրի հասարակական-քաղաքական կյանքին։ ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության 1946 թ. հոկտեմբերի 19-ի հրամանագրի համաձայն սովետական Միության տերիտորիա մտնելու պահից սկսած ներգաղթողներն ստանում էին ՍՍՀՄ քաղաքացիություն և, բնականաբար, օգտվում դրանից բխող բոլոր իրավունքներից¹⁷⁰։

* * *

1946 թ. հայրենադարձության հանրագումարը ավելի պարզորոշ դարձրեց այն լրողությունը, որ թեպետ գրեթե ամբողջ սփյուռքահայությունը ձգտում է կենտրոնանալ Սովետական Հայաստանում, այնուամենայնիվ դաժան պատերազմից նոր դուրս եկած մեր երկիրը դեռևս ի վիճակի չէ լիովին իրականացնել այդ ցանկությունը։ Ուստի սովետական կառավարությունը որոշեց 1947 թ. և հետագա տարիներին շարունակել իրականացնել առաջին հերթին սփյուռքահայ այն զանգվածների հայրենադարձությունը, որոնք գտնվում էին քաղաքական ու տնտեսական առավել աննպաստ պայմաններում։

Այդ տեսակետից շարունակում էր խիստ ծանր մնալ Հունաստանի հայության վիճակը։ Եվ բնավ պատահական չէր, որ սփյուռքահայ շատ կազմակերպություններ սովետական կառավարությանը խնդրում էին ամեն կերպ արագացնել «հունահայերի ներգաղթը, որոնց վիճակը ողբալի է»¹⁷¹։ Սակայն բարվոք չէր դրությունը նաև հայկական մյուս գաղթօջախներում։ Սիրիայի և Լիբանանի հայերի ներգաղթի կենտ-

¹⁶⁵ Տե՛ս նույն տեղում, թ. 56։

¹⁶⁶ Տե՛ս նույն տեղում, դ. 8, թ. 85—87։

¹⁶⁷ Տե՛ս նույն տեղում, գ. 12, թ. 74։

¹⁶⁸ Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 24, թ. 12—27։

¹⁶⁹ Տե՛ս նույն տեղում, ֆ. 709, ց. 2, գ. 589, թ. 1—21։

¹⁷⁰ Տե՛ս նույն տեղում, ֆ. 326, ց. 1, գ. 145, թ. 1—19։

¹⁷¹ Տե՛ս նույն տեղում, գ. 18, թ. 27—28, գ. 30, թ. 28։

կոմի նախագահի տեղակալ Հրաչ Սեդրակյանը և քարտուղար Հարություն Մաղեյանը 1947 թ. սկզբներին ՀՍՍՀ ներգաղթի կոմիտեին հասցեագրած նամակում գրում էին. «Վերջին շրջանին առաջ եկած և տակավ զարգացող մի շարք փոփոխություններ հետզհետե ծանրացող լուրջ կացություն մը ստեղծած են մեր երկրներու մեջ ապրող հայութեան համար: Պաղեստինի ներգաղթի կոմիտեին ստացած ենք հատուկ նամակ մը, ուր կընկարագրվի իրենց շրջանին մեջ ստեղծված լուրջ կացութեան հետևանքով հայութեան մատնված խիստ դժվարին վիճակը և կըխնդրվի, մայրս ամսեն առաջ իսկ, մեծ թիվով պաղեստինահայերուն ներգաղթը:

Զգալի չափով վատթարացած են և կշարունակեն ավելի վատթարանալ աշխատավոր մասսաներուն ապրուստի պայմանները, կաճին անգործությունն ու թշվառությունը, իրենց բոլոր հետևանքներով»¹⁷²:

Իրաքի հայերի ներգաղթի կոմիտեն, դիմելով Բաղդադում ՍՍՀՄ միսիայի ղեկավար Գ. Զայցեին, գրում էր. «Ուսումնասիրելով դիմողներուն (ներգաղթելու համար.— Ն. Մ.) տնտեսական վիճակը, կոմիտեն ատնցման առնվազն 4000 հոգի այս տարի մեկնելու խիստ անհրաժեշտություն կգտնե»¹⁷³: Եգիպտոսահայերի ներգաղթի կոմիտեն խնդրում էր 1947 թ. նախատեսված 3000 հոգու փոխարեն անպայման հայրենադարձնել առնվազն 5000 մարդ¹⁷⁴:

Հաշվի առնելով սփյուռքահայության այդ ծանր կացությունը, սովետական կառավարությունը որոշեց 1947 թ. ևս հայրենիք տեղափոխել մի քանի հազար տարագիրների: ՍՍՀՄ Մինիստրների խորհուրդը 1946 թ. դեկտեմբերի 3-ին քննարկեց 1947 թ. Հայկական ՍՍՀ կատարվելիք ներգաղթի հարցը և որոշեց ընդունել շուրջ 63 հազար սփյուռքահայերի¹⁷⁵: Դրա հիման վրա ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը մշակեց կոնկրետ պլան, որի համաձայն նախատեսվում էր 1947 թ. հայրենիք տեղափոխել իրանից՝ 20 հազար, Հունաստանից՝ 15 հազար, Սիրիայից և Լիբանանից (այդ թվում նաև Իրաքից, Պաղեստինից և Կիպրոսից,

որովհետև այդ գաղթօջախներից նույնպես Բեյրութով էին հայրենիք գալու)՝ 15 հազար, Ֆրանսիայից՝ 7 հազար, Եգիպտոսից՝ 3 հազար, Հարավային Ամերիկայի երկրներից՝ 2 հազար և ԱՄՆ-ից՝ 1 հազար մարդ¹⁷⁶:

Միաժամանակ որոշվեց 1947 թ. ժամանող հայրենադարձների համար միութենական և հանրապետական ենթակայության ձեռնարկությունների գծով կառուցել և շահագործման հանձնել 147350 քմ բնակելի տարածություն: Պետական վարկերի հաշվին անհատական բնակարանային շինարարության գծով նախատեսվում է կառուցել 8400 տուն, այդ թվում՝ գյուղական վայրերում՝ 4400, քաղաքներում և բանավաններում՝ 4000 տուն: Սահմանվեց այդ նպատակով բաց թողնել 156 միլիոն ուրբու վարկ, որից գյուղբանկի գծով՝ 76 և կոմունալ բանկի գծով՝ 80 միլիոն ուրբի: Նախատեսվում էր հայրենադարձների համար կառուցել 4 նոր ավաններ՝ նոր յուրացված հողերի վրա: Հայրենադարձներին աշխատանքով անմիջապես ապահովելու նպատակով ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին թույլատրվում էր նրանց համար կազմակերպել նոր արտադրական արտելներ և իր հայեցողությամբ հաստատել դրանց հաստիքները: Հայրենադարձության հաջող կազմակերպման համար ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առաջարկվում էր արտասահմանյան համապատասխան երկրներ գործուղել իր ներկայացուցիչներին, այդ թվում Իրան՝ 4, Ֆրանսիա՝ 3, Եգիպտոս՝ 3, Հարավային Ամերիկա՝ 2 և ԱՄՆ՝ 2 մարդ: Միաժամանակ թույլատրվում էր առանձնացնել ներկայացուցիչներ՝ հայրենադարձներին մեկնման նավահանգիստներից մինչև ժամանման կայանները ուղեկցելու համար, այդ թվում՝ Սիրիայից, Լիբանանից և Հունաստանից՝ 2-ական, իսկ Ֆրանսիայից, Եգիպտոսից, ԱՄՆ-ից և Հարավային Ամերիկայից՝ մեկական մարդ¹⁷⁷:

Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր ներգաղթի կոմիտեն, հաշվի առնելով Իրանում և Հունաստանում հայերի առավել դժվարին կացությունը, Բուլղարիայի և Ռումինիայի հետ համեմատած, որոշեց վերջին երկու երկրից 1947 թ. ներգաղթ չկատարել, ավելացնելու համար առաջին երկու գաղթ-

¹⁷² Տե՛ս նույն տեղում, գ. 41, թ. 37—38:

¹⁷³ Տե՛ս նույն տեղում, թ. 28:

¹⁷⁴ Տե՛ս նույն տեղում, ց. 8, գ. 23, թ. 29—30:

¹⁷⁵ Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 12, թ. 82:

¹⁷⁶ Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 20, թ. 18—24:

¹⁷⁷ Տե՛ս նույն տեղում:

օջախների քվտտան¹⁷⁸։ Սակայն 1947 թ. ներգաղթի հետ կապված իրադարձությունները ծավալվեցին այնպես, որ հնարավոր չեղավ Իրանից հայրենադարձնել ոչ մի մարդ։ Իրանական կառավարությունը, շնայած իր նախնական համաձայնությունը, արգելեց հայերի հայրենադարձությունը։ Իրա հետևանքով ներգաղթելու նախապատրաստված և արդեն իրենց տներն ու գույքը վաճառած, գործերը լուծարքի ենթարկած իրանահայերը ընկան խիստ ծանր կացության մեջ։ Իրանահայերի ներգաղթի կոմիտեն, բարեգործական հաստատություններն ու սովետական կառավարությունը ձեռք առան արտակարգ միջոցներ՝ նրանց վիճակը ինչ-որ շափով թեթևացնելու ուղղությամբ¹⁷⁹։

Որոշակի խոչընդոտներ առաջացան նաև ԱՄՆ-ից և Հարավային Ամերիկայի հայկական գաղթօջախներից հայրենադարձության իրականացման գործում։ ԱՄՆ-ի, Արգենտինայի, Բրազիլիայի և Ուրուգվայի կառավարությունները մերժեցին այդ երկրները մեկնելու վիզաներ տալ շՄՍՄ Մինիստրների խորհրդի հայրենադարձության գծով ներկայացուցիչներին։ Հարուցվեցին նաև այլ կարգի խոչընդոտներ¹⁸⁰։ Սովետական կառավարության գործադրած հետևողական ջանքերի շնորհիվ հնարավոր եղավ ինչ-որ շափով կարգավորել ամերիկահայերի ներգաղթը, սակայն Հարավային Ամերիկայի հայ տարագիրների հայրենադարձությունը մնաց անկատար։ Այդ պայմաններում շՄՍՄ Մինիստրների խորհրդին առընթեր ներգաղթի կոմիտեն, նկատի ունենալով ուսման հայերի և բուլղարահայերի հայրենադարձվելու բուռն խնդրանքները, որոշեց 1947 թ. որոշ թվով հայրենադարձներ ընդունել նաև այդ երկրներից¹⁸¹։

Եվ այսպես, նախապատրաստական լայն աշխատանքներ կատարելուց հետո, 1947 թ. հուլիսից վերսկսվեց սփյուռքահայերի հայրենադարձությունը և մինչև տարվա վերջը հայրենիք ժամանեց 8521 ընտանիք, 35401 մարդ¹⁸²։ Ըստ առանձին երկրների ներգաղթել են. Միրիայից և Լիբանանից՝ 2525 ընտանիք, 12985 մարդ, Հունաստանից՝ 3478 ընտանիք, 13241 մարդ,

Ֆրանսիայից՝ 1518 ընտանիք, 5260 մարդ, Եգիպտոսից՝ 486 ընտանիք, 1669 մարդ, Պաղեստինից՝ 243 ընտանիք, 1250 մարդ, Իրաքից՝ 177 ընտանիք, 856 մարդ, ԱՄՆ-ից՝ 88 ընտանիք, 151 մարդ, Չինաստանից՝ 6 ընտանիք, 16 մարդ¹⁸³։

Կարծում ենք, որ հետաքրքրությունից զուրկ չէ առանձին երկրներում ներգաղթի նախապատրաստման հետ կապված աշխատանքների մասին որոշ տեղեկությունների հաղորդումը։

Ֆրանսաբնակ հայերի ներգաղթի կենտկոմի 1948 թ. նոյեմբերի 22-ին կազմած տեղեկագրում նշված է, որ ֆրանսահայ ներգաղթողները հայրենիք են մեկնել երկու խմբով, առաջինը՝ «Ռոսիա», իսկ երկրորդը՝ «Պոբեդա» շոգենավերով։ Նախապատրաստական շրջանում կենտկոմը կազմակերպել էր բանավոր և գրավոր պրոպագանդա, բացատրել ներգաղթի կարևորությունը և նշանակությունը հայ ժողովրդի ազգային վերամիավորման գործում։ Տեղի էին ունեցել բազմաթիվ հավաքույթներ, կարդացվել դասախոսություններ, զեկուցումներ, որոնց հաջողությամբ մեծապես նպաստել էին ՀԲԸՄ տեղի մասնաճյուղը, երիտասարդաց ու կանանց միությունները, Հայ կարմիր խաչի կազմակերպությունը և հայրենակցական միությունները։ Փարիզի հայերի շրջանում մեծ հետաքրքրություն էր առաջ բերել «Ճանչընանք հայրենիքը» թեմայով դասախոսությունների շարքը։ Հրատարակվել էր «Ներգաղթը և խորհրդային սահմանադրությունը» գրքույկը։ Ներգաղթի հետ կապված հարցերը մանրամասնորեն լուսաբանվում էին ֆրանսահայ ազգային ընդհանուր միության օրգան «Ժողովուրդ» օրաթերթում և հայկական այլ պարբերականներում։ Ֆրանսահայ ներգաղթի կոմիտեն սերտ համագործակցության մեջ էր գտնվում Փարիզի սովետական դեսպանության, ներգաղթի գծով շՄՍՄ Մինիստրների խորհրդի լիազոր Անդրանիկ Հինայեկյանի, ինչպես նաև ՖՆԱՄ-ի և ՀԲԸՄ-ի հետ։ Ներգաղթի կենտկոմը իր ամփոփագրում նշում է, որ խիստ թերություններով իրականացվեց երկրորդ քարավանի մեկնումը։ Նախ շոգենավը Մարսել ժամանեց պայմանավորված ժամկետից բավական ուշ, որի հետևանքով ներգաղթողները շուրջ 40 օր անորոշ սպասողական վիճակում էին գտնվում, ապա հասցեակցության պատճառով այնպես ստացվեց, որ շատերի բեռներն ուղարկվեցին, իսկ իրենք չկարողացան մեկնել, կամ

178 Տե՛ս նույն տեղում, գ. 15, թ. 6 և գ. 28, թ. 52։

179 Տե՛ս նույն տեղում, գ. 41, թ. 16։

180 Տե՛ս նույն տեղում, գ. 28, թ. 69—72 և գ. 41, թ. 2—3։

181 Տե՛ս նույն տեղում, գ. 13, թ. 38—43։

182 Տե՛ս նույն տեղում, գ. 25, թ. 7—10։

183 Տե՛ս ՄԼԻ շՄԿԱ, ֆ. 1, ց. 38, գ. 85, թ. 78—81։

ընտանիքի անդամների մի մասը մեկնեց, իսկ մյուս մասին չհաջողվեց մեկնել և այլն¹⁸⁴: Ֆրանսահայերի ներգաղթի կենտկոմը միաժամանակ ներկայացրել է իր ֆինանսական հաշվետվությունը, որից պարզվում է, որ հավաքվել է ընդամենը 2,429,820 ֆրանկ, որը օգտագործվել է հայրենադարձության նախապատրաստման համար¹⁸⁵:

Սիրիայի և Լիբանանի հայերի ներգաղթի կենտկոմի և շըրջանային կոմիտեների միացյալ ժողովը, որը տեղի է ունեցել Բեյրութում, 1947 թ. դեկտեմբերի 20—21-ը, ամփոփելով կատարված աշխատանքը, արձանագրել է, որ 1947 թ. Բեյրութից հայրենիք է մեկնել 5 քարավան: Առաջին քարավանը (4 հուլիսի, 1947 թ.) Լիբանանից հայրենիք է բերել 410 ընտանիք (2321 շունչ), երկրորդ քարավանը (25 հուլիսի, 1947 թ.)՝ Լիբանանից 23 ընտանիք (125 շունչ), Սիրիայից՝ 486 ընտանիք (2983 շունչ), ընդամենը 509 ընտանիք (3108 շունչ): Երրորդ քարավանով (11 օգոստոսի, 1947 թ.) հայրենիք են մեկնել Լիբանանից 415 ընտանիք (2113 շունչ), Սիրիայից՝ 185 ընտանիք (1041 շունչ), ընդամենը՝ 600 ընտանիք (3154 շունչ), չորրորդ քարավանով (6 սեպտեմբերի, 1947 թ.) Լիբանանից՝ 53 ընտանիք (315 շունչ), Սիրիայից՝ 459 ընտանիք (2288 շունչ), ընդամենը՝ 512 ընտանիք (2603 շունչ), հինգերորդ քարավանով (25 հոկտեմբերի, 1947 թ.) Լիբանանից՝ 199 ընտանիք (1011 շունչ), Սիրիայից՝ 150 ընտանիք (758 շունչ), Իրաքից՝ 181 ընտանիք (857 շունչ), Պաղեստինից՝ 261 ընտանիք (1305 շունչ), (նրանք ավտոմեքենաներով հասցվում էին Բեյրութ և այնտեղից նավով մեկնում Բաթում), ընդամենը՝ 2822 ընտանիք, 15117 շունչ, որից արական՝ 7816, իգական՝ 7301 շունչ¹⁸⁶:

Անդրադառնալով տեղ գտած դժվարություններին՝ Սիրիայի և Լիբանանի ներգաղթի կոմիտեն նշում է հատկապես դրամական միջոցների սղությունը: Այդ երկրներում ներգաղթի կոմիտեների եկամտի գրեթե միակ աղբյուրը եղել է ներգաղթողներից

րից գանձվող գումարը: Սակայն քանի որ ներգաղթողների մեծ մասը ոչ մի կոպեկ չէր մուծել, ներգաղթի կենտկոմը հայրենադարձներին փոխադրող նավերին պարտք էր մնացել 855700 լիբանանյան ոսկի: Լիբանանից 1947 թ. հայրենիք մեկնած 1100 ընտանիքից (5885 շունչ) միայն 53-ն (278 շունչ) էր լրիվ վճարել իր ճանապարհածախսը, որը կազմել է 48120 լիբ. ոսկի: 60 ընտանիք (266 շունչ) միայն կիսով չափ էր վճարել ճանապարհածախսը՝ 25751 լիբ. ոսկի, 95 ընտանիք (1244 շունչ) կատարել էր միայն մասնակի վճարումներ՝ 26579 լիբ. ոսկի, իսկ մնացած 992 ընտանիքը (2776 շունչ) մեկնել էր ամբողջովին ճիշտ¹⁸⁷: Եթե 10 տարեկանից բարձր յուրաքանչյուր ներգաղթող վճարեր իր ճանապարհածախսը, կստացվեր 624600 լիբ. ոսկի, մինչդեռ մուտք էր եղել ընդամենը 90450 լիբ. ոսկի:

Սիրիայից ներգաղթած ընտանիքներից անվճար հայրենիք են մեկնել 400-ը, ճանապարհածախսը լրիվ մուծել են 143-ը, մասնակիորեն՝ 591-ը, որով կոմիտեի գանձարկը մուտք է եղել 248596 լիբ. ոսկի, մինչդեռ, եթե բոլոր շափահասները վճարեին ճանապարհածախսը, կստացվեր 768250 լիբանանյան ոսկի¹⁸⁸: Հասկանալի է, որ հայրենադարձներից չգանձված ճանապարհավարձի գումարը նավային ընկերություններին մուծում էր նույնպես սովետական կառավարությունը:

Սիրիայից և Լիբանանից 1947 թ. ներգաղթողների թվում հայրենիք եկան երկու արտելներ՝ մեկը Բեյրութից՝ 6, իսկ մյուսը՝ Հալեպից՝ 14 բեռնատար ավտոմեքենաներով, ինչպես նաև Զեզիրից ներգաղթող երկու ընտանիք բերեցին 2 ավտոմեքենա, իսկ Բեյրութի Զեյթունցիների հայրենակցական միությունը նոր Զեյթուն ավանի շինարարական կազմակերպություններին նվեր ուղարկեց մեկ բեռնատար ավտոմեքենա¹⁸⁹:

1947 թ. ներգաղթողների թիվը, անշուշտ, ավելի մեծ կլիներ, եթե արհեստականորեն ստեղծված մի շարք խանգարիչ հանգամանքներ չխոչընդոտեին հայրենադարձությանը: Այսպես, Իրանի կառավարությունը արգելեց մոտ 25 հազար հայերի հայրենադարձությունը¹⁹⁰, ԱՄՆ-ի, Արշենախնայի, Բրազիլիայի

¹⁸⁴ Տե՛ս ՆՍՍՀ ՀՍՍՀ ՊԿԱ, ֆ. 362, ց. 2, գ. 31, ք. 43—48:

¹⁸⁵ Տե՛ս նույն տեղում, ք. 50—51:

¹⁸⁶ Տե՛ս նույն տեղում, գ. 41, ք. 44—45: Պետք է նշել, որ վերը բերված թվերի և ՆՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր ներգաղթի կոմիտեի ներկայացրած թվերի միջև կան որոշ տարբերություններ: Ավելի ստույգ պետք է համարել ներգաղթի կոմիտեի տվյալները:

¹⁸⁷ Տե՛ս ՆՍՍՀ ՀՍՍՀ ՊԿԱ, ֆ. 362, ց. 2, գ. 30, ք. 65—78:

¹⁸⁸ Տե՛ս նույն տեղում, գ. 41, ք. 43:

¹⁸⁹ Տե՛ս նույն տեղում, ք. 47:

¹⁹⁰ Տե՛ս նույն տեղում, ք. 19—20:

և Ուրուգվայի կառավարությունները բացասաբար վերաբերվեցին հայերի ներգաղթին¹⁹¹, 1947 թ. աշնանը Եգիպտոսում բռնադատվեց հետախուսի (խուբերա) համաճարակ, որի հետևանքով շուրջ հազար հոգուց բաղկացած եգիպտահայերի երկրորդ քարավանի մեկնումը հետաձգվեց անորոշ ժամանակով¹⁹², Պաղեստինում ծագած ժանտախտի համաճարակի պատճառով այնտեղից նույնպես կասեցվեց հայերի ներգաղթը¹⁹³ և այլն:

1947 թ. Սովետական Հայաստան ժամանած հայրենադարձները տեղավորվեցին քաղաքներում՝ 21719 մարդ, շրջկենտրոններում՝ 2250 մարդ, բանավաններում՝ 1624 մարդ, կոլտընտեսություններում՝ 7344 մարդ, սովխոզներում՝ 2464 մարդ¹⁹⁴:

Հայրենադարձների ընդհանուր թվից աշխատունակ էին 15100 մարդ, որից շինարարներ՝ 1521, մետաղագործներ՝ 1465, տեքստիլագործներ՝ 1175, կոշկակարներ՝ 1564, դերձակներ՝ 1756, վարսավիրներ՝ 242, վարորդներ և տրակտորիստներ՝ 715, հողագործներ՝ 2698, այլ արհեստավորներ և բանվորներ՝ 2917, ոսկերիչներ՝ 108, առևտրականներ՝ 392, քահանաներ՝ 11, մտավորականներ՝ 536, այդ թվում՝ բժիշկներ՝ 43, ուսուցիչներ՝ 208, գրողներ՝ 4, ինժեներներ և տեխնիկներ՝ 25, գյուղատնտեսներ՝ 7, քիմիկոսներ՝ 5, երաժիշտներ և երգիչներ՝ 72, նկարիչներ և քանդակագործներ՝ 11 և այլն¹⁹⁵:

1947 թ. ժամանած հայրենադարձներին նույնպես նյութական մեծ օգնություն ցույց տվեցին հանրապետության կոլտընտեսությունները, սովխոզները, հիմնարկ-ձեռնարկությունները: Դրան չուզելից սովետական կառավարությունը նրանց տրամադրեց դրամական օգնություն՝ 4100500 ռուբլի, ձրի հագուստեղեն՝ 16982 կտոր, կոշիկ՝ 1720 զույգ, անկողին՝ 1339 հատ, կահույք՝ 1052 կտոր: Մինչև պարենամթերքների քարտային սիստեմի վերացումը և դրամական ռեֆորմի անցկացումը (դեկտեմբեր, 1947 թ.) հայրենադարձներին վաճառվեցին լրացուցիչ մթերքներ և արդյունաբերական ապրանքներ, այդ թվում՝ ալյուր՝ 552 տ, ձավար՝ 84 տ, շաքար՝ 28 տ, օճառ՝ 102 տ, բյակ՝

200 հազար մետր, կոշիկ՝ 10 հազար զույգ, կարտոֆիլ՝ 1500 տ, տարբեր տեսակի բանջարեղեն՝ 550 տ, 5 հազար խմ վառելիքայտ, 9 հազար տ քարածուխ, 4 հազար հատ թիթեղյա և թուշե վառարաններ¹⁹⁶:

Հայրենադարձների բնակելի տների շինարարության համար գյուղատնտեսական և կոմունալ բանկերի կողմից 1947 թ. բաց թողնվեց 212464 հազար ռուբլի¹⁹⁷: Նրանց համար կառուցվեց և շահագործման հանձնվեց 2140 տուն և 2221 սենյակ¹⁹⁸:

1947 թ. հայրենիք վերադարձած սփյուռքահայերը նույնպես մեծ եռանդով էին աշխատում հանրապետության կոլտնտեսություններում, սովխոզներում և արդյունաբերական ձեռնարկություններում: Բազմաթիվ հայրենադարձներ հայրենանվեր աշխատանք էին կատարում հանրային դաշտերում, 4—5 ամսում վաստակելով 200—300 աշխօր: Այսպես, օրինակ, 1947 թ. ներգաղթած Լ. Թոսունյանը (Ստեփանավանի շրջանի Հոբարձի գյուղում) վաստակել էր մոտ 240 աշխօր, Մ. Թադևոսյանը (Ադիսի շրջանի Գուսանագյուղում)՝ 300 աշխօր, Գ. Աղամալյանի ընտանիքը (Հրազդանի շրջանի Ֆոնտան գյուղում)՝ 1200 աշխօր, Ն. Մինասյանի ընտանիքը (Արտաշատի շրջանի Այգեգարդ գյուղում)՝ մոտ 1000 աշխօր, որի դիմաց ստացել էր 1,5 տ հացահատիկ, 2,5 տ խաղող, 700 կգ շամիչ, 25 հազար ռուբլի դրամ և այլ մթերքներ: Արդյունաբերական ձեռնարկություններում աշխատող հայրենադարձ բանվորներ Ս. Գրիգորյանը, Գ. Ութուձկյանը և շատ ուրիշներ իրենց արտադրական նորմաները սիստեմատիկաբար կատարում էին 400—600 տոկոսով¹⁹⁹: Ստեղծագործական գործունեության անհրաժեշտ պայմաններ էին ստեղծված գիտության, արվեստի և մշակույթի մյուս բնագավառներում աշխատող հայրենադարձների համար:

Հսկայական աշխատանք կատարվեց հայրենադարձների դպրոցական հասակի երեխաներին դպրոցներում ընդգրկելու և մեծահասակների անգրագիտությունն ու կիսագրագիտությունը վերացնելու ուղղությամբ: Առ 1-ը հունվարի 1948 թ. 1946—1947 թթ. ժամանած հայրենադարձների 16726 երեխաներ սովո-

191 Տե՛ս նույն տեղում, թ. 2—3:

192 Տե՛ս նույն տեղում, գ. 11, թ. 64—65:

193 Տե՛ս նույն տեղում, գ. 5, թ. 77—84:

194 Տե՛ս ՄԼԻ ԶՄԿԱ, ֆ. 1, ց. 38, գ. 85, թ. 78—81:

195 Տե՛ս նույն տեղում:

196 Տե՛ս նույն տեղում:

197 Տե՛ս նույն տեղում:

198 Տե՛ս նույն տեղում:

199 Տե՛ս նույն տեղում:

րում էին մասսայական դպրոցներում, 1556 հոգի՝ բաներիտ և գյուղերիտ դպրոցներում, 698 հոգի՝ արհեստագործական և ֆաբ-գործուսի ուսումնարաններում, 377 հոգի՝ բուհերում, ավելի քան 7000 հոգի՝ անգրագիտության և կիսագրագիտության վերացման խմբակներում: Հայրենադարձների՝ ուսման մեջ ետ մնացող երեխաներին օգնելու նպատակով մասսայական դրպրոցներում կազմակերպվել էին 123 խմբակներ, ուր ընդգրկված 1362 աշակերտների հետ լրացուցիչ պարապմունքներ էին անցկացնում 298 ուսուցիչներ²⁰⁰: Ռուսաց լեզվին տիրապետելու նպատակով հայրենադարձների համար կազմակերպվել էին բազմաթիվ խմբակներ²⁰¹:

Հայրենադարձների շրջանում մասսայական-քաղաքական, կուլտուրական և դաստիարակչական զգալի աշխատանք էին տանում կուսակցական, կոմերիտական և արհմիութենական կազմակերպությունները: Այդ աշխատանքները սկսվում էին հենց ընդունման կայաններից: Բաթումի, Զուլֆայի և մյուս ընդունման կայաններում ստեղծված էին ագիտիկներ, գրադարան-ընթերցարաններ, ռադիոհանգույցներ և այլն, որոնք կազմակերպում էին հայրենիք ժամանող ներգաղթողների կուլտուրական հանգիստը, նրանց շրջանում ծավալում քաղաքական-բացատրական աշխատանք: Ներգաղթողների կուլտուրական սպասարկման նպատակով սիստեմատիկաբար ընդունման կայաններն էին գործուղվում գեղարվեստական կատարողական կոլեկտիվների հատուկ բրիգադներ: Հայրենադարձների մեջ մասսայական-քաղաքական աշխատանք տանելու համար կոլխոզներում, սովխոզներում, հիմնարկ-ձեռնարկություններում և նրանց բնակության վայրերում աշխատում էին մեծ թվով ագիտատորներ: Հայրենադարձների համար կազմակերպվում էին զրույցներ, զեկուցումներ, դասախոսություններ՝ ՍՍՀՄ սահմանադրության, աշխատանքային օրենսդրության, սոցիալիստական դեմոկրատիայի և այլ հարցերի շուրջը: Շատ տեղերում ստեղծվել էին քաղխմբակներ ու քաղդպրոցներ, որոնցում ուսումնասիրվում էին Վ. Ի. Լենինի կենսագրությունը, մեր երկրի ներքին ու արտաքին քաղաքականությունը և այլ հարցեր: Հայրենադարձ

մտավորականներից շատերը սովորում էին մարքսիզմ-լենինիզմի համալսարաններում:

Հայրենադարձների քաղաքական ակտիվության բարձրացման լավ դպրոց հանդիսացան սովետների ընտրությունները: 1947 թ. ընտրական կամպանիայի ժամանակաշրջանում կուսակցական և կոմերիտական կազմակերպությունները ավելի ուժեղացրին հայրենադարձների շրջանում տարվող քաղաքական-մասսայական աշխատանքը: Նախընտրական կամպանիայի օրերին հայրենադարձների շրջանում ագիտացիոն աշխատանք էին տանում 1772 մարդ, որից 150-ը հայրենադարձ ակտիվիստների թվից: Օկրուգային և տեղամասային հանձնաժողովներում աշխատում էին մոտ 1000 հայրենադարձներ: Բոլոր հայրենադարձները միահամուռ կերպով իրենց ձայնը տվեցին կոմունիստների ու անկուսակցականների բլոկի թեկնածուների օգտին: Սովետական նոր քաղաքացիներից 383 մարդ ընտրվեց սովետների դեպուտատ, որից 264-ը՝ գյուղական, 17-ը՝ ավանային, 42-ը՝ շրջանային, 57-ը՝ քաղաքային սովետների, իսկ 3-ը՝ Լիբանանից ներգաղթած բժիշկ Գևորգ Մանուշակյանը, Սիրիայից ներգաղթած, Լենինականի մսի կոմբինատի բանվոր Մարտիրոս Ղարաբաջակյանը և Իրանից ներգաղթած, Արտաշատի շրջանի Գալար գյուղի կոլտնտեսության անդամ Մաթևոս Խաչատրյանը՝ հանրապետության իշխանության բարձրագույն օրգանի՝ ՀՍՍՀ Գերագույն սովետի դեպուտատ²⁰²:

Երեկվա վտարանդի հայը, որը օտարության մեջ իրավազուրկ հազիվ քարշ էր տալիս իր գոյությունը, այսօր իր հայրենիքում արժանանում էր հանրապետության բարձրագույն իշխանության կազմում ընտրվելու պատվին: Կարելի՞ է բերել ավելի վառ վկայություն այն բանի, թե ինչպիսի լայն հնարավորություններ էր բացում հայրենիքը ամեն մի ազնիվ հայրենադարձի առջև:

Ինչպես տեղական կուսակցական ու սովետական մարմինները, այնպես էլ Հայաստանի կոմկուսի Կենտկոմի բյուրոն և ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը բազմիցս անդրադարձել են հայրենադարձների շրջանում տարվող աշխատանքներին, ուսումնասիրել նրանց վիճակը, կազմակերպել սիստեմատիկ օգ-

²⁰⁰ Տե՛ս նույն տեղում:

²⁰¹ Տե՛ս Հ4(բ)4 Կենտկոմի հաշվետվությունը XIV համագումարին, Երևան, 1948, էջ 108:

²⁰² Տե՛ս «ՀԿԿ պատմության ուղիվազներ», էջ 568 և ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 362, ց. 2, գ. 50, թ. 17:

նություն: 1947 թվականի ընթացքում ՀԿ(Բ)Կ Կենտկոմի բյուրոն քննարկել է Լենինական քաղաքում, ինչպես նաև ընդունման կայաններում հայրենադարձների մեջ տարվող քաղաքական-մասսայական աշխատանքների վիճակը, միջոցառումներ մշակել դրանց բովանդակությունը բարձրացնելու և ավելի նպատակասլաց դարձնելու ուղղությամբ:

Դրա հետ մեկտեղ, հանրապետության կուսակցական և սովետական մարմինները հետևողական աշխատանք էին տանում հայրենադարձների նոր խմբերի ընդունման ուղղությամբ: Հայրենադարձության հետագա ընթացքի վրա շատ կարևոր դեր էր խաղում հանրապետությունում բնակարանային խնդրի սղությունը: Ինչպես նշված է 1947 թ. վերջերին ՀամԿ(Բ)Կ Կենտկոմին ներկայացված ղեկուցագրում, 1946—1947 թթ. ժամանած հայրենադարձների հիմնական զանգվածը տեղավորվել էր գոյություն ունեցող բնակֆոնդից առանձնացված սենյակներում և միայն որոշ մասն էր բնակարան ստացել նոր կառուցված տներում: Երկու տարվա ընթացքում հայրենիք եկած 19322 ընտանիքից նոր տներում տեղավորվել էր 5172, իսկ նախկինում եղած բնակելի ֆոնդում՝ 14150 ընտանիք²⁰³:

Հայրենադարձների համար կատարվող բնակարանային շինարարությունը ընդլայնելու նպատակով, պետական ներդրումների հաշվին կառուցվող շենքերի հետ միասին, գնալով լայն ծավալ է ստանում նաև սեփական միջոցներով և պետական վարկերով անհատական բնակարանների կառուցումը:

1947 թ. դեկտեմբերի 10-ին ՍՍՀՄ Մինիստրների խորհուրդը որոշում ընդունեց՝ «1948 թ. արտասահմանյան հայերին Հայկական ՍՍՀ ընդունելու և տեղավորելու միջոցառումների մասին»: Այդ որոշմամբ նախատեսվում էր 1948 թ. ՀՍՍՀ սահմաններն ընդունել մոտ 15000 հայրենադարձներ, այդ թվում Սիրիայից և Լիբանանից՝ 5000, Եգիպտոսից՝ 2000, Ֆրանսիայից՝ 3000, Ռումինիայից՝ 1500, Բուլղարիայից՝ 1500, ԱՄՆ-ի և Հարավային Ամերիկայի հայկական գաղթօջախներից՝ 1000-ական մարդ²⁰⁴:

ՀԿ(Բ)Կ Կենտկոմի բյուրոն 1947 թ. դեկտեմբերի 23-ին քննարկելով ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի վերոհիշյալ որոշման

կենսագործման հարցը՝ գտավ, որ անցած երկու տարում ներգաղթածների բնակարանային և աշխատանքային ապահովման գործում առաջացել են մի շարք դժվարություններ, ուստի նպատակահարմար կլինի 1948 թ. ընդունել 10 հազարից ոչ ավելի սփյուռքահայերի: Կենտկոմի բյուրոն միաժամանակ պարտավորեցրեց հանրապետության կառավարությանը, կուսակցական քաղկոմ-ըրջկոմներին, տեղական սովետների գործկոմներին, համապատասխան մինիստրություններին ու գերատեսչություններին՝ առաջիկայում հիմնական ուշադրությունը կենտրոնացնել 1946—1947 թթ. ժամանած հայրենադարձների բնակարանային և աշխատանքային պայմանների արմատական բարելավման վրա: Միաժամանակ սահմանվեց 1948 թ. համար բնակարանային շինարարության կոնկրետ պլան: Որոշվեց 1946—1947 թթ. եկած հայրենադարձների բնակարանային պայմանները բարելավելու և նոր ժամանողներին տեղավորելու նպատակով 1948 թ. շահագործման հանձնել ավելի քան 84 հազ. քմ բնակատարածություն: Դրանից հանրապետական ենթակայության մինիստրությունների ու գերատեսչությունների և տեղական սովետների գծով՝ 27 հազ., միութենական-հանրապետական մինիստրությունների գծով՝ 14300, միութենական ենթակայության կազմակերպությունների գծով՝ 42700 քմ բնակատարածություն: Նախատեսվեց «Արարատ» տրեստի սովխոզներում կառուցել 400 մեկ սենյակահոց բնակարան, իսկ բանկային վարկերի հաշվին անհատական բնակարանային շինարարության դժով՝ 9036 բնակելի տուն, որից քաղաքներում՝ 6093, իսկ գյուղական վայրերում՝ 2943:

Հանձնարարվեց համապատասխան կազմակերպություններին ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի կողմից հատկացված լրացուցիչ 6 միլիոն ուրբու հաշվին հայրենադարձներով բնակեցված ավաններում ու թաղամասերում կառուցել դպրոցներ, հիվանդանոցներ, շրմուղներ, ճանապարհներ և այլն²⁰⁵: Բանկային վարկերի հաշվին հայրենադարձների համար ավելի մեծ ծավալով բնակարանային շինարարություն կատարելու նպատակով ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը հանձնարարեց կոմունալ բան-

²⁰³ ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 362, ց. 2, գ. 49, թ. 1—7:

²⁰⁴ Տե՛ս նույն տեղում, գ. 20, թ. 39—44 և գ. 25, թ. 76:

²⁰⁵ Տե՛ս նույն տեղում, գ. 20, թ. 9—17:

կին՝ 1948 թ. համար նախատեսված 130 միլիոն ուրբու վարկի գումարից 125 միլիոնը հատկացնել հայրենադարձներին²⁰⁶:

1948 թ. հունիսի 10-ին ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը հաստատեց հայրենադարձների բնակչին կոոպերատիվների օրինակելի կանոնադրությունը:

Վերոհիշյալ միջոցառումներից հետո ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը վերջնականապես հաստատեց 1948 թ. ընթացքում շուրջ 10 հազար հայրենադարձների ընդունելության պլանը: Ուրոշվեց 1948 թ. ընդունել ԱՄՆ-ից, Բուլղարիայից և Ռումինիայից՝ 1000-ական, Եգիպտոսից՝ 1500, Միրիայից և Լիբանանից՝ 3500, Ֆրանսիայից՝ 2000 մարդ²⁰⁷: Սակայն նշված գաղթօջախներից թախանձագին խնդրում էին հայրենի կառավարությանը, ինչ գնով էլ լինի, ավելացնել իրենց երկրներից ներգաղթողների թիվը: Այսպես, օրինակ, Ռումինիայում «Հայաստանյան ճակատի» ներգաղթի կոմիտեի նախագահ Ադ. Ժամկոչյանը և քարտուղար Հ. Գայսերլյանը խնդրում էին ընդունել դեռևս անցյալ տարվանից հայրենիք մեկնելու պատրաստված 1540 հոգուն, որոնք ամեն ինչ վաճառել, բեռները կապել և անորոշ վիճակում սպասում էին հայրենադարձվելու²⁰⁸: Չնայած այդ խնդրանքներին, մի շարք նոր հանգամանքների ծագման հետևանքով, 1948 թ. հնարավոր եղավ հայրենիք վերադարձնել նախատեսվածից էլ պակաս թվով սփյուռքահայերի: 1948 թ. Եգիպտոսից, Ռումինիայից և Չինաստանից հայրենադարձվեց ընդամենը 897 ընտանիք, 3092 մարդ²⁰⁹:

ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր ներգաղթի կոմիտեն նախապես պլանավորել էր 1949 թ. ընդունել մոտ 10 հազար հայրենադարձներ, այդ թվում Լիբանանից և Եգիպտոսից՝ 6000, Հունաստանից՝ 1500, Ֆրանսիայից՝ 1000 և ԱՄՆ-ից՝ 1500 մարդ: Ինչպես վկայում են այդ կապակցությամբ կազմված նախահաշիվները, դրա համար միայն ծովային տրանսպորտի գծով կատարվելիք ծախսերը կազմելու էին 26 միլիոն 752175 ուրբի²¹⁰:

Սակայն 1946—1948 թթ. ժամանած հայրենադարձների բնակարանային և աշխատանքային ապահովման հոգսերը մի կողմից և միջազգային իրադրության սրումը մյուս կողմից՝ հնարավորություն չտվեցին իրականացնել այդ պլանները:

1949 թ. ԱՄՆ-ից հայրենիք եկավ 93 ընտանիք, 162 շունչ: Նրանք փաստորեն 1948 թ. ներգաղթողների խմբից ետ մնացածներ էին: Ինչպես այդ մասին 1948 թ. հոկտեմբերի 8-ին ՀՍՍՀ ներգաղթի կոմիտեի նախագահ Բ. Աստվածատրյանին հայտնում է Ամերիկայի հայերի ներգաղթի օգնության հանձնախմբի վարիչ Գ. Սուլազյանը, շուրջ 260 ամերիկահայեր դեռևս հուլիսին պատրաստ էին «Պոբեդա» ջերմանավով մեկնելու հայրենիք: Սակայն Նյու Յորքի նավահանգստի վարչությունը, հայերի հայրենադարձությանը խանգարելու դիտավորությամբ, պատրվակ բռնեց «Պոբեդայի» վրա եղած փրկարար Նավակների իբր թե ոչ բավարար քանակը և արգելեց այդ ջերմանավով ներգաղթողների փոխադրումը²¹¹: Այդ պայմաններում, երբ ներգաղթողները վաճառել էին իրենց տուն ու տեղը և ընդունել սովետական քաղաքացիություն, այլևս չէին կարող մնալ ԱՄՆ-ում: Ամերիկահայ միջհայրենակցական միությունը հարկադրված իր միջոցներով նրանց մի քանի ամիս պահեց մի մասնավոր պանդոկում, հոգալով նրանց բոլոր ծախսերը: Վեց ամիս անց, 1949 թ. հունվարի 21-ին, 162 ամերիկահայ ներգաղթողները, վերջապես, Նյու Յորքից Գոդինիա ամերիկյան ընկերության «Սոպիեսքե» նավով մեկնեցին Իտալիայի Նեապոլ նավահանգիստը, ուր հասան փետրվարի 5-ին: Վեց օր հետո նրանք այնտեղից ուղևորվեցին դեպի Բաթում և փետրվարի 21-ին ոտք դրին սովետական հողի վրա: 1949 թ. փետրվարի 23-ին ամերիկահայ հայրենադարձների այդ խումբը գնացքով մեկնեց Երևան²¹²:

Այսպիսով, սփյուռքահայերի ետպատերազմյան զանգվածային հայրենադարձությունը կամ մեծ հայրենադարձը տեղի ունեցավ հիմնականում 1946—1948 թթ.: Սակայն, քանի որ մի փոքր խումբ հայրենիք եկավ 1949 թվականին, անհրաժեշտ է ժամանակագրական վերջին շրջանակը հասցնել այդ տարեթիվը և մեծ հայրենադարձի վերջը համարել 1949 թվականի սկիզբը:

²⁰⁶ Տե՛ս նույն տեղում:

²⁰⁷ Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 25, թ. 54—55:

²⁰⁸ Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 13, թ. 63—64:

²⁰⁹ Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 225, թ. 1—2:

²¹⁰ Տե՛ս նույն տեղում, գ. 13, թ. 113:

²¹¹ Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 44, թ. 37—39:

²¹² Տե՛ս նույն տեղում, թ. 68—70:

Ամփոփելով մեծ հայրենադարձի արդյունքները, անհրաժեշտ ենք համարում ներկայացնել ստորև բերված աղյուսակը²¹³, որը կոնկրետ պատկերացում է տալիս այդ տարիներին տեղի ունեցած ներգաղթի մասին (տե՛ս էջ 241):

Հարկ է նշել, որ շՄՄ Մինիստրների խորհրդին առընթեր ներգաղթի կոմիտեի կազմած որոշ տեղեկանքներում 1946 թ. ներգաղթած ընտանիքների թիվը ցույց է տրված 11035, իսկ շնչերինը՝ 51060: Այդ 334 ընտանիքի և 113 մարդու տարբերությունը առաջացել է բնական աճի և որոշ ընտանիքների տրոհման հետևանքով²¹⁴: Ուստի ճիշտ կլինի 1946 թ. ներգաղթած ընտանիքների թիվը հաշվել 11035, իսկ շնչերինը՝ 51060, որով 1946—1948/49 թվականներին ներգաղթած ընտանիքների ընդհանուր թիվը կկազմի 20646, իսկ շնչերի թիվը՝ 89750:

1949 թ. սկզբներից աստիճանաբար կրճատվում են շՄՄ Մինիստրների խորհրդին առընթեր ներգաղթի կոմիտեի հաստիքները, լուծարքի են ենթարկվում նրա ընդունման կայանները: Ներգաղթի կոմիտեի նախագահի հրամանով 1949 թ. հունվարի սկզբներին լիկվիդացվում է Ջուլֆայի ընդունման կայանը, կրճատվում է Բաթումի կայանի և ներգաղթի կոմիտեի հաստիքների մեծ մասը²¹⁵: 1949 թ. օգոստոսի վերջերին լիովին իր գործունեությունը դադարեցրեց շՄՄ Մինիստրների խորհրդին առընթեր արտասահմանից ներգաղթող հայերի ընդունման և տեղավորման կոմիտեն²¹⁶:

1946—1949 թթ. արտասահմանյան 12 երկրից 89750 հայրենադարձների տեղափոխման և տեղավորման ծախսերը հիմնականում կատարվել են Սովետական Հայաստանի կառավարության միջոցներից: Որոշ գումարներ ստացվել են սփյուռքահայ բարեգործական ու հայրենակցական հաստատությունների անցկացրած հանգանակություններից, նվիրատվություններից, ճանապարհածախսի համար ներգաղթողների մի մասի կատարած վճարումներից, ինչպես նաև հայրենաբնակ աշխատավորների

²¹³ Տե՛ս նույն տեղում, ֆ. 326, ց. 1, գ. 225, ք. 1—2 և գ. 231, ք. 1—16:

²¹⁴ Տե՛ս նույն տեղում, ֆ. 362, ց. 2, գ. 24, ք. 12—27 և գ. 25, ք. 32—35:

²¹⁵ Տե՛ս նույն տեղում, գ. 26, ք. 36—37:

²¹⁶ Տե՛ս նույն տեղում, ք. 40:

Տեղեկություններ հայրենադարձության մասին 1946—1948/49 թթ. կատարված զանգվածային

Նրբերի անվանումը	1946		1947		1948		1949		Ընդամենը	
	միլիոն միլիոնում	միլիոն միլիոնում	միլիոն միլիոնում	միլիոն միլիոնում	միլիոն միլիոնում	միլիոն միլիոնում	միլիոն միլիոնում	միլիոն միլիոնում	միլիոն միլիոնում	միլիոն միլիոնում
1—2. Սիբիր-կրան	3794	19253	12985	3478	—	—	—	—	6319	32238
3. Բուլղարիա	1246	4383	—	—	—	—	—	—	1248	4383
4. Իրան	3870	20597	—	—	—	—	—	—	3870	20597
5. Ռումինիա	517	1738	—	—	308	—	—	—	825	2784
6. Հունաստան	1372	4974	13241	1518	—	—	—	—	4850	18215
7. Ֆրանսիա	—	—	5260	486	—	—	—	—	1518	5260
8. Եգիպտոս	—	—	1669	243	580	—	—	—	1066	3692
9. Պարսաստան	—	—	1260	177	—	—	—	—	243	1260
10. Իրաք	—	—	856	88	—	—	—	—	177	856
11. ԱՄՆ	—	—	151	6	—	—	—	—	181	313
12. Գինաստան	—	—	16	—	9	—	—	—	15	39
Ընդամենը	110801	50945	35438	8521	897	—	—	—	20312	89637
Առավել ճշգրիտ տվյալներով	11035	51060	—	—	—	—	—	—	20646	89750

կողմից հայրենադարձների օգնության ֆոնդին հատկացրած միջոցներից: 1949 թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ ՀՍՍՀ կառավարությունը միայն որպես հայրենադարձների ճանապարհավարձ 1946—1949 թթ. ծախսել է 76,8 միլիոն ռուբլի²¹⁷:

Հայրենադարձների համար պետական բնակարանային շինարարության, ինչպես նաև անհատական բնակարանների կառուցման գծով սովետական կառավարությունը բաց է թողել ավելի քան 300 միլիոն ռուբլի, շհաշված կոլտնտեսությունների տրամադրված գումարները: Հարկ է նշել, որ 50-ական թվականների կեսերին ՍՍՀՄ կառավարությունը հայրենադարձներին ազատեց վարկերի ամբողջ շնորհված գումարը և գոյացած տոկոսները (շուրջ 160 միլիոն ռուբլի) վճարելու պարտականությունից²¹⁸:

Արտասահմանում մնացած իրենց բարեկամներին գրած նամակներում շատ հայրենադարձներ հաղորդում էին իրենց նկատմամբ ցուցաբերվող ջերմ հոգատարության մասին և հորդորում, որպեսզի նրանք ևս շտապեն վերադառնալ երկիր, ձեռնամուխ լինեն նրա պայծառ ապագայի կերտման գործին:

Ամերիկահայ գրող Հակոբ Գուլումճյանը, հետագայում այցելելով հայրենիք և այստեղ ակնատես լինելով հայրենադարձների կյանքին, գրել է. «Գոհունակությամբ համակվեցա տեսնելով տասնյակ հազարավոր հայրենադարձներու նոր կյանքը: Հայրենադարձները իրենց համար ստեղծած են գոհունակ ու բարեկեցիկ կյանք. ավելի ուրախառիթ պարագան այն է, որ հայրենադարձներու զավակները, որոնք արտասահմանի մեջ բոլոր պատեհություններն զրկված էին, Մայր Հայրենիքին մեջ հնարավորություն ունեցած են համալսարանական ուսում ստանալու և իբրև գիտնականներ, ինժեներներ, երկրագործական մասնագետներ, գրողներ, երգիչներ և որակավոր աշխատավորներ իրենց մասնակցությունը կրեբեն մեր երկրի շինարարության և բարգավաճման»²¹⁹:

Ի նշան հայրենիքի նկատմամբ ջերմ սիրո և նվիրվածության, սփյուռքահայ բազմաթիվ կազմակերպություններ ու ան-

հատներ ՀՍՍՀ ներգաղթի կոմիտեի միջոցով ամեն տեսակ նվերներ էին ուղարկում կամ հայրենադարձվելիս իրենց հետ Սովետական Հայաստան բերում աշխատանքի գործիքներ, մեքենաներ, կազմում արտեղներ և այլն՝ հայրենի երկրին ավելի մեծ նպաստ մատուցելու նպատակով: Մի խոսքով, դրանք բազմազան ու բազմաբնույթ նվերներ էին՝ սկսած հաստոցներից ու բժշկական սարքավորումներից մինչև արաբական ընտիր ծուլզներ ու մասունք դարձած սուրճի գավաթներ: Այսպես, օրինակ, Ծգիպտոսից հայրենիք եկած Գոլաբջյան գերդաստանը 1947 թ. նոյեմբերին Սովետական Հայաստանի կառավարությանը նվիրեց կիվերպուլում գնված բրդեղեն հյուսող 63 սընդուկ անզլիական առաջնակարգ հաստոցներ, որոնք տրվեցին ՀՍՍՀ տեղական արդյունաբերության մինիստրության Երևանի մահուդի ֆաբրիկային²²⁰: 1947 թ. երրորդ և չորրորդ քարավաններով հայրենիք եկան Հալեպում կազմակերպված ավտոտրանսպորտի 17 հոգուց բաղկացած արտելի անդամները²²¹: ԱՄՆ-ի Համասեբաստացիական շինարար միությունը հայրենիք ուղարկեց բեռնատար 2 ավտոմեքենա, Արաբկիրցիների հայրենակցական միությունը (ԱՄՆ)՝ «նոր Արաբկիր» կարի արտելին նվիրեց էլեկտրական 3 մկրատ, բարեգործական մի շարք կազմակերպություններ ՀՍՍՀ առողջապահության մինիստրությանը տրամադրեցին մեծ քանակությամբ բժշկական սարքավորումներ և դեղորայք²²²: Ռումինահայեր Մ. Շլուկյանը և Ս. Պայպուրթյանը հայրենիք ուղարկեցին ասեղնագործող մեքենաներ, ուրիշները՝ ներկեր և տանիքի ծածկի թիթեղներ, «Հայաստանյան ճակատ» միությունը՝ 3 հազար խմ շինափայտ և 60 մահճակալով հոսպիտալ՝ իր ամբողջ կահավորումով և այլն²²³:

ԱՄՆ-ում գործող միջհայրենակցական միությունը 1947 թ. օգոստոս-նոյեմբեր ամիսներին հայրենիք ուղարկեց 1217 հոս-

²²⁰ Տե՛ս ՀՍՍՀ ՀՂՍԵ ՊԿԱ, ֆ. 362, ց. 1, գ. 18, թ. 93—96 և ց. 2, գ. 11, թ. 2—15:

²²¹ Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 5, թ. 73—76 և 96:

²²² Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 15, թ. 4—5, գ. 25, թ. 25, ց. 2, գ. 5, թ. 98:

²²³ Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 15, թ. 1, ց. 2, գ. 37, թ. 1, գ. 13, թ. 17 և 22—23:

²¹⁷ Տե՛ս նույն տեղում, ֆ. 326, ց. 1, գ. 257, թ. 1—3:

²¹⁸ Տե՛ս նույն տեղում:

²¹⁹ Տե՛ս «Սովետական Հայաստանը արտասահմանյան հյուրերի աչքերով», Երևան, 1960, էջ 130:

պիտալային վրան²²⁴, իսկ ՀԲԸՄ կենտվարչությունը՝ 10 էքսկավատոր²²⁵:

Սիրիայում ապրող Հովհ. Ղոնթարջյանը Հայաստանի պատմության պետական թանգարանին նվիրեց Կիլիկիայի Ռուբինյան դինաստիային պատկանող պղնձյա դրամների հարուստ հավաքածու (104 հատ), Նյու Յորքից Երանուհի Ասատրյանը՝ պարսկական երկու ծխամորճ և ուրիշ գեղարվեստական իրեր, այդ թվում՝ դերասանուհի Սիրանուշին պատկանած սուրճի սպասքը և այլ իրեր, իսկ Սիրիայի Զեզիրեի շրջանից ներգաղթած Պարունակ Շիշիկյանը և Սարգիս Օսիկյանը հայրենիքին նվիրեցին արաբական 5 ձի²²⁶:

1948 թ. Նյու Յորքից հայրենիք բերվեցին նշանավոր նկարիչ Արշակ Ֆեթվաջյանի անձնական իրերը և գեղանկարները²²⁷, Բուլղարիայից՝ թանգարանային արժեքավոր գորգեր²²⁸, ռումինահայ վարդան և Զինաիդա Բարակյանները Հայաստանի պետական պատկերասրահին նվիրեցին երկար տարիների ընթացքում ձեռք բերած հնագիտական ու գեղարվեստական իրերի ճոխ հավաքածուն (16 արկղ, 747 անուն)²²⁹, իսկ նրանց հայրենակից Հարություն ավագ քահանա Սարգսյանը Երևան ուղարկեց իր հարուստ գրադարանը²³⁰: Այսպիսով, 1946—1948/49 թթ. ներգաղթը ոչ միայն դաժան ճակատագրի բերումով աշխարհով մեկ սփռված արևմտահայ տարագիրների հայրենադարձություն էր, այլև հայ մշակույթի մասունքների տունդարձ, որը շարունակվում է առ այսօր:

Դեռ այն օրերին, մեծ հայրենադարձի իրականացման անմիջական տպավորությունների տակ, ճշմարիտ հայրենասերները իրավացիորեն շատ բարձր գնահատեցին ազգահավաքման ու ազգապահպանման գործին սատարող ներգաղթի պատմական խոշոր նշանակությունը: Այդ կապակցությամբ Սիրիայի և Լիբանանի հայերի ներգաղթի կենտկոմը գրել է, որ շնայած

ամեն տեսակ խոշորոտներին ու բարդություններին, շնայած քառամյա դաժան պատերազմից նոր դուրս եկած ու դրանից անմիջապես հետո խիստ երաշտի ենթարկված Սովետական Միության մեջ բնականորեն առաջ եկած ժամանակավոր դժվարություններին, ընդամենը 2—3 տարվա ընթացքում սովետական կառավարությունը իրականացրեց մոտ 90 հազար տարագիրների հայրենիք փոխադրումը, որը կազմում էր հայրենադարձվելու համար արձանագրվածների շուրջ մեկ հինգերորդը: Դա հիրավի անուրանալի մեծ հոգատարություն էր օտարության մեջ ընչազուրկ վիճակում տառապող սփյուռքահայ աշխատավորների նկատմամբ և դրական խոշոր դեր ունեցավ նաև դեռևս գաղթաշխարհում մնացողների ազգապահպանման պայքարի հետագա հաջողության համար:

«Արդարև, Ամերիկային, Ֆրանսային, Եգիպտոսին, Սուդանին, Ճեզիրեին, Իրագի անապատներին և Պաղեստինին ամեն մի հայուն հայրենադարձը,— արձանագրել է Սիրիայի և Լիբանանի հայերի ներգաղթի կենտկոմը,— զորավոր ազդակ մըն է հաջողությամբ պայքարելու համար այդ երկիրներու հայության ազգային աշխատանքի դեմ, ազգայնորեն ուժացող հոգիներու մեջ ան կվերարժարժե և կզորացնե հավատքը հանդեպ հայության, հայկականության, անոր ներկային և ապագային, և զանոնք ամրապես կկապե հայրենի մայր հողին և ազգին:

Արդարև, մեր օրերուն հայրենադարձը ազգային պատմական այնպիսի խոշորագույն շարժում մըն է, որ ոչ միայն ավելի հզոր կդարձնե մեր մայր հայրենիք Սովետ. Հայաստանը, ավելի կզորացնե անոր շինարարության և վերելքին թափը, կ'ամրացնե միակ ամուր կովանը մեր բռնագրաված հողերու ազատագրության համար, այլ նաև ան ամենն ազդեցիկ միջոցն է հայը հայ պահելու համար սփյուռքի մեջ»²³¹:

²³¹ Տե՛ս նույն տեղում, գ. 30, թ. 75:

²²⁴ Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 25, թ. 56 և ց. 2, գ. 43, թ. 29:

²²⁵ Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 29, թ. 89—90:

²²⁶ Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 18, թ. 134—146:

²²⁷ Տե՛ս նույն տեղում, գ. 25, թ. 26:

²²⁸ Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 15:

²²⁹ Տե՛ս նույն տեղում, գ. 37, թ. 3:

²³⁰ Տե՛ս նույն տեղում, թ. 103—104:

Գ Լ Ո Ւ Ն Յ Ո Ք Ե Ր Ո Ր Դ

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅԵՐԻ ՀԱՅՐԵՆԱԳԱՐՁՈՒՅՑՈՒՆԸ 1962—1982
ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ*

40-ական թվականների վերջերին, սառը պատերազմի առաջացման և միջազգային իրադրության կտրուկ սրման հետևանքով, կապիտալիստական մի շարք երկրների կառավարությունների քաղաքականության մեջ տեղի ունեցան որոշակի փոփոխություններ դեպի Սովետական Միությունն ընդհանրապես, սփյուռքահայերի հայրենադարձությունը՝ մասնավորապես՝ Մի շարք երկրներ, որոնցից կատարվում էր սփյուռքահայերի հայրենադարձություն, սկսեցին որոշակի ու բացահայտ խոչընդոտներ հարուցել այդ միջոցառման դեմ, ամեն կերպ փորձելով արգելակել այն: Այդ պայմաններում, ՍՍՀՄ դիրեկտիվ օրգանների որոշմամբ, 1949 թ. կեսերից նպատակահարմար համարվեց դադարեցնել սփյուռքահայերի 1946 թվականին սկսված զանգվածային հայրենադարձությունը, մանավանդ որ արդեն հայրենիք ժամանած ներգաղթածների որոշ մասի բնակարանային և աշխատանքային ապահովման գործում ևս առաջացել էին որոշակի դժվարություններ:

Չնայած այդ որոշմանը, այնուամենայնիվ ընդառաջելով սփյուռքահայ բազմաթիվ կազմակերպությունների ու աշխատավորների թախանձագին խնդրանքներին, 1950 թ. սկսած միութենական և հանրապետական համապատասխան մարմինների թույլտվությամբ, շարունակվել է առանձին հայ ընտանիքների անհատական հայրենադարձությունը, որի շնորհիվ շատ սփյուռքահայեր դարձյալ հանգրվանել են Սովետական Հայաստան:

Ինչպես վկայում են արխիվային մի շարք վավերագրեր, մասնավորապես 50-ական թվականներին տեղի ունեցած հայ-

րենադարձության վերաբերյալ ՀՍՍՀ արտաքին գործերի մինիստրության 1958 թ. օգոստոսի 27-ին կազմած պաշտոնական տեղեկանքը և այդ մինիստրության 1961 թ. տարեկան հաշվետվությունը, 1950—1961 թթ. ընթացքում, արտասահմանյան տարբեր երկրներից, անհատական կարգով Սովետական Հայաստան են ներգաղթել մոտ 4000 սփյուռքահայեր¹: ՀՍՍՀ դիրեկտիվ օրգանների որոշմամբ նախատեսվել էր 1959 թվականին Արգենտինայից հայրենադարձնել 500—600 ընտանիք, մոտ 3000 մարդ²: Այդ որոշման կատարման ընթացքի մասին դժբախտաբար մեզ չհաջողվեց անհրաժեշտ տեղեկություններ գտնել ո՛չ պարբերական մամուլում և ո՛չ էլ արխիվներում: Հստ երևույթին, ինչ-ինչ պատճառներով, այն տեղի չի ունեցել, սակայն հենց միայն այդպիսի որոշում կայացնելու փաստն իսկ ինքնին նշանակալից է: Վերը բերված փաստերը խոսում են այն մասին, որ հայրենաբաղձ սփյուռքահայության մայր հայրենիքում հավաքվելու մի անգամ արդեն ընթացք ստացած անկեղծ ձգտումն այլևս հնարավոր չէր, թեկուզ ժամանակավորապես, կասեցնել, և գաղթաշխարհում շարունակում էր ամենուրեք թեմվածել տունդարձի սրբազան կանչը: Ահա թե ինչու Սովետական Հայաստանի կուսակցական ու պետական համապատասխան օրգանները, հատկապես ՍՄԿԿ XX համագումարից հետո ստեղծված նպաստավոր իրադրության պայմաններում, հետևողականորեն նախապատրաստում էին նոր զանգվածային հայրենադարձության վերսկսման գործը, քանի որ այդ մասին սփյուռքահայ աշխատավորներից շարունակում էին ստացվել բազմաթիվ դիմումներ: ՀՍՍՀ արտաքին գործերի մինիստրության 1952 թ. ապրիլի 29-ին կազմած տեղեկանքում այդ մասին արձանագրված է, որ մինիստրությունը և սովետական այլ հիմնարկներ բազմաթիվ դիմումներ են ստացել արտասահմանում ապրող սովետական և ոչ սովետական քաղաքացիներից՝ անհատական կարգով հայրենադարձվելու կամ Սովետական Հայաստան մըշտական բնակության գալու խնդրանքով: Այսպես օրինակ, Խարբինում ՍՍՀՄ քաղաքացիների ընկերության հայկական բաժանմունքը 1951 թ. մարտի 27-ին ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին

¹ Տե՛ս ՀՍՍՀ ՀՄԾ ՊԿԱ, ֆ. 326, ց. 1, գ. 257, թ. 1—3 և գ. 327, թ. 12—23:
² Տե՛ս նույն տեղում, գ. 257, թ. 1—3:

* Ժամանակագրության խախտման մասին բացատրությունը տե՛ս էջ 299-ի 131 ծանոթագրությունում:
246

առընթեր նախկին ներգաղթի կոմիտեի նախագահի անունով գրած գիմումի մեջ խնդրում էր թույլատրել ՀՍՍՀ մշտական բնակութեան գալ Մանչուրիայում ապրող 90 ՍՍՀՄ քաղաքացիների և 31 ոչ ՍՍՀՄ քաղաքացիների: Համանման՝ դիմումներ ստացվել էին նաև ուրիշ երկրներում եղած սովետական առանձին քաղաքացիներից³: Բուլղարիայում ապրող 40 հայ ընտանիքներ 1950 թ. մարտի 15-ին դիմել էին ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին՝ խնդրելով թույլատրել ներգաղթել Սովետական Հայաստան: ՀՍՍՀ արտաքին գործերի մինիստրությունում մեծ թվով դիմումներ էին ստացվել հատկապես 1946—1948 թթ. Բուլղարիայից, Ռումինիայից, Հունաստանից, Իրանից, Սիրիայից և Լիբանանից ներգաղթած սովետական քաղաքացիներից իրենց ծնողների կամ ընտանիքի այլ անդամների (որոնք տարբեր պատճառներով չէին կարողացել ժամանակին հայրենադարձվել) Սովետական Հայաստան գալու և աշակցելու խնդրանքով: 1950—1951 թթ. ընթացքում ՀՍՍՀ արտաքին գործերի մինիստրությունում ստացվել էր այդպիսի 50 դիմում⁴:

ՀՍՍՀ արտաքին գործերի մինիստրությունը ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստրությունից այդ նույն ժամանակամիջոցում ստացել էր 37 հարցումներ, որոնցում խնդրվում էր հայտնել հանրապետության համապատասխան օրգանների կարծիքը տարբեր երկրներում ապրող որոշ թվով հայերի ՍՍՀՄ քաղաքացի ընդունելու և նրանց ՀՍՍՀ մշտական բնակության գալը թույլատրելու հնարավորության մասին:

Եվ, վերջապես, 1946—1948 թվականներին Իրանից հայրենադարձված շատ հայեր 1952 թվականին դիմել էին ՀՍՍՀ արտաքին գործերի մինիստրություն, հայտնելով, որ Իրանում ՍՍՀՄ հյուպատոսությունը հայտարարել է, թե՛ եթե Իրանահայերի Սովետական Հայաստանում ապրող ազգականները համապատասխան պաշտոնական տեղեկանքներ ուղարկեն այն մասին, որ իրենք կարող են անհրաժեշտ բնակտարածություն հատկացնել, ապա նման անձանց կթույլատրվի մեկնել Սովետական Հայաստան:

Այսպիսով, 1950 թվականից մինչև 1952 թվականի գարունը ընկած ժամանակամիջոցում ՀՍՍՀ արտաքին գործերի մինիստ-

րությունում ստացվել էր ավելի քան 250 դիմում սովետական քաղաքացի և օտարահպատակ հայերից՝ անհատական կարգով հայրենադարձվելու խնդրանքով⁵:

ՀՍՍՀ արտաքին գործերի մինիստրությունը 1955 թ. մայիսի 18-ին ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստրությանը հայտնում էր, որ վերջին շրջանում Բուլղարիայից և Ռումինիայից ստացվում են բազմաթիվ դիմումներ, որոնց հեղինակները, տեղեկացնելով 1946—1948 թթ. Սովետական Հայաստան ներգաղթած ազգականների մոտ ազատ բնակտարածություն լինելու մասին, խնդրում են իրենց թույլատրել հայրենադարձվելու Սովետական Հայաստան: Հայտնելով այդ մասին, ՀՍՍՀ արտաքին գործերի մինիստրությունը իր վերադասից խնդրում էր համապատասխան կարգադրություն անել այդ երկրներում սովետական դեսպանություններին՝ արագացնելու այդպիսիների գործերի ձևակերպումը: Ի պատասխան դրա, 1955 թ. հուլիսի 25-ին ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստրությունից հայտնում են, որ ինչպես կապիտալիստական մի շարք երկրներից (Լիբանան, Սիրիա, Եգիպտոս, Իրան, Ֆրանսիա, Բելգիա, Շվեյցարիա, Ավստրիա, Շվեդիա, Կանադա, Արգենտինա, Ուրուգվայ, Հնդկաստան), այնպես էլ Բուլղարիայից ու Ռումինիայից ՍՍՀՄ-ին լոյալ վերաբերվող և սովետական քաղաքացիություն ունեցող բոլոր հայերին, ՀՍՍՀ իրավասու օրգանների դրական կարծիքի առկայության դեպքում, կթույլատրվի հայրենադարձվել⁶:

Վերադաս օրգանների առջև բարձրացնելով նոր հայրենադարձության վերսկսման հարցը՝ Սովետական Հայաստանի կուսակցական ու պետական մարմինները միաժամանակ նկատի էին առնում այն հանգամանքը, որ մի շարք գաղթօջախներում (Եգիպտոս, Սիրիա, Լիբանան, Հորդանան, Կիպրոս, Հունաստան, Իրաք, ինչպես նաև կատինական Ամերիկայի երկրներում) հայերի համար ստեղծվել էր խիստ աննպաստ, նույնիսկ տաշնապալի կացություն, որից սփյուռքահայությանը դուրս բերելու լավագույն ելքը կլինեի զանգվածային հայրենադարձության վերսկսումը: 50-ական թվականների կեսերին հատկապես մտահոգիչ վիճակ էր ստեղծվել եգիպտահայության համար: Այդ առթիվ եգիպտահայ թեմի առաջնորդ արքեպիսկոպոս

³ Տե՛ս նույն տեղում, գ. 234, թ. 1—2:

⁴ Տե՛ս նույն տեղում:

⁵ Տե՛ս նույն տեղում:

⁶ Տե՛ս նույն տեղում, գ. 241, թ. 1—2:

Մամբրե Սիրունյանը 1957 թ. փետրվարի 11-ին Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ին գրած նամակում վերջինիս խընդրում էր միջնորդել ՀՍՍՀ կառավարության առջև՝ եգիպտահայերին հայրենիք վերադառնալու թույլտվություն տալու համար, որպեսզի նրանք հարկադրված չլինեն հեռանալ դեպի օտար հորիզոններ՝ դեպի Կանադա, Ավստրալիա, Աֆրիկա և Լատինական Ամերիկա, որը կնշանակեր անդառնալի կորուստ հայության համար⁷:

Բանն այն է, որ 1956 թվականի հոկտեմբեր-նոյեմբերի հայտնի իրադարձությունների հետևանքով այլ քրիստոնյաների հետ միասին հայերը նույնպես հարկադրված էին հեռանալ Եգիպտոսից դեպի Կանադա, Հարավային Ամերիկա և այլուր: Սակայն, ինչպես պարզորոշ երևում է ՄԱՀ-ում ՍՍՀՄ դեսպանության կցորդ Ս. Առաքելյանի և Մ. Սիրունյանի միջև 1960 թ. դեկտեմբերի 13-ին կայացած զրույցից, եգիպտահայության բացարձակ մեծամասնությունը վճռական կերպով ցանկանում էր ներգաղթել հայրենիք⁸: Այդ մասին Վազգեն Ա-ին գրած իր մի ուրիշ նամակում (22 դեկտեմբերի, 1960 թ.) նկարագրելով եգիպտահայության տագնապահար ու մոլորյալ վիճակը, Մ. Սիրունյանը կրկին պնդում էր նոր հայրենադարձություն կազմակերպելու խիստ անհրաժեշտության վրա: Նա գրում էր, որ 1947—1948 թթ. երկու քարավանների հայրենիք մեկնելուց հետո եգիպտահայերը շարունակում են ապրել հայրենադարձության վերսկսման հույսով: Բայց քանի դեռ այն չի վերսկսված, Եգիպտոսում առաջացած նոր իրադրության հետևանքով հայերն սկսել են աստիճանաբար արտագաղթել ուրիշ երկրներ: Եթե մինչև վերջերս այդ պարագան առանձին մտահոգություն չէր պատճառում, որովհետև հայերի արտագաղթը մեծ չափեր չէր ընդունել, ապա օտարերկրացիներին (այլազգիներին) աշխատանքի տեղավորելու մասին 1960 թ. նոյեմբերին ՄԱՀ-ի իշխանությունների հրապարակած օրենքից հետո, վիճակը կտրուկ կերպով փոխվել է: Այդ նացիոնալիստական օրենքի համաձայն եգիպտական քաղաքացիություն չունեցող օտարերկրացիները, որպեսզի աշխատանքի տեղավորվեն, պետք է անպայման ՄԱՀ-ի հասարակական աշխատանքների մինիստրություն

նից ստանալին դրա իրավունքը: Օտարերկրացիներ էին հաշվում նույնիսկ նրանց, ովքեր ծնվել ու երկար տարիներ ապրել էին Եգիպտոսում: Եգիպտահայերի մեծ մասը չունեի եգիպտական քաղաքացիություն և այդ նոր օրենքը առաջին հերթին բարդացնում էր հենց նրանց վիճակը: Սակայն եգիպտական հպատակություն ունեցող հայերը ևս ենթարկվում էին խտրականության և ամենուրեք առավելությունը տրվում էր մահմեդականներին: Ահա այս շարժառիթների հետևանքով հայերի մեծ մասը մտադրվել էր հեռանալ Եգիպտոսից և իր բախտը փրկելու ուրիշ երկրներում: Ինչպես գրում էր Մ. Սիրունյանը, վերջին շրջանում ակտիվ շարժում էր սկսվել Հարավ-Աֆրիկյան միություն մեկնելու համար: Այդ երկրի Կահիրեում գտնվող հյուպատոսությունը լայնորեն բացել էր իր դռները «սպիտակ» քրիստոնյաների առջև և հրապուրում էր նրանց դեպի այնտեղ: Շատերն էլ փորձում էին մեկնել Բրազիլիա, Արգենտինա, Ավստրալիա, ԱՄՆ և այլ երկրներ, որը իրոք կնշանակեր անդառնալիորեն կորցնել այդ հայությանը: «Մեր կարծիքով,— վերջում իրավացիորեն գրում էր Մ. Սիրունյանը Վազգեն Ա-ին,— հեռավոր երկրներ մեկնող հայերին սպասում է ասիմիլացիայի և իր հարազատ ազգությունը կորցնելու վտանգը, ուստի հարկավոր է, որ դուք դիմեք մեր հարազատ կառավարությանը, որպեսզի թույլատրվի մոտ 2000 եգիպտահայերի ներգաղթը դեպի հայրենիք»⁹:

Եգիպտահայ թեմի առաջնորդն այնուհետև նշում էր, որ եգիպտական իշխանությունները, որպես այլազգիների, այդպես են վարվում նաև իտալացիների և հունների նկատմամբ: Սակայն Կահիրեում գտնվող իտալական ու հունական դեսպանները իրենց ազգակիցներին խոստացել են ուղարկել հայրենիք: Նման պարագայում Մ. Սիրունյանը խիստ ցանկալի էր գտնում, որ սովետական կառավարությունն ու դեսպանությունը նույնպես իրենց դրական վերաբերմունքը արտահայտեին հայերի հանդեպ, որոնք Սովետական Հայաստանը դիտում են որպես իրենց միակ հայրենիքը:

Այդ նույն ժամանակ հայրենադարձվելու բուն ցանկություն էին հայտնում նաև իրաքահայերը¹⁰: Քիչ չէին դիմումներ

⁷ Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 14, թ. 1—4:

⁸ Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 257, թ. 1—4:

⁹ Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 32, թ. 1—4:

¹⁰ Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 291, թ. 5—6:

րը հեռավոր Արգենտինայից, Ուրուգվայից, ԱՄՆ-ից և այլ երկրներից¹¹: Եվ այսպես, գնալով օրավուր աճում էին հայրենադարձության հետ առնչվող հարցերը: Ուստի, դրանց ընթացք ու լուծում տալու նպատակով անհրաժեշտ դարձավ ունենալ կառավարական հատուկ օրգան: 1958 թ. հոկտեմբերին ստեղծվեց ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր արտասահմանից վերադարձող հայերի ընդունման կառավարական հանձնաժողով (այսուհետև այն կրճատ կանվանենք հայրենադարձության հանձնաժողով): Հանձնաժողովի նախագահը հանդիսանում էր ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահի առաջին տեղակալը կամ տեղակալը, իսկ նրա կազմի մեջ մտնում էին ՀԿԿ Կենտկոմի ներկայացուցիչը, ՀՍՍՀ արտաքին և ներքին գործերի մինիստրները, պետական անվտանգության կոմիտեի նախագահը, ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր վերաբնակեցման վարչության պետը, ՀԱՄԽ-ի նախագահը, ապա հայրենադարձության կոմիտեի նախագահը և պաշտոնական այլ անձինք¹²:

Այդ հանձնաժողովը քննարկում էր հայրենիք վերադառնալ ցանկացողներից ստացված դիմումները և անհատական կարգով որոշում նրանց թույլատրելու կամ մերժելու հարցը: Հանձնաժողովի որոշումներն այնուհետև հաստատվում էին ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի կողմից, ապա գործադրվում որպես կառավարական կարգադրություններ: Հանձնաժողովի կողմից հայրենիք գալու թույլտվություն ստացածների ցուցակները և հարակից մյուս նյութերը ուղարկվում էին ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստրություն, որը համապատասխան երկրի մեր դեսպանության միջոցով իրականացնում էր տվյալ անձի կամ ընտանիքի հայրենադարձությունը:

Այսպես, հայրենադարձության հանձնաժողովի 1958 թ. հոկտեմբերի 6-ի նիստում (արձանագրություն № 1) քննարկվում են մի խումբ սփյուռքահայերի դիմումներ՝ Սովետական Հայաստան ներգաղթելու թույլտվություն ստանալու մասին: Որոշվում

է թույլատրել իրանից՝ 4 ընտանիք (20 շունչ), ԱՄՆ-ից՝ 1 ընտանիք (1 շունչ), Ուրուգվայից՝ 1 ընտանիք (5 շունչ) որպես անհատական վիզաներով հայրենադարձներ մշտական բնակության գալ Սովետական Հայաստան իրենց ազգականների մոտ, որոնք նրանց ապահովում են բնակտարածությամբ: Միաժամանակ հանձնարարվում է ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր վերաբնակեցման և բանվորների կազմակերպված հավաքաման գլխավոր վարչությանը՝ ներգաղթողներին ապահովել ըստ մասնագիտության աշխատանքով¹³: Նույն թվականի նոյեմբերի 13-ին տեղի է ունեցել հայրենադարձության կառավարական հանձնաժողովի երկրորդ նիստը, ուր որոշվել է թույլատրել 9 ընտանիքների (26 շունչ) իրանից, ՄԱՀ-ից, Բուլղարիայից, Ռումինիայից և ԱՄՆ-ից ներգաղթել Սովետական Հայաստան¹⁴: Արխիվում մեզ չհաջողվեց գտնել 3-րդ նիստի արձանագրությունը: 1959 թ. փետրվարի 4-ին տեղի է ունեցել 4-րդ նիստը¹⁵, իսկ մինչև 1960 թ. նոյեմբերի 17-ն ընկած ժամանակամիջոցում կայացել է ևս 17 նիստ, այսինքն՝ 21-րդը¹⁶: Այնուհետև, 1961 թ. հունվարից սկսած, այդ հանձնաժողովի նիստերի արձանագրությունները համարակալվել են ըստ տարիների¹⁷: Հայրենադարձության կառավարական հանձնաժողովը ներկայումս էլ գոյություն ունի և նրա միջոցով են ամենից առաջ ընթացք ու լուծում ստանում հայրենադարձության, ինչպես նաև սովետական քաղաքացիության մեջ վերականգնվելու հետ կապված բոլոր հարցերը:

Թեպետ այդ հանձնաժողովի արձանագրությունները հայրենադարձության և նրան հարակից այլ հարցերի վերաբերյալ ընդհանրապես բավականաչափ հարուստ նյութեր են պարունակում, այնուամենայնիվ դրանցից հնարավոր չէ թվական ստույգ տվյալներ քաղել մինչև 1962 թվականը տեղի ունեցած ներգաղթի վերաբերյալ:

Ավելի քան մեկ տասնամյակի (1950—1961 թթ.) ընթացքում իրականացված անհատական հայրենադարձության փորձը

¹¹ Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 21, թ. 1—2:

¹² Տե՛ս նույն տեղում: Տարբեր ժամանակ հանձնաժողովի աշխատանքները գլխավորել են ՀՍՍՀ Մինիստրների նախագահի տեղակալներ կամ առաջին տեղակալներ Զ. Վ. Հովհաննիսյանը, Լ. Ա. Ստեփանյանը, Ս. Զ. Մովսիսյանը, Ցա. Ն. Զարբյանը, Գ. Ա. Մարտիրոսյանը, Ա. Մ. Կիրակոսյանը: Երկար ժամանակ հանձնաժողովի քարտուղարն է եղել ՀՍՍՀ արտաքին գործերի մինիստրության պատասխանատու աշխատակից Ն. Վ. Գասպարովը:

¹³ Հե՛ս ՀՍՍՀ ՀՍՍՀ ՊԿԱ, ֆ. 326, ց. 2, գ. 21, թ. 1:

¹⁴ Տե՛ս նույն տեղում, թ. 2:

¹⁵ Տե՛ս նույն տեղում, գ. 24, թ. 1—3:

¹⁶ Տե՛ս նույն տեղում, թ. 4—33, և գ. 28, թ. 1—60:

¹⁷ Տե՛ս նույն տեղում, գ. 35, թ. 1 և հետո:

ցույց տվեց, որ այդ եղանակով բնավ հնարավոր չէ բավարարել ստացվող բազմաթիվ խնդրանքները: Ինչպես նշված է ՀՍՍՀ արտաքին գործերի մինիստրության 1961 թ. տարեկան հաշվետվության մեջ, սփյուռքահայ բազմաթիվ կազմակերպություններից և արտասահմանյան մի շարք երկրների սովետական դեսպանություններից ու միսիաններից շարունակում էին ստացվել բազմաթիվ միջնորդություններ՝ մեծ խմբերով հայերի հայրենադարձություն թույլատրելու մասին: Այդ հարցը, այսինքն զանգվածային նոր հայրենադարձություն կազմակերպելու հարցը, շատ որոշակիորեն բարձրացրին նաև Հայաստանում սովետական իշխանության 40-ամյակի տոնակատարությունների առթիվ հայկական գրեթե բոլոր գաղթօջախներից հայրենիք ժամանած պատվիրակությունները:

Հաշվի առնելով այդ ցանկությունները և հանրապետության ժողովրդական տնտեսության զարգացման հեռանկարները՝ Սովետական Հայաստանի կուսակցական ու պետական ղեկավար օրգանները միութենական համապատասխան մարմինների առջև հարց հարուցեցին 1960—70-ական թվականներին արտասահմանյան երկրներից մի քանի տասնյակ հազար սփյուռքահայերի հայրենադարձություն կազմակերպելու մասին: ՄՄԿԿ Կենտկոմը և ՍՍՀՄ Մինիստրների խորհուրդը, ընդառաջելով Սովետական Հայաստանի կառավարության և սփյուռքահայ աշխատավորների ցանկություններին, 1961 թ. օգոստոսի 12-ին որոշում ընդունեցին Մերձավոր ու Միջին արևելքի, ինչպես նաև ամերիկյան մայրցամաքի երկրներից հայերի նոր զանգվածային հայրենադարձություն կատարելու մասին¹⁸:

Դրանով փաստորեն սկսվեց սփյուռքահայերի զանգվածային հայրենադարձության երրորդ փուլը, որը շարունակվում է մինչև այժմ: Պետք է նշել, որ այդ որոշումը, որպես կարևոր քաղաքական միջոցառում, դրական լայն արձագանք գտավ թե՛ հայրենիքում և թե՛ սփյուռքում: Այն նկատելիորեն նպաստեց հայրենիք—սփյուռք կապերի աշխուժացմանը, ավելի ուժեղացրեց համակրանքը սովետական հայրենիքի նկատմամբ և նոր եռանդ ու թափ հաղորդեց հայապահպանման համար սփյուռքահայ առաջադիմական ուժերի պայքարին: Այսպիսով, սովետական կառավարությունն իր կարևոր խնդիրնե-

րից մեկը դարձրեց տարագիր հայերի հայրենիք վերադառնալու գործի կազմակերպումը, այստեղ նրանց ապահովելով բոլոր պայմանները բարեկեցիկ կյանքի և ստեղծագործական աշխատանքի համար:

ՀԿԿ XXII համագումարը (սեպտեմբեր, 1961 թ.) առանձնահատուկ ուշադրություն նվիրեց նոր հայրենադարձության կազմակերպման խնդրին: ՀԿԿ Կենտկոմի հաշվետու զեկուցման առթիվ համագումարի ընդունած բանաձևում այդ մասին ասված է. «Նշելով, որ հայ ժողովրդի բախտի նկատմամբ կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության հայրական հոգատարության շնորհիվ մոտ ժամանակներս կսկսվի արտասահմանյան հայերի նոր մասսայական վերադարձը Սովետական Հայաստան, համագումարը Հայաստանի կոմկուսի Կենտկոմին, Մինիստրների խորհրդին, հանրապետության բոլոր կուսակցական ու սովետական օրգաններին առաջարկում է օրինակելիորեն նախապատրաստվել սովետական նոր քաղաքացիների ընդունմանը, նրանց լրիվ տեղավորմանը, նրանց համար ստեղծել անհրաժեշտ բնակարանային-կենցաղային պայմաններ, ակտիվ աշխատանք կատարել նրանց սոցիալիստական վերադաստիարակության ուղղությամբ»¹⁹:

Ելնելով ՄՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի վերոհիշյալ որոշումից, ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը նախատեսեց 1962—1965 թթ. հայրենիք վերադարձնել ավելի քան 40 հազար սփյուռքահայերի, այդ թվում՝ Եդիպոտսից՝ 8 հազ., Սիրիայից՝ 10 հազ., Կիպրոսից՝ 2 հազ., Լիբանանից՝ 6500, Իրաքից՝ 2 հազ., Իրանից՝ 6200, Հունաստանից՝ 2 հազ., Թուրքիայից՝ 1000, Ուրուգվայից՝ 500, Արգենտինայից՝ 1500 և այլ երկրներից՝ 1000 մարդ: Նախատեսվում էր ըստ տարիների հայրենադարձնել՝ 1962 թ.՝ 5 հազ., 1963 թ.՝ 8 հազ., 1964 թ.՝ 12 հազ., և 1965 թ.՝ 15 հազ. մարդ²⁰: Հայրենադարձներին ընդունելու և տեղավորելու համար միութենական և հանրապետական համապատասխան օրգանները ծավալեցին նախապատրաստական լայն աշխատանք: Հայրենադարձության հետ կապված գործնական ամբողջ աշխատանքը գըլ-

¹⁹ ՀԿԿ XXII համագումարի բանաձևը Հայաստանի կոմկուսի Կենտկոմի հաշվետու զեկուցման առթիվ, Երևան, 1961, էջ 34:

²⁰ ՏՃՍ ՀՍՍՀ ՀՍՍՀ ՊԿԱ, ֆ. 326, ց. 2, գ. 61, թ. 2—3:

¹⁸ ՏՃՍ նույն տեղում, ց. 1, գ. 514, թ. 3—6:

խավորելու համար, ՀԿԿ Կենտկոմի և ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի 1961 թ. օգոստոսի 29-ի համատեղ որոշմամբ, կազմակերպվեց ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր արտասահմանից վերադարձող հայերի ընդունման և տեղավորման կոմիտե (այսուհետև այն կրճատ կանվանենք հայրենադարձության կոմիտե)։

Հայրենադարձության կոմիտեն ստեղծվեց ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր վերաբնակեցման և բանվորների կազմակերպված հավաքագրման գլխավոր վարչության բազայի վրա²¹։ Հայրենադարձության կոմիտեն, շահաված նրա ընդունման կայանները, սկզբում ուներ հետևյալ կազմը՝ ղեկավարություն, ընդունման և տեղավորման բաժին, կուլտ-մասսայական աշխատանքի բաժին, վարչա-տնտեսական մաս՝ ընդամենը 18 հաստիք²²։

ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր արտասահմանից վերադարձող հայերի ընդունման և տեղավորման կոմիտեի ֆունկցիաների մեջ մտնում էր մինչև հայրենադարձների ժամանումը համապատասխան կազմակերպություններից նրանց համար բնակարանների ստացումն ու պահպանումը, ըստ նրանց մասնագիտությունների աշխատանքային տեղերի հայթայթումը, նրանց երեխաների ու երիտասարդների ուսուցման, ինչպես նաև հասակավոր բնակչության անգրագիտության ու կիսագրագիտության վերացման գործի կազմակերպումը, հայրենադարձների թոշակավորման և բազմազավակ ընտանիքների նպաստավորման հարցերի լուծումը, հայրենադարձների շրջանում կուլտ-մասսայական աշխատանքների կազմակերպումը և այլն։

Հայրենադարձությունը նախապատրաստելու գործում արտասահմանյան հայկական գաղթօջախներում որոշակի աշխատանք էին կատարում ՍՍՀՄ և ՀՍՍՀ արտաքին գործերի մի-

նիստությունները, մեր դեսպանություններն ու հյուպատոսությունները։ Շահագրգռված կազմակերպությունների հետ միասին ՀՍՍՀ արտաքին գործերի մինիստրությունը մշակել էր հայրենադարձության կազմակերպման վերաբերյալ մանրամասն հրահանգներ, որոնք հանրապետության ղեկավար օրգանների կողմից հաստատվելուց հետո ուղարկվել էին ՍՍՀՄ ԱԳՄ և այն երկրների մեր դեսպանությունները, որոնցից նախատեսվում էր հայերի հայրենադարձություն կատարել։ ՀՍՍՀ ԱԳՄ հայրենադարձության հարցով սերտ կապեր էր պահպանում ՍՍՀՄ ԱԳՄ համապատասխան բաժինների հետ և մասնակցում ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի հայրենադարձության գծով ներկայացուցիչների ուղարկմանը այն երկրները, որոնցից պետք է կատարվեր հայրենադարձություն։

Սփյուռքահայության ղանգվածային հայրենադարձություն կատարելու մասին սովետական կառավարության այս նոր նախաձեռնությունը սփյուռքահայ աշխատավորների շրջանում առաջ բերեց մեծ խանդավառություն։ Նրանք զանգվածաբար դիմում էին իրենց բնակության երկրի սովետական դեսպանությունը՝ խնդրելով թույլատրել հայրենադարձվելու Սովետական Հայաստան։

1961 թ. նոյեմբերին ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստրությունը ցուցում տվեց Եգիպտոսում, Սիրիայում, Լիբանանում, Կիպրոսում, Իրաքում և Իրանում սովետական դեսպաններին՝ այդ երկրների կառավարությունների առջև բարձրացնել նրանց մոտ Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի հայրենադարձության գծով երկուական ներկայացուցիչ ուղարկելու հարցը և հասնել դրա դրական լուծմանը։ Շուտով դրականապես լուծվեց այդ հարցը, և այդ երկրները մեկնած ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի ներկայացուցիչները սկսեցին հայրենադարձների կոնտինգենտի նախապատրաստումը²³։

Ինչպես այդ մասին տեղեկացնում է ՄԱՀ-ում (Եգիպտոս) ՍՍՀՄ դեսպան Վ. Երոֆեևը 1962 թ. սկզբում կազմած զեկուցագրի մեջ, հայրենադարձության գծով ՀՍՍՀ ներկայացուցիչների Կահիրե ժամանումը և հայրենիք մեկնելու համար ցուցակագրումը մեծ ոգևորություն առաջացրին հայրենասիրաբար տրամադրված եգիպտահայերի շրջանում։ Կարճ ժամանակա-

²¹ Տե՛ս նույն տեղում, ֆ. 362, ց. 10, գ. 1, թ. 1 և գ. 20, 11։
²² Տե՛ս նույն տեղում, գ. 36, թ. 1—6։ Հայրենադարձության կոմիտեի առաջին նախագահն է եղել Գ. Տ. Գևորգյանը՝ մինչև 1967 թ. կեսերը, 1967—1969 թթ.՝ Ս. Տ. Գասպարյանը, իսկ 1969—1984 թթ.՝ Դ. Հ. Հովհաննիսյանը, 1984 թ. հուլիսից՝ Լ. Պ. Մանասերյանը։ Տարբեր ժամանակներում կոմիտեում ղեկավար աշխատանք են կատարել նաև Հ. Ռ. Ալվազյանը, Լ. Ս. Հալապետյանը, Խ. Ա. Մուսիսյանը և ուրիշներ։ Ներկայումս կոմիտեի նախագահի տեղակալներ են Հ. Ա. Հովսեփյանը և Ս. Հ. Բաբայանը։

²³ Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 362, ց. 1, գ. 305, թ. 1։

միջոցում մեծ թվով հայեր, խմբերով ու անհատորեն, այցելեցին սովետական դեսպանություն և հայտնեցին հայրենադարձվելու իրենց բուն ցանկությունը:

Հայրենադարձվել ցանկացողների ցուցակագրումը սկսելուց ընդամենը քսանհինգ օր հետո ՍՍՀՄ դեսպանության հյուպատոսական բաժնում արձանագրվել էր 350 ընտանիք, մոտ 2000 մարդ²⁴: Եգիպտոսում հայրենադարձության նախապատրաստմանը ակտիվորեն աջակցում էին հայոց թեմական խորհուրդը և ռամկավարական կուսակցության տեղական կազմակերպության ղեկավարությունը: Մինչդեռ գաղթօջախի ղեկավարներն իսկապես մասնավորապես դաշնակցականները, հայրենադարձությանը վերաբերվում էին խիստ թշնամանքով: Նրանք ավելի էին ուժեղացրել զրպարտություններն ու ահաբեկումները ինչպես «Հուսաբերի» էջերում, այնպես էլ հայրենիք ներգաղթելու ցանկություն հայտնած հայերի հասցեներով շարամիտ բովանդակությամբ անստորագիր նամակներ ուղարկելով: Այդ շրջանում շատ հայեր իրենց փոստարկղներում հայտնաբերում էին Կահիրեից կամ նույնիսկ այլ վայրերից ուղարկված հայերեն, անգլերեն ու ֆրանսերեն գրված անստորագիր նամակներ, որոնցում շուրջ գույներով ներկայացվում էր կյանքն Արևմուտքի երկրներում և հայերին խորհուրդ էր տրվում մեկնել ոչ թե Սովետական Հայաստան, այլ Ավստրալիա, Կանադա, Լատինական Ամերիկա և այլուր:

Այդ անստորագիր նամակների ոչ անհայտ հեղինակները ճգնում էին ապացուցել, թե ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի հայրենադարձության գծով ներկայացուցիչների ժամանումը Եգիպտոս կատարվել է ոչ թե իսկապես առաջիկա ներգաղթը նախապատրաստելու համար, այլ լուրջ այդ մասին եղած խոսակցությունները հաստատելու նպատակով: Դաշնակների այդ հերյուրանքները, որոնք հավանաբար տարածվում էին ոչ առանց արևմտյան տերությունների ներկայացուցիչների թելադրանքի, եգիպտահայության վրա որևէ ազդեցություն չունեցան:

Ինչպես տեղեկացնում էր Ավստրալիայում ՍՍՀՄ դեսպանության հյուպատոսական բաժնի վարիչի պաշտոնակատար Վ. Պրոնինը, ավստրալիական իշխանությունները ամեն կերպ խրախուսում էին հայերի մուտքը այնտեղ, քանի որ նրանք ու-

րակյալ մասնագետներ էին, տիրապետում էին մի քանի լեզուների, մասնավորապես անգլերենի, որը շատ կարևոր է տեղի պայմաններում: Շահագրգռված լինելով դրանով, ավստրալիական կառավարությունը, եգիպտական իշխանությունների թույլտվությամբ, Կահիրեում բացել էր հատուկ ներգաղթի բյուրո՝ հայերին, ինչպես նաև հույներին հավաքագրելու համար²⁵:

ՄԱՀ-ից հայերին արևմտյան երկրներ արտագաղթեցնելու գործում որոշակի դեր էր խաղում նաև կաթոլիկ եկեղեցին, մասնավորապես քահանա Շեղակը, որն օգնում էր ամերիկյան դեսպանությանը հայերի ԱՄՆ մեկնումը կազմակերպելու գործում: Հոռոմի կաթոլիկ եկեղեցին էլ զբաղված էր հայերի Կանադա մեկնումը կազմակերպելու հոգսերով: Այդ գործում ակտիվ մասնակցություն ունեւր նաև հայ կաթոլիկ քահանա Աղաջանյանը: Կաթոլիկ եկեղեցին արևմտյան երկրներ մեկնող հայերին նույնիսկ նյութական որոշ օգնություն էր ցույց տալիս, կաշառում նրանց:

Հակառակ դրան, հայ լուսավորչական եկեղեցին միանգամայն դրական էր վերաբերվում հայերի Սովետական Հայաստան հայրենադարձվելուն: ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի հայրենադարձության գծով ներկայացուցիչների Կահիրե ժամանելու հենց հաջորդ օրը արքեպիսկոպոս Մ. Սիրունյանն իր քարոզի մեջ հայերին կոչ էր անում շմեկնել Արևմուտք, այլ վերադառնալ հայրենիք՝ Սովետական Հայաստան: Մ. Սիրունյանը կտրականապես հրաժարվել էր արևմտյան երկրները մեկնելու համար հայերին համոզելու՝ այդ տերությունների ներկայացուցիչների բազմաթիվ առաջարկներից: Ընդհակառակը, նա որոշակի աշխատանք էր ծավալել հայրենադարձվող հայերի բռնները Կահիրեից Ալեքսանդրիայի նավահանգիստը փոխադրելու և կարիքավորներին օգնելու համար հայ համայնքից 1000 եգիպտական ֆունտ գումար հավաքելու ուղղությամբ²⁶:

Եթե մինչև ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի ներկայացուցիչների Կահիրե ժամանումը դաշնակները հայտարարում էին, թե իբր ոչ մի ներգաղթ էլ չի լինի, ապա դրանից հետո «Հուսաբե-

²⁴ Տե՛ս նույն տեղում, թ. 1—14:

²⁵ Տե՛ս նույն տեղում, ֆ. 875, ց. 1, գ. 8, թ. 2—3:

²⁶ Տե՛ս նույն տեղում, ֆ. 326, ց. 1, գ. 326, թ. 1—14:

րի» էջերում ձգնում էին եգիպտահայերին սարսափեցնել Սովետական Հայաստանում կյանքի պայմանների անտանելիության վերաբերյալ առասպելներով ու ստոր հերյուրանքներով: ԱՄՆ-ի, Կանադայի, Բրազիլիայի, Արգենտինայի և Ավստրալիայի՝ Կահիրեում գտնվող ներկայացուցչությունները միտումնավոր կերպով դուրացրել էին հայերի իրենց երկրները մեկնելու ձևակերպումները, որպեսզի որքան հնարավոր է շատ ընտանիքներ գաղթեցնեին: Այդ գործում ոչ երկրորդական դեր էր խաղում նաև այսպես կոչված «Հայ գաղթականների ամերիկյան կոմիտեն»՝ ԱՆՉԱ-ն, որը գլխավորում էր ոչ անհայտ դաշնակցական «խոհարարայես» Զորջ Մարտիկյանը: Սակայն, շնայած այդ բոլոր խարդավանքներին, եգիպտահայերի մեծամասնության անկեղծ ձգտումն էր վերադառնալ մայր հայրենիք՝ Սովետական Հայաստան:

Զանգվածային հայրենադարձության վերսկսման կապակցությամբ մեծ էր նաև իրանահայերի խանդավառությունը: Ինչպես այդ առթիվ հայտնում էր Իրանում ՍՍՀՄ դեսպան Ն. Պեգովը, հայրենադարձության վերսկսման մասին Երևանի ռադիոյի հաղորդումը լսելուց անմիջապես հետո, սկսվեց տեղի հայերի մասսայական հոսանքը դեպի սովետական դեսպանատուն: Ընդամենը երկու օրվա ընթացքում ավելի քան 2000 մարդ արձանագրվեց հայրենիք մեկնելու համար²⁷:

Այդ նույն ժամանակ Ստամբուլի ՍՍՀՄ գլխավոր հյուպատոսը հաղորդում էր, որ իրեն է ներկայացել տեղի հայ համայնքի ներկայացուցիչը և հայտնել, որ մոտ 1000 հայեր, գլխավորապես երիտասարդներ, պատրաստ են անմիջապես մեկնել Սովետական Հայաստան²⁸:

Կիպրոսի հանրապետությունում ՍՍՀՄ դեսպան Պ. Երմոշինը նույնպես հայտնում էր, որ հայ համայնքի ներկայացուցիչները խնդրում են շուտափույթ կերպով կիպրահայերին փոխադրել հայրենիք, դրանում տեսնելով նրանց փրկությունը: Սովետական դեսպանության ունեցած տվյալներով, 3200 հոգուց բաղկացած կիպրահայ համայնքի 80 տոկոսից ավելին ցանկանում էր ներգաղթել հայրենիք²⁹:

Անգլիայից նույնպես ՍՍՀՄ դեսպանությունը հաղորդում էր, որ այնտեղ բնակվող հայերը ՀԿԿ XXII համագումարում կենտկոմի առաջին քարտուղար Յա. Ն. Զարոբյանի զեկուցումից տեղականալով հայրենադարձության վերսկսման մասին, խնդրում են իրենց ևս թույլատրել ներգաղթել Սովետական Հայաստան: Սովետական դեսպանը խնդրում էր ՀՍՍՀ արտգործմինիստրությունը՝ իրեն տեղյակ դարձնել Անգլիայից հայերի հայրենադարձության պլանի մասին³⁰:

Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհուրդը 1961 թ. նոյեմբերի 5-ին որոշում ընդունեց «Արտասահմանից 1962—1965 թվականներին ժամանող հայերին ՀՍՍՀ բնակավայրերում տեղավորելու մասին»³¹: Այդ որոշմամբ Սովետական Հայաստան ներգաղթող սփյուռքահայերին բնակարաններով ապահովելու և նրանց համար կուլտուր-կենցաղային անհրաժեշտ պայմաններ ստեղծելու նպատակով պարտավորեցվում էին ՀՍՍՀ ժողտնտխորհը, ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր սովխոզների գլխավոր վարչությունը, Կիրովականի քաղսովետի գործկոմը, Իջևանի և Հրազդանի շրջսովետների գործկոմները՝ 1962—1965 թթ. ընթացքում պատրաստել 280 հազար քմ բնակտարածություն, որից 1962 թ. համար՝ 15000 քմ: Այդ թվում Կիրովականում՝ 3000, Իջևանում՝ 1000, Լուսավանում (1967 թ. Զարենցավան)՝ 2400, Հրազդանում՝ 5000, Արզնի ավանում՝ 600, ժողտնտխորհի գծով՝ 3000 քմ բնակտարածություն³²:

Երբ փոխվեց ավելի վաղ մշակված պլանը և ավելացվեց 1962 թվականին ներգաղթողների թիվը, ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը 1962 թ. ապրիլի 9-ին կայացրեց լրացուցիչ որոշում, որի համաձայն սահմանվում էր հայրենադարձվողների համար 1962 թվականին պատրաստել 45650 քմ բնակտարածություն: Դրանից Երևանում՝ 1000, Լենինականում՝ 600, Կիրովականում՝ 12000, Ալավերդում՝ 150, Ղափանում՝ 100, Իջևանում՝ 3000, Լուսավանում՝ 7000, Հրազդանում՝ 10800, Արզնիում՝ (ապակյա տարաների գործարանի բանավանում)՝ 300, Նոր Հաճընում՝ 700 և հանրապետության սովխոզների ավաններում՝ 8000 քմ բնակտարածություն³³: Այդ նույն որոշմամբ,

²⁷ Տե՛ս նույն տեղում, գ. 322, թ. 5:

²⁸ Տե՛ս նույն տեղում, թ. 5—6:

²⁹ Տե՛ս նույն տեղում:

³⁰ Տե՛ս նույն տեղում:

³¹ Տե՛ս նույն տեղում, ֆ. 362, ց. 10, գ. 1, թ. 1—2:

³² Տե՛ս նույն տեղում, թ. 3—5:

³³ Տե՛ս նույն տեղում, թ. 13—19:

հայրենադարձների դպրոցահասակ երեխաներին դպրոցներում ընդգրկելու նպատակով, սահմանվում էր 1962—1965 թթ. ընթացքում Հրազդան, Ալավերդի, Լուսավան քաղաքներում, Իջևիվան, Արզնի, Էլառ (այժմ՝ Աբովյան քաղաք) և Մասիս ավաններում շահագործման հանձնել 5960 աշակերտական տեղով դպրոցական շենքեր: Այդ նույն ժամանակամիջոցում կառուցվելու էին 1800 տեղով նախադպրոցական հիմնարկներ, ինչպես նաև հիվանդանոցներ, դիսպանսերներ, պոլիկլինիկաներ, սանէպիդ կայաններ, մանկական կոնսուլտացիաներ, մեքենայացված կաթնախոհանոցներ և այլն³⁴:

Ըստ նախնական պլանի վերջնական տարբերակի որոշվեց 1962 թվականին հայրենադարձնել 1250 ընտանիք (մեկ ընտանիքը միջին հաշվով ենթադրելով 4 հոգուց բաղկացած), 5000 մարդ, այդ թվում Իրանից՝ 750 ընտանիք (3000 մարդ), Եգիպտոսից՝ 250 ընտանիք (1000 մարդ), Կիպրոսից՝ 125 ընտանիք (500 մարդ), Իրաքից՝ 125 ընտանիք (500 մարդ): Այդ նպատակով նախատեսվում էր ծախսել մեկ միլիոն 83 հազար ռուբլի³⁵:

Հայրենադարձներին սովետական տերիտորիայում ընդունելու համար Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի 1962 թ. փետրվարի 28-ի կարգադրությամբ հայրենադարձության կոմիտեն Բաթումում և Զուլֆայում կազմակերպեց երկու կայան՝ յուրաքանչյուրը 500 մարդու հաշվով³⁶: Այդ կայանները կահավորելու նպատակով հայրենադարձության կոմիտեն ձեռք բերեց անհրաժեշտ պարագաներ³⁷:

Զուլֆայի կայանը նախատեսված էր Իրանից եկող հայրենադարձներին ընդունելու համար: Սակայն այն բանից հետո, երբ իրանական կողմը չհամաձայնվեց սահմանային Զուլֆա կայարանով բաց թողնել հայրենադարձներին, հայրենադարձության կոմիտեն ժամանակավորապես կոնսերվացիայի ենթարկեց Զուլֆայի կայանը և նրա փոխարեն կազմակերպեց Բաքվի կայանը³⁸: Հետագայում, երբ վերսկսվեց Իրանից հայերի զանգվածային հայրենադարձությունը, Զուլֆայի կայանը նորից վերա-

բացվեց, ինչպես երևում է Բաթումի կայանի 1962 թվականի տարեկան հաշվետվությունից, այն իր գործունեությունը սկսել է նույն թվականի մայիսից: Մայիս-սեպտեմբեր ամիսներին կատարվեց ծովային նավահանգստի և երկաթուղային կայարանի պահեստների հայրենադարձների ընդունման կայանին հատկացված շենքերի վերակառուցումն ու վերանորոգումը: Ստեղծվեցին բարեկարգ հանրակացարաններ, ճաշարան և բժշկական կայան: Հոկտեմբերից արդեն Բաթումի կայանը սկսեց ընդունել հայրենիք ժամանող հայրենադարձների քարավանները:

1962 թ. հոկտեմբերի 7-ին Բաթում հասավ հայրենադարձների առաջին խումբը Կիպրոսից՝ 80 ընտանիք (336 շունչ), իսկ հոկտեմբերի 25-ին՝ ՄԱՀ-ից (Եգիպտոս)՝ 80 ընտանիք (213 շունչ): Բաքվի կայանի միջոցով Իրանից հայրենիք եկավ 14 ընտանիք (58 շունչ): Այսպիսով, 1962 թվականին Բաթումի և Բաքվի կայաններով խմբակային կարգով հայրենիք եկավ 174 ընտանիք (607 մարդ)³⁹: Բացի այդ, աշխարհի 10 երկրներից (Լիբանան, Սիրիա, Ֆրանսիա, Ուրուգվայ, Արգենտինա, Իրաք, Իրան, Թուրքիա, Հունաստան, Կիպրոս) անհատական կարգով հայրենիք եկավ ևս 46 ընտանիք (144 մարդ): Այսպիսով, ըստ ներգաղթի կոմիտեի 1962 թ. տարեկան հաշվետվության, սփյուռքից հայրենիք է ներգաղթել 220 ընտանիք (751 շունչ)⁴⁰: Սակայն 1962—1982 թթ. տեղի ունեցած հայրենադարձության վերաբերյալ կոմիտեի կազմած ընդհանուր աղյուսակի մեջ 1962 թվականին ներգաղթածների թիվը ցույց է տրված 217 ընտանիք (757 շունչ), այդ թվում Կիպրոսից՝ 81 ընտ. (338 շունչ), ՄԱՀ-ից (Եգիպտոս)՝ 75 ընտ. (213 շունչ), Սիրիայից՝ 4 ընտ. (14 շունչ), Իրանից՝ 38 ընտ. (137 շունչ), Լիբանանից՝ 8 ընտանիք (29 շունչ), Կիպրոսից՝ 1 ընտանիք (2 շունչ), Իրաքից՝ 1 ընտանիք (1 շունչ), Ուրուգվայից՝ 1 ընտանիք (2 շունչ), Արգենտինայից՝ 4 ընտանիք (11 շունչ), Ֆրանսիայից՝ 2 ընտանիք (3 շունչ), Թուրքիայից՝ 2 ընտանիք (6 շունչ), Հունաստանից՝ 1 ընտանիք (3 շունչ)⁴¹: Մեր կարծիքով

³⁴ Տե՛ս նույն տեղում, թ. 6—8:

³⁵ Տե՛ս նույն տեղում, գ. 22, թ. 11:

³⁶ Տե՛ս նույն տեղում, թ. 10:

³⁷ Տե՛ս նույն տեղում, գ. 1, թ. 11:

³⁸ Տե՛ս նույն տեղում, գ. 2, թ. 20—21:

³⁹ Տե՛ս նույն տեղում, գ. 21, թ. 29:

⁴⁰ Տե՛ս նույն տեղում:

⁴¹ Տե՛ս ՉՍՍՀ Մինիստրների խորհրդին առնաթիվ արտասահմանից վերադարձող հայերի ընդունման և տեղավորման կոմիտեի ընթացիկ արխիվ, «Տեղեկություններ 1962—1982 թթ. կատարված հայրենադարձության մասին» գործը:

ավելի ստույգ և ճշտված պետք է համարել վերջին թիվը, այսինքն՝ աղյուսակում նշված ընտանիքների և շնչերի քանակը:

Կիպրահայ և եգիպտահայ հայրենադարձների ընդունելության վրա (Բաթումի ընդունման կայան ժամանելու պահից մինչև նշանակված բնակավայր հասնելը) ծախսվել է 66887 ու 88 կոպ.⁴²: Սովետական տերիտորիա ժամանելուց հետո ներգաղթողներն ստանում էին միանվագ դրամական նպաստ՝ անձը 30 ու., օրական երեք անգամ ձրի սնունդ (ընդունման կայանի կարանտինում ներգաղթողները մնում էին 4—7 օր) և Բաթումից մինչև նշանակված բնակավայրը հասնելու համար չոր անոթի երկու օրվա նորմա⁴³:

Այսպիսով, նախապես պլանավորված 5 հազարի դիմաց 1962 թ. խմբակային վիզաներով հայրենադարձվեց ընդամենը 607 մարդ⁴⁴: Բանը նրանումն էր, որ մի շարք երկրներում ստեղծված քաղաքական իրադրությունը ուղղակի աննպաստ եղավ զանգվածային հայրենադարձության համար: Այդ պատճառով էլ Սիրիայում, Լիբանանում և Իրաքում ՍՍՀՄ դեսպանությունները նպատակահարմար չգտան այդ երկրների կառավարությունների առաջ տվյալ պահին դնել զանգվածային հայրենադարձության հարցը: ՍՍՀՄ դեսպանությունների այդ կարծիքին համաձայնեցին նաև մեր հանրապետության համապատասխան օրգանները, ուստի 1962 թ. հայերի զանգվածային հայրենադարձություն կատարվեց միայն Կիպրոսից, Եգիպտոսից և Իրանից:

Պետք է նշել, որ հատկապես Իրանում, հայերի հայրենադարձությունը հանդիպեց լուրջ խոչընդոտների: Փաստորեն այնտեղ նույնպես քաղաքական իրադրությունը անսպասելիորեն աննպաստ եղավ հայրենադարձության համար: Իրանական իշխանությունները, խոսքով համաձայնելով հայերի զանգվածային հայրենադարձությանը, գործնականում բազմաթիվ խոչընդոտներ հարուցեցին դրա դեմ: Երբ հայրենադարձությունը նախապատրաստելու նպատակով Իրան ժամանեցին ՀՍՍՀ Մինիստրներին խորհրդի ներկայացուցիչները, իրանական իշխանությունները սկսեցին անհիմն կերպով ձգձգել հայրենադարձու-

թյան հետ կապված հարցերի լուծումը: ՀՍՍՀ ներկայացուցիչներին չէին թույլատրում մեկնել այն քաղաքներն ու շրջանները, ուր հայեր էին ապրում, երկար ժամանակ ձգձգում էին հայերի իրանական հպատակությունից դուրս գալու ձևակերպումը և այլն: Անկասկած է, որ այդ գործում որոշակի բացասական դեր էին խաղում Թեհրանում ամերիկյան դեսպանության աշխատակիցներն ու դաշնակները, որոնք ձգտում էին ամեն կերպ արգելակել Իրանից հայերի հայրենադարձությունը: Այդ էր պատճառը, որ Իրանից խմբակային հայրենադարձության միջոցով 1962 թվականին հայրենիք եկավ նախատեսված 3000-ի դիմաց ընդամենը 58 մարդ: Չնայած ՄԱՀ-ի իշխանությունները սկզբունքորեն համաձայնել էին հայերի հայրենադարձությանը, սակայն դրանք նույնպես մի շարք դժվարություններ ստեղծեցին զանգվածային հայրենադարձության գործնական իրականացման ժամանակ (հայերին չէին թույլատրում իրենց հետ տանել ամբողջ ունեցվածքը, ձգձգում էին նրանց մեկնման գործերի ձևակերպումը և այլն): Այդ տեսակետից համեմատաբար բարենպաստ եղավ մթնոլորտը Կիպրոսում:

Հիմնականում վերը նշված պատճառներով է բացատրվում այն հանգամանքը, որ պլանավորված 5000-ի փոխարեն խմբակային հայրենադարձության միջոցով 1962 թ. հայրենիք եկավ շուրջ 607 մարդ՝ Իրանից, Կիպրոսից և ՄԱՀ-ից⁴⁵:

Կիպրահայ հայրենադարձները տեղավորվեցին Լենինականում և Կիրովականում, իսկ եգիպտահայերը՝ Ալավերդի, Կիրովական, Լենինական և Երևան քաղաքներում⁴⁶:

Ի նշան անկեղծ երախտագիտության, 1962 թ. հոկտեմբերին, ներգաղթին աջակցող կիպրահայ կոմիտեի նախագահ Տիգրան Զաելիկյանի ստորագրությամբ հայրենադարձվողների անունից նիկոզիայից հեռագիր ուղարկվեց ՍՍՀՄ կառավարությանը, ուր ասված էր. «Մենք, նախկինում Կիպրոսում ապրող հայերս, այս հանդիսավոր րոպեներին հայտնում ենք ամենաանկեղծ երախտագիտություն և շնորհակալություն սովետական կառավարությանը, մեր մայր հայրենիքին՝ Սովետական Հայաստանին, մեր մասին հոգատարության և մեզ մեր հայրենի-

⁴² Տե՛ս ՀՍՍՀ ՀՍՇ ՊԿԱ, ֆ. 362, ց. 10, գ. 21, թ. 61:

⁴³ Տե՛ս նույն տեղում, թ. 63:

⁴⁴ Տե՛ս նույն տեղում, թ. 61 և գ. 22, թ. 11:

⁴⁵ Տե՛ս նույն տեղում, ֆ. 326, ց. 1, գ. 327, թ. 1—14:

⁴⁶ Տե՛ս նույն տեղում, ֆ. 362, ց. 10, գ. 21, թ. 63:

քը, որից երկար տարիներ կտրված էինք, վերադառնալու երջանիկ հնարավորություն տալու համար:

Մենք վստահեցնում ենք սովետական կառավարությանը և մեր մայր հայրենիքին, որ վերադառնալով Սովետական Հայաստան, մեր բոլոր ուժերը կտանք մեր սիրելի հայրենիքի առաջադիմության ու ծաղկման գործին, հանուն խաղաղության պայքարի գործին»⁴⁷:

1962 թ. դեկտեմբերի 13-ին Կիպրոսում ՍՍՀՄ դեսպանության կցորդ Ա. Պրիպինովի և հայերի ներգաղթին աջակցող կոմիտեի անդամ Գրիգոր Բեքերյանի միջև կայացած զրույցի ժամանակ վերջինս հայտնում է, որ հայրենիք մեկնած կիպրահայերից ստացված նամակներում հաղորդվում է այնտեղ նրանց ցույց տված ջերմ ընդունելության և հոգատարության մասին⁴⁸:

Սովետական կառավարությունը իսկապես մեծ հոգատարություն էր ցուցաբերում հայրենադարձների նկատմամբ, նրանց ապահովելով ձրի, հարմարավետ բնակարաններով, արտոնյալ կարգով հատկացնելով կահույք և այլ միջոցներ: Ինչպես երևում է հայրենադարձության կոմիտեի 1962 թ. հաշվետվությունից, այդ տարվա համար առանձնացված մեկ միլիոն 83 հազար ութուց ծախսվել է ընդամենը 296800 ուրբի⁴⁹: 1962 թվականին հայրենադարձության կոմիտեն ընդունման կայանների հետ միասին ուներ 45 հաստիքային միավոր, որից Բաթումի կայանում՝ 20, իսկ Ջուլֆայում՝ 19 աշխատակիցներ⁵⁰: Ջուլֆայի կայանը նախատեսված էր Իրանից երկաթուղով հայրենադարձվողների ընդունման համար և 1962 թ. երկրորդ եռամսյակից պատրաստ էր: Սակայն այդ տարի Ջուլֆայով Իրանից ոչ մի հայրենադարձ չեկավ, թեպետ պլանավորված էր ընդունել 750 ընտանիք կամ 3000 մարդ և այդ նպատակով կազմված էր 214510 ուրբու նախահաշիվ⁵¹:

1963 թ. մայիսի 6-ին Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհուրդը քննարկեց նույն թվականին հայրենադարձների ընդուն-

ման, տեղավորման և աշխատանքով ապահովման հարցը: Սահմանվեց ընդունելության ընդհանուր պլանը՝ 3500 մարդ, այդ թվում Իրանից՝ 1000, ԵԱՀ-ից՝ 700, Կիպրոսից՝ 600, Հունաստանից՝ 500 և այլ երկրներից՝ 700 մարդ: Որոշվեց հայրենադարձներին տեղավորել Լենինականում՝ 750, Կիրովականում՝ 700, Հրազդանում՝ 700, Լուսավանում՝ 500, Ալավերդում և Իջևանում՝ 200-ական, Ստեփանավանում՝ 50, Ղափանում՝ 100, Արովյանում՝ 300 մարդ: Նախատեսվում էր, որ եթե հաջողվի լրացուցիչ հայրենադարձել ևս 2000 հոգու, նրանց տեղավորել հանրապետության սովխոզներում⁵²:

ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը միաժամանակ հանձնարարեց համապատասխան մինիստրություններին ու գերատեսչություններին՝ հայրենիք ժամանողներին անմիջապես ապահովել ըստ մասնագիտության աշխատանքով և կազմակերպել երեխաների ու երիտասարդների ուսուցման, ինչպես նաև մեծահասակների անգրագիտության ու կիսագրագիտության վերացման գործը⁵³:

Նույն թվականի ապրիլի 22-ին ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը կրկին անդրադարձավ 1963 թ. հայրենիք ժամանող հայրենադարձներին բնակարաններով ապահովելու հարցին: Որոշվեց 1963 թ. բնակֆոնդը բաշխելիս հայրենադարձների համար առանձնացնել 41000 քմ բնակտարածություն, որից Երևանում՝ 4000, Լենինականում՝ 8000, Կիրովականում՝ 6000, Ալավերդում՝ 2000, Ղափանում՝ 1000, Հրազդանում՝ 3000, Իջևանում՝ 2000, Լուսավանում՝ 400, գյուղմթերքների արտադրության և մթերումների մինիստրության սովխոզների ավաններում՝ 6600 քառ. մետր⁵⁴: Այդ որոշմամբ միաժամանակ հանձնարարվում է համապատասխան քաղսովետների գործկոմներին նախորդ տարիներին հայրենիք եկած հայրենադարձներին բնակտարածություններ լիովին բավարարելու նպատակով 1963 թվականին հայրենադարձության կոմիտեին հատկացնել լրացուցիչ բնակֆոնդ՝ Երևանում՝ 24,000, Լենինականում՝ 1740 և Կիրովականում՝ 1080 քմ⁵⁵:

47 Տե՛ս նույն տեղում, ֆ. 326, ց. 2, գ. 50, ք. 7:

48 Տե՛ս նույն տեղում, գ. 61, ք. 6—7:

49 Տե՛ս նույն տեղում, ֆ. 362, ց. 10, գ. 21, ք. 28:

50 Տե՛ս նույն տեղում, գ. 22, ք. 1 և 9:

51 Տե՛ս նույն տեղում, ք. 2 և 11:

52 Տե՛ս նույն տեղում, գ. 2, ք. 18—24:

53 Տե՛ս նույն տեղում:

54 Տե՛ս նույն տեղում, ք. 2—5:

55 Տե՛ս նույն տեղում, ք. 6:

1963 թվականին սփյուռքահայ 16 գաղթօջախներից ընդունվել է 2304 հայրենադարձ (619 ընտանիք)⁵⁶: Դրանից 412 ընտանիք (1732 մարդ) եկավ Իրանից, 45 ընտանիք (152 մարդ)՝ Կիպրոսից, 24 ընտանիք (44 մարդ)՝ Հունաստանից և 90 ընտանիք (243 մարդ)՝ Եգիպտոսից, խմբակային վիզաներով: Մնացածները հայրենիք եկան անհատական վիզաներով՝ Թուրքիայից, Լիբանանից, Ուրուգվայից, Իսրայելից, Նիդերլանդներից, Սիրիայից, Իտալիայից, Իրաքից, Իրանից, Արգենտինայից և Բրազիլիայից⁵⁷:

1963 թ. հոկտեմբերի 11-ին ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը անդրադարձավ արտասահմանից վերադարձող հայերի ընդունելության, տեղավորման և աշխատանքով ապահովման հարցերին: Մինիստրների խորհուրդը նշեց, որ հայրենադարձության կոմիտեն և տեղական սովետները այդ ուղղությամբ որոշակի աշխատանք են կատարել: Հանրապետության քաղաքներում և ավաններում, ուր նախատեսված է եղել տեղավորել հայրենադարձներին, նախօրոք պատրաստվել են բնակարաններ, միջոցառումներ են ձեռնարկվել աշխատունակներին համապատասխան աշխատանքով ապահովելու ուղղությամբ, դպրոցական երեխաներին ու երիտասարդներին հանրակրթական դրպրոցներում և այլ ուսումնական հաստատություններում ընդգրկելու համար և այլն:

Դրա հետ մեկտեղ Մինիստրների խորհուրդն արձանագրեց, որ այդ գործում տեղ են գտել նաև մի շարք թերություններ: Երբեմն ժամանակին շահագործման չէին հանձնվում բնակարանները, բավարար քանակությամբ պարենային և արդյունաբերական ապրանքներ չէին մատակարարվում հայրենադարձներով բնակեցված ավաններին ու թաղամասերին և այլն⁵⁸:

Հայրենադարձների սպասարկումը և կուլտուր-կենցաղային պայմանները անբավարար էին հատկապես Հրազդանի նոր թաղամասում: Այնտեղ ժամանակին շահագործման չէր հանձնվել տաք ջրի մատակարարումը, չկար հասարակական բաղնիք, նորաբնակները զրկված էին անհրաժեշտ սանիտարահիգիենիկ հարմարություններից: Նոր շահագործման հանձնված խանութ-

ները լավ չէին սարքավորված, չկար կապի բաժանմունք, անբարեկարգ, ուղղակի բարձիթողի վիճակում էին ճանապարհները, չկային կինոթատրոն, ակումբ և այլ կուլտուրական հիմնարկներ: Լուրջ թերություններ կային հայրենադարձների բժշկական սպասարկման բնագավառում: Բացահայտելով այս և մի շարք այլ թերություններ, ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը կոնկրետ միջոցառումներ մշակեց դրությունը արմատապես բարելավելու ուղղությամբ⁵⁹:

1964 թվականին տեղի ունենալիք հայրենադարձության նախապատրաստման հարցը քննարկվեց ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի նույն թվականի մարտի 6-ի նիստում: Այնտեղ սահմանվեց 1964 թ. Իրանից, ՆԱՀ-ից, Կիպրոսից և այլ երկրներից սփյուռքահայերի ընդունելության պլանը՝ 2500 մարդ⁶⁰: Հայրենադարձության հանձնաժողովին հանձնարարվեց որոշել ժամանողների թիվն ըստ առանձին երկրների: Նախատեսվեց հայրենադարձներին տեղավորել Երևան, Լենինական, Կիրովական, Իջևան քաղաքներում և հանրապետության այլ բնակավայրերում: Այդ նպատակով 1964 թ. բնակարանային ֆոնդից հայրենադարձության կոմիտեին հատկացվեց 34200 քմ բնակատարածություն, որից Երևանում՝ 5000, Լենինականում՝ 8000, Կիրովականում, Լուսավանում և Հրազդանում՝ 2000-ական, Սեվանում՝ 200 և հանրապետության սովխոզային ավաններում՝ 15000 քմ: Միաժամանակ հանձնարարվեց հայրենադարձության կոմիտեին՝ համապատասխան քաղսովետների, մինիստրությունների ու գերատեսչությունների հետ համատեղ երկամսյա ժամկետում որոշել այն ձեռնարկություններն ու կազմակերպությունները, որոնցում պետք է ըստ մասնագիտությունների աշխատանքի տեղավորվեին 1964 թ. ժամանող հայրենադարձները: Այդ առիթով առաջարկվեց ժողատխորհի թեթև արդյունաբերության վարչությանը՝ մինչև մարտի 15-ը Հրազդանում շահագործման հանձնել տրիկոտաժի ֆաբրիկա, իսկ մինչև օգոստոսի 1-ը՝ Լենինականում և Կիրովականում կոշիկի կարման լրացուցիչ արտադրամասեր: Հայրենադարձ կանանց աշխատանքով ապահովելու նպատակով որոշվեց թեթև արդյունաբերության ձեռնարկություն բացել Լուսավանում: Մշակվեցին

⁵⁶ Տե՛ս նույն տեղում, գ. 23, թ. 37:

⁵⁷ Տե՛ս նույն տեղում:

⁵⁸ Տե՛ս նույն տեղում, գ. 2, թ. 28—35:

⁵⁹ Տե՛ս նույն տեղում:

⁶⁰ Տե՛ս նույն տեղում, գ. 3, թ. 2—3:

նաև մի շարք այլ միջոցառումներ՝ հայրենադարձների աշխատանքային և կուլտուր-կենցաղային պայմանները բարելավելու համար⁶¹:

Նախապատրաստական այս աշխատանքները կատարելուց հետո սկսվեց հայրենադարձների ընդունումը: 1964 թ. հայրենիք եկավ 281 ընտանիք (1088 մարդ), որից խմբակային վիզաներով 251 ընտանիք (1005 մարդ), այդ թվում՝ 58 ընտանիք (139 մարդ)՝ ԵԱՀ-ից, 6 ընտանիք (10 մարդ)՝ Կիպրոսից և 187 ընտանիք (836 մարդ)՝ Սիրիայից: 30 ընտանիք (83 մարդ) հայրենիք եկավ անհատական վիզաներով, աշխարհի 11 երկրից⁶²: 1964 թ. կատարվելիք ներգաղթի վրա Նախատեսված էր ծախսել 2 միլիոն 800 հազար ուրբի, փաստացի ծախսը կազմել է 259283 ուրբի⁶³:

Ինչպես իր գեկուցագրում հաղորդում է 1964 թ. ԵԱՀ-ում հայրենադարձության գծով ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի ներկայացուցիչ Խ. Մոսիսյանը, դաշնակները և ԱՆՁԱ-ն շարունակում էին հայրենադարձությունը ձախողելու ուղղությամբ իրենց խլուրդային գործունեությունը: Նա գրում է, որ ԱՆՁԱ-ի նախագահ Զորջ Մարտիկյանը, Պերճ Մարյանը և Ավետիս Զաքչյանը 1964 թ. մայիսի սկզբին, որպես դաշնակցական կուսակցության ներկայացուցիչներ, մեկնել են Ավստրալիա և Կանադա՝ ԵԱՀ-ից և մերձավորարևելյան մյուս հայկական գաղթավայրերից դեպի այդ երկրները հայերի ձրի մեկնումը հաջողացնելու, ինչպես նաև արտագաղթող հայերի համար այդ երկրներում հող ստանալու նպատակով: Սակայն նրանց այդ ձեռնարկը ձախողվել է:

Դատելով Ավստրալիայից և Կանադայից ստացված նամակներից, այնտեղ մեկնածների մեծամասնությունը դժգոհ էր իր վիճակից: Ավստրալիա և Կանադա գնացողները իրենց հետ չէին կարող տանել իրենց ծեր ծնողներին, քանի որ նշված երկրները չէին ընդունում նրանց: Այնտեղ հիմնականում գնում էր աշխատունակ երիտասարդությունը, իսկ զառամյալ հասակ ունեցող մարդիկ զանազան պատրվակներով մերժվում էին: Չնայած դրան, Եգիպտոսում ԱՆՁԱ-ի ներկայացուցիչ, ամերիկ-

յան բանակի բրիգադային գեներալ Հայկ Շեքերճյանը, որը հաճախ էր լինում Կահիրեում և ղեկավարում դաշնակների գործունեությունը, դաշնակցական «Հուսարների» հետ միասին շարունակում էր գովերգել արևմտյան երկրները և խանգարել հայրենադարձությանը⁶⁴:

Խ. Մոսիսյանը նշում է, որ ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 1964 թ. դաշնակները շարունակում են «Հուսարների» էջերում և այլ միջոցներով պրոպագանդա մղել հայրենադարձության դեմ, իրենց էմիսարներին ուղարկում են այն ընտանիքները, որոնք ձեռնարկում են հայրենիք մեկնելու վիզաներ, որպեսզի ամեն կերպ ձախողեն նրանց հայրենադարձությունը: Այս շրջանում եգիպտական իշխանությունները ընդհանուր առմամբ թեպետ չէին խոչընդոտում ԵԱՀ-ից հայերի մեկնելուն, բացառությամբ բժշկի, ինժեների, մեխանիկի և այդ կարգի այլ մասնագիտությունների տեր անձանց, այնուամենայնիվ փաստաթղթերի ձեռնարկման այնպիսի բարդ կարգ էին սահմանել, որով անցնելու համար պահանջվում էր առնվազն 4 ամիս:

ՍՍՀՄ դեսպանությունը և նրա հյուպատոսական բաժինը մի շարք բայեր ձեռնարկեցին հայերի հայրենիք մեկնելու ձեռնարկման արարողությունները թեթևացնելու, ինչպես նաև հայրենադարձվողների կողմից հայրենիք տարվող թանկարժեք իրերի ու այլ գույքի քանակը ավելացնելու ուղղությամբ: Պետք է ասել, որ այդ ձեռնարկումները դրական որոշ արդյունքներ ունեցան⁶⁵:

Կոմիտեի 1965 թ. տարեկան հաշվետվությունից պարզվում է, որ 1965 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին խմբակային վիզաներով հայրենադարձվել է 503 ընտանիք (2576 շունչ), որից 40 ընտանիք (108 շունչ) ԵԱՀ-ից, 463 ընտանիք (2468 շունչ) Սիրիայից: Անհատական վիզաներով եկել է 35 ընտանիք (124 շունչ), որից 10 ընտանիք (38 շունչ) Իրանից, 1 ընտանիք (8 շունչ) Իսրայելից, 4 ընտանիք (8 շունչ) Իրաքից, 10 ընտանիք (40 շունչ) Թուրքիայից, 1 ընտանիք (3 շունչ) Արգենտինայից, 2 ընտանիք (5 շունչ) Ֆրանսիայից, 1 ընտանիք (1 շունչ) Բուլղարիայից: Երկուսը միասին կազմում է 538 ընտանիք (2700 շունչ), որից 2556 շունչ հայրենիք է եկել Բաթուն-

⁶¹ Տե՛ս նույն տեղում:

⁶² Տե՛ս նույն տեղում, գ. 25, թ. 34:

⁶³ Տե՛ս նույն տեղում, թ. 33:

⁶⁴ Տե՛ս նույն տեղում, ֆ. 326, ց. 1, գ. 363, թ. 9—10:

⁶⁵ Տե՛ս նույն տեղում, գ. 326, թ. 1—14:

մով: Այդ ամենի վրա 1965 թ. ծախսվել է 532622 ուրբլի, որից 82435 ո. տրվել է որպես միանվագ դրամական նպաստ, իսկ 96970 ուրբլի՝ այլ կարգի օգնություն⁶⁶:

1965 թ. նախատեսված էր Իրանից, ՍԱՀ-ից և ԵԱՀ-ից հայրենադարձները 6000 մարդ, այդ թվում Իրանից՝ 4000: Սակայն իրանական իշխանությունները շթույլատրեցին այդ և 1965 թ. զանգվածային նայրենադարձություն տեղի ունեցավ միայն Սիրիայից և Եգիպտոսից:

Ընդհանրապես պետք է նշել, որ սովետական կառավարությունը շատ մեծ և սխտեմատիկ օգնություն էր ցույց տալիս հայրենադարձներին: Բացի յուրաքանչյուր հայրենադարձին հասանելիք միանվագ նպաստից, որը տրվում էր հայրենիք ոտք դնելուց անմիջապես հետո, հայրենադարձության կոմիտեն, տեղական սովետներն ու հիմնարկ-ձեռնարկությունները շարունակում էին սխտեմատիկ նյութական օգնություն ցույց տալ սովետական նոր քաղաքացիներին:

Հայրենադարձների նկատմամբ հոգատարությունը դրսևորման կոնկրետ օրինակ է ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի 1963 թ. փետրվարի 5-ի կարգադրությունը, որով պարտավորեցվում էին ՀՍՍՀ սոցապմինիստրությունը և Երևանի, Լենինականի, Կիրովականի, Հրազդանի քաղաքային ու Իջևանի շրջանային սովետները՝ գործկոմները՝ մինչև փետրվարի 20-ը հաշվի առնել 1962 թվականին Եգիպտոսից, Իրանից և Կիպրոսից հայրենիք եկած պետական կենսաթոշակի իրավունք ունեցող բոլոր հայրենադարձներին և լուծել նրանց թոշակավորման հարցերը:

Նկատի ունենալով միջազգային իրադրության սրման պատճառով արտասահմանյան մի շարք երկրներում լուրջ դժվարությունների առաջացումը հայրենադարձների թոշակավորման հետ կապված փաստաթղթերի ստացման ու օրինականացման գործում, ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը թույլատրում է հանրապետության սոցապի օրգաններին՝ վերոհիշյալ երկրներից 1962 թ. հայրենիք վերադարձած քաղաքացիներից բացառության կարգով ընդունելու ստաժի մասին շօրինականացված փաստաթղթեր, ինչպես նաև վկայությունների հիման վրա ո-

րոշել պահանջվող աշխատանքային ստաժը և սահմանված կարգով լուծել նրանց կենսաթոշակների հարցը⁶⁷:

1963—1964 թթ. ընթացքում ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը հայրենադարձության կոմիտեին և Լենինականի, Կիրովականի, Հրազդանի, Ղափանի քաղսովետներին ու Իջևանի շրջսովետին լրացուցիչ հատկացրել է 56500 ուրբլի՝ կարիքավոր հայրենադարձներին դրամական օգնություն ցույց տալու համար, միաժամանակ նրանց տրամադրելով մահճակալներ, անկողնային պարագաներ և այլ գույք⁶⁸: Այդ կարգի օգնությունը շարունակվում էր նաև հետագայում, մինչև որ հայրենադարձ ընտանիքները կկարողանային սեփական աշխատանքի արդյունքներով գոհացում տալ իրենց բոլոր հոգսերին:

ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր հայրենադարձության հանձնաժողովը 1965 թ. հուլիսի 21-ի նիստում լսեց Լուսավանի և Հրազդանի քաղսովետների գործկոմների նախագահների հաղորդումները՝ հայրենադարձների բնակ-կենցաղային վիճակի և աշխատանքով ապահովման մասին: Հանձնարարվեց հայրենադարձության կոմիտեին՝ մեկ ամիս հետո ստուգել ընդունված դրոշման կատարման ընթացքը և վերացնել այդ գործում եղած թերությունները⁶⁹:

Հայրենադարձներին օգնելու ուղղությամբ շատ լուրջ քայլ կատարվեց ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի 1965 թ. հուլիսի 7-ի որոշմամբ, որի նպատակն էր լիովին ապահովել 1946—1962 թթ. ժամանակամիջոցում հայրենիք եկած դեռևս բնակարանային կարիք ունեցող բոլոր հայրենադարձներին: Ինչպես արձանագրված է այդ որոշման մեջ, հանրապետության հիմնարկ-ձեռնարկություններում հայրենադարձներից բնակարանային պահանջով ստացված 2587 դիմումների ուսումնասիրությունից պարզվել է, որ դրանցից 595 ընտանիք իրոք հանդիսանում է սուր կարիքավոր, 951 ընտանիք կարիք ունի բնակարանային պայմանների բարելավման՝ հիմնականում ընտանիքի անդամների թվի աճի հետ կապված, իսկ մնացած մասը առայժմ ապրում է բնակարանային շատ թե քիչ տանելի պայմաններում:

⁶⁷ Տե՛ս նույն տեղում, ֆ. 113, ց. 80, գ. 53, թ. 10:

⁶⁸ Տե՛ս նույն տեղում, ֆ. 362, ց. 10, գ. 2, թ. 26—27, 41—42 և գ. 3, թ. 4—5:

⁶⁹ Տե՛ս նույն տեղում, ֆ. 326, ց. 2, գ. 87, թ. 32:

⁶⁶ Տե՛ս նույն տեղում, ֆ. 362, ց. 10, գ. 27, թ. 28—29 և 59:

Բնակարանի կարիք ունեցող հայրենադարձ ընտանիքներին ապահովելու նպատակով Մինիստրների խորհուրդը աշխատի քան 7000 քմ բնակատարածություն հատկացրեց Երբաղ-սովետի գործկոմին: Հանձնարարվեց մինիստրություններին, գերատեսչություններին ու կազմակերպություններին՝ իրենց մոտ աշխատող հայրենադարձներին բնակարաններով ապահովել առաջին հերթին⁷⁰:

Միաժամանակ շարունակվում էր հայրենադարձների նոր քարավանների ժամանումը, ուստի անհրաժեշտ էր նախորդ տարիներին ներգաղթածների կենցաղային-բնակարանային պայմանների բարելավմանը զուգընթաց մտածել նաև նոր եկողների մասին: Ահա թե ինչու, 1966 թ. մարտի 18-ին, ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը որոշում կայացրեց սփյուռքից ժամանող հայրենադարձների ընդունման և տեղավորման հետ կապված հարցերի մասին: Որոշման մեջ նշված է, որ Լենինականի, Կիրովականի, Աբովյանի քաղաքների և Հոկտեմբերյանի, Թալինի, էջմիածնի, Վեդու շրջանների գործկոմները, ինչպես նաև հայրենադարձության կոմիտեն ղգալի աշխատանք են կատարել վերջին տարիներին հայրենիք ժամանողների ընդունումը նախապատրաստված կատարելու, բնակ-կենցաղային և աշխատանքային նորմալ պայմաններ ապահովելու ուղղությամբ⁷¹: Մինիստրների խորհուրդը արձանագրեց, որ 1962 թվականից հետո եկած բոլոր հայրենադարձները ստացել են նոր բնակարաններ, խիստ կարիքավոր ընտանիքներին ցույց է տրվել նյութական օգնություն, հատկացվել է տնային կահույք (մահճակալներ, սեղաններ, աթոռներ), աշխատունակները հիմնականում ապահովված են ըստ մասնագիտության աշխատանքով և այլն: Ձեռնարկություններում հետևողական աշխատանք է տարվում նրանց որակավորումը բարձրացնելու և վերաորակավորելու ուղղությամբ: Հայրենադարձների դրպրոցահասակ բոլոր երեխաները ընդգրկված են հանրակրթական դպրոցներում և այլն:

Մինիստրների խորհուրդը միաժամանակ նշեց, որ դեռևս անբավարար են լուծվում հայրենադարձների կենցաղային մի շարք հարցեր: Բարեկարգված չեն հայրենադարձներով բնա-

կեցված թաղամասերը, փողոցներն ու բակերը Լենինական, Կիրովական քաղաքներում և Հոկտեմբերյանի, էջմիածնի, Թալինի, Աշտարակի, Վեդու շրջանների մի շարք սովխոզների ավաններում: Նշված վայրերում հայրենադարձներին տրամադրված բնակելի շենքերը երբեմն շահագործման են հանձնվում սանիտարատեխնիկական, էլեկտրամոնտաժային և այլ աշխատանքների շատ թերություններով:

ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը հանձնարարեց համապատասխան քաղաքների ու շրջանների գործկոմներին և շինարարության մինիստրությանը՝ մեկամսյա ժամկետում վերացնել բնակելի շենքերում եղած բոլոր թերավարտությունները, բարեկարգել հայրենադարձներով բնակեցված թաղամասերն ու փողոցները, շահագործման հանձնել կուլտուր-կենցաղային օբյեկտները, բարելավել կապի գործը, հայրենադարձների աշխատանքային ապահովման հարցերը, վարկեր տրամադրել սովխոզներում տեղավորված հայրենադարձներին՝ անասուն-դարձներին նյութական օգնություն ցույց տալու և տնային օգտագործման իրերով ապահովելու համար, Մինիստրների խորհրդի ռեզերվային ֆոնդից բաց թողնվեց 35 հազար ռուբլի:

Հանձնարարվեց ՀՍՍՀ գյուղատնտեսության մինիստրությանը՝ մինչև 1966 թ. ապրիլի 1-ը գյուղական վայրերում ապրող հայրենադարձներին ապահովել տնամերձով, սերմերով և տնկանյութերով: Լուսավորության մինիստրությանն առաջարկվեց հայրենադարձների բոլոր երեխաներին դպրոցներում ընդգրկելու համար բացել լրացուցիչ դասարաններ և միջոցներ ձեռնարկել հասակավոր բնակչության անգրագիտությունը վերացնելու ուղղությամբ: Երկու տարով հայրենադարձները ազատվելու էին գիշերօթիկ դպրոցներում ընդգրկված երեխաների համար վարձ վճարելուց:

Առևտրի մինիստրությանը և Հայկոոպին հանձնարարվեց բարելավել մատակարարումը և առևտուրը հայրենադարձների բնակավայրերում: Առողջապահության մինիստրությանն առաջարկվեց ավելի մեծ ուշադրություն դարձնել հայրենադարձների բուժսպասարկման գործի վրա:

Հայրենադարձների շրջանում աշխատանքները բարելավելու և ավելի օպերատիվ դարձնելու նպատակով հայրենադարձության կոմիտեին հատկացվում է ներգաղթածների կենցաղա-

⁷⁰ Տե՛ս նույն տեղում, գ. 3, թ. 7—8:

⁷¹ Տե՛ս նույն տեղում, գ. 4, թ. 2—7:

յին և աշխատանքային տեղակայման հարցերով զբաղվող ավագ տեսուչի հինգ հաստիք՝ Աբովյանի, Հոկտեմբերյանի, Թալինի, Էջմիածնի և Վեդու (այժմ՝ Արարատի) շրջաններում աշխատելու համար⁷²: Մինչ այդ մի շարք քաղսովետների գործկոմներում կոմիտեն ուներ բաժիններ:

1965 թ. վերջին ավարտվեց միութենական ինստանցիաների կողմից սահմանված սփյուռքահայերի մասսայական հայրենադարձության մասին 1961 թ. օգոստոսի 12-ի որոշման ժամկետը, ուստի հանրապետության կառավարության խնդրանքով 1966 թ. օգոստոսի 9-ին այդ կապակցությամբ ընդունվեց նոր որոշում: Այնտեղ ասված էր. «Թուլյատրեյ ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին՝ աշխատանք տանելու 1966—1970 թվականներին արտասահմանյան երկրներից հայերի ՍՍՀՄ հայրենադարձության ուղղությամբ: Հայրենադարձությունն իրականացնել միայն ազգությամբ հայ օտարերկրյա քաղաքացիների անհատական ընտրության հիման վրա, հաշվի առնելով հայրենադարձություն կատարելիք երկրների քաղաքական իրադրությունը, ինչպես նաև հանրապետությունում նրանց աշխատանքի տեղավորման և բնակարանով ապահովման համապատասխան պայմանները»⁷³:

Միաժամանակ սահմանվեց, որ 1966—1970 թթ. ընթացքում տարեկան պետք է հայրենադարձնել 1000 մարդ: ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին հանձնարարվեց բարելավել հայրենադարձվողների կոնտինգենտի ընտրությունը, որպես կանոն, թույլ չտալ առանց ծնողների կամ երեխաների ՍՍՀՄ գալը: ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը միաժամանակ պարտավոր էր հայրենադարձվողների համար ժամանակին ապահովել բնակարաններ և աշխատատեղեր՝ հաշվի առնելով նրանց մասնագիտությունը: Թուլյատրվում էր ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին, ՍՍՀՄ արտգործմինիստրության հետ համաձայնեցրած, 1966—1970 թթ. արտասահմանյան համապատասխան երկրներն ուղարկել ներկայացուցիչներ՝ հայրենադարձությունը կազմակերպելու համար: 1966—1970 թթ. հայրենիք վերադարձողների վրա տարածվելու էին այն բոլոր արտոնությունները, որոնք

սահմանված էին ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի 1961 թ. օգոստոսի 12-ի որոշմամբ⁷⁴:

Անդրադառնալով սփյուռքահայերի հայրենադարձությանը, ՀԿԿ XXIV համագումարին տված Կենտկոմի հաշվետու զեկուցման մեջ ասված է. «Իրագործելով սփյուռքահայերի հայրենադարձությունը, Հայաստանի կոմկուսի Կենտկոմը և հանրապետության Մինիստրների խորհուրդը բոլոր միջոցները ձեռք են առնում, որպեսզի մեր նոր քաղաքացիներին ճիշտ տեղաբաշխեն հանրապետության քաղաքներում ու շրջաններում, նրանց համար ստեղծվեն աշխատանքային, բնակարանային ու կենցաղային նորմալ պայմաններ: Այս խնդրի լուծման ուղղությամբ մեզ մեծ և անգնահատելի օգնություն են ցույց տալիս ՍՄԿԿ Կենտկոմը և սովետական կառավարությունը»⁷⁵:

1966 թ. մայիսի 30-ին ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը և ՀԱՄԽ-ը համատեղ որոշում ընդունեցին հանրապետության 1966 թ. բնակարանային ֆոնդից այդ տարվա ներգաղթողների համար հայրենադարձության կոմիտեին հատկացնել 36500 քմ քնակտարածություն, որից Երևանում՝ 1000, Լենինականում՝ 6000, Կիրովականում՝ 3800, Լուսավանում՝ 3500, Աբովյանում՝ 3500, Հրազդանում՝ 500, Սպիտակում՝ 200, Հոկտեմբերյանում՝ 600 և սովխոզներում՝ 15000 քմ⁷⁶:

Սակայն մի շարք երկրներում, որոնցից նախատեսված էր կատարել հայերի զանգվածային հայրենադարձություն, անսպասելիորեն աննպաստ պայմաններ առաջացան: Այդ էր պատճառը, որ 1966 թ. զանգվածային հայրենադարձություն իրականացվեց միայն Միրիայից, ուր մեկնել էր ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի հայրենադարձության գծով ներկայացուցիչ⁷⁷:

1966 թ. սփյուռքից հայրենիք ներգաղթեց ընդամենը 223 ընտանիք (1423 մարդ), որից խմբակային վիզայով ՍԱՀ-ից (Միրիա)՝ 191 ընտանիք (1311 մարդ) և անհատական վիզաներով այլ երկրներից 32 ընտանիք (112 մարդ), այդ թվում՝ Լի-

74 Տե՛ս նույն տեղում:

75 ՀԿԿ Կենտկոմի հաշվետու զեկուցումը ՀԿԿ XXIV. համագումարին, Երևան, 1966, էջ 71:

76 Տե՛ս ՀՍՍՀ ՀՍՍՀ ՊԿԱ, ֆ. 362, ց. 10, գ. 3, թ. 13—16:

77 Տե՛ս նույն տեղում, ֆ. 326, ց. 1, գ. 389:

72 Տե՛ս նույն տեղում:

73 Տե՛ս նույն տեղում, ֆ. 326, ց. 1, գ. 514, թ. 1—2:

բանանից՝ 2 ընտանիք (7 մարդ), Իրանից՝ 16 ընտանիք (67 մարդ), Թուրքիայից՝ 6 ընտանիք (23 մարդ), Իրաքից՝ 3 ընտանիք (8 մարդ), ԵԱՀ-ից՝ 1 ընտանիք (3 մարդ), Քուվեյթից՝ 1 ընտանիք (3 մարդ), Ուրուգվայից՝ 1 ընտանիք (1 մարդ), Ֆրանսիայից՝ 1 ընտանիք (1 մարդ), Հարավսլավիայից՝ 1 ընտանիք (6 մարդ): 1966 թ. հայրենադարձների ընդունելության վրա ծախսվեց 268088 ուրբլի⁷⁸:

1967 թ., կապված մի շարք հանգամանքների հետ, մասնավորապես արաբական երկրների դեմ Իսրայելի ագրեսիայի հետևանքով, սփյուռքահայերի խմբակային հայրենադարձություն տեղի չունեցավ: Միայն անհատական վիզաներով 8 երկրներից հայրենիք եկավ 148 ընտանիք (734 մարդ), այդ թվում՝ 128 ընտանիք (679 մարդ) Իրանից, 8 ընտանիք (27 մարդ) Լիբանանից, 2 ընտանիք (4 մարդ) Իրաքից, 4 ընտանիք (10 մարդ) Թուրքիայից, 2 ընտանիք (4 մարդ) ԱՄՆ-ից, 1 ընտանիք (3 մարդ) Արգենտինայից, 2 ընտանիք (2 մարդ) Անգլիայից, 1 ընտանիք (1 մարդ) Ֆրանսիայից: Նրանց ընդունման համար կատարված ծախսը կազմել է 71333 ուրբլի⁷⁹:

Հայրենադարձության հանձնաժողովը 1967 թ. սեպտեմբերի 9-ի նիստում, որին մասնակցում էին նաև Լենինականի, Կիրովականի, Հրազդանի, Չարենցավանի և Աբովյանի քաղաքներին գործկոմների նախագահները, ինչպես և մի շարք մինիստրությունների ներկայացուցիչներ ու սովխոզների դիրեկտորները, քննարկեց հայրենադարձության կոմիտեի նախագահ Ս. Գասպարյանի զեկուցումը «1967 թ. հայրենադարձների ընդունման և տեղավորման ընթացքի մասին»: Նշվեց, որ շնայած 1967 թ. համեմատաբար ավելի փոքր է հայրենադարձների թիվը, քան անցյալ տարիներին, այնուամենայնիվ հայրենադարձության կոմիտեն և թվարկված քաղաքների գործկոմները թուլացրել են աշխատանքը հայրենադարձների շրջանում, ինչպես ընդունման, այնպես էլ տեղավորման գործում:

Հանձնաժողովը հանձնարարեց վերը նշված քաղաքներին գործկոմների նախագահներին և սովխոզների դիրեկտորներին՝ ավելի մեծ ուշադրություն դարձնել հայրենադարձների ընդունման, տեղավորման, աշխատանքով ապահովման հարցե-

րի վրա և կարճ ժամանակամիջոցում վերացնել եղած թերությունները: Առաջարկվեց հետևողական աշխատանք կատարել նաև նրանց երեխաներին մանկապարտեզներում և դպրոցներում ընդգրկելու ուղղությամբ⁸⁰:

Երբ ավարտվեց սփյուռքահայերի զանգվածային հայրենադարձության նոր, երրորդ փուլի առաջին վեցամյակը, 1968 թ. հունվարին ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր արտասահմանից վերադարձող հայերի ընդունման և տեղավորման կոմիտեն ամփոփեց 1962—1967 թթ. ընթացքում կատարված հայրենադարձության արդյունքները, անելով մի շարք ընդհանրացումներ ու եզրակացություններ: Կոմիտեն մի շարք գործնական առաջարկներ ներկայացրեց հայրենադարձների ընդունելությունն ու տեղավորումը առաջիկայում բարելավելու ուղղությամբ⁸¹:

Այդ մասին կոմիտեի զեկուցագրում նշվում էր, որ 1962—1967 թթ. ընթացքում սփյուռքահայ տարբեր գաղթօջախներից հայրենիք է վերադարձել ավելի քան 9 հազար մարդ, այդ թվում Սիրիայից՝ 4673, Իրանից՝ 2699, ԵԱՀ-ից՝ 708, Կիպրոսից՝ 500, այլ երկրներից՝ 426 մարդ⁸²: Հայրենադարձների հիմնական զանգվածը տեղավորվել էր հանրապետության հետևյալ քաղաքներում և շրջաններում. Երևանում՝ 544 մարդ, Լենինականում՝ 1910, Կիրովականում՝ 1640, Չարենցավանում՝ 1004, Աբովյանում՝ 820, Հրազդանում՝ 495, Իջևանում՝ 70, Ղափանում՝ 39, այլ քաղաքներում՝ 162, էջմիածնի շրջանի սովխոզներում՝ 571, Հոկտեմբերյանի՝ 564, Վեդու՝ 425, Թալինի՝ 408, Աշտարակի՝ 354 մարդ⁸³:

Ուշադրություն էր գրավում այն պարագան, որ գնալով նվազում էր ոչ միայն հայրենադարձվողների թիվը, այլև այն երկրների թիվը, որոնցից կատարվում էր ներգաղթը⁸⁴: Այդ հանգամանքը բացատրվում էր նրանով, որ մի շարք երկրների կառավարություններ (Լիբանան, Իրաք, Թուրքիա, մասնակիորեն նաև Սիրիա և Եգիպտոս) հայերի հայրենադարձությանը

⁷⁸ Տե՛ս նույն տեղում, ֆ. 362, ց. 10, գ. 29, թ. 22—23:

⁷⁹ Տե՛ս նույն տեղում, գ. 31, թ. 12:

⁸⁰ Տե՛ս նույն տեղում, ֆ. 326, ց. 2, գ. 116, թ. 47—50:

⁸¹ Տե՛ս նույն տեղում, գ. 5, թ. 4—23:

⁸² Տե՛ս նույն տեղում, թ. 5:

⁸³ Տե՛ս նույն տեղում, թ. 5—6:

⁸⁴ Տե՛ս նույն տեղում, գ. 121, թ. 1—5:

վերաբերվում էին կամ խիստ անբարյացակամորեն կամ էլ բնավ թույլ չէին տալիս այն: Մյուս կողմից նկատվում էր, որ այդ երկրներում մեր դիվանագիտական ներկայացուցիչները սփյուռքահայերի հայրենադարձության հետ կապված հարցերի լուծման գործում ոչ միշտ էին ցուցաբերում անհրաժեշտ հետևողականություն և համառություն: Ակնհայտ էր նաև հայրենադարձության նկատմամբ հայկական մի շարք գաղթօջախներում առաջադիմական, դեմոկրատական կազմակերպությունների գործունեության որոշ թուլացում: Վերջապես մեր հանրապետության մի շարք գերատեսչություններ ու կազմակերպություններ, որոնք իրենց գործունեությամբ կապված էին սփյուռքի հետ, նույնպես բավարար ակտիվ աշխատանք չէին ծավալում հայրենադարձությանը նպաստելու ուղղությամբ: Որոշ իմաստով նաև հենց այս հանգամանքներով պետք է բացատրել այն անցանկալի իրողությունը, որ Մերձավոր ու Միջին արևելքի մի շարք երկրներից հայերի մի մասը Սովետական Հայաստան գալու փոխարեն արտագաղթում էր դեպի Ավստրալիա, Կանադա, ԱՄՆ, Հատինական Ամերիկայի երկրներ և այլուր:

Հայրենադարձության ընթացքի վրա հաճախ բացասաբար էին ազդում նաև որոշ երկրներում անհատական մեկնումների ձևակերպումների հետ կապված դժվարությունները: Մի շարք երկրներից անհատական կարգով ՍՍՀՄ մեկնելու համար յուրաքանչյուր ընտանիքի ձևակերպումը ձգձգվում էր մի քանի ամիս: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ որոշ երկրներից զանգվածային հայրենադարձությունը տարբեր պատճառներով առայժմ անհնարին էր դառնում, կոմիտեի կարծիքով անհրաժեշտ էր ավելի լայնորեն օգտագործել անհատական ձևով ներգաղթը, գտնելով այն դյուրացնելու կոնկրետ ուղիներ: Այդ իմաստով կոմիտեն նպատակահարմար էր համարում նաև ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի հայրենադարձության գծով ներկայացուցիչների անպայման գործուղումը Իրան, Իրաք, Լիբանան, Սիրիա, ԵԱՀ և այլ երկրներ՝ տեղում հարցերը հանգամանորեն ուսումնասիրելու և ներգաղթի գործը ավելի ակտիվացնելու նպատակով:

Հայրենադարձության նախորդ փուլում ներգաղթողները տեղավորվում էին ամբողջ հանրապետությունում: 1962 թվականից սկսած՝ հայրենադարձները հիմնականում տեղավորվում էին Լենինականում, Կիրովականում, Հրազդանում, Չարենցավա-

նում, Աբովյանում և էջմիածնի, Հոկտեմբերյանի, Աշտարակի, Թալինի ու Արարատի շրջանների սովխոզներում: Ժամանակով բնակության վայրը, հայրենադարձները ապահովվում էին սահմանված չափով բնակատարածությամբ և 2—3 օրվա ընթացքում՝ նաև աշխատանքով: Սակայն, երբեմն, շինարարության ժամկետների խախտման հետևանքով, բնակարանային հարցում էին որոշ դժվարություններ: Խիստ բարելավման կարիք ուներ շինարարական աշխատանքների որակը: Այդ կարգի թերությունները առաջ էին բերում հայրենադարձների արդարացի դժգոհությունները: Աշխատանքի տեղավորման գործում որոշ դժվարություններ էին առաջանում հատկապես դերձակներին, ավտովարորդներին և մի քանի այլ մասնագիտությունների տեր անձանց տեղավորելիս, ինչպես նաև թոշակավորման ու նպաստավորման ժամանակ՝ անհրաժեշտ փաստաթղթերի բացակայության պատճառով:

Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի սահմանած կարգի համաձայն յուրաքանչյուր հայրենադարձի տրվում էր միանվագ նպաստ՝ 30 ուրբու չափով: 1962—1967 թթ. եկած հայրենադարձներին տրվել էր 270180 ուրբլի ընդհանուր գումարով միանվագ նպաստ: Բացի այդ, խիստ կարիքավորներին, որպես անվերադարձ օգնություն, տրվել էր 201450 ուրբլի⁸⁵: Հայրենադարձները երկու տարով ազատվում էին եկամտահարկից և անզավակության հարկից: Չնայած որ դա նույնպես կարևոր օժանդակություն էր նրանց համար, այնուամենայնիվ, անհրաժեշտություն էր զգացվում հայրենադարձների համար սահմանել նոր արտոնություններ: Դա վերաբերում էր հատկապես այն բազմանդամ՝ 7—10 հոգանոց ընտանիքներին, որոնցում աշխատում էր միայն ընտանիքի գլուխը: Որպես կանոն, խիստ կարիքավոր էին հատկապես Իրանից և Սիրիայից ներգաղթած շատ ընտանիքներ: Նրանց եկամտի չափը, հատկապես սկզբնական շրջանում, երբ պահանջվում էր ոմանց վերավորակվորում կամ նոր մասնագիտության ձեռք բերում, համեմատաբար մեծ չէր և, բնականաբար, չէր բավարարում: Հատկապես այդ պատճառով երբեմն հայրենադարձները հրաժարվում էին իրենց երեխաներին ուղարկել մանկական հիմնարկներ կամ դիշեր-օթիկ դպրոցներ: Որոշակի դժվարություններ էին առաջանում

⁸⁵ Տե՛ս նույն տեղում, ֆ. 362, ց. 10, գ. 5, թ. 4—23:

նաև կոմունալ ծախսերի վճարման գործում և մի շարք այլ հարցերում:

Պետք է նշել, որ արտասահմանից եկած այն ընտանիքների համար, որոնք տեղավորվում էին հանրապետության սովխոզներում, ծագում էին աշխատանքի և կյանքի յուրահատուկ, անսովոր պայմաններ: Այնտեղ կարևոր նշանակություն էր ձեռք բերում գյուղացիների համար տնամերձ հողամասերի ստացման ու օգտագործման, օժանդակ տնտեսությունների ստեղծման խնդիրը: Սակայն այդ կարևոր հարցը շատ սովխոզներում անբավարար կամ էլ դանդաղ էր լուծվում: Բանը նրանումն էր, որ սովխոզային ավաններում, որպես կանոն, նույնպես բազմահարկ տներ էին կառուցվում և նրանցում, հատկապես վերին հարկերում տեղավորված տնտեսությունները, դրանից առաջացող անհարմարությունների հետևանքով, զրկվում էին հողամասի հետ կապվելու, անասուններ և տնային թռչուններ պահելու հնարավորությունից: Երբեմն նրանց հողամասեր էին հատկացվում տնից մի քանի կիլոմետր հեռավորության վրա, որը նույնպես որոշակի անհարմարություններ էր առաջ բերում: Այդ էր պատճառը, որ մի շարք սովխոզներում հայրենադարձներից ոմանք խուսափում էին տնամերձ հողամասեր ստանալուց (օրինակ, էջմիածնի շրջանի Այդր լճի (այժմ՝ Ակնա լճի) և Աշտարակի շրջանի № 37 սովխոզներում): Կարևոր հանգամանք էր նաև սովխոզային ավաններում տեղավորված հայրենադարձների մատակարարումը պարենային և արդյունաբերական առաջին անհրաժեշտության ապրանքներով, մինչդեռ այդ գործում ևս նկատվում էին էական թերություններ:

Հայրենադարձների հիմնական զանգվածը տեղավորվում էր Կիրովականում, Լենինականում, Հրազդանում, Զարենցավանում և Աբովյանում: Դա պայմանավորված էր նրանով, որ այդ քաղաքները, լինելով արդյունաբերական խոշոր կենտրոններ, հնարավորություն էին ընձեռում հաջողությամբ լուծել հայրենադարձներին աշխատանքով ապահովելու խնդիրը: Սակայն համեմատաբար շոգ և ցածրադիր երկրներից (Իրան, Սիրիա, Եգիպտոս, Կիպրոս և այլն) եկող հայրենադարձների համար, կլիմայական պայմանների տեսակետից, այդ քաղաքներից մի քանիսն ունեին որոշակի անհարմարություններ: Հատկապես այդ պատճառաբանությամբ հայրենադարձության կոմիտեն շատ դիմումներ էր ստանում ներգաղթածներից՝ իրենց այլ, ավելի

տաք կամ ցածրադիր շրջաններ փոխադրելու խնդրանքով: Շատերը վկայակոչում էին զանազան հիվանդություններ, ներկայացնում բժշկական փաստաթղթեր՝ աշխատելով հիմնավորել իրենց դիմումները: Հայրենադարձներին սկզբնապես նշանակված մեկ բնակավայրից մյուսը փոխադրելու հարցերը ծագում էին նաև այլ պատճառներով՝ բարեկամական կապերի, երբեմն նաև արտադրության մեջ մասնագետներին առավել նպատակահարմար օգտագործելու նկատառումներով և այլն:

1962—1967 թվականների ընթացքում կոմիտեն հարկադրված է եղել կատարել 295 ընտանիքի (1170 մարդ) տեղափոխություն, որը, անկասկած, լրացուցիչ հոգսեր է պատճառել նրան: Նշանակված բնակավայրերից այլ տեղ փոխադրվելու մտայնության առաջացման գործում որոշակի նշանակություն ուներ նաև այն իրողությունը, որ հայրենադարձների մի մասը, եկած լինելով խոշոր քաղաքներից, ինչպես ասենք՝ Թեհրանից կամ Կահիրեից, և արդեն վարժված լինելով մեծ կենտրոններին հատուկ կյանքին, ձգտում էր անպայման հաստատվել Երևանում: Հասկանալի է, որ կոմիտեն շեր կարող բավարարել այդ կարգի բոլոր խնդրանքները, ինչը և առաջ էր բերում որոշակի զժգոհություններ: Նման փաստերից խուսափելու նպատակով կոմիտեն առաջարկում էր վերադաս օրգաններին՝ առաջիկայում պայմաններ ստեղծել ավելի մեծ թվով հայրենադարձների էջմիածնում և Արարատյան դաշտի ուրիշ վայրերում, ինչպես միածնում և Արարատյան դաշտի ուրիշ վայրերում, ինչպես նաև մայրաքաղաքին մոտիկ Աբովյանում տեղավորելու համար⁸⁶:

Նշված ժամանակաշրջանում կոմիտեի կողմից մեծ աշխատանք էր կատարվել նաև մինչև 1962 թվականը ներգաղթած և Երևանում տեղավորված հայրենադարձ ընտանիքների բնակարանային պայմանների բարելավման ուղղությամբ: Կոմիտեի կողմից ուսումնասիրվել էր շուրջ 2800 հայրենադարձ ընտանիքների բնակարանային վիճակը և դրանցից 777-ի գործերը ներկայացվել էին Երբաղսովետի գործկոմ՝ նրանց բնակարաններով արտահերթ ապահովելու համար: Մինչև 1962 թվականը եկած հայրենադարձ ընտանիքների բավարարման համար 1965—1967 թթ. ընթացքում ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի կողմից Երբաղսովետին տրամադրվել էր 28 հազար քմ բնակելի տարածություն: ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի 1964 թ. մարտին

⁸⁶ Տե՛ս նույն տեղում, թ. 1—3:

ընդունած որոշման համաձայն հանրապետության այլ քաղաքներում և ավաններում բնակվող հայրենադարձներին թույլատրվում էր ցանկության դեպքում բնակկոոպերատիվի անդամ դառնալ Երևանում:

Կուսակցական, սովետական և հասարակական կազմակերպությունների կողմից շատ բան էր արվում հանրապետության նոր քաղաքացիներին հասարակական-քաղաքական ակտիվ գործունեության մեջ ներգրավելու ուղղությամբ: Հայրենադարձներից ոմանք ընտրվել էին ՍՍՀՄ և ՀՍՍՀ գերագույն սովետների, շատերը՝ տեղական սովետների ղեկուսատներ, դարձել արտադրության առաջավորներ, գիտնականներ, մանկավարժներ, արվեստագետներ, մշակույթի տարբեր բնագավառների ճանաչված դեմքեր:

Ինչ խոսք, որ կապիտալիստական տարբեր երկրներից միանգամից սոցիալիստական հասարակարգ եկած նոր քաղաքացիների շրջանում պահանջվում էր ծավալել բազմակողմանի աշխատանք, ցույց տալ ամեն տեսակ հոգատարություն ու աջակցություն, որպեսզի նրանք կարողանային որքան հնարավոր է արագ հաղթահարել այն դժվարությունները, որոնք անխուսափելիորեն առաջանում են ընդհանրապես մի երկրից մեկ ուրիշը մշտական բնակության տեղափոխվելիս: Նաև դրանով էր բացատրվում այն փաստը, որ միայն 1966—1967 թթ. ընթացքում հայրենադարձության կոմիտեն ներգաղթածներից ստացել էր տարբեր խնդրանքներով մոտ 3 հազար դիմում⁸⁷:

Հայրենադարձության կոմիտեն բաժիններ ուներ Երևանի քաղաքային ու շրջանային սովետներում, Լենինականում և Կիրովականում, ավագ տեսուչներ Հոկտեմբերյան-Թալինում, Էջմիածին-Աշտարակում, Զարենցավանում, Հրազդանում, Աբովյան-Վեդիում և Ալավերդում, որոնց միջոցով տեղերում իրականացնում էր աշխատանքը հայրենադարձների շրջանում: Նրանց միջոցով և տեղական կուսակցական ու սովետական օրգանների օգնությամբ կոմիտեն օպերատիվ կերպով լուծում էր հայրենադարձների կենցաղային, կուլտ-մասսայական, թոշակավորման, երեխաներին մանկական ու դպրոցական հիմնարկներում տեղավորելու, հողամասեր հատկացնելու, նյութական օգնություն կազմակերպելու և բազմապիսի այլ հարցեր:

Կոմիտեի և տեղական կուսակցական ու սովետական օրգանների աշխատանքը հայրենադարձների հետ շէր ավարտվում նրանց հանրապետությունում ընդունելով, բնակարան ու աշխատանք հատկացնելով: Նրանց հետ իսկական աշխատանքը փաստորեն սկսվում էր այդ ամենից հետո: Դրանից հետո էր, որ կոմիտեն և մյուս կազմակերպությունները հայրենադարձների շրջանում տանում էին քաղաքատիրակչական և կուլտ-մասսայական աշխատանքներ, կազմակերպում էին գրողների, կոմպոզիտորների, նկարիչների, գիտնականների ու արտադրության առաջավորների հետ հանդիպումներ և այլ միջոցառումներ: Հասարակական-քաղաքական և գիտահանրամատչելի թեմաներով հայրենադարձների համար կազմակերպվում էին զեկուցումներ, զրույցներ, դասախոսություններ, էքսկուրսիաներ՝ դեպի հանրապետության տեսարժան վայրերը, արդյունաբերական ձեռնարկությունները և այլուր:

Օրինակ, տեղական կուսակցական և սովետական օրգանների հետ համատեղ կոմիտեն հայրենադարձների հետ հանդիպման երեկոներ է կազմակերպել Կիրովականում, Հոկտեմբերյանի, Թալինի և Վեդու շրջաններում, որոնց մասնակցել են նաև գիտնականներ, գրողներ, արվեստագետներ: Այդ հավաքներում խրախուսվել են իրենց լավ աշխատանքով աչքի ընկած հայրենադարձները: Վերոհիշյալ շրջաններում և Կիրովական քաղաքում նշվել է 235 հայրենադարձների հայրենանվեր աշխատանքը, որի համար նրանք արժանացել են տեղական սովետներին պատվոգրերի, ստացել դրամական պարգևներ, թանկարժեք նվերներ, առողջարաններ կամ Մոսկվա մեկնելու անվճար ուղեգրեր⁸⁸:

Հանրապետության նոր քաղաքացիներին եղբայրական վրաստանի և Ադրբեջանի տնտեսության ու մշակույթի հետ ծանոթացնելու նպատակով հայրենադարձության կոմիտեն 1968 թ. հոկտեմբերին կազմակերպեց Երևան—Թբիլիսի—Ռուսթավի—Սուխումի—Երևան և Երևան—Բաբու—Սումգայիթ—Երևան ուղերթերով «Բարեկամության» տուրիստական գնացքներ⁸⁹:

Պետք է նշել, որ հայրենադարձների շրջանում քաղաքական, դաստիարակչական և կուլտ-մասսայական աշխատանք-

⁸⁸ Տե՛ս նույն տեղում, գ. 6, թ. 67 և գ. 10, թ. 1—2:

⁸⁹ Տե՛ս նույն տեղում, ֆ. 326, ց. 2, գ. 121, թ. 40:

⁸⁷ Տե՛ս նույն տեղում, գ. 24, թ. 1—3:

ները տարվում էին կյանքի, առօրյա գործնական խնդիրների հետ սերտորեն շաղկապված, նրանց կողմից բարձրացվող և յուծում պահանջող հարցերի հետ առնչված: Օրինակ, 1967 թ. Չարենցավանում և Իջևանում հայրենադարձների հետ անցկացված զրույցներից հետո, կոմիտեի ներկայացուցիչները, շՐԶ-սովետների գործկոմների ու կուսշրջկոմների ղեկավարների հետ միասին կազմակերպել են հայրենադարձների կոլեկտիվ ընդունելություն: Այստեղ, լսելով հայրենադարձներին հուզող հարցերի մասին, համապատասխան հիմնարկ-ձեռնարկությունների միջոցով, հենց տեղում ընթացք են ստացել բնակարանով ապահովման, աշխատանքի տեղավորման, աշխատավարձի կարգավորման, թոշակավորման և այլ հարցեր⁹⁰:

ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի հանձնարարությամբ հայրենադարձության կոմիտեն և գյուղատնտեսության մինիստրությունը 1968 թ. գարնանը ուսումնասիրեցին Թալինի շրջանի Արագածի, Արտեների ու Քարակերտի և Հոկտեմբերյանի շրջանի Մայիսյան ու Մյասնիկյանի անվան սովխոզներում 1965—1966 թթ. բնակություն հաստատած հայրենադարձների նյութական-կենցաղային պայմանները: Այդ ուսումնասիրությունների արդյունքները ամփոփվեցին ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին ներկայացված զեկուցագրում, որտեղ նշվում էր, որ հայրենադարձ ընտանիքների որոշ մասը գտնվում է նյութական ոչ բարվոք վիճակում: Դրա հիմնական պատճառներից մեկն այն էր, որ այդ ընտանիքները բազմանդամ էին, մեծ մասամբ անշափահաս երեխաներ ունեցող, իսկ աշխատունակները մեկ-երկու հոգի, որոնց եկամուտները չէին կարող լիովին բավարարել նրանց կարիքները: Այդպիսի ընտանիքների թիվը նշված սովխոզներում 23 էր, որոնց ցույց էր տրվել նյութական-դրամական օգնություն: Թեպետ բոլորին հատկացվել էին տնամերձ հողամասեր, սակայն շատերը չէին մշակում, պատճառաբանելով, թե դրանք հեռու են բնակավայրերից, իրենք ապրում են բազմահարկ շենքերում, ուստի հարմար չեն իրենց համար և այլն: Այդ ընտանիքները չունեին նաև անասուններ: Ուսումնասիրության ընթացքում խիստ կարիքավորներին ցույց տրվեց 1200 ռուբլի դրամական օգնություն: Արտեներում 20 ընտանիքների հատկացվեցին երկհարկաձի տներ՝ կից հողամասերով: Քարակեր-

տի սովխոզում 24 հայրենադարձ ընտանիքների համար հանձնարարվեց կառուցել նույնպես երկհարկանի առանձնատներ, կից հողամասերով: Հաշվի առնվեցին նաև անասուն պահելու ցանկություն հայտնած տնտեսությունները՝ նրանց անասուններ հատկացնելու համար⁹¹:

Հայրենադարձության հանձնաժողովը 1968 թ. մայիսի 13-ի իր նիստում լսեց հայրենադարձության կոմիտեի նախագահի հաղորդումը այդ միջոցառումների կատարման ընթացքի մասին և հավանություն տվեց դրանց⁹²:

ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը 1968 թ. հունիսի 5-ին հատուկ կարգադրություն արեց 1964—1966 թթ. հայրենիք վերադարձած և էջմիածնի, Հոկտեմբերյանի, Թալինի, Աշտարակի շրջանների սովխոզներում բնակվող հայրենադարձներին լրացուցիչ օգնություն ցույց տալու մասին: Այդ կարգադրությամբ հանձնարարվեց ՀՍՍՀ գյուղատնտեսության և գյուղական շինարարության մինիստրություններին՝ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել 1968 թ. շահագործման հանձնվելիք երկհարկանի տների ժամանակին կառուցման համար և դրանք հատկացնել 1964—1966 թթ. հայրենիք ժամանած հայրենադարձներին: Առաջարկվեց նաև արագացնել ջրմուղի երկու գծերի շահագործման հանձնումը Հոկտեմբերյանի և Թալինի շրջաններում՝ հայրենադարձների ավանները ջրով ապահովելու համար: Թույլատրվեց հայրենադարձության կոմիտեին՝ 1968 թ. Թալինի, էջմիածնի, Հոկտեմբերյանի, Արարատի և Աշտարակի շրջագործկոմներին հատկացնել 45 հազար ռուբլի՝ կարիքավոր հայրենադարձ տնտեսություններին օգնելու անասուններ ձեռք բերելու համար: Առաջարկվեց իրականացնել մի շարք ուրիշ միջոցառումներ՝ հայրենադարձներին թոշակավորելու, վառելիքով ապահովելու և այլ կարգի օգնություն կազմակերպելու ուղղությամբ⁹³:

1968 թ. դեկտեմբերի 12-ին ՀԿԿ Կենտկոմը և ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը համատեղ ընդարձակ որոշում կայացրին հայրենադարձների ընդունումն ու տեղավորումը բարելա-

⁹¹ Տե՛ս նույն տեղում, ֆ. 362, ց. 10, գ. 8, թ. 9—11:

⁹² Տե՛ս նույն տեղում, ֆ. 326, ց. 2, գ. 121, թ. 13—18:

⁹³ Տե՛ս նույն տեղում, ֆ. 362, ց. 10, գ. 10, թ. 1—3:

⁹⁰ Տե՛ս նույն տեղում:

վելու և նրանց շրջանում ավելի նպատակասլաց աշխատանքներ տանելու վերաբերյալ⁹⁴:

1969 թ. գարնանը ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի կողմից առանձնացված հատուկ բրիգադները ուսումնասիրեցին հայրենադարձների ընդունման, տեղավորման և աշխատանքով ապահովման վիճակը հանրապետությունում: Այդ բրիգադները մեծ աշխատանք կատարեցին ոչ միայն տեղերում իրական պատկերը պարզելու իմաստով, այլև գործնական օգնություն ցույց տվեցին գոյություն ունեցող թերությունների վերացման ուղղությամբ: Հայրենադարձության հանձնաժողովը 1969 թ. մայիսի 14-ի նիստում, շահագրգռված կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ, քննարկեց այդ բրիգադների կատարած ուսումնասիրությունների արդյունքները և հանձնարարեց համապատասխան գործկոմների նախագահներին ու սովխոզների շիրեկտորներին՝ կարճ ժամկետում ավարտել հայրենադարձների համար կառուցվող շենքերի շինարարությունը և լուծել նրանց աշխատանքի տեղավորման հարցերը⁹⁵: ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահությունը հավանություն տվեց հայրենադարձներին նյութական օգնություն կազմակերպելու և նրանց կուլտուր-կենցաղային սպասարկումը քարելավելու վերաբերյալ հանձնաժողովի մշակած ծրագրին և միջոցներ հատկացրեց դրա իրականացման համար⁹⁶:

Ինչպես վկայում են հայրենադարձության կոմիտեի Լենինականի, Կիրովականի և Հոկտեմբերյանի լիազորների 1969 թ. կազմած զեկուցագրերը՝ հայրենադարձների շրջանում տարվող աշխատանքների մասին, տեղերում սովետական և տնտեսական կազմակերպությունները լրացուցիչ մի շարք արտոնություններ էին սահմանել սովետական նոր քաղաքացիների համար⁹⁷: Այսպես, Կիրովականի քաղսովետի գործկոմի որոշմամբ 1968—69 թթ. հայրենիք ժամանածները ազատվել էին կոմունալ բոլոր վարձերից՝ բնակարանի, ջրի, գազի, ջեռուցման և այլն: Որոշ հիմնարկ-ձեռնարկություններ իրենց մոտ աշխատող հայրենադարձներին հատկացրել էին կահույք և այլ իրեր⁹⁸:

1964—1969 թթ. ընթացքում Հոկտեմբերյանի շրջանի յոթ սովխոզներում բնակություն հաստատած 150 հայրենադարձ ընտանիքների (862 մարդ) համար ձեռնարկությունների ադմինիստրացիայի օգնությամբ գնվել էին մանր և խոշոր եղջերավոր անասուններ⁹⁹:

1968 թ. մայիսին հայրենադարձության կոմիտեի հանձնաժողովի կողմից ստուգվեցին նաև Լենինականում բնակվող հայրենադարձների բնակ-կենցաղային և աշխատանքային պայմանները: Ստուգող հանձնաժողովը պարզեց, որ հայրենադարձների բնակարանային հարցերը համեմատաբար լավ են լուծված, սակայն աշխատանքով ապահովելու գործում, մասնավորապես վարորդների աշխատանքի տեղավորման գործում, կան որոշ դժվարություններ:

Հիվ Լենինականի քաղկոմը 1966—1968 թթ. ընթացքում երկու անգամ անդրադարձել էր հայրենադարձների հարցին, կազմել էր հատուկ հանձնաժողով՝ նրանց շրջանում տարվող աշխատանքները զլխավորելու համար: Սակայն այդ հանձնաժողովը միայն մեկ նիստ էր ունեցել և փաստորեն ոչ մի ծրագրված աշխատանք չէր կատարել: Լենինականի քաղսովետի գործկոմը երեք անգամ քննել էր հայրենադարձների ընդունման և տեղավորման հարցերը, բացահայտել այդ գործում եղած թերությունները և համապատասխան կազմակերպություններին տվել կոնկրետ հանձնարարություններ ու առաջադրանքներ:

Ստուգող հանձնաժողովը լուրջ թերություններ բացահայտեց հատկապես Լենինտրեստի կողմից հայրենադարձների համար Անտառավան և Նոր Ավան թաղամասերում կառուցվող շենքերում, որոնք անորակ էին, շենքերի բակերն ու ճանապարհները անբարեկարգ և այլն:

Հայրենադարձների կուլտուսպասարկումը օրինակելիորեն էր կազմակերպված հատկապես Անտառավանի կուլտուրայի տան Գրիգոր Զոհրապի անվան գրադարանում: Այստեղ հաճախակի կազմակենսավում էին դասախոսություններ, զեկուցումներ, լրույցներ, շարք ու պատասխանի երեկոներ, գրքերի քննարկումներ, հետաքրքիր հանդիպումներ և այլն:

Դպրոցական Լրեխանների մեծ մասին տրվել էր հազուստ, 1—4-րդ դասարանների բոլոր աշակերտներին՝ ձրի սնունդ,

⁹⁴ Տե՛ս նույն տեղում, գ. 13, թ. 2:

⁹⁵ Տե՛ս նույն տեղում, ֆ. 326, ց. 2, գ. 131, թ. 13—15:

⁹⁶ Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 380:

⁹⁷ Տե՛ս նույն տեղում, ֆ. 362, ց. 10, գ. 13:

⁹⁸ Տե՛ս նույն տեղում, գ. 13, թ. 7—8:

⁹⁹ Տե՛ս նույն տեղում, գ. 10, թ. 1—2:

դասագրքեր և գրենական պիտույքներ: Լենքաղսովետի գործկոմի 1966 թ. ապրիլի 22-ի որոշմամբ դիշերթիկ դպրոցներում սովորող հայրենագարձ երեխաները երկու տարով աղատվել էին ուսման վարձից:

Հանձնաժողովը միաժամանակ արձանագրեց, որ Լենքաղսովետի գործկոմը դրամական միջոցների մեծ մասը տվել է որպես միանվագ օգնություն և չի ապահովել հայրենագարձների համար մահճակալներ, սեղաններ, աթոռներ և այլ տեսակի տնային գույք ու կահույք գնելու առաջադրանքների կատարումը: Օրինակ, 1967 թ. հայրենագարձության կոմիտեի կողմից Լենինականին հատկացված 8600 ռուբլուց 5757 ռուբլին բաշխել էր որպես օգնություն¹⁰⁰:

1969 թ. հունիսի 17-ին հայրենագարձության հանձնաժողովը քննարկեց հայրենագարձների բնակարանային ապահովածություն հարցը և արձանագրեց, որ այդ գործում դեռևս գոյություն ունեն որոշակի թերություններ: Այսպես, Աբովյան քաղաքում բնակարանով դեռևս ապահովված չէին 36 հայրենագարձ ընտանիքներ, իսկ 34-ը բավարարված էին ժամանակավորապես: Այդ 70 ընտանիքներին բնակարանով ապահովելու համար անհրաժեշտ էր 3020 քմ բնակտարածություն: Աբովյանի քաղսովետի հայտարարության համաձայն 36 ընտանիքի բավարարման հարցը պետք է լուծվեր մեկ շաբաթվա, իսկ մնացած 34-ինը՝ երկու ամսվա ընթացքում: Լենինականում բոլոր հայրենագարձները ստացել էին բնակարաններ. սակայն 17 ընտանիքներ դեռևս բավարարված չէին իրենց հասանելիք նորմալի շահով, որը պետք է կատարվեր կարճ ժամանակամիջոցում: Կիրովականում 17 ընտանիքներ տեղավորված էին ժամանակավոր բնակարաններում, իսկ 3-ը՝ ազգականների մոտ: Չարենցավանում 5 ընտանիքներ տեղավորված էին ժամանակավոր բնակարաններում, իսկ 18-ը՝ ազգականների մոտ: Հրազդանում 27 ընտանիքներ նույնպես տեղավորվել էին ժամանակավորապես, իսկ 9-ը՝ ազգականների մոտ: Աշտարակում դեռևս բնակարան չէր հատկացված 5 ընտանիքի: Հայրենագարձության հանձնաժողովը առաջարկեց նշված քաղսովետների գործկոմներին՝ կարճ ժամկետներում հայրենագարձ ընտանիքներին ապահովել համապատասխան բնակտարածու-

թյամբ և հուլիսի սկզբին անդրադառնալ այդ հանձնարարության կատարման ընթացքին¹⁰¹:

1969 թ. մայիսի 23-ին ՀԿԿ Կենտկոմի քարտուղարությունը նույնպես անդրադարձավ արտասահմանից վերադարձող հայերի ընդունման, տեղավորման և աշխատանքով ապահովման հարցերին և այդ մասին ընդունեց կոնկրետ որոշում¹⁰²:

1969 թ. սեպտեմբերի 18-ին հայրենագարձության կառավարական հանձնաժողովը լսեց հայրենագարձության կոմիտեի հաղորդումը ՀԿԿ Կենտկոմի քարտուղարության վերոհիշյալ որոշման կատարման ընթացքի մասին: Հանձնաժողովը արձանագրեց, որ Լենքաղսովետը դեռևս չի կատարել 25 հայրենագարձ ընտանիքի տեղավորման վերաբերյալ ՀԿԿ Կենտկոմի քարտուղարության հանձնարարությունը: Որոշ քաղսովետներ և շրջավանդներ նույնպես թերացել էին հայրենագարձների համար նախատեսված բնակելի շենքերը ժամանակին շահագործման հանձնելու գործում: Հանձնաժողովը կոնկրետ հանձնարարություններ տվեց հայրենագարձության կոմիտեին ու Լենինականի, Աբովյանի և այլ քաղսովետներին՝ շուտափույթ կերպով հայրենագարձներին բնակարաններով ապահովելու վերաբերյալ¹⁰³:

1970 թ. փետրվարի 25-ին հայրենագարձության հանձնաժողովը լսեց հայրենագարձության կոմիտեի նախագահի հաշվետվությունը՝ 1969 թ. ընթացքում և 1970 թ. հունվարին ժամանած հայրենագարձների ընդունման, տեղավորման և աշխատանքով ապահովման մասին:

Պարզվեց, որ դեռևս 205 հայրենագարձ ընտանիքներ ապահովված չեն բնակարանով, այդ թվում Լենինականում՝ 70, Չարենցավանում՝ 42, Հրազդանում՝ 34, Արարատում՝ 16, էջմիածնում՝ 10, Երևանում՝ 5, Արտաշատում՝ 3 և Աշտարակում՝ 2 ընտանիք: 75 ընտանիք ժամանակավորապես ապրում էր ազգականների մոտ, այդ թվում՝ Լենինականում՝ 27, Կիրովականում՝ 7, Հրազդանում՝ 17, Չարենցավանում՝ 14, էջմիածնում՝ 12, Երևանում՝ 2 ընտանիք: Բացի Կիրովականից, վերը նշված մյուս քաղսովետները 1969 թ. հատկացվելիք բնակ-

¹⁰⁰ Տե՛ս նույն տեղում, գ. 9, թ. 1—9:

¹⁰¹ Տե՛ս նույն տեղում, ֆ. 326, ց. 2, գ. 131, թ. 21—22:

¹⁰² Տե՛ս նույն տեղում, թ. 23—29:

¹⁰³ Տե՛ս նույն տեղում, թ. 39—48:

Ֆոնդի հաշվից հայրենադարձության կոմիտեին պարտք էին մնացել 5620 քմ բնակատարածություն¹⁰⁴։

Միաժամանակ արձանագրվեց, որ մի շարք տեղերում դեռևս ոչ բոլոր հայրենադարձներն են տեղավորված աշխատանքի։ Հանձնաժողովը հանձնարարեց Լենինականի, Հոկտեմբերյանի, Դիլիջանի, Չարենցավանի, Իջևանի, Ղափանի, Արարատի քաղաքային տեղերի գործկոմներին՝ 10-օրյա ժամկետում մարել իրենց պարտքերը հայրենադարձության կոմիտեին բնակֆոնդ առանձնացնելու գծով և համապատասխան աշխատանքով ապահովել բոլոր հայրենադարձներին¹⁰⁵։

Արտասահմանից հայրենիք եկածների մեջ զգալի թիվ էին կազմում անգրագետներն ու կիսագրագետները¹⁰⁶։ Ավելին. Միրիայից 1965 թ. ներգաղթածների մեծ մասը (հատկապես Ղամբուլի շրջանից եկածները), ինչպես նաև Թուրքիայից ժամանածների որոշ մասը նույնիսկ հայերեն խոսել չգիտեին։ Հայրենադարձության կոմիտեն, ժողովրդական կրթության օրգանները տեղերում կազմակերպում էին հատուկ խմբակներ մեծահասակ հայրենադարձների անգրագիտությունն ու կիսագրագիտությունը վերացնելու համար։ Հասկանալի է, որ դա նույնպես հսկայական ջանքեր ու միջոցներ պահանջող գործ էր։

Հայրենադարձների նյութական գրույթյան և նրանց շրջանում տարվող աշխատանքների հետագա բարելավման նպատակով կոմիտեն հանրապետության ղեկավար օրգաններին առաջարկում էր ավելացնել յուրաքանչյուր հայրենադարձին տրվող 30 ուրբլի միանվագ նպաստի գումարը՝ այն հասցնելով 50 ուրբլու։ Այնուհետև առաջարկվում էր հայրենիքում գրտնրվելու առաջին տարվա ընթացքում հայրենադարձներից շրջանձեղ կոմունալ ծախսերը, նրանց հիվանդության դեպքում անաշխատունակության թերթիկներով վճարել աշխատավարձի ոչ թե 50 %-ի, այլ մինիմում 80 %-ի շահով, նրանց երեխա-

ներին մանկական հիմնարկներում և վիշերթիկ դպրոցներում ընդգրկել անվճար կամ զեղչված վճարով։

Ուշադրով էր նաև զյուզական վայրերում տեղափոխվող հայրենադարձների համար 1—2 հարկանի տներ կառուցելու մասին առաջարկը, որի շնորհիվ, անշուշտ, նպաստավոր պայմաններ կստեղծվեին տնամերձ օժանդակ տնտեսություններ կազմակերպելու համար։ Կոմիտեն նպատակահարմար էր դրտնում հետագայում հայրենիք ներգաղթողներին տեղավորել հիմնականում Արարատյան դաշտի բնակավայրերում և Աբովյան քաղաքում¹⁰⁷։ Այդ առաջարկների մեծ մասը ամբողջովին կամ մասամբ հավանության արժանացավ վերադաս օրգանների կողմից և զրանց կենսագործումը զրական նշանակություն ունեցավ հայրենադարձության հետագա ընթացքի վրա։

ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր արտասահմանից վերադարձող հայերի ընդունման և տեղավորման կոմիտեն, օգտագործելով անցած տարիների րնթացքում կուտակած իր փորձը, շարունակեց ավելի կազմակերպված ձևով իրականացնել սիյուրբահայերի հայրենադարձությունը։ Այսպես, 1968 թվականին անհատական վիզաներով հայրենիք եկավ 482 ընտանիք (2350 մարդ)։ Հայրենադարձների մեծ մասը՝ 452 ընտանիք (2254 մարդ) եկավ Իրանից, 9 ընտանիք (30 մարդ)՝ Լիբանանից, 6 ընտանիք (15 մարդ)՝ Ֆրանսիայից, 4 ընտանիք (14 մարդ)՝ Իրաքից, 2 ընտանիք (2 մարդ)՝ Հունաստանից, 2 ընտանիք (2 մարդ)՝ ԱՄՆ-ից, 6 ընտանիք (31 մարդ)՝ Թուրքիայից, 1 ընտանիք (2 մարդ)՝ ԵԱՀ-ից։ Հայրենադարձների ընդունման և տեղավորման վրա 1968 թ. կատարված ծախսը կազմել է 242887 ուրբլի¹⁰⁸։ 1968 թ. ժամանած հայրենադարձներին բնակարաններով ապահովելու նպատակով ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի և ՀԱՄՆ-ի համատեղ որոշմամբ հանրապետության տարբեր քաղաքներում և սովխոզային ավաններում հայրենադարձության կոմիտեին հատկացվել է 27750 քմ բնակատարածություն¹⁰⁹։

1969 թվականին, դարձյալ անհատական վիզաներով, հայերենիք եկավ 896 ընտանիք (4516 մարդ), որից 857 ընտանիք

¹⁰⁴ Տե՛ս նույն տեղում, գ. 143, թ. 4—9։

¹⁰⁵ Տե՛ս նույն տեղում։

¹⁰⁶ Տե՛ս ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր արտասահմանից վերադարձող հայերի ընդունման և տեղավորման կոմիտեի րնթացիկ արխիվ, «Տեղեկություններ 1962—1982 թթ. կատարված հայրենադարձության մասին» գործը։

¹⁰⁷ Տե՛ս ՀՍՍՀ ՀՍՍՀ ՊԿԱ, ֆ. 362, ց. 10, գ. 33, թ. 15—16։

¹⁰⁸ Տե՛ս նույն տեղում։

¹⁰⁹ Տե՛ս նույն տեղում, գ. 10, թ. 5։

(4365 մարդ) Իրանից, 2 ընտանիք (2 մարդ) ԵԱՀ-ից, 12 ընտանիք (30 մարդ) Լիբանանից, 12 ընտանիք (67 մարդ) Իրաքից, 1 ընտանիք (1 մարդ) Ֆրանսիայից, 10 ընտանիք (48 մարդ) Թուրքիայից, 1 ընտանիք (2 մարդ) Լիբիայից, 1 ընտանիք (1 մարդ) Կանադայից: Հայրենադարձության գծով 1969 թ. ծախսվել է 456265 ուրբլի, որից 70003 ուրբլի տրվել է հայրենադարձներին որպես օգնություն¹¹⁰:

Ինչպես ցույց են տալիս բերված թվերը, ամենամեծ թվով հայրենադարձություն կատարվել էր Իրանից: Եվ եթե չլիներ իրանական իշխանությունների կողմից տարբեր պատճառաբանություններով խոչընդոտների հարուցումը հայերի հայրենիք մեկնելու ձևակերպումների գործում, ապա ավելի մեծ կլիներ իրանահայ հայրենադարձների թիվը: Այդ խոչընդոտների հաղթահարման ուղղությամբ շատ ջանքեր են գործադրել Իրանում ՍՍՀՄ դեսպանությունը, նրա հյուպատոսական բաժինը և ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի Իրանում հայրենադարձության գծով ներկայացուցիչները¹¹¹:

Հայրենիք մեկնելու համար իրենց փաստաթղթերի ձևակերպման ժամանակ հատկապես մեծ դժվարություններ էին կրում Իրանի գյուղական շրջաններում սպորող հայերը: Այդ են վկայում Սպահանի նահանգի Հեղարչերիբ, Բոլորան, Շուրիշկան և այլ գյուղերի հայ բնակիչների կրած տառապանքները: Լուրջ խոչընդոտների էին հանդիպում նաև Քավրիզում, Ղարաղաղում և այլուր ապրող հայերը¹¹²:

Իրանում ՍՍՀՄ դեսպանության հյուպատոսական բաժնի վարիչ Ի. Կալիտայի 1967 թ. օգոստոսի հաղորդման համաձայն, մինչև 1966 թվականը իրանական հպատակությունից դուրս գալու համար պահանջվում էր 1—2 տարի ժամանակ: ՍՍՀՄ դեսպանության գործադրած ջանքերի շնորհիվ համեմատաբար դյուրացվեց այդ պրոցեդուրան՝ դառնալով 5—6 ամիս, սակայն շարունակում էր մնալ որպես բավականին բարդ և նույնիսկ ստորացուցիչ ու վիրավորական մի արարողություն:

Քանի այն էր, որ ըստ գոյություն ունեցող օրենքների, իրանական հպատակությունից դուրս գալ ցանկացող ամեն մի քա-

ղաքացի պետք է Մինիստրների խորհրդի անունով դիմում ներկայացներ և մուծեր 25 թուման գումար: Սովետական դեսպանության գործադրած ջանքերի շնորհիվ դեռևս 1946 թվականին հայերն ազատվել էին այդ գումարը վճարելուց և կարող էին դիմել ուղղակի ոստիկանական գլխավոր վարչություն: ՀՍՍՀ մեկնողներին թույլատրվել էր նաև առանց մաքսային տուրքեր ու հարկեր վճարելու իրենց հետ տանել մինչև 50000 դիարի շարժական գույք: Նշված գումարից ավելի արժեցող գույքը ենթակա էր մաքսային տուրքի¹¹³: Սակայն 60-ական թվականներին, հայերի հայրենադարձությունը արգելակելու նպատակով, իրանական իշխանությունները սկսեցին դարձյալ արհեստականորեն բարդացնել հպատակությունից դուրս գալու արարողությունը: Յուրաքանչյուրից, ով դիմում էր իրանական հպատակությունից դուրս գալու համար, պահանջվում էր մինչև 90 լուանկար, բոլոր հարկերի մուծման և զինվորական ծառայությունից ազատված լինելու վերաբերյալ տեղեկանքներ և այլ փաստաթղթեր: Այդ ամենի հետևանքով հպատակությունից դուրս գալու մասին դիմելու պահից մինչև հարցի վերջնական լուծումը անցնում էր առնվազն 6—7 ամիս: Փաստաթղթերի ձևակերպումը, որպես կանոն, ուղեկցվում էր փող գրով և կաշառքով: Դրա հետ մեկտեղ, հպատակությունից դուրս եկող հայերը ենթարկվում էին խտրականության և հետապնդման: Նրանց ազատում էին ծառայությունից, երեխաներին չէին ընդունում դպրոց, ոստիկանությունը նրանց տներում կատարում էր միտումնավոր խուզարկություններ, առանձին անհատների նկատմամբ սահմանվում էր հսկողություն և այլն: Անլուսանգություն օրգանների (ՍԱԿԱԿ-ի) կողմից շատ հայեր ենթարկվում էին ստորացուցիչ հարցաքննությունների, արժանանում վիրավորանքների: Հպատակությունից դուրս գալուց հետո հայերից վերցնում էին իրանական բոլոր փաստաթղթերը և ձերբակալման կամ արտաքսման սպառնալիքով նրանց առաջարկում ծայրահեղ սամանափակ ժամկետներում (7—10 օրվա ընթացքում) հեռանալ Իրանի սահմաններից¹¹⁴: Այդ պատճառով էլ սովետական դեսպանությունը հայրենադարձների խմբերը կոմպլեկտավորելու և նրանց թվի ու մասնա-

¹¹⁰ Տե՛ս նույն տեղում, գ. 35, թ 11—13:

¹¹¹ Տե՛ս նույն տեղում, գ. 11, թ. 1—3:

¹¹² Տե՛ս նույն տեղում:

¹¹³ Տե՛ս նույն տեղում, ֆ. 326, ց. 1, գ. 422, թ. 1—10:

¹¹⁴ Տե՛ս նույն տեղում, գ. 332, թ. 1—2:

գիտական կազմի մասին ժամանակին կենտրոն հաղորդելու հնարավորություն չէր ունենում: Սովետական դեսպանությունը բազմիցս դիմել էր իրանական կառավարությանը այդ և այլ խոչընդոտներ վերացնելու մասին: Հենց այդ հետևողական ջանքերի շնորհիվ էր, որ այնուամենայնիվ հաջողվեց Իրանից հայրենադարձնել մեծ թվով հայերի¹¹⁵:

Սակայն, ինչպես նշված է ՀՍՍՀ արտաքին գործերի մինիստրության 1970 թվականի տարեկան հաշվետվության մեջ, 60-ական թվականների վերջերից, միջազգային իրադրության սրմամբ և հայերի հայրենադարձության նկատմամբ մի շարք երկրների կառավարող շրջանների բացասական վերաբերմունքի հետևանքով, գործնականորեն անհնարին դարձավ սփյուռքահայերի գանգվածային հայրենադարձության իրականացումը: Մինևույն ժամանակ, հաշվի առնելով բազմաձև դար սփյուռքահայերի հայրենիք վերադառնալու անկեղծ ձգտումը, միութենական ինստանցիաները թույլատրեցին ՀՍՍՀ կառավարությանը՝ շարունակել արտասահմանյան երկրներից հայերի հայրենադարձությունը ոչ մեծ խմբերով և անհատական կարգով¹¹⁶:

1970 թվականին հայրենադարձվել է 812 ընտանիք (4019 մարդ) այդ թվում՝ 766 ընտանիք (3836 մարդ)՝ ոչ մեծ խմբերով և 46 ընտանիք (253 մարդ)՝ անհատական կարգով: Խմբակային հայրենադարձությունը իրականացվել է միայն Իրանից՝ 766 ընտանիք (3836 մարդ), որից 729 ընտանիք (3520 մարդ)՝ քաղաքային և 83 ընտանիք (493 մարդ)՝ գյուղական¹¹⁷: 1970 թ. ժամանած հայրենադարձներին բնակարաններով ապահովելու համար ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը հայրենադարձության կոմիտեին հատկացրեց 45 հազար քմ բնակարաններ, որից 38 հազարը՝ քաղաքներում և 7 հազարը՝ գյուղական վայրերում՝ սովխոզների բանավաններում: Գյուղական վայրերում տեղավորված հայրենադարձ ընտանիքներին տրամադրվեց նաև 800—1200 քմ տարածությամբ տնամերձ հողամաս՝ օժանդակ տնտեսություն ստեղծելու համար: Խիստ կարիքավոր հայրենադարձներին, ինչպես միշտ, տրվեց նյութական օգնություն, անվճար կառույց և այլն¹¹⁸:

1971 թվականին տարբեր երկրներից հայրենիք ներգաղթեց 595 ընտանիք (2885 մարդ)¹¹⁹, որից 2715 մարդ՝ Իրանից¹²⁰: 1972 թվականին ոչ մեծ խմբերով հայրենադարձություն կատարվեց միայն Իրանից՝ 535 ընտանիք (2653 մարդ), իսկ անհատական կարգով՝ 12 այլ երկրներից՝ 52 ընտանիք (81 մարդ): Այսպիսով, 1972 թ. հայրենիք է վերադարձել 567 ընտանիք (2734 մարդ), որից արական՝ 1479 հոգի, իգական՝ 1255 հոգի: Նրանց բնակարաններով ապահովելու համար ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը 1972 թ. մարտի 1-ի որոշմամբ հատկացրել էր 70100 քմ բնակատարածություն, որից 59100 քմ՝ քաղաքներում, 11000 քմ՝ սովխոզներում¹²¹: Սակայն շինարարության պլանների թերակատարման հետևանքով այդ գործում առաջացան լուրջ դժվարություններ, քանի որ առ 20-ը հունվարի 1973 թ. շահագործման էր հանձնվել ընդամենը 22750 քմ տարածություն քաղաքներում և 2400 քմ՝ սովխոզներում¹²²:

Իրանում ՍՍՀՄ դեսպանության կազմած ցուցակի չամաձայն հայրենադարձվելու համար պատրաստ սպասում էր դեռևս 12600 մարդ¹²³: Քանի որ 1973 թվականին ավարտվում էր ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի 1971 թ. հունիսի 25-ի որոշմամբ սահմանված հայրենադարձության ժամկետը, հանրապետական համապատասխան օրգանները հարց բարձրացրին միութենական կառավարության առջև՝ սփյուռքահայերի հայրենադարձության ժամկետը երկարացնելու, ինչպես նաև Իրանից եկողների տարեկան րվոտան ավելացնելու մասին¹²⁴:

ՍՍՀՄ Մինիստրների խորհուրդը 1974 թ. մայիսի 28-ին որոշում ընդունեց սփյուռքահայերի հայրենադարձությունը ոչ մեծ խմբերով և անհատական կարգով շարունակելու մասին¹²⁵: Այդ որոշման հաջող կատարման նպատակով 1974 թ. հունիսի 19-ին ՀՍՍՀ Գերագույն սովետի արտաքին գործերի մշտական հանձնաժողովը մի շարք մինիստրությունների ու կազմակերպությունների ղեկավարների և քաղսովետների ու շրջսովետ-

¹¹⁵ Տե՛ս նույն տեղում, գ. 514, թ. 3—6:

¹¹⁶ Տե՛ս նույն տեղում, գ. 564, թ. 1—36:

¹¹⁷ Տե՛ս նույն տեղում, գ. 477, թ. 1—47:

¹¹⁸ Տե՛ս նույն տեղում:

¹¹⁹ Տե՛ս նույն տեղում, գ. 547, թ. 4—6:

¹²⁰ Տե՛ս նույն տեղում, գ. 498, թ. 1—2:

¹²¹ Տե՛ս նույն տեղում, գ. 512, թ. 1—30:

¹²² Տե՛ս նույն տեղում:

¹²³ Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 162, թ. 1—5:

¹²⁴ Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 512, թ. 1—30:

¹²⁵ Տե՛ս նույն տեղում:

ներքի գործկոմների նախագահների մասնակցությամբ քննարկեց հայրենադարձների ընդունման, տեղավորման, աշխատանքով ապահովման, կուլտուր-կենցաղային պայմանների հետագա բարելավման հարցը և այդ մասին համապատասխան առաջարկներ ներկայացրեց ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահությանը, որը և ընդունեց ծավալուն որոշում¹²⁶: Նույն թվականի դեկտեմբերի 11-ին ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը նույնպես անդրադարձավ այդ հարցին և մշակեց կոնկրետ միջոցառումներ հայրենադարձների ընդունումն ու տեղավորումը բարելավելու ուղղությամբ¹²⁷: Այդ որոշման մեջ Մինիստրների խորհուրդը հատուկ կերպով ընդգծեց հայրենադարձների ընդունման և տեղավորման գործի արմատական բարելավման խիստ կարևորությունը, հայրենադարձների կուլտուր-կենցաղային սպասարկման մակարդակի բարձրացման, նրանց շրջանում տարվող քաղաքական-բացատրական և կուլտ-մասսայական աշխատանքների ուժեղացման անհրաժեշտությունը: Որոշման մեջ միաժամանակ լուրջ ուշադրություն հրավիրվեց հայրենադարձ պատանիների ու երիտասարդների ուսուցման, ինչպես նաև հասակավորների անդրագիտության ու կիսադրագիտության վերացման գործի վրա: Համապատասխան հիմնարկներին առաջարկվեց հասակավոր բնակչության համար տեղերում կազմակերպել նաև հայոց և ռուսաց լեզուների ուսուցման խմբակներ:

Հայրենադարձներին հանրապետության քաղաքներում և սովխոզներում բնակարաններով ապահովելու նպատակով, ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը 1974 թ. մայիսի 20-ի և հուլիսի 1-ի որոշումներով առանձնացրեց 15000 քմ բնակտարածություն, որից 12500 քմ՝ քաղաքներում¹²⁸:

Նախապատրաստական այս աշխատանքները կատարելուց հետո, սկսվեց հայրենադարձների ընդունումը: 1974 թ. ոչ մեծ խմբերով և անհատական կարգով հայրենադարձվեց 241 ընտանիք (1124 մարդ), որից արական՝ 601 (53,5%) և իգական՝ 523 հոգի (46,5%)¹²⁹: Կարիքավոր հայրենադարձ ընտա-

նիքներին օգնություն ցույց տալու համար հանրապետության կառավարությունը 1974 թ. բաց թողեց 35 հազար ոտբլի¹³⁰:

Քանի որ 1974 թվականից հետո տեղի ունեցած հայրենադարձության վերաբերյալ արխիվային նյութերը դեռևս վերջնականապես մշակված ու սխտեմավորված չեն, նպատակահարմար ենք համարել մեջբերել ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր արտասահմանից վերադարձող հայերի ընդունման և տեղավորման կոմիտեի ընթացիկ արխիվից ձևոր բերած աղյուսակը, որտեղ ամփոփված են տեղեկություններ 1962—1982 թթ. կատարված հայրենադարձության մասին¹³¹ (տե՛ս էջ 300):

Ինչպես երևում է աղյուսակից, 1962—1982 թթ. հայրենադարձվել է 6795 ընտանիք կամ 31920 մարդ: Ամենամեծ թվով հայրենադարձներ եկել են 1969 թվականին՝ 896 ընտանիք կամ 4516 մարդ, իսկ ամենափոքր թվով՝ 1981 թվականին՝ 35 ընտանիք կամ 140 մարդ:

Այլ տարիներին հայրենադարձություն է կատարվել 30 երկրից: Հստ առանձին երկրների հայրենադարձների թիվը հետևյալ կերպ է տեղաբաշխվում¹³².

Իրանից	5039	ընտանիք,	24283	մարդ
Միբիայից	889	»	4848	»
Եգիպտոսից	275	»	727	»
Խուրբիայից	125	»	547	»
Կիպրոսից	134	»	505	»
Լիբանանից	113	»	378	»
Իրաքից	75	»	291	»
Հունաստանից	31	»	53	»
ԱՄՆ-ից	22	»	50	»

¹³⁰ Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 564, թ 36:

¹³¹ Տե՛ս ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր արտասահմանից վերադարձող հայերի ընդունման և տեղավորման կոմիտեի ընթացիկ արխիվ, «Տեղեկություններ 1962—1982 թթ. կատարված հայրենադարձության մասին» գործը: Թեպետ մեր աշխատության ժամանակագրական վերջը 1980 թվականով է սահմանափակվում, սակայն աղյուսակը շրանդելու նպատակով մենք տրվել ենք ընդգրկել նեք մինչև 1982 թվականը:

¹³² Տե՛ս ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր արտասահմանից վերադարձող հայերի ընդունման և տեղավորման կոմիտեի ընթացիկ արխիվ, «Տեղեկություններ 1962—1982 թթ. կատարված հայրենադարձության մասին» գործը:

¹²⁶ Տե՛ս նույն տեղում, գ. 564, թ. 1—36:

¹²⁷ Տե՛ս նույն տեղում:

¹²⁸ Տե՛ս նույն տեղում:

¹²⁹ Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 194, թ. 1—5:

Տրված քանակներ

1962—1982 թթ. արտասահմանային ժամանակահատվածների մասին

Տարի	Անոց	Մարտի	Մայիսի	Յուլի	Սեպտեմբերի	Նոյեմբերի	Կրկնային		Աշխատանքների մասնագիտությունը	
							Սեպտեմբերի	Նոյեմբերի	Սեպտեմբերի	Նոյեմբերի
1962	371	757	154	227	13	409	94	—	—	—
1963	1084	2304	852	516	23	853	576	626	113	486
1964	515	1088	432	238	7	246	364	349	41	171
1965	1286	2700	1199	436	2	486	1013	349	4	118
1966	690	1423	371	247	4	164	432	156	5	118
1967	348	733	185	120	5	150	162	56	19	151
1968	1133	2350	457	359	4	415	713	186	19	290
1969	2147	4516	876	738	7	785	1415	462	155	360
1970	1937	4019	801	618	9	791	1182	558	62	465
1971	1373	2885	565	492	6	600	881	367	79	417
1972	1255	2734	757	549	11	592	846	343	155	449
1973	624	1282	259	218	11	347	369	187	63	251
1974	523	1124	220	187	12	313	293	149	51	177
1975	405	907	232	169	6	220	273	138	59	111
1976	502	922	235	184	1	168	322	143	56	153
1977	494	922	208	174	1	168	322	143	56	153
1978	500	904	170	172	5	179	286	139	48	148
1979	212	390	99	66	2	97	109	46	23	63
1980	128	241	69	40	2	57	57	39	8	29
1981	103	206	34	20	2	32	73	28	15	7
1982	79	140	31	30	6	65	23	22	8	27
1983	160	295	66	59	6	86	71	45	18	57
ԸՄԲ.	16807	31920	5067	16403	139	8045	9548	4087	997	3930

Ֆրանսիայից	33	»	71	»
Արգենտինայից	18	»	49	»
Իսրայելից	6	»	25	»
Բրազիլիայից	3	»	10	»
Ուրուգվայից	4	»	6	»
Բուլղարիայից	5	»	10	»
Քուվեյթից	5	»	13	»
Եթովպիայից	1	»	4	»
Իտալիայից	2	»	7	»
Չինաստանից	1	»	5	»
Հարավսլավիայից	1	»	6	»
Անգլիայից	1	»	1	»
Հիբիայից	1	»	2	»
Հորդանանից	2	»	14	»
Կանադայից	1	»	2	»
Ռումինիայից	2	»	2	»
Սլովատիկայից	1	»	2	»
ԳԿՀ-ից	1	»	3	»
ԳՖՀ-ից	1	»	2	»
Ավստրիայից	1	»	2	»
Շվեդիայից	1	»	2	»

Հայրենադարձները տեղավորվել են հանրապետության ավելի քան 20 քաղաքներում՝ 5933 ընտանիք կամ 27092 մարդ և վարչական 9 շրջանների (Արարատի, Արտաշատի, Աշտարակի, Նոկոնոբերյանի, Էջմիածնի, Նաիրիի, Թալինի, Հրազդանի և Ղափանի) 27 սովետոզներում՝ 862 ընտանիք կամ 4828 մարդ։ Երևանում տեղավորվել է ընդամենը 339 ընտանիք (807 մարդ), Լենինականում՝ 1278 ընտանիք (5935 մարդ), Կիրովականում՝ 1020 ընտանիք (4729 մարդ), Հրազդանում՝ 762 ընտանիք (3775 մարդ), Աբովյանում՝ 780 ընտանիք (3720 մարդ), Զահրեհավանում՝ 594 ընտանիք (2828 մարդ), Էջմիածնում՝ 262 ընտանիք (1224 մարդ), Մասիսում՝ 212 ընտանիք (1004 մարդ)։ Հայրենադարձների բնակեցումը կատարվել է հաշվի առնելով նրանց զբաղմունքը, հանրապետության ներքին հնարավորություններն ու զարգացման հեռանկարները և մի շարք այլ գործոններ։

Բավականին խայտարեկտ պատկեր է ներկայացնում

հայրենադարձների մասնագիտական կազմը: Մեծ տոկոս են կազմում արհեստավորները, այնուհետև գալիս են արդյունաբերության և արանսպորտի աշխատողները, շինարարները, առևտրի աշխատողները, ծառայողները, հողագործները և այլք:

Պետք է նշել, որ թեպետ հայրենադարձության նախորդ փուլերի հետ համեմատած 1962—1982 թթ. ներգաղթածների մեջ մեծ է կրթություն ունեցողների թիվը, այնուամենայնիվ դարձյալ շատ են կիսադրագետներն ու անգրագետները: Այսպես, 1962—1982 թթ. հայրենիք եկած զարոցական տարիքից դուրս գտնվող 17926 հայրենադարձներից կիսագրագետ էին 3346-ը և անգրագետ՝ 6208-ը¹³³: Հայրենադարձության կոմիտեն: , ժողովրդական կրթության մարմինները մեծահասակ հայրենադարձների անգրագիտությունն ու կիսադրագիտությունը վերացնելու համար տեղերում կազմակերպում էին հատուկ խմբակներ: Հասկանալի է, որ դա նույնպես հսկայական ջանքեր ու միջոցներ պահանջող գործ էր:

Ինչպես երևում է վերը բերված աղյուսակից, գնալով տարեցտարի պակասում է հայրենադարձների թիվը: Դրա պատճառներից մեկն այն է, որ վերջին տարիներին ՀՍՄՄ Մինիստրների խորհուրդը հայկական գաղթօջախների մեծ մասում չի ունեցել հայրենադարձության գծով իր ներկայացուցիչները, որոնք նախապատրաստում են սփյուռքահայերի ներգաղթը:

Երկրորդ կարևոր պատճառը արարա-խրաչելական և իրանա-իրաքյան ռազմական կոնֆլիկտներն են, որոնց նետանքով խիստ դժվարացել է մերձավորարևելյան երկրներից դանդաղվածային հայրենադարձության իրականացումը:

Գնալով նկատելիորեն պակասում է նաև գյուղացիական ընտանիքների թիվը: Օրինակ, 1972 թվականին նրանք կազմում էին հայրենադարձների ընդհանուր թվի հազիվ 1,5 տոկոսը: Բանն այն է, որ գյուղացիական ընտանիքները գալիս են հիմնականում Իրանից, որոշ չափով նաև Սիրիայից: Իրանահայ գյուղացիները հայրենիք գալու համար ցուցակագրվում են իրենց գյուղերում, սակայն, որպեսզի կարողանան շուտ հայրենադարձվել, ընտանիքներով փոխադրվում են քաղաքներ, հատկապես Թեհրան՝ իշխանության կենտրոնական օրգաններին ավելի մոտ լինելու ու իրենց հայրենադարձության հետ կապ-

ված փաստաթղթերի ձևակերպումն արագացնելու նպատակով: Սակայն քանի որ դա տևում է շատ երկար, այդ ժամանակամիջոցում նրանք՝ մասնավորապես երիտասարդները, ձեռք են բերում նոր՝ քաղաքային մասնագիտություններ և հայրենիք են գալիս արդեն որպես քաղաքաբնակներ:

Քանի որ հանրապետության վերադաս օրգանները պլանավորում են մինչև 1990 թ. տարեկան 5000, իսկ հեռանկարում՝ մինչև 2000 թվականը, տարեկան 10 հազար մարդ հայրենադարձել¹³⁴, ապա անհրաժեշտ կլինի հանրապետության հետագա զարգացման հեռանկարներից էլնելով այնպես անել, որ նրանց մեջ որոշակի կշիռ ունենա գյուղական բնակչությունը՝ նրան նոր յուրացվող հողերի վրա կազմակերպվող խաղողագործական և պտղաբուծական սովխոզներում բնակեցնելու համար: Նպատակահամար կլինի ներգաղթողներին այնուհետև հիմնականում տեղաբաշխել հանրապետության նոր աճող քաղաքներում և քաղաքատիպ ավաններում:

Սփյուռքահայերի հայրենադարձությունը կարևոր քաղաքական միջոցառում է, բավականին բարդ մի գործ, որի նախապատրաստման ու իրականացման մեջ ակտիվ դեր են կատարում արտասահմանում եղած ՍՍՀՄ դեսպանությունները, նրանց հյուպատոսական բաժինները, սփյուռքահայ գաղթօջախները մեկնող ՀՍՄՄ Մինիստրների խորհրդի հայրենադարձության գծով ներկայացուցիչները, որոնք տեղերում աշխատում են հայկական առաջադիմական կազմակերպությունների և ներգաղթին աջակցող խմբերի կամ կոմիտեների հետ սերտ համագործակցությամբ:

Ուստի միանգամայն տեղին է, որ նրանց աշխատանքը ըստ արժանավույն գնահատվում է համապատասխան օրգանների կողմից: ՀՍՄՄ Մինիստրների խորհրդին առընթեր հայրենադարձության հանձնաժողովը 1968 թ. օգոստոսին հանձնարարեց հայրենադարձության կոմիտեին՝ թանկարժեք հուշանվերներով պարգևատրել Իրանից հայրենադարձության իրականացմանը ակտիվ մասնակցություն ցուցաբերած ՍՍՀՄ դեսպանության հյուպատոսական բաժնի վարիչ Ի. Կալիտային,

133 Տե՛ս նույն տեղում:

134 Տե՛ս ՀՍՄՄ ՀՀՄՇ ՊԿԱ, ֆ. 875, ց. 4, գ. 59, թ. 59—61:

դեսպանություն կցորդներ Հ. Հովհաննիսյանին և Բ. Աբղովան-վին¹³⁵,

1962—1982 թթ. տեղի ունեցած հայրենադարձության ժամակ տարբեր երկրներում շուշ Մինիստրների խորհրդի ներկայացուցիչներ են եղել Ա. Շահինյանը, Կ. Մելքումյանը, Լ. Գևորգյանը, Ն. Մոսինյանը (Եգիպտոսում), Ա. Կիրակոսյանը, Վ. Մելիքյանը, Ա. Խաչիկյանը (Իրանում), Ն. Գասպարովը, Գ. Փահլևանյանը, Ա. Նանագուլյանը (Սիրիայում), Ա. Իսկանդարյանը, Ե. Հովհաննիսյանը (Կիպրոսում) և ուրիշներ: Նշված ժամանակաշրջանում հայրենադարձության իրականացման գործում կարևոր ավանդ են ներդրել նաև Իրանում, Եգիպտոսում, Սիրիայում, Լիբանանում, Կիպրոսում և այլ երկրներում ՍՍՀՄ դեսպաններ Ն. Պեգովը, Գ. Զայցևը, Վ. Երոֆեևը, Նիկիֆորովը, Պ. Երմոլչինը, Ա. Բարկովսկին, Տյուպատոսովյունների աշխատակիցներ Ա. Զուբովը, Լ. Նոսկովը, Ի. Կալիտան, Լ. Կոստրոմինը, Ս. Առաքելյանը, Պ. Թալալյանը, Վ. Պիսկունովը, Ա. Պրիպիսնովը, Ի. Ցարյովը, Ի. Շչերբակովը, Կ. Նովիկովը և ուրիշներ:

Պետք է հատուկ նշել, որ նախորդ փուլերի հետ համեմատած, 1962 թ. սկսված հայրենադարձությունը ավելի կազմակերպված և հաջող է իրականացվել: Առանց բացառության բոլոր հայրենադարձներն անխտիր պետության կողմից ձրիաբար ստացել են հարմարավետ բնակարաններ, ըստ իրենց մասնագիտության ժամանակին տեղավորվել են աշխատանքի, ստացել բազմապիսի օգնություն և մի շարք առանձնաշնորհումներ:

Տեղական կուսակցական, սովետական և հասարակական կազմակերպությունները սիստեմատիկ աշխատանք են տանում հայրենադարձների շրջանում: Նրանց ծանոթացնում են ՍՍՀՄ սահմանադրության, սովետական քաղաքացիների իրավունքների և պարտականությունների, մեր երկրի նվաճումների և այլ հարցերի հետ: Հայրենադարձների հետ տարվող այդ աշխատանքները տալիս են դրական արդյունքներ: Նրանք ավելի շուտ են ընտելանում նոր միջավայրին, ակտիվորեն մասնակցում իրենց կուլեկտիվների ու ամբողջ երկրի հասարակական-քաղաքական կյանքին, դառնում արտադրության առաջավորներ, հայրենի մշակույթի ճանաչված դործիչներ: Եվ բնավ պատա-

հական չէ, որ մեծ թվով հայրենադարձներ արժանացել են կառավարական պարգևների, ընտրվել ավանային, գյուղական շրջանային, քաղաքային սովետների, ինչպես նաև հանրապետության ու միութայան գերագույն սովետների դեպուտատներ:

Հայրենադարձների հանրապետական երկրորդ հավաքում, որը տեղի ունեցավ 1966 թ. ապրիլի 10-ին, Երևանում, բարձր դասատականի արժանացավ հազարավոր հայրենադարձների հայրենանվեր աշխատանքը հանրապետության կոլտնտեսային ու սովխոզային դաշտերում, արդյունաբերական ձեռնարկություններում ու շինարարության մեջ, հայրենի մշակույթի ու գիտության օջախներում:

Սոցիալիստական հայրենիքը հայրենադարձության միջոցով անսահման լայն հնարավորություններ է բացում օտարության մեջ մի կերպ իրենց գոյությունը քարշ տվող հազարավոր տարագիրների տունդարձի համար, հայրենի հողի վրա նրանց ընդունակությունների անկաշկանդ դրսևորման ու տաղանդների ծաղկման համար:

Ահա թե ինչու, արհամարհելով հայրենադարձության հայրենասիրական միջոցառման ղեմ եղած բոլոր զրպարտությունները և իրենց ճանապարհից դեն նետելով ամեն տեսակ խոչընդոտները, տարագիր հայության հողնաբեկ քարավանները աննահանջ կերպով քայլում են դեպի հայրենիք: Նրանց տունդարձի երթը շարունակվում է...

¹³⁵ Տե՛ս նույն տեղում, ֆ. 326, ց. 2, գ. 121, թ. 30—35:

**ՏԱՐԲԵՐ ԳԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՀԱՅՐԵՆԱՒԱՐՁՈՒՔՅԱՆ
ՆԿԱՏՄԱՄԻ**

Նախորդ էջերի բովանդակ շարադրանքը ակնբախ կերպով վկայում է, որ իր գոյության հենց սկզբից սովետական կառավարությունը մեծ ջանքեր է գործադրել ինչպես հանրապետությունում կուտակված արևմտահայ գաղթականության և որք ու անապաստան երեխաների հակայական զանգվածի հարցի արմատական լուծման ուղղությամբ, այնպես էլ հոգատար վերաբերմունք է դրսևորել աշխարհով մեկ ցրված սփյուռքահայության ճակատագրի նկատմամբ՝ կազմակերպելով նրա որոշ մասի հայրենադարձությունը:

Իսկ ի՞նչ էին անում այդ ուղղությամբ գաղութահայ բարեգործական հաստատությունները, քաղաքական կուսակցությունները՝ ու մյուս կազմակերպությունները: Ուղղակի պետք է ասել, որ դրանց մեծ մասը այդ հարցում միանգամայն դատապարտելի անտարբերություն ու անհոգություն էր ցուցաբերում: Գաղութահայ կազմակերպությունների նման վարքագիծը բավական հանգամանորեն քննադատվել է ժամանակի պարբերական մամուլում և բազմաթիվ անհատ գործիչների ելույթներում:

Թեպետ գաղութահայ բուրժուական ու բարեգործական շրջանները, քաջատեղյակ լինելով ժողովրդական զանգվածների պրոսոփետական տրամադրություններին, իրենց չմերկայնելու համար գրավոր ու բանավոր հաճախ էին շեփորում Սովետական Հայաստանին ու գաղթականական զանգվածներին օգնելու մասին, սակայն գործնական շոշափելի ոչինչ չէին անում: Նման վարքագծի մերկացման ու դատապարտման իմաստով խիստ բնորոշ են Հայկական բարեգործական ընդհանուր միու-

թյան կենտրոնական վարչության անդամ և 204-ի արտասահմանյան լիազոր Եսայի Կարիկյանի բազմաթիվ ելույթները, հոգվածները և խնդրո ստարկա հարցին նվիրված նրա երկու գրքույկները¹:

Ե. Կարիկյանը, որը 20-ական թվականների սկզբին եղել էր Սովետական Հայաստանում, լավատեղյակ էր այստեղ կատարվող վերափոխություններին և արևմտահայության բեկորների նկատմամբ ցուցաբերվող հոգատարությունը, վերլուծելով հայկական գաղթաշխարհի տրամադրությունները, նշում էր, որ սփյուռքահայերի «ջախջախիչ մեծամասնությունը այսօր աչքը հառած դեպի Հայաստան, մեկ բնարան միայն իրեն կրոնք քրած է՝ վերաշինություն և ներգաղթ»²: Մինչդեռ գաղութահայ բարեգործական հաստատություններն ու կազմակերպությունները, որոնք զղալի միջոցներ ունեն և ցանկության դեպքում ի վիճակի են օգնել այդ աշխատանքների իրականացմանը, դատարկահանջուն խոսքերից այն կողմ չեն անցնում և գործի չեն կալում:

Կոնկրետացնելով իր խոսքը, Ե. Կարիկյանը վկայակոչում է Հայկական բարեգործական ընդհանուր միության Գործունեությունը, որը «երկու տարի է ի վեր խոշոր սերվամներով ճամբա ելած է դեպի Հայաստան, կրալն ու կրալն և դեռ կեցած տեղն է, քալլ մը առաջ շահներ, մինչդեռ այս երկու տարվա մեջ դեպի արևմուտք հակայարալլ ճամբա կտրեց, առանց այդ մասին բառ մը ըսելու, առանց շուկ մը անգամ հանելու»³:

Այն ժամանակ, երբ հայ գաղթականների ու որբերի անունով գանազան բարեգործներ ուղղակի սղորմություններ էին հայցում ուրիշներից, Հայկական բարեգործական ընդհանուր միությունն իր ձեռքում կենտրոնացրել էր նրանց օգտին եղած մի շարք կտակներ, նվիրատվություններ ու այլ գումարներ և շոշալորեն ծախսում էր իր բազմաթիվ դրասենյակների ու պաշտոնյաների վրա: Հաշվումները ցույց են տալիս, որ միայն 1914—1922 թթ. գաղութահայ բարեգործական հաստատությունները զանազան աղբյուրներից ստացել են մոտ 10 մի-

¹ Տե՛ս Ե. Կարիկյան, Հայաստանի երկրագործական պանթան, հայ հարուստները և բարեգործական հաստատությունները, Փարիզ, 1924, նաև Եսայի՝ Կեղրոնաձիգ և կեղրոնախույս, Փարիզ, 1925:

² Ե. Կարիկյան, Կեղրոնաձիգ և կեղրոնախույս, էջ 5:

³ Նույն տեղում:

լիոն դուլաթ, մինչդեռ հանրագուտ նպատակներով ծախսել են դրա շնչին մասը⁴:

Բարեգործականի վարիչների մեծախոստում ճառերի առթիվ շատ տեղին է Ե. Կարիկյանի դիպուկ հեզնանքը. «եթե խոսքով փիլավ եփեր, ծովի շափ յուղ ալ ես կխոստանայի»⁵: Այլապես ինչով բացատրել այն փաստը, որ 1921—1924 թթ. ընթացքում Բարեգործականը արտասահմանում ծախսել էր 192700 անգլիական ոսկի, իսկ Հայաստանի սովյալներին և իր կողմից այստեղ ուղարկված որբերին հատկացրել հազիվ 8475 անգլիական ոսկի⁶:

Անդրադառնալով գաղթականությանը օգնելու նպատակով ՀՍԽՀ գյուղատնտեսական բանկի բաց թողած փոխառության իրացման հանդեպ Բարեգործականի բռնած դիրքին, Ե. Կարիկյանը բնագատում է նրան, նշելով, որ այդ «երկրագործական պանքան այսօր բացեր է յուր ազքատիկ արկղը, մեր գաղթականներուն: փոխառություն կրնե, անոնց բա՛ ու բրիչ կուտա, որ իրենց արտերը մշակեն, ապրեն ու ապրեցնեն իրենները, ասոր վկա է մեր ամբողջ մամուլը, մինչ անգին կեզը. վարչությունդ շայ գաղթականին լումաները կհավաքե, օտար երկրագործներու փոխ կուտա և տոկոսներով կուտցնե բարեգործականի սնտուկը և կթուզու, որ այդ պանդխտին հեռավոր եղբայրն ու անոր երեխաները վզերնին ծռած ուրիշին դուռը ափերին բանան պատառ մը հաց մուրալու:

Թող Բարեգործականը հայեն հավաքե, օտարին օգնե, այդ պանդուխտ հայը, որ դոնե դուռ ընկեր է, այսօր լքված ու մուրացկան անտեր չէ բոլորովին... Նա ունի հայրենիքի մեջ միլիոն մը եղբայրներ ու բույրեր, որ անդադար կաշխատին վերականգնելու (երկիրը), հեռու չէ օրը, որ անոնք ոտքի կկլենն ու ձեռք կերկարեն իրենց հեռավոր եղբայրներուն ու բույրերուն ալ և կ'անեն գիրենք այս դժբախտ օրերեն...»⁷:

Շոշափելի գրեթե ոչինչ շանկով, գաղութահայ բուրժուական խավերը միաժամանակ շատ էին թմբկահարում Սովետական Հայաստանին իրենց ցույց տված «օգնության» մասին:

⁴ ՏԷՍ ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 178, գ. 66, թ. 66—68:

⁵ Ե. Կարիկյան, Կեդրոնաձիգ և կեդրոնախույս, էջ 14:

⁶ Նույն տեղում, էջ 6:

⁷ Նույն տեղում, էջ 15:

Արտասահմանից ստացած «օգնության» մասին իրական գաղափար կազմելու համար ավելորդ չի լինի ծանոթանալ մի ոմն մեծահարուստ Արրահամ Բոյաջյանի «բարեգործության» պատմությանը. որը խիստ բնորոշ ու զավեշտական փաստ է այդ տեսակետից:

1924 թ. գարնանը վիեննաբնակ գորգավաճառ Աբր. Բոյաջյանը հանկարծ ցանկություն է հայտնում Հայաստանում բացել մեղվաբուծական դպրոց: Շուտով նրա ներկայացուցիչը գալիս է Հայաստան և 204-ի կենտրոնական վարչության հետ կնքում նամաձայնագիր՝ Ստեփանավանում այդպիսի դպրոց հիմնելու մասին: Ըստ պայմանավորվածության, Բոյաջյանը նախնական ծախսերի համար հատկացնելու էր 11 հազար ուրլի, իսկ արևուհետև՝ տարեկան 3700 ուրլի, մինչև որ զարոցը ինքնաբաժ դառնար: Այդ «լոնաբերության» դիմաց նա պահանջում էր ուսումնարանի շենքի նախատին մեծ-մեծ տառերով գրել՝ «Մեղվաբուծական դպրոց: Տուն Ա. Բոյաջյանի» և իր մեծադիր լուսանկարը կախել դպրոցի դռնի առջև ընկնող տեղում, դպրոցում պահել մի դռնապան, որն իր գլխին ունենա «Բոյաջյան» ազգանունը կրող գլխարկ⁸:

Խոստացված նախնական գումարից միայն հազար ուրլի նրա ներկայացուցիչը ծախսեց հատկացված շենքի վերանորոգման վրա, վիեննայից ստացվեց Բոյաջյանի մեծադիր նկատորը, որը փակցվեց դռնի առջև ընկնող տեղում, դպրոցի նախատին մեծ-մեծ տառերով գրվեց նրա անունը, բայց «բարեբարից» այլևս ոչ մի տեղեկություն չստացվեց: Գործին լավատեղյակ շրջանների վիպյությունը, այդ խորհրդավոր լուսության պատճառը դպրոցում ժամացույց դնելն է եղել, որը «խիստ զայրացրել է» Բոյաջյանին: Հետագա տեղեկությունները ցույց տվեցին, որ բարեգործի հուշակր Բոյաջյանին պարզապես հարկավոր է եղել ինչ-որ շահագրիտական գործի հաջողությունն ապահովելու համար: Այդ գործարքը գլուխ բերելուց հետո Բոյաջյանը «մոռացավ» իր հանձնառությունը:

Արտասահմանում Սովետական Հայաստանի հմայքը և նրան աջակցող կազմակերպությունների ու անձանց ժողովրդականությունը այնքան մեծ էին, որ անգամ գաղութահայ բուր-

⁸ ՏԷՍ ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 178, գ. 35, թ. 1—22, նակ՝ Ալ. Մարտունի, Կուսակցությունները գաղութահայության մեջ, էջ 21:

ժուական խավերի որոշ ներկայացուցիչներ, «հանուն իրենց գործերի հաջողության», մեր երկրի հետ երբեմն համաձայնության ելը էին փնտրում և փորձում «աղնիվ բարեբարի» անուն վաստակել:

Դժվար չէ նկատել, որ արտասահմանյան բարեգործական որոշ հաստատություններ ու անհատներ հայրենիքին օգնելու, գաղթականության ու սրբերի վիճակը թեթևացնելու հարցերը փաստորեն միտումնավոր կերպով շահագործում էին որպես հավելյալ եկամտի աղբյուր:

Այդ իմաստով ուղղակի դատապարտելի էր դաշնակցության գործունեությունը: Դաշնակցական վերնախավերը, օրինական ոչ մի իրավունք չունեցող «Հ. Հ. պատվիրակությունը» և այլ հաստատություններ իրենց գոյությունը պահում էին հայրահեղ թշվառության մատնված գաղթականության ու որբերի հաշվին: Ուստի պատահական չէր, որ այդ հաստատությունների վարիչներն իրենց գոյությունը երկարաձգելու նպատակով գաղութահայ աշխատավորությանը մղում էին նորանոր արկածախնդրությունների: Այդ է վկայում թեկուզ 20-ական թվականներին դաշնակցության առաջ քաշած աշպես կոչված «էքստերիտորիալ հայկական կառավարություն» կամ «գաղութահայ կենտրոնական վարչություն» ստեղծելու ցնորամիտ գաղափարը: Ըստ էության այդ վարչությունը պետք է հանդիսանար գաղութահայության միակ ղեկավար օրգանը, որի համար կարևոր չէր ունենալ որոշակի տերիտորիա, այլ՝ վարչական ապարատ, ուր տաքուկ պաշտոններ կստանային երբեմնի նախարար-դաշնակցականները⁹:

Պողոս Նուպարի, ապա Գաբրիել Նորատունկյանի գլխավորած Աղզային պատվիրակությունը 1924 թ. նոյեմբերի 30-ին մի հայտարարությամբ դադարեցրեց իր գոյությունը, ավելի ճիշտ՝ պարզապես անվանափոխությամբ փակեց իր քաղաքական խանութը և փոխարենը բացեց գաղթականական մի կերպակ՝ «Հայ գաղթականաց կենտրոնական հանձնախումբ» ցուցանակի տակ: Այդ հանձնախմբի կնքահայրերի հայտարարությանը հավատարիվ, կարելի էր ենթադրել, որ դա արվում էր «գաղթականներու ու որբերու ընթացիկ խնդիրները անխնամ

չթողնելու համար»¹⁰: Բայց իրականում նրա հեղինակները հետապնդում էին գաղթականների անունը շահագործելու միջոցով իրենց գոյությունը արդարացնելու և երկարաձգելու նպատակ:

Սակայն, բարեբախտաբար, գաղութահայ ժողովրդական զանգվածներն այլևս չէին հետևում նրանց խաղերին, երես էին դարձրել նրանցից և մեկընդմիջտ ապավինել Սովետական Հայաստանին, որն իր բոլոր հնարավորությունները, ուժերն ու եռանդը գործադրում էր գաղթականության հարցը արմատապես լուծելու օգտին:

Սփյուռքահայ աշխատավորության և առաջադիմական բոլոր ուժերի քաղաքական-դասակարգային հասունության ցայտուն վկայությունը եղավ 1924 թ. սեպտեմբերի 1-ին Ժ. կումբացված հայասիրական միջազգային կոնֆերանսին հայտարարված բոլկոտը: Դեռևս 1924 թ. հուլիսին Հայաստանի միջազգային ընկերությունն իր նախագահ Էդվարդ Նավիլի ու բարտուղար Քրավթ Բոնարի ստորագրությամբ մի կողմ էր հզել բոլոր հայկական գաղութները, հայնպաստ կազմակերպություններին ու մասնավոր անձանց, հրավիրելով մասնակցել սեպտեմբերի 1-ին ժնկումբացվող հայասիրական միջազգային կոնֆերանսին: Կոնֆերանսի գլխավոր ղեկավարներն էր լինելու հայ գաղթականների ու որբերի, ինչպես նաև մոտ 50 հազար տարագիրների Սովետական Հայաստան տեղափոխելու խնդիրը: Սակայն կոնֆերանսի կազմակերպիչները «մոռացել» էին հրավեր ուղարկել նաև սովետական կառավարությանը: Գաղտնիք չէր, որ կոնֆերանսի հրավիրման իսկական նախաձեռնողները դաշնակներն էին: Դրանով նրանք փաստորեն ձգտում էին իրականացնել համագաղութային համագումար հրավիրելու բազմիցս ձախողված իրենց փորձերը, իսկ «հայասեր» նավիլիներն ու բոնարները սոսկ գործիք էին դարձել նրանց ձեռքին: Փամանակին կուսակցի գաղութահայության ղեկավարությունն իրենց ձեռքը գցելու դաշնակցական վնասակար խաղերի իմաստը, սփյուռքահայ առաջադիմական բոլոր կազմակերպություններն ու հոսանքները վճռական բողոք հայտնեցին նման կոնֆերանսի հրավիրման դեմ և հրաժարվեցին մասնակցել նրա աշխատանքներին: Ամեն կողմից մեկուսացված դաշնակներն ու նրանց «պատվարժան հայասերները», մի քանի օրվա վշտա-

⁹ Տե՛ս ՆՍՍՀ ԶՆՍԾ ՊԿԱ, ֆ. 178, գ. 66, թ. 66—88:

¹⁰ Տե՛ս «Մարմարա», օրաթերթ, Կ. Պոլիս, 23 դեկտեմբերի, 1924, № 50:

բեկ գրույցներից հետո, առանց որևէ արդյունքի հասնելու, ստիպված եղան դադարեցնել կոնֆերանսի աշխատանքները¹¹։

Սփյուռքահայ առաջադիմական ուժերն իրենց այդ վերաբերմունքով վերջնականապես ցույց տվեցին, որ գաղթականության անունից խոսելու իրավունքը պատկանում է միայն ու միայն իրենց՝ անլուր տառապանքների մեջ գտնվող հայ տարագիրներին և սովետական կառավարությանը, որը ոչ թե դատարկահնչյուն խոսքերով, այլ ունի գործերով է ապացուցում նրանց դեպերումներին ու թշվառություններին վերջ տալու իր անկեղծ պատրաստակամությունը։

Եվ բնավ պատահական չէր, որ ինչքան ավելի էր ուժեղանում սովետական կառավարության ուշադրությունը հայ տարագիրների նկատմամբ և կազմակերպվում էր նրանց ոչոչ մասի հայրենադարձությունը, այնքան ավելի կատաղի ու շարանենդ էր դառնում դաշնակիների ու մյուս թշնամական հոսանքների պայքարը բնդդեմ Սովետական Հայաստանի։ Նրանք ձգտում էին խանգարել հայրենադարձության իրականացմանը, վարկաբեկել Սովետական Հայաստանը, ժխտել երկրում ծավալված սոցիալիստական շինարարությունը, մոլորության մեջ գցել գաղութահայ զանգվածներին և այլն։

1924 թ. մայիսին Կ. Պոլսից ՀՍԽՀ Ժողովոմխորհին ուղարկած իր դեկուցագրում Գ. Շահվերդյանը հայտնում էր, որ «գաղթականների փոխադրությունը (Հայաստան) ժողովրդական մասսաների մեջ մեծ հետաքրքրություն է առաջացրել ինչպես այստեղ, այնպես էլ մյուս գաղութներում։ Բայց վարիչ մարմինները (ակնարկում է գաղթականական ու բարեգործական ազգային հաստատությունների ղեկավար օրգանները.—Ն. Մ.) այնքան էլ գոհ չեն այդ փոխադրությունից։ Բանն այն է, որ արտասահմանի բոլոր մարմինները ապրում են գաղթականներով և որբերով, սրանցով են արդարացնում իրենց գոյության իմաստը, սրանց շնորհիվ են ստանում պաշտոններ ու ապրուստի միջոցներ և այլն։ Այսպիսի պայմանների շնորհիվ է, որ դեկավարները փոխել են իրենց դիրքերը։

Եթե առաջ աշխատում էին ամեն կերպ գաղթականներին ուղարկել Հայաստան, ներկայիս չեն ուղում մատը մատին

խփել այդ գործին նյութական օժանդակություն հասցնելու համար։ Ծիբա է, հողվածներ են գրում, ժողովներ են գումարում, ծրագրեր են կազմում և այլն։ Բայց այդ բոլորն առերևու, ներքուստ ամեն կերպ աշխատում են խանգարել գործին»¹²։

Խոսելով Սովետական Հայաստանի հակառակորդների կողմից ներգաղթի շուրջը ծավալված պայտառչական կամպանիայի մասին, Գ. Շահվերդյանը նշում է, որ ոմանք այնքան են ատելությունամբ լցված դեպի սովետական իշխանությունը, որ առաջարկում են երկրի վերաշինության ու ներգաղթի համար գաղութներում ճանգանակված գումարները շուղարկել Հայաստան, այլ օգտագործել արտասահմանում։ Իրենց շինծու պատճառաբանություններով հաճախ թե որքան ծիծաղելի վիճակի մեջ էին ընկնում այդ արկածախնդիրները, առանց մեկնաբանությունների վկայում է այն փաստը, որ Կ. Պոլսում գոյություն ունեցող ազգային իշխանությունները 1924 թ. իրենց գաղտնի ժողովներից մեկում որոշում էին կայացրել «գաղթականներին շփոխադրել Հայաստան, այլ տեղավորել Աֆրիկայում կամ Ամերիկայում, որովհետև այնտեղ կրոնը ազատ է»¹³։

Գաղթակցական մամուլի հետ միասին իր հակասովետական քարոզչությամբ և ներգաղթի դեմ ծավալած կամպանիայով այդ տարիներին աչքի էր ընկնում նաև Կ. Պոլսի անկուսակցական կամ չեզոք կոչված «Վերջին լուր» օրաթերթը։ Խեղափյուրելով իրականությունը, արևմտահայ վերնախավերի, մասնավորապես պոլսահայ առևտրական բուրժուազիայի, ձայնափող Հովհաննես Ասպետը «Վերջին լուրի» էջերից շեփոքում էր, թե Սովետական Հայաստանում «ազատություն չկա», իսկ «երբ ազատությունն անհետացած է, կմնա երկիր մը, բայց այլևս հայրենիք մը գոյություն չունի»¹⁴։

«...Պարտինք չմոռնալ, որ Երևան ո՛չ քաղաքականապես, ո՛չ տնտեսապես, ո՛չ ալ բարոյապես հայության ամբողջության համար, կամ անոր ստվարապետ մասի համար, վերջնական հայրենիք մը ճանդիսանալու պետք եղած ապահովության պայմանները չի ներկայացնել տեղավին։ Ուստի, արտասահմանի հայերուն պարտքն է հոգ տանել, որ ուրիշ բնակավայրեր, ուրիշ

¹¹ Տե՛ս «Նորհրդային Հայաստան», 1924 թ., 25 սեպտեմբերի, № 219, 2 հոկտեմբերի, № 225 և 7 հոկտեմբերի, № 229։

¹² ՀՍԽՀ ՀՊՍՇ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 54, թ. 10—11։

¹³ Նու՛յն տեղում, ֆ. 40/113, ց. 3, գ. 305, թ. 39—40։

¹⁴ «Վերջին լուր», Կ. Պոլիս, 16 հունիսի, 1924 թ., № 3133։

բույններ ալ գտնվին, իբրև առ այժմ պահեստ մեր ժողովրդին վայրավատին հատվածներուն համար:

Վերջապես, Երևան ոչ միայն քաղաքական ու տնտեսական, այլև իմացական, հոգեկան, բարոյական ավելի նուրբ տեսակետներով ալ ի վիճակի չէ գոհացնելու հայկական հայրենիքի մը իտեալը»¹⁵,— Հովհ. Ասպետին համահնչյուն ձայնակցում էր Բյուզանդ Քեչյանը: Բարեբախտաբար, վերջինս չի զլանում բացատրելու, թե ինչո՞ւ Երևանը, այսինքն՝ Սովետական Հայաստանը, չի կարող դառնալ պոլսահայ բուրժուազիայի «հայրենիքի մը իտեալը»: Բանից պարզվում է այն պատճառով, որ «այսօրվան Հայաստանին մեջ, ուր շուտով կդառնա, կըլլա պոլշեֆթոյան միջազգային ատրուշան մը», ուր իբր թե «կրակի կտրվին, կոշնչացվին հայության բոլոր սրբազան շշխարհները» և «պատվական ժողովուրդը, նամանավանդ արևմտահայ գաղութը, պետականորեն կօտարացվի հայութենե, աշխարհաքաղաքացիի լուծ տարրի մը վերածվելով»¹⁶: Ահա արևմտահայ պահպանողականների տիպիկ ներկայացուցիչ Բյուզանդ էֆենդի Քեչյանի տեսակետներն ու բարբառանքները հայ աշխատավորության սոցիալիստական հայրենիքի՝ Սովետական Հայաստանի մասին: «Զգուշանանք նաև հայության բովանդակ նյութական ու բարոյական հաստատություններն ու դրամագլուխները և բոլոր որբերն ու նոր սերունդը Երևան փոխադրել, խորհելով, որ անոնք այլուր ոչ նվազ օգտակար կրնան ըլլալ բոլոր ցեղին և ավելի ապահով»¹⁷,— գրում էր Բ. Քեչյանը՝ նակազըրվելով դադութահայ այն շրջաններին, որոնք կողմնակից էին ազգային որոշ հարստություններ Սովետական Հայաստան տեղափոխելուն:

«Իր մոլեռանդորեն կիրարկած պոլշեֆթ սկզբունքները ուրացումն են հայության բնատոհմիկ նկարագրին, անոր իսկապես ազգային հատկանիշներուն»,— շարունակում էր Բ. Քեչյանը և հրահանգում, որ հայ գաղթականներն ու որբերը շտեղափոխվեն Հայաստան: Նա առաջարկում էր՝ «ջանանք հայերը տեղավորել, ապրեցնել և կազմակերպել ուր որ կան, կամ ուր որ կրնան բնակիլ, սիրաշահելով տեղային իշխանությունը»¹⁸:

«Մեր մատաղատի ու խոստումնալից որբերը դեպի կոմսոմոլ» մի ուղարկեք, «ուր սնանին սնամեջ վարդապետություններով ու տեսակ մը «բարոյագիտությունով», և վաղվան համար պատրաստվին հալածելու իրենց հայրերուն սուրբ կրոնքը և ազգավաղելու ազգային սրբազան լեզուն»¹⁹,— քարոզում էր Հովհաննես Ասպետը:

Հայ գաղթականն ու որբը թող զնան Արգենտինա, Բրազիլիա, Ուրուգվայ, Աֆրիկայի խորքերը, բայց ոչ Երբեք Սովետական Հայաստան: Սովետական Հայաստանը հայության իսկական հայրենիքը չէ, հարկավոր է որոնել ու ստեղծել նոր հայրենիքներ— ահա այդ թշվառականների հայտնաբերած գեղատոմսը, որն առաջարկում էին աստանդական հայ գաղթականին ու որբին:

Նրանք այդպես էին վարվում ամեն անգամ: Երբ տեսնում էին, որ սովետական կառավարությունը կազմակերպում է սփյուռքահայ աշխատավորների հայրենադարձություն, հայրենիքում տեղավորում, հողով ու այլ անհրաժեշտ միջոցներով ապահովում, հոգ տանում նրանց կարիքների մասին: Իսկ երբ տնտեսական նկատառումներով, երբեմն ժամանակավորապես դադարեցվում էր ներգաղթը, դաշնակ ջուշերն ու նրանց սպավորները ամբողջ ձայնով գոռում էին, թե «փակել են դռները», թե Սովետական Հայաստանի կառավարությունը թույլ չի տալիս գաղթականությանը երկիր վերադառնալու, որովհետև չի մտածում լուծել նրա հարցը և այլ հերյուրանքներ:

Միևնույն ժամանակ փաստերը վկայում են, որ այն ժամանակ, երբ Հունաստանը, Բուլղարիան և այլ երկրներ զանգվածաբար տեղահան էին անում իրենց մոտ ապաստանած հայ տարագիրներին, երբ «մարդասեր ու ղեմովկրատական» Ամերիկայում հայերից ազատվելու համար հորինում էին ինչ-որ «կարտոզյանի գործ» և փորձում որոշել այն հարցը, թե հայերը սպիտակամորթ են թե՞ սևամորթ, և եթե սպիտակամորթ չեն, ապա չեն կարող ամերիկյան քաղաքացիներ համարվել ու Ամերիկայում ապրելու իրավունք ունենալ, այդ նույն ժամանակ Սովետական Հայաստանն ընդունում էր հաղարավոր հայ տարագիրների: Այնպես որ իբրև էր դաշնակ Ս. Մասուրյանը, նա իբրև Ս. Վրացյանը, Կ. Պոլսի ճշճղան «ճակատամարտի» էջերից սովե-

¹⁵ Նույն տեղում, 21 հունիսի, 1924 թ., № 3143:

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ Նույն տեղում:

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ Նույն տեղում, 16 հունիսի, 1924 թ., № 3138:

տական կառավարության հասցեին աղաղակում՝ թե «բացե՛ք դուռները»: Այդ կարգախոսը դաշնակները մեջտեղ էին հանել հենց այն ժամանակ, երբ սովետական կառավարությունը, ընդառաջելով սփյուռքահայ աշխատավորների ցանկություններին, հայտնել էր իր համաձայնությունը զանգվածային նոր ներգաղթ կազմակերպելու մասին, սակայն այն պայմանով, որ նախօրոք հոգացվեին հայրենադարձների ճանապարհը և որոշ ժամանակ նաև երկրում ապրելու նրանց ծախսերը:

Ս. Վրացյանն անդրադառնալով այդ հարցին, դեմագոգիկ կերպով գրում էր. «Գործնականի մեջ ասիկա կնշանակե, թե նրևանի կառավարությունը գաղթականներու առջև ամուր կը-փակե Հայաստանի դուռները, որովհետև շատ պարզ է, որ հայ գաղթականներու ճնշիչ մեծամասնությունը չի կրնար ապահովել իր «մեկ տարվան ապրուստը»²⁰: Այդ կապակցությամբ «մե-ղադրելով» սովետական կառավարությանը և շանթ ու որոտ թա-փելով նրա հասցեին, դաշնակցական գրչակն անմեղ ու միա-միտ տեսք էր ընդունում: Նա ձևացնում էր, թե բնավ գլխի չի ընկնում, որ ներգաղթողների «մեկ տարվան ապրուստը» հո-գալու խնդիրն առաջ էր քաշված արտասահմանում եղած տասն-յակ միլիոնների հասնող հայկական հարստությունները, գաղ-թականների ու որբերի հարցի շահագործումից հղիացած բա-րեգործական հաստատությունների կուտակած միջոցները և հայ ժողովրդի անունով կտակված գումարները հայրենադարձու-թյանը հատկացնելու համար: Եվ մի՞թե վրացյաններին պարզ չէր, որ սովետական կառավարությունը չէր կարող առանց ներ-գաղթողների նյութական միջոցների ապահովման մասին հո-գալու, հախուռն կերպով հայրենադարձություն կազմակերպել և նոր դժվարությունների մատնել հազարավոր տարագիրներին:

Դաշնակցությունը խիստ դժգոհություն էր հայտնում նաև այն բանի համար, որ Սովետական Հայաստանը բոլորի առաջ չէր բացում իր դռները, ուստի նրա օրգան «Ճակատամարտն» իր խմբագրականում եզրակացնում էր, որ «մեր երկիրը փակ-ված է երկաթյա փեղկերով»²¹: Այո՛, պարոնայք դաշնակցա-կանների և բոլոր նրանց համար, ովքեր անկեղծ չէին մեր հայրենիքի նկատմամբ, այլ շարամտորեն զրպարտում էին

նրան, ուղղակի պայքարում էին նրա դեմ, նրանց առջև «երկաթ-յա փեղկերով» փակված էին բոլոր դռները:

Հունաստանում ՍՍՀՄ դեսպան Ա. Մ. Ուստինովի կողմից 1925 թ. նոյեմբերի 11-ին արտգործոցկոմատ հղված գեկու-ցագրում հայտնվում էր, որ հունահայերի հայրենադարձությանը զգալի շափով խոչընդոտում են տեղի դաշնակցական կազմա-կերպությունները, այդ գործում ստանալով Սալոնիկում Ալգերի լիգայի ներկայացուցիչ Յվերների աջակցությունը:

Սալոնիկում հրատարակվող «Ալիք» թերթի էջերում, ինչ-պես նաև բանավոր կերպով, դաշնակները մեծ աղմուկ էին բարձրացրել հայրենադարձության դեմ: Մասսաներին մոլորեց-նելու համար նրանք հորինել էին, թե իբր հունահայերը բունու-թյամբ են ուղարկվում Հայաստան և ոչ թե իրենց կամքով, թե հայրենադարձության համար հանգանակված գումարները ծախ-սելով են ոչ թե ներգաղթողների ուղևորությունը կազմակեր-պելու, այլ արտասահմանում պրոսոփետական անլեզալ կաղմա-կերպություններ ստեղծելու ու պահպանելու վրա և այլն²²: Հայրենադարձությունը խափանելու նպատակով նրանք դիմում էին ամեն տեսակ ստոր միջոցների, նույնիսկ 204-ի ակտիվ են ամեն տեսակ ստոր միջոցների, նույնիսկ 204-ի ակտիվ անդամներին կեղծ մատնություններով բանտարկել տալու և ուրիշ զազրելի մեթոդներ գործադրելու փորձերի²³: Օգտագոր-ծելով ստի ու կեղծիքի իրենց հարուստ դինանոցը, դաշնակ-ները արտասահմանյան մամուլում լուրեր էին տարածում այն մասին, թե իբր 1925 թ. սկզբներին Հունաստանից հայրենիք ներգաղթածներից շատերը սովետական կառավարության կող-մից ենթարկվել են ռեպրեսիաների, իսկ նրանցից մի քանիսը կախաղան են բարձրացվել: Նրանք նույնիսկ նշել էին կոնկ-րետ անուններ, շնայած այդ հայրենադարձները հանգիստ ու խաղաղ ապրում էին Լենինական քաղաքում: Տեղեկանալով այդ խեղկատակությանը, բարեբախտաբար միայն դաշնակցական մամուլի էջերում «կախաղան հանված» հայրենադարձները «Խորհրդային Հայաստան» թերթում հրապարակեցին մի դայրա-լից բողոք, ուր կոչ էին անում արտասահմանի իրենց եղբայր-ներին, որ շփալտան «դաղութահայության սիրտը պղտորող

²⁰ Տե՛ս «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 16 ապրիլի, 1924 թ., № 1656:

²¹ Տե՛ս նույն տեղում, 15 ապրիլի, 1924 թ., № 1655:

²² Տե՛ս շՍՀՄ 220Ծ ՊԿԱ, ֆ. 40/113, ց. 3, գ. 204, թ. 15 և գ. 517, թ. 62—63:

²³ Տե՛ս նույն տեղում, գ. 517, թ. 62—63:

ու նրա քրտինքը ծծող այդ ինքնակոչ խնամակալներին ու սողուկներին», որովհետև նրանք իրենց «մշտենջենական արհեստ են ընտրել կեղծիքը, սուտն ու պրովոկացիան»²⁴:

Բարեբախտաբար գաղութահայ աշխատավորությունն արդեն լավ էր ճանաչում իր իսկական բարեկամներին ու թշնամիներին և իր ճանապարհից վճռականորեն դեն նետելով բոլոր խոչընդոտները, ձգտում էր ներգաղթել Սովետական Հայաստան:

Ավելորդ համարելով մանրամասներն թվարկել դաշնակիների բոլոր զրպարտությունները, որպես դրանց պատասխան, բավականանանք Վառնայում հրատարակվող «Լուսարձակ» թերթից հետևյալ քաղվածքի մեջբերումով, որն ըստ էության ճշտորեն է բացահայտում ներգաղթի իսկական կողմնակիցներին ու հակառակորդներին: «Լուսարձակն» իր 1924 թ. հուլիսի 23-ի համարում այդ կապակցությամբ գրել է. «Կ. Պոլսեն 10 հազար հայ գաղթականներու մասին կիսովեր, սակայն որքան ատեն որ հայ կառավարությունը ճամբա չէր տար, մամուլը և Կ. Պոլսո ազգային իշխանությունները կանդեին վանոնք Հայաստան փոխադրելու: Հիմա, որ Հայաստանի կառավարությունը դոնորը բացած է, կտեղեկանանք թե ոչ որ չի մտածեր ատոր վրա և անկե ի վեր 7 ամիս է, որ այդ թշվառներուն (Կ. Պոլսում գավառներից կուտակված գաղթականներին. — Հ. Մ.) նպաստ կտրվի, մինչդեռ այս ծախսված դրամին կեսը կբավեր գանոնք Հայաստան փոխադրելու:

Կիմանանք, որ Կ. Պոլսո ջոջերը, երբ մեկ կողմն առերես պ. Շահվերդյանի հետ կբանակցին, մյուս կողմն գաղտնի ժողովի մը մեջ խնդիր ըրեր են, որ գաղթականները Մարոք փոխադրեն, քանզի հոն կրոնքը ազատ է եղեր:

Գարակոչյանն ալ իր Կ. Պոլսո որբանոցը Ֆրանսա կփոխադրե եղեր և Փարիզի շրջակայքը հին պալատ մը գնելու վրա է եղեր:

Ահա թե ինչպես հայ գաղթականները և որբերը կմղվին դեպի օտարացում, դեպի ապագայնացում բոլոր անոնց կողմն, որոնք կերդնուն հանուն ազգության»²⁵:

Հետևապես, հայրենադարձությանը իրականում դեմ էին դաշնակցությունն ու գաղութահայ բուրժուական շրջանները: Նրանք լավ էին հասկանում, որ ամեն մի գաղթականի ու որբի երկիր տեղափոխությունը լուրջ սպառնալիք է ստեղծում իրենց հետագա գոյության համար, որովհետև ներգաղթի հետևանքով նրանք զրկվում էին այն միջավայրից, ուր դեռևս հնարավորություն ունեին գործելու և ապրելու: Ինչպես ժամանակին նշել է Ալ. Մյասնիկյանը, դաշնակցականներին ձեռնտու էր, «որպեսզի գաղթականությունը Հայաստան չգնա, որովհետև մեկ՝ այդ գաղթականության անունով դաշնակցությունը հանգանակություն կանի հօգուտ իր դրամարկդի, երկուս՝ աչ ու ձախ հայհոյանքներ կթափի մեր գլխին ու կփառաբանի իրեն, — չէ՞ որ բուլշևիկները գաղթականներին «չեն ընդունում», իսկ բարի դաշնակցականները նրանց մասին այբա՞ն են «մտածում»²⁶:

Բայց հակառակ բոլոր բարբառանքներին ու ստոր զրպարտություններին, գաղութահայ աշխատավորությունը, մերկացնելով իր թշնամիների նենգ դավերը, բուռն կերպով ձգտում էր դեպի հայրենիք: Անընդհատ սովետական կառավարությունը բաղմամբիվ դիմումներ էր ստանում բոլոր գաղթօջախների տարագիր երկրագործներից, բանվորներից ու արհեստավորներից, որոնք պատրաստականություն էին հայտնում ներգաղթել հայրենիք և այստեղ կառուցել գյուղեր ու ավաններ, ակտիվորեն մասնակցել երկրի վերաշինության կենսական գործին: Շատ դիմումներ էին ստացվում նաև վաճառական մասնագիտության տեր մտավորականներից և հատկապես երիտասարդներից՝ համալսարանում կամ որևէ այլ ուսումնական հաստատությունում սովորելու ցանկությամբ:

Պատասխանելով դաշնակցական պրովոկացիաներին, Հունաստանից հայրենիք ներգաղթող մի խումբ աշխատավորներ 1925 թ. հունվարին գրում էին. «Մեր վերջնական օթևանի՝ Սև Հ Միության ցավագար և անակոա թշնամիները ալ սուտ ու զրպարտություն շմնաց, որ չգրեին ու չխոսեին ներգաղթին շուրջը:

Մենք, ներկա ստորագրչալքս, մոտ օրեն Հին Հունաստանի այլևայլ վայրերեն և. Հայաստան պիտի մեկնինք, մեր սրբա-

²⁴ «Նորհրդային Հայաստան», 6 օգոստոսի, 1925 թ., № 177:

²⁵ Քաղվածքը բերված է ըստ Ալ. Մարտունու «Կուսակցությունները գաղութահայության մեջ» գրքի, էջ 44—45:

²⁶ Նույն տեղում, էջ 44:

զան պարտականությունը կհամարինք սույն կոչով զգուշացնել դեպի մեր պաշտած հայրենիքը մեկնողները, որ շրջան ընող շարանենք զրույցներուն և ըսի ըսավներուն բնավ կարևորություն չտան...»²⁷:

Այնուհետև կոնկրետ փաստերով մերկացնելով դաշնակներին, կոչի հեղինակները շարունակում էին. «Հայրենակիցներ, զգուշ և միշտ զգուշ մեր տունն ավերող և մեզ մոխիրներու վրա նստեցնող օտար, կեղծ մարդասերներն և տարաբախտաբար հայ կոչվող խառնակիչներն, որոնք խիղճներին սպանած և ամոթի ու պատասխանատվության զգացումնին կորսնցուցած քլլալով իսպառ, իրենց աղտոտ ձեռքերով կուզեն խառնել ձեր խիղճին անդորությունը:

Ձոհ մի քլլաք բանասարկու լեզուներու և վաճառված գրիչներու խաբկանքներուն, որոնք կմիտին ձեր մեջ թշնամանքի որոմ սերմանել: Վստահ քլլալով, որ մոտ է այլևս ձեր փրկության ժամը, կազմ ու պատրաստ եղեք դեպի Ավետյաց աշխարհը մեկնելու»²⁸:

Սովետական Հայաստանի մի խումբ համակիրներ հունահայ գաղութի աշխատավորներին ուղղված 1925 թ. հոկտեմբերի 28-ին հրապարակված մի այլ կոչի մեջ, արտահայտելով իրենց անսահման ուրախությունը ներգաղթի առթիվ, գրել էին.

«Ցնծա հայ ժողովուրդ:

Մեծ անձկությամբ սպասած ժամը հասավ:

Ամեն ինչ պատրաստ է: Շաբաթ օրը (հոկտ. 31-ին) պիտի ուղղվիս Ավետյաց երկիրը: Իրականացան բո բոլոր հույսերը: Իրականացան բո երազները: Իրականացավ ներգաղթը: Հասավ ժամը, որ դու անգամ մըն ալ հորհուրդ. Հայաստանի և հայ ժողովուրդի սրտի, մտքի ու կյանքի հետ խաղացող դավաճան դաշնակցականները ճանչնաս»²⁹: Կոչը առաջարկում էր մեկընդմիշտ երես դարձնել այդ բախտախնդիրներից և վստահորեն ընթանալ դեպի հայ աշխատավորության միակ հայրենիքը հանդիսացող Սովետական Հայաստան:

Այնուհետև կոչի հեղինակները գրում էին. «Անոնք խաղա-

ցին քո զգացմունքներուն հետ: Թունոտ սլաքներով խոցոտեցին սիրտդ, պղտորեցին միտքդ:

Այսօր դու ճակատ առ ճակատ կանգնած ես քեզ խաբող, քո զգացմունքները անարգող և քո կյանքի հետ խաղացող դավաճաններուն հետ:

Այսօր խոսելու կարգը քուկդ է:

Դավաճանը պետք է դիմակազերծ քլլա:

Դավաճանը պետք է հաշիվ տա իր ըսածներուն ու գրածներուն:

Դու՛ հայ ժողովուրդ, բնական հատկություններդ արժեցուր:

Դու ցույց տուր, որ քո սեփական դատողությունը ունիս:

Ցույց տուր, որ իրականությունը կտեսնես: Ցույց տուր, որ պատրաստ ես ամեն ճակատի վրա հարվածելու քո հայրենիքի դավաճանները:

Ներգաղթի իրականացումը անգամ մըն ալ երևան հանեց «մարտական կուսակցության» բարոյական սնանկությունը:

Անկցի՛ն ուրեմն օտար զրպարտիչները:

Անկցի՛ն դավաճան դաշնակցականները:

Կեցցե՛՛ հորհուրդ. Հայաստանը և հայ ժողովուրդի միակ պաշտպան հայ կառավարությունը»³⁰:

Ահա այսպես էր մտածում ու գործում գաղութահայ աշխատավորության ճնշող մեծամասնությունը: Եվ սովետական կառավարությունը, չնայելով ոչ մի խոչընդոտի, զրպարտության ու պրովոկացիայի, ժողովրդական տնտեսության մեջ ձեռք բերված հաջողություններին զուգընթաց իրականացնում էր սփյուռքահայ աշխատավորների հայրենադարձությունը:

* * *

Չանգվածային նոր հայրենադարձություն կազմակերպելու մասին սովետական կառավարության 1945 թ. նոյեմբերի 21-ի որոշումը, ինչպես իր տեղում տեսանք, համընդհանուր խանդավառությամբ ընդունվեց սփյուռքահայության բոլոր խավերում: Սփյուռքահայ աշխատավորները, առաջադիմական բոլոր կազմակերպություններն ու խմբավորումները, առաջնորդվելով հայ ժողովրդի վերամիավորման հայրենասիրական գաղափա-

²⁷ ՀՍՍՀ ՀՂՍԵ ՊԿԱ, ֆ. 40/113, ց. 3, գ. 496, թ. 46:

²⁸ Նույն տեղում:

²⁹ Նույն տեղում, թ. 47:

³⁰ Նույն տեղում:

րով, իրենց ջանքերն ուղղեցին այդ մեծ գործի իրականացմանը: Սակայն հայրենիքում ազգահավաքման այդ հայրենասիրական շարժման հանդեպ դարձյալ միանգամայն դատապարտելի ու թշնամական դիրք բռնեց դաշնակցությունը: Այդ պատճառով էլ, որպեսզի հաշտություն մերկանացվեր հայրենագարծությունը, անհրաժեշտ էր հետևողականորեն մերկացնել դաշնակցների բոլոր դավերը, համախմբել առաջադիմական բոլոր ուժերը՝ ստեղծելով նրանց ընդհանուր, միասնական ճակատ:

Սփյուռքահայ առաջադիմական ուժերի միասնական ճակատները սկսել էին ձևավորվել դեռևս երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին և շատ գաղթօջախներում իրենց մեջ միավորում էին կոմունիստներին, հնչակյաններին, ուսկավարներին և երիտասարդական միությունների անդամներին: Դրանք իրենց առջև նպատակ էին դնում հնարավոր բոլոր միջոցներով պաշտպանել տարագիր հայության իրավունքները և աշխատել հասնել նրանց վերաբնակեցմանը Թուրքիայի կողմից ապօրինաբար զավթված հայկական հողերի վրա, դրանք կցելով Սովետական Հայաստանին: Նշված պլատֆորմի վրա կանգնած հայկական ազգային ճակատներ կամ ազգային խորհուրդներ էին կազմակերպված սփյուռքահայ գրեթե բոլոր գաղթօջախներում՝ ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Սիրիայում, Լիբանանում, Հունաստանում, Բուլղարիայում, Ռումինիայում, Եգիպտոսում, Պաղեստինում, Կիպրոսում, Իրանում և այլուր:

Սփյուռքահայ առաջադիմական ուժերի համախմբման ճանապարհին կարևոր քայլ հանդիսացավ 1947 թ. ապրիլի 30-ից մայիսի 4-ը Նյու Յորքում տեղի ունեցած Հայկական համաշխարհային կոնգրեսը, որին մասնակցում էին հայկական 22 գաղթօջախների 715 աշխարհիկ և հոգևոր պատգամավորներ, որոնք ներկայացնում էին տարբեր քաղաքական կուսակցություններ ու հոսանքներ³¹: Կոնգրեսի հրավիրման կապակցությամբ հրատարակված պաշտոնական կոչում ասված էր. «Վերածնվող մայր հայրենիքի վերելքին լավագույն շափով օգնելու և արտասահմանի հայոց բարօրության, ներգաղթի և հողային արդար իրավունքներու վերստացումին օգտին կատարված աշխատանքները ներդաշնակելու և համադրելու համար Ամերի-

կահայ ազգային խորհուրդս նախաձեռնած է համաշխարհային հայկական քոնկրես մը գումարել»³²:

Կոնգրեսի բացումը հեռագրերով շնորհավորեցին ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահությունը, ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը, ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի նախագահությունը, Ամենայն հայոց կաթողիկոսը և այլք:

Սփյուռքահայության ներկայացուցիչների այդ բազմամարդ համաժողովը միահամուռ հավանություն տվեց հայրենագարծության իրականացմանը և որոշեց նրա օգտին անցկացնել հանգանակություն՝ կարիքավոր ներգաղթող հայրենակիցներին օգնելու համար³³:

Համաշխարհային հայկական կոնգրեսի ընդունած որոշումները մի անգամ ևս հաստատեցին այն փաստը, որ սփյուռքահայության հիմնական զանգվածը անվերապահորեն պաշտպանում է հայրենագարծության գաղափարը, այն համարելով արտասահմանի հայությանը ապաղքայնացումից փրկելու ամենաէական ու կարևոր ուղին:

Ծտպատերազմյան զանգվածային հայրենագարծությունը լուրջ քննություն հանդիսացավ սփյուռքահայ բոլոր հոսանքների ու խմբավորումների համար, հատկապես քաղաքական կուսակցությունների համար:

Սփյուռքահայ զանգվածները, անկախ իրենց դասակարգային ու կուսակցական պատկանելիությունից, համատարած կերպով ձգտում էին անվերապահորեն ներգաղթել Սովետական Հայաստան: Այդ հանգամանքը կհանգեցնեք այն բանին, որ ի վերջո լուծարքի կենթարկվեին սփյուռքահայ քաղաքական կուսակցությունները:

Հնչակյան և ուսկավար ազատական կուսակցությունները այդ հարցում ընտրեցին միանգամայն ճիշտ ուղեգիծ՝ իրենց անդամներին թույլատրելով դուրս գալ կուսակցությունից և մեկնել հայրենիք: Ներգաղթի կազմակերպման հենց սկզբից ուսկավար ազատական և հնչակյան կուսակցությունները հանդես եկան պաշտոնական հայտարարություններով, որոնցում ողջունելով ներգաղթը, իրենց անդամներին թույլատրում էին

³² «Նոր Արաքս», շաբաթաթերթ, Նիկոզիա, 8 մարտի, 1947 թ., № 10—119:

³³ Տե՛ս «Նոր օր», եօրյա թերթ, Ֆրեզնո, 16 մայիսի, 1947 թ., № 38:

³¹ Տե՛ս «Վերատ», օրաթերթ, Հայկա, 4 օգոստոսի, 1947 թ., №3006:

ազատորեն գուրս գալու կուսակցութիւնից և մեկնելու հայրենիք: Օրինակ՝ ռամկավարների Հալեպի կոմիտեի հայտարարութեան մեջ ասված էր. «Ռամկավար ազատական կուսակցութեան տեղական կոմիտեն այսու կհայտարարե, թե՛ իրենց դիմումներուն ընթացք տալով և համաձայն կուսակցութեանս որոշման զերծ կկացուցանեն իրենց կուսակցական երդումեն և պարտավորութիւններն այն բոլոր ներգաղթող ընկերները՝ որոնք Սովետական Հայաստան մեկնեցան կամ կմեկնին»³⁴: Նման հայտարարութիւններով հանդես եկան ռամկավար ազատական և հնչակյան կուսակցութիւնների նաև մյուս տեղական կոմիտեները: Տեսնելով ներգաղթի նկատմամբ ռամկավարների ու հնչակյանների այս միանգամայն դրական հայրենասիրական վարքագիծը և դաշնակցական կուսակցութեան ղեկավարութեան թշնամական դիրքորոշումը, շատ շարքային դաշնակցականներ սկսեցին զանգվածաբար հրաժարվել կուսակցութեանից և նույնպես արձանագրվեցին հայրենիք մեկնելու համար: Իրանում, Լիբանանում, Սիրիայում և այլուր այդ օրերի սփյուռքահայ մամուլը լի է շարքային դաշնակցականների և դաշնակցութեան ազդեցութեան տակ գտնվող շՄԸՄ անդամ երիտասարդների անհատական ու խմբակային բազմաթիվ հրաժարականներով: Ահա թե ինչ էր գրում այդ մասին շարքային դաշնակցական Ծսայի Բարիկյանը. «1940-են ի վեր Հ. Հ. դաշնակցութեան շարքային անդամ, հրապարակով կհրաժարիմ ու բոլոր կապերս կխզեմ կուսակցութենես, որ չի քաշվի ազգահավաքումի ամենեն կենսական որոշումը տվող և զայն ներգաղթով գործադրող մեր թանկագին հայրենիքին՝ Սովետական Հայաստանին դեմ գործել: Իբրև կիլիկեցի հայ, տեսնելի հետո տառապանքի բոլոր տեսակները, չեմ կրնար միատեղ քալել դաշնակ ընկերներու հետ, որոնք հայրենիքի դռներուն լայնորեն բացվիլը տեսնելի հետո իսկ կ'ուզեն զայն գոցել Հայաստանի կարտոտվն այրվող ինծի պես պանդուխտ հայրողիներուն: Ո՛չ, իր մայր հայրենիքն ուրացող դաշնակ շարքերուն մեջ չեմ կըրնար մնալ»³⁵:

Դաշնակցութեան ղեկավարութեան հայրենադավ քաղաքականութեան դեմ հայրենասիրական ընդվզումի կոլեկտիվ ելույ-

թով հանդես եկան դաշնակցութեան ենթակայութեան տակ գրտնըվող շՄԸՄ-ի Հալեպի մասնաճյուղի 46 մարդիկներ ու սկաուտներ, մամուլում հրապարակելով հետևյալ հայտարարութիւնը. «Ստորագրյալներս, մարդիկ կամ սկաուտ անդամներ շՄԸՄ-ի, ներկա գրութեամբ կուզանք ներկայացնել մեր հավաքական հրաժարականը, տրված ըլլալով, որ շՄԸՄ-ի հիմնական նպատակները այլափոխված են ներկա ղեկավարներու հայրենադավ կուսակցական հաշիվներու հետևանքով:

Մենք, ըլլալով հայրենասեր և գիտակից ղավակները բազմաշարշար ժողովրդի մը, շՄԸՄ-ի միջոցով կկարծեինք ծառայել անոր ֆիզիկական, բարոյական և ազգային վերելքին, ինչպես նաև մեր պանծալի հայրենիքի՝ Սովետական Հայաստանի հառաչողի մութիւնը:

Բայց ներգաղթի այս սրբազան պահուն, երբ սփյուռքի վտարանդի մեր բոլոր եղբայրները տողորված են հայրենակարոտ ազնիվ զգացումներով, ներելի պիտի չըլլար որևէ պարկեշտ հայու համար, կամա, ակամա մեղսակցիլ ափ մը համառ և արկածախնդիր ղեկավարներու հայրենադավ քաղաքականութեան, որմե տուժողը կ'ըլլա մեր ժողովուրդն ու հայրենիքը:

Արդ, մեր հավաքական հրաժարականը ներկայացնելով, մենք այն խոր հավատքը ունինք, թե կկատարենք ազգային և հարազատ շՄԸՄ-ականի մեր լավագույն պարտականութիւնները, անշեղորեն շարունակելու և իրագործելու համար մեր սրբազան ուխտը, որ է—ծառայել հայրենիքին...»³⁶:

Եվ այսպես, ամեն օր տասնյակներով մարդիկ հրաժարվում էին դաշնակցութեանից ու նրա ազդեցութեան տակ եղած միութիւններէից, դատապարտելով այդ կուսակցութեան հակահայաստանյան և հականերգաղթյան ազգակործան ուղղութիւնը:

Ռամկավար ազատական կուսակցութիւնը գտնում էր, որ հայրենադարձութիւնը բնավ պատահական երևույթ չէ, այլ հայրենի երկրում հաստատված նոր լրալակարգի հետապնդած սկզբունքային քաղաքականութիւնն է:

«Այն պահուն,— գրում էր Բեյրութում հրատարակվող «Ժողովուրդի ձայն» թերթը,— երբ մենք հագիվ կկարողանայինք թոթվել Հայաստանի մը գոյութեան մասին, թեև սկսած էինք

³⁴ «Ժողովուրդի ձայն», օրաթերթ, Բեյրութ, 14 հոկտեմբեր, 1946 թ., № 1159:

³⁵ «Նփրատ», 26 հոկտեմբերի, 1946 թ., № 2770:

³⁶ Նույն տեղում, 29 հոկտեմբեր, 1946 թ., № 2669:

միշտ հավատով դիտել զայն և հոն տեսնել մեր փրկությունը, Սովետական Հայաստանի կառավարությունը իր առաջին մտահոգություններն մեկը կնկատե սփյուռքի բեկորներու հայրենադարձը և հայ ժողովուրդի միախմբումը իր հայրենի երկրին մեջ»³⁷:

Թամկավար ազատական կուսակցության պաղեստինյան օրգան «Միություն» թերթը, բարձր գնահատելով տարագիր հայության համար ներգաղթի փրկարար դերը, 1946 թ. նոյեմբերյան համարներից մեկում գրում էր, որ «...ան պայմանավորվեց այն վիթխարի նվաճումներով, որ Սովետ Հայաստանը ձեռք բերեց վերջին 25 տարիների ընթացքում: Արտասահմանի հայության համար ներգաղթը այն է, ինչ որ նոյեմբերի 29-ը եղավ երկրի հայության համար»³⁸ (ընդգծումը մերն է.—Ն. Մ.):

Թամկավար ազատական կուսակցությունը ձուլումից ու անհետացումից սփյուռքահայության փրկությունը պայմանավորում էր երկու կարևոր գործոններով՝ թուրքական լծից Արևմտյան Հայաստանի ազատագրումով ու նրա Սովետական Հայաստանին կցումով և սփյուռքահայերի հայրենիք ներգաղթով: Ավելին. ուսմավարները ներգաղթի մեջ էին տեսնում հենց արևմտահայկական հողերը թուրքիայից պահանջելու միջոցը, այդ խնդրի լուծումը անպայմանորեն կապելով Սովետական Միության հետ:

Թամկավար ազատական կուսակցության ութերորդ համագումարը, որը տեղի ունեցավ 1947 թ. փետրվարին, հատուկ հուշագրով դիմեց ՄԱԿ-ին, Անգլիայի, ԱՄՆ-ի և ԱՄՀՄ կառավարություններին, որտեղ ասված էր. «Ժամանակն է նմանապես, որ ի վերջո ըլլա արդարություն Հայաստանի և հայերուն, վերջ տալու համար մեկուն ամենափշոտ հարցերեն, որոնք մեկ դարն է վեր ծանրորեն ճնշված են միջազգային քաղաքականության վրա և խորապես ցնցած քաղաքակիրթ մարդկության խիղճը: Այս արդարությունը կպահանջե. Ա. Փրկել, միանգամընդմիշտ, թրքական տիրապետությունն թրքահայաստանի նահանգները: Բ. Կցել զանոնք Հայ Սովետ հանրապետության..., բան մը, որուն մասին համաձայն են հանրապետության ժողովն մեջ

ապրող և թե բովանդակ աշխարհի մեջ ցրված բոլոր հայերը»³⁹:

Ահա թե ինչու հայրենադարձության վերսկսման հենց առաջին օրերից ուսմավարական կուսակցությունը ընդգծեց այդ երևույթի պատմական բախտորոշ նշանակությունը և իր գործուն մասնակցությունը բերեց նրա կազմակերպման աշխատանքներին:

«Ներկայիս յուրաքանչյուր հայու համար շկա ավելի պատվավոր և հայրենասիրական գործ, քան հայրենիք դարձը: Բոլոր հայերը, առանց դավանական և հատվածական խտրության, առանց անսալու ձախեն-աչեն եկող փրովորքասիոններուն, մանավանդ դաշնակ պարագլուխներու տարածած սուտ զրույցներուն, պետք է արձանագրվին»⁴⁰,— գրում էր «Ժողովուրդի ձայնը»:

Հայրենադարձությանը խանգարելու ուղղությամբ դաշնակցության գործունեությունը ուսմավարները իրավացիորեն որակեցին որպես մեծագույն ոճրագործություն հայ ժողովրդի կենսական շահերի դեմ:

1946—1948 թթ. զանգվածային հայրենադարձության ժամանակ ուսմավարների հետ միևնույն դիրքերում կանգնեցին հնչակյանները: Նրանք նույնպես հանդես եկան Սովետական Հայաստանի պաշտպանությամբ, ներգաղթին ամեն կերպ աջակցելու նախաձեռնությամբ: Հնչակյանները ևս այն կարծիքին էին, որ սփյուռքահայության փրկությունը ներգաղթի մեջ է, նրա ապագան կապված է Սովետական Հայաստանի հետ: Հնչակյան կուսակցությունը բոլոր միջոցներով սատարում էր ներգաղթի իրականացմանը, միաժամանակ հետևողականորեն մերկացնում դրա դեմ դաշնակցության ծավալած գործունեությունը: Հնչակյան կուսակցության առաջատար օրգանները պրոպագանդում էին այն միտքը, թե որքան մեծ լինի Հայաստանում ապրող հայոց թիվը, այնքան ավելի կկորեղանա գաղութների կապը հայրենիքի հետ, այնքան ավելի արդյունավետ կլինի նաև սփյուռքում մնացած հայության, պայքարը օտարացման ու ձուլման դեմ, ուստի անպայման պետք է ներգաղթել Սովետական Հայաստան, որտեղ խարսխված է հայ ժողովրդի ապագան: Հնչակյանները ևս ներգաղթի մեջ էին տեսնում հայկա-

³⁷ «Ժողովուրդի ձայն», 27 փետրվարի, 1947 թ., № 1071:

³⁸ «Միություն», օրաթերթ, Հայֆա, 29 նոյեմբերի, 1946 թ., № 64:

³⁹ «Եփրատ», 17 մարտի, 1947 թ., № 2888:

⁴⁰ «Ժողովուրդի ձայն», 20 հունվարի, 1946 թ., № 1046:

կան բռնագրաված հողերի ազատագրման բանալին, միասնության կոչ անելով սփյուռքահայ բոլոր հասարակական-քաղաքական ուժերին⁴¹:

Ներգաղթը ողջունեցին նաև սփյուռքի մյուս բոլոր առաջադիմական կազմակերպությունները և հատկապես հայրենակցական միությունները: Ներգաղթի սկսման կապակցությամբ Վասպուրականցիների հայրենակցական միության կենտրոնական վարչությունը հրապարակեց մի կոչ՝ ուղղված սփյուռքի բոլոր վասպուրականցիներին, որտեղ գրում էր. «Մեր արդի Սովետական մայր Հայաստանը... այժմ դռները լայն բացած է անխտիր, վայրավատի իր բոլոր զավակներու առջև:

Դեպի՛ հայրենիք, դեպի՛ շինարարություն, դեպի՛ ազգային հզորացման ու փառքի ուղին. այս է համայն ազգասեր ու հայրենասեր հայության և ևս առավել վասպուրականցի ժողովուրդի կարգախոսը:

... Արդ, ժամը հնչած է, որ Վասպուրական միությունը կոչ ուղղե սփյուռքի համայն վասպուրականցիներուն, որ անոնք պատրաստվին վերադառնալ դեպի իրենց հարազատ ու հոյակապ մայր հայրենիքը, դեպի շինարարական աշխատանք ու դեպի ազգային համախմբում, հորհր. Հայաստանի կառավարության անմիջական հսկողության ու պաշտպանության տակ և անոր օգնությամբ: Վստահ եղեք, որ միությունս պատրաստ է ձեզ աջակցելու, որ միջոցներ ունենաք դեպի մայր հայրենիք ներգաղթելու:

Վասպուրական միությունը, որպես գործնական հայրենասեր կազմակերպություն, իր նպատակը ընտրած է օգնել իր հայրենակիցներուն, որ անոնք օր առաջ թոթափեն գաղթային իրենց անկայուն և անապահով վիճակը և ներգաղթի ու շինարար աշխատանքի փարին իրենց մայր հայրենիքի մեջ, իրենց նախահարց աշխարհը:

Մ՛ն դեպի մեր տեսիլքի երկիրը, դեպի մեր մեծ հայրենիք Սովիետական Հայաստան, դեպի նոր կյանք և դեպի ազգային համախմբում մայր հողի վրա»⁴²: Նույնպիսի հայտարարու-

թյուններով հանդես եկան նաև Տարոն-Տուրուբերանի, Ճեպել-Մուսացիների և այլ հայրենակցական միությունները⁴³:

Փարիզում հրատարակվող «Արևմուտք» ազգային և դրական անկախ շաբաթաթերթը, ողջունելով ներգաղթը, իր խմբագրականում գրում էր. «Այսօր, վաղը և հավիտյան ապաստանը՝ այլևս Հայաստանն է: Այսօր, վաղը և մի՛շտ այլևս մեր ազգային քաղաքականության առանցքը, միակ առանցքը, պետք է կազմե միակ գործողություն մը—գումարումը»⁴⁴, այսինքն՝ ի մի հավաքվելը հայրենիքում: Թերթը կոչ էր անում բոլորին իրենց ուժերը ի սպաս դնել այդ վե՛հ գործի իրականացմանը:

Այսպիսով, փաստորեն միայն դաշնակցությունը դեմ դուրս եկավ հայրենադարձությանը: Իհարկե, նա սկզբնական շրջանում չէր համարձակվում բացահայտ դեմ արտահայտվել այդ ազգօգուտ գործին, որը վայելում էր սփյուռքահայ բոլոր խավերի պաշտպանությունը: Դաշնակցությունը նույնիսկ իրեն հայտարարեց ներգաղթի «ջերմ» կողմնակից:

Ֆրանսահայ ազգային ճակատի օրգան «Ժողովուրդ» օրաթերթը հեգնանքով գրում էր, թե «թրքահայ դատ, ներգաղթ և Ն. Հ. Դաշնակցություն կուսակցություն երրորդություն մը կկազմեն և մեկը մյուսեն կարելի չէ բաժանել, իսկ մյուս կողմեն, իր նոր սերունդներով, կապույտ խաչերով, ՀՄԸՄ-ի մեջ կուսակցականության էնթրիկներով, կշանա ներքին ճակատը պառակտել, սփյուռքի հայության միասնականությունը ջլատել...»⁴⁵: «Ժողովուրդը» գրում էր, որ «արտասահմանի դանգավածային ներգաղթը և հայ դատի հետապնդումը հնարավոր դարձավ միայն ու միայն մեր սովետական հայրենիքի աշխարհաստան պատերազմեն հաղթական դուրս գալովը...»⁴⁶:

Մերկացնելով ներգաղթի նկատմամբ դաշնակցության բռնած երկդիմի վարքագիծը, Աթենքում հրատարակվող «Նոր կյանք» թերթը գրում էր. «Դաշնակցությունը խոսքով, երևութապես—իբր թե—կ'ուզե ներգաղթը: Եվ այդ երևույթով կներկայանա հայրենասեր զանգվածներուն, անուղղակի կերպով զանոնք շփոթի մատնելու, անոնց անաղարտ հայրենասիրական զգա-

⁴³ Տե՛ս «Չարթոնք», 10 փետրվարի, 1946 թ., № 2731:

⁴⁴ «Արևմուտք», շաբաթաթերթ, Փարիզ, 24 նոյեմբերի, 1946 թ., № 2(89):

⁴⁵ «Ժողովուրդ», օրաթերթ, Փարիզ, 22 ապրիլի, 1947 թ., №776:

⁴⁶ Նույն տեղում:

⁴¹ Տե՛ս «Երիտասարդ Հայաստան», 26 նոյեմբերի, 1946 թ., № 59 և «Արարատ», 8 փետրվարի, 1947 թ., № 1802:

⁴² «Հայաստանի կոչնակ», 27 հուլիսի, 1946 թ., № 30, էջ 717:

ցումները թունավորելու համար: Տարբեր կարգախոսով չէր կր-
նար ներկայանալ արդեն: Ի վիճակի չէ բացահայտորեն ներ-
գաղթի դեմ ձակատ հարդարել: Հայրենասեր ժողովուրդը այն ա-
տեն կբարկոծե, լինչի կ'ենթարկե պինքը:

Ուրեմն, ներգաղթ կուզենէր կեղծ դիմակ մըն է լոկ, ժող-
վուրդը խաբելու, մոլորեցնելու համար»⁴⁷:

Եվ իսկապես, որոշ ժամանակ անց, երբ այդ տակտիկան
ցանկալի արդյունք չտվեց, այլևս չհամբերելով, դաշնակցու-
թյունը բացահայտեց ներգաղթի հանդեպ իր իսկական դիրքը:
Կեղծելով ու զրպարտելով բազմահազար հայ տարագիրների
նկատմամբ սովետական կառավարության մարդասիրական քա-
ղաքականությունը, նա սկսեց բացահայտորեն հանդես գալ
հայրենադարձության դեմ:

Կարծեք հատուկ ազդանշանով, դաշնակցական մամուլն
սկսեց շարամիտ զրպարտությունների մի իսկական հեղեղ, որը
նպատակ ուներ սփյուռքահայ զանգվածներին հիասթափեցնել
սովետական իրականությունից և դրանով խսկ խանգարել ներ-
գաղթի իրականացմանը: Մի դեպքում դաշնակները փորձում
էին իրենց ևս ներգաղթի կողմնակիցներ ձևացնել, բայց վարկա-
բեկում էին ներգաղթն իրականացնող կազմակերպություննե-
րին ու մարդկանց, քանի որ իրենց չէին ընդգրկում այդ աշ-
խատանքներում: Մի այլ դեպքում՝ որոնում, գտնում էին մանր-
մունք թերություններ ու վրիպումներ, ուռճացնում էին դրանք՝
փորձելով մարդկանց ուշադրությունը կենտրոնացնելով դրանց
վրա, դարձյալ վարկաբեկել ներգաղթի նման ազգօգուտ, հայրե-
նասիրական շարժումը, սևացնել ազգահավաքի գործը:

1946 թ. վերջերին, երբ այդ տարվա համար նախատես-
ված թվից ավելի ներգաղթողներ ընդունեց Սովետական Հայաս-
տանը և միայն ձմեռվա պայմաններում ժամանակավորապես
դադարեցրեց ներգաղթը, դաշնակների Հալեպի «Արևելք» թերթը
փորձեց մոլորության մեջ գցել սփյուռքահայությանը, գրելով,
թե իբր այլևս ընդհանրապես ներգաղթ չի լինելու: «...Հայ ժո-
ղովուրդը պետք է գիտենա այլևս, թե ճիշտ ամիս մը առաջ, «կո-
միտե» կոչված այս մարդիկը գիտեին՝ թե այլևս մարդ պիտի
չկրնան զրկել այս տարի, որովհետև Երևանեն եկած էր հեռա-

գիր մը, որով կհրահանգվեք դադրեցնել աշխատանքները... և
որևէ նավու չսպասել այլևս»⁴⁸:

Հայրենադարձության առաջ բերած համընդհանուր հայրե-
նասիրական տրամադրությունները չեզոքացնելու նպատակով
դաշնակցական մամուլը ամենուրեք ճգնում էր թունավորել ներ-
գաղթողների միտքը: Դաշնակցական պարագլուխները մի կող-
մից հայտարարում էին, թե իրենք դեմ չեն ներգաղթին, իսկ
մյուս կողմից տարածում էին շարամիտ բամբասանքներ, թե
«ոուսերը իրենց երկիրը վերաշինելու համար է, որ մեր աշխա-
տավորները կտանին: Ներգաղթողները Հայաստանի մեջ պիտի
չմնան, Թուսիո խորերը պիտի տարվին, Սուրիո և Լիբանանի
մեջ ավելի լավ հայեր կմնանք, քան Հայաստանի մեջ, հայ ժո-
ղովուրդը մեծագույն սխալ կգործե իր տունն ու տեղը ձգել մեկ-
նելով», թե ներգաղթի հետևանքով տնտեսապես կբայքայվեն
գաղութները և գնացողների նյութական հարստությունները
կլցվեն Թուսաստան ու այս կարգի այլ բարբառանքներ»⁴⁹:

Դեմ կանգնելով սփյուռքահայերի Սովետական Հայաստան
ներգաղթելուն, միևնույն ժամանակ դաշնակները մեծ ճիգեր
էին դործադրում նրանց Ավստրալիա, Հարավային Ամերիկա,
Կանադա, Նոր Զելանդիա, Մադագասկար ու այլ երկրներ ար-
տագաղթեցնելու ուղղությամբ: Երբ հայրենադարձների առաջին
քարավանները ուևորվեցին դեպի հայրենիք, դաշնակներն սկսե-
ցին ողբ ու վայնասուն բարձրացնել, թե գաղութներում քայ-
քայվում է հայ կյանքը, տեղի է ունենում վարճուրհի սպանո՞ւ՝
ուղղված հայ տնտեսական կյանքի, հայ բարոյականի, ոգու և
հավատարմության դեմ: Դաշնակ պարագլուխներն այնպիսի
կույր հակասովետիզմով էին լցված, որ նրանք հայրենադարձու-
թյունը որակում էին որպես «նոր ապրիլ 24», իսկ դեպի Մադա-
գասկար, Նոր Զելանդիա կամ արևմտյան աշխարհի այլ հեռա-
վոր անկյուններ կատարվող արտագաղթը՝ փրկություն «դրախ-
տավայրում»: Դաշնակցության որդեգրած այդ դավաճանական
ուղեգծի իսկական էությունը ճիշտ կուհեցին սփյուռքահայ
զանգվածները և անարգանքի սյունին գամեցին նման տեսա-
կետների հեղինակներին: Արտահայտելով սփյուռքահայ զանգ-
վածների տրամադրությունները, հունահայ «Նոր կյանք» թեր-

⁴⁸ «Եփրատ», 6 նոյեմբերի, 1946 թ., № 2779:

⁴⁹ Տե՛ս «Ժողովուրդի ձայն», 24 հուլիսի, 1946 թ., № 1166:

⁴⁷ «Նոր կյանք», 12 ապրիլի, 1946 թ., № 312:

թը գրում էր, որ «Անոնց (դաշնակների.— Հ. Մ.) փափաքն է հայ ժողովուրդը Հայաստանեն դուրս ունէ տեղ համախմբված տեսնել, որպեսզի իրենց սնանկացած քաղաքական և անձնական շահերուն գործածեն» նրան⁵⁰:

Դատապարտելով տարագիր հայությանը դեպի արևմտյան երկրներ արտագաղթի մղելու դաշնակներն պլանները, «Հայաստանի կոչնակը» իրավացիորեն գրում էր. «Արտագաղթը հայության համար անարյուն կոտորածի մը դեր կկատարեն»⁵¹:

Դաշնակները հայերին արևմտյան երկրներ տեղափոխելու համար ստեղծել էին «անկուսակցական» հորշորջվող մի հանձնաժողով, նրա գլուխ կանգնեցնելով Նյու Յորքի «Օմար Խայամ» ճաշարանի տնօրեն, միլիոնատեր Ջորջ Մարտիկյանին և Սուրեն Սարոյանին: Իր ազգադավ միսիան կատարելու համար միջոցներ հայթայթելու նպատակով այդ հանձնաժողովը դիմեց ՀԲԸՄ-ին, հայրենակցական միություններին ու հայ մեծահարուստներին, սակայն բոլորն էլ մերժեցին այդ կարգի առաջարկները: Այն ժամանակ դաշնակցությունը դիմեց ԱՆՁԱ-ին («Անհայրենիք հայերի օգնության ամերիկյան ազգային կոմիտե»), որն ստեղծվել էր 1945 թ. Ջորջ Մարտիկյանի և ամերիկյան բանակի բրիգադային գեներալ Հայկ Շեքերճյանի ակտիվ մասնակցությամբ: ԱՆՁԱ-ն անմիջական կապի մեջ էր «Գաղթականության միջազգային կոմիտեի» հետ, որը ԱՄՆ էր գաղթեցնում տարբեր երկրներից դասալիք վտարանդիներին, նպատակ ունենալով նրանց օգտագործել իմպերիալիստական շրջանների նվաճողական պլանների մեջ: ԱՆՁԱ-ն տարիներ շարունակ կազմակերպում էր Մերձավոր արևելքի երկրներում և այլուր հաստատված հայերի արտագաղթը դեպի արևմտյան «գրախտավայրերը», որտեղ ավելի շատ պարարտ հող կար տարագիր հայության ձուլման համար, դրանով իսկ փորձելով խոչընդոտել սփյուռքահայությանը մայր հայրենիքում՝ Սովետական Հայաստանում կենտրոնանալու, այսինքն՝ հայրենադարձվելու գործին:

Այսպիսով, այն պահին, երբ սփյուռքահայությունը հայրենադարձության բեկրանքով ու հոգսերով էր ապրում, երբ այն դարձել էր համազգային կարևոր իրադարձություն, դաշնակ-

ցական պարագլուխները, դավաճանելով ազգային շահերին, կազմակերպում էին հայերի արտագաղթը դեպի նոր ու անծանոթ երկրներ, որոնցում անխուսափելի էր նրանց ապազգայնացումն ու ձուլումը:

Դաշնակցության այդ փորձերի դեմ անկեղծ զայրույթով հանդես եկան սփյուռքահայ առաջադիմական բոլոր ուժերը, գտնելով, որ «հայը իբրև ազգ ապրելու և զարգանալու հնարավորություն ունի միմիայն սովետ եղբայրության դրոշակին տակ, այսօրվա փոքրիկ և վաղվա մեծ Խորհրդային Հայաստանի մեջ»⁵²:

Հնչակյան «Երիտասարդ Հայաստան» թերթը «Ներգաղթի հարցը» վերնագրով իր խմբագրականում գրում էր, որ անխառնում ցրված բոլոր հայերը պետք է վերադառնան հայրենի երկիր, քանի որ դա է միակ փրկությունը, ուստի ազգային շահերին բացահայտ դավաճանություն է ներգաղթի դեմ պայքարելը: «Ներգաղթը հայ ժողովուրդին համար կենսական հարց է... և այդ պատճառով՝ ավելորդ է անոր դեմ կուսակցական պայքար ստեղծել: Ով որ մտքերը կպղտորե և պատճառ կհանդիսանա, որ թրքական անարգ բռնակալության և ջարդերուն հետևվանքով պանդխտացած հայ բեկորները իրենց երկիրը չվերադառնան, ան հայության մեծագույն թշնամին է:

... Անիկա (ներգաղթը.— Հ. Մ.) օտարության մեջ տառապող, հյուժվող ու մաշող հայ գաղթականի համար նոր կյանքի և վերադարձումի շրջանն է:

... Ով որ ներգաղթը կհարվածե, ուղղակի կամ անուղղակի կերպով կհարվածե նաև հայ ժողովուրդը: Ով որ դեմ է ներգաղթին, դեմ է նաև ազգահավաքման սրբազան դործին:

Պատմական անհերքելի իրողություն է, որ ժողովուրդ մը իր սեփական հայրենիքին մեջ միայն կրնա հարատևորեն աճիլ ու բարգավաճիլ: Օտար երկրներուն մեջ գաղթականի կյանք ապրող ժողովուրդներ, ուշ կամ կանուխ գատապարտված են սպիտակ ջարդի մանգաղով հնձվելու և ոչնչանալու:

... Դժբախտաբար սակայն, սփյուռքի մեջ բույն դրած է դաշնակցություն կոչված խմբակ մը, որ կուսակցական կույրատելությունե և մենատիրական սնապարծ հավակնություններե մղված, ամենազաղրելի և ամենաստորին միջոցներով պայքար

⁵⁰ «Նոր կյանք», 17 հոկտեմբերի, 1946 թ., № 470:

⁵¹ «Հայաստանի կոչնակ», 16 նոյեմբերի, 1946 թ., № 46, էջ 1088:

⁵² Նույն տեղում, 28 սեպտեմբերի, 1946 թ., № 39, էջ 945:

կմղե ներգաղթի շարժման դեմ և ամեն անգամ, որ ներգաղթը վերսկսելու լուրեր տարածվին, իրար կանցնի և գայլերու ոհմակին հատուկ ոռնոցներ կարձակե»⁵³:

Դաշնականների կարծիքով իսկական և լավ հայերը նրանք էին, ովքեր չէին ներգաղթում Սովետական Հայաստան: Դաշնակցական «Ազդակը» նույնիսկ աղիողորմ արցունք էր թափում այն «խաբված» հայերի համար, ովքեր արձանագրվել էին հայրենիք մեկնելու: «Ազդակը» փորձում էր հավատացնել, որ «ներգաղթի ամեն մի փորձ դատապարտված է անիրագործելի բաղձանք մը մնալու», իսկ եթե, այնուամենայնիվ, այն տեղի ունենա, ապա ներգաղթողները Սովետական Հայաստանում պիտի կորցնեն իրենց աղոթելու ազատությունը:

Ներգաղթի իրականացումը կապելով անպայման տերիտորիալ պահանջների բավարարման հետ, դաշնականները հայտարարում էին. «Պետք է ներգաղթել, բայց քանի որ հողերը (Արևմտյան Հայաստանի.—Ն. Մ.) չեն առկա, ապա ներգաղթել հնարավոր չէ»⁵⁴: Այդ առթիվ շատ ավելի հեռուն դժաշտ առաջարկ էր անում դաշնակցական նախկին կառավարության ռազմական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանը: Ռուբեն փաշան հայտարարում էր, որ ներկա Հայաստանը փոքր է, ի վիճակի չէ նոր բնակիչներ ընդունելու, ուստի պետք է Սովետական Հայաստանը «բաժանվի Սովետական Միության հետ», որպեսզի ավելի դյուրին ըլլա «անկախ Հայաստանի» մը հիման վրա հայկական բռնագրավված հողերը պահանջել: Անիկա կրսե թե անգլոսաքսոնները այժմու Հայաստանը Սովետական Միության մեկ մաս նկատելով, պիտի առարկեն՝ թե անկախ Հայաստան մը գոյություն չունի և հետևաբար կարելի չէ Հայաստանի հողեր տալու մասին հարց հարուցանել: Անկախ և միացյալ Հայաստանը, իբրև մի օղակը Միջին արևելքի՝ ավելի հնարավորություններ ունի իրագործելու... սահմաններուն ընդարձակումը»⁵⁵: Ահա թե ինչ էին ուզում դաշնակցական նախկին նախարարները. նախ և առաջ Հայաստանն անջատել Սովետական Միությունից, այն հռչակել «անկախ» և ապա, իր վրա հրավիրելով

անգլո-սաքսերի ուշադրությունը, նրանց օրհնությամբ տիրանալ հայկական հողերին, ուր կարելի կլինի մտածել նաև ներգաղթի մասին: Սակայն այդ առաջարկները վճռականորեն մերժվեցին հենց սփյուռքահայ առաջադիմական շրջանների կողմից, որոնք վաղուց էին դադարել արևմտյան տերությունների օգնության հետ կապված դաշնակցության հորինած հեքիաթներին հավատալուց:

Դաշնակցական մեկ այլ պարագլուխ՝ Ս. Վրացյանը, ներգաղթը համարում էր անիրագործելի այն պատճառաբանությամբ, թե իբր սփյուռքահայերը Հայաստանի հայերի հետ չեն կարող հաշտ ապրել, որովհետև նրանք ներկայացնում են տարբեր աշխարհներ⁵⁶: Ըստ Ս. Վրացյանի նույնպես ներգաղթը հնարավոր չէր առանց «ազատ ու անկախ» Հայաստանի ստեղծման: Առանց թացքնելու իրենց փորացավը, Ս. Վրացյանն ու նրա համախոհները հայտարարում էին, որ իրենց նպատակն է Հայաստանի անջատումը Սովետական Միությունից, որից հետո միայն կարելի է մտածել ներգաղթի մասին⁵⁷: Առաջ քաշելով «անկախ ու ազատ» Հայաստանի մաշված գաղափարը, որը միայն, ըստ դաշնականների, հնարավորություն կստեղծեր ներգաղթի կազմակերպման համար, նրանք նպատակ ունեին սփյուռքահայ զանգվածներին տանել իրենց ետևից: Սակայն, բարեբախտաբար, սփյուռքահայությունը այլևս չէր հավատում դաշնականների և ոչ մի խոսքին: Որքան մեծանում էր սփյուռքահայության համակրանքը Սովետական Հայաստանի և հայրենադարձության նկատմամբ, այնքան ավելի կատաղությամբ էին լցվում դաշնականները, դիմելով բացահայտ շանտաժի: Այսպես, լցվում դաշնականները, դիմելով բացահայտ շանտաժի: Այսպես, օրինակ, Թավրիզի շրջանի Գյուրջի գյուղի գյուղացիների անուսից դաշնականները 1946 թ. ամռանը կեղծ հեռագիր հղեցին Իրանի վարչապետ Ղափամե Սալթանեհին և սովետական դեսպանությանը այն մասին, որ չեն ուզում ներգաղթել Սովետական Միություն: «Իրանահայերը,— ասված էր հեռագրում,— չեն փափագի Հայաստան երթալ, քանի որ իրենք Իրան ծնած են և կսիրեն զայն»⁵⁸:

53 «Երիտասարդ Հայաստան», 31 օգոստոսի, 1954 թ., № 30:

54 «Ժողովուրդի ձայն», 11 դեկտեմբերի, 1946 թ., № 1264:

55 «Ժողովուրդի ձայն», 15 դեկտեմբերի, 1946 թ., № 1267 և «Ժողովուրդ», 27 փետրվարի, 1947 թ., № 731:

56 Տե՛ս Ն. Սիմոնյան, Դաշնակցությունը հակակոմունիզմի ծառայության մեջ, էջ 84:

57 Տե՛ս «Ժողովուրդ», 29 մարտի, 1947 թ., № 757:

58 Տե՛ս «Վերածնունդ», 16 հուլիսի, 1946 թ., № 54:

Սրբ հիշյալ գյուղի գյուղացիներին հայտնի դարձավ դաշնակների այդ խարդախությունը, նրանք սովետական դեսպանին դիմեցին հետևյալ հայտարարությամբ. «Նոր ցավով իմացանք, որ շորս հոգու ստորագրությամբ գրգռիչ հեռագրեր ուղարկված են վարչապետին և սովետ դեսպանատուն: Մենք բոլորս սրբ-տանց հաղորդում ենք, որ վաղուց երազել ենք ներգաղթել դեպի մայր հայրենիք: Մենք ամբողջ գյուղով դիմել ենք ներգաղթի կոմիտեին, առաջին հերթին և մեր ծախսերով ճանապարհ-վելու Հայաստան: Մենք բոլորս հավատացած ենք, որ մեզ չեք մերժի Սովետական Հայաստան ներգաղթելու»⁵⁹:

Գաշնակները ներգաղթի դեմ ծավալած իրենց կամայանիա-յում դիմում էին ամեն տեսակ ստի ու ստորությունների: Ահա այդ մասին վկայող մի երկու փաստ՝ Գամասկոսում դաշնակ-ցական էննիկ Արթին Գատրբլյանը իր շեֆերի զրդումով մի քա-նի անգամ բողոքագրեր ուղարկեց ոստիկանատուն, թե իբր իրեն սպառնում են և իր կամքին հակառակ ստիպում ներգաղ-թել Սովետական Հայաստան: «Թաղին կոմունիստները, — գրում էր նա, — ամեն օր մեր տան վրա կհարձակվին և կստիպեն, որ Հայաստան երթանք: Ես չեմ երթար. իսլամ կըլլամ, թուրք կըլլամ, չեմ երթար»⁶⁰:

Լիբանանի պառլամենտի անդամ, դաշնակցական Հայրա-պետյանը ներգաղթի առնչությամբ պատասխանելով թուրք լրա-գրողի հարցերին, հայտարարել է. «Մեր (իմա՝ դաշնակցական-ների — Ն. Մ.) և ձեր միջև տարբերություն չկա: Ես իմ տանս մեջ թուրքերեն կխոսիմ. ինչպես բոլոր դաշնակցականները, նույնպես ես կնախընտրենք թուրքիա երթալ, քան թե Հայաս-տան»⁶¹:

Շուտով դաշնակները զազրախոսություններից ու սպառ-նալիքներից անցան ավելի վճռական գործողությունների, մինչև իսկ դիմեցին տեղորոշական ակտերի: 1945 թ. նոյեմբերի սկզբներին Բեյրութում նրանք սպանեցին կոմունիստ Հարու-թյուն Կյուլպենկյանին և վիրավորեցին Հակոբ Պետոյանին ու Հայկ Կարմիրյանին (Հաջի Հայկ)⁶²: 1946 թ. հունվարին, դարձ-

յալ Բեյրութում, նրանք գիշերային մի շարք հարձակումներ կատարեցին հայկական թաղամասերի վրա: Այդ առթիվ «Ժո-ղովուրդի ձայնը» գրել է. «Հասկանալի է, թե ինչ կհետապնդեն դաշնակ պարագլուխները: Անոնք կուզեն ներգաղթի առթիվ ստեղծված ժողովրդական խանդավառությունն արյունի մեջ խեղդել»⁶³:

1946 թ. ամռանը դաշնակների հրահրումներով ցույցեր կազմակերպվեցին Բեյրութում՝ ներգաղթին աջակցող տեղական գրասենյակների առջև: Գաշնակների կեղծ ամբաստանություն-ների ու մատնությունների հիման վրա լիբանանյան և սիրիա-կան իշխանությունները ձեռքալալեցին ներգաղթի տեղական կոմիտեներում աշխատող մի քանի տասնյակ երիտասարդների, որոնց մեղադրում էին նույնիսկ պետական հանցագործություն-ների մեջ⁶⁴:

Վերևում նշված էննիկ Արթինի տղաները դաշունահարեցին ներգաղթելու համար արձանագրված Վարդգես Իսկանդարյանին և Եփրեմ Քեստենյանին: Ինչպես հաղորդում էր «Ժողովուրդի ձայն» թերթը իր 1946 թ. հոկտեմբերի 1-ի համարում, մի խումբ ձայնաված դաշնակցականներ գիշերով հարձակվել էին Պուրճ Հա-մուտի հայկական թաղամասի վրա, ներս խուժել տները և ծե-ծի ենթարկել հայրենասեր հայ ծերունիներին, կրակել ատրճա-նակներից և հայհոյանքներ տեղացել ներգաղթի ու Սովետա-կան Հայաստանի հասցեին⁶⁵:

1947 թ. մայիսի 12-ին դաշնակները Բեյրութում սպանե-ցին կոմունիստ Պողոս Նաթրյանին և վիրավորեցին Սիսակ Թելալյանին, մի քանի օր անց դաշունահարեցին Լիբանանի և Սիրիայի հայերի ներգաղթի կենտկոմի նախագահ կոմունիստ Հրանտ Գեհեճյանին:

Միայն 1946 թ. ընթացքում դաշնակցական տեղորոշումները Սիրիայում և Լիբանանում «սպանեցին և խոշտանգեցին ութ հո-գի: Կ. Բլուրի մեջ (Բեյրութի թաղամասերից. — Ն. Մ.) սպանե-ցին Հարություն Կյուլպենկյան անունով երիտասարդը, Թրիփո-լիի մեջ որբ Հակոբ Աշճյանը: Հալեպի ներգաղթի օրերուն խոշ-տանգեցին «Եփրատ»-ի օգնական խմբագիր Ազատ Եփուճյա-

⁵⁹ Նույն տեղում:

⁶⁰ Տե՛ս «Արարատ», 21 սեպտեմբերի, 1946 թ., № 1554:

⁶¹ Տե՛ս «Ժողովուրդ», 21 օգոստոսի, 1947 թ., № 875:

⁶² «Ժողովուրդի ձայն», 15 նոյեմբերի, 1945 թ., № 1002:

⁶³ Նույն տեղում, 20 հունվարի, 1946 թ., № 1046:

⁶⁴ Տե՛ս «Հայ մամուլ», 21 դեկտեմբերի, 1946 թ., № 50:

⁶⁵ Տե՛ս «Եփրատ», 6 նոյեմբերի, 1946 թ., № 2779:

նը և ապա գլխավոր խմբագիր Մարտիրոս Տեր-Ստեփանյանը: Մուսրով մահափորձ մը սարքեցին տոբթ. Պասմաճյանի դեմ: Իսկ անցյալ շաբաթվա ընթացքին Պեյրուլթի մեջ գործեցին երկու ոճիր— մին՝ Պողոս Նաթրյանի սպանությունը և մյուսը Տեհեճյանի դեմ կատարված մահափորձը»⁶⁶:

Տեոթիստական հարձակումներ կատարվեցին նաև Թեհ-րանի «Վերածնունդ» թերթի խմբագիր Հայկ Գարագաշի, Կահիրեի ռամկավարական «Արև» թերթի նախկին խմբագիր Գրիգոր Հաբեկյանի և այլոց դեմ⁶⁷:

Ներշաղթի իրականացմանը խանգարելու նպատակով դաշնակները կանգ չէին առնում ոչ մի միջոցի առջև, անգամ գործարքի մեջ էին մտել Լիբանանի պրոֆաշիստական ղովմիների կուսակցության հետ: Վերջիններս, միացած դաշնակների հետ, «խորհուրդ» էին տալիս հայերին շեղվել Հայաստան, որովհետև և այնտեղ իբր թե սով է ու համաճարակ և ներգաղթողների համար կյանքն ուղղակի անտանելի կլինի: Ղովմիների մամուլը նույնպես ներգաղթի դեմ խաշակրաց արշավանք էր ծավալել:

Սակայն, ինչպես ասում են՝ չկա շարիք, առանց բարիքի: Ներգաղթի դեմ դաշնակցական ղեկավարության ծավալած պայքարը խոր հիասթափություն առաջ բերեց այդ կուսակցության շարքային անդամների մեջ, որոնցից շատերը հրապարակորեն հեռացան դաշնակցությունից: Դաշնակցությունից հրաժարվողները միաժամանակ ցանկություն էին հայտնում վերադառնալ հայրենիք: Միայն 1946 թ. ընթացքում Լիբանանում և Սիրիայում դաշնակցությունից հեռացավ ավելի քան 1200 մարդ⁶⁸: Իրանի Սալմաստի գավառի 40 գյուղերի դաշնակցության մեջ եղած գյուղացիները նույնպես զանգվածաբար հրաժարվեցին այդ կուսակցությունից՝ այն անվանելով «հակահայկական»⁶⁹:

Ներգաղթը խանգարելու և այն կասեցնելու դաշնակների բոլոր փորձերը ձախողում կրեցին: Ամենուրեք հակահարված տալով դաշնակներին, հայրենասիրաբար տրամադրված սփյուռքահայությունը անկասելի կերպով ձգտում էր դեպի հայրենիք:

Իրա կոնկրետ հաստատումը կարող է լինել եգիպտահայ աշխատավորների վերաբերմունքը: Երբ 1947 թ. սեպտեմբերի վերջերին խոլերայի համաճարակի հետևանքով անորոշ ժամանակով հետաձգվեց եգիպտահայերի երկրորդ քարավանի հայրենիք մեկնումը, շատ ծանր դրություն ստեղծվեց գաղթօջախում: Շատերն արդեն վաճառել էին իրենց տները, ազատվել աշխատանքից և բեռները կապած սպասում էին մեկնման, երբ հայտնի դարձավ խոլերայի տարածման փաստը: Եգիպտահայ գաղթօջախի ազգային առաջադիմական կաղմակերպությունները, մասնավորապես եգիպտահայ ներգաղթողների միությունը, շատ ջանքեր գործադրեցին կարիքավոր հայրենադարձներին օգնելու, նրանց վիճակը թեթևացնելու ուղղությամբ: Այդ առթիվ իր վերաբերմունքը դրսևորեց նաև Կահիրեի դաշնակցական «Հուսաբերը»: 1947 թ. հոկտեմբերի 30-ի «Ներգաղթի նոր կերպարանքը» վերնագրով իր խմբագրականում «Հուսաբերը» փորձեց շարախնդալ դժբախտության մեջ ընկած ներգաղթողների վրա և դրպարտել Սովետական Հայաստանին ու ներգաղթը: Վրդովված «Հուսաբերի» այդ շարամիտ գրպարտությունից, մի մեծ խումբ ներգաղթողներ նույնմբերի 6-ին հանդես եկան պատասխան խոսքով, որտեղ հայտարարեցին, թե իրենք բնավ կարիք չունեն «Հուսաբերի» նման «ինքնակոչ և ձրի փաստաբանի մը», որը փորձում է պաշտպանել ներգաղթողների իրավունքները: Նրանք գրում են, որ ներգաղթի հանդեպ «Հուսաբերի» դիրքը նախապես հայտնի լինելով, պարկեշտություն կլիներ մարդկանց դժբախտության պահին գոնե լուել և ոչ թե հեգնել: «Բայց այս պարագային անգամ մը ևս փնտրեցինք հասկանալ այն պատճառը, որ մղած էր «Հուսաբերի» խմբագրին «գթալ» մեր վրա և սիրահոծար գրիչ շարժել մեզի համար: Գիտեինք թե հուսաբերականները հիմնովին կժխտեն այսօրվա մեր հայրենիքի գոյությունը, դիտեինք, որ կուրանան սովետական կառավարությունը, անգիտանալով անոր հասցուցած բարիքները հայ ժողովուրդին, գիտեինք, որ Հայաստան իրենց համար «Վայաստան» մըն է բռնության ու հալածանքի ու դեռ հույսեր ունեն, կերագեն «միացյալ» և «անկախ» Հայաստան մը եռագույնի հովանիին տակ: Ուրեմն ի՞նչ կապակցություն և հետաքրքրություն կրնային ունենալ մանավանդ մեր ներգաղթողներուն նկատմամբ, երբ մենք հակառակ իրենց քարոզած «ճշմարտու-

⁶⁶ «Ժողովուրդ», 12 հունիսի, 1947 թ., № 817:

⁶⁷ Տե՛ս «Սովետական Հայաստան», ամսագիր, № 8, 1948 թ., էջ 52:

⁶⁸ Տե՛ս «Ժողովուրդ», 12 հունիսի, 1947 թ., №17:

⁶⁹ «Վերածնունդ», 2 սեպտեմբերի, 1946 թ., № 217:

թյուններուն» դարձյալ համարձակությունը կունենանք անտեսել այդ բոլորը»⁷⁰:

Հայտարարութեան հեղինակները այնուհետև նշում են, որ հայրենադարձութեան սկզբում թուրքական մամուլը նույնպես «խղճում էր» ներգաղթող «վաթանտաշներուն» և հորդորում՝ «մի քանդեք ձեր բարեկեցիկ կյանքը, ձեր ազատութիւնն ու հանգիստը» և մի մեկնեցեք Սովետական Հայաստան: Թուրքական մամուլի նման վերաբերմունքի պատճառը ներգաղթի հանդեպ լիովին հասկանալի է ամեն մի հայի, բայց չէ՞ որ «Հուսարները» թուրքական մամուլ չէ, «...ուրեմն ի՞նչ էր իր տարրը, ինչո՞ւ իր քունը փախցուցեր է մեր հանգիստը հողալու համար, երբ գացողները անուղղա, խաբվածներ, տգետ մոլորածներ, մինչդեռ «գիտակից» և «իրական հայրենասերները իրենք դեռ ժամանակը հասած չէին նկատեր ներգաղթելու, որքան ատեն եռագույնը (դաշնակցական դրոշմ.— Լ. Մ.) կպակասեր Արարատին գագաթեն»⁷¹:

Այնուհետև նշվում էր, որ դեպի հայրենիք «հազարներու մեկնումը կխռովե իր (դաշնակցութեան.— Լ. Մ.) հոգին, անհամբերութեան նշաններ ցույց կուտա, ...քաղաքական խաղ կտեսնեն ներգաղթի գործին մեջ ու կսկսի կոկորդիլոսի արցունքով ներգաղթողներուս վրա լալ, քանի որ քոլերայով վաքակված եգիպտոսեն նավեր չեն «բարեհաճեր» տանել մեզ, կամ պարսկական կառավարութիւնը արգելած է հայերու ներգաղթը իրանեն...»⁷²:

Պատասխանի հեղինակները վճռականորեն հայտարարում են, որ ներգաղթողները, անկախ «Հուսարների» քարոզներից, «հանձն կառնեն ամեն զոհողութիւն, քանդել տուն, տեղ, գործ և բարեկեցիկ կյանք, հայրենիք վերադառնալու համար, այս զոհողութիւնը ինքնաբերի է և գիտակցական, չի նմանիր կեղծ հայրենասիրութեան...»⁷³:

Շարունակելով վերլուծել «Հուսարների» ինքնակոչ փաստաբանութիւնը, պատասխանի հեղինակները հայտարարում են, որ թերթի հոգսը ուրիշ է, նրա իսկական նպատակն է ընդվզեց-

նել ներգաղթողներին, սակայն մենք «թույլ չենք տար ներգաղթողներու: անունով խոսելու, մենք մեր ցավերը կրնանք շափել, պետք չունինք ձեր շափին, մենք մեր ընելիքները լավ գիտենք, պետք չունինք ձեր խորհուրդներուն, իսկ ձեր հոգածութեան՝ երբեք: Դուք մի անգամ ընդմիջտ բաժանված եք մեզմե ձեր հոգիով թե զգացումներով, հետևաբար ձեր գուրգուրանքը կնմանի կարիճի երախտագիտութեան, որ մեր անձնազոհութիւնը կվարձատրեք ձեր խայթոցով»⁷⁴:

Հայտարարութեան հեղինակները գրում են, թե «քոլերային այնքան չենք վախենար և սարսափիր, որքան ձեր մեզի հանդեպ ցույց տված հետաքրքրութենեն: Մի փորձեք մեր բարոյական կորովը խաթարել, ան շատ բարձր է ու միշտ բարձր պիտի մնա, ժամանակավոր նեղութիւններ ոչ մեկ ազդեցութիւն կրնան ունենալ մեր հայրենասիրութեան վրա, մենք սիրով կըտանինք ու կտոկանք նույնիսկ ավելի ծանրին, որովհետև այս նեղութիւնները անցողակի են և ժամանակավոր:

Մեր երախտագիտութենեն ոչինչ կպակասի ներգաղթը ստեղծողներուն և ներգաղթին համար աշխատողներուն նկատմամբ: Մեր հոգիին վրա ճնշող ցավը այն է, որ հայութեան սրտին վրա անբուժելի պալար մը դարձած եք դուք և պիտի մնաք մինչև ներգաղթի ամբողջական իրականացումը»⁷⁵:

Անդրադառնալով ներգաղթի դեմ դաշնակցութեան ծավալած գործունեութեանը, Կահիրեի «Սավառնակ» շաբաթաթերթը գրում էր, թե դաշնակցական մամուլը, «որ պահ մը ջայլամի պարզամտութեան անձնատուր՝ առերես ներգաղթը կշատագուցեր, իր կուսակցութեան վերջին պատգամ. ժողովի վաղորդայնին իսկ ձեռք առավ հականերգաղթի պայքարը, շար օրինակ հանդիսանալով շարքային տղերց, որպեսզի անոնք ալ պայքար բանան ներգաղթի դեմ, իրենց հասկցած ձևով...»

Այս նենգամիտ պայքարին մեկ երեսն էր անշուշտ Հալեպի «Եփրատի» խմբագրատան ու տպարանին խորտակումը, տեղվույն ներգաղթի գրասենյակին և Ս. Մ. Մ-ի ակումբին ավերումն ու կողոպուտը, որոնք ըստ ականատեսներու վկայութեան եղած են շարքային տղերց առաջնորդութեամբ ու ցուցմունքով: Թերթը եզրակացնում է, որ «Հ. Հ. Դաշնակցութիւնը

⁷⁰ ՀՍՍՀ ՀՍՍՀ ՊԿԱ, ֆ. 362, ց. 8, գ. 30, թ. 29—32:

⁷¹ Նույն տեղում:

⁷² Նույն տեղում:

⁷³ Նույն տեղում:

⁷⁴ Նույն տեղում:

⁷⁵ Նույն տեղում:

անկարգապահ և քառասյին կազմակերպություն մըն է, որ կոչված է ճշմարիտ պատուհաս մը դառնալու սփյուռքի հայություն գլխուն»⁷⁶:

Միանգամայն իրավացի էր ուսման վարական «նոր օր» թերթը, երբ գրում էր. «Ներգաղթի շուրջն առաջացած պայքարը և պայքարը նրա դեմ ազդադավ ձեռնարկ մըն է և, բնականաբար, հայրենասեր հայերը իրենց ձայնը պիտի բարձրացնեն ճշմարտությունն ազդակելով և սուտերը քողադերծելով: Դրա դեմ դաշնակները դիմեցին վատերու անարգ ղենքին, դաշույնին և խարազանին: Ան շէր կրնար լուեցնել ճշմարտության ձայնը, ուրեմն կփորձեր կտրել վայն ազդակող կոկորդը»⁷⁷:

Սփյուռքահայ առաջադիմական ուժերը անարգանքի սյունին դամեցին ներգաղթի դեմ ուղղված դաշնակների ազգադավ վարքագիծը, միահամուռ կերպով հայտարարելով, որ դաշնակները «նեխվող դիակ են, ան պետք է թաղել որքան կարելի է շուտ և ավելի խոր, որպեսզի գարշահոտությունը շթունավորի մեր մաքուր օդը»⁷⁸:

Հայրենադարձության դեմ դատապարտելի գործունեություն էր ծավալել նաև հայ կաթոլիկ հոգևորականության վերնախավը՝ կարդինալ Աղաջանյանի գլխավորությամբ: Այն ժամանակ, երբ հայ առաքելական եկեղեցին իր սրբազան ու առաջնահերթ պարտքը համարեց ամեն կերպ նպաստել ու աջակցել հայրենադարձության իրականացման գործին, այդ նույն ժամանակ Մերձավոր արևելքի երկրներում հայ կաթոլիկ հոգևորականության մի մասը թշնամական դիրք բռնեց նրա նկատմամբ:

1946 մայիսի 17-ին ՏԱՍՍ-ի թղթակցի հետ ունեցած գրույցում Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Զ-ն նշել է, որ էջմիածինը իր սրբազան ու առաջնահերթ պարտքն է համարում օգնել հայրենի կառավարությանը միասնական հայ ժողովրդի այն որդիների ու զուտերերի ընդունման և տեղավորման գործում, որոնք բազում տարիների ընթացքում բռնությամբ արտաքսվել են իրենց հայրենիքից:

«Սփյուռքահայերը, — ասում է կաթողիկոսը, — ձգտում են

վերադառնալ Սովետական Հայաստան ոչ միայն նրա համար, որ այն հանդիսանում է իրենց հայրենիքը, այլ նաև նրա համար, որ այստեղ կան բոլոր հնարավորությունները նորմալ, երջանիկ կյանքի և վաղվա օրվա նկատմամբ վստահություն»⁷⁹:

Ահա թե ինչու Ամենայն հայոց կաթողիկոսը հատուկ շքրջաբերականով ցուցում էր տվել արտասահմանյան հայկական թեմերի առաջնորդներին, որպեսզի նրանք ամեն կերպ աջակցեն ներգաղթի տեղական կոմիտեներին՝ հայրենադարձության հաջող նախապատրաստման և իրականացման գործում:

1947 թ. ապրիլի վերջերին Նյու Յորքում բացված Հայկական համաշխարհային կոնգրեսին հղած իր ողջույնի մեջ անդադառնալով հայրենադարձությանը, Ամենայն հայոց հայրապետը գրել է. «Մեր հայրենիքի հարազատ իշխանությունը բացել է սփյուռքի տարագիր հայության առաջ հայրենիքի դռները, որով ոչ միայն ազատում է հայ ժողովրդին անխուսափելի ճակատան և ազգային դիմազրկման, օտարության մեջ հյուսվելու և անէանալու մեծ վտանգից, այլև լիակատար հնարավորություն ընդձեռնում թվով աճելու, ֆիզիկապես զորանալու հայրենի հողի վրա, գոտեպնդված կուլտուրական ու տնտեսական մեծ հաղթանակներ տարած և վերելքի ճամբան բռնած հարազատների մերձավորությամբ, նոր զարկ ու թափ տալու հայ մշակույթի աննախընթաց զարգացման, հայ ժողովրդի բարեկեցության և ազգային հզորության ամրապնդման: Հայ ժողովրդի պարտականությունն է ամեն ինչ ստորադասել ազգահավաքման, հայրենադարձի նվիրական գաղափարի կենսագործման»⁸⁰:

Այնուհետև կաթողիկոսը նշում էր, որ ետպատերազմյան տնտեսական վերականգնման ու զարգացման մեծագույն դժվարությունների և բնության տարերքի՝ երաշտի պատճառած թերաբերիության ծայրագույն պայմաններում անգամ լայնորեն բացվեցին Սովետական Հայաստանի դռները սրտաբաց ընդունելու համար անհարազատ հորիզոնների ներքո տարաբնակ, առժամապես հայրենագուրկ հայ հարազատների առաջ: Անձուկ սահմաններով և ազգաբնակչությամբ սակավաթիվ Սովետական Հայաստանը, հաղթահարելով բազում դժվարություններ, հայ-

⁷⁶ «Սավառնակ», շարաթաթիրթ, Կահիրե, 20 դեկտեմբերի, 1947 թ., № 6, նաև՝ շՍՍՀ շՍՍՀ ՊԿԱ, ֆ. 362, ց. 8, գ. 53, թ. 19:

⁷⁷ «Նոր օր», Լեօրյա թերթ, Ֆրեզնո, 24 հունվարի, 1947 թ., № 7:

⁷⁸ «Արևմուտք», 11 հունվարի, 1948 թ., № 10(146):

⁷⁹ շՍՍՀ շՍՍՀ ՊԿԱ, ֆ. 823, ց. 1, գ. 17, թ. 1—4:

⁸⁰ Նույն տեղում, գ. 4, թ. 7—11:

րենի նոր օջախներ է վառում բազմահազար աստանդական հայերի համար: Բնաշխարհի հայութունը անձնագոհորեն իրեն նեղ արեց, բայց հարազատներին տեղ արեց: «Անհավատալի հրաշագործություն է,— ասում է կաթողիկոսը լրագրողների հետ ունեցած զրույցի ժամանակ,— ամենակարճ ժամանակամիջոցում հաղթահարել անհաղթահարելին և հայրենատես ու հայրենաբնակ դարձնել հայրենադարձների բազմահազար բազմությունը: Անհավատալի հրաշագործություն է թվում տեսնել և համոզվել, որ պես-պես երկրներից եկած, տարամերժ կարգերում սնված, շահադիտական մթնոլորտում դաստիարակված հայրենադարձ ժողովուրդը՝ առասպելորեն կարճ ժամանակում հաղթահարեց հասարակական կենցաղի փոխանցման դժվարությունները և հարազատացավ սովետական իրավակարգի, սոցիալիստական հանրակենցաղի պայմաններին:

Հոգեզմայլ է սփյուռքի պատմական հայրենադարձը, հոգեզմայլ հարությունն է հայ տարագրության, խոշորագույն կրոնականը հայ ազգահավաքի և հարահոս աղբյուրը հայ ժողովրդի հոգևոր միաձուլման և հայ հայրենիքի, հայրենական պետության հզորացման»⁸¹:

Կաթողիկոսը ուղղակի հայտարարում է, որ ով բացահայտ թե գաղտնի դավեր է լարում հայրենադարձության դեմ, նա կամա թե ակամա դուրս է մնում հայ ժողովրդի ազգային միասնությունից, դառնում է հայ ժողովրդի ջարդարարների զինակիցը: Նա կոչ է անում, ասելով. «Հայ մարդու սրբազան պարտականությունն է՝ վառ, անշեջ պահել հայրենադարձի վեճ գաղափարը հայ ժողովրդի մեջ, զորավիգ լինել ազգահավաքման հայրենասիրական մեծ գործին, գուրգուրել, պահել ու ծավալել համազգային խանդավառությունը և միաժամանակ ապահովել ու երաշխավորել հայրենադարձի ծավալման տնտեսական, քաղաքական և բարոյական բոլոր կովանները: Հայ մարդը դատապարտված չէ մշտենջենապես մնալ «հայ մատուղ» հայրենագուրկի անպատվաբեր վիճակում:

Հայը՝ հերոսամարտիկ զավակների սրբազան արյամբ և աշխատավոր զավակների ազնիվ քրտինքով սրբագործված և արգավանդյալ հայրենիք ունի արդեն:

Հայրենադարձը հայրենասիրության ուղիղ և արդար ճամբան է հանդիսանում»⁸²:

Այսպիսին էր հայ առաքելական եկեղեցու դիրքը հայրենադարձության նկատմամբ: Մինչդեռ տրամագծորեն դրան հակառակ վերաբերմունք ուներ հայ կաթոլիկների պատրիարք, Մերձավոր և Միջին արևելքի հոռոմեոզական եկեղեցիների պետ, կարդինալ Աղաջանյանը, որը հայ կաթոլիկ համայնքին ուղղված իր 1946 թ. հուլիսի 6-ի «Թուղթ հովվական» կոնդակում, զրպարտելով սովետական Հայաստանը, ճգնում էր համոզել հավատացյալներին շնորհաղթել հայրենիք, քանի որ այնտեղ կրոնը ազատ չէ:

Իր կարդինալության այդ անդրանիկ կոնդակում հայր Աղաջանյանը շոշափում էր այնպիսի խնդիրներ, որոնք կրոնական շրջանակները մեջ չէին մտնում: Կարդինալ Աղաջանյանի կոնդակը թեպետ ըստ բովանդակության երկու մասից էր կազմված՝ Հռոմի պապի ու վատիկանի հայասիրության գովերգությունից և սովետական Հայաստանի հասցեին զրպարտություններից, այնուամենայնիվ հետապնդում էր մի նպատակ՝ բոլոր միջոցներով կասեցնել, խափանել սփյուռքահայության հայրենադարձությունը: Իսկ որո՞նք էին այն զրդապատճառները, որ հայր Աղաջանյանին մղել էին հանդես գալու վատիկանի և մասնավորապես Պետրոս XII պապի «հայասիրությունը» թմբկահարողի դերում, ի՞նչ հիմքեր ուներ նա ներգաղթի դեմ աղմկելու:

Իհարկե, պատմությունը երբեք չի արձանագրել ինչ-որ փաստ, որ հոռոմեական որևէ քահանայապետ պաշտպան կանգնած լիներ հայությանը կամ վատիկանը սեր ու հոգածություն տաժած լիներ Հայաստանի ու հայ ժողովրդի հանդեպ: Ընդհակառակը, դարերի ընթացքում Հռոմի եկեղեցին միշտ էլ աշխատել է օգտվել հայ ժողովրդի համար ստեղծված զմեղակ պայմաններից և ձգտել է ջլատել, մասնատել նրա ամբողջականությունն ու միասնականությունը, հարվածել նրա ազգային ինքնուրույնությանը՝ հրելով նրան լատինացման-կաթոլիկաչման ուղու վրա: Հակառակ այս իրողությանը, կարդինալ Աղաջանյանը գովերգում էր վատիկանի ու նրա պետերի հայասիրությունը և հանուն կաթոլիկության իր հոտին խորհուրդ էր տալիս չդիմել հայրենադարձության, որովհետև դա կնշանակի ու-

⁸² Նույն տեղում:

⁸¹ Նույն տեղում:

րանալ հավատքը: Իր կոնզակում նա գրում էր. «Ահավոր պատերազմի ընթացքին ուրեմն, երբ դաշնակից պետությունները կհայտարարեին, որ իրենց հաղթանակով պիտի ապահովվիր մարդկությունը, ի միջի այլոց, կրոնքի կատարյալ ազատություն, իրավունքով և անձկանոք մենք ալ ակնդետ կմնայինք այդ օրվան, որ հնարավորություն պիտի տար մեզի, անխախտ պահելով մեր կրոնական համոզումներն ու կարգերը, երթալու մայր հայրենիք մեր բաժինը բերելու անոր վերաշինություն և բարոյական ու կրոնական վերելքին»:

Բայց ոչ սակավ եղավ մեր հուսախաբուծյունը, երբ հայրենադարձի բանբերները և անոնց մունետիկները համազգային այս գործին հարանվանական շեշտված բնույթ մը տվին և հայ կաթողիկեության հանդեպ, որ ձարերու բռնատիրական ժամանակ անգամ, կվայելեր իր ազատ կազմակերպությունը, հայրենի գավառներու մեջ, կզլացվեր արդար և լիովին արժանացած ազատամիտ վերաբերում մը:

Ավելին կա. ըսվեցավ, օրինակի համար, թե պաշտոնական անձեր հայտարարած ըլլան, որ հայ կաթողիկե կղերը կրնա երթալ հայրենիք, պայմանով, որ խզե հպատակության կապը Հռոմա ս. Աթոռին հետ: Սակայն ո՞վ չըմբռներ, որ նման պարտադրանք մը հավասար է կաթողիկե հավատքի ուրացման»⁸³:

Հայր Աղաջանյանի այս ճամարտակությունների նպատակն է ապացուցել, որ մայր հայրենիքում «կրոնքի կատարյալ ազատություն» գոյություն չի ունեցել և միայն պատերազմից հետո պետք է ստեղծվեր այդ ազատությունը: Սակայն ինչպես բուրդի, այնպես էլ հայր Աղաջանյանին քաջ հայտնի էր, որ սովետական սահմանադրությամբ կրոնական պաշտամունքի ազատությունը վաղուց ի վեր ճանաչված էր բոլոր քաղաքացիների համար և բնավ կարիք չկար «անձկանոք» ու «ակնդետ» սպասելու «այն օրվան», երբ հնարավորություն կտրվի «անխախտ պահելով կրոնական համոզմունքներն ու կարգերը երթալու մայր հայրենիք»: Հայր Աղաջանյանը շատ լավ գիտեր, որ մայր հայրենիքում ոչ ոք չի բռնանում ու հալածում անհատին իր կրոնական համոզմունքների համար: Բայց իրականում նրան հարցի այդ կողմը շատ քիչ էր հետաքրքրում: Այդ իրողության հանդեպ անգիտության շքմեղանք ընդունելով, նա

աշխատում էր զրպարտությունների թանձր քողով պարտրել հայրենիքը, որպեսզի միամիտ հայրենաբաղձներին գցեր երկընտրանքի ու վարանման մեջ և նրանց ետ պահեր այնտեղ ներգաղթելուց:

Հայր Աղաջանյանը ճգնում էր բամբասանքներով վարկաբեկել Սովետական Հայաստանի ղեկավարներին, որ իբր «պաշտոնական անձեր հայտարարած» են, թե Հայաստան մեկնող կաթողիկեները պետք է հրաժարվեն իրենց հավատքից կամ հայրենիքում կաթողիկեության հանդեպ այլ վերաբերմունք գոյություն ունի, քան այլ դավանանքների հանդեպ: Թե ե՞րբ, որտե՞ղ և ո՞ր «պաշտոնական անձերն» էին այդպիսի հայտարարություններ արել, այդ մասին հայր Աղաջանյանը խորհրդավոր լուրջություն էր պահում:

Կարդինալի զրպարտությունների բուն նպատակը... բացահայտվում է նրա կոնզակի այն տեղերում, որտեղ ասված է. «Ուրեմն մեզի կպարտադրվի տակավին պանդխտության մեջ մնալ, որպեսզի անաղարտ պահենք մեր կաթողիկե ս. հավատքը»⁸⁴:

Այսպիսով, կարդինալ Աղաջանյանը իր հոտին քարոզում է մնալ պանդխտության մեջ և շեղվել հայրենիք, քանի որ այնտեղ «կրոնքի ազատություն» չկա: Սակայն ճարպիկ շրջանց կատարելով, նա իսկույն աշխատում է կանխել այն հարցը, թե մինչև ե՞րբ հայ կաթողիկեները պետք է մնան պանդխտության մեջ ու պատասխանում է՝ «մինչև դարձը քրիստոնեական արշալույսի» և հորդորում է սպասել «հուսալից, թե պիտի հնչե Աստուծոմե որոշված այդ ցանկալի ժամը», իսկ մինչ այդ «պիտի մնանք սփյուռքի մեջ, վայելելով ազնիվ և լախամիտ ասպնջականությունը գաղթավայրերում»⁸⁵:

Հայրենադարձության այն հիրավի պատմական օրերին, երբ հարյուր հազարավոր հայեր արձանագրվում էին հայրենիք մեկնելու համար, երբ նրանցից տասնյակ հազարավորներ արդեն փոխադրվել էին Սովետական Հայաստան՝ իրենց ոտքերից ընդմիջտ թոթափելով պանդխտության անհայտ ճանապարհների փոշին, իսկ մյուսները ակնդետ սպասում էին իրենց հերթին, վատիկանի այդ բարձրաստիճան հոգևորականը իր կոնզակով

⁸³ Նույն տեղում, գ. 29, թ. 3:

⁸⁴ Նույն տեղում, թ. 4:

⁸⁵ Նույն տեղում:

հորդորում էր շմեկնել հայրենիք, այլ շարունակել մ.ալ օտարության մեջ: Հայր Աղաջանյանը, աչք փակելով իրականություն հանդեպ, ներբողներ էր հյուսում գաղթական կյանքը հրապուրիչ ներկայացնելու համար: Նա միտումնավոր կերպով մոռացություն էր մատնում հայ պանդուխտի շարքաշ, հաճախ արհամարհված վիճակը, նրա իրավազրկությունը, գործազուրկ ու անօթեան, հիսաքաղց թափառումները երկրե-երկիր և քարոզում մնալ այդ վիճակում, չներգաղթել հայրենիք:

Սփյուռքահայ աշխատավորները, առաջադիմական բոլոր ուժերը միահամուռ կերպով հանդես եկան կարգինալ Աղաջանյանի այդ հայրենադավ հորդորների դեմ, նրա առաջ քաշած «մենք կմնանք արքսորի մեջ, պահելու համար մեր կրոնքն ու հավատը» վնասակար թեզի դեմ:

Կարգինալ Աղաջանյանի այդ կոնդակի դեմ Եգիպտոսից «նումբ մը կաթուղիկ հայրենասերներ» ստորագրություններ բողոքում հենց կաթուղիկ հավատացյալները գրում էին, որ դա փաստորեն նշանակում է ենթարկվել Վատիկանի քաղաքականությունը՝ դավաճանելով ազգային կենսական շահերին:

«Ծթե կարտինալության ծիրանին կհարկադրե Վատիկանի քաղաքականության ենթարկվիլ,— գրում էին բողոքի հեղինակները,— բայց պետք է գիտենա ամենապատիվ կարտինալը, որ ինք զավակն է բազմաշարշար ազգի մը, որ առանց կրոնական խտրության հայ անունին, հայ հայրենիքին համար, արքսորվեցանք, կոտորվեցանք, թեև այն ատենները մեր կրոնավորներեն շատերը մեր միամտությունը օգտագործեցին համոզելու, թե կաթուղիկությունը բավարար միջոց մըն է հալածանքե և կոտորածե գերծ մնալու համար:

Մենք պարզ հավատացյալ կաթուղիկ հայերս, որ մեր հավատքին և ազգին համար զոհվեցանք, կրկին պատրաստ ենք զոհվելու, այս անգամ սակայն, մեր հայրենիքի մեջ և անոր համար, բայց երբեք արքսորանքի՝ օտարության և օտարներու հաշվույն:

Մեր դարավոր երազը իրականացած է, ունինք հայրենիք: Ան, որ հայ է, պետք է վերադառնա, որովհետև հոն է միայն, ուր կարելի է հայը հայ պահել»⁸⁶:

Սիրիայում ՀՄՄՀ Մինիստրների խորհրդի ներգաղթի լիա-

զոր Ա. Հովհաննիսյանը, 1947 թ. կատարված հայրենադարձության վերաբերյալ կազմած իր զեկուցագրում նշել է, որ հայ կաթուղիկ հոգևորականությունը կարգինալ Աղաջանյանի ղեկավարությամբ ծավալած իր հականերգաղթյան գործունեությամբ ոչնչով չի զիջում դաշնակցականներին: Հայ կաթուղիկ հոգևորականությունը, բացի Սովետական Հայաստանի դեմ կատարվող զրպարտություններից, դաշնակների հետ ձեռք ձեռքի տված շարամիտ ագիտացիա էր մղում ներգաղթի դեմ: Դաշնակների շարամիտ ագիտացիա էր մղում ներգաղթի դեմ: Դաշնակների հետ միասին նրանք իրենց արքեպիսկոպոսին ուղարկել էին Քեսապի շրջանի հայկական գյուղերը՝ ներգաղթը խանգարելու համար: Այդ արքեպիսկոպոսը գյուղացիներին փորձում էր համոզել, թե Հայաստանում կատարյալ սով է, չկա կրոնի ազատություն և այլն, որպեսզի նրանք ետ կանգնեին ներգաղթելու իրենց մտադրությունից:

Հականերգաղթյան նման եռանդուն գործունեություն էր ծավալել նաև կաթուղիկ եպիսկոպոս Զոհրաբյանը՝ Զեզիրեի շրջանի գյուղերում: Վերջինս համոզվելով իր քարոզների անհետևանք մնալու մեջ, հեռագրով խնդրում է սիրիական կառավարությունը՝ արգելել հայերի հայրենադարձությունը, պատճառաբանելով, թե իբր սովետական ներկայացուցիչների գործադրած ճնշման տակ են հայ գյուղացիները ցուցակագրվել ներգաղթելու համար: Բարեբախտաբար սիրիական կառավարությունը անպատասխան թողեց եպիսկոպոսի այդ զրպարտությունները և ցուցում տվեց տեղական իշխանություններին՝ աջակցել հայերի հայրենադարձությանը⁸⁷:

Սփյուռքահայ առաջադիմական ուժերի համատեղ պայքարի շնորհիվ ձախողում կրեցին ներգաղթի դեմ ուղղված այդ կարգի բոլոր բանսարկությունները և հաջողությամբ իրականացվեց տասնյակ հազարավոր տարագիրների հայրենադարձությունը:

* * *

Հայրենադարձությունը, որի իրականացումն անմիջականորեն առնչվում էր տարբեր երկրների հետ, մի շարք կառավարություններ ի կողմից հանդիպեց անբարյացակամ, ուղղակի

⁸⁶ Նույն տեղում, ֆ. 362, ց. 8, գ. 1, թ. 6:

⁸⁷ Տե՛ս նույն տեղում, ֆ. 326, ց. 1, գ. 205, թ. 9—18:

թշնամական վերաբերմունքի: Նկատելի էր հատկապես ԱՄՆ-ի, Անգլիայի, նրանց ճնշմամբ նաև Իրանի և, առանձնապես, Թուրքիայի կառավարող շրջանների թշնամական վերաբերմունքը տարագիր հայույթյան Սովետական Հայաստան հայրենադարձվելու ցանկության նկատմամբ: Եթե առաջին երկուսի վերաբերմունքը կարելի էր բացատրել զուտ քաղաքական մոտիվներով, ապա վերջինիս՝ Թուրքիայի դիրքորոշումը ավելի բազմաբնույթ պատճառներ ուներ:

Թե՛ սփյուռքում և թե՛ հայրենիքում համայն հայույթյունը զանգվածային հայրենադարձության իրականացումը դիտում էր որպես Թուրքիայի կողմից զավթված հայկական տերիտորիաները իրենց օրինական տիրոջը վերադարձնելու գործնական հիմնավորում: Եվ հենց դա էր հիմնական պատճառը, որ թուրքական կառավարությունը բացահայտ ու կատաղի թշնամանքով ընդունեց արևմտահայույթյան աշխարհասփյուռ բեկորների զանգվածային հայրենադարձությունը վերսկսելու մասին սովետական կառավարության որոշումը, հայ ժողովրդի ազգային համախմբման հնարավորության ստեղծումը: Հենց որ հրապարակվեց հայրենադարձության վերաբերյալ ՍՍՀՄ ժողովուրդների որոշումը ու ամենուրեք, այդ թվում և Թուրքիայում, սկսվեցին ներգաղթի արձանագրությունները, թուրքական կառավարությունն ու մամուլը անցան հարձակման:

Թուրքական թերթերում սպառնալից հոդվածներ էին տպագրվում ներգաղթելու համար ցուցակագրվող հայերի դեմ: Ոստիկանությունը նույնպես գործի էր անցել: Թուրք ոստիկանները բռնությամբ, ծեծելով ցրում էին Ստամբուլի սովետական հյուպատոսարանի կամ հայկական պատրիարքարանի մոտ ցուցակագրվելու համար հավաքված հայերին: Չնայած այդ ամենին, հայերը շարունակում էին ցուցակագրվել հայրենիք մեկնելու համար: Հակառակ այդ իրողությանը, թուրքական մամուլը ճշմունք էր ցույց տալ, թե իբր Թուրքիայում ապրող հայերը չեն ցանկանում հեռանալ երկրից և Ստամբուլում լիովին ձախողված է ներգաղթը: Թուրքական «Սոն պոստա» և «Թասվիր» թերթերում լրագրող էլքեմ Ուշազլըկիլը գրում էր, թե իբր հագիվ մի երկու հարյուր հոգի է արձանագրվել ներգաղթելու համար, որոնք «բոլորն ալ դատարկապորտներ, ծեր կիներ, արկածախնդիրներ են» և «Թուրքիո հայերը միակ բաղձանք մը ունին, այն է՝ թուրք ապրիլ թուրք հողերու վրա»: Պատասխա-

նելով թուրք ազգայնամուլ լրագրողին, բուլղարահայ «Երևան» թերթը գրել է. «Ոչ ոք իրավունք ունի մեզի արգելելու որպես մարդ ու որպես հայ ապրելի, քանի որ հայ ենք ծներ, քանի դեռ կա Սովիետ Հայաստանը»⁸⁸:

Թուրքական կառավարող շրջանները ամեն կերպ ձգտում էին ստեղծել այն պատրանքը, թե հայրենադարձությունը Թուրքիայում ձախողված գործ է, քանի որ հայերն այնտեղ իբր հավասար իրավունքներ ունեն իրենց թուրք եղբայրների հետ և ապրում են մեծ սիրով: Ահա թե ինչ էր գրում լրագրող Եալչընը «Ուլուս» թերթում. «Ներգաղթը տապալված է: Սովետական հյուպատոսարանի մոտ կատարված դիմումներն ալ վերջ գտան, հալեցան ներգաղթող բազմությունները: Շշուկները հմայք ունենալի դադրեցան»⁸⁹:

Իհարկե, սա իրականության ուղղակի կեղծում էր, քանի որ հայկական աղբյուրները միանգամայն այլ բան էին հաղորդում: Այդ նույն ժամանակի վերաբերյալ Բեյրութի «Արարատը» Ստամբուլից ստացված մի նամակից քաղվածք մեջքերելով, հաղորդում էր, որ թեպետ թուրքական իշխանություններն ու մամուլը գազազած են «ներգաղթի արձանագրությունների պատճառով և ամեն օր հազար լուտանք կհայտնեն... գրվողներուն (ներգաղթի համար ցուցակագրվողներին.— Շ. Մ.) և հազար ու մեկ շողոքորդություն մտալ ուզող հայ եղբայրներուն, միայն իմ արձանագրված օրս 4000 հոգի գրվեցան, միջ թըրքական թերթեր կգրեն թե մինչև հիմա արձանագրվողները 200 հոգին շանցնիր, բոլորն ալ դատարկապորտներ, արկածախնդիրներ: Իրականությունը սա է, որ հյուպատոսարանին (սովետական.— Շ. Մ.) առջև սպասողներուն մեջ 2—3 հոգի դատարկապորտներ կան, վարձված թրքական կառավարության կողմեն»⁹⁰:

Բայց կամա թե ակամա, թուրքական մամուլը երբեմն հարկադրված էր խոստովանել ճշմարտությունը՝ այն, որ հայրենադարձությունը թուրքահայերի մեջ նույնպես առաջ է բերել մեծ աշխուժություն, որ հազարավորներ սրտատրոփ սպասում են մեկնման բերկրալի պահին և դա լրջորեն անհանդուսա-

⁸⁸ «Երևան», 2 փետրվարի, 1946 թ., № 21(121):

⁸⁹ Տե՛ս «Ժողովրդի ձայն», 10 դեկտեմբերի, 1946 թ., № 1263:

⁹⁰ Տե՛ս «Արարատ», 4 հունվարի, 1946 թ., № 1454:

նում էր Անկարայի կառավարող շրջաններին ու թուրք ազգայնականներին: Ահա թե ինչ էր գրում այդ մասին թուրքական «Թասվիր» թերթը իր 1945 թ. դեկտեմբերի 24-ի համարում, անդրադառնալով հայերի ներգաղթի արձանագրություններին. «Իստանպուլի մեջ հարյուրավորներ սրտատրոփ կսպասեն առաջին իսկ հրավերին, որպեսզի դուրս նետվեն մեր դռներն և թակարդ լարեն մեր դրացիին սահմանին երկայնքին»⁹¹:

Թուրքական մամուլում հայրենադարձության և հայկական տերիտորիալ պահանջների առթիվ սկսված հակահայկական և հակասովետական կամպանիան իր գործնական արձագանքներն ունեցավ խավարամիտ տարրերի ու թունոտ ազգայնականների շրջանում: Նրանք մի շարք հակահայկական ու հակասովետական ցույցեր կազմակերպեցին Անկարայում, Ստամբուլում, Իզմիրում, Տրապիզոնում և այլ վայրերում: Դրանք, հրահրված լինելով հենց կառավարության կողմից, նպատակ ունեին ահաբեկել հայերին և նոր ջարդերի սարսափի տակ նրանց ետ պահել ներգաղթի համար ցուցակագրվելուց: 1945 թ. դեկտեմբերի 4-ին այդպիսի մեծ ցույց տեղի ունեցավ Ստամբուլի սովետական հյուպատոսարանի առջև, որտեղ գտնվում էր նաև հայերի ներգաղթի կոմիտեի գրասենյակը: Այդ նույն ժամանակ Անկարայից ավելի քան 200 հայ ընտանիքներ արտրվեցին անհայտ ուղղությամբ⁹²:

Ինչպես ճիշտ կերպով բնութագրել է «Հայաստանի կոչնակը», Թուրքիայի հայերի մեջ ներգաղթի շուրջն առաջացած հայրենասիրական «այս միահամուռ պոթկումը անսպասելի շէր, որ ունենար իսկույն իր հակադարձությունը, ինչ որ շուրջացավ Պոլսո, Կարինի և ուրիշ քաղաքներու մեջ կազմակերպված հակասովիեթ ցույցերով, անգամ մը ևս երևան բերելու, թե՛ հայկական պահանջները և հայ դատին միջազգային վերերևումը ո՛րքան հուզած են էնկյուրիի կառավարությունը, որ, ավա՛ղ, դեռ այսօր ալ, այնքան անօգուտ փորձարկություններն ետք՝ ազգային ուրույն շահերն զրոյված ունի իր պաշտպան փաստաբանները»⁹³:

⁹¹ Տե՛ս «Առավոտ», օրաթերթ, Բեյրութ, 13 հունվարի, 1946 թ., № 51 (2042):

⁹² Տե՛ս «Արարատ», 4 հունվարի, 1946 թ., № 1454:

⁹³ «Հայաստանի կոչնակ», 16 փետվարի, 1946 թ., № 7, էջ 174:

Հետաքրքիր է, որ գառան մորթի հագած թուրք լրագրող գայլերը հայերին զգուշացնում էին շներգաղթել Ռուսաստան, որովհետև այնտեղ սով է, տարածված են հիվանդություններ ու անկարգություններ, և գնացողները ծանր վիճակի մեջ կընկնեն: Թուրքական թերթերը չբմեղանքով հարց էին տալիս, թե ինչո՞ւ են հայերը ուղում գաղթել «դրախտավայր, հանրապետական, դեմոկրատիկ Թուրքիային, միթե՞ նրանք երջանիկ չեն, ազատ չեն. մնում է կարծել, թե իրապես հիմարներ են հայերը, որ թուրքական դրախտը ձգած՝ Սովետական Հայաստանի դժոխքին մեջ ապրելու կերթան... մինչ Թուրքիո մեջ ամեն ինչի լավը հայունն է, գեշը՝ թուրքինը»⁹⁴:

Հայերի ներգաղթի շուրջը Թուրքիայում ծավալված բուռն պայքարի շրջանում բանն այնտեղ հասավ, որ թուրք պատմաբան Սուֆեթ էնկը փորձեց ժխտել անգամ հայ ազգի և հայոց լեզվի զոյություն փաստն իսկ: Թուրք կեղծարարին ձայնակցեցին իրենց ազգային դիմագիծն ու արժանապատվությունը լիովին կորցրած որոշ հայ կոչվողներ: Դրանցից էր, օրինակ, ատաբապարցի Պողոս Զինիլի անունը կրող մեկը, որը «Ենի Սապահ» թերթում հրապարակեց մի նամակ, որի մեջ նույնպես թուրքահայերին խորհուրդ էր տալիս շներգաղթել «ռուսական Հայաստան», քանզի Թուրքիայի հայերը «ոչ մեկ առնչություն կրնան ունենալ Կովկասի հայ հանրապետության և ընդհանրապես հայ ազգին հետ: Մենք թուրք ենք, բայց կպատկանինք հայ դավանանքին, իսկ Երևանի հայ ազգին հետ ոչ մեկ կապ չունինք»⁹⁵, — այսպես էր զառանցում այդ իսկապե՞ս իրականում գոյություն ունեցող, թե՛ զուտ երևակայական ողորմելի խրտվիչակը:

Չնայած թուրքական պաշտոնական շրջանների ու մամուլի այդ բոլոր զղաձգություններին, Թուրքիայի հայ բնակչությունը շարունակում էր ցուցակագրվել ներգաղթելու համար: Ահա թե ինչու թուրքական հետադիմությունը փոխեց իր տակտիկան: Ներգաղթը վիժեցնելու նպատակով թուրքերն սկսեցին նոր հեքիաթներ հորինել: Նրանք գրում էին «սովետական դժոխքի ծանր պայմաններից փախած», իբր թե բուլշեիկների կողմից

⁹⁴ Տե՛ս «Միություն», շաբաթաթերթ, Հայֆա, 29 դեկտեմբերի, 1946 թ., № 68:

⁹⁵ Տե՛ս «Նոր կյանք», 15 փետրվարի, 1946 թ., № 572:

«հալածված հազարավոր հայ եղբայրների» մասին: «Սոն սաաթ» թերթը այդ առթիվ գրել է. «Ռուսիայեն առնված լուրերուն համաձայն ներգաղթող կարավանները ի տես իրենց հանդեպ ի գործ դրված սովիետ վարչաձևին, իրենց հույսերնին կտրած են»⁹⁶: «Հայերի ներգաղթը դադարած է այլևս, նրանք չեն ցանկանում ներգաղթել Ռուսաստան»⁹⁷, — «Սոն սաաթին» ձայնակցում էր «Ծնի Սապահը»: Թուրքական թերթերը միտումնավոր կերպով չէին ուզում անգամ հայերի մեկնած երկիրը կոչել իր իսկական անունով՝ Հայաստան, այլ անվանում էին Ռուսաստան, քաջ իմանալով, որ Ռուսաստանն ու Հայաստանը հավասարազոր անդամներն են Սովետական Միության:

Թուրք շովինիստները շատ լավ էին գիտակցում ներգաղթի բոլոր հետևանքները, հայերի ազգահավաքման հեռանկարային արդյունքները և հենց այդ պատճառով էլ դեմ էին դուրս գալիս հայրենադարձությանը: Այդ մասին շատ որոշակի արտահայտվեց «Ջումհուրիեթ» թերթը, գրելով. «Պարզ և որոշ պետք է ըլլա, որ ներգաղթը կապված է հայկական հողերու գրավման հետ»⁹⁸:

Սփյուռքահայ գաղթօջախներում ստեղծված հայկական ազգային խորհուրդները և 1947 թ. գարնանը տեղի ունեցած Հայկական համաշխարհային կոնգրեսը, հայրենադարձության հետ կապված, ինչպես արդեն ասվել է, այդ ժամանակ դիմեցին ՄԱԿ-ին և մեծ տերությունների ղեկավարներին, կոչ անելով Սովետական Հայաստանի հետ վերամիավորել արևմտահայկական հողերը, որպեսզի աշխարհասփյուռ հայությունը հնարավորություն ունենա հավաքվելու իր հայրենիքում:

Պաշտպանելով հայ ժողովրդի այդ արդարացի պահանջը, ՄԱԿ Կենտկոմի օրգան «Պրավդա» թերթը գրեց. «Արտասահմանյան երկրներում գտնվում են մեկ միլիոն հայեր: Նրանք ամբողջ հոգով ձգտում են դեպի հայրենիք: Ամբողջ հայ ժողովուրդը հարց է դնում Թուրքիայի կողմից բռնագրավված հայկական հողերը Սովետական Հայաստանին վերադարձնելու մասին»⁹⁹:

⁹⁶ Տե՛ս «Եփրատ», 22 հոկտեմբերի, 1946 թ., № 2767:

⁹⁷ Տե՛ս «Արաբ», 2 նոյեմբերի, 1946 թ., № 45:

⁹⁸ Տե՛ս «Ժողովուրդի ձայն», 13 հունվարի, 1946 թ., № 1041:

⁹⁹ «Սրաբա», 6 փետրվարի, 1946 թ., № 31:

Ահա այս էր՝ հայրենադարձության հետ կապված Թուրքիայից հայկական տերիտորիաների պահանջը, որ խիստ անհանգստացնում էր թուրքական կառավարող շրջաններին և նրանց հովանավորներին: Ինչպես հայտնի է, հենց այս վերջիններիս՝ անգլո-ամերիկյան իմպերիալիստների ջանքերով էր, որ ՄԱԿ-ում դրական լուծում չստացավ հայկական տերիտորիաները Սովետական Հայաստանին վերադարձնելու արդարացի պահանջը:

* * *

Ինչպես հայրենադարձության նախորդ երկու փուլերում, այնպես էլ 60—70-ական թվականներին նրա շուրջը շարունակվում է լարված պայքարը սփյուռքահայ առաջադիմական ու հետադիմական ուժերի միջև: Ինչպես անցյալում, այնպես էլ այս շրջանում հայրենադարձության դեմ խիստ վնասակար դործ է կատարում դաշնակցությունը, որի վերաբերմունքը զանգվածային նոր ներգաղթի հանդեպ մշակվել է 1963 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Բեյրութում տեղի ունեցած նրա 18-րդ համագումարում:

Այդ համագումարը հրահանգ տվեց դաշնակցական տեղական կազմակերպություններին՝ բացահայտորեն հանդես չգալ հայրենադարձության դեմ, սակայն անպայման օգտագործել այդ գործում նկատվող ամեն տեսակ վրիպումներն ու թերությունները այդ միջոցառումը վարկաբեկելու և սովետական իշխանության դեմ պայքար ծավալելու նպատակով:

Եվ ահա, դաշնակցության տեղական կազմակերպությունները, ի կատարումն իրենց համագումարի դիրեկտիվների, ակտիվ կամպանիա ծավալեցին հայրենադարձության դեմ: Այդ տեսակետից խիստ բնորոշ է դաշնակցների գործունեությունը Իրանում, որտեղից 60—70-ական թվականներին կատարվել է ամենամեծ թվով հայրենադարձությունը:

Վերևից տրված հրահանգի համաձայն դաշնակցական էմիսարները շրջում էին Իրանի հայաբնակ գյուղերում և գյուղացիներին՝ ազիտացիա անում հրաժարվել Սովետական Հայաստանի ներգաղթելու մտադրությունից: Իրենց ազգադավ նպատակին հասնելու համար նրանք գործադրում էին կաշառք, սպառնալիքներ, Սովետական Հայաստան մեկնած առանձին

հայրենադարձներից ստացված այնպիսի նամակներ, որոնցում խոսվում էր այս կամ այն դժվարություն մասին և այլն¹⁰⁰:

Հետադիմական առանձին թերթեր ու խմբակցություններ ոչ միայն զրպարտում են Սովետական Հայաստանը, այլև՝ ֆինանսավորվելով իմպերիալիստական հետախուզությունների կողմից, բացահայտ ու գաղտնի միջոցներով պայքարում են հայրենադարձության դեմ, որպեսզի տարագիր հայերին գաղթեցնեն դեպի արևմտյան երկրներ:

Այդ ճանապարհով Ավստրալիա, Բրազիլիա, Կանադա և արևմտյան այլ երկրներ մեկնած մոլորյալներից շատերը իրենց հարազատներին գրած նամակներում, մամուլում ու հրապարակային ելույթներում անիծում են նրանց, ովքեր գայթակղեցրել են իրենց և արտագաղթի մղել դեպի օտար ու հեռավոր ափեր: Օրինակ՝ Կանադա մեկնած Հովհ. Յաղչյանը, նկարագրելով իր ողբալի վիճակը, նամակն ավարտում է հետևյալ խոսքերով. «Ո՛վ դուք գտարյուն հայե՛ր և հարազատ զավակնե՛ր, սթափվեցե՛ք, թոթափեցե՛ք օտարամոլությունը ձեր ուսերեն: Ձեռք-ձեռքի տվեք և ուխտեցեք հայ ժողովուրդը փոխանակ առդին, անդին ցրելու, դեպի երկիր, դեպի հայրենիք, դեպի նորաստեղծ Հայաստան առաջնորդել: Միայն հոն է, որ հայը հայ կրնա մնալ»¹⁰¹:

Գրեթե նույն միտքն է կրկնում Բրազիլիա մեկնած Բաբուլ նազարյանը: Մի ուրիշը Ավստրալիայից գրում է. «Այն մարդը, որ հայ է և հայու արյուն ունի, հոս չի գար, մահավանդ պավակ ունեցող ընտանիք մը հոս գալ՝ ոճրագործություն կըլլա րրածը»¹⁰²:

Սովետական Հայաստանի հղոր առաջընթացը և սփյուռքահայության բացարձակ մեծամասնության վճռական շրջադարձը դեպի մայր հայրենիքը, գնալով ավելի մասսայականացող փոխայցելությունները և հայրենադարձությունը լուրջ տարածայնություններ ու դրական խմորումներ են առաջացրել անգամ Սովետական Հայաստանի հանդեպ նախկինում թշնամաբար տրամադրված շրջաններում:

Հայրենադարձության դեմ դաշնակցության ծավալած գոր-

ծունեությունը հաջողությամբ մերկացվում է հենց սփյուռքահայ առաջադիմական կազմակերպությունների և մամուլի կողմից: Դրա կոնկրետ հաստատումն է Բուենոս Այրեսում լույս տեսնող «Սևան» շաբաթաթերթում 1964 թ. հուլիսի 15-ին տպագրված Տ. Պազայանի «Ի՞նչ կընեն դաշնակ դեկավարները» հոդվածը, որտեղ հեղինակը բազմաթիվ փաստերով մերկացնում է Մերձավոր արևելքից և Բալկաններից հայ տարագիրներին դեպի Ավստրալիա և այլուր արտագաղթեցնելու դաշնակների դատապարտելի գործունեությունը¹⁰³:

Դաշնակցական որոշ գործիչներ երբեմն քննադատում են սովետական կառավարությանը, որ նա փոքր թվով հայրենադարձներ է ընդունում, տրտնջում են դրա դեմ, ինչպես Հրանտ Սամվելը Փարիզի դաշնակցական «Հառաջ»-ում կամ ոմն Արամայիսը Թեհրանի «Ալիք»-ում¹⁰⁴, Փարիզում լույս տեսնող առաջադիմական «Աշխարհ» թերթի 1964 թ. օգոստոսի 4-ի համարում տպագրած իր հոդվածում Աշոտ Քիպարյանը տեղին կերպով քննադատելով այդ կարգի դատողությունները, դրանք անվանել է «կոկորդիլոսի արցունքներ», գրելով, թե 1946—1948 թթ. դեպի Հայաստան կատարված ներգաղթի ժամանակ դաշնակները միաբերան բղավում էին, թե «մի երթար... դժոխք է հոն», իսկ այժմ մեղադրում են սովետական կառավարությանը, որ նա մեծ թվով հայեր չի փոխադրում հայրենիք¹⁰⁵:

Սակայն դրանք եղակի փաստեր են: Դաշնակցական մամուլում հայրենադարձության դեմ հանդես են գալիս ավելի շատ այլ բնույթի՝ այն մերժող հոդվածներ: Ահա դրանցից մի քանիսը:

Փարիզում լույս տեսնող «Խթան» թերթի 1964 թ. հուլիսի 14-ի համարում տպագրված է ոմն Մարգարիտ Հանչերյանի «Հայ երիտասարդության ապագան» հոդվածը, որտեղ նա պարզացնում է այն միտքը, թե քանի դեռ Հայաստանին չեն վերադարձված նրա պատմական հողերը, մե՛նք իրավունք չունենք ուրանալ «Ֆրանսիայի պարզեած առաջնությունները, քանզի տուն ու տեղ և կրկին ձեռք առնել զաղթականի ցուպը և ծայրեն սկսել բախտ փնտրել, նույնիսկ մայր հայրենիքի մեջ»: Մ. Հան-

¹⁰⁰ Տե՛ս ՀՍՍՀ ԸՍՍԵ ՊԿԱ, ֆ. 875, ց. 1, գ. 5, թ. 1—8:

¹⁰¹ Նույն տեղում, գ. 32, թ. 19:

¹⁰² Նույն տեղում, թ. 21:

¹⁰³ Տե՛ս նույն տեղում, գ. 13, թ. 19:

¹⁰⁴ Տե՛ս նույն տեղում, թ. 12—13:

¹⁰⁵ Տե՛ս նույն տեղում, թ. 23—24:

չերյանը երիտասարդությանը խորհուրդ է տալիս սփյուռքի պայմաններում հայ մնալու և զարգանալու համար համախմբվել եկեղեցու շուրջը¹⁰⁶։

Հնչակյան «Երիտասարդ Հայաստան» թերթը, անդրադառնալով հայրենադարձության նկատմամբ դաշնակցության բռնած դիրքին, իրավացիորեն արձանագրում է, որ նա գործնականում միշտ էլ դեմ է եղել դրան։ Այդ կապակցությամբ թերթը վկայակոչում է Ս. Վրացյանի այն միտքը, որ նա արտահայտել է ֆրանսահայ դաշնակցական երիտասարդության «նոր սերունդ» կազմակերպության օրգան «Հայաստան» շաբաթաթերթի 1964 թ. մայիսի 7-ի համարում։ Դաշնակցական պարագլուխը, դժգոհելով դանգվածային նոր հայրենադարձության իրականացումից, ջղաձգորեն բացականչել է՝ ո՛ւր են տանում սովետները «...այս խեղճ ժողովրդին. մենք այստեղ դպրոցներ, եկեղեցիներ, միություններ ունենք և մշակութային կյանք ենք վարում», մինչդեռ ներգաղթ կազմակերպելով, բոլշևիկները մեկ գրկում են դրանցից։

Պայքար ծավալելով հայրենադարձության դեմ, դաշնակները նպատակ են հետապնդում սփյուռքահայերին հեռու պահել Սովետական Հայաստանից, որպեսզի նրանք «դո՛հ չերթան բոլշևիկյան սուտ քարոզչության և հայրենիք վերադառնալու խենդությունը շքեն...»։ Վկայակոչելով դաշնակների այս իսկապես «խենթությունները», «Երիտասարդ Հայաստանը» իրավացիորեն եղրակացնում է. «Ահա ձեզի Հայաստանի աչառագրության համար իբրև թև ծնունդ առած քաղաքական կուսակցության մը ողբալի ու եղերական վախճանը»¹⁰⁷։

Սակայն, բարեբախտաբար, արհամարհանքով դեն նետելով հայրենադարձության դեմ տարածվող ամեն տեսակ հերյուրանքներն ու զրպարտությունները, հայրենաբաղձ տարագիր հայության հոգնաբեկ քարավանները անահանջ կերպով քայլում են դեպի հայրենիք։

Նրանց տունդարձի երթը շարունակվում է։

¹⁰⁶ Տե՛ս նույն տեղում, թ. 13—14։

¹⁰⁷ Տե՛ս «Երիտասարդ Հայաստան», 23 հունիսի, 1964 թ., № 16։

Գ Լ Ո Ւ Ե Ի Ն Ե Ե Ր Ո Ր Գ

ՀԱՅՐԵՆԻՔ—ՍՓՅՈՒՌՔ ԱՌԵՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԱԳԱ ՋԱՐԿԱՅՈՒՄԸ ԵՎ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵԻ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅՈՒՆԸ

Անկասկած է, որ հայկական սփյուռքի ազգային դիմագիծը պահելու ամենակարևոր երաշխիքը հայրենիքն է, նրա հետ անխզելի կապը, որով կենսական ավյուն ու ավիշ է ներարկվում օտար միջավայրում ապրող տարագիր հայությանը։ Այդ է պատճառը, որ թե՛ հայրենի երկրի կուսակցական-պետական մարմինները, զիտական, մշակութային ու այլ հաստատությունները և թե՛ սփյուռքի առաջադիմական կազմակերպությունները միշտ էլ մեծ ուշադրություն են նվիրել հայրենիք—սփյուռք առնչությունների զարգացմանն ու ամրապնդմանը։

Ծտպատերազմյան առաջին տարիներին հայրենիք—սփյուռք կապերն իրականացվում էին տարբեր օղակներով։ Դրանք հիմնականում արտահայտվում էին էջմիածնի Ամենայն հայոց կաթողիկոսության և 1944 թ. փետրվարին վերստեղծված Հայկական ՍՍՀ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատի (1946 թ. մարտի 15-ից մինիստրություն) գործունեության ուղորտներում։ Այդ գործում որոշակի ավանդ էր ներդրում նաև 1944 թ. նոյեմբերին հիմնադրված Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապի հայկական ընկերությունը (ԱՕԿՍ)։

Հայրենական մեծ պատերազմից հետո տեղի ունեցած զանգվածային հայրենադարձության հետ կապված, 1945—1949 թվականներին, նոր ձևեր ու բովանդակություն ստացան հայրենիք—սփյուռք առնչությունները՝ դառնալով Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առնթեր արտասահմանից ներգաղթող հայերի ընդունման և տեղավորման կոմիտեի գործունեության կոնկրետ ու կարևոր խնդիրներից մեկը։ Արտասահմանյան եր-

կրրներ մեկնող նրա ներկայացուցիչները գաղթօջախներում մեծ աշխատանք էին կատարում ոչ միայն ներգաղթի կազմակերպման ուղղությամբ, այլև սփյուռքահայությանը Սովետական Հայաստանի կյանքին ծանոթացնելու, հայրենիքի նվաճումները պրոպագանդելու, մի խոսքով, հայրենիք—սփյուռք առնչությունները սերտացնելու ուղղությամբ: Սակայն ներգաղթի կոմիտեի լուծարքից հետո (օգոստոս, 1949 թ.) հայրենիք—սփյուռք փոխհարաբերությունները դարձյալ սահմանափակվեցին նախկին օղակների շրջանակներում, որոնք, տարբեր պատճառներով, չէին կարողանում անհրաժեշտ խորություն բնութագրել սփյուռքին վերաբերող բոլոր հարցերը: Օրինակ՝ ԱՕԿՍ-ը, կապեր հաստատելով ընդհանրապես արտասահմանյան երկրների հետ, հայկական գաղթօջախներին կամ նրանց հուզող խնդիրներին անդրադառնում էր միայն դեպքից դեպք, ոչ պարբերաբար ու հետևողականորեն:

Սակայն ՄՄԿԿ XX համագումարից հետո (փետրվար, 1956 թ.), ինչպես մեր երկրի ներքին կյանքում, այնպես էլ արտաքին աշխարհի հետ ունեցած փոխհարաբերություններում առաջացած նոր դիրքորոշումը վճռորոշ նշանակություն ունեցավ նաև հայրենիք—սփյուռք առնչությունների հետագա զարգացման, հայրենադարձության վերսկսման և ընդհանրապես սփյուռքահայության նկատմամբ նոր քաղաքականության մշակման ու իրականացման գործում: Ինչ խոսք, որ դա այնքան էլ գլուխին գործ չէր, քանի որ աշխարհի շուրջ 33 երկրներում կային կազմակերպված հայկական գաղութներ, 24 երկրներում՝ հայկական խմբակցություններ և այլն: Դրանք, գտնվելով հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական ու պետական-վարչական տարբեր պայմաններում, բնականաբար պահանջում էին յուրաքանչյուրի նկատմամբ ցուցաբերել խիստ շերտավորված վերաբերմունք, ծավալել կոնկրետ աշխատանք: Նման աշխատանք իրականացնելիս անհրաժեշտ էր մշտապես նկատի ունենալ տվյալ երկրի սոցիալ-քաղաքական պայմանները, հայ ազգաբնակչության տնտեսական կյանքի մակարդակը, քաղաքական ու տնտեսական կյանքում նրա ունեցած տեղն ու դիրքը, ազգային մշակութային գործունեություն ծավալելու նրա իրական հնարավորությունները և այլ գործոններ:

Եթե անցյալում հայրենիք—սփյուռք փոխհարաբերություններում ավելի մեծ տեղ էին ղբաղեցնում հիմնականում ներ-

գաղթի հետ կապված հարցերը, ապա 50-ական թվականների կեսերից սկսած դրանցում գերակշռություն ստացան մայր հայրենիքի և գաղթաշխարհի միջև ավելի բազմաբնույթ կապեր հաստատելու, հայապահպանության համար մղվող պայքարում տարագիր հայությանը Սովետական Հայաստանից ավելի մեծ օգնություն կազմակերպելու խնդիրները:

Հատկապես ՄՄԿԿ XX և հետագա համագումարների դիրքավորումներ լույսի տակ շնչ Կենտկոմը և ՀՍՍՀ կառավարությունը ավելի որոշակիորեն բարձրացրին սփյուռքահայության հետ կապերի հետագա խորացման ու ամրապնդման հարցերը, նշեցին սփյուռքահայությանն օգնելու կոնկրետ ուղիներն ու գործնական միջոցները և այդ բնագավառում հասան դրակա: Ղգալի արդյունքների:

Հայրենիք—սփյուռք առնչությունների սերտացման, սփյուռքահայության մեջ տարվող աշխատանքների բարելավման և հայկական գաղթօջախներին օգնելու գործում որոշակի նշանակություն ունեցավ ՄՄԿԿ Կենտկոմի 1957 թ. հոկտեմբերին ընդունած «Սփյուռքահայերի շրջանում մեր ազդեցությունն ուժեղացնելու ուղղությամբ միջոցառումներ իրականացնելու մասին» որոշումը¹: Ի կատարումն այդ որոշման, շնչ Կենտկոմը մշակեց մանրամասն պլան, որը նախատեսում էր իրականացնել միջոցառումներ սփյուռքահայ գաղթօջախներին գործնականում օգնելու, նրանց հետ ավելի սերտ կոնտակտներ հաստատելու վերաբերյալ: Հանրապետության կուլտուրայի, լուսավորության, բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության միևնիստությունները, ռադիոկոմիտեն, գրողների ու կոմպոզիտորների միությունները, Հայպետհրատը, ԱՕԿՍ-ը և այլ կազմակերպություններ, որոշակի աշխատանք կատարեցին շնչ Կենտկոմի մշակած այդ միջոցառումների կենսագործման ուղղությամբ: Դրա շնորհիվ նկատելիորեն աշխուժացան սփյուռքահայության հետ կապերը: Որպես այդ միջոցառումների իրականացման անմիջական արդյունք Մերձավոր և Միջին արևելքի մի քանի երկրներ, ինչպես նաև Կիպրոս, Ռումինիա, Հունգարիա, Ալբանիա, Ֆրանսիա ուղարկվեցին հանրապետության մի շարք դերասանական խմբեր, երգի-պարի անսամբլներ, սպորտային կոլեկտիվներ, կոմպոզիտորներ, գիտնականներ, տուրիստական

¹ ՀՍՍՀ ՀՍՍՀ ՊԿԱ, ֆ. 362, ց. 1, գ. 308, թ. 7—10:

խմբեր և այլն: Այդ ամենը, ինչպես վկայում են մեր դեսպանություններից ստացված ինֆորմացիաները և սփյուռքահայ մամուլը, տվեցին միանգամայն դրական արդյունքներ: Դրանք որոշակիորեն նպաստեցին սփյուռքահայության հայրենասիրական տրամադրությունների ուժեղացմանը, ավելի վճռականորեն նրա դեպի հայրենիք ուղղվելու գործին:

ՀՍՍՀ ԱԳՄ միջնորդությամբ ՍՍՀՄ ԱԳՄ 1959 թ. ցուցում տվեց մեր արտասահմանյան դեսպանություններին, միսիաներին ու հյուպատոսություններին՝ պարբերաբար ինֆորմացիա ուղարկել ՀՍՍՀ ԱԳՄ՝ իրենց մոտ եղած հայկական գաղթօջախներում տեղի ունեցող անց ու դարձերի մասին:

Դրա հետ մեկտեղ, մեր դեսպանություններն ու միսիաները, ընդառաջելով հայկական գաղթօջախների առաջադիմական կազմակերպությունների խնդրանքներին, Սովետական Հայաստանի համապատասխան մարմինների առջև բարձրացրին սփյուռքահայությանն առնչվող մի շարք հարցեր: Ամենից առաջ նրանք խնդրում էին իրենց նյութեր ուղարկել հայկական առաջադիմական կազմակերպություններին տրամադրելու համար ՍՍՀՄ և ՀՍՍՀ ժողովրդական տնտեսության, մշակույթի, գիտության և այլ բնագավառներում ձեռք բերած նվաճումների մասին: Պահանջում էին ուղարկել հայկական կինոնկարներ, ձայնապնակներ, թերթեր, հանդեսներ, կուլտուրայի, գիտության և արվեստի ներկայացուցիչներ, ՀՍՍՀ բուհերն ու տեխնիկումներն ընդունել սփյուռքահայ առաջադեմ, հայրենասիրաբար տրամադրված երիտասարդների և այլն:

Սփյուռքահայության հետ մայր հայրենիքի կապերը խորացնելու և բազմապատկելու գործում կարևոր դեր ունեցավ մասնավորապես ՀԿԿ XXII համագումարը, որը բարձր գնահատելով այդ ուղղությամբ սփյուռքահայ առաջադիմական կազմակերպությունների կատարած աշխատանքը, մեծ նշանակություն տվեց հայրենիք—սփյուռք կապերի հետագա զարգացմանը: Համագումարին ՀԿԿ Կենտկոմի տված հաշվետվության մեջ այդ մասին ասված էր. «Հայ առաջադիմական, մշակութային, երիտասարդական, մարզական կազմակերպությունները և մամուլի օրգանները արտասահմանում աշխատավոր հայերի մեջ մեծ աշխատանք են կատարում՝ նրանց Սովետական Հայաստանի նվաճումներին ծանոթացնելու ուղղությամբ, նրանց

ճշմարտացիորեն պատմում են մեր իրականության մասին»²: Նկատի ունենալով այդ հանգամանքը, համագումարը համապատասխան կազմակերպություններին ուղղակի դիրեկտիվ տվեց ավելի «ընդլայնել և բարելավել մեր կապերը արտասահմանյան հայերի ու նրանց առաջադիմական կազմակերպությունների հետ»³:

Ի կենսագործումն այդ դիրեկտիվների, 1962 թ. ապրիլին ԱՕԿՄ-ում ստեղծվեց նոր՝ սփյուռքահայ գաղթօջախների հետ կապի բաժին, որի ձեռնարկումների շնորհիվ կարճ ժամանակամիջոցում զգալի տեղաշարժեր կատարվեցին հայրենիք—սփյուռք կապերի ընդլայնման գործում: Եթե 1961 թ. ընկերությունը կապեր ուներ ընդամենը 171 սփյուռքահայ կազմակերպությունների ու անհատների հետ, ապա 1962 թ. վերջում այն անցավ 500-ից⁴: Կապերն աճեցին ոչ միայն քանակապես, այլև որակապես: Սկզբունքորեն փոխվեց ընկերության վերաբերմունքը սփյուռքահայ կազմակերպությունների, կրթական, մշակութային և այլ հաստատությունների նկատմամբ: Եթե նախկինում մեծ մասամբ սփյուռքից ստացվող դիմումների ու խնդրանքների առիթով էին կապեր հաստատվում, ապա ՀԿԿ XXII համագումարից հետո նախաձեռնողը դարձավ ԱՕԿՄ-ը: Դրա շնորհիվ այդ աշխատանքը զգալի շափով ընդլայնվեց և ավելի արդյունավետ դարձավ⁵:

Ինչ խոսք, որ դրան մեծապես նպաստում էր սփյուռքահայության որոշակի ձգտումը՝ ավելի սերտորեն համախմբվել մայր հայրենիքի շուրջը և վերջինիս օգնությունը ծառայեցնել հայապահպանության կենսական գործին:

Միանգամայն դրական տեղաշարժ էր և այն, որ նկատելիորեն ուժեղանում էր մեր հանրապետության լայն հասարակայնության հետաքրքրությունը սփյուռքի նկատմամբ: Մեր մտավորականները, գիտական, մշակութային, ուսումնական, մարզական հաստատությունները օրավոր նորանոր կապեր էին հաստատում սփյուռքի առաջադիմական կազմակերպությունների ու գործիչների հետ:

² Տե՛ս «ՀԿԿ Կենտկոմի հաշվետու զեկուցումը XXII համագումարին». «Հայաստան» հրատ., Երևան, 1961, էջ 122:

³ Նույն տեղում:

⁴ Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 709, ց. 3, գ. 150, թ. 13—22:

⁵ Տե՛ս նույն տեղում, գ. 151, թ. 1—18:

կապերի ընդլայնմանը և ընդհանրապես սփյուռքահայ հասարակական-քաղաքական կյանքի նկատելի աշխուժացմանը մեծապես նպաստեց Սովետական Հայաստանի 40-ամյակի տոնակատարություններին մասնակցելու համար 1961 թ. Երևան հրավիրված սփյուռքահայ մեծ թվով գործիչների իրենց երկրները վերադարձից հետո հայրենիքի նվաճումները պրոպագանդելու ուղղությամբ ծավալած լայն գործունեությունը: Հայրենիք—սփյուռք կապերի սերտացմանը, անշուշտ, ղգալի նպաստ բերեցին ևս հազարավոր զբոսաշրջիկների, բարեկամների ու հարազատների փոխայցելությունները, Սովետական Հայաստանում սփյուռքահայ մի շարք պարբերականների ազատ վաճառքը, սփյուռքահայ գրողների ստեղծագործությունները՝ հրատարակումը, գրողների, գիտնականների, մշակութային ու հասարակական գործիչների, ինչպես նաև մարդկանց կոլեկտիվների հաճախակի հրավիրումը հայրենիք, սփյուռքահայ անվանի մի խումբ գիտնականների ՀՍՍՀ ԳԱ կազմում ընտրելը, սփյուռքահայ արվեստագետների գործերի ցուցահանդեսների կազմակերպումը և բազմաթիվ այլ միջոցառումների իրականացումը:

Այդ գործում պակաս կարևորություն չունենին նաև Սովետական Հայաստանից ակնազոր մտավորականների, ստեղծագործական ու մարդկանց խմբերի այցելությունները սփյուռքահայ գաղթօջախները: Հայրենի երկրի ամեն մի անհատի կամ խմբի այցելությունը արտասահմանյան հայաբնակ վայրերը միշտ էլ առաջ է բերում տեղի հայության բուռն հետաքրքրությունը, թողնում խոր հետքեր: Նման հանդիպումները հայրենակարոտ սփյուռքահայ աշխատավորների համար վերածվում են իսկական տոնախմբությունների, ազգային հպարտության անկեղծ զգացմունքներով լցնելով նրանց սրտերը:

Սփյուռքահայության հետ կապերի հիմնական միջոցներից մեկը, անշուշտ, հայաստանյան հրատարակությունների, պարբերական մամուլի և այլ նյութերի սփյուռք առաքումն է: Այդ ճանապարհով ԱՕԿՍ-ը կարողացավ լայն կապեր հաստատել տասնյակ կազմակերպությունների, թերթերի խմբագրությունների, դպրոցների, գրադարանների, ակումբների, հայրենակցական միությունների ու անհատների հետ: Այսպես, 1961 թ. հունիսից մինչև 1962 թ. հունիսն ընկած ժամանակամիջոցում ԱՕԿՍ-ը սփյուռքահայ կազմակերպություններին ու անհատ

գործիչներին է ուղարկել 559 անուն 20286 կտոր դիրք, 1783 օրինակ թերթ ու հանդես, մեծ քանակությամբ հայկական երաժշտության ձայնագրանակներ, լուսանկարներ, բացիկներ, ալբոմներ, կինոֆիլմեր, դանազան ուղեցույցներ, հուշանվեր՝եր և այլ նյութեր: Այդ ամենը շատ ավելի մոտեցրին հայրենիք սփյուռքին, կենարար սնունդ տվին նրան, ըստ ամենայնի խթանելով հայապահպանության համար մղվող պայքարի հաջողությունը:

Սովետական Հայաստանի համապատասխան մարմինները միաժամանակ դրականորեն լուծեցին հայրենադարձության վերականգնման, հայրենի բուհերում և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում սփյուռքահայ երիտասարդների ուսման, Երևանում սփյուռքահայ դպրոցների ուսուցիչների վերապատրաստման ու որակավորման բարձրացման, դասընթացների կազմակերպման, սփյուռքահայ դպրոցների համար դասագրքերի պատրաստման ու հրատարակման, նրանց լաբորատոր և այլ սարքավորումներով օգնելու, սփյուռքահայ մեծ թվով դպրոցականների ամառային հանդիստը հայրենիքում կազմակերպելու և այլ հարցեր: Այս ամենի հետևանքով սփյուռքահայության հետ տարվող աշխատանքի ծավալն այնքան մեծացավ, նրա բնույթն ու բովանդակությունը այնքան բազմազան դարձան, որ անհրաժեշտություն զգացվեց այն ավելի օպերատիվ ղեկավարելու, մի շարք գործնական ու հեռանկարային հարցեր լուծելու և, ընդհանրապես, սփյուռքի հետ տարվող աշխատանքները կոորդինացնելու նպատակով ստեղծել առանձին կենտրոն: Ահա այդպես առաջացավ «Արտասահմանյան հայրենակիցների հետ մշակութային կապերի հայկական կոմիտե» կոչվող կազմակերպության ստեղծման գաղափարը, որի բազմաբեղուն գործունեության լուսաբանմանն էլ նվիրված է մեր աշխատության սույն գլուխը:

* * *

Սովետական բազմազգ տերության, նրա անբաժան մասը կազմող Սովետական Հայաստանի հզորության ու վերելքի նոր պայմաններում «Արտասահմանյան հայրենակիցների հետ մշա-

կութային կապերի հայկական կոմիտեի» ստեղծումը եղավ կոնկրետ արտահայտություններից մեկը այն մեծ հողատարության, որ կոմունիստական կուսակցությունն ու սովետական կառավարությունը ցուցաբերում են տարագրության մեջ դեգերող հայության նկատմամբ:

Եվ այսպես, սփյուռքի հետ կապերն ավելի ընդլայնելու ու խորացնելու, Սովետական Հայաստանի նվաճումներին սփյուռքահայության լայն շրջաններին հաղորդակից դարձնելու, նրանց մայր հայրենիքի շուրջը համախմբելու, մեր ժողովրդի հոգեկան միասնականությունը ամրապնդելու և, վերջին հաշվով, հայապահպանության գործը ավելի հաստատուն հիմքերի վրա դնելու նպատակով, Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի 1964 թ. մայիսի 26-ի որոշմամբ ստեղծվեց «Արտասահմանյան հայրենակիցների հետ մշակութային կապերի հայկական կոմիտեն»⁷: Մայիսի 27-ին կոմիտեի նախագահ նշանակվեց ճանաչված հասարակական գործիչ, պատմաբան Վ. Ե. Համալասյանը, նախագահի առաջին տեղակալ՝ Ա. Ս. Մարտիրոսյանը⁸:

Կոմիտեի հիմնադիր ժողովը կամ կոնֆերանսը տեղի ունեցավ 1964 թ. հունիսի 25-ին, Երևանում: Ժողովին մասնակցում էին հանրապետության աշխատավորների և մտավորականության բազմաթիվ ներկայացուցիչներ: Հիմնադիր ժողովին ներկա էին նաև Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ն և ՍՍՀՄ ժողովրդական նկարիչ, լենինյան մրցանակի դափնեկիր, սոցիալիստական աշխատանքի հերոս Մարտիրոս Սարյանը: Հիմնադիր ժողովը բազմակողմանիորեն քննարկեց սփյուռքահայության հետ կապերի զարգացման հարցերը և ընտրեց 71 հոգուց բաղկացած «Արտասահմանյան հայրենակիցների հետ մշակութային կապերի հայկական կոմիտե» իր 15 հոգանոց նախագահությունը⁹:

Հենց կոմիտեի հիմնադիր ժողովում էլ, Մարտիրոս Սարյանի առաջարկությամբ, այն վերակոչվեց «Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտե» ավելի բարեհնչյուն անու-

նով¹⁰ (այսուհետև այն կրճատ կանվանենք Սփյուռքի կոմիտե): Որոշ ժամանակ անց, մշակվեց նաև կոմիտեի կանոնադրությունը, հաստատվեց ՀՍՄՀ Մինիստրների խորհրդի կողմից և դարձավ այն հիմքը, որի վրա խարսխվեց այդ կազմակերպության գործունեությունը¹¹:

Ստանալով հանրապետության կուսակցական, պետական, հասարակական, մշակութային կազմակերպությունների ամենօրյա օգնությունը, կոմիտեն ծավալեց իր օգտաշատ գործունեությունը՝ հայրենիքի և սփյուռքի միջև լայն կապեր զարգացնելու ուղղությամբ: Իր գոյության առաջին իսկ օրերից կոմիտեն աշխատեց բոլոր հնարավոր միջոցներով կենդանի ու զրավոր կապեր հաստատել սփյուռքահայ առաջադիմական, դեմոկրատական, հայրենասիրական կազմակերպությունների, նրանց մամուլի օրգանների, դպրոցների, մարդկան, Լրիտասարդակա՝ միությունների և անհատների հետ, նպաստել հայրենիք—սփյուռք հետագա մերձեցմանը:

Սփյուռքի կոմիտեի ստեղծումը կարևոր իրադարձություն եղավ համահայկական իմաստով: Այն ջերմորեն ընդունվեց թե՛ հայրենիքում և թե՛ սփյուռքում: Հայրենի մտավորականները, ողջունելով կոմիտեի ստեղծումը, գործարար պատրաստակամություն հայտնեցին աշխատել նորաստեղծ կազմակերպության մեջ, ջանք ու եռանդ չխնայել նրա բաժինների ու հանձնախմբերի արդյունավետ գործունեության ծավալման համար: Հանրապետության մտավորականներից ավելի քան 200 մարդ ընդգրկվեց կոմիտեի աշխատանքներում, նրանցից շատերը զարձան այդ նոր գործի կազմակերպիչներն ու ոգեշնչողները¹²:

Աշխարհի բոլոր ծայրերից սփյուռքահայ բազմաթիվ կազմակերպություններ, պարբերականներ ու անհատ գործիչներ իրենց բարեմաղթություններով նույնպես ողջունեցին կոմիտեի ստեղծումը՝ այն դիտելով որպես հայրենիքի ու սփյուռքի միջև ձգվող մի «ոսկե կամուրջ», որպես մի նոր հիմնավոր միջոցառում, որը կվերացնի անցյալում եղած բոլոր խոչընդոտները և սփյուռքը վերջնականապես կմոտեցնի մայր հայրենիքին, սերտորեն կկապի նրա հետ: Սփյուռքահայության ներկայացուցիչ-

⁷ Տե՛ս ՀՍՄՀ ՀՍՄՀ ՊԿԱ, ֆ. 875, ց. 1, գ. 2, թ. 1—2:

⁸ Տե՛ս նույն տեղում, թ. 3: Տարբեր ժամանակներում կոմիտեի նախագահի տեղակալներ են եղել նաև Վ. Գավթյանը, Մ. Մելքումյանը, Պ. Պետրոսյանը, Ե. Ղուկասյանը: Ներկայումս կոմիտեի նախագահի տեղակալներ են Կ. Միքայելյանը և Ս. Բաղդասարյանը:

⁹ Տե՛ս ՀՍՄՀ ՀՍՄՀ ՊԿԱ, ֆ. 875, ց. 1, գ. 11, թ. 1—18:

¹⁰ Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 43, թ. 1:

¹¹ Տե՛ս նույն տեղում, գ. 24, թ. 7—8:

¹² Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 11, թ. 1—18 և գ. 37, թ. 1—60:

ները միաժամանակ անկեղծ երախտագիտություն էին հայտնում հայրենի կառավարությանը՝ իրենց նկատմամբ ցուցաբերած հոգատարության համար:

Ահա թե ինչ էր գրում այդ առթիվ ԱՄՆ-ից հայ գրականության բարեկամների ընկերության վարչությունը. «Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի կազմակերպումը մեզ բոլորիս ուրախություն պատճառեց: Ան սահմանված է ըլլալու հոգեկան կամուրջը սփյուռքի հայրենակարոտ միությունների և հայրենիքի միջև...»¹³:

Փարիզում հրատարակվող «Բյուրակն» հանդեսը «Ողջամըտության հաղթանակը» խորագրով խմբագրականում, գոհունակությամբ արձանագրելով կոմիտեի ստեղծումը և անդրադառնալով նրա դերին, գրել է. «Հայրենիքի և օտարաբնակ հայերու մշակութային հարաբերությանց պահպանումի ոգին և մեթոդը հիմնական հեղաշրջման ենթարկված է: Երևանի մեջ կազմված է նոր մարմին մը՝ հատկապես օտարության մեջ բնակող թրքահայ ժողովուրդի զանազան հատվածներու հետ մշակութային կապ և հարաբերություն պահելու նպատակով...»

Նոր կազմակերպության ստեղծումով, բոլորովին տարբեր նկարագիր և արժեք կատանա հայրենաբնակ և օտարաբնակ հայերու փոխադարձ հարաբերությունը: Այս իրողությունը նոր քայլ մըն է հայ ժողովուրդի միության և ամբողջականության իրականացման ճամբուն վրա: Ինչպես մենք հայրենիքի կյանքին բոլոր արտահայտությունները մեր սեփականությունը կհամարենք, տեր կկանգնենք անոնց, կհպարտանանք և կհրճվինք անոնցմով, նույնպես ալ, ետ այսու մեր բոլոր խնդիրները պիտի համարվին հայրենիքի և ժողովուրդին զբաղման առարկա դարձող հարցեր»¹⁴:

Բուենոս Այրեսի «Սևան» շաբաթաթերթը «նոր երևույթ և անկյունադարձ մը հայրենիք—սփյուռք հարաբերությունների մեջ» խմբագրականում, մեծ ուրախություն հայտնելով Սփյուռքի կոմիտեի ստեղծման առթիվ, գրել է. «Մեր հայրենի եղբայրները խորապես գիտակցած սփյուռքի հայության օրհասական վիճակին, կհասնին օգնության, մշակութային ավելի սերտ կապերով, նոր ավիշ, եռանդ և հավատք ներարկելու, որպեսզի

սարագիր հայությունը ապրի, հարատևե հայրենադարձի բախտավոր օրվան համար, իրմեն խլված, հափշտակված, բռնագրավված իրավունքներու պահանջի օրվան համար»¹⁵:

Շաբաթաթերթը իրավացիորեն գտնում էր, որ «պնդել թե արտահայտան կպահպանվի առանց մայր հայրենիքի հետ կապ ունենալու, ոչ միայն ցնորք է, պոռոտախոսություն է, այլև հակագիտական է, առանց արմատի, առանց սնունդի ծառին ճյուղն ու տերևները դալար պահելու մանկամտություն է: Իսկ եթե այդ ցնորքն ու մանկամտությունը, քաղաքական, աշխարհահայացքային նկատառումներով կբառբառվի՝ կրկնակի անգամներ հիմարություն է, պանդուխտ, հայրենակարոտ հայությունը դեպի ձուլում, ինքնասպանություն առաջնորդող»¹⁶:

Բեյրութում լույս տեսնող ռամկավարական «Ջարթոնքը» 1964 թ. սեպտեմբերի 10-ին և 11-ին հատուկ խմբագրականներ նվիրելով կոմիտեի ստեղծմանն ու նրա դերին, գրել է. «Պանդուխտ հայության հանդեպ հայրենի վերին իշխանությանց տածած սիրուն ու գուրգուրանքին ամենեն պերճախոս ու խորիմաստ արտահայտությունն էր Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի ստեղծումը...»¹⁷: Թերթը նշում է, որ «ձուլման և կորստյան դեմ պայքարելու կարիքը օրըսօր է ավելի կշեռվի ամեն տեղ: Անհրաժեշտ կդառնա ավելի մեծ կարեվորություն ընծայել ազգապահպանման զենքերուն, որոնց շնորհիվ ցարդ կարելի եղած է դրական արդյունքներ ձեռք ձգել ու պահել զաղութներու մեծագույն մասին հայեցի դիմագիծը: Մանր թե բոլորին ազգապահպանման այդ զենքերն ու ազդակները,— հայ դպրոց, հայ մամուլ, հայ մշակութային կազմակերպություններ, հայ եկեղեցի, հայ քաղաքական կազմակերպություններ ու մշակութային կապ մայր հայրենիքի հետ: Այս վերջին ազդակն է ահա, որ այսօր մեր ուշադրության առարկան կհանդիսանա՝ Երևանի մեջ «Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի» կազմակերպության առնչությամբ»¹⁸:

Այնուհետև թերթը գրում է. «Իրականության մեջ՝ սա

¹⁵ «Սևան», շաբաթաթերթ, Բուենոս Այրես, 15 հուլիսի, 1964 թ., № 151:

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ «Ջարթոնք», 10 սեպտեմբերի, 1964 թ., № 292, նաև՝ ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 875, ց. 2, գ. 43, թ. 3:

¹⁸ Նույն տեղում:

¹³ Նույն տեղում, գ. 37, թ. 43:

¹⁴ «Բյուրակն», կիսամյա հանդես, Փարիզ, 17 հուլիսի, 1964 թ., № 14:

կհանդիսանա կապի անպաշտոն նախարարություն մը: Հայրենի իշխանությունները, ուրեմն հիմա այնքան կարևորություն կընծայեն իրենց պանդուխտ հայրենակիցներուն, այնքան կմտահոգվին անոնց հայապահպանումով, որ ստեղծած են մասնավոր կազմակերպություն, զուտ հայկական, և հետամուտ են զարկ տալու մշակութային բազմերես գործունեության մը»¹⁹: Թերթը սրտանց ողջունում է Սփյուռքի կոմիտեի ստեղծումը և նրան մաղթում հաջողություններ՝ իր ազգօգուտ առաքելության մեջ, վստահություն հայտնելով, որ այն զարկ կտա հայ մշակույթի տարածմանը, կնպաստի աղգապահպանման բախտորոշ պայքարին և կամրապնդի մեր ժողովրդի հոգեկան միասնակա-նությունը:

Ամերիկահայ առաջադիմական միության օրգան «Լրաբեր» թերթը գրել է. «Սփյուռքահայությունը գոտեպնդող, ճերմակ ջարդին դիմադրելու իր կամքը պողպատող ուրիշ մեկ գործոն մըն է մշակութային կապերու ամրապնդումն ու ընդլայնումը մայր հայրենիքին հետ: Այդ կապերը այնպիսի լայն շափեր ստացան, որ անհրաժեշտություն դարձավ ստեղծելու այս տարի առանձին ղեկավար կազմակերպություն մը—Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն՝ իր զանազան բաժիններով և հանձնախումբերով»²⁰:

Սփյուռքի կոմիտեի ստեղծումը ողջունեցին և բարձր գնահատեցին նաև անվանի գրողներ Համաստեղը, Լևոն Զավեն Սուրմելյանը, Կարապետ Սիտալը, Բենիամին Նուրիկյանը, Ավետիս Ալիքսանյանը և շատ ուրիշներ:

Սակայն գաղթաշխարհում եղան նաև որոշ անհատներ ու կազմակերպություններ, որոնք թշնամաբար դիմավորեցին հայրենիքի այդ նոր նախաձեռնությունը, փորձեցին նենգորեն զերպարտել ու վարկաբեկել այն: Խոսքը վերաբերում է մասնավորապես դաշնակցական կուսակցությանն ու նրա մամուլին:

Դաշնակցական մամուլը սկզբում համրի նման լուռ մնաց, բայց շուտով, զգալով, որ կոմիտեի կազմակերպումով հայրենիքի և սփյուռքի սերտացող հարաբերությունները անկասկած

նոր վնաս կբերեն իր առանց այն էլ խաթարված դիրքին ու հեղինակությանը, անցավ հարձակման:

Չարախոսություններն սկսեց Մյունխենի «Ակատություն» ռադիոկայանը, ապա նրան արձագանքեցին Թեհրանի դաշնակցական «Ալիքն» ու այլ թերթեր, փորձելով ամեն կերպ նվազեցնել Սփյուռքի կոմիտեի հիմնադրման առաջ բերած խանդավառությունը: Իրեն սփյուռքահայության միակ ներկայացուցիչը պատկերացնող և այդպես էլ իր օտարերկրյա շեֆերին ներկայացող դաշնակցական կուսակցությունը խիստ վրդովված էր սփյուռքահայության նկատմամբ հայրենի կառավարության այս նոր ուղարկությունից: Նա լավ էր հասկանում, որ Սփյուռքի կոմիտեի ստեղծումով ու հայրենիքի հետ օրեցօր սերտացող հարաբերությունների հետևանքով ինքը ավելի արագորեն պիտի հեղինակագրվի ու կորցնի իր եկամուտները՝ աղբյուրները, ուստի բացեց իր զրպարտությունների պարկը: Սակայն դաշնակցության բարբառանքներն ի վիճակի չեղան որևէ ազդեցություն ունենալ սփյուռքահայերի լայն շրջանների վրա, քանի որ նրանց բացարձակ մեծամասնությունը Սովետական Հայաստանը համարում է իր միակ հայրենիքը, իր փրկության իսկական ապավենը, որով հպարտանում և որին փարված նա շարունակում է հայ մնալ ամենակուլ օտար ափերում:

Միանդամայն իրավացի է հնչակյան «Արարատ» թերթը, որն իր խմբագրականներից մեկում գրել է. «Հայաստանը հայուն հույսն է ու հավատը: Սփյուռքահայությունը ամբողջ հոգիով փարած է անոր, որ իր գոյության իմաստն է ու ավիշը: Վերածնված Հայաստանը հայուն ազգային հպարտությունն է, անոր ներկան իմաստավորող և ապագան հիմնավորող գործոնը»²¹:

Անվանի գրող Համաստեղը Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեին ուղղած իր նամակում գրել է. «Հայաստանը մեզի, սփյուռքահայությանս համար, մարմնի շափ իրական է և ունի հեթաթի մը գրավչությունը»²²:

Ընդգծելով հայրենիքի կարևոր դերը սփյուռքահայության գլխին կախված ձուլման շարադետ վտանգի դեմ պայքարում, Ֆրանսահայ երիտասարդական միության ղեկավարությունը գրել է. «Սփյուռքահայությունը իր համեստ միջոցներով մա-

¹⁹ «Ջարթոնք», 11 սեպտեմբերի, 1964 թ., № 293:

²⁰ «Լրաբեր», 1 դեկտեմբերի, 1964 թ., № 55, նաև՝ ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 875, ց. 4, գ. 1, թ. 3:

²¹ «Արարատ», 23 փետրվարի, 1966 թ., № 7291:

²² Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 875, ց. 1, գ. 32, թ. 15:

քառում է և կմաքառի այդ վտանգի դեմ, սակայն միշտ այն համոզումը ունեցած է, թե մայր հայրենիքն է, որ իր հմայքով և գործնական միջոցներով միայն կրնա կասեցնել այդ ահավոր այլասերման վտանգը, մինչև այն բախտավոր օրը, որ հնարավոր պիտի ըլլա իր աստանդական զավակներուն իր ծոցին մեջ ընդունելու:

Ողջունելով նոր հիմնադրված կոմիտեն, ավելի քան վստահ ենք, որ այն իր լայնածավալ աշխատանքով մեծ պատմական դեր մը պիտի կատարի ու պիտի դառնա սփյուռքահայության համար հույսի և լույսի հենարան»²³:

Այսպիսով, Սփյուռքի կոմիտեի ստեղծումը, բացի թշնամաբար տրամադրված մի նեղ խմբի զրպարտություններից, ամենուրեք զնախադեպ որպես հայրենասիրական շատ կարևոր քայլ հայրենիքի—սփյուռք կապերի ամրապնդման գործում, որպես մի «ուկե կամուրջ», որի միջոցով միմյանց կաղազուրվեն հայրենիքի և սփյուռքի հարազատները:

Բազմաթիվ սփյուռքահայ մտավորականներ, հասարակական գործիչներ, գործարար շրջանների ներկայացուցիչներ և այլք, այցելելով հայրենիք, ականատես լինելով նրա առաջընթացին, անկեղծորեն ոգեշնչվեցին նրա վերածնունդով, ավելի կապվեցին նրան, վարակիչ օրինակ ծառայելով ուրիշներին:

Անկասկած է, որ հայապահպանման բոլոր միջոցների ու գործոնների մեջ գլխավորն ու որոշիչը վերածնված հայրենիքն է: Նա է հայկական գաղթօջախների գոյատևման և «սպիտակ ջարդի» դեմ մղվող պայքարի հաջողության գլխավոր պայմանը, ուստի պետք է հայրենիքով խանդավառել աճող սերունդը:

Հայրենիքը անգնահատելի, անփոխարինելի ուժ է սփյուռքահայության համար: Վերջինս, հակառակ իր համառ ջանքերին, դատապարտված է անխուսափելի կորստյան, եթե թուլացնի կապերը հայրենիքի հետ: Այս իմաստով միանգամայն իրավացի է Բեյրութում հրատարակվող ՀԲԸՄ պաշտոնաթերթ «Նոսնակը», գրելով, թե՛ «Սփյուռքի մեջ, ամենահրատապ հարցը հայապահպանումն է անտարակույս: Ուստի անհրաժեշտ է, որ անոր միտին մեր բոլոր ճիգերն ու ջանքերը:

Սակայն հայապահպանում հանուն ինչի՞: Մեր գոյամարտը ինքնանպատակ չէ: Անիկա հայրենիքին համար է: Ամբողջական

հայրենիքն մը համար: Ահա հայապահպանման մեր սևեռակետը՝ հայը հայ պահել՝ հայրենիքին համար:

Մայր հողն է մեր գոյության ապահով երաշխիքը: Ան է մեր հույսերուն ու երազներուն ամուր կովանն ու հաստատուն խարխուլը: Երկիր հայրենին, որ հաղթահարել է ետք բազում խոշրնդտներ, այսօր, ավելի քան երբեք կենսունակ, կբոլորի աղգային. մշակութային ու տնտեսական ծաղկումի ու վերազարթնումի շրջան մը:

Առանց հայրենիքի հետ հոգեկան ու իմացական կապի, սփյուռքի մեջ ազգապահպանման համար թափած մեր ճիգերը կվերածվին հումպետս վատնված աշխատանքի: Հայրենիքը իր բոլոր միջոցներով—ձայնասփյուռ, մամուլ, դիրք, մշակութային հարաբերություններ, փոխայցելություններ—լիաբուռն կաշակցի «լինելույցան» մեր պայքարին»²⁴:

Ահա թե ինչու սփյուռքը կենսունակ պահելու համար անհրաժեշտ է այն մշտապես սնել հայրենիքի «մայրական կաթով», անխառն հայրենասիրությամբ: Միանգամայն պարզ է, որ անհնարին է սնվել հայրենասիրությամբ, առանց դիմելու նրա բուն ակունքին՝ վերածնված հայրենիքին: Առանց հայրենիքի ցանկացած ժողովուրդը կամրանա, կզառնա արմատահան արված մի ծառ, որը կանուխ կամ ուշ պետք է ոչնչանա, քանզի կտրված է մայր հողից: Շատ ճիշտ է նկատել Կահիրեի «Արև» օրաթերթը, գրելով. «Պիտի պատուհասվինք այն օրը, որ մենք օտարանաք հայրենիքին, կամ թշնամանաք անոր, և այդ պատուհասումը վախճանն է սփյուռքահայ մեր գոյության: Առանց հայրենիքի շոշափելի իրականության հայրենասիրությունը կզառնար սին երազանք, ավելորդ խաբկանք և վնասակար պատրանք»²⁵:

Սակայն հայրենիքը երբեք էլ վերացական հասկացություն չէ, այն ունի կոնկրետ կերպարանք, կենդանի ու շոշափելի մարմին, կենսունակ օրգանիզմ: Անդրադառնալով հայության կյանքում հայրենիքի ունեցած դերին, անվանի գրող Վիլյամ Սարոյանը մի առիթով ասել ու բազմիցս կրկնել է, թե՛ «եթե շիններ Սովետական Հայաստանը, մենք դժբախտ կլինեինք: Մեզ համար մեծ բախտ է, որ մեզ զորավիգ է ուսու ժողովուրդը. մենք

²⁴ «Նոսնակ», ամսաթերթ, Բեյրութ, 1970 թ., № 4, էջ 121:

²⁵ ՉՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 875, ց. 4, գ. 52, թ. 22:

²³ Նույն տեղում, գ. 37, թ. 43—44:

չենք կարող գոյատևել առանց զորավոր պաշտպանության, իսկ դա Սովետական Միությունն է»²⁶: Մեծ գրողը միանգամայն իրավացիորեն հայտնի էր սովետական ժողովուրդների եղբայրական համագործակցության ու սերտ դաշինքի մեջ: Սփյուռքահայ առաջադիմական բոլոր խավերի համար միանգամայն պարզ է ու կասկածի ենթակա չէ, որ Սովետական Հայաստանը մեր ժողովրդի հավերժության, նրա ստեղծագործական ոգու կենսունակության իսկական մարմնավորումն է:

Անդրադառնալով գաղթաշխարհում աղգապահպանման գործում հայրենիքի ունեցած դերին, Նյու Յորքում հիմնված հայ դրականության բարեկամների ընկերության «Հաղորդագրություն» պարբերականը 1968 թ. իր համարներից մեկում գրել է. «Հայրենիքի գաղափարը և հայրենիքի ոգևորիչ դերը սփյուռքի ազգապահպանման մեր մահու և կենաց պայքարին մեջ ամենեն առաջնահերթ, էական ու կենսական պայմանն է, իբրև ներշնչումի մշտածոր աղբյուր ու ավիշ»²⁷:

Ահա հենց այդ հանգամանքը նկատի ունենալով, Սփյուռքի կոմիտեն իր կարևորագույն խնդիրը դարձրեց հայրենիքի հետ գաղթօջախների կապերի ընդլայնումն ու ամրապնդումը, դրանով իսկ նպաստելով հայապահպանության գործին: Կոմիտեն միաժամանակ ձգտում է հնարավորին չափ կոորդինացնել առաջադիմական ուժերի պայքարը ընդդեմ գաղութահայ ռեակցիոն շրջանների և միջազգային իմպերիալիզմի, մերկացնել նրանց դավերը՝ ուղղված խաղաղության, դեմոկրատիայի և ազգային-ազատագրական շարժումների դեմ: Ասպարեղ մտնելով պատմական այսպիսի կարևոր առաքելությանմբ, Սփյուռքի կոմիտեն առաջադիմական ուժերի համընդհանուր համակրանքի ու աջակցության միջոցով հաջողությամբ ծավալեց իր գործնական աշխատանքը սփյուռքահայ գաղթօջախներում:

Արտասահմանում աշխատանքի իրականացման ընթացքում կոմիտեն հենվել է առաջադիմական կազմակերպությունների վրա, օգտագործել նրանց ուժերը: Այն երկրներում, ուր գոյություն ունեցող ռեակցիոն ուժերի կողմից դրանք արգելված են, կոմիտեն առավելապես օգտվել է հայրենասեր անհատ

գործիչների օգնությունից, նրանց միջոցով գրականություն ու մամուլ տարածելու և այլ կարգի աշխատանքներ կատարելու համար: Դրա շնորհիվ Սփյուռքի կոմիտեն դարձել է ճանաչված ու հեղինակավոր մի կազմակերպություն գաղութահայ ամենալայն շրջաններում:

1964 թ. հունիսին, երբ նորաստեղծ Սփյուռքի կոմիտեն ԱՕԿՍ-ից ստացավ նրա սփյուռքի բաժնի գործերը, պարզվեց, որ այն կապ է ունեցել ընդամենը 631 կազմակերպությունների ու անհատ գործիչների հետ²⁸: Վեց ամիս անց, 1964 թ. վերջին, այդ թիվը հասավ 852-ի, ընդգրկելով 40 երկիր²⁹: Մեկ ու կես տարի անց՝ 1965 թ. վերջին, այդ կապերը հասան 1400-ի, ընդգրկելով 42 երկիր³⁰: Դրանցից 648-ը կազմակերպություններ էին (այդ թվում՝ 194 դպրոցներ), 87 թերթերի և ամսագրերի խմբագրություններ, 26 մշակութային և 37 հայրենակցական միություններ, 10 հասարակական, 8 մարդական, 20 երիտասարդական, 11 ուսանողական, 13 կանանց կազմակերպություններ, 2 բարեգործական միություններ (6 բաժանմունքներով), 3 գրական միություններ, 5 հայագիտական ամբիոններ, 26 եկեղեցական թեմեր, 29 գրադարաններ ու հայկական տներ, 20 դեղաբույսերի և արհեստական կուրկուտիվներ, 45 տարբեր բնույթի կազմակերպություններ և 752 անհատ գործիչներ³¹:

Կոմիտեի ստեղծումից հինգ տարի հետո, 1969 թ. հուլիսին, նրա կապերի ընդհանուր թիվը հասավ 4185-ի, որից 829-ը կազմակերպություն և 3350-ը՝ անհատ: Ըստ աշխարհամասերի այդ կապերը բաշխվում էին հետևյալ կերպ. Ամերիկայում՝ 310 կազմակերպություն, 1130 անհատ, Եվրոպայում՝ 185 կազմակերպություն, 1110 անհատ, Մերձավոր և Հեռավոր արևելքի երկրներում, Ավստրիալիայի հետ միասին՝ 384 կազմակերպություն, 1150 անհատ³²: Այդ ընթացքում՝ 1964—1969 թթ., Սփյուռքի կոմիտեն հայկական գաղթօջախներն է ուղարկել գեղարվեստական, հայագիտական, արվեստագիտական և այլ բնույթի 1207 անուն գրականություն՝ 149669 օրինակ, դասադրեր՝ 96200 օրինակ, ձայնապնակներ՝ 11071 հատ, լուսա-

²⁸ Տե՛ս նույն տեղում, գ. 2, թ. 5.

²⁹ Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 11, թ. 1—18:

³⁰ Տե՛ս նույն տեղում, ց. 4, գ. 5, թ. 1:

³¹ Տե՛ս նույն տեղում:

³² Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 43, թ. 6:

²⁶ «Սովետական Հայաստան», 15 դեկտեմբերի, 1981 թ., № 287:

²⁷ Տե՛ս ՆՍՍՀ ԸՆՍԾ ՊԿԱ, ֆ. 875, ց. 2, գ. 384, թ. 44:

նկարային ցուցահանդեսներ՝ 433 կոմպլեկտ, օրացույցներ՝ 11283 հատ, բազմաթիվ հուշանվերներ, ամսագրեր՝ 1965 թ.՝ 23 անուն, 7397 հատ, 1966 թ.՝ 24 անուն, 13243 հատ, 1967 թ.՝ 28 անուն, 18327 հատ, 1968 թ.՝ 26 անուն, 24290 հատ և 1969 թ.՝ 27 անուն, 24500 հատ³³: Չրիաբար սփյուռք առաքվող պարբերականների մեջ մեծ թիվ են կազմել կոմիտեի օրգաններ «Սովետական Հայաստան» ամսագիրը և «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթը: Իսկ եթե դրան ավելացնենք նաև բաժանորդագրություններ ուղարկվող հավարավոր օրինակները, ապա պարզ կդառնա, թե որքան մեծ տարածում է գտնում և հսկայական ուժ ձեռք բերում հայրենական տպագիր խոսքը՝ թափանցելով գաղութահայ տարբեր անկյունները:

Այստեղից դժվար չէ նկատել, որ Սփյուռքի կոմիտեի գործունեության մեջ կարևոր տեղ է գրավում հայկական գաղթօջախները թերթերի, ամսագրերի, գրականության և այլ նյութերի ու սարքավորումների առաքումը, այդ թվում՝ դպրոցական լաբորատորիաներ, դաշնամուրներ, երաժշտական գործիքներ, մարզական գույք ու հագուստ և այլն:

Կոմիտեի օգնությունը սփյուռքին միջին հաշվով տարեկան կազմել է մոտ մեկ ու կես միլիոն ռուբլի, իսկ եթե նկատի ունենանք նաև հայրենի մի շարք կազմակերպությունների օգնությունը ևս (գիտական, առողջապահական, մարզական, երիտասարդական, տուրիստական և այլն), ապա այդ գումարը կանցնի 2 միլիոն ռուբլուց³⁴:

Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի այս առաքումները աննախընթաց բարերար ազդեցություն են ունեցել սփյուռքում: Թե ուրախության ինչպիսի երջանիկ զգացմունքներ ու հուզումնալից պահեր են ապրել տարագիր հայերը հայրենիքից ամեն մի գիրք ու թերթ ստանալիս, պատմում են կոմիտեում ստացված բազմաթիվ շնորհակալական նամակները: Օրինակ՝ ԱՄՆ-ից Հակոբ Զատիկյանը գրել է. «Հեռավոր Ամերիկայի մեկ հեռավոր անկյունը հաստատված ու հայրենիքի անմար բոցը իմ սրտի մեջ մշտավառ, հոգեկան անհուն հրճվանքով ստացա ձեր ուղակած զանազան գրքերու կապոցները, որոնց ծալքերուն մեջ հայրենիքիս կարոտալի սիրտը, «Արարատի»

արևը ծրարված կզգայի, տամկացած արցունքով կթղթատեի: Խորին շնորհակալություն ձեր թանկագին այդ մեծարժեք գիրքերու և թերթերու համար»³⁵: Հալեպից Շուքրի Քեչիշյանը «Հայրենիքի ձայն» և «Սովետական Հայաստան» ստանալու առիթով գրել է հետևյալ տողերը. «Անկեղծորեն խոստովանինք, որ հայրենական այս հրատարակությունները նոր եռանդ, լույս և ջերմություն ներմուծեցին մեր հոգիներուն խորը, առավել ևս մոտեցնելով մեզ և սիրեցնելով բոլորին՝ Հոկտեմբերյան մեծ հեղափոխության հարազատ ծնունդ՝ ծաղկյալ ու շենացած մայր հայրենիք Սովետական Հայաստանը»³⁶: ԱՄՆ-ի Չիկագո քաղաքից Սուրեն Հովհաննիսյանը գրել է. «Շնորհիվ մշակութային կապի կոմիտեի տարած աշխատանքների, սփյուռքահայության մեջ առաջացած է խոր բեկում հանդեպ հայրենիքի և հայապահպանման: Եթե մի քանի տարի առաջ հայ երիտասարդներից ոմանք բոլորովին կտրված էին հայությունից և անգամ ուրացած իրենց հայությունը և հայ ծագումը, ապա այսօր նրանք հպարտանում են, որ իրենք հայ են և ունեն հզոր հայրենիք»³⁷:

Սփյուռքի կոմիտեի գործունեության մեջ կարևոր տեղ են զբաղեցնում նրա կողմից արտասահմանյան հայկական թերթերին ու ամսագրերին ուղարկվող հոդվածները, նյութերը: Այդ գործին զգալի շափով նպաստեց 1967 թ. դեկտեմբերին հաստատված Երևան—Բեյրութ մեսրոպատառ հեռատիպը³⁸: Հետագայում ստեղծվեցին նաև Երևան—Փարիզ և Երևան—Նյու Յորք հեռատիպերը, որոնք ամենօրյա հաղորդումներ են տալիս Սովետական Միության և մեր հանրապետության կյանքի մասին: Կոմիտեի մամուլի բաժնի միջոցով առաջադիմական և գեմոկրատական թերթերին ու պարբերականներին առաքվում է տարեկան ավելի քան 350 հոդված ու նյութ:

Իր գոյության առաջին հինգ տարվա ընթացքում կոմիտեն սփյուռքի 80 առաջադիմական թերթերի ու հանդեսների, ինչպես նաև հայկական ռադիոժամերի հասցեով ուղարկել է ա-

³³ Տե՛ս նույն տեղում, թ. 34—35:

³⁴ Տե՛ս նույն տեղում, թ. 35—36:

³⁵ Նույն տեղում, գ. 9, թ. 7:

³⁶ Նույն տեղում, թ. 7—8:

³⁷ «Սովետական Հայաստան», ամսագիր, № 4, 1977 թ., էջ 11:

³⁸ Տե՛ս ՀՍՍՀ ՀՄՍՀ ՊԿԱ, ֆ. 875, ց. 2, գ. 28, թ. 4:

վելի քան 2000 նյութ՝ քաղաքական, տնտեսագիտական, գեղարվեստական և այլ բովանդակությամբ³⁹: Նշանավոր իրադարձությունների ու հոբելյանների առթիվ (Վ. Ի. Լենինի, Հովհ. Թումանյանի, Կոմիտասի 100-ամյակների, Երևանի 2750-ամյակի և այլն), կոմիտեի կողմից տարբեր երկրներ են ուղարկվել զեկուցումների նյութեր և այլն: Սփյուռքահայ որոշ պարբերականների ուղղարկվել են տոնական համարների հատուկ էջերի մակետներ՝ համապատասխան նյութերով, իլյուստրացիաներով, կլիշեներով:

Արտասահմանում սովետական իրականության ճշմարտացի պրոպագանդման ուղղությամբ մեծ դեր են կատարում նաև 1947 թ. սկսած Երևանից սփյուռքահայերի համար տրվող ամենօրյա ավելի քան 8 ժամ տևող ռադիոհաղորդումները⁴⁰: Տարագիր հայի մինչև հոգու խորքը թափանցող կոմիտասյան «Գարունի» կոշակները ամեն օր ռադիոընդունիչի մոտ են հրավիրում հարյուր հազարավոր ունկնդիրների Թեհրանում և Փարիզում, Հալեպում և Ֆրեզնոյում, Բաղդադում և Բոստոնում, ամենուրեք, ուր կան հայրենակարոտ պանդուխտ հայ օջախներ: Այդ հաղորդումներին ակտիվ մասնակցություն է ունենում նաև Սփյուռքի կոմիտեն իր հատուկ՝ «խոսում է Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն» հաղորդաշարով: Ի դեպ, արտասահմանյան բազմաթիվ երկրներում՝ ԱՄՆ-ում, Կանադայում, Արգենտինայում, Ուրուգվայում, Բրազիլիայում, Անգլիայում, Ֆրանսիայում, Լիբանանում, Եգիպտոսում, Կիպրոսում և այլուր, կազմակերպված են մի քանի տասնյակ հայկական ռադիո և հեռուստատեսային հաղորդումներ, որոնց նպատակն է տեղի հայերին օրվա նորությունները մայրենի լեզվով մատուցելու հետ մեկտեղ պատմել Սովետական Հայաստանի կյանքի, տնտեսական, մշակութային նվաճումների մասին⁴¹: Շատ դեպքերում դրանք փոխարինում են հայերեն թերթերին և անգամ դարձնեն ինքին: Նրանց համար նույնպես Սփյուռքի կոմիտեն և Երևանի ռադիոն սխտեմատիկաբար առաքում են երաժշտական ձայնագրություններ, ռադիոբեմականացումներ և այլ նյութեր: Գնահատելով Երևանի ռադիոյի դերը սփյուռքա-

հայության կյանքում, շատ ունկնդիրներ իրենց անկեղծ երախտագիտությունն են հայտնում այդ առթիվ: Ահա թե ինչ է գրում Բաղդադի հայոց հոգևոր հովիվ Օշական քահանա Քըլըճյանը. «Սփյուռքահայ կյանքի պայմաններուն մեջ շկա այնքան ուժեղ, հզոր ազդակ մը, որքան Երևանի ռադիոյի ձայնը, որը մեզ կլիցքավորե հայրենասիրությամբ, կբուժե մեր դեռ արյունոտ վերքերը՝ մեր լուռ ցավերը, կհագեցնե մեր կարոտի անմար կրակը և կբնորոշե մեր իսկությունն իսկ»⁴²:

Երևանի ռադիոն սփյուռքահայության ամենասիրելի հյուրն է, ավետաբեր ծիծեռնակը, որ իր թևերով գարուն է սփռում պանդուխտ հայությանը, պատմում հայրենիքի հաջողությունների մասին: Այդ է ակնարկում հալեպահայ Հովիվ Թութունջյանը, գրելով. «Հոկտեմբերը օժանդակեց ձևավորելու և կազմակերպելու կապը հայության ճշակոտոր բեկորներուն և մայր հողին միջև, ստեղծելու հոգևոր և մտավոր կապեր: Հոկտեմբերը խթան եղավ, որ հայրենիք—սփյուռք կապերը դարգանան ու տարագիր հայությունը հայրենիքի շուրջ ավելի սերտորեն համախմբվի, հայրենիքի նկատմամբ անոնց մեջ հավատ, սեր և ազգային հպարտության ղգացումը զորա՛ա և անոնք որպես լուսավոր և ազատարար փարոս, իրենց աչքերը սևեռեն դեպի մայր հողը, դեպի մեր փառապանծ հայրենիքը»⁴³:

Հեռավոր ափերում ապրող բազմահազար հայերին Սովետական Հայաստանի մասին ճշմարտությունը պատմող այդ հաղորդումները, հասկանալի է, չէին կարող վրիպել արևմտքի ռեակցիոն շրջանների ուշադրությունից: Նրանք մեծ գումարներ են ծախսում այդ հաղորդումները խանդարելու կամ էլ դրանց ղեկավարությունը իրենց ձեռքը զցելու համար: ԱՄՆ-ում գրտնըվող «Ամերիկայի ձայն», ԳՖՀ-ում գործող «Ազատության ձայն» և այլ ռադիոկայանների հայկական հաղորդումներն ուղղակի ֆինանսավորվում ու ղեկավարվում են ամերիկյան իշխանությունների կողմից:

Իրենց ազդեցությունն ու տնօրինությունը հայկական ռադիոժամերի վրա հաստատելու փորձեր էին կատարում մի ժամանակ ղաշնակցականները նաև Լիբանանում և այլ երկրներում: Սակայն սփյուռքահայ առաջադիմական ուժերը ամեն

³⁹ Տե՛ս նույն տեղում, ց. 4, գ. 51, թ. 21:

⁴⁰ Տե՛ս նույն տեղում, գ. 56, թ. 21—22:

⁴¹ Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 26, թ. 47—51:

⁴² «Սովետական Հայաստան», ամսագիր, № 5, 1978 թ., էջ 35:

⁴³ Նույն տեղում:

ջանք գործադրում են հակազդելու համար ռեակցիոն շրջանների նման ոտնձգություններին և շարունակում են հայրենասիրական ոգով իրենց հաղորդումները: Այդ գործում առաջադիմական ուժերին պալի օգնություն են հանդիսանում Սփյուռքի կոմիտեի կողմից նրանց ուղարկվող նյութերը՝ հոդվածները, ձայնագրությունները և այլն:

Հայրենասիրական դիրքերում կանգնած ռադիոհաղորդումներից պետք է նշել ամենից առաջ Ուրուզվալի մայրաքաղաք Մոստեվիդեոյում դեռևս 30-ական թվականների կեսերից գործող «Ռադիո Արմենիան»: Նրա երկարամյա տնօրեն, հայրենասեր գործիչ Հարություն Ռուբինյանը, որը սերտ կապերի մեջ է գտնվում մայր հայրենիքի հետ և բազմիցս այցելել է Երևան, իր կատարած գործի մասին գրում է. «Ազգապահպանման նվիրական տեսչականն է, որ մեզ կապած է այս դժվար, փոշոտ, սակայն անուշիկ գործին, որ կկատարենք անտրտունջ»⁴⁴:

Մոստեվիդեոյում վերջին տարիներին հայրենասիրական եռանդուն գործունեություն է ծավալել նաև «Հայաստանի արձագանք» ռադիոլսարանը, որը ջանք չի խնայում հայրենիք—սփյուռք կապերի ամրապնդման, հայ դանգվածներին հայրենիքին նվիրվածության ոգով դաստիարակելու և ընդհանրապես հայապահպանության ուղղությամբ: Երկու հայկական ռադիո-ժամեր են գործում նաև Բրազիլիայում: Նրանցից մեկը կոչվում է «Մեկոդիաս Արմենիաս», իսկ մյուսը՝ «Հայաստանի ձայն»:

ԱՄՆ-ի Ֆրեզնո քաղաքի հայկական ռադիոժամի ղեկավարն է ազգային-հասարակական ակտիվ գործիչ Արա Շիրազյանը, որի ջանքերով մեծապես ամրապնդվել է ամերիկահայ գործարար շրջանների կապը Սովետական Հայաստանի հետ:

Լոս Անջելոսում գործում է Հարություն Հադիկյանի գլխավորած «Ամերիկահայ ռադիո և հեռուստատեսության ժամը», որը պարբերաբար ցուցադրում է հայրենիքից ստացվող կինոնկարներ, հաղորդում ձայնագրություններ և այլն: Դետրոյտ քաղաքում գործող «Հայկական ռադիոժամը» գլխավորում է Ալիս Տեր-Վարդանյանը: Նման ռադիոժամեր կան ԱՄՆ-ի և Կանադայի նաև այլ քաղաքներում⁴⁵:

Փորձը ցույց է տալիս, որ ռադիոժամերը և հեռուստատես-

սային հաղորդումները հաջողությամբ կկարողանան կատարել իրենց հայրենասիրական առաքելությունը և իրենց ներգործող խոսքն ուղղել սոցիալիստական երկրների ու ազգային-ազատագրական շարժումների դեմ ծավալվող դադափարական դիվերսիաների դեմ, եթե մշտական ու հետևողական անհրաժեշտ օգնություն ստանան Սովետական Հայաստանից:

Ինչպես արտասահմանում գործող հայկական ռադիո և հեռուստատեսային ժամերի, այնպես էլ այնտեղ հրատարակվող մոտ 150 հայկական պարբերականների համար բավականին լուրջ օգնություն են Սփյուռքի կոմիտեի մամուլի բաժնի կողմից սիստեմատիկաբար նրանց ուղարկվող նյութերը, որոնցով տարագիր հայությունը իրազեկ է դարձվում հայրենիքի վերելքին, ազգային հպարտություն և հավատ ներշնչվում նրան:

Վերջին տարիներին համեմատաբար ավելացել է օտար լեզուներով լույս տեսնող կամ հատուկ էջեր ունեցող սփյուռքահայ թերթերի թիվը: Նրանց խմբագրությունները Սփյուռքի կոմիտեից խնդրում են իրենց նյութեր ուղարկել օտար լեզուներով: Հենց այդ նպատակին են ծառայում կոմիտեի մամուլի բաժնի կողմից մի քանի լեզուներով սփյուռք ուղարկվող «Վահագն» երիտասարդական և «Անահիտ» կանանց համար էջերը, որոնցով մայրենի լեզուն չի մացողները: Ծանոթանում են հայրենիքի կյանքին: Սփյուռքահայ մամուլին նյութական ու բարոյական մեծ օգնություն է նաև մի շարք թերթերի (Բելյուսի «Կանչ», «Զարթոնք», «Արարատ», Բուենոս Այրեսի «Սևան», Լոս Անջելոսի «Լրաբեր», Փարիզի «Աշխարհ», Սոֆիայի «Երևան», Բուխարեստի «Նոր կյանք» և այլն) ազատ վաճառքը և բաժանորդագրությունը Հայաստանում: Բավականին օգնություն է ցույց տրվում նաև տառատեսակների, մայր տառերի կլիշեների առաքման միջոցով, սփյուռքահայ մամուլի որոշ թվով աշխատողների հայրենիք հրավիրելով, նրանց կատարելագործումը, հանգիստն ու բուժումը մեղ մոտ կազմակերպելով⁴⁶:

Հայրենիք—սփյուռք առնչությունների մշջ կարևոր դեր են կատարում Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի տպագիր օրգանները՝ «Սովետական Հայաստան» ամսագիրը և «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթը: 1964 թ. երբ «Սովետական Հայաստանը» ԱՕԿՍ-ի վարչության օրգան լինելուց

⁴⁴ Տե՛ս ՆՍՄՀ ՀՍՍՀ ՊԿԱ, ֆ. 575, ց. 2, գ. 26, թ. 47—51:

⁴⁵ Տե՛ս նույն տեղում:

⁴⁶ Տե՛ս նույն տեղում, գ. 43, թ. 47:

դարձավ Սփյուռքի կոմիտեինը, հիմնովին վերակառուցեց իր աշխատանքը նոր խնդիրներին համապատասխան: Այն իր էջերում ավելի բազմակողմանի ու խոր արտացոլեց հանրապետության և սփյուռքի կյանքը: Արագորեն աճեց նաև նրա տպագրանակը՝ 1964 թվականի 2000-ից 1969-ին հասնելով 18000-ի⁴⁷: 1980 թ. նրա տպագրանակը կազմում էր 20000 օրինակ: 1965 թ. օգոստոսի 1-ից լույս է տեսնում կոմիտեի օրգան «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթը, որը լայնորեն լուսաբանում է ինչպես մեր հանրապետության բազմաբովանդակ կյանքը՝ սփյուռքահայությանը հետաքրքրող տեսանկյունով, այնպես էլ գաղութահայության առօրյան, այնտեղ կատարվող անց ու դարձերը, օրավուր սերտացող հայրենիք—սփյուռք կապերը: Վստահորեն կարելի է ասել, որ աշխարհագրական առումով այն հայկական ամենատարածված թերթն է աշխարհում: Եթե 1965 թ. նրա տպագրանակը կազմում էր 7000, ապա 1969 թ. հասավ 73 հազարի⁴⁸, իսկ 1980 թ.՝ 31000 և տարածվում է ավելի քան 50 երկրում: Շաբաթաթերթի դերը շատ լավ է բնութագրել Ֆրանսահայ հասարակական գործիչ Միհրան Մավյանը, ասելով. «Գաղթօջախներու և մայր հայրենիքի հետ կենդանի կապ հաստատող ամենազորեղ կամուրջն է «Հայրենիքի ձայնը», որը կկատարի հսկայական դեր՝ ընդունող և հաղորդող: Կրնդունի հայ սփյուռքը՝ իր բոլոր շարժումներով—գրական, գեղարվեստական, կրթական և կցուրածակե մայր հայրենիքի հուսադրիչ լուրերը, պայծառ իրականությունը»⁴⁹: Սփյուռքահայ արձակագիր Սմբատ Փանոսյանը (Հալեպ) այդ մասին գրել է. «...«Հայրենիքի ձայն» շաբաթաթերթը մեկն է հայապահպանման լավագույն ազդակներից: Մեղվաջան աշխատանքով խմբագրությունը կփորձե անկարելին՝ իր շաբաթաթերթը հասցնել սփյուռքի ամենամութ և կորած անկյունները, երբ այդ տեղեն լավին ամենաթույլ ճիշերն իսկ ազգապահպանման կանչերուն»⁵⁰:

ԱՄՆ-ից ուսուցիչ ներսես Բաբուրյանը գրել է, թե «կան թերթեր ու գրքեր, զորս կկարդանք մեր նկարագրի ու հոգու հայկականության աղնվացման համար: Այդ թերթերեն է «Հայ-

րենիքի ձայնը»: Դա մեր վերածնված հայրենիքի ձայնն է, անոր կերտման քաղցրահնչյուն եղանակը: Ծնորհակալություն կհայտնենք իր «զավակունքը փնտրող» մայր հայրենիքի բարեխնամ կառավարությանը՝ մեզի պարզևած այս հրաշալի թերթին համար: Օտար անապատներուն մեջ խանձվող մեր պանդուխտ հոգիներուն համար «Հայրենիքի ձայնը» իսկական օազիս մը եղավ»⁵¹:

Սիրիահայ նշանավոր ակնաբույժ, հայրենասեր հասարակական գործիչ Ռոբեր Ծեպեճյանը «Հայրենիքի ձայնը» անվանել է «նոր ոսկե կամուրջ հայրենիքի և սփյուռքի միջև»⁵²: Շատ դիպուկ և պատկերավոր է արտահայտվել Կահիրեի ռամկավարական «Արև» օրաթերթի նախկին խմբագիր էդուարդ Կատալոզյանը, ասելով. «Ամբողջ աշխարհով մեկ սփռված հայերը ծարավի են «Հայրենիքի ձայնին»: Թող այդ հնչեղ ձայնը էլ ավելի ոգևորի սփյուռքահայերի սրտերը»⁵³: Միանգամայն իրավացի է ամերիկահայ գրող Լևոն Զավեն Սուրմելյանը, երբ գրում է, թե՛ «այսօր դեռևս հնարավոր չէ բոլոր հայերին հավաքել հայկական հողի վրա, սակայն «Հայրենիքի ձայն» թերթը ամրացնում է հոգևոր կապերը հայրենիքի և ամբողջ աշխարհով մեկ սփռված հայերի միջև»⁵⁴:

Անդրադառնալով շաբաթաթերթի նշանակությանն ու խաղացած դերին, Բեյրութի Ռուբինյան վարժարանի տնօրեն և «Նոր սերունդ մշակութային շարժում» միության նախագահ, բանաստեղծ Պեպո Սիմոնյանը գրել է. ««Հայրենիքի ձայնը» կգտնեմ վերին աստիճանի շահեկան: Մեր հայրենի պետականությունը վերին աստիճանի երախտապարտ գործ կատարեց, ձեռնարկելով այս շաբաթաթերթի հրատարակությունը, որը մեծ դեր է կատարում սփյուռքահայությանը հայրենիքի շուրջը համախմբելու ուղղությամբ»⁵⁵:

Նիստ ուշագրավ և բազմանշանակալի է նաև այն փաստը, որ սփյուռքահայ շատ թերթեր իրենց էջերում ոչ միայն արտապում են «Հայրենիքի ձայնի» նյութերի մեծ մասը, դրանք օգ-

⁴⁷ Տե՛ս նույն տեղում, թ. 55:

⁴⁸ Տե՛ս նույն տեղում, թ. 51:

⁴⁹ Նույն տեղում, ց. 4, գ. 9, թ. 40:

⁵⁰ Նույն տեղում, ց. 2, գ. 43, թ. 50:

⁵¹ Նույն տեղում, թ. 50—51:

⁵² Նույն տեղում, ց. 4, գ. 5, թ. 13:

⁵³ Նույն տեղում:

⁵⁴ Նույն տեղում:

⁵⁵ Նույն տեղում, գ. 9, թ. 40:

տագործվում են նաև հայկական ռադիոհաղորդումներում, թարգմանվում են անգամ օտար լեզուներով, այլև երբեմն օգտագործվում են հայկական վարժարաններում որպես հայոց պատմության նյութեր, որով է՛լ ավելի են մեծանում «Հայրենիքի ձայնի» տարածման շրջանակներն ու ներգործության ոլորտները:

* * *

Հայրենիք—սփյուռք կապերի մեջ առավել էական ու արդյունավետ են կենդանի կապերը, փոխադարձ կոնտակտները, փոխայցելությունները, անմիջական հանդիպումները: Անձնական կոնտակտների հաստատումը ղգալի նպաստ է բերում հայրենիք—սփյուռք առնչություններին: Անձնական կոնտակտների հաստատման լավագույն միջոցներից մեկը տուրիզմն է, որը հատկապես վերջին տարիներին շատ լայն ծավալ է ստացել և այն հաճախ է օգտագործվում Սփյուռքի կոմիտեի կողմից: Այդ նպատակով կոմիտեն սերտ կապեր է պահպանում Արտասահմանյան տուրիզմի հանրապետական վարչության հետ՝ մի կողմից սփյուռքահայ զբոսաշրջիկների շրջանում ավելի բովանդակալից աշխատանք տանելու, իսկ մյուս կողմից՝ արտասահման մեկնող տուրիստական խմբերը ավելի նպատակասլաց կերպով կոմպլեկտավորելու համար:

Կոմիտեի ստեղծումից հետո, 1964 թ. երկրորդ կեսին, նրա կողմից ընդունվել են 18 երկրներից հայրենիք այցելած ավելի քան 1000 զբոսաշրջիկներ, 8 երկրներից 58 հասարակական գործիչներ ու արվեստագետներ՝ որպես հյուրեր: 1964 թ. առաջին անգամ Հայաստան եկավ սփյուռքահայ բժիշկների 7 հոգուց կազմված պատվիրակությունը, որը 10 օրվա ընթացքում հանգամանորեն ծանոթացավ հանրապետությունում առողջապահության գործի կազմակերպմանը, այցելեց մշակութային օջախներ, տեսարժան վայրեր և այլն⁵⁶: 1965 թ. Հայաստան այցելեցին 4000⁵⁷, իսկ 1966 թ.՝ 7300 հայ զբոսաշրջիկներ⁵⁸:

Արտասահմանից ժամանող հայ զբոսաշրջիկների գրեթե բոլոր խմբերը, որպես կանոն, ընդունվում են Սփյուռքի կոմի-

տեում, ուր նրանց համար կազմակերպվում են դասախոսություններ, զրույցներ, հասարակայնության ներկայացուցիչների հետ հանդիպումներ, ցուցադրվում են հայկական էինոնկարներ, նրանց տրվում են հուշանվերներ, բուկլետներ, կրթքանչաններ, ձայնապնակներ, զրբեր և այլն:

1966 թվականին կոմիտեի հյուրերն են եղել Ամերիկահայ առաջադիմական միության նախագահ Արամ Զարդարյանը, «Լրաբերի» այն ժամանակվա խմբագիր Վահան Ղազարյանը, Ֆրանսահայ մշակութային միության ակտիվ գործիչ Աղասի Դարբինյանը, բուլղարահայերի «Երևան» մշակութային միության ղեկավարներ Գաբրիել Գաբրիելյանը, Մարտիրոս Խաչիկյանը, Բենիամին Թյուֆենկչյանը, նրանց հետ շուրջ 200 հայրենակիցներ: Հյուր են եղել նաև մի շարք հայրենակցական միությունների ներկայացուցիչներ, սիրիահայ հասարակական գործիչ, նշանավոր ակնաբույժ Ռոբեր Ծեպեճյանը, Բեյրութի «Ջահակիր» թերթի խմբագիր Սարգիս Պալայանը, արգենտինահայ հասարակական առաջադեմ գործիչ Տիրուհի Քոթահյանը, Սան Պաուլոյի «Արարատ» հիվանդանոցի տնօրեն բժիշկ Ավետիս Կարաբաշյանը և ուրիշներ⁵⁹:

1967 թվականին Սփյուռքի կոմիտեի գործունեության կենտրոնում էր գտնվում Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակի արժանավայել նշումը: Այդ առթիվ անհրաժեշտ նյութեր արտասահման առաքելուց բացի, կոմիտեն հայրենիք հրավիրեց մեծ թվով սփյուռքահայերի: 1967 թ. կոմիտեի գծով սփյուռքից հյուր եկան 701 մարդ, որից 500 բուլղարահայեր՝ որպես գեղարվեստական ինքնագործ խմբերի անդամներ⁶⁰: Սփյուռքահայ բազմաթիվ հյուրեր մասնակցեցին նաև Հայաստանում սովետական իշխանության հաստատման 47-րդ տարելիցին, Եղիշե Զարենցի 70-ամյակին, Նոր Մալաթիայի և Նոր Սեբաստիայի հիմնադրման 40-ամյակների տոնակատարություններին և այլ միջոցառումներին:

1967 թ. առաջին անգամ սփյուռքահայ բանվորական պատվիրակություն ժամանեց Հայաստան և մասնակցեց պաշտոնական հանդիսություններին: Հալեպի Ազգային մշակութային միության 5 ներկայացուցիչներ ջերմ ու սրտագին հանդիպում-

⁵⁶ Տե՛ս նույն տեղում, գ. 5, թ. 1—13:

⁵⁷ Տե՛ս նույն տեղում:

⁵⁸ Տե՛ս նույն տեղում, գ. 1, գ. 36, թ. 45:

⁵⁹ Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 22, թ. 1—35:

⁶⁰ Տե՛ս նույն տեղում, գ. 28, թ. 2:

ներ ունեցան հայրենի աշխատավորների հետ, այցելեցին մի շարք արդյունաբերական ձեռնարկություններ, պատմական հուշարձաններ, տեսարժան վայրեր: Նրանք մեկնեցին հայրենական խոր տպավորություններով ու նոր լիցք ստացած⁶¹:

Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակի երևանյան տոնակատարություններին մասնակցեցին նաև այլ պատվիրակություններ: Դրանց թվում էին՝ հնչակյան պատվիրակությունը (որի կազմի մեջ մտնում էին կուսակցության կենտրոնական վարչության ատենապետ Հարություն Կուժունին և ատենադպիր, «Արարատ» օրաթերթի խմբագրապետ Ժիրայր Նաիրին), Ֆրանսահայ մշակութային միության պատվիրակությունը (որի կազմի մեջ էին Միության գլխավոր քարտուղար Զարեհ Զաքմիշյանը, «Աշխարհ» խմբագրապետ Ավետիս Ալիքսանյանը, նկարիչ Ռիշար Ժերանյանը և քանդակագործուհի Դարիա Կամսարականը): Հյուրերի թվում էին նաև ԺԱՖ-ի ներկայացուցիչ նկարիչ Արտավազդ Պերպերյանը (Ֆրանսիա), Արգենտինայից՝ բանաստեղծուհի Ալիսիա Կիրակոսյանը և ուրիշներ⁶²:

Նդիշե Զարենցի ծննդյան 70-ամյակի հանդիսություններին, որպես Սփյուռքի կոմիտեի հյուրեր, մասնակցեցին ֆրանսահայ գրողների միության նախագահ Մառի Աթմաճյանը, լիբանանահայ «Գրական շրջանակ» առաջադիմական գրողների կազմակերպության նախագահ Գառնիկ Աղդարյանը, իտալահայ բանաստեղծ և Միլանի մշակութային հայ տան ղեկավար Արամայիս Սրապյանը, ֆրանսահայ արձակագիր Զարեհ Որբունին և ուրիշներ:

1967 թ. հայրենիք են հրավիրվել նաև Կիպրոսի հանրապետության պառլամենտում հայ համայնքի ներկայացուցիչ Պերճ Թիլեպյանը, Նիկոզիայի քաղաքագլխի տեղակալ Անդրանիկ Աշջյանը, Մելբոռնյան կրթական հաստատության այն ժամանակվա տնօրեն Ասատուր Պետյանը, բանաստեղծ, հասարակական գործիչ Սմբատ Տեովլաթյանը, ֆրանսահայ կոմունիստական շարժման վետերան Միհրան Մավյանը, նկարիչ Զարեհ Մութաֆյանը, արգենտինահայ ճարտարապետներ, կոմունիստներ Ռոբերտ Տոբաշյանն ու Խորխե Սարգսյանը, Նյու Յորքի

«Մետրոպոլիտեն-օպերայի» նշանավոր երգչուհի Լիլի Զուգասզյանը և ուրիշներ:

1969 թ., մի շարք միջոցառումների անցկացման հետ կապված, Սովետական Հայաստան են հրավիրվել սփյուռքահայ մշակութային ու հասարակական աչքի ընկնող 165 գործիչներ: Այդ թվում եղել են Ստենֆորդի համալսարանի (ԱՄՆ) ականավոր ֆիզիկոս Զավեն Կիրակոսյանը, Գ. Կյուլպենկյան հիմնարկության հայկական ձեռնարկների բաժնի վարիչ Ռոպեր Կյուլպենկյանը և նույն բաժնի խորհրդական, գրող Վահրամ Մավյանը, Ամերիկահայ առաջադիմական միության կենտրոնական վարչության նախագահ Ալպերտ Ճանճիկյանը, ԱՄՆ-ի «Նոր աշխարհ» թերթի խմբագիր Սամվել Թումայանը, ամերիկահայ հասարակական գործիչ Հարություն Հազարյանը, որը Մատենադարանին նվիրել է 305 արժեքավոր ձեռագիր:

1969 թ. մայիս-հուլիս ամիսներին Երևանում հյուրընկալվել են Բելյուսթից ժամանած հայ սոցիալ-դեմոկրատական հրնչակյան կուսակցության 12 մարդուց բաղկացած և Լիբանանի կոմունիստական կուսակցության հայ անդամներից կազմված 13 հոգանոց բանվորական պատվիրակությունները: Ֆրանսիայից ժամանել են մեծանուն նկարիչ Գառզուն, ՀՄՄՀ ԳԱ արտասահմանյան անդամներ Զատիկ Խանզադյանը, Սիրարփի Տերներսեսյանը և ուրիշներ: Սփյուռքի կոմիտեն մեծ թվով հյուրեր ունեցավ հատկապես Հովհ. Թումանյանի և Կոմիտասի հարյուրամյակների առիթով⁶³:

1970 թ., Սովետական Հայաստանի 50-ամյակի առիթով, կոմիտեի կողմից հայրենիք հրավիրվեցին վեց տասնյակից ավելի սփյուռքահայ հասարակական, մշակութային գործիչներ⁶⁴: Նույն թվին, որպես կոմիտեի հյուրեր, հանրապետությունում են գտնվել ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Արգենտինայի, Բրազիլիայի, Լիբանանի, ՍԱՀ-ի, ԵԱՀ-ի և այլ երկրների հայկական կազմակերպությունների մի շարք պատվիրակություններ:

Սփյուռքի կոմիտեի և Ամերիկահայ առաջադիմական միության նախաձեռնությամբ Սովետական Հայաստանի կեսդարյա հոբելյանի տարին հայկական բոլոր գաղթօջախներում հայտարարվեց զանգվածային զբոսաշրջիկության տարի: Ուշագրավ

⁶¹ Տե՛ս նույն տեղում, ց. 4, գ. 9, թ. 18:

⁶² Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 26, թ. 5:

⁶³ Տե՛ս նույն տեղում, ց. 4, գ. 17, թ. 5—6:

⁶⁴ Տե՛ս նույն տեղում, գ. 51, թ. 28:

էր այն հանգամանքը, որ զբոսաշրջիկների կազմում գնալով ավելի շատ երիտասարդներ էին ընդգրկվում: Պետք է նշել, որ Սփյուռքի կոմիտեն միանգամայն ճիշտ է վարվում հատուկ ուշադրություն դարձնելով ընդհանրապես երիտասարդության հետ տարվող աշխատանքներին, քանի որ նրանից է կախված գաղթաշխարհի ապագան:

Բեյրութի «Դարուհի Հակոբյան» վարժարանի շրջանավարտները, որոնք կոմիտեի հրավերով եկել էին հայրենիք, Լիբանան վերադառնալուց հետո երախտագիտությունը գրել են. «Մեր շրջապատույտի ընթացքին կարճ ժամանակի մեջ տեսանք շատ բան, հպարտացանք մեր հայրենիքի վերելքով, շլացանք անոր կախարդական գեղեցկություններով, հրճվեցանք անոր փառքով և հզորացանք անոր ավյունով: Օտար ափերու մեջ ամեն մեկս այժմ դարձած ենք քիչ մը ավելի հզոր հայեր»⁶⁵: Նման բովանդակությամբ նամակները, որոնք բազմաթիվ են, վկայում են սփյուռքահայ աշխատավորների անկեղծ հայրենասիրության մասին, դեպի հայրենիքը նրանց ունեցած հավատի մասին, հավատ, որը նրանց մեջ ավելի է ամրապնդվում ու հզորանում սովետական իրականության շնորհիվ:

1970 թ. սկսած, ամեն տարի, կոմիտեի կողմից շուրջ մեկ ամիս հայրենիքում հյուրընկալվում են ԱՄՆ-ի Հայաստանյայց եկեղեցվո երիտասարդական կազմակերպության մի քանի տասնյակ հոգուց բաղկացած խմբերը: Սփյուռքի կոմիտեի կողմից մշակված ծրագրով կազմակերպված դասընթացներում այդ խմբերի անդամները ուսումնասիրում են հայոց պատմություն, գրականություն և լեզու: Ամերիկահայ երիտասարդները հաճույքով սովորում են նաև հայկական պարեր ու երգեր, շրջագայում են հանրապետությունում, հանդիպումներ ունենում գիտության ու մշակութային գործիչների հետ և հայրենական վառ տպավորություններով վերադառնում իրենց բնակության վայրերը: Նրանք հպարտությամբ իրենց տպավորություններն են հաղորդում հայրենակիցներին և դրանով նպաստում նորանոր խմբերի հայրենիք այցելելուն, նրա հետ կապվելուն⁶⁶:

Սփյուռքի կոմիտեի կողմից որպես հյուրեր հայրենիք են հրավիրվում հատկապես հասարակական, մշակութային գոր-

ծիչներ, գրողներ, լրագրողներ, որոնք գաղթօջախները վերադառնալուց հետո իրենց բանավոր ու գրավոր ելույթներում նկարագրում են հայրենի երկրի հաջողությունները, պրոպագանդում դրանք և սփյուռքահայ աշխատավորներին ավելի սերտորեն համախմբում Սովետական Հայաստանի շուրջը:

Սփյուռքի կոմիտեն մեծ աշխատանք է կատարում նաև արտասահման մեկնող տուրիստական խմբերի միջոցով: Կոմիտեին տրամադրվող ուղեգրերը հատկացվում են մասնագիտական խմբերի կազմակերպմանը, որոնցում ընդգրկվում են հանրապետության մտավորականության ներկայացուցիչներ՝ գրողներ, արվեստագետներ, գիտնականներ: Նրանք իրենց այցելած երկրների հայկական գաղթօջախներում կազմակերպում են բովանդակալից երեկոներ, զեկուցումներ, հայրենիքի կյանքի տարբեր բնագավառներին վերաբերող հարցաշրջույցներ, գեղարվեստական միջոցառումներ և այլն: Անշուշտ, դրանք նույնպես իրենց նպաստն են բերում հայրենիք—սփյուռք կապերի զարգացմանը: Նման մասնագիտական խմբերով տուրիստական արդյունավետ այցելություններ են կազմակերպվել ԱՄՆ, Արգենտինա, Ֆրանսիա, Լիբանան, Սիրիա, Եգիպտոս և այլ երկրներ: Օրինակ, 1964 թ. Սփյուռքի կոմիտեի կողմից Ք. Ալթունյանի անվան երգի-պարի անսամբլի հետ Սիրիա և Լիբանան մեկնեցին բանաստեղծ Հրաչյա Հովհաննիսյանը, պրոֆեսոր Ռուբեն Զարյանը, լրագրող Գուրգեն Առաքելյանը, որոնք օգտակար ելույթներ ունեցան Հալեպում, Դամասկոսում, Բեյրութում և այլ քաղաքներում⁶⁷:

Ֆրանսահայ մշակութային միության և ԺԱՖ-ի հրավերով 1965 թ. մեկ ամիս Ֆրանսիայում եղան Հայաստանի գրողների միության առաջին քարտուղար էդվարդ Թոփչյանը, գրող Սերո Խանդադյանը և Սփյուռքի կոմիտեի նախագահ Վարդգես Համազասպյանը⁶⁸: Նրանք հանդամանորեն ծանոթացան տեղի հայկական կազմակերպությունների աշխատանքներին, միաժամանակ Փարիզում, Լիոնում, Տեսինում, Վալանսում և այլ քաղաքներում հանդիպումներ ունեցան մշակութային, հասարակական, գրական, կրթական ու երիտասարդական կազմակերպությունների ղեկավարների, մամուլի աշխատակիցների,

⁶⁵ Նույն տեղում, ց. 6, գ. 9, թ. 9:

⁶⁶ Տե՛ս «Սովետական Հայաստան», ամսագիր, № 9, 1977 թ., էջ 35:

⁶⁷ Տե՛ս ՀՍՍՀ ՀՍՍՀ ՊԿԱ, ֆ. 875, ց. 1, գ. 37, թ. 72:

⁶⁸ Տե՛ս նույն տեղում:

եկեղեցականների և այլ խավերի ներկայացուցիչների հետ, ելույթներ ունեցան հայ համայնքների հավաքույթներում: Մի խոսքով, արտասահմանում ապրող հայ ազգաբնակչության շրջանում Սովետական Հայաստանի նվաճումները պրոպագանդելու, սփյուռքահայության նոր հատվածներ մայր հայրենիքի հետ կապելու, մեր երկրի ու ժողովրդի բարեկամների թիվը մեծացնելու գործում մեծ նշանակություն են ունեցել հանրապետության հասարակական-քաղաքական գործիչների, գիտնականների, գրողների, արվեստագետների խմբերի այցելությունները հայկական գաղթօջախները: Վերջիններիս կյանքի խորքերը թափանցելու, նրանց ավելի լավ ճանաչելու իմաստով դրանք շատ կարևոր նշանակություն ունեն:

* * *

Գաղթաշխարհում նոր սերնդի հայեցի կրթության ու դաստիարակության գործում, վերջին հաշվով ուժացման վտանգին դիմազրավման գործում, շատ կարևոր դեր ունի մայրենի լեզվով դպրոցը: Սփյուռքահայ դպրոցը հայապահպանման ամենակարևոր օջախներից մեկն է: Ուստի բնավ պատահական չէ, որ Սփյուռքի կոմիտեի գործունեության հիմնական բնագավառներից մեկը եղել է արտասահմանյան հայկական դպրոցների հետ տարվող աշխատանքը:

Սփյուռքի կոմիտեի 70-ական թվականների վերջերի տրվյալներով աշխարհի տարբեր երկրներում գոյություն ունեցող շուրջ հինգ տասնյակ հայկական գաղթօջախներից 25-ում կան մոտ 600 հայկական կրթական հաստատություններ, որոնցում ընդգրկված են ավելի քան 200 հազար երեխաներ: Կրթական այդ հաստատություններից մոտ 350-ը ամենօրյա դպրոցներ են, իսկ մնացածը՝ մեկօրյա կրթօջախներ, ուր հիմնականում երեխաները սովորում են հայերեն գրել-կարդալ⁶⁹:

Հայկական դպրոցների համեմատաբար խիտ ցանց գոյություն ունի Մերձավոր և Միջին արևելքի երկրներում: Այսպես, Լիբանանում մինչև իսրայելական վերջին ագրեսիան կար 80 հայկական դպրոց, որից 63-ը՝ Բեյրութում, Սիրիայում՝ 72, Իրանում՝ 25, Թուրքիայում, այսինքն Ստամբուլում՝ 22 և այլն:

Լատինական Ամերիկայի գաղթօջախներում կա մոտ 30 հայկական վարժարան: Դրանց թիվը համեմատաբար մեծ է Արգենտինայում, միայն Բուենոս Այրեսում կա 12 հայկական դպրոց: Ֆրանսիայում, ուր ապրում է մոտ 200 հազար հայ, գործում է ընդամենը 2 մշտական հայկական դպրոց⁷⁰: Արտասահմանյան ամենահայաշատ երկրում՝ ԱՄՆ-ում, հաշվում են մոտ 80 հայկական դպրոց, որից սակայն միայն 7-ն են ամենօրյա, իսկ մնացածները կիրակնօրյա վարժարաններ են⁷¹:

Միանգամայն հասկանալի է, որ անշափ դժվար է օտարության մեջ մայրենի լեզվով դպրոց պահելը: Ամենուրեք առկա է նյութական միջոցների սղությունը, դպրոցական հարմար շենքերի բացակայությունը, դասագրքերի և ուսուցիչների պակասը և այլն: Որպես կանոն, հայկական գաղթօջախներ ունեցող երկրների մեծ մասում իշխանությունները գրեթե միշտ էլ զրկամտությամբ են թույլատրում ազգային փոքրամասնությունների դպրոցների գոյությունը: Ոչ երկրորդական հանգամանք է նաև մեծ քաղաքների տարբեր ծայրերից երեխաներին հայկական վարժարան հասցնելու դժվարությունը: Այս և այլ կարգի խոչընդոտները հաղթահարելու համար պահանջվում են մեծ, հիրավի անձնազոհ ջանքեր:

Ահա թե ինչու Սփյուռքի կոմիտեի, ՀՍՍՀ լուսավորության մինիստրության և հանրապետության այլ օրգանների ուշադրության կենտրոնում են եղել արտասահմանյան հայկական դպրոցները, նրանց աշակերտների հայեցի կրթության ու հայրենասիրական ոգով դաստիարակության հարցերը:

Հատկապես վերջին քսանամյակում սփյուռքահայ դպրոցներին մայր հայրենիքից կազմակերպվել է մեծ ու սիստեմատիկ օգնություն: 1962—1980 թթ. ընթացքում նրանց համար պատրաստվել, հրատարակվել ու ձրիաբար առաքվել է 12 անուն ավելի քան 300 հազար դասագիրք: 1962 թ. սկսած տարեկան մինչև 50 սփյուռքահայ ուսուցիչների համար հայրենիքում կազմակերպվում են վերապատրաստման ու որակավորման ամենամյա երկամսյա դասընթացներ, որտեղ սփյուռքահայ շատ մանկավարժներ բարձրացնում են իրենց որակավորումը, ծանոթանում հայրենի իրականությանը: Այդ նույն ժամանակամի-

⁷⁰ Տե՛ս նույն տեղում:

⁷¹ Տե՛ս նույն տեղում, ֆ. 326, ց. 2, գ. 204, թ. 1—15:

⁶⁹ Տե՛ս նույն տեղում, ց. 4, գ. 5, թ. 2, գ. 6, թ. 1—12:

չոցում ավելի քան 2000 սփյուռքահայ երեխաներ իրենց ամառային հանգիստն են անցկացրել հայրենի պիտեներական ճամբարներում ու մանկական առողջարաններում⁷²: Միայն 1964—1969 թթ. Սփյուռքի կոմիտեն, բացի տասնյակ հազարավոր դասագրքերից, արտասահմանյան հայկական վարժարաններին է ուղարկել 18 կոմպլեկտ լաբորատորիաներ, 3 կոմպլեկտ կինոսպարատներ, 245 անուն 100 հազար կտոր պատմական, գեղարվեստական, մանկական ու այլ գրքեր, կինոֆիլմեր, երևանյան ժակնիշի դաշնամուրներ և այլ երաժշտական գործիքներ, դիդակտիկ նյութեր, թերթեր, ամսագրեր և այլն, այն ամենը, ինչը նպաստում է ուսման պրոցեսի հաջող կազմակերպմանը, պատանեկության աշխարհայացքի ճիշտ ձևավորմանը, նրա դաստիարակության գործին⁷³:

Սփյուռքի երեխաների կրթական գործին զգալի նպաստ եղավ Սովետական Հայաստանում նրանց համար արևմտահայերեն ուղղագրությամբ դասագրքերի պատրաստումը, հրատարակումն ու ձրիաբար առաքումը արտասահման: Սփյուռքահայ բազմաթիվ ուսուցիչներ սրտանց ողջունեցին այդ կարևոր միջոցառումը, որը զգալի օգուտ է բերում հայկական վարժարաններին, նպաստում մայրենի լեզվի ու զրականության դասավանդման բարելավմանը:

Ահա թե ինչ է գրել Հալեպի հայկական վարժարաններից մեկի տնօրեն Երվանդ Ակիշյանը. «Սույն նամակին տոն տվող պատճառը այն հոյակապ և աննախընթաց դործն է, որուն նախաձեռնողը եղավ Հայաստանի պետությունը: Խոսքս սփյուռքահայ վարժարաններու համար հրատարակված հայերեն լեզվի և զրականության դասագրքերու մասին է:

Այդ դասագրքերն ու այբբենարանները խիստ մատչելի գրտանք սփյուռքահայ աշակերտներու համար: Անոնք ամեն հարմարություններով օժտված հրատարակություններ են»⁷⁴:

Սակայն սփյուռքահայ դպրոցների համար դասագրքերի հրատարակումը, ինչպես և հայրենիքից կատարվող մյուս ձեռնարկումները, դժգոհություն ու շարունակական հարուցեցին որոշա-

⁷² Տե՛ս «Սովետական Հայաստան», ամսագիր, № 12, 1980 թ., էջ 15, 24—25:

⁷³ Տե՛ս ՀՍՍՀ ՀՍՍՇ ՊԿԱ, ֆ. 875, ց. 2, գ. 43, ք. 25—26:

⁷⁴ Նույն տեղում, գ. 5, ք. 56:

կի շրջաններում: Օրինակ՝ «Սփյուռք» թերթի խմբագիր Սիմոն Սիմոնյանը «Հայաստանյան դասագրքերու մասին» խորագրով հոդվածաշարում վրդովմունք է հայտնում այդ առթիվ, այն համարելով անտեղի «լոհոլոթյուններ»⁷⁵:

Սփյուռքահայ դպրոցների նկատմամբ մեծ հետաքրքրություն են ցուցաբերում և գնահատելի աշխատանք կատարում նաև Երևանի ռադիոյի արտասահմանյան հաղորդումների խմբագրությունը, «Պիոներ կանչ» ու «Ավանգարդ» թերթերը: Վերջիններս պարբերաբար հրատարակում են «Միժեռնակ» և «Միածան» էջերը, որոնցում նյութեր են տպագրվում ինչպես սփյուռքահայ պատանեկության ու երիտասարդության կյանքի վերաբերյալ, այնպես էլ նրանց հետաքրքրող շատ հարցերի մասին: «Պիոներ կանչը» տպագրել և սփյուռքահայ դպրոցներին ու թերթերին է ուղարկել կոմիտեի երիտասարդական և պատանեկան հանձնախմբի նախաձեռնած մրցանակաբաշխությունը՝ «Սովետական Հայաստանն իմ պատկերացումներում», «Իմ ուսուցիչը» և այլ ուշագրավ թեմաներով: Լավագույն շարագրությունների ու նկարների հեղինակները, այսինքն՝ մրցանակաբաշխության հաղթողները, հրավիրվում են Հայաստան՝ ամռանը պիտեներական ճամբարներում հանգստանալու, հայրենիքը ավելի մոտիկից ճանաչելու համար:

Այդ ուղղությամբ խրախուսելի ու հետաքրքիր նախաձեռնություններ են հանդես բերում նաև Երևանի պիտենների պալատի և պետական համալսարանի ինտերնացիտնալ ակումբներն ու հանրապետության բազմաթիվ դպրոցներ: Վերջիններս Սփյուռքի կոմիտեի երիտասարդական և պատանեկան հանձնախմբի միջոցով նամակագրական կապերի մեջ են մտել արտասահմանի հայկական վարժարանների հետ, նրանց ուղարկում են նվերներ՝ գրքեր, գրենական պիտույքներ, մանկապարտեզների համար՝ խաղալիքներ, տոնածառի զարդեր և այլ միջոցներ:

Մեծ օգնություն է եղել մի շարք վարժարանների որպես նվեր Սփյուռքի կոմիտեի և լուսավորության մինիստրության կողմից քիմիայի, ֆիզիկայի և բնագիտության լաբորատորիաներ հատկացնելը: Նման լաբորատորիաներ ուղարկվել են Եգիպտոսի Պողոսյան, Բեյրութի Թեքեյան, Միսիթարյան-Վիեննական,

⁷⁵ Տե՛ս նույն տեղում, ք. 59:

Հալեպի Թարգմանչաց ու Կիլիկյան վարժարաններին: Բացի այդ, միայն 1964—1965 թթ. հայրենիքից սփյուռքի դպրոցներն են ուղարկվել 200 անուն 10 հազար կտոր գեղարվեստական ու մանկական գրքեր, նոտաներ, «Սովետական Հայաստանը 45 տարում» և «Ցյուրականի աստղադիտարանը» լուսանկարային հավաքածուները: 1965 թ. սփյուռքահայ շուրջ 165 դպրոցներ կոմիտեի կողմից ստացել են 10 անուն հազարավոր օրինակ թերթեր ու ամսագրեր⁷⁶:

Նման օգնության առթիվ Բուենոս Այրեսի արվարձան Վիսենտե Լոպեսի հայ ազգային վարժարանի տնօրեն Արշամ քահանա Բողոյանը գրել է. «...վարժարանի հոգաբարձության, ծնողաց հանձնախմբի, տնօրինության, ուսուցչական կազմի և աշակերտության անունով կուզամ շնորհակալության և երախտագիտության մեր զգացումները հայտնել Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեին, հայրենի պետության ու հարազատ ժողովրդին՝ այն անփոխարինելի օժանդակության համար, զոր կրնձայեք սփյուռքի մեր կրթական օջախներուն (ղասագրքեր, մասնագիտական և գեղարվեստական գրականություն, քարտեզներ, պատկերներ և այլն, և այլն):

Ոչ մեկ հայրենիք իր հեռավոր զավակներուն հանդեպ չունի այն հոգածու կեցվածքը, ինչ որ կցուցաբերե մեր պաշտելի մայր հայրենիքը սփյուռքի գաղթօջախներուն նկատմամբ: Ես կստակամ, երբ կպատկերացնեմ այն հոգևոր սովն ու տագնապը, որոնք պիտի տիրենին սփյուռքահայ դպրոցական գործունեության մեջ, եթե շրջար հայրենիքի կենարար նպաստը և չհասներ անոր գուրգուրոտ ձեռքը»⁷⁷:

Սփյուռքահայ ուսուցիչներին տեղերում գործնական օգնություն ցույց տալու, ինչպես նաև որոշ առարկաներ դասավանդելու նպատակով հայրենիքից մի շարք գաղթօջախներ են գործուղվել բարձրորակ ուսուցչական ու դասախոսական կազմեր:

Իսկ որքան բազմախորհուրդ ու նշանակալի է սփյուռքահայ դպրոցականների ամառային հանգստի անցկացումը հայրենիքում: Սկսած 1964 թ. Հայաստան են հրավիրվում մեծ թվով սփյուռքահայ դպրոցականներ՝ իրենց ամառային հանգիստը շուրջ երկու ամիս Մաղկաձորի, Հանքավանի, Կիրովականի պիո-

ներական ճամբարներում ու մանկական առողջարաններում անցկացնելու համար: Հայրենի բնության գրկում նրանք իրենց հայրենաբնակ հասակակիցների հետ միասին կազդուրվում են, սովորում երգեր ու պարեր և անմոռաց տպավորություններով վերադառնում իրենց օջախները: Այդ միջոցառման անցկացումը այնքան էլ դյուրին գործ չէ: Եթե նկատի ունենանք, որ ամեն տարի հանգստի են հրավիրվում 10—15 տարեկան հասակ ունեցող 150—200 երեխաներ աշխարհի գրեթե բոլոր հայկական գաղթօջախներից, ապա պարզ կլինի, թե որքան մեծ դժվարություններ են հաղթահարում սփյուռքահայ կազմակերպությունները, սովետական դեսպանություններն ու հյուպատոսությունները, ՀԼԿԵՄ Կենտկոմն ու Սփյուռքի կոմիտեն այդ բարդություններով լի, բայց միանգամայն շնորհակալ ու խորիմաստ գործը հաջողությամբ գլուխ բերելու համար:

Վերադառնալով տուն, սփյուռքահայ երեխաներն ամենուրեք պատմում են այն վառ տպավորությունների մասին, որ ստացել են մայր հայրենիքում: Ահա թե ինչ է գրում այդ մասին իր ամառային հանգիստը հայրենիքում անցկացրած լիբանանահայ դպրոցական Նազելի Օգգայանը. «Իսկապես կյանքիս ամենաազդեցիկ և անմոռանալի օրերը անցուցի հայրենիքես ներս եղած քառասուն օրերու շրջանին: Նախքան հայրենիք այցելելս կսիրեի զայն, սակայն հիմա, հոն այցելելե հետքը շատ ավելի կսիրեմ զայն և անվարան կըսեմ, թե հրաշալի է մեր հայրենիքը»⁷⁸: Մի խոսքով, հայրենի երկիրն ամեն հնարավոր միջոցներով օգնում է սփյուռքահայ դպրոցներին՝ որպես հայապահպանության կարևոր օջախների և աշխատում այդ ճանապարհով սփյուռքահայ պատանեկությանը կապել Սովետական Հայաստանի պայծառ իրականության հետ:

Այդ գործում, անշուշտ, շատ կարևոր է նաև սփյուռքահայ ուսուցիչների դերն ու դիրքը: Սփյուռքահայ դպրոցների նկատմամբ հայրենական օգնությունն ապարդյուն կանցնի և բնավ իր նպատակին չի ծառայի, եթե ուսուցչությունը տրամադրված չլինի հայրենասիրաբար, լավ շիմանա իր գործը: Ահա թե ինչու Սովետական Հայաստանի համապատասխան մարմինները ամենայն հոգատարությամբ են շրջապատել նաև սփյուռքահայ ուսուցիչներին:

76 Տե՛ս նույն տեղում, գ. 37:

77 «Սովետական Հայաստան», ամսագիր, № 2, 1978, թ., էջ 27:

78 ՀՍՍՀ ՀՆՍԵ ՊԿԱ, ք. 375, ց. 1, գ. 37, թ. 54:

Գաղութահայ կյանքի յուրահատուկ պայմաններում, մատաղ սերնդի ազգային դիմագծի կազմավորման գործում կարեւոր դեր ունի դպրոցական ուսուցիչը: Ընտանիքից հետո դըպրոցն ու ուսուցիչն են մանուկ հոգիների վրա առաջին և հիմնական ներազդողները: Որպես կանոն, սփյուռքահայ դպրոցները գտնվում են քաղաքական տարբեր կուսակցությունների, բարեգործական հաստատությունների, հայրենակցական միությունների և կրոնական համայնքների անմիջական ազդեցության տակ:

Դրա հետևանքով սփյուռքում դպրոցները ոչ միայն սովորական ուսումնական հաստատություններ են, այլև հասարակական-քաղաքական գործունեության կարևոր օջախներ, որտեղ երեխաները ոչ միայն պարզապես կրթություն են ստանում, այլև դաստիարակվում, կոփվում են որպես ազգային կյանքի ապագա կադրեր: Սփյուռքահայ ուսուցիչները, կրթական գործի մշակներ լինելու հետ մեկտեղ, մեծ մասամբ, միաժամանակ նաև գրական ու ազգային հասարակական-քաղաքական գործիչներ են, կուսակցական ղեկավարներ, կազմակերպիչներ: Նաև դրանով է պայմանավորված այն, որ Սովետական Հայաստանի համապատասխան օրգանները սփյուռքահայ ուսուցիչների համար կազմակերպում են վերապատրաստման ու կատարելագործման դասընթացներ: Այդ դասընթացները, որոնք նկատելիորեն ընդլայնեցին սփյուռքահայ դպրոցների ու մտավորականության կապերը հայրենիքի հետ, մեծ գոհունակություն են առաջացրել արտասահմանյան հայկական կրթական ու մշակութային կազմակերպություններում, պարբերական մամուլում և այլուր⁷⁹:

Վերապատրաստման դասընթացներին մասնակցելու հրավիրված ուսուցիչների թվում հայրենիք են այցելել նաև սփյուռքում որպես կրթական գործի մշակներ աշխատող բազմաթիվ գրողներ, լրագրողներ, հասարակական գործիչներ: Հայրենիք հրավիրված ուսուցիչները մեծ մասամբ եղել են դեպի Սովետական Հայաստանը բարյացակամորեն տողորված առաջագիմական խավերի ներկայացուցիչներ: Սակայն նրանց թվում քիչ չեն եղել նաև սովետական իրականության նկատմամբ ոչ այնքան բարյացակամորեն տրամադրված անձինք, անգամ դաշ-

նակցական կուսակցության շարքերում գտնվողներ: Այդ հանգամանքը շատ կարևոր ու դրական արդյունքներ է տվել և ունեցել անհրաժեշտ գործնական էֆեկտ:

Սովետական Հայաստանում գտնված ժամանակամիջոցում սփյուռքահայ ուսուցիչները ստանում են մեթոդական ու մասնագիտական գիտելիքներ, լսում են հանրապետության անվաճի գիտնականների ու մանկավարժների դասախոսությունները, ղեկավար գործիչների զեկուցումները մեր ժողովրդական տրնտեսության, գիտության ու մշակույթի զարգացման վերաբերյալ, ծանոթանում ձեռք բերված նվաճումներին: Նրանք լինում են սովետական դպրոցներում, ուսումնասիրում դրանցում տարբեր առարկաների դասավանդման զրվածքը, այցելում հանրապետության պատմական ու տեսարժան վայրերը, մշակութային օջախները, ներկա գտնվում համերգների ու թատերական ներկայացումների: Եվ վերադառնալով իրենց բնակավայրերը, սփյուռքահայ մանկավարժները ամենուրեք՝ դպրոցներում, մշակութային օջախներում, մամուլում և այլուր հանդես են գալիս հայրենական տպավորություններով, պատմում այն ամենի մասին, ինչին ականատես են եղել մայր հայրենիքում: Հայրենիք այցելելով և անձամբ ականատես լինելով մեր ձեռքբերումներին, նրանք ավելի են մերձենում Սովետական Հայաստանին, թարմ լիցք, առողջ շունչ ու ջերմ հայրենասիրության ոգի տանում իրենց սաներին, վերածնված հայրենիքով ոգևորում ու ազգային հպարտություն ներարկում նրանց:

Երկամսյա շփումը հայրենիքի և սփյուռքի ուսուցիչների ու դպրոցականների միջև բարեկամական այնպիսի սերտ կապեր է առաջացնում, որ հրաժեշտը դառնում է խորապես հուզիչ ու թախծալի: Սփյուռքահայ ուսուցիչների ու դպրոցականների մեջ հայրենական տպավորությունները դրոշմվում են այնքան ուժեղ, որ վերադարձից հետո էլ, երկար ժամանակ, հավանաբար իրենց ամբողջ կյանքում, նրանք ապրում են այդ տպավորություններով, հայրենական ներշնչանքով: Սփյուռքահայ կրթական գործի շատ մշակներ իրենց ելույթներում, հոգվածներում և հայրենիք ուղարկած նամակներում երախտագիտության անկեղծ խոսք են ասում հայրենի կառավարությանը՝ իրենց նկատմամբ ցուցաբերված հոգատարության համար: Այդ են վկայում սփյուռքահայ վարժարաններից մեկի տնօրենի գրած նամակի հետևյալ տողերը. «Արտասահմանի հայության և անոր կրթա-

⁷⁹ Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 5, թ. 17—21, նաև՝ «Սովետական Հայաստան», ամսագիր, № 7, 1975 թ., էջ 29:

կան գործի նկատմամբ ցույց տրված հայրենական հոգածությունը աչքառու և խորապես խանդավառող պատգամ մըն է, և մենք անհունապես երախտապարտ միայն կրնանք զգալ»⁸⁰։ Իսկ Բեյրութի ՀԲԸՄ Դեմիրճյան վարժարանի հայոց լեզվի և գրականության ուսուցիչ Հակոբ Ավետիքյանը, որն, ի դեպ, ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետն ու ասպիրանտուրան, այդ առթիվ գրել է. «Հայրենիք կատարած մեր այս այցելությունը ուրիշ շատ օգուտների հետ մեկ օգուտ էլ տվեց. հայտնի է, որ սփյուռքը մեկ միասնական հասկացություն է, բայց տարբեր երկրներից բաղկացած։ Ամեն երկիր իր հոգսերն ու առանձնահատկություններն ունի։ Հայաստանում տարբեր երկրների ուսուցիչների հանդիպումը նպաստում է ոչ միայն հայրենիքի ճանաչմանը, այլ նաև սփյուռքի մյուս հատվածների իմացությանը։ Իրար հետ օգտակար հարաբերությունների մեջ ենք մտնում նաև մենք՝ տարբեր երկրներից ժամանած ուսուցիչներս։ Ստեղծվում են, եթե կարելի է այսպես ասել, միջգաղութային հարաբերություններ։ Այդ հանդիպումները, անշուշտ, օգնում են իրար լավ իմանալու, իրար փորձը փոխադարձաբար ընդօրինակելու գործին»⁸¹։

* * *

Սփյուռքի կոմիտեի գործունեության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում կապը հայրենակցական, բարեգործական, բարեսիրական, մշակութային, եկեղեցական, մարզական ու երիտասարդական կազմակերպությունների հետ։ Նրանք բոլորն էլ, թեպետ տարբեր ճանապարհներով, տարբեր ձևերով ու մեթոդներով պայքարում են հայապահպանության համար։

Ավելի քան 70 հայրենակցական միություններ ու նրանց մասնաճյուղեր, 100-ից ավելի մշակութային կազմակերպություններ մշտական կապի մեջ են Սփյուռքի կոմիտեի հետ։ Զգալի չափով դրանց ջանքերով է, որ սփյուռքում գոյատևում են հայ դպրոցը, եկեղեցին, մամուլը և մյուս ազգային օջախները։ Նրանց շնորհիվ է գաղթավայրերում պրոպագանդվում Սովետական Հայաստանը, նրանք են արձագանքում հայրենիքի բու-

լոր ձեռնարկումներին, ամեն տարի նշում Հայաստանում սովետական կարգերի հաստատման տարեդարձը և այլն։

Հայրենակցական միությունները հայրենասիրական ակտիվ գործունեություն ծավալեցին հատկապես համաշխարհային երկրորդ պատերազմի տարիներին։ Նրանք ակտիվորեն հանդես եկան ֆաշիզմի դեմ պայքարում, մասնակցեցին սովետական բանակի համար «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան և սովետական երկրի օգտին այլ միջոցների հավաքման կամպանիաներին։

Հայրենակցական միությունները ազգօգուտ գործ կատարեցին նաև մեծ հայրենադարձի տարիներին, նրա օգտին հանգանակելով 1,5 միլիոն դոլար և նպաստեցին ներգաղթի հաջող իրականացմանը։

Սակայն ժամանակի ընթացքում աստիճանաբար պակասում է հայրենակցական միությունների թիվը, խամրում նրանց գործունեությունը։ Դա պայմանավորված է նրանով, որ գնալով զգալի չափով նվազում է միությունների անդամների թիվը՝ եղևուն տեսած սերնդի անհետացման հետևանքով։ Շատ միություններ ներկայումս հազիվ մի քանի անդամ ունեն։ Նոր անդամների՝ հատկապես երիտասարդների մուտքը նրանց շարքերը գրեթե դադարել է։ Որոշ միություններ էլ իրենց գործունեությունը սահմանափակելով միայն սփյուռքի շրջանակներում, կտրվել են հայրենի իրականությունից և դրանով իսկ ճանապարհ հարթել իրենց մահացման համար։

Ներկայումս սփյուռքում գոյություն ունեն մոտ յոթանասուն հայրենակցական միություններ, որոնցից սակայն ակտիվորեն գործում են շուրջ 4 տասնյակը։ Նրանց մեծ մասը գտնվում է ԱՄՆ-ում և միավորված է 1947 թ. ստեղծված միջհայրենակցական միության մեջ։ Պետք է նշել, որ ամերիկահայ հայրենակցականները մեծ ու շնորհակալ աշխատանք են կատարում, նյութապես օգնելով Մերձավոր արևելքի հայկական դպրոցներին, բազմաթիվ երիտասարդների հատկացում են կրթաթոշակներ, օժանդակում ծերանոցների, օգնություն ցույց տալիս կարիքավոր հայրենակիցների, հովանավորում իրենց գավառի կամ քաղաքի մասին ստվարածավալ պատմագրքերի պատրաստման ու հրատարակման գործը, կարևոր ավանդ ներդնում համազգային նշանակություն ունեցող հանգանակությունների մեջ և այլն։ Ընդհանրապես խիստ գնահատելի է տարբեր միու-

⁸⁰ ՀՍՍՀ 22ՍԾ ՊԿԱ, ֆ. 875, ց. 2, գ. 17, թ. 14—15։

⁸¹ «Սովետական Հայաստան», ամսագիր, 1976 թ., № 11, էջ 16։

թյունների բերած նպաստը սփյուռքահայ մշակութային կյանքին:

Հայրենակցական միությունների գործունեության աշխուժացման համար կարևոր ազդակ եղավ մայր հայրենիքի հետ կապերի սերտացումը, նրանց հանդեպ Սովետական Հայաստանից ցուցաբերված բարյացակամ և ուշադիր վերաբերմունքը: Հայրենակցականների դերի ու հեղինակության մեծացման գործում կարևոր նշանակություն ունեցավ հատկապես վերածնված հայրենիքում Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի հայկական բնակավայրերի անուններով ավանների, թաղամասերի և փողոցների անվանակոչումը: Վաղուց ի վեր, սկսած 1925 թ., Սովետական Հայաստանում լավ ավանդույթ է դարձել հարություն տալ հին, պատմական Հայաստանի գավառների, քաղաքների ու այլ բնակավայրերի անուններին: Այդպես, «նոր» ածականի կցումով, Սովետական Հայաստանում ծնվեցին ու վերաշինվեցին բազմաթիվ բնակավայրեր: Սովետական Հայաստանի տարածքում կյանք առած արևմտահայկական ամեն մի նոր ավան լուսաշող աստղ է, որը ճիշտ կողմնորոշում է տալիս պատմական հայրենիքի ավերված բնակավայրերի աշխարհով մեկ վայրավատին զավակներին: Նրանց բոլորի հայացքներն այժմ կենտրոնացած են այն կիզակետին, որը կոչվում է ամենայն հայոց մայր հայրենիք՝ Սովետական Սոցիալիստական Հայաստան:

Սփյուռքի կոմիտեն մշտապես պաշտպանելով հայրենակցական միությունների խնդրանքները և հանրապետության վերադաս մարմինների առջև միջնորդելով Սովետական Հայաստանում նոր ավանների, թաղամասերի ու փողոցների անվանակոչման համար, հայրենասիրական օգտակար շարժում առաջ բերեց հատկապես հայրենակցականների մեջ միավորված ավագ ու միջին սերնդի շրջանում: Դրա շնորհիվ պայմաններ ստեղծվեցին, որպեսզի շեզոքացվեն հետադիմական ուժերի ազդեցությունները և հայրենակցական միությունները սերտ կապերի մեջ մտնեն մայր հայրենիքում հիմնադրված իրենց ավանների հետ: Եվ պատահական չէ, որ հատկապես վերջին տարիներին հայրենակցական միությունները կայուն բարեկամություն են հաստատել հանրապետության մի շարք ավանների, ուսումնական ու գիտական հաստատությունների և առողջապահական հիմնարկների հետ, նրանց օգտին կատարել են մի քա-

նի հարյուր հազար դոլարի նվիրատվություններ: Արաբկիրի, Մալաթիայի, Սեբաստիայի, Խարբերդի, Եվդոկիայի, Մարաշի, Զեյթունի, Կեսարիայի, Այնթապի և բազմաթիվ այլ հայրենակցական միությունները կարծես մրցույթյան մեջ են մտել միմյանց հետ հայրենանվեր ծրագրեր իրականացնելու ուղղությամբ: Ետպատերազմյան տարիներին հայրենակցականների նախաձեռնությամբ և սովետական կառավարության աջակցությամբ հայրենի հողում այդպես բարձրացան Զեյթունն ու Կիլիկիան, նոր Մարաշն ու նոր Հաճընը և բազում այլ ավաններ, որոնցում իր սեփական օջախն ստեղծած նախկին տարագիր հայը դարձել է իր երկրի լիիրավ տերը:

Հայրենակցական միությունների գործունեության համար այժմ բնորոշը Սովետական Հայաստանի առաջադիմության ու վերելքի օգտին ծավալված շարժումն է: Դրա ավելի մեծ աշխուժացմանը լայնորեն խթանել է նրանց զանազան խնդրանքներին Սովետական Հայաստանում դրական ընթացք տալը: Շատ միություններ, որոնք գրեթե անգործության էին մատնվել կամ գտնվում էին ուղղակի կազմալուծված վիճակում (մանավանդ գյուղական հայրենակցական միությունները), իրենց նկատմամբ հայրենիքից ցուցաբերված վերաբերմունքից ոգևորված, վերակենդանացան և սերտ հարաբերությունների մեջ մտան Սովետական Հայաստանի հետ: Այդ տեսակետից բնորոշ է, օրինակ, Պաղինի հայրենակցական միության գործունեությունը: Նրա շարքերում հագիվ մի քանի անդամ էր մնացել և գրեթե անգործության մատնված վիճակում էր գտնվում: Սակայն հայրենիքի հետ փոխհարաբերությունների մեջ մտնելով ոչ միայն ոտքի կանգնեց, այլև դարձավ նախաձեռնողը մի շարժման, որով միավորվեցին մի քանի հայրենակցական միություններ և ավելի մեծ ուժ կազմեցին: Այդպես վերականգնվեց Համաբալուցիական հայրենակցական միությունը, իր մեջ ընդգրկելով շուրջ 30 գյուղական հայրենակցական միություններ: Միության վարչությունը Սփյուռքի կոմիտեին հասցեագրած իր նամակի մեջ գրում էր, որ իրենք «բուռն բաղձանք ունեն կերպով մը մաս ու բաժին ունենալ հայրենիքի շինարարության ու փառավոր վերելքին մեջ»: Միության վարչությունն այնուհետև «Լրաբեր» թերթում հրապարակեց բոլոր բալուցիներին ուղղված կոչ, որտեղ առաջարկվում էր վերակազմել միությունը և ավելի սեր-

տորեն համախմբվել մայր հայրենիքի շուրջը⁸²: Այդ ջանքերի շնորհիվ շուտով իրականացավ Համաբալուցիական Կեսարիայի և Երզնկայի հայրենակցական միությունների ցանկությունը: ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահությունը հանրապետության երեք բնակավայրերի շնորհեց նոր Բայահովիտ, նոր Կեսարիա և նոր Երզնկա անունները⁸³: Վճռականորեն դեպի հայրենիք կողմնորոշվեցին նաև Հաճընի, Խուլյու-Թլկատինի Դատեմի, Վարդաթիլի, Կյուրինի, Չնքուշի, Քզիի և ուրիշ հայրենակցական միությունները⁸⁴: Համապատասխան հայրենակցական միությունների խնդրանքներով Երևանում փողոցներ են կոչվել Մալաթիայի և Սեբաստիայի անուններով, «Սեբաստիա» անունն են կրում նաև մայրաքաղաքի Շահումյանի շրջանի օրինակելի մանկապարտեզը և մեկ հյուրանոց: «Արաբկիր» անունն է տրվել Երևանի 26 կոմիսարների շրջանի հանրախանութին և արդիական սարքավորումներով գործող քիմիական շոր մաքրման ֆաբրիկային: Նոր Խարբերտ բլանի միջնակարգ դպրոցը կրում է եղեռնի զոհ, գրող, մանկավարժ Հովհաննես Թլկատինցու (Հարությունյան), իսկ մայրաքաղաքի նոր Սեբաստիա թաղամասի դպրոցը՝ Դանիել Վարուժանի անունը: Նոր Խարբերտում փողոցներ են բացվել պատմական Դատեմի, Մորենիկի, Վարդաթիլի անուններով, նոր Երզնկայում՝ նշանավոր գրող Հակոբ Մընձուրու ծննդավայր Արմտանի անունով⁸⁵: Մի շարք հայրենակցականների խնդրանքներով ու նյութական օժանդակությամբ որոշ տեղերում կառուցվել են 1915 թ. ցեղասպանության զոհների հիշատակին նվիրված աղբյուր-հուշարձաններ և այլն:

Այսպիսով, սփյուռքահայության նկատմամբ հայրենի կառավարության դրսևորած հոգատարության շնորհիվ մեծապես բարձրացել է հայրենակցական միությունների գործունեության արդյունավետությունը: 60-ական թվականների կեսերից սկսած տարեցտարի ավելանում է այն հայրենակցական միությունների թիվը, որոնք սերտ կապերի մեջ են հայրենիքի հետ, նրա առանձին ավանների, ուսումնական, գիտական, մշակութային, առողջապահական հիմնարկների ու հաստատությունների հետ:

⁸² Տե՛ս «Սովետական Հայաստան», ամսագիր, 1976 թ., № 12, էջ 26:

⁸³ Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 875, ց. 2, գ. 33, թ. 1—2 և գ. 43, թ. 38—39:

⁸⁴ Տե՛ս «Սովետական Հայաստան», ամսագիր, 1976 թ., № 12, էջ 27:

⁸⁵ Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 875, ց. 2, գ. 43, թ. 39:

Ընդառաջելով Արգենտինայում հաստատված Հաճնո հայրենակցական միության ցանկությանը ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության 1958 թ. դեկտեմբերի հրամանագրով Աբովյանի շրջանի քաղաքատիպ ավաններից մեկը կոչվեց նոր Հաճըն: Այդ ակտը մեծ խանդավառությամբ ընդունվեց տարբեր երկրներում սփռված հաճընցիների կողմից: Հաճնո հայրենակցական միության կենտրոնական վարչության նախաձեռնությամբ Արգենտինայի, Ուրուգվայի, Բրազիլիայի, Ֆրանսիայի, Լիբանանի և ԱՄՆ-ի մասնաճյուղերը 2 միլիոն պեսո հանգանակեցին և հանձնեցին Արգենտինայում սովետական դեսպանությանը՝ խնդրելով այն ընդունել որպես հայրենի կառավարության ու ժողովրդի նկատմամբ հայրենասեր հաճընցիների երախտագետ սիրո խորհրդանշան⁸⁶:

Մայր հայրենիքում «նոր» մասնիկի կցումով Արևմտահայաստանի ու Կիլիկիայի տարբեր բնակավայրերի անուններով ավանների հիմնադրման փաստի իմաստը շատ դիպուկ է մեկնաբանել «Արարատ» օրաթերթը նոր Հաճընի անվանակոչման առիթով հրապարակած խմբագրականում: Թերթը նշում է, որ թեպետ չկա այլևս կիլիկյան պատմական Հաճընը, բայց կա «խորհրդային Հայաստանի պայծառ արևի տակ» վերածնված նոր Հաճընը: «Վերածնված մայր հայրենիքին որպես անբաժանելի մասնիկը,— այնուհետև շարունակում է թերթը,— նոր Հաճընը օրե օր հասակ կառնե ու կգեղեցկանա այսօր, որպես կենդանի կոթող իր նահատակներու, որպես հաղթանակի կանչ՝ ուղղված իր պարտված դահիճին, և որպես բարոյական խարան՝ այն արևմուտքին, որ խաշով ու ավետարանով օգնություն խոստանալե ետք, զինք ձգեց միայնակ գազազած թուրքին առջև, քի վերջո անոր դաշնակիցը դառնալու և գործած ոճիրները ծածկելու համար»⁸⁷:

Խմբագրականն այնուհետև պատգամում է սփյուռքահայերիտասարդությանը՝ «...Սիրելի, պաշտպանել հողի այն պատանը, որ վերածնված Հայաստանն է, հայության վերջին հույսն ու ապավենը, որ մեկնակետն է հայուն վաղվան ամբողջական հաղթանակին»⁸⁸:

⁸⁶ Տե՛ս նույն տեղում, գ. 26, թ. 9—10:

⁸⁷ «Արարատ», 8 նոյեմբերի, 1964 թ., № 6900:

⁸⁸ նույն տեղում:

Վերջին տարիներին հայրենիքում մեծ շուքով տոնվել են Նոր Արաբկիրի, Նոր Մալաթիայի, Նոր Սեբաստիայի և այլ ավանների հիմնադրման հոբելյանական տարելիցները: Լավ ավանդույթ է դարձել ամեն տարի աշնանը հանդիսավոր պայմաններում յուրահատուկ ծեսերով նշել Մուսա լեռան հերոսամարտի տարեդարձը Արարատյան դաշտի սրտում վերածնված Մուսալեռ ավանում: Այդ տոնախմբություններին մասնակցում են համապատասխան հայրենակցական միությունների ղեկավարները և մեծ թվով զբոսաշրջիկներ՝ որպես ուխտավորներ:

Ընդհանրապես լավ ավանդույթ է դարձել հայրենիք այցելել հայրենակցական միությունների կողմից կազմված խմբերով, մասնակցել իրենց ավանների անվանակոչության տարեդարձներին և մոտիկից հաղորդակից լինել մեր առաջընթացին: Զբոսաշրջիկները անմոռաց օրեր են անցկացնում հայրենիքում և վերադարձին իրենց տեսածի ու զգացածի մասին պատմում միության մյուս անդամներին: Հայրենիք գալիս նրանք հաճախ իրենց հետ որպես նվերներ բերում են արխիվներ, թանգարանային արժեքներ, հնատիպ գրքեր, ձեռագրեր և այլն: Այսպիսով, ներգաղթին և հայրենիքի վերաշինությանը նպաստելուն ղուզընթաց, հայրենակցական միությունները մեծ գործ են կատարում նաև հայ մշակույթի տարագիր գանձերը հայրենիք փոխադրելու ուղղությամբ: Նշանակալից են հայրենակցականների ծառայությունները հայ ժողովրդի պատմության ու մշակույթի կորուսյալ էջերի հավաքման ու հրատարակման գործում: Նման ջանքերի շնորհիվ արդեն հրապարակի վրա են մի շարք սովորածավալ հատորներ՝ «Պատմություն Մալաթիո հայոց», «Նարբերտ և անոր ոսկեղեն դաշտը», «Պատմություն Եվդոկիո հայոց», «Պատմություն Զարսանջակի», «Պատմություն Այթնեպի հայոց», Ուրֆայի, Հաճընի, Տարոնի, Պաղնատան և այլ գավառների ու քաղաքների պատմությունները:

Մայր հայրենիքի հետ մշակութային կապերի սերտացմանը ղուզընթաց, վերջին տարիներին որոշակի ու մասսայական տրամադրություններ են նկատվում հայրենակցական, բարեգործական և այլ կազմակերպությունների ու անհատների մոտ՝ հայրենասիրական անկեղծ զգացմունքներից մղված մեծ շափերի հասնող գումարներ, սարքավորումներ, գրքեր և այլ արժեքներ նվիրել Սովետական Հայաստանի գիտական, մշակութային, առողջապահական հաստատություններին: Միայն 1967—1968 թթ.

ընթացքում այդ ճանապարհով ստացված սարքավորումների ու գիտական ապարատների արժեքը անցնում է կես միլիոն դոլարից⁸⁹: Հայրենակցական միությունների նախաձեռնությամբ Փարիզում ստեղծվել է հատուկ ֆոնդ՝ շուրջ 80 հազար դոլար գումարով, որով Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի և հայրենակցական միությունների պայմանավորվածության համաձայն զանազան գնումներ են կատարվում արտասահմանում և առաքվում Սովետական Հայաստան:

Սփյուռքահայ բազմաթիվ անհատներ նույնպես իրենց նվիրական պարտքն են համարում որևէ օգտակար ծառայություն մատուցել մայր հայրենիքին: Օրինակ, Համասեբաստահայ վերաշինաց միության անդամ Նշան Պզտիկյանը հազար դոլար արժողությամբ ռադիոհանգույց է նվիրել Երևանի Դանիել Վաչուժանի անվան դպրոցին, Մալաթիայի կրթասիրաց միության անդամներ Լևոն Փափազյանը և Ավետիս Ավետիսյանը 4 հազար դոլար են նվիրել Բյուրականի աստղադիտարանի տիեզերական հետազոտությունների մասնաճյուղին՝ գիտական արժեքավոր գրականություն և հազվագյուտ քարտեզներ ձեռք բերելու համար: ԱՄՆ-ում բնակվող Հրաչ Ղաղարյանը և դոկտոր Սաթրլենգը 1969 թ. Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոնի սիմֆոնիկ նվագախմբին, ինչպես նաև Կոմիտասի անվան կոնսերվատորիային նվիրել են 11 խիստ արժեքավոր ջութակներ, որոնցից մի քանիսը 120—150 տարվա հնություն ունեն: Նույն անձնավորությունները Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանին նվիրել են մեկ արժեքավոր ձեռագիր⁹⁰: Համաքղեցիական վերաշինաց միությունը գյուղատնտեսական մեքենաներ է նվիրել Նոր Հաճընին և ՀՍՄՀ ԳԱ հիդրոպոնիկայի լաբորատորիային, Բալու-Պաղինի և Մորենիկի միությունները՝ երաժշտական գործիքներ օպերայի և բալետի թատրոնին⁹¹: Համասեբաստահայ վերաշինաց միությունը, որը նախկինում ակտիվորեն մասնակցել էր Նոր Սեբաստիա ավանի կառուցմանը և հայրենիքի օգտին կատարված այլ ձեռնարկումների, 1963—1964 թթ. ՀՍՄՀ ԳԱ բիրքիմիայի լաբորատորիային (այժմ՝ ինստիտուտ) և մի շարք բժշկական հաստա-

⁸⁹ Տե՛ս ՀՍՄՀ ՀՍՄՀ ՊԿԱ, ֆ. 875, ց. 2, գ. 2, թ. 12—14:

⁹⁰ Տե՛ս Նույն տեղում, ց. 4, գ. 17, թ. 16—17:

⁹¹ Տե՛ս Նույն տեղում, ց. 2, գ. 26, թ. 37:

տուժյունների համար տրամադրել է 60 հազար դոլար, որով արտասահմանում գնվել են առաջնակարգ գործիքներ ու սարքավորումներ⁹²:

1965 թ. Երևանի Նոր Մալաթիա թաղամասում բացվեց նույնանուն արդիական կլինիկական հիվանդանոցը, որի բժշկական սարքավորումները՝ շուրջ 30 հազար դոլար արժողությամբ, հատկացրել է Մալաթիո կրթասիրաց միությունը: Մինչ այդ Նոր Մալաթիայի դպրոցի համար միությունը ուղարկել էր 20 հազար դոլարի երաժշտական գործիքներ: Ընդհանրապես, մինչև 1966 թ. այդ ընկերությունը Նոր Մալաթիայի և Սովետական Հայաստանի մի շարք հաստատությունների ու այլ ազգագուտ նպատակների համար տրամադրել է մոտ 500 հազար դոլար⁹³:

Հաճնո հայրենակցական միությունը 1965 թ. բժշկական գործիքներ ուղարկեց Նոր Հաճրնի հիվանդանոցին: 1968 թ. ևս այդ միությունը 5 հազար դոլար արժողությամբ բժշկական գործիքներ նվիրեց նույն հիվանդանոցին⁹⁴:

Ստանալով հայրենիքի քաջալերանքը, Արաբկիրցիների հայրենակցական միությունը Երևանի «Նոր Արաբկիր» քիմիական շոր մաքրման ձեռնարկությանը նվիրեց մի ամբողջ ֆաբրիկայի սարքավորում⁹⁵:

Հայրենի գիտահետազոտական և ուսումնական հաստատություններին գնահատելի նվերներ են տվել նաև Տարոն-Տուրուբերանի, Վասպուրականի, Համաբալուցիական, Համաերզնկացիական, Դատեմի, Կեսարիայի ու այլ հայրենակցական միություններ և բազմաթիվ անհատներ:

Այսպիսով, սփյուռք—հայրենիք կապերի սերտացման շնորհիվ բավականին աշխուժացավ հայրենակցական միությունների գործունեությունը: Նրանք դարձան վերաշինվող հայրենիքի իրենց ուժերի ներածին չափով ակտիվ կառուցողներ, նոր բնակավայրերի հիմնադիրներ, մեքենաներ ու սարքավորումներ մատակարարողներ, արդյունաբերության նոր ճյուղերի զարգացմանը նպաստող կազմակերպություններ: Իհարկե, այդ ամենը բնավ հարթ ու խաղաղ, հեշտ ու հանգիստ չի ստացվել:

⁹² Տե՛ս նույն տեղում, թ. 33—34:

⁹³ Տե՛ս նույն տեղում, գ. 5, թ. 41—42:

⁹⁴ Տե՛ս նույն տեղում, գ. 26, թ. 9—10:

⁹⁵ Տե՛ս նույն տեղում:

Հարկ է եղել հաճախ այդ ճանապարհին հաղթահարել շատ արգելքներ ու խոչընդոտներ, որպեսզի հայրենակցական միությունները որդեգրեին գործունեության նման ճիշտ ուղեգիծ:

Հայրենակցական միություններից շատերն ունեն իրենց տպագիր պարբերականները («Նոր Արաբկիր», «Նոր Սեբաստիա», «Նոր Այնթապ», «Նոր Մալաթիա», «Նոր Հաճրն» և այլն), որոնցում ոչ միայն արտացոլվում է այդ միությունների գործունեությունը, այլև մեծ տեղ է տրվում Սովետական Հայաստանի առաջընթացը լուսաբանող նյութերի պրոպագանդանը, կոչ է արվում համախմբվել հայրենիքի շուրջը: Դժվար է գերազնահատել այն շարժումը, որ հայրենակցական միությունները ծավալել են մայր հայրենիքի շուրջը սփյուռքահայությունը համախմբելու և հայապահպանության գործը հաջողությամբ առաջ տանելու ուղղությամբ:

Սփյուռքի կոմիտեի, առաջադիմական կազմակերպությունների, մասնավորապես հայրենակցական միությունների ու նրանց տպագիր օրգանների ծավալած բեղուն գործունեության, ձեռնարկած գործնական միջոցառումների շնորհիվ վերջին տարիներին որոշակի կազմալուծում է նկատվում սփյուռքահայության դաշնակցության ազդեցության տակ գտնված խավերի մեջ: Եթե դաշնակցության ղեկավարությունը առաջվա նման շարունակում է իր հակասովետիզմը, ապա երկար տարիներ նրա ազդեցության տակ եղած և հայրենիքի հետ կապեր չունեցած որոշ խավեր ու շարքայիներ այժմ փոխել են իրենց վերաբերմունքը Սովետական Հայաստանի հանդեպ: Շատերն սկսել են թղթակցել կոմիտեի հետ, խնդրում են իրենց ուղարկել հայաստանյան մամուլ ու գրականություն, ծանոթանում են հայրենիքի կյանքին, ուրախանում և հպարտանում են նրա հաջողություններով:

Երկար ժամանակ դաշնակցության ազդեցության տակ գտնված Տարոն-Տուրուբերանի, Մորենիկի, Համաբալուցիականի, Քղիի և այլ հայրենակցական միություններ վերանայել են իրենց գործունեությունը, ավելի մերձեցել Սովետական Հայաստանին, շատ հարցերում համագործակցության մեջ մտել նրա հետ:

Նույնիսկ դաշնակցությանը ենթակա Հայ օգնության մարմինը, որը սփյուռքահայ զանգվածային կազմակերպություններից է (70-ական թվականների սկզբին այն ուներ շուրջ 16 հա-

զար անդամ և 95 բաժանմունքներ տարբեր երկրներում), հայրենիքի հետ կապեր հաստատելու լուրջ փորձեր է կատարում⁹⁶:

Այսպիսով, Սովետական Հայաստանի հետ սփյուռքահայության կապերի սերտացման շնորհիվ նկատելիորեն խարխլվել են դաշնակցական ղեկավարության հակասովետական դիրքերը: Իր ազդեցության տակ եղած մասսաներին լիովին շկորցնելու նպատակով դաշնակցական մամուլը հարկադրված է իր էջերում որոշ տեղ հատկացնել Սովետական Հայաստանի նվաճումներին, մի բան, որն առաջներում բնավ չէր նկատվում: Սակայն դա բոլորովին չի նշանակում, թե դաշնակցությունը հրաժարվում է հակասովետիզմի իր գլխավոր գծից, ուստի պայքարը նրա դեմ անհրաժեշտ է հետևողականորեն շարունակել:

* * *

Վերջին տարիներին բավականին սերտ գործնական կապեր են հաստատվել Սփյուռքի կոմիտեի և Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) միջև: ՀԲԸՄ ներկայումս գաղութահայության ամենազանգվածային և հեղինակավոր կազմակերպություններից մեկն է: Այն աշխարհի 20 երկրում ունի շուրջ 180 մասնաճյուղ, որոնցում միավորված է ավելի քան 20 հազար մարդ:

Դեպի հայրենիքը Բարեգործականի վերաբերմունքի մեջ նոր փուլի սկիզբ հանդիսացավ 1969 թվականը, երբ մայիսին Փարիզում կայացած նրա համագումարին մասնակցեց Սփյուռքի կոմիտեի պատվիրակությունը, որի կազմում էին կոմիտեի նախագահ Վարդգես Համազասպյանը և նախագահի տեղակալ Վահագն Դավթյանը: Բարեգործականի պատմության մեջ դա առաջին դեպքն էր, որ մայր հայրենիքի ներկայացուցիչները մասնակցում էին նրա համաժողովին: Այդ համագումարն անցավ հայրենասիրական ջերմ մթնոլորտում, դրսևորելով այն մեծ սերն ու համակրանքը, որ տածում են սփյուռքահայ զանգվածները հայրենիքի նկատմամբ: Դրանով պետք է բացատրել նաև այն իրողությունը, որ մասամբ վերանայվեցին Բարեգոր-

ծականի կանոնադրության մեջ 1955 թ. ի վնաս հայրենիքի կատարված փոփոխությունները⁹⁷:

Վերջին տարիներին Բարեգործականի ղեկավարության դեպի հայրենիք կատարած շրջադարձը, նրա որդեգրած ճիշտ ուղեգիծը զգալի շափով նպաստեց նրա հեղինակության աճին: Այդ շրջադարձը դրական օրինակ հանդիսացավ նաև սփյուռքահայ այլ կազմակերպությունների ու հոծ զանգվածների համար: Նրանք հանձին Բարեգործականի տեսան այն կազմակերպությունը, որը հետևողականորեն պայքարում է հայապահպանման, հայ մշակույթի դարգացման ու տարածման, սփյուռքահայրենիք կապերի սերտացման համար: ՀԲԸՄ իր տրամադրության տակ եղած միջոցներով նյութական որոշակի օգնություն է ցույց տալիս սփյուռքահայ կազմակերպություններին, հատկապես դպրոցներին, սատարում հայրենասիրական ուժերի գործունեությանը: Տարեցտարի ավելանում են Բարեգործականի կողմից կատարվող նյութական հատկացումները. այսպես, եթե 1967 թ. սփյուռքահայ համայնքների կարիքների համար նա ծախսել է 925351 դոլար, ապա 1971 թ.՝ 1 միլիոն 636 հազար դոլար, որի պատկանելի մասը՝ 1 միլիոն 242 հազար դոլարը, կրթական նպատակներով⁹⁸:

ՀԲԸՄ ղեկավարությունը միաժամանակ խորապես գիտակցում է, որ սփյուռքահայության կրթական, մշակութային ու մյուս կարիքների համար գործադրած ջանքերը խմաստավորվում են մայր հայրենիքի գոյությունամբ: Բարեգործականի կենտրոնական վարչության նախագահ Ալեք Մանուկյանը, գնահատելով հայրենիքի դերը սփյուռքի կյանքում, ասել է. «Հայրենիքը հայապահպանության գլխավոր կովանն է: Սփյուռք—հայրենիք կապերի ընդլայնումը շատ դրական գործ կատարեց գախթախներուն մեջ, սփյուռքի ազգային կյանքը մեծապես աշխուժացավ հատկապես վերջին տասնամյակին: Խոսելով Ամերիկայի Միացյալ Նահանգներուն մասին, կուզեմ նշել, որ երիտասարդության շրջանակին մեջ հիմա մեծ հետաքրքրություն ստեղծված է հայրենիքի, հայկականի, հայ մշակույթի հանդեպ, բան մը, որ առաջ նկատելի չէր: Ասիկա մեծ մասամբ արդյունք է երիտասարդական խմբերու դեպի հայրենիք կատարած այցելության-

⁹⁶ Տե՛ս նույն տեղում, ց. 4, գ. 17, թ. 21:

⁹⁷ Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 39, թ. 14—22:

⁹⁸ Տե՛ս նույն տեղում, ց. 5, գ. 209, թ. 3—4:

նր: Անոնք կվերադառնան գոտեպնդված, հպարտ այն գիտակցությամբ, որ իրենք ալ հայրենիք ու պետականություն ունին, բարձր մշակույթ: Ծվ այս խանդավառությունը զիրենք կմոտեցնեն հայ կյանքին»⁹⁹:

Սփյուռքում գործող մյուս խոշոր բարեգործական հաստատությունը Լիսաբոնի Գալուստ Կյուլպենկյան հիմնարկությունն է, որն ստեղծվել է 1955 թ. և հաջորդ տարի հաստատվել պորտուգալական կառավարության կողմից: Գ. Կյուլպենկյանը, լինելով Իրաքի նավթային ընկերության բաժնետերերից մեկը, ստացել է ընդհանուր շահույթի 5% և դարձել աշխարհի հինգ նշանավոր հարուստներից մեկը: Իր մահվանից մի փոքր առաջ Գ. Կյուլպենկյանը կազմել էր իր կտակը, որի համաձայն ստեղծվելու էր «Գ. Կյուլպենկյան հիմնարկությունը»: Այն ֆինանսապես հզոր բարեգործական մի հաստատություն է և իր մեկ միլիարդ դոլար կազմող հիմնադրամով զիջում է միայն Տորդի ու Ռոկֆելլեր եղբայրների բարեգործական միություններին և հետապնդում է բարեսիրական, մշակութային ու գիտական նպատակներ: Թեպետ կտակարարը հայկական ձեռնարկների համար հատուկ դրամազուլիս չէր նախատեսել, այնուամենայնիվ, հետագայում հիմնարկության վարչությունը ծնունդ տվեց «հայկական ձեռնարկներ» կոչվող բաժնին, որը միջոցներ է հատկացնում հայագիտական նպատակների իրականացմանը: Այդ բաժինը, որը վարում է Գ. Կյուլպենկյանի եղբորորդի Ռուպեր Կյուլպենկյանը, իր հայրենասիրական պարտքն է համարում օգտակար լինել նաև Սովետական Հայաստանի գիտական, ուսումնական, առողջապահական ու մշակութային հաստատություններին:

Գ. Կյուլպենկյանը հարում էր ռամկավար ազատական կուսակցությանը, ուստի բնական է, որ նրա հիմնարկության հատկապես հայկական բաժինը ևս գտնվում է ռամկավարական շրջանների ազդեցության տակ: Հիմնարկության հարստությունը տարեկան միջին հաշվով աճում է շուրջ 70 միլիոն դոլարով: Հայկական նպատակների համար հատկացված հիմնադրամը հասնում է մոտ 300 միլիոն դոլարի, որը տարեկան մինչև 12 միլիոն դոլար տոկոսային շահույթ է բերում¹⁰⁰: Հայկական ձեռ-

նարկների գծով առ 31-ը դեկտեմբերի 1964 թ. հիմնարկությունը ծախսել է ավելի քան 7 մլն դոլար: Սփյուռքահայ կրթական ու մշակութային կարիքների համար այդ հիմնարկությունը տարեկան հատկացնում է մինչև 1,5 միլիոն դոլար: 1959 թ. հիմնադրվել է հատուկ մատենաշար՝ հայերեն և օտար լեզուներով հայ մշակույթի, լեզվի, քաղաքակրթության, հայոց պատմության ու գրականության վերաբերյալ ուսումնասիրություններ և հին ձեռագրեր հրատարակելու նպատակով¹⁰¹:

Գ. Կյուլպենկյան հիմնարկությունը հատկացումներ է կատարում նաև ՀՍՍՀ ԳԱ մի շարք ինստիտուտների, Երևանի պետական համալսարանին, Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանին, Ալ. Մյասնիկյանի անվան հանրային գրադարանին, պատմական հուշարձանների պահպանության ընկերությանը, էջմիածնի Ամենայն հայոց կաթողիկոսությանը և այլ հաստատությունների՝ նրանց համար արտասահմանյան բարեգործումներ և գրականություն ձեռք բերելու եղանակով: Հիմնարկության հայկական ձեռնարկների բաժինը Սովետական Հայաստանի տարբեր հաստատություններին կատարվող հատկացումները դիտում է ոչ թե որպես օգնություն, այլ՝ մասնակցություն հայրենի երկրի վերելքին ու առաջադիմությանը:

Գ. Կյուլպենկյան հիմնարկության հետ հաստատված կապերի շնորհիվ հանրապետության մի շարք ուսումնական, գիտական, մշակութային ու առողջապահական հիմնարկներ տարեկան մինչև 250 հազար դոլար արժողության սարքավորումներ և գրականություն են ստանում: Հիմնարկությունը 1963—1968 թթ. ընթացքում միայն պետական համալսարանի, մատենադարանի, բժշկական, ֆիզկուլտուրայի, ագրոքիմիայի, կարգելոգիայի և սրտի վիրաբուժության ինստիտուտների, ՀՍՍՀ ԳԱ հիմնակազմ գրադարանի, հանրային գրադարանի, ՀՍՍՀ պատմական հուշարձանների պահպանության ընկերության և ՀՍՍՀ առողջապահության մինիստրության հակատուբերկուլյոզային դիսպանսերի համար որպես նվեր ուղարկել է 503 հազար դոլար արժողությամբ սարքավորումներ և գրականություն¹⁰²:

⁹⁹ Նույն տեղում:

¹⁰⁰ Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 41, թ. 22—26:

¹⁰¹ Տե՛ս նույն տեղում:

¹⁰² Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 669, թ. 11:

Սփյուռքի կոմիտեի գործունեության մեջ որոշակի տեղ է զբաղեցնում արտասահմանում գոյություն ունեցող մշակութային միությունների, հայկական տների և նույնատիպ այլ կազմակերպությունների հետ տարվող աշխատանքը: Դրա նպատակն է այդ կազմակերպություններին ցույց տալ այնպիսի օգնություն, որ նրանց գործունեությունը դառնա ավելի նպատակասլաց, ավելի բեղմնավոր ու արդյունավետ: Նրանց հետ կապերի ձևերը տարբեր են՝ նամակագրական, ցուցադրական նյութերի տրամադրում, փոխայցելություններ և այլն: Միտեմատիկաբար նրանց ուղարկվում են թերթեր, ամսագրեր, գրքեր, ձայնապնակներ, կինոֆիլմեր, երաժշտական գործիքներ, ազգային տարազներ և այլն: Կոմիտեն իր հերթին նրանցից ստանում է հնագույն հայկական ձեռագրեր, հնատիպ գրքեր, ամբողջական գրադարաններ, թանգարանային արժեքավոր իրեր, նկարներ, քանդակներ, արխիվային նյութեր և այլ գործեր:

Այդ հայրենանվեր գործում առանձնապես մեծ աշխատանք են կատարում Ֆրանսահայ մշակութային միությունը, ԺԱՏ-ը, ՅԱՆՑ-երը, բուլղարահայ «Երևան» մշակութային միությունը, Ամերիկահայ առաջադիմական միությունը, Միլանի և Լոնդոնի հայ մշակույթի տները, Բեյրութի Վահան Թեքեյան մշակութային միությունը, Ուրուգվայի հայերի ազգային կենտրոնը, Արգենտինահայ մշակութային միությունը, Մոնրեալի Մամիկոնյան մշակութային միությունը, ԱՄՆ-ի պոլսահայ մշակութային միությունը, ՀԲԸՄ տնօրինության տակ եղած մի շարք միություններ և ուրիշներ: Պետք է նշել, որ դրանք միաժամանակ զբաղվում են Սովետական Հայաստանի տնտեսական, ու մշակութային կյանքի պրոպագանդումով, գեղարվեստական ինքնագործունեության տարբեր խմբերի կազմակերպումով և այլ ազգօգուտ աշխատանքներով: Մշակութային այդ միությունները ունեն բազմաթիվ երգչախմբեր, պարախմբեր, թատերախմբեր, որոնք տարածելով հայ երգը, պարն ու խոսքը, մի կողմից վառ են պահում ազգային ոգին հայրենիքից հեռու գտնվող հայրենակիցների շրջանում, շթողնելով, որ նրանք կտրվեն հարազատ ժողովրդի մշակույթից ու կորցնեն ազգային դիմագիծը, իսկ մյուս կողմից՝ նպաստում են հայրենի երկրի նվաճումների պրո-

պագանդմանը, որը նույնպես կարևոր նշանակություն ունի ազգապահպանման համար:

Սփյուռքահայ մշակութային միությունները, առաջադիմական այլ կազմակերպությունների հետ համագործակցած, ամեն տարի հանդիսավոր կերպով նշում են Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության, Հայաստանում սովետական իշխանության հաղթանակի տարեդարձները և այլ նշանավոր տարեթվեր ու իրադարձություններ: Նրանց ջանքերով համազգային հրաշալի տոնի վերածվեց Երևանի 2750-ամյակը: Այն հայրենասիրական լայն շարժում առաջացրեց սփյուռքահայ բոլոր գաղթօջախներում:

Հատկապես վերջին տարիներին սփյուռքահայ առաջադիմական կազմակերպությունների ու մտավորականների կողմից հայրենիքի օգնությամբ նպատակասլաց կերպով պրոպագանդվում է մեր ազգային մշակույթը: Մի շարք գաղթօջախներում տպագրվել են մեծ թվով բացիկներ, ալբոմներ, գրքեր, ուսումնասիրություններ, կազմակերպվել են ցուցահանդեսներ, փառատոներ՝ նվիրված հայ արվեստին ու գրականությանը: Կարելի է հիշատակել Լեոն Զավեն Սուրմելյանի կողմից «Սասունցի Դավիթ» էպոսի թարգմանությունն ու հրատարակությունը ԱՄՆ-ում, Միշա Գյուտյանի կողմից «Սասունցի Դավիթ», «Լոռվա երգիչը» (նվիրված Հովհ. Թումանյանին) և այլ գրքերի լույսընծայումը Լոնդոնում, նրա իսկ կողմից հիմնադրված «Մաշտոց» հրատարակությունում:

Այդ ուղղությամբ աշխույժ աշխատանք է կատարվում նաև իտալահայ գաղթօջախում: Վենետիկի Մխիթարյան միաբանությունը հրատարակել է հայ մանրանկարչությանը նվիրված շքեղ հատոր, Իտալիայի հայ մշակութային միության և մի խումբ ճարտարապետների նախաձեռնությամբ միջնադարյան հայկական ճարտարապետության ցուցահանդեսներ կազմակերպվեցին Հռոմում և Միլանում, ինչպես նաև այլ երկրներում: Դրանք ցուցադրվեցին նաև իտալական ուրիշ քաղաքներում: Միլանահայ գաղութի և հայ ու իտալացի մի խումբ ճարտարապետների ջանքերով սկիզբ դրվեց հայկական ճարտարապետության պատմության դասալսանդմանը Միլանի և Հռոմի պոլիտեխնիկական ինստիտուտներում: Այնտեղ պատրաստվեցին նաև «Հաղպատ», «Սանահին» հուշարձանախմբերի ու «Հայկական խաչքարերի» գունավոր ալբոմները: «Էրբերուխ» ընկերությունը զուլխ բերեց Հա-

յաստանի տեսարժան վայրերի մեծ քանակությամբ գունավոր բացիկների տպագրությունը: Շատ գաղթօջախներում անցկացվեցին Մեսրոպ Մաշտոցի, Սայաթ-Նովայի, Հովհ. Թումանյանի, Կոմիտասի հոբելյանները և բազմաթիվ ու բազմաբնույթ այլ միջոցառումներ, որոնք օր-օրի ավելի մեծ ծավալ են ստանում և նորանոր շրջաններ ներգրավում այդ ազգանվեր աշխատանքի մեջ:

Վերջին քսանամյակում աշխարհի տարբեր երկրներում՝ ԱՄՆ-ում, Անգլիայում, Ֆրանսիայում, ԳՖՀ-ում, Իտալիայում, Ավստրիայում, ԳԴՀ-ում, Զեխոսլովակիայում, Բուլղարիայում, Հունգարիայում, Ռումինիայում և այլուր, մեծ աշխուժություն ապրեց հայագիտությունը, աննախընթաց հետաքրքրություն առաջացավ հայ արվեստի նկատմամբ: Դրան որոշակիորեն նպաստեց հայ արվեստին նվիրված մի շարք ցուցահանդեսների կազմակերպումը Հոնոլուլուի, Վենետիկում, Միլանում, որոնք կրկնվեցին նաև Վիեննայում, Բուենոս Այրեսում, Լիսաբոնում, Բեյրութում, Թեհրանում, Մյունխենում և այլուր: Այդ հետաքրքրությունների անմիջական արդյունքը եղավ հայ արվեստին նվիրված առաջին միջազգային սիմպոզիումը 1975 թ. հունիսին, իտալական Բերգամո քաղաքում: Այդ օրերին այնտեղ բացվեց նաև IV—XVIII դարերի հայ ճարտարապետությանը նվիրված ցուցահանդես: Գիտաժողովի աշխատանքներին մասնակցեցին 14 երկրների 120 գիտնականներ: Գիտաժողովին գործուն մասնակցություն ունեցավ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պատվիրակությունը: Գիտաժողովի և ցուցահանդեսի պատվավոր հանձնախմբի կազմում ընտրված էին նաև Իտալիայում ՍՍՀՄ դեսպան Ն. Ռիժովը, ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ Վ. Համբարձումյանը և Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ Վ. Համազասպյանը: Գիտաժողովը լայն արձագանք գտավ մամուլում¹⁰³:

1978 թ. սեպտեմբերին Երևանում տեղի ունեցավ հայ արվեստին նվիրված միջազգային երկրորդ սիմպոզիումը, որին մասնակցում էին գիտնականներ Սովետական Միության 12 քաղաքներից և արտասահմանյան 19 երկրներից: Գիտաժողովի աշխատանքներն անցան 5 մասնաճյուղերում, ուր լսվեցին 138

զեկուցումներ: 1981 թվականին Իտալիայում տեղի ունեցավ 3-րդ սիմպոզիումը, որը նույնպես կարևոր դեր խաղաց հայ արվեստի ուսումնասիրման ու պրոպագանդման գործում:

Հայ կյանքի, մասնավորապես սփյուռքում տարվող աշխատանքների աշխուժացման իմաստով կարևոր նշանակություն ունեցավ նաև հայ երաժշտությանը նվիրված սիմպոզիումը, որը մեծ կազմակերպվածությամբ տեղի ունեցավ 1978 թ. ամռանը Անգլիայում, Լոնդոնի հայ երաժշտության ինստիտուտ կոչվող ընկերության նախաձեռնությամբ¹⁰⁴:

Նման կարգի միջոցառումները ազգային ինքնաճանաչման ու հպարտության լայն հնարավորություններ են ստեղծում սփյուռքում ուժացման ուղին ընկած բազմաթիվ հայերի համար, ուստի դրանց նշանակությունը դուրս է գալիս գիտական նեղ շրջանակներից և ստանում քաղաքական կարևոր իմաստ, նպաստում ազգապահպանման կենսական գործին:

Սփյուռքի կոմիտեի և համապատասխան այլ կազմակերպությունների դրական աշխատանքներից է նաև օտարության մեջ եղած հայկական մշակութային արժեքների հայրենադարձության կազմակերպումը: Ահա մի հասկացողություն ևս, որը արտահայտում է ոչ միայն մեր աշխարհասփյուռ քույրերի ու եղբայրների, այլև նրանց ստեղծած հոգևոր արժեքների տունդարձը: Սփյուռքի կոմիտեի և հանրապետության այլ կազմակերպությունների ձեռնարկած միջոցների, ինչպես նաև արտասահմանում գործող մշակութային, հայրենակցական, բարեգործական միությունների ու անհատների հայրենասիրական ջանքերի շնորհիվ, հատկապես վերջին քսանամյակում բազմաթիվ հայերեն ձեռագրեր, գրքեր, արխիվային վավերագրեր, արվեստի գործեր ու այլ արժեքներ փրկվել են անխուսափելի կորստից և առհավետ հանգրվանել մայր հայրենիքում:

Այսպես, Ֆրանսահայ մշակութային միության վարչության ջանքերով Հայաստան են ուղարկվել Արշակ Զոպանյանի, Վահան Մալեզյանի, Սեմայի (Գեղամ Աթմաճյան), Զապել Եսայանի, Լևոն Մեսրոպի, Երվանդ Ճյուհերյանի և այլոց արխիվները, քանդակագործ Հակոբ Գյուրջյանի 300-ից ավելի

¹⁰³ Տե՛ս «Սովետական Հայաստան», ամսագիր, № 12, 1978 թ., էջ 11—17, 24—25:

¹⁰⁴ Տե՛ս նույն տեղում:

աշխատանքները, Հովհաննես Այվազովսկու 40-ից ավելի նկարները և այլն¹⁰⁵:

Արխիվային, ինչպես նաև այլ բնույթի արժեքավոր նյութեր են ստացվել նաև Բուլղարիայի, ԱՄՆ-ի, Մերձավոր ու Միջին արևելքի հայկական գաղթօջախներից: Հայրենի կառավարութունը միշտ էլ բարձր է գնահատել սփյուռքահայ կազմակերպությունների հայրենասիրական ջանքերը: Դրա արտահայտություններից մեկը եղավ Ֆրանսահայ մշակութային միությունը. աշխատանքին տրված բարձր գնահատականը՝ 1974 թ. Հայկական ՄՍՀ Գերագույն սովետի նախագահության պատվոգրով պարգևատրումը: Մի խումբ սփյուռքահայ գործիչներ նույնպես պարգևատրվել են ՄՍՀՄ շքանշաններով և արժանացել ՀՍՍՀ պետական մրցանակների:

Հայրենիքի հետ սերտ կապերի մեջ է սփյուռքահայ նկարիչների ճնշող մեծամասնությունը: Նրանցից շատերը (շուրջ 70 նկարիչ ու քանդակագործ), սկսած 1964 թ. Սփյուռքի կոմիտեի միջոցով իրենց լավագույն գործերից մի քանիսը նվիրել են հայրենի թանգարաններին ու պատկերասրահին: Ֆրանսահայ նկարիչ Արմիսը (Արմենակ Մսիրյան) հայրենիքին է նվիրել 30 կտավներ ու գծանկարներ, Դարիա Կամսարականը (Ֆրանսիա)՝ իր հիանալի քանդակները, Եղիա Գասպարյանը (ԱՄՆ)՝ 15 գեղանկար և այլն¹⁰⁶: Մեծ թվով նկարիչներ ու քանդակագործներ, այդ թվում Գառզուն (Գառնիկ Զուլումյան), Զարեհ Մութաֆյանը, Ռիշար (Խաչատուր) Փերանյանը, Արտավազդ Պերպերյանը, Պոլ Կիրակոսյանը, Գևորգ Հակոբյանը (Ֆր.), Նվարդ Զարյանը, Ժակ Օրագյանը (Իտալիա), Նունուֆար Պողոսյանը, Արմեն Տարսուհին, Խորեն Տեր-Հարությունը, Մինաս Մինասյանը (ԱՄՆ), Օննիկ Ադամյանը (Անգլիա), Ալեքսանդր Սարուխանը, Սիմոն Սամսոնյանը (Եգիպտոս), Վազգեն Թուֆունջյանը (Լիբանան), Կարպիս Ղազարյանը (Շվեյցարիա), Երջան Պողոսյանը (Իրաք), Զիկ Տամատյանը (Ռումինիա) և շատ ուրիշներ Սփյուռքի կոմիտեի նախաձեռնությամբ եղել են հայրենիքում և, ստանալով Հայաստանի նկարիչների միության օժանդակությունը, իրենց անհատական ցուցահանդեսներն են ունեցել Երեվանում: Հայրենիքում կազմակերպվել է նաև Լիբանանի, Մի-

րիայի և Եգիպտոսի 14 հայ նկարիչների կոլեկտիվ ցուցահանդեսը¹⁰⁷:

1969 թ. Սփյուռքի կոմիտեն Երևանում կազմակերպեց նկարիչներ Բյուզանդ Թոփալյանի և Ռիշար Փերանյանի (Ֆրանսիա), Մարտա Մնդիկյանի (Իտալիա), Սալբի Մավյանի (ԱՄՆ), կանադահայ անվանի լուսանկարիչ Արթին Գավուքի (Հարություն Գավուքյան) գեղանկարների, գրաֆիկական գործերի և դունավոր լուսանկարների ցուցահանդեսները, որոնք լայն արձագանք գրտան թե՛ հայրենիքում և թե՛ սփյուռքում:

Հայրենիք այցելած գեղանկարիչներն ու մյուս արվեստագետները այստեղ ոչ միայն ծանոթանում են հայրենի երկրին, նրա նվաճումներին, այլև ստանում են ստեղծագործական նոր լիցք, նկարում են հարազատ երկրի բազմաթիվ տեսարաններ ու մարդկանց և դրանք ցուցադրում սփյուռքում: Կարելի է նշել, օրինակ, նկարիչ Զարեհ Մութաֆյանին, որը Ֆրանսիա վերադառնալուց հետո ստեղծեց հայրենի բնապատկերների մի ամբողջ շարք և դրանք ցուցադրեց բազմաթիվ երկրներում: Նույնը կարելի է ասել նաև եգիպտահայ նկարիչ Օննիկ Ավետիսյանի, ամերիկահայ քանդակագործ Խորեն Տեր-Հարությունի, արվեստագետ-լուսանկարիչ Հովհաննես Զերեշյանի (Լիբանան), ամերիկահայ Հարություն Զուլակի (Զուլակյան), լիբանանահայ կինոռեժիսոր և օպերատոր Վահե Սուրյանի և այլոց կատարած աշխատանքների մասին:

Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն նախապատրաստական լայն աշխատանք կատարեց Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյա հոբելյանը հայկական գաղթօջախներում պատշաճ մակարդակով նշելու համար: Նախօրոք կազմված պլանի համաձայն կոմիտեի կողմից սփյուռքահայ առաջադիմական կազմակերպություններին, երիտասարդական ու մշակութային միություններին ուղարկվեցին գրականություն, լուսանկարների ցուցահանդեսներ, բուկլետներ և այլն: Կոմիտեի մամուլի բաժինը սփյուռքահայ առաջադիմական մամուլի և ռադիոժամերի 80 հասցեներով ուղարկեց լենինյան թեմաներով բազմաթիվ հոդվածներ, գեղարվեստական ստեղծագործություններ և այլ նյութեր¹⁰⁸:

¹⁰⁵ Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՀ ՊԿԱ, ֆ. 875, ց. 1, գ. 37, թ. 68—69:

¹⁰⁶ Տե՛ս նույն տեղում, գ. 11, թ. 1—18:

¹⁰⁷ Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 43, թ. 16—17:

¹⁰⁸ Տե՛ս նույն տեղում, ց. 4, գ. 49, թ. 1—4:

Սփյուռքահայ առաջադիմական կազմակերպություններն ու մամուլը ըստ արժանվույն նշեցին Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակը, և արտասահմանյան տասնյակ երկրներում ապրող հայությունը մասնակից եղավ պատմական այդ կարևոր իրադարձությանը: Պատշաճ կերպով վեր հանվեց հայ ժողովրդի փրկության ու Սովետական Հայաստանի ստեղծման գործում Վ. Ի. Լենինի վճռական դերը, նրա անմար գաղափարների կենսագործումը Հայաստանում:

Վ. Ի. Լենինի, որպես բոլոր ճնշված ժողովուրդների անկեղծ բարեկամի, ծննդյան հարյուրամյակը հատկապես մեծ շուքով տոնվեց ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Լիբանանի, Եգիպտոսի, Արգենտինայի և այլ երկրների հայկական գաղթօջախներում:

Փարիզում հրատարակվող «Աշխարհ» առաջադիմական թերթը լենինյան օրերին իր 15 համարներում տպագրեց «Հայ ժողովրդի փրկությունը» վերնագրով ընդարձակ հոդվածաշար, այն ուղեկցելով Վ. Ի. Լենինի կենսագրականով և բազմաթիվ լուսանկարներով: Բեյրութի հնչակյան «Արարատ» թերթը 1970 թ. ապրիլի 3-ի համարում տպագրել էր լենինյան հանդիսությունների լիբանանյան հանձնաժողովի մշակած միջոցառումների մասին մանրամասն հաղորդագրություն, ապա թերթի մի ամբողջ համար նվիրել Վ. Ի. Լենինի կյանքին ու գործին: Թերթի 1970 թ. ապրիլի 22-ի համարում տպագրված էր Վ. Ի. Լենինին նվիրված «Անմահության դափնեկիրը» վերնագրով ուշագրավ առաջնորդողը:

Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակին լայնորեն անդրադարձավ նաև Բեյրութի ուսմակարական «Զարթոնք»-ը: Բեյրութում բացելով Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակին նվիրված հայկական հանդիսությունները, առաջադիմական գործիչ Պարույր Երեցյանն ասաց. «Եթե ուրիշ ազգեր ու ժողովուրդներ օգտված են լենինիզմեն՝ իրենց պայքարի որոշ հանգրվաններուն, մենք հայերս մեր հայրենիքին ներկա ամբողջ գոյությունը կպարտինք լենինյան գաղափարներու հաղթանակին: Առանց Լենինի ղեկավարած Հոկտեմբերյան հեղափոխության մենք չէինք ունենար մեր սիրելի, մեր սքանչելի Սովետական Հայաստանը»¹⁰⁹:

ԱՄՆ-ում լույս տեսնող առաջադիմական «Լրաբեր» թերթը,

¹⁰⁹ Տե՛ս «Սովետական Հայաստան», ամսագիր, № 4, 1971 թ., էջ 8, նաև՝ ՀՍՍՀ ՀՄԿՊՄՈՒՄ, ֆ. 875, ց. 4, գ. 52, թ. 21:

բացի մի շարք համարներում Վ. Ի. Լենինի մասին հրապարակած բաղմաթիվ նյութերից, մի առանձին համար նվիրեց նրա ծննդյան 100-ամյակին: Վ. Ի. Լենինի հեղափոխական գործունեությանը, ճնշված ժողովուրդների ճակատագրում նրա խաղացած դերին հանդամանորեն անդրադարձան նաև Բուենոս Այրեսում՝ «Սևանն» ու «Շարժումը», Կահիրեում՝ «Արևն» ու «Ջահակիրը», ԱՄՆ-ում՝ ուսմակարական «Պայքարն» ու հնչակյան «Երիտասարդ Հայաստանը» և սփյուռքահայ շատ ուրիշ պարբերականներ:

* *

Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի գործունեության մեջ կարևոր տեղ է զբաղեցնում սփյուռքահայ արվեստագետների, երգի-պարի անսամբլների և թատերախմբերի ելույթների կազմակերպումը հայրենիքում: Կոմիտեի և կուլտուրայի միևնույնության համատեղ ջանքերով Սովետական Հայաստանում կազմակերպվել են սփյուռքահայ նշանավոր երգիչ-երգչուհիներ Լիլի Զուգասղյանի, Լյուսի Իշխանյանի, Ժան Ալմուխյանի, Լուիզա Պոպապայլանի, Շառլ Ազնաուրի, Ռոզի Արմենի, Լուսին Ամարայի, Սոնա Ղազարյանի, Արփինե Փեհլևանյանի, Մայրլ Քրմոյանի, Ժիրայր Սերգոյանի, Լին Դուրյանի, Էլիզ Թաշչյանի, Անգինե Մուրադյանի և ուրիշների մենահամերգները:

Հայրենիք այցելած սփյուռքահայ գեղարվեստական խմբերի թվում եղել են «Սոսի» պարի խումբը (Ֆրանսիա), Եղիշե Հարութի թատերախումբը (ԱՄՆ), «Շումեն» պարի խումբը (Բուլղարիա), Հալեպի հայ մարմնամարզական միության «Ռուպի» էստրադային նվագախումբը և այլն:

1972 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին հայրենիքում հյուրընկալվել և հանրապետության մի շարք քաղաքներում ներկայացումներ է տվել Բեյրութի ՀԲԸՄ հայ երիտասարդաց ընկերության «Վահրամ Փափազյան» թատերախումբը: Այդ կարգի միջոցառումների շարքում հատկապես նշանակալից էր բուլղարահայ ինքնագործունեության խմբերի այցը հայրենիք՝ 1967 թ., Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 50-ամյակի կապակցությամբ: Բուլղարահայ «Երևան» մշակութային միության նախաձեռնությամբ ավելի քան 500 հոգի

բարեկամության հատուկ գնացքով ժամանեցին Երևան և 10 օր շարունակ ելույթներ ունեցան հանրապետությունում: Ռուսիի, Սոֆիայի, Պլովդիվի քառաձայն երգչախմբերի, Վառնայի, Շուսենի երգի-պարի անսամբլների համերգները և թատերախմբերի ուշադրավ բեմադրությունները մեծ բավականություն պատճառեցին ունկնդիրներին¹¹⁰: Դրանք միաժամանակ դրսևորեցին այն մեծ ուշադրության արդյունքները, որ հյուրընկալ բուլղար ժողովուրդն ու կառավարությունը ցուցաբերում են բուլղարահայ աշխատավորների և հայկական մշակույթի նկատմամբ:

Սփյուռքի կոմիտեի աշխատանքի կարևոր բնագավառներից մեկը եղել է սովետահայ գեղարվեստական, երիտասարդական, մարզական խմբերի, առանձին արվեստագետների, լրագրողների, գրողների, մշակութային, հասարակական գործիչների պատվիրակությունների այցելությունների կազմակերպումը սփյուռք:

Անցած շրջանում սփյուռքահայ մի շարք կազմակերպությունների օգնությամբ հնարավոր եղավ սփյուռք ուղարկել Ք. Ալթունյանի անվան երգի-պարի վաստակավոր անսամբլը (Սիրիա, Լիբանան), պետական պարի անսամբլը (Աֆրիկայի մի շարք երկրներ, Իրան, Ֆրանսիա, ԱՄՆ-ն և այլն), Գ. Սունդուկյանի անվան դրամատիկական թատրոնը (Սիրիա, Լիբանան, Բուլղարիա), գեղարվեստական մի քանի խմբեր (Ֆրանսիա, Բուլղարիա, Լեհաստան, Հունգարիա), մենակատարներ (ԱՄՆ, Ֆրանսիա, Անգլիա, Կանադա), դասախոսներ (Լիբանան, Սիրիա, Ֆրանսիա, Բուլղարիա), գրողներ (Լիբանան, Սիրիա, Ֆրանսիա, Հունգարիա, Եգիպտոս, Անգլիա), դիտնականներ (Ֆրանսիա, Անգլիա, Սիրիա, Լիբանան, ԱՄՆ, Եգիպտոս, Իրաք, Շվեյցարիա, Իտալիա), հասարակական, քաղաքական գործիչներ, լրագրողներ (Իրան, Լիբանան, Եգիպտոս, Իրաք, ԱՄՆ, Ֆրանսիա, Կանադա, Թուրքիա, Հունաստան, Իտալիա, Բուլղարիա, Հոլանդիա), մարզական խմբեր (Սիրիա, Լիբանան, Իրան, Ֆրանսիա, ԱՄՆ), բժիշկների խմբեր ու պատվիրակություններ (Սիրիա, Լիբանան, ԱՄՆ), որոնք հսկայական դեր են խաղացել ոչ միայն Սովետական Հայաստանի նվաճումների, հայ մշակույթի պրոպագանդման, այլև հայրենիք—սփյուռք առնչությունների ամրապնդման, սփյուռքահայ լայն զանգվածներին մայր

հայրենիքի շուրջը համախմբելու և հայապահպանության գործին նպաստելու ուղղությամբ¹¹¹: Հայրենի ծիծեռնակների այցը իսկական տոնական մթնոլորտ է ստեղծում գաղթօջախներում: Սովետահայ գեղարվեստական ու մարզական խմբերի ամեն մի ելույթ վեր է ածվում հայրենի երկրի նկատմամբ անկեղծ սիրո և նվիրվածության վառ ցույցի: Ահա թե ինչ է գրել «Զարթոնք» թերթը Գ. Սունդուկյանի անվան թատրոնի բեյրության հյուրախաղերի մասին. «Երեք շաբաթ շարունակ Սունդուկյանի թատերախումբը առանց բուլղարիկ մեծ իսկ զանց առնելու ամբողջ Հայաստանը փոխադրած էր Պեյրութի սրտի վրա և ամեն գիշեր, երբ հոգնաբեկ մարդիկ իրենց քայլերը կողոպտեցին դեպի համեստ սրահ մը, ամեն անգամ կունենային պատրանք, թե Հայաստան այցի կերթային ամեն գիշեր: Ու կվերանորոգվեին, անսահման ուժ կստանային «փոքրիկ Հայաստանին» այցի երթալով: Մոռանալով իրենց առօրյան, գոյությունը, անոնք կվերածնենին որպես նոր մարդ, որպես հայ ունկնդիր՝ իրենց հոգիներու մեջ ճնշող արձագանքին՝ դուք մեզի հայ ըրիք նորեն...»¹¹²:

* * *

Կոմիտեն լայն կապեր է հաստատել սփյուռքահայ գրական կազմակերպությունների, գրողների և գրականագետների հետ: Մի շարք գաղթօջախներում հայ գրողներն ունեն իրենց գրական կազմակերպությունները՝ Ֆրանսիայում, ԱՄՆ-ում, Իրանում, Լիբանանում և այլուր, որոնք իրենց շարքերում միավորում են առաջադիմական գրողների զգալի մասին: Հայրենիք—սփյուռք կապերի սերտացման շնորհիվ Սովետական Հայաստանի նկատմամբ սերը, նրա վերելքը և պայծառ ներկան դարձել են սփյուռքահայ գրողների ստեղծագործությունների կարևոր թեմաները: Հայրենիքի նկատմամբ սփյուռքահայ գրողների անկեղծ սիրո զգացմունքները շատ լավ է արտահայտել տաղանդավոր բանաստեղծուհի Ալիսիա Կիրակոսյանը «Նամակ առ Հայաստան» քերթվածում: Նրանում բանաստեղծուհին շատ վեհ զգացմունքներով երգում է իր երազանքը, իր հավերժ սիրո աղբյուր մայր Հայաստանը, այն երկիրը, որ նա իր մեջ կրում է ամեն

¹¹¹ Տե՛ս նույն տեղում, թ. 1—100:

¹¹² Նույն տեղում, գ. 17, թ. 10—11:

նուրեք, ամեն օր, ամեն ժամ, երկիր, որը կա և ապրում է բուրդ հայերի սրտում ու արյան մեջ:

«Երկիր Հայաստան, դու կանչում ես ինձ,
Քեզ է պահանջում ու քեզ է կանչում նաև

արյունս»,—

գրում է բանաստեղծուհին: Այդ արյան կանչը ներկայումս շատ ավելի կենսական ու զորավոր է դարձել ամեն մի սփյուռքահայի, օտարության մեջ ապրող ամեն մի հայ գրողի, արվեստագետի, գիտնականի, մտավորականի համար:

Սփյուռքի կոմիտեն և համապատասխան մյուս կազմակերպությունները, սովետահայ պարբերական մամուլը, հետևողականորեն անդրադառնալով սփյուռքի հայ գրողների գործունեությանը՝ գնահատելով նրանց վաստակը, ավելի են ոգևորում նրանց և ուղղում նորանոր հայրենանվեր գործերի:

Հատկապես վերջին քսանամյակում սփյուռքահայ գրողների կողմից հրատարակվեցին բազմաթիվ ճանապարհորդական նոթեր, գեղարվեստական-հրապարակախոսական ստեղծագործություններ նվիրված Սովետական Հայաստանին, նրա առաջընթացին: Կարապետ Սիտալի «Տեսա իմ երկրի արևածագը», Վահե Վահյանի «Ոսկե կամուրջը», «Առավոտը», Անդրանիկ Անդրեասյանի «Սփյուռքը և հայրենիքը», «Խոհերը», Մուսի Աթմաճյանի բանաստեղծությունները, Հրաչ Զարդարյանի «Հոկտեմբերյան խոհերը», Զարեհ Որբունու «Ծիծեռնակաբերդը», Գառնիկ Աղդարյանի «Ապրիլ-մեռնիմ» գողարիկ բանաստեղծությունների ժողովածուն, Ավետիս Ալիքսանյանի ակնարկները և բազմաթիվ այլ գործեր կոնկրետ վկայություններն են այն մեծ սիրտ, որ սփյուռքահայ գրողները տածում են դեպի մայր հայրենիքը:

1967 թ. ՀՍՍՀ մամուլի կոմիտեն հիմնադրեց «Սփյուռքահայ գրողներ» մատենաշարը, որի գրիֆով լույս են տեսել սփյուռքահայ գրողների բազմաթիվ ստեղծագործություններ ոչ միայն մայրենի լեզվով, այլև՝ ռուսերեն:

Սփյուռքում հայ գրողների ստեղծագործությունների տպաքանակը չի անցնում 500—1000 օրինակից, մինչդեռ հայրենիքում պարբերական մամուլում լույս տեսնելուց բացի, նրանք արժանանում են առանձին գրքերով տպագրության՝ տասնյակ հազար օրինակ տպաքանակով, մի բան, որը տարագրության մեջ ապրող հայ գրողը նույնիսկ երազել չէր կարող:

Սփյուռքի կոմիտեն և Հայաստանի գրողների միությունը պատշաճ ձևով նշել են նաև սփյուռքահայ մի շարք գրողների հոբելյանները (Վահան Մալեգյանի, Միսաք Մանուշյանի, Սեմայի (Գեզամ Աթմաճյան), Զարուհի Գալեմբեարյանի, Ալեքսանդր Սարուխանի, Վիլյամ Սարոյանի, Վահան Թեքեյանի, Արշակ Զոպանյանի, Հակոբ Մնձուրու, Վահե Վահյանի և այլոց), կազմակերպել են նրանց առանձին ստեղծագործությունների հրատարակային քննարկումներ, գրական երեկոներ (Ալիսիա Կիրակոսյանի, Անդրանիկ Անդրեասյանի, Գալուստ Խանենցի, Ռուբեն Մելիքի, Գառնիկ Աղդարյանի) և այլ միջոցառումներ: Այդ ամենի շնորհիվ սփյուռքահայ գրողների բացարձակ մեծամասնությունը ներկայումս կանգնած է հայրենիքի կողքին, հայրենիք—սփյուռք ամրակուռ պատնեշի վրա:

* * *

Արտասահմանի հայության կյանքում մեծ կշիռ ունի եկեղեցին, նրա գործունեությունը: Գաղթօջախներում ազգային-համայնքային կյանքը մեծ մասամբ կառուցվում է եկեղեցական կազմակերպությունների շուրջը: Տեղական իշխանությունների մոտ, որպես կանոն, հայ համայնքի պաշտոնական ներկայացուցիչը հանդիսանում է հոգևոր առաջնորդը կամ եկեղեցին: Այդ ամենը հաշվի առնելով, Սփյուռքի կոմիտեն իր գործունեության իրականացման ընթացքում որոշակի առնչություններ է ունենում եկեղեցական թեմերի հետ:

Հայ եկեղեցու գլխավոր կենտրոնը կամ մայր Աթոռը ս. էջմիածինն է, որտեղ նստում է հայ եկեղեցու գերագույն պետը՝ Ամենայն հայոց կաթողիկոսը: Նրան են ենթարկվում ԱՄՆ-ի, Կանադայի, Լատինական Ամերիկայի, Ավստրալիայի, Հընդկաստանի, Հեռավոր արևելքի, Աֆրիկայի, Մերձավոր արևելքի, Եվրոպայի հայկական գաղթօջախների շուրջ 200 եկեղեցիներ, կրոնական համայնքներ ու թեմեր:

Դրանցից ամենանշանավորներն են Երուսաղեմի և Ստամբուլի պատրիարքությունները, որոնք մեծ հեղինակություն ունեն ոչ միայն հայկական, այլև միջազգային քրիստոնեական աշխարհում:

Կրեանանի մայրաքաղաք Բեյրութի արվարձան Անթիլիաս ավանում հաստատվել է հանգամանքների բերումով ժամանա-

կին Կիլիկիայից այստեղ տեղափոխված մի ուրիշ կաթողիկոսություն՝ Անթիլիասի կամ Կիլիկյան կաթողիկոսությունը, որին ավանդական կարգով ենթարկվում են Սիրիայի, Լիբանանի և Կիպրոսի հայկական եկեղեցական թեմերը:

Մինչև 1956 թ. լավ հարաբերություններ գոյություն ունեին էջմիածնի և Անթիլիասի կաթողիկոսությունների միջև: Վերջինս անվերապահորեն ճանաչում և ընդունում էր էջմիածնի առաջնությունն ու հեղինակությունը: Սակայն դաշնակցության գործադրած խառնակությունների հետևանքով 1956 թ. պառակտում առաջացավ էջմիածնի ու Անթիլիասի միջև, վերջինս թշնամաբար տրամադրվեց էջմիածնի նկատմամբ և դավթեց արտասահմանի էջմիածնական մի շարք թեմեր՝ Իրանի, Հունաստանի, ԱՄՆ-ի եկեղեցիների մի մասը և այլն:

Չնայած դրան, էջմիածինը շարունակում է պահպանել իր հեղինակությունը և մեծ ազդեցությունը արտասահմանի հայության բոլոր խավերի ամենալայն զանգվածների, քաղաքական կուսակցությունների, ՀԲԸՄ, Գ. Կյուպենկյան հիմնարկության, երիտասարդական կազմակերպությունների և անհատ գործիչների վրա: էջմիածինը ամեն ջանք գործադրում է սփյուռքահայությանը մայր հայրենիքի հետ սերտորեն կապելու ուղղությամբ: Հարկ է նշել այդ գործում էջմիածնի կաթողիկոսության և նրա արժանավոր գահակալ Վազգեն Ա ծավալած ազգանվեր, հայրենասիրական աշխատանքը, որը տալիս է միանգամայն դրական արդյունքներ: Ամենայն հայոց կաթողիկոսի բազմաթիվ ուղևորությունները Մերձավոր և Միջին արևելքի երկրներում, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Իտալիայում և այլուր, անառարկելիորեն վկայում են այն լուրջ ջանքերի մասին, որ էջմիածինը գործադրում է սփյուռքահայությանը հայրենիքի շուրջը համախմբելու և ժողովուրդների միջև բարեկամություն ու աշխարհում կայուն խաղաղություն հաստատելու ուղղությամբ:

Բնավ գաղտնիք չէ, որ էջմիածնի և Անթիլիասի միջև մղվող պայքարը ըստ էության կրոնական պիտակի տակ պրոսովետական ու հակասովետական ուժերի պայքար է, նրանց քաղաքական-դադափարական հակամարտությունների կոնկրետ արտահայտություններից մեկը:

Բարեբախտաբար, վերջին տարիներին ձեռք առնված հետևողական քայլերի շնորհիվ, էջմիածնի և Անթիլիասի փոխհարաբերությունները աստիճանաբար բարելավվում են, ուստի

կարելի է հուսալ, որ կվերանա հայրենիք—սփյուռք միասնության հաստատման ճանապարհին եղած այդ խոչընդոտը:

Արտասահմանյան հայության որոշ մասի կյանքում նշանակալի դեր ունեն նաև հայ կաթողիկ և հայ ավետարանական-բողոքական համայնքները: Դրանք ոչ միայն կրոնական, այլև մանավանդ կրթական ու մշակութային որոշակի գործունեություն են ծավալում:

Հայ կաթողիկոսների կենտրոնը գտնվում է Բեյրութում, որտեղ և նստում է նրանց պատրիարքը: Թեև որպես համաշխարհային կաթողիկոսության մի հատված, այն նույնպես կապված է Վատիկանին, սակայն, միաժամանակ, ղդալի գործունեություն է ծավալում ազգային մշակութային ասպարեզներում: Վերջին տարիներին հայ կաթողիկոսները նույնպես նկատելիորեն աշխուժացրել ու սերտացրել են հարաբերությունները թե՛ մայր հայրենիքի և թե՛ էջմիածնի Ամենայն հայոց կաթողիկոսության հետ:

Հայ բողոքականների ընդհանուր թիվը այնքան էլ մեծ չէ (մոտ 50000 մարդ), սակայն նրանք ևս նշանակալից աշխատանք են կատարում հատկապես կրթական-միսիոներական իմաստով: Հայ բողոքականները թեպետ շունեն ընդհանուր կենտրոն և ամեն մի երկրում գործող բողոքականների կենտրոնը գտնվում է հենց իրենց մոտ, սակայն ունեն ընդհանուր գործելակերպ: Հայ բողոքականները ևս էջմիածնի Ամենայն հայոց կաթողիկոսության նկատմամբ դրսևորում են հարգալից վերաբերմունք, նրա նկատմամբ տածում ակնածանք: Նրանք Սովետական Հայաստանը համարում են իրենց մայր հայրենիքը, Սփյուռքի կոմիտեից ստանում են գրականություն, մամուլ և այլ նյութեր:

Մի խոսքով, սփյուռքահայ եկեղեցիների մեծ մասը և հիմնական կրոնական համայնքները սերտ կապեր ունեն էջմիածնի Ամենայն հայոց կաթողիկոսության ու մայր հայրենիքի հետ, իրենց ամենօրյա գործունեությամբ նպաստում են հայապահպանության սուրբ գործին: Եվ պատահական չէ, որ հայրենասիրաբար տրամադրված եկեղեցիները, իրենց փոքրիկ բյուրեղանեներում անգամ աշխատում են որոշակի տեղ հատկացնել հայրենի երկրի նվաճումների պրոպագանդանը: Օրինակ՝ Նյու Յորքի հայոց ս. Խաչ եկեղեցու «Տեղեկագիրը», որի շափսերը աշակերտական տետրի թերթից էլ փոքր են և ունի ընդամենը 4 էջ, դարձյալ իր սրբազան պարտքն է համարում գոնե մի քանի

տողով իր ընթերցողներին ուրախ լուրեր հաղորդել Սովետական Հայաստանի մասին:

Արտասահմանի էջմիածնական թեմերի բոլոր եկեղեցիները Սփյուռքի կոմիտեից մշտապես ստանում են թերթեր, ամսագրեր, գեղարվեստական գրականություն և այլն, որոնք նրանց մշակութային ու կրթական հանձնախմբերի միջոցով տարածվում են տեղի հայ բնակչության մեջ:

* * *

Սփյուռքի կոմիտեի գործունեության կարևոր բնագավառներից մեկը հայրենիքում սովորող սփյուռքահայ երիտասարդության շրջանում տարվող աշխատանքն է: ՀՍՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մինիստրության, Արտասահմանյան ուսանողության գործերի հայկական հանրապետական խորհրդի հետ համատեղ, Սփյուռքի կոմիտեն սիստեմատիկ աշխատանք է ծավալում սփյուռքահայ ուսանողների մեջ, սկսած նրանց ընդունելությունից մինչև ավարտելը: Եվ դա հասկանալի է, չէ՞ որ այսօրվա ուսանողը վաղը դառնալու է սփյուռքի ազգային-հասարակական գործիչը: Հայ ժողովրդի պատմության մեջ շատ խորիմաստ երևույթ է, որ սփյուռքի առաջադեմ երիտասարդներից շատերը ներկայումս կյանք են մտնում Սովետական Հայաստանի բարձրագույն դպրոցի ավարտական վկայականներով: Չէ՞ որ ոչ վաղ անցյալում Հայաստանից էին գնում օտար երկրներ ուսում ստանալու: Դա հաջողվում էր շատ քչերին: Այժմ մեր բուհերը սովորելու են գալիս ոչ միայն սփյուռքահայեր, այլև նաև ուրիշ ազգերի հարյուրավոր զավակներ: Պրակտիկան ցույց է տվել, որ սովետական բուհերի շրջանավարտները երբեք ու ոչնչով չեն դիջում արտասահմանյան մասնագետներին, ուստի ճանաչված և բարձրարժեք փաստաթուղթ է համարվում հայրենի բուհի դիպլոմը արտասահմանում: Այժմ Սովետական Հայաստանը դարձել է սփյուռքահայ երիտասարդներից բարձրագույն կրթությամբ մասնագետների պատրաստման հիմնական կենտրոնը, որտեղ նրանք հնարավորություն ունեն մայրենի լեզվով, առանց ուսման վարձի, ընդհակառակը, պետության տված բարձր կրթաթոշակով, ստանալ բարձրագույն կրթություն:

Հանրապետության դիրեկտիվ օրգանների որոշումներին հա-

մապատասխան, առաջին անգամ 1958 թ. հայրենի բուհերում սովորելու հրավիրվեցին 15 սփյուռքահայ երիտասարդներ, որոնցից մրցույթով ընտրվեցին 8 հոգի: 1962 թ., երբ Սովետական Հայաստանի բուհերը տվեցին առաջին սփյուռքահայ շերջանավարտները, հանրապետությունում սովորող արտասահմանցի ուսանողների թիվը արդեն հասել էր 140-ի, որի մեծ մասը սփյուռքահայ երիտասարդներ էին: Նրանք եկել էին Բուլղարիայից, Լիբանանից, Սիրիայից, Իրաքից, Իրանից, Հատինական Ամերիկայից և այլ երկրներից: Այդ շրջանում ՀՍՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության կոմիտեի (հետագայում՝ մինիստրություն) հետ միասին արտասահմանյան ուսանողների հետ սիստեմատիկ աշխատանք էր տանում ԱՕԿՍ-ը, նրանց համար կազմակերպելով ղեկուցումներ, հանգստի երեկույթներ, սովետական երիտասարդության հետ հանդիպումներ, կինոդիտումներ, էքսկուրսիաներ և այլ միջոցառումներ¹¹³:

1961 թ., համաձայն ՍՍՀՄ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մինիստրության որոշման, Երևանի պետական համալսարանին կից կազմակերպվում է արտասահմանյան քաղաքացիների համար նախապատրաստական ֆակուլտետ, որտեղ սփյուռքահայերից բացի ընդգրկվում են նաև այլ ազգությունների օտարերկրացի քաղաքացիներ:

Մինչև 1963 թ. հանրապետության բուհերում և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում սփյուռքահայ գաղթօջախների համար առանձնացվում էր տարեկան 20 տեղ: 1963—1964 ուսումնական տարվանից սփյուռքահայերին հատկացվում էր տարեկան 70 տեղ, որից 50-ը՝ բուհերում, 20-ը՝ տեխնիկումներում: 1968 թ. սկսած տեխնիկումներին հատկացված 20 տեղից 10-ը տրվում է ստաժյորներին և ասպիրանտներին: Մինչև 1965 թ. հանրապետության բուհերում սովորելու էին գալիս հայ երիտասարդներ հիմնականում Լիբանանի, Սիրիայի և Իրաքի հայկական գաղթօջախներից: Վերջին տարիներին մեծ ձգտում է նկատվում նաև Հորդանանի, Եթովպիայի, Սուդանի, Ֆրանսիայի, Բուլղարիայի, Կիպրոսի, Ուրուգվայի, ԱՄՆ-ի և այլ երկրների հայկական գաղութներից:

1961—1972 թթ. ընթացքում հանրապետության բուհերն են

¹¹³ Տե՛ս նույն տեղում, ֆ. 709, ց. 3, գ. 140, թ. 1—3:

ընդունվել 618 սփյուռքահայ ուսանողներ, ստաժյորներ և ապիրանտներ¹¹⁴, իսկ տեխնիկումներն ու միջնակարգ մասնագիտական հաստատությունները՝ 50 մարդ¹¹⁵:

Մինչև 1970 թ. հանրապետության բուհերը տվել են 157, իսկ տեխնիկումները 23 սփյուռքահայ շրջանավարտներ, որոնք հաշտությունամբ աշխատում են տարբեր երկրներում, լիովին արդարացնելով սովետական ուսումնական հաստատությունների անունը, բարձր պահելով նրանց պատիվն ու հեղինակությունը: Գրանցից 62-ը եղել են Սիրիայից, 60-ը՝ Լիբանանից, 15-ը՝ Իրաքից, 7-ը՝ ԱՄՆ-ից, մնացածները ուրիշ երկրների հայկական գաղթօջախներից: Ըստ մասնագիտությունների այդ 180 հոգուց 55-ը եղել են ինժեներներ, 41-ը՝ բժիշկներ, 11-ը՝ բուժականներ, 17-ը՝ երաժիշտներ, 28-ը՝ հայոց լեզվի և գրականության ուսուցիչներ ու ժուռնալիստներ, 18-ը՝ ռեժիսորներ, դերասաններ, նկարիչներ, 8-ը՝ տեխնիկներ, 3-ը՝ պարուսույցներ¹¹⁶:

1958—80 թվականների ընթացքում Սովետական Հայաստանի բարձրագույն և միջնակարգ մասնագիտական հաստատությունները ավարտել են 846 սփյուռքահայեր: Դրանք եղել են 30 երկրներից ժամանած սփյուռքահայ երիտասարդներ, այդ թվում Սիրիայից՝ 324, Լիբանանից՝ 227, Հորդանանից՝ 67, Իրաքից՝ 59, ԱՄՆ-ից՝ 29, Ֆրանսիայից՝ 14 մարդ և այլն: Այդ 846-ից 228-ը եղել են ինժեներներ, 253-ը՝ բժիշկներ, 80-ը՝ արվեստի գործիչներ (երաժշտություն, թատրոն, կերպարվեստ և այլն), 59-ը՝ հայոց լեզվի և գրականության մասնագետներ¹¹⁷: Ինչպես դժվար չէ նկատել, վերջին թիվը բավականին փոքր է: Եթե հայրենիքին ու սփյուռքին հուզող ամենակարևոր խնդիրը հայապահպանությունն է և դրա ամենակարևոր գործոններից մեկը գաղթօջախներում հայկական դպրոցների պահպանումը, ուստի գլխավոր մտահոգություններից մեկը պետք է լինի այդ դպրոցների համար որակյալ ուսուցիչների պատրաստումը: Այստեղից հետևում է, որ պետք է առաջին հերթին ավելացնել հայրենիք ուսման ուղարկվող երիտասարդների թիվը հայոց լեզվի, գրականության ու պատմության գծով և ընդհանրապես մտածել

մանկավարժների պատրաստման հետագա կատարելագործման մասին: Հայրենիքը այդ ուղղությամբ արդեն որոշակի քայլեր է կատարել, և 80-ական թվականների սկզբից հանրապետության բուհերն ու տեխնիկումները տարեկան ընդունում են մինչև 120 սփյուռքահայ երիտասարդներ, մեծ տեղ տալով մանկավարժական կադրերի պատրաստման գործին: Եթե նկատի ունենանք, որ յուրաքանչյուր ուսանողի վրա տարեկան ծախսը կազմում է նվազագույնը 2500 ռուբլի, ապա միանգամայն պարզ կլինի, թե սովետական կառավարությունը ամեն տարի որքան շատ միջոցներ է տրամադրում սփյուռքահայ երիտասարդների կրթության համար:

Այսպիսով, սփյուռքի մտավորականության կազմը աստիճանաբար համալրվում է հայրենիքում կրթություն ստացած նոր որակի գործիչներով, որոնք կարևոր դեր են կատարում մատաղ սերնդի դաստիարակության, հայրենասիրական ոգին ամրապնդելու և սփյուռք—հայրենիք կապերը սերտացնելու գործում: Հատկապես Մերձավոր արևելքի մի շարք երկրներում՝ Սիրիայում, Լիբանանում, Հորդանանում և այլուր, նրանք արդեն ոչ միայն քանակ են կազմում, այլև՝ որակ: Նրանք եռանդով աշխատում են դպրոցներում, մշակութային կազմակերպություններում՝ սատարելով և՛ իրենց ապրած երկրի առաջընթացին, և՛ հայապահպանության վե՛հ գործին:

Նրանցից կարելի է հիշատակել, օրինակ, Հալեպում հմուտ մանկավարժի անուն վաստակած հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Ազնիվ Արաբյանի գործունեությունը: Նա իր սաներին ոչ միայն հարուստ գիտելիքներ է հաղորդում մայրենի լեզվից ու գրականությունից, այլև ջերմ հայրենասիրություններ արժեքներ նրանց:

Հալեպում մեծ հեղինակություն և հարգանք է վայելում նաև Երևանի բժշկական ինստիտուտի շրջանավարտ Հարություն Մարտիրոսյանը, որն իր մասնագիտության մեջ ավելի խորացավ Մոսկվայում, պաշտպանելով նաև բժշկագիտության գծով դիսերտացիա: Նա իր մասնագիտությունը հմուտ են կիրառելու հետ մեկտեղ, եռանդով մասնակցում է նաև հայ համայնքի մշակութային-հասարակական կյանքին¹¹⁸:

Երևանի բժշկական ինստիտուտի 1977 թ. շրջանավարտ

114 Տե՛ս նույն տեղում, ֆ. 875, ց. 4, գ. 60, թ. 44—48:

115 Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 43, թ. 27, և ց. 4, գ. 17, թ. 7:

116 Տե՛ս նույն տեղում, ց. 6, գ. 1, թ. 1—5:

117 Տե՛ս «Սովետական Հայաստան», ամսագիր, № 12, 1980 թ., էջ 22—23:

118 Տե՛ս «Հայրենիքի ձայն», 27 հոկտեմբերի, 1982 թ., № 44:

Հրաչ Լուսինյանը Սիրիայի հեռավոր գյուղերից մեկում բժիշկ աշխատելու հետ մեկտեղ դարձել է նաև հասարակական գործիչ և իրենց մայրենի լեզուն կորցրած հայրենակիցների շրջանում ազգանվեր գործ է կատարում: Նա նամակով դիմել է Սփյուռքի կոմիտեին և նրանից խնդրել գրքեր, թերթեր և այլ նյութեր, հայապահպանության գործը հաջող առաջ տանելու համար¹¹⁹:

Սովետական Հայաստանի բուհերն ավարտած աչքի ընկնող մասնագետներ կան նաև ուրիշ երկրներում, ինչպես Կիպրոսի Մեկթոնյան կրթական հաստատությունում, «Զարթոնք», «Խոսնակ», «Լրաբեր», «Ապրիլ» և այլ պարբերականների խմբագրություններում, երգի, պարի, թատերական խմբերի ղեկավարների շարքերում և այլուր:

Սփյուռքահայ երիտասարդ մասնագետներին հնարավորություն է տրված հայրենիքում 6—10 ամիս ժամանակաընթացքում կատարելագործվելու որպես ստաժյորների կամ սովորելու ասպիրանտուրայում և ստանալու գիտական աստիճաններ: Անցած ժամանակամիջոցում մեզ մոտ թեկնածուական դիսերտացիաներ են պաշտպանել բժիշկ Ռոբեր Ծեպեճյանը (Հալեպ), Բեյրութի Հայկազյան կոլեջի հայագիտական ամբիոնի վարիչ Երվանդ Քասունին, լիբանանյան համալսարանի դասախոս Գրիգոր Գրիգորյանը, Կահիրեի «Արև» օրաթերթի խմբագիր Ավետիս Յափուճյանը, Բեյրութի «Կանչ» շաբաթաթերթի խմբագրական կազմի անդամ Մարտիրոս Գուշակճյանը և ուրիշներ¹²⁰:

Հայրենի ուսումնական հաստատություններն ավարտած երիտասարդներն ու ստաժյորները իրենց հետ սփյուռք են տանում նոր ավյուն՝ հայապահպանության կենսական գործի համար, կանգնում են սփյուռքի կյանքը կազմակերպողների առաջին շարքերում:

* * *

Սփյուռքի կոմիտեն լայն կապեր է հաստատել նաև երիտասարդական, ուսանողական և մարզական կազմակերպությունների ու միությունների հետ, որոնք նույնպես հայրենա-

սիրական մեծ աշխատանք են կատարում նոր սերնդի հայացի դաստիարակության, նրան հայրենիքի հետ ծանոթացնելու գործում: Եղած տվյալներով, սփյուռքում գործող երիտասարդական կազմակերպությունների թիվը անցնում է վեց տասնյակից, որոնց մեծ մասի հետ կոմիտեն գտնվում է սերտ կապերի մեջ:

Դրանց մեջ հատուկ ուշադրության են արժանի Ֆրանսահայ երիտասարդական միությունը (ԺԱՖ), Հալեպի «Նոր սերունդ» մշակութային երիտասարդական միությունը, Բեյրութի հայ երիտասարդական միությունը, Լոնդոնի հայ երիտասարդական միությունը, Ուրուգվայի հայ կենտրոնի «Երևան» երիտասարդական կազմակերպությունը, Ամերիկահայ առաջնորդարանի երիտասարդական կազմակերպությունների հանձնախումբը, Հոմմի, Ժնևի և ԳՖՀ-ի մի քանի քաղաքներում կազմակերպված հայ ուսանողական միությունները, Բուենոս Այրեսի «Հայ ձայն» և Կորդոպայի «Խուզա» երիտասարդական միությունները և այլն:

ՀԼԿԵՄ Կենտկոմի օրգան «Ավանգարդ» թերթի խմբագրությանը կից ստեղծվել է «Միաժան» երիտասարդական ակումբը, որը նույնպես սերտ կապեր է հաստատել սփյուռքի երիտասարդական կազմակերպությունների, արվեստագետների, ուսանողների ու մարզիկների հետ: «Միաժան»-ի էջերում պարբերաբար տպագրվում են սփյուռքահայ երիտասարդ ստեղծագործողների գործերը, ընդհանրապես լուսաբանվում է սփյուռքի երիտասարդության կյանքը:

Սփյուռքի կոմիտեն երիտասարդական և մարզական կազմակերպություններին, թերթերից ու գրականությունից բացի, ուղարկում է նաև մարզական գույք, մարզահագուստ, գավաթներ՝ տեղերում մրցույթներ կազմակերպելու համար, հուշանվերներ, երաժշտական գործիքներ, լուսանկարային ցուցահանդեսներ, կինոֆիլմեր և այլն:

Սփյուռքում կան մի քանի մարզական կազմակերպություններ, որոնցից երկուսը ավելի մասսայական են: Դրանք են՝ հայ մարմնամարզական միությունը (ՀՄՄ) և հայ մարմնամարզական ընդհանուր միությունը (ՀՄԸՄ): Հայկական մարզական կազմակերպությունները ուժեղ են հատկապես Լիբանանում, Սիրիայում, Եգիպտոսում, Հորդանանում և Արգենտինայում: 1938 թ. սկսած Բեյրութում երկու տարին մեկ տեղի են ունենում նավասարդյան խաղեր՝ ՀՄՄ-ի ղեկավարությամբ:

¹¹⁹ Տե՛ս «Սովետական Հայաստան», ամսագիր, 1978 թ., № 8, էջ 17:

¹²⁰ Տե՛ս «Հայրենիքի ձայն», 27 հոկտեմբերի, 1982 թ., № 44:

Հայրենիք—սփյուռք առնչությունների սերտացման շնորհիվ ակտիվացել են նաև սպորտային կապերը: 1965 թ. «Նոր սերունդ» երիտասարդական կազմակերպությունների հրավերով Սիրիա և Լիբանան մեկնեց Հայաստանի բասկետբոլի տղամարդկանց թիմը, ԺԱՖ-ի հրավերով Ֆրանսիա է մեկնել Հայաստանի երիտասարդության ներկայացուցիչների պատվիրակությունը: Նույն թվականին Հայաստան են հրավիրվել 6 տարեք մարդական կոլեկտիվներ՝ Սիրիայից տղամարդկանց և կանանց վոլեյբոլի թիմերը, Լիբանանից՝ տղամարդկանց վոլեյբոլի թիմը, Լիբանանից և Սիրիայից՝ ֆուտբոլային թիմեր և այլն¹²¹:

1970 թ. սփյուռքահայ երիտասարդական մի շարք կազմակերպությունների խնդրանքով Երևանում կազմակերպվեցին հայոց լեզվի ուսուցման երկշաբաթյա դասընթացներ, որոնց մասնակցեցին 25 երիտասարդներ: 1971 թ. նման դասընթացներին մասնակցելու ցանկություն հայտնեցին ավելի քան 100 հոգի¹²²:

1970 թ. ամռանը Հայաստան եկած սփյուռքահայ դպրոցականներին և ԱՄՆ-ից ժամանած երիտասարդական երկու խմբի անդամներին նույնպես հայոց լեզու, հայկական երգեր ու պարեր են սովորեցրել հայրենի մանկավարժները՝ Սփյուռքի կոմիտեի գլխավորությամբ: Այդ նպատակով, մի քանի պիտներական ճամբարներում, ուր կային սփյուռքահայ երեխաներ, նույնպես առանձնացվել են հատուկ ուսուցիչներ¹²³:

Հայրենիքի և սփյուռքի երիտասարդական կազմակերպությունների գործարար համագործակցության ուղղությամբ կարևոր քայլ հանդիսացավ Հայաստանի երիտասարդական կազմակերպությունների կոմիտեի նախաձեռնությամբ 1971 թ. հունվարին Երևանում տեղի ունեցած սփյուռքահայ մի շարք առաջադիմական երիտասարդական միությունների ներկայացուցիչների հավաք-հանդիպումը¹²⁴:

Սովետական Հայաստանի և սփյուռքի միջև մշակութային կապերի ու հարաբերությունների օրեցօր ընդլայնման շնորհիվ սփյուռքահայ երիտասարդական շարժումը նույնպես թևակոխեց վերելքի ու զարգացման նոր ժամանակաշրջան: Հայրենիքի ան-

միջական առկայությունը սփյուռքում ուժացման վտանգին ենթարկված աճող սերնդի մեջ հետզհետե արթնացրեց ազգային գիտակցությունը, խթանեց նրա զարգացմանը: Այդ գիտակցությունը երիտասարդ սերնդի մեջ առաջ բերեց դադթօջախներում կազմակերպվելու և կազմակերպված գործելու ձգտում, նոր արյուն ներարկեց երիտասարդական շարժմանը, պայմաններ ստեղծեց ոչ միայն գոյություն ունեցող երիտասարդական միությունների գործունեության աշխուժացման, այլև նորերի ստեղծման համար: Հատկապես 60—70-ական թվականները հանդիսացան սփյուռքահայ երիտասարդական շարժման աճման ու զարգացման նոր ժամանակաշրջան: Հենց այդ պրոցեսի կարևոր փուլերից մեկը եղավ սփյուռքահայ մի շարք առաջադիմական երիտասարդական միությունների ներկայացուցիչների Երևանում հրավիրված հավաքը:

Այդ հավաքին մասնակցում էին Լիբանանի «Հայ երիտասարդաց ընկերություն», «Սարգիս Տխրունի», «Նոր սերունդ», «Էրեբունի», «Լիբանանահայ գրական շրջանակ», հայ մարմնամարզական «Արարատ» միությունների, Սիրիայի «Նոր սերունդ», Հայկապի ազգային մշակութային միության, Լոնդոնի հայ երիտասարդաց միության, Ֆրանսահայ երիտմիության (ԺԱՖ), տասարդաց միության, Ֆրանսահայ երիտասարդական մասնաճյուղի, Ալեք-ՀԲԸՄ-ի ֆրանսահայ երիտասարդական մասնաճյուղի, Ալեք-ՀԲԸՄ-ի ֆրանսահայ երիտասարդական մասնաճյուղի, Ամմանի ազգային-մարզական սանդղիայի «Տիգրան Երկաթ», Ամմանի ազգային-մարզական միությունների և Ամերիկահայ առաջադեմ երիտասարդության ներկայացուցիչները: 7 երկրից ժամանել էին 20 սփյուռքահայ երիտասարդներ:

12 օր անցկացնելով հայրենի երկրում, սփյուռքահայ երիտասարդության պատվիրակները ծանոթացան հայրենիքի նվաճումներին, այցելեցին մի շարք արդյունաբերական ձեռնարկություններ, կոլեկտիվ տնտեսություններ, մշակութային և արվեստի օջախներ, ճամփորդեցին հանրապետության պատմական ու տեսարժան վայրերում, հանդիպումներ ունեցան գիտության, տեսարժան վայրերում, հանդիպումներ ունեցան սոցիալականության ու արվեստի գործիչների հետ, ծանոթացան սովետական երիտասարդական կազմակերպությունների գործունեությանը:

Ինչպես հանդիսավոր հավաքում, այնպես էլ մամուլում պատվիրակները հանդես եկան հայրենիքից ստացած տպավորություններով, պատմեցին իրենց միությունների գործունեության, աճող սերունդը ուժացման վտանգից փրկելու ուղղու-

121 Տե՛ս ՀՍՍՀ ՀՍՍՇ ՊԿԱ, ֆ. 875, ց. 4, գ. 5, թ. 1—13:

122 Տե՛ս նույն տեղում, գ. 51, թ. 32:

123 Տե՛ս նույն տեղում, գ. 20, թ. 69—74:

124 Տե՛ս «Սովետական Հայաստան», ամսագիր, № 4, 1971 թ., էջ 22—23:

թյամբ գործադրվող ջանքերի, հայրենի երկրի և նրա երիտա-
սարդական կազմակերպությունների հետ կապերը սերտացնելու
ուղղությամբ կատարվող աշխատանքների մասին:

Վերջապես, հավաքի մասնակիցները՝ սփյուռքում միմյան-
ցից մեկուսացված, անշատ գործող երիտասարդական տարբեր
կազմակերպությունների ներկայացուցիչները, առաջին անգամ
հավաքվելով «կլոր սեղանի շուրջ», գործարար մթնոլորտում
քննարկեցին հայապահպանության ուղղությամբ երիտմիություն-
ների գործունեության հետագա ծավալման, հայրենիքի երիտա-
սարդական միությունների հետ կապերի ամրապնդման ու հա-
մագործակցության հարցերը: Հավաքն ընդունեց սփյուռքահայ
երիտասարդությանը և նրա միություններին ուղղված հատուկ
կոչ:

Հավաքում դրսևորվեց երիտմիությունների ներկայացուցիչ-
ների բարձր գիտակցականությունն ու պատասխանատվությունը
տարագիր հայության երիտասարդ սերնդի ճակատագրի նկատ-
մամբ: Միահամուռ էր երիտմիությունների ներկայացուցիչների
ցանկությունն ու պատրաստակամությունը՝ ավելի սերտացնե-
լու կապերը Սովետական Հայաստանի երիտասարդության հետ,
և, որ ամենակարևորն է՝ գաղթօջախներում աշխատել համագոր-
ծակցված, միասնաբար:

Սփյուռքահայ երիտասարդությանն ուղղված կոչի մեջ աս-
ված էր, որ «ուժացման, այլասերումի վտանգին առջև, զոր կըզ-
գանք ամեն օր և ամեն ժամ, անհրաժեշտ է, որ մենք միաց-
նենք մեր ջանքերը, ստեղծենք միակամորեն ու միասնականու-
թյամբ գործելու հնարավորություններ:

Ուրեմն, միացնենք մեր ջանքերը, գետ գարձնենք բաժան-
բաժան վտակները, բանավոր հայրենասիրությունը զուգակցենք
գործնական հայրենասիրության հետ՝ մեր դպրոցներուն, մշա-
կութային միություններուն, մարդական ակումբներուն և երի-
տասարդական ուսանողական կազմակերպություններուն մեջ»¹²⁵:

Հավաքը դրսևորեց նրան մասնակցող սփյուռքահայ երի-
տասարդական կազմակերպությունների, նրանց ղեկավարների
ազգային բարձր գիտակցականությունը, առողջ, չեքմ հայրենա-
սիրական ոգին, տարագիր հայության ճակատագրի նկատմամբ
պարտքի և պատասխանատվության բարձր զգացումը: Երիտ-

միությունների ղեկավարների ելույթները ցույց տվեցին, որ
նրանք խորապես գիտակցում են այն իրողությունը, որ իրենք
կոչված են վաղն իրենց ուսերի վրա կրելու այն ծանր բեռը, որ
տասնամյակներ շարունակ պատվով տարել են հին սերնդի
ներկայացուցիչները: Սփյուռքահայ առաջադեմ երիտասարդա-
կան կազմակերպությունների ներկայացուցիչները հայտարարե-
ցին, որ միայն հայրենիքի՝ Սովետական Հայաստանի վրա հեն-
վելու, դեպի հայրենիքը հավատ, սեր, նվիրվածություն, ազգա-
յին հպարտության զգացում դաստիարակելու ճանապարհով կա-
րելի է կանխել ձուլման վտանգը:

Այսպիսով, այդ հավաքով առաջին և լուրջ քայլն արվեց
սփյուռքահայ երիտասարդական կազմակերպությունների ջան-
քերի միավորման, համագործակցված ու միասնաբար գործելու
ճանապարհին: Հանդիպման մասնակիցները, լիցքավորված հայ-
րենի իրականությամբ, մեկնեցին իրենց բնակության երկրները՝
ավելի մեծ թափով հայապահպանման գործը առաջ մղելու
վճռականությամբ ու վստահությամբ¹²⁶:

Սփյուռքահայ ազգային կյանքի վերջին տասնամյակի ա-
մենակարևոր երևույթներից մեկը ձուլման վտանգին ենթարկ-
ված երիտասարդ սերնդի ազգային զարթոնքն է, կազմակերպ-
վելու նրա ձգտումը, որը ամենից առաջ հայրենիք—սփյուռք կա-
վելու նրա ձգտումը, որը ամենից առաջ երիտասարդա-
կան նոր միությունները, խմբակցությունները, պարբերական-
ները, գեղարվեստական խմբերը, մտահոգված լինելով հայ տա-
րագրության ճակատագրով, լրջորեն որոնում են իրենց հուզող
հարցերի լուծման նոր ուղիներ, նոր գործելակերպ, պայքարի ու
աշխատանքի նոր ձևեր ու մեթոդներ: Երիտմիությունների մեծ
մասը ճիշտ է կողմնորոշվում՝ սփյուռքահայության ճակատա-
մարտ գիշտ է կողմնորոշված հայրենիքի հետ: Նրանք ձգտում են
գիրը կապելով վերածնված հայրենիքի հետ: Նրանք ձգտում են
սերտացնել կապերը նրա հետ, երիտասարդությանը համա-
սերտացնել կապերը նրա հետ, երիտասարդությանը համա-
խմբել Սովետական Հայաստանի շուրջը, նոր սերնդի մեջ դաս-
խմբել Սովետական Հայաստանի շուրջը, նոր սերնդի մեջ դաս-
տիարակել իր հայրենիքի նկատմամբ ազգային հպարտության
զգացում, նրան հայ պահել հայրենիքի համար: Սփյուռքահայ
երիտմիությունների ներկայացուցիչների երևանյան հավաքը
այդ ճանապարհին կատարված լուրջ քայլերից մեկն է:

Բոլորի համար այժմ հանրահայտ է դարձել, որ սփյուռ-

¹²⁵ Տե՛ս նույն տեղում, № 5, 1971 թ., էջ 4:

¹²⁶ Տե՛ս նույն տեղում, № 4, 1971 թ., էջ 22—23:

քահայության կյանքում զգալիորեն աճել է հայրենիքի դերը ձուլման վտանգի դեմ մղվող պայքարում հաջողությունն ապահովելու իմաստով: Այդ ճշմարտությունը խորապես գիտակցում են սփյուռքահայ աշխատավորները, առաջավոր մտավորականությունը, բոլոր հայրենասիրական կազմակերպություններն ու միությունները:

Բնութագրելով հայրենիքի դերը ուժացման վտանգից տաքազիր հայության փրկության գործում, Բելյուսթի «Նոր սերունդ», «Թեքեյան» մշակութային միությունների և «Գրական շրջանակ» ընկերակցության Սովետական Հայաստանի 50-ամյակն անցկացնող միացյալ հոբելյանական հանձնախումբը գրել է. «Նոյեմբերի 29-ը իրավամբ ամենապայծառ թվականն է Հայոց պատմության նորագույն հանգրվանին, տոնն ու խրհրդանիշը հայ ժողովուրդի փրկության ու վերածնունդին: ...Նորհրդագային Հայաստանը մայր հայրենիքն է ամենայն հայոց, միակ խարխիսն ու ապավենը աշխարհի շորս ծագերուն ցրված հայ բազմություններուն: Սփյուռքի մեջ հայապահպանման սրբազան գործին հաջողությունը պայմանավորված է առաջին հերթին մայր հայրենիքի հետ հարաբերություններու առավել սերտացումով, որովհետև առավելաբար հայրենի հեռանկարն է, որ կիմաստավորե հայապահպանման ճիգը ու ավյուն կընծայե բարձրացող սերունդներուն»¹²⁷:

Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի կարևոր նախաձեռնություններից մեկը եղավ 1980 թ. նոյեմբերի 24—27-ը Երևանում սփյուռքահայ համայնքների ներկայացուցիչների առաջին անգամ և մայր հայրենիքում անցկացված ժողովը, որին մասնակցում էին տարբեր մայրցամաքների գրեթե բոլոր հայկական գաղթօջախների պատվիրակներ, ինչպես նաև Սովետական Հայաստանի հասարակայնության ներկայացուցիչներ, գիտության ու մշակույթի գործիչներ¹²⁸:

Ժողովը, որն անցավ «Վերածնված հայրենիքը և սփյուռքը. պայքար հանուն խաղաղության և առաջադիմության» նշանաբանով, քննարկեց հայրենիքի շուրջը սփյուռքահայությանը սերտորեն համախմբելու, Սովետական Հայաստանի հաջողություն-

ները յուրաքանչյուր սփյուռքահայի հասցնելու կարևորագույն հարցերը¹²⁹:

Ժողովը ներածական հակիրճ ճառով բացեց նրա նախապատրաստության կազմակերպական կոմիտեի նախագահ, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոս Վ. Հ. Համբարցիախտական աշխատանքի կրկնակի հերոս Վ. Հ. Համբարձումյանը: Նա սրտանց ողջունեց աշխարհի բաղում երկրներից ձուլմանը: Նա սրտանց ողջունեց աշխարհի բաղում երկրներից ձուլմանը: Նա սրտանց ողջունեց աշխարհի բաղում երկրներից ձուլմանը: Նա սրտանց ողջունեց աշխարհի բաղում երկրներից ձուլմանը:

«Վերածնված հայրենիքը և սփյուռքը, պայքար հանուն խաղաղության և առաջադիմության» խորագիրը կրող ընդարձակ զեկուցումով հանդես եկավ Սփյուռքի կոմիտեի նախագահ Վ. Ե. Համազասպյանը:

Ժողովում ելույթ ունեցան Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ն, Արտասահմանի հետ կուլտուրական կապերի սովետական «Ռոդինա» ընկերության նախագահության անդամ, վետական «Ռոդինա» թերթի և «Ռոդինա» ամսագրի գլխավոր խմբագիր Օլեգ Կուպրինը (Մոսկվա), Հայաստանի գրողների միության Օլեգ Կուպրինը (Մոսկվա), Հայաստանի գրողների միության վարչության առաջին քարտուղար Վարդգես Պետրոսյանը, ՀՍՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մինիստր Լյուդվիգ Ղարիբջանյանը, Երևանի «Նաիրիտ» գիտաարտադրական միավորման բանվոր, ՀՍՍՀ Գերագույն սովետի արտադրական միավորման բանվոր, ՀՍՍՀ Գերագույն սովետի ղեկուսատու Վաչիկ Ազիզյանը, ՀՍՍՀ ժողովրդական նկարիչ, ՍՍՀՄ Գեղարվեստի ակադեմիայի ակադեմիկոս Գրիգոր Խանջյանը, ՀՍՍՀ լուսավորության մինիստր Սեմյոն Հախումյանը, ժողովրդական ղեկուսատուների Հրազդանի քաղսովետի գործկոմի նախագահ, հայրենազարծ Տիգրան Պետրիկյանը, էջմիածնի շրջանի Արշալույս գյուղի կուլտնտեսուհի, ՀՍՍՀ Գերագույն սովետի ղեկուսատու Բավական Մնացականյանը և սփյուռքահայ տարբեր համայնքների երեք տասնյակ ներկայացուցիչներ:

Ժողովի մասնակիցներին ուղղված ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության ողջունում ասված էր, որ տվյալ հավաքը իր մեջ մեծ խորհուրդ ունի, քանի որ առաջինն է հայրենիքի ու սփյուռքի պատմության մեջ: Այն մեծախորհուրդ է նաև նրանով, որ հստակորեն մարմնավորում և արտացոլում է սովետական

¹²⁷ Նույն տեղում, № 10, 1973 թ., էջ 3:

¹²⁸ Տե՛ս նույն տեղում, № 12, 1980 թ., էջ 7:

իշխանութեան տարիներին հայրենիքի ձեռք բերած վիթխարի նվաճումները, որոնց շնորհիվ նա կարողացավ գորավիզ լինել բախտի դաժան ճակատագրի հետևանքով աշխարհով մեկ սըփրոված իր տարագիր զավակներին: Այդ ժողովը միաժամանակ եղավ արտահայտիչը այն նվիրական զղացմունքների, որ սփյուռքահայութունը տածում է վերածնված հայրենիքի նկատմամբ, նրա մեջ տեսնելով իր գոյութեան առհավատչան:

Այդ ժողովի մեծ խորհուրդն էր նաև այն, որ գործնականում հաստատեց մեր ժողովրդի տարբեր հատվածների միասնութեան ապահովման անհրաժեշտութունն ու հնարավորութունը, օրեցօր ընդլայնվող հայրենիք—սփյուռք կապերի ամրապնդման բարերար նշանակությունը այդ գործում: Սփյուռքահայութեան ներկայացուցիչները կրկին անգամ հավաստեցին, որ համայն հայութեան հայրենիքը Սովետական Հայաստանն է, ուր անցյալի նվիրական ավանդներով նորոգվում ու իմաստավորվում է նրա ներկան ու գալիքը:

Սփյուռքահայութեան ներկայացուցիչների ժողովում ելույթ ունեցողները առաջ քաշեցին հայրենիք—սփյուռք փոխհարաբերությունների ավելի սերտացման, հայապահպանության համար մղվող պայքարի հետագա ուժեղացման և այլ հարցերի վերաբերյալ կոնկրետ ու գործնական առաջարկություններ, որոնց իրականացումը, անշուշտ, կնպաստի այդ աշխատանքների ավելի բարեհաջող ընթացքին:

Այնուհետև ժողովը հատուկ ուղերձներով դիմեց ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությանը, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահությանը և համայն սփյուռքահայութեանը:

ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահությանը հղած ուղերձում ժողովի մասնակիցները սրտանց շնորհակալություն էին հայտնում հայրենի պետությանը, որը հնարավորություն ընձեռեց «...մեր ժողովրդի պատմության մեջ առաջին անգամ ըլլալով այսպիսի համատեղ ժողով մը գումարելու, ուր քննարկեցինք հայրենիքի և սփյուռքի մշակութային կապերու ընդլայնման ու ամրապնդման, ինչպես և խաղաղության ու առաջադիմության հետ առնչված հարցերը»¹³⁰:

Այնուհետև ասված էր, որ «ուրախությամբ կհայտնենք Ձե-

զի, որ ժողովի մեջ քննարկված հարցերու շուրջ մեր ընմբռնումներն ու կարծիքները եղան համերաշխ:

Այսօր սփյուռքահայութեան համար անխախտ համոզում է դարձեր այն գիտակցությունը, թե համայն հայութեան հայրենիքը Սովետական Հայաստանն է: Սփյուռքահայը իր կյանքի փորձով հասել է այն մտքին, թե հայ մարդը ուրիշ ոչ մեկ երկրների տակ չի կրնար ունենալ աղգային այն ապահովությունը, զոր ան գտած է մայր հայրենիքի մեջ: Սփյուռքահայ հոծ զանգվածներու հոգեբանության ու գիտակցության մեջ կատարված արմատական այս հեղաշրջումը անհրաժեշտ է, որ արձանագրվի մեր վերածնված հայրենիքի հաջողություններու ոսկի մատյանին մեջ:

...Մենք կհավատանք, թե հայ ժողովրդի բոլոր երազները կիրականանան շնորհիվ սովետական հզոր երկրի խաղաղասիրական քաղաքականության, կհավատանք, թե մեր վերածնված հայրենիքը, ինչպես 60 տարի շարունակ, այսուհետև ևս կապրի առանց անկումներու սարսափին:

Մենք կվերադառնանք մեր բնակավայր երկրները՝ նոր օգևորությամբ ծառայելու հայապահպանման, սփյուռք—Հայաստան կապերու ամրապնդման և խաղաղության սրբազան գործին՝ մեր հայացքները միշտ հառած մայր հայրենիքին»¹³¹:

Սփյուռքահայութեանն ուղղված ուղերձում ժողովի մասնակիցները, իրենց գոհունակությունը հայտնելով հայրենիքում հավաքվելու առթիվ, գրում էին. «...Ձեզ ենք դիմում մենք, սիրելի հայրենակիցներ, ձեզ, որ սփոված եք աշխարհով մեկ, Մերձավոր արևելքից մինչև Եվրոպա և Եվրոպայից մինչև Ամերիկա ու Ավստրալիա, ուր էլ լինեք, պատվար ու սատար եղեք իրավունքի խաղաղությանը, որ ժողովուրդների համերաշխ ընտանիքում ապրի Հայաստանը, հայր կերտի ու կառուցի, բաղմապատկի իր մշակութային արժեքները և հավերժ հնչի հայոց լեզուն»¹³²:

Տասնամյակներ առաջ, եղեռնից հետո, սփյուռքի մեծ բանաստեղծ Վահան Թեքեյանը գրում էր, թե՝

131 Նույն տեղում:

132 Նույն տեղում, էջ 34:

«Կարենալու համար ապրիլ այսուհետև
Օդի, ջուրի, հացի նման
Մենք պետք ունինք հպարտության»:

Ժողովի մասնակիցները գոհունակությամբ արձանագրեցին, որ «մենք այժմ ունենք այդ հպարտությունը՝ մեր վերածնված հայրենիքն է դա, Սովետական Հայաստանը, որ իր աշխարհաշեն գործերով, իր մեծ մշակույթով աշխարհի քաղաքակրթության մասնակիցն է այսօր»:

Փարվենք նրան, ամուր պահենք հայրենիքի և սփյուռքի միջև ստեղծված կամուրջը, բոլոր միջոցներով նպաստենք հայրենիքի բարօրությանն ու խաղաղությանը, որովհետև դրանով է, որ պիտի գոյատևի սփյուռքահայությունը և դրանով է, որ պիտի իրականանան մեր ամենանվիրական երազանքները»¹³³:

Եվ իրոք, սփյուռքահայությունը անկեղծ սիրով ու մեծ հույսերով փարվել է հայրենիքին՝ Սովետական Հայաստանին, անխղձի կապերով մերվել նրա հետ և դրանում է սփյուռքահայության ապագայի հաջողության երաշխիքը:

Ժողովի մասնակիցները այցելեցին Սարգարապատի հուշահամալիր, Եղեռնի դոհերի հուշարձան, տեսարժան այլ վայրեր, ինչպես նաև ծաղկեպսակ դրին Երևանում Վ. Ի. Լենինի հուշարձանին՝ որպես անկեղծ սիրո ու երախտագիտության նշան:

Այնուհետև ՀԿԿ Կենտկոմը և ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը ընդունելություն կազմակերպեցին ի պատիվ սփյուռքահայ համայնքների ներկայացուցիչների, ուր նրանց ողջունեցին ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Կ. Ս. Դեմիրճյանը և Մինիստրների խորհրդի նախագահ Ֆ. Տ. Սարգսյանը: Հանդիպման ժամանակ ելույթ ունեցան սփյուռքահայության ներկայացուցիչները, շնորհակալություն հայտնելով սփյուռքի նկատմամբ հայրենական հոգատարության առթիվ: Վերջում Կ. Ս. Դեմիրճյանը պատասխանեց հանդիպման մասնակիցներին հետաքրքրող բազմաթիվ հարցերի և նրանց մաղթեց նորանոր հաջողություններ իրենց հայրենասիրական գործունեության մեջ¹³⁴:

Նոյեմբերի 25-ին սփյուռքահայության ներկայացուցիչների ժողովի մասնակիցները ներկա եղան Երևանում՝ Մուսլյան և

Կնունյանց փողոցների հատման անկյունում, մայրաքաղաքի Գլխավոր պողոտայի վրա, Վարդան Մամիկոնյանի արձանի մոտ, Բարեկամության տան հիմնադրման արարողությանը¹³⁵: Սովետական Հայաստանի կառավարության որոշմամբ կառուցվելիք Բարեկամության տունը, որը լինելու է հայրենիք այցելող սփյուռքահայերի հանգրվանը, իրենով կխորհրդանշի հայրենիք—սփյուռք օրավուր ամրապնդվող միասնությունը:

Այդ իմաստով խիստ ուշադրավ երևույթ է նաև իրենց հայրենասիրական գործունեությամբ աչքի ընկած սփյուռքահայ հասարակական, մշակութային գործիչների ու դիտակազմների համար Սովետական Հայաստանի պետական, մշակութային և գիտական մի շարք կազմակերպությունները կողմից ամենամյա մրցանակների սահմանումը: ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահությունը հիմնեց «խաղաղության և մայր հայրենիքի հետ կապերի ամրապնդման օգտին ակտիվ գործունեության համար» մրցանակ, որը շնորհվում է սփյուռքահայ նշանավոր հասարակական-քաղաքական, կրոնական գործիչներին, գործարար շրջանների ներկայացուցիչներին, նրանց, ովքեր իրենց ջանքերը ի սպաս են դնում խաղաղությանը, ժողովուրդների բարեկամության ու հայապահպանության վեհ գործին:

Այնուհետև, ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության հանձնարարությամբ, լուսավորության ու կուլտուրայի մինիստրությունները, գիտությունների ակադեմիան, դրոշների, ժուռնալիստների, նկարիչների և կոմպոզիտորների միությունները՝ ամենամյա մրցանակներ սահմանեցին գիտության ու մշակույթի սփյուռքահայ առաջադեմ գործիչներին շնորհելու համար: Հիմնվեցին վեց անվանական մրցանակներ, որոնք ումեն տարի, Հայաստանում սովետական իշխանության հաղթանակի տարելիցի նախօրյակին, շնորհվում են սփյուռքահայ աչքի ընկած մտավորականներին: Դրանք են՝ Մեսրոպ Մաշտոցի անվան մրցանակ, որը շնորհվում է սփյուռքահայ մանուկներին մայրենի լեզու ավանդող բազմալսատակ ուսուցիչներին, հաշտուր Աբովյանի անվան մրցանակ, որին արժանանում են գրականության և հրապարակախոսության բնագավառում աչքի ընկած մանած Անանիա Շիրակացու անվան մրցանակը տրվում է գի-

¹³³ Նույն տեղում:

¹³⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 20—21:

¹³⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 44:

տական, մասնավորապես՝ հայագիտական, արժեքավոր աշխատությունների համար: Կերպարվեստի բնագավառում աչքի ընկած գործերը արժանանում են Մարտիրոս Սարյանի անունը կրող մրցանակին, երաժշտական լավագույն ստեղծագործությունների հեղինակներին հանձնվում է Կոմիտասի անվան մրցանակ, և կատարողական արվեստի բնագավառում մեծ վաստակ ունեցողներին շնորհվում է Պետրոս Ադամյանի անվան մրցանակ¹³⁶:

Ահա առաջին մրցանակակիրները.

ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության 1981 թ. նոյեմբերի 28-ի հրամանագրով «Խաղաղության և մայր հայրենիքի հետ կապերի ամրապնդման օգտին ակտիվ գործունեության համար» առաջին մրցանակակիրը դարձավ մեր ժամանակի ականավոր գրող, հասարակական գործիչ Վիլյամ Սարոյանը (Ետմահու): Սահմանված մյուս մրցանակները շնորհվեցին. Հայաստանի գրողների և ժուռնալիստների միությունների Խ. Աբովյանի անվան մրցանակը շնորհվեց գրող, հասարակական գործիչ Գառնիկ Ազդարյանին (Լիբանան), գրականության և հրապարակախոսության բնագավառում ունեցած վաստակի համար: ՀՍՍՀ Լուսավորության մինիստրության Մ. Մաշտոցի անունը կրող մրցանակին արժանացավ վաստակաշատ մանկավարժ, գրող, հասարակական գործիչ Վահե Վահյանը (Լիբանան)՝ լուսավորության և մանկավարժության բնագավառում ունեցած ծառայությունների համար: ՀՍՍՀ ԳԱ Անանիա Շիրակացու անվան մրցանակը տրվեց ՀՍՍՀ ԳԱ օտարերկրյա անդամ, պատմաբան Սիրարփի Տեր-Ներսեսյանին (Ֆրանսիա)՝ գիտական ակնառու աշխատությունների համար: Հայաստանի կոմպոզիտորների միության Կոմիտասի անձան մրցանակը ստացավ կոմպոզիտոր Համբարձում Պերպերյանը (ԱՄՆ)՝ երաժշտության բնագավառում ունեցած մեծ վաստակի համար: Հայաստանի նկարիչների միության Մ. Սարյանի անվան մրցանակը շնորհվեց Ֆրանսիայի գեղարվեստի ակադեմիայի անդամ, նկարիչ Գառուին (Գառնիկ Զուլումյան)՝ կերպարվեստի բնագավառում ունեցած վաստակի համար: ՀՍՍՀ կուլտուրայի մինիստրության Պետրոս Ադամյանի անվան մրցանակը տրվեց Նյու Յորքի «Մետրոպոլիտեն-օպերայի» մենեջերուհի Լիլի Զուգասյանին՝

կատարողական արվեստի բնագավառում ունեցած վաստակի համար¹³⁷:

Իհարկե, դա առաջին դեպքը չէ, որ հայրենիքը ուշադրության ու զնահատանքի է արժանացնում սփյուռքահայ առաջադիմական գործիչներին: Նրանց լավագույն ներկայացուցիչներից մի քանիսը ընտրվել են Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի օտարերկրյա անդամներ (Զատիկ Խանդադյան, Մանասե Սևակ, Սիրարփի Տեր-Ներսեսյան, Արշիլ Հրաչ Փափազ), պարգևատրվել են ՍՍՀՄ շքանշաններով (Հարություն Մադեյան, Ավետիս Ալիքսանյան և ուրիշներ) և այլն: Սփյուռքահայ մշակույթի, արվեստի, գիտության ու հասարակական գործիչներին հայրենական մրցանակների և կառավարական պարգևների արժանացնելը իր հերթին խրախուսում ու ոգևորում է հայրենիք—սփյուռք կապերի զարգացմանը զինվորագրված մարդկանց:

Վերջին տարիներին հայրենիք—սփյուռք առնչությունների սերտացման գործում ձեռք բերված հաջողություններից մեկն էլ այն է, որ կապերը ծավալվել են ոչ միայն լայնքով, այլև՝ խորությամբ: Սփյուռքի կոմիտեն իր կարևոր խնդիրներից մեկն է համարել հնարավոր բոլոր միջոցներով, ամեն մի երկրի առանձնահատուկ պայմաններն ու քաղաքական կացությունը հաշվի առնելով, ներգործել հայ զանգվածների վրա, կտրել նրանց հակասովետիզմի թույնով ներարկված ուժերի ազդեցությունից: Արտասահմանում տարվող աշխատանքի հաջողությունը զգալի շափով պայմանավորված է նրա շերտավորված իրականացումով: Ամեն երկիր ու գաղթօջախ իր առանձնահատուկությամբ ունի, պետք է խստորեն դա հաշվի առնվի, այլապես անխուսափելի կլինի ձախողումը: Օրինակ՝ Ավստրալիայի ու Կանադայի հայկական գաղութներում տարվող աշխատանքը պետք է այլ բնույթ ունենա, քանի որ դրանք հիմնականում նոր կազմակերպված գաղութներ են: Ֆրանսիայի և Լիբանանի գաղութների հետ տարվող աշխատանքը միանգամայն այլ է, նկատի ունենալով դրանց երկար տարիների կուտակած փորձը, միջտի ունենալով դրանց երկար տարիների կուտակած փորձը, միջպետական նպաստավոր փոխհարաբերությունները և այլ հանգամանքներ: Մինչդեռ, ասենք, Թուրքիայի և Իրանի հայկական գաղութների գծով աշխատանքը այլ բնույթ ունի: Այդ երկրներում տիրող քաղաքական ռեժիմների պատճառով Սփյուռքի կո-

¹³⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 17:

¹³⁷ Տե՛ս «Հայրենիքի ձայն», 2 դեկտեմբերի, 1981 թ., № 49:

միտնի կապերը այնքան էլ ակտիվ չեն, կան բացասական կարգի նաև այլ գործոններ:

Չնայած կատինական Ամերիկայի երկրների հայկական գաղութների հետ ունեցած ակտիվ կապերին, Սփյուռքի կոմիտեին հարկադրված է հաճախակի վերանայել նրանցում իրականացվող իր աշխատանքի ձևերն ու մեթոդները՝ հաշվի առնելով աբազորեն փոփոխվող քաղաքական կացությունը:

Եվ, վերջապես, ԱՄՆ-ի հայկական գաղութի հետ տարվող աշխատանքներն այլ բնույթ ունեն, տարբերվում են մնացածներից: Գրա պատճառը ոչ միայն այն է, որ նա աշխարհի ամենահայաշատ գաղութն է՝ ավելի քան կես միլիոն հայությամբ, այլև այն, որ գտնվում է միջազգային իմպերիալիզմի միջնաբերդում և, չնայած դրան, ունի հայրենասիրական գործունեության լավ ավանդույթներ: Միևնույն ժամանակ, վերջին տասնամյակներում այն թևակոխել է ազգային կյանքի նկատելի զարթոնքի շրջան, շնորհիվ մերձավորարևելյան երկրների հայկական գաղթօջախներից այնտեղ արտագաղթած մտավորականության ջանքերի:

Ամերիկահայ գաղթօջախը հաճախակի հանդես է գալիս սփյուռքահայ կյանքի կազմակերպմանն առնչվող բազմաթիվ նախաձեռնություններով: ԱՄՆ-ի հայ ազգաբնակչության մեջ մեծ տոկոս են կազմում բարձր աստիճանի հասած մտավորականները, որոնք վերջին տարիներին սկսել են ակտիվություն ցուցաբերել ազգային կյանքի նկատմամբ: Այնտեղ է գործում սփյուռքի հայրենակցական միությունների մեծ մասը, ինչպես նաև ՀԲԸՄ կենտրոնական վարչությունը, իսկ վերջինս սփյուռքահայ ամենաբազմամարդ կազմակերպությունն է, և նրա անդամների զգալի մասը նույնպես գտնվում է ԱՄՆ-ում:

Հայկական գաղութների հետ Սփյուռքի կոմիտեի ունեցած կապերի ընդլայնման ու խորացման շնորհիվ այնտեղ տարվող մշակութային, պրոպագանդիստական ու հայրենասիրական աշխատանքների ոլորտի մեջ հետզհետե ավելի մեծ թվով հայ ազգաբնակչություն է ներգրավվում: Կապերի արդյունավետության մասին է վկայում նաև այն փաստը, որ տարեցտարի սփյուռքահայության նորահար հատվածներ ու խավեր են դուրս գալիս հակասովետական ուժերի ազդեցությունից և կանգնում Սովետական Վայաստանի կողքին: Ուստի բնավ պատահական չէ, որ վերջին տարիներին դաշնակցական մամուլը ուժեղացրել է

հարձակումները Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի դեմ: Ավելի հեռուն գնալով, այդ մամուլը փաստորեն հանդես է գալիս հայրենիք—սփյուռք մշակութային ու այլ կարգի կապերի դեմ, կապեր, որոնք խիստ կենսական նշանակություն են ստացել արտերկրի հայության համար, և առանց որոնց սփյուռքահայ մշակութային կյանքը կաղքատանա ու կզրկվի կենսատու ակունքներից: Սակայն պրակտիկան ցույց է տալիս, որ որքան սերտանում են հայրենիք—սփյուռք հարաբերությունները, որքան ընդլայնվում է տարագիր հայերի իմացությունը հայրենի իրականության մասին, այնքան ավելի պարզ ու որոշակի է դառնում հայության ազգային շահերի և դաշնակցության քաղաքականության միջև եղած խոր հակասությունն ու հակադրությունը:

Այժմ արդեն դժվար թե սփյուռքում գտնվի որևէ ողջամիտ մարդ, որը փորձի ժխտել այն ճշմարտությունը, թե հայկական գաղթօջախների գոյատևման և «սպիտակ ջարդի» դեմ մղվող պայքարի հաջողության գլխավոր գործոնը հայրենիքն է, աճող սերունդը հայրենիքով խանդավառելու: Կյանքը լիովին հաստատել է այն ճշմարտությունը, որ վերածնված հայրենիքը այն անփոխարինելի ու որոշիչ գործոնն է, որի միջոցով միայն կարելի է ապահովել գաղթօջախների առժամյա գոյությունը, արգելակել տարագիր հայության և հատկապես նրա աճող սերնդի ուժացումը: Պետք է ասել, որ սփյուռքահայ առաջադիմական մամուլը, հայրենասեր մտավորականությունը, հասարակականազգային գործիչները պատվով ու նվիրումով են կատարում իրենց հայրենասիրական պարտքը՝ մշտապես նոր սերունդը խանդավառում հայրենիքով, զարգացնում հայրենիքի ներշնչած ազգային հպարտության զգացումը: Այդ գործում նրանց մեծ օգնություն է կազմակերպում Սփյուռքի կոմիտեն, որպիսի հանգամանքը անկեղծորեն արձանագրում են սփյուռքահայ շատ գործիչներ: Ահա թե ինչ է գրում այդ մասին Եգիպտոսի հայկական Գեղարվեստասիրաց միության ղեկավար գործիչներից Ալիս Դեպոյանը. «Թիչ խոսք, որ բարձրորեն կգնահատենք Ձեր կոմիտեի նպատակաւայ գործունեությունը, որը կձգտի բազմալան միջոցներով ամրապնդելու հայրենիքի և սփյուռքի կապերը, զարգացնելու արտասահմանի հայության և հատկապես երիտասարդության սերն ու հավատքը մայր երկրի հոգեկան հարստությունների և հարազատ ժողովրդի արժանիքների հան-

դեպ: Ահա որքան կենսական նշանակություն ունի Ձեր կոմիտեի գործունեությունը սերունդների հայապահպանման գործում»¹³⁸:

Կատարված լայնածավալ աշխատանքների շնորհիվ սփյուռքը վերջնականապես փարվել է հայրենիքին, փարվել հարազատի անկեղծ սիրով, իսկ այդ սերը հայրենիքը ձեռք է բերել իր մեծագործություններով, իր առաջավոր գաղափարներով, դեպի իր տարագիր զավակներն ունեցած ջերմ ու հոգատար վերաբերմունքով: Ի պատասխան այդ հոգատարության սփյուռքահայ առաջադիմական կազմակերպություններն ու նրանց մամուլը ամենուրեք ամեն տարի արժանավայել կերպով, բազմամարդ հանդիսություններով նշում են Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության և Հայաստանում սովետական իշխանության հաղթանակի տարելիցները: Հայկական գաղթօջախների մեծ մասը մշտապես արձագանքում է մեր երկրում, մասնավորապես Սովետական Հայաստանում, տեղի ունեցող բոլոր կարևոր իրադարձություններին: Առաջադիմական կազմակերպությունները հանդիսավոր ժողովներով, մամուլով, ռադիոյով և այլ միջոցներով նշում են այն բոլոր կարևոր հոբելյանները, որ կատարվում են հայրենիքում: Նրանք դրական մեծ գործ կատարեցին հատկապես Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակի, ՍՍՀՄ կազմավորման 50-ամյակի և այլ առիթներով: Խիստ գնահատելի է նրանց դերը ՍՍՀՄ ներքին և արտաքին քաղաքականությունը պրոպագանդելու ուղղությամբ:

Ահա այս ամենը ձուլման արևկոթ օվկիանոսում մաքառող տարագիր հայությանը տալիս է գոյատևման կենսատու ավիշ և փարոսի նման լուսավորում նրա փրկության ուղի»:

¹³⁸ Տե՛ս «Սովետական Հայաստան», ամսագիր, № 10, 1976 թ., էջ 27:

ՎԵՐՋԱԲԱՆ

Ինչպես ցույց է տալիս մեր աշխատության ամբողջ շարադրանքը, հայ ժողովրդի Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվող հատվածի նկատմամբ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին երիտթուրքերի կուսակցության ու կառավարության կողմից իրագործված ցեղասպանությունից մի կերպ փրկված և իր պատմական հայրենիքից բռնագաղթի միջոցով աշխարհով մեկ ցրված սփյուռքահայությունը մշտապես ձգտել է վերադառնալ իր հայրենի օջախները, վերամիավորվել իր ժողովրդի հետ:

Իր գոյության հենց սկզբից սփյուռքահայության ճակատագրով մշտապես մտահոգվել է Սովետական Հայաստանի կառավարությունը՝ նրա հետ հաստատելով և հետևողականորեն զարգացնելով բազմաբնույթ կապեր, ինչպես նաև իրականացնելով նրա որոշ մասի հայրենադարձությունը: Սովետական իշխանության տարիներին տեղի ունեցած հայրենադարձության և հայրենիք—սփյուռք առնչությունների պատմության ուսումնասիրությունը ակնբախորեն վկայում է, որ տարագիր հայության փրկության իրական ու գլխավոր գործոնը մայր հայրենիքն է, Սովետական Հայաստանը: Այդ է պատճառը, որ սփյուռքահայ բոլոր առաջադիմական ուժերը մեծ նշանակություն և կարևորություն են տալիս Սովետական Հայաստանի հետ կապերի զարգացմանն ու ամրապնդմանը, ներգաղթի անընդհատ շարունակմանը:

Ինչպես վկայում են մեր կատարած երկարամյա հետազոտությունները, սովետական իշխանության տարիներին, կոնկրետ ասած, 1921—1982 թթ., սփյուռքից հայրենիք են ներգաղթել մոտ 168000 տարագիրներ, դառնալով Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության, հետևապես՝ ՍՍՀՄ լիիրավ քաղաքացիներ: Անհրաժեշտ է նշել, որ շնայած

մեր մանրակրկիտ պրպտումներին, այնուամենայնիվ հնարավոր չի եղել լիովին պարզել հայրենադարձների ճշգրիտ թիվը: Հատկապես հայրենադարձության առաջին փուլում տեղի ունեցած ներգաղթի վերաբերյալ տեղեկությունները խիստ պակասավոր են և, ինչպես նշել ենք իր տեղում, իրականում հայրենադարձների թիվը շատ ավելի է, քան արտահայտված է մեր կազմած աղյուսակում (տե՛ս էջ 105): Հետագա տարիներին նույնպես, զանգվածային հայրենադարձությունից բացի, մեծ թվով սփյուռքահայ ընտանիքներ անհատական կարգով հայրենադարձվել են Սովետական Հայաստան: Ուստի կարելի է ասել, որ սովետական իշխանության տարիներին մայր հայրենիքում իրենց հանգրվան են գտել 200 հազարից ավելի սփյուռքահայեր, ինչպես դա վկայում են մի շարք այլ աղբյուրներ: Թվական տեսակետից այնքան էլ մեծ չէ ավելի քան վեց տասնամյակի ընթացքում հայրենիք ներգաղթածների թիվը: Սակայն եթե նկատի ունենանք մեր հանրապետության տարածքային փոքրությունը, նրանում մշակելի՜ հողերի սակավությունը, բնակչության զգալի խտությունը, ներգաղթածների այստեղ ունեցած աճը և այլ հանգամանքներ, ինչպես նաև հայրենադարձության հսկայական քաղաքական նշանակությունը, ապա պետք է ասել, որ 20-ական թվականներին սկսված և առ այսօր շարունակվող այդ խրախուսելի իրադարձությունը սոցիալիստական կարգերի շնորհիվ մեր ժողովրդի ձեռք բերած մեծագույն նվաճումներից մեկն է, կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականության կենսագործման կոնկրետ վկայությունը:

Գաժան ճակատագրի բերումով շրկվելով իրենց հայրենի օջախներից և մեծ մասամբ իրավազուրկ վիճակում երկար տարիներ դեգերելով օտար ափերում, տարազիր հայերը հայրենիք վերադառնալուց անմիջապես հետո սովետական կառավարության կողմից ապահովվում են բնակարանով, աշխատանքով, ստանում սովորելու և իրենց բոլոր ընդունակություններն ու ձիրքերը զրևեկորելու լիակատար հնարավորություններ:

Ի պատասխան իրենց նկատմամբ կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության ցուցաբերած հոգատարության, հայրենադարձները ամենուրեք աչքի են ընկնում հայրենանվեր աշխատանքով, դառնում արտադրության առաջավորներ, գիտության ու մշակույթի ճանաչված գործիչներ:

Բնավ պատահական չէ, որ մեծ թվով հայրենադարձներ արժանացել են կառավարական պարգևների, ընտրվել իշխանության տեղական ու կենտրոնական օրգաններում: Այդ մասին հատուկ ընդգծվեց հայրենադարձների հանրապետական երկրորդ հավաքում (10 ապրիլի, 1966 թ., Երևան), որտեղ նշվեց, որ նրանց բացարձակ մեծամասնությունը ազնվորեն է աշխատում կոլտնտեսային ու սովխոզային դաշտերում, արդյունաբերության, շինարարության, տրանսպորտի և ժողովրդական տնտեսության մյուս բնագավառներում:

Արդյունաբերության, գյուղատնտեսության և մշակույթի բնագավառումներում աչքի ընկած մի խումբ հայրենադարձներ արժանացել են սոցիալիստական աշխատանքի հերոսի բարձր կոչման: Դրանք են՝ Երևանի Վ. Ի. Լենինի անվան մետաքսի կոմբինատի ջուլհակուհի Մաղկանուշ Գալեմտերյանը, Շահումյանի շրջանի XVIII կուսհամագումարի անվան կոլտնտեսության անդամ Ազնիվ Խորյանը, էջմիածնի շրջանի № 3-րդ սովխոզի այգեգործներ Գաբրիել Թամազյանը և Ամիր Առաքելյանը, Արտաշատի շրջանի Քաղցրաշենի կոլտնտեսության օղակավարուհի Նոյեմ Եղիազարյանը, Արարատի շրջանի Վանաշենի կոլտնտեսության օղակավար Պողոս Պողոսյանը, Արտաշատի շրջանի Այգեզարդի կոլտնտեսության անդամ Սիսե Կարապետյանը, Արտաշատի շրանցքի II տեղամասի պետ Վարսենիկ Սալխյանը, ՍՍՀՄ ժողովրդական արտիստուհի Գոհար Գասպարյանը:

Հանրապետության գիտահետազոտական հիմնարկներում, բուհերում, տեխնիկումներում, դպրոցներում, մշակույթի օջախներում նույնպես աշխատում են հազարավոր հայրենադարձներ, որոնցից շատերը ակադեմիկոսներ, դոկտորներ ու գիտության թեկնածուներ, հանրապետության վաստակավոր ուսուցիչներ են, ՍՍՀՄ և ՀՍՍՀ ժողովրդական արտիստներ, արվեստի վաստակավոր գործիչներ և այլն:

Միաժամանակ հարկ է նշել, որ վերջին տարիներին որոշ հայրենադարձ ընտանիքներ, տարբեր շարժառիթներով ու պատճառներով, ձգտում են մեկնել արտասահման, դրանով իսկ վնաս պատճառելով թե՛ իրենց անձնական ճակատագրին և թե՛ մեր ժողովրդի ազգահավաքման կենսական գործին:

Ինչպես վկայում են փաստերը, արտասահման բնակության մեկնողների մեծ մասը գնում է զխավորապես զարգացած կապիտալիստական երկրներ: Սակայն ընկնելով արտասահման,

նրանք անմիջապես բախվում են բազմաթիվ դժվարությունների հետ (բնակարանային, աշխատանքային, լեզվական և այլն): Ահա թե ինչու կարծեցյալ «դրախտ» մեկնողների մեծամասնությունն ապրում է խոր հիասթափություն ու զղջում և ձգտում է նորից վերադառնալ Սովետական Միություն: Նրանցից շատերը, համոզվելով իրենց կատարած սխալի մեջ, դիմում են սովետական կառավարությանը՝ նորից հայրենիք վերադառնալու խնդրանքով: Հայրենիքը մեծահոգաբար ներում է այդպիսիներին և թույլատրում վերադառնալ սովետական երկիր:

Հայրենադարձների բացարձակ մեծամասնությունը տոգորված է ջերմ հայրենասիրությամբ, անկեղծորեն նվիրված է սովետական հայրենիքին և ակտիվորեն մասնակցում է մեր երկրում ծավալված կոմունիստական շինարարությանը: Կարծում ենք, որ հայրենադարձների այդ հայրենանվեր գործունեության հետազոտությունը կունենա քաղաքական, գիտական ու գործնական կարևոր նշանակություն: Ուստի սովետահայ պատմաբանների խնդիրներից մեկը պետք է լինի նրանց կյանքի և գործունեության ուսումնասիրումն ու լուսաբանումը:

О. У. МЕЛИКСЕЯН

ВЗАИМОСВЯЗЬ РОДИНА—СПЮРК
И РЕПАТРИАЦИЯ
(1920—1980 гг.)

Резюме

В течение многих веков Армения была ареной опустошительных набегов и завоеваний со стороны иноземных захватчиков. И не случайно, что ее история богата многими страницами героической борьбы народа за свою свободу и независимость.

Разорение Армении и физическое истребление армянского населения усилились и приняли систематический характер с начала XVI века, когда за обладание ею столкнулись интересы двух агрессивных соседних империй—Османской Турции и Сефевидской Персии. Почти полутора столетия Армения была местом ожесточенных завоевательных войн, которые в 1639 г. завершились ее разделом между ними. Большая, западная часть Армении перешла под владычество Турции, восточная—Персии. В 1828 г., по Туркменчайскому договору, Восточная Армения вошла в состав России и часть армянского народа, навечно связав свою судьбу с русским народом, благодаря Великой Октябрьской социалистической революции получила возможность национального и социального возрождения.

Однако большая часть армянского народа, оставшаяся под игом турецкой деспотии, продолжала подвергаться постоянным жестоким гонениям, депортации и геноциду. Последовательно осуществляя свою реакционную пантуркистскую-написламскую политическую программу, турецкие шовинисты не останавливались ни перед чем, чтобы истребить армянский народ на его исконных исторических землях и окончательно освоить их. После султана Абдул Гамида особенно оголтелыми проводниками этой кровавой политики явились младотурки. Воспользовавшись сложной обстановкой в период первой мировой войны, они осу-

шествии массовый геноцид армянского населения, проживавшего в Западной Армении и в других областях Турции.

В результате резни армян и насильственного переселения их в пустынные области Сирии и Месопотамии, Западная Армения полностью лишилась своего коренного армянского населения. Истребление турецкими варварами более чем полутора миллионов армян явилось первым массовым преступлением против человечества в XX веке — предвестником страшных преступлений гитлеровского фашизма.

Сотни тысяч армянских детей, женщин и стариков, чудом уцелевших от турецкого ятагана и изгнанных из своих родных очагов, пройдя тяжелыми дорогами гибели и скорби, рассеялись по многим странам мира и тем самым значительно расширили армянскую диаспору (Спюрк).

К сожалению, несведущие в истории армянского народа, склонны рассматривать зарубежных армян в качестве политических эмигрантов. Однако общезвестно, что эмигрантами в большинстве случаев являются лица, покидающие свою родину по политическим мотивам. Основная же часть двухмиллионного армянского Спюрка — одной трети всего армянского этноса — состоит не из политических эмигрантов, а из безвинных жертв организованного султанами, младотурками и кемалистами геноцида армян. И сакральной мечтой армян Спюрка было и есть возвращение на свою историческую родину, единение с материнской землей.

Эти уцелевшие осколки западноармянского населения, скитавшиеся на чужбине после первой мировой войны, вначале лелеяли надежду, что государства Антанты создадут им возможности для возвращения на родину. Однако надежды эти оказались иллюзиями. Для обманутых и покинутых западными державами трудящихся масс зарубежных армян единственной и реальной опорой стала победившая в ноябре 1920 г. в Восточной Армении советская власть.

Коммунистическая партия и Советское правительство Армении, с помощью РКП(б) и братских республик, приняли конкретные меры по созданию необходимых условий для жизни и деятельности западноармянских беженцев, нашедших пристанище в республике, а также по оказанию всесторонней поддержки и помощи зарубежным армянам.

С первых же шагов своей деятельности Советское правительство Армении стремилось наладить связи с зару-

бежными армянами и по мере возможности организовать репатриацию их определенной части в Советскую Армению. Исследованию этих связей и истории репатриации, осуществленной за годы советской власти в Армянскую ССР, и посвящена данная монография.

Впервые в своей многострадальной истории, армянский народ благодаря советской власти, с помощью братских народов и, в первую очередь, великого русского народа, получил возможность объединения на своей новой, социалистической родине. Тем самым было положено начало воссоединению по воле судьбы рассеянных по свету армян в Советской Армении, консолидации и развитию армянской социалистической нации. В этом нашла свое конкретное воплощение ленинская национальная политика Коммунистической партии в отношении многострадального армянского народа.

Репатриация армян рассматривается в работе по трем основным этапам. Первый этап охватывает 1921—1936 гг., когда на родину возвратилось, примерно, 42286 зарубежных армян. Второй этап—1946—1948 годы. За этот сравнительно короткий промежуток времени произошла самая большая и массовая иммиграция зарубежных армян, известная под названием великой репатриации. Всего за три года из 12 стран мира в Советскую Армению переселилось 20646 семей или 89750 человек. В 1950-ых годах в индивидуальном порядке на родину иммигрировало более 4 тысяч зарубежных армян. Третий этап репатриации начался в 1962 г. и продолжается по сей день. За период 1962—1982 гг. из 30 стран репатрировалось 6795 семей или 31920 человек. Кроме этого, за годы советской власти разными путями с чужбины на родину вернулись еще несколько тысяч армян. Таким образом, число репатриантов составило более 200 тысяч человек. Советское правительство предприняло энергичные усилия и вложило огромные средства в дело обеспечения репатриантов жилищами и работой, создания для них благоустроенной жизни, вовлечения в общественно-политическую жизнь страны в качестве полноправных граждан страны Советов.

В области установления и развития связей родины с армянской диаспорой важную роль сыграл основанный в сентябре 1921 г. Комитет помощи Армении.

В настоящее время эту деятельность продолжает созданный в июне 1964 г. Комитет по культурным связям с зарубежными армянами, содействующий как процессу их сплочения вокруг Советской Армении, пропаганде ее социально-экономических и культурных достижений, так и борь-

бе против ассимиляции, развитию прогрессивных традиций национальной культуры.

Вместе с тем, на основе многочисленных фактических материалов, разоблачается корыстная и реакционная политика империалистических держав, двуличие и беспомощность Лиги наций в отношении армянских беженцев, как и предательская деятельность дашнаков, враждебно настроенных к советской власти и репатриации армян. Наряду с этим, по достоинству высоко оценена деятельность великого гуманиста Фр. Нансена в защите армянских беженцев.

Освещение истории связей советской родины с армянскими колониями зарубежных стран и репатриации армян ярко выявляет заботу о них Коммунистической партии и Советского государства, важную и плодотворную деятельность прогрессивных организаций зарубежных армян в деле национального сохранения и утверждения связей с родиной.

Все это является неопровержимым свидетельством того, что основным и главным фактором спасения армян, проживающих на чужбине, является родина-мать—Советская Армения, достигшая небывалого расцвета в единой братской семье народов СССР.

HOVIK U. MELIKSETIAN

THE ARMENIAN MOTHERLAND AND DIASPORA: RELATIONS AND REPATRIATION (1920—1980)

Summary

Situated on the borderline of Europe and Asia, Armenia has been the object of devastating raids and conquests on the part of foreign invaders for many centuries. And the fact that its history is rich in a number of heroic events manifesting the continuous struggle of the Armenian people for freedom and independence is not entirely accidental.

The destruction of Armenia and the annihilation of its population became especially obvious and acquired systematic character starting in the very beginning of the 16th century. That was the period when the interests of two aggressive neighbouring countries, namely Ottoman Turkey and Sefevid Persia, clashed. For about a century and a half Armenia had been the scene of violent battles between them that came to an end only in 1639. As a result Armenia was divided between these two countries. The western and larger part of its territory fell under the dominion of Turkey, and the eastern part remained under Persian rule. In 1828 East Armenia was attached to Russia by the Treaty of Turkmenchai. Later on as a result of the Great October Socialist Revolution, the Armenian people gained an opportunity for national and social rebirth.

The greater part of Armenians, remaining under the Turkish yoke, were severely persecuted, deported and massacred. Consistently carrying out their reactionary pan-

Turkish and pan-Islamic political program, the Turkish chauvinists stopped at nothing to destroy the Armenian nation on the territory of its age-old motherland and annihilate it once and for ever. Following Sultan Abdul-Hamid, it was the party and the government of the Young Turks that most shamelessly carried out this murderous policy. Taking advantage of the complicated circumstances that arose during World War I, they perpetrated the ruthless genocide of the Armenian people in West Armenia and other regions of Turkey.

As a result of this horrible massacre of Armenians and their forced deportation to the desert areas of Syria and Mesopotamia, West Armenia was completely deprived of its native Armenian population. The massacre of more than one and a half million Armenians at the hands of Turkish barbarians was the first mass crime against humanity in the 20th century. That was actually the presage of the horrible crimes of Hitlerian fascism.

Hundreds of thousands of Armenians who have survived this horrible genocide by some miracle, and who have been deported and undergone the path of sorrow and death, have been scattered all over the world, thus extending the Armenian Diaspora. Unfortunately, people unaware of the Armenian nation are inclined to consider foreign Armenians as political emigrants. In fact, emigrants in most cases are people who leave their homeland on political grounds. But the main part of the Armenian Diaspora, numbering two million souls (one third of the whole Armenian nation) consists of people who have emigrated not because of their political convictions, but as victims of the horrible genocide organized by the sultans, Young Turks and Kemalists. And the innermost desire of the Armenians abroad has always been and still is to return to their motherland and feel the thrilling touch of their native soil.

These splinters of the West Armenian population wandering in foreign lands after World War I cherished at first the hope that the states of the Entente would organize

and support their return to the motherland. But their hopes were crushed. It was the Soviet power only, established in East Armenia in November 1920, that turned out to provide genuine support for the Armenians of the Diaspora.

The Communist party and the Soviet government of Armenia, backed by the RCP (of Bolsheviks) and the other Soviet republics took concrete measures to establish normal conditions for life and creative work for the refugees who found shelter in Soviet Armenia.

From the first days of its existence the Soviet government of Armenia did its best to maintain good relations with Armenians abroad and to organize their gradual repatriation to Soviet Armenia. It is the history of repatriation and these relations that the present monograph is devoted to.

The Armenian nation for the first time in its long suffering history was given the opportunity of coming together on the territory of its new socialist fatherland. This opportunity was achieved by the Armenian people only due to the Soviet power and due to the help and support of other fraternal peoples and the great Russian people in particular. This was the reunification of Armenians who had been scattered all over the world by the cruel hand of fate. This was the beginning of the consolidation and development of the Armenian socialist nation. This revival of the Armenian nation was the embodiment of the national policy of the Communist party elaborated by V. I. Lenin.

The present investigation deals with the three main stages of the repatriation of Armenians. The first stage covers the period from 1921 to 1936 when 42,286 Armenians repatriated from abroad. During the years of the second stage, a comparatively shorter period (1946—1948), the so-called great repatriation took place when a great number of Armenians repatriated from various countries. During this short period of three years 20,646 families or 89,750 people repatriated to Soviet Armenia. In the 1950-s more than 4 thousand Armenians returned to their native land individually. The third stage began in 1962 and is being continued till now. 6,795 families or 31,930 people from 30 different countries repatriated during the period of 1962—1982. If we take into consideration that many Armenians returned to their motherland in other ways, we may say that altogether in 1921—1982 Soviet Armenia has admitted more than 200,000 repatriants. The Soviet government applied great

energy and effort and large sums of money to the cause of supplying the repatriates with jobs and dwellings. They were involved in the socio-political life of the country, enjoying equal rights together with the citizens of the country of Soviets.

In establishing and developing contacts with the Armenian Diaspora, the Committee of Help to Armenia, established in September 1921, played a very important role.

At present this role is carried out by the Committee for Cultural Relations with Foreign Armenians in their support to Soviet Armenia, to the propaganda of social, economic and cultural achievements of Soviet Armenia, as well as to the struggle against assimilation and the development of progressive traditions of the national culture.

Along with this, on the basis of quite a number of facts, the mercenary and reactionary policy of imperialist states, the double-faced helplessness of the League of Nations, the treacherous activities of the Dashnaks hostile to the Soviet power and the repatriation of Armenians are all discussed in the present paper. On the other hand, the activities of the great humanist Fr. Nansen in the cause of support of Armenian refugees are highly appreciated in the paper.

The elucidation of the history of the relations between Soviet Armenia and Armenian colonies in various foreign countries on the one hand the repatriation of Armenians on the other reveals the incessant care of the Communist party and the Soviet state towards them and fruitful activities of progressive organizations of Armenians abroad.

All this undeniably manifests that the main and basic factor for the salvation of Armenians living abroad is their motherland—Soviet Armenia—which has achieved unprecedented growth in the united fraternal family of the peoples of the Soviet Union.

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

- Աբարտյան Գրիգոր 196
 Աբգարյան Մովսես 202
 Աբղալյան Սեդրակ 197
 Ադրուպե Ռ. 304
 Աբղուլ Համիդ 38, 39
 Աբեղյան Մ. 152
 Աբրահամյան Ա. Գ. 14
 Աբրահամյան Խաչիկ 197
 Ադամյան Ազատ 194
 Ադամյան Օճեիկ 416
 Ադդարյան Գառնիկ 386, 422, 423, 442
 Ազանիֆյան Միհրան 193
 Ազատյան Հ. 68
 Ազիզյան Վաչիկ 437
 Ազնակյան Եղեիկ 197
 Աթմանյան Մատի 386, 422
 Ալիխանյան Ավետիս 370, 386, 422, 443
 Ալթունյան Առն 192
 Ալիխանյան Ս. Տ. 47
 Ալմուխյան Ժան 419
 Ալպոյանյան Ա. 20
 Ակիշյան Երվանդ 389, 392
 Ահարոնյան Գ. 21
 Ահարոնով Ռ. 209
 Աղամալյան Գ. 233
 Աղայան Մ. Պ. 11
 Աղաջանյան, կարդիմալ, 345—348
 Աղաջանյան, Բահանա, 259
 Անաոյան Հր. 183, 184
 Անեմյան Արսեն 199
 Անեմյան Հակոբ 201
 Այվազյան Հ. Ռ. 256
 Այվազովսկի Հովհաննես 416
- Անդրանիկ 161
 Անդրեասյան Անդրանիկ 20, 53, 422, 423
 Անտելեպյան Գ. 97
 Անտոնյան Ա. 33, 35
 Աշեյան Ա. 196
 Աշեյան Հակոբ 337
 Աշոյան Անդրանիկ 386
 Առաքելյան Ամիր 499
 Առաքելյան Գուրգեն 389
 Առաքելյան Ս. 250, 304
 Առաքելյան Սուրեն 99
 Ասատրյան Գր. 208
 Ասատրյան Երանոսի 244
 Ասատուրյան Մեծոպ 194, 195
 Ասլանյան Վահան 224
 Աստվածատրյան Բ. Ա. 178, 193, 195, 200, 207, 239
 Աստրալ 135
 Ասրյան Ռ. 208
 Ավագյան Գ. Ե. 10
 Ավետիսյան Ավետիս 405
 Ավետիսյան Սահակ 197
 Ավետիսյան Օճեիկ 417
 Ավետիֆյան Հակոբ 398
 Ատտոլ 132
 Ատուր Սարգիս 195, 196
 Արաբյան Ազնիվ 429
 Արամալիս 357
 Արամյան Հակոբ 198
 Արզումանյան Մ. 22
 Արխանյան Մալքեդ 202
 Արծրունի Վ. 152
 Արմիս (Մսիրյան Արմենակ) 416
 Արսլանյան Գևորգ 201

Արաւմեայան Պողոս 194
Արտունի Ս. Մ. 197

Բարայան Ս. Հ. 256
Բարսեղյան Մ. 19
Բարսեղյան Ներսես 382
Բալայան Հ. 97
Բաղդասարյան Ս. 366
Բաշալյան Լ. 136
Բարակյան Զինաիդա 244
Բարակյան Վարդան 244
Բարաղամյան Թորոս 199
Բարիկյան Եսայի 324
Բարկովսկի Ա. 304
Բարսեղյան Հովհաննէս 197
Բեկզադյան Ալ. 54
Բենհեղդին Շաֆիր 29
Բերզման Կ. 136
Բերիա 170
Բեֆերյան Գրիգոր 266
Բենակունի Մկրտիչ 197
Բոգոմոլով Ա. 209
Բոգոյան Արշամ 394
Բոյաջյան 100
Բոյաջյան Աբրահամ 309
Բանար Քրավթ 311
Բոյուսով Վալերի 37
Բուդարին 202

Գաբրիելյան Գաբրիել 193, 385
Գաբրիելյան Հ. 18
Գազազյան Հարություն 194
Գալամբեարյան Արշակ 193
Գալայեան Արմենակ 193
Գալայեան Մ. Թ. 197
Գալեմտեղյան Մաղկանուշ 449
Գալեմբեարյան Զարունի 423
Գալընյան Հրաչ 198
Գալեյան Հայկ 194
Գալստյան Գ. 18
Գալսեղյան Հակոբ 194, 238
Գառզու (Զուլումյան Գառնիկ) 387, 416, 442
Գասարեան Արտաշես 194
Գասպարյան Գոհար 449
Գասպարյան Նղիա 416

Գասպարյան Ս. Ս. 13, 14, 18, 256, 278
Գասպարով Ն. Վ. 209, 252, 304
Գավաթ Արթին (Գավուխյան Հարություն) 417
Գատրիկյան Էննիկ Արթին 336, 337
Գարագաշ Հայկ 197, 338
Գարագաշյան Եգնիկ 194
Գահանյան Կ. 196
Գաֆեսյան Հովհաննէս 196
Գեղամ Սևան 19
Գրլընյան 168
Գրիբոնս Լերբերտ 37
Գյուրջյան Հակոբ 415
Գյուտյան Միշա 413
Գոլանեյան Փ. 200
Գողթունի Գ. 97
Գոնայան 193
Գորվին Ջոն 143
Գրանյան Հովհաննէս 202
Գրիգորյան Գրիգոր 430
Գրիգորյան Հրանտ 192
Գրիգորյան Ս. 233
Գույումեան 163
Գույումեան Հակոբ 242
Գուշակեյան Մարտիրոս 430
Գուշյան Բյուզանդ 202
Գևորգ Չ 201, 342
Գևորգյան Գ. 208
Գևորգյան Գ. Ս. 178, 256
Գևորգյան Լ. 304

Դավախյան Կ. 15
Դանիելյան Վահան 194, 215
Դանիլ Վարուժան 31, 402
Դավթյան Արիկն 171
Դավթյան Դավիթ 193, 194
Դավթյան Վահագն 366, 408
Դարբիեյան Աղասի 385
Դարբիեյան Արտակ 194
Դարբիեյան Գրիգոր 193
Դախայան Վահան 200
Դեբրուկեր 133, 135
Դեմիրեյան Գ. 152, 183, 184
Դեմիրեյան Կ. Ս. 440
Դեյիրմենեյան Արամ 202

Դեպոյան Ալիս 445
Դյուպուի Չարլզ 132
Դոլաբջյան գերդաստան 243
Դպիրյան Հայկ 171
Դրամբյան Ս. Ս. 17
Դուրգերյան Հովն. 65, 97, 124, 125
Դաւրյան Լին 419
Դևեյան Հրանտ 192, 337, 338

Եագուպյան Ավետիս 192
Եալընըզյան Դուրգեն 196
Եալըն 351
Եանեկյան Ոսկինե 197
Եափունեյան Ազատ 337
Եղիգարյան Գևորգ 194
Եղիգարյան Նոյեմ 449
Եղիշե Չարենց 355, 356
Եղզապյան Հովսեփ 192
Եսայան Չապել 415
Երանյան Միքնա 224
Երեցյան Պարույր 418
Երզնկյան Ար. 54, 83, 97, 101, 115, 124, 125, 141, 152, 158
Երկաթգործյան Հարություն 203
Երմոշին Պ. 260, 304
Երենկյան Փանոս 193
Երոֆեև Վ. 257, 304
Երովան 31
Երևանյան Գ. 20
Եուսուֆյան Տիրան 202

Զանիկյան Տիգրան 265
Զայցև Գ. 209, 226, 304
Զայցև Վ. 209
Զատիկյան Հակոբ 376
Զարդարյան Արամ 385
Զարդարյան Հրաչ 422
Զարդարյան Ռաֆեն 31
Զարյան Նվարդ 416
Զարյան Ռուբեն 389
Զարոբյան Յա. Ն. 252, 261
Զենին 209
Զեֆի 34
Զոլոպյան Սարգիս 199
Զոհրաբյան 349
Զոհրապ Գ. 31

Զոբյան Իսախել 199
Զոբով Ա. 304

Էլեզյան Եփրեմ 192
Էլմեսեկյան Աբրահամ 202
Էլշիրեկյան Հ. Մ. 10, 11
Էնկ Սուֆեր 353
Էնվեր 27, 29
Էպպերյան Սարգիս 196
Էֆմեֆեյան Պողոս 202
Էֆշիյան Կարապետ 202
Էֆեյան Պարզև 202

Փաղևոսյան Ա. Ե. 16
Փաղևոսյան Նղ. 152
Փաղևոսյան Թ. 196
Փաղևոսյան Մ. 233
Փալալյան Պ. 304
Փալեաթ 27, 29—31, 38
Փամազյան Գաբրիել 449
Փամանյան Ալ. 112
Փաշեյան 168
Փաշեյան Կարապետ 201
Փաշայան Էլիզ 419
Փարայան Մարտիրոս 197
Փեյալյան Սիսակ 337
Փենֆեարյան Սարգիս 193
Փեռդիկ 27, 40, 41, 53
Փեֆեյան Վահան 423, 439
Փիլեպյան Պերն 386
Փիրեաֆյան Միհրդատ 197
Փիլասոնցի Հովհաննէս (Հարությունյան) 402
Փյուֆեկեկյան Ռենիամին 385
Փոմա Ալ. 124, 132—135
Փոյնքի 37
Փոնունց 65
Փոսունյան Լ. 233
Փորեյան Հովհաննէս 196
Փոփալյան Բյուզանդ 417
Փոփեյան Աբրահամ 193
Փոփեյան Էդվարդ 389
Փոփուզյան Հ. Ն. 16, 17
Փրյանց Հակոբ 192
Փարսունեյան Հովսեփ 198
Փարսունեյան Հովիկ 379

Թուրունջյան Վազգեն 419
Թուրումնյան Կարապետ 194
Թովմանյան Խաչիկ 193
Թովմայան Սամվել 387
Թովմանյան Հովհ. 152, 154, 378, 413, 414
Թևանյան Խաչիկ 224

Ժամկոչյան Աղասի 194, 238
Ժերանյան Ռիչար (Խաչատուր) 386, 416, 417

Իգեն Ա. 173
Ինճեյան 193
Ինճեյան Խորալը 193
Իշխանյան Լյուսի 419
Իսագուլով 209
Իսահակյան Ավետիք 157, 183
Իսաև Ռոման (Եսայան Ռոմանոս) 197

Իսկանդարյան Ա. 304
Իսկանդարյան Վարդգես 337
Իսպիրյան Հովհաննես 199
Իսրայելյան Երվանդ 194

Լենին Վ. Ի. 47, 66, 101, 234, 378, 417—419, 440

Լեո 27, 152
Լեփեճյան Պ. 196
Լեփսիուս Իոհաննես 32, 33, 37, 38, 40

Լիբկենիտ Կարլ 37
Լյովիչկին 209
Լոմակին Յա. 209
Լուսին Ամարա 419
Լուսինյան Հրաչ 430

Խալեյան Ե. Մ. 11
Խալիլ 29
Խանգուլով Վ. 209
Խանենց Գալուստ 423
Խանգադյան Ջատիկ 387, 443
Խանգադյան Սերա 389
Խաննյան Պետրոս 196
Խանջյան Գրիգոր 437
Խաչատրյան Անարոն 193

Խաչատրյան Արամ 183
Խաչատրյան Հ. 208
Խաչատրյան Մաթևոս 235
Խաչատրյան Ռ. Ն. 15
Խաչատուրյան Արշակ 199
Խաչիկյան Ա. 304
Խաչիկյան Մարտիրոս 193, 385
Խարմանդարյան Ս. Վ. 10
Խոնասարյան Մանիկ 197
Խոտրյան Ազնիվ 449
Խորմյան Ա. 208
Խրլոպյան Գ. 18
Խրլոպյան Տիգրան 193
Խոլզգարյան Ս. 10
Խուրշադյան Լ. Ա. 14

Մադիկյան Վ. Հ. 178
Մառուկյան Ա. 21

Կալիտա Ի. 294, 303, 304
Կամսարական Գարիա 386, 416
Կամսարական Սպանդարտ 159
Կաշեն Մարտիկ 37
Կապուտիկյան Ս. 19
Կասյան Ս. 63, 152
Կասումյան Ջհանգիր 224
Կատարյան Ք. 208
Կարաբաշյան Ավետիս 385
Կարապետյան Արշակ 207
Կարապետյան Գրիգոր 194
Կարապետյան Հ. Ս. 11
Կարապետյան Մ. 208
Կարապետյան Ջորջ 196
Կարապետյան Սիսև 449
Կարապետյան Ս. Կ. 178
Կարիկյան Եսայի 307, 308
Կարևյան Սուրեն 193
Կարմիրյան Հայկ (Հաչի Հայկ) 336
Կեննյան Անդրանիկ 195
Կեցոյան Կարպիս 203
Կիտուր Արսեն 77, 78
Կիրակոսյան Ալիսիա 386, 421, 423
Կիրակոսյան Ա. Մ. 252
Կիրակոսյան Ջավեն 387
Կիրակոսյան Թադևոս 203
Կիրակոսյան Պոլ 416

Կիրակոսյան Ջ. Ս. 16, 37
Կիրիկ Վ. 209
Կլիմով 209
Կյուլպենկյան Գալուստ 410
Կյուլպենկյան Հարություն 336, 337
Կյուլպենկյան Ռոպեր 387, 410
Կյուրեղյան Արմենակ 197
Կյուրենկյան Հ. 200
Կոկիճոս Պ. 17
Կոմիտաս 31, 378, 387, 414
Կոստանդինյան Ալեքսանդր 194
Կոստանյան Ա. 97
Կոստանյան Վահան 197
Կոստրոմին Լ. 304
Կրյուչկով 209
Կուժունի Հարություն 386
Կուլաժենկով 209
Կուպրին Օլեգ 437
Կուրտիկյան Ս. 19
Կենեբրյան Հովհաննես 199
Հարեկյան Գրիգոր 338
Հադիկյան Հարություն 380
Հագարյան Հարություն 387
Հախումյան Սեմյոն 437
Հակոբյան Ա. Մ. 10, 11, 63
Հակոբյան Գևորգ 416
Հակոբյան Հ. 16
Հակոբյան Հովհ. 10
Հակոբյան Ռ. 208
Հակոբջանյան Հ. 208
Համազասպյան Վ. Ե. 366, 389, 408, 414, 437
Համալյան Գուրգեն 193
Համաստեղ 370
Համբար Գավիթ 198
Համբարձումյան Հրանտ 190
Համբարձումյան Ս. 54, 101, 125, 128, 152
Համբարձումյան Վ. Հ. 414, 437
Հայրապետյան Լ. Ե. 256
Հանչեբյան Մարգարիտ 357
Հանոի Պաուպի (Հանրի Բարբի) 26, 37
Հարուք Նիլշե 419
Հարությունյան Գրիգոր 192

Հարությունյան Հ. 208
Հելվանյան Հարություն (Արքուր) 21
Հինայելյան Ա. 208, 229
Հիտոյան Գևորգ 193
Հովակիմյան Գ. Ռ. 181
Հովհաննես Ասպետ 313—315
Հովհաննեսիսյան Ալ. 208, 349
Հովհաննեսիսյան Աշ. 13, 54
Հովհաննեսիսյան Գ. Ա. 181
Հովհաննեսիսյան Գ. Հ. 252, 304
Հովհաննեսիսյան Ե. 304
Հովհաննեսիսյան Խաչիկ 198
Հովհաննեսիսյան Հ. Վ. 252
Հովհաննեսիսյան Հրաչ 196
Հովհաննեսիսյան Հրաչյա 389
Հովհաննեսիսյան Ե. Հ. 16
Հովհաննեսիսյան Ս. 196
Հովհաննեսիսյան Սուրեն 377
Հովհանյան Պետրոս 200
Հովսեփյան Հ. Ա. 256
Հրանտ Սամվել 357

Ղազարյան Կարպիս 416
Ղազարյան Հրաչ 405
Ղազարյան Մուրատ 193
Ղազարյան Ռ. 208
Ղազարյան Սոնա 419
Ղասաբյան Գ. 17
Ղավամն Սալբանե 335
Ղարաբաշակյան Մարտիրոս 235
Ղարախանյան Հովսեփ 197
Ղարիբջանյան Լյուդվիգ 437
Ղարիպյան Արմեն 192
Ղոնքարջյան Հովհաննես 244
Ղուկասյան Անդրանիկ 171
Ղուկասյան Շ. 336
Ղուրուպսյան Բաբկեն 196

Ճաննիկյան Ալյեքս 387
Ճեպենյան 193
Ճեպենյան Ռոբերտ 383, 385, 430
Ճերանյան Արուսյակ 197
Ճերանյան Ղազարոս 214
Ճերենյան Միսաֆ 193
Ճերենյան Վահրիկ 192, 226

Ճրոյան ձեւուն 196
Ճիվանյան Հովհաննէս 199
Ճյուհերյան Երվանդ 415

Մագլրմյան Պարույր 193
Մաքեոսով Ի. Ի. 178
Մալեզյան Վահան 415, 423
Մալխասյան Ստ. 152
Մալումյան Տիրան 193
Մալումյան Վահրամ 199
Մախյան Հարություն 193
Մակգոնալդ Մարգոլիս 136, 138
Մակինտոշ Ռիլյամ 137
Մակինցյան Պ. 54, 68
Մանաոյան 168
Մանաոյան Հովհաննէս 192
Մայեր 138
Մանանդյան Հ. 152
Մանաս Սեակ 443
Մանասերյան Լ. Պ. 256
Մանվելյան Ազամ 192
Մանուկյան Ալեք 409
Մանուկյան Ս. 208
Մանուշակյան Փետր 212, 213, 235
Մանուշյան Միսաք 171, 423
Մավյան Միհրան 194, 382, 386
Մավյան Սարի 417
Մավյան Վահրամ 387
Մատեյան Հարություն (Արթին) 192, 443
Մարգարյան 193
Մարգարյան Գ. 196
Մարգարյան Երվանդ 192
Մարմարյան Հանրի (Փետր) 194
Մարջանյան Հ. Հ. 178
Մարտիկյան Ջորջ 260, 270, 332
Մարտիկյան Ս. 152
Մարտիրոսյան Ա. Ս. 366
Մարտիրոսյան Գ. Ա. 252
Մարտիրոսյան Հակոբ 196
Մարտիրոսյան Հարություն 429
Մարուխյան Մանուկ 168
Մելիք-Ազամյան Արտ. Ալ. 178
Մելիք-Հովսեփյան Ս. 97
Մելիքյան Ռ. 152
Մելիքյան Վ. 304

464

Մելիք Ռուբեն 423
Մելիքսեփյան Հ. Ռ. 11, 12, 64, 70
Մելիքսեփյան Վ. Գ. 11
Մելիքոնյան Հ. 208
Մելիքումյան Կ. 304
Մելիքումյան Մ. 366
Մեծատուրյան Լևոն 193
Մեհրապյան 193
Մեսրոպ Լևոն 415
Մեսրոպ Մաշտոց 414
Մեսրոպյան Մեսրոպ 192
Մեսրոպյան Միհրան 194
Մեվլան Ջալի Ռիֆաթ 29
Մեկերյան Հարություն 198
Մեկրապետյան Փետր 193
Միգիստ Շյուբի 29
Միհասյան Միհրա 416
Միհասյան Ն. 233
Միրզաբաբեկ 209
Միրիմանյան Արամ 197
Միրիմանյան Արմեն 197
Միքայելյան Կ. 366
Միքայելյան Կարեն 159, 161
Մյասնիկյան Ալ. (Ալ. Մարտունի) 13, 54, 55, 57, 80, 153, 309, 318, 319
Մնացականյան Բավական 437
Մնդիկյան Մարտա 417
Մնձուրի Հակոբ 402, 423
Մոլոտով Վ. Մ. 173
Մոսիկյան Խ. Ա. 256, 270, 271, 304
Մովսիսյան Ս. Հ. 252
Մորգենթաու Հենրի 29, 38, 40
Մոսկովյան Աստ. 54, 68, 82, 84, 97, 108, 125
Մսրլյան Չ. 21
Մսրլյան Մ. 21, 192
Մսրյան Պերն 270
Մուրաֆյան Ջարեն 386, 416, 417
Մուսայելյան Արամայիս 161
Մուրադյան Անգլին 419
Մուրադյան Գ. 208
Մուրատյան Սամվել 201

Յազչյան Հովհ. 353
Յազվեցկի Վալերի 37

Յակովլև 209
Յափունյան Ավետիս 430
Յուրունյան Անդրանիկ 194
Յուսուֆյան Դանիել 193

Նագարյան Բաբույ 356
Նագարյան Գառնիկ 204
Նագրմ 27, 29
Նաթրյան Պողոս 337, 338
Նաիրի Ժիրայր 386
Նալպանտյան Հակոբ 199
Նահապետյան Նահապետ 192
Նահարյան Նուպար 192
Նահագոյսյան Ա. 304
Նանսեն Ֆրիտլոֆ 22, 122, 125—134, 136—151
Նար-Դոս 152
Ներկարարյան Վ. Ն. 10
Ներսիսյան Բ. Ա. 178
Ներսիսյան Մ. Գ. 37
Ներսոյան Հակոբ 193
Նիկիֆորով 304
Նշանյան Պետրոս 196
Նոսկով Լ. 304
Նովիկով Կ. 304
Նորատունկյան Գ. 144, 310
Նորիկյան Բենիամին 370

Շադունց Ս. 97, 101
Շանգելյան Ար. 65
Շահինյան Ա. 304
Շահնագարյան Ա. 208
Շահնագարյան Գ. 209
Շահապազ Ստեփան 198
Շահվերդյան Գառնուշ 54, 90, 92—94, 152, 312, 313, 318
Շապուրին Ա. 209
Շառլ Ազնաուր 419
Շառլան Խաչո 193
Շեղակ 259
Շեֆեթյան Հայկ 271, 332
Շիշիկյան Պարունակ 244
Շիրազյան Արա 389
Շիրակյան Թոռնիկ 202
Շլուկյան Մ. 243
Շնյուկով 209

Շերբակով Ի. 304
Շումյացկի Բ. 99
Շուտով 209

Ոսկերիչյան Մանուկ 195
Ռբրունի Ջարեն 386, 422

Չարլզյան Կարապետ 195, 196
Չարլզյան Հրանտ 196
Չանգալյան Ջեմա 197
Չարխըտյան Կոստան 199
Չարչյան Բ. 208
Չարչյան Չ. 208
Չաբրով Հակոբ 193
Չաբչյան Ավետիս 270
Չաբչյան Առաքել 194
Չեպկյան Հայկ 192
Չերեխե Ն. 209
Չերչիլ Ռիչեստոն 80
Չեֆչեյան Ավագ 192
Չիքերի Գ. Վ. 126, 143
Չոլակ Հարություն (Չոլակյան) 417
Չոպանյան Արշակ 157, 185, 415, 423
Չոբեֆչյան Փետր 187, տե՛ս Փետր 2
Չորմիսյան Լևոն 20, 195
Չպլաբյան Հարություն 192
Չուբարյան Գր. 152
Չուգասոյան Լիլի 387, 419, 442

Պագալյան Բագրատ 192
Պագալյան Տ. 357
Պագարյան Մովսես 200
Պալյան Ժիրայր 199
Պալյան Սարգիս 385
Պամա Ժյուլ 132, 136, 138
Պայուրոբյան Ստեփան 194, 243
Պապալեւյան Գրիգոր 225
Պապաշանյան Մ. 136
Պապիկյան Պերն 198
Պապոյան Փետր 192
Պապոյան Հարություն 194
Պասմանյան 338
Պատրիկ Առաքել 198
Պարզյան Գ. 97
Պարոնյան Հայկ 197

Պարոնյան Հակոբ 171
Պարույր Սևակ 26
Պզտիկյան Նշան 405
Պեգով Ն. 260, 304
Պեզեյան Հարություն 192
Պեյլերյան Նորայր 198
Պեշիրյան Պողոս 192
Պետիկյան Տիգրան 437
Պետյան Ասատուր 386
Պետոյան Հակոբ 336
Պետրեյլի 136
Պետրոս XII 345
Պետրոսյան Առաքել 200
Պետրոսյան Պ. 366
Պետրոսյան Վարդգես 437
Պերպերյան Արտավազ 386, 416
Պերպերյան Համբարձում 442
Պերպերյան Սրբանի 199
Պիսկունով Վ. 304
Պյոլովյան Պարգև 196
Պոզապալյան Լուիզա 419
Պոմա 136
Պոյաճյան Եզնիկ 196
Պոյաճյան Ներսես 203
Պոնտացի Պետրոս 197
Պոդիկյան Ասատուր 198
Պոզոսյան Երչան 416
Պոզոսյան Նունուֆար 416
Պոզոսյան Պողոս 449
Պոզոս Նուբար 41, 310
Պոտիկյան Եղվարդ 201
Պրիպիսնով Ա. 266, 304
Պրոնին Վ. 258

Ջամալյան Արշակ 164
Ջավիդ 29
Ջեմալ 29
Ջերեբյան Հովհաննես 417

Թազգրադյան Հերմինե 171
Թայնիս Յան 37
Թիդ Ջոն 37
Թիժով Ն. 414
Թոդիժով Կ. 209
Թոզի Արմեն 419
Թոկֆելլեր 410
466

Թոսսիեի Կոնտի 136, 138
Թուրեն Սևակ 31
Թուրինյան Հարություն 380

Սադչիկով 209
Սաքրլենդ 405
Սալախյան Վահանգիս 449
Սայիդ Հալիմ 29
Սահակյան Արշակ 225
Սաղրոյան Սարգիս 195
Սաղով 209
Սամիլովսկի Ի. Վ. 181
Սամսոնյան Սիմոն 416
Սայաթ-Նովա 414
Սարաֆյան Գևորգ Ա. 20, 202
Սարգիսյան Պ. 200
Սարգիսյան Ս. 196
Սարգիսով Վարդան 193
Սարգսյան Ա. 209
Սարգսյան Ա. Ս. 182
Սարգսյան Արա 183
Սարգսյան Խորխե 386
Սարգսյան Հարություն 244
Սարգսյան Ն. 10
Սարգսյան Սարգիս 197
Սարգսյան Ֆ. Տ.
Սարյան Մ. Ս. 152, 178, 183, 366
Սարյան Սուրեն 332
Սարոյան Վիլյամ 373, 423, 442
Սարսիսյան Ալեքսանդր 416, 423
Սահայան Վահրամ 171
Սեդրակյան Հրաչ 192, 226
Սեիդ-Ջադե 209
Սեմա (Աթմանյան Գեղամ) 171, 415, 423

Սերգեև Մ. Գ. 202
Սերգոյան Փիրայր 419
Սիամանթո 31
Սիմոնյան Ա. ՏՕ
Սիմոնյան Հովհաննես 192
Սիմոնյան Հր. 14, 15, 335
Սիմոնյան Վազար 197
Սիմոնյան Պետր 383
Սիմոնյան Սիմոն 393
Սինապյան Գ. 136
Սիտալ Կարապետ 370, 422

Սիրանույշ 244
Սիրունյան Մամբրե 198, 250, 251, 259
Սմարյան Տիգրան 197
Սոլազյան Գ. 239
Սոլտերն Արթուր 133
Սոլոդ Գ. 209
Սվիրգերսկի 126
Ստեփանյան Լ. Ա. 252
Սրապիոնյան Երվանդ 194
Սրապիոնյան Ս. (Ս. Լուկաշին) 54, 88—90, 152
Սրապյան Արամայիս 386
Սուրխաբյան Հ. ՏՅ
Սուրմելյան Լևոն Ջավեն 370, 383, 413
Սուրյան Վահե 417
Սևոյան Սուրեն 197

Վազգեն Ա 250, 251, 366, 426, 437
Վահե Հայկ 20
Վահե Վանյան 422, 423, 442
Վասպուրականցի Արմենակ 197
Վարդանյան Գր. 65, 68, 80, 159, 161
Վարդապետյան Հակոբ 199
Վարժապետյան Ս. Հ. 20
Վրացյան Ս. (Մասուրյան Ս.) 167, 315, 316, 335, 358

Տանյան Լևոն 198
Տամատյան Զիկ 416
Տատուրյան Շահե 194
Տարի Ե. Վ. 38
Տարսունի Արմեն 416
Տեովրաբյան Սմբատ 200, 201, 386
Տեովրան Լուսար 196
Տեր-Անդրեասյան Աբրահամ 195
Տեր-Գաբրիելյան Ս. 143, 152
Տեր-Եղիայան Սեդրակ 199
Տեր-Հարություն Խորեն 416, 417
Տեր-Ղազարյան Ն. 65
Տեր-Մինասյան Թուրքեն 334
Տեր-Մկրտչյան Լ. Խ. 16
Տեր-Ներսեսյան Սիրարփի 387, 442, 443
Տեր-Նիկողոսյան Հ. 90

Տեր-Սահակյան Ավետիս 193
Տեր-Սիմոնյան Գր. 65
Տեր-Ստեփանյան Մարտիրոս 338
Տեր-Վարդանյան Ալիս 380
Տիրացյան Գևորգ 194
Տոբաշյան Թորթոս 386
Տրդատյան Պողոս 196
Տումանյան Եսայի 202

Ցարյով Ի. 304
Յվերնե 317

Ուզունյան Հայկաչեն 192
Ութունյան Գ. 233
Ումետյան Ստեփան 198
Ունեյան Լևոն 196
Ուշագլուխի Էրեմ 350
Ուստինով Ա. Մ. 99, 100, 317
Ուրլյան Հակոբ 197

Փանկանյան Գ. 304
Փանոսյան Սմբատ 382
Փաշանյան Սարգիս 193
Փափագ Արշիլ Հրաչ 443
Փափագյան Լևոն 405
Փենկանյան Արփինե 419
Փիլավենյան Խաչատուր 192
Փիլիպոսյան Նուրիցա Մ. 20
Փիրումյան Ս. 54, 133—136, 138, 152

Փոքրուցյան Լևոն 192
Փոլատյան Ա. Լ. 20
Փոլատյան Արմենակ 192
Փոլատյան Գևորգ 196
Փոլատյան Վահան 199

Քալանթար 65
Քալանթար Ռ. 208
Քաղցրունի Արշավիր 197
Քասունի Երվանդ 430
Քավթարաձե Ս. 209
Քենեայան Գևորգ 199
Քեշիշյան Շուրի 377
Քեսոյան Լևոն 193
Քեչյան Բյուզանդ 314
Քեստենյան Եփրեմ 337

Քեստեֆյան Ավետիս (Կապեճեց Ա.) 20
 Քերզոն 84
 Քրլլեյան Օշական 379
 Քիպարյան Աշոտ 357
 Քյուրենբերյան Ստեփան 199, 200
 Քոթանյան Տիրուհի 385
 Քոֆո Ռ. Ջ. 80
 Քրմոյան Մայիլ 419
 Օգգայան Խաչիկ 395
 Օթարյան Մ. 208
 Օհանյան Կարապետ 199

Շահյան Եսայի 244
 Օրագյան Ժակ 416
 Օրշոնիկիձև Գ. Կ. 61
 Օրոջյան Մինաս 214
 Ֆերվաջյան Արշակ 244
 Ֆեոդորով 209
 Ֆեսայան Ստեփան 200
 Ֆորդ 410
 Ֆրանս Անատոլ 37
 Ֆրենկյան Վահե 194

Տեղանուններ և անվանումներ

Աբադան 80
 Ադանա 33
 Ադրբեջան 46, 61, 62, 285
 Արևել 52, 87, 89, 99, 100, 168, 176, 200, 329
 Արավերդի 261, 262, 265, 267, 284
 Արբանիս 361
 Արևաճերան, տե՛ս Լեհնական
 Արևսանդրիա 164, 168, 169, 189, 211, 259, 433
 Ալմիր 164
 Անվագ 196
 Ադին 233
 Անարյուխ 204
 Ամասիա 118
 Ամման 433
 Ամերիկա (ԱՄՆ) 5, 19, 20, 39, 42, 48, 50—54, 56, 70, 111, 139, 150, 151, 155, 159—162, 167—169, 188, 197, 198, 208, 227, 229, 231, 236, 238—241, 243, 245, 251—253, 259, 260, 278, 280, 293, 299, 313, 315, 322, 326, 332, 350, 368, 375, 380, 382, 387, 388, 389, 391, 399, 403, 405, 409, 412, 414, 416—421, 423, 424, 427, 428, 432, 439, 442, 444

Այնթափ (Այնթեպ) 20, 33, 401
 Անատոլիա 94, 142
 Անգլիա 5, 52, 81—84, 132, 134, 138, 158—160, 173, 261, 278, 301, 326, 350, 378, 414—416, 420
 Անդրկովկաս 18, 42, 44, 55, 74, 90, 170
 Անդրկովկասյան Ֆեդերացիա (Անդրֆեդերացիա) 31, 95, 105
 Անթիլիա 423, 424
 Անի-Պեմզա 116, 117
 Անկարա 31, 173, 352
 Անտառավան, քաղամաս Լեհնական-ճում, 289
 Անտիոք 33
 Աշտարակ 275, 279, 281, 282, 284, 287, 290, 291, 301
 Վսիա 3, 48
 Աստրախան 153
 Ավշար 103
 Ավստրալիա 5, 250, 251, 258, 260, 270, 280, 301, 331, 356, 357, 375, 423, 439, 443
 Ավստրիա 52, 249, 301, 414
 Ատրպատական 196
 Արարիա 28
 Արաբիկ 320
 Արագած, լեռ, 63
 Արագածի շրջան 286

Արագոյան 101—103
 Արամ 206
 Արարատ, լեռ, 92, 125, 149, 214, 340
 Արարատյան դաշտ, 126, 283, 293, 404
 Արաբ 196
 Արաբս, գետ, 103
 Արգենտինա 50, 94, 202, 228, 249, 251, 252, 255, 260, 263, 268, 271, 278, 281, 301, 315, 378, 386, 387, 389, 391, 403, 418, 431
 Արդահան 173
 Արդվին 173
 Արզնի 261, 262
 Արմաշ 102, 103
 Արշալույս 437
 Արտաշատի շրջան 66, 83, 85, 86, 185, 209, 219, 221, 233, 235, 291, 301, 449
 Արտեմի 286
 Արևելյան Հայաստան 3, 5, 44, 49, 353
 Արևմտյան Անատոլիա 33
 Արևմտյան Քրակիա 98
 Արևմտյան Հայաստան (Արևմտահայաստան) 4, 19, 33, 39, 43, 60, 110, 113, 326, 334, 400, 403
 Աֆրիկա 94, 111, 250, 313, 315, 420, 423
 Բաքու 83—86, 95, 100, 124, 128, 153, 178, 209, 211—213, 216, 234, 239, 240, 262—264, 266, 271, 272
 Բալկանյան երկրներ, Բալկաններ, 39, 42, 51, 54, 121, 143, 155, 357
 Բալու 405
 Բաղդադ 36, 41, 75—77, 82, 99, 226, 378, 379
 Բաղլե 33
 Բաշ Ապարան 44
 Բասագեշարի շրջան (այժմ՝ Վարդե-ճիսի շրջան) 83, 86, 186
 Բասրա 41, 76, 81, 82
 Բաֆո 61, 159, 178, 209, 262, 263, 285

Բաֆուրս 76
 Բելգիա 52, 135, 158, 159, 160, 249
 Բելուս 20, 21, 29, 41, 50, 88, 164, 168, 190, 191, 263, 204, 209, 211, 212, 214, 227, 230, 231, 321, 325, 336—338, 351, 352, 355, 369, 372, 373, 377, 381, 383, 385, 387—390, 393, 398, 412—414, 418, 419, 421, 423, 425, 430, 431, 436
 Բեռլին 161, 173
 Բեսարաբիա 51
 Բերգամո 414
 Բյուրական 405
 Բոլոն 284
 Բոստոն 33, 34, 53, 167, 378
 Բրազիլիա 50, 165, 203, 228, 231, 251, 260, 265, 301, 315, 356, 378, 380, 387, 403
 Բուենոս Այրես 51, 164, 165, 202, 357, 368, 369, 381, 391, 394, 414, 419, 431
 Բուլղարիա 15, 48, 51, 56, 115, 122, 154, 171, 181, 193, 203, 208, 209, 215, 216, 225, 227, 236, 238, 241, 244, 248, 249, 253, 271, 301, 315, 322, 411, 416, 419, 420, 427
 Բուխարեստ 194, 215, 381
 Գալաթիա 33
 Գասթրոնոմի 33
 ԳԻԷ 301, 314
 Գերմանիա 52, 138, 150, 158, 159
 Դյուրի 335
 Դրենդր 168
 Դուսնագյուղ 233
 ԳՏԷ 301, 379, 414, 431
 Դալար 235
 Դամասկոս 41, 50, 192, 204, 209, 336, 389
 Դավալու 102
 Դատեմ 113, 406
 Դեղնաղաջ 100
 Դետրոյդ 380
 Դիլիջան 292
 ԵԱՀ, տե՛ս Եգիպտոս

Այաջ 31
 Այգեգարդ 233
 Այդր լին (այժմ՝ Ակնա լին) 282
 468

Եղիպտոս 17, 19, 20, 48, 52, 89, 162, 177, 198, 208, 209, 227, 229, 232, 236, 238, 241, 243, 245, 249—253, 255, 257—259, 262—265, 267—272, 278—280, 282, 293, 294, 299, 304, 322, 340, 348, 378, 387, 389, 393, 416—418, 420, 431, 445

Եղեսիա 33, 37, 404

Եթովպիա 48, 52, 198, 199, 268, 301, 427

Եկատերինոգրադ 40

Ենդեգենածոր 224

Եվրոպիա 20, 401

Եվրոպա 3, 48, 50—52, 126, 129, 130, 139, 140, 143, 148, 151, 161, 169, 375, 423, 439

Երզնկա 35

Երուսաղեմ 41, 196, 205, 423

Երևան, տե՛ս աշխատության գրքի բաղու էջերում

Եփրատ, գետ, 35, 36

Ջանգեզուր 64

Ջանգիբաասրի շրջան (այժմ՝ Մասիսի շրջան) 127, 137, 149, 219, 221, 301

Ջառինջա 224

Ջեյթուն 401

Ջենջան 75

Ջմյուտնիա 52, 352

Էջմիածին 65, 68, 77, 112, 118, 160, 187, 219, 221, 274—276, 279, 281, 283, 284, 287, 291, 301, 342, 359, 411, 423—425, 437, 449

Էլաո (այժմ՝ Արմավյան) 262, 267, 274, 276—279, 281—284, 290, 291, 293, 301, 403

Էնկյուրի, տե՛ս Անկարա

Էլշիլարի ջրանցք 160

Թաթար-Բազարեիկ 88

Թալին 65, 224, 274, 275, 279, 281, 284—287, 301

Թավրիզ 80, 294, 335

Թեհրան 81, 84, 85, 99, 265, 283, 302, 338, 357, 371, 378, 414

Թիֆլիս (Թբիլիսի) 13, 66, 67, 83, 153, 162, 285

Թոխմախան լիճ 112

Թրակիա 89

Թուրքիա 3, 7, 21, 25—29, 33, 36, 37, 38, 40—42, 48, 51—53, 58, 93—95, 113, 114, 122, 125, 144, 172—175, 190, 201, 255, 263, 268, 271, 278, 279, 292—294, 299, 322, 326, 336, 350—355, 390, 420, 443

Ժենև 139, 142, 311, 431

Իզդիր 74

Իզմիր, տե՛ս Ջմյուտնիա

Ինքիլի 36

Իչևանի շրջան 116, 117, 261, 262, 267, 269, 272, 273, 279, 286, 292

Իսկենդերան 33

Իսրայել 268, 271, 278, 301

Իտալիա 52, 239, 268, 301, 413—417, 420, 424

Իրան 48, 51, 53, 64, 78, 87, 99, 105, 106, 177, 181, 187, 190, 196, 203, 208, 209, 216, 219, 221, 225—228, 231, 248, 249, 253, 257, 260, 262—269, 271, 278—282, 293—297, 299, 302—304, 322, 324, 335, 338, 340, 350, 355, 390, 420, 421, 424, 427, 443

Իրավ 177, 199, 209, 226, 229, 230, 241, 245, 249, 255, 257, 262—264, 268, 271, 278—280, 293, 294, 299, 410, 416, 420, 427, 428

Լալայցիկ 122

Լամբալու (այժմ՝ Քազրատուշեն) 116

Լատինական Ամերիկա, տե՛ս Հարավային Ամերիկա

Լեհաստան 188, 420

Լենինական 66, 83, 86, 96, 101, 102, 116—118, 124, 164, 209, 235, 236, 261, 265, 266, 267, 269, 272—275, 277—280, 282, 284, 288—292, 301, 317

Լիբանան 16, 19, 20, 50, 51, 177, 181, 190—192, 203, 208, 209, 211, 216, 225—228, 230, 231, 235, 236, 238, 241, 244, 245,

248, 249, 255, 257, 263, 264, 268, 277—280, 293, 294, 299, 304, 322, 324, 331, 336—338, 378, 379, 387—390, 403, 416—418, 420, 421, 423, 424, 427—429, 431—433, 442, 443

Լիբիա 294, 301, 322, 324

Լիոն 117, 168, 195, 389

Լիսաբոն 410, 414

Լիվերպոլ 243

Լյուսեմբուրգ 150

Լոզան 7, 58, 121

Լոնդոն 412, 413, 415, 431, 433

Լոս Անջելոս 20, 380, 381

Լուսավան (Ջարենցյական) 261, 262, 267, 269, 273, 277—282, 284, 286, 290—292, 301

Խարբերդ 33, 401

Խարբին 247

Խարկով 153

Խոյ 74, 86

Խորհրդային Հայաստան, տե՛ս Սովետական Հայաստան

Խորհրդային Միություն, տե՛ս Սովետական Միություն

Մադկանոն 394

Կալամարի 88

Կալիֆորնիա 20

Կանիոն 20, 164, 198, 251, 257—260, 271, 283, 338, 339, 341, 342, 373, 383, 419, 430

Կաղզվան 60

Կանադա 5, 19, 50, 51, 159, 249, 250, 258, 260, 270, 280, 294, 301, 331, 356, 378, 380, 420, 423, 443

Կարասու 137

Կարին 32, 33, 352

Կ. բլուր, քաղաքա մայրուքում, 337

Կարս 60, 173

Կեսարիա 401, 406

Կիլիկիա 32, 33, 39, 42, 51, 214, 244, 400, 401, 403, 424

Կիպրոս 51, 177, 200, 226, 249, 257, 260, 262—270, 272, 279, 288, 299, 304, 322, 361, 378, 386,

424, 427, 430

Կիրովական 44, 116, 117, 209, 261, 265, 267, 269, 272—275, 277—280, 282, 284, 285, 288—291, 301, 394

Կին 153

Կոնիա 33

Կոստանդնուպոլիս, Կ. Պոլիս 26, 29—32, 36, 39, 40, 42, 53, 71, 77, 83, 85, 90, 92, 94, 95, 96, 99, 105, 107, 114, 122, 125, 142, 154, 155, 163, 201, 311—313, 315, 316, 318, 352

Կովկաս 27, 136, 167, 353

Կոտայքի շրջան (այժմ՝ Արմավյանի շրջան) 186

Կորդոպա 202, 431

Կորեթա 52

Կորֆու կղզի 52

Կուրա 50

Հաբեշտան, տե՛ս Եթովպիա

Հայեպ 33, 35, 36, 41, 50, 175, 192, 199, 203—206, 231, 243, 322, 324, 325, 330, 337, 341, 377, 378, 382, 383, 389, 392, 394, 419, 429—431, 433

Հանըն 403, 404, 406

Համադան 75, 78, 196

Հայաստան, տե՛ս աշխատության գրքի բաղու էջերում

Հայաստանի Հանրապետություն 130

Հայֆա 169, 195, 196, 326, 353

Հանգվան 394

Հարավ-Աֆրիկյան Միություն 251

Հարավային Ամերիկա 50, 51, 94, 164, 190, 201—203, 227, 228, 236, 249, 250, 258, 280, 331, 391, 423, 427, 444

Հարավային Իրան 74, 75

Հարավսլավիա 52, 172, 278, 301,

Հեզարչերիք 294

Հեռավոր արևելք 52, 423

Հին Հունաստան 98

Հյուսիսային բևեռ 142

Հյուսիսային Կովկաս 46, 153

Հնդկաստան 52, 249, 423

Հորսրճի 233
Հոլանդիա 52, 420
Հոկտեմբերյան 186, 221, 274—277,
279, 281, 284—289, 292, 301
Հոսն 193
Հորդանան 249, 301, 427—429, 431
Հոոմ 259, 345, 346, 413, 414, 431
ՀՍՍՀ (ՀՍԽՀ), տե՛ս Սովետական
Հայաստան
Հրազդան 223, 233, 231, 262, 267—
269, 272, 273, 277—280, 282,
284, 290, 291, 301, 437
Հունաստան 17, 51, 52, 89, 90, 95—
101, 105, 112, 114—116, 122,
125, 126, 128, 150, 155, 164, 171,
172, 176, 181, 190, 200, 203,
205, 208, 209, 215, 216, 225—
228, 238, 241, 248, 249, 255, 263,
267, 268, 293, 299, 315, 317, 319,
322, 420, 424
Հունգարիա 52, 188, 361, 414, 420
Դագվին 187
Դամասկոսի շրջան, տե՛ս Արաշտառի
շրջան
Դամրշի 206, 292
Դարազաղ 294
Դարսիֆիլա, տե՛ս Կիրովական
Դավան 117, 261, 267, 273, 278,
292, 301
Դոեր 127, 149
Դուրբաղուլի (այժմ՝ Հոկտեմբերյան)
66, 118
Ճավա 52
Ճենովա, տե՛ս Ջենովա
Մադագասկար 331
Մալարիա 20, 113, 117, 160, 405,
406
Մակեդոնիա 89, 98
ՄԱՀ, տե՛ս Սեփազառ
Մախաջան սովխոզ 286
Մանչուրիա 248
Մասիս, ավան, 262
Մասիս, տե՛ս Արարատ լեռ
Մարաթ 36
Մարաշ 33, 40
Մարոֆ 318

Մարսել 109, 114, 195, 229
Մեծ Բրիտանիա, տե՛ս Անգլիա
Մեխենե 36
Մերձավոր արևելք 5, 16, 19, 43,
50—52, 70, 73, 119, 143, 155, 163,
167, 254, 280, 332, 342, 345, 357,
361, 375, 390, 399, 416, 423, 429,
439
Մեխիկա 50
Միլան 412—414
Միջագետք (Իրաֆ) 11, 45, 53, 74,
75, 77—86, 95—99, 101, 105
Միջին Ասիա 61, 153
Միջին արևելք 73, 254, 280, 334,
345, 373, 390, 416, 424
Մյասնիկյանի անվան սովխոզ 286
Մյունխեն 371, 414
Մոնտեվիդեո (Մոնտեվիդեո) 165,
380
Մոնրեալ 412
Մոսկվա 35, 47, 101, 126, 133, 138,
139, 143, 153, 161, 162, 173, 212,
285, 429, 437
Մոսույ 41, 78
Մոսկովի 405, 407
Մոսկ 37
Մուսա լեռ 37, 404
Մուսաբեռ ավան 404
Յադուրիե 206
Յաֆա 196
Նաիրիի շրջան 301
Նահր Էլ Օմար 76, 78, 80
Նեապոլ 239
Նիկոզիա 201, 323, 386
Նիկոմեդիա 33
Նյու Յորք 13, 20, 50, 71, 167, 174,
197, 207, 269, 239, 244, 322, 332,
343, 374, 377, 386, 425, 442
Նոր Ամասիա 113
Նոր Ալվան 289
Նոր Արարիկ 112, 404
Նոր Բյուրանիա 112
Նոր Երզնկա 113
Նոր Եվրոպիա 112, 160
Նոր Ջերանդիա 331
Նոր Ջեյրուս 231

Նոր Թոմարգա 113
Նոր Խարբերդ 113
Նոր Կեսարիա 113, 119
Նոր Հանրե 111, 261, 401, 403, 405,
406
Նոր Մալարիա 113, 385, 404, 406
Նոր Մարաշ 401
Նոր Յոզգատ 113
Նոր Սևրաստիա 113, 119, 385, 404,
405
Նորվեգիա 142, 156
Նոր Տարոն 113
Նոր Տիգրանակերտ 113, 119
Նուբարաշեն (այժմ՝ Սովետաշեն)
113, 119
Շահումյանի շրջան 449
Շապին-Պարանիսար 37
Շեստառ 36
Շղուր 206
Շվեդիա 249, 301
Շվեյցարիա 159, 249, 416, 420
Շումեն 420
Շուրիշկան 294
Չանդրեր 31
Չիխսուլվակիա 52, 414
Չիկագո 377
Չինաստան 229, 238, 241, 301
Պաղեստին 53, 177, 195, 196, 205,
226, 229, 230, 232, 241, 245,
322
Պաղին 401, 405
Պաղեստուն 104
Պարսկաստան 3, 85
Պելոպոնես 89
Պետրոգրադ 39
Պիրեյա 52
Պլովդիվ 189, 420
Պովոլժիե 142
Պոստամ 38, 173
Պրուսա 33
Պուրե Համուտ 337
Ջեզիրե 193, 231, 244, 245, 349
Ջենովա 139, 188
Ջրսր 206
Ջուլֆա 86, 95, 99, 178, 209, 216,
234, 240, 262, 266

Ռաս-ուլ-Այն 36
Ռեշտ 196
Ռոդոստա 20
Ռուսարիս 202
ՌՍԳՍՀ 47, 78
Ռուսական Հայաստան, տե՛ս Արևել-
յան Հայաստան
Ռուսաստան 3, 39, 43, 61, 62, 142,
331, 353, 354
Ռուսե 420
Ռուսթավի 285
Ռումինիա 48, 150, 154, 172, 181,
188, 194, 203, 208, 209, 216,
227, 236, 238, 241, 248, 249, 253,
301, 322, 361, 414, 416
ՍԱՀ, տե՛ս Սիրիա
Սալմաստ 74, 86, 338
Սալոնիկ 52, 90, 91, 100, 317
Սան Պաուլո 385
Սասուն 37
Սարդարապատ 44, 95, 123, 126,
440
Սարդարապատի դաշտ 127, 129
Սեբաստիա 33, 113, 401
Սեֆեյան Պարսկաստան 3
Սիսիան 186
Սիրիա 16, 19, 33, 50, 51, 95, 105,
111, 122, 125, 165, 175, 177,
181, 190—192, 203, 204, 206, 208,
209, 211, 216, 225—228, 230,
231, 235, 236, 238, 241, 244, 245,
248, 249, 255, 257, 263,
263, 264, 270—272, 277, 279—
282, 287, 292, 299, 302, 304,
322, 324, 331, 337, 338,
348, 389, 390, 416, 417, 420,
424, 427—433
Սմո 102, 103
Սովետական Հայաստան, տե՛ս աշխա-
տության գրեթե բոլոր էջերում
Սովետական Միություն 99, 100, 105,
114, 126, 140, 158, 171, 172, 173,
177—179, 181—183, 195, 201—
202, 206, 209, 210, 212, 214,
222, 223, 225, 225, 234, 236, 237,
242, 245—250, 252, 254—258, 260,

261, 264—266, 271, 276, 277,	Տարուն 20, 404
280, 284, 294, 297, 303, 304,	Տարուն-Տարութեան 329, 406, 407
317, 326, 334, 335, 350, 354,	Տեսին 389
362, 366, 374, 377, 414, 416,	Տեր-Ձոր 36
427, 437, 438, 446—450	Տիգրանակերտ 33
Սովետական Ռուսաստան 43, 44, 46,	Տրանսիլվանիա 51
56, 62, 70, 84, 85, 142, 143	Տրապիզոն 33, 352
Սոֆիա 189, 381, 420	Տրիպոլի (Թրիպոլի) 337
Սպահան 196, 209, 294	Ուկրաինա 47, 61
Սպիտակ 277	Ուրմիա 74, 86
ՍՍՀՄ (ԽՍՀՄ), տե՛ս Սովետական	Ուրուզվայ 50, 203, 228, 232, 249,
Միություն	252, 253, 255, 263, 268, 278,
Ստալինգրադ 201	301, 315, 378, 380, 403, 412,
Ստամբուլ 260, 350, 351, 352, 390,	427, 431
423	Ուրֆա, տե՛ս Եդեսիա
Ստենֆորդ 387	Փարիզ 10, 27, 28, 39, 45, 78, 112,
Ստեփանավան 96, 116, 186, 233,	114, 115, 133, 138, 144, 157, 162,
309	165, 168, 185, 194, 195, 207, 229,
Սուդան 52, 198, 199, 245, 427	307, 318, 329, 357, 368, 377,
Սուեդիա 33, 37	378, 381, 389, 405, 408, 418
Սուվաուի 285	Փեննի 196
Սուվալիթ 285	Փիլիպպին (այժմ՝ Արեգ) 224
Սուվար 36	Փոբր Ասիա 36
Սուրենավան 102, 103	Փաղցրաշեն 449
Սուրմալու 60	Փարակերտ 286
Սևան 269	Փեսապ 33, 349
Սև ջուր 127, 149	Փեֆալունիա 52
Սևր 121	Փիլիս 33
Վալանս 195, 389	Փիրմանշահ 78
Վաղարշապատ, տե՛ս Էջմիածին	Փղի 407
Վան 31, 37, 74, 87, 105	Փավելյթ 5, 278, 301
Վանաշեն 449	Օդեսա 153
Վառնա 318, 420	Օսմանյան կայսրություն 3, 25, 36,
Վասպուրական 74, 76, 406	447
Վեդու շրջան (այժմ՝ Արարատի շրջան)	Ֆիլիպե 88
85, 86, 219, 221, 223, 274, 275,	Ֆյուրենս 165
279, 281, 284, 285, 287, 291, 292,	Ֆոնտան 233
301, 449	Ֆրանսիա 5, 17, 51—54, 56, 89,
Վենետիկ 53, 413, 414	94, 95, 114, 115, 117, 119, 138,
Վիեննա 31, 309, 414	155, 158—80, 162, 171, 203—209,
Վիսենտե Լոպես 394	227, 229, 236, 238, 241, 245, 249,
Վրաստան 46, 61, 62, 65, 83, 124,	263, 271, 278, 293, 294, 301, 318,
285	322, 357, 378, 386, 387, 389,
Տանկաստան, տե՛ս Թուրքիա	391, 403, 414, 416—421, 424, 427,
	428, 432, 442, 443

ԲՈՎԱՆՆԻԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	3
Գլուխ առաջին.— Ժամանակակից սփյուռքի առաջացումը և նրա կողմնորոշումը դեպի Սովետական Հայաստան	25
Գլուխ երկրորդ.— Առաջին ձեռնարկումները գաղթականության հարցի լուծման ուղղությամբ	60
Գլուխ երրորդ.— Սփյուռքահայերի հայրենադարձությունը 1921—1936 թվականներին	73
1. Սփյուռքահայերի հայրենադարձությունը ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին	74
2. Հայրենակցական միությունների գործունեության աշխուժացումը և սփյուռքահայերի հայրենադարձությունը 1926—1936 թվականներին	110
Գլուխ չորրորդ.— Հայ գաղթականության հարցը Ազգերի լիգայում և և Նանսենյան ծրագիրը	121
Գլուխ հինգերորդ.— Հայաստանի օգնության կոմիտեի գործունեությունը հայրենիք-սփյուռք կապերի զարգացման և հայրենադարձության իրականացման ուղղությամբ	152
Գլուխ վեցերորդ.— Սփյուռքահայերի զանգվածային հայրենադարձությունը 1946—1948/1949 թվականներին	171
1. Սփյուռքահայերի հայրենադարձության նախապատրաստումը	177
2. Հայրենադարձների քարավանների տունդարձը և նրանց տեղավորումը հանրապետությունում	211
Գլուխ յոթերորդ.— Սփյուռքահայերի հայրենադարձությունը 1962—1982 թվականներին	246
Գլուխ ութերորդ.— Տարբեր դիրքորոշումներ հայրենադարձության նկատմամբ	306
Գլուխ իններորդ.— Հայրենիք-սփյուռք առնչությունների հետագա զարգացումը և Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի գործունեությունը	359
Վերջաբան	447
Резюме	451
Summary	455
Անձնանունների ցանկ	459
Տեղանունների ցանկ	468

ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ ՀՈՎԻԿ ՌԻՏԱՆԵՍԻ

ՀԱՅՐԵՆԻՔ — ՍՓՅՈՒՌՔ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ
ՀԱՅՐԵՆԱԴԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ (1920—1980 թթ.)

Հրատարակության է ներկայացրել
համալսարանի հայ ժողովրդի պատմության ամբիոնը

Հրատարակչության խմբագիր՝ Ա. Մ. Գաբրիելյան
Նկարիչ՝ Յ. Հ. Ղանդիլյան
Գեղարվեստական խմբագիր՝ Ն. Ա. Թովմասյան
Տեխնիկական խմբագիր՝ Հ. Ս. Ալվրցյան
Վերստուգող սրբագրիչ՝ Գ. Պ. Խաչատրյան

ԻՐ 664

ՎՅ 03333: Պատվեր 1181: Տպաքանակ 4000: Հանձնված է շարվածքի 25.05
1985 թ.: Ստորագրված է տպագրության 06.08.1985 թ.: Թուղթ № 1,
չափսը՝ 84×108¹/₃₂: Տառատեսակը «Սովորական»: Տպագրության եղանակը՝
«Բարձր»: Հրատարակչական 23,4 մամուլ: Տպագրական 14,875 մամուլ =
պայմ. 25,0 մամուլի: Գինը՝ 2ռ. 10 կոպ.:

Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, Մռավյան փ. № 1:

Издательство Ереванского университета, Ереван, ул. Мравяна, № 1.

Երևանի համալսարանի տպարան, Երևան, Արովյան փ. № 52:

Типография Ереванского университета, Ереван, ул. Абовяна, № 52.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՆՈՄԱՆԱՐԱՆ

Մ. Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

**ՌՈՒՍԱՍՏԱՆԻ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՆԻՄՆԱՆԱՐՅԵՐ
(ՏԱՄՆԻՆՆԵՐՈՐԴ ԴԱՐ)**

ՀՀ ԿԳՆ կողմից երաշխավորվել է
որպես բուհական դասագիրք

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2011

Խմբագիր պատմ. գիտ. դոկտոր պրոֆեսոր Է. Գ. Մինասյան

Մ. Մուրադյան

Մ 992 Ռուսաստանի պատմության հիմնահարցեր, (Տասնիններորդ դար), դասագիրք / Մ. Մուրադյան: Խմբ.՝ Է. Գ. Մինասյան.– Եր.: ԵՊՀ հրատ., 2011, 266 էջ+40 էջ ներդիր:

Դասագրքում քննարկվում են 19-րդ դարի Ռուսաստանի պատմության կարևորագույն իրադարձությունները, ռուս-հայկական ռազմա-քաղաքական և միջազգային-իրավական գործընթացները՝ հարկապես Ռուսաստանին Հյուսիսարևելյան Հայաստանի միացման ու պատմական գնահատականների հիմնահարցերը, ռուսական դիվանագիտության դիրքորոշումը հայկական հարցի վերաբերյալ: Մեծ փնտռություն է հարկապես համաշխարհային հնչեղություն ունեցող ռուսական գրականության, արվեստի բոլոր ճյուղերի համամարդկային կոթողներին:

Նախաբեմադրված է բուհերի, պատմության, միջազգային հարաբերությունների, հումանիտար-հասարակագիտական ֆակուլտետների ուսանողության, պատմության հիմնահարցերով զբաղվող մասնագետների ու ընթերցող լայն հասարակության համար:

ՀՏԴ 94/99(470) (07)

ԳՄԴ 83.3 (2Բ) ց7

Միրելի՛ ուսանողներ

Զեզ համար նախատեսված դասագիրքը նվիրված է աշխարհի խոշորագույն ու հզորագույն տերություններից մեկի՝ Ռուսաստանի XIX դ. պատմությանը, որի համակրումանի ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում հստակ յուրացնելու այդ տերության ձախումների և սայթաքումների առարկայական ու ենթակայական պատճառները, գնահատելու Ռուսաստանի դերը նրա կազմի մեջ տարբեր փուլերում և զանազան եղանակներով ընդգրկված ոչ ռուս ժողովուրդների պատմական ձակատագրում: Այս առումով առանձնապես հրատապ են, արդիական դասագրքի այն էջերը, որտեղ քննարկվում են Ռուսաստանին Հյուսիսարևելյան Հայաստանի միացման, այդ իրադարձության պատմական նշանակության հիմնախնդիրները, հայկական հարցի ծագման ու միջազգայնացման գործընթացը: Եթե Հյուսիսարևելյան Հայաստանում հայ ժողովուրդը ստացավ առաջընթացի հնարավորություն և XX դարի սկզբին իրականացրեց իր դարավոր իղձը՝ վերականգնեց պետականությունը, ապա Արևմտյան Հայաստանում հայ ժողովրդի հայրենիքում, արևմտահայությունը ենթարկվեց հալածանքների, ջարդերի, կոտորածների և վերջապես Ցեղասպանության: Դուք կծանոթանաք ռուսական բանակի հայազգի մարտական գեներալների համաստեղության՝ հատկապես ռուս-թուրքական պատերազմի Կովկասյան ռազմաձևակառուցիչներին Մ. Ս. Լորիս-Մելիքովի հետ, որը միաժամանակ աչքի ընկավ իբրև նշանավոր պետական գործիչ և մեծ վերափոխիչ կայսր Ալեքսանդր Երկրորդի արքունիքում: Լինելով կայսրի ամենավստահելի այրը՝ նա մշակեց Ռուսաստանի համար հույժ կարևոր և անհրաժեշտ սահմանադրական նախագիծ, որի իրագործումը հնարավորություն կընձեռեր ապահովել երկրի բնականոն համաչափ աստիճանական զարգացում, և դրանով իսկ խուսափել քաղաքական ցնցումներից, արյունահեղությունից, որը ձակատագրական դարձավ իր բոլոր ծանրագույն հետևանքներով հաջորդ XX դարում: Եվ վերջապես Դուք կձանաչեք, կպատկերացնեք, կյուրացնեք, կհասկանաք ռուսական ոսկեդարյան մշակույթի՝ գրականության, երաժշտության, ճարտարապետության, թատրոնի, գեղանկարչության, գիտության, տեխնիկայի տեղը և նշանակությունը համաշխարհային գիտության ու արվեստի գանձարանում, նրա ներգործությունը ոչ ռուս ժողովուրդների ներառյալ և հայ մշակույթի վրա, հատկապես ազգային գեղանկարչության զարգացման՝ աշխարհահռչակ հանձարեղ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու և մեր ժամանակների մյուս մեծանուն ու մեծավաստակ, համաշխարհային մակարդակի արվեստագետ-գեղանկարիչ Մարտիրոս Մարյանի կայացման գործում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 7

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԻՆ

ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

ԿԱՅՄԵՐԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՌԱՋԻՆԻ ԳԱՀԱԿԱԼՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

- § 1. Երիտասարդ կայսրի համալիր բարեփոխումները 9
- § 2. Ալեքսանդր Առաջինի արտաքին քաղաքականության եվրոպական ուղղվածությունը 21
- § 3. 1812 թ. Հայրենական պատերազմը և ռուսական բանակի արտասահմանյան արշավանքը: Ռուսաստանը Վիեննայի վեհաժողովում 30

ԵՐԿՐՈՐԳ ԳԼՈՒԽ

ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻՏՔԸ

- § 1. Դեկաբրիստական հակաճորտատիրական, հակամիապետական շարժումը 46
- § 2. «Պաշտոնական ժողովրդայնության տեսությունը» 63
- § 3. Սլավոնասերները և արևմտականները 67
- § 4. Վ. Բելինսկին, Ա. Գերցենը, Ն. Օգարովը, Մ. Պետրաշևսկին, Ն. Չերնիշևսկին, Ն. Դոբրոլյուբովը և ռուսական հասարակական-քաղաքական միտքը 74

ԵՐՐՈՐԳ ԳԼՈՒԽ

ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ XIX դ. 20-50-ԱԿԱՆ ԹԹ.

- § 1. Անդրկովկասի միակցումը Ռուսաստանին և նրա պատմական նշանակությունը 83
- § 2. Ռուս-թուրքական պատերազմը և Ադրիանուպոլսի պայմանագիրը 91
- § 3. Արևի (Արևելյան) պատերազմը 97

ԵՐԿՐՈՐԳ ԲԱԺԻՆ

ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅՈՒՆԸ XIX ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԻ ԵՐԿՐՈՐԳ ԿԵՍԻՆ

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

ՄԵՄ ՎԵՐԱՓՈՆՈՒՄՆԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ XIX ԴԱՐԻ 60-70-ԱԿԱՆ ԹԹ.

- § 1. Ռուսաստանյան կայսրությունը մեծ բարեփոխումների նախօրյակին 109
- § 2. Ճորտատիրական իրավունքի վերացումը 116
- § 3. XIX դարի 60-70-ական թթ. բարեփոխումները 121

ԵՐՐՈՐԳ ԲԱԺԻՆ

ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ (XIX դ. 50-90-ԱԿԱՆ ԹԹ.)

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐԻ 50-70-ԱԿԱՆ ԹԹ.

- § 1. Ռուսական դիվանագիտության պայքարը Փարիզի հաշտության պայմանագրի դեմ 129
- § 2. Ռուսաստանը և Միջին Ասիան 134
- § 3. Ռուսաստանյան կայսրության քաղաքականությունը Հեռավոր Արևելքում և Խաղաղօվկիանոսյան ավազանում 141

ԵՐԿՐՈՐԳ ԳԼՈՒԽ

ԿԱՅՄԵՐԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՆՈՐ ՊԱՏՄՈՒԼՈՒՄ

- § 1. Ռուս-թուրքական 1877-1878 թթ. պատերազմը 147
- § 2. Սան-Ստեֆանոյի պայմանագրից դեպի Բելլինի դաշնագիրը 153
- § 3. «Կայսր խաղաղարար» Ալեքսանդր Երրորդի և Նիկոլայ Երկրորդի արտաքին քաղաքականությունը ռուս-ֆրանսիական դաշինքի համակարգում և զինաթափման հիմնահարցը 160

ՉՈՐՐՈՐԳ ԲԱԺԻՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ XIX ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԻ ՎԵՐՋԻՆ ՔԱՌՈՐԴՈՒՄ

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

ՆԱՐՈՂՆԻԿԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ XIX ԴԱՐԻ 70-80-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

- § 1. Նարողնիկության գաղափարախոսությունը 168

§ 2. Նարդոնիկական կազմակերպությունները.
ժողովրդագնացությունից քաղաքական ահաբեկչություն 173
§ 3. Լորիս-Մելիքովի «Սրտի և մտքի» դիկտատուրան 178

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

**ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԽՄԲԱԿՆԵՐԸ XIX ԴԱՐԻ
 70-90-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ**

§ 1. Բանվորական առաջին խմբակները Ռուսաստանում 186
§ 2. Բանվորական շարժումները XIX դարի 80-90-ական թվականներին 189

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

**ՄԱՐՔՍԻՋՄԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ
 ՄԱՐՔՍԻՍՏԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱՅՈՒՄԸ**

**§ 1. Գ. Վ. Պլեխանովը և «Աշխատանքի ազատագրություն»
 մարքսիստական խմբակը 194**
**§ 2. Մարքսիստական խմբակները կայսերական Ռուսաստանում.
 «Պետերբուրգի բանվոր դասակարգի ազատագրության պայքարի միությունը».
 ՌՄԴԲԿ առաջին համագումարը 198**

Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Դ Բ Ա Մ Ժ Ի Ն

**ՌՈՒՍԱԿԱՆ ՈՍԿԵԴԱՐՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ԵՎ
 ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈՒ ՏԵՆՆԻԿԱՅԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ**

§ 1. Ռուսական գեղարվեստական գրականությունը 203
§ 2. Ռուսական արվեստի համամարդկային կոթողները 214
**§ 3. Լուսավորության, գիտության, տեխնիկայի զարգացումը,
 ռուս նշանավոր ձանապարհորդները և աշխարհագրական
 հայտնագործությունները 236**
Ամփոփում 250
Հարցեր և առաջադրանքներ 255
Օգտագործված գրականության ցանկ 263

Պատմա-դիվանագիտական, ռազմաքաղաքական, սոցիալ-տնտեսա-կան, մշակութային նշանակալից իրադարձություններով հարուստ XIX հարյուրամյակի Ռուսաստանի տարեգրությունն ընդհանուր առմամբ զարգացավ ելևէջներով. պատմականորեն ընթացավ մակընթացությամբ և տեղատվությամբ ու ի վերջո ունեցավ կարևոր նշանակություն ոչ միայն վելիկոռուս, այլև կայսրության մեջ ընդգրկված կամ բռնամիակցված ոչ ռուս ժողովուրդների պատմական կացությունում և ճակատագրում: Ռուսաստանը դարերի ընթացքում եղել է բազմազգ երկիր, որտեղ բնակչության մեծամասնություն կազմող վելիկոռուսների հետ ապրում էին նրանց հետ պատմական ճակատագրով կապված ուրիշ ազգեր և ժողովուրդներ: Ռուսաստանյան կայսրության արևմտյան ու հարավային նահանգներում վելիկոռուսների հարևանությամբ ապրում էին ուկրաինացիներն և բելոռուսները, Վոլգայից մինչև Արևելյան Արկտիկայի լայնածավալ տարածքներում սփռված էին թուրքալեզու ժողովուրդները՝ թաթարներ, չուվաշներ, բաշկիրներ, յակուտներ: Ուզբո-Ֆիննական լեզվախմբի ժողովուրդները՝ մորդվանները, մարիները, ուզմուրտները, կոմիները, հաստատվել էին Պովոլժիեում, Եվրոպական Ռուսաստանի Հյուսիսում, Ուրալում: Հայերը ռուսական պետության սահմաններում հաստատվել էին տարբեր պատմափուլերում ու դարեր ի վեր ապրելով զանազան վայրերում՝ ստեղծել էին իրենց համայնքները: Նրանք Ռուսաստանի թագավորներից ու կայսրերից ստանալով բազմաթիվ արտոնաչնորհազրկեր, ընդհանուր առմամբ նպաստում էին երկրի տնտեսության առաջընթացին, պետության հզորացմանը և մշակույթի զարգացմանը:

XIX դարի առաջին կեսին Ռուսաստանյան կայսրությունը զբաղեցնում էր լայնածավալ տարածք՝ 18 մլն քառ. կմ, 74 մլն բնակչությամբ: Այդ պատմափուլում կայսրության կազմի մեջ մտնում էին Արևելյան Եվրոպայի ու Հյուսիսային Ասիայի հսկայական տարածքները, ամբողջ Անդրկովկասը, Հյուսիսային Ամերիկայի մի մասը՝ Ալյասկան, այսինքն՝ Բալթիկ ծովից մինչև Խաղաղ օվկիանոս: Ռուսաստանը, XIX հարյուրամյակում պահպանելով մեծ տերության կարգավիճակը, շարունակում էր զբաղվել իր առանձնահատուկ տեղը միջազգային հարաբերությունների համակարգում: Հատկապես վճռորոշ էր նրա ռազմաքաղաքական դերակատարումը քրիստոնյա ժողովուրդների պատմական ճակատագրում, քանդի այդ դարաշրջանի բոլոր գահակիրները՝ անխտիր արտաքին քաղաքականության ուղեծրում որդեգրելով ժառանգականության ռազմավարությունը և Հաջորդականության մարտավարությունը, հանդես էին գալիս Օսմանյան

կայսրութեան արյունոտ բռնատիրութիւնն ինչ նրանց ազատագրելու պատմական առաքելութեամբ, զրանով իսկ անշուշտ ամրապնդում էին Ռուսաստանի դիրքերը միջազգային ասպարեզում: Հետևաբար, Ռուսաստանի քաղաքական ազդեցութիւնը նշանակալից էր ոչ միայն կայսրութեան տարածքում ապրող ոչ ռուս ժողովուրդների, այլև մեծ էր իր մերձակա Հարակից Հարևան և Հեռավոր երկրների ու պետութիւնների վրա: Այս ամենը թերևս բավական է հիմնավորելու համար, թե ինչու ոչ միայն ռուս, այլև օտարազգի պատմաբանները, հասարակական-քաղաքական մտքի ներկայացուցիչները, դիվանագետները, պետական և ռազմական բարձրաստիճանային ցուցարարեցիկ մեծ հետաքրքրութիւն XIX դարի Ռուսաստանի պատմութեան նկատմամբ: Այս պատմափուլի համակողմանի և անաչառ լուսաբանումը կարևորվում է հատկապես հայոց նոր պատմութեան առանցքային հիմնահարցերի և Անդրկովկասում ծավալված ռազմաքաղաքական իրադարձութիւններում Ռուսաստանի դերակատարման տեսանկյունից, որով ավարտվեց Հյուսիսարևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանյան կայսրութեանը: Հայկական հարցի արծարծման առումով նույնպես առանձնահատուկ է ռուսական դիվանագիտութեան լայնածավալ գործունեութիւնը Սան-Ստեֆանոյում և Բեռլինում, որից հետո այն դարձավ միջազգային դիվանագիտութեան հիմնախնդիր ու դիվանագիտական լաբորիանթում վերածվեց յուրատեսակ կովախնձորի մեծ տերութիւնների կառավարող շրջանների համար: Հետևաբար, հայ պատմագրութեան, հասարակական-քաղաքական մտքի ներկայացուցիչների առաջնահերթ խնդիրներից է համակողմանիորեն քննախոսել Ռուսաստանի պատմութիւնը, որը զգալիորեն կնպաստի հայոց նոր պատմութեան հիմնախնդիրների լուսաբանմանը: XIX դարի Ռուսաստանի պատմութեան ուսումնասիրութիւնն ունի ոչ միայն գիտատեսական, այլև գործնական-կիրառական նշանակութիւն, իսկ արդիականութիւնը, քաղաքական հրատապութիւնը կասկածից վեր է, անվիճելի է ու ակնհայտ:

Արդ, երբ հայ-ռուսական քաղաքական առնչութիւնները զարգանում են որակապես նոր հիմքերի և սկզբունքների վրա, իրեն երկու ինքնիշխան պետութիւններ, միջազգային հարաբերութիւնների լիբրավ սուբյեկտներ, առաջնահերթ նշանակութիւն է ստանում նորանկախ Հայաստանի Հանրապետութեան գլխավոր ու հիմնական դաշնակից Ռուսաստանի Դաշնութեան պատմութեան քննախոսութիւնը և քաջ իմացութիւնը:

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԻՆ

ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒՆ

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՌԱՋԻՆԻ ԳԱՀԱԿԱԼՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

§ 1. ԵՐԻՏՅԱՍԱՐԴ ԿԱՅՍՐԻ ՀԱՄԱԼԻՐ ԲԱՐԵՓՈՒՍՈՒՄՆԵՐԸ

Ռուսաստանյան կայսրութեան քաղաքական պատմութեան մեջ 1801 թ. մարտի 11-ի, լույս 12-ի գիշերը տեղի ունեցավ պալատական վերջին հեղաշրջումը, որը ճակատագրական ու ողբերգական դարձավ «Թագադրված Համլետի» և «Միներվայի որդու»՝ կայսր Պավել Առաջինի համար, քանզի դավադիրները Պետերբուրգի գեներալ-նահանգապետ Պալենի գլխավորութեամբ կայսրին զրկեցին ոչ միայն գահից, այլև կտրեցին նրա կյանքի թելը: Ընդ որում, Պալենին փաստորեն հաջողվեց դավադրութեան մեջ ընդգրկել ու իր կողմը գրավել Թագածառանգ Ալեքսանդրին, վախեցնելով նրան, թե իրեն սպասում է Պյոտր Առաջինի որդու՝ արքայազն Ալեքսեյի դառը և ողբերգական ճակատագիրը: Ալեքսանդրը հակված էր հավատալ Պալենին, որովհետև Պավել Առաջինը դավադրութեան նախօրեին, դժգոհ լինելով որդուց, նրան ենթարկել էր յուրատեսակ տնային կալանքի՝ Թագածառանգին փակելով իր առանձնասենյակում: Ավելին, ըստ ռուսական պատմագիտական մտքի առանձին ներկայացուցիչների տեսակետի, Եկատերինա Երկրորդը ծրագրում էր Պավելին ընդհանրապես զրկել գահից և կայսր հռչակել իր սիրելի թոռանը՝ Ալեքսանդրին, որի հետևանքով սառը, թերևս թշնամական հարաբերութիւններ էին հաստատվել ոչ միայն Եկատերինա Երկրորդի ու Պավելի, այլև վերջինիս ու Ալեքսանդրի միջև: Ի վերջո, Թագածառանգը տվեց իր թույլ համաձայնութիւնը, պայմանով, որ նրանք միայն կբավարարվեն Պավելի գահազրկմամբ, կխուսափեն ծայրահեղ քայլից՝ արյունահեղութիւնից:

Պալենի պատասխանը փաստորեն անորոշ էր, երկիմաստ, որովհետև դավադիրների նախապես մշակած ծրագրի մեջ չէր մտնում ապագա կայս-

րի պայմանը և խնդրանքը: Պալենը հասավ իր նպատակին և, եթե հավատանք լեհ աղնվական Ադամ Չարտորիչսկուն՝ Ալեքսանդրի մերձավորներից ու «երիտասարդ բարեկամներից» մեկին, դավադրության մեկ այլ պարագույն՝ Պանինը նույնպես կարողացավ ստանալ տատանվող և հուսահատված թագաժառանգի համաձայնությունը: Պավել Առաջինը սպանվեց Միխայլովյան դղյակում: Ներսում գտնվողներից ոչ մեկը մտադրված չէր փրկել կայսրին, ցանկություն չունեի պաշտպանել նրան, ուստի և պարզ է, թե ինչու պահանջվեց ընդամենը երկու ժամ պավլովյան վարչակարգը վերացնելու համար:

Ալեքսանդրի աչքերից արցունքներ ցայտեցին, երբ նա իմացավ հոր սպանության մասին: «Բավ է երեխայություն անել, կուտորեն ասաց Պալենը, - գնացեք թագավորելու և երևացեք գվարդիային»: Իսկապես, Միխայլովյան դղյակի պատուհանների տակ անշարժ գորաշարքով կանգնած նոր կայսրին սպասում էին Սեմյոնովյան, Իզմայլովյան, Պրեոբրաժենսկյան գնդերը, որոնք նույն գիշերը երզվեցին Ալեքսանդրին: Սակայն այդ արարողության կապակցությամբ հեծյալ գվարդիայի գնդում կատարվեց մի անցանկալի ու անսպասելի միջադեպ զինվորները հրաժարվեցին «ուռա» բացականչել, որովհետև նրանք անհավանական էին համարում Պավելի մահը: Այս վտանգավոր միջադեպը անհավասար հարթելու նպատակով գնդի հրամանատարությունը հարկադրված եղավ զինվորներից մի քանիսին ցույց տալ հանգուցյալ կայսրին: Այնուհետև հրամանատարը զինվորներից մեկին հարցրեց. «Եղբայրս, ուրեմն ի՞նչ, տեսա՞ր կայսր Պավել Պետրովիչին: Նա իսկապե՞ս մահացել է: - Ճիշտ այդպես, ձերդ բարձր բարեծնություն, հաստատ մահացել է, - պատասխանեց զինվորը: - Կերզվե՞ս արդյոք այժմ Ալեքսանդրին: Ճիշտ այդպես, թեև հանգուցյալից ավելի լավ չի լինի»:

Պավելի մասին շատ արագ մոռացան: Նոր կայսր, նոր հույսեր և ակնկալիքներ: Այդպես էր հնուց ի վեր Ռուսիայում, թեև նոր տիրակալները հաղվադեպ էին արդարացնում այդ հույսերը: Ալեքսանդր Առաջինը կայսրական գահը ժառանգեց ծայրահեղ թանկ՝ հորը դոհարերելու գնով: Ուստի և օրինաչափ է, որ 23-ամյա երիտասարդ կայսրը մինչև վերջ էլ չկարողացավ հաշտվել կատարված հրեշավոր քայլի հետ: Դա, անշուշտ, ծանր, անմոռանալի, թերևս աններելի հոգեկան բեռ էր, որն ուղեկցեց կայսրին նրա բարդ ու դժվարին, միգուցե և ողորդական կյանքում: Նրա հոգեկան աշխարհի երկվությունն ակնհայտ էր՝ մի կողմից իշխանության ձգտման և դրան հասնելու նիցռական գերմարդու տենչը, մյուս կողմից դուրս որդիական անկեղծ սերը, միահյուսվեցին պատմական անհատի ու սովորական մարդ մահկանացուի սրտում: Այս ամենից ծվատված, տանջվելով Պավելի դեմ կազմակերպված թեկուզև պասիվ, անուղղակի դավադրությանը մասնակցելու խղճմտանքից Ալեքսանդրը մասամբ տուրք

տվեց միատիկական (առեղծվածային, խորհրդամոլության) տրամադրություններին: Այդ առնչությունը կայսրը սկսեց բարեկամանալ գրող, արկածախնդրուհի և գուշակուհի բարոնուհի Կրյուզների հետ: Վերջինս, քարոզելով բոլոր քրիստոնյաների միասնության անհրաժեշտությունը և նախագուշակելով հավատքի և հավատամերժության միջև մեծ ճակատամարտերի անխուսափելիությունը, մարդարեաբար եզրակացնում էր, որ այդ պայքարը վերջին հաշվով հանգեցնելու է Քրիստոսի թագավորության հաստատմանը Արարատ լեռան ստորոտում:

Ալեքսանդրի քաղաքական կենսագրության հակասական էջերը և հատկապես ֆիզիկապես առողջ, բայց հոգեպես կոտրված 47-ամյա կայսրի անժամանակ մահը զարմացրին ժամանակակիցներին, որի հետևանքով երկար տարիներ պահպանվեց այն վարկածը, թե Պետրոպավլովյան տաճարում՝ Ռոմանովների արքայատան գերեզմանատանը հանգչում է ոչ թե կայսրի, այլ մեկ ուրիշ մարդու դին: Իսկ կայսրը հասարակ գեղջուկի հագուստով գնացել է ժողովրդի մեջ, շրջել քաղաքներով ու գյուղերով ծերուկ Ֆյոդոր Կուզմիչ անվան ներքո, հալածվել ու դառնություններ է կրել իշխանությունների կողմից, և ի վերջո հանգրվանել ու օթևան գտել սիբիրյան մի հեռավոր ու խուլ գյուղում: Գեղջուկների հետ միասին սնվել է կարտոֆիլով, նրանց երեխաներին զրաճանաչ դարձրել և հետոնֆորմյան տարիներին կնքել իր մահկանացուն: Այս վարկածի կողմնակիցները հենվում են, իրենց կարծիքով, այն կարևոր փաստի վրա, որի համաձայն իբր կայսրը հուսահատության մեջ ընկնելու պահերին հաճախ ասում էր, թե որոշել է վայր դնել թագը և ապրել մասնավոր կյանքով: Ալեքսանդր Առաջինը եկատերինա Երկրորդի ջանքերի շնորհիվ ստացել էր փայլուն դաստիարակություն և կրթություն: Դա հանձնարարվեց կայսրուհու մերձավոր բարեկամներից և սիրեցյալներից մեկին՝ համոզված միապետական Մալտիկովին: Միաժամանակ եկատերինայի անմիջական նախաձեռնությամբ Ալեքսանդրի դաստիարակությամբ դրադվեց չվեյցարացի չափավոր հանրապետական Լազարպը: Նա իր սանին դաստիարակում էր ֆրանսիական լուսավորիչների աշխատությունների ոգով, նրանց առաջադեմ գաղափարներով: Նա իր տատից և հատկապես Լազարպից սովորեց հարգալից վերաբերմունք ցուցաբերել կրթության, լուսավորության, գիտության, արվեստի նկատմամբ: Ալեքսանդրը երիտասարդ հասակում հաջողությամբ յուրացրեց դիվանագիտության նուրբ արվեստը: Նրա դիվանագիտական արտասովոր ընդունակությունները դրսևորվեցին շատ վաղ, որը հնարավորություն ընձեռեց իրեն ոչ միայն պաշտպանել Ռուսաստանի ազգային-պետական շահերը, այլև կարգավորել միջազգային հարաբերությունների համակարգում պարբերաբար ծագող կնճռոտ հիմնախնդիրները: Ժամանակակիցները տվել են երիտասարդ կայսրի դիպուկ, համակողմանի և սպառիչ գնահատականը՝ «նուրբ է, ինչպես ածելին, սուր է,

ինչպես ասեղի ծայրը, կեղծ է, ինչպես ծովի փրփուրը», «նա դերասան է գահի վրա»: Ալեքսանդր Առաջինը գահ բարձրացավ ներքաղաքական բարդ պայմաններում, որը պահանջում էր նոր կայսրից ցուցաբերել պետական գործչի համար անհրաժեշտ հեռատեսություն, ճկունություն, շրջահայեցողություն, խուսանավելու ունակություն, սիրաշահելու կարողություն, հանդուրժողականություն՝ առաջին հերթին ինքնակալության սոցիալական հենարան հանդիսացող ազնվականության նկատմամբ: Այս առումով միանգամայն օրինաչափ է, որ երիտասարդ կայսրը գահ բարձրանալուց հետո շտապեց անմիջապես հրապարակավ հայտարարել, թե շարունակելու է իր տատի քաղաքականությունը: «Կառավարել եկատերինս Մեծի օրենքներով և ոգով»՝ նշված է նրա գահակալության առթիվ հրապարակված ծրագրային Հրովարտական (Մանիֆեստում): Ահա թե ինչու Ալեքսանդրի թագավորության առաջին տարիները նրա շատ ժամանակակիցների մոտ թողեցին լավագույն հիշողություններ: «Ալեքսանդրյան օրերին հիանալի սկիզբ»՝ այսպես ուսման մեծ բանաստեղծ Ալեքսանդր Պուշկինը բնութագրեց այդ տարիները: Ալեքսանդրի թագավորության առաջին փուլը իսկապես լիբերալիզմի (ազատականության) տարիներ էին, որովհետև հիմնականում վերականգնվեց «լուսավորյալ միապետության» համար բնորոշ քաղաքականությունը: Նոր կայսրն անմիջապես վերացրեց Պավել Առաջինի՝ ազնվականության համար առավել անցանկալի որոշումները և հրամանները: Ալեքսանդրը վերականգնեց ազնվականական նահանգային ընտրությունները, հռչակեց քաղաքական համաներում Պավելի ժամանակ շնորհազրկված ազնվականներին, թույլատրեց արտասահմանյան գրականության ներմուծումը Ռուսաստան և արտահանումը երկրից, զգալիորեն մեղմացրեց գրաքննությունը, արգելեց մամուլում հրապարակել ճորտ գյուղացիների առք ու վաճառքի մասին, որը հեղինակազրկում էր Ռուսաստանը միջազգային ասպարեզում: Ալեքսանդր Առաջինը պալատից «անաղմուկ» հեռացրեց ոչ միայն Պավել Առաջինի սիրեցյալներին, այլև պալատական հեղաշրջման ղեկավարներին: Ալեքսանդր Առաջինը՝ «լուսավորյալ միապետը» և նրա մերձավոր շրջապատը քաջ գիտակցում էին, որ ավատատիրական-ճորտատիրական համակարգը գլխավոր խոչընդոտող գործոնն է կայսերական Ռուսաստանի հետագա քաղաքական և տնտեսական առաջընթացի ճանապարհին: Ուստի և նրանք ուղիներ էին փնտրում ինքնակալության հիմքերն անսասան պահելու հանդերձ անցկացնել լայնածավալ բարեփոխումներ: Ալեքսանդրի շուրջ համախմբվեցին նրա «երիտասարդ բարեկամները», որոնք էլ ստեղծեցին «Գաղտնի կոմիտեի»՝ պետական վերափոխումներ նախապատրաստելու և անցկացնելու համար:

«Գաղտնի կոմիտեի» մեջ մտան Պ. Ստրոգանովը, Վ. Կոչուբեյը, Ն. Նովոսիլցևը, լեհ ազնվական Ա. Չարտորիյժսկին: Վերջինս հետագայում դար-

ձավ 1830-1831 թթ. լեհական ապստամբության ղեկավարներից մեկը և ֆրանսերեն գրեց իր հիշողությունները՝ հետաքրքիր տեղեկություններ հայտնելով ռուսական կայսրի մասին: Թեև «Գաղտնի կոմիտեն» չդարձավ պետական պաշտոնական կառույց, այսուհանդերձ նրա անդամների ազդեցությունը կայսրի վրա նկատելի էր ու անվիճելի: Բայց «Գաղտնի կոմիտեի» կյանքը շատ կարճատև եղավ, քանզի 1803 թ. այն դադարեց գործելուց: «Գաղտնի կոմիտեի» աշխատանքները և ծրագրերը ուսումնասիրելու համար թերևս միակ հավաստի աղբյուրը Ստրոգանովի «Գրառումներն» են և «Սահմանադրության նոթերը», որոնցից կարելի է եզրակացնել, որ նրա անդամները մոտ ապագայում չէին ծրագրում ազատագրել գյուղացիներին ճորտական կարգավիճակից, սահմանել քաղաքացիական ազատություն: Նրանք այդ ամենը համարում էին հեռավոր ապագայի խնդիր, թեև Ալեքսանդրը թագաժառանգ եղած ժամանակ Լագարպի հետ ունեցած զրույցներում հաճախ չէր հաշտվում գյուղացիության ճորտական կարգավիճակի հետ, հասկանում էր, որ կատարյալ չէ գործող պետական կառավարման համակարգը: Ալեքսանդր Առաջինը գահ բարձրացավ այն ժամանակ, երբ բարեփոխումների վերաբերյալ ակնկալիքները ստացել էին ընդհանուր բնույթ: Ճանաչված գրող-արձակագիր Ժերմենսկի Ստալը, հիացած Ալեքսանդրով, ասում էր. «Միապետ, Դուք ինքներդ ձեր կայսրության համար Սահմանադրություն եք, իսկ Ձեր գիտակցությունը՝ նրա երաշխիքը»: Կայսրը պատասխանում էր առանց համեստության. «Եթե դա այդպես է, ապա ես երջանիկ պատահականություն եմ»:

Ալեքսանդր Առաջինի վերափոխումներն ընդգրկեցին երեք հիմնական՝ պետական-կառավարման վարչաձևի բարեփոխման, գյուղացիական-ազրարային, կրթության-լուսավորության ոլորտները: Պետական վարչաձևի բարեփոխման օգտին արտահայտվեցին լիբերալ ազնվականները: Պյոտրյան կոլեգիաները փոխարինվեցին նախարարություններով, որը նպաստեց իշխանության հետագա կենտրոնացմանը և ամրապնդմանը: Ի դեպ, կառավարման նախարարական համակարգը հաստատվել էր ավելի վաղ, դեռևս Պավելի օրոք, պարզապես 1802 թ. սեպտեմբերի 8-ի հրամանագրի ղրան հաղորդեց միայն իրավական բնույթ: Այս բարենորոգմամբ ավարտվեց իշխանության գործադիր մարմինների իրավասության հստակ սահմանադատման գործընթացը: Ղեկավարման կոլեգիալ համակարգը փոխարինվեց միանձնյա իշխանությանը, քանզի նախարարները ենթարկվում էին միայն կայսրին, հաշվետու էին միայն նրան, որը նպաստեց բացարձակ միապետության ամրապնդմանը:

Ստեղծվեցին ութ նախարարություններ՝ ցամաքային դիմված ուժերի, ռազմածովային, ներքին գործերի, արտաքին գործերի, ֆինանսների, արդարադատության, կոմերցիայի, լուսավորության, որոնց թիվը 1811 թ. հասավ տասներկուսի: Կայսրի «երիտասարդ բարեկամները» նոր ստեղծ-

ված նախարարություններում զբաղեցրին բարձր պաշտոններ: 1803 թ. հրապարակվեց «Ազատ հողագործների մասին» հրամանագիրը, որի համաձայն կալվածատերերը իրավունք ստացան ազատ արձակել իրենց գյուղացիներին՝ առանձին կամ ամբողջ գյուղերով փրկագնոված հողերի հետ միասին: Այս հրամանագիրը, որի նախագիծը կազմել էր կոմս Ս. Ռուսյանցևը, գործնական մեծ նշանակություն չունեցավ, քանզի Ալեքսանդրի ամբողջ թագավորության ընթացքում միայն մի քանի կալվածատերեր կիրառեցին այդ հրամանագիրը, և ազատ հողագործների կարգավիճակ ստացավ ճորտ գյուղացիության մոտ 0,5 %-ը, այսինքն՝ շուրջ 47 հազար արական սեռի գյուղացիներ: Փրկագինը բավականին մեծ էր, և գյուղացիներն ի վիճակի չէին վճարել պահանջվող գումարը: Սակայն այդ հրամանագիրը, այնուամենայնիվ, որոշ նշանակություն ունեցավ, քանզի կառավարությունը պաշտոնապես ճանաչեց գյուղացիներին ճորտատիրական կարգավիճակից ազատագրելու հնարավորությունը և օրենսդրորեն որոշեց ազատագրման պայմաններն ու բնակչության նոր շերտերի՝ «ազատ հողագործների», իրավունքները: Ավելին, այդ հրամանագրի կիրարկումը շարունակվեց Ալեքսանդրի մահից հետո, մինչև 1858 թ., և այդ ճանապարհով ազատագրվել է 1,5 %-ը, այսինքն՝ 152 հազար մարդ: Ալեքսանդրի օրոք ճորտատիրական իրավունքը փաստորեն վերացվեց միայն ռուսական կայսրության Օստոլեյսկի (Մերձբալթիկայի) նահանգներում: Ալեքսանդր Առաջինի ժամանակ Ռուսաստանում բացվեցին նոր համալսարաններ, միջնակարգ ուսումնական հաստատություններ: Մինչ այդ գործում էր միայն Մոսկվայի համալսարանը, որը բացվել էր 1755 թ. կայսրուհի Ելիզավետա Պետրովնայի օրոք: Ալեքսանդրի ժամանակ համալսարաններ բացվեցին Կազանում, Նարկովում, Գորպատում (Տարտու): Պետերբուրգի մանկավարժական ինստիտուտը վերակառուցվեց համալսարանի, իսկ Ցարսկոյե Սելոյում բարձրաստիճան ազնվականության գավակների համար համալսարանական ուսուցման ծրագրին մոտ բացվեց լիցեյ՝ պետական ծառայողներ նախապատրաստելու նպատակով: Այնտեղ սովորել են ռուս մեծ բանաստեղծ Ա. Ս. Պուշկինը, հայտնի դիվանագետ Ա. Գորչակովը, հասարակական-քաղաքական մտքի շատ նշանավոր գործիչներ: Բարձրագույն կրթական համակարգի զարգացման գործընթացում կարևոր նշանակություն ունեցան 1804 թ. նոյեմբերի 5-ի համալսարանական կանոնադրությունը և 1804 թ. հուլիսի 9-ի գրաքննության կանոնները: Պետական կառավարման համակարգում բարենորոգումներ անցկացնելու առաջարկների մի ամբողջ փաթեթ կայսրին ներկայացրեց խոշոր պետական գործիչ Մ. Մ. Սպերանսկին (1772-1839 թթ.), որը միառժամանակ վայելեց Ալեքսանդրի վստահությունը, համակրանքը և հովանավորությունը: Սպերանսկու զեկուցումների հստակությունը ու նրբագեղու-

թյունը նույնպես զարմացրեց և հիացրեց կայսրին: Ալեքսանդրը միանգամից գնահատեց նրա խելքը և տաղանդը, ճշտակատարությունը և ջանադրությունը, վերջինիս մեջ տեսավ այն մարդուն, որին վաղուց էր փնտրում: Ալեքսանդրը համոզվեց, որ իր կողմից մտահղացված բարեփոխումները կարող է գլխավորել հենց Սպերանսկին, որ անհրաժեշտ է նրան հանձնարարել ղեկավարելու նախատեսված վերափոխումների իրագործումը:

Սպերանսկին, ի տարբերություն «Գաղտնի կոմիտեի» և «կայսրի երիտասարդ բարեկամների», չունեց ազնվականական ծագում՝ ծնվել էր գյուղական հոգևորականի ընտանիքում: Միայն բացառիկ ընդունակությունը և աշխատասիրությունը հնարավորություն ընձեռեցին նրան գրավել պետական բարձր պաշտոններ: Սպերանսկին Պետերբուրգի հոգևոր սեմինարիան (ակադեմիան) ավարտելուց հետո իր բազմակողմանի և խոր գիտելիքների շնորհիվ նույն հաստատությունում սկսեց դասավանդել մաթեմատիկա, ֆիզիկա, այնուհետև փիլիսոփայություն և ճարտասանություն: Սպերանսկին գեներալ-դատախազ իշխան Կուրակինի անմիջական աջակցությամբ անցավ պետական ծառայության: Կայսեր հովանավորությանն արժանանալուց հետո կառավարական բոլոր նախագծերը, որոշումները, գրազրույթունները կազմվում էին կամ անձամբ Սպերանսկու կողմից, կամ էլ նրա անմիջական հսկողության տակ: Սպերանսկին 36 տարեկան հասակում ձեռք բերեց լայն ճանաչում ոչ միայն Ռուսաստանում, այլև կայսրության սահմաններից դուրս: Սպերանսկին Ալեքսանդրի արքունիքում դարձավ բարձրաստիճան պաշտոնյա, ապա և կայսեր գլխավոր խորհրդատուն, նրա համար հատկապես դժվարին տարիներին՝ Առևտրիցի ճակատամարտից հետո, Տիլզիտի հաշտության պայմանագրի կնքման նախօրյակին ու այն ստորագրելուց հետո: Կայսրը և կայսրուհին հաճախ էին Սպերանսկուն հրավիրում իրենց մոտ: Նա ուղեկցեց Ալեքսանդրին էրֆուրտ, որտեղ տեղի ունեցավ երկու կայսրերի երկրորդ հանդիպումը: Ֆրանսիացիների կայսրն, իրեն հատուկ խորաթափանցությամբ, անմիջապես նկատեց և գնահատեց համեստ պետական քարտուղարի խելքը և ունակությունները: Զրուցելով Ալեքսանդրի հետ՝ Նապոլեոնը, կիսալուրջ-կիսակատակ հարցրեց. «Կայսր, Ձեզ համար արդյոք ցանկալի չէ այս մարդուն (Սպերանսկուն – Մ. Մ.) փոխանակել որևէ թագավորության հետ»: «Ռուսաստանի միակ պայծառ գլուխը», – այսպես անվանեց Սպերանսկուն Նապոլեոն Բոնապարտը: «Մեծ և ամենազոր Սպերանսկին՝ կայսրության գլխավոր քարտուղարը և փաստացի առաջին նախարարը», – այսպես է բնութագրել Սպերանսկուն այն ժամանակ Պետերբուրգում Սարդինիայի թագավորության ղեսպանորդ կոմս Ժ. դը Մեստրը:

Սպերանսկին կայսրի հանձնարարությամբ 1809 թ. մշակեց բարեփոխումների նախագծերի մի ամբողջական փաթեթ: Պետական կառույցների

վերափոխման հիմքում Սպերանսկին դրեց օրենսդիր, գործադիր, դատական իշխանությունների տարանջատման սկզբունքը: Այս իշխանությունները կենտրոնացված էին կայսեր ձեռքին: Պետական համակարգերի մեջ Սպերանսկին առանձնացրեց սահմանադրական միապետությունը, այն համարելով կառավարման լավագույն ձևը: Այս առնչությամբ կայսրին օրենքներ մշակելու գործընթացում օգնելու էին օրենսդրախորհրդակցական երկու մարմիններ՝ Վերին պալատը՝ Պետական խորհուրդը, որի անդամները նշանակվում էին նրա կողմից և ընտրովի մարմին Ստորին պալատը, որին Սպերանսկին տվեց Պետական Դուռնա անվանումը: Ընտրական իրավունքից օգտվելու էին Ռուսաստանի այն քաղաքացիները, ներառյալ և պետական գյուղացիները, որոնք ունեն հող ու կապիտալ: Արհեստավորները, տնային ծառաները, ճորտ գյուղացիները, թեև ընտրություններին չէին մասնակցելու, բայց օգտվելու էին քաղաքացիական կարևորագույն իրավունքներից: Դրանցից գլխավորը Սպերանսկին ձևակերպեց այսպես. «Ոչ ոք չի կարող պատժվել առանց դատական վճռի»: Դա պետք է հատկապես սահմանափակեր կալվածատեր-ճորտատերերի իրավունքները և կամայականությունները ճորտ գյուղացիների նկատմամբ: Դուռնա օժտվելու էր նախարարների հաշվետվությունները լսելու և օրենսդրական նախագծերի վերաբերյալ եզրակացություններ կատարելու լիազորություններով: Սպերանսկին ցանկանում էր ստեղծել իսկապես պատասխանատու վերակառուցված նախարարություններ: Նա գտնում էր, որ Դուռնայում քննարկումները պետք է լինեն ազատ, դատողությունները և կարծիքները անկաշկանդ, որոնք արտահայտելու էին «ժողովրդի կամքը»: Սա էր Սպերանսկու սկզբունքորեն նոր մոտեցումը՝ նա ցանկանում էր կենտրոնական և տեղական իշխանությունների գործունեությունը դնել հասարակական կարծիքի հսկողության ներքո: Այս ամենի շնորհիվ, ըստ բարենորոգչի, կավարտվեր պառլամենտական համակարգի ձևավորումը Ռուսաստանում: Այն, որ կայսրը պահպանում էր գործադիր իշխանությունը և օրենսդրական նախաձեռնությունը XIX դարի սկզբին դիտարկվում էր իբրև միապետության կենսունակության, հզորության, կայունության արտահայտություն, քանզի Հենց այդպիսի իշխանությունը ժամանակի օրենսդիրների ու բարեփոխիչների տեսակետով վեր է կանգնած առաձին անհատների շահերից, տարբեր խավերի նեղ ցանկություններից և դասերի եսասիրական նպատակներից: Սպերանսկու ծրագրի համաձայն նախատեսվում էր տեղերում ստեղծել վոլոստային, օկրուգային, նահանգային դուռնաներ, իսկ կենտրոնում՝ Պետական Դուռնա: Դատական մարմինները, ընդհուպ մինչև նահանգային դատարանը, նույնպես լինելու են ընտրովի, իսկ բարձրագույն դատական մարմինը՝ Սենատը, կազմվելու

էր նահանգային դուռնաներից ընտրված ներկայացուցիչներից՝ ցմահ, անձամբ կայսրի կողմից: Կայսրության բարձրագույն դատական մարմնի վրա դրվեց երկրում օրինականության պահպանմանը հետևելու և վարչական մարմինների գործունեությունը վերահսկելու պարտականությունը: Սպերանսկին առաջարկում էր պետական հիմնարկներում պաշտոններ զբաղեցնելու համար սահմանել համապատասխան կրթական ցենզ, որը զգալիորեն կկարգավորեր ու կրարելավեր երկրի կառավարման համակարգը: Սպերանսկու նախագծերում սոցիալական հարցեր արծարծված չեն, լիովին անտեսված են: Նա նույնիսկ չփորձեց դնել ճորտատիրական համակարգի վերացման խնդիրը, բայց ոչ դրա ջատագովը և պաշտպանը լինելու պատճառով: Ազատական հայացքներ ունեցող գործիչը, ճորտատիրական կարգերի վերացման համոզված կողմնակիցը, քաջատեղյակ էր, որ կայսրը, հաշվի առնելով ազնվականության ճնշող մեծամասնության հայացքները և տրամադրությունները, ոչ մի դեպքում չէր համաձայնվի ձեռք բարձրացնել ճորտատիրական համակարգի վրա: Այնուամենայնիվ, ազատական բովանդակություն ունեցող Սպերանսկու կազմած նախագծերը անվերապահորեն ունեին առաջադիմական նշանակություն, որովհետև դրանց իրագործումը կնպաստեր պետական կառուցվածքի կատարելագործմանը, իրավաքաղաքական համակարգի զարգացմանը և տնտեսության առաջընթացին: Պարտադիր համարելով իշխանական թևերի տարանջատման խնդիրը՝ Սպերանսկին գործադիր իշխանությունը դնում էր օրենսդրի և դատականի միջև: Գործադիր իշխանությունը պետք է որոշեր կյանքի կոչվող օրենքների ուղիները և մեթոդները: Ընդ որում, Սպերանսկին հստակորեն տարբերակում էր իշխանություն և միահեծանություն, բռնապետություն հասկացությունները: Օրենքների վրա հիմնված իշխանությունը կառավարությանը տալիս է ուժ, իսկ բռնապետությունը կործանում է այն, ուստի միահեծանությունը լիովին մերժվում է Սպերանսկու կողմից: Ճիշտ և արդար օրենսդրությունը կառավարությունը տալիս է ավելի մեծ իրական ուժ, քան անսահմանափակ միահեծանությունը: Այս առնչությամբ Սպերանսկին պատմաքաղաքական ղուգահեռներ է անցկացնում Անգլիայի և Թուրքիայի պետաիրավական համակարգերի միջև՝ նախապատվությունը, անշուշտ, տալով անգլիական վարչաձևին: Բարենորոգումների ծրագիրը մշակելիս Սպերանսկին ղեկավարվում էր «ճանաչել սեփական ժողովրդին, իմանալ իր ժամանակը» կարևորագույն կարգախոսով: Սպերանսկու վերափոխումների ամբողջական փաթեթի իրագործումը սկսվեց 1810 թվականից, երբ ստեղծվեց Պետական խորհուրդ, որի կազմում էին կայսրի կողմից նշանակված նախարարները և մյուս բարձրաստիճան պաշտոնյաներ: Կայսրին կից խորհրդակցական մարմին

Պետական խորհուրդը քննարկում էր նոր օրենսգծեր և պետական կարևորություն ներկայացնող հիմնախնդիրներ: Բայց դրանով զործընթացը կանգնեցվեց:

Սպերանսկու անձի և նրա բարեփոխումների դեմ երկրում սկսեց բարձրանալ դժգոհություն հզոր ալիք: Նրա դեմ համախմբվեցին բոլոր պահպանողական ուժերը՝ Կարամզինից սկսած մինչև Արակչենը, որը լուրջ նախազգուշացում էր կայսրին, և նա ի վիճակի չէր անտեսել այդ նախագծերի նկատմամբ ազնվականության լայն շրջանների թշնամական դիրքորոշումը: Ռուս նշանավոր հրապարակախոս, գրող և պաշտոնական պատմագիր Ն. Կարամզինը 1811 թ. կայսրին ներկայացրած «Հին և նոր Ռուսաստանի մասին նոթերում», արտահայտելով պահպանողական ազնվականության տրամադրությունները, հանդես եկավ ամեն տեսակի փոփոխությունների դեմ՝ ի պաշտպանություն բացարձակ միապետության: Նա, Ռուսաստանի պատմության օրինակով, համոզում էր կայսրին չսահմանափակել իր իրավունքները, որոնք անխուսափելի կղարձեն միապետության կործանումը Ռուսաստանում: Կարամզինի այս պատմաքաղաքական հայեցակետը հետագայում ընկավ «պաշտոնական ժողովրդայնության տեսության» և սլավոնասերների գաղափարախոսության հիմքում: «Մեզ սահմանադրություններ պետք չեն, - գրում էր Կարամզինը կայսրին, - տվեք մեզ 50 խելացի նահանգապետներ, և ամեն ինչ լավ կընթանա»:

Սպերանսկին շրջապատված էր վարձկան ու կամավոր քսու լրտեսներով, որոնք կայսրին էին հասցնում նրա յուրաքանչյուր անդգույշ խոսքը, որը չանտեսվեց հիշաչար և զգուշավոր կայսրի կողմից: Ոստիկանության նախարար Ա. Բալաչովը, կոմս Ֆ. Ռոստոպչինը տեղեկացրին կայսրին, թե իրր Սպերանսկին գաղտնի հեղափոխական մասոնականության ղեկավարն է Ռուսաստանում, որ նրա օրինակին պատրաստ են հետևել այնպիսի ճանաչված ու հեղինակավոր անձինք, ինչպիսիք են ծովակալ Մորզովինովը, ֆելդմարշալ Կուտուզովը: Ալեքսանդրը վախենում էր դավադրություններից, միշտ հիշում իր պապի՝ Պյոտր Երրորդի ողբերգական ճակատագիրը, առավել ևս նրա աչքի առաջ էր հոր սպանությունը: Նապոլեոնի դեմ նոր պատերազմի նախաչնամին լուրերն այն մասին, թե Սպերանսկին թշնամուն է հայտնում պետական գաղտնիքներ, ստիպեցին կայսրին լրջորեն բացատրվել կասկածյալի հետ: Զրույցը տեղի ունեցավ դեմ առ դեմ 1812 թ. մարտի 17-ին, կիրակի օրը: Միայն հետագայում հայտնի դարձան զրույցի առանձին մանրամասները. «Հանգամանքները պահանջում են, որպեսզի մենք, - ասաց Ալեքսանդրը Սպերանսկուն, - որոշ ժամանակով բաժանվենք: Ես, ցանկացած այլ ժամանակ, կօգտագործեի մեկ կամ նույնիսկ երկու տարի, որպեսզի քննեի քո դեմ ստացած մեղադրանքների ու

կշտամբանքների իսկությունը: Այժմ, երբ հակառակորդը պատրաստ է մտնել Ռուսաստանի տարածքները, ես պետք է հեռացնեմ քեզ ինձնից: Վերադարձիր տուն, այնտեղ կիմանաս մնացածը: Ցտեսություն»:

Տանը Սպերանսկուն արդեն սպասող ոստիկանության նախարար Բալաչովը տեղեկացրեց իրեն, թե նա անհապաղ պետք է մեկնի Նիժնի Նովգորոդ, այնուհետև՝ Պերմ: Սպերանսկու աքսորը պահպանողական ազնվականության շրջանում առաջացրեց բուռն և անթաքույց խանդավառություն: Ավելին, Սպերանսկու հրաժարականը հասարակությանն ավելի շատ ուրախություն պատճառեց և ոչ թե հրաժարություն, որովհետև հասարակության անհիմն կարծիքով իբր վերջապես բացահայտվեց դավաճանությունը, կանխվեց գյուղացիների խռովությունը, որոնց Սպերանսկին ցանկանում էր զինել ազնվականությանը ոչնչացնելու համար, թե ձախողվել է Ռուսաստանը Նապոլեոնին հանձնելու նրա մտահղացումը, և վերջապես ֆրանսիացիների կայսրի նկատմամբ ձեռք է բերվել առաջին լուրջ հաղթանակը: Միայն սթափ մտածող զինվորական նախարար Մ. Բարկլայ դը Տոլին ճիշտ նկատեց. «Այսպիսով, նախանձին ու չարությունը հաջողվեց հաղթել ճշմարտությանը»: Ավելին, հետագայում Ալեքսանդրը խոստովանեց, որ ինքը «հասարակական կարծիքի համար զոհարեց» Սպերանսկուն: Հավանաբար հենց այդ պատճառով Հայրենական պատերազմի հաղթական ավարտից հետո կայսրն աքսորից վերադարձրեց Սպերանսկուն, բայց նախկին սերտ կապերը չվերականգնվեցին: Թեև նա զբաղեցրեց պատասխանատու պաշտոններ, սակայն, այլևս չհասավ պետական նախկին բարձունքին: Սպերանսկին 1816 թ. նշանակվեց Պենզայի, 1819 թ. Սիբիրի նահանգապետ, իսկ 1821 թ. դարձավ իր իսկ կողմից ստեղծած Պետական Պորհրդի անդամ և իրր գերագույն քրեական դատարանի անդամ մասնակցեց դեկարրիստների դատավարությանը: Թեև Նիկոլայ Առաջինի թագավորության տարիներին Սպերանսկուն հանձնարարվեց պատասխանատու աշխատանք՝ կազմել «Ռուսաստանյան կայսրության օրենքների ժողովածուն», այնուամենայնիվ, տաղանդավոր պետական գործիչ ու մեծ բարեփոխչի աստղային ժամը՝ 1810-1811 թթ. մնաց չգերազանցված: Սպերանսկու նախազձերը շուրջ 60 տարով առաջ էին անցել Ռուսաստանում կենսագործված դատական բարեփոխումներից և մոտ մեկ հարյուրամյակով՝ 1905 թ. Հոկտեմբերի 17-ի Հրովարտակի բովանդակությունից: Հատկանշական է, որ Մ. Սպերանսկին սերտ ու ջերմ բարեկամական կապեր էր հաստատել Հայ ազատագրական շարժման նշանավոր գերդաստանի՝ Լազարյանների հետ, որոնց լավագույն վկայություններն են միմյանց հղած անկեղծ, հետաքրքիր ու արժև-

քավոր նամակները: Դեռևս Պավել Առաջինի գահակալման տարիներին կանցելը Ալեքսանդր Բորիսովիչ Կուրակինի ու նրա եղբոր՝ իսկական գաղտնի խորհրդական Ալեքսեյ Բորիսովիչ Կուրակինի առանձնատանը իսկական պետական-խորհրդական Հովհաննես Լազարյանը ծանոթացավ Սպերանսկու հետ: Դրանից հետո Սպերանսկին սկսեց հաճախ այցելել Լազարյանին ու առանձին դեպքերում մասնակցել պաշտոնական այն փաստաթղթերի ձևակերպմանը, որոնք առնչվում էին ինչպես մասնավոր հարցերի, այնպես էլ Ռուսաստանի ու Անդրկովկասի հայերի ու հայոց թեմերի հիմնախնդիրներին: Լազարյանների մոտ Սպերանսկին ծանոթացավ արքեպիսկոպոս Հովսեփ Արղուիթյանի հետ և վերջինիս խնդրանքով ստանձնեց Հայերենից ռուսերեն թարգմանված "Исповедание христианской веры Армянской церкви" – «Հայոց եկեղեցու քրիստոնյա հավատքի դավանանքը» գրքի սրբագրումը: Այն հրատարակվեց 1799 թ. և նվիրվեց կայսր Պավել Պետրովիչին: Լազարյանի առանձնատանը Սպերանսկին ծանոթացավ ու մերձեցավ շատ նշանավոր պետական այրերի հետ: Հովհաննես Լազարյանի մահից հետո բարեկամական հարաբերությունները պահպանվեցին Հովակիմ Լազարյանի հետ: Սպերանսկին կազմեց Արևելյան լեզուների Լազարյան ինստիտուտին վերաբերող փաստաթղթերը: Պետական-քարտուղար դառնալուց հետո նա Հովհաննես Լազարյանի այրու համար գրեց հոգևոր կտակը: Ավելին, հայր և որդի Հովակիմ ու Սաչատուր Լազարյանները դարձան կապող օղակ Սպերանսկու և Արակչեևի միջև նախկինում եղած լարվածության թուլացման և վերացման գործընթացում, որը սկսվել էր դեռևս 1816 թվականից: Ընդհանրապես ժամանակակից ռուս պատմագիտական, հասարակական-քաղաքական միտքը վերանայել է Արակչեևի գործունեությունը և ի հեճուկս խորհրդային ժամանակաշրջանի պատմագրության՝ տվել է ավելի իրատեսական ու անաչառ զնահատական:

Հայ առանձին պատմաբաններ ենթադրում են, որ Ռուսաստանի քաղաքական հովանու ներքո Հայաստանի ինքնավարության նախագծի մշակման գործընթացին մասնակցել է նաև Սպերանսկին, որը հեռու չէ պատմական ճշմարտությունից: Պերմ աքսորվելուց հետո այդ կապերը ոչ միայն չխզվեցին, այլև ավելի սերտացան: Նիկոլայ Պավլովիչի թագադրման պաշտոնական արարողության ժամանակ Սպերանսկին Մոսկվայում ապրում էր Լազարյանների առանձնատանը: Սպերանսկու բարեկամական հարաբերությունները Լազարյան ընտանիքի հետ շարունակվեց մինչև նրա մահը:

§ 2. ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՌԱՋԻՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Պալատական հեղաշրջումը և Պավել Առաջինի սպանությունը երիտասարդ կայսրի առաջ խնդիր դրեց հստակեցնել երկրի արտաքին քաղաքականության գերակայող գիծը և հիմնական ուղղությունը: Ընդհանրապես Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը, որպես կանոն, պայմանավորված էր Եվրոպայում ստեղծված միջազգային իրադրության և հատկապես երկու առաջատար տերությունների՝ Անգլիայի ու Ֆրանսիայի հակամարտության և անդիջում պայքարի հետ: Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը, իբրև խոշորագույն տերություններ, շարունակում էին հսկայական ներգործություն ունենալ միջազգային հարաբերությունների կարևորագույն գործընթացների վրա: Նոր կայսրին անհրաժեշտ էր ցուցաբերել դիվանագիտական առավել հեռամետություն, ճկունություն, խուսանավելու հմտություն, շրջահայեցություն, քաղաքական իրատես որոշումներ կայացնելու կարողություն: Ալեքսանդրը վաղ հասակից սկսեց հաջողությամբ յուրացնել դիվանագիտության նուրբ արվեստը, որը նրան հետագայում մեծ քաղաքականության մեջ հնարավորություն ընձեռեց ոչ միայն հաջողությամբ պաշտպանել Ռուսաստանի ազգային-պետական շահերը, այլև կարգավորել միջազգային հարաբերությունների կնճոռոտ, համանվիրոպական նշանակության հիմնահարցերը, որոնք հատկապես ի հայտ եկան Վիեննայի միջազգային վեհաժողովում: Գործնական քաղաքականությունը կայսր-դիվանագետից պահանջում էր հատկապես շրջահայեցություն ցուցաբերել ռուս-անգլիական ու ռուս-ֆրանսիական առնչություններում, խուսափել ծայրահեղություններից ու քաղաքական միակողմանի կողմնորոշումից, որով ղեկավարվում էր իր հայրը: Կայսերական Ռուսաստանի շահերը անգլո-ֆրանսիական սուր ռազմաքաղաքական հակամարտության ոլորտում պահանջում էին ստանձնել միջնորդի դերակատարում, մասնավանդ որ երկու հզոր և անհաշտ ախոյանները հավասարաչափ ճրգտում էին դադարեցնել շարունակվող պատերազմը և հաշտություն կնքել: Միջնորդական առաքելությունը կբարձրացներ ոչ միայն Ռուսաստանի միջազգային հեղինակությունը, այլև անձամբ կայսրի դերը համանվիրոպական նշանակություն ունեցող հիմնախնդիրների կարգավորման գործում: Եթե Ռուսաստանին հաջողվեր ստանձնել միջնորդի դեր, ապա այն շահեկան կլիներ կայսրության համար, քանզի անգլո-ֆրանսիական հակամարտության հարթումը զգալիորեն կնպաստեր Անգլիայի հետ միջպետական

խախտված հարաբերությունների վերականգնմանը և կարգավորմանը, իսկ Ֆրանսիայի հետ քաղաքական առնչությունների հետագա զարգացմանը: Եվրոպայում կհաստատվեր կայուն խաղաղություն և միջազգային անվտանգություն: Ալեքսանդրը լավ գիտեր, որ Անգլիայի հետ հարաբերությունները Պավելի թագավորության վերջին տարում խիստ սրվել էին՝ երկու կողմից ստեղծելով լուրջ վտանգ պատերազմի սանձազերծման համար: Այդ են վկայում Անգլիայի կառավարող շրջանների վճռական գործողությունները ի պատասխան Պավելի ոչ պակաս ծայրահեղ քայլերի: Ալեքսանդրը շտապեց վերացնել ռուսական նավահանգիստներում Անգլիայի հպատակների ունեցվածքի վրա արգելակալանքը, իսկ գահ բարձրանալուց մի քանի ամիս անց՝ 1801 թ. հունիսի 5-ին (17-ին) Պետերբուրգում ստորագրվեց ռուս-անգլիական ծովային կոնվենցիան, որով վերջ տրվեց հակամարտությանը երկու երկրների միջև: Նրա ջանքերով վերականգնվեցին դիվանագիտական հարաբերությունները: Կարգավորվեցին միջպետական կապերը ոչ միայն Անգլիայի, այլև հանրապետական Ֆրանսիայի դեմ պայքարում Ռուսաստանի մյուս նախկին դաշնակից Ավստրիայի հետ: Այս ամենով կատարվեցին դիվանագիտական լուրջ քայլեր Եվրոպայում հաստատելու ուժերի հավասարակշռություն: Ալեքսանդրը, ցուցաբերելով պետական գործչին բնորոշ ճկունություն և հաստատակամություն, Անգլիայի հետ միջպետական հարաբերությունները կարգավորեց ոչ ի վնաս Ֆրանսիայի՝ առանց բարդացնելու առնչությունները այդ երկրի հետ: Հետևաբար, Ֆրանսիայի առաջին կոնսուլի ու փաստացի տիրակալի՝ Նապոլեոն Բոնապարտի մտավախությունը, թե ռուս-ֆրանսիական բանակցությունները Պավելի սպանությունից հետո կխզվեն, զուր էին և անհիմն, քանզի նոր կայսրը որոշեց շարունակել հարաբերությունները՝ պարզապես Պավելի ներկայացուցիչ Կոլիչևին Փարիզում փոխարինեց մեկ այլ փորձված դիվանագետ՝ Մորկովը: Ավելին, բանակցությունները հաջող վախճան ունեցան: Ֆրանսիայի մայրաքաղաքում 1801 թ. հոկտեմբերի 8-ից 10-ը Ռուսաստանի և Ֆրանսիայի միջև ստորագրվեց երկու փաստաթուղթ՝ հաշտության պայմանագիր և գաղտնի կոնվենցիա: Ալեքսանդր Առաջինի ձգտումը քաղաքական եզրեր գտնել և համաձայնագիր կնքել Ֆրանսիայի հետ, որոշ առումով, ոչ այլ ինչ էր, եթե ոչ Պավելի քաղաքականության շարունակությունը, որը, սակայն իրագործվում էր ավելի զգուշորեն, դիվանագիտական ճկուն հնարքներով, որպեսզի կանխվի Ռուսաստանի դեմ Անգլիայի բացահայտ թշնամական դիրքորոշման հնարավորությունը: Ռուսաստանը, պայմանագիր կնքելով Ֆրանսիայի հետ, հույս ուներ դրանով կաշկանդել Նապոլեոնին և փաստորեն վերականգնել

ուժերի խախտված հավասարակշռությունը մայրցամաքում: Նապոլեոնյան Ֆրանսիայի միջազգային պարտավորությունների ու համաձայնագրերի խախտումը և անգլո-ֆրանսիական սուր և անհաղթահարելի հակամարտությունը համոզեցին Ռուսաստանին Անգլիայի ու Ավստրիայի հետ միասին սկսել հակաֆրանսիական նոր դաշինքի կազմավորման գործընթաց, որը նշանակում էր արտաքին քաղաքականության վերստին կտրուկ շրջադարձ: Թեև Անգլիայի և Ֆրանսիայի միջև 1802 թ. Ամյենում կնքվել էր հաշտության պայմանագիր, բայց այն ոչ մի կերպ չէր վերացնում նրանց միջև եղած հակամարտությունը, այդ պատճառով էլ չէր կարող լինել երկարատև: 1803 թ. մայիսին նրանց միջև նորից սկսվեց պատերազմ՝ մյուս տերություններին ևս ներքաշելու ակնկալիքով: Նապոլեոնի քաղաքականությունն Իտալիայում ու Գերմանիայում հակասում էր կայսերական Ռուսաստանի շահերին Կենտրոնական ու Հարավային Եվրոպայում: Հարավ-գերմանական պետությունները՝ Բավարիան, Վյուրտեմբերգը, Բադենը, որոնք ավելի վաղ գտնվում էին Պետերբուրգի անմիջական ազդեցության ներքո, աստիճանաբար ներքաշվում էին Նապոլեոնյան քաղաքականության ոլորտի մեջ: Հակաֆրանսիական երրորդ դաշինքի գլխավոր նպատակն էր հաստատել ռուս-անգլիական քաղաքական գերիշխանություն Եվրոպայում, կանխել Նապոլեոնի մտահղացումը՝ ամրապնդվելու մայրցամաքում: Եվրոպական երկրների մայրաքաղաքների՝ Պետերբուրգի, Լոնդոնի, Բեռլինի, Վիեննայի արքունիքներում դժկամությամբ ու տազնապով ընդունեցին Նապոլեոն Բոնապարտին Ֆրանսիայի կայսր հռչակելու մասին Սենտի 1804 թ. մայիսի 18-ի որոշումը, ապա նաև՝ 1804 թ. դեկտեմբերի 2-ին Փարիզի Նոտր Դամ տաճարում մեծ հանդիսավորությամբ կատարված նրա թագադրման արարողությունը: 1805 թ. ապրիլի 11-ին Պետերբուրգում երկարատև բանակցություններից հետո ստորագրվեց ռուս-անգլիական կոնվենցիան (համաձայնագիրը), որին 1805 թ. օգոստոսի 15-ին շտապեց միանալ Ավստրիան: Այսպես ստեղծվեց հակաֆրանսիական երրորդ դաշինքը: Միայն Պրուսիան չմիացավ, որը լուրջ անհաջողություն էր դաշնակիցների համար: Պրուսիան երրորդ դաշինքի գոյության ընթացքում քաղաքական ղեկավարման մեջ էր և փաստորեն կենսագործում էր երկու հակադիր խմբակցությունների միջև խուսանավելու քաղաքականություն: Սակայն Ֆրանսիայի վճռական հաղթանակները Ռուսաստանի և Ավստրիայի նկատմամբ կազմալուծեց դաշինքը: Առանձնապես վճռորոշ էր Աուստերլիցում 1805 թ. նոյեմբերի 20-ին (դեկտեմբերի 2-ին) տեղի ունեցած «երեք կայսրերի» ճակատամարտը, որն ավարտվեց ռուս-ավստրիական միացյալ բանակի ծանր պարտությամբ: Նկատելի էր

նաև ռազմական արվեստում երկու կայսրերի՝ Ալեքսանդրի ու Ֆրանցի անփորձությունը, որոնք ցանկանում էին ստանալ նշանավոր զորավարի համրավ և հատկապես փորձում էին նմանվել Ֆրանսիայի անդուզական զորավար կայսրին: Անգամ անգլիացի ծովակալ Նելսոնի՝ կյանքի գնով նվաճված փայլուն հաղթանակը Փրանս-իսպանական միացյալ նավատորմի նկատմամբ Թրաֆալգարի 1805 թ. հոկտեմբերի 21-ի ծովային ճակատամարտում, թեև վերացրեց Փրանսիական բանակի Անգլիա ամհանման վտանգը, այնուամենայնիվ, ըստ էության, չփրկեց դաշնակիցներին ռազմավարական ընդհանուր պարտությունից ու խմբակցության կազմալուծումից: Ավստրիան 1805 թ. դեկտեմբերի 26-ին Պրեսբուրգում (Բրատիսլավա) շտապեց հաշտության պայմանագիր կնքել Ֆրանսիայի հետ: Իսկ Ռուսաստանը որոշեց շարունակել պատերազմը Ֆրանսիայի դեմ: Ավելին, հենց Ռուսաստանի ջանքերով 1806 թ. կազմավորվեց հակաֆրանսիական չորրորդ դաշինքը: Ռուսաստանի արտաքին քաղաքականության հակաֆրանսիական ուղղվածությունը հասավ իր գագաթնակետին: Չորրորդ դաշինքը կազմված էր Ռուսաստանից, Անգլիայից, Շվեդիայից և Պրուսիայից: Այս անգամ Ավստրիան չմտավ դաշինքի մեջ, որը նույնպես լուրջ անհաջողություն էր դաշնակիցների համար: Պրուսիայի ծանր պարտություններից հետո Ռուսաստանը փաստորեն մնաց մենակ և 1806-1807 թթ. Արևելյան Պրուսիայում դժվարագույն մարտեր մղեց Ֆրանսիայի դեմ: Ռուսական և ֆրանսիական բանակները 1807 թ. փետրվարյան ձյունածածկ ու հողմաչունջ օրը հանդիպեցին Պրեյսի-էյլաու վայրում: Դա արյունահեղ ճակատամարտ էր, որը տևեց մի ամբողջ օր և ավարտվեց միայն երեկոյան: Ո՛չ Նապոլեոնը, որ անձամբ գլխավորեց ֆրանսիական բանակը և ո՛չ էլ ռուսական բանակի հրամանատար գեներալ Բենիքսենը, այդպես էլ չկարողացան ի վերջո որոշել, թե ով հաղթեց այդ ճակատամարտում: Ամենուր միայն դիակներ էին ու վիրավորներ, որոնք չէին կարող որոշել ո՛չ հաղթողներին և ո՛չ էլ պարտվածներին: Ռուսական բանակը կորցրեց շուրջ 26 հազար, ֆրանսիականը՝ մոտ 28 հազար զինվոր, ուստի իրատեսական է, որ ճակատամարտում չեղան ո՛չ հաղթողներ և ո՛չ էլ պարտվածներ: Մինչդեռ Ֆրիդլանդի ճակատամարտն ավարտվեց ռուսական բանակի ծանր պարտությամբ՝ 30 հազար սպանված և վիրավոր: Ֆրանսիական բանակն ընդհուպ մոտեցավ Ռուսաստանի սահմաններին: Թեև Ֆրիդլանդում Նապոլեոն Բոնապարտը տոնեց իր հաղթահանդեսը, այնուամենայնիվ, սթափ գնահատելով Ռուսաստանի ռազմական ներուժը, չէր թաքցնում Ալեքսանդրի հետ հաշտություն կնքելու իր մտադրությունը: Նա չհետապնդեց նահանջող և պարտված հակառակորդին, դրանով հնարավորություն

տվեց Բենիքսենին անցնել Նեման գետի ձախ ափը, այրել կամուրջները և կանգնել Տիլզիտի մոտ: Ֆրանսիայի կայսրը Ռուսաստանի միապետին աներկմտորեն հասկացրեց, որ ինքը պատրաստ է բանակցել, ցանկանում է ավարտել պատերազմը: Ալեքսանդրը կանգնած էր երկրնտրանքի առաջ՝ կնքե՞լ հաշտություն, թե՞ շարունակել պատերազմը: Ի վերջո հաղթեց սառը հաշվարկը և սթափ մարտավարությունը: Ալեքսանդրը որոշեց մեկ ամսով դինադադար կնքել, իսկ Նապոլեոնն ուղղակի հայտնեց կայսրի հետ անձամբ հանդիպելու իր մտադրության և ցանկության մասին: Ջինադադարի պայմանագիրը ստորագրելուց, այն վավերացնելուց և փոխանակումից հետո կայացվեց կարևոր որոշում՝ կազմակերպել երկու կայսրերի հանդիպումը: Այսպես սկսվեց «Տիլզիտյան համակարգի» ձևավորման գործընթացը, որն ավարտվեց Ալեքսանդրի ու Նապոլեոնի ծանր բանակցություններից հետո Տիլզիտում, որտեղ ստորագրվեցին համաեվրոպական նշանակության պաշտոնական պայմանագրեր: Եվ օրինաչափ է, որ շուրջ մեկ ամիս եվրոպական երկրների միապետների, վարչապետների, արտգործնախարարների, դիվանագետների, ողջ հասարակության ուշադրությունը սևեռվեց Արևելյան Պրուսիայի գավառային, ոչնչով աչքի չընկնող Տիլզիտ քաղաքին: Երկու կայսրերն առաջին անգամ հանդիպեցին 1807 թ. հունիսի 13-ին, ամառային արևոտ մի առավոտ Նեման գետի մեջտեղում լաստանավի վրա: Երկու կայսրերի հանրահայտ հանդիպումը նկարագրել է այդ պատմական դեպքերի ականատես 1812 թ. Հայրենական պատերազմի և 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի ակտիվ մասնակից պարտիզան-գեներալ ու բանաստեղծ Դ. Դավիդովը: Ալեքսանդրին մեծ դժվարությամբ հաջողվեց պահպանել Պրուսիայի ինքնուրույնությունը, իսկ Ռուսաստանին անցավ Բելոստոկի մարզը: Ալեքսանդրը հարկադրված էր հաշտվել Նապոլեոնի ծրագրած ինքնուրույն լեհական պետության գոյության հետ, որն ավելի շատ հայտնի է Վարչավայի դքսություն անունով: Դրա ստեղծումը հակասում էր ռուսական կայսրության շահերին, քանզի Լեհաստանի այդ տարածքը դառնում էր հենակետ Ռուսաստանի վրա հարձակվելու համար: Երկու կայսրերի կողմից վավերացված երկու փաստաթղթերում առկա էին ինչպես Ռուսաստանի շահերից բխող հողվածներ, այնպես էլ կետեր, որոնք, մեղմ ասած, ցանկալի չէին ռուսական կայսրին ու դժկամությամբ էին ընդունվում նրա կողմից: Երկու կայսրերն ուրվագծեցին ազդեցության ոլորտները՝ Արևմտյան և Կենտրոնական Եվրոպան ճանաչվեց Ֆրանսիայի, իսկ Արևելյանը՝ Ռուսաստանի ազդեցության գոտիներ: Նապոլեոնը ճանաչեց Ռուսաստանի իրավունքը՝ ընդարձակելու իր հյուսիսային սահմանները

Շվեդիայի կազմում գտնվող Ֆինլանդիայի հաշվին: Ֆրանսիայի կայսրի ցանկություններ Վարչապալայի դքսություն կառավարիչ նշանակվեց Սաքսոնիայի կուրֆյուրստը: Երկու միապետները մեծ տեղ հատկացրին Օսմանյան կայսրության հիմնախնդրին, մանավանդ որ բանակցությունների ժամանակ արդեն ընթանում էր ռուս-թուրքական պատերազմը: Ալեքսանդրը պարտավորվեց զինադադար կնքել Թուրքիայի հետ, իսկ Նապոլեոնը միջնորդ ճանաչվեց Ռուսաստանի ու Թուրքիայի միջև վիճելի հարցերը կարգավորելու համար: Եթե Թուրքիան չընդուներ Ֆրանսիայի միջնորդությունը կամ երեք ամիս հետո հաշտություն չկնքեր Ռուսաստանի հետ, ապա Ռուսաստանը և Ֆրանսիան պետք է նրա դեմ գործեին համատեղ ուժերով: Բայց այս ամենն անորոշ ապագային էր վերաբերում և, ընականաբար, հեռու էր իրագործումից: Նապոլեոնը չէր զլանում խոստումներ չռայել, նա Տիլզիտում հնարավոր էր համարում բաժանել Թուրքիայի եվրոպական տիրույթները, իսկ մյուս կողմից իր ներկայացուցիչ, գեներալ Սերաստիանի միջոցով խոստումներ էր տալիս Սելիմ Երրորդ սուլթանին՝ փաստորեն հրահրում էր նրան շարունակելու պատերազմը ռուսների դեմ: Նապոլեոնը շահագրգռված էր ռուս-թուրքական և ռուս-պարսկական պատերազմների մեջ, որպեսզի Ռուսաստանի կայսրի ուշադրությունը չեղի եվրոպական հիմնախնդիրներից: Ռուս-ֆրանսիական պայմանագրով Ալեքսանդրը պարտավորվում էր Անգլիային առաջարկել իր միջնորդությունը և խաղաղություն հաստատել Անգլիայի և Ֆրանսիայի միջև: Անգլիան Ռուսաստանի միջնորդությունը պետք է ընդուներ մինչև 1807 թ. նոյեմբերի մեկը, իսկ հրաժարվելու դեպքում, Ռուսաստանը 1807 թ. դեկտեմբերի մեկից պետք է միանար Նապոլեոնի Բեռլինյան դեկրետով հռչակված (1806 թ. նոյեմբերի 21-ին) ցամաքային շրջափակմանը: Ավելին, Ռուսաստանը պետք է Անգլիայի հետ խզեր բոլոր տեսակի հարաբերությունները և Ֆրանսիայի հետ միասին հարկադրեր Դանիային, Շվեդիային, Պորտուգալիային, որպեսզի նրանք պատերազմ հայտարարեն ծովային առյուծին՝ Անգլիային: Տիլզիտյան համաձայնագրերով Ռուսաստանը դարձավ իր ոչ հեռավոր թշնամու՝ Ֆրանսիայի բարեկամը և իր նախկին դաշնակից Անգլիայի հակառակորդը: 1807 թ. հունիսի 27-ին բանակցությունները Տիլզիտում ավարտվեցին: Տիլզիտյան համաձայնագրերը գնահատել իրրև «ստորացուցիչ» և «անամոթ», առավել ևս համեմատել դրանք Բրեստի հաշտության հետ, ինչպես կատարեց Խորհրդային Ռուսաստանի կառավարության ղեկավար Վ. Ի. Լենինը, հեռու է պատմական ճշմարտությունից: Տիլզիտում, ի տարբերություն Բրեստի, Ռուսաստանը ոչ միայն տարածքային կորուստներ չունեցավ, այլև ստացավ Բելոստոկի մարզը, իսկ

Ֆրանսիան դարձավ Ռուսաստանի դաշնակիցը, որին ձգտում էր Նապոլեոն Բոնապարտը: Այնուամենայնիվ, Ալեքսանդր Առաջինը «Տիլզիտյան համաձայնագրը» չէր կարող համարել ամուր ու երկարատև, որն ապացուցվեց երկու կայսրերի էրֆուրտի հանդիպման նախապատրաստման, առավել ևս, նրանց նոր պաշտոնական բանակցությունների ժամանակ:

Էրֆուրտյան հանդիպումը սկսվեց 1808 թ. սեպտեմբերի 28-ին և ավարտվեց հոկտեմբերի 14-ին: Երկու կայսրերը մի կողմից գործադրեցին իրենց զինանոցում եղած անսպառ հնարավորությունները, որպեսզի ընդգծեն սեփական հզորությունը, իսկ մյուս կողմից ջանադրորեն փորձում էին ապացուցել Եվրոպային իրենց դաշինքի կայունությունը և վերջապես միմյանց նկատմամբ ցուցադրական «սրտակից» վերաբերմունքը վերստին ընդգծելու էր Ռուսաստանի ու Ֆրանսիայի բարեկամությունը և շահերի ընդհանրությունը: Էրֆուրտյան կոնվենցիան հիմնականում հաստատեց ու նորոգեց Տիլզիտում կնքված դաշինքը, որոշ փոփոխված երանգներով ու մասնակի զիջումներով, որոնք պայմանավորված էին տեղի ունեցած քաղաքական նոր գործընթացներով: Էրֆուրտում Ալեքսանդրը վերստին ստացավ Նապոլեոնի համաձայնությունը Ֆինլանդիայի միացմամբ ընդլայնելու կայսրության հյուսիսային սահմանները, որ նշանակում էր անխուսափելի պատերազմ Շվեդիայի դեմ: Ալեքսանդրը, ոչ առանց հիմքի, մտահոգված էր, որ կայսրության մայրաքաղաք Պետերբուրգի մատույցներում կարող էր ստեղծվել Վարչապալայի դքսության նման մեկ այլ պետական կազմավորում: Ռուս-շվեդական պատերազմը ձեռնտու էր Նապոլեոնին, ուստի և փոքր չէր նրա դերը նրանց միջև հակամարտությունների բորբոքման գործում: Նապոլեոնը ցանկանում էր թուլացնել Շվեդիայի դիրքերը, քանզի նրան համարում էր իր գլխավոր հակառակորդ Անգլիայի դաշնակիցը: Ռուս-շվեդական պատերազմը կրացառեր Ֆրանսիայի դեմ երկու տերությունների համատեղ գործողությունների հնարավորությունը, կշեղեր Ռուսաստանի ուշադրությունը Եվրոպայի կենտրոնից ու Մերձավոր Արևելքից և վերջապես անհնարին կղարձներ Շվեդիայի, Անգլիայի ու Ռուսաստանի դաշինքը, մանավանդ որ Շվեդիան, ոգևորվելով Անգլիայի շուայ, բայց, ըստ էության, դատարկ խոստումներից, նույնպես նախապատրաստվում էր Ռուսաստանի դեմ պատերազմի: Էրֆուրտում սեփական նախաձեռնությամբ Ռուսաստանի կայսրին այցելեց հանրահայտ Շարլ-Մորիս-Թալկյանը, որն այդ ժամանակ հանդես էր գալիս Նապոլեոնի խորհրդականի դերում: Այս այցը և հատկապես՝ զրույցի բովանդակությունը, անշուշտ, կարելի է համարել աննախադեպ միջազգային հարաբերությունների ու դիվանագիտության պատմության մեջ: Հետևաբար,

նախկին եպիսկոպոսի, գաղտնի դիվանագիտության անգերագանցելի վարպետի, ճկուն քաղաքագետի՝ իր կայսրից գաղտնի Հանդիպումը Ալեքսանդրի Հետ նույնպես կարևոր քաղաքական-դիվանագիտական իրադարձություն էր էրֆուրտում: Առաջին հայացքից այս չնախատեսված ու գաղտնի Հանդիպման ժամանակ Նապոլեոնի խորհրդականը Ալեքսանդրին առաջարկում էր կանխել իր կայսրի Հնարավոր բոլոր ոտնձգությունները և նկրտումները, քանզի Ֆրանսիայի միապետի դիրքերը կայուն և ամուր չէին եվրոպայում: Թալեյրանի փաստացի դավաճանությունից Ալեքսանդրը հասկացավ, որ Նապոլեոնի խորհրդականն արդեն կանխատեսում է «Ֆրանսիացիների կայսրի» նվաճողական քաղաքականության առաջիկա անխուսափելի ճգնաժամը, որն էլ Հարկադրեց Թալեյրանին Հանուն Ֆրանսիայի Հանդես գալ նման խորհրդով, իր կայսրի նկատմամբ գործել անհավատարիմ հավատարմության՝ դիվանագիտության մեջ լայնորեն կենսագործվող սկզբունքով: Նապոլեոնի կողմից ցամաքային շրջափակման հռչակումից Հետո Թալեյրանը համոզվեց Ռուսաստանի ու Ֆրանսիայի հարաբերությունների խզման անխուսափելիության մեջ, ուստի և խորհուրդ տվեց կայսրին չստորագրել այն պայմանագիրը, որը կպարտավորեցներ Ռուսաստանի մասնակցությունը Ֆրանսիայի կողմից Ավստրիայի դեմ նախապատրաստվող պատերազմին: Թալեյրանը, գաղտնի Հանդիպման ժամանակ, դիմելով կայսրին, անընդհատ կրկնում էր. «Դուք պետք է փրկեք եվրոպան»: Հետագայում Թալեյրանը դարձավ կայսերական կառավարության վարձկան լրաբերը և Փարիզի ռուսական ներկայացուցչության երիտասարդ խորհրդական Կարլ Նեսսելրոդեից (Ռուսաստանի ապագա արտգործնախարարից) ստանում էր տասնյակ հազար ֆրանկ Նապոլեոնի նոր դժվարությունների մասին Ալեքսանդրին հաճելի տեղեկություններ հաղորդելու համար: Էրֆուրտի Հանդիպման ընթացքում դիվանագիտությունը, ըստ Օտտո ֆոն Բիսմարկի, կարծես կոչված էր անհնարինը դարձնել Հնարավոր, չհաղթահարեց ռուս-ֆրանսիական սուր հակասությունները: Իսկապես էրֆուրտում Ալեքսանդրին ու Նապոլեոնին, իբրև դիվանագետների, չհաջողվեց նոր բանակցություններով հաղթահարել «Տիրիտյան համակարգի» խոցելի կողմերը: Հատկանշական է, որ Նապոլեոնը Տիրիտ-էրֆուրտյան համակարգն ամրապնդելու նպատակով խնդրեց Ալեքսանդրի կրտսեր քրոջ՝ Աննա Պավլովնայի ձևաքր, բայց Ռուսաստանի կայսրը հրաժարվեց խնամհանալ նրա Հետ, որից Հետո Ֆրանսիայի կայսրն ամուսնացավ Ավստրիայի թագավոր Ֆրանց Առաջինի դստեր՝ Մարիա-Լուիզայի Հետ:

Ռուս-չվեդական պատերազմն անցավ Ռուսաստանի բացարձակ առա-

վելությունը, ռուսական բանակը, անցնելով Ֆիննական սահմանը, կարճ ժամկետում գրավեց Հելսինկի, Սվեաբորգ, Արո քաղաքները, Գոտլանդ կղզին, Ալանդական կղզիները, ամբողջ Ֆինլանդիան, որից Հետո պարտված Շվեդիային մնում էր խնդրել զինադադար, մանավանդ որ ռուսները գտնվում էին Ստոկհոլմից ընդամենը 100 կմ հեռավորության վրա: Սակայն Ալեքսանդրը դժգոհ մնաց զինադադարից և պատերազմական գործողությունները վերսկսվեցին: Այդ ընթացքում Շվեդիայում գահընկեց արվեց Գուստավ Չորրորդը, իսկ թագավոր հռչակվեց դուքս Կարլը՝ Կարլ Տասներեքերորդ անունով: Նա արդեն շտապեց հաշտություն խնդրել և 1809 թ. սեպտեմբերի 5-ին (17-ին) Ֆրիդրիխսհամում կնքված պայմանագրով, ռուս-չվեդական պատերազմն ավարտվեց Ռուսաստանի հաղթանակով: Շվեդիան ճանաչեց Ֆինլանդիայի և Ալանդական կղզիների միացումը Ռուսաստանին, պարտավորվեց հաշտություն կնքել Նապոլեոնյան Ֆրանսիայի Հետ ու միանալ ցամաքային կամ տնտեսական շրջափակմանը, Ֆինլանդիայում ապրող չվեդներն իրավունք ստացան փոխադրվելու Շվեդիա, իսկ Շվեդիայում ապրող ֆինները՝ Ֆինլանդիա: 1809 թ. մարտի 1-ին, երբ դեռ չարունակվում էր ռուս-չվեդական պատերազմը, Ալեքսանդրը Բորգոյում հանդիսավորությամբ բացեց Ֆիննական սեյմը և պաշտոնապես հրապարակած հռչակագրով Ֆինլանդիան ինքնավարության իրավունքով մտավ ռուսաստանյան կայսրության կազմի մեջ՝ ֆիննական մեծ իշխանություն անունով: Ֆիննական սեյմը մնաց որպես երկրի գերագույն իշխանություն, պահպանվեց երկրի բանակը, դրամական միավորը: Ալեքսանդր Առաջինը, իբրև հեռատես պետական գործիչ, լավ էր հասկանում Ռուսաստանի համար Ֆինլանդիայի առանձնահատուկ նշանակությունը: Եվ օրինաչափ է, որ Ֆինլանդիայի նկատմամբ կայսրության կենսագործած նման քաղաքականությունը հետագայում ժառանգեց խորհրդային դիվանագիտությունը, ապա յուրացվեց Հետսոցիալիստական Ռուսաստանի արտաքին քաղաքականության գլխավոր ուղղությունները մշակողների ու իրագործողների կողմից: Ավելին, Նորհրդային Ռուսաստանը դե-յուրե ճանաչեց Ֆինլանդիայի անկախությունը, իսկ ներկայիս Ռուսաստանի Դաշնությունը այդ երկրի Հետ միջազգային իրավունքի հանրահայտ նորմերին համապատասխան հաստատել է իրավահավասար ու փոխշահավետ միջպետական հարաբերություններ:

**§ 3. 1812 թ. ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱՋՄԸ ԵՎ ՌՈՒՍԱԿԱՆ
ԲԱՆԱԿԻ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԱՐՇԱՎԱՆՔԸ:
ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ՎԻԵՆՆԱՅԻ ՎԵՀԱԺՈՂՈՎՈՒՄ**

Նապոլեոնյան Ֆրանսիան 1810-1811 թթ. հասավ ռազմաքաղաքական հղորությունների թարձարակետին, որը հնարավորություն ընձեռեց Ֆրանսիայի կայսրին դիմելու վճռական գործողությունների՝ հաստատելու իր լիակատար քաղաքական գերիշխանությունը Եվրոպայում: Նապոլեոն Բոնապարտը համոզված էր իր ռազմաքաղաքական ծրագրերի իրագործման մեջ: Նա շարունակում էր հավատալ ոչ միայն մարտական հարուստ փորձ ունեցող իր տաղանդավոր զորահրամանատարներին ու բազում ճակատամարտերում կոփված զինվորներին, այլև իր փայլատակող աստղին, չէր կասկածում, որ եկել է աստեղային ժամը փառքի բարձունքին հասնելու համար: Թեև Ռուսաստանը շարունակում էր մնալ ահեղ հակառակորդ, այնուամենայնիվ, Նապոլեոնի կարծիքով, նրա բանակն անպարտելի չէր, և հնարավոր է հաղթահարել նաև այդ լուրջ խոչընդոտը: Փաստորեն Եվրոպայում 1812 թ. Հայրենական պատերազմի նախօրյակին մնացել էին երկու ուժեղ պետություններ՝ Անգլիան ու Ռուսաստանը: Իր եղբորը՝ Լյուսիենին, 1811 թ. հրած նամակում Ֆրանսիայի կայսրը գրում էր, թե ես հինգ տարի, և ինքը կղաղնա աշխարհի տիրակալը: Մնում է միայն Ռուսաստանը, բայց ինքը կձգմի նրան: Հետևաբար, XIX դ. երկրորդ տասնամյակի նախաշեմին Եվրոպայի ժողովուրդների ճակատագիրը զգալիորեն կախված էր այն հիմնախնդրից, թե կկարողանա՞ արդյոք Ռուսաստանը դիմակայել հասունացող նոր փորձությունը՝ Նապոլեոնի բանակների ներխուժմանը, որոնք սպասում էին կայսրի հրամանին՝ անցնելու սահմանը և սանձազերծելու մեծ պատերազմ: Ընդ որում, երբ Նապոլեոնն ասում էր, թե ինքը կձգմի Ռուսաստանը, նկատի ուներ ոչ միայն ռուսական բանակի ջախջախումը և Ալեքսանդրի անձնատուր լինելու հանգամանքը, այլև ակնկալում էր Ռուսաստանը դարձնել մայրցամաքի երկրորդական կարգի տերություն: Փարիզում կայսերական դեսպան Ա. Կուրակինի իրավացի կարծիքով, նախապատրաստվելով պատերազմի, Նապոլեոնը ցանկանում էր Ռուսաստանի սահմանները հասցնել նախապայտության ժամանակաշրջանի սահմանագծին, զրկել նրան համաեվրոպական քաղաքական հիմնախնդիրներին մասնակցելու հնարավորությունից: Նապոլեոնը ծրագրում էր Ռուսաստանին հաղթելուց հետո նրա զորքը միացնել իր բանակին ու կործանել Անգլիայի հղորությունը:

Նապոլեոնը, անցնելով Նեման գետը և ներխուժելով Ռուսաստան, սկիզբ դրեց իր կայսրության անխուսափելի կործանմանը: Միաժամանակ Եվրոպացի առանձին հեղինակներ փորձել են հիմնավորել այն կասկածելի

ու ոչ իրատեսական Հայեցակարգը, թե իբր նապոլեոնյան Ֆրանսիան սոսկ մղել է «պաշտպանական պատերազմ», որ Բոնապարտը «Մոսկվա գետի ափին պաշտպանել է հոկտոյան սահմանը», որը, մեղմ ասած, շատ հեռու է պատմական ճշմարտությունից: Մինչդեռ Ֆրիդրիխ Էնգելսի անաչառ կարծիքով, Նապոլեոնն իր աշխարհակալ ձգտումներով, Ռուսաստանի նկատմամբ ունեցած նվաճողական ծրագրերով, փաստորեն հաշվի չառավ պատմության դասերը և շարժվելով Մոսկվայի վրա, ռուսներին բերեց Փարիզ: Դա իսկապես ռուս ժողովրդի կողմից արդարացի պատերազմ էր, ուստի ողջ հասարակությունը պաշտպանեց Հայրենիքը և պայքարեց մայր երկիրը ահեղ թշնամուց փրկելու համար: 1812 թ. հունիսի 12-ին (24-ին) Նապոլեոնի մեծ բանակը (600 հազարից ավելի) առանց պատերազմ հայտարարելու անցավ Նեման գետը, ներխուժեց ռուսական կայսրության սահմանը, որով էլ սկսվեց Հայրենական պատերազմը: «Զինվորներ՛ր, պատերազմը սկսվել է, - բանակին տված հրամանում հայտարարեց Նապոլեոնը, - բախտը մեզ կօգնի նվաճել Ռուսաստանը, նրա ճակատագիրը պետք է վճույթի»:

Տեղեկանալով Նապոլեոնի ներխուժման մասին՝ Վիլնյուս (Վիլնյուս) գտնվող Ալեքսանդրը որոշեց բանակցությունների համար Նապոլեոնի մոտ ուղարկել ոստիկանության նախարար և իր պաշտոնական լիազոր՝ գեներալ Թիկնապահ Ա. Բալաշովին, հակամարտությունը խաղաղությանը հարթելու առաջարկությամբ, պայմանով, սակայն, որ Ֆրանսիացիներն անհապաղ թողնեն կայսրության տարածքը: Հանդիպումը կայացավ Վիլնյուսում, որը Ֆրանսիացիները գրավեցին Նեման գետն անցնելուց չորս օր հետո: Բալաշովին հանձնարարված էր Նապոլեոնին հանձնել Ալեքսանդրի անձնական նամակը, որտեղ նշված է. «Թող Եվրոպային հայտնի լինի և ծառայի իբրև նոր ապացույց, որ մենք չենք սկսում պատերազմը»: Բալաշովին հանձնարարվեց կայսրի անունից տեղեկացնել Նապոլեոնին, որ «Եթե Նապոլեոնը մտադիր է բանակցություններ սկսել, միայն մեկ, բայց անխախտելի պայմանով՝ նրա բանակը մեր սահմանից դուրս գա: Հակառակ դեպքում քանի դեռ գեթ մեկ զինված Ֆրանսիացի մնա Ռուսաստանում, թագավորը խոսք է տալիս չխոսել և չընդունել ոչ մի բառ հաշտության մասին»: Նապոլեոնը, իհարկե, հրաժարվեց ընդունել Ալեքսանդրի առաջարկը, ավելին՝ զրույցի ավարտին նա հեղանքով ու անթաքույց արհամարհանքով Բալաշովին առաջարկեց ցույց տալ դեպի Մոսկվա տանող ուղի դանապարհը և ամենահարմար ուղին: Նրա հարցին, գեներալ-թիկնապահի վկայությամբ, ինքը տվել է հետևյալ դիպուկ ու խորիմաստ պատասխանը. «Ռուսները Ֆրանսիացիների նման ասում են, թե ցանկացած ճանապարհ տանում է Հոռոմ: Ճանապարհը դեպի Մոսկվա կարելի է ընտրել ցանկությամբ: Կարլ XII-ը շարժվեց Պոլտավայի վրայով»: Դրա-

նով Բալաչովն ակնարկում էր, որ Ֆրանսիայի կայսրը կունենա նույնպիսի անփառունակ վախճան, ինչպես եղավ Շվեդիայի թագավորի բանակի հետ: Ռուսական կայսրի կողմից լիազորված գեներալը ցանկանում էր հիշեցնել Նապոլեոնին, թե ինքն առաջինը չէ, որ անհաջող փորձ է կատարում նվաճելու Ռուսաստանը: Կարողացե՞լ է արդյոք Բալաչովը գտնել այդչափ հմուտ և սրամիտ պատասխան կամ կհանդգնե՞ր արդյոք նա պատասխանել նման համարձակ ձևով անպարտելի զորավարին ու ահեղ կայսրին, դժվար է ասել, սակայն գլխավորն այն էր, որ այս բանավոր ասված կամ չասված խոսքերը չուտով տարածվեցին ամբողջ երկրով՝ ոգևորություն առաջացնելով հասարակության լայն շրջաններում՝ հատկապես բանակում:

Նապոլեոն Բոնապարտը հույս ուներ իր բանակի բացարձակ գերազանցության և մարտունակության, գեներալների ու մարչալների, դինվորների քաջության շնորհիվ կարճ ժամկետում հաղթել իր ամենաահեղ հակառակորդին՝ Ռուսաստանին: Իսկապես, «փոքրիկ կապրալի», ինչպես անվանում էին կայսրին շարքային զինվորները, նկատմամբ պաշտամունքը բավականին մեծ էր ֆրանսիական բանակում: «Ես գնում եմ Մոսկվայի դեմ ու մեկ կամ երկու ճակատամարտից հետո կավարտեմ ամեն ինչ: Կայսր Ալեքսանդր Առաջինը հաշտություն կխնդրի ծնկաչոք», – հավատացնում էր Նապոլեոնը պատերազմից մեկ ու կես ամիս առաջ կաթոլիկ արքեպիսկոպոս Պրադտի հետ զրուցելիս: Մինչդեռ Ալեքսանդրը Ֆրանսիայի դեսպան ժ. Լորիստոնի հետ զրույցի ժամանակ ասաց, թե ինքն ավելի շուտ պատրաստ է 10 տարի շարունակ պատերազմ մղել, հեռանալ Սիբիր, քան Ռուսաստանի համար ընդունել այն պայմանները, որոնց մեջ այժմ գտնվում են Ավստրիան ու Պրուսիան:

Պատերազմի սկզբին ռուսական բանակը բաժանված էր երեք մասի և տարակենտրոնացված էր արևմտյան սահմանի համարյա ամբողջ երկարությամբ, քանզի նրա հրամանատարությունը ճիշտ տեղեկություն չունեին Նապոլեոնի գլխավոր հարվածի ուղղությունների մասին: Ռազմական նախարար, գեներալ Միխայիլ Բոգդանովիչ Բարկլայ դը Տոլիի հրամանատարությամբ բանակը տեղակայված էր Լիտվայում, նեման գետի շրջանում Պետերբուրգի ուղղությամբ: Գեներալ Պյոտր Իվանովիչ Բագրատիոնի գլխավորած 2-րդ բանակը գտնվում էր հարավային Լիտվայում՝ Մոսկվայի ուղղությամբ և վերջապես գեներալ Ալեքսանդր Պետրովիչ Տորմասովի ղեկավարած 3-րդ բանակը տեղակայված էր Ուկրաինայի հյուսիսում՝ պաշտպանելով Կիև տանող ուղղությունը: Սակայն ռուսական բանակը չունեին ընդհանուր-միասնական հրամանատարություն, որը ստեղծված ռազմաքաղաքական իրադրության մեջ անհանդուրժելի էր և արագ լուծում էր պահանջում: Սկզբում գլխավոր հրամանատարի պարտականու-

թյունը ստանձնեց ինքը՝ կայսրը: Բայց Ալեքսանդրն իբրև զորավար, մեղմ ասած, իրեն չարդարացրեց, ուստի և նրան համոզեցին թողնել բանակը, սակայն գլխավոր հրամանատար չնշանակվեց: Գլխավոր հրամանատարի պարտականությունը կատարում էր Բարկլայ դը Տոլին: Առանց բանակների միավորման անհնարին էր հաղթել ահեղ հակառակորդին, առավել ևս վտարել թշնամուն կայսրության տարածքից: Գլխավոր ճակատամարտը հավասարազոր կլինեի կործանման, և ռուսական հրամանատարությունը, հաշվի առնելով անբարենպաստ իրողությունը, ստիպված էր որդեգրել նահանջի մարտավարությունը: Նապոլեոնն ամեն կերպ խոչընդոտում էր ռուսական առաջին և երկրորդ բանակների միավորմանը, աշխատում էր հեռացնել նրանց իրարից և առանձին-առանձին ջախջախել, հարվածել Դրիսսայի ճամբարը նահանջած ռուսական առաջին բանակին: Ալեքսանդր Առաջինի ռազմական խորհրդական պրուսացի գեներալ Ֆուլի առաջարկով Արևմտյան Դվինայի ափին, Դրիսսա ավանի շրջակայքում հիմնվել էր ռուսական առաջին բանակի ճամբարը, որի նպատակն էր Նապոլեոնի առաջխաղացման դեպքում նահանջել այնտեղ և կասեցնել թշնամու գլխավոր ուժերի գրոհը, իսկ երկրորդ և երրորդ բանակներին հնարավորություն ընձեռել թևերից հարվածելու հակառակորդի թիկունքին: Սակայն Ֆուլի պլանն ուներ բազում խոցելի կողմեր: Նապոլեոնի բանակը զգալիորեն գերազանցում էր ռուսական բանակին և դրա շնորհիվ կկարողանար շրջապատել վերջինիս՝ ռուսական հրամանատարությանը զրկելով ակտիվ ռազմական գործողություններից: Դրա համար էլ Դրիսսայի ճամբարում կայսրի մասնակցությամբ հրավիրված ռազմական խորհուրդը որոշեց թողնել ճամբարը և նահանջել դեպի Վիտեբսկ՝ երկրորդ բանակին միանալու համար: Նախապես ծրագրվում էր Բարկլայի և Բագրատիոնի բանակները միավորել Վիտեբսկի շրջանում: Սակայն Նապոլեոնին հաջողվեց կտրել երկրորդ բանակի նահանջի ճանապարհը դեպի հյուսիս: Երկու բանակները ստիպված էին հետագայում ևս նահանջել առանձին-առանձին: «Այժմ Բարկլայը և Բագրատիոնը կրեք չնն տեսնվի», – համոզված ասում էր Նապոլեոնը: Այնուամենայնիվ, Նապոլեոնի ռազմավարական ծրագրերը լիովին ձախողվեցին, որովհետև 1812 թ. հուլիսի վերջին ռուսական առաջին և երկրորդ բանակները միացան Սմոլենսկի մոտ, թեև ֆրանսիացիները համառ և արյունահեղ մարտերից հետո տիրացան այրված, ավերակների վերածված քաղաքին: Նրանք Սմոլենսկի մոտ կորցրին մոտ 20 հազար մարդ:

Նապոլեոնը Սմոլենսկի ճակատամարտից հետո նախապես կատարեց առաջին փորձը ստուգելու պատվավոր հաշտություն կնքելու հնարավորությունը: Ազատելով գերված ռուս գեներալ Պ. Ա. Տուչևովին՝ Նապոլեոնը հանձնարարեց նրան տեղեկացնել կայսրին, թե «կրակի է մատնվել

բավականաչափ վառող», որ ինքը պատրաստ է կատարել որոշ զիջումներ: «Հայտնեցեք նրան (Ալեքսանդրին – Մ. Մ.),– ասում էր Նապոլեոնը Տուչկովին,– որ դուք ինձ տեսել եք և ես ձեզ հանձնարարել եմ գրել նրան, որ նա ինձ մեծ բավականություն կպատճառի, եթե ինքը կամ մեծ իշխանի, կամ գլխավոր հրամանատարի միջոցով Ալեքսանդր կայսրին տեղեկացնի, որ ես ոչ մի բան այնպես չեմ ցանկանում, ինչպես հաշտություն կնքելը: Բավական է, որքան մենք վառող այրեցինք և որքան արյուն թափեցինք: Հարկավոր է, վերջապես վերջ տալ դրան»:

Սակայն հաշտության համար հիմքեր նախապատրաստելու Ֆրանսիայի կայսրի առաջին փորձը ձախողվեց, քանզի նրա առաջարկը մնաց անպատասխան: Սմոլենսկի ճակատամարտից հետո բանակի գլխավոր հրամանատար նշանակվեց Մ. Ի. Կուտուզովը, որը զինվորների ու գեներալների շրջանում վայելում էր մեծ վստահություն և հեղինակություն: Կուտուզովին գլխավոր հրամանատար նշանակելու առթիվ Ալեքսանդրն իր քրոջը՝ Եկատերինա Պավլովնային գրում էր. «Պետերբուրգում ես տեսա, որ բոլորը վճռականորեն պահանջում են ծերունու՝ Կուտուզովի նշանակումը, Մոսկվայում՝ նույնը, ես էլ նշանակեցի նրան, ինչ վերաբերում է ինձ, ես լվանում եմ ձեռքերս»:

Ռուսական բանակի նահանջը և պաշտպանական մարտերը չնայած ստեղծված իրադրության պայմաններում հարկադրական էին, դաժան անհրաժեշտություն, խնամքով մշակված մարտավարություն, որը ռազմական արվեստի ամենարարձր մակարդակով հիանալիորեն իրագործեց մարտական գեներալ, ազգությունը չտղանդացի Բարկլայ դը Տոլին, այնուամենայնիվ, այդ փորձված զորահրամանատարը, ի տարբերություն Կուտուզովի, մեծ հեղինակություն չէր վայելում: Ռուսական բանակի նահանջը և անհաջողությունը, ինչպես բարձրաստիճան զինվորականությունը, այնպես էլ հասարակության լայն շրջանները, անհիմն վերագրում էին Բարկլայ դը Տոլինին, անարդարացիորեն կապում էին նրա ռազմավարության և մարտավարության հետ: Պատերազմը հայրենական էր ու անհրաժեշտություն էր, որ ռուսական բանակը գլխավորի ոչ թե օտարագրի, այլ ռուս զորահրամանատար: Սակայն Բարկլայ դը Տոլին անբասիր ծառայում էր ռուսական կայսրությանը, որը մեկ անգամ ևս երևաց Բորոզինոյի ճակատամարտում: Նապոլեոնը, Ռուսաստանի դեմ պատերազմ սանձազերծելով, հենց սկզբից որոշել էր գլխավոր հարվածը հասցնել Մոսկվային: «Եթե ես վերցնեմ Կիևը,– ասում էր նա,– ես կբռնեմ Ռուսաստանը ոտքերից, եթե ես տիրեմ Պետերբուրգին, ես նրան կբռնեմ գլխից, գրավելով Մոսկվան՝ ես նրան կխոցեմ սրտից»: Բորոզինոն դարձավ Հայրենական պատերազմի ամենախոշոր ճակատամարտը, նապոլեոնյան պատերազմների պատմության մեջ ամենանշանավոր ճակատամարտերից մե-

կը և օրինաչափ է, որ Նապոլեոնն այն անվանեց «հսկաների ճակատամարտ»: Բորոզինոյի ճակատամարտը սկսվեց 1812 թ. օգոստոսի 26-ի վաղ առավոտյան: Նախքան ճակատամարտի սկիզբը ֆրանսիացի զինվորներին կարդացին կայսրի կոչը, որը սկսվում էր հետևյալ բառերով. «Զինվորներ, ահա այն ճակատամարտը, որը դուք այդքան ցանկանում էիք: Հաղթանակը կախված է ձեզանից, այն անհրաժեշտ է մեզ համար, այն կապահովի մեզ ամեն ինչով՝ հարմարավետ կացարաններ և արագ վերադարձ հայրենիք»:

Բոլորովին այլ բառերով փորձեց Կուտուզովը ոգևորել իր զինվորներին: Դիտելով ռուսական բանակի դիրքերը՝ նա կանգ առավ գնդերից մեկի առաջ և ասաց. «Զեզ հարկ կլինի պաշտպանել հայրենի հողը, ծառայել հավատով և ճշմարտությամբ»: Մոտ ժամը 5-ին վաղորդյան մառախուղի մեջ լսվեց առաջին կրակոցը, որը բավականին ցուրտ էր, երբ թանձր մառախուղը ցրվեց, անտառի վրա, ռուսական բանակի դիրքերի թիկունքում երևաց արևի ծիրանագույն սկավառակը: Տեսնելով այն՝ Նապոլեոնը բացականչեց. «Ահա Աուստերլիցի արևը»: Բորոզինոյի ճակատամարտում հակառակորդների ուժերը մոտավորապես հավասար էին. մոտ 126 հազար մարդ և 624 հրանոթ Նապոլեոնի 135 հազար մարդու և 587 հրանոթի դիմաց: Նապոլեոնն իր գլխավոր ուժերն ուղղեց ռուսական բանակի ձախ թևի դեմ, Բագրատիոնյան Փլեչների վրա, քանզի միայն այնտեղից էր կարելի ճեղքել թշնամու դիրքերը՝ ձախ Փլեչ-թևի ամրությունները կառուցվեցին հապճեպ ու բնականաբար չէին հասցրել դարձնել անառիկ: Նապոլեոնը ծրագրում էր ջախջախել Բագրատիոնի բանակը, ճեղքել ռուսական ճակատը և դուրս գալ ռուսական առաջին բանակի թիկունքը: Փլեչների վրա կրակի հեղեղ տեղաց, այստեղ էր կենտրոնացվել ֆրանսիական համարյա ամբողջ հրետանին: Բագրատիոնյան Փլեչների համար պայքարը տևեց յոթ ժամ, քաջ և համարձակ Բագրատիոնի հրամանատարությունը ետ մղվեց յոթ գրոհ՝ թշնամու բանակի ղգալի կորուստներով: Միայն ութերորդ գրոհից հետո, որի ժամանակ Բագրատիոնը մահացու վիրավորվեց, ֆրանսիացիները գրավեցին Փլեչները: Բագրատիոնին փոխարինեց քաջ գեներալ Դոխտուրովը: Նա, դիմելով զինվորներին, ասաց. «Մեր թիկունքում Մոսկվան է, մեր թիկունքում է ռուսական քաղաքների մայրը»: Ճակատամարտը տևեց 15 ժամ և ավարտվեց երեկոյան, երբ երկու կողմերի բանակների հրամանատարների հրամանով զորքերը նահանջեցին ելման դիրքերը: Երկու կողմից էլ կորուստները մեծ էին. ֆրանսիացիները կորցրին մոտ 60 հազար մարդ, ռուսները՝ ավելի քան 40 հազար: Ֆրանսիացիները կորցրին 47 գեներալ, 200 սպա, իսկ ռուսները՝ 22 գեներալ: «Զորքը ... կոպում էր անօրինակ քաջությամբ,– գրում էր Կուտուզովը կայսրին,– մարտկոցները ձեռքից ձեռք էին անցնում, և բանը վերջացավ

նրանով, որ հակառակորդն իր գերազանց ուժով ոչ մի տեղ ոչ մի քայլ հող չչահեց»: Բորողինոյի ճակատամարտից հինգ օր հետո՝ օգոստոսի 31-ին (սեպտեմբերի 12-ին) Կուտուզովին շնորհիվ գեներալ-ֆելդմարշալի կոչում:

Բորողինոյի ճակատամարտը տարրեր կերպ են գնահատել ռուս և ֆրանսիացի պատմաբանները, հասարակական-քաղաքական մտքի ներկայացուցիչները, զինվորականները, պետական գործիչները: Ռուսները փորձում են ապացուցել, թե իրենց բանակը, կոտրելով նապոլեոնյան բանակի մարտական ոգին, կանխորոշեց նրա պարտությունը, սկսվեց Ֆրանսիայի կայսրի՝ իբրև անպարտելի զորավարի փառքի մայրամուտը: Հետևաբար, ռուսների կարծիքով Բորողինոյի ճակատամարտն ավարտվեց ֆրանսիացիների պարտությամբ: Ֆրանսիացիների տեսակետով Բորողինոյի ճակատամարտը, ընդհակառակը, պետք է դասել նապոլեոն Բոնապարտի հաղթական ճակատամարտերի շարքը, և անիմաստ ու անհեթեթ և անհանդուրժելի է այլ գնահատական, քան զի գլխավոր ճակատամարտում հաղթական բանակն ընդհանրապես չի նահանջում, առավել ևս, թշնամուն չի հանձնում պետության ու երկրի մայրաքաղաքը: Իրենց հերթին ռուսները մատնանշում են, որ Բորողինոյի ճակատամարտից հետո Կուտուզովը մտադրություն չունեի ո՛չ նահանջելու և ո՛չ էլ, առավել ևս, թողնելու Մոսկվան, ընդհակառակը, նա նախատեսում էր հաջորդ օրը վերսկսել ճակատամարտը, բայց նկատի ունենալով մեծ կորուստները և անհրաժեշտ համալրում չստանալուց հետո փոխեց իր մարտավարությունը:

Բորողինոյի ճակատամարտի ճիշտ իրատեսական գնահատականը տվել է ինքը՝ Նապոլեոն Բոնապարտը: Հեռավոր սուրբ Հեղինե կղզում եղած արքայի ժամանակ նա այսպես է գնահատել այդ ճակատամարտը. «Իմ բոլոր ճակատամարտերից ամենասարսափելին այն մարտն էր, որ ես տվեցի Մոսկվայի տակ: Ֆրանսիացիները ցույց տվեցին, որ իրենք արժանի են հաղթանակի, իսկ ռուսները վաստակեցին անպարտելի լինելու իրավունքը»: Ֆրանսիայի կայսրի վկայությամբ իր տված 50 ճակատամարտերից «Մոսկվայի տակ ճակատամարտում զրսնորվեց առավել քաջություն, անձնվիրություն և ձեռք բերվեց նվազագույն հաջողություն»:

1812 թ. սեպտեմբերի 1-ին (13-ին) մերձմոսկովյան Ֆիլի գյուղում գյուղացի Սևաստյանովի փոքրիկ խրճիթում Կուտուզովը հրավիրեց ռազմական խորհուրդ և գեներալների առջև հարց բարձրացրեց՝ անհրաժեշտ է արդյոք վերսկսել ճակատամարտը և դրանով իսկ վտանգի տակ դնել բանակը, հետևաբար նաև՝ երկրի ճակատագիրը, թե՞ հարկավոր է նահանջել ու առանց մարտի թողնել Մոսկվան: Ռազմական խորհրդի մասնակիցների

կարծիքները կիսվեցին, այսինքն՝ չկար ընդհանուր տեսակետ ու ընդհանուր եզրակացություն: Գեներալների մեծամասնությունն արտահայտվեց նոր ճակատամարտի օգտին, թեև հավատացած չէին, որ այն կունենա հաջող ավարտ: Ուշադիր լսելով բոլորին՝ Կուտուզովը, հստակ զիտակցելով ողջ պատասխանատվությունը, հայտարարեց առանց նոր ճակատամարտի Մոսկվան թողնելու իր վճիռը: Դժվար էր ծերունագարդ, մարտական մեծ ուղի անցած ֆելդմարշալին ընդունել այդպիսի որոշում, որը, անշուշտ, առաջացնելու էր խիստ դժգոհություն արքունիքում, հասարակության որոշ շրջաններում, բանակում: «Մոսկվան կորցնելով,՝ ասաց գլխավոր հրամանատարը,՝ դեռևս կորած չէ Ռուսաստանը: Քանի դեռ գոյություն կունենա և ի վիճակի կլինի դիմակայել հակառակորդին, այնքան ժամանակ հույս ունեմ... Հաջողությամբ ավարտել պատերազմը, բայց երբ կոչնչացվի բանակը, կկործանվեն և՛ Մոսկվան, և՛ Ռուսաստանը»: «Հարկավոր է,՝ նչեց Կուտուզովը,՝ պաշտպանել բանակը և մոտենալ մեզ համարող զորքերին, զիջելով Մոսկվան՝ մենք կնախապատրաստվենք հակառակորդի ոչնչացմանը... Գիտեմ, պատասխանատվությունն ամբողջապես ընկնելու է ինձ վրա, սակայն դիմում եմ զոհարարության՝ հանուն հայրենիքի: Հրամայում եմ նահանջել»: «Նապոլեոնը,՝ ասում էր Կուտուզովը,՝ նման է արագ հեղեղի... Մոսկվան սպունգ է, որը կներծծի նրան իր մեջ»: Ռուս գեներալ-ֆելդմարշալը հակված էր պատերազմի վերջնական ելքի ու ավարտի լուծումները փնտրել մեկ գլխավոր ճակատամարտի մեջ: Ի տարբերություն Նապոլեոնի՝ նա համոզված էր, որ մեծաթիվ բանակների պայմաններում, որոնք գործում են խոշոր ռազմաբեմներում, գլխավոր ճակատամարտը, որքան էլ ունենա կարևորագույն նշանակություն, այնուամենայնիվ, ի վիճակի չէ, ինչպես XVIII դարում, ապահովել վերջնական հաղթանակ:

1812 թ. սեպտեմբերի 2-ին Նապոլեոնն իր բանակով մտավ Մոսկվա: Ֆրանսիայի կայսրը սկզբում ուրախ էր, տրամադրությունը բարձր, սակայն հետո նա արագ կերպարանափոխվեց ու հարցրեց, թե երբ է մոսկովյան բոյարների պատվիրակությունն իրեն ներկայանալու իր հնազանդությունն արտահայտելու համար: Նապոլեոնը համոզված էր, որ Մոսկվայի բոյարներն իրեն կդիմավորեն աղ ու հացով և խոնարհաբար կհանձնեն Կրեմլի բանալիները: Նապոլեոնը շատ սպասեց, բայց իդուր, բոյարներն այդպես էլ չներկայացան: Հավանաբար, Մոսկվայում գտնվելու ժամանակ Նապոլեոնը կռահեց Կուտուզովի մարտավարությունը, ուստի և օրինաչափ է, որ հենց մայրաքաղաքից նա սկսեց Ալեքսանդրի հետ հաշտություն կնքելու նոր փորձեր կատարել: Հանդես գալով բանակցություն-

ներ սկսելու նախաձեռնությունները և հաշտություն կնքելու նոր առաջարկություններ՝ Ֆրանսիայի կայսրը ցանկանում էր առնվազն լուծել ռազմաքաղաքական ու դիվանագիտական երկու կարևորագույն հիմնախնդիր: Նախ՝ հաշտությունը կիրկեր Ֆրանսիական օրեցօր հյուսիս, մարտունակությունը կորցնող բանակն անխուսափելի կործանումից: Երկրորդ՝ Մոսկվայում կնքված հաշտությունը նապոլեոնի համար չահեղանակ էր նաև դիվանագիտական տեսանկյունից, որովհետև եվրոպական երկրների արքունիքներում կատարված պատրանք, թե պատերազմը Ռուսաստանի դեմ ավարտվել է իր հաղթանակով, քանզի պայմանագիրը կնքվել է պարտված երկրի մայրաքաղաքում: Հատկանշական է, որ նապոլեոն Բոնապարտը երկրորդ անգամ հաշտության բանակցություններ սկսելու մասին Ալեքսանդրին տեղեկացրեց XIX դ. 40-60-ական թթ. հասարակական-քաղաքական մտքի կարկառուն ներկայացուցիչներից մեկի՝ Ալեքսանդր Գերցենի հոր՝ Մոսկվայի նշանավոր կալվածատեր Յակովլևի միջոցով: Նապոլեոնի հաշտություն կնքելու փորձերը մնացին անպատասխան՝ Ալեքսանդր Առաջինը հավատարիմ մնաց և կատարեց իր խոստումը. նա կտրականապես հրաժարվեց որևէ բանակցությունից, քանի դեռ օտար զինվորը տրորում է իր հայրենի հողը: Այլ կերպ ասած՝ բանակցությունները հնարավոր կդառնան միայն այն ժամանակ, երբ հակառակորդը լիովին և վերջնականապես դուրս կմղվի ռուսաց կայսրությունից:

Նապոլեոնի փորձը՝ Կուստուզովի զորակայան ուղարկել Լորիստոնին, նույնպես հաջողություն չունեցավ: Ընդունելով նապոլեոնի ներկայացուցչին՝ Մոսկվայում Ֆրանսիայի նախկին ղեկավար մարկիզ Լորիստոնին, ռուսական բանակի զլխավոր հրամանատարը մի կողմից՝ մատնանշում էր, որ մինչև Ֆրանսիացիների լիակատար ու վերջնական կապիտուլյացիան, ինքը ոչ մի ցանկություն չունի բանակցությունների մեջ մտնելու նրա հետ, որովհետև պատերազմը նոր է միայն սկսվում, իսկ մյուս կողմից՝ պատասխանում էր երկիմաստ, խուսափողարար՝ պատճառարանելով բանակցություններ վարելու լիազորություններ չունենալու հանգամանքով: Ռուսաց կայսրի ու զլխավոր հրամանատարի հաստատակամությունն այդ հիմնախնդրում նկատի ունենալով՝ նահանջող նապոլեոնն այլևս փորձեր չարեց նրանց հետ գտնելու հաշտության եղրեր: Եթե ռուսական բանակի բարձրաստիճան ղեկավարությունն անվերապահորեն դեմ էր նապոլեոնի հետ բանակցություններին, ապա արքունիքում թագավորի անմիջական շրջապատում ընթանում էր կողասրահային պայքար, որը բարդացնում ու դժվարացնում էր Ալեքսանդրի վիճակը, քանզի մայր-կայսրուհի Մարիա Ֆյոդորովնան, նրա որդին՝ մեծ իշխան Կոնստանտին Պավլովիչը համառորեն պահանջում էին, համոզում, ձնշում գործադրում կայսրի վրա, հորդո-

րում նրան հաշտություն կնքել նապոլեոնի հետ: Բայց կայսրը մնաց անդրդվելի ու հետևողական իր ռազմաքաղաքական ու դիվանագիտական մարտավարությունից: Նա ասում էր, որ ինքն ավելի շուտ մորուք կթողնի ու մուծիկներ (գեղջուկներ) հետ կարտոֆիլ կուտի, քան թե բանակցությունների մեջ կմտնի Բոնապարտի հետ: Ընդ որում, եթե կայսրը զիջեր իր մորը, եղբորը, ապա կհանդիպեր բարձրաստիճան զինվորականության ուժեղ զինազորությանը: Ավելին, հայրենասիրական վերելքը երկրում այնքան մեծ էր, որ հաշտության մասին խոսք անգամ լինել չէր կարող: Մ. Կուստուզովը Մոսկվան թողնելուց հետո կատարեց հիանալի զորաչարժ: Ռյազանի ճանապարհով նահանջի տպավորություն ստեղծելով՝ նա մոլորություն մեջ գցեց թշնամուն, իսկ ինքը հիմնական ուժերով անցավ Մոսկվայից հարավ ընկած Կալուգայի ճանապարհը՝ դեպի Տարուտինո գյուղը: Ռուսական բանակը փակեց դեպի հարավ՝ Տուլայի զինագործարաններ և Կալուգա տանող ճանապարհը, ուր հավաքված էր սպառազինության ու պարենի մեծ պաշար: Տարուտինոյի ճամբարում անցկացրած երեք շաբաթվա ընթացքում ռուսական բանակը համարեց կորուստները, կարգի բերեց հրետանին, փոխադրեց պարենամթերք ու զինամթերք: Ճամբարում անցկացրած յուրաքանչյուր օրը Կուստուզովն անվանեց ոսկե օր: Կուստուզովը ծրագրել էր հարկադրել նապոլեոնին նահանջել Սմոլենսկի՝ իր իսկ կողմից ավերած ճանապարհով, որով եկել էր Մոսկվա: 1812 թ. հոկտեմբերի 6-ի երեկոյան նապոլեոնն իր բանակով թողեց Մոսկվան: Նա որոշեց նահանջել Կալուգայի չավերված ճանապարհով դեպի հարավ-արևմուտք: Նապոլեոնը դեռ հույսը չէր կորցնում ռուսական բանակին նոր զլխավոր ճակատամարտ տալուց և հաղթանակից հետո պատերազմն ավարտել իր օգտին: Սակայն նրան այդպես էլ չհաջողվեց անցնել դեպի Տուլա և Կալուգա՝ ռուսական բանակի մարտական հաջող գործողությունների պատճառով: Ռուսները Ֆրանսիացիներին պարտության մատնեցին Տարուտինոյի ու Մալոյարոսլավեցի մոտ: Առանձնապես համառ էր Մալոյարոսլավեցի ճակատամարտը: Փոքրիկ քաղաքն ու թ անգամ ձեռքից ձեռք անցավ: Ռուսական բանակն ամուր փակել էր Կալուգայի ճանապարհը: Նապոլեոնը հարկադրված էր շրջվել դեպի Սմոլենսկի հին, ավերված ճանապարհը: Ֆրանսիացիները մեծ դժվարություններ հասան Սմոլենսկ՝ կրելով մի շարք նոր, ծանր պարտություններ: Ֆրանսիացիների համար հատկապես կորուստները եղավ Բերեզինա գետի անցումը: Նապոլեոնը թողեց բանակը. հրամանատարությունը հանձնեց մարշալ Մյուրատին և շտապ վերադարձավ Փարիզ՝ ամրապնդելու համար իր թուլացած իշխանությունը: Վարչավայում հանդիպելով Պրադտին, որին ինքը կես տարի առաջ հավատացնում էր իր արագ հաղթանակների մեջ, պարտված կայսրը դառը հեզանքով ասաց. «Մեծությունից մինչև ծիծաղելին միայն մեկ քայլ է»:

Ռուսական բանակը մտավ Վիլնո և դուրս եկավ ռուսական կայսրու-
թյան պետական սահմանը: Ռուսաստանից թշնամուն արտաքսելու մասին
հրովարտակում Կուտուզովը գրել է. «Պատերազմը վերջացավ թշնամու
լիակատար ոչնչացմամբ»: Ծնորհավորելով գինվորներին հաղթանակի
կապակցությամբ՝ գլխավոր հրամանատարը նշեց. «Ձեզանից յուրաքանչ-
յուրը հայրենիքի ազատարարն է»: Իսկ Ալեքսանդրը 1812 թ. դեկտեմբերի
25-ին հատուկ հրովարտակով ազդարարեց Հայրենական պատերազմի
հաղթական ավարտի մասին: Այդպես, ռուսական կայսրությունից դուրս
մղվեց Նապոլեոնի՝ «տասներկու լեզունների» բանակը: Ֆրանսիական բա-
նակի պարտությունն ու ռուսական բանակի հաղթանակի գործում որոշակի
էր երկրում լայնորեն ծավալված ժողովրդական, պարտիզանական պա-
տերազմը: Հայրենական պատերազմի ժամանակ ձևավորվեցին պարտի-
զանական խոշոր զորամիավորումներ, որոնց ղեկավարությունը կազմված
էր ռուսական կանոնավոր բանակի սպաներից: Այդ ջոկատների գլուխ
կանգնած էին Դավիդովը, Ֆիզները, Սեալավինը, Կուրինը, Չետուկերտակո-
վը, Կոժինան և ուրիշներ: 1812 թ. Հայրենական պատերազմին մասնակ-
ցություն ունեցան ռուսական կայսրության տարածքում ապրող ժողո-
վուրդները՝ ուկրաինացիներ, բելոռուսներ, մերձբալթյան, անդրկովկասյան
ժողովուրդները: Պատերազմին ակտիվորեն արձագանքեցին հայերը և
իրենց ներդրումն ունեցան Նապոլեոնի բանակների ջախջախման համար
մղված մարտերում: Ռուսական կայսրության անձայրածիր տարածքում
պատմականորեն ձևավորվել էին հայկական համայնքներ, որոնց շահերից
էր ջախջախել երկիր ներխուժած ֆրանսիացիներին: Եփրեմ կաթողիկոսը
պարգևատրվեց «Ալեքսանդր Նևսկու», իսկ Ռուսաստանի հայոց թեմի
առաջնորդ Հովհաննես Գառնակերյանը «Սուրբ Աննայի առաջին աստի-
ճանի» շքանշաններով:

Հայրենական պատերազմի հաղթական ավարտից հետո հրատապ
դարձավ ու բանավիճային բնույթ ընդունեց քաղաքական-դիվանագիտա-
կան և ռազմական մի կարևորագույն հիմնահարց: Ի՞նչ անել, սահմանա-
փակվե՞լ, արդյոք, սեփական տարածքների ազատագրմամբ ու դրանով
իսկ Եվրոպան թողնել բախտի քմահաճույքին, թե՞ միավորել Նապոլեոն-
յան տիրապետության դեմ ոտքի կանգնած երկրներին, գլխավորել նրանց,
դառնալ այն հիմնական ուժը, որը ոչ միայն վերջնականապես կկործանի
Բոնապարտի ստեղծած կայսրությունը, այլև արմատական փոփոխության
կենթարկի միջազգային հարաբերությունների ողջ համակարգը Եվրոպա-
յում: Առաջին ուղղության կողմնակիցները պահանջում էին ավարտել
պատերազմը Բերնզինայի ափերին: Այս տեսակետը հիմնավորվում էր այն
փաստով, թե հասարակությունը չի խրախուսում ու պաշտպանում հայրե-
նիքի սահմաններից դուրս բանակի ռազմական գործողությունները: Հենց

այս հանգամանքով էին նրանք հիմնավորում հակաֆրանսիական երկ-
րորդ, երրորդ, չորրորդ խմբակցություններում Ռուսաստանի համար հա-
մեմատաբար անհաջող պատերազմները: Ոչ պակաս կարևոր պատճառա-
բանություն էր երկրի տնտեսական ծանր վիճակը և ռուսական բանակի
ծանր կորուստները: Իսկապես պատերազմի ընթացքում զոհվեց 2 մլն
մարդ, ընդհանուր նյութական կորուստը կազմեց շուրջ 1 մլրդ. ռուբլի: Այդ
տեսակետը պաշտպանողներն ընդգծում էին, որ Ֆրանսիայի վերջնական
ջախջախումը, որ ձեռք բերվեց ծայրահեղ զրկանքների ու զոհերի գնով, ի
վերջո կծառայի ոչ այնքան կայսերական Ռուսաստանի շահերին, այլ
առաջին հերթին ձեռնտու կլինի Անգլիային: Այդ միտքն արտահայտել է
Ֆելդմարշալ Կուտուզովը ռուսական բանակին կից Անգլիայի դինվորական
ներկայացուցիչ գեներալ Վիլսոնին. «Ես ամենևին համոզված չեմ, որ Նա-
պոլեոնյան կայսրության ու նրա բանակի լիակատար ոչնչացումն աշխար-
հի համար արդեն լինել այնքան մեծ բարեբարություն... Նրա ժառան-
գությունը կհասներ ո՛չ Ռուսաստանին և ո՛չ էլ որևէ այլ ցամաքային տե-
րությունը, այլ այն տերությունը, որն այժմ էլ արդեն գերիշխում է ծովե-
րում ու նրա իշխանությունն այն ժամանակ կդառնար անհանդուրժելի»:
Բայց հաղթեցին ոչ թե գլխավոր հրամանատարը և նրա կողմնակիցները,
այլ այն ուղղության ներկայացուցիչները, որոնք կիսում էին ռուսական
կայսրի տեսակետը: Նրանք իրենց մարտավարությունը հիմնավորում էին
ռազմաքաղաքական ու դիվանագիտական ոչ պակաս կարևորագույն գոր-
ծունեքով: Նախ՝ Ռուսաստանը պաշտոնական տարբեր պարտավորու-
թյուններով սերտորեն կապված էր Արևմտյան Եվրոպայի երկրների հետ,
որը մի կողմից պահանջում էր ավարտել Նապոլեոնյան Ֆրանսիայի կա-
տարյալ ջախջախումը, իսկ մյուս կողմից՝ բացառել ինքնամեկուսացումը:
Ռուսաստանը պայմանագրեր էր կնքել Անգլիայի ու Շվեդիայի, գաղտնի
կապեր ուներ Պրուսիայի, մասամբ նաև Ավստրիայի հետ: Չէր կարելի ան-
տեսել Ռուսաստանի կարևորագույն քաղաքական շահերը Լեհաստանում,
որը կարող էր հաջող լուծում ստանալ, եթե ռուսական բանակն ակտիվ-
որեն մասնակցեր մայրցամաքի ռազմաքաղաքական իրադարձություննե-
րին: Եթե Նապոլեոնյան կայսրությունը գլխավոր չջախջախվեր, ապա Բո-
նապարտը կարող էր ժամանակ շահել և մեկ-երկու տարի հետո վերա-
կանգնել իր ռազմաքաղաքական հզորությունը և վերսկսել պատերազմա-
կան գործողությունները: Եթե Նապոլեոնին ընձեռվեր խաղաղ դադար,
ապա շատ արագ Հնարավոր կլիներ վերադարձ 1810-1811 թվականների
Եվրոպային, երբ մայրցամաքում հաստատվել էր Նապոլեոն Բոնապարտի
բացարձակ ռազմաքաղաքական գերիշխանությունը: Իսկ դա վերստին
կհակասեր Արևմտյան Եվրոպայի տերությունների և Ռուսաստանի շահե-
րին, որոնց վկայությունն են հակաֆրանսիական երկրորդ, երրորդ, չոր-

րորդ և Հինգերորդ խմբակցութիւնները: Երրորդ՝ Ռուսաստանի վճռորոշ դերի շնորհիվ նապոլեոնյան կայսրութեան կործանումից Հետո Ալեքսանդրի Համար Հնարավորութիւն կստեղծվեր Հետպատերազմյան Եվրոպայում հաստատել իր քաղաքական գերիշխանութիւնը կամ դառնալ նրա տիրակալներից մեկը մայրցամաքում և միջպետական առնչութիւնների նոր համակարգում ապահովել Ռուսաստանի առաջատար տեղը և դիրքը:

Ռուսական բանակը 1813 թ. Հունվարին անցավ Նեման գետը, մտավ Վարշավայի դքսութիւն և Արևելյան Պրուսիայի տարածքով շարժվեց դեպի Բեռլին: Ֆելդմարշալ Կուտուզովը դիմեց Պրուսիայի թագավորի հպատակներին՝ կոչ անելով նրանց միանալ ռուսական բանակին ու Համատեղ ուժերով պայքարել Ֆրանսիացիների դեմ: Սկսվեց ռուս-պրուսական դաշինքի ձևավորումը, հիմք դրվեց հակաֆրանսիական վեցերորդ խմբակցութեանը, որի կազմի մեջ էին Ռուսաստանը, Անգլիան, Պրուսիան, իսկ այնուհետև՝ Շվեդիան: 1813 թ. ապրիլի 16-ին ռուսական բանակը և ողջ երկիրը ծանր կորուստ ունեցան՝ մահացավ Հայրենական պատերազմի Հերոս ֆելդմարշալ Միխայիլ Իլարիոնովիչ Կուտուզովը: Նա վախճանվեց Բունցլաու քաղաքում, ուր շտապեց ռուսական կայսրը, որպեսզի մեծ զորավարի կյանքի վերջին րոպեներին կարողանա քավել նրա հանդեպ գործած իր մեղքը: Ալեքսանդրը, դիմելով հասարակ գիւնվորի մահճակալին պառկած ու իր վերջին ժամերն ապրող տաղանդաշատ զորավարին, ըստ խորհրդային ժամանակաշրջանի ականավոր պատմաբան Տարլեի, ասաց. «Ներիր ինձ, Միխայիլ Իլարիոնովիչ»: Ռուսաստանին մեծագույն ծառայութիւն մատուցած հայրենասեր զորավարը, գտնվելով հոգեվարքի մեջ, հազիվ լսելի ձայնով ասաց. «Ես ներում եմ, արքա, բայց Ռուսաստանը երբեք Ձեզ չի ների այդ»: Ռուսական բանակի գլխավոր հրամանատար սկզբում նշանակվեց գեներալ Վիտգենշտեյնը, այնուհետև Բարկլայ դը Տոլին:

1813 թ. մայիսին Նապոլեոնը Սաքսոնիայում՝ Լյուտցենի և Բաուտցենի, իսկ օգոստոսին Դրեզդենի ճակատամարտերում հաղթեց իր հակառակորդներին: Սակայն դա Նապոլեոնի վերջին հաջողութիւնն էր, քանզի դաշնակիցները համատեղ ուժերով գերմանական Լայպցիգ քաղաքի մերձակայքում տեղի ունեցած «ժողովուրդների ճակատամարտում», որտեղ որոշվում էր Եվրոպայի ճակատագիրը, 1813 թ. հոկտեմբերի 16-18-ը ջախջախեցին Նապոլեոնի բանակը: 1814 թ. մարտի 31-ի առավոտյան դաշնակիցների զորքերը Ալեքսանդր Առաջինի և Ֆրիդրիխ-Վիլհելմ Երրորդի գլխավորութեամբ մտան Փարիզ: Նապոլեոնը հրաժարվեց գահից ու աքսորվեց Միջերկրական ծովում գտնվող էլբա կղզի: Նապոլեոնյան պատերազմների ավարտից Հետո հաղթող տերութիւնները՝ Անգլիան, Ռուսաստանը, Ավստրիան, Պրուսիան Եվրոպայի քաղաքական քարտեզը վերա-

ձեւելու, Ֆրանսիայի նոր սահմանները որոշելու և այլ հիմնահարցեր քննարկելու նպատակով Վիեննայում գումարեցին միջազգային վեհաժողով:

Վիեննայում դիվանագիտական սուր պայքար ծավալվեց լեհական, սաքսոնական, գերմանական, իտալական հիմնահարցերի վերաբերյալ: Ալեքսանդր Առաջինը ձգտում էր կայսրութեանը միակցել ամբողջ Վարշավայի դքսութիւնը, որը, ինչպես նա էր կարծում, պատկանում էր իրեն՝ նապոլեոնյան պատերազմում հաղթելու իրավունքով: Լեհական հարցի վերջնական լուծման գործում կարևոր նշանակութիւն ունեցան Ռուսաստանի ու Ավստրիայի, ապա Ռուսաստանի և Պրուսիայի միջև կնքված պայմանագրերը: Ավստրիային անցան Արևելյան Գալիցիայի գավառները, Պրուսիան ստացավ Պոզնանը (Պոզնանի մեծ դքսութիւնը) և Տորնը, Կրակով քաղաքը հարակից տարածքներով, հռչակվում էր ազատ քաղաք երեք տերութիւնների հովանավորութեան ներքո ու ստանում էր սահմանադրութիւն: Վարշավայի դքսութեան մնացած մասը միակցվում էր Ռուսաստանին՝ «Լեհական թագավորութիւն» անունով: Ռուսաստանի նախկին դաշնակիցները Ալեքսանդրի մեջ տեսնում էին նոր Նապոլեոնի, նոր տիրակալի մայրցամաքում: Անգլիան, Ավստրիան և Ֆրանսիան 1815 թ. Հունվարի 3-ին կնքեցին գաղտնի պայմանագիր, որն ուղղված էր Ռուսաստանի, ապա նաև Պրուսիայի դեմ: Վիեննայի վեհաժողովի աշխատանքների ամենաեղանակ պահին Ավստրիայի մայրաքաղաքում կայծակի արագութեամբ տարածվեց մի ահեղ լուր՝ Նապոլեոնը թողել է էլբան ու սրբութեաց շարժվում է Փարիզ: Նապոլեոնին մայրաքաղաքում սպասում էր հերամի զարմանալի, անսպասելի, բայց հաճելի անակնկալ, որն իրավունք էր տալիս հավատալու, թե վերստին փայլատակելու էր իր անպարտելի ու հաղթական անմար աստղը: Ֆրանսիայի գահին նոր վերականգնված Լյուդովիկոս XVIII այդ լուրից խուճապի մատնվեց ու այնքան հապճեպորեն լքեց մայրաքաղաքը, որ չհասցրեց կամ մոռացավ վերցնել ընդամենը երեք օրինակից կազմված հույժ գաղտնի պայմանագրի իրեն հատկացված օրինակը: Նապոլեոնն արագ, առանց ժամանակ կորցնելու Ռուսաստանի ներկայացուցչութեան քարտուղար Բուտյակինի միջոցով այդ պայթյունավտանգ գաղտնի պայմանագիրը հասցրեց Ալեքսանդրին: Ռուսաստանի կայսրն իր դաշնակիցներից կարող էր սպասել ամեն ինչ, բայց ոչ նման ուխտադրութիւն: Ահա ինչու, Բուտյակինի վկայութեամբ, կայսրը իր ներկայութեամբ կարդալով Ռուսաստանի դեմ ուղղված այդ գաղտնի փաստաթուղթը, խիստ զայրույթից կարմրեց, բայց զսպեց իրեն, դրսևորեց սառնասրտութիւն ու ինքնատիրապետում: Երբ Ալեքսանդրի մոտ եկավ Ավստրիայի արտգործնախարար Մետերնիխը, որը Նապոլեոնի ափ դուրս գալուց Հետո Եվրոպայի փրկութիւնը տեսնում էր գլխավորապես ռուսական կայսրի մեջ, վերջինս լուռ նրան պարզեց ավստրիացի նա-

խարարի նյութած գաղտնի դիվանագիտութեան տիրահաճակ պտուղը: Եվրոպայի ճակատագրի համար այս բախտորոշ ժամանակ Ալեքսանդրը վերստին կարողացավ ցուցաբերել իսկական պետական գործչին հատուկ խոհանուրընդուն և սառնասարտութուն ու հանուն մայրցամաքում ընդհանուր խաղաղութեան անտեսեց Ռուսաստանի ու անձամբ իր դեմ կաղմակերպված ուխտադրուժ գործարքը և բացահայտ դավաճանութիւնը, մանավանդ որ կայսրին դժվար չէր կռահել Նապոլեոնի հետապնդած դիվանագիտական այս մարտավարութեան իսկական նպատակը: Ալեքսանդրը կրակի մեջ գցեց Մետերնիխի ու Թալերանի բացահայտ խարդավանքը վկայող գաղտնի դիվանագիտութեան փաստաթուղթը: Ավելին, Ռուսաստանի կայսրը հանդես եկավ Նապոլեոնի դեմ ռազմաքաղաքական հերթական դաշինք ստեղծելու նախաձեռնողի դերում: 1815 թ. ձևավորվեց հակաֆրանսիական վերջին՝ յոթերորդ խմբակցութիւնը: Դաշնակիցների դորքերը 1815 թ. Վաթերլոյի հայտնի ճակատամարտում անգլիացի ֆելդմարշալ դուքս Վելինգտոնի գլխավորութեամբ ջախջախեցին նապոլեոնյան բանակը ու կործանեցին նրա «100 օրյա կայսրութիւնը»: Պարտված Նապոլեոն Բոնապարտը երկրորդ անգամ հրաժարվեց գահից, աքսորվեց սուրբ Հելինե կղզի, որտեղ էլ մահացավ 1821 թ. մայիսի սկզբներին: Վիեննայի վեհաժողովում ընդունված պաշտոնական բոլոր վավերագրերը վկայում են, որ դրանց հիմքում ընկած է լեգիտիմիզմի («օրինականութեան», «օրինակարգութեան») սկզբունքը, որ պայմանագրերը կազմվեցին «միջամտելու տեսութեան» հենքի վրա: Ֆրանսիայի տարածքը հասցվեց 1792 թ. սահմանագծին: Ռուսաստանը ստացավ Վարչավայի դքսութեան մեծ մասը՝ Վարչավա կենտրոնով: Ալեքսանդրն օրինականացրեց նաև Ֆինլանդիայի ու Բեսարաբիայի միացումը ռուսական կայսրութեանը: 1815 թ. նոյեմբերի 15-ին Ալեքսանդրը հրապարակեց Լեհաստանին «Սահմանադրական խարտիա» շնորհելու հռչակագիր, որով լեհական թագավորութիւնը ինքնավար իրավունքով հայտարարվեց կայսրութեան անքակտելի տարածք: Եվրոպայում հայտնի սահմանադրական վավերագրերի համեմատութեամբ այն ուներ անհամեմատ ազատական բովանդակութիւն: Ռուսաստանի կայսրը լեհական սեյմի բացման ժամանակ արտասանած ճառում կոչ արեց նրա պատգամավորներին «Մեծ Եվրոպային օրինակ» ցույց տալ ու բոլորին ապացուցել «օրինաստեղծ» հիմնարկների առավելութիւնը: Քաղաքական քարտեզի վերաձևման հետևանքով իրենց տարածքներն ընդլայնեցին Անգլիան, Ավստրիան և Պրուսիան: Եվրոպայում Վիեննայի վեհաժողովի որոշումներով սահմանված միջազգային քաղաքական նոր համակարգը իր արտաքուստ կայունութեամբ ու ամրութեամբ հանդերձ, այնուամենայնիվ, անհանգրստացնում էր մեծ տերութիւնների գահակալներին, առաջին հերթին Ալեքսանդրին, քանզի ռուսա-

կան կայսրը, մյուսների համեմատութեամբ միապետութեան անսասանութեան պահպանման տեսանկյունից ավելի խորաթափանց գտնվեց տեսնելու այդ համակարգի խոցելի ու թուլ կողմերը: Նա իր առջև խնդիր դրեց Վիեննայի համակարգն ամրապնդել քաղաքական նոր դաշինքով և իր մտահոգման մասին տեղեկացրեց Ավստրիայի կայսրին ու Պրուսիայի թագավորին: Ֆրիդրիխ-Վիլհելմ Երրորդը և Ֆրանց Առաջինը համամիտ լինելով Ալեքսանդրի հետ, ընդունեցին նրա առաջարկը, որովհետև Վիեննայի քաղաքական համակարգի հնարավոր փլուզումը գլխավորապես սպառնալիք կստեղծեր Պրուսիայի ու Ավստրիայի համար: Երեք միապետները համատեղ ջանքերով շտապեցին ստեղծել քաղաքական նոր խմբակցութիւն, որը միջազգային հարաբերութիւնների ու դիվանագիտութեան պատմութեան մեջ ստացավ «Սրբազան դաշինք» անունը: 1815 թվականի սեպտեմբերի 14-ին (26-ին) Ռուսաստանի կայսր Ալեքսանդրի, Պրուսիայի թագավոր Ֆրիդրիխ-Վիլհելմի ու Ավստրիայի կայսր Ֆրանցի միջև կնքվեց «Սրբազան դաշինքը», որը պաշտոնապես ստացավ «Քրիստոնեական եղբայրութեան միութեան դաշինք» անվանումը: Երեք կայսրերն իրենց հռչակեցին «եղբայրներ» ու հանդիսավորութեամբ երդվեցին առաջնորդվել «Սուրբ գրքի» սկզբունքներով ու պարտավորվեցին օգնել միմյանց բոլոր դեպքերում ու ամենուր: Դաշինքին հետագայում միացավ Ֆրանսիայի կայսրը, իսկ այնուհետև Եվրոպայի գրեթե բոլոր միապետները, բացառութեամբ Անգլիայի, Թուրքիայի և Հոսմի Պապի: Մարքսիստական ուսմունքի հիմնադիրները միջազգային հարաբերութիւնների հիմնախնդիրները դիտարկելով ու լուսաբանելով գերազանցապես հեղափոխութեան և դասակարգային պայքարի նեղ շահերի տեսանկյունից «Սրբազան դաշինքը» գնահատեցին որպես Եվրոպայի միապետների դավադրութիւն իրենց ժողովուրդների դեմ: Այսուհանդերձ, Վիեննայի վեհաժողովի որոշումները և «Սրբազան դաշինքը» առժամանակ ապահովեցին համընդհանուր խաղաղութիւնը Եվրոպայում, որը հյուծվել էր անընդմեջ պատերազմների հոգնեցուցիչ մղձավանջից:

**ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻՏՔԸ**

**§ 1. ԴԵԿԱՔՐԻՍՏԱԿԱՆ ՀԱԿԱՃՈՐՏՍՏԻՐԱԿԱՆ,
ՀԱԿԱՄԻԱՊԵՏԱԿԱՆ ԸՆԹՈՒՄԸ**

Հայրենական պատերազմի հաղթական ավարտը, ռուսական բանակի արտասահմանյան արշավանքը և Նապոլեոնյան Ֆրանսիայի լիակատար ջախջախումը զգալիորեն նպաստեցին ազգային զարթոնքին, դարձան հզոր գործոններ հասարակական-քաղաքական մտքի հետագա զարգացման համար, պայմաններ ստեղծեցին գաղափարախոսական տարրեր ուղղությունների ձևավորմանը, որոնցից յուրաքանչյուրը յուրովի էր պատկերացնում Հայրենիքի առաջընթացի, բարգավաճման, հղորացման հետ առնչվող հիմնահարցերի լուծումը: Այդ պատմափուլում մշակվեցին ու հասարակության տարրեր շրջաններում տարածվեցին հակաճորտատիրական, լիբերալ-ազատական, պահպանողական-միապետական ուսմունքները, որոնց տեսարանները փորձում էին, ելնելով ազգային պետական շահերից, հիմնավորել իրենց դավանած հայեցակարգի առավելությունները: Ընդ որում, սկզբում ռուսական հասարակական-քաղաքական միտքը հարստացվեց հակաճորտատիրական, հեղափոխական գաղափարախոսությամբ, իսկ հետո ձևավորվեց պահպանողական-միապետական տեսությունը, մշակվեցին լիբերալ-ազատական ծրագրեր: Թեև այս երեք քաղաքական ուղղությունների միջև ակնհայտ էին սկզբունքային տարբերություններ, այնուամենայնիվ դրանց գաղափարախոսները և գաղափարակիրները հիմնականում աղնվականներ էին, որոնք սակայն արտահայտում էին հասարակության տարրեր խավերի շահերը: Եթե հեղափոխական և լիբերալ-ազատական աղնվականության ներկայացուցիչները պահանջում էին վերացնել, տարրեր ուղիներով իր դարն ապրած ճորտատիրական համակարգը, ապա պահպանողականները, ընդհակառակը, վճռապես հանդես էին գալիս ճորտատիրությունը պահպանելու օգտին, քանզի նրանք կայսերական Ռուսաստանի հզորության գլխավոր երաշխիքը տեսնում էին միապետի անսահմանափակ, բացարձակ իշխանության մեջ: Հետևաբար XIX դ. առաջին կեսին ռուսական հասարակական-քաղաքա-

կան մտքի պատմության մեջ գերակայում էին երեք հոսանքներ՝ պահպանողական, լիբերալ և հեղափոխական: Աղնվականության գերակայությունը գերազանցապես պայմանավորված էր այն հանգամանքով, որ նրա շրջանում ձևավորված մտավորականությունը, գիտակցելով երկրում քաղաքական բարեփոխումներ անցկացնելու անհրաժեշտությունը, սկսեց մշակել ու առաջադրել կոնկրետ քաղաքական ծրագրեր ու ուսմունքներ: Հայրենական պատերազմից և ռուսական բանակի արտասահմանյան արշավանքից հետո Ռուսաստանում ծավալված հեղափոխական շարժման և քաղաքական ողջ գործընթացի առանձնահատկությունն այն էր, որ այդ պայքարում բխվեցին կայսրության հիմնական հենարան հանդիսացող աղնվականության տարրեր խմբավորումները, որոնցից պահպանողական-միապետական թեև պաշտպանում էր ինքնակալությունը, ջանում ինչ գնով էլ լինի պահպանել ճորտատիրական իրավունքը, իսկ հեղափոխական թեև, ըստ էության հանդես գալով «մարդու բնական իրավունքների մասին տեսությամբ», դնում էր թե՛ ինքնակալության և թե՛ ճորտատիրության վերացման պահանջը և հանուն այդ ամենի իրագործման դիմում ցարիզմի դեմ զինված պայքարի: Հետևաբար, Ռուսաստանում այս տեսությամբ հանդես եկան ոչ թե բուրժուազիայի ներկայացուցիչները, որոնք դեռևս գտնվում էին սաղմնային վիճակում, այլ՝ հեղափոխական աղնվականությունը: Մինչդեռ Արևմտյան Եվրոպայում գաղափարախոսության ոլորտում բխումները, իսկ հեղափոխությունների ժամանակ զինված պայքարը հիմնականում ընթանում էր քաղաքային բնակչության՝ երրորդ դասի, որի գլուխ կանգնած էր բուրժուազիան, և միապետական ուժերի միջև: Հեղափոխական գաղափարախոսությունը ձևավորվեց ռուսական իրականության պայմաններում, որի համար հիմք դարձավ դարերի ընթացքում կազմավորված և ամուր արմատներ գցած ավատատիրական-ճորտատիրական-միապետական համակարգը: Այդ կարգերի վերացումը նրանք համարում էին պարտադիր և անխուսափելի, քանզի դրանց առկայությունը և պահպանումը ոչ միայն ոտնահարում էր ազգային արժանապատվությունը, այլև զգալիորեն կաշկանդում էր երկրի տնտեսական-քաղաքական հետագա զարգացումը: Հեղափոխական աշխարհայացքի ձևավորման գործում մեծ էր Ալեքսանդր Ռադիչչևի «ձանապարհորդություն Պետերբուրգից Մոսկվա» հակաճորտատիրական բովանդակություն ունեցող գիրքը: Նրանք քաջածանոթ էին նաև XVIII դարի Ֆրանսիական լուսավորիչների հայացքներին, որոնք նույնպես նպաստեցին հակաճորտատիրական աշխարհայացքի ու գաղափարների ձևավորմանը: Հեղափոխական աղնվականները հանդես եկան այն ժամանակ, երբ Ռուսաստանում շարունակվում էր ավատատիրական-ճորտատիրական համակարգի քայքայումը և աստիճանաբար ավարտին էր մոտենում բուր-

ժուական հարաբերությունների ձևավորման տնտեսական-քաղաքական գործընթացը:

Կայսերական Ռուսաստանում ծավալված հասարակական-քաղաքական շարժումները և հատկապես հեղափոխական պայքարը ճորտատիրական միապետական կարգերի դեմ պետք է դիտարկել իբրև համաեվրոպական հեղափոխական ընդհանուր շարժման բաղկացուցիչ մաս, ուստի և անհրաժեշտ է այն լուսաբանել ու գնահատել այդ շարժման ամբողջական համալիրի մեջ: Ռուսական հասարակական-քաղաքական և պատմագիտական մտքի ներկայացուցիչները սուղնվական-հեղափոխականներին տվել են դեկաբրիստներ, իսկ ողջ շարժմանը՝ դեկաբրիստական անունը: Ապագա դեկաբրիստների առաջին գաղտնի ընկերությունը ստեղծվեց Պետերբուրգում ազգային-Հայրենասիրական վերելքի պայմաններում: Այն իր կազմավորման պահին (1816 թ. փետրվար) ստացել էր «Փրկության միություն», իսկ 1817 թ. կանոնադրության ընդունումից հետո՝ «Հայրենիքի իսկական ու հավատարիմ դավակների ընկերություն» անվանումը: Այն ստեղծեցին և ղեկավարեցին երիտասարդ սպաներ Ա. Ն. և Ն. Ն. Մուրավյովները, Ս. Պ. Տրուբեցկոյը, Ի. Պ. Յակուչկինը, Մուրավյով-Ապոստոլ եղբայրները: Միությունը փոքրաթիվ էր. այն կազմված էր ընդամենը 30 հոգուց: Դա փաստորեն փակ խմբակ էր, որն իր առջև նպատակ էր դրել առաջին հերթին վերացնել ճորտատիրական իրավունքը, պայքարել ինքնակալության դեմ, բայց պարզ չէին այդ խնդիրների լուծման ուղիները և մեթոդները: «Փրկության միություն» հենքի վրա Մոսկվայում 1818 թ. ստեղծվեց ավելի կուռ կառուցվածքով և անդամների մեծ թվով (ավելի քան 200 մարդ) «Բարօրության միությունը»: Միության խնդիրն էր քարոզել հակաճորտատիրական գաղափարներ, պաշտպանել կառավարության լիբերալ մտահղացումները, ստեղծել հասարակական կարծիք ճորտատիրական իրավունքի և ինքնակալական համակարգի դեմ: Դեկաբրիստները համոզված էին, որ իրենց կհաջողվի 10 տարվա ընթացքում նվաճել հասարակության համակրանքը, ստանալ նրա աջակցությունը և դրանով իսկ խուսափել Փրանսիական հեղափոխության սարսափներից, Ռուսաստանում իրականացնել անարյուն հեղաշրջում: Սակայն համոզվելով, որ կառավարությունը հրաժարվում է բարեփոխումներից, դեկաբրիստները հարկադրված եղան փոխել իրենց պայքարի մարտավարությունը:

1821 թ. Մոսկվայում գումարված «Բարօրության միության» համագումարում որոշվեց ինքնակալությունը տապալել զինված հեղափոխության միջոցով: Իսպանիայում ու Նեապոլում տեղի ունեցած հեղափոխությունների ժամանակ բանակի վճռորոշ դերը ոգևորում էր դեկաբրիստներին, մղում նրանց վճռական գործողությունների: Քարոզչական մարտավարությունը դեկաբրիստներին այլևս չէր բավարարում. դա նրանց

համար արդեն անընդունելի էր ու անիրատեսական: 1821-1822 թթ. կազմավորվեցին «Հարավային» և «Հյուսիսային» ընկերությունները, իսկ 1823 թ. Ուկրաինայում ստեղծվեց «Սլավոնների միացյալ ընկերությունը», որը 1825 թ. աչնանը միավորվեց «Հարավային միության» հետ: Պետսելը 1824 թ. գարնանը Պետերբուրգում գտնվելու ժամանակ փորձեց միավորել երկու միությունները և այդ առնչությամբ բանակցություններ վարեց «Հյուսիսային ընկերության» հետ մեկ միասնական ծրագիր կազմելու նպատակով, բայց անարդյունք:

Դեկաբրիստների ղեկավարության շրջանում առկա էին լուրջ տարաձայնություններ վերափոխումների իրագործման ուղիների վերաբերյալ: Դեկաբրիստները համոզված էին, որ բանակը պատրաստ է զինված պայքարի ելնել ինքնակալության դեմ, որը, սակայն, հեռու էր իրականությունից, քանզի բանակը լիովին, մասնակի բացառություններով, հավատարիմ մնաց կայսրին ու չպաշտպանեց ապստամբներին: Դեկաբրիստների շրջանում ծագած տարակարծություններն իրենց արտացոլումը գտան «Հարավային» և «Հյուսիսային» ընկերությունների ծրագրերում: «Հարավային ընկերության» ծրագիրը՝ «Ռուսկայա պրավդան», մշակեց նրա ճանաչված ղեկավար Պավել Պետսելը (1793-1826 թթ.), իսկ «Հյուսիսային ընկերության» ծրագիրը՝ «Սահմանադրությունը», կազմեց Նիկիտա Մուրավյովը (1796-1843 թթ.)՝ միության ղեկավարը: Ռուսաստանի ապագա վերափոխումներին նվիրված երկու ծրագրերը, անչուշտ, նշանավոր քաղաքական փաստաթղթեր էին, որոնք նկատելիորեն հարստացրին ռուսական հասարակական-քաղաքական, հեղափոխական միտքը: Նիկիտա Մուրավյովը բավականաչափ կրթված ու ղարգացած անձնավորություն էր և մեծ հետաքրքրություն էր ցուցաբերում պատմության հիմնահարցերի և ռազմական արվեստի տեսության նկատմամբ: Նրա «Սահմանադրությունը» պահպանվել է մի քանի տարբերակով: Առաջին երեք տարբերակները գրվել են 1822-1825 թթ. ընթացքում, իսկ վերջինը՝ դեկաբրիստների ապստամբության ճնշումից հետո, Պետրոպավլովյան բանտում, հետաքննչական հանձնաժողովի պահանջով: Ներածությունից և 11 գլուխներից բաղկացած «Սահմանադրությունը» պահանջում էր անհապաղ վերացնել ճորտատիրական իրավունքը: «Ճորտատիրական իրավունքը և ստրկությունը, - նշված է «Սահմանադրության» մեջ, - վերացվում են: Ստրուկը, ոտք դնելով ռուսական հողին, դառնում է ազատ: Ազնվականությունը պետք է հավերժ հրաժարվի մյուս մարդկանց տիրելու նողկալի առավելությունից»: «Սահմանադրությունը» որոշակիորեն մերժում էր բացարձակ միապետության համակարգը և հիմնավորում սահմանադրական միապետություն հաստատելու անհրաժեշտությունը: «Սահմանադրությունը» զրկում էր կայսրին օրենսդրական իրավունքից, սակայն նա

պահպանում էր գործադիր իշխանությունը: Նա, իբրև երկրի գերագույն պաշտոնյա, իրավասու էր կասեցնել օրենքի ընդունումը և կարող էր ուղարկել լրացուցիչ կամ կրկնակի քննարկման: Ավելին, միապետին տրված գործադիր իշխանությունն անցնում էր ժառանգաբար: Սակայն Ն. Մուրավյովը գտնում էր, որ եթե կայսրը հրաժարվի սահմանադրությունն մտցնել, ապա Ռուսաստանը կարող է հայտարարվել հանրապետություն: Նիկիտա Մուրավյովի «Սահմանադրության» համաձայն Ռուսաստանը հռչակվում էր 15 «տերությունից»՝ «ղերժավայից» կազմված դաշնություն, որոնցից յուրաքանչյուրն ունենալու էր իր մայրաքաղաքը՝ Վոլխովի տերությունը Պետերբուրգ մայրաքաղաքով, Ջերնոմորսկի տերությունը Կիև կենտրոնով, Ուկրաինայի տերությունը Նարկով մայրաքաղաքով, Կովկասի՝ Թիֆլիս կենտրոնով: «Տերություններում» իշխանությունն իրագործում էր երկպալատանոց կառավարման համակարգը՝ Տերունական Դուման, իբրև վերին պալատ և ընտրովի պատգամավորների Պալատը որպես ստորին պալատ: Դաշնության Գերագույն իշխանությունը պատկանում էր երկպալատային ժողովրդական վեչեին՝ Գերագույն դումային և ժողովրդական ներկայացուցիչների պալատին: Մուրավյովի «Սահմանադրությունը» սահմանափակում էր ընտրական իրավունքը գույքային բարձր ցենզով՝ 500 ռուբլու սեփականությունից պակաս ունեցող քաղաքացիները ղրկվում էին ընտրական իրավունքից: Ռուսական կայսրությունը գերազանցապես գյուղացիական երկիր էր, ուստի և ազրարային հարցը միշտ էլ գտնվել է ռուսական հասարակական-քաղաքական մտքի ներկայացուցիչների ուշադրության կիզակետում: Դեկարրիստների ծրագրերում ազրարային գյուղացիական հիմնախնդիրը ստացել էր առանցքային նշանակություն: Եվ օրինաչափ էր, որ ազրարային հիմնահարցին նրանք մոտենում էին ամենայն պատասխանատվությամբ, հասկանալով, որ դրա լուծումից է զգալիորեն կախված զինվորական հեղաշրջման վերջնական հաջողությունը: Այս տեսանկյունից առավել բարդ էր, վիճահարույց գյուղացիությունը հողով ապահովելու հարցը: Նիկիտա Մուրավյովը, հույս ունենալով, որ ազնվականությունը կպաշտպանի պետական հեղաշրջումը, խոստանում էր նրանց պահպանել զարևրով ամրագրված իրենց արտոնությունները, իսկ ճորտությունից ազատված ու անձնական ազատություն ստացած գյուղացիները ստանալու էին ոչ մեծ հողաբաժին՝ յուրաքանչյուր ծուխը՝ երկու դեսյատին: Հատկանշական է, որ Նիկիտա Մուրավյովի «Սահմանադրության» ու Նովոսիցևի և Վյազնևսկու կազմած սահմանադրական նախագծի միջև առկա են շատ ընդհանրություններ: Հայտնի բանաստեղծ ու պետական գործիչ Վյազնևսկին, սերտ կապերի մեջ լինելով ընկերության շատ անդամների հետ, նրանց ծանոթացրեց իր նախագծի հետ, որից կառավարությունը շտապեց հրաժարվել: Այեք-

սանդր Առաջինի Վարչավայում՝ լեհական Սեյմում ելույթ ունենալուց մոտ մեկ տարի անց կայսրի սեղանին դրվեց Նովոսիցևի կազմած սահմանադրության նախագիծը: Հայտնի է, որ Ռուսաստանի կայսրը Լեհաստանին շնորհեց սահմանադրություն՝ առաջին իրավաքաղաքական պաշտոնական փաստաթուղթը կայսրության պատմության մեջ, ուստի և օրինաչափ է, որ «լեհական փորձը» օգտագործվեց Նովոսիցևի կողմից: Հենց նրան՝ Նովոսիցևին կայսրը հանձնարարեց մշակել սահմանադրության նախագիծը ոչ միայն այն պատճառով, որ նա համարվում էր Ալեքսանդրի անձնական մտերիմ բարեկամը, այլև նկատի էր առնվում արքունիքից հեռու գտնվելու հանգամանքը, որ հնարավորություն էր ընձեռում ապահովելու աշխատանքի գաղտնիությունը: Նրա սահմանադրական նախագիծը հռչակում էր ոչ թե ժողովրդի, այլ կայսերական իշխանության սուվերենությունը: Միաժամանակ նախատեսվում էր ստեղծել երկպալատային պառլամենտ. առանց վերջինիս հաստատման կայսրը չէր կարող ընդունել ու հրապարակել ոչ մի օրենք: Ճիշտ է, պառլամենտում օրենքի նախագիծ մտցնելու իրավունքը պատկանում էր կայսրին, նա էլ զլխավորելու էր գործադիր իշխանությունը: Ռուսաստանի քաղաքացիները ստանալու էին խոսքի, դավանանքի ազատություն, օրենքի առաջ բոլորի հավասարություն, անձի անձեռնմխելիություն, մասնավոր սեփականության իրավունք: Նովոսիցևի սահմանադրական նախագիծը, ինչպես և Սպերանսկու բարեփոխումների փաթեթը, «քաղաքացի» հասկացության ներքո նկատի ունեին «ազատ դասերի» ներկայացուցիչներին, որոնց մեջ, բնականաբար, չէին մտնում ճորտերը: Նրանց նախագծերում ընդհանրապես անտեսված էր ճորտատիրական իրավունքի վերացման հիմնահարցը: Ռուսական կայսրությունը դառնալու էր դաշնային կառուցվածք ունեցող պետություն, որը բաժանվելու էր փոխարքայությունների և յուրաքանչյուրում ստեղծվելու էր երկու պալատից բաղկացած պառլամենտ: Շուտով պարզ դարձավ, որ կայսրը կորցրել է հետաքրքրությունը սահմանադրական նախագծի նկատմամբ, որը նշանակում էր հրաժարվել գահակալման առաջին տարիներին որդեգրած բարեփոխումների քաղաքականությունից: Նախ՝ բարեփոխումները, առավել ևս սահմանադրական նախագիծը, ազնվականության մեծամասնությունն ընդունեց դժկամությամբ, որը կայսրը չէր կարող անտեսել: Երկրորդ՝ Եվրոպայում տեղի ունեցող քաղաքական գործընթացները և հատկապես հեղափոխական շարժումները վերջնականապես համոզեցին կայսրին ընդմիշտ հրաժարվել երբեմնի փայփայած սահմանադրության անհրաժեշտության գաղափարից: Դրան ավելացավ անձնական ողբերգությունը՝ կայսրը կարճ ժամանակի ընթացքում կորցրեց դուստրերին ու քրոջը, որից հետո նա սկսեց աստիճանաբար ընկնել միստիցիզմի (խորհրդամոլության) որոգայթի մեջ: «Ցմահ չկուհաված

սֆինքս»,- ասել է նրա մասին Վյազենսկին: Մուրավյովի և Նովոսիլցևի նախագծերի նմանությունն այն էր, որ երկու փաստաթղթում միապետությունը պահպանվում էր, երկրում սահմանվում էր դաշնության (ֆեդերատիվ) կառուցվածքով ու երկպալատային պառլամենտով պետական համակարգ: Սակայն Նովոսիլցևի նախագծի համեմատությամբ Մուրավյովի սահմանադրությունը նկատելիորեն ընդլայնում էր ներկայացուցչական մարմնի իրավունքը, իսկ միապետինը՝ սահմանափակում: Ավելին, «Հյուսիսային ընկերություն» քաղաքական գլխավոր փաստաթուղթը՝ «Սահմանադրությունը» պահանջում էր անհապաղ վերացնել ճորտատիրական իրավունքը, որով էլ այն սկզբունքորեն տարբերվում էր Նովոսիլցև-Վյազենսկու նախագծից: Կենտրոնական դաշնային պետության երկպալատային օրենսդիր գերագույն մարմինը կոչվելու էր ժողովրդական վեչե:

«Հարավային ընկերության» ծրագրային իրավաքաղաքական փաստաթուղթը՝ «Ռուսկայա պրավդան» կազմեց դեկաբրիստական շարժման ամենամանաչված ու ամենահեղինակավոր գործիչ գնդապետ Պավել Իվանովիչ Պեստելը: Նա Բորոգինոյի ճակատամարտում ցուցաբերած քաջության համար պարգևատրվեց ոսկե սրով: Պեստելը մասնակցել է ռուսական բանակի արտասահմանյան արշավանքին՝ աչքի է ընկել Դրեզդենի ու Լայպցիգի «ժողովուրդների ճակատամարտում»: Թեև Պեստելին չհաջողվեց ավարտին հասցնել «Ռուսկայա պրավդան», այսուհանդերձ, այն հնարավորություն է ընձեռում հստակ գաղափար կազմելու ոչ միայն նրա հեղինակի, այլև ողջ ընկերության ռազմավարության ու մարտավարության մասին: Պեստելին ճանաչում էր ռուս մեծ բանաստեղծ Ալեքսանդր Սերգեևիչ Պուշկինը, գրելով, թե նա «հիանալի խելքի ու կրթության տեր մարդ էր, որի սրտում բուն էին դրել հայրենասիրության ամեն տեսակի ջերմ ու վեհ զգացումներ»: Պեստելը համոզված հանրապետական էր, ուստի և օրինաչափ է, որ «Ռուսկայա պրավդան» Ռուսաստանը հռչակում էր հանրապետություն: «Հարավային ընկերությունը» դարգացնելով «Բարօրության միություն» 1820 թ. որոշումը, դրանով իսկ ռուսական հասարակական-քաղաքական ու հեղափոխական շարժման մեջ զգալիորեն ամրազրեց հանրապետական համակարգ հաստատելու անհրաժեշտությունը: «Ես,- ասում էր Պեստելը,- հոգով դարձել եմ հանրապետական, և Ռուսաստանի համար ... չեմ տեսել ավելի մեծ բարօրություն և երջանկություն, ինչպես հանրապետական կառավարման մեջ»: Պետական կառավարման հիմքում ընկած էր իշխանությունների տարանջատման սկզբունքը, որը կիրառվում էր Եվրոպայի դարգացած ու քաղաքացիական հասարակություն ստեղծելու ուղին ընտրած երկրներում: Ըստ «Ռուսկայա պրավդայի», պետական իշխանության բարձրագույն մարմինը պետք է դառնար մեկ պալատից բաղկացած ժողովրդական վեչեն, որն ընտրվելու

էր ամբողջ ժողովրդի կողմից բոլոր քաղաքացիների համար սահմանված ուղղակի և հավասար ընտրական իրավունքի հիման վրա՝ առանց գույքային ցենզի ու որևէ սահմանափակման: Հետևաբար 20 տարին լրացած Ռուսաստանի հպատակ բոլոր քաղաքացիները ստանալու էին քաղաքական իրավունք: Երկրի գերագույն գործադիր իշխանությունը իրականացնելու էր հինգ հոգուց կազմված Տերունական դուման, որն ընտրվելու էր հինգ տարով ժողովրդական վեչեի կողմից: Յուրաքանչյուր տարի Տերունական դումայի հինգ անդամներից մեկը (որոնք կոչվում էին դիրեկտորներ) դառնում էր երկրի նախագահ, ապա դուրս գալիս նրա կազմից: Բոլոր նախարարները և պետական գործիչները պետք է ենթարկվեին Տերունական դումային: Սահմանադրության իրականացման, պետական կարգի և օրինականության պահպանման հսկողության իրավունքը տրվում էր Գերագույն սորոքին (ժողովին), որն ընտրվելու էր ցմահ ժողովրդական վեչեում. կազմված էր լինելու 120 հոգուց: Բոլոր նախագծերը ստանում էին օրենքի ուժ միայն Գերագույն սորոքի հաստատումից հետո:

«Ռուսկայա պրավդան» նախատեսում էր ապագա հանրապետությունում իրականացնել ժողովրդավարական լայն վերափոխումներ՝ խոսքի, մամուլի ազատություն, հայտարարել օրենքի առաջ բոլոր քաղաքացիների հավասարությունը, զգալիորեն կրճատել զինվորական ծառայության ժամկետը, վերացնել զինվորական բնակավայրերը: Պեստելը պահանջում էր անմիջապես վերացնել դասայնությունը, ճորտատիրական իրավունքը, որով ընդմիջ կոչնչացվի մարդկանց տիրելու նողկալի առավելությունը: «Ռուսկայա պրավդան», պահանջելով անհապաղ վերացնել ճորտատիրական իրավունքը, միաժամանակ հանդես էր գալիս գյուղացիությունը հողով ապահովելու օգտին: Երկրում օգտագործվող ամբողջ հողային ֆոնդը բաժանվում էր երկու հավասար մասի՝ հասարակական ու մասնավոր: Հասարակական հողերը չէր կարելի վաճառել, գնել, նվիրել. դրանք տրվում էին հողօգտագործման համար: Երկրագործությամբ զբաղվելու ցանկություն հայտնած յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ուներ անհատույց ստանալ հողաբաժին: Հասարակական հողային ֆոնդը գոյանալու էր պետական ու եկեղեցապատկան հողերից: Դրա համար Պեստելը հնարավոր էր համարում մասնակիորեն բռնագրավել նաև կալվածատիրական հողերը՝ 10 հազար դեսյատին և դրանից ավելի կալվածատիրական հողերի 50 %-ը, այսինքն՝ կեսը, ենթակա էր բռնագրավման, իսկ 5 հազարից մինչև 10 հազար դեսյատին ունեցող կալվածատերերի տիրույթի 50 %-ը դրամական հատուցումից հետո մտնելու էր հասարակական հողային ֆոնդի մեջ: Հողային ֆոնդի մյուս կեսը մնում էր իբրև կալվածատիրական մասնավոր սեփականություն, որը կարելի էր վաճառել, այսինքն՝ յուրաքանչյուր անձ կարող էր հող գնել ու դառնալ հողի մասնավոր սե-

փականատեր: Պեստերն առաջարկում էր հանուն հեղափոխության հաջողության Ռուսաստանին միացնել Հեռավոր Արևելքը, Անդրկովկասը և այլ տարածքներ: Հատկանշական է, որ Ալեքսանդր Առաջինի կառավարությունը XIX դարի սկզբից արդեն սկսել էր հաջողությամբ կենսագործել Անդրկովկասը ռուսական կայսրությանը միակցելու քաղաքականությունը: Պեստերը, մերժելով պետության դաշնային կառուցվածքի սկզբունքը, Ռուսաստանը հռչակում էր անբաժանելի ու միասնական հանրապետություն մեկ պալատից կազմված պառլամենտով՝ Ժողովրդական վեչեով: Պեստերը չէր ծրագրում ճանաչել երկրի առանձին մասերի անկախությունը, բացառությամբ Լեհաստանի, որը պետք է պարտադիր դաշինքի մեջ լիներ հեղափոխական Ռուսաստանի հետ: Լեհաստանում ստեղծվել ու գործում էր Հայրենասիրական ընկերությունը: «Ռուսկայա պրավդայի» հեղինակը ազգային հարցը քննում էր մեծապետական ազգայնամոլական տեսանկյունից: Թեև Պեստերը Ռուսաստանի բոլոր ազգերին խոստանում էր հավասար իրավունքներից օգտվելու հնարավորություն, այնուհանդերձ, նրանք կորցնելու էին իրենց ազգային առանձնահատկությունները և բոլորն էլ կոչվելու էին ռուսներ: Փաստորեն «Ռուսկայա պրավդան» իրրև հեռահար խնդիր դնում էր նրանց միաձուլման հիմնահարցը: Այստեղ էլ լեհերը բացառություն էին կազմելու, քանզի նրանք պահպանելու էին իրենց ինքնությունը, ստանալու էին պետական անկախություն: «Հարավային ընկերությունը» ծրագրում էր պետական հեղաշրջումն իրագործել բանակի միջոցով և հաջողության դեպքում տապալվելու էր Ռոմանովների արքայատունը, ստեղծվելու էր ժամանակավոր կառավարություն՝ ղիկատատորական իրավասություններով, որը 10-12 տարիների ընթացքում նախապատրաստելու էր անցումը հանրապետական համակարգին:

Դեկաբրիստները հնարավոր էին համարում հենվել միայն ու միայն բանակի և ընկերության անդամների վրա: Նրանց մտքով անգամ չէր անցնում հեղաշրջման մեջ մասնակից դարձնել ժողովրդին: Նրանք համոզված էին, որ բանակը պատրաստ է հեղաշրջման և կապալտպանի իրենց գինված և լույթը, որը, ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, շատ հեռու էր իրատեսությունից: Թեև «Հյուսիսային» ու «Հարավային» ընկերությունների ծրագրային փաստաթղթերում ակնհայտ էին լուրջ տարաձայնություններ, այնուամենայնիվ, երկու կազմակերպություններն իրենց համարում էին միասնական ամբողջություն, ընդհանուր միություն և, Պեստերի կարծիքով, ունեն հաստատ մտադրություն «գործել ոչ այլ կերպ, քան համատեղ»: Եվ դա միանգամայն օրինաչափ էր, քանզի լուրջ տարակարծություններով հանդերձ դեկաբրիստական երկու միություններին միավորում էր մի ընդհանուր գլխավոր նպատակ՝ վերացնել ճորտա-

տիրական իրավունքը և տապալել բացարձակ միապետությունը: Նրանք ծրագրել էին պետական հեղաշրջում կատարել 1826 թ. ամռանը զորախաղերի ժամանակ: Նրանց օգնելու էին լեհական Հայրենասիրական ընկերությունը և Սլավոնների միացյալ ընկերությունը, որը միավորվեց Հարավային միության հետ: Դեկաբրիստների շրջանում ավելի ու ավելի էր ուժեղանում կայսրին սպանելու որոշումը և գաղափարը: Դեկաբրիստ Յակուբովիչը պարտավորվեց իրագործել թագավորասպանությունը, մանավանդ որ չնայած գաղտնիությանը կայսերական կառավարություններ բավարար տեղեկություններ նրանց գործունեության մասին: Ավելին, 1822 թ. ընդունվեց հատուկ հրաման՝ բոլոր գաղտնի ընկերությունները և մասոնական օթյակներն արգելելու մասին, իսկ 1823 թ. սկսվեց նրանց հալածանքը և հետապնդումը: 1825 թ. ամռան-աշնան ամիսներին, երբ դեկաբրիստները նախապատրաստվում էին հեղաշրջման, Ալեքսանդր Առաջինն իմացավ ոչ միայն բանակում գաղտնի սպայական կազմակերպությունների գոյության մասին, այլև խոտվությունը նախապատրաստող ղեկավարների անունները: Հատկանշական է, որ շատ ոուս սպաներ արտասահմանում եղած ժամանակ ընդգրկվել էին մասոնական կազմակերպությունների մեջ, որոնց թիվը մեծ էր նաև Ռուսաստանում: XIX դարի 20-ական թվականներին գրեթե 250 մասոնական օթյակներում միավորվել էին ավել քան երեք հազար ազնվականներ, չինովնիկներ, վաճառականներ: Այս ամենը հարկադրում էր դեկաբրիստներին արագացնել հեղաշրջումը, մանավանդ որ Ալեքսանդր Առաջինը 1825 թ. նոյեմբերին ճանապարհորդության ժամանակ հանկարծամահ եղավ Տագանրոգում՝ 47 տարեկան հասակում: Կայսրը զավակներ չունեցրեց և ավագության սկզբունքով ու համաձայն գահակիր էր դառնալու նրա եղբայրը՝ Կոնստանտինը:

Ալեքսանդր Առաջինի մահից շատ առաջ Կոնստանտինը, ցնցված հոր՝ Պավելի սպանությունից, երզվեց գահ չբարձրանալ, իսկ լեհ ազնվականուհի, բայց «թագավորական արյուն չունեցող» Լեվիչի հետ ամուսնանալուց հետո փակեց գահ բարձրանալու հնարավորության բոլոր ճանապարհները: Դրանից հետո Ալեքսանդրը գահը ժառանգեց իր մյուս եղբորը՝ Նիկոլային, որի համար հրապարակվեց հատուկ հրովարտակ: Սակայն Կոնստանտինի հրաժարականի ու Նիկոլայի թագաժառանգ նշանակելու հրովարտակի մասին գիտեին ընդամենը 3-4 մարդ: Այդ կարևորագույն փաստաթուղթը հույժ գաղտնի պահվում էր Մոսկվայի Ուսպենսկու տաճարում: Քանի որ այս փաստաթուղթը պաշտոնապես չէր հրապարակվել, ապա Պետերբուրգում 1825 թ. նոյեմբերի 27-ին կայսրի մահվան լուրը ստանալուց հետո սկզբում մայրաքաղաքը, այնուհետև ողջ երկիրը սկսեցին երզվել կայսր Կոնստանտինին՝ Լեհաստանի փաստացի փոխարքային և զորքերի հրամանատարին: Տեղեկանալով եղբոր մահվան մասին՝ Կոնս-

տանտինը փակվեց իր առանձնասենյակում և Նիկոլային հղած նամակներում հաստատեց գահից հրաժարվելու իր որոշումը, սակայն լիովին չփստահելով եղբորը, հրաժարվում էր վերադառնալ Պետերբուրգ և այդ մասին հայտարարել հրապարակափ: Կոնստանտինն իրեն ավելի անվտանգ էր զգում Վարչավայում: Նիկոլայ Պավլովիչը, իմանալով գահից հրաժարվելու եղբոր որոշման մասին, դեռևս Ալեքսանդրի կենդանության օրոք իր մերձավորների շրջանում հայտնեց գահի նկատմամբ ունեցած իրավունքների մասին: Սակայն դրա դեմ հանդես եկան Պետերբուրգի գեներալ-նահանգապետ, Հայրենական պատերազմի հերոս Միխայիլ Միլոբորովիչը և Պետական խորհրդի անդամ ծովակալ Ն. Մորզվինովը, որոնք նրան հիշեցրին գահաժառանգության օրենքի գոյության, այն խստագույնս պահպանելու մասին: Գվարդիան չէր համակրում Նիկոլային, հետևաբար նրան երզվելու պաշտոնական արարողությունը հաղիվ թե անցներ հարթ և խաղաղ: Սպաները նրա մասին ասում էին՝ «Դաժան է, քինախնդիր, ժլատ»: Նիկոլայը, հանդիպելով դիմադրության, նահանջեց և կայսրի մահից հետո, մյուսների նման երզվեց Կոնստանտինին: Հետևաբար Նիկոլայը կարող էր հավակնել գահին, եթե ընդունվեր հատուկ հրովարտակ Կոնստանտինի՝ գահից հրաժարվելու մասին, այլ կերպ ասած, մասնավոր նամակագրությունը, որտեղ նշվում է հրաժարվելու մասին, չէր կարող ունենալ օրենքի ուժ: Քանի որ Ալեքսանդրի հատուկ հրովարտակի մասին գիտեին ընդամենը մի քանի մարդ, ապա միանգամայն օրինաչափ էր, որ Սենատը, զորքը երզում տվեցին Կոնստանտինին, նույնիսկ դրամ կտրվեց նրա պատկերով: Բայց երբ Կոնստանտինը հրապարակափ հրաժարվեց գահից, անհրաժեշտ եղավ կազմակերպել վերաերդում հօգուտ մյուս եղբոր՝ Նիկոլայի: Դա անխուսափելի անհրաժեշտություն դարձավ Նիկոլայի գահակալումը օրինականացնելու համար: Երկրում ստեղծվեց միջթագավորության շրջան և դինաստիական ճգնաժամը հաղթահարելու համար պահանջվեց շուրջ երկու շաբաթ: Կայսրությունում ստեղծված քաղաքական յուրատեսակ բարդ իրադրությունից փորձեցին օգտվել «Հյուսիսային ընկերության» ղեկավարները: Նրանք պատրաստ էին դոհարերել ամեն ինչ հանուն ռուսական պետական-քաղաքական համակարգի արմատական վերափոխման: 1825 թ. դեկտեմբերի 13-ին բանաստեղծ Կոնդրատի Ռիլենի ընկալմանում տեղի ունեցած վերջին խորհրդակցությունում որոշվեց Նիկոլայի երզման արարողությունը ձախողելու նպատակով լուրեր տարածել, թե իբր մահացած կայսրի թողած հրովարտակի նախագծով կրճատվելու է զինվորական ծառայության ժամկետը, գյուղացիները ազատագրվելու են ճորտությունից, թե իբր Կոնստանտինը համաձայն է իրագործել այդ նախագիծը, իսկ Նիկոլայը՝ ոչ: Միաժամանակ որոշվեց Սենատի հրապարակ բերել իրենց հավատարիմ գորագնդերը և

թեկուզ զենքի ուժով պարտադրել Սենատին երզում չտալ Նիկոլային, ընդունել ռուս ժողովրդին ուղղված հռչակագիրը, հրավիրել «Մեծ ժողով», որը կորոչեր Ռուսաստանի պետական-քաղաքական համակարգը: Տրուբեցկոյին հանձնարարվեց «Հռչակագիր ռուս ժողովրդին» փաստաթուղթը հանձնել Սենատին՝ վերջինիս անունից հրապարակելու համար: Մինչև Մեծ ժողովի գումարումը իշխանությունն անցնելու էր ժամանակավոր կառավարությունը: Նախատեսվում էր նրա կազմի մեջ ընդգրկել առավել արժանի, հայտնի, ճանաչված, հարգանք ու վստահություն վայելող մարդկանց՝ Մ. Մ. Սպերանսկուն, ծովակալ Ն. Ս. Մորզվինովին, սենատոր Ի. Մ. Մուրավյով-Ապոստոլին, որի երեք զավակները «Հարավային ընկերության» անդամներ էին, Մոսկվայի արքեպիսկոպոս Ֆիլարետին: Նրանք ակնկալում էին ստանալ Կովկասի առանձին կորպուսի հրամանատար գեներալ Ա. Պ. Երմոլովի աջակցությունը: Հատկանշական է, որ Սպերանսկին և Մորզվինովը որևէ պատկերացում չուներին ղեկաբրիստների ծրագրերի մասին: Սակայն զինված ելույթի նախօրեին իրադրությունը կտրուկ փոխվեց: Նիկոլայը կարողացավ խոստումների, սպառնալիքների, ճնշումների միջոցով իր շուրջը համախմբել բարձրաստիճան պաշտոնյաներին, գեներալներին, իսկ դեկտեմբերի 14-ին նրան երզում տվեցին Պետական խորհուրդը և Սենատը: Միաժամանակ «Հյուսիսային ընկերության» ղեկավարությունը ցուցաբերեց դանդաղկոտություն, իսկ առանձին գործիչներ ուղղակի հայտարարեցին, թե չեն հավատում հեղաշրջման հաջող ավարտին, ուստի և չեն ցանկանում քառատվել: Կախովսկին դրժեց անհրաժեշտության դեպքում թագավորին սպանելու մասին Ռիլենին տված խոստումը. Յակուբովիչը՝ Չմեռային պալատը գրավելու հանձնարարությունը: Մինչդեռ ավելի արմատական գործիչները և վճռականորեն տրամադրված սպաները ավելի պատվավոր էին համարում կալանավորվել Սենատի հրապարակում, քան իրենց անկողիններում: Ավելին, նրանք նախատեսում էին կալանավորել և Պետրոպոլիսյան բանտ նետել կայսերական ընտանիքի անդամներին: Ընդ որում, չէր բացառվում և Նիկոլայի սպանությունը: Ժողովրդի և զինվորների ճնշող մեծամասնության համար անսպասելի ու անհասկանալի վերաերդման օրը՝ դեկտեմբերի 14-ին, առավոտյան մոտ ժամը 11-ին Միխայիլ և Ալեքսանդր Բեստուժե եղբայրները և Դմիտրի Շչեպին-Ռոստովսկին Սենատի հրապարակ բերեցին Մոսկվայի լեյք-զվարդիական գունդը, ժամը 13-ին նրանց միացան գվարդիական ծովային անձնակազմի նավաստիները Նիկոլայ Բեստուժեի ղեկավարությամբ ու լեյք-զվարդիական զրենադերյան գունդը: Սենատի հրապարակում էին մոտ երեք հազար զինվոր ու 30 սպա: Զինվորները, ըստ էության չէին պատկերացնում զինված ելույթի իսկական նպատակները: Նրանց պարզապես ասել էին, որ Նիկոլայը ցանկանում է զավթել գահը օրինական

ժառանգորդ Կոնստանտինից: Հետևաբար, ստացվում էր, որ զինվորները Սենատի հրապարակում փաստորեն պայքարելու էին ոչ թե ճորտատիրական իրավունքի վերացման, այլ գահաժառանգության օրենքի օրինակա-նություն պահպանման համար: Սենատի հրապարակում միմյանց դեմ առ դեմ դիմակայող ուժերը խիստ անհավասար էին, որովհետև բանակը, ընդհանուր առմամբ, երդում տվեց Նիկոլային: Այնուամենայնիվ, դեկաբրիստների բարոյական առավելությունը անվիճելի էր ու կասկածից վեր: Նրանց ուժը ինքնակալությունը բացահայտորեն ու խիզախորեն նետած մարտահրավերի, ազատություն և քաղաքական իրավունքներ ստանալու պահանջների մեջ էր: Նրանց պայքարի մասին տեղեկացավ ողջ մայրաքաղաքը, համայն Ռուսաստանը և Եվրոպան: Այս բոլորով հանդերձ շուտով «Հյուսիսային ընկերության» ղեկավարությունը հայտնի դարձավ, որ Սենատը վաղ առավոտյան արդեն երդում է տվել նոր կայսրին, և անհնար է հրապարակել «Հրովարտակ ուս ժողովրդին» փաստաթուղթը: Իմանալով այդ մասին՝ դիկտատոր նշանակված իշխան Տրուբեցկոյը չմիացավ ապստամբներին և վերջիններս մի որոշ ժամանակ մնացին առանց ղեկավարի, որը նրանց շրջանում տատանումներ առաջացրեց: Միայն երեկոյան ընտրվեց նոր ղեկավար՝ իշխան Օրոլենսկին: Նիկոլայը դեռ հաստատապես փստահ չլինելով իր ուժերի գերազանցություն մեջ և ցանկանալով խուսափել արյունահեղությունից, մի քանի անգամ փորձեց համոզել ապստամբներին հրաժարվել իրենց մտադրությունից և երդվել նոր կայսրին: Նա ապստամբների մոտ բանակցությունների ուղարկեց գեներալներին, միտրոպոլիտին, իր կրտսեր եղբայր Միխայիլին: Բայց այդ փորձերը հաջողություն չունեցան: Ապստամբների համար Նիկոլայի հանձնակատարներից առանձնապես վտանգավոր էր Պետերբուրգի գեներալ-նահանգապետ, 1812 թ. Հայրենական պատերազմի հերոս Մ. Ա. Միլորադովիչը, որը զինվորների շրջանում վայելում էր մեծ հեղինակություն: Նա ձիով մոտեցավ նրանց շարքերին, սակայն ապստամբ սպաները կտրակա-նապես հրաժարվեցին Նիկոլայի ներկայացուցչի հետ բանակցություններ սկսել: Ավելին, Օրոլենսկին սփինահարեց գեներալ-նահանգապետին, իսկ Կախովսկին ատրճանակից արձակած գնդակով նրան մահացու վիրավորեց: Հատկանշական է, որ Նիկոլային հավատարմության երդում տված զինվորները նույնպես համակրում էին ղեկաբրիստ ապստամբ զինվորներին: Նրանց համակրում էին Սենատի հրապարակում գտնվող հրետանա-վորները: «Ձերդ գերազանցություն,- ասաց գեներալ Կ. Ֆ. Տոլը,- հրամայեք հրանոթով մաքրել հրապարակը կամ հրաժարվեք գահից»: Նիկոլայը կարգադրեց գործի դնել հրանոթները: Երբ կրակելու հրաման տրվեց, համազարկեր և կրակոցներ չսկսվեցին: «Մերոնք են, Ձերդ պայծառափայլու-թյուն,- ասաց զինվորներից մեկը շտաբս-կապիտանին,- չէ՞ որ դրանք

ուսներ են, մերոնք են»: Բայց սպան խլեց զինվորի ձեռքից կրակիչը և անձամբ կատարեց առաջին կրակոցը: Ապստամբների ամենախիտ կետին ուղղված հրետանային համազարկերը սասանեցին նրանց շարքերը: Մ. Ա. Բեստուժևը փորձեց նահանջող զինվորներին շարել Նևայի սառույցների վրա՝ Պետրոպոլիսյան ամրոցը գրավելու համար, բայց այդ նրան չհաջողվեց: Հրետանային ռմբակոծությունից ջարդվում էր սառույցը, զինվորներն ընկնում էին Նևայի սառցաջրերը և խեղդվում: Գիշերը ապստամբությունը ճնշվեց, իսկ կենդանի մնացածներին անհապաղ ձերբակալեցին: Պետերբուրգում ապստամբության պարտությունից հետո, 1825 թ. դեկտեմբերի վերջին Ուկրաինայում Վասիլկով քաղաքի շրջակայքում՝ Կիևից 30 կմ հեռու, ապստամբեց Չեռնիգոլյան հետևակային գունդը: Պետսկը ղեկտեմբերի 14-ի իրադարձությունների նախօրյակին ձերբակալվեց: Բանտարկվեց նաև «Հարավային ընկերության» մեկ ուրիշ ղեկավար՝ Սերգեյ Մուրավյով-Ապոստոլը: Բայց «Սլավոնների միացյալ ընկերության» երիտասարդ սպաներին հաջողվեց ազատել նրան և իր ընկերներին: Հենց փոխզնդապետ Ս. Մուրավյով-Ապոստոլը և Միխայիլ Բեստուժև-Ռյումինը զլխավորեցին Չեռնիգոլյան գնդի ապստամբությունը: Այն սկսվեց դեկտեմբերի 29-ին և ճնշվեց 1826 թ. Հունվարի 3-ին: Ս. Մուրավյով-Ապոստոլը վիրավորվեց, կորցրեց գիտակցությունը, ուշքի եկավ արդեն ձերբակալված: Կայսերական կառավարությունը խստագույնս պատժեց ապստամբության ղեկավարներին ու մասնակիցներին: Դատաքննչական հանձնա-ժողովին հանձնվեց 579 մարդ, որոնց 80 %-ը՝ զինվորականներ: Նրանց հարցաքննություններին մասնակցում էր անձամբ կայսրը: Դատաքննչա-կան հանձնաժողովը Պետերբուրգում, Բելայա Ցերկովում, Մոզիրում, Վարչավայում և այլ քաղաքներում աշխատեց շուրջ կես տարի: Հանձնաժողովը 1825 թ. դեկտեմբերի 17-ից մինչև 1826 թ. Հունիսի 17-ը ունեցավ 147 նիստ և դեկաբրիստներին մեղադրեց չարագործության, թագա-վորասպանության մեջ: Իսկ ապստամբության ղեկավարների ղզալի մասը հերքում էր այդ մեղադրանքները՝ դրպարտություն համարելով դրանք: Նրանք չէին թաքցնում իրենց հետապնդած քաղաքական նպատակները, նույնիսկ կայսրին համարձակորեն ասում էին, թե իրենք իսկապես ցանկացել են սպանել նրան՝ հանուն Ռուսաստանի բարօրության ու հանրապետական համակարգի հաստատման: Մասնավորապես այդպիսին էին Յակուչկինի, Կախովսկու պատասխանները: Նրանք ապացուցում էին, որ իրենք այդ ամենը ձեռնարկել են Հայրենասիրությունից, արդարության սկզբունքներից ու մտահոգումներից ղղղված: Պետսկը Ռուսաստանի համար ինքնակալության տապալումը և հանրապետության հռչակումը համարում էր «մեծագույն բարօրություն և երանություն»: Բանտից ծնողներին գրած նամակում նա նշել է. ... «Ես ջերմորեն սիրել եմ Հայրենիքս և

պատանեկան խանդավառութեամբ ցանկացել եմ նրա երջանկութեանը»:

Մեղադրվողներից դատի տրվեց 121 մարդ: Պ. Ի. Պետելը, Ա. Ի. Մուրավյով-Ապոստոլը, Մ. Պ. Բեստուժև-Ռյումինը, Կ. Ֆ. Ռիլենը և Պ. Գ. Կախովսկին դատապարտվեցին տանջալի մահապատժի՝ քառատման, 31 մարդ դատապարտվեց զխատման, մյուսները դատապարտվեցին տաժանակիր աշխատանքի և աքսորի՝ Սիբիր: Խոսվարար զինվորներից և աստիճանագրված սպաներից ձևավորվեց լեյբ-գվարդիական Հավաքական գունդ և ուղարկվեց Կովկաս, որտեղ շուտով սկսվեց ռուս-պարսկական երկրորդ պատերազմը: 1826 թ. Հուլիսի 10-ին կայսրը մասնակի փոփոխություններով Հաստատեց դատավճիռը: Նիկոլայ Առաջինը չհամարձակվեց աշխարհը զարմացնել այդպիսի միջնադարյան մահապատժով և, Եվրոպայի ու Ռուսաստանի Հասարակական կարծիքից երկուդ կրելով, քառատման դատավճիռը փոխարինեց կախաղանով, իսկ 31 ղեկաբրիստների զլախատումը՝ ցմահ տաժանակրությունը: 1826 թ. Հուլիսի 13-ին հինգ ղեկաբրիստներ կախաղան բարձրացվեցին Պետրոպոլյան ամրոցում: Դեկաբրիստական շարժման 65 մասնակիցներ, որոնք մեղադրվեցին պետական հանցագործության մեջ և դիտվեցին իբրև թագավորասպաններ, Բորոդինոյի դաշտում խիզախորեն մարտնչել էին թշնամու դեմ: Հատկանշական է, որ մինչև Նիկոլայ Առաջինի մահը ղեկաբրիստներից և ոչ մեկը ներում չստացավ: Արտաքսված ղեկաբրիստ, «Հարավային ընկերության» անդամ գեներալ-լեյտենանտ Ս. Գ. Վոլկոնսկու կինը՝ իշխանուհի Մարիա Նիկոլաևնա Վոլկոնսկայան գնաց իր ամուսնու աքսորավայրը՝ Սիբիր: Իշխանուհի Եկատերինա Իվանովնա Տրուբեցկայան ղեկաբրիստների կանանցից առաջինն ուղևորվեց Սիբիր՝ ամուսնու՝ գնդապետ Ս. Պ. Տրուբեցկոյի մոտ: Ալեքսանդրա Գրիգորևնա Մուրավյովան մեկնեց Սիբիր՝ ամուսնու՝ ղեկաբրիստ գնդապետ, «Հյուսիսային ընկերության» ղեկավար Ն. Մ. Մուրավյովի աքսորավայրը:

Դեկաբրիստական շարժումը, զինված հեղաշրջման փորձը, նրանց նկատմամբ Նիկոլայ Առաջինի պատժամիջոցները մեկ անգամ ևս ցույց տվեցին, որ Հասարակության մեջ առկա խոր հակասությունները գերազանցապես պայմանավորված են ոչ միայն ճորտատիրական համակարգի գոյության, այլև դրա վերացման անհրաժեշտության ու անխուսափելիության հետ: Այս առումով մեծ է ղեկաբրիստական շարժման ազդեցությունը Ռուսաստանի Հասարակական-քաղաքական մտքի զարգացման վրա: Եվ դա միանգամայն օրինաչափ է, քանզի ղեկաբրիստները մշակեցին ինքնակալության և ճորտատիրական իրավունքի դեմ պայքարի ժամանակի համար ամենաառաջավոր ծրագիրը, որն արտահայտում էր երկրի ամենակենսական պահանջները: Նկատելի էր նրանց դերը նաև ռուսական պատմագիտության զարգացման գործում: Իսկ Կովկաս աքսորված և ռուս-պարսկական պատերազմին մասնակցած ղեկաբրիստները կապեր

Հաստատեցին այնտեղ գործող Հայ գեներալներ Մադաթովի, Բեհրովի, գնդապետ Լազարևի, Ներսիսյան դպրոցի տեսուչ, բանաստեղծ Հարություն Ալամդարյանի, Հայ ազգային-ազատագրական պայքարի ամենակարկառուն ներկայացուցիչ Ներսես Աշտարակեցու հետ:

Դեկաբրիստների ազդեցության ներքո 19-րդ դարի 20-30-ական թթ. ստեղծվեցին մի շարք խմբակներ, որոնց նպատակն էր նույնպես պայքարել ճորտատիրական համակարգի և բացարձակ միապետության դեմ: Մասնավորապես իրենց առջև այդպիսի խնդիրներ էին դրել «Կրիտսկի եղբայրների խմբակի» անդամները: Նրա հիմնադիրներն էին Վասիլի, Միխայիլ, Պյոտր Կրիտսկի եղբայրները: Հիմնականում ռուսանոցներից կազմված խմբակը պահանջում էր՝ սահմանադրական կարգերի հաստատում, զինվորական ծառայության ժամկետի կրճատում: Դեկաբրիստների օրինակով նրանք երազում էին դիմել ապստամբության միապետության դեմ ժողովրդի անմիջական մասնակցությամբ, ծավալել լայն քարոզչություն զինվորների, սպաների, ռուսանոցության, երիտասարդության շրջանում: Խմբակի գործունեությունը ոստիկանությունը բացահայտեց, իսկ ղեկավարները բանտ նետվեցին: Մոսկվայի Համալսարանում գործում էր նույնպես մեծ մասամբ ռուսանոցներից կազմված Սունգուրովի խմբակը: Նրա անդամները ևս պահանջում էին սահմանադրություն, նույնիսկ ծրագրում էին սպանել Նիկոլայ Առաջինին: Խմբակը ղեկաբրիստների, կրիտսկիների նման Հույսեր էին կապում գեներալ Ալեքսեյ Երմոլովի հետ, որը վայելում էր լայն ժողովրդայնություն: Սունգուրովի խմբակը մատնության հետևանքով բացահայտվեց և այդ առնչությամբ 26 մարդ բանտարկվեց: Կայսերական դատարանը Սունգուրովին և Գուրովին դատապարտեց քառատման, Կոստենեցկուն, Կոչևսկուն կախաղանի, իսկ Կոլլովին՝ գնդակահարության: Հետագայում դատավճիռը նկատելիորեն մեղմացվեց: Սունգուրովը ուղարկվեց տաժանակրության, Գուրովը աքսորվեց Սիբիր, իսկ մյուսները ուղարկվեցին Կովկաս՝ որպես շարքային զինվորներ:

Նիկոլայ Ստանկևիչի խմբակը իր կազմով խայտաբղետ էր՝ նրա հետ համագործակցում էր հրապարակախոս-քննադատ Վ. Բեխինսկին, խոռվարարական տեսության ապագա հիմնադիր Մ. Բակունինը, լիբերալներ Կ. Կավելինը, Մ. Կատկովը, Վ. Բոտկինը, ապագա սլավոնասերներ Կ. Աքսակովը, Ի. Կիրենսկին, Ա. Խոնյակովը, պատմաբան Ս. Ստրուբը, Տ. Գրանովսկին: Ստանկևիչի մահից հետո խմբակի անդամները Հարեցին կամ սլավոնասերներին կամ արևմտականներին:

Ռուսական Հասարակական-քաղաքական մտքի վրա որոշակի Հետք թողեց Պուչկինի և Գրիբոյեդովի բարեկամ Պյոտր Չաադակի (1794-1856) «Փիլիսոփայական նամակները»: Մագուսով ազնվական Չաադակը՝ որպես գվարդիական սպա, մասնակցեց Հայրենական պատերազմին և ուսական բանակի արտասահմանյան արշավանքին, եղել է դեկաբրիստական «Բարօրության միության» անդամ: Թեև Չաադակի Հայացքներում առկա էին սխալ, քննադատելի, անընդունելի տեսակետներ, Հեղափոխական պայքարի մերժում, ապավինում կրոնին և եկեղեցուն, այսուհանդերձ, «Փիլիսոփայական նամակներին» Հեղինակը անողոք քննադատություն է ներկայացրել նիկոլայեյան վարչաձևը: Չաադակը ջերմորեն սիրում էր իր Հայրենիքը, որը չխանգարեց կայսրին Հայտարարել նրան խելագար ու ենթարկեց տնային բանտարկության: Իսկ «Տելեսկոպ» Հանդեսի խմբագիր Նադեժդինը քարոզեց միայն Չաադակի «Փիլիսոփայական նամակները» տպագրելու համար: Նիկոլայ Առաջինը միաժամանակ նրան քաղաքական առումով համարեց Հոգեկան Հիվանդ մարդ: Սակայն նման գնահատականները տվեցին Հակառակ արդյունքը. կտրուկ բարձրացավ Չաադակի Հեղինակությունը ուսական Հասարակական-քաղաքական շրջաններում, քանզի ոչ-ոք (ներառյալ և նրան այցելող Բոլշևիկը) չէին հավատում, որ նա Հիվանդ է ու խելագար: Գերցնել իր «Եղբուկություններում և խոհերում» գրում էր, որ Չաադակի «Փիլիսոփայական նամակները» մեծ ազդեցություն ունեցան առաջավոր Ռուսաստանի վրա, որովհետև նրա նամակի հրատարակումը «մի կրակոց էր արձակված խավար գիշերվա մեջ»: Չաադակը տաղանդաշատ, բազմակողմանիորեն դարգացած բարձրակարգ կրթված անձնավորություն էր, նրա նամակները գրվել են Փրանսերեն 1829-1831 թթ. շրջանում: Չաադակը երկարատև ճանապարհորդության ժամանակ եղավ Անգլիայում, Ֆրանսիայում, Իտալիայում, Շվեյցարիայում և Գերմանիայում, ծանոթացավ ժամանակի նշանավոր փիլիսոփաների Հետ: Չաադակը, Հայացք սփռելով անցյալի վրա և ուսումնասիրելով ներկան, փորձեց հասկանալ «Ռուսաստանի ոգին», Հասարակության ուշադրությունը սևեռել Հայրենիքի ճակատագրին: Ժամանակակիցները, դրականորեն գնահատելով Հեղինակի բողոքը և սուր քննադատությունը Նիկոլայեյան վարչակազմի վերաբերյալ նրա Հարցադրումները, միաժամանակ չհամաձայնվեցին նրա բացասական գնահատականների, բացարձակ Հոռետեսության, խորհրդամոլության (միստիցիզմի) Հետ Ռուսաստանի ապագայի նկատմամբ: «Ձայն դագաղից» այսպես գնահատեց Գերցենը Չաադակի նամակը: Ռուս մեծ բանաստեղծ Ա. Ս. Պուշկինը Չաադակին գրած նամակում արտահայտեց իր վճռական անհամաձայնությունը նրա Հայացքների առնչությամբ, ընդգծեց, որ ինքը թեև Հիացած չէ այն ամենով, ինչ տեսնում է իր շուրջը, բայց միաժամանակ երզվում է պատվով, որ

ինքը ոչ մի դեպքում չէր ցանկանա փոխել իր Հայրենիքը կամ ունենալ ուրիշ պատմություն, բացի մեր նախնիների պատմությունից, նրանից, որ մեզ տվել է Աստված: Իսկ Պ. Ա. Վյազեմսկին մատնանշում էր, որ չի կարելի խառնել ու շփոթել պաշտոնական իշխանություն ու ժողովուրդ Հասկացությունները: Ի պատիվ Չաադակի նա ընդունեց իր դատողությունների միակողմանիությունը և անարդարացիությունը՝ Ռուսաստանի ապագա չունենալու վերաբերյալ, վերանայեց սխալ գնահատականները, նչեց, որ իր Հայրենիքը կոչված է իր խոսքը ասելու աշխարհին: Հայրենիքի իսկական ու հավատարիմ զավակների համար պետք է Հոգեհարազատ լինեն Չաադակի իմաստուն խոսքերը: «Ես չսովորեցի սիրել սեփական Հայրենիքը փակ աչքերով, գլխահակ, փակ շուրթերով: Ես գտնում եմ, որ մարդը կարող է օգտակար լինել իր երկրին, միայն այն դեպքում, եթե նրան լավ է հասկանում»: Հիրավի անանց խորիմաստ մտքեր բոլոր ժամանակների համար: Հատկանշական է, որ Չաադակի «Փիլիսոփայական նամակներից» առաջ 1826 թ. սեպտեմբերին Նիկոլայ Առաջինը տեղեկացավ, որ տարածվել է Մոսկվայի համալսարանի ուսանող Ա. Ի. Պուլեժակի «Սաչկա» հակաճորտատիրական պոեմը: Կայսրը անձամբ Հարցաքննեց պոեմի Հեղինակին և կարգադրեց նրան ուղարկել բանակ՝ որպես շարքային զինվոր և պահել խստագույն Հսկողության ներքո: Կայսրը «Սաչկա» պոեմի բովանդակության մեջ տեսավ դեկաբրիստների Հակաճորտատիրական գաղափարների դրսևորում:

§ 2. «ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՅՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ»

Ռուսաստանի նոր կայսր Նիկոլայ Առաջինի ներքին ու արտաքին քաղաքականությունը գերազանցապես ուղղված էր Հեղափոխական, Հակաճորտատիրական ուսմունքները և հանրապետական գաղափարները հասարակությունից գերծ պահելու, իսկ հնարավորության դեպքում լիովին վերացնելու նպատակին, որին կարելի էր հասնել ոչ միայն ուժ ու բռնություն գործադրելու, այլ Հակընդդեմ գաղափարախոսություն ու տեսություն ստեղծելու միջոցով: Ինքնակալական-ճորտատիրական համակարգի ջատագույնները նպատակադրվելով թերազնահատել, առավել ևս խեղաթյուրել դեկաբրիստների քաղաքական ծրագրերը և շարժման հետապնդած իսկական նպատակները և Հենվելով Նիկոլայ Առաջինի 1825 թ. դեկտեմբերի 14-ի Հրովարտակի վրա, ընդգծում էին, որ կայսերական Ռուսաստանում չկար և չէր կարող լինել քաղաքական պարարտ հող նման չարագործ ուսմունքի ձևավորման համար: Նրանց գնահատմամբ՝ խոսվարարների

գաղափարները, ներմուծված լինելով դրսից՝ Եվրոպայից, խորթ էին ուսական իրականությունը, ուստի և դավադիրները չստանալով ուսուցողական աջակցությունը օրինաչափորեն և անխուսափելիորեն դատապարտված էին պարտություն:

Այն ներկայացվեց իբրև մի խումբ սպանների կողմից կազմակերպված նեղ դավադրություն, թագավորասպան, Հայրենիքի դեմ ուղղված դավաճանական շարժում: Հետևաբար, արդարացվում էին Նիկոլայ Առաջինի ձեռնարկած վճռական գործողությունները զինված ելույթը ճնշելու և ինքնակալության անսասանությունը ապահովելու համար, որը միաժամանակ պահանջում էր գաղափարապես հիմնավորել այդ հաղթանակը: Մասնավորապես գաղափարաքաղաքական նման տեսանկյունից ու պատմագիտական Հայեցակարգից է ներկայացված XIX դ. 40-ական թթ. հրատարակված բարոն Մ. Կորֆի «Նիկոլայ Առաջին կայսրի գահակալումը» գիրքը: Պաշտոնական պատմագիր Կարամզինը նույնպես արդարացրեց դեկարրիստներին՝ նկատմամբ կայսրի կենսագործած պատժամիջոցները, քանզի այդ շարժումը «մեր անմիտ ազատամիտների անհեթեթ ողբերգություն» էր Ռուսաստանի պատմության մեջ: Իսկ ուսուցանավոր պատմաբան Վասիլի Կյուչևսկին զինված ելույթը գնահատեց իբրև պատմական պատահականություն, այսինքն՝ չնդում պատմական օրինաչափ զարգացման ընթացքից: Այս ամենն անհրաժեշտ էր ամբողջացնել, ի մի բերել ու ստեղծել կուռ և համոզիչ տեսություն, որը գաղափարապես հիմնավորեր միապետության անսասանությունը և անխուսափելիությունը Ռուսաստանում: Ռուսաստանի լուսավորության նախարար կոմս Սերգեյ Սեմյոնովիչ Ուվարովի կողմից մշակված տեսությունը դարձավ պետական-կայսերական գաղափարախոսություն, որը պետք է դաստիարակեր երկրի հպատակներին՝ քաղաքացիներին իշխանությանը ենթարկվելու, կայսրին հավատարիմ մնալու և անբասիր ծառայելու ոգով: Ուվարովը ստացել էր փայլուն տնային կրթություն: Լիովին տիրապետում էր եվրոպական հիմնական լեզուներին: Նա սովորել էր Գերմանիայում, Վիեննայում ուսական դեսպանատանը կատարել դիվանագիտական աշխատանք, եղել էր Փարիզում ուսական դեսպանատան քարտուղար, զբաղեցրել էր Կայսերական Ակադեմիայի պրեզիդենտի բարձր պաշտոնը, նամակազրական կապեր հաստատել մեծն Գյոթեի, Եվրոպացի մյուս նշանավոր գործիչների հետ: Հատկանշական է, որ Ուվարովը նախկինում իբրև ազատամիտ գաղափարների կրող բարեկամական կապերի մեջ էր ղեկարրիստների հետ: Այսուհանդերձ, Ռուսաստանի սոցիալ-քաղաքական մտքի պատմության մեջ Ուվարովի անունը սերտորեն կապված է «Պաշտոնական ժողովրդայնության տեսության» ստեղծման հետ, որը հենվում էր «Ուղղափառություն, ինքնակալություն, ժողովրդայնություն» հայտնի բանաձևի

վրա: Հատկանշական է, որ հայտնի հասարակական գործիչ Ա. Ի. Պրայնն է XIX դ. 70-ական թթ. Ուվարովի մշակած ուսմունքին տվել «Պաշտոնական ժողովրդայնության տեսություն» անվանումը: Այս տեսությունը տասնամյակներ շարունակ դարձավ ուսական կայսրության պետական-պաշտոնական գաղափարախոսությունը: Ժողովրդական լուսավորության նախարար դառնալուց հետո Ուվարովին անհրաժեշտ էր ներկա և ապագա սերունդներին, կրթված ուսուցանող դաստիարակել ընկալելու իրենց սերտ կապը ուղղափառ քրիստոնյա հավատքի հետ և դաստիարակել ինքնակալին անսահման հավատարմության ոգով: Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է Ռուսաստանը պատնեշել Եվրոպայից թափանցող ազատական գաղափարներից: Ուվարովը լիովին համոզված էր, որ միայն բռնաճնշումներով ու պատժամիջոցներով կարելի է հասնել մասնակի հաջողության, արդյունքը լավագույն դեպքում կլինի սահմանափակ: Այս նպատակին հասնելու համար Ուվարովը առաջարկում էր մեծ տեղ հատկացնել ժողովրդական լուսավորությանը, ընդ որում, գլխավոր դերը հատկացվում էր պատմության դասավանդմանը իբրև լավագույն այլընտրանք Ռուսաստանի եվրոպականացման գործընթացին: Ռուսաստանում նախարարի կարծիքով ազգային մշակույթի ու պատմության ինքնատիպ զարգացումը կդառնա իրականություն միայն «Ուղղափառություն, ինքնակալություն, ժողովրդայնություն» կարգախոսի միջոցով, ժողովրդին, ողջ հասարակությանը այդ ոգով դաստիարակելու շնորհիվ: Առաջին, և, անկասկած, զերակայող սկզբունքը Ուվարովը համարեց ինքնակալությունը: Այն Ռուսաստանին ապահովում է փառք ու հզորություն, դրա համար էլ հավատարմությունը և անկեղծ ծառայությունը միապետին համարվում էր բոլոր հպատակների քաղաքացիական պարտքը: Ինքնակալությունը դիտարկվում էր կառավարման միակ ու լավագույն պետական-քաղաքական վարչաձևը Ռուսաստանում:

Ինքնակալությունը Ռուսաստանի պատմության մեջ միակ ստեղծագործական ուժն է, ժողովուրդը նրան է պարտական իր ամբողջ զարգացման ու բարեհաջողության համար: Ինքնակալության հզորացումը Ռուսաստանի ապագա վեհության գրավականն է, որը բաղմիցս ապացուցել է երկրի պատմությունը: Այստեղ ևս ակնհայտ է Կարամզինի գաղափարական ազդեցությունը:

Ուղղափառ եկեղեցին այն դարավոր հենարանն է, որը միշտ օգնել է պետությանը ժողովրդին պահելու հպատակության ու՝ միապետին հավատարիմ լինելու մեջ, ուստի և իշխանությունը պետք է իր հերթին ամեն կերպ աջակցի եկեղեցուն: Ուղղափառությունը սույն տեսության համաձայն մեկնաբանվում է որպես ժողովրդի հոգևոր կյանքի հիմքը: Հետևաբար, աշխարհիկ իշխանությունը ենթարկվող ուղղափառ եկեղեցին հը-

չակվում էր ինքնակալության հենարանը: Ընդգծվում էր ոռու ժողովրդի նվիրվածությունը ուղղափառ եկեղեցուն: Ժողովրդայնությունը ներքո ընկալվում էր ոռու ժողովրդի նվիրվածությունը ինքնակալությանը, մատնանշվում ժողովրդի ու միապետի միասնությունը և ներդաշնակությունը, սոցիալական թշնամանքի, պայքարի բացակայությունը, քաղաքական ցնցումների բացառումը Ռուսաստանում: Ռուս ժողովուրդը իբրև միասնական քաղաքական ամբողջություն, գոյություն ունի սոսկ այնքանով, որքանով պահպանում է իր հավատարմությունը ինքնակալությանը և միաժամանակ գտնվում է միապետի հայրական և ուղղափառ եկեղեցու հովանավորության ներքո: Եկեղեցու ցանկացած քննադատություն Ուվարովը դիտում է իբրև անչափ վտանգավոր, անցանկալի գործողություն, որովհետև ուղղված է ժողովրդի արմատական շահերի դեմ: Ըստ Ուվարովի գրականագետների, հրապարակախոսների, ուսուցիչների, դասախոսների հիմնական խնդիրն է ժողովրդին դաստիարակելու գործում ելակետ ունենալ և ղեկավարվել պաշտոնական ժողովրդայնության տեսությամբ: Այն երկար ժամանակ դարձավ ինքնակալության գաղափարախոսության անկյունաքարը: Մամուլը, դպրոցները, համալսարանները պետք է ղեկավարվեն այս տեսությամբ, որպեսզի երիտասարդ սերունդը ղառնա ինքնակալության հենարանը, կայսրի հավատարիմ հպատակը: Միապետը սիրում է իր հայրենիքը, ի դեմս ժողովրդի, կառավարում նրան, ինչպես հայրը ընտանիքում, ղեկավարվում է օրենքներով, իսկ ժողովուրդը չի տարանջատում հայրենիքը միապետից, նրա մեջ է տեսնում իր երջանկությունը, ուժը, փառքը: Եթե ռուսական կայսրությունում հաստատված միապետական-ինքնակալական-ճորտատիրական համակարգն այդքան կատարյալ է, եթե ակնհայտ է ժողովրդի և թագավորի ներդաշնակությունը, ուրեմն պետք չէ ոչինչ փոխել ու կատարելագործել: Հենց այդ ոգով էր Բենկենդորֆը մեկնաբանում Ուվարովի գաղափարները: Ռուս պատմաբաններ Պոգոդինը, Ուստրյալովը ոչ միայն արդարացրեցին այդ գաղափարախոսությունը, այլև Ռուսաստանի պատմության հիմնահարցերը քննախոսելիս ղեկավարվեցին պաշտոնական ժողովրդայնության տեսությամբ: Նիկոլայևյան դարաշրջանի նշանավոր գործիչներից մեկը՝ Լեոնտի Վասիլևիչ Դուրելտը իր նոթերում գրում է, թե աղնիվ մարդու առաջին պարտականությունն է բոլորից շատ սիրել իր հայրենիքը և լինել իր միապետի ամենահավատարիմ հպատակը: Դուրելտը նույնպես նույնացնում է հայրենիք և ինքնակալ հասկացությունները, նրա կարծիքով առանց կայսրի չէր կարող լինել Ռուսաստանը: Ինքնակալության հետ մեկտեղ Դուրելտը կարևորում էր ճորտատիրական համակարգի պահպանման անհրաժեշտությունը: «Աստված մի արասցե, - գրում էր նա, - վերացնել ճորտատիրական իրավունքը: «Գեղջուկը» սկզբում կարող է և ուրախանալ, բայց

հետո «ազատություն» մոգական խոսքից կորցնելով գլուխը, կցանկանա երջանկություն փորձել այլ տեղ, կլծափառի քաղաքներով, որտեղ կկորցնի իր բարոյականությունը և կկործանվի»: Այստեղ զգացվում է ինքնակալության ջատագով, գաղափարախոս և տեսաբան Կարամզինի ազդեցությունը: Կարամզինի «Նոթեր հին և նոր Ռուսաստանի մասին» կայսրին հղած գրության մեջ տեղ գտած գաղափարները իրենց հետագա զարգացումը գտան «ինքնակալություն, ժողովրդայնություն, ուղղափառություն» տեսության մեջ:

§ 3. ՍԼԱՎՈՆԱՍԵՐՆԵՐԸ ԵՎ ԱՐԵՎՄՏԱԿԱՆՆԵՐԸ

Սլավոնասերները և արևմտականները՝ լիբերալ-ազատական գաղափարախոսության ներկայացուցիչները, զգալիորեն հարստացրին ռուսական հասարակական-քաղաքական միտքը: Նրանք ռուսական հասարակական-քաղաքական մտքի պատմության մեջ զբաղեցրին միջանկյալ տեղ հեղափոխական ազնվականության՝ ղեկաբերիստների ու միապետության հենարան պահպանողական աղնվականության՝ «Ինքնակալություն, ժողովրդայնություն, ուղղափառություն» գաղափարախոսության ջատագովների միջև: Թե՛ սլավոնասերները և թե՛ արևմտականները ներկայացնում էին ազատական գաղափարներով զինված աղնվական մտավորականությունը, որոնց հետաքրքրում էր Ռուսաստանի անցյալը, ներկան և ապագան: Նրանք հայրենասերներ էին և իրենց առջև դրված հիմնահարցերի իրատեսական ու համակողմանի պատասխանները նույնպես փորձում էին ստանալ պատմության ուսումնասիրության միջոցով: Սլավոնասերները և արևմտականները քաղաքական ասպարեղ եկան այն ժամանակ, երբ ճորտատիրական կարգերը ապրում էին իրենց վերջին տասնամյակները, որոնց դատապարտվածության մասին ժամանակակիցներն այլևս չէին կասկածում: Հետևաբար, սլավոնասերների և արևմտականների գաղափարախոսությունը հիմնականում ձևավորվեց ճորտատիրական համակարգի խոր ճգնաժամի պայմաններում և նրա ազդեցության ներքո՝ XIX դարի 40-ական թթ.: Սլավոնասերների և արևմտականների հայացքներում առկա էին ինչպես ընդհանրություններ, այնպես էլ լուրջ տարակարծություններ, որոնց շուրջ տարիներ շարունակ ընթացող գաղափարական բանավեճերը դուրս գալով երկու հոսանքների պարագլուխների պայքարի շրջանակներից ստանում էին հասարակական հնչեղություն, գտնվում նրա ուշադրության կիզակետում: Սլավոնասերները և արևմտականները ընդդիմադիր հոսանքներ էին ռուսական հասարակական-քաղաքական մտքի պատմության մեջ, որը նրանց հայացքների կարևորագույն

դրսերումներից մեկն է ու լավագույն վկայությունը: Իսկապես, թե՛ սլավոնասերները և թե՛ արևմտականները իբրև ընդդիմություն Հանդես էին գալիս վերևից ճորտատիրական իրավունքի վերացման օգտին, պահանջում էին անցկացնել վերափոխումներ դատական, վարչական ոլորտներում, մերժում էին Նիկոլաևյան պետական-քաղաքական համակարգը, այն համարում բռնատիրական, հասկանում էին ու ընդունում խոսքի և մամուլի ազատության անհրաժեշտության կարևորությունը հասարակական-քաղաքական կյանքում: Այս բարեփոխումները ըստ էության իրենց ընդլայնում բուրժուական էին, թեև սլավոնասերները ենթակայորեն դեմ էին բուրժուական վերափոխումներին, արևմտաեվրոպական համակարգին ընդհանրապես, նրա բոլոր բացասական և խոցելի երևույթներով ու բարքերի ակնհայտ անկամամբ: Սլավոնասերները և արևմտականները Հանդես գալով բարեփոխումների օգտին հետապնդում էին հեռահար նպատակներ՝ խուսափել հեղափոխությունից, արյունահեղությունից, այլևայլ անցանկալի ու վտանգավոր սոցիալական ցնցումներից: Հատկանշական է, որ սլավոնասերներ անվանումը ծագել է պատահականորեն, որովհետև նրանց այդպես անվանեցին իրենց գաղափարա-քաղաքական ընդդիմախոսները՝ արևմտականները, բուն ու թեթ վիճաբանության ընթացքում: Իսկ սլավոնասերները, սկզբնապես հրաժարվելով այդ անունից, իրենք իրենց համարում էին ոչ թե սլավոնասերներ, այլ ռուսասերներ, դրանով իսկ ընդգծում, որ իրենց գերադանցապես հետաքրքրում է Ռուսաստանի, ռուս ժողովրդի և ոչ թե ընդհանրապես սլավոնական ժողովուրդների ճակատագիրը: Սլավոնասերները իրենց գերագույն նպատակը տեսնում էին ռուս ժողովրդի պատմական ճակատագրի յուրօրինակությունը պաշտպանելու մեջ, ընդ որում ոչ միայն Արևմուտքից, այլև Արևելքից: Սակայն սլավոնասերների մոտ միահյուսվեցին ինչպես լիբերալ-ազատական, այնպես էլ պահանջողական հայացքները և օրինաչափ է, որ հենց այդ հակասությունների պատճառով սլավոնասերների գաղափարախոսության գնահատման հիմնահարցի շուրջ գիտական վեճերը չեն մարում առ այսօր, մանավանդ որ իրենք սլավոնասերները միասնական կարծիք չունեին պատմաքաղաքական առանձին հիմնախնդիրների վերաբերյալ:

Սլավոնասերները իբրև գաղափարական ինքնուրույն ուղղություն ռուսական հասարակական-քաղաքական մտքի պատմության մեջ վերջնականապես ձևավորվեցին XIX դարի 30-ական թթ. վերջին և 40-ական թթ. սկզբներին, երբ այդ հոսանքի կրկու հիմնադիրները՝ Ալեքսեյ Նոմյակովը և Իվան Կիրենսկին հանդես եկան իրենց ու բանավիճային բովանդակություն ունեցող հոդվածներով: Նոմյակովի՝ «Հնի ու նորի մասին» ու Կիրենսկու «Պատասխան Նոմյակովին» հոդվածներում զրվեցին սլավոնասերների ուսմունքի գլխավոր հիմնաքարերը: Սլավոնասերները հաճախ

իրենց հոդվածները տպագրում էին «Մոսկվիտյանին» ամսագրում, որի խմբագիր Պոգոդինը նրանց համար հանույքով պայմաններ էր ստեղծում ու հնարավորություն ընձեռում տպագրվելու իր պարբերականում: Ի դեպ, ոչ Պոգոդինը, ոչ էլ ամսագիրը չէին կիսում արևմտականների գաղափարները, բավական է ասել, որ նրա խմբագիրը «Պաշտոնական ժողովրդայնության տեսության» համոզված պաշտպանն էր ու աչքի ընկնող ջատագովը: Սլավոնասերները բազմակողմանիորեն զարգացած, բանիմաց, փայլուն կրթություն ստացած, ռուսական իրականությունը քաջատեղյակ հասարակական քաղաքական գործիչներ էին, որոնք կարևոր ու անուրանալի ներդրում ունեցան Ռուսաստանի պատմության, ազգային մշակույթի, կենցաղի, սովորույթների, բիլինաների, հեքիաթների հավաքման, ուսումնասիրման ու հրատարակման գործում: Սլավոնասերները 1839-1845 թթ. ընթացքում ստեղծեցին իրենց խմբակը, որի ոգեչնչողին՝ Նոմյակովին, նրա համախոհներն իրավամբ անվանում էին «Սլավոնասերների Իյա Մուրոմեց»: Նա լիովին արժանի էր նման մեծ ու պատվավոր անվանը, նրա խելքը, եռանդը, բանավիճելու փայլուն կարողությունը, բացառիկ ընդունակությունը և հիշողությունը, բազմակողմանի հարուստ գիտելիքները ըստ արժանվույն ընդունում էին խմբակի անդամները: Նմբակում աչքի ընկնող դեր էին խաղում Ի. Վ. և Պ. Վ. Կիրենսկի եղբայրները, Աքսակով եղբայրները, նրանց հայրը՝ ռուս հայտնի գրող Ս. Տ. Աքսակովը, Ա. Կոչելը, Յ. Սամարինը:

Նրանք թողեցին հարուստ ժառանգություն փիլիսոփայության, գրականության, պատմության, աստվածաբանության, տնտեսության բնագավառում: Իվան և Պյոտր Կիրենսկի եղբայրները ճանաչված հեղինակություններ էին աստվածաբանության, պատմության և գրականության, Ալեքսեյ Նոմյակովը՝ աստվածաբանության ասպարեզում, Կոնստանտին Աքսակովը և Դմիտրի Վալուևը զբաղվում էին ռուսական պատմությամբ, Յուրի Սամարինը՝ սոցիալ-տնտեսական և քաղաքական, Ֆյոդր Չիժովը գրականության ու արվեստի հիմնահարցերով:

Սլավոնասերները կրկու անգամ (1848 և 1855 թթ.) փորձեցին մշակել իրենց քաղաքական ծրագրերը: Նրանք ապացուցում էին Ռուսաստանի պատմության յուրօրինակությունը, հիմնավորում, որ ռուս ժողովուրդը դարերի ընթացքում ապրել է իր հատուկ կյանքով, զարգացել հատուկ ուղիով, չունենալով որևէ սկզբունքային ընդհանրություն Արևմտյան Եվրոպայի երկրների հետ: Նրանք գունազարդում էին ռուսական գյուղացիական համայնքը, գյուղացիության նահապետականությունը, առանձնացնում ուղղափառ եկեղեցու դերը: Այս երկու հզոր հասարակական ու հոգևոր կառույցների մեջ սլավոնասերները տեսնում էին ռեալ երաշխիք խուսափելու ինչպես հեղափոխությունից, այնպես էլ ռուս ժողովրդի հա-

մար խորթ ու անհարիր, վնասակար արևմտյան բարքերից: Սլավոնասերները համոզված էին, որ ռուսական իրականության մեջ բացառվում են սոցիալական ցնցումները, դարերի ընթացքում բացառվել են տարբեր սոցիալական շերտերի միջև թշնամանքը և պայքարը:

Հեղափոխությունը Ռուսաստանում անհնարին է, որովհետև ռուս ժողովուրդը քաղաքականապես ինքնուրույն է, նրան բնորոշ է սոցիալական խաղաղությունը, անտարբերությունը քաղաքականության նկատմամբ, մերժողականությունը հեղափոխական հեղաշրջումների հանդեպ: Իսկ եթե, այնուամենայնիվ, անցյալում եղել են խռովություններ, ապա դրանք կապված են թագավորական իշխանության օրինապահության հարցի հետ՝ ժողովրդական զանգվածները ապստամբում էին «անօրինական թագավորների դեմ, պայքարում էին ինքնակոչների դեմ, կամ էլ կռվում էին լավ միապետի համար»: Սլավոնասերները մշակելով համաշխարհային պատմության մեջ Ռուսաստանի զարգացման ազգային ինքնության հայեցակարգը, մանրամասնորեն նշում էին Ռուսաստանի ու Արևմտյան Եվրոպայի հասարակական քաղաքական կյանքում առկա առանցքային տարբերությունները՝ պետության կազմավորման, դավանանքի, սեփականության, կենցաղի, բարոյական նորմերի և այլ ոլորտներում: Նրանց տեսակետով Ռուսաստանում պետությունը ձևավորվել է կամավոր, այսինքն՝ հրավիրման շնորհիվ (հավանաբար նկատի է առնվում Ռյուրիկին և նրա եղբայրներին հրավիրելու պատմական փաստը), իսկ Եվրոպայում՝ նվաճման, բռնության հետևանքով: Ռուսաստանում պետության զարգացումն ընթացել է խաղաղ, աստիճանական ուղիով, Եվրոպայում՝ թշնամանքի, հեղաշրջումների միջոցով: Ռուսաստանում մարդկանց ու դասերի միջև հարաբերությունները բնական են, ազատ և խաղաղ, Եվրոպայում՝ թշնամության, անվստահության, պայմանագրային հենքի վրա: Ռուսաստանում իրավունքը հիմնվում է սովորույթի, դատարանը՝ արդարության, իսկ Եվրոպայում՝ ձևական օրենքների վրա: Ռուսաստանում սեփականության և կենցաղի նկատմամբ վերաբերմունքը եղել է համայնական-ընտանեկան, Եվրոպայում՝ մասնավոր սեփականատիրության, անձնական հարստության կուտակման կույր մոլուցքի վրա: Այս և նման փաստարկները վկայում են, որ նրանք Ռուսաստան-Եվրոպա պատմահամեմատական զուգահեռներ անցկացնելիս, ղեկավարվեցին «թեզ-հակաթեզ» հայեցակարգով, բնականաբար նախապատվությունը և առավելությունը տալով Ռուսաստանին: Բայց նրանք, անշուշտ, սխալվում էին, քանզի բացարձակապես նույն էին Ռուսաստանի պատմության ազգային ինքնությունը և յուրօրինակությունը, մինչդեռ բոլոր առանձնահատկություններով հանդերձ, ընդհանրությունները Եվրոպայի, Ամերիկայի, Ասիայի երկրների հետ անհամեմատ ավելի շատ էին, քան տարբերությունները: Այս առումով միան-

գամայն իրավացի էին արևմտականները, որ քննադատում էին սլավոնասերներին նման տեսակետներ զարգացնելու համար: Սլավոնասերները փաստորեն ընդհանուր առմամբ, թեև հաշտվում էին ինքնակալական-միապետական համակարգի գոյության հետ, այնուամենայնիվ, քննադատում էին ու նույնիսկ մերժում նիկոլայյան բռնատիրական վարչաձևը: Հետևաբար, սլավոնասերները քննադատում էին ոչ այնքան ինքնակալությանն ընդհանրապես, որքան չէին ընդունում այդ իշխանությունը կրող միապետին՝ Նիկոլայ Առաջինին և նրա քաղաքական համակարգը: Աքսակովները անձամբ Նիկոլային անվանեցին «ֆելդֆերել», և «չարագործ անձ», որը կործանեց մի ամբողջ սերունդ, որի «լավագույն տարիներն անցան ամենահեղձուցիչ մթնոլորտում»: Նիկոլայյան քաղաքական համակարգը իր «գերմանական» բյուրոկրատիայով սլավոնասերները դիտում էին իբրև պոտրյան վերափոխումների բացասական արդյունք: Սլավոնասերները հաշտվում էին միապետության գոյության հետ, նրա պահպանումը նույնիսկ համարում անհրաժեշտություն, բայց միաժամանակ չէին բացառում ինքնակալության սահմանափակման հնարավորությունը: Սլավոնասերների քաղաքական կարգախոսն էր «իշխանության ուժը՝ թագավորին, կարծիքի ուժը՝ ժողովրդին»: Դա նշանակում էր, որ ռուս ժողովուրդը չպետք է խառնվի քաղաքականությանը, ողջ իշխանությունը պետք է հանձնի միապետին, բայց ինքնակալը, իր հերթին, պետք է կառավարի, չմիջամտելով ժողովրդի ներքին կյանքին, հաշվի նստի նրա կարծիքի հետ: Դրա համար էլ պահանջվում էր գումարել խորհրդակցական Ձեռնամուկային ժողով, որը պետք է արտահայտեր ժողովրդի կարծիքը, կատարեր թագավորի «խորհրդատուի» դեր, այստեղից էլ խոսքի, մամուլի ազատության մասին նրանց պահանջը, որը կապահովեր հասարակությանը ազատ արտահայտել իր կարծիքը: Արևմտականները սլավոնասերներին անվանում էին հետադեմ մարդիկ, հետադիմականներ, մեղադրում նրանց Ռուսաստանի հետդարձի անհրաժեշտության համար, որի հետ նրանք չէին համաձայնվում, անգամ վրդովվում էին ու մերժում: «Մի՞թե սլավոնասերները, - գրում էր Կ. Աքսակովը, - մտածում են հետ գնալ, ցանկանում են նահանջողական շարժում... Սլավոնասերները ցանկանում են ոչ թե վերադարձ հետ, այլ նորից գնալ նախկին ճանապարհով, ոչ թե նրա համար, որ այն նախկինն է, այլ այն պատճառով, որ այն իսկական է»: Ուստի ճիշտ չէ կարծել, թե սլավոնասերները կոչ էին անում վերադառնալ նախապոտրյան կարգերին: Ընդհակառակը, նրանք կոչ էին անում գնալ առաջ, բայց ոչ այն ուղիով, որն ընտրել էր Պյոտր Առաջինը, ոչ կապիտալիստական կարգերի ու սովորույթների ներդրման միջոցով: Սլավոնասերները քննադատում էին Ռուսաստանի առաջին կայսրին, քանզի նա չեղեց Ռուսաստանի պատմական զարգացումը իր իսկական

ինքնատիպ ճանապարհից: Նրանք կոչ էին անում զնալ առաջ այն ինքնատիպ ուղիով, որը ի սպառ կրացառներ Հեղափոխական ցնցումները երկրում: Մինչդեռ Պյոտր Առաջինի ընտրած ուղին, նրանց կարծիքով, պայմաններ ստեղծեց նման ցնցումների համար: Դրանից դրդված նրանք հանդես էին գալիս ճորտատիրական իրավունքի վերացման օգտին, այն համարելով սոցիալական բարդ ու դժվարին, բայց խիստ անհրաժեշտ քաղաքական կարևորագույն խնդիր: «Ստրկության շղթաներից, - ասում էին սլավոնասերները, - կոփում են խռովության դաշույնները»: Ա. Կոչելևը 1849 թ. նույնիսկ ցանկացավ ստեղծել «Բարեմիտ մարդկանց միություն» ու կազմեց «Միության» ծրագիրը, որը նախատեսում էր գյուղացիներին աստիճանաբար ազատագրել ճորտությունից: Այս ծրագիրը պաշտպանեցին բոլոր սլավոնասերները: XIX դարի 50-ական թվականների վերջին ու 60-ականների սկզբին Ա. Կոչելևը, Յ. Սամարինը, Վ. Չերկասկին ակտիվորեն մասնակցեցին գյուղացիական ռեֆորմի նախապատրաստման ու անցկացման բարդ ու դժվարին, բայց խիստ անհրաժեշտ աշխատանքներին և դրանով իսկ գործնականում նպաստեցին Ռուսաստանի սոցիալ-տնտեսական ու քաղաքական առաջընթացին:

Արևմտականությունը, նույնպես ձևավորվեց XIX դարի 30-40-ական թվականներին: Արևմտականների մոսկովյան խմբակը ձևավորվեց 1841-1842 թթ.: Ժամանակակիցների պատկերացմամբ արևմտականներ էին բոլոր նրանք, ովքեր գաղափարական բանավեճում քննադատում էին ու հակադրվում սլավոնասերներին: Հետևաբար, արևմտականությունը հասարակական-քաղաքական ու գաղափարական առումով լայն հասկացություն է, քանզի նրանց շարքերում էին ոչ միայն չափավոր հայացքներ ունեցող ազատականներ Պ. Վ. Աննենկովը, Վ. Պ. Բոտկինը, այլև Վ. Գ. Բելինսկին, Ա. Ի. Գերցենը, Ն. Պ. Օգարյովը: Ի դեպ, ապագա Հեղափոխական ժողովրդավարներ՝ Գերցենը, Բելինսկին սլավոնասերների հետ գաղափարական բանավեճերում իրենց անվանում էին «արևմտականներ»: Արևմտականները նույնպես ներկայացնում էին ազնվական մտավորականությունը՝ Մոսկովյի համալսարանի հայտնի պրոֆեսոր պատմաբաններ Տ. Ն. Գրանովսկին, Ս. Մ. Սոլովյովը, իրավագետներ Մ. Ն. Կատկովը, Կ. Գ. Կավելինը, բանասեր Ֆ. Ի. Բուսլանը, ինչպես նաև նշանավոր գրողներ Ի. Ի. Պանակը, Ի. Ս. Տուրգենևը, Ի. Ա. Գոնչարովը, մի փոքր ուչ Ն. Ա. Նեկրասովը: Արևմտականները Ռուսաստանի զարգացման ուղիների մասին գաղափարական բանավեճում հակադրվելով սլավոնասերներին ապացուցում էին, որ թեև «ուշացումով», այնուամենայնիվ, ընթանում է պատմական զարգացման այն ճանապարհով, որով անցել են արևմտաեվրոպական երկրները, հանդես էին գալիս երկիրը եվրոպականացնելու օգտին: Նրանք ջատագովում էին արևմտաեվրոպական պետական քաղաքական

համակարգը, առաջարկում Ռուսաստանում հաստատել սահմանադրական միապետություն, այսինքն՝ սահմանափակել կայսրի իրավունքները, ապահովել խոսքի, մամուլի ազատության, անձի անձեռնմխելիության և քաղաքական այլ երաշխիքներ: Նրանց հատկապես հետաքրքրում էր Անգլիայի ու Ֆրանսիայի պառլամենտական համակարգը: Նրանք որպես կանոն գերազնահատում էին, անգամ իդեալականացնում այդ երկրների պառլամենտական կառույցը: Արևմտականները նույնպես հանդես էին գալիս վերևից ճորտատիրական իրավունքի վերացման օգտին, քննադատում էին նիկոլայեյան իրականությունը, պետական-քաղաքական, ճորտատիրական ողջ համակարգը: Արևմտականները վճռորոշ նշանակություն էին տալիս բարեփոխումներին: Նրանք ևս վերևից ճորտատիրական իրավունքի վերացման ու քաղաքական ազատությունների հաստատման մեջ տեսնում էին այլընտրանք Հեղափոխական ցնցումների դեմ: Ի տարբերություն սլավոնասերների արևմտականները մեծարում էին Պյոտր Առաջինին, դրականորեն գնահատում նրա լայնածավալ բարեփոխումները, որոնց շնորհիվ, ինչպես իրենք էին ասում, առաջին կայսրը «փրկեց Ռուսաստանը»: Պատմության և իրավունքի պրոֆեսորներ՝ Սոլովյովը, Ջիչերինը, Կավելինի հետ, Ռուսաստանի քաղաքական պատմության մեջ մեծ նշանակություն տալով պետական իշխանությանը, ռուսական պատմագրության մեջ դարձան, այսպես կոչված, պետական դպրոցի հիմնադիրներ: Արևմտական պրոֆեսորները հենվելով Հեգելի հայտնի սխեմայի վրա, պետությունը դիտում էին իբրև մարդկային հասարակության դարգացման ստեղծագործող ուժը: Արևմտականները իրենց գաղափարները քարոզում էին համայնարանական ամբիոններից, բազմաթիվ հոդվածներում, որոնք հրատարակվում էին «Մոսկովսկի Նարյուդատել», «Մոսկովսկի Վեդոմոստի», «Օտոչեստվեննիյե գապիսկի», «Ռուսկի վեստնիկ» պարբերականներում: Հատկապես լայն արձագանք ունեցան Գրանովսկու կարդացած հրատարակային դասախոսությունները Արևմտյան եվրոպայի պատմության վերաբերյալ, որոնցում նա պատմական զուգահեռներ անցկացնելու միջոցով ապացուցում էր Ռուսաստանի և արևմտաեվրոպական երկրների միջև պատմաքաղաքական զարգացման գործընթացների օրինաչափությունները և ընդհանրությունները: Ընդհանրապես, թե՛ արևմտականները և թե՛ նրանց գաղափարական հակառակորդները՝ սլավոնասերները, իրենց քարոզչության մեջ մեծ տեղ էին հատկացնում պատմական գործընթացներին հասկանալով և գիտակցելով դրա հզոր ուժը իրենց հայացքները հիմնավորելու և հանրությունը ներշնչելու համար: Նրանց գաղափարական «մենամարտերը» իրենց վրա էին գամում հասարակության ուշադրությունը, առաջացնում մեծ հետաքրքրություն մտավորականների մոտ, որոնց ներկայությունը հրատարակավ տեղի

ունեցող «ով-ում» պայքարի արդյունքը անկանխատեսելի լինելով, ավարտվում էր փոփոխակի հաջողություններով՝ մերթ մեկի հաղթանակով, մերթ մյուսի պարտություններով: Արևմտականների ու սլավոնասերների միջև ընթացող գաղութարական պայքարը և սկզբունքային մրցակցությունը հազվադեպ լուսավոր էջերից էր նիկոլայեյան իրականության պայմաններում:

**§ 4. Վ. ԲԵԼԻՆՍԿԻՆ, Ա. ԳԵՐՑԵՆԸ, Ն. ՕԳՍԻՅՈՎԸ,
Մ. ՊԵՏՐԱՇԵՎՍԿԻՆ, Ն. ՉԵՐՆԻՇԵՎՍԿԻՆ, Ն. ԴՈՐՐՈՒՅՈՒԲՈՒՎԸ
ԵՎ ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻՏՔԸ**

Ռուսական հասարակական-քաղաքական մտքի պատմության մեջ XIX դարի 40-50-ական թվականներին ձևավորվեց հեղափոխական-ժողովրդավարական գաղափարախոսությունը, որը ժողովրդական լայն զանգվածների՝ գյուղացիության շահերի պաշտպանության տեսանկյունից դարձավ առաջատար և առաջադեմ, գլխավոր ու հիմնական ուղղություններից մեկը: Այս գաղափարախոսության ակունքներում կանգնած էին Վ. Բելինսկին, Ա. Գերցենը, Ն. Օգարյովը, Մ. Պետրաշևսկին, որոնց պատմագիտական, գրականագիտական, հրապարակախոսական հարուստ ժառանգությունը զգալիորեն նպաստեց հասարակական-քաղաքական մտքի որակական դարգացման գործընթացին:

Ռուսական հեղափոխական-ժողովրդավարական գաղափարախոսությունը իր առանձնահատկություններով հանդերձ ընդհանուր առմամբ աղերսվում էր արևմտանվրոպական սոցիալիստական ուսմունքներին: Այսուհանդերձ, ռուսական և արևմտանվրոպական ուսմունքների միջև այդ հասարակարգին անցնելու և այն կառուցելու ուղիների վերաբերյալ առկա էին սկզբունքային տարբերություններ, որոնք սլավոնավորված էին Ռուսաստանի և եվրոպական դարգացած երկրների սոցիալ-սոցիալական ու քաղաքական կյանքի ակնհայտ անհամաչափություններով: Ավելին, Արևմտյան Եվրոպայում քաղաքական-գաղափարական խոր արմատներ զգած մարքսիստական ուսմունքը անխուսափելի էր համարում կապիտալիզմի կործանումը և սոցիալիստական համակարգի հաստատումը մայրցամաքի առավել դարգացած երկրներում: Այդ հաղթանակը մարքսիստները պայմանավորում էին բանվոր դասակարգի՝ պրոլետարիատի հեղափոխական պայքարի հետ: Հեղափոխական-ժողովրդավարական մտքի ներկայացուցիչները հարգանքով վերաբերվելով Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի ուսմունքին, այնուամենայնիվ, գտնում էին, որ այդ տեսությունը գործադրելի է Արևմտյան Եվրոպայի համար, բայց անիրատեսական է, կիրառելի չէ

Ռուսաստանի պայմաններում: Ավատատիրական-ճորտատիրական Ռուսաստանում, պրոլետարիատի բացակայություն պայմաններում նրանք ինքնակալության տասլալման ու սոցիալիզմի հաստատման հնարավորությունը գերադանցապես կապում էին բնակչության ճնշող մեծամասնություն կազմող ճորտ գյուղացիության հեղափոխական պայքարի հետ:

Վ. Գ. Բելինսկին (1811-1848 թթ.) քննադատելով սլավոնասերների պատմաքաղաքական հայեցակարգը, ընդունում էր բուրժուական հասարակարգի հարաբերական առաջադիմական նշանակությունը ավատատիրական-ճորտատիրական կարգերի նկատմամբ, բայց միաժամանակ հեղափոխական ժողովրդավարական ուսմունքի տեսանկյունից քննադատում էր այդ համակարգի խոցելի կողմերը: Նա սովորել է Մոսկվայի համալսարանում (1829-1832 թթ.): Բայց Շիլլերի ոտմանտիզմի ոգով գրած նրա «Դմիտրի Կալինին» հակաճորտատիրական դրամայի պատճառով նրան հեռացրել են համալսարանից: Բելինսկին աշխատակցել է «Տելեսկոպ», «Մոսկովսկի նարյուդատել», «Օտեչեստվեննիյե դապիսկի», «Մուլրեմեննիկ» լիբերալ-աղյատական, ժողովրդավարական ուղղվածություն ունեցող պարբերականներում՝ դառնալով դրանց գլխավոր գրաքննադատը: Բելինսկին Ի. Ստանկևիչի խմբակի անդամ էր, ծանոթ էր Բակունինին, ուսումնասիրել էր Սեն-Սիմոնի սոցիալիստական ուսույլիայի, Հեգելի փիլիսոփայական ուսմունքները, անգամ Մարքսի վաղ շրջանի հոդվածները, որոնք տպագրվել էին «Գերմանա-Ֆրանսիական տարեգրքում»: Բելինսկին երազում էր սոցիալիստական հասարակություն ստեղծելու մասին, որի քաղաքացիները կլինեն ազատ և իրավահավասար: Նա համոզված էր, որ ինքնակալության ու ճորտատիրական համակարգի վերացմամբ այլևս «չեն լինի հարուստներ, չեն լինի աղքատներ... կլինեն եղբայրներ, կլինեն մարդիկ»: Սակայն նրա գաղափարները զուտ սոցիալիստական ուսույլիա էին, անիրագործելի ընդհանրապես և հետամնաց ավատատիրական-ճորտատիրական Ռուսաստանում հատկապես: Բելինսկին ջերմ հայրենասեր էր, նա սիրում էր իր ժողովրդին և հավաստում նրա հիանալի ապագային: Բելինսկու տաղանդը, որպես գրաքննադատ ու հրապարակախոս, հատկապես վառ կերպով փայլատակեց XIX դ. 40-ական թվականներին: Նա ընթերցողին օգնում էր ավելի խորը հասկանալ ռուս նշանավոր գրողներ Ա. Ս. Պուշկինի, Մ. Յու. Լերմոնտովի, Ն. Վ. Գոգոլի ստեղծագործությունները, մեկնաբանում էր դրանց հասարակական նշանակությունը: 1847 թ. սկզբին հրատարակվեց Գոգոլի «Բարեկամների հետ նամակագրությունից ընտրված տողերը» գիրքը: Ռուս նշանավոր գրողը տուրք էր տալիս «Պաշտոնական ժողովրդայնության տեսությունը» ու փաստորեն հանդես

գալիս նահապետական կալվածատիրութեան, ճորտատիրութեան, ուղղափառ եկեղեցու և ինքնակալութեան պաշտպանութեամբ, որը դրվատվեց այդ տեսութեան ջատագովներ Շեկրևի, Բուլգարինի, Վյազեմսկու և ընդհակառակը քննադատվեց այդ տեսութեան գաղափարական հակառակորդների կողմից: Բելինսկին Գոգոլի գրքի վերաբերյալ «Սովրեմեննիկ» ամսագրում տպագրեց մի գրախոսություն, որին գրողը պատասխանեց խիստ վիրավորական տոնով: Գոգոլի պատասխանը Բելինսկին ստացավ արտասահմանում, ուր մեկնել էր բուժման: 1847 թ. հուլիսի 3-ին (15-ին) Բելինսկին գրում է իր պատասխան նամակը, որը հայտնի է «Բելինսկու նամակը Գոգոլին» անունով: Վաղահաս մահվան պատճառով Բելինսկին չկարողացավ հրատարակել նամակը, սակայն նրա բարեկամները սկզբում հարյուրավոր ձեռագիր օրինակներով տարածեցին, իսկ հետո հրատարակեցին: Բելինսկին, բարձր գնահատելով Գոգոլի տաղանդը և մեծ ներդրումը ուսական գրականության մեջ, այնուամենայնիվ, խստագույնս քննադատեց նրան «ուսական գարշելի իրականությունը գունազարդելու» համար: Բելինսկին նամակում ոչ միայն բացահայտեց ուսական իրականության մոռյալ կողմերը, այլև եզրակացրեց, որ հիմնական և առաջնահերթ խնդիրները ինքնակալութեան ու ճորտատիրութեան դեմ պայքարն է, ժողովրդի մեջ լուսավորության տարածումը: «Ռուսաստանն իր փրկությունը, - գրել է նա, - տեսնում է... քաղաքակրթության, լուսավորության, մարդասիրության, առաջադիմության մեջ: Նրան ոչ թե քարոզներ են պետք (նա դրանք չատ է լսել), այլ ժողովրդի մեջ մարդկային արժանապատվության արթնացում, որ այսքան դարեր կորցրել էր ցեխի ու կեղտի մեջ, իրավունքներ և օրենքներ, համաձայն ոչ թե եկեղեցու ուսմունքի, այլ առողջ դատողության և արդարացիության»: Բելինսկու գրաքննադատական ու հրատարակախոսական հարուստ ժառանգությունը մեծ նշանակություն ունեցավ ուսական հասարակական-քաղաքական մտքի և շարժման պատմության մեջ:

Այդ նույն տարիներին ինքնակալութեան ու ճորտատիրութեան սուր քննադատությամբ հանդես եկավ ուս հայտնի գրող, նշանավոր հասարակական-քաղաքական գործիչ, հրատարակախոս, ուսական գյուղացիական-ուսուպիական սոցիալիզմի տեսության հիմնադիր Ալեքսանդր Իվանովիչ Գերցենը (1812-1870 թթ.), որը սովորել է Մոսկվայի համալսարանի ֆիզիկա-մաթեմատիկական բաժնում: Գերցենի աշխարհայացքի ձևավորման վրա վճռական ներգործություն ունեցավ դեկաբրիստական շարժումը: Նա իր մերձավոր բարեկամ Նիկոլայ Պլատոնովիչ Օգարյովի հետ միասին Մոսկվայի բարձունքներում Վորոբյովյան բլուրների վրա հա-

վատարմության երդում տվեցին միմյանց՝ մինչև վերջ պայքարել ճորտատիրութեան դեմ, շարունակել դեկաբրիստների գործը: Գերցենը և Օգարյովը համալսարանում հեղափոխական խմբակի ստեղծման, հակաճորտատիրական, հակամիապետական գաղափարներ քարոզելու, հակակառավարական երգերի համար բանտարկվեցին և բանտում երկար մնալուց հետո ուստիկանության հսկողության ներքո աքսորվեցին, Գերցենը՝ Պերմ, իսկ հետո՝ Վյատկա ու Վլադիմիր, իսկ Օգարյովը՝ Պենդա: 1840 թ. Գերցենն իրավունք ստացավ վերադառնալ աքսորից, որտեղ նա մոտիկից ծանոթացավ ժողովրդի կյանքին, իմացավ նրա կարիքներն ու տրամադրությունները: Գերցենը վերադարձավ Մոսկվա, ապա մեկնեց Պետերբուրգ, սակայն հեղափոխական գործունեության համար նորից աքսորվեց՝ այս անգամ Նովգորոդ: 1847 թ. Գերցենը թողնում է Ռուսաստանը և մեկնում արտասահման և իբրև քաղաքական վտարանդի մնում է օտար ափերում մինչև իր կյանքի վերջը:

Գերցենը 40-ական թվականներին գրեց «Ռ՞վ է մեղավոր», «Բժիշկ կրուպով», «Գող կաշաղակը» վեպերը, ապա վիպակներ, «Եղելություններ և խոհեր» հիշողությունները, որոնք համակված են հայրենիքի և ժողովրդի հանդեպ ջերմ սիրով, իսկ նրան ստրկացնողների նկատմամբ՝ ատելությամբ: Եվրոպայում գտնվելու ժամանակ Գերցենն ականատես եղավ 1848 թ. ֆրանսիական հեղափոխությանը, որի ճնշումից հետո նա հայացքն ուղղեց դեպի Ռուսաստան, այն հույսով և ակնկալիքով, թե հենց իր հայրենիքը ամբողջ աշխարհին ցույց կտա հեղափոխական վերափոխման ճանապարհը, սոցիալիզմին անցնելու ուղին: Գերցենի տեսության համաձայն Ռուսաստանը գյուղական համայնքի միջոցով կարող է հասնել սոցիալիզմի, քանզի համայնքը դիտվում էր իբրև սոցիալիզմի բջիջ: Գյուղացիներին հատկացված համայնական հողերը պարբերաբար հավասար սկզբունքով վերարաժանվում էին գյուղացիական տնտեսությունների միջև, ըստ տղամարդկանց քանակի, իսկ անտառները, մարգագետինները, ջրելատեղերը կաղմում էին համայնքի ընդհանուր տիրույթները և սեփականությունը: Գյուղական համայնքի ժողովը լուծում էր վարչական հարցերը, հարկերն ու պարհակները բաժանում գյուղացիների միջև: Համապարտ երաշխավորության համաձայն ամբողջ համայնքը պատասխանատու էր դրանք ժամանակին վճարելու համար: Գերցենը յարձակ «Գյուղացիական սոցիալիզմի» կամ «Ռուսական սոցիալիզմի» տեսության հիմնադիրը ուսական հասարակական-քաղաքական մտքի պատմության մեջ: Գյուղացիական համայնքը չէր կարող լինել սոցիալիզմի սաղմ, որովհետև այն խոր հնության մնացուկ էր, ժառանգություն, որն ինքնակալությունը պահպանում էր գյուղացիությանը ենթարկելու, գյուղացիական

կենցաղի անշարժությունը և նահապետականությունը պահպանելու հարմար միջոց: Մինչդեռ Գերցենը համայնքի մեջ տեսնում էր «սոցիալիզմի սաղմ», քանզի գյուղացիները չեն վարակված մասնավոր սեփականատիրական բնազդով և բնածին սոցիալիստներ են, որը հնարավորություն է ընձեռում ինքնակալությունը վերացնելուց հետո, գյուղացիներին ճորտությունից ազատագրելու և նրանց հողով ապահովելու միջոցով անցնելու սոցիալիզմի:

Գերցենն իր բովանդակ կյանքի ընթացքում ապրեց նաև անձնական ողբերգություն՝ 1851 թ. նափի խորտակման հետևանքով մահացան մայրը և որդին, իսկ հաջորդ տարի՝ կինը: Այնուամենայնիվ, նա մինչև վերջ պայքարեց ճորտատիրական համակարգը վերացնելու համար: 1853 թ. Գերցենը Լոնդոնում սկսեց հրատարակել «Պոլյարնայա զվեզդա» ամսանախը, իսկ հետո՝ «Կոլոկոլ» լրագիրը (1857-1867 թթ.): Այդ հրատարակությունները լայն տարածում գտան Ռուսաստանում և մեծ դեր խաղացին նոր սերնդին հայրենասիրական ոգով դաստիարակելու գործում: «Կոլոկոլի» նշանաբանը եղել է խոր միտք պարունակող «Կանչում եմ ողջերին» բառերը: Լրագիրն անխնա քննադատում էր ճորտատիրական կարգերը, ազատության, երջանկության, արդարության համար պայքարի կոչ անում: «Կոլոկոլում» տպագրվող հոդվածների հեղինակները պահանջում էին Ռուսաստանում իրականացնել արմատական ժողովրդավարական վերափոխումներ: «Կոլոկոլի» շուրջ համախմբվեցին Ռուսաստանի քաղաքական վտարանդիները, իսկ Գերցենի բնակարանը Լոնդոնում նրանց համար դարձավ յուրատեսակ օթևան հավաքատեղի: Գերցենին մոտ էր ժամանակի հայ հասարակական-քաղաքական մտքի ամենակարկառուն դեմքը՝ Միքայել Նալբանդյանը (1829-1866 թթ.), որը կիսում էր նրա հակինքնակալական, հակաճորտատիրական, հեղափոխական, ժողովրդավարական, լուսավորչական հայացքները: Նալբանդյանն իր կարճատև, բայց փոթորկալից ու բովանդակալից կյանքը Գերցենի նման նվիրեց հասարակ ժողովրդի շահերի պաշտպանությանը:

Գերցենի ուսուսպիական սոցիալիզմի ուսմունքը կարևոր նշանակություն ունեցավ երիտասարդ Ն. Գ. Չերնիշևսկու (1828-1889 թթ.) հասարակական-քաղաքական հայացքների ձևավորման վրա: Նա սովորել է և գերազանցություններ ավարտել Պետերբուրգի համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետը, աշխատակցել է «Օտեչեստվեննիյե դապիսկի» ու «Սովրեմեննիկ» ամսագրերին՝ դառնալով նրանց փաստացի գաղափարական ղեկավարը: Չերնիշևսկին նույնպես իր ամենանվիրական նպատակը դարձրեց ողջ գյուղացիությանը տեսնել ազատագրված ճորտատիրական լծից: Երազելով սոցիալիստական հասարակարգի կառուցման մասին՝ նա նույնպես համոզված էր, որ Ռուսաստանում գյուղացիական համայնքը

կարող է դառնալ սոցիալիզմի բջիջ՝ գյուղացիությանը հողով ճորտատիրությունից ազատագրելու և նրան գյուղական համայնքի շուրջը համախմբելու միջոցով: Չերնիշևսկին ուսուսպիական-սոցիալիստական իր հայացքները շարադրել է հայտնի «Ի՞նչ անել» վեպում: Գյուղացիությանը ճորտությունից ազատագրելու, նոր հասարակարգ կառուցելու նպատակով Չերնիշևսկին թույլատրելի էր համարում հեղափոխական բռնության գործադրումը գոյություն ունեցող միապետական իշխանության նկատմամբ՝ «կացնի ուժով» կարևորագույն և հրատապ հարցերի լուծման հնարավորությունը: Հատկանշական է, որ Չերնիշևսկին աքսորավայրից վերադառնալուց հետո Աստրախանում բնակվելու ժամանակ մտերմացավ աստրախանաբնակ հայերի հետ, նույնիսկ սկսեց սովորել հայերեն ու մեծ հետաքրքրություն ու ջերմ համակրանք ցուցաբերեց հայ ժողովրդի պատմության ու մշակույթի նկատմամբ:

Ավատատիրական-ճորտատիրական, միապետական համակարգի սուր քննադատությամբ հանդես եկավ Չերնիշևսկու բարեկամ ու գաղափարակից Նիկոլայ Ալեքսանդրովիչ Դոբրոյուբովը (1836-1861 թթ.), որը սովորել է Պետերբուրգի Գլխավոր մանկավարժական ինստիտուտում և ակտիվորեն աշխատակցել «Սովրեմեննիկ» ամսագրին: Թեև նա մահացավ ստեղծագործական ուժերի ծաղկման շրջանում թոքախտից, ընդամենը 25 տարեկան հասակում, այնուամենայնիվ, նա մեծ դեր խաղաց ողջ գրականության և հասարակական-քաղաքական մտքի զարգացման գործում: Դեռ տակավին երիտասարդ՝ նա դարձավ հայտնի քննադատ ու հրասպարակախոս: Իր փայլուն քննադատական հոդվածներում՝ «Ի՞նչ է օբլոմովչինան», «Ե՞րբ կգա իսկական օրը», «Խնավարի թագավորություն», «Լույսի ճառագայթը խավարի թագավորության մեջ» անողոք քննադատության ենթարկեց ճորտատիրական իրականությունը, պայքարի կոչ արեց հանուն ազատության: «Ի՞նչ է օբլոմովչինան» հոդվածը նվիրված է ողջ հայտնի գրող Գոնչարովի «Օբլոմով» վեպին, որի հեղինակը վառ գույններով և լիակատար ճշմարտությամբ ներկայացրել և քննադատել է իր դարն ապրած ճորտատիրական նեխած հասարակարգը: Դոբրոյուբովն անխուսափելի համարեց, կանխագուշակեց այդ հասարակարգի՝ օբլոմովչինայի կործանումը, քանզի այն պատմականորեն ու քաղաքականապես վաղուց էր իրեն սպառել: «Լույսի ճառագայթը խավարի թագավորությունում» Դոբրոյուբովի հոդվածը գրված է ողջ նշանավոր դրամատուրգ Օստրովսկու «Ամպրոպ» ստեղծագործության առթիվ, որտեղ ներկայացված է նիկոլայանյան Ռուսաստանի իրականությունը, իբրև խավարի թագավորություն, որտեղ ոտնահարվում է մարդու ամեն մի արժանապատվություն, որտեղ մաքուր և արդարացի ոչինչ չկա, իշխում է բիրտ կամայա-

կանությունը: Չերնիչևսկու և Դորբոյուբովի հայացքները հսկայական ներգործություն ունեցան ռուսական հասարակական-քաղաքական մտքի հետագա զարգացման վրա:

Արևմտյան Եվրոպայում մշակված ուստոպիական սոցիալիզմի տեսությունների ջատագովը և տարածողը ռուսական իրականության մեջ դարձավ պետրաշևսկանների խմբակը, որն իր անունը ստացել է խմբակի ճանաչված ղեկավար Միխայիլ Վասիլևիչ Բուտաշևիչ-Պետրաշևսկու (1821-1866 թթ.) անունից: Այդ խմբակն ստեղծվել է 1844 թ. վերջին ու 1845 թ. սկզբին Պետերբուրգում: Խմբակի կազմը չափազանց խայտարղետ էր: Նրա անդամները՝ ուսանողներ, ուսուցիչներ, գրողներ, գրականագետներ, աստիճանավորներ, երաժիշտներ, գիտնականներ, ուրբաթ օրերին հավաքվում էին Պետրաշևսկու բնակարանում և քննարկում էին քաղաքական հարցեր, թե՛ վիճաբանում, դատապարտում էին ճորտատիրական-ինքնակալական համակարգը: «Պետրաշևսկու ուրբաթները» մեծ հեղինակություն էին վայելում մտավորականության շրջանում: Այդ «ուրբաթներին» ներկա էին լինում գրողներ Մ. Ե. Սայտիկով-Շչեդրինը, Ֆ. Մ. Դոստոևսկին, բանաստեղծներ Ա. Ն. Պրեչեկը, Ա. Ն. Մայկովը, դաշնակա-հար Ա. Գ. Ռուբինշտեյնը, գիտնական-աշխարհագետ Պ. Պ. Սեմյոնով-Տյանշանսկին, հայագետ Դ. Ախչարովը և ուրիշներ: Այդ «ուրբաթներին» կարող էին հաճախել Պետրաշևսկու բոլոր ծանոթները: Ծագումով աղնվական Պետրաշևսկին սկզբնական կրթությունը ստացել է Ալեքսանդրյան Ցարսկոյե Սելո լիցեյում, այնուհետև սովորել Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում, որն ավարտել է իրավունքի (իրավագիտության) թեկնածուի աստիճանով, ծառայության անցել արտաքին գործերի նախարարությունում իրրե թարգմանիչ: Պետրաշևսկանների հայացքների ձևավորման վրա ուժեղ էր արևմտանվորոպական ուստոպիստ-սոցիալիստների՝ ֆրանսիացի Անրի Սեն-Սիմոնի, անգլիացի Ռոբերտ Օուենի և հատկապես ֆրանսիացի Շառլ ֆուրյեի ուսմունքների ազդեցությունը: Պետրաշևսկաններն առանց բացառության քննադատում էին ճորտատիրական ինքնակալական համակարգը և երազում սոցիալիստական հասարակության մասին: Սակայն, ի տարբերություն արևմտանվորոպական ուստոպիստ-սոցիալիստների, պետրաշևսկանները հնարավոր էին համարում և ընդունում էին հասարակության վերափոխման ինչպես խաղաղ, այնպես էլ բռնի, հեղափոխական միջոցները: Պետրաշևսկանները ցանկանում էին տապալել ինքնակալությունը և ստեղծել ժողովրդավարական հանրապետություն, առանց փրկագնի գյուղացիներին ազատագրել հողով: Նրանք ռուսական հասարակության շրջանում քարոզում էին ժամանակի առաջավոր քաղաքական գաղափարներ: Այդ նպատակով

Պետրաշևսկու խմբագրությունը հրատարակվեց «Ռուսերեն լեզվի մեջ մտած օտար բառերի գրպանի բառարանը»: Այդ բառարանի բառերի ընտրության և նրանց յուրովի մեկնաբանության ու բացատրության միջոցով պետրաշևսկանները լուսաբանում էին ուստոպիական սոցիալիզմի ուսմունքը և գաղափարները, քարոզում իրենց հայացքները: Բայց գրաքննությունը շուտով կոահեց բառարանի հեղինակների նպատակը և արգելեց նրա տարածումը: Ռուսաստանում լայն արձագանք գտան 1848-1849 թթ. հեղափոխությունները Ֆրանսիայում, Պրուսիայում, Ավստրիայում, Հունգարիայում, Իտալիայում: Դրանք վախեցրին ռուս լիբերալներին, որոնք շտապեցին իրենց նվիրվածությունը հայտնել ինքնակալությանը, մինչդեռ պետրաշևսկանները այդ հեղափոխությունները դիմավորեցին ջերմ համակրանքով: Ինքնին հասկանալի է, որ ստվարատարը և խայտարղետ կազմ ունեցող խմբակում բոլոր հրատապ քաղաքական հիմնահարցերի նկատմամբ չէր կարող լինել միասնական մոտեցում, ուստի և օրինաչափ է, որ նրա մեջ ձևավորվեցին չափավոր ու արմատական հեղափոխական թևերը: Չափավոր հայացքներ ունեցող պետրաշևսկանները բավարարվում էին զիջումներով և վերևից անցկացվող վերափոխումներով: Միչդեռ Պետրաշևսկին և նրա կողմնակիցները, այդ թվում հայագետ Ախչարովը, առաջ էին քաշում վերափոխումների իրագործման արմատական պահանջներ: Ցարական ոստիկանությունը 1849 թ. մատնիչ Անտոնելիի միջոցով բացահայտեց պետրաշևսկանների խմբակը և սկսեց ձերբակալությունները: Նրանց գործունեությունը դիտվեց իրրե պետական հանցագործություն և զնահատվեց որպես «գաղափարների դավադրություն»: «Հետաքննող գաղտնի հանձնաժողովը» սկսեց իր աշխատանքը, որը դարձավ ամենահնչեղ, հասարակության մեջ լայն արձագանք գտած դատաքննությունը ղեկարրիստների դատավարությունից հետո: Դատարանը 21 դատապարտյալների, այդ թվում Պետրաշևսկուն, Դոստոևսկուն դատապարտեց մահապատժի, մյուսներին՝ տարբեր ժամկետներով տաժանակրության ու աքսորի: Մահապատժի դատապարտվածներին տարան մայրաքաղաքի Սեմյոնովյան հրապարակ, որտեղ նրանց նկթարկում են մահապարտյալների համար նախատեսված բոլոր ծիսակատարություններին և սպասում հրամանի կատարմանը: Երևին՝ դրանց թվում Պետրաշևսկուն, Դոստոևսկուն կապեցին սյուններին, գլուխներին պարկեր հագցրին, խփեցին թմբուկները և միայն դրանից հետո հրապարակ է մտնում կայսրի սուրհանդակը և հայտարարում նիկոլայ Առաջինի ողորմածությունը՝ մահապատիժը տաժանակրությամբ փոխարինելու մասին: Այսպիսով, մահվան սարսափները վերապրելուց հետո միայն ահեղ կայսրից ստացան ներման շնորհում:

XIX դարի առաջին կեսին ռուսական հասարակական-քաղաքական միտքը նկատելի առաջընթաց ապրեց՝ պայմանավորված սոցիալ-տնտեսական ու քաղաքական տեղաշարժերով, որոնց վրա էլ սկսեցին իրենց ուշադրությունը տարբեր գաղափարախոսությունները ղեկավարվող հոսանքների ներկայացուցիչները, որոնցից յուրաքանչյուրը յուրովի էր պատկերացնում իր հայրենիքի ապագան, զարգացման հեռանկարները և ուղիները:

ԵՐՐՈՐԴ Գ.ԼՈՒՆ

**ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
XIX Դ. 20-50-ԱԿԱՆ ԹԹ.**

**§ 1. ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՄԻԱԿՅՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ
ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

XIX հարյուրամյակի առաջին երեք տասնամյակում Անդրկովկասում կատարված ռազմաքաղաքական կարևոր իրադարձությունները վճռորոշ նշանակություն ունեցան ինչպես այդ տարածքում ապրող ժողովուրդների, այնպես էլ ռուսական կայսրության համար: Հաղթական պատերազմներ մղելով Պարսկաստանի ու Թուրքիայի դեմ, Ռուսաստանը վերջապես կարողացավ լուծել իր հետապնդած քաղաքական կարևորագույն խնդիրները և ամրապնդվել ռազմավարական առանցքային նշանակություն ունեցող Անդրկովկասի տարածքում: Այդ հաղթարշավում նրան որոշակի օգնություն ցույց տվեց հայ ժողովուրդը, որը շարունակելով իր աղգային ազատագրական պայքարը պարսկա-թուրքական բռնատիրության դեմ, նպաստեց Ռուսաստանի հետապնդած քաղաքական ծրագրերի իրականացմանը: Արևելյան Վրաստանի ներքաղաքական ու արտաքին քաղաքական բարդ կացությունը հարկադրեց նրա վերջին թագավոր Գեորգի 12-ին ընդունել ծայրահեղ որոշում՝ դիմել ռուսական կայսր Պավելին՝ խնդրելով նրան իր երկիրը վերցնել Ռուսաստանի քաղաքական հպատակության ներքո: Վրաց թագավորը հրաժարվում էր իշխանությունից հօգուտ ռուսական կայսրի, որը նշանակում էր պետականության կորուստ և հրաժարում անկախությունից: Սակայն Գեորգին մահացավ 1800 թ. դեկտեմբերի վերջին, այդպես էլ չիմանալով ռուսական կայսրի դրական որոշման մասին: 1801 թ. հունվարի 18-ին հրապարակվեց Պավել Առաջինի հրովարտակը Քարթլի-Կախեթիի թագավորությունը ռուսական կայսրության կազմի մեջ ընդգրկելու մասին: Սակայն 1801 թ. մարտին Պավել Առաջինը սպանվեց Պետերբուրգում պալատական դավադիրների կողմից, և միայն նոր կայսր՝ Ալեքսանդր Առաջինի 1801 թ. սեպտեմբերի 12-ի հրովարտակով Արևելյան Վրաստանը պաշտոնապես միակցվեց Ռուսաստանին: Այ-

նուհետև Ռուսաստանին անցան Մենդրելիան, Իմերեթիան, Գուրիան, Աբխազիան: Ռուսաստանի հպատակներ դարձան նաև Վրաստանում ապրող հայությունը, կայսրությանը միացվեցին Հայաստանի հյուսիսային շրջանները՝ Լոռին, Փամբակը, Շամշադինը, Ղազախը: Դա զգալիորեն ամրապնդեց կայսրության դիրքերը Կովկասում և Անդրկովկասում, բայց սրեց ռուս-պարսկական միջպետական հարաբերությունները և դարձավ 1804-1813 թթ. պատերազմի գլխավոր պատճառը: Պատերազմի ծագման անմիջական պատրվակը էջմիածնի կաթողիկոսական բազիլիկոսի թեկնածուների միջև ընթացող պայքարն էր՝ «Դավիթ-Դանիելյան վեճը»: 1807 թ., երբ արդեն սկսվել էր ոչ միայն ռուս-պարսկական, այլև ռուս-թուրքական պատերազմը ռուսական կառավարության վճռական միջամտության շնորհիվ էջմիածնի կաթողիկոսական աթոռը զբաղեցրեց Դանիելը: 1808 թ. հոկտեմբերի 9-ին Դանիելը վախճանվեց և 1809 թ. կաթողիկոս ընտրվեց Ռուսաստանի հայոց հոգևոր թեմի առաջնորդ արքեպիսկոպոս Եփրեմը:

Ռուս-պարսկական պատերազմն ընթացավ ռուսական բանակի առավելություններով, որին նկատելիորեն նպաստում էին հայերը: Պատերազմը ավարտվեց Ռուսաստանի հաղթանակով և 1813 թ. հոկտեմբերի 12-ին (24-ին) կնքվեց հաշտության պայմանագիր, որով Պարսկաստանը ճանաչեց Արևելյան Վրաստանի, Դաղստանի, Ղարաբաղի, Բաքվի, Թալիշի, Գյանջայի, Շաքիի, Շիրվանի, Դերբենտի, Ղուբայի խանությունների, Լոռու, Փամբակի, Ղազախի, Շամշադինի, Զանգեզուրի, Շորաղյալի միացումը ռուսական կայսրությանը: Արևելյան Հայաստանի հյուսիսային շրջանների միացումով սկսվեց հայկական հողերի անցումը Ռուսաստանին: Սակայն Ֆաթհ-Ալի շահը և թագաժառանգ Արաս-Միրզան խիստ դժգոհ էին Գյուլիստանի պայմանագրից: Նրանք ձգտում էին նոր և հաղթական պատերազմով շտկել Գյուլիստանի պայմանագրից հետո իրենց համար Անդրկովկասում ստեղծված խիստ անբարենպաստ ռազմաքաղաքական իրադրությունը, մանավանդ որ հաշտության պայմանագրով հաստատված սահմանագիծը դեռևս չէր անցկացված և մշտական առիթ էր դառնում դժվարությունների ու բախումների համար: Միայն դրանով կարելի է բացատրել գեներալ, Կովկասի կառավարչապետ, կովկասյան հատուկ կորպուսի հրամանատար Ա. Երմոլովի և կայսր Նիկոլայ Առաջինի լիազոր ներկայացուցիչ Իլխան Ա. Մենչիկովի ռազմագիտական առաքելություն ձևավորումները: Պարսկաստանը նախապատրաստվում էր նոր պատերազմի Ռուսաստանի դեմ: Ա. Երմոլովի ղեկավարած ղեկավարությունը Պարսկաստան մեկնեց 1817 թ. ապրիլի վերջին՝ նպատակ ունենալով ստանալ շահի հավաստագրումը պահպանել չեզոքությունն ռուս-թուր-

քական հնարավոր պատերազմի դեպքում, կարգավորել Գյուլիստանի պայմանագրի կնքումից հետո ռուս-պարսկական տարածքային-սահմանային վիճելի հիմնահարցերը: Պարսկաստանում գտնվելու ժամանակ խորաթափանց ու դիվանագիտական հմտություն ցուցաբերած գեներալը կարողացավ կռահել Գյուլիստանի պայմանագրի ոչ կայուն լինելու հանգամանքը: Իսկ Մենչիկովին ընդունեցին շատ սառը, թերևս թշնամաբար, կայսրի ներկայացուցիչը նույնպես լիովին համոզվեց, որ շահը նախապատրաստվում է պատերազմի: Իսկապես նա Պարսկաստանից Թիֆլիս գնացող ճանապարհին էր, երբ հայտնի դարձավ, որ պարսիկները խախտել են սահմանը: Ռուսաստանի դեմ նոր պատերազմ սկսելով շահը և թագաժառանգը պահեց ռազմաքաղաքական տեսանկյունից համարում էին նպաստավոր, որովհետև 1825 թ. վերջին երկրում սկսված գահակալական պայքարը շարունակվում էր և, նրանց կարծիքով, ներքաղաքական բարդ կացությունը Ռուսաստանին հնարավորություն էր ընձեռում հաջողությամբ դիմակայել պարսկական բանակին:

Նիկոլայ Առաջինի գահ բարձրանալու հետ կապված բարդությունները և դժվարությունները, Պետերբուրգի Սենատի հրապարակում տեղի ունեցած եղբայրասպան կոիլը Թեհրան հասավ չափազանցված և գերազանահատված, որն էլ վճռականություն ներշնչեց պարսկական արքունիքին ռազմական գործողություններ սկսելու համար: Իսկապես, պարսկական բանակն անցավ սահմանը 1826 թ. հուլիսի 16-ին, այսինքն՝ Սենատի հրապարակում ապստամբության ղեկավարներին մահապատժի ենթարկելուց երեք օր հետո, երբ Կոնստանտին Պավլովիչը՝ վերստին հավաստել էր, որ հրաժարվում է գահից:

Ռուսական պատմագրությունը, մամուլը, հատկապես ռազմական պատմաբանները մանրամասնորեն լուսաբանելով 1826-1828 թթ. պատերազմի բոլոր կարևորագույն ռազմաքաղաքական իրադարձությունները, այսուհանդերձ, առանձնացնում են այն առանցքային, վճռորոշ ռազմական գործողություններն ու դրվագները, որոնցում ակտիվորեն մասնակցել են հայորդիները: Այս առումով նրանք հատկապես գովեստի ու դրվատանքի խոսքեր են ասում Շուշիի՝ հայ աղզային մշակույթի հիմնավորը նշանավոր կենտրոններից մեկի, հայկաղյան տաղանդաշատ բազում ղավակների ծննդավայրի Հերոսապատման, բերդի հայ բնակչության ու կայազորի ռուս ղինվորների սխրանքների, նրանց համատեղ պայքարի և դինակցության մասին: Շուշի բերդը պաշտպանում էր 42-րդ եգերյան գունդը, այն լրակազմված էր մարտերում կոսոված հին կաղրային զինվորներով, որոնք մեկ անգամ չէ, որ բարձր են պահել ռուսական գեներալ պատիվը: Գունդը, թեև փոքրաթիվ էր, բայց նրա հրամանատարությունը գնդապետ

Ռեուտի գլխավորությունը լի էր վճռականությամբ պաշտպանելու և անառիկ պահելու բերդը: Ոչինչ չէր կարող վախեցնել ռուսական փոքրաթիվ ջոկատին, որը նշում են «Գեներալ-լեյտենանտ իշխան Մադաթովի կյանքը» գրքի գինվորական հեղինակները, միանալով հայերին, խիզախորեն ետ էր մղում ամրոցի կայազորի դեմ հակառակորդի ձեռնարկած բոլոր գրոհները և հարձակումները: «Դեռ այժմ էլ շատ են լսվում, - գրում են նրանք, - պատմվածքներ Շուշիի բնակչության անձնուրացության մասին»: «Շուշիի բնակիչներից 1500 մարդ... հրացաններով զինված կանգնեցին պարիսպներին՝ զգալիորեն ուժեղացնելով պաշտպանությունը»: Ռազմական պատմաբան Վ. Պոտտոն, ընդունելով հայերի օգնության ակնհայտ փաստը և կարևորությունը, կատարում է շատ արժեքավոր, պատմական իրականությունը համապատասխանող եզրակացություն: «Առանց այս օգնության, կայազորը երբեք չէր կարողանա դիմանալ վեցշաբաթյա պաշարմանը... Մինչև իսկ հերոսներ էին նրանց կանայք և նրանցից մեկին՝ Սաթուհուն այն ժամանակ գիտեր ողջ Ղարաբաղը»: Դեռևս Շուշիի պաշարման սկզբին նրա պաշտպաններից մեկը՝ Հարություն Ալթունյանը կայազորի հրամանատարությունը տեղեկացրեց ու պատրաստակամություն հայտնեց անցնել պարսկական զորքերի միջով և գեներալ Երմոլովին հայտնել բերդի ծանր դրություն մասին: Նա, հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ, ներկայացավ Երմոլովին: Ռուս գեներալը ըստ արժանավույն գնահատելով Ալթունյանի հերոսական արարքը, նրան պարգևատրեց չքանչանով, որից հետո անվախ շուշեցին վերադարձավ Շուշի և գեղապետ Ռեուտին հանձնեց Երմոլովի գրությունը: Ի դեպ, Երմոլովը պահանջում էր Շուշիի կայազորի հրամանատարությունից հենվել հայերի վրա և վստահել նրանց: Այսպես, Երմոլովի մի գրության մեջ լակոնիկ ոճով՝ կարճ և կտրուկ, ասված էր. «Միայն բերդի պաշտպանությունը կարող է ձեզ պատիվ բերել... բարեհաճեցեք դիմանալ, չընդունել ոչ մի առաջարկ... պաշտպանվեք: Հավաքեք ամբողջ հացը բեկերից. թող դավաճանները մահանան սովից: Մեծահոգաբար վերաբերվեք հայերի հետ, որովհետև նրանք յավ են ծառայում»: Աբաս-Միրզան թողեց Շուշիի պաշարումը, որովհետև տեղեկացավ, որ Շամքորի մոտ գեներալ Մադաթովը ջախջախել է պարսիկներին ու վերցրել Ելիզավետպոլ: Այստեղ 1826 թ. սեպտեմբերի 13-ին տեղի ունեցավ Ելիզավետպոլի հայտնի ճակատամարտը և ջախջախված Աբաս-Միրզան շտապեց անցնել Արաքսի մյուս ափը:

Կովկասյան կորպուսի գլխավոր հրամանատարի պաշտոնում Երմոլովին փոխարինած գեներալ Իվան Պասկևիչը Նիկոլայ կայսրին ներկայացրած զեկուցագրում մանրամասնորեն նկարագրելով Շուշիի հերոսական ռազմաքաղաքական իրադարձությունները, իր պարտքը համարեց հիշեց-

նել, որ 42-րդ Եգերյան գնդի վեց գումարտակների հետ, թշնամու դեմ մարտնչում էին բերդի պաշտպանության համար հավաքագրված 1500 հայեր:

1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի պատմության հերոսական դրվագների շարքում ռուսական պատմագրությունը և պարբերական մամուլը, հասարակական-քաղաքական միտքը հատուկ տեղ հատկացրեց գեներալ-լեյտենանտ Աֆանասի Կրասովսկու փոքրաթիվ ջոկատի տված անհավասար ճակատամարտին, որը տարեգրության մեջ է մտել Օչականի կամ Աշտարակի ճակատամարտ անունով: Այդ ճակատամարտից էր կախված էջմիածնի վանքի ճակատագիրը, որի հանդեպ բարոյա-քաղաքական տեսանկյունից ռուսական հրամանատարությունն անտարբեր մնալ չէր կարող. որովհետև բավականաչափ մեծ էր էջմիածնի նշանակությունը և դերը հայ ժողովրդի հոգևոր կյանքում: Դրանով իսկ էլ ավելի կմեծանար հայ ժողովրդի համակրանքը և վստահությունը Ռուսաստանի նկատմամբ: Ռուսական պատմագիտական ու քաղաքական մտքի գիտակցության մեջ էջմիածինը յուրատեսակ Մեքքա է (Երուսաղեմ), հայ ժողովրդի ուխտատեղին, որի նկատմամբ նա ունի առանձնահատուկ հարգանք, էջմիածին են գալիս հայեր Գանգեսի ու Ինդոսի, Նեղոսի ու Եփրատի, Վոլգայի և Նևայի ափերից, եղբայրաբար ձեռք են մեկնում միմյանց, ծանոթանում ու մտնում սերտ կապերի մեջ: Եվ վերջապես, էջմիածնում էին պատսպարվել ռուսական բանակի վիրավոր զինվորները, որոնց պաշտպանում էր մի փոքրաթիվ ջոկատ: Հետևաբար, շարժվելով դեպի էջմիածին ռուս գեներալը շտապում էր փրկել նրանց պարսիկներից: Կրասովսկու կարծիքով այդ կարևոր հենակետի՝ էջմիածնի կորուստը անթույլատրելի էր նաև ռազմական տեսանկյունից: Այն անհրաժեշտ էր Երևանի ու Սարդարապատի բերդերը պաշարելու և պարսիկներին այնտեղից դուրս մղելու առումով: Ահա ինչու ռուս գեներալն ընդունեց այդպիսի պատասխանատու որոշում, կատարեց վճռորոշ քայլ և ի վերջո հաղթանակով ավարտեց ճակատամարտը:

Ռուս-պարսկական պատերազմի ամենաանհավասար և արյունահեղ՝ Օչականի ճակատամարտը տեղի ունեցավ 1827 թ. օգոստոսի 17-ին, որի ընթացքում թագաժառանգ Աբաս-Միրզան իր սարբաղներին խոստացել էր յուրաքանչյուր ռուս զինվորի կտրված գլխի համար վճարել 10 ոսկի, իսկ հայ կամավորների՝ 5 ոսկի: Գեներալ Կրասովսկին իր փոքրաթիվ 3 հազարանոց ջոկատով դիմակայելով Աբաս-Միրզայի 30 հազարանոց բանակին, կորցնելով մոտ հազարից ավելի զինվոր, այնուամենայնիվ, կարողացավ մտնել էջմիածին: «Վերջապես, էջմիածնի հնագույն հայկական վանքը. մեր ձեռնարկման կարևորագույն պատճառը, իր բոլոր գեղեցիկ

չրջակայքով, ինչպես ափի մեջ բացվեց մեր առջև և Մ երջանկություն,- գրում է «Մուսկովսկի Տեղեգրաֆը»,- նրա ամբողջ լայնատարած հովտում չկար և ոչ մի պարսկական սարբազ»: Օշականի ճակատամարտի փայլուն զնահատականը տվել է այդ դեպքերի ակտիվ մասնակից Ներսես Աշտարակեցին: «Մեր մի բուռ եղբայրները, ճեղքեցին անցան մուրեզնած թշնամիների 30 հազարանոց բանակի միջով: Նրանք վաստակեցին անմահ փառք, իսկ գեներալ Կրասովսկու անունը հավերժ անմոռաց կմնա էջմիածնի տարեգրություններում»: Կրասովսկին, ընդհանուր առմամբ, ծանոթ էր հայ ժողովրդի պատմությանը և նրա հնագույն մշակույթին, որի մասին է վկայում Կիևի միտրոպոլիտ Եվգենիին հասցեագրած 1828 թ. ապրիլի 9-ի թվակիր նրա նամակը: Գիտենալով, որ միտրոպոլիտը հետաքրքրություն էր ցուցաբերում հնագույն պատմության ու մշակույթի նկատմամբ, Կրասովսկին ցանկություն հայտնեց նրան հաղորդել «...մանրամասն պատմական տեղեկություններ բազմաթիվ դիտարժան վայրերի մասին, որոնցով լի է նոր ձեռք բերած հայկական մարզը... Այս երկրի պատմությունը չափազանց հետաքրքիր է և եթե... հանգամանքները չարգելեն մտադրություններին, ապա մեզ համար կբացվի ժողովուրդների պատմության բնօրրան սույն գիրքը և այնտեղ պարունակվող գանձերը կդառնան հետաքրքրասերների համընդհանուր սեփականությունը»: Կրասովսկին, ինչպես և սպասվում էր, բարձր գնահատեց Ներսես Աշտարակեցու հայրենանվեր գործունեությունը հանուն իր ժողովրդի բարօրության և Ռուսաստանի հզորության: Ներսես Աշտարակեցին, Կրասովսկու տեսակետով, օժտված էր բարձր արժանիքներով և շատ էր հարգված հայերի կողմից, որովհետև նա իր փոթորկալից ողջ կյանքը նվիրաբերեց հայրենակիցներին օտարի լծից ազատագրելու գործին: Ռուս-պարսկական պատերազմի հաղթական ավարտի և Հյուսիսարևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու համար վճռական նշանակություն էր ստանում Երևանի բերդի գրավումը: Նկատի ունենալով դրա ողջ ռազմավարական կարևորությունը Կովկասյան կորպուսի հրամանատարությունը գեներալ Պասկևիչի գլխավորությամբ 1827 թ. աշնանից ձեռնամուխ եղավ այդ դժվարին, բայց խիստ անհրաժեշտ գործողությունների նախապատրաստմանը, ապա և իրականացմանը: Պասկևիչը Երևանի բերդի գրավումը հանձնարարեց 20-րդ դիվիզիայի հրամանատար Կրասովսկուն: Պաշարելով Երևանը ռուսական զորքերը ծանր կացության մեջ դրեցին սարդարին ու նրա կայազորին: 1827 թ. հոկտեմբերի 1-ին, ինչպես նշում է ռուս պատմաբան և հրապարակախոս Սերգեյ Գլինկան, Երևանի բերդում պատսպարված պարսկական կայազորը հանձնվեց: Երևանի ազատագրման գործում որոշակի ներդրում ունեցան 1827 թ մարտին թիֆլիսում Ներսես Աշտարակե-



Ռուսաց կայսր Պավել Առաջին (1796-1801 թթ.)



Ռուսաց կայսր Ալեքսանդր Առաջին (1801-1825 թթ.)



Մ. Մ. Սպերանսկի ռուս նշանավոր պետական գործիչ (1772-1839 թթ.)



Ն. Ն. Նովոսիլցև - տաղանդավոր դիվանագետ և պետական գործիչ, «Գաղանի կոմիտեի» անդամ (1761-1838 թթ.)



Ա. Ա. Արակչեև - զինվորական ու
ռազմական գործիչ (1769-1834 թթ.)



1812 թ. Հայրենական պատերազմի
հերոս, տաղանդավոր զորահրամանատար
ու դիվանագետ Մ. Բ. Վոստոզով
(1745-1813 թթ.)



Կ. Վ. Նեսսելրոդե Ռուսաստանի
կանցլեր, արտգործ. նախարար



Ա. Ա. Չարտորիչսկի - լեհ իշխան
«Գաղտնի կոմիտեի» անդամ



Պ. Բ. Բագրատիոն - 1812 թ.
Հայրենական պատերազմի հերոս



Մ. Բ. Բարկլայ դե Տոլլի - 1812 թ.
Հայրենական պատերազմի հերոս



Ավստրիայի կայսր Ֆրանց Առաջին



Պրուսիայի թագավոր
Ֆրիդրիխ Վիլհելմ Երրորդ



Ֆրանսիայի նշանավոր դիվանագետ
Մորիս Թալերան



Երկու կայսրերի՝ Ալեքսանդրի ու
Նապոլեոնի դիվանագիտական
մենամարտը
Էրֆուրտում



Առևտերլիցի «Երեք կայսրերի» ճակատամարտը



Ռուսաց կայսր Նիկոլայ Առաջին
(1825-1855 թթ.)



Ս. Ս. Ուլարով
«Պաշտոնական ժողովրդայնության
տեսության» գաղափարախոս



Բորոդինոյի ճակատամարտը



Վիեննայի վեհաժողովը



Ռուսական բանակի մուտքը Փարիզ

Արևմտականության ներկայացուցիչներ




Գեորգիտ Դ. Ի. Պաստել
զեկաբրիտական
«Հարավային ընկերության»
զեկավար (1793-1826 թթ.)



Ն. Մ. Մուրավյով զեկաբրիտական
«Հյուսիսային ընկերության»
զեկավար (1795-1843 թթ.)



Տ. Ն. Գրանովսկի (պատմաբան)



Ս. Մ. Մորովյով (պատմաբան)



Կ. Գ. Կավեկին (իրավաբան)



Պ. Ա. Անանևով (գրող)



Վ. Գ. Բելինսկի ուսանող
հրապարակախոս, քննադատ, գրող
(1811-1848 թթ.)



Ա. Բ. Գերցին (Յակովլև) ուսանող
հրապարակախոս, գրող «Գյուղացիական
սոցիալիզմի» տեսության հիմնադիր
(1812-1870 թթ.)



Վ. Գ. Բոսկին (գրող)



Ի. Ս. Տուրգենև (գրող)

Սլավոնասերների տեսաբան-հրապարակախոսներ



Կ. Ս. Ախաչիկով



Բ. Ս. Ախաչիկով



Բ. Վ. Կիրենսկի



Պ. Վ. Կիրենսկի

ցու նախաձեռնությունները և ուսական բարձրագույն հրամանատարությունների համաձայնությունները ստեղծված հայ կամավորական ջոկատները: Այդ է վկայում Թիֆլիսի ղինվորական նահանգապետ զեներալ Սիպյազիսի հայերին ուղղված կոչը կամավորական ջոկատներ կազմավորելու, ուսուցարական պատերազմին ավելի ակտիվ մասնակցելու մասին, որը հրապարակվեց պարբերական մամուլում: Ռուսական բանակի այս կարևորագույն հաղթանակը ըստ էության վճռեց պատերազմի ելքը, թեև ուղղակի գործողությունները շարունակվեցին ևս մի քանի ամիս: Այնուամենայնիվ, 1827 թ. նոյեմբերին բանակցությունները վերսկսվեցին Դեհկարհանում, որոնք ձախողվել էին Կարաղիաղինում: Այնտեղ՝ Թավրիզից 40 կմ հեռավորության վրա գտնվող գյուղում էր տեղակայված ուսական բանակի զորակայանը, ուր ժամանեց Աբաս-Միրզան: Հայերն անհամբեր սպասում էին բանակցությունների արդյունքներին՝ մեծ հույսեր կապելով դրանց հետ: «Թվում էր, թե Դեհկարհանում են... բոլոր հայերի հոգիները, բոլոր մտքերը, բոլոր ցանկությունները, - գրում էր Ս. Գլինկան, - թեքելով հայացքը Պարսկական Առյուծից, նրանք իրենց համար ուղենիչ էին ընտրում Ռուսաստանյան Արծվին»: Սակայն շահը և թագաժառանգը չէին ցանկանում կատարել տարածքային որևէ զիջում, անհաշտ դիրք գրավում, մանավանդ, որ շահի վրա ներգործում էին մի կողմից թուրքական ներկայացուցիչները, որոնք անխուսափելի համարելով հասունացող ուս-թուրքական պատերազմը փորձում էին ձախողել բանակցությունները, իսկ մյուս կողմից՝ Թեհրանի արքունիքում Ռուսաստանի նկատմամբ բացահայտ թշնամարար տրամադրված խմբավորման պարագլուխները: Սակայն կովկասյան կորպուսի նոր վճռական հաղթանակները վերջնականապես կտրեցին շահի համառությունը, վերջինս հարկադրաբար դադարեցրեց պատերազմը և հաշտություն խնդրեց Ռուսաստանից: Ռուսաստանը նույնպես դեմ չէր հաշտություն կնքել, մանավանդ, որ Պետերբուրգի բարձրաստիճան այրերը այլևս չէին տարակուսում ուս-թուրքական հասունացող պատերազմի անխուսափելիության մեջ: Այս ամենն, ի վերջո, հանգեցրեց Թուրքմենչայի հաշտության պայմանագրի կնքմանը, որը 1828 թ. փետրվարի 10-ին Ռուսաստանի անունից ստորագրեցին Պասկևիչը և ուսական արտաքին գործերի նախարարության պաշտոնական ներկայացուցիչ Սերբեզկովը, Պարսկաստանի կողմից՝ Աբաս-Միրզան: Ռուսական պատմագիտական և հասարակական քաղաքական միտքը Թուրքմենչայի պայմանագիրն անվանեց պանծալի, պատվավոր հաշտություն, քանզի Ռուսաստանը կարողացավ իրագործել իր արտաքին քաղաքական մտահղացումներն Անդրկովկասում:

Թուրքմենչայի հաշտության պայմանագրի երրորդ կետով պարսկական

չաճը իր անունից և իր թագաժառանգների և ժառանգորդների անունից ռուսական կայսրությունն է զիջում որպես նրա կատարյալ սեփականությունը Երևանի խանությունը՝ Արաքսի այս ու այն կողմերում և Նախիջևանի խանությունը: «19-րդ դարի քաղաքական ոչ մի իրադարձություն, - գրում է Հայ պատմաբան Մ. Ալավերդյանցը, - Հայ ժողովրդի համար այդչափ նշանակալից չի եղել, որքան Հիշատակված պարսկական այդ խղճուկ գյուղում (Թուրքմենչայում - Մ. Մ.) կնքված պայմանագիրը: Դրա ուժով Հայաստանի սիրտը՝ Արարատյան երկրամասը... մեկընդմիջտ դուրս էր գալիս պարսկական լծից և մտնում քրիստոնյա տերությունների Հողը հովանավորության ներքո»: Պայմանագրի վեցերորդ կետի համաձայն «Երկու բարձր պայմանավորվող կողմերը որոշեցին, որ սույն վարձահատուցման գումարը կազմելու է քսան միլիոն ռուբլի արծաթով»: Իսկ 15-րդ հոդվածը հնարավորություն էր ընձեռում բոլոր ցանկացողներին «միամյա ժամանակամիջոցում Պարսկական մարզից ազատ անցնել Ռուսական մարզերը... առանց հանդիպելու կառավարության կամ տեղական իշխանությունների կողմից հարուցված որևէ արգելքի»: Թեև հոդվածում Հայերը չեն հիշատակվում, այսուհանդերձ թե՛ ռուսական, թե՛ պարսկական պետական այրերը և դիվանագետները, բարձրաստիճան զինվորականությունը չէին տարակուսում, որ այն հիմնականում տարածվում է պարսկահայերի վրա: «Իրականացան, - այս առնչությամբ գրում է Ս. Գլինկան, - հայերի բերկրալից հույսերը... պայմանագրի տասնհինգերորդ հոդվածով»: Իսկապես Հայերը իրավունք ստացան անցնել ռուսական կայսրության սահմանը և բնակություն հաստատել իր հայրենիքի փոքրիկ ու գողտրիկ տարածքում՝ Հյուսիսարևելյան Հայաստանում: Կայսերական կառավարող շրջանների համար պարսկահայերի ներգաղթը կարևոր էր, քանզի, ինչպես գրում էր Պասկևիչը Դիբլիին, Ռուսաստանի սահմանամերձ ամայի հողերում հնազանդ, աշխատասեր և նվիրված ժողովրդի բնակեցումը կարող էր մեծ օգուտ բերել: Հետևաբար, Կովկասի կառավարչապետը փաստորեն հրաժարվեց տակավին մինչև Թուրքմենչայի պայմանագրի կնքումն ունեցած մտահղացումից՝ մոտ 80 հազար կողակներ վերաբնակեցնել Արևելյան Հայաստանում: Հայերի ներգաղթով, - գրում էր Գլինկան, - զգալիորեն ամրապնդվեցին ռուսական պետության հարավային սահմանները, որովհետև քրիստոնյա ժողովրդի բնակեցումն այդ տարածքում կարող էր հուսալի հենարան դառնալ Թուրքիայի ու Պարսկաստանի անբարեհաճ գործողությունները դիմադրավելու համար: Պոտտոյի կարծիքով ևս ներգաղթը չահավետ էր Ռուսաստանին, որովհետև կայսրությունը ձեռք բերեց «աշխատասեր և կարելի է ասել, Անդրկովկասում միակ երկրագործ ժողովրդին»: Պասկևիչը ներգաղթի կազմակերպումը հանձնարարեց գնդապետ Լազար Լազարյանին, որին հրահանգված էր Հայերի տունդարձն

իրագործել բացառապես կամավոր սկզբունքով, հայտարարել, թե նրանք կստանան բավարար չափով հող, կազատվեն վեց տարով հարկեր վճարելուց և երեք տարով բոլոր տեսակի պարհակներից: Հայերի ներգաղթը կազմակերպելու գործում մեծ էր նաև Պարսկաստանում ռուսական կայսրության լիազոր դեսպան, նշանավոր գրող և դիվանագետ Ա. Գրիբոյեդովի դերը, որին Պասկևիչն ուղարկեց մայրաքաղաք կայսրին հանձնելու Թուրքմենչայի հաղթական պայմանագիրը: Հետագայում՝ 1829 թ. հունվարի 30-ին Թեհրանում Գրիբոյեդովը սպանվեց մոլեռանդ ու ֆանատիզմով լի ամբոխի կողմից: Այդ ոճրագործությունը կատարեց ռուսական դեսպանատուն ներխուժած մայրաքաղաքի խաժամուժը: Ակնհայտ էր ու անվիճելի ներսես Աշտարակեցու ներդրումը, որը անուրանալի օգնություն ցույց տվեց ներգաղթի կազմակերպիչներին ու զլխավորողներին: Շուրջ 8 հազար հայ ընտանիքներ հաղթահարելով բազում դժվարություններ ու դրկանքներ, անցան Արաքս գետը և հաստատվեցին ռուսական կայսրությանը միացած հայկական տարածքում:

Հյուսիսարևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին և պարսկահայերի ներգաղթը հայրենիք կարևորագույն պատմական իրադարձություններ էին Հայ ժողովրդի քաղաքական կացությունում: Սակայն Հայկական մարզի վերացումը, Անդրկովկասում վարչաքաղաքական կամայական բաժանումները՝ առանց հաշվի առնելու պատմաազգագրական գործոնները, հայկական տարածքների բունակցումը տարբեր նահանգներին, փաստորեն ուղղվում էին Հայ ժողովրդի դեմ: Այսուհանդերձ, այս ամենը չեն կարող ստվերել Ռուսաստանին Հյուսիսարևելյան Հայաստանի միացման պատմաքաղաքական առաջադիմական նշանակությունը, թերևս այն գերագույն առումով, որ պատմական Հայաստանի հենց այս հատվածում շուրջ 90 տարի հետո վերականգնվեց Հայոց պետականությունը:

§ 2. ՌՈՒՍ-ԹՈՒՐԲԱԿԱՆ ՊԱՏԵՐԱՋՄԸ ԵՎ ԱՐԻԱՆՈՒՊՈԼՍԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Նիկոլայ Առաջինի կողմից Թուրքմենչայի պայմանագիրը վավերացվելուց և Երևանի ու Նախիջևանի խանություններից Հայկական մարզ կազմավորելու վերաբերյալ կայսրի հրովարտակի հրապարակումից հետո 1828 թվականի ապրիլին սկսվեց ռուս-թուրքական հերթական չալատերազմը: Ռազմական գործողությունները տեղի էին ունենում միմյանցից չափազանց մեծ հեռավորության վրա գտնվող երկու ռազմաճակատներում՝ Կովկասում և Բալկաններում: Այս պատերազմում արևմտահայերն աջակցում էին ռուսական բանակին՝ ակնկալելով նրա հաղթանակի շնորհիվ միավորվել արևելահայերի հետ, վերամիավորել իրենց հայրենիքը: Կով-

կայան ատանձին կորպուսը գեներալ Պասկևիչի գլխավորությամբ կարճ ժամանակում գրավեց Ախալքալաքը, Ախալցխան, Կարսը, Արդահանը, Բայազետը: Հայ ժողովրդի՝ ռազմական գործողություններին մասնակցելու պերճախոս վկայությունն է գեներալներ Պոպովի և Պանյուտինի գլխավորած Բայազետի հերոսական պաշտպանությունը, որին մասնակցեցին 1000 հայ կամավորներ: Ծուտով ռուսները գրավեցին Արևմտյան Հայաստանի կենտրոն էրզրումը (Կարինը): Ռուս զինվորները ճանապարհին ալանատես էին դառնում ամայացած գյուղերի, թուրքերը Հայ բնակչությանը բռնություններ տեղահանում էին երկրի խորքերը: Պասկևիչի ռազմական ծրագրի մեջ մեծ տեղ էր հատկացված Անապայի գրավմանը, որը Օսմանյան կայսրության սևծովյան միջնաբերդերից մեկն էր: Ռուսաստանը XVIII դարի երկրորդ կեսին և XIX դարի սկզբին տեղի ունեցած ռուս-թուրքական պատերազմների ժամանակ գրավում էր Անապան, բայց Հաշտուխյան պայմանագրեր կնքելուց հետո ինչ-ինչ պատճառներով վերադարձնում թուրքիային: Երջափակելով Անապան ծովից և ցամաքից՝ ռուսական կորպուսը 40 օր հետո՝ 1828 թ. հուլիսի 28-ին վերջապես գրավեց Անապան: Բալկանյան ռազմաճակատում ռուսները, անցնելով Դանուբ գետը, գրավեցին Վառնան, Շումլան, Սիլիստրիան, սրբնթաց գրոհով վերցրին Ադրիանուպոլիսը և ընդհուպ մոտեցան Կ. Պոլսի մատույցներին, դրանով իսկ հարկադրելով սուլթանին շտապ բանակցություններ սկսելու համար ուղիներ փնտրել ու կնքել Հաշտուխյուն: Ռուսական կայսրի ցանկությունը Ադրիանուպոլիս մեկնեցին նրա ամենավստահելի գործիչները, գեներալ կոմս Ալեքսեյ Օպովը, որը Իվան Դիբիչ-Չարայկանսկու հետ միասին պետք է հաղթանակը ապահովեին նաև դիվանագիտական ճակատում: Սուլթանի ներկայացուցիչները Ադրիանուպոլիս ժամանեցին օգոստոսի 15-ին, նրանց ուղեկցում էր պրուսական բանակի մայոր Կիստերը, որը Պոլսում Անգլիայի ու Ֆրանսիայի դեսպաններ՝ Հորդոնի և Հիլեմինոյի հետ մասնակցեց Դիվանի բոլոր նիստերին: Դիբիչը թուրքական լիազորներին ներկայացրեց արտաքին գործերի նախարար կոմս Նեսսելրոդի հետ համաձայնեցված Ռուսաստանի պահանջները, որտեղ սակայն չկար ոչ մի հիշատակում Կարսի, Արդահանի, Բաթումի, Բայազետի մասին: Բայց այդ ավելի քան համեստ պահանջները սուլթանի լիազորները սկսեցին վիճարկել, նույնիսկ փորձեցին մերժել:

Ռուսները պահանջում էին իրենց հանձնել Փոթին, Ախալցխան, Ախալքալաքը, իսկ թուրքերը, ստանալով Անգլիայի, Ֆրանսիայի, Պրուսիայի ներկայացուցիչների աջակցությունը՝ մերժում: Կոմս Դիբիչը դիմեց ռազմացույցի և ռուսական առաջապահ զորքերը շարժվեցին դեպի Կ. Պոլիս: Նրանք գտնվում էին մայրաքաղաքից ընդամենը 60 վերստ հեռավորության վրա: Կայսրը լիովին հավանություն տվեց Դիբիչի ռազմական մար-

տավարությունը: «Բանակցությունների ձախողման դեպքում, - գրում էր նա, - մեզ անհրաժեշտ է անհապաղ շարժվել դեպի Կոստանդնուպոլիս և գրավել այնտեղ Դարդանելը՝ վստահ լինելու համար, որ հիշատակված հյուրերը (Անգլիայի, Ֆրանսիայի, Պրուսիայի - Մ. Մ.) չեն հայտնվի միջամտելու և վնասելու մեր գործին... Դարդանելի մոտ կանգնելով, դուք, հավանաբար, կարգելեք, բացի մեր, մնացած բոլոր նավերի անցումը, իսկ եթե ուժ գործադրեն, դուք պատասխանեք Հրանթիային համազարկով»: Ռուսների առաջխաղացումը դեպի Կ. Պոլիս խուճապ առաջացրեց Օսմանյան պետության վերնախավում, ուստի թուրքերը շտապեցին ընդունել ռուսների բոլոր պահանջները: Ադրիանուպոլսի Հաշտուխյան պայմանագիրը ստորագրվեց 1829 թ. սեպտեմբերի 2-ին (14-ին) թուրքական սուլթանների հին պալատում: Այն կազմված էր 16 հոդվածից, Մոլդովայի ու Վալախիայի մասին լրացուցիչ ակտից և Ռուսաստանին ռազմատուգանք վճարելու մասին բացատրական ակտից: Պայմանագրի համաձայն՝ Սև ծովի արևելյան ափերը Փոթի նավահանգստով, Ախալքալաքը, Ախալցխան անցնում էին Ռուսաստանին: Սակայն 4-րդ հոդվածով «Ռուսական կայսերական Արքունիքը, Մեծ Դուռը տալիս է և վերադարձնում... Կարս քաղաքը՝ իր փաշայությունը հանդերձ, Բայազետ քաղաքը՝ իր փաշայությունը հանդերձ, էրզրում քաղաքը՝ իր փաշայությունը հանդերձ...»: Սա քաղաքական ու դիվանագիտական լուրջ զիջում էր թուրքիային ու լուրջ հարված արևմտահայության ակնկալիքներին: Բարձր Դուռը, ի հատուցումն վնասների ու կորուստների, Ռուսական կայսերական արքունիքին 18 ամսվա ընթացքում պարտավորվում էր վճարել մեկ միլիոն հինգ հարյուր հազար հոլանդական չերվոնեց (հոդ. 8): Իսկ 13-րդ հոդվածով «երկու կողմերի հպատակներին, որոնք բնակվում են Բարձր Դուռը վերադարձվող կամ Ռուսական կայսերական Արքունիքին զիջվող մարզերում, տրվում է նաև 18-ամսյա ժամանակամիջոց... որպեսզի նրանք, եթե հարկավոր համարեն, կարողանան իրենց... պատերազմից առաջ կամ հետո ձեռք բերած սեփականության վերաբերմամբ անել կարգադրություն և իրենց զրամազուլուններով ու շարժական գույքով անցնել պայմանավորվող տերություններից մեկի կամ մյուսի երկիրը»: Հետևապես, Ադրիանուպոլսի Հաշտուխյան պայմանագրում ևս Հայերը չեն հիշատակված, այսուհանդերձ, 1829-1830 թթ. էրզրումից, Կարսից, Բայազետից ներգաղթում և ռուսական տիրապետության տակ են անցնում շուրջ 80-90 հազար հայեր, որոնք նույնպես 6 տարով աղատվում էին հարկերից, իսկ կարիքավոր ընտանիքներին տրվում էր զրամական նպաստ: Արևմտահայերը հարկադրված էին բավարարվել միայն ներգաղթելու հնարավորությունից: Պասկևիչը 1829 թ. հոկտեմբերի 10-ի՝ կայսրին հղած իր զեկուցագրում անհրաժեշտ էր համարում նրա ուշադրությունը հրավիրել քաղաքական

այս գործընթացի վրա: «Այստեղ, Ասիայում, Համընդհանուր ցնծության մեջ, սույն հաշտության մասին լուրը արդարացի Հուսալքություն մեջ խորասուզեց ժողովրդի մի հատվածին (արևմտահայության – Մ. Մ.), որն արժանի է մեր կարեկցությանը... Ձեր կայսերական մեծության բանակը չէր կարող երկուդ կրել հայկական ու հունական բնակչության թշնամական գործողություններից»: Նա փաստերով վկայում էր այն հսկայական օգնությունը, որ ռուսական բանակին ցույց տվեցին հայերը ռուս-թուրքական պատերազմի ժամանակ: «Բայագետում,- գրում էր գլխավոր հրամանատարը,- երկու հազար հայեր մարտնչում էին մեր զինվորների շարքերում... Կարսում հայերից կազմվեց գումարտակ և 800 հեծելազորայիններ մեր սահմանները պաշտպանում էին հարձակումներից: Եվ վերջապես,- ամփոփում է իր միտքը գեներալը,- էրզրումում քրիստոնյա բնակչության մեծ մասը իր քահանայապետով դուրս եկավ ռուսական զորքերին ընդառաջ»:

Պասկևիչն այդ զեկուցմամբ փորձում էր կայսրին տեղեկացնել արևմտահայերին սպառնացող վտանգը, կայսրից ստանալ անհրաժեշտ միջոցներ՝ ներգաղթը կազմակերպելու և դրանով իսկ նրանց փրկելու թուրքական յաթաղանից: «Սույն ընտանիքների թիվը,- մատնանշում է Պասկևիչը,- որոնց անխուսափելի վտանգ է սպառնում, կարող է հասնել մինչև 10 հազարի: Ձեր ուշադրությանն արժանացրեք այդ դժբախտ զոհերին և արգելեք, որ օսմանցիների ինքնիշխանությունը վրեժխնդիր լինի նրանց այն համակրանքի համար, որ նրանք ցույց տվեցին Ռուսաստանին»: Պասկևիչը խնդրում էր իրեն իրավունք վերապահել այդ ընտանիքները վերաբնակեցնել ռուսաց կայսրության կազմում գտնվող հայկական տարածքներում: Կայսրը հավանություն տվեց իր ամենասիրելի ու ամենավստահելի գեներալի մտահղացումներին: Արևմտահայերի ներգաղթը նույնպես համապատասխանում էր Ռուսաստանի ռազմաքաղաքական ծրագրերին, որով միանգամայն պարզ էր դառնում արևմտահայերի դրությունը Պասկևիչի հետաքրքրության և ներգաղթը կազմակերպելու նրա շահագրգռվածության պատճառը: Արևմտահայության ներգաղթը կարևոր իրադարձություն էր հայ ժողովրդի կյանքում: Հայության մի ստվար հատված դուրս էր գալիս բիրտ ու բռնակալ պետության արյունոտ ճիրաններից՝ այդ կերպ փրկվելով 19-րդ դարի վերջին արդուհամիդյան կոտորածից և XX հարյուրամյակի սկզբին երիտթուրքերի կազմակերպած ցեղասպանությունից: Ազրիանուպոլսի պայմանագիրը ժամանակավորապես ուժեղացրեց Ռուսաստանի դիրքերը Բալկաններում: Այսուհանդերձ, հաշտության պայմանագիրը համեմատաբար չափավոր էր պատերազմում տարած ռազմական հաղթանակի համաչափության տեսանկյունից: Եվ օրինաչափ է, որ ի տարբերություն Թուրքմենչայի պայմանագրի, Ազրիա-

նուպոլսում կնքված հաշտությունը նույնպիսի դրական և լայն արձագանք չգտավ ռուսական հասարակության մեջ, թեև պատերազմն ավարտվեց Ռուսաստանի հաղթանակով: Ավելին, հնչեցին քննադատություններ Նեսսելրոդեի և Դիրիչի հասցեին, որովհետև նրանք չկարողացան լիովին օգտվել հաղթանակից, ցուցաբերեցին ավելորդ զգուշավորություն կապված եվրոպական մեծ տերությունների կողմից սպառնացող վտանգը գերազնահատելու հետ: Հետևաբար, եթե չլինեի շտապողականությունը՝ անհարկի մտավախությունը և ցուցաբերվեի դիվանագիտական համապատասխան ճկունություն և հատկապես վճռականություն, կամք, ասպա Օսմանյան կայսրության ասիական սահմաններում կարող էին կատարվել էական փոփոխություններ, որին ձգտում էր հայ ժողովուրդը, նրա թե՛ արևելահայ և թե՛ արևմտահայ հատվածները: «Իր քաղաքական ողջ կարևոր նշանակությամբ,- գրում է ռուս հետազոտող Ս. Ժիգարևը,- Ազրիանուպոլսի հաշտության պայմանները ծայրահեղ չափավոր էին»: Ուստի միանգամայն հասկանալի է, որ արտասահմանյան մամուլում գովաբանում էին Նիկոլայ Առաջինի դրսևորած «անսահման մեծահոգությունը և ծայրահեղ չափավորությունը», որը նշանակում էր պահպանել Օսմանյան կայսրության ասիական տարածքները, որոնք հետագայում դառնալու էին ռազմական հենակետ Ռուսաստանի դեմ: Այս տեսակետից միանգամայն տեղին է հիշատակել ավստրիացի հայտնի դիվանագետ Գենցի (Գենտցի) գնահատականը, որին անդրադարձել է Ժիգարևը: «Չափավորությունը հարաբերական հասկացություն է, բայց ... նման դեպքում այն պետք է հավասարապես տարածվի ինչպես հաղթողի, այնպես էլ պարտվողի վրա... Ես չեմ ասում,- նշում էր դիվանագետը,- որ նրանց (ռուսների – Մ. Մ.) ուժերը կբավականացնեն կործանելու թուրքական թագավորությունը եվրոպայում՝ չենթարկվելով եվրոպական հակամարտությանը: Բայց նրանք կարող էին պահանջել իրենց զիջել Հայաստանի կեսը և ... ընդ որում, ո՛չ Թուրքիան ... ո՛չ էլ նրա բարեկամներից որևէ մեկը չէր ունենա դա արգելելու լուրջ ցանկություն»: «Ինչով էր ղեկավարվում կայսր Նիկոլայ Առաջինը, չգիտեմ, բայց ... նա կարող էր ավելի առաջ գնալ, քան զնաց իրականում, և նրա քաղաքականության կողմնակիցներն իրավունք ունեն գովաբանել նրա չափավորությունը»: Հատկանշական է, որ Ազրիանուպոլսի պայմանագրից խիստ դժգոհ մնաց Պասկևիչը, որը հասկանում էր գրավված տարածքները ռուսական կայսրությանը միակցելու ռազմաքաղաքական կարևորությունը: Նեսսելրոդեին գրած նամակում Պասկևիչը հիմնավորում էր Կարսի, Բայագետի և թուրքական տիրապետության տակ թողնված մյուս շրջանների՝ Ռուսաստանին անցնելու անհրաժեշտությունը: Թե ինչու Պասկևիչի առաջարկներն անտեսվեցին, պարզաբանվում է Նեսսելրոդեի պատասխան նամակում: «Մեր հաջո-

դուժյունները ներկայիս պատերազմում,- գրում էր նա,- անկասկած հույս են ներշնչում կնքելու շահավետ հաշտություն: Բայց մեր գործերը Թուրքիայի հետ եվրոպական քաղաքականության ընդհանուր համակարգում կազմում են մի օղակ, հետևաբար, դեռևս չի կարելի վստահություն ասել, թե հանգամանքներն ինչպիսի սահմանագիծ կթույլատրեն հաստատելու մեր և Թուրքիայի միջև, ինչպես Եվրոպայում, այնպես էլ Ասիայում»: Այս պատասխանը, բնականաբար, չէր կարող բավարարել վճռական, ինքնավստահ կայսրի վրա մեծ ազդեցություն ունեցող Պասկևիչին: Եվ օրինաչափ է, որ նա վերստին, այս անգամ արդեն էրզրումի (Կարին) գրավումից հետո, դիմեց Նեսսելրոդին՝ հատկապես պնդելով Կարսի փաշայության միացման անհրաժեշտության մասին: «Ինքն իսկ՝ բնությունը մատնանշում է,- գրում է Պասկևիչը,- թե որտեղ պետք է ընդհատվեն մեր ձեռքբերումները, և վաղ թե ուշ անպայման հարկ կլինի առաջ մղել սահմանները, մինչև այն վայրերը, որոնք մատնանշված են իմ կողմից և խիստ ցանկալի կլինեն մեծ և այդքան անհրաժեշտ օգուտները չվստահել անորոշ ապագային»: Պասկևիչի առաջարկը և ցանկությունը, արդարև դարձավ ձայն բարբառոտ հանապատի, որովհետև նրա նամակները գրվում էին մահուդի տակ և Նեսսելրոդին անգամ անհրաժեշտ չէր համարում ժամանակին դրանց մասին տեղեկացնել Դիրիչին: Իսկ Պասկևիչը կանխատեսելով, որ արտգործնախարարի հետ իր գրազրույթունից ոչինչ չի ստացվի, սուրհանդակ ուղարկեց անմիջապես Դիրիչի մոտ: Սուրհանդակն Ադրիանուպոլիս հասավ հաշտության պայմանագրի վերջնական ստորագրումից երեք օր հետո: Կոմս Դիրիչը Պասկևիչի մտադրություններին անտեղյակ, առանձնապես կարիք չուներ մտահոգվելու կովկասյան երկրամասի սահմանների շահավետության մասին: Անգամ Դիրիչը շատ էր ամոսոսում, որ ինքը ժամանակին չի իմացել ասիական սահմանների վերաբերյալ Պասկևիչի մտահոգումները: Հավանաբար, Նեսսելրոդին, չցանկանալով բարդացնել բանակցությունների ընթացքը և ձգտելով շուտափույթ ավարտել հաշտության պայմանագրի կնքումը, նպատակահարմար չգտավ կայսրին իրազեկ պահել գեներալի մտահոգումների մասին, մանավանդ որ արտգործնախարարը քաջատեղյակ էր, թե որքան մեծ էր Պասկևիչի ազդեցությունը կայսրի վրա: Ուշագրավ է, որ կայսրը, ծանոթանալով պայմանագրին, հավանություն տվեց, բայց մի հողված. կարծես ամոսոսանք առաջացրեց՝ դա Կարսի վերադարձն էր Թուրքիային: Կայսրի առաջարկով փորձ արվեց համոզել Թուրքական պատվիրակությանը, ռազմատուգանքի մի մասը փոխհատուցվի տարածքային նոր զիջումներով Ասիայում: «Բաթումը և Կարսը,- գրում էր կայսրը Դիրիչին,- արժեն, որպեսզի դրանց համար զոհաբերվի մի քանի միլիոն: Բայց արդեն ուշ էր, պատեհ առիթը բաց էր թողնված, որից չհապաղեցին օգտվել Թուրքերը: Բայց

Թուրքերը խոհեմաբար խուսափեցին նման գործարքից և այն, ինչ ստորագրվեց Ադրիանուպոլսում, չէր կարող շտկվել նոր ուղղումներով Պետերբուրգում»: Ադրիանուպոլսի պայմանագրի չափավորությունը ռազմաքաղաքական յուրջ դժվարություններ ստեղծեց հետագայում ծագած ինչպես Արևելյան (Ղրիմի), այնպես էլ հատկապես 1877-1878 թթ. պատերազմների ժամանակ: Իսկ 1855 և 1877 թթ. ռազմաքաղաքական իրադարձությունները, հատկապես ռուսական զորքերի կողմից մեծ զոհերի գնով Կարսի գրավումը, կրկին ու կրկին հիշեցրին Դիրիչի ու վկայեցին Նեսսելրոդի կատարած սխալների մասին:

§ 3. ՂՐԻՄԻ (ԱՐԵՎԵԼՅԱՆ) ՊԱՏԵՐԱՋՄԸ

19-րդ դարի 40-ական թվականների վերջին և 50-ականների սկզբներին վերստին սրված Արևելյան հարցը, ի վերջո, հանգեցրեց եվրոպական մեծ պատերազմի, որը միջազգային հարաբերությունների համակարգում հայտնի է Ղրիմի կամ Արևելյան պատերազմ անունով: Այդ պատմափուլում մեծ տերությունների, ներառյալ և Ռուսաստանի միջև ծավալվեց համառու անհաշտ ռազմադիվանագիտական պայքար Մերձավոր Արևելքում և Բալկաններում ռազմավարական, միջազգային քաղաքական դիրքերն ամրապնդելու համար: Ռուսաստանի կայսր Նիկոլայ Առաջինը համոզված էր, որ միջազգային հարաբերությունների համակարգում ստեղծվել են նպաստավոր պայմաններ Սևծովյան նեղուցներում հաստատելու իր իրավաքաղաքական գերիշխանությունը և փակելու Բոսֆորի ու Դարդանելի նեղուցները օտարեկրյա ռազմանավերի համար, անվտանգ դարձնելու կայսրության հարավային սահմանները, ապահովելու սեփական նավերի ազատ ելքն ու մուտքը Սև ծովից Միջերկրական ծով: Նրա կարծիքով նպատակին հասնելու ճանապարհին անհրաժեշտ էր առաջին հերթին ստանալ Անգլիայի համաձայնությունը, որը կայսրը ծրագրում էր իրագործել նրան մեծ զիջումներ կատարելու միջոցով: Այս ըստ էության անիրատեսական մտահոգումը ենթադրում էր ռուս-անգլիական սերտ համագործակցություն հաջողության նվազագույն հնարավորությամբ: Դեռևս 1844 թ. սկզբին կայսրն ակնարկեց, թե ինքը պատրաստ է պաշտոնապես այցելել Անգլիա ու հանդիպել Վիկտորյա թագուհու հետ: Նրա խնդրանքը բնականաբար բավարարվեց և 1844 թ. մայիսի 31-ին Նիկոլայն իր չքախմբով արդեն գտնվում էր Վուլվիչում: Անգլիական արքունիքը Ռուսաստանի կայսրին ընդունեց ընդգծված հանդիսավորությամբ, որը սովորական երևույթ էր նրա համար, քանզի այդպես էին ամենուր դիմավորում իրեն՝ միապետական Եվրոպայի անասանությունների զլխավոր երաշխավոր

րին: Այդպիսի մթնոլորտը Հնարավորութուն էր տալիս կայսրին անկաշկանդ, առանց ավելորդ զգուշութեան բանակցութիւններ վարել «Հիվանդ մարդու» հարուստ ժառանգութեան յուրացման շուրջ: Նիկոլայի Հիմնական սխալներից մեկն արտաքին քաղաքականութեան մեջ այն էր, որ նա պարզապես գերազնահատեց Օսմանյան կայսրութեան ներքին արագ փլուզման և շուտափույթ կործանման Հնարավորութիւնը: Վիկտորյա թագուհու հրավերով կայսրը Լոնդոնից մեկնեց Վինձոր, հանդիպեց ու զրուցեց անգլիացի պետական գործիչների հետ: Կայսրը ներկայացրեց Արևելյան հարցի լուծման իր պատկերացումները, չհանդիպելով լուրջ առարկութեան, համենայն դեպս այդպես էր մտածում ինքը, որն ընդհանուր առմամբ գոհ մնաց Անգլիա կատարած իր պաշտոնական այցից: Իրականում նա պարզապես գերազնահատեց իր զրուցյցների ու հանդիպումների նշանակութիւնը, քանզի Անգլիայի փորձված դիվանագետները չէին շտապում բացել իրենց քաղաքական իսկական մտահղացումները, ժամանակից շուտ հակադրվել Ռուսաստանին, կայսրին դարձնել Անգլիայի թշնամի, ուստի և տալիս էին ընդհանուր, որոշակի պատասխանատվութիւն չստանձնող բանավոր խոստումներ:

1846 թ. դեկտեմբերին Վիննայում գտնվելու և Մետերնիխի հետ Օսմանյան կայսրութեան ապագա ճակատագրի մասին զրույցի ընթացքում Նիկոլայ Առաջինը անհրաժեշտ համարեց ուղղակի նախազգուշացնել, որ եթե այն փլուզվի, ապա ինքը ոչ մեկին չի դիջի Կ. Պոլսը: Իսկ եթե, այնուամենայնիվ, որևէ մեկը փորձի զորք մտցնել այնտեղ, ապա ինքը՝ կայսրը ավելի շուտ կմտնի Կ. Պոլիս: Իսկ եթե մտնի այնտեղ, ապա այնտեղ էլ կմնա: Սա ավելի շուտ սպառնալիք էր, քան ժառանգութեան բաժանման առաջարկ: Ղրիմի պատերազմի դիվանագիտական նախապատրաստման և Արևելյան ճգնաժամի խորացման ժամանակ տեղի ունեցավ համաեվրոպական նշանակութեան զաղափարաքաղաքական խոշոր իրադարձութիւն, որն էլ ավելի ամրապնդեց Ռուսաստանի դիրքերը միջազգային ասպարեզում, մեկ անգամ ևս համոզեց Նիկոլային արագացնել իր արտաքին քաղաքականութեան գլխավոր ուղղութեան իրազորումը: 1848-1849 թթ. եվրոպայում ծավալված հեղափոխութեան հզոր ալիքը լուրջ մտաւախութիւն պատճառեց եվրոպական միապետներին: Ավստրիայի երիտասարդ կայսր Ֆրանց Իոսիֆը և Պրուսիայի թագավոր Ֆրիդրիխ-Վիլհելմ Դ-ն իրենց երկրներում ստեղծված հեղափոխութիւնները ճնշելու գործում, ոչ առանց հիմքի, մեծ հույսեր էին կապում զորեղ «ավագ եղբոր» Նիկոլայ Ա-ի հետ: Եվ «թանկագին Նիկսը», այդպես էր սովորաբար դիմում իր փեսային՝ ուսաց թագավորին Ֆրիդրիխ-Վիլհելմը, հուսախաբ չարեց նրան, քանզի «թանկագին Ֆրիցը», ինչպես նրան անվանում էր

Նիկոլայը, ոչ միայն իր կնոջ եղբայրն էր, այլև գլխավոր դինակիցը «Սրբազան դաշինքի» շրջանակներում: Ավելի մեծ էր ուսաց կայսրի զորեղ աջակցութիւնն Ավստրիայի միապետ Ֆրանց-Իոսիֆին, հատկապես ակրնհայտ էր նրա վճռորոշ դերը հեղափոխութիւնը Հունգարիայում ճնշելու գործում, որով ըստ էութեան փրկվեց վերջնական փլուզումից ավստրիական բազմազգ կայսրութիւնը: Եվ օրինաչափ է, որ Ավստրիայի միապետի վստահելի անձը՝ դեներալ-լեյտենանտ կոմս Կարոզան, Վարչավայում ընդունելութեան ժամանակ հրապարակավ ծնկաչոք նետվեց Լեհաստանի փոխարքա Իվան Պասկևիչի առաջ և համբուրելով նրա ձեռքերը աղաչում-պաղատում էր փրկել ավստրիական կայսրութիւնը: Հետևաբար, ձեռնարկելով լայնածավալ դիվանագիտական նախաձեռնութիւն Օսմանյան Թուրքիայի դեմ պատերազմ սկսելու համար, կայսրը բոլոր հիմքերն ուներ համոզված լինելու համար, որ Ավստրիան ու Պրուսիան, եթե անգամ չաջակցեն ու չդաշնակցեն իր հետ, ապա գոնե չեն խոչընդոտի իր մտահղացումների իրագործմանը: Նիկոլայ Առաջինը չէր կասկածում, որ ֆրանսիան այդ պահին չափազանց թույլ է, և նրա նոր կայսր Լուի Նապոլեոն Երրորդը՝ չի համարձակվի երկիրը ներքաշել իր համար անիմաստ, պետական շահերը չչոչափող հեռավոր ուս-թուրքական պատերազմի մեջ: Գերազնահատելով անգլո-ֆրանսիական հակասութիւնների խորութիւնը, նա բացառում էր Անգլիայի և Ֆրանսիայի միասնական ճակատով գործելու հնարավորութիւնը: Իրականում երկու տերութիւնները Ռուսաստանի առաջխաղացումը կասեցնելու և Մերձավոր Արևելքում նրա դիրքերը թուլացնելու նպատակով պատրաստ էին միառժամանակ մոռանալ եղած հակասութիւնների մասին ու հանուն ընդհանուր շահերի համատեղ գործել իրենց մրցակցի դեմ: Մանավանդ որ Ֆրանսիան 1848-1852 թթ. տեղի ունեցած հեղափոխութիւնից, սոցիալական ցնցումներից, հեղաշրջումից հետո դեռևս ուշքի չէր եկել, ուստի և ի վիճակի չէր Ռուսաստանի համար դառնալ լուրջ հակառակորդ: Մինչդեռ Լուի Նապոլեոնին երկրի ներքաղաքական վիճակը կայունացնելու համար անհրաժեշտ էր հաղթական մի պատերազմ ու հաղթողի դափնիներ, որոնք, անշուշտ, կամրապնդեին նրա դեռևս խախուտ իշխանութիւնը: Պատերազմը իբրև քաղաքականութեան միջոց, դարձել էր «Կրտսեր կամ Փոքր Բոնապարտի» կողմից ստեղծված վարչաձևի անքակտելի մարտավարութիւնը, որի օգնութեամբ նա հույս ուներ վերացնել ատելի «Վիննայի համակարգը», որի գլխավոր երաշխավորողը շարունակում էր մնալ կայսերական Ռուսաստանը: Ղրիմի կամ Արևելյան պատերազմի սանձաղերծման համար առիթ դարձավ կաթիլի և ուղղափառ եկեղեցիների միջև Պաղեստինի սրբավայրերի համար սրված պայքարը, որոնցից յուրաքանչյուրը ցանկանում էր հաստատել իր

Հովանավորությունը: Թե՛ Ֆրանսիան, թե՛ Ռուսաստանը Հիմնավորելով իրենց «օրինական իրավունքները» քրիստոնյա սրբավայրերի նկատմամբ, որպես կանոն Հենվում էին Օսմանյան կայսրության Հետ կնքված պայմանագրերի վրա: Լուի Նապոլեոնը դեռևս Ֆրանսիայի նախագահ եղած ժամանակ պաշտոնապես հայտարարել էր Օսմանյան կառավարությանը, թե ցանկանում է վերականգնել ու պահպանել Օսմանյան պետության կողմից 1740 թ. հաստատված կաթոլիկական եկեղեցու բոլոր իրավունքներն ու արտոնությունները Երուսաղեմի քրիստոնյա տաճարների նկատմամբ: Իր Հերթին, Ռուսաստանը պահանջում էր սուլթանից հավատարիմ մնալ 1774 թվականին կնքված Բյուչուկ-Կայնարջի պայմանագրի այն կետերին, որոնք համապատասխան արտոնություններ էին տալիս ուղղափառ եկեղեցուն, ապա վերստին հաստատվել հաջորդ պայմանագրերում: Օսմանյան կայսրությունում ուղղափառ բնակչությունը 19-րդ դարի առաջին կեսերին հասնում էր 12-14 մլն, Հեսուարար պայքարը սրբավայրերի վրա վերահսկողություն սահմանելու ուղղությամբ, ի սկզբանե, դուրս էր եկել գուտ դավանաբանական շրջանակներից և ստացել էր քաղաքական նշանակություն: Սուլթանը որոշ տատանումից ու խուսանավումից հետո ի վերջո նախապատվությունը տվեց Ֆրանսիայի կայսրին: Դա սրեց առանց այն էլ բարդ ուս-թուրքական միջպետական հարաբերությունները, քանզի սուլթանի նման որոշումը Ռուսաստանի կայսրը համարեց անօրինական: Ռուս-թուրքական պայմանագրերը, քրիստոնյա ժողովուրդներին հովանավորելու Ռուսաստանի քաղաքականությունը առարկայորեն միահյուսվում էին նրա պարտավորությունների ընդհանուր համակարգի մեջ և դրանց իրագործումից ու պահպանումից էր զգալիորեն կախված սեփական քաղաքական ազդեցությունը Բալկաններում և Մերձավոր Արևելքում: Սուլթան Աբդուլ-Մեջիդի վրա դիվանագիտական ճնշում գործադրելու նպատակով Նիկոլայ Առաջինը որոշեց Կ. Պոլիս ուղարկել արտակարգ դեսպանություն, իսկ Ա. Մենչիկովին նշանակեց արտակարգ ու լիազոր դեսպան թուրքիայում: Մենչիկովը համոզված էր, որ իր կայսրին չեն գոհացնի սուլթանի մասնակի զիջումները, ուստի և Կ. Պոլսում, նա որպես արտակարգ դեսպան պետք է դիմեր վճռական միջոցների, զրույցների ժամանակ ընտրել կոչտ և սուր, կտրուկ ու անհաշտ մարտավարություն, իսկ անհրաժեշտության դեպքում չէր բացառվում թուրքիային ներկայացնել վերջնագիր: Եթե նկատի ունենանք, որ սուլթանն Անգլիայի ու հատկապես Ֆրանսիայի անմիջական աջակցության պայմաններում հազիվ թե ընդուներ Մենչիկովի պահանջները, ապա պարզ կդառնա, որ Ռուսաստանի դեսպանի դիվանագիտական առաքելությունն արդեն նախաշեմից ձախողված էր, որն էլ ավելի էր սրելու երկկողմանի հարաբերությունները,

ապակայունացնելու էր քաղաքական միջնորդը և անխուսափելի էր դարձնելու պատերազմը: Աբդուլ-Մեջիդը, ընդունելով Անգլիայի ու Ֆրանսիայի դեսպանների հավաստիացումները իրեն անվերապահորեն աջակցելու մասին, ստեղծված իրադրության մեջ տեսավ բացառիկ հնարավորություն արևմտյան այդ հզոր տերությունների օգնությամբ հաղթել իր դարավոր թշնամուն՝ Ռուսաստանին: Սուլթանը ցանկանում էր ամրապնդել իր խարխլված դիրքերը Եվրոպայի հարավ-արևելքում, Օսմանյան կայսրության հիվանդ մարմնի մեջ հաղորդել նոր լիցք: Կ. Պոլսում հաղթեցին ռազմատենչ ուժերը, որոնք՝ 1853 թ. սեպտեմբերի 26-ին սուլթանին առաջարկեցին սկսելու ռազմական գործողությունները: Հոկտեմբերի 8-ին Բալկաններում տեղակայված թուրքական բանակի գլխավոր հրամանատար Օմեր փաշան պահանջեց 15 օրվա ընթացքում դուրս բերել ուսական զորքերը Դանուբյան իշխանություններից: 1853 թ. հոկտեմբերի 16-ին Աբդուլ-Մեջիդը հայտարարեց, որ թուրքիան պատերազմական դրության մեջ է Ռուսաստանի հետ: 1853 թ. հոկտեմբերի 20-ին (նոյեմբերի 1-ին) Ռուսաստանի կայսրը ստորագրեց «Օսմանյան թուրքիայի հետ պատերազմի մասին» հրովարտակր: Պատերազմը սկսվելուց հետո ռուսական ցամաքային բանակը և նավատորմը թշնամու նկատմամբ ձեռք բերեցին ակնառու հաղթանակներ: 1853 թ. նոյեմբերի 18-ին (նոյեմբերի 30-ին) ռուսական նավատորմը Սինոպի ծովախորշում փոխծովակալ (հետագայում ծովակալ) Պ. Նախիմովի գլխավորությամբ ծանր պարտության մատնեց թուրքերին, որոնք կրեցին մեծ կորուստներ, թշնամու նավատորմը, փաստորեն, զլխովին ջախջախվեց: Վիրավոր ծովակալ Օսման փաշան գերի ընկավ, իսկ հաղթանակած ռուսական նավատորմը վերադարձավ Սևաստոպոլ: Սինոպի հաղթանակից ոգեշնչված հայազգի կոմպոզիտոր, սեծոյան փողային նվագախմբի ղեկավար Անդրիաս Քաղցածյանը գրեց «Սինոպյան քայերգը»: Այդ քայերգի հնչյունների տակ Սևաստոպոլը մեծ հանդիսավորությամբ դիմավորեց Նախիմովի հաղթական վերադարձը: Սինոպը դարձավ ռուսական ռազմական արվեստի լավագույն էջերից մեկը և ոսկե տառերով գրվեց Ռուսաստանի հաղթական ճակատամարտերի տարեգրության մեջ: Կայսրը Նախիմովին պարգևատրեց հազվագեյ շնորհավոր Սուրբ Գեորգիի Երկրորդ աստիճանի զինվորական շքանշանով, շնայլորեն պարգևատրեց ամբողջ նավախմբի անձնակազմին: Ծովակալը դարձավ ազգային հերոս, նրա փառքը տարածվեց ամբողջ երկրում: Ավելին, կայսերական մեծությունը ցանկություն հայտնեց, որ աշխարհահռչակ հայազգի ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկին իր կտավներում անմահացնի այդ փառավոր հաղթանակը: Սինոպին զուգահեռ ռուսական տասը հազարանոց զորաջոկատը հայազգի գեներալ Բեհուլովի գլխավորու-

Թյամբ ձեռք բերեց փայլուն Հաղթանակ 36 Հազարանոց թուրքական զորամիավորման դեմ Բաշքաղքլար գյուղի մոտ: Այի Ահմեդ փաշան, նկատի ունենալով թուրքական ուժերի գերազանցությունը, մեծամտորեն Հայտարարեց, թե ուսները գլուխները կորցրել են, ալահը վկա, ինքը բոլորին պիտի ջարդի ու կարգադրեց պարաններ պատրաստել գերիներին կապելու և սուլթանին նվեր ուղարկելու համար: Սակայն Կովկասյան ռազմաճակատում 1853 թ. տեղի ունեցած ամենախոշոր ճակատամարտն ավարտվեց թուրքերի կատարյալ պարտությունով: Այդ Հաղթանակի համար Հայազգի գեներալը պարգևատրվեց Գեորգի Երկրորդ աստիճանի չքանչանով: «Նախիճով-Բեհրուժով երկվորյակ Հաղթանակներ» բացականչում էր ուս բանաստեղծ Պ. Վյազեմսկին: Ավելի մեծ տպավորություն թողեց կայսրի վրա տաղանդաշատ Հայազգի գեներալի նոր Հաղթանակը Կարսի շրջանի Գյուրուքդարա գյուղի մոտ տեղի ունեցած ճակատամարտում, որտեղ 18 Հազարանոց ռուսական բանակը 1854 թ. Հուլիսի 24-ին ջախջախեց Ջարիֆ փաշայի մոտ 60 Հազարանոց թուրքական բանակը: Կայսրը տեղեկանալով այս Հաղթանակի մասին, ասաց. «Բեհրուժովն ուզում է ինձ զարմացնել իր Հաղթանակներով, ես էլ նրան կզարմացնեմ իմ պարգևներով»: Բեհրուժովը պարգևատրվեց Անդրեյ Նախավկայի չքանչանով, որից Ռուսաստանում մի քանի բարձրաստիճան ղինվորականներ էին ստացել, իսկ Կովկասյան պատերազմների մասնակիցների և Հայ զինվորականների մեջ նա առաջինն էր: Հատկանշական է, որ ռուսական բանակին Հայերի աջակցության վերաբերյալ հիշատակում են Կովկասյան ռազմաճակատի ամենաթեժ մարտերին մասնակցած գեներալներ Բոգդանովիչը, Մուրավյովը, Լիստոտինը: Ռուսական բանակի ու նավատորմի փայլուն Հաղթանակները մտավախություն պատճառեցին Հատկապես Անգլիայի և Ֆրանսիայի կառավարող շրջաններին: Նրանք Համոզվեցին, որ Թուրքիան միայնակ չի կարողանա շարունակել պատերազմը, քանզի արդեն կրել էր փաստացի ծանր պարտություն: Անգլիան ու Ֆրանսիան ցանկանում էին պահպանել Օսմանյան կայսրության ամբողջականությունը, ստատուս-քվոն, որը նշանակում էր Հավերժացնել սուլթանական բռնատիրական լուծը քրիստոնյա ժողովուրդների, ներառյալ և արևմտահայությունը նկատմամբ: Այդ երկրները, ըստ էության, առարկայորեն Հանդես էին գալիս այդ ժողովուրդների ազատագրման դեմ թուրքական բիրտ ու արյունոտ տիրապետությունից, քանզի Օսմանյան կայսրության թուլացումից, առավել ևս կործանումից էր կախված ճնշված ժողովուրդների փրկությունը: Թեև Ղրիմի պատերազմում չկար պաշտպանվող ու հարձակվող կողմ, սակայն եթե նկատի ունենանք, որ Ռուսաստանի Հաղթանակները Թուրքիայի դեմ ավանդաբար, պատմականորեն Համապատաս-

խանում էին սուլթանի տիրապետության տակ Հեծող ժողովուրդների շահերին, ապա պարզ կդառնա, որ այս Հաղթանակը ևս նրանց համար կունենար ազատագրական, առաջադիմական նշանակություն: Եվ օրինաչափ է, որ Ռուսաստանը արտաքին քաղաքական նպատակներին հասնելու համար ձգտում էր օգտագործել բալկանյան ժողովուրդների՝ մոլդավացիների, վալախների, Հույների, սերբերի, բուլղարների սլաշքարը թուրքական լծի դեմ: Անգլիան ու Ֆրանսիան, որ այդ ժամանակ ավարտել էին պատերազմի նախապատրաստումը իրենց ռազմանավերը մտցրեցին Սև ծով: 1854 թ. Հունվարին երկու տերությունների ղեկավարները Պետերբուրգում Ռուսաստանի արտգործնախարարությունը սլաշտոնապես տեղեկացրին, որ անգլո-ֆրանսիական ռազմանավերը մտել են սևծովյան ջրերը: Դրանից Հետո խզվեցին դիվանագիտական հարաբերությունները մի կողմից Ռուսաստանի, իսկ մյուս կողմից Անգլիայի ու Ֆրանսիայի միջև, իսկ մարտի 27-ին Անգլիայի Թագուհի Վիկտորյան սլատերազմ Հայտարարեց Ռուսաստանին, Հաջորդ օրը՝ Թագուհու օրինակին Հետևեց Ֆրանսիայի կայսր Լուի Նապոլեոն Երրորդը: Պաշտպանելով Օսմանյան կայսրության ամբողջականությունը Ֆրանսիան և Անգլիան միաժամանակ ցանկանում էին հաստատել իրենց հսկողությունը Սևծովյան նեղուցների վրա և կանխել Ռուսաստանի ծրագրերը: Ռուսաստանի Համոզված Հակառակորդ Անգլիայի նշանավոր պետական գործիչ և դիվանագետ Պալմերստոնը ծրագրում էր Ալանդական կղզիները և Ֆինլանդիան վերադարձնել Շվեդիային, Մերձբալթյան երկրամասը՝ Պրուսիային, վերականգնել Լեհաստանի թագավորությունը, Մոլդավիան, Վալախիան, Դանուբի գետաբերանը անցնելու էին Ավստրիային, Ղրիմը և Կովկասը խլվելու էին Ռուսաստանից ու տրվելու էին Թուրքիային, ընդ որում, Կովկասի մի մասը «Չերքեսիա» անունով կազմելու էր առանձին պետություն թուրքական սուլթանի վասալի կարգավիճակով:

Ռուսաստանի նկատմամբ թշնամական դիրք էր զրավել նաև Ավստրիան, որը Ռուսաստանի սահմանի մոտ կենտրոնացնելով իր բանակը, սպառնում էր մեծ պատերազմով, պահանջելով ռուսական զորքերը դուրս բերել դանուբյան իշխանություններից: Լիովին մեկուսացված վիճակում գտնվող Ռուսաստանը ստիպված էր բավարարել այդ պահանջը և իր զորքերը ետ քաշել Պրուտ գետից այն կողմ: Նիկոլայ Առաջինը խիստ դժգոհ էր Ավստրիայի միապետ Ֆրանց-Իոսիֆից: Իր սիրելի գեներալ Պասկևիչին նա գրում էր, թե անհրաժեշտ է «մեր բոլոր ջանքերն ուղղել այդ ուխտադրուժ Ավստրիայի դեմ և խիստ պատժել նրան անամոթ անշնորհապարտության համար»: Իսկ Պրուսիան կենսագործում էր խուսափողական քաղաքականություն՝ չցանկանալով պատերազմել Ռուսաստանի

դեմ, նրա թագավորը միաժամանակ ձգտում էր չբարկացնել ու չխզել Հա-
րաբերությունները Անգլիայի, Ֆրանսիայի, Ավստրիայի հետ: «Իմ սիրելի
աներորդին, - դժգոհում էր կայսրը Ֆրիդրիխ Վիլհելմ Չորրորդից, - ամեն
երեկո պառկում է մահճակալին իրը և ուս և ամեն առավոտ արթնանում
է որպես անզլիացի»: Նիկոլայ Առաջինի մահից հետո նոր գահակալը իր
հոր նման բնականաբար խիստ դժգոհելով Ավստրիայի դիրքորոշումից,
չատ կտրուկ հիշեցրեց կոմս էսթերգազիին Հաբսբուրգյան արքայատան
«երախտամոռությունը»: Իսկ Ավստրիայի թագավորին գրած սպառնա-
լիքներով լի նամակում Ռուսաստանի կայսրը զգուշացնում էր. «Դու
գնում ես այն ճանապարհով, որն ավելի ու ավելի է մոտեցնում քեզ մեր
թշնամիներին և որն անխուսափելիորեն, եթե չլինեն փոփոխություններ,
մեզ կհասցնի եղբայրասպան պատերազմի, և դու Հաշիվ կտաս Աստծուն»:
Անգլիան ու Ֆրանսիան ռազմական հիմնական գործողություններ ծավա-
լելով Ղրիմում, միաժամանակ իրենց ռազմանավերով ուժակոծեցին Կամ-
չատկայի Պետրոպավլովսկը, Սոլովեցկի կղզիները և Արխանգելսկը Սպի-
տակ ծովի ափին, Օդեսան, Բալթիկայում Ալանդական կղզիները: Սակայն
դաշնակիցները հաջողություն չունեցան: Նրանց հույսերը չարդարացրե-
ցին Շամիլի գլխավորած կովկասյան լեռնականները, որոնք կրեցին ծանր
պարտություն ուսական կովկասյան զորքերի կողմից: Այս բոլորով հան-
դերձ գլխավոր գործողությունները ծավալվեցին Ղրիմում, որտեղ էլ վճռու-
վելու էր պատերազմի ելքը:

Դաշնակիցների նպատակն էր գրավել Սևաստոպոլը՝ սևծովյան ուս-
ական գլխավոր ամրոցը և հենակետը: Այդ նպատակով անգլիացիները և
ֆրանսիացիները 1854 թ. սեպտեմբերին Եվպատորիայի մոտ իջեցրին 60
հազարանոց դեսանտ ֆրանսիացի մարշալ Սենտ-Առնոյի և անգլիացի
լորդ Ռազլանի գլխավորությամբ: Այն գետի մոտ անհաջող ճակատա-
մարտից հետո ուսական բանակի ապաշնորհ հրամանատար իշխան Մեն-
չիկովը շարժվեց դեպի Բախչիսարայ, Սևաստոպոլը ցամաքից թողնելով
անպաշտպան: Դաշնակիցների կորուստները չափազանց մեծ էին և անգ-
լիական մի դիվիզիայի հրամանատարի կարծիքով. «Այսպիսի մի հաղթա-
նակ ևս և Անգլիան բանակ չի ունենա»: Իհարկե, այս միտքը չպետք է
հասկանալ տառացիորեն, պարզապես անգլիացի բարձրաստիճան գինյու-
րականին խիստ մտահոգում էին բանակի մեծ կորուստները: Անգլո-
ֆրանսիական զորքերը շարժվեցին դեպի Սևաստոպոլ ծրագրելով գրավել
ամրոցը՝ ծովից ու ցամաքից համատեղ և միաժամանակյա հարվածներով:
Սևաստոպոլի պաշտպանությունը ղեկավարում էին ծովակալներ Վ. Կոռ-
նիլովը, Պ. Նախիմովը, Վ. Իստոմինը, որոնք զոհվեցին պաշտպանության
ընթացքում, իսկ ամրությունների կառուցման աշխատանքներն ընթանում

էին ռազմական ինժեներ է. Տոտլբերենի ղեկավարությամբ: Սևաստոպոլի
պաշտպանները ծովախորշի մուտքի մոտ ջրասույզ արեցին առագաստա-
նավերը, որպեսզի փակեն թշնամու նավատորմի ճանապարհը: Շուրջ 10
հազար նավաստիներ լրացրեցին քաղաքի պաշտպանների շարքերը:
Սևաստոպոլի ողջ բնակչությունը ակտիվորեն մասնակցեց քաղաքի
պաշտպանությանը: Զինվորների և սպաների խիզախությունը և տոկու-
նությունը գերազանցեց ժամանակակիցների երևակայությունը, իսկ Նի-
կոլայ Առաջինը հրամայեց յուրաքանչյուր ամսվա ծառայությունը համա-
րել մեկամյա շրջափակված Սևաստոպոլում: Այս ամենի շնորհիվ Սևաստո-
պոլի պաշտպանությունը տևեց մոտ մեկ տարի՝ 349 օր և դարձավ ռադ-
մական պատմության ամենահերոսական դրվագներից մեկը: Սևաստոպոլի
պաշտպանության ժամանակ իրենց քաջագործություններով աչքի ընկան
նավաստի Պյոտր Կոչկան, Դարյա Սևաստոպոլսկայան՝ Հասարակ մի կին,
որը դարձավ առաջին զիջության քույրը: Սևաստոպոլի պաշտպանությանը
եռանդուն մասնակցություն ունեցավ ուս ականավոր գրող Լև Նիկո-
լանիչ Տոլստոյը: Նա գրեց այդ պաշտպանության հերոսամարտի օրագիր
հանդիսացող «Սևաստոպոլյան պատմվածքները»: Իսկ հայտնի վիրաբույժ
Ն. Պիրոգովը թշնամու տեղատարափ կրակի տակ բժշկական օգնություն
էր ցույց տալիս վիրավոր մարտիկներին: Անգլիացիները Սևաստոպոլի
տակ կորցրին 3600 զինվոր և սպա, իսկ հիվանդությունից մահացավ շուրջ
15700 մարդ: 1855 թ. օգոստոսի վերջին սկսվեց Սևաստոպոլի վերջին ամե-
նաուժեղ ուժակոծումը: 800 թնդանոթների կրակոցներն անընդհատ քա-
րուքանդ էին անում քաղաքը: Սկսվեց ընդհանուր գրոհը: Մեծ զոհերի
գնով դաշնակիցներին հաջողվեց գրավել Մալախով Կուրգանը՝ քաղաքի
վրա իշխող բարձունքը: Դրանից հետո հետագա պաշտպանությունը դար-
ձավ անհույս: Բերդի պաշտպանները ծովախորշի վրա նախօրոք պատ-
րաստված կամրջով անցան հյուսիսային կողմը՝ թողնելով քաղաքի հարա-
վային մասը: Թշնամին, թեև գրավեց Կերչը, Ենիկալեն, Անապան և Կին-
բուրնը, այնուամենայնիվ, չկարողացավ գրավել ամբողջ Ղրիմը: Անգլիա-
ցիները և ֆրանսիացիները հսկայական կորուստների պատճառով այլևս
ընդունակ չէին շարունակել ակտիվ գործողություններ: Հանրագումարի
բերելով Ղրիմի պատերազմի ռազմաքաղաքական արդյունքները Ֆ. Էն-
գելսը գրել է. «...դաշնակիցները գրավել են Սևաստոպոլի հարավային
կողմը, Կերչը, Կինբուրնը, Եվպատորիան... դաշնակիցների հաջողությու-
նները փաստորեն այնքան էլ մեծ չեն, որպեսզի արդարացնեն անգլիական
մամուլի պոռոտախոսությունը»: Սակայն հյուծվել էին ոչ միայն դաշնա-
կիցների ուժերը, արյունաքամ էր եղել նաև ուսական բանակը, իսկ

Սևաստոպոլի անկումը կանխորոշեց պատերազմի ելքը: Ֆ. Էնգելսի կարծիքով՝ Ղրիմի պատերազմում Ռուսաստանին սպասում էր տնտեսապես հետամնաց ազգի անհույս պայքար ժամանակակից արտադրությունը զինված ազգերի՝ Անգլիայի ու Ֆրանսիայի դեմ: Ի դեպ, Ղրիմի պատերազմի վերջին փուլում Անգլիային ու Ֆրանսիային միացավ Սարդինական թագավորությունը: Ռուսաստանի ահեղ կայսրին պարտությունից չփրկեց նրա ամենասիրելի ծերացած ֆելդմարշալ Ի. Պասկևիչը, որը նշանակվեց Արևմտյան և Հարավային բանակների ընդհանուր գլխավոր հրամանատար: Նա միայն պաշարեց Սիլիստրիան, խուսափելով վճռական գործողություններով գրավելու այդ կարևոր ամրոցը: Ղրիմի պատերազմում բեկում չմտցրեց Կովկասյան ռազմաճակատում Կարսի անառիկ ամրոցի գրավումը ռուսական բանակի կողմից: 1855 թ. սկզբին Կովկասի նոր փոխարքա և բանակի գլխավոր հրամանատար նշանակվեց Ն. Ն. Մուրավյովը, իսկ գեներալ Բեհրուլթովը՝ Կովկասի քաղաքացիական մասի կառավարիչ, գեներալ Լորիս-Մելիքովը հատուկ գործիքի հրամանատար: Կարսի պաշարումը շարունակվեց չուրջ երկու ամիս, որից հետո ռուսները հարկադրեցին թուրքական կայսրոհին հանձնվել: Այս հաղթանակը ղգալիորեն մեղմեց հաշտության ապագա պայմանագրի կետերը: Փարիզի հաշտության խորհրդածոդովը բացվեց 1856 թ. փետրվարի 13-ին (25-ին), որի աշխատանքներին մասնակցեցին Ֆրանսիայի, Անգլիայի, Ավստրիայի, Ռուսաստանի, Օսմանյան կայսրության, Սարդինիայի թագավորության լիազոր ներկայացուցիչները: Երբ խորհրդածոդովը հիմնականում լուծել էր գլխավոր հիմնահարցերը, թույլատրվեց մասնակցել նաև Պրուսիայի ներկայացուցիչներին: Ալեքսանդր Երկրորդը որոշեց Փարիզի խորհրդածոդով, որպես Ռուսաստանի առաջին լիազոր ներկայացուցիչ ուղարկել հմուտ, խելացի, աչքի ընկնող պետական գործիչ, հարուստ քաղաքական փորձ ունեցող, համառ, ճկուն, անհրաժեշտության դեպքում զիջելու կարողությամբ օժտված նշանավոր դիվանագետ կոմս Օլովին, որը թեև 70 տարեկան էր, բայց շարունակում էր աչքի ընկնել աշխատասիրությամբ և երիտասարդական ամյունով: Ֆրանսիայի կայսր Նապոլեոն Երրորդը խորհրդածոդովում կարծես տրամադրված էր ու ցանկալի էր համարում փակել երկու երկրների միջև եղած թշնամական փուլը և նրանց միջպետական հարաբերություններում բացել որակապես նոր էջ: Ֆրանսիայի կայսրն այդպիսի մարտավարության իրավունք ուներ, քանզի նա արդեն հասել էր ռազմաքաղաքական և դիվանագիտական լուրջ հաջողության: Նախ՝ Ռուսաստանի դիրքերը զգալիորեն թուլացել էին, իսկ դրա փոխարեն ուժեղացել էր Ֆրանսիայի ազդեցությունը և Հեղինակությունը: Երկրորդ՝ Ֆրան-

սիան պատերազմն ավարտեց հաղթանակով, վերցվեց յուրատեսակ ռազմաքաղաքական հատուցում 1812-1815 թվականների պարտությունների դիմաց: Հետևաբար, Նապոլեոնը Ռուսաստանից պահանջելու ոչինչ չուներ, բացի միջպետական հարաբերությունները կարգավորելուց: Ֆրանսիայի շահերից էլ Ռուսաստանի չափից ավելի թուլացումը, քանզի դա անուղղակիորեն ուժեղացնում է Անգլիայի դիրքերը: Ֆրանսիայի քաղաքականության մեջ գերակայող դարձավ Եվրոպայում ուժերի հավասարակշռության պահպանման մարտավարությունը: Փարիզի հաշտության պայմանագիրն արձանագրեց Ռուսաստանի պարտությունը Ղրիմի պատերազմում: Դանուբի իշխանությունների և սուլթանի հպատակ ուղղափառների նկատմամբ ռուսական հովանավորության վերացումը զգալիորեն թուլացրեց Ռուսաստանի դիրքերը Մերձավոր Արևելքում ու Բալկաններում, էպպես փոխեց ուժերի հարաբերակցությունը Եվրոպայում: Ռուսաստանը կորցրեց Դանուբի գետաբերանը և Բեսարաբիայի հարավային մասը, որոնք անցնում էին Մոլդովայի իշխանությանը: Ռուսաստանի համար պայմանագրի ամենածանր հոգվածները նախատեսում էին չեզոքացնել Սև ծովը, այսինքն՝ արգելում էին նրան այնտեղ պահել ռազմանավեր ու ունենալ ռազմածովային ամրոցներ: Այս արգելքը տարածվում էր նաև Օսմանյան կայսրության վրա, իբրև սևծովյան տերություն:

Հատուկ կոնվենցիայով սուլթանին պարտադրվում էր արգելել օտար տերությունների ռազմանավերի մուտքը սևծովյան նեղուցներ, «քանի դեռ Բարձր Դուռը կլինի խաղաղության մեջ»: Սև ծովի չեզոքացման պայմաններում այս կոնվենցիան պետք է որոշ առումով ձեռնտու լիներ Ռուսաստանին, ապահովեր սևծովյան անպաշտպան առափնյա շրջանները թշնամու հնարավոր հարձակումից: Ռուսաստանը Կարսը վերադարձրեց թուրքիային, իսկ դաշնակիցները՝ Սևաստոպոլը Ռուսաստանին: Պայմանագրի 3-րդ հոգվածով «Նորին Մեծություն ամենայն ռուսական կայսրը պարտավորվում է նորին Մեծություն սուլթանին վերադարձնել Կարս քաղաքը՝ նրա միջնաբերդով հանդերձ, ինչպես նաև Օսմանյան տիրապետությունների այն մասերը, որոնք գրավված են ռուսական զորքերի կողմից»: Փարիզի հաշտության պայմանագրով Անգլիան, Ֆրանսիան, Ավստրիան ստեղծեցին «Ղրիմի համակարգը», որը փոխարինելու եկավ «Վիեննայի համակարգին»: Փարիզի հաշտության պայմանագրի կնքումից հետո Ռուսաստանը թեև կոխում է պատմության զարգացման նոր փուլ, քաղաքական ասպարեզ են գալիս նոր դեմքեր, որոնք պայքարելու և լուծելու էին քաղաքական ու դիվանագիտական բարդ, հրատապ խնդիրներ, ազգային-պետական շահերից բխող կարևորագույն հիմնահարցեր:

Հատկանշական է, որ Արևելյան պատերազմի տարիներին շարունակվում էր դեռևս 1834 թ. սկսված և իմամ Շամիլի գլխավորած Հյուսիսային Կովկասի լեռնականների քայքայիչ ու երկարատև պատերազմը Ռուսաստանյան կայսրության դեմ: Շամիլը դարձավ ռազմակրոնական պետության՝ իմամաթի ղեկավարը: Շամիլը, օգտվելով ընթացող պատերազմից, փորձեց միանալ թուրքական բանակին, դառնալ սուլթանի հպատակը, որի համար ստացավ սուլթանից զենք ու զինամթերք, օգնություն նաև Անգլիայից ու Ֆրանսիայից: Այդ պայքարը Ռուսաստանի դեմ ընթանում էր «սրբազան պատերազմի» (ղազավաթի) նշանաբանով, «անհավատների» (ոչ մահճեղականների), տվյալ դեպքում ռուսների դեմ կարգախոսով, որի համար նրանց երջանկություն էր սպասվում հանդերձյալ կյանքում: Լեռնականների իմամը, անշուշտ, խելացի, քաջ, բայց նաև դաժան, անողոք անձնավորություն էր, հոգևոր ու աշխարհիկ բարձրագույն ղեկավար: «Հարգանքն իր նկատմամբ նա (Շամիլը - Մ. Մ.) պահպանում էր, գրել է ռուս հայտնի քննադատ Ն. Դորրոյուբովը, - ավելի շատ վախով, քան սիրով, նրա մոտ դահիճն անդադրում էր և մահապատիժներն՝ անընդհատ»: Լեռնականների պայքարը շարունակվեց նաև Արևելյան պատերազմից հետո ու փաստորեն ավարտվեց միայն 1859 թ., երբ ռուսական բանակը 15-օրյա պաշարումից հետո գրավեց Շամիլի վերջին հենակետ Գունիբը, իսկ Շամիլը գերի հանձնվեց: Միայն 1864 թ. Հյուսիս-Արևմտյան Կովկասի լեռնականները դադարեցրին դիմադրությունը, իսկ ամբողջ Կովկասը մտավ Ռուսաստանյան կայսրության կազմի մեջ:

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ԿԱՅՐՈՒԹՅՈՒՆԸ XIX ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

ՄԵԾ ՎԵՐԱՓՈՒՍՆԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ԿԱՅՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ XIX ԴԱՐԻ 60-70-ԱԿԱՆ ԹԹ.

§ 1. ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ԿԱՅՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԾ ԲԱՐԵՓՈՒՍՆԵՐԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ

Ղրիմի պատերազմի ավարտից հետո Ռուսաստանի պատմության մեջ սկսվեց նոր պատմափուլ, որը ժամանակակիցներն անվանեցին Ազատագրության կամ Վերափոխումների դարաշրջան: Այս ամենը պատմականորեն համընկավ Ալեքսանդր Երկրորդ ազատարարի թագավորության տարիների հետ, որի նախաձեռնությամբ և անմիջական ղեկավարությամբ իրագործվեցին Ռուսաստանի համար բախտորոշ նշանակություն ունեցող բարեփոխումներ, որոնք ընդգրկեցին կայսրության սոցիալ-տնտեսական ու հասարակական-քաղաքական համակարգի բոլոր գերակայող ոլորտները: Նիկոլայ Առաջինը մեծ իշխան և թագաժառանգ Ալեքսանդր Նիկոլաևիչի դաստիարակությունը վստահեց հայտնի բանաստեղծ Վասիլի Անդրեևիչ Ժուկովսկուն, որը ի դեպ, Դորպատի համալսարանում սովորել էր հայ մեծ լուսավորիչ Նաչատուր Աբովյանի հետ: Ժուկովսկին, զգալով այս առաջարկի ողջ պատասխանատվությունը, չընդունեց այն վառ խանդավառությամբ, բայց և հրաժարվել այդ պատվավոր պաշտոնից համարեց անիմաստ, քանզի ճակատագիրը նրան ընձեռում էր եզակի հնարավորություն ներազդելու Ռուսաստանի ապագայի վրա: Ռուս հայտնի բանաստեղծը ապագա կայսեր դաստիարակության համար մշակած ամբողջական փաթեթում հիմնական ուշադրությունը սևեռեց հայրենական պատմության ուսումնասիրության հիմնահարցերին՝ ածանցյալ տեղ հատկացնելով ռազմական գործին, որն առաջացնում էր զորեղ կայսեր և փայլուն ռազմական ինժեներ՝ Նիկոլայ Առաջինի դժգոհությունը: Իր սանին

Ժուկովսկին դաստիարակում էր կրթության, լուսավորության, օրենքի նկատմամբ հարգալից վերաբերմունք ունենալու ոգով: Կառավարիչը և տիրիչը ոչ թե ուժով, խորհուրդ էր տալիս նա իր սանին, այլ կարգ ու կանոնով, թագավորի իսկական հղորմությունը նրա զինվորների թվի մեջ չէ միայն, այլ ավելի շատ ժողովրդի բարօրության մեջ. սիրիչը սեփական ժողովրդի, առանց ժողովրդի նկատմամբ սիրո, չկա ժողովրդի սերը թագավորի հանդեպ: Մեծ էր ժուկովսկու ազդեցությունը երիտասարդ Ալեքսանդրի վրա: Հատկապես անջնջելի ազդեցություն թողեց թագաժառանգի վրա ժուկովսկու նախաձեռնությամբ կազմակերպված և յոթ ամիս տևած երկարատև ճանապարհորդությունը, որի ընթացքում նրանք եղան Ռուսաստանի 30 նահանգներում: Սիրիում հանդիպեցին ղեկարրիստների, իսկ Վյատկայում՝ քսորյալ Գերցենի հետ: Մայրաքաղաք վերադառնալուց հետո Ալեքսանդրը խնդրեց մեղմել Սիրիի քսորված ղեկարրիստների վիճակը: Հենց այդ ժամանակ Գերցենին տեղափոխեցին Վլադիմիր: Այս ամենը, անշուշտ, թողեց դրական ազդեցություն հետագայում բարեփոխումներ անցկացնելու համար, թեև անվիճելի է, որ ճորտատիրական իրավունքի վերացման գործում, այնուամենայնիվ վճռորոշ դեր խաղաց Ղրիմի պատերազմում Ռուսաստանի կրած ցավալի պարտությունը: Ալեքսանդրը Երկրորդն իր մտածելակերպով և գործունեությամբ հիշեցնում էր հորեղբորը՝ Ալեքսանդր Առաջինին:

Ալեքսանդր Երկրորդը զահ բարձրացավ նիկոլայ Առաջինի մահից հետո՝ 1855 թ., 36 տարեկան հասակում: Նա լիովին համոզված էր բարեփոխումներ անցկացնելու անհրաժեշտության ու անխուսափելիության մեջ: 1856-1857 թվականներին Ռուսաստանի մի քանի նահանգներում տեղի ունեցան գյուղացիական հուզումներ, որոնք թեև արագորեն մարեցին, բայց մեկ անգամ ևս ապացուցեցին, որ ճորտատեր կալվածատերերը նստած են հրաբխի վրա, որը ցանկացած պահի կարող է ժայթքել ու վերացնել ողջ կայսերական համակարգը: Ճորտատիրական իրավունքի վերացումը անհրաժեշտություն էր երկրի անվտանգության ապահովման տեսանկյունից, քանզի այդ համակարգի պահպանման պայմաններում ռուսական կայսրությունը կվերածվեր երկրորդական տերության, միջազգային հարաբերությունների համակարգում կզաղարկեր մեծ պետություն լինելուց:

Ալեքսանդր Երկրորդը, Մոսկվայի ազնվականների հետ հանդիպման ժամանակ հիմնավորելով ճորտատիրական իրավունքի վերացման և գյուղացիության ազատագրման անհրաժեշտությունը, հատուկ նշեց, որ հոգիներին տիրապետելու կարգը չի կարող մնալ անփոփոխ, ուստի ավելի լավ է այն փոխել վերևից և չսպասել, որ այն փոփոխվի ներքևից: Կայսեր միտքը հստակ էր, մոտեցումը՝ ավելի քան պարզ և որոշակի. ավելի լավ է

ճորտատիրական իրավունքը վերացնել վերևից, այսինքն՝ բարենորոգումների միջոցով, աստիճանական, դանդաղ և համաչափ ուղիով, կառավարության կենսագործած ջանքերի շնորհիվ՝ առանց արյունահեղության և չսպասել, որ հիմնահարցը լուծվի ապստամբությամբ, զինված պայքարով: Մտահոգությունը և մտավախությունը ժամանակին էր և տեղին, քանզի դեռևս նիկոլայ Առաջինի թագավորության վերջին տարիներին կայսրին զգուշացնում էին, թե ճորտատիրական իրավունքը և ողջ պետական-քաղաքական համակարգը նման են յուրատեսակ տախտի՝ լցված վառոդով, որի վրա նստած է ինքնակալությունը: Այնտեղից անհրաժեշտ է հանել վառոդը, որպեսզի հնարավոր լինի խուսափել պայթյունավտանգ իրավիճակից: Ալեքսանդր Երկրորդը, յուրացնելով իր հորեղբոր՝ Ալեքսանդր Առաջինի կենսագործած բարենորոգումների հարուստ փորձը, ծրագրում էր հեղափոխությունն իրականացնել «վերևից», որը միակ հնարավոր միջոցն էր արյունահեղությունից խուսափելու համար: Եվ օրինաչափ է, որ Ալեքսանդր Երկրորդի թագավորության առաջին տարիները հիշեցնում էին Ալեքսանդր Առաջինի կառավարման առաջին շրջանը, որովհետև հասարակության մեջ գերիշխում էր համընդհանուր ակնկալիքների նույն մթնոլորտը: Ալեքսանդր Երկրորդը հրապարակեց մի շարք հրամանագրեր, որոնցով զգալիորեն մեղմացրեց քաղաքական վարչակարգը: 1856 թ. օգոստոսի 20-ին թագադրման կապակցությամբ նա համաներում հայտարարեց քաղաքական բանտարկյալներին՝ ղեկարրիստներին, լեհական ապստամբության մասնակիցներին, պետրաչևականներին, սկսեցին հրատարակվել նոր ամսագրեր՝ «Ռուսկի վեստնիկ», «Ռուսկայա բեսեդա»: Դա յուրատեսակ ռուսաստանյան «ձևհալ» էր հասարակական-քաղաքական մտքի պատմության մեջ: Ալեքսանդր Երկրորդը միաժամանակ տատանվում էր, խուսափում ամբողջ պատասխանատվությունը վերցնել իր վրա: Նա նախապես ցանկանում էր ստանալ ազնվականության լայն շրջանների աջակցությունը: Թեև ճորտատիրական իրավունքի շուտափույթ վերացման անխուսափելիությունն ակնհայտ էր հասարակության լայն շրջաններին, այսուհանդերձ այն կապված էր լուրջ բարդությունների հետ, քանզի հիմնահարցը շոշափում էր բոլոր շերտերի շահերը: Ընդ որում, ինքնակալության սոցիալական ու քաղաքական գլխավոր հենարան՝ ազնվականության մեծամասնությունը չէր պաշտպանում նման բարեփոխումների մտահղացումը: Այս պատճառով էլ Ալեքսանդրը ցանկանում էր, որպեսզի նախաձեռնություն ցուցաբերեն իրենք՝ կալվածատերերը, և ճորտատիրության վերացումը դիտարկվի իրեն ազնվարար ազնվականության բարի կամքի դրսևորում և արտահայտություն: Այս բոլորով հանդերձ անհրաժեշտ է ընդգծել կայսեր համարձակությունը և հետևողականությունը, բեկումնային քայլ կատարելու վճռականությունը,

պատասխանատվության գիտակցումը Ռուսաստանի հետագա քաղաքական ճակատագրի համար: Նա 1857 թ. Հունվարի 3-ին ստեղծեց Գաղտնի կոմիտե՝ գլխավորելու ճորտատիրական իրավունքի վերացման նախապատրաստական աշխատանքները: Կայսեր ցուցումով նահանգներում ստեղծվեցին գյուղացիական ռեֆորմը նախապատրաստող ազնվական նահանգային կոմիտեներ: Այդպիսի կոմիտեներ ստեղծվեցին 46 նահանգներում, ընդ որում, պաշտոնական փաստաթղթերում նրա հեղինակները խուսափում էին ազատագրում բառն օգտագործելուց:

Հրապարակայնության պայմաններում սկսվեց ճորտատիրական իրավունքի վերացման նախագծերի մշակումը: Ալեքսանդր Երկրորդը Գյուղացիական գործերի գլխավոր կոմիտեի նիստում թվարկեց ընթացիկ գլխավոր խնդիրները: Նախ՝ գյուղացին պետք է անմիջապես համոզվի, որ իր կենցաղը բարելավվել է, երկրորդ՝ կալվածատերը պետք է չկասկածի, որ իր շահերը պաշտպանված են, երրորդ՝ որպեսզի ուժեղ իշխանությունը ոչ մի բույն չտատանվի և հասարակական կարգը ոչ մի ձևով չխախտվի, չորրորդ՝ գլխավոր խնդիրն է հավասարակշռել ազնվականության և ազատագրված ժողովրդի շահերը, հինգերորդ՝ պաշտպանել ազնվականներին անարդարացի կորուստներից, իսկ գյուղացիների համար ապագայում ստեղծել բարօրության հնարավորություն: Կայսեր հրահանգի համաձայն նախագիծը մշակելիս անհրաժեշտ է առավելագույն չափով հաշվի առնել կառավարության և ազնվականության շահերը: Նախ՝ հողը թողնել կալվածատերերին իրրև մասնավոր սեփականություն: Երկրորդ՝ գյուղացիները հող ստանալու դիմաց վճարելու էին փրկագին, նրանցից պետությանը տրվող հարկերի և տուրքերի պարտադիր գանձում: 1858 թ. փետրվարին Գաղտնի կոմիտեն, վերակառուցվեց Գլխավոր կոմիտեի, որի նախագահ նշանակվեց կայսեր եղբայրը՝ մեծ իշխան Կոնստանտին Նիկոլաևիչը: Գյուղացիական գործերի գլխավոր կոմիտեին առընթեր ստեղծվեցին խմբագրական երկու հանձնաժողովներ, որպեսզի ընդհանրացնեն նահանգներից ստացված նախագծերը և մշակեն կալվածատիրական գյուղացիների ազատագրման օրենքի նախագիծ: Խմբագրական հանձնաժողովների ղեկավարությունը հանձնվեց գեներալ-ադյուտանտ Ռոստոլցևին: Վերջինիս մահից հետո կայսրը 1860 թ. նրա փոխարեն նշանակեց արդարադատության նախարար կոմս Պանինին: Ռեֆորմի ընդհանուր նախապատրաստումը հանձնարարվեց ներքին գործերի նախարարությանը՝ նախարարի տեղակալ Նիկոլայ Ալեքսևիչ Միլյուտինի ղեկավարությամբ:

Ազնվականական կոմիտեների մշակած նախագծերում առկա էին նկատելի տարակարծություններ: Կենտրոնական և հարավային սեահողային նահանգների՝ Կիևի, Պոլտավայի, Կուրսկի կալվածատերերը պահանջում էին գյուղացիությանն ազատագրել առանց հողի, քանզի այդ նահանգների

հողերը բերրի էին, պահանջում պահպանել իրենց քաղաքական ու տնտեսական բոլոր արտոնությունները և իրավունքները: Ոչ սեահողային նահանգների՝ Վլադիմիրի, Մոսկվայի, Յարոսլավլի, Տվերի, Կոստրոմայի կալվածատերերը պահանջում էին գյուղացիներին ազատագրել հողաբաժնով, բայց փրկագնով, որովհետև այդ նահանգներում գլխավոր արժեք էր գյուղացու աշխատանքը: Հողի հետգնումից հետո այն դառնալու էր գյուղացու սեփականությունը: Այս բոլորով հանդերձ ազնվականական բոլոր նախագծերն արտահայտում էին կալվածատերերի շահերը. նրանցից յուրաքանչյուրը ձգտում էր ռեֆորմն առավելագույն չափով օգտագործել սեփական նպատակների համար: Այսպիսով, մի նախագծի համաձայն գյուղացիությունն ազատագրվում էր առանց հողի, ստանում միայն անձնական ազատություն, պահպանվում է կալվածատիրական հողատիրությունը որևէ ոտնձգությունից, իսկ մյուս նախագծով պահանջվում էր գյուղացիությանն ազատագրել բարձր փրկագնով և հողակտորով:

Հատկանշական է, որ Ալեքսանդր Երկրորդի գահակալման առաջին տարիներին հատուկ նշանակություն էր ստացել աչքի ընկնող հասարակական գործիչ, լիբերալ-ազատական գաղափարախոսության ջատագով Կ. Կավելինի «Գյուղացիներին ազատագրելու մասին» գրությունը, որը 1855 թվականից ընթերցվում էր և ուսումնասիրվում հասարակության լայն շրջանների կողմից: Կավելինի կարծիքով ճորտատիրական իրավունքը չարիք է Ռուսաստանի համար: Հետևաբար անհրաժեշտ է վերացնել այդ համակարգը, բայց ոչ արյունահեղությամբ, կացնի միջոցով, այլ խաղաղ բարեփոխումներով, քանզի հիմնահարցի բռնի լուծումը չի հաստատի անդորր և հանդարտություն Ռուսաստանում: Կավելինի կարծիքով գյուղացիական հուզումներից և ելույթներից «կարող է բռնկվել ու բոցավառվել հրդեհ, որի հետևանքները դժվար է պատկերացնել»: Սլավոնասեր Սամարինը համամիտ էր Կավելինի հետ և պահանջում էր անհապաղ դիմել բարենորոգումների, որոնց հիմքում ընկած էր ճորտատիրական իրավունքի վերացումը: Անհրաժեշտ էր անցկացնել այնպիսի ռեֆորմ, որը երկրում ապահովեր ներքին խաղաղություն առնվազն 500 տարի: Կավելինը գրտնում էր, որ գյուղացիների ազատագրումը կարող է իրագործվել միայն կալվածատերերին հատուցելու պայմանով: Հիմնախնդրի այլ լուծումը կդառնար սեփականության իրավունքի խախտման վտանգավոր նախադեպ: Բայց չի կարելի մոռանալ նաև գյուղացիության ցանկությունները և շահերը. նրանք պետք է ստանան այն հողաբաժինը, որ տվյալ պահին գտնվում է նրանց տնօրինության ներքո: Փրկագնման խնդիրը մշակելու է կառավարությունը, եթե նա կարողանա հաշվի առնել և զուգակցել կալվածատերերի և գյուղացիների շահերը, ապա երկու սոցիալական խավերը կմիաձուլվեն մի հողագործ դասի մեջ, կվերանան դասային տարբերու-

Թյունները և կմնան միայն գուլքային տարբերությունները: Նրա կարծիքով ճորտատիրական իրավունքի վերացումը ճանապարհ կհարթի այլ բարեփոխումների համար՝ դատական, ռազմական, զրաքննչական, կնպաստի լուսավորության դարգացմանը:

Կավելինի «Գրությունը», ինչպես և սպասվում էր, թշնամանքով ընդունվեց ճորտատերերի կողմից: Նրանք ասում էին, թե իբր նա այս ամենը գրել է Անգլիայի վարչապետ Պալմերստոնի պատվերով, որը, իհարկե, կատարյալ անհեթեթություն էր ու զրպարտանք: Այնուամենայնիվ, ճորտատերերին հաջողվեց Կավելինի դեմ տրամադրել կայսրին, որից հետո նա զրկվեց թագաժառանգին դաստիարակելուց, հեռացվեց արքունիքից, այնուհետև՝ Պետերբուրգի համալսարանից: Այսուհանդերձ Կավելինի «Գրություն» մեջ տեղ գտած շատ դրույթներ օգտագործվեցին ռեֆորմի նախագիծը մշակելու ժամանակ:

Ճորտատիրական իրավունքի վերացման հիմնահարցի քննարկման ամեն մի փուլում նախագծի մեջ, հօգուտ ճորտատերերի, մտցվում էին նոր ուղղումներ, այսինքն՝ բարենորոգումներ անցկացնողներն ավելի ու ավելի էին «ոսկե միջինից» հեռանում ի վնաս գյուղացիության: Ռուս հայտնի հասարակական գործիչ Նիկոլայ Սեոնո-Սոլովյովիչը պնդում էր, որ գյուղացիները ստանալու են անձնական ազատություն՝ հողաբաժնով. ընդ որում, ամեն տեսակի պարտադիր հարաբերությունները կալվածատերերի հետ դադարեցվելու են: Գյուղացիության պատկերացմամբ դադարել ճորտ լինելուց, նշանակում է տուրքեր վճարել ոչ թե կալվածատիրոջը, այլ պետությանը՝ գանձարանին: Սերնո-Սոլովյովիչի ծրագրային դրույթների անկյունաքարը կաղնում էր համայնական հողատիրության պահպանումը և ամրապնդումը:

Իրենց հերթին Գերցենը և Օգարյովը «Կոլոկոլ»-ում առաջ քաշեցին երեք կետից բաղկացած ծրագիր: Առաջին՝ գյուղացիության ազատագրում, երկրորդ՝ զրաքննության վերացում, երրորդ՝ մարմնական պատիժների վերացում: Հետագայում Գերցենը հստակեցրեց իր ծրագիրը, նշելով, որ ինքը նկատի ուներ գյուղացիության ազատագրում հողով՝ փրկագնված պետության կողմից: Կայսրին հղած բաց նամակում Գերցենն իրեն անվանում էր «անուղղելի սոցիալիստ», միաժամանակ ընդգծում էր այդ պահանջների չափավորությունը և իրատեսությունը: Գերցենի և Օգարյովի համար ճորտատիրական իրավունքի վերացումն առաջնային էր, իսկ իրագործման կոնկրետ ուղիները՝ ածանցյալ, այսինքն՝ գյուղացիության ազատագրումը կլինեի «վերևից», թե «ներքևից», չէր կարող ունենալ էական նշանակություն: Մինչդեռ Չերնիշևսկու համար այս հիմնահարցն ուներ սկզբունքային նշանակություն, թեև սկզբնական շրջանում նա չէր մերժում Կավելինի լիբերալ-ազատական հայացքները: Այդ ժամանակ

Չերնիշևսկին և Կավելինը կողմնակից էին ճորտատիրական իրավունքի վերացմանը «վերևից», բարեփոխումների միջոցով, թեև հայացքների համընկնումը չէր նշանակում նրանց ծրագրերի լիակատար նույնացման մասին: Կավելինը լիբերալ-ազատական գործիչ էր, Ռուսաստանի զարգացման արևմտյան ուղու կողմնակից: Սոցիալիստական գաղափարախոսությունը նա չէր կիսում, բայց նրա կողմնակիցներին վերաբերվում էր ընդգծված հանդուրժողականությամբ, որն էլ հնարավորություն ընձևեց Կավելինին և Չերնիշևսկուն միաժամանակ պաշտպանել ընդհանուր հայացքներ: Այնուամենայնիվ, Կավելինի նախագիծը շուտով սկսեց չբավարարել Չերնիշևսկուն, որովհետև նա, առաջ գնալով, մշակեց ժամանակի ամենարմատական, բայց քիչ հավանական ծրագիր: Սակայն նրա դիրքորոշումը չէր կարող հարգանք չառաջացնել ցուցաբերած վճռականության և խիզախության, ճորտ գյուղացիության շահերը անվերապահորեն պաշտպանելու համար:

Ի տարբերություն լիբերալ Կավելինի՝ Չերնիշևսկին անհրաժեշտ էր համարում «կացնի ուժով» ազատագրել գյուղացիությանը: Նա նետվեց ճորտատիրության դեմ մղվող պայքարի հորձանուտը և իր ամենանվիրական նպատակը դարձրեց գյուղացիությանն ազատագրված տեսնել ճորտատիրական լծից: Գերցենը դժգոհ էր Չերնիշևսկու նման արմատական մարտավարությունից, հատկապես լիբերալների դեմ կտրուկ, խիստ հարձակումների համար, իսկ վերջինիս չէին հրապուրում Գերցենի չափավոր հայացքները: Չերնիշևսկին մեկնեց արտասահման և հանդիպեց Գերցենին: Ըստ էության երկխոսություն չստացվեց: Չերնիշևսկին, բարձր գնահատելով Գերցենի խելքը, միաժամանակ համոզված էր, որ նա հետ է մնացել քաղաքական գործընթացների ճիշտ ընկալումից: Իր հերթին, Գերցենը Չերնիշևսկուն «զարմանալիորեն խելացի մարդ» համարելով հանդերձ, խիստ վիրավորվել էր նրանից, ոչ այնքան պարկեշտորեն զրույցներ վարելու համար: Գերցենը ցանկալի էր համարում հասարակության զարգացման խաղաղ, համաչափ, աստիճանական ուղին, բայց լիովին չէր մերժում հեղափոխական ճանապարհը: Ստեղծված իրադրության մեջ նա տեսնում էր, որ առկա են բոլոր նախադրյալները ճորտատիրական իրավունքը խաղաղ եղանակով վերացնելու համար:

Գերցենի հայացքների հետ համամիտ չէր նաև «Սովրեմեննիկ» ամսագրի աշխատակից, հայտնի քննադատ Ն. Դոբրոլյուբովը: Նրա համար ողջ լիբերալ շարժումը ժամանակավրեպ էր, իսկ լիբերալ գործիչները՝ «ավելորդ մարդիկ»:

«Սովրեմեննիկի» ընթերցողները Չերնիշևսկուց և Դոբրոլյուբովից ավելի քիչ պատկերացում ունեին ճորտատիրական իրավունքի վերացման հիմնահարցերի վերաբերյալ, դրա համար էլ նրանց դիրքորոշումը դի-

տարկվում էր, գնահատվում և ներկայացվում իբրև անթերի, կատարյալ, իսկ քննադատությունը՝ միշտ հաղթական: Այս ամենը հսկայական ներգործություն ունեցավ թե՛ Չերնիչևսկու և թե՛ Դորոյուբովի վրա, նրանք այլևս չէին կարող չգրել այն, ինչ նրանցից պահանջում էր ու սպասում ընթերցող հասարակությունը: Իրա մեջ էր նրանց թե՛ ուժը և թե՛ թուլությունը: Գաղափարական տարանջատումը և նախագծերի տարբերությունը բնական գործընթաց է ու բնորոշ բոլոր զարգացած երկրների համար: Գյուղացիական ռեֆորմի նախագիծը մշակվեց փոխգիջումային տարբերակով, որը, այնուամենայնիվ, ավելի շատ հաշվի էր առնում ոչ թե գյուղացիության, այլ՝ կալվածատերերի շահերը, որովհետև ազնվականությունն էր կայսերական Ռուսաստանի սոցիալ-քաղաքական հենարանը:

§ 2. ՃՈՐՏԱՏԻՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԵՐԱՑՈՒՄԸ

Կայսր Ալեքսանդր Երկրորդը 1861 թ. փետրվարի 19-ին ստորագրեց կալվածատիրական գյուղացիության ազատագրության մասին Հրովարտակը և Կանոնադրությունը, որոնք հրապարակվեցին միայն մարտի 5-ին: Հրովարտակը ռեֆորմը ներկայացնում էր իբրև «ազնվարար ազնվականության կամավոր նվիրատվություն», որպես բարերարություն ժողովրդին և նրան կոչ արեց հանգստության ու հնադանդության: Կանոնադրության համաձայն գյուղացիները ստացան անձնական ազատություն: Կալվածատերերն այսուհետև իրավունք չուներին գյուղացիներին վաճառել, գնել, նվիրել, տնօրինել նրանց ճակատագիրը: Այժմ նրանք կարող էին ամուսնանալ առանց կալվածատերերի թույլտվության, ինքնուրույն պայմանագրեր և առևտրական գործարքներ կնքել, ազատ կերպով զբաղվել արհեստով կամ առևտրով, ընդունվել ծառայության կամ ուսումնական հաստատություն: Նրանք իրավունք ստացան ձեռք բերել շարժական ու անշարժ գույք, ազատ կերպով դրանք տնօրինել և ժառանգել օրենքի և սովորությունների համաձայն: Գյուղացին այլևս ճորտ չէր. նա ստացավ քաղաքացիական իրավունք: Գյուղացիությունը տրված անձնական ազատությունը կանոնադրության ամենաառաջադիմական կետն էր, խոչորագույն իրավաքաղաքական իրադարձություն Ռուսաստանի պատմության մեջ: Շուրջ 22,5 միլիոն կալվածատիրական գյուղացիներ ստացան անձնական ազատություն: Թեև Հրովարտակով Հողի սեփականատերեր ճանաչվում էին կալվածատերերը, այսուհանդերձ կայսերական կառավարությունը խոհեմ գտնվեց և գյուղացիներին ազատագրեց Հողի հետ, չնայած կալվածատերերի մեծ մասը հանդես էր գալիս դրա դեմ: Նախ՝ կառավարությունը գիտակցում էր, որ անհող ազատագրումը համընդհանուր Հուզումներ կառաջացնի գյուղացիության լայն շրջաններում: Երկ-

րորդ՝ նա հաշվի էր առնում, որ հարկերը հիմնականում գանձվում էին գյուղացիներից: Գյուղացիներին Հողից զրկելու դեպքում կցամաքեր պետական եկամուտների հիմնական աղբյուրը, դրանով իսկ նկատելիորեն կղատարկվեր կայսերական գանձարանը: Այս ամենից դրդված՝ որոշվեց գյուղացիներին ազատագրել Հողով, բայց այնպես, որ պահպանվեր վերջիններիս տնտեսական կախվածությունը կալվածատիրոջից:

Գյուղացիական Հողաբաժինների չափերի որոշումը, որպես կանոն, պետք է կատարվեր գյուղացիների հետ կալվածատերերի կամավոր համաձայնությունով, կնքված համաձայնագրի՝ «Ուստավնայա գրամոտայի» հիման վրա: Իսկ եթե այդպիսի համաձայնություն ձեռք չէր բերվում, սահմանվում էին Հողաբաժինների որոշակի նորմեր, որոնք, որպես կանոն ձեռնադրում էին կալվածատերերին: Հողաբաժինների չափերը տարբեր էին՝ կախված Հողի բերրիությունից: Սևահողային նահանգներում դրանք շատ ավելի փոքր էին ոչ սևահողային նահանգների համեմատությամբ: Հատկանշական է, որ դեռևս մեծ վերափոխումների նախօրյակին ներքին գործերի նախարարի տեղակալ Միլյուտինը և Հայտնի սլավոնասեր Սամարինը՝ կանոնադրության հիմնական հեղինակները, արդեն հասկացել էին, որ գյուղացիներին Հող հատկացնելու համար անհրաժեշտ է հաշվի առնել ու նկատի ունենալ տեղական առանձնահատկությունները, այսինքն՝ անհնար է Հողերը բաժանել հավասար սկզբունքով: Կալվածատերերը տնտեսությունը վարելու համար իրավունք ուներին պահելու ամբողջ Հողի ոչ պակաս, քան մեկ երրորդը, իսկ տափաստանային նահանգներում՝ մեկ երկրորդը: Եթե մինչև ճորտատիրական իրավունքի վերացումը գյուղացիներն օգտագործում էին ավելի շատ Հող, քան սահմանված էր «1861 թ. փետրվարի 19-ի կանոնադրությամբ», ապա «ավելորդ» մասը նրանցից վերցվում էր կալվածատիրոջ օգտին: Այդ Հողերը կոչվեցին «օտրեզկաններ»: Հետոնեֆորմյան շրջանում գյուղացիները պայքարում էին «օտրեզկանները»՝ իրենցից կտրված Հողերը վերադարձնելու համար: Հատկապես շատ Հող՝ մինչև 30-40 % կտրեցին գյուղացիներից սևահողային նահանգներում: Այստեղ կալվածատերերը ձգտում էին Հողը թողնել իրենց և գյուղացիներին հատկացնել նվազագույն Հողաբաժիններ: Ոչ սևահողային նահանգներում, որտեղ Հողը սակավաբեր էր, գյուղացիներն զգալիորեն շատ Հող ստացան, որպեսզի կալվածատերերը կարողանան ստանալ ավելի մեծ փրկագին: Սևահողային նահանգներում գյուղացիները ստացան սահմանված Հողաբաժնի նվազագույնը, իսկ ոչ սևահողային գոտում, որպես կանոն՝ առավելագույնը: Գյուղացիները Հողի սեփականատեր և մանր ազատ տնտեսատեր դառնալու համար պետք է վճարեին փրկագին: Փրկագնի չափերը զգալիորեն գերազանցում էին գյուղացիների ստացած Հողերի արժեքը: Փաստորեն գյուղացիները պարտավոր էին վճարել ոչ միայն Հողի, այլև իրենց անձի ազատագրման համար: Նկատի ունենալով, որ գյու-

ղացիները ի վիճակի չեն անմիջապես միանվազ վճարել փրկագինը, սահմանված կարգի համաձայն նրանք անմիջապես վճարում էին փրկագնի ընդհանուր գումարի 20 %-ը, իսկ մնացած 80 %-ը կալվածատերերին վճարում էր պետությունը, պայմանով, որ գյուղացիները 49 տարվա ընթացքում այդ գումարը տոկոսներով վերադարձնեն պետությանը: Գյուղացիները հողի արժեքի՝ մոտ 500 միլոն ռուբլու դիմաց վճարեցին մոտավորապես 1,5 մլրդ ռուբլի: Փրկագնային գործառնությունը հսկայական գումար բերեց կալվածատերերին, որոնք այն ներդրեցին իրենց տնտեսությունների մեջ:

Մինչև փրկագնի մասին համաձայնության կնքումը գյուղացիները համարվում էին ժամանակավորապես պարտավորյալ և հողաբաժիններից օգտվելու համար պետք է կրեին հին պարհակները՝ կոռ կամ բահրա, կալվածատիրոջ ցանկությունը: Հասկանալի է՝ վերջինիս շահերից էր ձգձգել գործարքի կնքումը, որը դժգոհություն էր առաջացնում գյուղացիության շրջանում: Նկատի ունենալով գյուղացիության տրամադրությունները՝ կայսերական կառավարությունը 1881 թվականին վերացրեց ժամանակավորապես պարտավորյալ կարգավիճակը: «1861 թվականի փետրվարի 19-ի կանոնադրությունը» վերաբերում էր միայն կալվածատիրական գյուղացիներին և չէր տարածվում պետական և ուղեւային գյուղացիների վրա: Միայն 60-ական թվականների ընթացքում այդ «կանոնադրությունը» աստիճանաբար տարածվեց նաև նրանց վրա: Կայսերական կանոնադրությունը չվերացրեց գյուղացիական համայնքը, քանզի նրա պահպանումը միանգամայն շահեկան էր պետությանը: Փրկավճարով գյուղացուն հատկացված հողակտորը դառնում էր համայնքի ընդհանուր օգտագործման սեփականություն, որտեղ պարբերաբար կատարվում էր հողերի վերաբաժանում: Համայնքում հաստատված էր համապարտ երաշխավորության համակարգը, որն ապահովում էր յուրաքանչյուր համայնքի համար սահմանված հարկերի ժամանակին գանձումը, համայնքի անդամների կողմից փրկավճարի մուծումը:

Ռուսական նահանգներից անմիջապես հետո ճորտատիրական իրավունքը վերացվեց Ուկրաինայում, Բելոռուսիայում, Անդրկովկասում, Հյուսիսային Կովկասում: 1861 թվականի փետրվարի 19-ի հրովարտակի հրապարակումից անմիջապես հետո ռեֆորմի նախապատրաստություններ են սկսվում նաև Անդրկովկասում: Կովկասի փոխարքային առընթեր ստեղծվեց ռեֆորմը նախապատրաստող Անդրկովկասյան կոմիտե: 1864 թ. հոկտեմբերի 13-ին Ալեքսանդր Երկրորդը ստորագրեց Թիֆլիսի նահանգի (Արևելյան Վրաստան, Հայաստանից Լոռին) գյուղացիների «ազատագրման կանոնադրությունը»: 1865 թ. հոկտեմբերի 13-ին նույնպիսի կանոնադրություն հրապարակվեց նաև Քութայիսիի նահանգի համար: 1865-1866 թթ. գյուղացիների ազատագրության կանոնադրություններ հրապար-

ակվեցին Իմերեթիայի, Մենգրելիայի, Գուրիայի, 1871 թ.: Սվանեթիայի համար: Վրաստանից հետո ռեֆորմի անցկացման նախապատրաստական աշխատանքներ ծավալվեցին Բաքվի ու Ելիզավետպոլի նահանգներում և Արևելյան Հայաստանում: Մշակվում է ռեֆորմի մի ընդհանուր կանոնադրություն, որը կայսր-ազատարարը հաստատում է 1870 թ. մայիսի 14-ին, այն Կովկասի փոխարքայի կարգադրությամբ սկսեց գործել 1870 թ. նոյեմբերի 8-ից: 1870 թ. մայիսի 14-ի կանոնադրության հիմքում նույնպես ընկած էին 1861 թ. փետրվարի 19-ի հրովարտակի և կանոնադրության հիմնական դրույթները:

Ճորտատիրական իրավունքի անկումը կարևոր իրավաքաղաքական փուլ էր Ռուսաստանի պատմության մեջ՝ գյուղացիները ստացան անձնական ազատություն և քաղաքացիական իրավունքներ, որոնք միանշանակ ունեին առաջադիմական նշանակություն, թեև ռեֆորմից հետո պահպանվեցին բազմաթիվ ավատաճորտատիրական մնացուկներ, որոնք երկար ժամանակով խճճեցին ռուսական գյուղը, արգելեցին նրա արագ զարգացումը, դարձան խոչընդոտող լուրջ գործոններ ամբողջական և ընդհանուր մակարդակով Արևմտյան Եվրոպայի երկրներին հասնելու համար:

Ճորտատիրական իրավունքի վերացման կանոնադրությունը այնպիսին չէր, ինչպես պատկերացնում ու ցանկանում էին տեսնել Կավելինը, Գերցենը, Չերնիշևսկին: Այն, թեև ուներ ծանր փոխդիջումային բնույթ, այնուամենայնիվ, ավելի շատ հաշվի էր առնում կալվածատերերի և ոչ թե գյուղացիության շահերը: Եվ օրինաչափ է, որ հրովարտակի և կանոնադրության հրապարակումը զայրույթ և դժգոհություն առաջ բերեց գյուղացիության շրջանում: Գյուղերում արագորեն լուրեր տարածվեցին, թե նկեղեցիներում հոգևորականների կարդացած հրովարտակը կեղծ է, իսկ իսկականը կալվածատերերը և չինովնիկները թաքցրել են ժողովրդից: Հաճախ գործը հասնում էր իշխանությունների և զորախմբերի հետ գյուղացիների ընդհարմանը: Պենզայի, Կազանի և Տամբովի նահանգներում տեղի ունեցան խոչոր հուզումներ: Կազանի նահանգի Բեզդնա գյուղի գյուղացիները չհավատացին կայսերական հրովարտակի բովանդակությանը, ինչպես այն մեկնաբանում էին պաշտոնյաները և բացատրում հոգևորականները: Գյուղացի աղանդավոր միակ գրաճանաչ Անտոն Պետրովը փաստաթղթի տեքստում սկսեց փնտրել «իսկական ազատությունը», նա գյուղացիներին կարդաց և բացատրեց կանոնադրությունը ազատության մասին գյուղացիության պատկերացման ոգով, որի համաձայն նրանք պետք է ստանան լրիվ ազատություն և ամբողջ հողը: Այս լուրը տարածվեց շրջակայքի գյուղերում և գավառներում: Բեզդնա եկան հազարավոր գյուղացիներ: Հուզումը ճնշելու համար կառավարությունը զորք ուղարկեց: Նրանց հետ ընդհարման ժամանակ սպանվեց և վիրավորվեց

ավելի քան 350 մարդ, իսկ Անտոն Պետրովը ռազմադաշտային դատարանի որոշմամբ հրապարակորեն զնդակահարվեց: Դա լիբերալ մտավորականության շրջանում առաջացրեց խոր վրդովմունք: Ինքնակալությունը հեղափոխմամբ ճնշեց գյուղացիական խռովությունները, տարերային և անկազմակերպ գյուղացիական շարժումները, որոնք աստիճանաբար սկսեցին նվազել ու մարել: Հատկանշական է, որ կայսերական հրովարտակը և կանոնադրությունը դժգոհություն առաջացրին նաև լիբերալ ու հեղափոխական հասարակական գործիչների, մտավորականության շրջանում: Գերցենը և Օզարյովը իրենց հողվածներում եկան այն եզրակացություն, թե ընդհանրապես ճորտատիրական իրավունքը չի վերացված, իսկ ժողովուրդը խարված է ցարի կողմից: Հրապարակվում էին հակացարական բովանդակության թուղթիկներ, ստեղծվեց «Ջեմյա ի վոյա» («Հող և ազատություն») վերին աստիճանի խայտաբղետ կազմ ունեցող գաղտնի կազմակերպությունը, որի մեջ մտնում էին ուսանողներ, մանր ծառայողներ, սպաներ, զրականագետներ: Ձերբակալվեց Ն. Չերնիչևսկին, նրան ենթարկեցին քաղաքացիական մահապատժի՝ բարձրացրին կառավարան, կրճբին կախեցին «պետական հանցագործ» մակագրությամբ տախտակ, գլխավերևում կոտրեցին սուրը, իսկ հետո շղթայով գամեցին անարգանքի սյունին: Գյուղացիական ելույթներ ու հուզումներ տեղի ունեցան ոչ միայն վերիկոռուսական նահանգներում, այլև ազգային ծայրամասերում՝ Բելոռուսիայում, Ուկրաինայում, Մերձբալթիկայում, Կովկասում: Կաստուս Կալինովսկին դարձավ Լիտվայում ու Բելոռուսիայում 1863-1864 թթ. տեղի ունեցած ապստամբության ղեկավարներից մեկը: Առանձնապես խոշոր քաղաքական իրադարձություն էր 1863-1864 թթ. ազգային ազատագրական շարժումը Լեհաստանում: Ձինված պայքարը գլխավորեցին լեհ նշանավոր հեղափոխական Յարոսլավ Դոմբրովսկին, լեհական, ռուսական, լիտվական հեղափոխական շարժման Հայտնի գործիչ Ջիգմունդ Սերակովսկին: Ռուս հեղափոխական մտավորականությունը հանդես եկավ նրանց աջակցությամբ ու ջերմ համակրանքով: «Հող և ազատություն» կենտրոնական կոմիտեն դիմեց «Ռուս սպաներին և զինվորներին» կոչով՝ առաջարկելով հրաժարվել ապստամբների դեմ պայքարից: Ի պաշտպանություն լեհերի ելույթ ունեցավ Գերցենը: Նա «Կոլոկոլ»-ում հայտարարեց. «Մենք ուզում ենք, որ Լեհաստանն անկախ լինի: Մենք լեհերի հետ ենք, որովհետև մենք երկուսս էլ միևնույն շղթայով ենք կապված», ղեկավարվում «Մեր և ձեր ազատության համար» կարգախոսով: Կայսերական կառավարությունը կարողացավ ճնշել 1863-1864 թթ. ազգային ազատագրական շարժումները և ապստամբությունները: Այս ամենը առաջացրեց լիբերալ-ազատական մտավորականության շրջանում խոր վրդովմունք և հիասթափություն:

1866 թ. Դմիտրի Կարակոզովը կրակեց կայսրի վրա: Մահափորձը տեղի ունեցավ Պետերբուրգում Ամառային այգու մոտ: Բայց Կարակոզովը վրիպեց, բռնվեց ու դատից հետո մահապատժի ենթարկվեց: Այս ամենը, այնուամենայնիվ, չեն կարող մթազնել և ստվերել ճորտատիրական իրավունքի վերացման պատմական նշանակությունը, քանզի Ռուսաստանի քաղաքական կյանքում սկսվեց նոր դարաշրջան: Հետևաբար պետք է հիշել ու ըստ արժանվույն զնահատել այն գործիչների պատմական ծառայությունները, որոնք մշակեցին և իրագործեցին բարեփոխումները՝ Միլյուտինին, Սամարինին, Ռոստովցևին, մեծ իշխան Կոնստանտին Նիկոլաևիչին, Կավելինին, Գերցենին, Չերնիչևսկուն, իսկ ավելի հեռավոր անցյալից՝ Ռադիչևսկին, դեկաբրիստներին: Եվ վերջապես մեծ է, վճռորոշ կայսր Ալեքսանդր Երկրորդ Ազատարարի դերը գյուղացիության ազատագրման գործում:

§ 3. XIX ԴԱՐԻ 60-70-ԱԿԱՆ ԹԹ. ԲԱՐԵՓՈՒՍՈՒՄՆԵՐԸ

Ճորտատիրական իրավունքի վերացումից հետո, երբ միլիոնավոր գյուղացիներ վերջապես ստացան անձնական ազատություն ու քաղաքացիական իրավունքներ, առանձնահատուկ սրությամբ դրվեց տեղական կառավարման, վարչադատական և ռազմական բարենորոգումներ անցկացնելու հիմնահարցերը: Դրանց միջոցով հնարավոր կդառնար վարչական գործունեության մեջ մտցնել կատարյալ կարգ ու կանոն, դատական ոլորտում՝ օրինականություն, իսկ բանակի վերակառուցմամբ անխոցելի դարձնել երկրի պաշտպանունակությունը: Եվ չնայած ռուսական կայսրության պետական համակարգը սկզբունքային փոփոխության չենթարկվեց և ինքնակալությունը մնաց անսասան, այնուամենայնիվ, XIX դարի 60-70-ական թթ. բարեփոխումները նկատելիորեն նպաստեցին երկրի սոցիալ-տնտեսական, քաղաքական, դատաիրավական համակարգի առաջընթացին: Ճորտատիրական իրավունքի վերացումից հետո այս բարենորոգումների անցկացումն անխուսափելի էր, քանզի անհրաժեշտ էր պետական-իշխանական մարմինների գործունեությունը հարմարեցնել պատմական նոր պայմաններին՝ կապիտալիստական հարաբերությունների շրջափուլի պահանջներին: Իհարկե, բարեփոխումների հեղինակները մտածել անգամ չէին կարող ինքնակալության գերագույն իշխանության սահմանափակման, առավել ևս Ռուսաստանում սահմանադրություն մտցնելու մասին: Պարզապես հասարակական կարծիքը հանգստացնելու և լիբերալ ազնվականությանն ու քաղաքականապես ձևավորման ավարտին ընդհուպ մոտեցած բուրժուազիային համագործակցության մեջ ներ-

գրավելու նպատակով ինքնակալութունը տեղական կառավարման հիմնախնդիրներում կատարեց մի շարք նկատելի զիջումներ: Դրանք թելադրված էին նաև տեղական կառավարման խիստ քայքայված վիճակով, 1861 թ. բարենորոգումների շատ բարդ հիմնախնդիրները լուծելու համար հին պաշտոնյաների անընդունակությունից և ապաշնորհությունից: Այս ամենը նկատի ունենալով և ընդառաջելով լիբերալ հասարակության ցանկություններին կառավարությունն ընդունեց օրենք տեղական ինքնավարության մասին: Դրանով ստեղծվեցին իշխանություն ընտրովի մարմիններ նահանգների և գավառների մասշտաբով՝ զեմստվային հիմնարկություններ, որոնք ավելի շատ հայտնի են զեմստվոներ անունով: Լիբերալ հասարակության միջնորդությունից ստեղծված տեղական ինքնավարության մարմինները որևէ քաղաքական նշանակություն չունեին ու գերազանցապես զբաղվում էին տնտեսական, մշակութային հիմնահարցերով՝ նահանգի և գավառի տարածքներում: Դրանք վարում էին տեղական նշանակություն ունեցող ճանապարհների շինարարության, առողջապահության, ժողովրդական լուսավորության, հրդեհներից ապահովագրման, անբերրի տարիներին բնակչությանը մթերքներով ապահովելու, սոցիալական օգնության, գույքի ապահովագրության, տեղական առևտրի, արդյունաբերության զարգացման հիմնահարցերով: Տեղական կարիքների շրջանակներից դուրս գալու նրանց փորձերը խափանվում էին կառավարության կողմից: Չեմստվոները դրված էին վարչության՝ նահանգապետների, ոստիկանների զգոն հսկողության ներքո: Նահանգապետը կարող էր կասեցնել զեմստվոյի որոշումների կատարումը: Այդ հարցերով մինչև օրենքի ընդունումը զբաղվում էին միայն պետական աստիճանավորները: Չեմստվոները, օրենքի համաձայն ոչ միայն ընտրովի, այլև համադասային մարմիններ էին, որոնց մեջ մտնում էին ազնվականության, բուրժուազիայի և գյուղացիության ներկայացուցիչները: Կառավարությունն անում էր ամեն ինչ, որպեսզի տեղական ինքնակառավարման մարմիններում գերակայող դիրք գրավեն ազնվականները, որը միանգամայն հասկանալի էր, քանզի ինքնակալության և լիբերալ կալվածատերերի միջև եղած տարակարծությանը հանդերձ միապետությունը շարունակում էր ազնվականությանը համարել իր գլխավոր սոցիալական ու քաղաքական հենարանը: Եվ օրինաչափ է, որ տեղական ինքնակառավարման մասին օրենքը փաստորեն չտարածվեց Սիբիրի, Արխանգելսկի, Կուբանի, Աստրախանի, Օրենբուրգի նահանգների վրա, որտեղ ըստ էության չկային խոշոր կալվածատերեր, ուստի և այնտեղ զեմստվոներ չստեղծվեցին: Նահանգային և գավառային զեմստվային ժողովները դարձան տեղական ինքնակառավարման կարգադրիչ մարմիններ, իսկ գործադիրը՝ նահանգային ու գավառային զեմստ-

վային վարչությունները (ուպրավաները): Իրենց խնդիրներն իրագործելու համար զեմստվոներն իրավունք էին ստանում բնակչությունից գանձել հատուկ տուրքեր:

Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները կատարվում էին երեք տարին մեկ անգամ: Կալվածատեր-հողատերերը, քաղաքի սեփականատերերը և գյուղացիները քվեարկում էին առանձին՝ ընտրական տարբեր ժողովներում ու հավաքույթներում: Դա արվում էր այն պատճառով, որ գյուղացիները, իրենց մեծամասնության շնորհիվ կարող էին չընտրել կալվածատերերին ու քաղաքացիներին: Սահմանվեց գավառային զեմստվային իրավասուների (պատգամավորների) որոշակի թվաքանակ: Գավառային զեմստվային ժողովներն ընտրում էին իրավասուներին նահանգային զեմստվոների համար: Չեմստվային ժողովներում որպես կանոն գերակշռում էին ազնվականները: Չեմստվոները խաղացին դրական մեծ դեր ուսական գյուղի կյանքը բարելավելու, տեղական տնտեսության, լուսավորության զարգացման գործում: Շուտով Ռուսաստանում ընդլայնվեց զեմստվային դպրոցների և հիվանդանոցների ցանցը: Չեմստվոների գործունեության շնորհիվ նահանգներում ու գավառներում ուժերի հարաբերակցությունն աստիճանաբար փոխվեց՝ Ռուսաստանի հասարակական-քաղաքական կյանքում ձևավորվեց «երրորդ տարրը»: Այդպես էին անվանում զեմստվային բժիշկներին, ուսուցիչներին, գյուղատնտեսներին, վիճակագիրներին, որոնք արդարացիորեն համակրանք էին վայելում ժողովրդի մեջ: Տեղական պաշտոնյաները անթաքույց տադնապով էին հետևում «երրորդ տարրի» ներկայացուցիչների հեղինակության և ազդեցության բարձրացման անչեղ գործընթացին: Գյուղական մտավորականությունը դրսևորեց ժողովրդին անբասիր ծառայելու բարձր ու փայլուն օրինակներ: Նրանց վստահում էին գյուղացիները, նրանց խորհուրդները և առաջարկները հաշվի էին առնում նահանգային ու գավառային վարչությունները: Այդ տարիներին սովորաբար զեմստվային ծառայության էին անցնում կրթված և լիբերալ ազնվականները, որոնք իրենց գործունեության հիմքում դնում էին մարդասիրական սկզբունքները: Նրանք կանգնեցին զեմստվային լիբերալ շարժման ակունքներին, փորձեցին խաղալ քաղաքական կարևոր դեր և առանձին ղեկավարում դա նրանց հաջողվում էր երկար ու հետևողական գործունեության շնորհիվ: Չեմստվային մարմինների հիմնակարգով 1870 թ. վերափոխումներ անցկացվեցին քաղաքային ինքնավարության ասպարեզում: Քաղաքներում ստեղծվում էին ոչ դասային քաղաքային մարմիններ: Քաղաքային դուման և քաղաքային վարչությունը զբաղվում էին քաղաքների բարեկարգմամբ,

առևտրի հովանավորությանը, զբաղվում էին հակահրդեհային հարցերով, ապահովում էին կրթության և առողջապահության կարիքները: Դուռնայի ընտրությունները տեղի էին ունենում գույքային ցենզի հիման վրա: Հարկեր չվճարող բանվորները ընտրություններին չէին մասնակցում: Քաղաքագլուխը և վարչությունն ընտրվում էին դուռնայում: Քաղաքագլուխը ղեկավարում էր դուռնայի ու վարչության աշխատանքը: Նա հաստատվում էր նահանգապետի կամ ներքին գործերի նախարարի կողմից: Իշխանությունները կարող էին արգելափակել դուռնայի ցանկացած որոշում: Քաղաքային ինքնավարության շնորհիվ ստեղծվեցին բարենպաստ պայմաններ կապիտալիզմի արագ զարգացման և բուրժուազիայի դիրքերն ամրապնդելու համար, որի ներկայացուցիչները ղեկավար դեր էին կատարում թե՛ դուռնայում և թե՛ նրա վարչությունում: Ձեմստվային բարեփոխման հետ միասին 1864 թ. անցկացվեց նաև դատական վերափոխում: Այն մշակեցին ռուս առաջադեմ իրավաբանները՝ Եվրոպայի առաջատար երկրների դատական պրակտիկայի հարուստ օրինակով, նրա հենքի վրա և իրավագիտության նվաճումներին համապատասխան: Ռուսաստանում հաստատվեց նոր՝ համադասային դատարան, այսինքն՝ միասնական, ամբողջ բնակչության համար: Նախառեֆորմյան դատարանը դասային էր՝ յուրաքանչյուր դաս ուներ իր առանձին դատարանը, որի նիստերը դռնփակ էին, մեղադրյալները դատապաշտպաններ չունեին: Դատարանը լիովին կախման մեջ էր վարչությունից: Դատարանում կատարվող ակնհայտ չարաչառումները հեղինակագրկում էին գերագույն իշխանությունը: Դատարանի նկատմամբ հասարակության անվստահությունը և դժգոհության աճը հարկադրեցին կառավարությանն անցկացնել դատական վերափոխում: 1864 թ. դատական բարեփոխմամբ հռչակվեց դատարանի անկախությունը վարչությունից՝ դատավորը, թեև նշանակվում էր կառավարության կողմից, բայց պաշտոնից կարող էր հեռացվել միայն դատարանով:

Նախնական քննությունը կատարում էին դատական քննիչները, որոնք չէին ենթարկվում ոստիկանությանը: Դատավարությունը դարձավ դռնբաց: Դատական նիստերին կարող էին մասնակցել մամուլի և հասարակայնության ներկայացուցիչները: Դատական գործընթացը ստացավ մրցակցային բնույթ՝ մեղադրանքը ներկայացնում և պաշտպանում էր դատախազը, իսկ ամբաստանյալի շահերը պաշտպանում էր փաստաբանը՝ երդվյալ հավատարմատարը, նիստը ղեկավարում էր դատարանի նախագահը: Քրեական գործերը քննվում էին բոլոր դասերից, այդ թվում և գյուղացիներից, նախկին ճորտերից, որոնց կալավածատերերը ճիպոտահա-

րում էին առանց դատարանի հետաքննության, երդվյալ ատենակալների մասնակցությամբ: Երդվյալ ատենակալներ չէին կարող լինել այն անձինք, որոնք աշխատում էին վարձով, այսինքն բանվորները, սպասավորները: Դատական նոր կառույցի կենտրոնական օղակը դարձավ օկրուգային դատարանը՝ երդվյալ ատենակալներով: Նրանք՝ թվով 12 հոգի, դատարանում լսելով մեղադրող ու պաշտպանող կողմերին՝ դատախազին և փաստաբանին, կայացնում էին որոշում (վերդիկտ) «մեղավոր է», «անմեղ է» կամ «մեղավոր է, բայց արժանի է ներողամտության»: Դրա հիման վրա դատարանի նախագահը և նրա երկու անդամները կայացնում էին դատավճիռ, այսինքն՝ սահմանում էին պատժի չափը կամ կասեցնում էին գործը: Երդվյալ ատենակալները յուրաքանչյուր դատական գործընթացի համար նշանակվում էին հասարակության բոլոր դասերից վիճակահանությամբ: Դատարանի նման կառուցվածքն ապահովում էր առավելագույն երաշխիքներ դատական սխալներից խուսափելու և հնարավորության սահմաններում անաչառությունն ապահովելու համար: Ռուսական քրեական օրենսդրությունը չգիտեր այնպիսի պատժաչափ, որպեսին էր մահապատիժը: Միայն դատական հատուկ մարմինները՝ ռազմական դատարանները, Սենատի Հատուկ ատյանը կարող էին կայացնել մահապատժի դատավճիռ:

Մանր քրեական և քաղաքացիական գործերով զբաղվում էր մեկ մարդուց կազմված և առանց ատենակալների հաշտարար դատարանը: Հաշտարար դատավորն ընտրվում էր գեմստփոնների ժողովների կամ քաղաքային դուռնաների կողմից երեք տարի ժամանակով: Կառավարությունը չէր կարող իր իշխանության գործադրման միջոցով նրան զբաղեցրած պաշտոնից հեռացնել, ինչպես նաև օկրուգային դատարանի դատավորներին: Այս սկզբունքն ապահովում էր դատարանի եթե ոչ լիակատար, ապա գոնե հարաբերական անկախությունը վարչությունից: Դատական վերափոխումներն ամենահետևողականն էին, թերևս ամենակարևորը և ամենալիբերալը 60-70-ական թթ. անցկացված բոլոր բարեփոխումների մեջ: Դատական շատ գործիչներ Ա. Կոնին, Ն. Տազանցևը և ուրիշներ հասարակության մեջ իրավամբ վայելում էին մեծ հեղինակություն: Բայց ճորտատիրական մնացուկները պահպանվեցին նաև դատական համակարգում, որը լուրջ խոչընդոտ դարձավ դատական բարեփոխումները մինչև վերջ հասցնելու համար: Գյուղացիների համար պահպանվեց վոլոստային դասային դատարանը, որը քննում էր մանր իրավախախտումների վերաբերյալ գործերը և գյուղացիների միջև ծագող քաղաքացիական հայցերը: Դամասնավորապես պայմանավորված էր այն հանգամանքով, որ գյուղացիական և համաքաղաքացիական իրավական հասկացությունները տար-

բերվում էին իրարից: Հաշտարար դատարանը «Օրենքների ժողովածուի» միջոցով և նրա շրջանակներում հաճախ անկարող էր հարթել ու կարգավորել գյուղացիների միջև ծագող վեճերը և մանր իրավախախտումները: Գյուղացիներից կազմված վոլոստային դատարանը դատում էր տվյալ վայրում գոյություն ունեցող սովորույթների հիման վրա: Վոլոստային դատային ու Հաշտարար դատարանների որոշմամբ գյուղացիները ենթակա էին մարմնական պատիժների, որոնք վերացված էին մյուս դասերի համար: Այս խայտառակ և անոթայի երևույթը Ռուսաստանում գոյատևեց մինչև 1904 թ.: Դա, անշուշտ, չի կարող ստվերել դատական բարեփոխման առաջադիմական նշանակությունը, քանզի վարչական իշխանությունից դատարանի անկախությունը, դոնրաց դատավարությունը, պաշտպանության իրավունքը, երզվյալ ատենակալների առկայությունը, առարկայորեն ապահովում էր օրինականությունը դատարանում, ուժեղացնում Հասարակության ազդեցությունը դատական գործընթացի վրա:

Ղրիմի կամ Արևելյան պատերազմում Ռուսաստանի պարտությունը վկայեց, որ անհրաժեշտ է արմատական վերափոխման ենթարկել ղինված ուժերը, որ բանակի բարեփոխումը դարձել է հրատապ ու անհետաձգելի հիմնախնդիր: 1861 թ. վերջին ռազմական նախարար նշանակվեց Դմիտրի Միլյուտինը՝ Միլյուտինների ավագ եղբայրը, որի եղբայրը զլխավորեց ճորտատիրական իրավունքի վերացման նախագծի մշակման աշխատանքները, իսկ կրտսեր եղբայրը հարել էր պետրաշևականներին: Միլյուտին-նախարարն անցկացրեց մի շարք փոփոխություններ, որոնց եզրափուլում նախատեսվում էր զորակոչիկային հավաքից անցնել ընդհանուր զինվորական ծառայության համակարգին: Տարիներ շարունակ պահպանողական սպայակույտին հաջողվում էր խոչընդոտել բանակի վերակառուցումը: Զախողակ զորահրամանատար և սահմանափակ միջակություն Ա. Մենչիկովը Միլյուտինին անվանում էր «յակորինյան», փորձ էր պիտակավորել լիբերալ-առաջադիմական գաղափարներ ունեցող զենեռալ-նախարարին: Սակայն միջադպային իրադրության բարդությունը, եվրոպական և այլ պետություններում բանակի աճը, վերջապես պատերազմներ վարելու նոր մարտավարությունը և ժամանակակից տեխնիկայի հազեցվածությունը հարկադրեց կայսերական կառավարությունը արագացնել բանակը համալրելու և արմատական վերափոխումներ անցկացնելու գործընթացը: Ընդհանուր զինվորական ծառայությունը հնարավորություն էր ընձեռում երկրի ամբողջ արական բնակչությանը սովորեցնել ռազմական գործը: Ճորտատիրական իրավունքի վերացումը պայմաններ ստեղծեց ավելի բազմաբանակ, մասսայական բանակ ստեղծելու համար: Մինչև ճորտատիրական իրավունքի վերացումը բանակը կազմվում էր զինակո-

չիկների հավաքի հիման վրա, որն ընդգրկում էր արական բնակչության միայն աննշան մասը: Ռուսաստանում բանակի վերակառուցման համար բեկումնային դարձավ 1870-1871 թթ. Փրանս-պրուսական պատերազմը, քանզի ժամանակակիցների վրա մեծ տպավորություն գործեց պրուսական բանակի արագ զորահավաքը և հաղթանակը: 1874 թ. հունվարի 1-ին ընդունվեց օրենք, որի համաձայն զինվորական ծառայության համար առողջ ու պիտանի 20 տարին լրացած բոլոր դասերին պատկանող տղամարդիկ անցնելու էին պարտադիր զինվորական ծառայություն: Հետևազորում ծառայության ժամկետը սահմանվեց 6 տարի, հաջորդ 9 տարին՝ պահեստազորի կազմում: Նավատորմում ծառայությունը տևում էր 7 տարի և 3 տարի պահեստազորում: Դա հնարավորություն էր տալիս պատերազմի ժամանակ զգալիորեն մեծացնել բանակը: Բարձրագույն ուսումնական հաստատություն ավարտածների համար զինվորական ծառայության ժամկետը կրճատվում էր մինչև վեց ամիս: Այս արտոնությունը լրացուցիչ խթան էր դառնալու կրթության տարածման համար: Ճորտատիրական իրավունքի և զորակոչիկների հավաքի վերացումը զգալիորեն մեծացրեց Ալեքսանդր Երկրորդի հեղինակությունը գյուղացիության շրջանում: Ռուսաստանը բաժանվեց 15 զինվորական շրջանի, մշակվեց շարքային ծառայության նոր կանոնադրություն, իսկ զինվորական ուսումնարանների, ակադեմիաների ստեղծումը հնարավորություն ընձեռեց բարելավել սպայական անձնակազմի նախապատրաստումը: Բանակը հագեցվեց զենքի ժամանակակից տեսակներով, ստեղծվեց ռազմական շոգենավատորմ: Փոփոխությունների հետ միասին բանակում հրամանատարական կազմը, նախորդ ժամանակաշրջանի նման, համալրվում էր հիմնականում ազնվականներից: Հասարակական-քաղաքական մտքի հետագա կատարելագործման, կրթական համակարգի ցանցի ընդլայնման և բարձրացման գործում կարևորագույն նշանակություն ունեցան բարեփոխումները մամուլի ու լուսավորության ոլորտներում: 1865 թ. մամուլի մասին ընդունված ժամանակավոր կանոնակարգը վերացրեց մի շարք հրատարակչությունների ու կենտրոնական պարբերականների նկատմամբ նախնական զրաքննությունը: Կրթական համակարգը նույնպես ենթարկվեց նկատելի վերափոխման, որը տարածվեց տարրական, միջնակարգ դպրոցների և բարձրագույն ուսումնական հաստատությունների վրա: Ընդլայնվեց պետական, զեմստվային, եկեղեցական-ծխական, կիրականօրջա դպրոցների ցանցը, որոնցում ուսումնառությունը որպես կանոն չէր անցնում երեք տարուց: Կրթության ոլորտում շարունակվում էին առաջնակարգ դեր խաղալ դասական գիմնադիաները, որոնցում գերազանապես սովորեցնում էին հին լեզուներ՝ լատիներեն և հին հունարեն: Գիմնադիաները երիտա-

սարդներին նախապատրաստում էին համալսարաններ ընդունվելու համար: Դասական գիմնազիաներում ուսումնառությունը սկզբում յոթ տարի էր, ապա այն դարձավ ութ տարի: Գիմնազիաներ ընդունվում էին բոլոր շրջանների երեխաները՝ առանց դասնախնայի, բայց բարձր վճար հատկացնելու պայմանով: Սկսեց զարգանալ բարձրագույն կրթությունը կանանց համար: Քանի որ գիմնազիաների շրջանավարտ կանայք չէին կարող ընդունվել համալսարաններ, նրանց համար բացեցին կանանց բարձրագույն կուրսեր Մոսկվայում, Պետերբուրգում, Կազանում, Կիևում: Հետագայում նրանց թույլատրեցին մտնել համալսարաններ, բայց միայն որպես ազատ ունկնդիրներ: 1864 թ. հաստատվեց նոր կանոնակարգ համալսարանների համար, որով վերականգնվեց այդ ուսումնական հաստատությունների ինքնավարությունը, ինչը 1835 թ. վերացրել էր կայսր Նիկոլայ Առաջինը: Համալսարանների անմիջական ղեկավարությունը հանձնարարվում էր պրոֆեսորների խորհրդին, որը ընտրում էր ռեկտորին, դեկաններին, հաստատում ուսումնական ծրագրեր, լուծում վարչա-ֆինանսական ու գիտա-մանկավարժական հիմնահարցեր: XIX դ. 60-70-ական թվականների բարեփոխումները խոշոր իրադարձություն էին Ռուսաստանի պատմության մեջ: Այդ վերափոխումներն անցկացվեցին ինքնակալական պետական համակարգը նոր պայմաններին հարմարեցնելու համար: Այսուհանդերձ այս բարեփոխումները չէին սահմանափակում իշխանության վերնախավի իրավունքը: Պահպանվեցին ինքնակալությունը և կալվածատիրական հողատիրությունը, որոնք ժառանգվել էին նախորդ դարաշրջանից և պահպանվեցին մինչև 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունը:

ԵՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ

**ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ
(XIX Դ. 50-90-ԱՎԱՆ ԹԹ.)**

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

**ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
50-70-ԱՎԱՆ ԹԹ.**

**§ 1. ՌՈՒՍԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԸ
ՓԱՐԻՋԻ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԴԵՄ**

Ղրիմի պատերազմից հետո Ռուսաստանյան կայսրության դիրքերը նկատելիորեն խարխլվեցին, ընկավ նրա դերը, թուլացավ հեղինակությունը միջազգային հարաբերությունների համակարգում: Այդ պատճառով էլ ռուսական դիվանագիտությունը սկսեց հետևողականորեն պայքարել Փարիզի հաշտության պայմանագրի ծանր հոդվածները վերացնելու համար: Ռուսաստանի արտաքին քաղաքականության և դիվանագիտության առջև ծառայած կարևորագույններից կարևորագույն հիմնահարցի լուծումը դրվեց կայսերական դիվանագիտության փայլատակող նոր աստղ (Պուլկինի ժամանակակից և Ցարսկոյե Սելո լիցեյի նրա դասընկեր) Ալեքսանդր Գորչակովի վրա, որը Ալեքսանդր Երկրորդի անմիջական նախաձեռնությամբ 1856 թ. նշանակվեց արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավար: Ղրիմի պատերազմի տարիներին Գորչակովը Ռուսաստանի դեսպանորդն էր Վիեննայում: Նրա դիվանագիտական հմտության շնորհիվ հնարավոր դարձավ հեռու պահել Ավստրիային Արևելյան պատերազմին մասնակցելուց: «Ես չեմ թաքցնում, - գրում էր նորանշանակ արտգործնախարարը, - որ մենք ցանկանում ենք ազատվել 1856 թվականի պայմանագրից, միջազգային իրավունքից բացառել Սև ծովի չեզոքացումը: Մենք կհասնենք դրան, որովհետև միշտ դրան ենք ձգտել: Հուսով եմ այն տեսնել դեռևս իմ կենդանության օրոք»: Գորչակովը հասկանում էր, որ Ռուսաստանի իրավունքները սահմանափակող Փարիզի պայմանագրի կե-

տերը վերացնելու համար անհրաժեշտ էր առաջին հերթին մանրակրկիտ ու հիմնարար ձևով ուսումնասիրել ուժերի նոր հարաբերակցությունը եվրոպայում՝ միջպետական առնչությունների հնարավոր քաղաքական հեռանկարները և գործընթացների զարգացումները, մանավանդ որ մայրցամաքում գերակայությունը Պետերբուրգից անցել էր Փարիզ: Գորչակովը քաջ գիտակցում էր, որ իր մտահղացումները իրագործել զենքի ուժով ոչ միայն նպատակահարմար չէ, այլև քաղաքական տվյալ պահին անհեռանկարային է, անիրատեսական, թերևս՝ անիրագործելի: Ռուսաստանը նման պարագայում անխուսափելիորեն վերստին կբախվեր եվրոպական տերությունների հզոր խմբակցության հետ: Ռուսաստանն այլընտրանք չուներ. իր դերը բարձրացնելու և մեկուսացումից դուրս գալու միակ միջոցը քաղաքական, դիվանագիտության ուղին էր, որ պահանջում էր ժամանակ ու տևական աշխատանք միջազգային հարաբերությունների համակարգում: Ռուսաստանի արտաքին գերատեսչությունը դեկավարը, նկատի ունենալով Ֆրանսիայի փաստացի հզորացումը եվրոպայում, կատարեց նապոլեոն Երրորդի հետ մերձենալու կոնկրետ քայլեր: 1857 թ. սեպտեմբերին Շտուտհարտում կայացավ Ալեքսանդր Երկրորդի և Նապոլեոն Երրորդի հանդիպումը արտգործնախարարների ուղեկցությամբ և մասնակցությամբ: Սակայն գերազանցապես Ֆրանսիայի կայսրի վրա հենվելու ուսական դիվանագիտության մտահղացումը պարզապես ձախողվեց: «Մենք տեսնում ենք միայն Ֆրանսիային» իբրև մեր գլխավոր դաշնակից՝ քաղաքական հիմնական մարտավարությունը ի դերև ելավ: Գորչակովը համոզվելով, որ Ֆրանսիան այս հիմնախնդրում ցանկություն չունի դառնալու Ռուսաստանի հիմնական գործընկեր, որոչեց փոխել մարտավարությունը և հենվել գլխավորապես Պրուսիայի վրա՝ նկատի ունենալով Ֆրանս-պրուսական ու ավստրո-պրուսական հասունացող հակամարտությունները: Ռուս-պրուսական մերձեցման հեռանկարը նախապես չէր մտնում Գորչակովի դիվանագիտական ծրագրերի մեջ, ուստի և նախապատվությունը տրվեց գերազանցապես Ֆրանսիային ու նրա կայսրին: Իսկ Պրուսիայի հետ համագործակցությունը պետք է գլխավորապես դիտել իբրև ռազմաքաղաքական ու միջազգային հարաբերությունների գործընթացների առարկայական հետևանք ու արդյունք: Գորչակովը հստակ պատկերացնում էր մոտ հեռանկարում Պրուսիայից Ռուսաստանին սպառնացող վտանգը, մանավանդ եթե մոտ ապագայում իրականություն դառնար Հոհենցոլեռների գլխավորությամբ Գերմանիայի միավորումը: Ռուսաստանի արտգործնախարարության խոհեմ դեկավարն անձամբ ծանոթ էր Բիսմարկին՝ «պրուսացի հասարակ գինվորին», ինչպես սիրում էր իրեն անվանել ապագա «երկաթյա կանցլերը», որը ռազմաքաղաքական ծրագրերի լուծումն իրավացիորեն տեսնում էր ոչ թե

պառլամենտական երկարաշունչ և դատարկ ճառերի, այլ «երկաթի ու արյան» մեջ: Գորչակովը բոլոր հիմքերն ուներ չվստահելու Բիսմարկին: Նա ամբողջովին տեսնում էր, որ «հասարակ գինվորի» դիմակի տակ թաքնված էր խելոք ու վտանգավոր հակառակորդ: Գորչակովը հասկանում էր Ռուսաստանի համար Պրուսիայի հզորացման, առավել ևս Գերմանիայի միավորման վտանգը, որի իրագործման ճանապարհին Բիսմարկը միջոցների առջև կանգ չէր առնի, նա անկասկած քաջ ծանոթ էր Մաքիավելլու հայտնի «նպատակն արդարացնում է միջոցները» ռազմաքաղաքական կարգախոսին և դիվանագիտական մարտավարությունը: Այս է գլխավոր պատճառը, որ Գորչակովը գնալով Պրուսիայի հետ մերձեցման, այնուամենայնիվ, չէր հրաժարվում Ֆրանսիայի՝ «բնական դաշնակցի» հետ երկխոսությունից, ուստի նա խոհեմ էր համարում չփակել ռուս-ֆրանսիական համագործակցության դռները, որոնք կարող էին նպաստել համաեվրոպական հիմնախնդիրներ լուծելու ճանապարհին: Այդ մարտավարությունն իրատեսական էր, մանավանդ, որ ֆրանս-ավստրիական պատերազմը դարձավ «Ղրիմի համակարգի» կազմալուծման քաղաքական առաջին ծիծեռնակը: Ուստի Գորչակովի նախաձեռնությունները Ֆրանսիայի հետ մերձենալու ուղղությամբ լիովին համահունչ էին Ռուսաստանի ազգային-պետական շահերին, որոնք անտեսվում էին կամ չէին ընկալվում ֆրանսիական դիվանագիտության կողմից: Իսկ ավստրո-պրուսական պատերազմի նախօրյակին Գորչակովը կանգնեց երկընտրանքի առաջ՝ կամ այդ հակամարտության մեջ պահպանել զրական չեղոքություն և արդյունքում ունենալ հզոր միավորված Գերմանիա, կամ աջակցել Ավստրիային ու դրանով իսկ անորոշ ժամանակով երկարացնել «Փարիզյան համակարգը», նահանջել «Ղրիմյան համակարգի» դեմ դիվանագիտական հետևողական պայքարից, որն անհնարին էր, քանզի այն կազմում էր Ռուսաստանի արտաքին քաղաքականության գլխավոր ուղղությունը և հիմնական խնդիրը: Բիսմարկը չէր կասկածում. նա, թերևս, լիովին համոզված էր, որ Ռուսաստանի կայսրը Ղրիմի պատերազմի ժամանակ Ֆրանս-Ռուսիայի քաղաքական վարքագիծը գնահատելով իբրև դավաճանություն և ուխտադրժություն, դեռևս իր հիշողությունից չէր ջնջել այդ ամենը, ուստի և նա ոչ մի դեպքում չի խոչընդոտի Պրուսիային հաշվեհարդար տեսնելու անչնորհակալ ու ապերախտ Ավստրիայի հետ: Ավելին, Ալեքսանդր Երկրորդը ցանկանում էր Պրուսիայի միջոցով ջախջախել Սուրբ Գրքին ձեռքը դրած դաշնակից Ավստրիայի կայսրին: Բիսմարկը, անշուշտ, իրավացի էր, սակայն նա անտեսում էր ամենակարևոր քաղաքական և դիվանագիտական գործոնը՝ Ավստրիայի պարտությունը կիսարխիբեր նրա դիրքերը միջազգային հարաբերությունների համակարգում և դրանով իսկ կնպաստեր Փարիզի հաշտության պայմանագրի վե-

րացմանը: Դեռևս Նապոլեոն Երրորդի հետ զրույցի ժամանակ Ալեքսանդր Երկրորդը, պատասխանելով, թե ինչ դիրք կզբաղի ինքը, եթե Ֆրանսիան պատերազմ սկսի Իտալիայում, հարցին տվեց հստակ պատասխան. «Նա չի պատրաստվում կրկնել 1849 թ.» և չի պաշտպանի Ավստրիային: 1868 թ. Ռուսաստանի ու Պրուսիայի միջև ձեռք բերվեց բանավոր համաձայնություն, որը, փաստորեն ուներ պայմանագրի ուժ: Ռուսաստանը պարտավորվում էր Ֆրանս-պրուսական պատերազմի դեպքում պահպանել դրական չեզոքություն, իսկ Պրուսիան պաշտոնապես պարտավորվեց պաշտպանել Ռուսաստանի գլխավոր պահանջը՝ վերացնել Փարիզի պայմանագրի այն կետերը, որոնք ուղղված էին Ռուսաստանի դեմ: Ֆրանս-պրուսական պատերազմում Ֆրանսիայի պարտությունը կատարյալ էր, որովհետև 1870 թ. սեպտեմբերի 1-ի Սեդանի աղետից հետո Մակ-Մաճոնի բանակի հետ գերի հանձնվեց և անձնատուր եղավ ինքը՝ Նապոլեոն Երրորդը՝ Եվրոպայի երբեմնի հզոր տիրակալը: Ֆրանսիան դադարեցրեց դիմադրությունը և պարտվեց պատերազմում: Այսպիսով, Փարիզի հաշտության պայմանագիրը ստորագրած երկու գլխավոր տերությունները ջախջախվեցին Պրուսիայի կողմից, զգալիորեն թուլացան, որից շտապեց օգտվել Ռուսաստանը: «Ֆրանսիան, - գրում էր Գորչակովը Վիեննայում Ռուսաստանի դեսպանին, - ոչնչացրեց ինքն իրեն իր կեղծ քաղաքականությունը»: Գորչակովը 1870 թ. հոկտեմբերի 19-ին Փարիզի պայմանագիրը ստորագրած երկրներում հավատարմագրված ռուսաց դեսպաններին ուղարկեց շրջաբերական, որով նրանք պետք է ղեկավարվեին իրենց դիվանագիտական գործունեության մեջ և անմիջապես հաղորդեին պաշտոնական Պետերբուրգի տեսակետը Փարիզի պայմանագրի վերաբերյալ: «Ռուսաստանը չի կարող, - ասված էր պաշտոնական հայտարարության մեջ, - թույլատրել, որ բազմաթիվ հողվածներով խախտված պայմանագիրը պարտադիր մնա այն հողվածներում, որոնք ուղղակիորեն վերաբերում են կայսրության շահերին»: Ուստի Ռուսաստանն իրեն պարտավորված չի համարում պահպանել ու կատարել Սև ծովում իր ինքնիշխան իրավունքները և անվտանգությունը սահմանափակող Փարիզի պայմանագրի կետերը: Գորչակովը դեսպաններին հրահանգում էր բացատրել եվրոպական տերությունների կառավարություններին, որ Ռուսաստանի դիվանագիտական ելույթի նպատակն է ապահովել կայսրության անվտանգությունը, որ Փարիզի պայմանագրի մյուս բոլոր կետերը կիրառործվեն անչեղորեն: Գորչակովի շրջաբերականը պաշտոնապես հայտարարում էր, թե Փարիզի պայմանագրի այդ կետերը կորցրել են իրենց ուժը և դադարել են գործելուց: Գորչակովի շրջաբերականը Արևմտյան Եվրոպայի մայրաքաղաքներում, ինչպես և սպասվում էր, թողեց պայթած ռումբի տպավորություն և, բնականաբար սրեց այդ տերությունների և Ռուսաստանի միջպետա-

կան հարաբերությունները: Լոնդոնը պահանջեց հրավիրել միջազգային խորհրդաժողով, Ավստրո-Հունգարիան և Իտալիան պաշտպանեցին Անգլիայի առաջարկը: Սակայն այդ երկրները դուրս չեկան պաշտոնական բողոքների շրջանակներից, այսինքն՝ սահմանափակվեցին «թղթե պատերազմով»: Եվրոպական մեծ տերություններից մնում էր միայն Պրուսիան: Բիսմարկը կատարեց Ռուսաստանին մի քանի անգամ տված խոստումը: Նա նույնպես առաջարկեց հրավիրել Փարիզի պայմանագիրը ստորագրած երկրների մասնակցությամբ խորհրդաժողով, միաժամանակ հայտարարեց, թե պաշտպանում է Ռուսաստանի պահանջները՝ վերացնելու պայմանագրի «ամենաանհաջող» կետերը: Ռուսաց դիվանագիտության համար հաճելի անակնկալ էր ԱՄՆ-ի աջակցությունը, որը հայտարարել էր, թե երբեք չի ճանաչի Փարիզի պայմանագրի որոշումները, որոնք սահմանափակեցին Ռուսաստանի իրավունքները Սև ծովում: Ալեքսանդր Երկրորդը և Գորչակովը նույնպես համաձայնվեցին՝ նկատի ունենալով Պրուսիայի աջակցությունը և ստեղծված միջազգային քաղաքական իրադրությունը: Ընդ որում, Գորչակովը, սկզբունքորեն ընդունելով խորհրդաժողով գումարելու գաղափարը, առանց այլևայլության հասկացրեց, որ կմասնակցի, եթե Ռուսաստանի պահանջները և ցանկությունները ապահովվեն նախապես, իսկ խորհրդաժողովը միայն ձևականորեն կհաստատի սեծովյան նեղուցների նոր կարգավիճակը: Գորչակովն իր պաշտոնական գրագրություններում աշխատում էր յուրաքանչյուր տերության համար գտնել դիվանագիտական համոզիչ հիմնավորումներ ու ստանալ նրանց համաձայնությունը:

1871 թ. հունվարի 5-ին Լոնդոնում բացված խորհրդաժողովն իր աշխատանքը շարունակեց մինչև մարտ ամիսը և ավարտվեց ռուսաց դիվանագիտության անվիճելի հաղթանակով: Լոնդոնյան կոնվենցիայի ստորագրումից հետո Ռուսաստանն իրավունք ստացավ Սև ծովի առափնյա շրջաններում պահել ռազմանավեր ու կառուցել ռազմածովային ամրություններ և դրանով իսկ անառիկ դարձնել իր հարավային սահմանները: Դա ըստ արժանվույն գնահատեցին Ռուսաստանի հասարակության լայն շրջանները, քաղաքական մտքի ներկայացուցիչները, պարբերական մամուլը: Հասարակական-քաղաքական մտքի տարբեր ուղղությունների ներկայացուցիչները այդ ակնառու հաջողությունն իրավացիորեն կապեցին Գորչակովի անվան հետ ու իրենց գոհունակությունը և երախտագիտությունը հայտնեցին արտգործնախարարին: Գորչակովը՝ 70-ամյա դիվանագետը, վայելում էր կատարյալ հաղթանակի պտուղները և օրինաչափ է, որ ինքը արտաքին քաղաքականության այդ գերագույն հիմնախնդրի լուծումը համարեց իր դիվանագիտական գործունեության կարևորագույն նվաճումը: Սակայն Գորչակովն այս կարևորագույն հիմնահարցը լուծեց

բավականին ծանր և մեծ զոհաբերություն գնով, քանզի դրա դիմաց Ռուսաստանը որպես փոխհատուցում հարկադրված էր ոչ միայն հաշտվել, այլև իր բարյացակամ կեցվածքով նպաստել Եվրոպայի կենտրոնում նոր հզոր և կենսունակ պետություն՝ Գերմանիայի կազմավորմանը: Գերմանիայի միավորումից հետո հեռանկարում չէր բացառվում Ռուսաստանի դեմ ուղղված ավստրո-գերմանական դաշինքի կնքումը: Պատերազմում պարտված և ղզալիորեն թուլացած Ֆրանսիան չէր կարող Ռուսաստանի համար լինել հուսալի դաշնակից: Ավստրո-գերմանական դաշինքի ձևավորումը կանխելու նպատակով Ռուսաստանը համաձայնագիր կնքեց Գերմանիայի ու Ավստրո-Հունգարիայի հետ: Այսպես, 1873 թ. ծնվեց «Երեք կայսրերի դաշինքը»: Երեք միապետները՝ Ալեքսանդր Երկրորդը, Վիլհելմ Առաջինը և Ֆրանց-Իոսիֆը պարտավորվեցին միմյանց միջև ծագած տարաձայնությունները հաղթահարել միայն կոնսուլտացիաների միջոցով, իսկ նրանց վրա որևէ պետության հարձակման սպառնալիքի դեպքում համաձայնեցնել իրենց համատեղ գործողությունները: Վիլհելմ Առաջինը և հատկապես Բիսմարկը հույսեր ունեին այդ պայմանագրի օգնությամբ ստանալ ձեռքերի ազատություն Ֆրանսիայի նկատմամբ և նոր, ավելի հուժկու հարված հասցնել իր արևմտյան հակառակորդին: Սակայն Ռուսաստանի վճռական դիրքորոշումը կանխեց Գերմանիայի մտահոգացումը: 1875 թ., երբ վերստին սրվեցին ֆրանս-գերմանական հարաբերությունները, և Բիսմարկը նոր պատերազմ սկսելու պատրվակ էր փնտրում, Գորչակովը զգուշացրեց, որ Ռուսաստանը կկանխի Ֆրանսիային ջախջախելու կանցլերի ծրագրերը: Իր հերթին Ռուսաստանին չհաջողվեց կասեցնել ավստրո-գերմանական մերձեցումը: «Երեք կայսրերի դաշինքը» չարդարացրեց կողմերից ոչ մեկի հույսերը, թեև այն գոյատևեց երկար ժամանակ՝ առարկայորեն ապահովելով խաղաղ հարաբերությունները Եվրոպայի կենտրոնում:

§ 2. ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՍԻԱՆ

XIX դարի երկրորդ կեսին Միջին Ասիայի միակցումը կայսերական Ռուսաստանին աստիճանաբար դարձավ ռուսական կառավարող շրջանների, եթե ոչ առաջնային, ապա առնվազն հիմնական խնդիրներից մեկը, որը պայմանավորված էր ինչպես ներքաղաքական, այնպես էլ արտաքին քաղաքական գործոններով: Նախ՝ Միջին Ասիայի լայնածավալ տարածքը հարուստ էր հատկապես սպիտակ ոսկով՝ բամբակով, որը հույժ անհրաժեշտ էր Ռուսաստանի տնտեսության, զլխավորապես թեթև արդյունաբերության զարգացման համար: Միջին Ասիան կարող էր մի կողմից դառնալ շուկա ռուսական ապրանքների արտահանման, իսկ մյուս կողմից հումքի անսպառ աղբյուր երիտասարդ ազգային արդյունաբերության համար:

Երկրորդ պատճառը սերտորեն կապված էր ռուս-անգլիական սուր մրցակցությունից ու անհաշտ պայքարի հետ: Անգլիան ձգտում էր ոչ միայն կանխել Ռուսաստանի առաջխաղացումը, այլև հավակնում էր Միջին Ասիայով Հնդկաստանի ու Աֆղանստանի հետ կապերն էլ ավելի ամրապնդելու և յուրատեսակ կամուրջ ստեղծելու համար: Միջին Ասիան ռազմավարական ու մարտավարական տեսանկյունից ուներ բացառիկ նշանակություն, ուստի և այդ տարածքում գերիշխելու պայքարում ռուս-անգլիական հնարավոր պատերազմը կախված էր մագից: Ռուսաստանին միակցվելու նախօրյակին Միջին Ասիայում գոյություն ուներ դեռևս XVIII հարյուրամյակում ձևավորված երեք խոշոր պետական կազմավորում՝ Բուխարայի էմիրությունը, Կոկանդի և Նիվայի խանությունները: Նրանցից բացի գոյատևում էին մի քանի ինքնուրույն ավատատիրական պետական միավորումներ: Միջին Ասիայում ապրում էր շուրջ 5 միլիոն բնակչություն՝ դարգացման տարրեր մակարդակի վրա գտնվող ղանազան ազգեր և ժողովուրդներ: Տնտեսական առումով ամենազարգացածը Բուխարայի էմիրությունն էր իր մի քանի խոշոր քաղաքներով: Բուխարան, Սամարղանդը, Կոկանդը, Տաշքենդը, Նիվան համարվում էին Միջին Ասիայի առևտրա-արհեստագործական ու վարչական կենտրոններ: Դեռևս XIX դարի 50-ական թվականներից կայսերական կառավարությունը սկսում էր ընդլայնել իր ազդեցությունը Միջին Ասիայում: Արդեն 1854 թվականին ռուսները հիմնադրեցին Վերնի քաղաքը՝ ներկայիս Ալմա-Աթան, սակայն Ղրիմի պատերազմը կասեցրեց ռուսական բանակի հետագա առաջխաղացումը: Ռուսաց բանակի անցած հարուստ մարտական ուղին, ռազմական արվեստի ոլորտում հրամանատարության և գեներալների փորձը, հմտությունը անխուսափելի դարձրին նրա վճռական հաղթանակները Բուխարայի էմիրի, Կոկանդի ու Նիվայի խաների թույլ բանակների նկատմամբ: Սակայն դա բնավ չէր նշանակում, թե նրանց սպասում էր հաղթական չբերթով մտնել միջինասիական քաղաքները: Ռազմաքաղաքական գործընթացները վկայեցին, որ ռուսներին սպասում էր ուժեղ դիմադրություն ու անգամ առանձին դեպքերում մասնակի ու ժամանակավոր անհաջողություններ: Միջինասիական պետական միավորումների մասին առավելագույն տեղեկատվություն ստանալու, անգլիացիների քաղաքական ազդեցությունը թուլացնելու նպատակով ռուսական կառավարությունը Միջին Ասիա, Արևելյան Իրան և Արևելյան Թուրքեստան (Կաշգար) ուղարկեց Ն. Իգնատևի, Ն. Սանիկովի, Չ. Վալիխանովի զլխավորությամբ էրեք պատվիրակություն: Հատկանշական է, որ Սանիկովը, կատարելով իր առաքելությունը, խորհուրդ է տալիս իր կառավարությունը կապեր հաստատել Իրանում ապրող հայերի հետ, «մեր հարաբերություններն ավելի անկեղծ դարձնել եպիսկոպոսի հետ (հավանաբար նկատի ուներ կաթողիկոսին - Մ. Մ.), որի միջոցով մենք կիմանանք պարսկահայերի կարիքները...»:

Վերնի ամրոցի հիմնադրումից տասը տարի անց ուսաները գրավեցին Ջիմբենդը, որով վերացավ Կոկանդի խանության գերիշխանությունը Հարավային Ղազախստանի նկատմամբ: Սակայն գեներալ-մայոր Ն. Չերնյակի 1864 թ. գրոհը Տաշքենդի վրա հաջողություն չունեցավ: Միջին Ասիայի ամենախոշոր և 100 հազար բնակչություն ունեցող Տաշքենդ քաղաքը գրավել փոքրաթիվ ուժերով (ընդամենը հազար մարդ) բնականաբար պետք է կանխավ ձախողվեր: Սակայն Չերնյակին թեաթափ չարեց Տաշքենդի դեմ ձեռնարկված առաջին անհաջող գրոհը: Նա հմտորեն օգտագործեց այդ քաղաքի համար Կոկանդի և Բուխարայի խանությունների միջև ընթացող պայքարը և երկպառակությունները, ապա, պատրվակ դարձնելով Տաշքենդի բնակչության Ռուսաստանից օգնություն ստանալու դիմումը, առանց Պետերբուրգի հետ իր մարտավարությունը համաձայնեցնելու, սեփական նախաձեռնությամբ երկրորդ անգամ շարժվեց քաղաքի վրա: Ռուս գեներալը փոքրաթիվ ուժերով՝ ընդամենը երկու հազար զինվորով, հաղթեց Կոկանդի խանի 15 հազարանոց բանակին, ներխուժեց քաղաք ու երկօրյա փողոցային մարտերից հետո գրավեց Տաշքենդը: Այդ հաղթանակի շնորհիվ Չերնյակը դարձավ օրվա անվիճելի հերոսը, նրան քաղաքի բնակչությունը, ի նշան հնազանդության, անվանեց «տաշքենդյան առյուծ»: Ընդհանրապես Միջին Ասիայի գրավված քաղաքներում ու սահմանամերձ կայսերական տարածքներում տեղակայված ռուսական բանակի գեներալները, չցանկանալով իրենց ձեռքերը կապված տեսնել, հաճախ կենտրոնից շատանալով պաշտոնական հրամաններ, իրենց սեփական նախաձեռնությամբ դիմում էին հաջող մարտական գործողությունների ու դրանով իսկ ընդլայնում կայսրության առանց այն էլ լայնածավալ սահմանները: Ռուս գեներալների մեջ Չերնյակն աչքի ընկավ իր ռազմատենչությունը, վճռականությամբ, համարձակությամբ, որի համար էլ կենտրոնը, որպես կանոն, ներողամիտ էր նրա ինքնուրույն, հաճախ անկանխատեսելի գործողությունների նկատմամբ:

Տաշքենդը 1866 թ. մտավ Ռուսաստանի կազմի մեջ, իսկ նրա բնակիչներն ընդունեցին ռուսական հպատակություն: Այդպիսի որոշում ընդունելու մեջ մեծ էր Չերնյակի ծառայությունը, նրա գործողությունը պաշտպանություն էր գտնում ռուսական հասարակության շրջանում, որն այդ հաղթանակի մեջ տեսնում էր լուրջ գործոն եվրոպայում Ռուսաստանի հեղինակությունը բարձրացնելու համար: Ռազմատենչ ու պատերազմի հերոս գեներալի հեղինակությունն այնքան մեծ էր, որ ոչ միայն ռազմական, այլև արտաքին գործերի նախարարությունը հիմնավորեց նրա ինքնուրույն գործողությունները՝ արդարացնելով այն Տաշքենդի դեմ Բուխարայի էմիրի ձեռնարկած թշնամական քայլերով: Մեկ անգամ ևս ապացուցվեց դարեր շարունակ գործող չգրված հավերժական ճշմարտություն-

նր՝ հաղթողներին չեն դատապարտում, այլ շնորհավորում են, հաշվի նստում, երկրպագում ու հերոսացնում: 1866 թ. Թուրքեստանյան մարզի զինվորական նահանգապետ նշանակվեց գլխավոր շտաբի գեներալ-մայոր Դ. Ռոմանովսկին, որը շարունակեց Չերնյակի հարձակողական մարտավարությունը Միջին Ասիայում՝ հարվածն ուղղելով գլխավորապես Բուխարայի էմիրության դեմ: Ինչպես մյուս խանությունները, այնպես էլ այդ էմիրությունը, թույլ պետություններ էին, հատկապես ռազմական տեսանկյունից: Եվ օրինաչափ է, որ Բուխարայի էմիրի զորքերը կրում էին ծանր պարտություններ: Մեծ նշանակություն ունեցավ հատկապես Սոջենթի գրավումը 1866 թ. մայիսին, որի համար Ռոմանովսկին ստացավ սուրբ Աննայի I աստիճանի չքանչան: Ռուսական զորքերը դրանից հետո մտան Բուխարայի էմիրություն և կանգնեցին Սամարղանդի մոտակայքում: Ռոմանովսկին կարողացավ Ռուսաստան վերադարձնել դեռևս Չերնյակի ժամանակ ուղարկված և Բուխարայի էմիրի կողմից ուխտադրժորեն աքսորված փոքրաթիվ ռուսական ղեսպանությունը:

1867 թ. ապրիլին Ալեքսանդր Երկրորդը հրապարակեց իր որոշումը Թուրքեստանյան գեներալ-նահանգապետություն ստեղծելու մասին, որի գեներալ-նահանգապետ, ռազմական նախարար Դ. Միլյուտինի միջնորդությամբ կայսրը նշանակեց գեներալ-համհարզ Կ. Կաուֆմանին: Նա ստացավ լայն լիազորություններ Միջին Ասիայում քաղաքական ու առևտրատնտեսական հիմնահարցեր լուծելու համար: Կաուֆմանն իր լիազորություններն օգտագործում էր տեղի խանությունների հետ առևտրատնտեսական փոխհարաբերակապեր հաստատելու համար՝ դրա մեջ տեսնելով յուրատեսակ միջոց «խաղաղ» ճանապարհով միակցել կամ գերիշխել Միջին Ասիայում: 1868 թ. մարտին Կաուֆմանի ուղարկած ղեսպանությունը Կոկանդի խանության հետ կնքեց պայմանագիր, որի համաձայն երկու կողմերի վաճառականները ստանում էին ազատ առևտրի իրավունք: Արտաքուստ հավասար, բայց իրականում կայսերական զորքերի կողմից շրջապատված Կոկանդի խանությունն ընկնում է Ռուսաստանի հսկողության ներքո: Կաուֆմանը ցանկանում էր այդպիսի պայմանագիր կնքել նաև Բուխարայի էմիրի հետ, որին ուղարկեց մշակված նախագիծ: Ռուսաստանում չուրջ հինգ ամիս սպասում էին նրա պատասխանին: Վերջապես էմիրը տեղեկացրեց պայմանագիրը ստորագրելուց հրաժարվելու և «սրբազան պատերազմ» հայտարարելու մասին: Կաուֆմանի գլխավորությամբ կայսերական ուժերը ջախջախեցին էմիրի զորքերին: Սամարղանդում պայքարը սրվեց էմիրին պաշտպանող հոգևորականության և առևտրա-արհեստագործական շրջանների միջև, որոնք դեմ չէին միանալու Ռուսաստանին: Երբ ռուս զինվորները 1868 թ. մայիսին մոտեցան քաղաքին, Սամարղանդի դարպասները բաց էին նրանց առաջ: Բուխարայի

էմիրի հետ կնքված պայմանագրով Ռուսաստանին անցան Սոջենդ, Ուրա-
Տյուրե քաղաքները: Ռուս Հպատակները ստացան ազատ առևտրի և էմի-
րուիթյունում առևտրական գործակալութիւններ հաստատելու իրավունք:
էմիրը պարտավորվեց վճարել 500 հազար ռուբլի ռազմատուգանք: Այս-
պես, Ռուսաստանի դիվանագետները և բարձրաստիճան գիւղերականնե-
րը համագործակցելով ու փոխադարձաբար լրացնելով միմյանց, զուգակ-
ցելով դիվանագիտական խաղաղ և դինված ուժերի գործողութիւնները,
դանդաղ, բայց հետևողականորեն ամրապնդում էին Ռուսաստանի նվա-
ճումները Միջին Ասիայում: Գորչակովը և Միլյուտինը, ցանկանալով կա-
յունացնել Բուխարայի էմիրութիւնում եղած ռուսամետ ուժերի դիրքերը և
կայունացնել քաղաքական իրադրութիւնը, հնարավոր էին համարում
Սամարղանդը վերադարձնել էմիրին, որին կտրականապես դեմ էր
Կաուֆմանը: Չերնյակի նման մեծ հեղինակութիւն վայելող գեներալ-նա-
հանգապետը Ալեքսանդր Երկրորդի հետ անձնական հանդիպման ժամա-
նակ համոզում էր կայսրին, որ Սամարղանդը վերադարձնել էմիրին,
կնշանակել թուլացնել Ռուսաստանի դիրքերը, այն կդիտվեր իբրև նրա
թուլութեան նշան: Կայսրը համաձայնվեց Կաուֆմանի հետ: Սամարղանդը
մնաց Ռուսաստանի կազմում, իսկ նրա գործերը պատրաստվում էին գրա-
վել Բուխարան: Այն ղգալիորեն կամրապնդեր Ռուսաստանի քաղաքական
ու ռազմավարական դիրքերը Միջին Ասիայում, կհարկադրեր Անգլիային
դե-ֆակտո ճանաչել նրա գերիշխանութիւնը: Թուրքեստանյան գեներալ-
նահանգապետը առաջնային էր համարում քաղաքական իրադրութեան
ամրապնդումը Միջին Ասիայում և այդ նպատակով առաջարկում էր օրի-
նական տիրակալ ճանաչել Կոկանդի խանին, որովհետև նա միջինասիա-
կան կառավարիչներից առաջինը հասկացավ «Ռուսաստանի քաղաքա-
կան ծրագրերի իմաստը»: Կաուֆմանը կարևորեց Բուխարայի էմիրի հետ
հարաբերութիւնների կարգավորումը: Ընդ որում, նրա կարծիքով Ռու-
սաստանի տնտեսական ու քաղաքական շահերից էր պահպանել Բուխա-
րայի էմիրութեան ինքնուրույնութիւնը և առաջարկում էր այն չմտցնել
կայսրութեան կազմի մեջ, քանզի այդ դեպքում անհրաժեշտ կլիներ այն-
տեղ պահել մեծ թվով զորք ու հատկացնել հսկայական միջոցներ: Ուիվայի
խանութեան հիմնախնդրում Կաուֆմանն ուղղակի պահանջեց նրա դեմ
կիրառել զինված ուժ, քանզի խանը չէր ուզում ճանաչել Ռուսաստանի
գերիշխանութիւնը, ուստի և անհրաժեշտ է վճռական հարված հասցնել
Ուիվային, բայց նույն նկատառումներով ձևոնպահ մնալ կայսրութեանը
միակցելուց: Կաուֆմանը փաստորեն հանրագումարի բեթեց ու ընդհան-
րացրեց Ռուսաստանի քաղաքականութիւնը և ռազմական գործողու-
թիւնները Միջին Ասիան նվաճելու ուղղութեամբ: Կայսերական կառավա-
րութիւնը հիմնականում հավանութեան արժանացրեց Կաուֆմանի գոր-

ծուներութիւնը գեներալ-նահանգապետի պաշտոնում ու նրա ներկայաց-
րած մտտեցումները Միջին Ասիայի հիմնահարցն ամբողջովին լուծելու հա-
մար: Ուիվայի դեմ արշավանքի նախօրյակին Կաուֆմանին հրահանգվեց
Բուխարայի էմիրի հետ հաշտվելու մասին, 1868 թ. պայմանագրին կցել
լրացուցիչ համաձայնագիր, որը կոնկրետացնելու, հստակեցնելու էր
ռուս-բուխարական սահմանը: 1873 թ. սեպտեմբերին կնքվեց ռուս-բու-
խարական նոր պայմանագիր, որը 1868 թ. պայմանագրի համեմատու-
թեամբ էլ ավելի էր ամրադրում Բուխարայի ենթակայութիւնը Ռուսաս-
տանին: Կայսերական վարչութիւնը երաշխավորում էր էմիրին նրա տի-
րույթների տարածքային ամբողջականութիւնը և օգնութիւնը իր թշնա-
մինների դեմ պայքարում, փոխարենը ստանում էր Բուխարայի խանութեան
առաջին նախարարին ընտրելու իրավունք: էմիրի իրավասութեան տակ
էին մնում ներքին կառավարման հարցերը: Բուխարայի էմիրութեան ու
Կոկանդի խանութեան լիակատար ինքնուրույնութեան կորուստը ռարդաց-
րեց Ուիվայի խանութեան քաղաքական դրութիւնը:

Կաուֆմանը, Պետերբուրգ հղած ղեկուցագրերում տեղեկացնում էր
դիվանագիտական հարաբերութիւնների ասպարեզում անհաջողութեան
ու Ուիվայի հետ ռազմական բախման անխուսափելիութեան մասին: Ռու-
սաստանի նկատմամբ Ուիվայի խանութեան թշնամական վարքագիծը
Կաուֆմանը հիմնավորում էր ռուսահպատակներին գերելու, նրանց ազա-
տելուց հրաժարվելու փաստերով: Կայսերական 12 հալարանոց զորքը
Կաուֆմանի գլխավորութեամբ 1873 թ. մայիսին մտավ Ուիվա, խանի վատ
զինված ու փոքրաթիվ զորքը չկարողացավ դիմադրել ու շուտով ճանաչեց
իր պարտութիւնը:

1873 թ. օգոստոսին Կաուֆմանի ու Մուհամեդ-Մահիմ խանի միջև
կնքվեց հաշտութեան պայմանագիր, որի համաձայն խանը ճանաչեց իր
վասալական կախվածութիւնը Ռուսաստանից ու հրաժարվեց վարել ինք-
նուրույն արտաքին քաղաքականութիւն: Ռուս վաճառականներն ազատ-
վում էին մաքսեր վճարելուց ու ստանում ազատ առևտրի իրավունք խա-
նութեան բոլոր քաղաքներում ու գյուղերում: Ուիվան պարտավորվում էր
20 տարվա ընթացքում վճարել 2200 հազար ռուբլի ռազմատուգանք: Ուի-
վան, Բուխարան, Կոկանդը 1873 թ. դարձան Ռուսաստանի վասալական
տիրույթները, որոնց կառավարիչները ներքաղաքական հարցերում պահ-
պանում էին ազատ գործելու իրավունք: Ուիվայի խանութիւնում կայսե-
րական կառավարութիւնն անմիջապես վերացրեց ստրկութիւնը և
ստրկավաճառութիւնը, ազատվեցին շուրջ 40 հազար գերիներ, որոնցից
10 հազար պարսիկներ: Նրանց ռուսների հսկողութեամբ հասցրին մինչև
Իրանի սահմանը: Միջին Ասիայում Ռուսաստանի քաղաքականութեան նոր
հաջողութեան մասին է վկայում այն փաստը, որ 1884 թվականի հունվա-

րի 1-ին «ժողովուրդական ներկայացուցիչների ժողովը» որոշում կայացրեց Մերվ քաղաքը Ռուսաստանին կամավոր միացնելու մասին: 1884 թվականի Հունվարի 31-ին Աշխարհում խանը հավատարմություն երդում տվեց Ռուսաստանի կայսրին: Կայսրության կազմի մեջ մտած Մերվ քաղաքը ստացավ ներքին ինքնավարություն, պահպանվեցին մահմեդական դավանանքը և սովորույթները, արգելվեց ստրկավաճառությունը: Այսպիսով, XIX դ. երկրորդ կեսին Ռուսաստանյան կայսրության կազմի մեջ մտավ Միջին Ասիայի տարածքը՝ Կասպից ծովից մինչև Տյան Շան լեռը և Արալյան ծովից մինչև Աֆղանստանի սահմանը: Միջին Ասիայում XIX դարի 70-80-ական թվականներին տեղի ունեցան առանձին հակառուսական և հակահնդկալական ելույթներ, ապստամբություններ, խռովություններ, որոնք առանց մեծ դժվարության ճնշվում էին տեղական կայսերական վարչակազմի կողմից: Միջինասիական խանությունները և էմիրությունները իրրև կախյալ պետական միավորումներ մնացին կայսերական Ռուսաստանի կազմում մինչև 1917 թվականը: Միջին Ասիայում Ռուսաստանին միակցվելուց հետո վերջ տրվեց ավատատիրական երկպառակություններին: Ռուսաստանի նկատմամբ թշնամաբար տրամադրված մահմեդական հոգևորականության ու ավատատերերի ուժը և ազդեցությունը ջրատելու նպատակով ինքնակալությունն անցկացրեց հողային ռեֆորմ: Հոգևորականների հողային սեփականությունը զգալիորեն կրճատվեց և դրա մի մասը տրվեց գյուղացիներին: Պետական հողերը և այն հողերը, որոնք նախկինում գյուղացիները վարձակալում էին ավատատերերից, անցան նրանց ժառանգական օգտագործման պայմանով ու իրավունքով: Երկրամասի տնտեսության զարգացման համար մեծ նշանակություն ունեցավ երկաթուղային շինարարությունը: Այն վերացրեց Միջին Ասիայի ժողովուրդների մեկուսացվածությունը, նահապետական կենցաղը, խթանեց տնտեսության և մշակույթի զարգացումը: Միջին Ասիան Ռուսաստանի համար դարձավ բամբակի հիմնական մատակարարողը: Միջին Ասիայում կառուցվեցին բամբակագտիչ գործարաններ, մեքենանորոգման արհեստանոցներ և այլ ձեռնարկություններ: Ռուս գիտնականները դզալի ներդրում ունեցան երկամասի բնական հարստություններն ուսումնասիրելու գործում: Նրանք հայտնաբերեցին քարածխի, նավթի, պղնձի, կապարի հանքավայրեր:

Այս բոլորով հանդերձ Միջին Ասիայի ժողովուրդները, այնուամենայնիվ, կորցրեցին զլխավորը, հիմնականը՝ թեկուզև ավատատիրական-խանական, բայց և այնպես ազգային պետականությունը:

Միջին Ասիայի միակցմանը զուգահեռ Ռուսաստանը շարունակում էր Սիբիրի վիթխարի տարածությունների տնտեսական յուրացումը: Սիբիրը զարգանում էր իրրև կայսրության բաղկացուցիչ մաս, նկատելի էր տեղա-

ցի ժողովուրդների տնտեսական ու քաղաքական կյանքի առաջընթացը, մանավանդ երբ ստրկությունն արգելվեց և վերացվեց: XIX դարի առաջին կեսի ծովային գիտարշավների ժամանակ Սիբիրում և Հեռավոր Արևելքում կատարվեցին կարևոր աշխարհագրական հայտնագործություններ: Մերձամուրը և Ուսսուրական երկրամասը հետազոտելու համար մեծ նշանակություն ունեցավ Գ. Նևելսկոյի ղեկավարությամբ Ամուրյան գիտարշավը:

XIX դարի երկրորդ կեսին Սիբիրում և Հեռավոր Արևելքում հիմնադրվեցին և արագ աճեցին նոր քաղաքներ՝ Նիկոլաևսկը, Բլագովեշչենսկը, Խարաբովսկը, Վլադիվոստոկը: Վերջինս դարձավ Հեռավոր Արևելքի տնտեսական, վարչական, մշակութային կենտրոնը:

§ 3. ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ԿԱՅՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՇՆՈՎՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ ԵՎ ԽԱՂԱՂՕՎԿԻԱՆՈՍՅԱՆ ԵՎԱՋԱՆՈՒՄ

XIX դարի երկրորդ կեսից կայսերական Ռուսաստանի ուշադրությունը սևեռվեց նաև Հեռավոր Արևելքին ու Խաղաղօվկիանոսյան ավազանին, քանզի Ղրիմի պատերազմից հետո Ռուսաստանի դիրքերի նկատելի թուլացումը Եվրոպայում անհրաժեշտ էր փոխհատուցել ակտիվ ռազմաքաղաքական գործողություններով ոչ միայն Միջին Ասիայում, այլև Չինաստանում, Ճապոնիայում, Մանջուրիայում ու Կորեայում: Այդ հիմնախնդիրները հրատապ էին ինչպես այդ աշխարհաքաղաքական տարածքում սեփական գերիշխանությունը հաստատելու, ռազմավարական դիրքերն ամփական դելու, այնպես էլ իր սահմանների անվտանգությունն ապահովելու համար: Ռուսաստանին անհրաժեշտ էր Հեռավոր Արևելքում և Խաղաղօվկիանոսյան ավազանում ապահովել կայուն իրավիճակ: Ռուսաստանի և Չինաստանի չահերից էր հնարավորինս արագ անցկացնել ռուս-չինական տարածքային սահմանազատումը և պայմանագրի կնքումը, այլապես անհնարին կլիներ կարճ ժամանակաշրջանում՝ 1858 թ. մայիս-հունիս ամիսներին Այգունում ու Տյանցզինում ստորագրել երկու պայմանագիր: 1858 թ. մայիսի 16-ին (28) Ն. Մուրավյովի ու Չինաստանի կողմից լիազորված Իչանի միջև կնքվեց Այգունի պայմանագիրը, որի համաձայն Ամուր գետի ձախ ափին ընկած հողերը ճանաչվեցին Ռուսաստանի տիրույթներ, իսկ այդ գետի աջ ափը մինչև նրա մեջ Ուսսուրի գետի թափվելը Չինաստանին պատկանող հողեր: Ուսսուրից արևելք, մինչև ծովն ընկած հողերը մնացին չսահմանազատված ու ճանաչվեցին որպես երկու կայսրությունների ընդհանուր տիրապետության տակ գտնվող տարածքներ: Հատկանշական է, որ սահմանազատում չէր անցկացվել Ներչինսկի 1689 թ. կնքված պայմանագրի ժամանակներից, որով Ռուսաստանը համաձայնվեց սահմանամերձ շրջաններում Չինաստանին զիջել որոշ տարածք-

ներ: Այս առումով Այգուների պայմանագիրը Ռուսաստանի Համար նկատելի առաջընթաց էր ներչինակի համաձայնագրի համեմատությամբ: Այգուների պայմանագրի ներածականում արձանագրված է, որ այն կնքվել է երկու տերությունների կողմից «ընդհանուր համաձայնությամբ, հանուն պետությունների հավերժ փոխադարձ մեծ բարեկամության, նրանց հպատակների շահի համար և օտարերկրացիներից պաշտպանվելու համար»: Պայմանագիրը սահմանում էր, որ Ամուր, Ուսսուրի, Սունգարի գետերով կարող են նավարկել միայն երկու երկրների նավերը, թույլատրվում էր փոխադարձ առևտուր ուսու և չինական հպատակների միջև: Այգուների պայմանագիրն արգելում էր անգլիական, ֆրանսիական, ամերիկյան նավերի մուտքը Ամուր, Ուսսուրի, Սունգարի գետեր, արգելափակում էր առևտրական կապեր հաստատելու հնարավորությունը: Պայմանագիրը վավերացվեց Պեկինում և Պետերբուրգում, ամրապնդեց Ռուսաստանի դիրքերը Հեռավոր Արևելքում և Ուաղաղ օվկիանոսի հյուսիսային շրջանում: Ավելին, 1858 թ. հունիսի 1-ին (13) Տյանցզինում ստորագրվեց ուսու-չինական պայմանագիր, որով կողմերի միջև հաստատվում էր խաղաղություն և բարեկամություն, երաշխավորվում էր ուսուների անձնական անվտանգությունը և նրանց սեփականությունը Չինաստանում, իսկ չինացիներին՝ Ռուսաստանում: Կայսերական կառավարությանն իրավունք էր վերապահվում Պեկին ուղարկել (ժամանակավոր) իր ղեկավարողներին և հյուպատոսներ նշանակել Ռուսաստանի համար բացված նավահանգիստներում: Իսկ 1860 թ. նոյեմբերի 2-ին (14) Պեկինում ստորագրված պայմանագրով Ուսսուրի գետի աջ ափին ընկած հողերն անցան Ռուսաստանին, ձախը՝ Չինաստանին: Այսպես Ուսսուրական երկրամասը վերջնականապես ճանաչվեց իբրև կայսերական Ռուսաստանի անբաժանելի տարածք: Պեկինի պայմանագրին կցված քարտեզի համաձայն սահմանագիծն անցնում էր Ամուր, Ուսսուրի, Սունգաչա գետերով, Ուսսուրի լճով, որից հետո Հեռավոր Արևելքում կայսերական Ռուսաստանի նոր հարևան էր դառնում Կորեան: Ամբողջ սահմանի երկայնքով թույլատրվում էր ցամաքային առևտուրը: Պեկինի պայմանագրի հոդվածները հաստատում էին Այգուների և Տյանցզինի համաձայնագրերը: Հեռավոր Արևելքում Ռուսաստանի սահմանների անվտանգությունը և քաղաքական գերիշխանության հաստատումը հրատապ էր դարձնում Ճապոնիայի հետ միջպետական հարաբերությունների կարգավորումը, սահմանազատման անցկացման անհրաժեշտությունը:

Չինաստանից հետո օրակարգի հիմնահարց էր դառնում Ճապոնիան, մանավանդ որ նրա կառավարող շրջանները ձգտում էին ամրանալ Կուրիյան կղզիներում և Սախալին թերակղզում: Ռուսաստանի պետական այրերի համար ցանկալի չէր ԱՄՆ-ի քաղաքական գերիշխանությունը Ճապոնիայում: Սակայն այս մտահոգացման իրագործումը պահանջում էր

մեծ ու տևական աշխատանք, որովհետև Ճապոնիան տարածաշրջանի մյուս տերությունների նման կենսագործում էր երկիրն արտաքին աշխարհից լիովին մեկուսացնելու քաղաքականություն, որը դժվարացնում էր առևտրատնտեսական ու միջպետական հարաբերությունների հաստատումը: Ճապոնիայի կառավարող այրերը մի կողմից զգուշանում էին Ռուսաստանից, իսկ մյուս կողմից նրա մեջ տեսնում էին հակալիզի ուժ ընդդեմ արևմտաեվրոպական երկրների և ԱՄՆ-ի, չէին թաքցնում, որ Ռուսաստանը Ճապոնիայի համար «պաշտպան է ուրիշ երկրների դեմ»: Հետևապես, եթե Միջին Ասիայում ու Չինաստանում քաղաքական գերիշխանություն համար Ռուսաստանի գլխավոր հակառակորդի դերում հանդես էր գալիս հիմնականում Անգլիան, մասամբ նաև Ֆրանսիան, ապա Ճապոնիայի հիմնախնդրում ակտիվություն էր ցուցաբերում հիմնականում ԱՄՆ-ը: Միմոռայում 1855 թ. հունվարի 26-ին (փետրվարի 7) ստորագրված պայմանագրով դիվանագիտական հարաբերություններ հաստատվեցին Ռուսաստանի և Ճապոնիայի միջև: Ճապոնիան ուսուական նավերի և առևտրի համար բացում էր Հակոդատե, Միմոռա, Նահասակի նավահանգիստները: Ռուսաստանը կարող էր այնտեղ ուղարկել իր հյուպատոսներին: Դե-յուրե ճանաչումը որակապես նոր էլ բացեց երկու պետությունների հարաբերությունների պատմության մեջ: Սակայն Սախալինի և Կուրիյան կղզիների պատկանելության հիմնահարցը երկու երկրների միջպետական հարաբերություններում դարձել էր յուրատեսակ կոմպլեքս: Ռուսները փորձում էին ապացուցել, որ Սախալինն արդեն հնուց պատկանում էր Ռուսաստանին և առաջարկում էին ճապոնացիներին ճանաչել պատմականորեն հաստատված իրողությունը, հիմնավորում, որ Սախալինն իրենց տերության համար խիստ անհրաժեշտություն է՝ գերազանցապես անվտանգության ապահովման տեսանկյունից: Ընդ որում, ուսուները Ճապոնիայի ներկայացուցիչներին տեղեկացնում էին, որ Սախալինը Ռուսաստանին է անցել Այգուների պայմանագրով և առաջարկում էին ուսու-ճապոնական սահմանն անցկացնել Լապերուզայի նեղուցով, բայց մերժվում էին ճապոնացիների կողմից: Սակայն Ճապոնիան շուտով փոխեց իր մարտավարությունը Սախալինի հարցում և որոշեց համարժեք դիջման պայմանով այն ճանաչել կայսերական Ռուսաստանի տարածք: Ճապոնիայի պետական այրերը նկատի էին առնում, որ իրենք չունեն բավարար ուժեր, որպեսզի կարողանան Ռուսաստանի կամքին հակառակ հաջատանել իրենց բացարձակ գերիշխանությունը կղզում: Դա իսկապես իրատեսական մտեցում էր, քանզի Ճապոնիան ի վիճակի չէր բռնություններ, պարտադրանքով հարկադրել Ռուսաստանին իրեն դիջել Սախալինը: Ռուսաստանը նույնպես, ցանկանալով կարգավորել Սախալինի ձգձգվող հիմնահարցը և

չարել Հարևան երկրի հետ միջպետական Հարաբերությունները, համա-
ձայնվեց Կուրիյան կղզիները զիջել Ճապոնիային: 1875 թ. ապրիլի 25-ին
(մայիսի 7-ին) Պետերբուրգում ստորագրվեց ռուս-ճապոնական պայմա-
նագիր, որով վերջնական լուծվեցին Սախալին կղզու և Կուրիյան կղզիների
հիմնահարցերը: Պայմանագրով ամբողջ Սախալինն անցնում էր Ռուսաս-
տանին, վերջինս իր հերթին ճապոնիային էր զիջում Կուրիյան կղզեխումբ
կազմող 18 կղզիները: Ճապոնական նավերին տրվում էր նավարկության
ու ձկնորսության իրավունք Սախալինի ջրերում, Օխոտյան ծովում և Կամ-
չատկայում, առավել բարենպաստ կարգավիճակ առևտրի ոլորտում: Ճա-
պոնացիներին հնարավորություն էր ընձեռվում մնալ Սախալինում, իսկ
ռուսներին՝ Կուրիյան կղզիներում: Նրանք, պահպանելով իրենց ունեց-
վածքը և դավանանքի ազատությունը, միաժամանակ պարտավոր էին են-
թարկվել կղզիներին տիրող երկրների օրենքներին: Պետերբուրգի պայմա-
նագիրը երկար ժամանակով կայունացրեց և ամրապնդեց ռուս-ճապոնա-
կան միջպետական, քաղաքական ու առևտրատնտեսական Հարաբերու-
թյունները: Հաղթահարվեց երկու երկրների հնարավոր բախման գլխավոր
պատճառը՝ Սախալինի և Կուրիյան կղզիների հիմնահարցը: Կուրիյան
կղզիների կորուստը սակայն Ռուսաստանի համար լուրջ պարտություն
էր, որը Պետերբուրգը այդ փուլում թերագնահատում էր ու լիովին չէր ըն-
կալում: Կուրիյան կղզիները հետագայում ճապոնիայի համար դարձան
կարևոր հենակետեր Ռուսաստանի և ԱՄՆ-ի դեմ պայքարում:

Ռուս-չինական և ռուս-ճապոնական Հարաբերությունների լույսի ներ-
քո Ռուսաստանը կարևորում էր ռուս-կորեական առնչությունները: Թեև
Ռուսաստանը և Կորեան ունեին ընդհանուր սահման, այնուամենայնիվ,
երկու երկրների միջև միջպետական Հարաբերությունները փաստորեն
բացակայում էին՝ Կորեայի կառավարության մեկուսացման քաղաքակա-
նության պատճառով: Միայն 1884 թ. Սեուլում կնքվեց ռուս-կորեական
բարեկամության և առևտրի մասին պայմանագիր, որը նպաստեց երկու
երկրների միջև տնտեսական կապերի զարգացմանը: Պայմանագիրը
կնքվեց այն փուլում, երբ ուժեղացել էր չին-ճապոնական հակամարտու-
թյունը Կորեայում գերիշխելու համար: Կորեա մտցվեցին չինական ու ճա-
պոնական զորքեր և ստեղծվեց պատերազմի ծագման անմիջական
փտանգ: Կորեան նման պայմաններում ցանկանում էր Ռուսաստանի հետ
«ամենասերտ մերձեցումը» օգտագործել ճապոնիայի ու Չինաստանի դեմ:
Ավելին, Կորեան անգամ դեմ չէր Ռուսաստանի քաղաքական հովանավո-
րությունը, մանավանդ որ Անգլիան իր հերթին ձգտում էր կամ գնել, կամ
էլ գրավել ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող կորեական
Կոմունդու կղզիները: Ռուսաստանը, իհարկե, չահագրգռված էր Կորեա-

յում ուժեղացնել իր ազդեցությունը, և թվում էր, թե նա կօգտվի պատեհ
առիթից ու կրնդունի այդ հրապուրիչ և աննախադեպ առաջարկը: Սակայն
Ռուսաստանն իրատեսորեն գնահատելով ուժերի հարաբերակցությունը
Հեռավոր Արևելքում, չցանկանալով բարդացնել մյուս կրկրների հետ
առնչությունները, ձգտելով չխախտել քաղաքական ստատուս-քվոն, խո-
հեմաբար որոշեց չօգտագործել նման հաղվադեպ հնարավորությունը: Տե-
րությունների հակաքայքերը կդառնային անխուսափելի, որոնք կապակա-
յունացնեին առանց այն էլ խարխուլ հավասարակշռությունը Նաղաղ օվ-
կիանոսի ավազանում: Ճապոնիայի հետ միջպետական խաղաղ հարաբե-
րությունների պահպանման կարևորության մասին է վկայում Թագաժա-
ռանգ Նիկոլայ Ալեքսանդրովիչի 1891 թ. ապրիլյան այցը Ճապոնիա: Ան-
գամ տհաճ, թերևս անհավատալի ու անբացատրելի միջադեպը Օցու քա-
ղաքում էապես չանդրադարձավ ռուս-ճապոնական միջպետական հարա-
բերությունների վրա: Օցուի ճապոնական մի ոստիկան անսպասելիորեն
հարձակվեց թագաժառանգի վրա և սուսերով հարված հասցրեց նրա
գլխին, որից առաջացած սպին մնաց մինչև ապագա կայսրի ողբերգական
մահը:

Ճապոնա-չինական 1894-1895 թթ. պատերազմը պարտադրեց Ռու-
սաստանին հստակեցնել ռազմաքաղաքական դիրքորոշումը պատերազ-
մող երկրների նկատմամբ: Ճապոնիան, առիթ դարձնելով Կորեայում ծա-
գած գյուղացիական ապստամբությունը, զորք մտցրեց և 1894 թ. հուլիսի
23-ին գրավեց Սեուլը: Ճապոնացիները հուլիսի 25-ին խորտակեցին չինա-
կան զինվորներով տրանսպորտային նավը և առանց պատերազմ հայտա-
բարելու հարձակվեցին Չինաստանի վրա: Մինչև պատերազմի սկիզբը չի-
նական կառավարությունը, ձգտելով կանխել ճապոնիայի հարձակումը,
փորձեց ստանալ Ռուսաստանի միջնորդությունը, ոչ առանց հիմքի, են-
թադրելով, թե ճապոնացիների ներխուժումը մայրցամաք չի կարող դժգո-
հություն և մտահոգություն չառաջացնել Պետերբուրգում: Ռուսաստանը,
որոշ տատանումներից հետո, հրաժարվեց միջնորդությունից: Սակայն ան-
հնարին էր թույլատրել ճապոնացիներին գրավելու Կորեական թերա-
կղզին և դրանով իսկ Ռուսաստանի համար Հեռավոր Արևելքում ստեղծել
«նոր Բոսֆոր»: Ռուսաստանն այդ ուղղությամբ չհասցրեց կատարել որևէ
կոնկրետ քայլ, քանզի ճապոնիան արագորեն ջախջախեց Չինաստանին և
իր պարտված հակառակորդին փաթաթեց հաշտության չափազանց ծանր
պայմաններ: Երբ սկսվեց ճապոնա-չինական պատերազմը, Ռուսաստանի
գահին էր Ալեքսանդր Երրորդը, իսկ Միմոնոսեկիում պայմանագիրը ստո-
րագրելու պահին արդեն Նիկոլայ Երկրորդն էր՝ Ռոմանովների արքայա-
տան վերջին կայսրը: Միմոնոսեկիում 1895 թ. կնքված պայմանագրով ճա-
պոնիային անցան Թայվանը, Լյաոդունյան թերակղզին Պորտ Արթուր նա-

վահանգստով: Կորեայում հաստատվեց ճապոնիայի քաղաքական գերիշխանությունը:

Ճապոնիայի ռազմաքաղաքական դիրքերի ամրապնդումը և նրա օգտին ուժերի հարաբերակցության կտրուկ փոփոխությունը Սաղաղօվկիանոսյան ավազանում խիստ անհանգստացրին Անգլիային, Ֆրանսիային, Գերմանիային, ԱՄՆ-ին, որը ստեղծում էր Ռուսաստանի համար նպաստավոր քաղաքական դաշտ՝ հակահարված հասցնելու ճապոնիային, սանձահարելու նրա նկրտումները Չինաստանի ամբողջականությունը և Կորեայի անկախությունը պաշտպանելու պատրվակի ներքո: Ռուսաստանի, Ֆրանսիայի ու Գերմանիայի ներկայացուցիչները Տոկիոյում համատեղ և յուրաքանչյուրն առանձին-առանձին պահանջներին ճապոնիայից հրաժարվել Լյաոդունյան թերակղզուց: Երեք մեծ տերությունների «բարեկամական խորհուրդը» ուղեկցվեց նրանց ռազմածովային ուժերի ռազմացույցով, որը լուրջ նախադգուշացում էր ճապոնիային: Նրանց միացյալ նավատորմը հեռավորարևելյան ջրերում զգալիորեն գերազանցում էր ճապոնական ուժերին, որը հարկադրեց Չինաստանին հաղթողներին կատարել սթափ եզրակացություն՝ ընդունել այդ պահանջը և հրաժարվել Լյաոդունյան թերակղզուց: Ռուսաստանի քաղաքական ազդեցությունը Չինաստանում զգալիորեն մեծացավ, սակայն խիստ սրվեցին ու վատացան հարաբերությունները ճապոնիայի հետ: Չինաստանը թույլատրեց Ռուսաստանին Վլադիվոստոկ-Հյուսիսային Մանջուրիա երկաթուղու կառուցումը, որի շինարարությունը և չահագործումն արտոնվում էր ռուս-չինական բանկին: Համաձայնագրով երկաթուղին 80 տարի հետո անհատույց անցնելու էր չինական կառավարությանը: Հետագայում կայսերական կառավարության ամենաազդեցիկ նախարար Վիտտեն կարողացավ Չինաստանի վրա ճնշում գործադրելու, չինական պաշտոնյաներին կաշառելու միջոցով ստորագրել պայմանագիր Լյաոդունյան թերակղզին վարձակալությանը Ռուսաստանին հանձնելու մասին, որն էլ ավելի ամրապնդեց Ռուսաստանի դիրքերը Հեռավոր Արևելքում և Սաղաղ օվկիանոսի ավազանում: Հեռավոր Արևելքում դիրքերն ամրապնդելու համար Ռուսաստանին անհրաժեշտ էր ուժեղացնել քաղաքական ազդեցությունը Կորեայում: Այդ մտահղացման պատճառով Ռուսաստանը մերժեց ճապոնիայի առաջարկը՝ Կորեան բաժանել ազդեցության ոլորտների 38-րդ դուգահեռականով: Ռուս-ճապոնական հակամարտության, մեծ տերությունների մրցակցության հետևանքով Հեռավոր Արևելքը և Սաղաղ օվկիանոսի ավազանը համաշխարհային քաղաքականության մեջ ու միջազգային հարաբերություններում դարձան հակամարտությունների կարևորագույն օջախներ: Այն խորանալով XX դարի սկզբին հանգեցրեց ռուս-ճապոնական պատերազմի, որն ավարտվեց Ռուսաստանի պարտությանը և վերստին փոխեց ուժերի հարաբերակցությունն այդ աշխարհահատվածում:

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԿԱՅՏԵՐԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՆՈՐ ՊԱՏՄԱՓՈՒԼՈՒՄ

§ 1. ՌՈՒՍ – ԹՈՒՐԲԱԿԱՆ 1877-1878 ԹԹ. ՊԱՏԵՐԱՋՄԸ

XIX դարի 70-ական թվականների երկրորդ կեսից Մերձավոր Արևելքում սկսված քաղաքական ճգնաժամի կապակցությամբ Արևելյան հարցը թևակոխեց նոր փուլ, որը վերստին սրելով ռուս-թուրքական հակամարտությունը, պատճառ դարձավ նրանց միջև Հերթական պատերազմի համար: Եվրոպական մեծ տերությունները, օգտվելով Օսմանյան կայսրության դեմ բալկանյան ժողովուրդների ազգային-ազատագրական հուժկու շարժումից, շտապեցին ճնշում գործադրել սուլթանի վրա, նրանից պահանջելով նոր դիմումներ, որոնք հիմնականում բխում էին Թուրքիայի տիրապետության տակ գտնվող քրիստոնյա ժողովուրդների շահերից:

1875 թ. գարնանն ապստամբություն բռնկվեց Հերցեգովինայում, այնուհետև՝ Բոսնիայում: Նրանց ընդօրինակեցին Սերբիան ու Չերնոգորիան: Օսմանյան կայսրության քաղաքական վիճակը էլ ավելի բարդացավ, երբ 1876 թվականին թուրքական բռնակալության դեմ ապստամբության դրոշ պարզեց Բուլղարիան: Բալկանյան իրադարձությունները, որոնցով սկսվեց արևելյան ճգնաժամի նոր փուլը, իրենց վրա գամեցին ողջ Եվրոպայի ուշադրությունը: Առավել ակտիվ էր գործում Անգլիան, որի կառավարող շրջանները շարունակում էին Ռուսաստանին համարել իրենց գլխավոր հակառակորդը և մրցակիցը Սև ծովից մինչև Սաղաղ օվկիանոս ընկած լայնածավալ տարածքում: Անգլիան ռուս-թուրքական պատերազմների ժամանակ որպես կանոն հանդես էր գալիս Ռուսաստանի դեմ, Ավստրո-Հունգարիան ձգտում էր կանխել Ռուսաստանի քաղաքական դիրքերի ամրապնդումը Բալկաններում: Անգլիայի և Ավստրո-Հունգարիայի շահերը Բալկաններում համընկնում էին հակառուսական հենքի վրա:

Նրանց տեսանկյունից Օսմանյան կայսրության քաղաքական ազդեցությունը Բալկաններում և սուլթանի կողմից նեղուցների հսկողությունը «փոքրագույն չարիք» է, իսկ Ռուսաստանի հնարավոր գերիշխանությունը՝ «մեծագույն չարիք»: 1876 թ. հունվարի 31-ին մեծ տերությունների

անունից սուլթանին ներկայացված հայտագրում հիշատակված բարենորոգումներն այնքան էին չնչին, աննշան, չափավոր, որ դրանք անվերապահորեն մերժվեցին ապստամբների կողմից: Բալկանյան ժողովուրդներին բարենորոգումների անվան ներքո իրականում խոստանում էին քաղաքական բնույթի փշրանքներ, որոնք փաստորեն սահմանափակվում էին սոսկ վարչական ինքնավարությունը: Սուլթանը ոչ միայն մերժեց այդ հուշագիրը, այլև վճռական գործողություններ ծավալեց ապստամբների դեմ: Ավելին, սուլթանը դաժան հաշվահարզար տեսավ բուլղար ժողովրդի հետ. արյան հեղեղ հոսեց Բուլղարիայում, որտեղ թուրքական յաթաղանի զոհ դարձան 30 հազար բուլղարներ, բազմաթիվ գյուղեր վերածվեցին մոխրակույտերի: Այս ոճրագործությունները և գազանությունները բողոքի հուժկու ալիք բարձրացրին Եվրոպայում, ներառյալ և Անգլիայում: Բուլղար ժողովրդի պաշտպանությունը և սուլթանի զանգվածային հանցագործության դեմ հանդես եկան Ջ. Գարիբալդին, Վ. Հյուգոն, Չ. Դարվինը, Վ. Գլադստոնը: «Բուլղարական սարսափները», ապստամբությունները Բոսնիայում, Հերցեգովինայում հասարակական լայն շարժում առաջացրին Ռուսաստանում: Մեծ ծավալ ընդունեց հանգանակությունը՝ Բալկանյան երկրներ էին ուղարկվում զենք, հանդերձանք, սննդամթերք: Ալեքսանդր Երկրորդն անձամբ մուծեց 10 հազար ռուբլի: Հանգանակություն կատարելու գործում ակտիվ մասնակցություն ունեցավ հայտնի քննադատ Վ. Ստասուլը: Բալկանյան երկրներ մեկնեցին հայտնի նկարիչներ Վ. Պալենովը, Կ. Մակովսկին, Սերբիայում էր իբրև զինվորական թղթակից գրող Գ. Ուսպենսկին, Չերնոգորիայում՝ բժիշկ-վիրաբույժ Ն. Սկլիֆոստովսկին, Սերբիայում՝ բժիշկ-թերապևտ Բոտկինը: Սերբիա մեկնեցին հեղափոխական-նարողներ Ս. Ստեպանյակ-Կրավչինսկին, Դ. Կլեմենցը: Ռուս կանայք մտան սերբական բանակ որպես գթություն քույրեր: Հետևաբար համաշխարհային հասարակական կարծիքը համակրում էր Բալկանյան ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը: Սակայն դա չիսանգարեց, որ Կ. Պոլսում Անգլիայի դեսպան էլիոթը պաշտոնական զեկուցագրում առանց այլևայլության գրեր, թե անգլիական քաղաքականությունը չի կարելի փոխել և չպետք է փոխել այն պատճառով, թե կսպանվեն 10 հազար կամ 20 հազար բուլղարացիներ: Թուրքիայի դեմ պատերազմ սկսելու անհրաժեշտությունը պաշտպանություն գտավ ռուսական թագաժառանգի, կայսրի եղբոր՝ մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաևիչի, առանձին պաշտոնյաների ու բարձրաստիճան զինվորականության մոտ: Երբ սերբական և չեռնոգորյան բանակներին սպառնաց լիակատար ջախջախումը, Ռուսաստանը հայտարարեց մասնակի զորահավաք, որը երկու բանակներին փրկեց լիակատար կործանումից: Ռուսաստանը վերջնագիր ներկայացրեց Թուրքիային՝ պահանջելով 48 ժամվա ընթացքում զինադա-

դար կնքել Սերբիայի հետ: Ռուսաստանի դեմ մեծ պատերազմի պատրաստ չլինելով՝ Թուրքիան ընդունեց այդ պահանջը: Ռուսաստանի վճռական միջամտության շնորհիվ կանխվեց նաև Բելգրադի գրավումը: Սերբիա մեկնեց ռուս հայտնի գեներալ Մ. Չերնյաևը: Նա ընդունեց սերբական հպատակություն և նշանակվեց սերբական բանակի գլխավոր հրամանատար: Ռուսաստանի հասարակական-քաղաքական մտքի ներկայացուցիչները, հատկապես սլավոնասերները գտնում էին, որ հասել է ժամանակը «լուծելու Արևելյան հարցը», այսինքն՝ առկա են ռազմաքաղաքական բոլոր գործոնները Թուրքիային նեղուցներից դուրս մղելու, Բալկաններում Կ. Պոլիս կենտրոնով Ռուսաստանի կայսրի հովանավորությամբ և ղեկավարությամբ սլավոնական դաշնություն ստեղծելու և դրանով իսկ տիրանալու սեփական «տան բանալիներին»՝ Սևծովյան նեղուցներին: Թեև «եղբայր սլավոններին» օգնելու կոչը սոսկ միջոց էր կայսրության մերձավորարևելյան ծրագրերն իրագործելու համար, այսուհանդերձ, այն լայն արձագանք էր գտնում Բալկաններում, ոգևորում ազատագրական պայքարի դրոշ բարձրացրած ժողովուրդներին:

Ալեքսանդր Երկրորդը 1877 թ. ապրիլի 12-ին (24) Քիչինևում հրապարակեց կայսերական հրովարտակ Թուրքիային պատերազմ հայտարարելու մասին և նույն օրը ռուսներն անցան Ռումինիայի սահմանը: 1878 թ. մայիսի 9-ին Ռումինիան հռչակվեց անկախ թագավորություն: Ռուս-թուրքական պատերազմի պաշտոնական քաղաքական նպատակն էր վերացնել թուրքական տիրապետությունը Բալկաններում, բարելավել սուլթանի լծի տակ հեծող քրիստոնյա ժողովուրդների քաղաքական կարգավիճակը, որը չէր բացառում անհրաժեշտության դեպքում Կ. Պոլսի գրավումը: Միաժամանակ հռչակվում էր պատերազմի գլխավոր քաղաքական հիմնախնդիրը՝ Բուլղարիայի ազատագրումը և Բալկաններում անկախ պետությունների կազմավորումը (Սերբիա, Ռումինիա, Չեռնոգորիա):

Ռազմական գործողությունները ծավալվեցին Բալկաններում և Անդրկովկասում գրեթե միաժամանակ: Բալկանյան ռազմաճակատի գլխավոր հրամանատարն էր կայսրի եղբայր Նիկոլայ Նիկոլաևիչը, իսկ Կովկասյան ռազմաճակատը գլխավորեց Ալեքսանդր Երկրորդի մյուս եղբայրը՝ Միխայիլ Նիկոլաևիչը: Ըստ ռուսական հրամանատարության ծրագրի նախատեսվում էր անցնել Դանուբը, սրընթաց հարձակումով անցնել Բալկանները և շարժվել Կ. Պոլսի վրա: Դրա իրագործումը պահանջում էր զգալի թվով զորք: Այնինչ բալկանյան թատերարեմի ռազմական գործողությունների համար առանձնացված ուժերը չէին բավարարում: Հենվելով իրենց ամրությունների վրա՝ թուրքերը հույս ունեին թույլ չտալ ռուսական զորքերին անցնել Դանուբը: Սակայն թուրքական հրամանատարությունը պլանները խափանվեցին: 1877 թվականի ամռանը ռուսներն անցան Դա-

նուրբ: Առաջատար ջոկատը, գեներալ Ի. Գուրկոյի հրամանատարությունը, արագորեն գրավեց Բուլղարիայի հին մայրաքաղաք Տիոնովոն, իսկ այնուհետև՝ Բալկանների վրայով անցնող կարևոր ուղին՝ Շիպկայի լեռնանցքը: Բուլղարները ուս ղինվորներին դիմավորում էին խանդավառությամբ, իրենք իրենց ազատարարներին: Նրանք ստեղծում էին աշխարհազորային ջոկատներ, մաքրում էին լեռնանցքները, ծառայում էին որպես ուղեկցողներ, ռազմամթերք և սննդամթերք էին հասցնում դժվարամատչելի տեղերը: Ռուսների հիմնական ուժերը գրադված էին Պլենա ամրոցի պաշարումով: Թուրքական հրամանատարությունը Չեռնոգորիայից այստեղ փոխադրեց մեծ թվով ուժեր: Այդ ընտիր զորքերը սկսեցին Շիպկայի լեռնանցքի գրոհը: Երեք օր Շիպկայի պաշտպանները հերոսաբար ետ էին մղում հակառակորդի գրոհները, հակառակորդ, որը թվով հինգ անգամ գերազանցում էր ռուսներին: Երբ վերջացան փամփուռները, ղինվորները սկսեցին թշնամուն ետ մղել սվիններով ու քարերով: Շիպկայի դիրքերը մնացին ռուսների ձեռքում, բայց փակ էր դեպի հարավ նրանց ճանապարհը: Եկավ ձմեռը. լեռներում ցուրտ սառնամանիքներ էին: Բուլքը գետին էր գլորում մարդկանց, ձյան հաստ շերտը փակել էր ճանապարհները, պարենը չէր բավարարում: Անհավատալի դժվար պայմաններում ռուսները, ցուցարներելով արիության և տոկունության հրաշքներ, լեռնանցքը պաշտպանեցին մինչև 1878 թ. հունվարը: Նրանք կորցրին 9,5 հազար մարդ՝ միայն ցրտահարվածներ ու սառածներ:

Ռուսների հաղթանակները և հատկապես Բալկաններով ձմեռային դժվարագույն անցումը Եվրոպայի համար ոչ միայն հույժ անցանկալի էր, այլև անսպասելի ու անհավանական: Գերմանական բանակի գլխավոր շտաբի պետ գեներալ Մոլթկեն համոզված էր, որ ռուսների բանակն ի վիճակի չէ ձմեռային պայմաններում մարտերով անցնել Բալկանյան լեռնաշղթան, թույլատրեց Ռուսաստանի բանակին կից գերմանական ղինվորական ղիտորդներին գնալ արձակուրդ: Իսկ Բիսմարկը, ծալելով Բալկանյան թերակղզու քարտեզը, ասաց, որ այն անհրաժեշտ չի լինի բացել մինչև գարուն: Այդպես էին մտածում նաև անգլիացի ղինվորական մասնագետները: Բալկանյան ռազմաճակատի հրամանատարությունը չկարողացավ Պլենան (Պլենն) գրավել գրոհով, ուստի և որոշվեց այն վերցնել շրջափակման միջոցով: Քաղաքն ամրոցովին շրջապատվեց, պահեստադրի մոտեցումը և պարենի ու ղինամթերքի մատակարարումը դադարեցվեց: Շրջապատումից դուրս գալու թուրքական բանակի փորձը չհաջողվեց: 1877 թ. նոյեմբերի վերջին Պլենայի 40-հազարանոց կայազորը հանձնվեց: Պլենայի անկումն առաջ բերեց սլավոնների ազատագրական շարժման վերելք: Նորից պատերազմի մեջ մտավ Սերբիան: Թուրքիան կանգնած էր պարտության եզրին: Գեներալ Գուրկոյի ջոկատը ձմեռային

դժվար պայմաններում անցավ Բալկանները, մի շարք ճակատամարտերում ջարդեց թուրքերին և գրավեց Սոֆիան: Գուրկոն իր հրամանում, ղինելով ղինվորներին, գրել է. «Վերջացավ Բալկաններով անցումը: Չգիտես ինչով ավելի շատ հիանալ. թշնամու դեմ մարտերում ձեռքաթյամբ ու արիություն, թե՞ լեռների, սառնամանիքների և խոր ձյան դեմ պայքարում տարած ձեռք ծանր աշխատանքի տոկունությունը ու համբերությունը: Կանցնեն տարիներ, և մեր ժառանգները, այցելելով այդ ամայի լեռները, հարարությունը ու ցնծությունը կասեն. «Այստեղից անցել են ռուսական զորքերը և վերակենդանացրել սուվորովյան ու ռումյանցեյան հրաշք դուցադուներին փառքը»:

1878 թ. հունվարին ռուսների ընդհանուր հարձակման շնորհիվ թուրքերը ջախջախվեցին Ֆիլիպպոլիսի (Պլովդիվ) մոտ, իսկ այնուհետև առանց մարտի թողեցին Ադրիանուպոլիսը (էդիրնե): Ճանապարհը բաց էր դեպի Կ. Պոլիս: Ռուսները դուրս եկան Մարմարայի ծովի առափնյա շրջանները՝ տեղակայվելով Կ. Պոլիսի մատույցներում և Դարդանելի նեղուցի մերձակայքում: Շիպկայի լեռնանցքի հերոսական դրվագը, Պլենայի, Սոֆիայի, Ֆիլիպպոլիսի, Ադրիանուպոլիսի գրավումը դարձան ռուսական ռազմական արվեստի լավագույն և փայլուն հաղթարշավի օրինակ: Դա ապացուցեցին նաև ռազմական հաղթական գործողությունները Կովկասյան ռազմաճակատում: Այդ հաղթանակները ձեռք բերվեցին հայերի անմիջական աջակցությամբ, որոնք մասնակցեցին Կովկասյան ռազմաճակատում տեղի ունեցած գրեթե բոլոր վճռորոշ մարտական գործողություններին: Հայերին ոգևորում էր նաև այն կարևորագույն հանգամանքը, որ Կովկասյան ռազմաճակատում գործող բանակների գլուխ կանգնած էին հայազգի տաղանդավոր գեներալներ Մ. Լորիս-Մելիքովը, Ա. Տեր-Ղուկասովը և Հ. Լազարևը: Նրանց անմիջական գլխավորությամբ ազատագրվեցին հայկական հնագույն քաղաքներ Բայազետը, Կարինը, Արդահանը, Կարսը: Կարսի անառիկ ամրոցի գրավումը մեծ տպավորություն գործեց Եվրոպայի ռազմական և ղինվորական բարձրաստիճան մասնագետների վրա: Ֆրանսիացի գեներալ դը Կուրսին Կովկասից հեռանալուց առաջ Կարսի բերդամասերը տեսնելով, խորհուրդ տվեց ռուս գլխավոր հրամանատարին բավարար ուժեր չունենալու պատճառով չգրոհել դրանց վրա: Նրա կարծիքով ռուսներն այնքան լավն են ու մարտունակ, որ կգրոհեն այդ անառիկ ապառաժները «...բայց դուք, գգուչացնում է գեներալը, կգոհեք նրանց բոլորին անխտիր և չեք գրավի ոչ մի բերդամաս»: Ֆրանսիացի գեներալի խորհրդի մեջ, անշուշտ, առկա էր ռացիոնալ հատիկ: Բավական է ասել, որ Կարսում թուրքերի թիվը հասնում էր 30 հազարի, նրանք ունեին 300 հրանոթ, երեք ամսվա պաշար: Հատկանշական է, որ Կովկասյան կորպուսի գլխավոր հրամանատար Մ. Լորիս-Մելիքովը, տեղեկանալով Կարսի մատույցներում գործող զորքերի դժվարությունների

մասին, կարգադրեց նրանց հրամանատար գեներալ Ն. Լազարևին դադարեցնել գրոհը և նահանջել: Լազարևը Լորիս-Մելիքովին պատասխանում է. «Ես գրոհում եմ անդառնալիորեն, եթե Կարսը չվերցնեն գիշերը, ապա կվերցնեն ցերեկը կամ կկռվեմ մինչև հաջորդ գիշեր»: 1877 թ. նոյեմբերի 6-ին առավոտյան ռուսական զորքերը գրավում են Կարսի հռչակավոր բերդը՝ 18 հազար գերի, 5 փաշա, 800 սպա, այդ թվում անգլիացի սպաներ, որոնք գլխավորում էին բերդի պաշտպանությունը: Կարսի գրավումը Կովկասյան բանակի ամենախոշոր հաղթանակն էր, իսկ գիշերային գրոհը՝ նրա ռազմական արվեստի անջնջելի էջերից, որը կարևոր նշանակություն ունեցավ պատերազմի վերջնական ելքի համար: Թուրքական բանակի ջախջախումը կատարյալ էր, պատերազմում պարտությունը՝ բացահայտ: Ֆրանսիացի նշանավոր դիվանագետ, պատմաբան, հետագայում Պետերբուրգում Ֆրանսիայի դեսպան Մորիս Պալեոլոգը Ալեքսանդր Երկրորդին նվիրած «Կայսրի սիրավեպը» ծավալով փոքրիկ, բայց արժեքավոր գրքում նշում էր, որ ռուսների աներկբա հաղթանակները լուրջ մտավայտություն առաջացրին Եվրոպայում և հատկապես Անգլիայում: Մորիս Պալեոլոգն ընդգծում է, որ անգլիական ռազմանավերն անմիջապես մտան Դարդանել և խարխալ գցեցին Իշխանաց (Իշխանական) կղզիների մոտակայքում՝ մայրաքաղաքից ընդամենը 5 մղոն հեռավորության վրա: Անգլիայի արտաքին գործերի նախարար Դերբին պաշտոնապես հայտարարեց, թե ռուսների կողմից Կ. Պոլսի գրավումը ազդանշան կդառնա Անգլիային հանդես գալու համար, որը ոչ այլ ինչ էր, եթե ոչ ուղղակի պատերազմի ահագանգ: Բիքոնսֆիլդը՝ Անգլիայի վարչապետը, չէր հավատում Գորչակովի հավաստումներին և սպառնում էր խզել դիվանագիտական հարաբերությունները Ռուսաստանի հետ: Գորչակովը հայտարարեց, որ Ռուսաստանը չի գրավի Կ. Պոլսը, եթե դրանից հրաժարվի Անգլիան: Թուրքական բանակի ծանրագույն պարտությունները նկատի ունենալով՝ սուլթանը 1878 թ. հունվարի 13-ին հարկադրված եղավ դիմել Ալեքսանդր Երկրորդին՝ ռազմական գործողությունները դադարեցնելու և զինադադար կնքելու խնդրանքով: 1878 թ. հունվարի 19-ին (31) Ադրիանուպոլսում ստորագրվեցին զինադադար և «Հաշտության հիմունքները»: Այս քաղաքական փաստաթղթերի համաձայն Սերբիան, Չեռնոգորիան և Ռումինիան ստանում էին անկախություն, նրանց տարածքներն ընդլայնվում էին, ստեղծվում էր Բուլղարական ինքնավար իշխանություն՝ ելքով դեպի էգեյան ծով: Բալկանյան թերակղզու մեծ մասն ազատագրվում էր Օսմանյան կայսրության տիրապետությունից: Թուրքիայի ներկայացուցիչ Սավֆետ փաշան այդ պայմաններն անվանեց «մահվան դատավճիռ» Օսմանյան կայսրության համար: Դրանից հետո Ռուսաստանը և Թուրքիան սկսեցին նախապատրաստվել բանակցությունների՝ կնքելու հաշտության պայմանագիր:

§ 2. ՍԱՆ-ՍՏԵՖԱՆՈՅԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՑ ԴԵՊԻ ԲԵՈՒԼՆԻ ԴԱՇՆԱԳԻՐԸ

Ռուս-թուրքական պատերազմի արդյունքներն ամփոփելու և հաշտության պայմանագիր կնքելու նպատակով Սան-Ստեֆանո ծովափնյա ավանի այն ամառանոցում, որը պատկանում էր Հայ մեծահարուստ Տատյան Առաքել բեյին և որտեղ իջևանել էր ռուսական բանակի գլխավոր հրամանատարը, 1878 թվականի փետրվարի 13-ին սկսվեցին բանակցություններ երկու երկրների միջև, որոնց ընթացքում Ռուսաստանը, իրրև հաղթող տերություն, պարտադրեց Թուրքիային ընդունել իր պահանջները, իսկ օսմանյան պետությունը, որպես պարտված կողմ, հարկադրված էր ընդունել ներկայացված պայմանները: Ադրիանուպոլսի զինադադարից հետո Թուրքիան դեռևս հույս ուներ հաշտության բանակցությունների ժամանակ վերանայել շատ կետեր և Ռուսաստանից ստանալ լուրջ զիջումներ: Թուրքերը քաջատեղյակ էին, որ Անգլիան և Ավստրո-Հունգարիան արտահայտել են իրենց բողոքը զինադադարի պայմանների դեմ և հայտարարել «Եվրոպական շահերի» խախտման մասին: Մանավանդ որ Անգլիան հայտարարել էր՝ եթե հաշտության պայմանագիրը հակասի Փարիզի (1856 թ.) ու Լոնդոնի (1871 թ.) համաձայնագրերին, ապա այն կվերանայվի այդ պայմանագրերը ստորագրած երկրների կողմից գումարվելիք վեհաժողովում: Ալեքսանդր Երկրորդը և Գորչակովը Թուրքիայի հետ հաշտության կնքումը հանձնարարեցին Իգնատևին: Նրանք նկատի ունեին ռուս դիվանագետի թուրքերենի իմացությունը, Կ. Պոլսում երկարամյա աշխատանքը, վճռականությունը, հետևողականությունը, փորձը, հմտությունը: Հենց Գորչակովի անմիջական նախաձեռնությամբ Իգնատևը դեռևս 1864 թ. օգոստոսին նշանակվեց Կ. Պոլսում Ռուսաստանի դեսպանորդ, իսկ մի քանի տարի անց ստացավ դեսպանի աստիճանակարգ: Շուրջ 13 տարի նա գտնվում էր Կ. Պոլսում և իբրև դիվանագետ պաշտպանում էր ոչ միայն կայսրության, այլև բալկանյան ժողովուրդների շահերը և իղձերը: Իգնատև դիվանագետի գործունեության շնորհիվ նախահիմքեր ստեղծվեցին հայկական հարցի ձևավորման և միջազգային ասպարեզ դուրս գալու համար: Իգնատևի հետ միասին Ռուսաստանը ներկայացնում էր ներկողվը, իսկ թուրքական պատվիրակությունը՝ արտաքին գործերի նախարար Սավֆետ փաշան և Բեռլինում Օսմանյան կայսրության դեսպան Սաադուլլա բեյը, ինչպես նաև պատվիրակության քարտուղար և խորհրդական հայազգի Սարգիս բեյ Համամջյանը:

Ռուսաստանի և Թուրքիայի միջև 1878 թ. փետվարի 19-ին (մարտի 3-ին) ստորագրված Սան-Ստեֆանոյի պայմանագիրը բաղկացած էր 29 հոդվածից ու հանրագումարի էր բերում ռուս-թուրքական պատերազմը,

որը Համապատասխանում էր ինչպես կայսերական Ռուսաստանի, այնպես էլ բալկանյան ժողովուրդների, մասամբ նաև արևմտահայությունների: Այդ պայմանագրով Բարձր Դուռը վերջնականապես ճանաչում էր Չեռնոգորիայի իշխանապետության անկախությունը (Հոդ. 2), Սերբիան ճանաչում է անկախ (Հոդ. 3), Բարձր Դուռը ճանաչում է Ռումինիայի անկախությունը (Հոդ. 5). Բուլղարիան դառնում էր ինքնավար, տուրք տվող իշխանապետություն՝ քրիստոնեական կառավարմամբ և գեմստվոյական գործով (Հոդ. 6): Բուլղարիայի իշխանն ընտրվելու է ազատորեն, բնակչության կողմից և Հաստատվելու է տերությունների Համաձայնությամբ Բարձր Դուռն կողմից: Եվրոպայի մեծ տերություններում թագավորող արքայատների անդամներից և ոչ մեկը չի կարող ընտրվել Բուլղարիայի իշխան: Ֆիլիպոպոլիսում (Պլովդիվում) կամ Տիրնովոյում գումարված Բուլղարիայի անվանի մարդկանց ժողովը Ռուսաստանի կայսերական կոմիսարի Հակոբությունը և օսմանյան կոմիսարի ներկայությամբ կնշակի ապագա կառավարման կանոնադրությունը: Բուլղարիայում նոր վարչակարգ մտցնելը և նրա Հակոբությունը երկու տարվա ընթացքում կհանձնարարվեն ռուսական կայսերական կոմիսարին (Հոդ. 7):

Սան-Ստեֆանոյի պայմանագիրն էապես փոխեց Բալկանների քաղաքական քարտեզը. այն փաստորեն միմյանցից բաժանեց Օսմանյան կայսրության եվրոպական ու ասիական տիրույթները, զգալիորեն թուլացրեց Թուրքիայի քաղաքական ու տնտեսական իշխանությունը և նկատելիորեն նպաստեց սուլթանի տիրապետության տակ մնացած ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի հետագա վերելքին: Սան-Ստեֆանոյի պայմանագիրը բուռն խանդավառություն առաջացրեց Հատկապես Բուլղարիայում, որտեղ Հավաքվեց Ալեքսանդր Երկրորդին Հղած շուրջ 230 Հազար մարդու ստորագրություն և 1878 թ. ապրիլի 10-ին Սան-Ստեֆանոյում Հանձնվեց կայսերական բանակի գլխավոր հրամանատարին: Այդ պայմանագրի 24-րդ հոդվածի Համաձայն «ինչպես պատերազմի, նույնպես և խաղաղ ժամանակ Բոսֆորը և Դարդանելը բաց կլինեն ռուսական նավահանգիստներից եկող և դեպի դրանք ուղղվող չեղոք երկրների սուևտրական նավերի Համար»: Իգնատևը ձգտում էր Թուրքիայի լիազորներին Համոզել, որ Ռուսաստանի գերագույն խնդիրն է ու նպատակը «արգելել օտարերկրյա նավերի մուտքը նեղուցներ»: «Մուտքը նեղուցներ, - հրահանգավորում էր Իգնատևը իր պատվիրակության թարգման Մ. Օնուին, - չբանուտքի դուռ է ծառայում մեր տան (Ռուսաստանի - Մ. Մ.) Համար»: Ռուսաստանի զորքերի դուրսբերումը Ասիական Թուրքիայից կկատարվի վեց ամսվա ընթացքում՝ հաշված վերջնական հաշտություն կնքելու օրվանից (Հոդ. 25). Սան-Ստեֆանոյի պայմանագրով Ռուսաստանին վերադարձվեց Հարավային Բեսարաբիան, իսկ Կովկասում՝ Կարսը,

Բաթումը, Բայազետի մարզը Ալաշկերտի հովտի հետ միասին: «Ուրախ եմ, որ կարող եմ Ձեզ տեղեկացնել, թե թուրքերը երկարատև ու դժվարին բանակներից հետո, - հեռագրում էր Իգնատևը կանցլեր Գորչակովին, - ավարտեցին Համաձայնությամբ մեզ դիջելու Բաթումը, Արդահանը, Կարսը և Բայազետը: Դեռ չարունակում ենք վիճել սահմանագատման մանրամասների շուրջ»: Գորչակովին Հղած նոր հեռագրում Իգնատևը գրում է. «Ի լրացումն իմ այսօրվա հեռագրի՝ տեղեկացնում եմ, որ Օլթին, Արդանուչը, Արդվինը, Ալաշկերտը, Կաղզվանը և Պամուրը մնում են Ռուսաստանին»: Այս ցանկալի լուրը Հասցեագրվեց ոչ միայն Գորչակովին, այլև Կովկասի փոխարքային: Այս առնչությամբ մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաևիչը փետրվարի 19-ին կայսրին ուղարկեց հետևյալ հեռագիրը. «Երջանիկ եմ շնորհավորել Ձերդ մեծությունը հաշտության կնքման կապակցությամբ: Աստված արժանացրեց մեզ, կայսր, ավարտել Ձեր կողմից նախաձեռնած մեր սուրբ պործը... Դուք ազատագրեցիք քրիստոնյաներին մահանդականների լծից»: Կայսրն այս հեռագիրն ստանալուց անմիջապես հետո մեծ իշխանին տվեց հետևյալ պատասխանը. «Երախտապարտ եմ Աստծուն հաշտությունը կնքելու առթիվ: Մրտագին շնորհակալություն քեզ և մեր բոլոր կտրիճներին ձեռք բերած արդյունքների համար: Միայն թե եվրոպական վեհաժողովը չվատթարացնի այն, ինչ մենք ձեռք բերեցինք մեր արյամբ: Ալեքսանդր»: Ավելին, կայսրը պատասխանելով Իգնատևի Հոր՝ նախարարների կոմիտեի նախագահի շնորհավորական նամակին, նշում էր, թե ինքն ուրախ է, որ հենց նրա որդուն բախտ վիճակվեց «ստորագրել Ռուսաստանի Համար այդչափ պանծալի հաշտություն: Այժմ մնում է ցանկալորպեսզի եվրոպայի մեր բարեկամներն իրենց միջամտությամբ չխանգարեն այն ի կատար ածելու համար»:

Իգնատևը, չկարողանալով ազատագրված Հայկական ողջ հողերը միացնել Ռուսաստանին, այնուամենայնիվ, մշակեց և Սան-Ստեֆանոյի պայմանագրի մեջ մտցրեց մի հոդված, որը պետք է որոշ չափով բարելավեր Թուրքիայի տիրապետության տակ մնացող արևմտահայերի կարգավիճակը: Այսպես ծնվեց և պատմաքաղաքական և միջադպրային դիվանագիտության ասպարեզ ելավ 16-րդ հոդվածը, որը պարտավորեցնում էր օսմանյան կառավարությանը բարեփոխումներ անցկացնել Արևմտյան Հայաստանում, ապահովել արևմտահայության անձի, կյանքի, գույքի անվտանգությունը: Երբ Սաֆվետ փաշան տեղեկանում է այս հոդվածի մասին, խիստ դժգոհելով ասում է. «Դուք մեզ համարյա դրկել եք եվրոպական մարդերից, գոնե մեզ հանդիստ թողեք Ասիայում»: Թեև Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածում անգամ խոսք և ակնարկ չկար արևմտահայերին ինքնավարություն տալու վերաբերյալ, այնուամենայնիվ, երբ արյունոտ սուլթան Աբդուլ Համիդը ձգտում էր նույնիսկ քա-

ղաքական քարտեզից ջնջել Հայաստան անունը, իսկ Թուրքիայի մեծ վեզիր Քյամիլ փաշան լիտիարար Հայտարարում էր, թե պետք է Ջարդել այն բոլոր ծնոտները, որոնք կարտասանեն «Հայաստան բառը», այդ կետը արևմտահայերի համար ընդհանուր առմամբ կարելի է համարել նպաստավոր և դրական իրադարձություն: Սան-Ստեֆանոյի պայմանագիրը 1878 թ. փետրվարի 19-ին (մարտի 3-ին) կայսերական Ռուսաստանի անունից ստորագրեցին Իգնատևը և Նելիդովը, իսկ Օսմանյան Թուրքիայի կողմից՝ Սաֆվետը և Սաադուլլահը, որը, ի սկզբանե մերժեցին մեծ տերությունները, առաջին հերթին Անգլիան ու Ավստրո-Հունգարիան: Անգլիայի վարչապետ Բիքոնսֆիլդը (Դիզրայելին) և Ավստրո-Հունգարիայի արտգործնախարար Անդրաշին դժգոհ էին Բալկաններում Ռուսաստանի դիրքերի ամրապնդումից ու սլավոնական նոր պետության՝ Բուլղարիայի ստեղծումից: Նրանք պահանջեցին եվրոպական վեհաժողովում վերանայել Սան-Ստեֆանոյի պայմանագրի հոդվածները և սկսեցին պատերազմով սպառնալ Ռուսաստանին: Անգլիայի վարչապետը, թեև հանդես էր գալիս մարտակոչ ու սպառնալից պաշտոնական Հայտարարություններով, իրականում նույնպես խուսափում էր պատերազմից: Բիքոնսֆիլդի համար պատերազմի սպառնալիքը ոչ այլ ինչ էր, եթե ոչ ռուսների վրա ճնշում գործադրելու դիվանագիտական միջոց, հզոր լծակ հարկադրելու նրանց ընդունել իր պահանջները: Բիքոնսֆիլդը և Սոլսբերին փաստորեն հեռու էին Ռուսաստանի հետ բախվելու մտադրությունից ու ոչ պակաս չափով չահագորգոված էին ռուս-անգլիական սրված հակամարտությունը հարթելու մեջ, եթե Ռուսաստանը քննարկման ներկայացնի Սան-Ստեֆանոյի պայմանագրի համաեվրոպական նշանակություն ունեցող հոդվածները միջազգային վեհաժողովում:

Ռուսաստանի, Անգլիայի, Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Թուրքիայի բարձրաստիճան պետական այրերի ու դիվանագետների մասնակցությամբ և Գերմանիայի կանցլեր (վարչապետ) Օտտո Բիսմարկի նախագահությամբ Բեռլինի վեհաժողովը բացվեց հունիսի 1-ին (13-ին), տեղեց մեկ ամիս և ունեցավ կարևոր նշանակություն, քանզի էապես ներգործեց միջազգային հարաբերությունների հետագա գործընթացների վրա: Ռուսաստանի պատվիրակությունը գլխավորեց Ա. Գորչակովը: Կայսրը երկրորդ լիազոր-ներկայացուցիչ նշանակեց Լոնդոնում իր դեսպան Շուվալովին, իսկ Բեռլինում Ռուսաստանի դեսպան Ուրրին դարձավ պատվիրակության երրորդ ներկայացուցիչը: Ի դեպ Հայությունը ցավով ընդունեց լուրն այն մասին, որ Իգնատևը չի մասնակցելու Բեռլինի վեհաժողովին, քանզի նրան համարում էին իրենց շահերի պաշտպանը և իդձերի արտահայտիչը: Բեռլին ժամանեցին Հունաստանի, Ռումինիայի, Բուլղարիայի, Սերբիայի, Չեռնոգորիայի ներկայացուցիչները,

բայց միայն Հունաստանի և Ռումինիայի պատվիրակները Գորչակովի անմիջական աջակցությամբ մասնակցեցին վեհաժողովի աշխատանքներին՝ իրենց երկրներին վերաբերող հիմնահարցերի քննարկման ժամանակ:

Բեռլինի վեհաժողովի առաջին նիստում «ազնիվ մակեր» («միջնորդ») Բիսմարկը Հայտարարեց, որ Սան-Ստեֆանոյի պայմանագիրը պետք է քննարկվի ոչ թե ըստ հոդվածների հերթականության, այլ հիմք ընդունվի հիմնահարցերի քաղաքական և իրավական կարևորությունը: Եվ օրինաչափ է, որ վեհաժողովի մասնակիցների ուշադրության կիզակետում էին Բուլղարիայի հարցը և Բալկանյան հիմնախնդիրները ընդհանրապես: Բեռլինի վեհաժողովի 64 հոդվածներից 22-ը նվիրված էր Բուլղարիային, 9-ը՝ Սերբիային ու Ռումինիային, 8-ը՝ Չեռնոգորիային, և վերջապես դանուբյան նավարկության կարգավիճակին, որն ուներ համաեվրոպական նշանակություն: Բուլղարիան դառնում էր ինքնավար, տուրք վճարող իշխանապետություն, բայց Սան-Ստեֆանոյի պայմանագրով նախատեսված Մեծ Բուլղարիան անդամահատվեց երկու մասի՝ քաղաքական տարբեր կարգավիճակով: Միայն Հյուսիսային չրջանը ստացավ ինքնավար իշխանապետական կարգավիճակ: Բալկաններից դեպի հարավ ստեղծվում է մի նահանգ «Արևելյան Ռումելիա» անունով, որը մնաց սուլթանի քաղաքական և ռազմական անմիջական իշխանության ներքո՝ վարչական ինքնավարության պայմաններով, իր քրիստոնյա զենեքալ-նահանգապետով: Սերբիայի և Չեռնոգորիայի տարածքները սահմանափակվեցին: Բեռլինի վեհաժողովի մասնակիցները ճանաչեցին Ռումինիայի անկախությունը, իշխանապետությունը ստացավ Դորբուջայից դեպի հարավ ընկած տարածքը: Բոսնիան և Հերցեգովինան պետք է զրավվեին ու կառավարվեին Ավստրո-Հունգարիայի կողմից: Անգլիան, պաշտպանելով Թուրքիային, իրրե վարձահատույց ստացավ Կիպրոս կղզին: Բեռլինի դաշնագրի 58-րդ հոդվածով «Բարձր Դուռը Ասիայում ռուսական կայսրությանն է գիջում Արդահանի, Կարսի և Բաթումի տարածքները, վերջինիս նավահանգստով հանդերձ, ինչպես նաև այն բոլոր տարածքները, որոնք գտնվում են ռուս-թուրքական նախկին սահմանի և Հաջորդ սահմանագծի միջև»: Սակայն, գիջելով այս հիմնախնդրում, Սոլսբերին հարկադրեց Գորչակովին ու Շուվալովին նահանջել և բավարարել իր պահանջը: Մասնավորապես Բեռլինի դաշնագրի 60-րդ հոդվածի համաձայն «Սան-Ստեֆանոյի պայմանագրի 19-րդ հոդվածով Ռուսաստանին գիջված Ալաշկերտի հովիտը և Բայազետ քաղաքը վերադարձվում են Թուրքիային»: Սոլսբերին հաջողվեց նաև վերանայել Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ կետը, որից հետո ծնվեց չարաբաստիկ 61-րդ կետը՝ «Բարձր Դուռը պարտավորվում է առանց հետագա հապաղման իրագործել հայաբնակ մարզերում տեղական կարիքներից հարուցված բարելավումներն ու բարենորոգումները և ապահովել

Հայերի անվտանգությունը չներքնզներից և քրդերից: Բարձր Դուռը տե-
րություններին պարբերաբար կհաղորդի այն միջոցների մասին, որոնք ին-
քը ձեռք է առել այդ նպատակի համար, իսկ տերությունները կհսկեն
դրանց կիրառմանը»: Սուլթան Աբդուլ Համիդը համոզված էր, որ այս
անձև ու հստակությունից զուրկ հողվածք անխուսափելիորեն կդառնա
«մեռած տառ», քանզի մեծ տերությունների հակամարտությունից հմտո-
րեն օգտվելով, նրանցից յուրաքանչյուրին մասնակի գիջումներ կատարե-
լու միջոցով, իրեն կհաջողվի «օձիքն ազատել», այսինքն՝ խուսափել բա-
րենորոգումներ անցկացնելու վերաբերյալ ստանձնած պարտավորությու-
նից: Ինչպես ռուսական առածի համաձայն յոթ դայակների պահած երե-
խան հսկող աչք չունի, այնպես էլ շատ հովանավորողներ ունենալով՝
արևմտահայերի ակնկալիքները մնալու էին սոսկ անիրագործելի ցան-
կություն:

Բեուլինի վեհաժողովում «երեք կայսրերի դաշինքի» շրջանակներում ո՛չ
Գերմանիան և ո՛չ էլ Ավստրո-Հունգարիան, մեղմ ասած, չպաշտպանեցին
Ռուսաստանին: Եվ իզուր էր Բիսմարկը պնդում, թե ինքը իբր Բեուլինի վե-
հաժողովում Ռուսաստանի համար ավելի շատ բան է կատարել, քան նրա
բոլոր դիվանագետները միասին վերցրած: Բիսմարկի այս փարիսեցիու-
թյունը հերքում է Գորչակովի ուշացած գնահատականը, որի համաձայն
«հետագա հաշվարկը երեք կայսրերի վրա պատրանք է»: Այդպիսին էր
Ռուսաստանի կանցլերի և արտգործնախարարի վեհաժողովից ստացած
ընդհանուր տպավորությունը, որի մասին նա դրում էր Ալեքսանդր Երկ-
րորդին: Չափազանց բնորոշ է, որ կայսրը լուսանցքներում նշանագրեց.
«Դա նաև իմ կարծիքն է»: Ինչ վերաբերում է Ֆրանսիային, ապա նրա
կառավարող այրերը զարմանալիորեն չափազանց շուտ մոռացան, այն էլ
Բեուլինում, Բիսմարկի «ոազմական ահագանգը» և Ռուսաստանի գլխա-
վոր դերակատարումը Ֆրանսիային նոր պատերազմից ու ջախջախումից
փրկելու գործում: Սակայն միանգամայն սխալ կլինեք Ռուսաստանի գոր-
ծունեությունը Բեուլինի վեհաժողովում ներկայացնել որպես կատարյալ
պարտություն: Այդպիսի գնահատականների կարելի է հանդիպել պատ-
մադիվանագիտական գրականության մեջ, հատկապես հասարակական-
քաղաքական մտքի առանձին ներկայացուցիչների մոտ: Այս տեսակետը
հիմնավորելիս նրանք որպես կանոն ղեկավարվում են Գորչակովի և կայս-
րած ղեկուցագրում արտգործնախարարը, իմ ծառայողական գործու-
նեությունն ամենասև. օրն է», իսկ կայսրը լուսանցքում նշանագրեց՝ «նույն-
պես և իմ»: Իզնատեր գրել էր. «Գրեթե ոչինչ չմնաց իմ դաշնագրից: Ամ-
բողջ համը կորցված է, որովհետև Սան-Ստեֆանոյի պայմանագիրը պատ-
րաստվեց ռուսական, իսկ Բեուլինինը՝ Ավստրո-Հունգարական թանձր կե-
րակրահյուսով»:

Բեուլինի վեհաժողովից դժգոհ էին բոլոր նրանք, ովքեր տեղյակ չէին,
որ մինչև վեհաժողովի գումարումը Ռայխշտադտի համաձայնագրով և
Բուդապեշտի կոնվենցիայով Ռուսաստանը Ավստրո-Հունգարիային կա-
տարել էր լուրջ գիջումներ, ինչն արձանագրվեց Բեուլինի դաշնագրում:
Դրանք պահվում էին հույժ գաղտնիության մեջ, նույնիսկ շատ բարձրաս-
տիճան պաշտոնյաներ, այդ թվում Ն. Իզնատեր տեղյակ չէին այդ պայմա-
նագրերի մասին: Գորչակովին ու Շուվալովին հատկապես խստագույնս
դատասյարտեցին սլավոնասերները, որոնց կարծիքով ռուս դիվանագետ-
ները Բեուլինի վեհաժողովում չկարողացան պաշտպանել ո՛չ սեփական
երկրի, ո՛չ էլ սլավոնական ժողովուրդների օրինական իրավունքները և
չահերը: Նրանք առանձնապես ոչ մի կերպ չէին կարող հաշտվել երկու
հողվածի՝ Բուլղարիայի մասնատման և Բոսնիայի ու Հերցեգովինայի՝
Ավստրո-Հունգարիայի կողմից ոազմակայման իրավունքի հետ: Ժամանա-
կակիցների վրա մեծ տպավորություն գործեց Աքսակովի ճառը Մոսկվայի
սլավոնասերների կոմիտեում: Նրա գնահատմամբ Բեուլինի պայմանագիրը
Ռուսաստանի դեմ ուղղված խայտառակ փաստաթուղթ էր, անպատվա-
բեր Ռուսաստանի համար: «Դո՛ւ ես, արդյոք, հաղթանակած Ռուսիա...
դատապարտվածների աթոռին, ղղջում ես ինչպես հանցագործ... աղեր-
սում ես, որ ներեն քեզ քո հաղթանակները»: Այս ելույթի համար Աքսա-
կովն արտաքսվեց Մոսկվայից և մի քանի ամիս ապրում էր իր ազգական-
ների կալվածքում: Բեուլինի պայմանագրի քննադատների կարծիքով Ռու-
սաստանն այդ չարաբաստիկ վեհաժողովում փաստորեն անսպասելիորեն
հայտնվեց մեղադրյալի աթոռին: Իհարկե, դժվար է համաձայնվել նման
խիստ և ծայրահեղ գնահատականի հետ, քանզի դատապարտյալի մասին
խոսք լինել չէր կարող: Բեուլինում պարզապես վերանայվեց Սան-Ստեֆա-
նոյի պայմանագիրը: Բեուլինի դաշնագիրը «անպատվություն և անար-
գանք» չէր Ռուսաստանի համար, որովհետև Սան-Ստեֆանոյում բանակ-
ցությունները երկկողմանի էին՝ ռուս-թուրքական, ընդ որում, կատարյալ
պարտություն կրած Թուրքիայի ու վերջնական հաղթանակ տարած Ռու-
սաստանի միջև, որի յորբերը կանգնած էին Կ.Պոլսի մատույցներում՝ ան-
միջական սպառնալիք ստեղծելով ջախջախված թշնամու մայրաքաղաքին:
Մինչդեռ Բեուլինի վեհաժողովում բանակցություններն ընթանում էին բո-
լորովին այլ, նախորդից արմատապես տարբերվող քաղաքական դիվանա-
գիտական մթնոլորտում: Բեուլին ժամանած բոլոր մեծ տերությունները ո՛չ
պատերազմել էին և ո՛չ էլ, առավել ես, պարտություն կրել Ռուսաստա-
նից: Ավելի հավասարակշռված, փաստարկված ու հանգամանայից էին
Բեուլինի վեհաժողովում տեղի ունեցած գործընթացների նկատմամբ Բորիս
Ջիչերինի՝ քաղաքական նշանավոր գործչի, ռուսական պատմագրության
մեջ լայնորեն ճանաչված պետական դպրոցի կարկառուն դեմքի, իրավուն-

քի պրոֆեսորի Հայացքներն ու գնահատականները: Ձիչերինը իր «Բնույ-
նի հաշտությունը ուսական հասարակական մտքի առջև» նոթերում
պաշտպանեց կառավարության կուրսը և դիվանագիտական գործողու-
թյունները որպես ստեղծված իրադրության մեջ միակ հնարավոր ճիշտ
տարբերակ: «Մի՞թե մենք, - գրում է ուս հայտնի գործիչ Վյազեմսկին,-
պետք է գոհարենք մեր կյանքը և արյունը, իսկ միգուցե նաև մեր ապա-
գան սերբերի ու բուլղարների բարգավաճման համար: Թող սերբերը պայ-
քարեն սերբերի համար, բուլղարները՝ բուլղարների համար, ուսները՝
ուսների համար: Անմտություն է մեզ ավելի շատ սլավոններ համարել,
քան՝ ուսներ: Կրոնն այստեղ մեղք չունի: Կրոնական պատերազմը վա-
տագույնն է պատերազմների մեջ: Դա անհեթեթություն է ու ժամանա-
կավրեպություն: Ձի կարելի թուրքերին դատապարտել այն բանի համար,
որ Աստված նրանց ստեղծեց մահմեդականներ և պահանջել նրանցից
քրիստոնեական առաքինություններ: Դա անիմաստ է: Վտարեք նրանց
Եվրոպայից, եթե դուք դա կարող եք, մկրտեցեք նրանց, եթե դուք գիտեք
ինչպես այն ձեռնարկել: Եթե ոչ, ապա հանգիստ թողեք թուրքերին և
Արևելյան հարցը»: Սակայն Բեռլինի պայմանագիրը կայուն և ամուր չէր.
նրա գլխավոր կետերը պահպանվեցին մինչև 1912-1913 թթ. Բալկանյան
պատերազմները, խորացնելով երկու ռազմաքաղաքական խմբակցու-
թյունների միջև քաղաքական ճգնաժամը, նպաստեցին առաջին աշխարհա-
մարտի ծագմանը, որը հսկայական արհավիրքներ պատճառեց համայն
մարդկությանը և առաջին հերթին Ցեղասպանություն վերապրած Հայ ժո-
ղովրդին:

**§ 3. «ԿԱՅՍԻ ԽԱՂԱՐԱՐԱՐ» ԱԼԵՔՍԱՆԴՐ ԵՐՐՈՐԴԻ ՈՒ
ՆԻԿՈԼԱՅ ԵՐԿՐՈՐԴԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՌՈՒՍ-ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԴԱՇԻՆՔԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ
ԵՎ ԶԻՆԱԹԱՓՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՅՆ**

Բեռլինի վեհաժողովից հետո միջազգային հարաբերությունների հա-
մակարգում սկսվեց ուժերի նոր վերաբաշխման բարդ և երկարատև գոր-
ծընթացը, որը ի վերջո հանգեցրեց ռազմաքաղաքական երկու հակա-
մարտ խմբավորումների ձևավորմանը: Բեռլինի դաշնագրի ստորագրումից
հետո միջազգային ասպարեզում քաղաքական նախահիմքեր ստեղծվեցին
կայսերական Ռուսաստանի և հանրապետական Ֆրանսիայի մերձեցման
համար, որը, ի վերջո, XIX դարի 90-ական թվականների սկզբներին՝
«կայսր խաղաղարար» Ալեքսանդր Երրորդի թագավորության տարինե-
րին ավարտվեց համաեվրոպական հնչեղություն ստացած ռուս-ֆրան-
սիական ռազմաքաղաքական դաշինքի կնքմամբ:

Միջազգային հարաբերությունների գործընթացների և քաղաքական
դարգացումների արդյունքում ձևավորված այս դաշինքը հավասարապես
համապատասխանում էր կայսերական Ռուսաստանի և Ֆրանսիայի հան-
րապետության ազգային-պետական շահերին: Ձթերագնահատելով Ռու-
սաստանի համար Ֆրանսիայի հետ մերձեցման կարևորությունը, այսու-
հանդերձ, անհրաժեշտ է նկատել, որ ստեղծված ռազմաքաղաքական
իրադրության մեջ այդ դաշինքի կնքման գործում ավելի շատ շահագրգիռ
էին Ֆրանսիայի պետական ու ռազմական այրերը, թեև նրանք հասկա-
նում էին, որ այդ կտրուկ քայլը և որակապես նոր մարտավարությունը
արտաքին քաղաքականության ու դիվանագիտության ոլորտում զգալիոր-
են կբարդացնեն միջպետական հարաբերությունները Անգլիայի հետ, էլ
ավելի կուժեղացնեն Գերմանիայի թշնամական գործողություններն իրենց
երկրի նկատմամբ: Ֆրանսիական դիվանագիտությունը նախընտրեց Ռու-
սաստանի հետ մերձեցման դանդաղ, աստիճանական մարտավարու-
թյունը: Իսկ Պետերբուրգում անգամ Բեռլինի վեհաժողովից և հատկապես
ավստրո-գերմանական ռազմաքաղաքական դաշինքի կնքումից հետո էլ
գոյություն ունեին ազդեցիկ ուժեր, որոնք շարունակում էին պաշտպանել
«Երեք կայսրերի դաշինքի» շրջանակներում Գերմանիայի հետ համագոր-
ծակցելու քաղաքականությունը, թեև այն փաստորեն կորցրել էր իր նշա-
նակությունը և Ռուսաստանի, Գերմանիայի ու Ավստրո-Հունգարիայի մի-
ջև ընթացող անդիջում մրցակցության պայմաններում, սուր և անհաղթա-
հարելի հակամարտությունների պատճառով դարձել էր ձևական: Մինչ-
դեռ Գորչակովը Բեռլինից վերադարձավ համոզված լինելով, որ գերմա-
նական կողմնորոշումն իրեն սպառել է և անհրաժեշտ է շրջադարձ՝ Ֆրան-
սիայի հետ ավելի սերտ կապեր հաստատելու ուղղությամբ: 1879 թ. Գեր-
մանիան ռազմական դաշինք կնքեց Ավստրո-Հունգարիայի հետ, 1882 թ.
նրանց միացավ Իտալիան: Եռյակ միությունը հիմնականում ուղղված էր
Ռուսաստանի և Ֆրանսիայի դեմ:

Ռուսաստանի կայսր Ալեքսանդր Երրորդը Նիկոլայ Գիրսին նշանակեց
արտգործնախարար: Նա այդ բարձր պաշտոնում փոխարինեց Գորչակո-
վին: Ալեքսանդր Երրորդը, ինչպես ժամանակին իր հայրը՝ Ալեքսանդր
Երկրորդը, չերաշխավորելով Գերմանիային Ռուսաստանի չեղոթությունը
Ֆրանս-գերմանական նոր պատերազմում, այս անգամ էլ փրկեց Ֆրան-
սիան իրեն սպառնացող վտանգից: Ալեքսանդր Երրորդը, մերժելով Բիս-
մարկին և աջակցություն խոստանալով Ֆրանսիային, ձգտում էր պահպա-
նել ուժերի հավասարակշռությունը Եվրոպայում, որը շահեկան էր ոչ
միայն Ռուսաստանին, այլև՝ ողջ մայրցամաքին: Ռուսաստանի կայսրը
ցանկանում էր հանդես գալ իբրև «խաղաղարար», կանխել մեծ տերու-
թյունների միջև հնարավոր ռազմական բախումները: Դրա համար էլ

կայսրը շարունակում էր պահպանել Հարաբերությունները Գերմանիայի հետ «Երեք կայսրերի դաշինքի» շրջանակներում: Ի դեպ Գերմանիայի նոր կայսր Վիլհելմ Երկրորդը 1890 թ. ազատեց Բիսմարկին կանցլերի պաշտոնից, որին փոխարինեց գեներալ Կապրիվին: Բիսմարկի պաշտոնանկությունը և Կապրիվիի նոր ռազմաքաղաքական մարտավարությունը Գերմանիային ու Ռուսաստանին մղեց մտնելու տարբեր խմբակցությունների մեջ, զգալիորեն նպաստեց ռուս-ֆրանսիական դաշինքի կնքմանը: Առանձնապես կարևոր նշանակություն ունեցավ ֆրանսիական կապիտալի հոսքը Ռուսաստան, որը ռուս-գերմանական «մաքսային պատերազմի» պայմաններում խիստ անհրաժեշտ էր երկրի տնտեսության զարգացման համար: 1891 թ. Ֆրանսիայի արտգործնախարար Ռիբոյի ու Փարիզում Ռուսաստանի դեսպան Մորենհեյմի միջև պաշտոնական նամակագրության փոխանակմամբ սկսվեց ռուս-ֆրանսիական ռազմաքաղաքական դաշինքի կնքման երկար և ոչ դյուրին գործընթացը: Նրանց միջև կնքված Համաձայնագիրը կրում էր կոնսուլտատիվ պակտի բնույթ և բաղկացած էր երկու կետից: Առաջին հոդվածով երկու կառավարությունները հաստատելով սրտակից համաձայնություն, անկեղծորեն ցանկանում են միահամուռ ուժերով նպաստել խաղաղության պահպանմանը և հայտարարում են, որ իրենք կխորհրդակցեն միմյանց հետ Համընդհանուր խաղաղությանը սպառնացող յուրաքանչյուր հարցի շուրջ: Երկրորդ կետի համաձայն, եթե աշխարհը իսկապես վտանգվի և հատկապես այն դեպքում, եթե երկու կողմերից մեկին հարձակման վտանգ սպառնա, երկու կողմերը պայմանավորվում են համաձայնության գալ անհապաղ ու միաժամանակ այն միջոցառումների մասին, որոնց իրագործումը կդառնա անհետաձգելի երկու կառավարությունների համար: Թեև համաձայնությունն ուներ կոնսուլտատիվ պակտի բովանդակություն, իսկ պարտավորությունները կրում էին անորոշ և ընդհանուր բնույթ ու այն դեռևս հետո էր դաշինք լինելուց, այնուհանդերձ, այն մեծ առաջընթաց էր երկու երկրների միջև համազորակցության և մերձեցման ճանապարհին: Ավելին, Ֆրանսիայի ռազմածովային նավատորմի այցը կրոնշտադտ, ըստ էության նշանակում էր ռուս-ֆրանսիական մերձեցման հրապարակային փաստացի արտահայտություն, ակնհայտ դարձնում Ռուսաստանի և Ֆրանսիայի հակառակորդներին ու մրցակիցներին դաշինքի կնքման հավանականությունը, թեև համաձայնագիրը ստորագրվել էր խիստ զաղտնի պայմաններում: Ալեքսանդր Երրորդը ռուս-ֆրանսիական համազորակցության նախաձեռնությունը վերցրեց իր ձեռքը և նրա շնորհիվ Պետերբուրգում սկսվեցին երկու երկրների գլխավոր շտաբների ներկայացուցիչների բանակցությունները: Դա ապացուցեց Ռուսաստանի կայսրի կենսագործած արտաքին քաղաքականության իրատեսությունը և պրագմատիզմը, քանզի

պահպանողական համոզմունքները զրավեցին ածանցյալ տեղ, գերակայությունը տրվեց պետական շահին: Իսկապես դաշնակիցներ էին դառնում միմյանցից այդքան տարբեր երկրներ, որով հանրապետական Ֆրանսիան ստանում էր հզոր և աւուր հենարան ու երաշխիք Գերմանիայի հնարավոր ագրեսիայի դեմ: Ռուսաստանի կայսրը համարյա դարձավ Ֆրանսիայի ժողովրդական հերոս, նրա պատվին, նրա անունով, Փարիզի ամենազեղեցիկ կամուրջը Սենա գետի վրա առ այսօր էլ կրում է Ալեքսանդր Երրորդ կայսրի անունը: Ռուսաստանի և Ֆրանսիայի մերձեցումը դարձավ գերմանական դիվանագիտության լուրջ պարտությունը, քանզի Բեռլինում թերագնահատում էին կայսրի վճռականությունը և երկար ժամանակ չէին հավատում կատարված փաստին: Երբ կայսրին հարցրին, թե բարեկամական այցով կրոնշտադտ ժամանած ֆրանսիական ռազմական նավատորմի պատվիրակության պատվին պաշտոնական ճաշկերույթի ժամանակ լինելու՞ են արդյոք բաժակաճառեր, նա տվեց դրական պատասխան: Ալեքսանդր Երրորդն ասաց, որ անպայման լինելու են, որը վարմացրեց այս հարցով կայսրին դիմած իշխան Սթոլենսկուն: «Բայց, Ձերդ Գերազանցություն, այդ դեպքում պետք է կատարել օրհներգը»: «Այդպես էլ պետք է վարվել», - եղավ նրա պատասխանը: «Բայց, Ձերդ Գերազանցություն, դա Մարսելյոզ է»: «Բայց չէ՞ որ դա նրանց օրհներգն է, ուրեմն այն էլ պետք է նվագել»: Իշխանը, կարծելով, թե կայսրն իրեն չի հասկացել, նորից կրկնեց. «Դա Մարսելյոզն է»: Ալեքսանդրը չդիմացավ և ասաց. «Դուք, հավանաբար ցանկանում եք, որ ես ֆրանսիացիների համար ստեղծեմ նոր օրհներգ, ոչ, նվագեք այն, ինչ կա»:

Կայսրի՝ հանուն Ֆրանսիայի բաժակաճառից հետո Պետերբուրգի պալատում հնչեց ֆրանսիական հեղափոխության օրհներգը՝ «Մարսելյոզը»: Դա մեծ արձագանք ունեցավ, որովհետև առաջին անգամ այս երաժշտությունը հրապարակավ կատարվեց կայսերական Ռուսաստանի մայրաքաղաքում: Պետերբուրգում Ռուսաստանի և Ֆրանսիայի միջև ստորագրված ռազմական կոնվենցիայի համաձայն, եթե Ֆրանսիան հարձակման ենթարկվի Գերմանիայի կամ Իտալիայի կողմից, որին կպաշտպանի Գերմանիան, Ռուսաստանը կգործադրի իր առկա բոլոր ուժերը հարձակվելու Գերմանիայի վրա: Եթե Ռուսաստանը հարձակման ենթարկվի Գերմանիայի կամ Ավստրո-Հունգարիայի կողմից, որին կպաշտպանի Գերմանիան, Ֆրանսիան կգործադրի իր առկա բոլոր ուժերը հարձակվելու Գերմանիայի վրա: Եռյակ միություն կամ նրա մեջ մտնող տերություններից մեկի զորքերի զորահավաքի դեպքում Ֆրանսիան և Ռուսաստանն այդ մասին լուր ստանալով, անհապաղ, չսպասելով նախնական որևէ համաձայնության, անմիջապես և միաժամանակ զորահավաքում են իրենց բոլոր ուժերը և շարժում դրանք, որքան հնարավոր է իրենց մերձակա սահ-

մաններին: Կոնվենցիայում ընդգծված է, որ Ֆրանսիան պետք է դուրս բերի Գերմանիայի դեմ մեկ միլիոն 300 հազարանոց բանակ, Ռուսաստանը՝ 700 հազարից մինչև 800 հազար: Երկու կողմերը պայմանավորվում էին այդ ուժերը դնել գործողության մեջ «... Լիովին և ամենայն սրընթացությամբ» այն նկատառումով, «... որպեսզի Գերմանիան հարկադրված լիներ միանգամից մարտնչել և՛ արևելքում, և՛ արևմուտքում»: Նախատեսվում էին գլխավոր շտաբների փոխադարձ կոնսուլտացիաներ և տեղեկությունների փոխանակում Եոյակ միության ղինված ուժերի մասին: Կողմերը պարտավորվում էին չկնքել սեպարատ (ատանձին) հաշտություն: Կոնվենցիան կպահպանի իր ուժը, քանի դեռ գոյություն կունենա Եոյակ միությունը: Ռուս-Ֆրանսիական 1892 թ. ռազմական կոնվենցիան ստորագրեցին գլխավոր շտաբի ներկայացուցիչներ՝ գեներալներ Օբրուչևը և Բուադենֆրը: Դրանից հետո 1893 թ. ռուսական նավատուժն այցելեց Թուլոն և արժանացավ ամենահանդիսավոր ընդունելության: 1893 թ. դեկտեմբերին Ալեքսանդր Երրորդը հավանություն տվեց ռազմական կոնվենցիայի նախագծին և Ֆրանսիական կառավարությանը տեղեկացվեց Ռուսաստանի կողմից կոնվենցիան հաստատելու մասին: Համանման հայտարարությամբ հանդես եկավ նաև Ֆրանսիական կառավարությունը և 1894 թ. հունվարին կատարվեց կոնվենցիայի վավերացումը: Ռուս-Ֆրանսիական 1891 թ. համաձայնագիրը և ռազմական կոնվենցիան ընկան ռուս-Ֆրանսիական դաշինքի հիմքում, որն ունեցավ համաեվրոպական նշանակություն: Ռուսաստանի և Ֆրանսիայի միջև կնքված դաշինքով Եվրոպայում Եոյակ միության դեմ ստեղծվեց հզոր հակակշիռ խմբակցություն: Այդ խմբակցություններից դուրս էր միայն Անգլիան. նրա դեկավար շրջանները կենսագործում էին «փայլուն չեղոքության» քաղաքականություն, որը նշանակում էր երկու խմբակցությունների միջև ընթացող անհաշտ պայքարն օգտագործել բրիտանական կայսրության շահերի համար: Անգլիական դիվանագիտության ռազմավարության համաձայն Մեծ Բրիտանիայի բնական դաշնակիցը ծովն է և գերհզոր նավատորմը, որոնք հնարավորություն էին ընձեռում նրան ոչ թե որևէ մի խմբակցության մեջ խաղալ առաջին ջութակի դեր, այլ դառնալ խմբավար քաղաքական այդ «երգչախմբում»: «Փայլուն չեղոքության» քաղաքականությունը XIX դարի 90-ական թվականների համար հիմնականում իրատեսական էր, սակայն XX դարի սկզբին ուժերի հարաբերակցության փոփոխման առնչությամբ Անգլիան վերանայեց իր դիվանագիտական ռազմավարությունը և դաշինք կնքելով Ֆրանսիայի, ապա Ռուսաստանի հետ, նպաստեց ռազմաքաղաքական նոր խմբակցության՝ Անտանտի կազմավորմանը՝ դառնալով նրա ամենաազդեցիկ, ամենահզոր անդամներից մեկը: Եվրոպան կանգնեց մեծ և արյունահեղ պատերազմի նախաշեմին: Սակայն

Եվրոպայի մեծ տերությունները կայուն խաղաղության և միջազգային անվտանգության գլխավոր երաշխիքը մայրցամաքում տեսնում էին հավասարազոր ռազմական ներուժ ունեցող երկու հակամարտ քաղաքական խմբակցության ստեղծման ու հավասարակշռության պահպանման մեջ: Եվրոպայի դիվանագետները, որդեգրելով «ուժերի դիրքերից» մարտավարությունը, չէին կասկածում, որ միմյանց հավասարաչափ հարված հասցնելու հնարավորություն ունեցող երկու խմբակցություններից յուրաքանչյուրը կխուսափի դիմել ծայրահեղության ու կհրաժարվի պատերազմից, իրրև քաղաքականության միջոցից համաեվրոպական նշանակության վիճելի հիմնախնդիրները լուծելու համար: Եվրոպական դիվանագիտությունը խաղաղությունը և միջազգային անվտանգությունը փորձում էր ապահովել փոխադարձ վախի ու սարսափի չափազանց խախուտ և վտանգավոր գործոնով: Դա լավ էր հասկանում ու քաջ գիտակցում էր ոչ միայն Ալեքսանդր Երրորդ «խաղաղարարը», այլև Ռոմանովների արքայատան վերջին կայսր Նիկոլայ Երկրորդը: Նա հանդես եկավ զինաթափման, սպառազինությունների կրճատման ու խաղաղության խորհրդածոցով հրավիրելու հույժ հրատապ նախաձեռնությամբ ու կազմակերպմամբ: Ռուսաստանը մեծ պետություններից առաջինը XIX դարի վերջում առաջ քաշեց սպառազինությունների սահմանափակման հիմնախնդիրը, որը լայն արձագանք գտավ խաղաղության պահպանման և սպառազինությունների կրճատման մեջ չահագրգռված խաղաղասիրական բոլոր ուժերի և Եվրոպայի առանձին հեռամետ գործիչների, դիվանագետների շրջանում:

Նիկոլայ Երկրորդը գահ բարձրացավ 1894 թ. 26 տարեկան հասակում և փոխարինեց իր վաղաժամ մահացած հորը՝ Ալեքսանդր Երրորդին: Երիտասարդ թագաժառանգը գահ բարձրանալուց հետո ցանկացավ հենց սկզբից նմանվել իր հանգուցյալ ծնողին՝ «կայսր խաղաղարարին» և շարունակել նրա քաղաքականությունը: Այս առնչությամբ երիտասարդ թագավորը ոչ միայն խորացրեց ռուս-Ֆրանսիական ռազմական դաշինքը, այլև Եվրոպայում խաղաղությունն ամրապնդելու և պատերազմի հնարավորությունը մայրցամաքից հեռացնելու նպատակով հավանություն տվեց սեփական դորքերի կրճատման մասին ռազմական նախարար Կուրոպատկինի ղեկուցազրին: Ավելին, որոշելով ընդլայնել հիմնախնդրի շրջանակները, կայսրն առաջարկեց սպառազինությունների սահմանափակման հարցը քննարկելու համար նախապատրաստել ու գումարել միջազգային խորհրդածոցով: Նիկոլայ Երկրորդի մտահղացումը և նախաձեռնությունը խաղաղության միջազգային խորհրդածոցով գումարելու վերաբերյալ ռուս դիվանագետների հետևողական գործունեության շնորհիվ պաշտպանեցին մեծ ու փոքր տերությունները՝ վերստին վկայելով հիմնախնդրի քաղաքական կարևորությունը և սպառազինությունների սահմանափակման հրա-

տապալտեցի: Եվրոպայի հեռատես պետական գործիչները գիտակցում էին, որ սպառազինությունների անարգել ու չվերահսկվող շարունակական գործընթացը, միմյանց գերազանցելու ձգտումը անմիջապես վտանգում են խաղաղությունը մայրցամաքում ու ցանկացած պահին ի դորու են պատճառ դառնալու փոքր և մեծ պատերազմների համար:

Նիկոլայ Երկրորդը, Ալեքսանդր Երրորդից որդեգրելով Ռուսաստանը պատերազմից դեռ պահելու մարտավարությունը, հաջողությամբ կենսագործում էր խաղաղասիրական քաղաքականություն, համենայն դեպս մինչև ռուս-ճապոնական պատերազմը երկիրը խուսափեց ռազմական որևէ մեծ ռախումից: Այս առումով կարևոր է Ռուսաստանի և անձամբ կայսրի նախաձեռնությամբ Հաագայում գումարված խորհրդաժողովը, թեև նրա ընդունած որոշումները փաստորեն չիրականացան ու մնացին թղթի վրա: Սակայն գլխավորը, անշուշտ, խորհրդաժողովի հրավիրումն էր, մանավանդ որ այն վերին աստիճանի ներկայացուցչական էր՝ 27 պետություններ մասնակցեցին նրա աշխատանքներին: Հատկանշական է, որ այդ խորհրդաժողովին իրենց ներկայացուցիչներն էին ուղարկել բոլոր մեծ տերությունները՝ Մեծ Բրիտանիան, ԱՄՆ-ը, Գերմանիան, Ֆրանսիան, Իտալիան, Ճապոնիան, նաև Սկանդինավյան երկրները: Նիկոլայ Երկրորդը, հավանաբար, ցանկանալով հավերժացնել սեփական անձը, ինչպես համաշխարհային պատմության, այնպես էլ միջազգային հարաբերությունների համակարգում և դիվանագիտության տարեգրության մեջ ոչ միայն որպես խոշորագույն ու հզորագույն կայսրություններից մեկի միապետ, այլև դիվանագետ-խաղարար, կարգադրեց իր ներկայացուցիչներին աշխատել խորհրդաժողովը բացել 1899 թ. մայիսի 6-ին՝ կայսրի ծննդյան օրը: Հաագայի միջազգային առաջին խորհրդաժողովն ընդունեց միջազգային բախումների խաղաղ լուծման, ցամաքային պատերազմի օրենքների, ծովային պատերազմում ժնեի 1864 թ. օգոստոսի 10-ի կոնվենցիայի սկզբունքները կիրառելու մասին կոնվենցիաներ: Հատուկ նշանակություն ունեցող էր միջազգային բախումների խաղաղ կարգավորման մասին Հաագայի կոնվենցիան, որով պետությունները համաձայնվեցին զործադրել բոլոր ջանքերը, որպեսզի ապահովեն միջազգային վեճերի խաղաղ լուծումը և այդ նպատակին հասնելու համար ուրվագծեցին հետևյալ հիմնական միջոցները՝ «բարի ծառայությունները» և միջնորդությունը, միջազգային հետաքննական հանձնաժողովը և միջազգային միջնորդական դատարանը: Հաագայի միջազգային երկրորդ խորհրդաժողովը գումարվեց արդեն 1907 թ. և քննարկեց զրեթե նույն հիմնահարցերը՝ կանխել պատերազմը և ապահովել խաղաղությունը: Այս խորհրդաժողովը նախորդի համեմատությամբ ավելի ներկայացուցչական էր՝ մասնակցում էին 44 պետություններ, ընդ որում ներկա էին 1899 թ. խորհրդաժողովի բոլոր մաս-

նակիցները, ապա նաև Կենտրոնական և Հարավային Ամերիկայի 17 երկրներ: Միջազգային նոր խորհրդաժողովը կայացավ ռուս-ճապոնական պատերազմից հետո: Հետևաբար, Ռուսաստանը և Ճապոնիան փաստորեն չկատարեցին միջազգային բախումների խաղաղ լուծման մասին Հաագայի առաջին խորհրդաժողովի կոնվենցիան: Ռուսաստանի պարտությունն այս պատերազմում զգալիորեն թուլացրեց նրա դիրքերը միջազգային ասպարեզում և բացասաբար անդրադարձավ երկրի հեղինակության վրա: Ռուսաստանի պետական այրերին անհրաժեշտ էր խորհրդաժողովն օգտագործել վերականգնելու կայսրության նախկին կարգավիճակը Եվրոպայում ու աշխարհում: Հաագայի խորհրդաժողովները զգալի դեր խաղացին պատերազմ վարելու միջազգային-իրավական կանոնները կարգավորելու գործում: Իսկ ընդունված կոնվենցիաները և հռչակագրերը, առավել ևս դրանց կիրառումը խիստ հրատապ դարձան 20-րդ դարի համար՝ մեր օրերում չկորցնելով իրենց իմաստը և նշանակությունը:

ՉՈՐՐՈՐԳ ԲԱԺԻՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ
ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ
XIX ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԻ ՎԵՐՋԻՆ ՔԱՌՈՐԴՈՒՄ

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

ՆԱՐՈՂՆԻԿԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ XIX ԴԱՐԻ
70-80-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

§ 1. ՆԱՐՈՂՆԻԿՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱՆՈՍՈՒԹՅՈՒՆԸ

XIX դարի 70-ական թվականներին կայսերական Ռուսաստանում վերստին սրվեց ներքաղաքական իրադրությունը, որը լուրջ խթան դարձավ երկրում հասարակական-քաղաքական շարժման վերելքի համար: Այս փուլում էլ Ռուսաստանի հասարակական-քաղաքական միտքը սերտորեն կապված էր համաշխարհային, առաջին հերթին համակիրոպական հասարակական-քաղաքական մտքի հետ և իբրև նրա բաղկացուցիչ մաս որոշ առումով կրում էր նրա ազդեցությունը: Ռուսաստանյան հասարակական-քաղաքական կյանքի վրա մեծ ազդեցություն գործեց 1871 թ. Փարիզի Կոմունան: Փարիզի բարիկադային պայքարին մասնակցեցին նաև ռուս մտավորականներ գրող Ա. Կորվին-Կրուկովսկայան, մաթեմատիկայի պրոֆեսոր և գրող Սոֆյա Կովալևսկայան, Մ. Սաժինը, Ե. Դմիտրիևան: Ներքաղաքական և արտաքին քաղաքական այս ու նման այլ գործոնները կյանքի կոչեցին նարողնիկական շարժումը: Նարողնիկություն անվանումը մտավ Ռուսաստանի քաղաքական պատմության մեջ, քանզի այդ շարժման մասնակիցները և գաղափարների կրողները ոչ միայն հանդես էին գալիս իբրև ժողովրդի շահերի պաշտպաններ, այլև վտանգելով սեփական կյանքը, գնում էին ժողովրդի մեջ՝ հեղափոխական պայքարի հանելու աշխատավոր գյուղացիության լայն զանգվածներին: Նարողնիկությունը իր սեփական և ուրույն գաղափարախոսությունները ձևավորվեց գյուղացիական շարժման ներքո, որի ակունքներում կանգնած էին Գերցենը և Չերնի-

չևսկին: Նրանց ուսմունքից նարողնիկները յուրացրին ամենամարդասիրական ու վեհ գաղափարները՝ պաշտպանել հասարակ ժողովրդի, առաջին հերթին գյուղացիության շահերը, խոր ժողովրդականությունը: Սակայն նարողնիկությունը նրանց ուսմունքից յուրացրեց նաև թույլ և խոցելի կողմերը, հատկապես թերահավատությունը, բացասական դիրքորոշումը Արևմտյան Եվրոպայում հաստատված բուրժուական հասարակարգի հանդեպ, հավատը սոցիալիստական ուտոպիային: Նման մոտեցումներն առաջացնում էին նկատելի հակասություն ու անհամամասնություն նրանց ուսմունքի և քաղաքական գործունեության միջև: Գործելով ժողովրդի շահերի պաշտպանության համար, ցանկանալով վերացնել ճորտատիրական մնացուկները, որոնք բացասաբար էին անդրադառնում աշխատավոր գյուղացիության կացության ու կենցաղի վրա, պայքարելով կալվածատիրական հողատիրության վերացման համար, նրանք առարկայորեն նպաստում էին ռուսական գյուղում կապիտալիստական հարաբերությունների զարգացմանը: Հետևաբար, նարողնիկներն իրենց կամքից անկախ նպաստում էին այն ամենին, ինչը մերժվում էր նրանց կողմից և համարվում խոչընդոտող գործոն Ռուսաստանի հետագա առաջընթացի համար: Նարողնիկների ենթակայական կարծիքով կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում հնարավոր չէ, որովհետև այն տարածվում է վերևից՝ կառավարության կողմից, ուստի և այն փաստորեն պատահական երևույթ է, զուրկ պատմական օրինաչափությունից: Ըստ էության, նրանք չգիտեին հասարակական զարգացման օրենքները: Նարողնիկները չկարողացան գնահատել նաև նոր ձևավորվող բանվոր դասակարգի դերը Ռուսաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքում, նրան դիտելով որպես գյուղացիության քայքայված, աղքատ մաս, որը լրացուցիչ աշխատանքի էր գնում քաղաք: Նրանք համոզված էին, որ Ռուսաստանը, հենվելով իր համայնական ավանդույթի վրա, կկարողանա շրջանցել կապիտալիզմը և «թռիչքաձև», անմիջապես անցում կկատարի «բանականության հիմքի վրա կառուցված» սոցիալիստական հասարակարգ: Նարողնիկներն արտահայտում էին գյուղացիության տրամադրությունները, որին խորթ էր, շահերին դեմ ճորտատիրական մնացուկների առկայությունը, բայց մյուս կողմից նրանք չէին ընդունում, թշնամի էին կապիտալիզմին, որովհետև նրա դարգացումը քայքայում էր գյուղացիական տնտեսությունը: Նարողնիկները հատուկ ուշադրություն չէին դարձնում սահմանադրության և քաղաքական վերափոխումներին, թերևս իրենց առջև չէին դնում քաղաքական իրավունքի համար պայքարի անմիջական խնդիրներ, քանզի նրանք կարծում էին, թե սոցիալական ազատագրումը կլուծի մնացած բոլոր կարևորագույն ու հրատապ հիմնահարցերը: Իսկ եթե նարողնիկները, այնուամենայնիվ մասնակցում էին քաղաքացիական իրավունքի

Համար պայքարին, ապա սոսկ այն պատճառով, որ Հույս ունեին դրա շնորհիվ ընդայնև սեփական քարոզչությունը, գրավել իշխանությունը և Հաստատել սոցիալիզմ: Սա ևս դասվում է նարոդնիկական տեսության ստվերոտ կողմերի շարքը:

XIX դարի 70-ական թվականներին նարոդնիկության շրջանում ձևավորվեցին երեք ուղղություններ՝ խոտվարարական (անարխիստական), քարոզչական և դավադրական, որոնց համար բնորոշ էին նշված բոլոր առարկայական գործոնները: Այս բոլորով Հանդերձ նարոդնիկական երեք հոսանքների միջև առկա էին նաև էական տարբերություններ: Երեք ուղղությունների գաղափարախոսներ՝ Միխայիլ Բակունինը, Պյոտր Լավրովը և Պյոտր Տիկաչովը տեսական ու գործնական անհավասար պայքար ծավալեցին ինքնակալության դեմ՝ չինայելով ո՛չ իրենց սեփական, ո՛չ էլ կայսերական բարձրատիճան պաշտոնյաների, չբացառելով նույնիսկ միապետի կյանքը: Ազնվականական միջավայրից սերված և խոտվարարական ուղղության տեսարան Միխայիլ Բակունինը (1814-1876 թթ.) 40-ական թվականներին վտարանդվեց արտասահման և ակտիվորեն մասնակցեց արևմտատեվրոպական Հեղափոխական շարժումներին: 1848 թ. արևմտաեվրոպական Հեղափոխական շարժման ակտիվ գործիչ Բակունինին պրուսական և ավստրիական դատարանները երկու անգամ մահապատժի դատապարտեցին: Մեկ տարուց ավելի նա նստեց ավստրիական բանտում՝ շղթայակապ պատին գամված, իսկ Հետո Հանձնվեց Ռուսաստանի կայսերական կառավարությունը: Երկարատև բանտարկությունից Հետո Բակունինին աքսորեցին Սիբիր, որտեղից փախավ արտասահման: XIX դարի 60-ական թվականներին Բակունինը դարձավ խոտվարարության (անարխիզմի), այսինքն՝ քաղաքական այնպիսի Հոսանքի ղեկավար, որը Հանդես էր գալիս ամեն տեսակի պետական իշխանության անհապաղ ոչնչացման կոչով: Բակունինն արդեն վաղ Հասակից էր հրապուրվել այսպես կոչված ոչնչացման և կործանման տեսությամբ, որը, ի վերջո, ավարտուն ձևով ամփոփվեց և ամբողջացվեց իր կողմից մշակված անարխիստական գաղափարախոսության մեջ: Նա Համոզված էր, որ ժամանակակից բոլոր պետությունները կառուցված են մարդուն ճնշելու և շահագործելու վրա: Նրա կարծիքով ոչ մի բարեփոխում չի կարող փոխել այդ պետությունների հակամարդկային էությունը: Դրա համար էլ անհրաժեշտ է Հեղափոխական ճանապարհով վերացնել այդ պետությունները և փոխարինել աղատ ինքնավար Համայնքներով, որոնք կազմավորվելու են «վերևից ներքև»: Հետևաբար Հեղափոխական պայքարի հիմնական խնդիրը Բակունինը համարում էր պետության ոչնչացումը, որը հանգեցնելու էր սոցիալիզմի և ընդհանուր հավասարության հաստատմանը: Բակունինը 1869 թ. ծանոթացավ 22-ամյա ուսանող Սերգեյ Նեչաևի հետ: Նա պնդում էր, թե Հեղա-

փոխականը պետք է իր մեջ ճնշի մարդկային բոլոր զգացմունքները, մերժի օրենքները, հրաժարվի պարկեշտությունից ու բարոյականությունից, որ բարձր նպատակներին հասնելու համար ընդունելի են բոլոր, ներառյալ և ստոր միջոցները: Խոտվարար նարոդնիկները, հետևելով Բակունինին, գտնում էին, որ աղբատության և իրավազրկության Հետևանքով Հուսահատության հասած ոուս գյուղացիներն արդեն պատրաստ են Հեղափոխության: Անհրաժեշտ է գնալ դեպի ժողովուրդ և անհապաղ նրան հանել խոտվության, որն ի վերջո կվերածվի համառուսաստանյան, իսկ Հետո համաշխարհային Հեղափոխության: Ռուսաստանում Բակունինն իր Հույսերը կապում էր գյուղացիության Հետ. նա ոուս գյուղացուն համարում էր «բնածին սոցիալիստ»: Բակունինը պահանջում էր բոլոր Հողերը հանձնել գյուղացիներին: Նրա գաղափարները հաջողություն ունեին մանր բուրժուական երկրներում՝ Իտալիայում, Իսպանիայում, Ռուսաստանում: Բակունինը ենթադրում էր, որ առավել գործնական արդյունքներ են տալիս «փաստերի քարոզչությունը», այսինքն՝ անընդմեջ մանր ապստամբությունները, ագրարային Հուզումները: Բակունինը կյանքի վերջին տարիներն անցկացրեց մեծ կարիքի մեջ: Նա մահացավ 1876 թ. Բեռնում (Շվեյցարիա)՝ իր ցանկությունը տեղավորված սևագործ բանվորների համար նախատեսված հիվանդանոցում: Բակունինի բազմաթիվ Հետևորդները շարունակում էին գործել շատ երկրներում: Ռուսաստանում նրանք կազմում էին նարոդնիկական ջոկատներ, որոնք ձգտում էին իրագործել «քարոզչություն փաստերով» բակունինյան մարտավարությունը:

Պյոտր Լավրովը (1823-1900 թ.) ծագումով Պսկովի աղնավականներից էր. նա ռազմական ակադեմիայում մաթեմատիկայի պրոֆեսոր էր, ուներ գնդապետի աստիճան, մոտ էր Չերնիշևսկուն: Իր վաղ աշխատություններում Լավրովը Հանդես էր գալիս իրրև աստիճանական բարեփոխումների կողմնակից, մտածում էր «անցյալը ներկայի հետ Հաշտեցնելու» մասին: Բայց Ալեքսանդր Երկրորդի բարեփոխումներից Հուսախարված, նա հանգեց Հեղափոխական գաղափարների ու դարձավ քարոզչության ուսմունքի նշանավոր տեսաբան: 1867 թ. Լավրովին աքսորեցին Վոլոգդայի նահանգ: Աքսորում նա գրեց իր նշանավոր «Պատմական նամակները»: Հենց նա արտահայտեց ժողովրդին «չվերադարձված պարտքի» մասին միտքը, որ արդեն ամուր արմատներ էր գցում ոուսական Հասարակության շրջանում: Լավրովը հավատում էր սոցիալիստական ուտոպիայի գաղափարներին, նարոդնիկական պատրանքներին՝ ընդունում էր համայնքը իրրև հիմք ապագա հասարակարգի համար, սոցիալական Հարցերի գերակայությունը քաղաքական խնդիրների նկատմամբ: Համոզվելով սոցիալական Հեղափոխության անհրաժեշտության մեջ Լավրովը մինչև իր կյանքի վերջին օրերը հավատարիմ մնաց այդ գաղափարախոսությանը: Լավրովը խստագույնս

քննադատում էր հեղափոխական արկածախնդրությունը: Նա մատնանշում էր, որ չի կարելի «արագացնել» պատմության զարգացման գործընթացը: Շտապողականությունը հեղափոխության նախապատրաստման գործում կարող է ավելորդ արյունահեղության և անիմաստ զոհերի պատճառ դառնալ: Լավրովի կարծիքով հեղափոխության առաջատար ուժը մտավորականությունն է, որը պետք է յուրացնի սոցիալիստական ու հեղափոխական գաղափարները, իսկ այնուհետև դրանք տարածի ժողովրդի մեջ: Քանի որ ժողովուրդը պատրաստ չէ հեղափոխության, մտավորականությունը պետք է ստեղծի հեղափոխական կազմակերպություն և ծավալի լայն քարոզչություն ժողովրդի մեջ, արթնացնի նրան, սոցիալիստական գիտակցություն մտցնի ժողովրդական զանգվածների մեջ: Դա էր, ըստ Լավրովի, մտավորականության մեծ պարտքը, պարտավորությունը ժողովրդի առջև: Բռնությունը հեղափոխության մեջ պետք է հասցվի նվազագույնի. «Մենք չենք ցանկանում հնի փոխարեն նոր բռնատիրական իշխանություն»:

1870 թվականին Լավրովն աքսորից փախավ արտասահման. հաստատվեց Փարիզում և սկսեց աչքի ընկնող դեր խաղալ ռուս վտարանդի հեղափոխականների շրջանում: Լավրովը Փարիզի Կոմունայի ակտիվ գործիչներից էր, ավելի ուշ նա ծանոթացավ Կ. Մարքսի և Ֆ. էնգելսի հետ: Արտասահմանում նա հրատարակում էր ամսագիր և «Վպերյոդ» խորագրով թերթ: XIX դարի վերջին Լավրովը հեռացավ քաղաքական գործունեությունից և կյանքի վերջին տարիները նվիրեց սոցիոլոգիական հետազոտություններին:

Բակունինի և Լավրովի կրտսեր ժամանակակից, դավադրական ուղղության տեսարան Պյոտր Տկաչովը (1844-1885 թթ.) ծագումով Պսկովի ազնվականներից էր. նա կիսում էր նրանց հավատը սոցիալիզմին, բայց մյուս հարցերում վերջիններիս դեմ մղում էր գաղափարական անհաշտ պայքար: Տկաչովը նույնպես վտարանդվեց արտասահման, որտեղ հրատարակում էր «Նարատ» թերթը: Տկաչովը պնդում էր, որ առաջնային նպատակը լինելու է լավ, կարգապահ ու գաղտնի հեղափոխական կազմակերպության ստեղծումը: Առանց ժամանակ կորցնելու քարոզչության վրա, նա պետք է բռնազրավի իշխանությունը: Դրանից հետո հեղափոխական կազմակերպությունը ճնշում է ու ոչնչացնում հասարակության մեջ եղած պահպանողական-հետադիմական տարրերը, վերացնում է բոլոր հիմնարկները, որոնք խոչընդոտում են հավասարության և եզրայրության հաստատմանը և ստեղծում է նոր պետականություն: Ի տարբերություն Բակունինի, Տկաչովը գտնում էր, որ ուժեղ և կենտրոնացված պետությունը, կպահպանվի և հեղափոխության հաղթանակից հետո: Ի տարբերություն նարոդնիկների մեծամասնության՝ Տկաչովը և նրա կողմ-

նակիցները գյուղացիությունը չէին համարում հեղափոխության վճռական ուժ, դրա համար էլ նրանք ձգտում էին հեղափոխություն կատարել ոչ թե ժողովրդական ասպտամբության ճանապարհով, այլ կառավարության դեմ գաղտնի դավադրության միջոցով: Այդ բոլոր հոսանքների ներկայացուցիչները ժողովրդի ազատագրման միակ ուղին համարում էին հեղափոխությունը: Ահա թե ինչու այդ շարժումն ամբողջապես ստացավ հեղափոխական նարոդնիկություն անվանումը:

§ 2. ՆԱՐՈՂՆԻԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

ԺՈՂՈՎՐԴԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆԻՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅՈՒՆ

XIX դարի 70-ական թվականների սկզբներին Պետերբուրգում գործում էին նարոդնիկական մի քանի խմբակներ, որոնց գլուխ կանգնած էին Մ. Նատանտներ, Ս. Պերովսկայան, Ն. Չայկովսկին: 1871 թ. նրանք միավորվեցին և գաղտնի ընկերության անդամներին սկսեցին անվանել «Չայկովականներ»՝ ղեկավարներից մեկի անունով: Նրա բաժանմունքները ստեղծվեցին Մոսկվայում, Կազանում և այլ քաղաքներում: Դրա մեջ մտնում էր ավելի քան 100 մարդ՝ նրա գործունեության ամենաեռուն շրջանում: 1872 թ. «Չայկովականների» պետերբուրգյան խմբակի մեջ մտավ Պյոտր Կրոպոտկինը (1842-1921 թթ.) գիտնական-աշխարհագետ, սոցիոլոգ, երկրաբան, հետազայում խոռվարարական ուղղության տեսարան: Կրոպոտկինի ջանքերով խմբակում սկսեցին տարածվել Բակունինի գաղափարները: «Չայկովականների» գլխավոր նպատակն էր բանվորների մեջ զբաղվել քարոզչությամբ, կարգավորել աշխատանքները գյուղացիության շրջանում: 1874 թ. սկզբին ոստիկանությունը ձերբակալեց «չայկովականներից» շատերին, այդ թվում նաև Կրոպոտկինին: 1874 թ. նարոդնիկները ձեռնարկեցին «ժողովրդագնացությունը»՝ երթ «դեպի գյուղ», ժողովրդի հետ մերձենալու համար: Այդ կիսատարերային շարժումները մասնակցեցին տարբեր ուղղությունների նարոդնիկներ՝ Պետերբուրգից, Մոսկվայից, Սարատովից, Սամարայից: Եթե լավրովականները մեկնեցին գյուղ երկար ժամանակով ժողովրդին հեղափոխական ոգով դաստիարակելու համար, ապա Բակունինի կողմնակիցները՝ հույս ունեին անմիջապես բարձրացնել գյուղացիական ասպտամբություն: Նրանք աշխատում էին որպես Հյուսիսներ, դարբիններ, բեռնակիրներ և՛ զբաղվում հեղափոխական քարոզչությամբ: Այդ նպատակով նարոդնիկները մի գյուղից մյուսն էին անցնում՝ ձգտելով որքան Հնարավոր է երկար մնալ գյուղերում: Ժողովրդագնացությունը լայն տարածում գտավ Պովոլժիեում: Գյուղացիները հաճույքով լսում էին նարոդնիկների զրույցները, մանավանդ,

երբ խոսքն անմիջականորեն վերաբերում էր գյուղացիության կարիքներին: Բայց սոցիալիզմի մասին զրույցներն անհասկանալի էին գյուղացիներին: Նրանք երազում էին ավելի շատ հող ստանալ և դառնալ սեփականատեր: Նարողներին հույսերը, թե ուսուցողական իր էությունը սոցիալիստ է և արդեն պատրաստ է հեղափոխության ի դերն ելան: Գյուղացիները չէին հասկանում «խոտովարարների» քարոզչությունը և չարձագանքեցին նարողների կոչերին: Ժողովրդագրագիտությունը ողբերգական վախճան ունեցավ: Ռուսաստանի 37 նահանգներում կայանավորվեց շուրջ 770 մարդ: Նրանցից շատերը դատապարտվեցին երկարաժամկետ աքսորի, բանտարկության կամ տաժանակիր աշխատանքի: Սակայն կառավարությունը չկարողացավ լիովին ճնշել նարողների կան շարժումը: Ժողովրդագրագիտությունն ապացուցեց Բակունինի ուսմունքի բոլոր խոցելի կողմերը և բացահայտ անիրատեսությունը և նպաստեց Տիաչովի տեսության տարածմանը: Նարողների շրջանում հասունանում էր համոզմունքը, որ հեղափոխության նախապատրաստման համար անհրաժեշտ է ստեղծել ամուր կազմակերպություն: 1876 թվականին նարողները ստեղծեցին «Ձեմյա ի վոյա» («Հող և ազատություն») գաղտնի կազմակերպությունը: Այն համախմբված, կենտրոնացված, մարտական կազմակերպություն էր՝ խիստ կարգապահությամբ և ընկերական փոխադարձ վերահսկողությամբ: «Ձեմյա ի վոյայի» կազմում էին աչքի ընկնող նարողներ Ա. Միխայլովը, Ա. Օբոլչևը, Գ. Պլեխանովը, Ա. Կվյատկովսկին, Մ. Նատանսոնը: Ավելի ուշ նրա մեջ ընդունվեցին Ն. Մորոզովը և Ս. Պերովսկայան: «Ձեմյա ի վոյա» կազմակերպության մեջ մտնում էին ավելի քան 150 մարդ, որն իր առջև խնդիր էր դրել նախապատրաստել և իրականացնել սոցիալիստական հեղափոխություն: Նրա անդամները զբաղված էին քարոզչական աշխատանքով բանվորների և մտավորականների շրջանում, իսկ գյուղացիությանն իրենց կողմը գրավելու և պայքարի հանելու համար, առաջ էին քաշում գյուղացիներին մոտ պահանջներ՝ հողը հանձնել նրանց, այն հավասարաչափ բաշխել հողագործների միջև, թեթևացնել հարկային ճնշումը: Քաղաքական ահաբեկչություն թույլատրվում էր միայն ծայրահեղ դեպքերում՝ ինքնապաշտպանական նպատակով: Ձեմյա վոյայից շատերը նորից գյուղ դնացին, բայց այժմ ավելի երկարատև ժամկետով: Նրանք, որպես ուսուցիչներ, գրագիրներ, բուժականներ, արհեստավորներ, բնակվում էին գյուղերում նրանց հետ մերձենալու և վստահություն ձեռք բերելու համար: Քարոզչական աշխատանք տանելու համար մի շարք նահանգներում ստեղծվեցին նարողների կան բնակավայրեր՝ բուժական կետեր, արհեստանոցներ: Նարողներին հաջողվեց ավելի մոտենալ գյուղացիներին, սակայն այս անգամ էլ նրանց քարոզչությունը մեծ հաջողություն չունեցավ: Ձեմյա վոյայի անդամները իրենց

քարոզչությունը կենտրոնացրին Պովոլժեում, Կուբանում և Դոնում, որտեղ գյուղացիության շրջանում դեռևս վառ էին հիշողությունները Ռադիկի և Պուգաչովի, կաղակային աղատության ավանդույթների մասին: Բայց այստեղ էլ կատարվեց այն, ինչը անխուսափելի էր, որը թևածափ էր անում ղեմավորականներին: Նրանք չէին հասկանում, թե որքան պարզունակ են և անիրագործելի իրենց ուսմունքը և երազանքները: Նարողներին բնակավայրերի մեծ մասը ոստիկանությունը վերացրեց: 1877 թ. աշնանը «Ձեմյա ի վոյա» կազմակերպության մեջ հասունանում էր քաղաքական լուրջ ճգնաժամ: Նարողների քաղաքական ահաբեկչությանն անցնելու սկիզբը դրեց Վերա Ջասուլիչի կրակոցը: 1878 թ. բանտում դաժան խոշտանգման ենթարկվեց Պետերբուրգի Կաղանի տաճարի առաջ տեղի ունեցած ցույցի մասնակից քաղաքական բանտարկյալ Բոգոյուբովը: Ի պատասխան դրա Վերա Ջասուլիչը 1878 թ. հունվարի 24-ին կրակեց Տրեպուլի վրա և նրան վիրավորեց: Դատավարությունը սկսվեց 1878 թ. մարտի 31-ին: Դահլիճում ներկա էին շատ բարձրաստիճան այրեր Ա. Գորչակովի գլխավորությամբ: Երդվյալ ատենակալներն անմեղ ճանաչեցին Ջասուլիչին, իսկ դատարանը Ա. Կոնիի նախագահությամբ արդարացրեց նրան: Վերա Ջասուլիչին մեծ դժվարությամբ հաջողվեց տարագրվել Եվրոպա և ազատվել ոստիկանության հետապնդումներից: Հատկանշական է, որ կյանքի վերջին տարիներին Ջասուլիչը հանդես եկավ որպես մահապատժի ու քաղաքական ահաբեկչության սկզբունքային հակառակորդ՝ չվախենալով իշխանության պոլիսանցած բուլժիկների դայրույթից: 1878 թ. նարողները Ստեպանյակ Կրավչինսկին, ի պատասխան քաղաքական բանտարկյալ Ի. Կովալսկու մահապատժի, դաշույնով սպանեց ժանդարմների պետ Մեդենցովին: «Ձեմյա ի վոյայի» անդամ Ալեքսանդր Սոլովյովը 1879 թ. գարնանը հայտարարեց, որ մտադրված է սպանել կայսրին: «Ձեմյա ի վոյայի» ղեկավարությունը տաք բանավեճերից հետո ձայների մեծամասնությամբ արտահայտվեց քաղաքական ահաբեկչության դեմ: Բայց ապրիլի 2-ին Սոլովյովը իր նախաձեռնությամբ կատարեց անհաջող մահափորձ կայսրի դեմ՝ զբոսանքի ժամանակ Դվորցովայա հրապարակում: Սոլովյովը կրակեց հինգ անգամ և վիրավորեց միայն ոստիկանին: Քաղաքական ահաբեկիչ Սոլովյովը կիսեց Կարակոզովի ճակատագիրը: «Ձեմյա ի վոյան» վերածվում էր ահաբեկչական կազմակերպության: Ձեմյա ի վոյայի պառակտումը, նրա ղեկավարության անուանում էր «Ձեմյա ի վոյայի» պառակտումը, նրա ղեկավարությունը որոշեց համազուգուհի հրավիրել Վորոնեժ քաղաքում: Սակայն քաղաքական ահաբեկչության մարտավարության կողմնակիցները 1879 թ. հունիսին հավաքվեցին Լիպեցկում: Նրանց մեջ առանձնապես աչքի էր ընկնում Անդրեյ Ժեյնարովը: Նա ասում էր, որ սոցիալիստները սկզբունքորեն չպետք է պահանջեն քաղաքական վերափոխումներ, քաղաքացիա-

կան ազատություններ: Դա լիբերալների խնդիրն է, բայց Ռուսաստանում նրանք թույլ են և անզոր: Մինչդեռ ազատությունների բացակայությունը խանգարում է ծավալել քարոզչական լայն աշխատանք գյուղացիության մեջ: Հետևաբար, հեղափոխականները պետք է իրենց վրա վերցնեն և այդ խնդիրը՝ փչրեն բռնատիրությունը, որից հետո զբաղվեն սոցիալական հեղափոխության նախապատրաստման աշխատանքով: Ժեյարովը, ձգտելով հասնել փոխզիջման, մասնակցեց նաև Վորոնսկի համագումարին: Համագումարը որոշեց ուժեղացնել պայքարը կառավարության դեմ, յուրաքանչյուր հեղափոխականի մահապատժին պատասխանել հուժկու քաղաքական ահաբեկչությամբ: Միայն Գ. Պլեխանովը վճռապես հանդես եկավ ահաբեկչության դեմ: 1879 թ. «Ջեմյա ի վոյան» պառակտվեց: Նարոդնիկների մի մասը մնաց հին դիրքերում և ստեղծեց «Ջյոռնի պերեդել» («Սև վերաբաժանում») անունով կազմակերպությունը, որը սոցիալական հեղափոխության նախապատրաստման նպատակով գյուղացիների մեջ տարվող քարոզչությունը շարունակում էր համարել իր հիմնական խնդիրը: Այդ կազմակերպությունն ունեցավ քաղաքական կարճ կյանք: Նրա մեջ մտել էին Գ. Պլեխանովը, Պ. Աքսելրոդը, Վ. Ջասուլիչը: 1880 թ. «Ջյոռնի պերեդելի» ղեկավար Պլեխանովը ստիպված էր փտարանդվել երկրից: «Նարոդնայա վոյան» («Ժողովրդական ազատություն») Անդրեյ Ժեյարովի և Սոֆյա Պերովսկայայի գլխավորությամբ դարձավ կարգապահ, գաղտնի կազմակերպություն: Այն գլխավորում էր գրեթե անսահմանափակ լիազորություններով Գործադիր կոմիտեն: «Նարոդնայա վոյան» լիովին հրապուրվեց Տկաչովի գաղափարներով: Նրա գլխավոր խնդիրն էր իրագործել քաղաքական հեղաշրջում, բռնագրավել իշխանությունը և ապահովել սոցիալիստական հեղափոխության հաղթանակը: Նախատեսվում էր գումարել Սահմանադիր ժողով և նրան ներկայացնել գործողությունների ծրագիր, որի համաձայն հողը հանձնվելու էր գյուղացիներին, իսկ ֆարրիկաները և գործարանները՝ բանվորներին: Նրանք գերադանցապես ղեկավարվեցին քաղաքական ահաբեկչության մարտավարությամբ: «Նարոդնայա վոյան» կազմակերպությունը համոզված էր, որ կայսրին և ատելի բարձրաստիճան պաշտոնյաներին ահաբեկելով խուճապ առաջացնել կառավարության մեջ, գրավել իշխանությունը, մտցնել սահմանադրություն: «Նարոդնայա վոյան» առաջ քաշեց ժողովրդավարական վերափոխումների լայն ծրագիր՝ վերացնել ինքնակալությունը, մտցնել ընդհանուր ընտրական իրավունք, խոսքի, մամուլի ազատություն: Հրաժարվելով գյուղացիների շրջանում քարոզչությունից, նարոդովոլականներն իրենց գործունեության ծանրության կենտրոնը փոխադրեցին քաղաք, որտեղ բանվորների, ուսանողների և գինվորականների շրջանում ստեղծեցին խմբակներ: Առանձին ռազմական ակադեմիաներում և ուսում-

նարաններում, իսկ այնուհետև տարբեր նահանգներում տեղակայված զորամասերում ստեղծվեցին նարոդովոլական խմբակներ: Բայց նրանց պայքարի գլխավոր միջոցը մնում էր քաղաքական ահաբեկչությունը՝ կայսրի սպանությունը: Ընդ որում, նրանց գրեթե չէր հետաքրքրում հնարավոր զոհերի, նույնիսկ անմեղ զոհերի թիվը, այսինքն՝ ղեկավարվում էին Հնուց ի վեր գործող «նպատակն արդարացնում է միջոցը» մարտավարությամբ: Նրանք մի քանի մահափորձ կազմակերպեցին կայսրի դեմ: Դրանցից հատկապես հայտնի են երկուսը: Մեկը նախապատրաստել էր Սոֆյա Պերովսկայան իր ընկերների հետ: Մոսկվայի Կուրսկի կայարանից ոչ հեռու նարոդովոլականները փորձեցին պայթեցնել կայսրի դնացքը՝ կայսերական պահակախմբի հետ: Երկրորդ մահափորձը կազմակերպեց Ստեպան Պալտուրինը: Նա աշխատանքի տեղավորվեց Ջեմոային պալատում որպես ատաղձագործ բանվոր: Նա, մշտապես բռնվելու վտանգն աչքի առաջ ունենալով, քիչ-քիչ պայթուցիկ նյութ հավաքեց իր խցիկում, որը գտնվում էր կայսրի ճաշասենյակի ներքնահարկում: Պալտուրինը մտադրվել էր կայսրին ահաբեկել իր իսկ պալատում: Բայց պայթյունը տեղի ունեցավ կայսրի ճաշասենյակ մտնելուց առաջ: Աստվածային նախախնամությունն այս անգամ էլ բարեհաճ գտնվեց կայսր-ազատարար Ալեքսանդր Երկրորդի նկատմամբ: Այնուամենայնիվ, նարոդովոլականներին հաջողվեց կատարել իրենց վճիռը կայսրի նկատմամբ: Թեև «Նարոդնայա վոյայի» աչքի ընկնող գործիչներ Ա. Ժեյարովը և Ա. Միխայլովն արդեն բանտարկված էին, այնուամենայնիվ, Ս. Պերովսկայան կարողացավ ավարտին հասցնել քաղաքական ահաբեկչությունը: 1881 թ. մարտի 1-ի նախօրյակին նրանք Պետերբուրգի Մալայա Սաղովայա փողոցում ական տեղադրեցին՝ կայսրի կառքը պայթեցնելու համար: Բայց վերջին պահին այդ պլանից ստիպված էին հրաժարվել, քանի որ նարոդովոլականներին հայտնի դարձավ, որ կայսրը չի անցնելու այդ փողոցով: Այդ ժամանակ Պերովսկայան շտապ փոխեց մահափորձի պլանը: Կայսրի կառքի անցման հնարավոր ճանապարհին նա կանգնեցրեց ումը նետողներ՝ կայսրին ահաբեկելու նպատակով: 1881 թ. մարտի 1-ի կեսօրին լավեց կարծես հրանոթից արձակված հզոր թնդուն: Ալեքսանդր Երկրորդը կարգադրեց կառապանին կանգնել: Դուրս գալով կառքից՝ կայսրը տեսավ արյունոտված երկու կողակների և ցավից գոռացող մի տղայի, որը պատահաբար էր հայտնվել այդ վայրում: Մի փոքր հեռավորության վրա երկար մազերով ոմն մի երեխասարդ՝ Նիկոլայ Ռիսակով ազգանունով նարոդովոլական փորձում էր պաշտպանվել զայրացած ականատեսներից: «... մի խփիր ինձ, դժբախտ, մոլորված ժողովուրդ»: «Ի՞նչ արեցիր դու, խելագար», - հարցրեց նրան կայսրը: «Ձերդ Գերազանցություն, վիրավորված չե՞ք» ուստիկանի հարցին, կայսրը պատասխանեց. «Փառք Աստծու, ոչ»: «Ի՞նչ: Փառք Աստծուն», - հանկարծ

սպառնալից հարցրեց Ռիսակովը: «Տեսեք, չե՞ք սխալվել, արդյոք»: Ոչ ոք չհասկացավ այս քողարկված սպառնալից բառերի իմաստը: Ալեքսանդրը, խոնարհվելով և խաչակնքելով անմեղ զոհ դարձած տղայի առաջ, շարժվեց դեպի կառքը: Հանկարծ վերստին լսվեց հրանոթային համազարկ հիչեցնող կրակոց, որից ծանր վիրավորվեց չուրջ քսան մարդ, ոտքերից զրկվեց կայսրը, իսկ նրա դիմաց նույն վիճակում էր գտնվում թագավորասպան Իգնատի Գրինկիցկին: Հոգեվարքի մեջ գտնվող Ալեքսանդր Երկրորդը հազիվ լսելի ձայնով ասաց. «Պալատը... այնտեղ մահանալ...» Մեկ ժամ հետո կայսրը մահացավ Ձմեռային պալատի իր առանձնասենյակում: Այդ նույն ումբրից զոհվեց նաև Գրինկիցկին:

Կայսրի ահաբեկչությունը մեծ տպավորություն թողեց, ինչպես Ռուսաստանում, այնպես էլ արտասահմանում: Ա. Ժեյլարովը, Ս. Պերովսկայան, Ն. Ռիսակովը, ինչպես նաև ահաբեկչությանը մասնակցած երկու ակտիվ նարոդովոլականներ Ն. Կիրալչիչը և Տ. Միխայլովը կայսերական դատարանի վճռով կախաղան հանվեցին: Միապետության հզոր համակարգը կարողացավ վերացնել հերթական վտանգը: Թեև Ալեքսանդր Երկրորդը դարձավ նարոդովոլականների քաղաքական ահաբեկչության և դավադրության զոհը, այնուամենայնիվ, նա իր մասին թողեց բարի հիշողություններ: Եվ երբ շարքային գյուղացիներին հարցնում էին, թե պատմական գործիչներից ում են իրենք հիշում ու ճանաչում, գեղջուկները լարելով հիշողությունը տալիս էին Ստենկա Ռազինի, Եմելյա Պուգաչովի, Պյոտրի, Կատերինայի (Եկատերինա Երկրորդի), Սուվորովի, Կուտուզովի, Սկոբելևի, Ալեքսանդրի՝ կայսր-ազատարարի անունները:

§ 3. ԼՈՐԻՍ-ՄԵԼԻՔՈՎԻ «ՄՐՏԻ ԵՎ ՄՏՔԻ» ԴԻԿՏԱՏՈՒՐԱՆ

1880 թ. Ալեքսանդր Երկրորդի դեմ այս անգամ արդեն Ձմեռային պալատում Ստեփան Խալտուրինի կողմից կազմակերպած հերթական մահափորձից հետո կայսրը, թագաժառանգը, արքունիքը, լիբերալները վերջնականապես համոզվեցին կայսրության հիմքերն անսասան պահելու համար վերափոխումներ անցկացնելու անհրաժեշտությունը: Քաղաքական ահաբեկչության հետագա խորացման կանխումը անխուսափելի էին դարձնում վերափոխումները, որոնց միջոցով նախ՝ Հնարավոր կլիներ հանգստացնել ահաբեկված հասարակության լայն շրջանները, ապացուցել, որ կայսերական կառավարությունը վերահսկում է իրադրությունը և երկրորդ՝ վնասագերծելով քաղաքական ահաբեկիչներին, հասարակությանը ներշնչել, որ թագավորասպանության ձգտող ծայրահեղականներն իրենց կյանքը կավարտեն, մահկանացուն կկնքեն կախաղանի վրա: Հետևաբար, կայսեր-

րական կառավարությունը ծրագրում էր մի կողմից զիջումների միջոցով երկխոսություն սկսել հասարակության լիբերալ-ազատական շրջանների հետ և դրանով իսկ ընդլայնել միապետության սոցիալական հենարանը և մյուս կողմից ցուցաբերում վճռականություն քաղաքական ահաբեկիչների նկատմամբ, մինչև վերջ հասցնել պայքարը նրանց դեմ: Թե՛ Ալեքսանդր Երկրորդին, թե՛ թագաժառանգ Ալեքսանդրին ու վերափոխումների նախաձեռնողներին ու կազմակերպիչներին մտահոգում էր նաև մեկ այլ, ըստ էության ոչ պակաս կարևոր նշանակություն ունեցող հիմնահարց՝ ո՞ւմ վստահել կայսրության համար վճռորոշ դարձած վերափոխումների փաթեթի մշակումը, ո՞վ է լինելու այն պետական գործիչը, որն առանց խարխլելու միապետական-կայսերական համակարգը, կարողանա կատարել ժամանակին համահունչ և անխուսափելի զիջումներ:

Ի վերջո կայսրն առանց վարանելու կանգ առավ մարտական հայտնի գեներալ և պետական գործիչ կոմս Միքայել Տարիելի Լորիս-Մելիքովի թեկնածության վրա, որին նա ոչ միայն անձամբ ճանաչում ու լիովին վստահում էր, այլև բարձր էր գնահատում նրա գիտելիքները և ընդունակությունները: 1880 թ. փետրվարի 8-ին Սանկտ-Պետերբուրգում Ալեքսանդր Երկրորդի անմիջական նախաձեռնությամբ գումարվեց խորհրդակցություն, որին մասնակցեցին թագաժառանգ Ալեքսանդր Ալեքսանդրովիչը, Պետական խորհրդի նախագահ, կանցլեր իշխան Ալեքսանդր Գորչակովը, նախարարներ և գեներալ-նահանգապետներ, ներառյալ Խարկովի գեներալ-նահանգապետ կոմս Միքայել Տարիելի Լորիս-Մելիքովը: Նա առաջարկեց հեղափոխականների դեմ հետևողական պայքարը զուգակցել հասարակության լայն զանգվածների, առաջին հերթին լիբերալ մտավորականությունը կառավարության կողմը զրավելու համար, նրանց հետ սկսել երկխոսություն: Քաղաքական այս ծրագիրն իրականացնելու համար Լորիս-Մելիքովը կայսրին առաջարկեց երկրում սահմանել միանձնյա իշխանություն և այն հանձնել նրա լիովին, անսահման վստահությունը վայելող որևէ մի նշանավոր պետական գործիչ: Ալեքսանդր Երկրորդը կանգնեց ամբողջ հասակով, նրա աչքերը փայլատակեցին և նա ընդհատելով Լորիս-Մելիքովին, ասաց. «Դու կլինես այդ մարդը» և փակեց խորհրդակցությունը: Իսկ փետրվարի 12-ին կայսերական հրամանով սահմանվեց Գերագույն կարգադրիչ Հանձնաժողով պետական կարգը և հասարակության անդորրը պահպանելու համար: Այդ հրամանի համաձայն Գերագույն կարգադրիչ Հանձնաժողովի պետ նշանակվեց Խարկովի գեներալ-նահանգապետ, Պետական խորհրդի անդամ կոմս Լորիս-Մելիքովը: Ալեքսանդրի այս հրամանը վկայում է, որ կայսերական Ռուսաստանի պատմության մեջ առաջին անգամ միապետը իր կենդանության օրոք ամբողջ իշխանությունը հանձնում է ուրիշ անհատի, նրան դարձ-

նում փաստացի դիկտատոր: Եվ այդպես կայսրի կամքով Լորիս-Մելիքովը լիազորվեց «դիկտատորական» իրավունքներով: Ռուսական բանակի հայազգի մարտական ու փորձված գեներալ, Ղրիմի և հատկապես 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմների ամենագործուն մասնակից ու Կովկասյան կորպուսի գլխավոր հրամանատար Լորիս-Մելիքովը, հայազգի մյուս գեներալների հետ համագործակցելով, ազատագրեց Կարսը և այն վերջապես դարձավ Հյուսիսարևելյան Հայաստանի անքակտելի մասը: Լորիս-Մելիքովը հարգանք ու հեղինակություն էր վայելում ոչ միայն արքունիքում, այլև լիբերալ մտավորականության շրջանում, որը կարևոր դեր խաղաց կայսրի կողմից նման պատասխանատու որոշում կայացնելու համար: 1880 թ. փետրվարի 15-ին Պետերբուրգում լույս տեսնող Ռուսաստանի կառավարության պաշտոնաթերթ «Կառավարական լրագրերում» Լորիս-Մելիքովը հրապարակեց «Մայրաքաղաքի բնակիչներին» իր կոչը, որտեղ խոստանում էր բոլոր միջոցներով պատժել հանցագործներին, պաշտպանել հասարակությունը հեղափոխականներից, որ ինքն այդ պայքարում ակնկալում է ստանալ լիբերալ հասարակության աջակցությունը: Թեև կոչն ուղղված էր մայրաքաղաքի բնակիչներին, այնուամենայնիվ դրան արձագանքեցին մյուս քաղաքների բնակիչները: Մոսկվայի զեմստվային լիբերալ գործիչները, ողջունելով Լորիս-Մելիքովի մտահղացումները, միաժամանակ առաջարկում էին ընդլայնել զեմստվոների իրավունքները, նրանց ներկայացուցիչներին մասնակից դարձնել պետական կառավարմանը: Այսպիսով, Լորիս-Մելիքովի առաջին քայլերն արդյունավետ էին, քանզի լիբերալները հավատում էին նրան, պատրաստ էին աջակցել նախատեսվող բարեփոխումների ծրագրերի իրագործմանը: Լիբերալները դրականորեն գնահատեցին Լորիս-Մելիքովի նախաձեռնությամբ կառավարության մեջ կատարված կարևոր փոփոխությունները: Դ. Տոլստոյն ազատվեց ժողովրդական լուսավորության նախարարի և Սինոդի օբերգատախաղի պաշտոնից, որին փոխարինեց լիբերալ հայացքներով աչքի ընկած Ա. Սարուրովը: Նրա առաջարկությամբ լուծարվեց կայսերական գրասենյակի երրորդ բաժանմունքը, որի փոխարեն ներքին գործերի նախարարության կազմում ստեղծվեց ոստիկանության ղեկավարամենտ: Լորիս-Մելիքովի ժամանակ ղգալիորեն թուլացվեց զրաբնությունը, զեմստվոներին ընձեռվեց ազատ ու հանգիստ աշխատելու հնարավորություն: Նա ժամանակ առ ժամանակ մայրաքաղաքի թերթերի խմբագիրներին ու զեմստվային գործիչներին հրավիրում էր խորհրդակցության, հատակեցնում նրանց հետ իր հարաբերությունները, պարզում վերջիններիս կարծիքը տարբեր հիմնահարցերի վերաբերյալ: Լիբերալները նման աննախադեպ ուշադրությունից շոյված շտապեցին Լորիս-Մելիքովի կառավարման ժամանակաշրջանն անվանել «սրտի դիկտատուրա», իսկ Պետերբուրգի

«Գոլոս» թերթը՝ «մտքի և սրտի դիկտատուրա», որը լայն տարածում գտավ Ռուսաստանում: Սակայն ժողովրդավարները չէին շտապում գնահատել այդ վերափոխումները և ցուցաբերում էին զգուշավորություն: «Ստեղծվեցին զապիսկի» առաջադիմական ամսագրի առաջատար քննադատ Ն. Միխայլովսկին գտնում էր, որ դա ոչ այլ ինչ է, եթե ոչ «գայլի երախի ու աղվեսի պոչի» քաղաքականություն: Հատկանշական է, որ Լորիս-Մելիքովի դեմ նույնպես կազմակերպվեց դավադրություն, ահաբեկիչը կրակեց նրա վրա, իսկ երկու օր հետո մահափորձ կազմակերպողը կախաղան բարձրացվեց: Լորիս-Մելիքովի իրավունքներն էլ ավելի մեծացան, երբ կայսրի հրամանով նա դարձավ ներքին գործերի նախարար, գեներալը, ըստ էության պահպանեց «փոխ-կայսրի» փաստացի կարգավիճակը՝ վայր դնելով դիկտատորական լիազորությունները: 1880 թ. օգոստոսի 30-ին Ալեքսանդր Երկրորդը ներքին գործերի նախարար, գեներալ Լորիս-Մելիքովին հայրենիքին մեծ ծառայություն մատուցելու համար պարգևատրեց Անդրեյ Պերվոզվաննու չքանչանով, որը, անշուշտ, վկայում է կայսրի բարեհաճ վերաբերմունքի մասին, ապացուցում, որ ինքը պաշտպանում է ներքին գործերի նախարարի սահմանադրական ծրագրերը: Լորիս-Մելիքովի գլխավորությամբ սկսվեց մոտակա տարիների համար վերափոխումների ծրագրի նախապատրաստումը: Առաջին հերթին նախատեսվում էր նվազեցնել փրկագինը, հրատապ էր դառնում ներկայացուցչական ժողովի մասին հիմնահարցը: Ներքին գործերի նախարարը համոզված էր, որ առանց այս ու նման հարցերի լուծման ու կարգավորման ինքն ի վիճակի չի լինի երկխոսություն սկսել հասարակության առողջ, մտածող զանգվածների հետ, կձախողվի նրանց հետ համագործակցելու իր մտահղացումը, և վերջապես չի իրագործվի հեղափոխականներին հասարակությունից մեկուսացնելու ծրագիրը: Սակայն, ցուցաբերելով զգուշավորություն, Լորիս-Մելիքովը չէր շտապում Արևմտյան Եվրոպայի տերությունների օրինակով երկրում հաստատել պառլամենտական համակարգ: Նա համոզված էր, որ դա «լիակատար խառնակություն» կառաջացնի կայսրությունում, որից անհրաժեշտ է ամեն գնով խուսափել: Ալեքսանդր Երկրորդին հղած ղեկուցման մեջ Լորիս-Մելիքովն առաջարկեց զեմստվոների և խոշոր քաղաքների ներկայացուցիչների մասնակցությամբ ստեղծել հանձնաժողով, որը կդառնար ներկայացուցչական ժողովի յուրատեսակ նախատիպը: Հետևաբար Լորիս-Մելիքովի բարեփոխումների նախագծի հիմքում ընկած էր Պետական խորհրդին կից «Ընդհանուր հանձնաժողով» ստեղծելը, որն օրենսդրական նախագծերի մշակումից հետո ներկայացվելու էր վերջնական քննարկման համար Պետական խորհրդին: Լորիս-Մելիքովը նախատեսում էր Պետական խորհրդի կազմի մեջ ընդգրկել նաև ռուսաստանյան հասարակության ներկայացուցիչներին:

Սակայն Լորիս-Մելիքովն արքունիքում ուներ լուրջ և ազդեցիկ հակառակորդներ, թագաժառանգ Ալեքսանդր Ալեքսանդրովիչի և Մինոդի օբեր-դատախազ սենատոր Կ. Պրեդոնոսցևի գլխավորությամբ, որոնց համար անընդունելի էր նրա բարեփոխումների ծրագիրը, մանավանդ որ սահմանադրական հիմնարկների հաստատման հիմնախնդրում առաձին ղեկավարում տառանումներ էր դրսևորում անգամ ներքին գործերի նախարարի հովանավորող կայսրը: Լորիս-Մելիքովի հեղինակությունը և ազդեցությունը լիբերալ մտավորականների, հրապարակախոսների, թերթերի խմբագիրների, հասարակության լայն շրջաններում գնալով թուլանում էր, որովհետև սահմանադրության մասին առաջարկները ժամանակավրեպ էին ու բացարձակապես անընդունելի թե կայսրի և թե թագաժառանգի համար: Ավելին, համոզված միապետական, կայսրության անմնացորդ պաշտպան Լորիս-Մելիքովը չէր կարող պատկերացնել, որ հասարակության մասնակցությունը օրենսդրական նախագծերի մշակման աշխատանքներին, որքան էլ լինեք թույլ ու անձև, այնուամենայնիվ այն ինչ-որ չափով խարխլում էր կայսերական Ռուսաստանի պետական կառույցը և համակարգը, ինչը մերժելի էր «օրթոդոքս» միապետականների համար: Մյուս կողմից լիբերալ-ազատական մտքի ներկայացուցիչները, գեմստվային գործիչները շարունակում էին քաղաքական ճնշումը Լորիս-Մելիքովի վրա: Նրանք այլևս չէին ցանկանում լսել Միքայել Տարիելովիչի խնդրանքները՝ ժամանակից «առաջ չանցնելու», կառավարությանը «հավատալու և համակրելու» մասին: Լիբերալ-ազատական հասարակության նման դիրքորոշումը նպաստում էր պահպանողական ուժերի, բարեփոխումների հակառակորդների համախմբմանը, որը համապատասխանաբար նկատելիորեն թուլացնում էր Լորիս-Մելիքովի ու նրա կողմնակիցների դիրքերը: Ահա ինչու նա այդպես էլ չկարողացավ մինչև վերջ անցկացնել իր բարեփոխումների փաթեթից և ոչ մի էական մտահղացում: Վերափոխումների այս ծրագիրը Ռուսաստանի հասարակական-քաղաքական մտքի պատմության մեջ ստացավ Լորիս-Մելիքովի «Սահմանադրություն» անունը, թեև այն, անշուշտ դասական սահմանադրությունների հետ չունեք ոչ մի ընդհանրություն: Լորիս-Մելիքովի ծրագիրն իրականում սոսկ քայլ էր սահմանադրության ճանապարհին: Ալեքսանդր Երկրորդը հստակ պատկերացնում էր Լորիս-Մելիքովի սահմանադրական վերափոխումների իրագործման հետևանքները, տեսնում ինչպես դրական, այնպես էլ վտանգավոր կողմերը, թե՛ անձամբ իր և թե՛ կայսերական Ռուսաստանի համար: Այնուամենայնիվ, կայսրը կարգադրեց նախարարների կոմիտեի նախագահ կոմս Պ. Վալուևին 1881 թ. մարտի 4-ին հրավիրել կառավարության նիստ Լորիս-Մելիքովի սահմանադրական նախագծի քննարկման ու վերջնական հաստատման համար: Ալեքսանդր Երկրորդի մարտի 1-ի կա-

յացրած այս որոշումը, բնականաբար, ուրախացրեց Լորիս-Մելիքովին: Նա մարտի 1-ը ընտրեց իրեն «մեծ օր Ռուսաստանի պատմության մեջ»: Բայց դարնան սկիզբը ողբերգական եղավ կայսերական Ռուսաստանի համար: Նարոդովոլականների քաղաքական ահարեկչությունը և կայսրի մահը հնարավորություն ընձեռեց պահպանողականներին հենվել Ալեքսանդր Երրորդի վրա և վճռական գրոհ սկսել Լորիս-Մելիքովի ու նրա կողմնակիցների դեմ: Նոր կայսրը՝ 36-ամյա Ալեքսանդր Երրորդը (1881-1894 թթ.) նախարարների կոմիտեի նիստը հետաձգեց մինչև մարտի 8-ը, ցանկանալով հավանաբար ժամանակ չահել, քաղաքական ահարեկչությունից հետո սթափվել, ուշքի գալ, համախմբել պահպանողականներին, սահմանադրական նախագծի հակառակորդներին: Թեև Ալեքսանդր Երրորդն իր հայացքներով ծայրահեղ պահպանողական էր և այս առումով խիստ տարբերվում էր հանգուցյալ ծնողից, այնուամենայնիվ, դժվար է համաձայնվել նրա մերձավորների ու ժամանակակիցների տեսակետների հետ, որոնք կայսրին ներկայացրել են իրեն սահմանափակ մարդ, միջակ խելքից ցածր, միջակ ընդունակություններից ցածր և միջակ կրթությունից ցածր, որը հեռու է իրականությունից, քանզի սխալ է հավասարության նշան դնել անհատի քաղաքական հայացքների ու ընդունակությունների միջև: Ալեքսանդր Երրորդի նախագահությամբ մարտի 8-ին գումարվեց նախարարների կոմիտեի նիստը: Թեև Լորիս-Մելիքովի զեկուցագիրը պաշտպանություն էր գտել հանգուցյալ կայսրի մոտ, այնուամենայնիվ նոր կայսրը պահպանողականների ազդեցության ներքո հայտարարեց, թե հարցը չի կարելի համարել լուծված, որը նշանակում էր սահմանադրական նախագծերի մերժման սկիզբ, թեև Լորիս-Մելիքովի կողմնակիցների ու հակառակորդների տեսակետները գրեթե հավասար էին: Մինոդի օբեր-դատախազ Կ. Պրեդոնոսցևն ապացուցում էր, որ միայն «գուտ» և «մաքուր» ինքնակալությունը, որպիսին հաստատվել էր Պյոտր Առաջինի ու Նիկոլայ Առաջինի ժամանակ, կարող է կասեցնել հեղափոխությունը, կանխել քաղաքական ահարեկչությունը և այլևայլ դավադրություններ: Ավելին, նրա կարծիքով ոչ հմուտ վերափոխիչներն իրենց դիմումներով ու կիսաղիջումներով, վերափոխումներով ու կիսավերափոխումներով կարող են միայն սասանել ու խարխլել ինքնակալական պետության հիմքերը: Երբ Պրեդոնոսցևը վերջապես ավարտեց իր երկարաչունչ ելույթը, Լորիս-Մելիքովը հասկացավ, որ իրեն մնում է միայն հրաժարական տալով թողնել ներքին գործերի նախարարի պաշտոնը և մոռանալ բարեփոխումներ անցկացնելու ծրագրի մասին: Ալեքսանդր Երրորդն աղատ չունչ քաշեց, որովհետև նրան դժվար էր մերժել բարեփոխումների նախագծի այն փաթեթը, որին հիմնականում հավանություն էր տվել իր հանգուցյալ հայրը, առավել ևս հրաժարական պահանջել մարտական գեներալից ու փորձված պե-

տական գործչից, որը վայելում էր Ալեքսանդր Երկրորդի անասանան վստահությունը: Ահա ինչու կայսրը ստիպված էր քողարկված ձևով մերժել բարեփոխումների նախագիծը, սակայն, թե անհրաժեշտ է դեռ մտածել նախագծի մասին, բայց դրան այլևս չանդրադարձան, ինչը նշանակում էր պահպանողական ուժերի վերջնական հաղթանակ: Լորիս-Մելիքովի գլխավորությամբ լիբերալ բարեփոխումների կողմնակիցների ու Պորեղոնոսցևի ղեկավարությամբ պահպանողականների միջև ընթացող պայքարն ավարտվեց լիբերալների պարտությամբ: Հատկանշական է, որ եթե Լորիս-Մելիքովը և լիբերալները զերազանցապես պայքարում էին քաղաքական ահաբեկիչների և հեղափոխականների դեմ, ապա Պորեղոնոսցևը և պահպանողական-միապետականները պայքարում էին ոչ միայն հեղափոխականների, այլև բարեփոխումների կողմնակիցների և լիբերալների դեմ ընդհանրապես: «Նարոդնայա վոլյա» կազմակերպության գործադիր կոմիտեն գրեթե ամբողջովին ձերբակալվեց: 1881 թ. ապրիլի 3-ին հրապարակավ կախաղան բարձրացվեցին հինգ նարոդովոլակականներ՝ Ա. Ժելյարովը, Ս. Պերովսկայան, Ն. Ռիսակովը, Տ. Միխայլովը և Ն. Կիրաչիչը: Կայսերական Ռուսաստանում քաղաքական ճգնաժամը հաղթահարվեց: 1881 թ. ապրիլի 29-ին ներքին գործերի նախարարի պաշտոնից հրաժարական տվեց Լորիս-Մելիքովը, նրա օրինակին հետևեց Փինանսների նախարար Ա. Աբազան, այնուհետև ուղղման նախարար Դ. Միլյուտինը, մյուս լիբերալ նախարարները: Ալեքսանդր Երրորդն իր հրովարտակում հայտարարեց, թե կպահպանի ինքնակալական իշխանությունը՝ «նրա նկատմամբ ամեն մի հավակնությունից»: Իսկ Լորիս-Մելիքովը հրաժարական տալուց հետո, թեև մնաց Պետական խորհրդի անդամ, այնուամենայնիվ, լիովին հեռացավ պետական-քաղաքական գործունեությունից: Հազվադեպ մասնակցելով Պետական խորհրդի նիստերին, նա որպես կանոն քննադատում էր Ալեքսանդր Երրորդի կառավարության քաղաքականությունը, որը ձախողեց և փակուղի մտցրեց իր մշակած բարեփոխումների նախագծի փաթեթը՝ հույժ կարևոր ու հրատապ կայսերական Ռուսաստանի համար հեղափոխություններից և քաղաքական բախումներից խուսափելու առումով:

Լորիս-Մելիքովը մահացավ 1888 թ. դեկտեմբերի 12-ին ֆրանսիական Նիցցա քաղաքում: Նրա դին հանդիման է թիֆլիսի սուրբ Գևորգ վանքի բակում: Համոզված միապետական Լորիս-Մելիքովի կարծիքով հասարակության շարժիչ ուժը «լուսավորչալ» միապետի հետ միասին լիբերալ փոքրամասնությունն է, որի հիմքը կազմում էր առաջադեմ մտավորականությունը: Նրա համոզմամբ կայսերական Ռուսաստանի պետական համակարգում բարեփոխումները պետք է կատարվեն աստիճանաբար լիբերալ հայացքներ ունեցող պետական գործիչների անմիջական հսկողու-



Մ. Բոտաշևիչ-Պետրաշևսկի
(1821-1866 թթ.)
պետրաշևսկյան խմբակի ղեկավար



Կովկասյան կորպուսի հրամանատար
— և Կովկասի կառավարչապետ
գեներալ Ա. Պ. Երմոլով



Կովկասյան կորպուսի հրամանատար և
Կովկասի կառավարչապետ ֆելդմարշալ
կոմս Ի. Ի. Պասկևիչ-Էրիվանսկի



Ռուսաց բանակի հայազգի
գեներալ-լեյտենանտ
Վ. Գ. Մաղաթով



Ռուս նշանավոր գրող և
դիվանագետ Ա. Ս. Գրիբոյեդով



Սինոպի ճակատամարտի հերոս և
Սևաստոպոլի պաշտպանության
ղեկավար Պ. Ս. Նախիմով



1853 թ. Սինոպի
ճակատամարտը



Սևաստոպոլի
պաշտպանությունը



Սևաստոպոլի պաշտպանության
ղեկավար ծովակալ Վ. Ա. Կոունիլով



Սևաստոպոլի պաշտպանության
ղեկավար ծովակալ Վ. Ի. Բատովին



Ռուսական բանակի հաջազի
գեներալ-լեյտենանտ
Վ. Օ. Բենկեվիչով



Կայսր Ալեքսանդր Երկրորդ
Ազատարար



Ռուս հայտնի հրապարակախոս, գրող, փիլիսոփա, «գյուղացիական սոցիալիզմի» տեսարան Ն. Գ. Չերնիշևսկի (1828-1889 թթ.)



Ռուս հայտնի հրապարակախոս, գրական քննադատ Ն. Ա. Դոբրոլյուբով (1836-1861 թթ.)



Ներքին գործերի նախարարի տեղակալ, ռեֆորմի նախապատրաստման կազմակերպիչ Ն. Ա. Միլյուտին (1818-1872 թթ.)



Ռազմական նախարար, զինվորական բարեփոխման հեղինակ գեներալ Դ. Ա. Միլյուտին (1816-1912 թթ.)



Հեղափոխական նարոդնիկության քարոզչական ուղղության տեսարան Դ. Լ. Լավրով (1823-1900 թթ.)



Հեղափոխական նարոդնիկության գավառական ուղղության տեսարան Դ. Ն. Տկաչով (1844-1885 թթ.)



Հեղափոխական նարոդնիկության խռովարարական ուղղության տեսարան Մ. Ա. Բակունին (1814-1876 թթ.)



Հեղափոխական նարոդնիկության «Նարոդնայա Վոլյա» կազմակերպության ղեկավար Ա. Բ. Ժեկյարով (1851-1881 թթ.)



Ռուսաստանի ներքին գործերի նախարար, 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի հայազգի մարտական գեներալ կոմս Մ. Տ. Լորիս Մելիքով (1825-1888 թթ.)



Բաղկանյան ռազմաճակատի գորբերի գլխավոր հրամանատար, մեծ իշխան Ն. Ն. Ռոմանով



Կովկասյան ռազմաճակատի
գորբերի գլխավոր հրամանատար մեծ
իշխան Մ. Ն. Ռոմանով



«Սպիտակ գեներալ», բուլղար
ժողովրդի կողմից ազգային հերոս
ճանաչված Մ. Դ. Սկորոլն (1843-1882 թթ.)



Ռուս նշանավոր դիվանագետ,
կանցլեր, արտգործնախարար
Ա. Մ. Գորչակով (1798-1883 թթ.)



Ռուս նշանավոր դիվանագետ,
Թուրքիայում Ռուսաստանի դեսպան,
Սան-Ստեֆանոյի պայմանագրի
գլխավոր հեղինակ կոմս Ն. Դ. Բզնասու



Ա. Ա. Տեր-Ղուկասով-
ռուսական բանակի հայազգի
գեներալ-լեյտենանտ



Հ. Դ. Լազարև -
գեներալ-ադյուտանտ



Բեռլինի վեհաժողովը (1878 թ.)



Սան-Ստեֆանոյի պայմանագրի ստորագրումը (1878 թ.)



Ռուսաց կայսր Ալեքսանդր Երրորդ (1849-1894 թթ.)



Օրեր-գատախազ Կ. Պ. Պրեբրնոսցև (1827-1907 թթ.)



Ռուս նշանավոր պետական գործիչ Ս. Յ. Վիտտե (1849-1915 թթ.)



Հրապարակախոս, միապետական համակարգի համոզված ջատագով Մ. Ն. Կատկով (1818-1887 թթ.)

Թյան ներքո: Իսկ լիբերալ մտավորականները պետք է մշտապես ներազդեն միապետի վրա, նրան համոզեն, որ ինքնակալության փրկությունը բարեփոխումների մեջ է: Միայն այդ ճանապարհով է հնարավոր կանխել քաղաքական ահաբեկիչների փորձերը, հենվել ժողովրդական զանգվածների վրա, խաղալ «ամբոխի զգացմունքների» հետ: Եթե դրանք չկանխվեն, ապա անխուսափելի կլինեն քաղաքական անցանկալի գործընթացները: Իսկապես, մերժելով բարեփոխումների փաթեթը, պահպանողական ուժերը, Ալեքսանդր Երրորդի գլխավորությամբ առարկայորեն նպաստեցին, որ Ռուսաստանում տեղի ունենան իրենց համար ճակատագրական 1917 թվականի քաղաքական իրադարձությունները, քանզի ոչ միայն տապալվեց Ռոմանովների արքայատունը, այլև Ալեքսանդր Երրորդի որդին՝ Նիկոլայ Երկրորդը, իր ընտանիքի անդամների հետ միասին դարձավ բոլշևիկյան-խորհրդային իշխանության զոհ:

**ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԽՄԲԱԿՆԵՐԸ
XIX դարի 70-80-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ**

§ 1. ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԽՄԲԱԿՆԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Ճորտատիրական իրավունքի վերացումից հետո համեմատաբար կարճ պատմափուլում ռուսաստանյան կայսրության տնտեսության հսկայական առաջընթացը գրեթե բոլոր ոլորտներում ակնհայտ էր ու անվիճելի: Հետոնեֆորմյան չորս տասնամյակի ընթացքում կայսրության բնակչությունն ավելացավ մոտ 80%-ով՝ 1860 թ. 74 միլիոնից 1900 թ. հասավ 133 միլիոնի: Էական փոփոխության ենթարկվեց բնակչության սոցիալական կազմը: Զևավորվեցին երկու ինքնուրույն քաղաքական ուժեր՝ առևտրա-արդյունաբերական և աշխատավորական-բանվորական սոցիալական խավերը, որոնք սկսեցին կարևոր դեր խաղալ Ռուսաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքում: Սակայն ճորտատիրության մնացուկները խոչընդոտում էին տնտեսության դարգացումը, որով էլ Ռուսաստանը նկատելիորեն տարրերվում էր Արևմտյան Եվրոպայի առավել դարգացած երկրներին: Ռուսաստանը զիջելով այդ երկրներին, շարունակում էր հիմնականում մնալ ագրարային տերություն: Առանձնապես հետամնաց էին կայսրության ազգային ծայրամասերը՝ հարավում և արևելքում, որոնք ավելի ուշ թևակոխեցին կապիտալիստական հարաբերությունների դարգացման ուղին: Այնուամենայնիվ, Ռուսաստանի պայմաններում արդյունաբերության դարգացումը փաստ էր, որի վկայությունն էին նորանոր գործարաններն ու ֆարրիկաները, քաղաքների ու քաղաքային բնակչության աճը: 1863 թվականից մինչև 1899 թվականը 50 հազար և ավելի բնակիչ ունեցող քաղաքների թիվը եռապատկվեց՝ 13-ից հասավ 44-ի, քաղաքային բնակչությունը գրեթե կրկնապատկվեց: Առաջատար ճյուղն էր թեթև և, ամենից առաջ, տեքստիլ ու սննդի արդյունաբերությունը: Զգալի տեղաշարժեր կատարվեցին մետալուրգիայի, վառելիքային արդյունաբերության և մեքենաշինության բնագավառում: Ռուսաստանում չուգունի ձուլումը 1867 թվականի 17 մլն փուլից 1902 թ. հասավ 159 մլն. փուլի, քարածխի հանույթը 27 միլիոն փուլից մինչև 1 մլրդ. փուլի:

Հետոնեֆորմյան շրջանում քարածխային և մետալուրգիական արդյունաբերությունը արագ թափով զարգանում էր Ռուսաստանի հարավում՝ Ուկրաինայում և Դոնբասում: Հետոնեֆորմյան շրջանում Ռուսաստանում առաջացան ծանր ինդուստրիայի այնպիսի ճյուղեր, ինչպիսիք են չոգեքարչաշինությունը, նավաշինությունը, վագոնաշինությունը, ուսլազյանման արտադրությունը, գյուղատնտեսական մեքենաշինությունը, աճում է նավթարդյունաբերությունը Անդրկովկասում և Գրոգնիում: XIX դարի 60-90-ական թվականներին Ռուսաստանում հսկայական թափով ծավալվեց երկաթուղիների շինարարությունը: Երկաթուղային ցանցի կենտրոնը դարձավ Մոսկվան: Այստեղից պողպատե ուղիները ձգվեցին դեպի արևմուտք, հարավ, արևելք: XIX դարի վերջին կառուցվեց Ռուսաստանի կենտրոնը Հեռավոր Արևելքի հետ կապող Սիբիրյան մայրուղին: Դարի վերջին երկաթուղային ցանցի երկարությունը հասավ 56 հազար վերստի, այն ժամանակ, երբ 1861 թ ճորտատիրական իրավունքի վերացման նախօրյակին հաշվվում էր 1,5 հազար վերստ: Երկաթուղիների շինարարության նշանակությունը մեծ էր առևտրի, գյուղատնտեսության և արդյունաբերության զարգացման համար: Դա առաջ բերեց չոգեքարչերի, վագոնների, ուսլաների ու քարածխի մեծ պահանջ: Հետևաբար երկաթուղային շինարարությունը խթանեց արդյունաբերության գրեթե բոլոր ճյուղերի արագ զարգացումը: Երկաթուղային շինարարությունը պահանջում էր խոշոր կապիտալի ներդրում: Բարձր շահույթը, որ պայմանավորված էր էժան բանվորական ուժով, գրավեց արևմտաեվրոպական ներդրողների ուշադրությունը: Ուժեղացավ օտարերկրյա ֆրանս-բելգիական, անգլիական և գերմանական կապիտալի հոսքը ռուսական արդյունաբերության մեջ: Մի շարք ճյուղերում՝ մետալուրգիայի, մեքենաշինության, քարածխի արդյունաբերության մեջ, օտարերկրյա կապիտալը ավելի ուշ գրավեց գերիշխող դիրք: Արդյունաբերությունը զարգանում էր, ինչպես Ռուսաստանի կայսրության կենտրոնական շրջաններում, այնպես էլ ազգային ծայրամասերում՝ Լեհաստանում, Մերձբալթիկայում, Պոլովոսիում, ավելի դանդաղ Անդրկովկասում: Ռուսաստանում արդյունաբերության զարգացման առանձնահատկությունը նրա համակենտրոնացման բարձր աստիճանն էր, այսինքն գերակշռում էին խոշոր արդյունաբերական ձեռնարկությունները: 100-ից մինչև 1000 բանվոր ունեցող ֆարրիկանների թիվը XIX դ. վերջին աճեց գրեթե երկու անգամ: Էստոնիայում՝ Կրենհոլմի մանուֆակտուրայում աշխատում էր մոտավորապես 5 հազար մարդ: Խոշոր արդյունաբերության մեջ և երկաթուղային տրանսպորտում ղրաղված բանվորների թիվը այդ ժամանակահատվածում ավելացավ մոտավորապես չորս անգամ՝ 1865 թվականի 706 հազարից XX դ. սկզբին հասավ 2792 հազարի: Արտադրության բարձր համակենտրոնացումը արագացնում էր ռուս բանվորների՝ իրրև ինքնուրույն քաղաքական ուժի կազմա-

վորումը, նպաստում նրա Համախմբվածությանը և կազմակերպվածությանը: Բանվորների կյանքը չափազանց ծանր էր, աշխատանքային օրը ձեռնարկատերերը սահմանում էին կամայականորեն, որը հասնում էր 14-15 ժամի, իսկ չնչին աշխատավարձը չէր ապահովում նույնիսկ նրանց աղքատիկ գոյությունը: Աշխատանքի պաշտպանության բացակայությունը արտադրության մեջ հաճախ հասցնում էր դժբախտ դեպքերի, նվազագույն վճարումով լայնորեն գործադրվում էր կանանց և երեխաների աշխատանքը: Բանվորների կենցաղային ծանրագույն պայմանները անխուսափելի էին դարձնում սոցիալական բախումները, հակամարտությունները, որոնք հաճախ վերածվում էին արյունահեղության, ի սպառ բացառում երկխոսությունը: Սոցիալական ծայրահեղ բևեռացումը նախահիմքեր ստեղծեց XX դարի առաջին երկու տասնամյակում կայսրության մեջ կատարված համազգային ողբերգությունների, եղբայրասպան արյունահեղ իրադարձությունների համար: Մինչդեռ Արևմտյան Եվրոպայում Փարիզի Կոմունայից հետո սոցիալական արյունոտ բախումներ, հզոր գործադուլային շարժումներ գրեթե տեղի չունեցան, որը դրականորեն ներգործեց ներքաղաքական գործընթացների զարգացման վրա, նպաստեց փոխադարձ երկխոսությանը: Բանվորները, իրեն ինքնուրույն քաղաքական ուժ, իրենց ելույթները սկսեցին XIX դարի 70-ական թվականներին՝ պայքարի հիմնական միջոց ընտրելով գործադուլային շարժումը: Նրանց պահանջներն ունեին տնտեսական բնույթ՝ աշխատանքային օրվա կրճատում, աշխատավարձի բարձրացում, այլ օրախնդիր պահանջներ: Բանվորների միջավայրից առաջ քաշվեցին իսկական ղեկավարներ՝ Պյոտր Ալեքսևևը, Ստեփան Նալտուրինը, Վասիլի Գերասիմովը, Պյոտր Մոխենենկոն, Վիկտոր Օբնորսկին: «Կբարձրանա միլիոնավոր բանվոր մարդկանց ջլապինդ բազուկը, - ասաց կայսերական դատարանում 1877 թ. Ալեքսևևը, - և դեսպոտիզմի լուծը, որը պաշտպանվում է ղինվորների սպիներով, ջարդուփշուր կլինի»: Վ. Լենինը (Ուլյանովը) այս խոսքերն անվանել է ռուս հեղափոխական բանվորի մեծ մարզարեություն: Դա լավագույն վկայությունն էր բանվորների քաղաքական Հայացքների որակական ու ակնառու Հասունության մասին: 1875 թվականին Օդեսայում ստեղծվեց բանվորական առաջին ինքնուրույն կազմակերպությունը՝ «Բանվորների Հարավուսաստանյան միությունը» Ե. Զասլավսկու ղեկավարությամբ: Միությունն իր շարքերում ուներ 150-200 անդամ և համակրողներ: Նրա անդամներ կարող էին լինել բանվորները և ընդհանրապես աշխատավորները: Կազմակերպության կանոնադրությունը և ծրագիրը մշակելիս նրա ղեկավարությունը օգտվել էր Առաջին Ինտերնացիոնալի կանոնադրությունից: Այն միջազգային հեղափոխական բանվորական շարժման մեջ կարևորագույն իրադարձություն էր, որը ստեղծվեց 1864 թ. Լոնդոնում մեծ մտածողներ Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի ու նրանց գաղափարակիցների նախաձեռնու-

թյամբ և ղեկավարությամբ: 1875 թվականի վերջին «Բանվորների Հարավուսաստանյան միությունը» ջախջախվեց, իսկ նրա տասնհինգ գործուն անդամները բանտարկվեցին և ուղարկվեցին տաժանակրություն: 1878 թ. Սանկտ-Պետերբուրգի բանվորական խմբակներից կազմավորվեց ավելի մեծ բանվորական կազմակերպություն՝ «Ռուս բանվորների Հյուսիսային միությունը»: Այն գլխավորեցին Հայտնի բանվոր գործիչներ Վիկտոր Օբնորսկին և Ստեփան Նալտուրինը: «Հյուսիսային միություն» ծրագիրը ղնում էր պետության մեջ գոյություն ունեցող քաղաքական ու տնտեսական կարգերի՝ որպես չափազանց անարդարացի կարգերի տապալման խնդիրը: Ծրագիրը առաջիկա հեղափոխության մեջ գլխավոր դերը հատկացնում էր բանվորներին, որը լուրջ գաղափարական-քաղաքական նվաճում էր Ռուսաստանի բանվորական շարժման համար: Ծրագիրը, ընդունելով քաղաքական ազատության համար պայքարի կարևորությունը, Հայտարարում էր բոլոր երկրների բանվորների համերաշխության մասին: Այս Հայտարարությունը համահունչ էր Մարքսի՝ «Պրոլետարներ՛ր, բոլոր երկրների միացե՛ք» Հայտնի կարգախոսին: «Միություն» մեջ մտնում էին մոտավորապես 200 անդամ, այդքան էլ՝ համակրողներ: «Միություն» անդամները մասնակցում էին գործադուլներին, տպագրում թոուցիկներ, օգնում էին բանվորներին ձեռագրելու իրենց պահանջները: Բանվորները ստեղծեցին իրենց տպարանը և այնտեղ տպագրեցին «Ռաբոչայա գարյա» թերթիկի մեկ համարը: «Հյուսիսային միությունը» կարճ գոյատևեց, քանզի 1879 թ. ձերբակալվեց և տաժանակրության աքսորվեց Օբնորսկին, քաղաքական ահաբեկչությամբ հրապուրվեց Նալտուրինը, Պյոտր Մոխենենկոն ձերբակալվեց և աքսորվեց Սիբիր: Ոստիկանությունը ջախջախեց «Միություն» տպարանը, իսկ կազմակերպությունը դադարեց գոյություն ունենալուց: «Բանվորների Հարավուսաստանյան միություն» և «Ռուս բանվորների Հյուսիսային միություն» թեկուզև կարճատև գործունեությունը վկայեց, որ բանվորական շարժումները սկսել էին նշանակալից դեր խաղալ երկրի Հասարակական-քաղաքական կյանքում:

§ 2. ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐՇՈՒՄՆԵՐԸ XIX ԴԱՐԻ
80-90-ԱՎԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Այս պատմափուլում բանվորական շարժման ու պայքարի մեջ տեղի ունեցան լուրջ տեղաշարժեր և էական փոփոխություններ, որոնք անմիջապես տվեցին նկատելի առաջին արդյունքները: Այդ է պատճառը, որ ինչպես կայսրության ուժային կառույցները, այնպես էլ հասարակական-քաղաքական մտքի ներկայացուցիչները, իհարկե, տարբեր նկատառումներով տակավին ավելի մեծ ուշադրություն էին դարձնում աստիճանաբար

լայն տարածում գտնող բանվորական շարժումներին: Բանվորական շարժման մեջ աստիճանաբար գերակայող էին դառնում քաղաքական պահանջները, թեև նրա մասնակիցներին, այնուամենայնիվ, դեռևս ավելի հոգեհարսզատ էին ու հրապուրիչ տնտեսական պահանջները: Ավելի ուշ առաջ քաշված քաղաքական պահանջներն ապացուցում էին նրա պայքարի հասունության ու կազմակերպվածության ավելի բարձր մակարդակի մասին: Քաղաքական, տնտեսական, գաղափարական պայքարի միասնության պայմաններում բանվորական շարժումը կարող էր հաղթահարել տարբերայնությունը և դառնալ հզոր ազդեցիկ ուժ յուրաքանչյուր երկրի հասարակական-քաղաքական համակարգում: XIX դարի 80-ական թվականների բանվորական շարժման մեջ իր նշանակությունը առանձնանում է 1885 թ. տեղի ունեցած Մորոզովյան գործադուլը: Մորոզովի տեքստիլ ֆաբրիկան գտնվում էր Վլադիմիրի նահանգի Օրելսովո կայարանի մոտ գտնվող Նիկոլսկ ավանում (այժմ՝ Օրելսովո-Չուևո), որտեղ աշխատում էր ավելի քան 8 հազար բանվոր: Բանվորներն իրենց ժողովներում առաջադրեցին պահանջներ իրենց վարչությունը ներկայացնելու համար, որոնք ունեին տնտեսական բնույթ: Մորոզովի մանուֆակտուրայի գործադուլավոր բանվորներին աջակցում էին հարևան տեքստիլ ձեռնարկությունների բանվորները: Նրանք նույնպես դադարեցրին աշխատանքը և պահանջներ ներկայացրին ձեռնարկատերերին: Մորոզովյան գործադուլը դարձավ հասարակական նշանակություն ունեցող խոշոր իրադարձություն: Գործադուլավորները նահանգապես տնտեսական ներկայացրին իրենց պահանջները, որոնք ավելի շատ խնդրանք էին, հուսահատության աստիճանի հասած և սոցիալական ծայրահեղ ծանր վիճակում գտնվող մարդկանց յուրատեսակ բողոք և դժգոհություն: «Մենք կիսաքայքայ ենք: Ցանկանում ենք աշխատել, - ասում էին բանվորները, - և կգնանք աշխատանքի, բայց մեզ հնարավորություն տվեք կերակրելու մեր ընտանիքներին»: Նահանգապես կարգադրությանը ուստիկանությունը ցրեց գործադուլը և սկսեց կատարել զանգվածային ձերբակալություններ: Ավելի քան 600 բանվորներ վարչական կարգով հեռացվեցին ֆաբրիկայից, 33 մարդ դատի տրվեց: Դատարանում պարզվեց բանվորների կյանքի, կենցաղի, նրանց աղքատության ու իրավազրկության ցնցող պատկերը: «Երբ մենք սեամորթ ստրուկների մասին գիրք ենք կարդում, վրդովվում ենք, - ասում էր փաստաբաններից մեկը, - բայց այժմ մեր առջև են սպիտակ ստրուկները»: Մորոզովի մանուֆակտուրայի բանվորների դատը գրավեց ամբողջ Ռուսաստանի ուշադրությունը: Հասարակության առաջավոր շրջաններն իրենց համակրանքն էին արտահայտում բանվորներին, պահանջում էին պատասխանատվության ենթարկել ֆաբրիկատիրոջը աղաղակող չարաշահումների համար: Երդվյալ ատենակալներն ընդունեցին արդարացնող դատավճիռ: Դատար-

րանի որոշումը զայրույթ առաջացրեց կայսերական կառավարությունների վարչության շրջաններում և նրանց միջամտությունը ու հրամանով գործադուլի ղեկավարները նորից բանտարկվեցին և վարչական կարգով աքսորվեցին: Դա ապացուցեց, թե ինչպիսի հզոր և կառավարության համար վտանգավոր սոցիալական ու քաղաքական ուժ է բանվորությունը, որի համախմբված ընդհանուր պայքարը ինչ վտանգավոր հետևանքներ կարող է ունենալ գոյություն ունեցող պետական համակարգի համար: Մորոզովյան գործադուլը մեծ ազդեցություն ունեցավ բանվորական շարժման հետագա գործընթացի վրա, որի անմիջական արձագանքը եղավ երկրի կենտրոնական նահանգներում բազմաթիվ գործադուլները: Պայքարի մեջ ներգրավվեցին տրանսպորտի, մետալուրգիական, մեքենաշինական ձեռնարկությունների բանվորները: Առանձնապես խոշոր էր Շույայի բանվորների գործադուլը, որին մասնակցեց 6 հազար մարդ: 1889 թ. աշխատանքը դադարեցրին Իվանովո-Վոզնեսենսկի և Շույայի գրեթե բոլոր մանածագործական ֆաբրիկաները: Հետևաբար, յուրաքանչյուր գործադուլի հետ տարեցտարի աճում էր բանվորների քաղաքական գիտակցությունը, կազմակերպվածությունը և բանվորական-աշխատավորական համերաշխությունը: Բանվորական շարժման ճնշման ներքո կառավարությունը հարկադրված էր կատարել որոշ զիջումներ: Գործարանային աշխատանքային կանոնակարգով որոշ չափով կարգավորվեցին կանանց և երեխաների աշխատանքի պայմանները: Մտցվեց գործարանային տեսչություն՝ բանվորների կյանքի պայմանները և վարչության հետ վեճերը և հակամարտությունները հարթելու համար: Նախատեսվում էր տուգանքների գումարը հատկացնել բանվորներին, անաշխատունակության նպաստներ տալու համար, որոնք առաջին հաղթական ծիծեռնակները լինելով հանդերձ, չափազանց հեռու էին բանվորների նվաղագույն սոցիալ-կենցաղային կարիքները բարելավելուց: Այդ է պատճառը, որ նման զիջումները ոչ մի կերպ չէին կարող նվազեցնել բանվորական շարժումները ողջ կայսրությունում: Ուստի և օրինաչափ է, որ արդյունարերական բուռն վերելքի պայմաններում՝ 90-ական թվականներին բանվորական շարժումը թեակոխեց որակապես նոր պատմափուլ: Ռուսաստանի տնտեսության համար իր նշանակությունը ու կարևորությունը առանձնապես ակնհայտ էր 7 հազար կմ երկարությամբ Սիրիայի երկաթուղագծի կառուցումը, որի շինարարությունը տևեց չորս 15 տարի ու հիմնականում ավարտվեց 1901 թվականին: Արդյունարերության մեջ զրադված բանվորների թիվը 1887 թվականից մինչև 1901 թվականը 1,3 միլիոնից հասավ 2,6 միլիոնի, այսինքն՝ ավելացավ ավելի քան 1 միլիոն մարդով և նկատելիորեն ազդեց ներքաղաքական հետագա գործընթացների վրա: Բանվորական ուժի համակենտրոնացման աստիճանով Ռուսաստանը շարունակում էր աշխար-

Հում գրավել առաջին տեղը: 1890-1894 թվականներին գործադուլային շարժմանը մասնակցեց մոտավորապես 200 հազար մարդ, նույն պահանջներով՝ բարձրացնել աշխատավարձը, կրճատել աշխատանքային օրը, բարելավել կենցաղային պայմանները: Սոցիալ-իրադարձություն էին Դոն-բասի բանվորների ելույթները 1892 թվականի ամռանը: Դրանք սկսվեցին Յուզովկայում (Դոնեցկ), այնուհետև՝ Մարիուպոլում, Եկատերինոսլավում (Դնեպրոպետրովսկ), Լուգանսկում: Միայն Յուզովկայում հուլիսյան շարժումներին մասնակցեց ավելի քան 15 հազար մարդ: Այդ ելույթները ճնշվում էին ոստիկանության կողմից: Բանվորական շարժման մեջ նոր երևույթ էր մայիսյանեկյան՝ աշխատավորների համերաշխության միջազգային օրվա տոնակատարությունը, որը 1889 թվականին սահմանել էր Փարիզում գումարված Երկրորդ Ինտերնացիոնալի առաջին խորհրդաժողովը: Այդ ժամանակից մայիսի 1-ի տոնակատարությունը դարձավ Ռուսաստանի բանվորների համար հիանալի ավանդույթ՝ նշելու աշխատավորության միջազգային համերաշխության օրը: 1892 թվականին Լեհաստանի Լոձ քաղաքում մայիսյանեկյան գործադուլն ընդգրկեց 60 հազար մարդ: Բանվորական շարժման մեծ վերելքի պայմաններում 1896 թվականի մայիսին տեղի ունեցավ Պետերբուրգի տեքստիլագործների գործադուլը՝ 30 հազար բանվորների մասնակցությամբ: Նրանց զխավոր պահանջն էր աշխատանքային օրը կրճատել մինչև 10,5 ժամի, որը պաշտպանեցին մետաղագործները և մայրաքաղաքի մյուս բանվորները: Զերբակալություններով և մի քանի պահանջներ բավարարելու խոստումով կառավարությունը գործադուլավորներին պարտադրեց անցնել աշխատանքի և դադարեցնել գործադուլը: Սակայն 1897 թվականի Հունվարին Պետերբուրգում սկսվեց նոր գործադուլ, որին մասնակցեց 20 հազար մարդ: Կառավարությունն անմիջապես ճնշեց գործադուլը, ձերբակալեց ավելի քան հազար մարդ, բայց չկարողացավ լիովին կասեցնել բանվորական շարժումը: Այն ընդգրկեց կայսերական Ռուսաստանի շատ նահանգներ: 1897 թվականին կառավարությունը հարկադրված էր օրենք ընդունել աշխատանքային օրը կրճատելու մասին, որով սահմանվեց 11,5 ժամ ցերեկային և 10 ժամ գիշերային հերթափոխների համար: Դա առաջին լուրջ հաղթանակն էր բանվորական շարժման պատմության մեջ: Այդ շարժման քաղաքական աճող նշանակությունն ընկալելու համար բավական է նշել, որ կայսերական Ռուսաստանում գործող սոցիալ-դեմոկրատական և մարքսիստական խմբակների, լիբերալ շարժման ղեկավարները սկսեցին ավելի սևևուրու ուղղություն դարձնել նրանց գործունեության և գործադուլային գործընթացների վրա՝ ձգտելով այդ շարժումը գցել իրենց գաղափարական ազդեցության ներքո: Ավելին, նրանք հավակնում էին ստանձնել բանվորների սոցիալական, տնտեսական, քաղաքական իրավունքների պաշտպանների դերակատարումը, հեն-

վել նրա վրա ինքնակալության դեմ պայքարում: Եթե նարոդնիկները փորձեցին իրենց համար սոցիալական հենարան դարձնել աշխատավոր գյուղացիությունը, ապա սոցիալ-դեմոկրատները փարվեցին բանվորական-աշխատավորական զանգվածներին, որոնք, նրանց պատկերացմամբ, աստիճանաբար դառնում էին ամենաառաջավոր սոցիալական ուժը Ռուսաստանի հասարակական-քաղաքական համակարգում: Արդեն 1894 թվականին Պետերբուրգի սոցիալ-դեմոկրատները սկսեցին քաղաքական լայն քարոզչություն բանվորական զանգվածների շրջանում, սերտորեն կապվեցին այդ շարժման հետ, նրանց հաղորդելով տեսական-քաղաքական խոր գիտելիքներ: Դրանով հիմք դրվեց սոցիալիզմը բանվորական շարժման հետ միացնելու երկարատև կարևորագույն քաղաքական գործընթացին: Ավելին, սոցիալ-դեմոկրատական խմբակները միավորվելով, իրենց կազմակերպությանը տվեցին «Բանվոր դասակարգի ազատագրության պայքարի միություն» անունը՝ մեկ անգամ ևս ընդգծելով նրա դերը սոցիալ-քաղաքական պայքարում: Միությունը առաջ քաշեց ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական պահանջներ: Զանգվածային բանվորական շարժումը սկսեց ընթանալ Միության գաղափարական ու կազմակերպական ղեկավարության ներքո: XIX դարի վերջին ինքնակալական-միապետական համակարգը բանվորական շարժումների նկատմամբ կենսագործելով չափազանց կոշտ քաղաքականություն, այդպես էլ չկատարեց սկզբունքային որևէ զիջում, պատրաստ չեղավ, թերևս, չցանկացավ սկսել քաղաքական երկխոսություն, որով ճանապարհ, հարթեց ծայրահեղական ուժերին իրենց ազդեցության ներքո գցել այդ շարժումը և XX դարի նախաշեմին Ռուսաստանը կանգնեցնել քաղաքական խոր ճգնաժամի, կործանման եղրի, աղետների, ողբերգությունների, արյունահեղության առջև:

ՄԱՐՔՍԻՋՄԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՄԱՐՔՍԻՍՏԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԽՄԲԱԿՆԵՐԸ

§ 1. Գ. Վ. ՊԼԵՆԱՆՈՎԸ ԵՎ «ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՋԱՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ՄԱՐՔՍԻՍՏԱԿԱՆ ԽՄԲԱԿԸ

XIX դարի 80-ական թվականներից ռուսական իրականության մեջ աստիճանաբար սկսեց տարածվել մարքսիստական ուսմունքը, որը իբրև ինքնատիպ գաղափարախոսություն ձևավորվել էր XIX հարյուրամյակի 40-ական թվականներին Արևմտյան Եվրոպայում: Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի կողմից Հիմնադրված տեսությունը Արևմտյան Եվրոպայի պրոլետարիատի տնտեսական ու քաղաքական պայքարի համար դարձավ հզոր գաղափարական զենք: Ռուս հասարակական քաղաքական մտքի ներկայացուցիչները դեռ XIX դարի կեսին ծանոթացան Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի մի քանի աշխատություններին: Մարքսիստական տեսության նկատմամբ հետաքրքրությունը հատկապես ուժեղացավ XIX դարի 60-70-ական թվականներին՝ կապված Արևմտյան Եվրոպայի երկրներում բանվորական շարժման վերելքի և Միջազգային բանվորական կազմակերպության՝ Առաջին Ինտերնացիոնալի գործունեության հետ: 1870 թ. ռուս քաղաքական վտարանդիների մի խումբ ստեղծեց Առաջին Ինտերնացիոնալի ռուսական սեկցիան՝ Նիկոլայ Իսակովիչ Ուտինը, Աննա Վասիլենա Կորվին-Կրուկովսկայան, Եկատերինա Գրիգորենա Բարտենևան դարձան այդ սեկցիայի կազմակերպիչները: Նրանք դիմեցին Կ. Մարքսին՝ խնդրելով Ինտերնացիոնալի գլխավոր խորհրդում ներկայացնել ռուսական սեկցիան և ստացան դրական պատասխան:

1872 թ. ռուսերեն թարգմանվեց Կ. Մարքսի «Կապիտալ» աշխատության առաջին հատորը, որն առաջին թարգմանությունն էր օտար լեզվով: Սակայն ո՛չ 60-ական, ո՛չ էլ 70-ական թվականներին մարքսիստական ուսմունքը տիրապետող չդարձավ ո՛չ ռուսական իրականության, ո՛չ էլ բանվորական շարժման մեջ: Դա բացատրվում էր կայսերական Ռուսաստանի տնտեսական համեմատաբար հետամնացությամբ, երկրում բանվոր-

րական շարժման թուլությամբ: Թեև նարոդնիկները հարգանքով էին վերաբերվում Մարքսի և Էնգելսի ուսմունքի նկատմամբ, այնուամենայնիվ, գտնում էին, որ այդ տեսությունը կիրառելի չէ Ռուսաստանում և նախատեսված է Արևմտյան Եվրոպայի երկրների համար: Միայն XIX դարի 80-90-ական թվականներին Ռուսաստանում պայմաններ ստեղծվեցին մարքսիստական տեսության տարածման համար: Նարոդովոլականության գաղափարախոսության անիրատեսությունը, քաղաքական դավադրության և անհատական ահաբեկչության նրա սխալ մարտավարությունն իբրև պայքարի գլխավոր միջոց, հարկադրեցին նարոդնիկների տեսաբաններին քննադատորեն վերանայել իրենց հայացքները և փնտրել նոր ուսմունք՝ հասարակության վերափոխման համար:

1883 թվականին Շվեյցարիայի Ժնև քաղաքում կայսերական կառավարության հետապնդումներից արտասահման վտարանդված նախկին նարոդնիկները ստեղծեցին մարքսիստական առաջին խմբակը՝ «Աշխատանքի ազատագրություն» անունով: Նրա կազմի մեջ մտան Գ. Պլեխանովը, Վ. Զասուլիչը, Պ. Աքսելրոդը, Լ. Դեյչը և Վ. Իգնատևը: Նրանք դեռևս XIX դ. 70-ական թվականների վերջին հրաժարվեցին քաղաքական ահաբեկչության նարոդնիկական մարտավարությունը պաշտպանելուց: Նրանք արտասահմանում ծանոթացան Մարքսի աշխատություններին և դարձան համոզված մարքսիստներ: «Աշխատանքի ազատագրություն» խմբակի կազմակերպիչը և ղեկավարն էր մարքսիստական ուսմունքի նշանավոր քարոզիչ, երկրորդ Ինտերնացիոնալի ճանաչված տեսաբան Գեորգի Վալենտինովիչ Պլեխանովը (1856-1918 թթ.): Մագումով ազնվական Պլեխանովը, սովորելով Պետերբուրգի լեոնային ինստիտուտում, սկզբում հարեց նարոդնիկական շարժմանը, դառնալով նրա ղեկավարներից մեկը: «Զեմլյա ի վոլյայի» պառակտումից հետո, 1880 թվականին նա վտարանդվեց արտասահման: Լավ իմանալով նարոդնիկական շարժման թույլ և ուժեղ կողմերը՝ Պլեխանովը կարողացավ ընկալել ու բացատրել նարոդնիկության գաղափարախոսության անիրատեսությունը, քաղաքական ձախողման պատճառները, իսկ Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի աշխատությունների խոր ուսումնասիրությունը նրան դարձրեց համոզված մարքսիստ: Ավելին, Պլեխանովը խզեց գաղափարական կապերը նարոդնիկության հետ և դարձավ նրա առաջին խոր քննադատը: «Աշխատանքի ազատագրություն» խմբակի անդամներն իրենց գլխավոր խնդիրը համարեցին Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի աշխատությունների տարածումը կայսերական Ռուսաստանում, մարքսիստական գաղափարների քարոզչությունը և մասսայականացումը: Պլեխանովի գլխավորությամբ խմբակի անդամները ռուսերեն թարգմանեցին «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը», «Փիլիսոփայության աղքատությունը», «Սոցիալիզմի զարգացումը»

ուտոպիայից դեպի գիտություն» և այլ աշխատություններ, որոնց օգնությամբ գաղափարական պայքար ծավալեցին հակամարքսիստական տեսությունների դեմ: Նարոդնիկության դեմ մղած գաղափարական-քաղաքական պայքարում, մեծ դեր խաղացին Պլեխանովի աշխատությունները, որոնցում քննախոսվող հիմնահարցերը լուսաբանվում էին մարքսիստական ուսմունքի տեսանկյունից: 1883 թ. գրված «Սոցիալիզմը և քաղաքական պայքարը» աշխատության մեջ նա քննադատեց նարոդնիկներին քաղաքական պայքարի նշանակությունը թերագնահատելու համար, ընդ որում, նա հենվում էր Մարքսի այն դրույթի վրա, թե սոցիալիզմին բանվորական լայն զանգվածները կարող են հասնել միայն քաղաքական իշխանությունը գրավելու միջոցով: «Աշխատանքի ազատագրություն» խմբակի կազմավորումը և նրա քաղաքական գործունեությունը և գաղափարական պայքարը նարոդնիկները դիմավորեցին սվիններով ու սուր քննադատությամբ: Նախկին նարոդնիկ Պլեխանովի և նարոդնիկական գաղափարախոսությանը հավատարիմ մնացած հասարակական գործիչների միջև ծավալվեց երկարատև պայքար, որի հաղթական ավարտը դեռևս դժվար էր կանխատեսել, քանզի գաղափարական ճակատում միմյանց դիմակայում էին հարուստ ավանդույթներ ունեցող նարոդնիկության ու հասարակական-քաղաքական կյանքում ձևավորվող և առաջին քայլեր կատարող մարքսիստական ուսմունքի ներկայացուցիչները: Այս առումով կարևոր նշանակություն ունենր Պլեխանովի 1885 թ. գրված «Մեր տարածայնությունները» ծավալուն աշխատությունը: Պլեխանովը գաղափարական-քաղաքական զուգահեռներ անցկացնելով երկու ուսմունքների միջև փորձեց հիմնավորել մարքսիստական տեսության առավելությունը և իրատեսությունը, պատմության զարգացման գործընթացները, հասարակական-քաղաքական հարաբերությունները գնահատելու գործում: Նա քննադատեց նարոդնիկների հայացքները Ռուսաստանի պատմության զարգացման հեռանկարների վերաբերյալ: Պլեխանովը, հենվելով ռուսական իրականության խոր և բազմակողմանի վերլուծության վրա, թվերով ու փաստերով ապացուցում էր, որ կապիտալիզմը կայսերական Ռուսաստանում արդեն հաղթանակել է, և հեղափոխականների առաջնային խնդիրն է ժողովրդի ազատագրման համար մղվող պայքարում օգտագործել կապիտալիստական կարգերում առկա հակասությունները: Գյուղացիական համայնքի վերաբերյալ նարոդնիկների հույսերը, ըստ Պլեխանովի, անիրագործելի են, քանզի համայնքը, ռուս առաջին մարքսիստի կարծիքով, խոր հնություն մնացուկ է և ոչ մի դեպքում չի կարող լինել սոցիալիզմի սաղմը: Գյուղացիական համայնքը Ռուսաստանի սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական հարաբերությունների համակարգում առավելություն չէր, այլ հետամնացության վկայություն Արևմտյան

եվրոպայի համեմատությամբ: Պլեխանովն ապացուցում էր, որ առաջնահերթ խնդիր է պայքարել ժողովրդավարական վերափոխումների համար, այսինքն՝ լիովին վերացնել ճորտատիրական մնացուկները, ընդունել սահմանադրություն, իրագործել խոսքի, մամուլի ազատություն, օրենքի՝ առաջըլոր քաղաքացիների հավասարություն: Միայն դրանից հետո հնարավոր է անցնել իշխանության գրավման և սոցիալիստական վերափոխումների իրականացման խնդիրներին: Պլեխանովը փորձեց հիմնավորել երկրի հասարակական-քաղաքական վերափոխումների գործընթացում պրոլետարիատի ղեկավար դերի մասին տեսակետը: Այդ կապակցությամբ նա առաջ քաշեց բանվորական կուսակցություն ստեղծելու խնդիրը, որը կոչված էր լինելու գլխավորել հեղափոխական վերափոխումների համար պայքարը: Պլեխանով տաղանդավոր հրապարակախոսի ու քաղաքական գործիչի աշխատությունները լայնորեն տարածվեցին կայսերական Ռուսաստանում և ուժեղ հարված հասցրին նարոդնիկությանը, նպաստեցին մարքսիզմի տարածմանը ռուսական իրականության մեջ, հասարակական-քաղաքական կյանքում: «Աշխատանքի ազատագրություն» խումբը կազմեց ծրագրի երկու նախագիծ: Այդ փաստաթղթերում ընդհանուր գծերով արտացոլված են քաղաքական պայքարում պրոլետարիատի խնդիրները և նպատակները: Ուումըրը իբրև վերջնական նպատակ առաջ էր քաշում իրագործել կոմունիստական հեղափոխություն, այսինքն՝ կապիտալիստական կարգերը փոխարինել սոցիալիստականով: Այդ քաղաքական պայքարում ղեկավար դերը պատկանում էր պրոլետարիատին: Դա հաջողությամբ կատարելու համար անհրաժեշտ էր ստեղծել ինքնուրույն բանվորական կուսակցություն: Նախագծերը մատնանշում են, որ ինքնակալության տապալումը, այսինքն՝ բուրժուա-ժողովրդավարական հեղափոխությունը լինելու է բանվորական կուսակցության մերձավորագույն խնդիրը: Դրանից անմիջապես հետո կզրվի պրոլետարիատի կողմից քաղաքական իշխանության գրավման հիմնահարցը: Ինքնակալության դեմ քաղաքական պայքարում «Աշխատանքի ազատագրություն» խումբը պրոլետարիատի միակ հնարավոր ղաչնակից համարում էր լիբերալ-աղատական բուրժուազիային, որն ընդդիմություն էր ինքնակալությանը: Այդ խումբը գոյություն ունեցավ 20 տարի և մեծ դեր խաղաց բանվորական շարժման մեջ: Հատկանշական է, որ ժննում ստեղծված հայ Հնչակյան կուսակցության հիմնադիրները կապեր ունեին Պլեխանովի և նրա խմբակի անդամների, ինչպես նաև հեղափոխական նարոդնիկների հետ: Նրանց գաղափարների ազդեցությունն արտացոլվեց հնչակյանների մշակած ծրագրում:

§ 2. ՄԱՐՔՍԻՍՏԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԸ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ.

«ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ
ՊԱՅՔԱՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ». ՌԱԴԲԿ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

«Աշխատանքի ազատագրություն» խմբակը ստեղծվեց և գործեց հեռավոր Շվեյցարիայում ու ինքնին հասկանալի է՝ նրա կապն ամուրի չէր ուսական իրականության հետ: Սակայն արդեն XIX դ. 80-ական թվականներին կայսերական Ռուսաստանում այդ տեսությունը որդեգրած մտավորականությունը և ուսանողները ստեղծեցին մի քանի ընդհատակյա մարքսիստական խմբակներ: Այդպիսի մի խմբակ 1883-1884 թվականի ձմռանը ստեղծեց ազգությամբ բուլղարացի Դիմիտր Բլագոևը (1856-1924 թթ.) որն այդ ժամանակ սովորում էր Պետերբուրգի Համալսարանում: Բլագոևի խմբակի անդամներն ուսումնասիրելով մարքսիզմի ուսմունքը քարոզում էին մայրաքաղաքի մի քանի ձեռնարկություններում, որտեղ իրենք սեփական ուժերով ստեղծել էին բանվորական խմբակներ: Բլագոևի խմբակը հրատարակեց «Բանվոր» անլեզու թերթի երկու համար: Բայց 1885 թ. ոստիկանությունը ձերբակալեց Բլագոևին ու արտաքսեց Բուլղարիա, իսկ հետո ամբողջ խումբը ջախջախվեց: Հատկանշական է, որ Բլագոևը հետագայում դարձավ բուլղարական կոմունիստական կուսակցության հիմնադիրը և ղեկավարը: 1889 թվականին մարքսիստական խմբակ ստեղծեց Պետերբուրգի տեխնոլոգիական ինստիտուտի ուսանող Միխայիլ Բրուսնևը (1854-1937 թթ.), որը փորձելով ազդել բանվորական շարժման ընթացքի վրա, տարածում էր անլեզու գրականություն: Նա կարողացավ մայրաքաղաքում կազմակերպել 1891 թվականի քաղաքական ցույցը և առաջին մայրիկան Ռուսաստանում: Պոլոժիեում մարքսիզմը քարոզելու գործում աչքի ընկավ Նիկոլայ Ֆեդոսևը (1871-1998 թթ.), նրա ղեկավարած խմբակը գործում էր Կազանում: Վ. Լենինը նամակագրություն ուներ Ֆեդոսևի հետ և նրան գնահատում էր իրեն «արտակարգ տաղանդավոր և իր գործին արտակարգ նվիրված հեղափոխականի»: Ֆեդոսևը ձերբակալվեց ոստիկանության կողմից և մահացավ արքայազան Երիտասարդ Հասակում: Ընդհանուր առմամբ մարքսիստական խմբակները այդ ժամանակ փոքրաթիվ էին, ղեռն սերտորեն կապված չէին բանվորական շարժման հետ: XIX դարի 80-ական թվականների վերջին սկսվեց Վլադիմիր Ույանովի (Լենինի) գործունեությունը: Նա ծնվել էր 1870 թ. ապրիլի 10-ին (22-ին) Սիմբիրսկ (Ույանովսկ) քաղաքում, Սիմբիրսկի նահանգի ժողովրդական ուսումնարանների տեսչի, իսկ այնուհետև՝ տնօրենի ընտանիքում: Լենինի ավագ եղբայրը՝ Ալեքսանդրը հարեց նարոդնիկական շարժմանը և Ալեքսանդր Երրորդ կայսրի դեմ մահափորձի նախա-

պատրաստմանը մասնակցելու համար 1887 թվականին մահապատժի ենթարկվեց: Նա դատարանում հրաժարվեց պաշտպանությունից և ներում չնորհելու մասին խնդրանքը ստորագրելուց և արիաբար դիմավորեց իր մահը: Լենինի սիրելի գրողներն էին Չերնիշևսկին, Դորրոյուրովը, բանաստեղծ Նեկրասովը: Նրան հատկապես հրապուրում էր Չերնիշևսկու «Ինչ անել» վեպի հերոս Ռախմետովը: Լենինը գերազանց և ոսկե մեդալով գիմնադիան ավարտելուց հետո 1887 թվականին ընդունվեց Կազանի Համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Այդ թվականին ուսանողական հուզումներին մասնակցելու համար հեռացվեց Համալսարանից և արտաքսվեց: 1888 թվականին Կազան վերադառնալուց հետո նա դարձավ Ֆեդոսևի մարքսիստական խմբակի անդամ: Նա ավարտեց Պետերբուրգի Համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Արդեն 90-ական թվականների սկզբին Լենինը դարձավ Համոզված մարքսիստ և այդ ուսմունքի մեծ գիտակ: 1893 թվականին Լենինը տեղափոխվում է Պետերբուրգ և Պլեխանովի նման գաղափարական պայքար ծավալում լիբերալ նարոդնիկության դեմ: 90-ական թվականներին նարոդնիկական գաղափարախոսությունը գյուղացիական հեղափոխության մասին տեսությունից վերջնականապես վերասերվեց «փոքր գործերի տեսության», որի համաձայն անհրաժեշտ էր սահմանափակվել գյուղացիական տնտեսության մասնակի բարելավման հիմնահարցերով, որպեսզի խոչընդոտվի գյուղացիական Համայնքի քայքայումը: Սակայն XIX դարի 70-ական թվականների հեղափոխական նարոդնիկների՝ ինքնակալության դեմ պայքարի շնորհիվ, նրանք ղեռնա զգալի ազդեցություն ունեին մտավորականության շրջանում: Իրենց ժողովրդի բարեկամներ համարող լիբերալ նարոդնիկները շարունակում էին պայքարը մարքսիստների դեմ: Լենինը 1894 թվականին գրեց «Ինչ են «ժողովրդի բարեկամները» և ինչպե՞ս են նրանք մարտնչում սոցիալ-դեմոկրատների դեմ» աշխատությունը, որտեղ փորձեց ապացուցել, որ ժողովրդի իսկական բարեկամները ոչ թե նարոդնիկներն են, այլ մարքսիստները, սոցիալ-դեմոկրատները, քանզի նարոդնիկները վերասերվելով հրաժարվել են հեղափոխական գաղափարախոսությունից, որդեգրել լիբերալ գաղափարներ ու դրանով իսկ դադարել աշխատավոր գյուղացիության շահերն արտահայտելուց: Լենինը դարգացրեց քաղաքական պայքարում պրոլետարիատի վճռական դերի մասին մարքսիզմի կարևորագույն դրույթը: «... Ռուսական բանվորը, - գրում էր նա, - բոլոր դեմոկրատական տարրերի գլուխ անցած, ոտքի էլնելով, կտապալի միապետությունը և ուսական պրոլետարիատին (բոլոր երկրների պրոլետարիատի հետ կողք կողքի) բացահայտ քաղաքական պայքարի ուղիղ ճանապարհով կառաջնորդի դեպի հաղթական կոմունիստական հեղափոխություն»: Պրոլետարիատի շրջանում իրենց դիրքերն ամրապնդելու և

նրանց վրա գաղափարապես ներգործելու նպատակով սոցիալ-դեմոկրատները քաղաքական գաղափարական սուր պայքար ծավալեցին այսպես կոչված լեզալ մարքսիստների՝ լիբերալ-ադատական մտավորականության ներկայացուցիչների դեմ: Լեզալ մարքսիստները ցանկանում էին հասարակության մեջ օրեցօր սրվող սոցիալական-քաղաքական հակասությունները հաղթահարել աստիճանական ճանապարհով, բացառելով արյունահեղությունը, նրանք մերժում էին մարքսիստական ուսմունքի գլխավոր՝ պրոլետարիատի ղեկատարության ու սոցիալիստական հեղափոխության դրույթները: Նրանք արևմտաեվրոպական սոցիալ-դեմոկրատիայի օրինակով քարոզում էին ներդաշնակություն սոցիալական տարբեր խավերի և քաղաքական ուժերի՝ առաջին հերթին պրոլետարիատի ու բուրժուազիայի միջև: Նրանց մարքսիստական ուսմունքը հրապուրում էր սոսկ այնքանով, որքանով այդ գաղափարախոսությունը անվերապահորեն ընդունում էր համաշխարհային պատմության մեջ սոցիալ-քաղաքական, գիտության, տեխնիկայի գործընթացներում կապիտալիստական հարաբերությունների առաջադիմական նշանակությունը ավատատիրական հասարակարգի նկատմամբ: Սոցիալ-դեմոկրատները, անհաշտ ու սկզբունքային գաղափարական պայքար մղելով լեզալ մարքսիստների դեմ, ցանկանում էին իրենց ենթարկել բանվորական շարժումը: Այս հիմնախնդիրը հաջողությամբ լուծելու համար 1895 թվականի աշնանը Լենինի նախաձեռնությամբ Պետերբուրգի անջատ-անջատ սոցիալ-դեմոկրատական խմբակները միավորվեցին «Բանվոր դասակարգի ազատագրության պայքարի միություն» կազմակերպության մեջ: «Պայքարի միություն» գլուխկանգնեց կենտրոնական կազմակերպական խումբը, որն ընտրել էր ղեկավար բյուրո: Բյուրոյի մեջ մտան Վ. Լենինը, Գ. Կրժիժանովսկին, Ա. Վանեք, Վ. Ստարկովը: Բանվորական շարժումը նպաստում էր սոցիալ-դեմոկրատական խմբակների և կազմակերպությունների ստեղծմանն ու ամրապնդմանը, որոնք Պետերբուրգի «Միություն» օրինակով սկսեցին կոչվել «Պայքարի միություններ»: Դրանք առաջացան Մոսկվայում, Իվանովո-Վոզնեսենսկում, Կիևում և Ռուսաստանի, Ուկրաինայի ու Բելոռուսիայի արդյունաբերական քաղաքներում: Սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններ ստեղծվեցին Լեհաստանում, Մերձբալթիկայում, Անդրկովկասում: Բանվորական շարժումների ընդլայնումն ուժեղացրեց գաղափարական պայքարը մարքսիստների և էկոնոմիստների միջև: Արդեն 90-ական թվականների երկրորդ կեսին մարքսիստական խմբակներում ուժեղացավ մի հոսանք, որը ստացավ էկոնոմիզմ անունը: էկոնոմիստները գտնում էին, որ բանվորները պետք է գերազանցապես մղեն տնտեսական պայքար, այսինքն՝ առաջին հերթին պայքարեն իրենց սոցիալական, նյութական դրության, կենցաղի պայմանների բարելավման համար: Նրանք

կա՛մ ընդհանրապես ժխտում էին, կա՛մ էլ լավագույն դեպքում ածանցյալ տեղ հատկացնում քաղաքական պայքարին և, ի տարբերություն մարքսիստների, մերժում էին բանվոր դասակարգի համար ինքնուրույն կուսակցություն ստեղծելու անհրաժեշտությունը, քննադատում հեղափոխության մեջ բանվորների ղեկավար դերի մասին նրանց տեսակետը: էկոնոմիստները ցանկանում էին բանվորների տնտեսական պայմանների բարելավման հենքի վրա համերաշխություն և ներդաշնակություն հաստատել նրանց ու բուրժուազիայի միջև, որը լուրջ գործոն էր սոցիալական բախումները և արյունահեղությունը կանխելու համար, ինչը անխուսափելի է հեղափոխությունների և քաղաքացիական պատերազմների ժամանակ: էկոնոմիստների դեմ գաղափարական պայքար մղելով՝ մարքսիստներն ընդգծում էին, որ իրենք երբեք չժխտելով տնտեսական պահանջների կարևորությունը, այնուամենայնիվ, առաջնությունը տալիս են քաղաքական պահանջներին, քանզի բանվորների տնտեսական դրության արմատական բարելավումը սերտորեն կապված է քաղաքական պայքարի ու պահանջների, այսինքն՝ իշխանության գրավման հետ: Հեռավոր սիբիրյան աքսորից Լենինը մյուս սրբորական մարքսիստների հետ «17-ի բողոքը» փաստաթղթում վճռականորեն հանդես եկավ էկոնոմիստների դեմ և ներկայացրեց քաղաքական այդ հոսանքի գաղափարական էությունը: Իրականում լեզալ մարքսիստները և էկոնոմիստներն իրենց քարոզչությամբ զուլաացնում էին փոխադարձ զիջումներ կատարելու անհրաժեշտությունը, կոահում հեռանկարում ռուսական հասարակության մեջ սոցիալական բեռնացման վտանգավոր, ճակատագրական, ողորդական հետևանքները: Սակայն «Պայքարի միությունը» այս հարցում ղեկավարվում էր սկզբունքորեն այլ գաղափարախոսությամբ, որը բանվորներին մղում էր սոցիալական ու քաղաքական պայքարի ծայրահեղ միջոցներին՝ հեղափոխության: Սակայն զանգվածային ձերբակալությունների պատճառով «Պայքարի միությունը» չհաջողվեց ավարտել միասնական կուսակցության մեջ սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների միավորումը: 1898 թ. մարտին Մինսկում ազատության մեջ մնացած տեղական սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների ներկայացուցիչները գումարեցին իրենց առաջին համագումարը, որտեղ փորձ արվեց ստեղծել միասնական կուսակցություն: Համագումարին մասնակցում էր 9 պատգամավոր: Համագումարը որոշում ընդունեց միավորել սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները մի միասնական՝ Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության մեջ (ՌՍԴԲԿ): Այդ որոշման քաղաքական նշանակությունը մեծ էր սոցիալ-դեմոկրատիայի հետագա շարժման ու գործունեության տեսանկյունից, թեև համագումարը չկարողացավ ընդունել յուրաքանչյուր կուսակցության համար հույժ կարևոր ու անհրաժեշտ

ծրագիր և կանոնադրություն, իսկ ընտրված Կենտրոնական կոմիտեի երեք անդամները շուտով ձերբակալվեցին: Սակայն դա չկասեցրեց բանվորական և հեղափոխական շարժումը: Ավելին, քաղաքական փոթորիկը Ռուսաստանում հասունանում էր, որը շուտով ոչնչացնելու էր միապետական համակարգը և երկիրը հասցնելու էր ռազմաքաղաքական անկանխատեսելի ծանրագույն փորձությունների առջև:

Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Դ Բ Ա Մ Ի Ն

ՌՈՒՍԱԿԱՆ ՈՍԿԵԴԱՐՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈՒ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ

§ 1. ՌՈՒՍԱԿԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

19-րդ հարյուրամյակում ռուսական մշակույթը, հատկապես գեղարվեստական գրականությունը և արվեստը հասան աննախադեպ բարձունքի: Այն դուրս եկավ ազգային շրջանակներից և ստացավ համաշխարհային ճանաչում, իսկ նրա լավագույն գոհարները իրենց արժանի տեղը դրադեցրին համաշխարհային արվեստի գանձարանում՝ դառնալով համայն հանրութան սեփականությունը: Եվ միանգամայն օրինաչափ է, որ 19-րդ դ. առաջին երեսնամյակը՝ Պուշկինյան ժամանակաշրջանը, իրավամբ ստացավ ռուսական մշակույթի ոսկեդար անվանումը: Հետևաբար, ռուսական մշակույթը համաշխարհային արվեստի կարևորագույն բաղկացուցիչ մասը լինելով՝ զգալիորեն նպաստեց նրա աննախադեպ զարգացմանը: Ուստի հասկանալի է և աներկրա, որ ռուսական բազմաժանր լավագույն ստեղծագործությունները մեր օրերում էլ պահպանելով իրենց գեղարվեստական ու գեղագիտական հրատապությունը գտնվում են ընթերցող հասարակության ուշադրության կիզակետում, բեմադրվում պրոֆեսիոնալ բարձր կատարողական կարողություններով օժտված հանրաճանաչ թատերաբեմերում, դառնում հիանալի պատմագեղարվեստական նյութ կինոյի մեծ վարպետների համար:

Ռուսական մշակույթի որակապես նոր վերելքը անշուշտ պայմանավորված էր ներքաղաքական ու արտաքին քաղաքական գոյժոններով: 1812 թ. Հայրենական հաղթական պատերազմը, ազգային դարթոնքը և ինքնագիտակցությունը, հասարակական-քաղաքական մտքի հետագա զարգացումը, ճորտատիրական իրավունքի վերացումը, դրան հաջորդած մի շարք կառուցողական բարեփոխումները, Ռուսաստանի անմիջական օգնությամբ թուրքական տիրապետությունից ազատագրվելու սլավոնական ժողովուրդների ակնկալիքները արտացոլվում էին պատմագիտական, գեղարվեստական, արվեստի ու մշակույթի ստեղծագործություններում: Ռուսական գեղարվեստական գրականության մեջ նշանակալից դեր խաղաց Նիկոլայ Միխայլովիչ Կարամզինը (1766-1826)՝ սենտիմենտալ ուղ-

ղության ամենադասական և կարկառուն ներկայացուցիչը: Նրա հանրա-
ճանաչ «Դժբախտ Լիդա» վիպակում արտացոլվել է հասարակ մարդկանց
զգացմունքները, մարդկային արժանապատվության հաստատումը, աղ-
գային ինքնագիտակցության ամրապնդումը: Կարամզինը իր ժամանակի
պատմագիտական մտքի ամենաճանաչված ու խոշորագույն ներկայա-
ցուցիչներից էր, որի ծառայությունները նկատի ունենալով՝ կայսր Ալեք-
սանդր Առաջինի կամքով նա դարձավ «պաշտոնական պատմագիր», որին
մինչ այդ արժանացել էին 18-րդ դարի երկու պատմաբան՝ Միլլերը և
Շչերբատովը: Կարամզինը միապետական համակարգի համոզված ջա-
տագույն էր, նա ինքնակալության մեջ էր տեսնում Ռուսաստանի հղո-
րությունն ու անասանությունը, որը կարմիր թելի պես անցնում էր նրա
բոլոր աշխատություններում, և առաջին հերթին, «Ռուսական պետության
պատմությունը» բազմահատոր և հիմնարար գրքում: Փայլուն ոճով
գրված պատմագիտական այս մնայուն երկով Կարամզինը, Պուշկինի խոս-
քերով ասած՝ ռուսական պետությունը հայտնագործեց Ռուսաստանի հա-
մար, ինչպես Կոլոմբոսը Ամերիկան: Ռուսական գեղարվեստական գրա-
կանության մեջ հայտնի անուն էր ոտմանտիղմի լավագույն ներկայացու-
ցիչ, նշանավոր գրող, թարգմանիչ Վասիլի Անդրեևիչ Ժուկովսկին (1783-
1852), որի բանաստեղծությունները մեծ ազդեցություն թողեցին ռու-
սական պոեզիայի զարգացման վրա: Ժուկովսկին մոտ էր Կարամզինին:

19-րդ դարի երկրորդ քառորդում ռուսական գրականության մեջ
տիրապետող ուղղություն դարձավ ռեալիզմը: Գրականությունը սկսեց ոչ
միայն ճշմարտացիորեն ներկայացնել ժողովրդի կյանքը, այլև ռուսական
հասարակության առաջադեմ շրջաններում արթնացնել ճնշման և բռնու-
թյան դեմ պայքարի, ազատության ու արդարության ձգտումը: Այս առու-
մով մեծ է ռուս մեծանուն բանաստեղծ Ալեքսանդր Սերգեևիչ Պուշկինի
դերը (1799-1837), որի գեղարվեստական ստեղծագործությունները ռուս
ժողովրդի հպարտությունն են և անվերապահորեն դասվում են հա-
մաշխարհային գրականության գլուխգործոցների շարքը: Ռուսական ռեա-
լիզմի հիմնադիր համարվող Պուշկինի բազմաթանր ու չափազանց հա-
րուստ ժառանգության մեջ շատ են պատմական հիմնահարցերին նվիր-
ված արժեքավոր ստեղծագործությունները՝ «Բորիս Գոգոնով» ողբեր-
գությունը, այդուրյան ժամանակաշրջանին նվիրված «Պղնձե հեծյալը»,
«Պոլտավա» պոեմները, «Ճանապարհորդություն դեպի էրզրում» հետա-
քրքիր ուղեգրությունները: Պուշկինի ապստամբության կապակցու-
թյամբ մեծ բանաստեղծը ստեղծեց «Կապիտանի աղջիկը» նշանավոր
պատմագեղարվեստական երկը, իսկ գյուղացիական շարժումներին նա
անդրադարձավ «Դուբրովսկի» վեպում: Պուշկինը իր ժամանակի ռուսա-

կան հասարակության բարբերի իրական սլափերը գեղարվեստական
բարձր մակարդակով ներկայացրեց «Եվգենի Օնեգին» չափածո վեպում:
Այս ստեղծագործության հիանալի լիրիկան իսկական ներդրում է ուսա-
կան ու համաշխարհային մշակույթի գանձարանում: Բելինսկին այն հա-
մարել է իր ժամանակի ռուսական կյանքի հանրագիտարան: Ռուս մեծ
բանաստեղծը ղոհվեց Փրանսիացի Դանտեսի հետ ունեցած մենամարտից
հետո 1837 թ., ընդամենը 38 տարեկան հասակում: Պուշկինի անժամանակ
և ողբերգական մահը ռուսական հասարակությունը ընդունեց որպես աղ-
գային ճանր վիշտ, մեծ ու անդառնալի կորուստ:

Ռուսական գեղարվեստական գրականության զարգացման գործում
մեծ է Ալեքսանդր Սերգեևիչ Գրիբոյեդովի (1795-1829) դերը: Նրա «Նել-
քից պատուհաս» անմահ կատակերգությունը դեռ ձեռագիր վիճակում
բաղմաթիվ օրինակներով տարածվեց և շատ շուտով դարձավ հանրա-
ճանաչ, առանձնապես երիտասարդության շրջանում: Գրիբոյեդովի կա-
տակերգությունը դեկարրիստներից շատերի սեղանի գիրքն էր, որովհետև
նա պաշտպանում էր ու քարոզում դեկարրիստների գաղափարները: Եվ
օրինաչափ է, որ Գերցենը Գրիբոյեդովի հերոս Չափկուն ուղղակիորեն ան-
վանեց դեկարրիստ: Կյանքի ճշմարտացի ու իրական պատկերումը, նորի,
առաջադիմականի բախումը հնի, հետադիմականի հետ հակայական հաջո-
ղություն բերեցին այդ կատակերգությանը: Գրիբոյեդովը քննադատեց
քարացածությունը, տգիտությունը, այն ամենը, ինչը խանգարում էր նորի
հաստատմանը: «Նելքից պատուհաս» կատակերգության ազատամիտ ու
կյանքին իրատեսորեն նայող հերոսի՝ Չափկու շուրթերով Գրիբոյեդովը
քննադատում է ֆամուսովների, սկալոգուրների, մոլալիներին հասարա-
կությունը, մերկացնում ճորտատիրությունը: Նա, թեև չմասնակցեց դե-
կարրիստների ապստամբությանը, բայց կովկասում գտնվելու ժամանակ
ձերբակալվեց ու դեկարրիստների գործով ենթարկվեց հետաքննության:
Գրիբոյեդովին հաջողվեց ապացուցել, որ ինքը ոչ մի առնչություն չունի
ապստամբության հետ: Նա ղոհվեց Թեհրանում, որտեղ զրաղեցնում էր
ռուսական դեսպանի պաշտոնը:

Ռուս հանճարեղ բանաստեղծ Միխայիլ Յուրևիչ Լերմոնտովը (1814-
1841) Պուշկինի ողբերգական մահվան կապակցությամբ գրեց «Պոետի
մահը» բանաստեղծությունը, որտեղ մեղադրեց հասարակության բարձր
խավերին բանաստեղծի մահվան համար: Նա ստեղծեց պոեզիայի ու ռեա-
լիստական արձակի սքանչելի նմուշներ, խորապես բացահայտեց իր
ժամանակի հասարակության արատները՝ խաբեությունը, կեղծիքը, խար-
դավանքը: Նա «Մեր ժամանակի հերոսը» հիասքանչ վեպում նկարագրեց
իր ժամանակակիցի՝ «ավելորդ» մարդու կերպարը, որը թեև խելոք է և
ուժեղ, բայց չի գտնում իր տեղը ճորտատիրական իրականության պայ-

մաններում: Լերմոնտովի, Պուշկինի, Գրիբոյեդովի հերոսներ Պեչորինը, Օնեգինը, Չացկին դառնում են «ավելորդ մարդիկ», որովհետև նրանք ավելի բարձր են կանգնած իրենց շրջապատից, ժամանակակիցներից, հասարակությունից, որոնց կարիքը չէր զգում նեխած ճորտատիրական համակարգը: Ռուս ականավոր գրողների բարձրացված հարցադրումների շնորհիվ համաշխարհային գրականության մեջ սկսեցին ավելի մեծ ուշադրություն դարձնել բոլոր ժամանակների համար միշտ հրատապ ու արդիական «ավելորդ մարդու» հիմնախնդիրն:

Ռուսական գեղարվեստական գրականության անմար համաստեղության համակարգում փայլատակում է ռուս ականավոր գրող Նիկոլայ Վասիլևիչ Գոգոլի (1809-1852) անունը, որը կարևորագույն դեր խաղաց ռեալիստական գրականության դարգացման գործում: Ռուսական գրականության մեջ մինչև Գոգոլը ոչ ոք այնպիսի սրություն ու խորություն չէր մերկացրել ճորտատիրական համակարգի այլանդակությունները՝ ստորաքարչությունը, քծնանքը, շահամոլությունը, կաշառակերությունը, խաբեությունը, բարոյական անկումը, հասարակության ողջ սնանկությունը, ինչպես այդ արև է Գոգոլը իր հռչակավոր ու անմահ ստեղծագործություններ «Ռեկոլորում», «Մեռած հոգիներում»: Նա որոշակիորեն անդրադարձել է պատմական հիմնահարցերին, որոնցից է նշանավոր «Տարաս Բուլբան», որտեղ գեղարվեստական գեղեցիկ ոճով, հայրենասիրական մեծ ու ջերմ ոգով ներկայացրել է Չապորոժյան կազակության պայքարը լեհական ու թուրքական ուժերի դեմ: Չերնիշևսկու գնահատմամբ «Ալխարհում վաղուց արդեն այնպիսի գրող չէր եղել, որն այնքան կարևոր լիներ իր ժողովրդի համար, որքան Գոգոլը Ռուսաստանի համար»: Իսկ ռուս հանճարեղ գրող Ֆյոդոր Դոստոևսկու տեսակետով «Մենք բոլորս դուրս ենք եկել Գոգոլի «Շինելից»»: Հատկանշական են Բելինսկու և Գոգոլի՝ միմյանց ուղարկած քննադատական նամակները, որոնք մեկ անգամ ևս վկայեցին գրականության նշանակությունը և հրատապությունը հասարակական-քաղաքական համակարգում: 1847 թ. հունվարի սկզբին հրապարակվեց Գոգոլի «Ընտրված տեղեր՝ բարեկամների հետ ունեցած գրազրույթունից» գրքույկը: Գոգոլը հիմք ընդունելով «պաշտոնական ժողովրդայնության տեսությունը» և նահանջելով իր նախկին դիրքերից՝ նկատելիորեն թուլացրեց նահապետական կալվածատիրության, ճորտատիրության, եկեղեցու և միապետության քննադատությունը, որը չվրիպեց Բելինսկու տեսադաշտից: Ընդհանրապես այս գրքույկը հասարակության լայն շրջաններում առաջացրեց հակասական, իրարամերժ մեկնաբանություն, որը միանգամայն հասկանալի էր ու օրինաչափ: Եթե «պաշտոնական ժողովրդայնության տեսությունը» ջատագովող գրական շրջանները՝ Վյազեմսկին, Բուլգարինը, Շևիրևը

դրականորեն գնահատեցին Գոգոլի այս գրքույկը, ապա այն չընդունող գրողները, քննադատները, հրապարակախոսները չէին կարող ողջունել, նրանց տեսակետով, իրականությունից Գոգոլի նահանջը, քանզի նրան համարում էին ռուսական հասարակությունը ճշմարտացիորեն ներկայացնող մեծ գրող: Առանձնապես լայն արձագանք գտավ ու հնչեղություն ստացավ Գոգոլի լավագույն բարեկամներից մեկի՝ Բելինսկու «Սովրեմեննիկ»-ում տպագրված գրախոսությունը, որտեղ մեծ քննադատը տաղանդաշատ գրողին դատապարտում էր իր հայացքներից կտրուկ շրջադարձ կատարելու համար: Գոգոլին համարելով ռուսական գրականության պարծանքը և հպարտությունը, բարձր գնահատելով նրա տաղանդը և դերը՝ Բելինսկին, այնուամենայնիվ, բարեկամական դիրքերից կշտամբեց ու դատապարտեց ակնհայտորեն նկատվող այդ նահանջը՝ նպատակ ունենալով օգնել նրան վերահաստատվելու ռուս գրողների առաջին շարքերում: Բայց Գոգոլը բարեկամական այդ դիտողությունը և քննադատությունը ընդունեց հիվանդագին և պատասխանեց խիստ վիրավորական, բայց չափազանց հիմնավորված ու համոզիչ ձևով: Սակայն Գոգոլը գիտակցելով Բելինսկու ծանր, թերևս անբուժելի հիվանդությունը և մոտալուտ մահը նկատելիորեն մեղմեց իր սուր պատասխանը և դրանով իսկ դրսևորեց պատշաճ պարկեշտություն, թեև պաշտոնական ժողովրդայնության տեսության շրջանակներում քննադատեց արևմտաեվրոպական արժեքները դավանող Բելինսկուն, չհրաժարվեց պաշտպանել այդ տեսության գաղափարները: Ռուս երկու նշանավոր մտավորականների տարամերժ տեսակետները իր ժամանակի համար չափազանց հրատապ էր ու արդիական: Բելինսկին այդ պատասխանը ստացավ արտասահմանում, ուր մեկնել էր բուժման: Նա Գոգոլին գրեց իր պատասխան նամակը, որը պատմագրականագիտական տարեգրության մեջ Հայտնի է «Նամակ Գոգոլին» անվամբ: Բելինսկին չկարողացավ հրապարակել Գոգոլին ուղղված նամակը: Այն սկզբում ձեռագիր օրինակներով տարածեցին նրա բարեկամները և գաղափարակիցները, ապա հրապարակեցին: Այն իր բովանդակությամբ դուրս էր գալիս դուրս երկկողմանի հարաբերությունների շրջանակներից: Բելինսկին սուր քննադատության էր ենթարկում ճորտատիրությունը, մատնանշում, որ ժամանակի առաջադեմ գրողի պարտքն է մերկացնել դրա հեսուդիմական էությունը, քննադատել այդ համակարգի պաշտպաններին: Նա քննադատում էր Գոգոլին «ռուսական գարշելի իրականությունը» գունադարդելու համար, մինչդեռ անհրաժեշտ էր ցույց տալ ռուսական իրականության մոայլ կողմերը, պայքարել ժողովրդի մեջ տարածելու լուսավորություն: «Ռուսաստանը, - գրում էր ռուս քննադատը, - իր փրկությունը տեսնում է... քաղաքակրթության, լուսավորության, մարդասիրության, առաջադիմության մեջ: Նրան ոչ թե քարոզներ են

պետք (նա դրանք չատ է լսել), այլ ժողովրդի մեջ մարդկային արժանապատվություն արթնացում, որ այսքան դարեր կորցրել էր ցեխի ու կեղտի մեջ, իրավունքներ և օրենքներ, համաձայն ոչ թե եկեղեցու ուսմունքի, այլ առողջ դատողության և արդարացիության»։ Այս բոլորով հանդերձ Գոգոլը, իհարկե, մնաց ուսական ուսուցիչական գրականության ամենավերին բարձունքներում։ Այդ է պատճառը, որ գրաքննությունը հետևողականորեն խոչընդոտում էր Գոգոլի «Ռեկզորի» բեմադրությունը։ Եվ միայն կայսր Նիկոլայ Առաջինի անձնական միջամտությունից հետո հնարավոր դարձավ այդ հանճարեղ կատակերգության բեմադրումը։ Իսկ բեմադրությունից հետո կայսրը հուզված ու շփոթված ասաց. «Բոլորին բաժին հասավ, իսկ ինձ՝ բոլորից չատ»։

Պուշկինի ու Գոգոլի ազդեցությունները 19-րդ դարի առաջին կեսին իրենց ստեղծագործական գործունեությունն սկսեցին մեծանուն գրողներ Ֆյոդոր Միխայլովիչ Դոստոևսկին, Նիկոլայ Ալեքսեևիչ Նեկրասովը, Իվան Սերգեևիչ Տուրգենևը, Միխայիլ Եվգրաֆովիչ Մալտովիչ-Շչեղրինը, Իվան Ալեքսանդրովիչ Գոնչարովը, Ալեքսանդր Նիկոլաևիչ Օստրովսկին, Լև Նիկոլաևիչ Տոլստոյը։

Ռուսական գրականությունը հսկայական ներգործություն ունեցավ կայսրության կազմի մեջ մտած ժողովուրդների մշակույթի զարգացման վրա։

Ուկրաինական մշակույթի զարգացման գործում մեծ էր ուկրաինացի Հայտնի գրող ու նկարիչ, ճորտ պուդապու ընտանիքից սերված «Կիրիլո-Մեֆոդիևյան «Եղբայրություն» գաղտնի կազմակերպության անդամ Տարաս Շևչենկոյի դերը, որը ուսուցիչական նկարիչ Բրյուկովի անմիջական աջակցությամբ ոչ միայն փրկագնվեց ճորտատիրությունից, այլև նրա հովանավորությամբ ընդունվեց Պետերբուրգի նկարչական ակադեմիան։ Շևչենկոյի ստեղծագործությունների առաջին ժողովածուն՝ «Կորզար»-ը դարձավ իսկական ժողովրդական գիրք, իսկ «Հայդամակները» պոեմը նվիրված է ուկրաինական ժողովրդի հերոսական պայքարի էջերին։ 19-րդ դարի առաջին կեսին Բելոռուսիայում իր գործունեությունը սկսեց բելոռուս Հայտնի բանաստեղծ ու դրամատուրգ Վ. Դունին-Մարցինկևիչը, լայն համբավ ստացավ վրաց բանաստեղծ Ալեքսանդր ձավճավաձեն, Հայ իրականության մեջ՝ մեծ գրող Սալուստուր Աբովյանը՝ «Վերք Հայաստանի» պատմավեպով, որտեղ ճշմարտացիորեն ներկայացված է ուսուպարսկական պատերազմը և Հյուսիսարևելյան Հայաստանի միացումը ուսական կայսրությանը։ Լեհ ժողովուրդը աշխարհին տվեց նշանավոր գրող Ադամ Միցկևիչին, մեծ կոմպոզիտոր Ֆրեդերիկ Շոպենին, պատմաբան և հասարակական գործիչ Ի. Լեվելուն, որոնց ստեղծագործությունները մտան համաշխարհային մշակույթի ոսկե գանձարանը։ 19-րդ

դարի առաջին կեսին հավաքվեց ու հրատարակվեց Ֆինլանդիայի «Կալևալա» հիանալի ժողովրդական էպոսը, որն ավելի ուշ թարգմանվեց աշխարհի բազմաթիվ լեզուներով։ Մերձբալթյան ժողովուրդների մշակութային կյանքի զարգացման գործում նշանակալի դեր խաղացին Դորպատի ու Վիլնոյի համալսարանները, որտեղ բարձրագույն կրթություն ստացան ոչ միայն մերձբալթյան, այլև ուսական կայսրության կազմի մեջ մտած այլ ժողովուրդների ներկայացուցիչներ։ Լիտվայում հանդես եկավ նշանավոր պատմաբան Սիմոնուս Դաուկանտասը, որը գրեց իր երկրի պատմությունը։ Լիտվայում լայն ժողովրդականություն էին վայելում գրող Կրիստինոս Դոնելայտիսի, բանաստեղծներ Անտանասա Ստրադզասի և Դ. Պոչկայի երկերը, Լատվիայում՝ Ռուզենի ստեղծագործությունները։ Էստոնական գրականության զարգացման գործում խոշոր դեր են խաղացել Կրեյցվալդը, Պետերսոնը և Ֆեյմանը, որոնց ստեղծագործությունները հազնված են ջերմ հայրենասիրությամբ։

Ռուսական գեղարվեստական գրականությունը հետևեֆորմյան ժամանակաշրջանում շարունակեց իր շնորհալից վերելքը, որի տաղանդավոր ու մեծանուն ներկայացուցիչները զարգացնելով իրենց նախորդների լավագույն ավանդույթները՝ ընթերցողների սեփականությունը դարձրին համաշխարհային մակարդակի գլուխգործոցներ։ Ընդհանրապես ակնհայտ է տարբեր պատմափուլերում ստեղծված ազգային-մշակութային կոթողների միջև եղած հաջորդականությունը և ժառանգականությունը, որը կարևորագույն երաշխիք էր, հիմնարար գործոն էր նրա հետագա զարգացման համար։ Այս բոլորով հանդերձ հարյուրամյակի երկրորդ կեսի տաղանդաշատ գրողները կյանքին ընդառաջ դնելով իրենց ուշադրությունը սեռեցին նոր խնդիրներին, հանդես եկան նոր հիմնահարցերով, որոնք բխում էին ժամանակի ոգուց։ Հետևաբար, գեղարվեստական գրականությունը չկորցնելով իր հրատապությունը, շարունակում էր մնալ կարևորագույն ասպարեղ ինչպես հոգևոր, այնպես էլ հասարակական-քաղաքական կյանքում։ Գերցենի կարծիքով «գրականությունը քաղաքական ազատություն չունեցող ժողովրդի համար, միակ ամբիոնն է, որի բարձունքից նա հարկադրում է լսել իր վրդովմունքի և իր խղճի ձիչը»։ Գեղարվեստական գրականության հիմնական ուղղությունը դարձավ քննադատական ոեալիզմը, ակնապիչ հետաքրքրությունը, մեծ ուշադրությունը հասարակության խոցելի ու արատների դեմ պայքարի ուղիներ ու միջոցներ։ Ռուսական գրականությունը փորձեց ներկայացնել իր ժամանակի հերոսի ընդհանրացված դիմանկարը, որը չէր հաշտվում գոյություն ունեցող իրականության հետ։ Գրականության մեջ երևան եկան նոր

Հերոսներ՝ մտավորականներ, նիհիլիստներ, հեղափոխականներ: Այդ ժամանակաշրջանի մեծ գրողներից է երգիծաբան Միխայիլ Սալտիկով-Շչեդրինը (1826-1889): Նա իր «Գլուպով քաղաքի պատմությունը», «Պոմպադուրներ և պոմպադուրուհիներ», «Պարոնայք Գոլովյովները» ստեղծագործություններում սուր կերպով խարաղանց ճորտատերերին, մերկացրեց դանձազողներին, կաշառակերներին, կեղծ բարեպաշտներին ու երկերեսանիներին, ժողովրդին կեղեքողներին ու թալանչիներին: Սալտիկով-Շչեդրինը ողջ հասարակության՝ մանր և խղճուկ սլաշտոնյաններից մինչև բարձրաշխարհիկ ներկայացուցիչների, վաճառականների, ձևավորվող բուրժուազիայի խոցելի կողմերի ու թուլությունների սուր քննադատությունը առանց խտրության հասցրեց մինչև վերջ:

Ճյուղը Դոստոևսկու (1821-1881) ստեղծագործությունը խոշոր երևույթ էր ինչպես ողու, այնպես էլ համաշխարհային գրականության մեջ: Մարդկային հոգևբանության բարդ ու հակասական գործընթացների մեջ ներթափանցումը, մարդու և անհատի հոգեկան նուրբ ապրումները բացահայտելու կարողությունը, համակրանքը նվաստացյալների ու անարգյալների նկատմամբ՝ կաղնում են նրա «Սեղծ մարդիկ», «Ոճիր ու պատիժ», «Նոթեր մեռյալ տնից», «Կարամազով եղբայրները», «Ապուշը» երկերի էությունը: Դոստոևսկին ցույց տվեց, թե ինչպես մարդու արժանապատվության ոտնահարումը փչրում է նրա հոգին, երկփեղկում գիտակցությունը, մի կողմից՝ իմաստավորվում է սեփական անձի ոչնչությունը, մյուս կողմից՝ հասունանում է բողոքի պահանջարկը, անհրաժեշտությունը, ձգտումը հաստատել սեփական անձը իրրև աղատ անհատ: Հաճախ նման ինքնահաստատումը Դոստոևսկու Հերոսներին տանում է ինքնագլխություն՝ հանցագործության: Գրողը համակրում է այն Հերոսներին, որոնք օժտված են մարդկային անսահման բարությունը, հոգեկան նուրբ հատկանիշներով: Դոստոևսկին Աստծո գաղափարի մեջ էր տեսնում մարդու բարոյական հենարանը:

Լև Նիկոլաևիչ Տոլստոյը (1828-1910) իր «Պատերազմ և խաղաղություն», «Աննա Կարենինա», «Հարություն» ստեղծագործություններում համաշխարհային գրականության պատմության մեջ զեղարվեստական բարձր մակարդակով ներկայացրեց 1812 թ. Հայրենական պատերազմը, հետոնֆորմյան Ռուսաստանի կյանքը արտացոլեց ամբողջ բարդությունը ու հակասականությունը, բացահայտեց մարդու հոգու ամբողջ հարստությունը և ճշմարտության ու արդարության նրա տանջալից որոնումները: Տոլստոյը կայացնում է անողոր ու անաչառ դատավճիռ հասարակության վերնաշենքում թագավորող բարոյականությունը, սովորույթներին:

Ռուսաց լեզվի հիանալի վարպետ, Հայրենի բնության խորաթափանց գիտակ ու երգիչ Իվան Տուրգենևը (1818-1883) կարողացավ իր «Ռուդին»,

«Նախօրին», «Հայրեր և որդիներ», «Պոպան Հոդ» և այլ երկերում բարձրացնել արդիականության ամենահուզող հիմնախնդիրները: 1860 թ. լույս տեսած «Նախօրին» վեպում Տուրգենևը գլխավոր հերոս բուլղարացի ռազմախն-հեղափոխական Ինսարովի կերպարով ներկայացնում է Հայրենասեր երիտասարդի, որը իր բոլոր ուժերը նպատակամղեց երկիրը օտար տիրապետությունից ազատագրելու վեհ գաղափարին: Նոր մարդու գեղարվեստական դիմանկարի լուսարանումը Տուրգենևը շարունակեց «Հայրեր և որդիներ» գրքում, որտեղ ներկայացված է հասարակական նախկին կյանքի հիմքերի կործանման բարդ գործընթացը, շահերի բախումը և հակասությունները կյանքի բոլոր ոլորտներում՝ կալվածատերերի ու գյուղացիների, ռազմախնականների, վերջապես ազնվականության ներսում եղած տարբեր դասերի միջև: Այս ամենը վեպում ներկայացվում է իրրև կործանիչ տարերք, որը փոխում է կյանքի սովորական ընթացքը: Այդպիսին է Տուրգենևի գլխավոր հերոսը՝ նիհիլիստ Բադարովը: Թեև գրողի վերաբերմունքը նրա նկատմամբ երկակի է, այնուամենայնիվ, Բադարովը իր հայացքների մեջ հետևողական է, համարձակ ու խիզախ: Տուրգենևը նշում է նաև, որ հին հասարակության կործանումը դառնում է ինքնանպատակ: Այս հիմնահարցը առավելագույնս անհանգստացնում էր Դոստոևսկուն, իր հայտնի «Դեեր» ստեղծագործության մեջ: Այսպիսի երևույթների առկայությունը վկայում է երկրում, հասարակության մեջ եղած վտանգավոր հիվանդության հատկանիշների մասին: Հասարակության կրթված հատվածի խոնարհվելը հեղափոխական ռոմանտիզմի առաջ ծնում է մարդկանց, որոնց համար գլխավոր էր դառնում «նպատակը արդարացնում է միջոցը» կարգախոսը: Նրանց գիտակցության մեջ կազմալուծվում էր բարոյականություն հասկացությունը: Իրենց նպատակներին հասնելու համար նրանք կատարում են ամենասարսափելի հանցագործություններ: Նրանք, Դոստոևսկու վկայությամբ, իրենց դատում են Աստծուց բարձր, իրավունք վերապահում տնօրինելու մարդկանց ճակատագիրը՝ կյանքի ու մահվան հիմնախնդիրը: Այդպիսի մարդիկ երբևէ չեն կարողանա աշխարհում կառուցել արդարացի հասարակարգ, քանզի բարոյականությունից դուրս քաղաքականությունը անխուսափելիորեն հասարակությունը կհանգեցնի կործանման:

Իվան Ալեքսանդրովիչ Գոնչարովը (1812-1891) իր «Սովորական պատմություն», «Զառիթամ», «Օբլոմով» ստեղծագործություններում նկարագրեց ճորտատիրական իրավունքի քայքայման գործընթացը, ճորտատեր-կալվածատերերի ու աստիճանավորների դիմանկարը: Նիկոլայ Դոբրոլյուբովը «Ի՞նչ է օբլոմովականությունը» հոդվածում լիակատար ճշմարտացիությամբ ու իրատեսորեն ցույց տվեց ճորտատիրական իրավունքի անխուսափելի վերացումը, նշեց, որ օբլոմովյան հասարակություն-

նը իր դարն արդեն ապրել է, նա Ռուսաստանի անցյալն է և ոչ թե ապագան, ուստի և կործանումը անխուսափելի:

19-րդ դարի 70-ական թթ. վերջից սկսվում է Անտոն Պավլովիչ Չեխովի (1860-1904) գրական գործունեությունը, որի տաղանդը անմիջապես գրավեց Հասարակության ուշադրությունը: Չեխովի հերոսները՝ մանր պաշտոնյաներ, սնանկացած ազնվականներ, զավառային մտավորականներ, ուսանողներ տրորված լինելով կյանքի բարդույթներից, ճգնված դժվարություններից ու անելանելի վիճակից, խորապես տառապում են շրջապատի անտարբերությունից և անըմբռնողությունից: Չեխովը իր հերոսներին ներկայացնում է այնպես, ինչպիսին են նրանք իրականում, առանց չափազանցելու և գունազարդելու: «Մարդը, - ասում էր Չեխովը, - կդառնա ավելի լավ, երբ դուք նրան ցույց կտաք, թե ինչպիսին է նա»: Միաժամանակ ծաղրելով գոեհիկ, քաղքենիական ոգին, քաղքենու մտահորիզոնի նեղությունը, որոնց դիմանկարները պատկերված են «Ունտեր Պրիչիբեն», «Քամելոն», «Մարդը պատյանում» պատմվածքներում՝ գրողը երազում էր ժողովրդի երջանկության, ապագա Հասարակության մեջ ստեղծագործական աշխատանքի անհրաժեշտության ու գեղեցկության մասին:

Ռուսական գրականությունը այս պատմափուլում էլ բարերար ազդեցություն ունեցավ ուսաց կայսրության տարածքում ապրող ժողովուրդների գրականության զարգացման վրա: Ուկրաինայում ուսական գրականության ազդեցության և Տարաս Շևչենկոյի ստեղծագործության ավանդույթների ներքո իրենց գրական գործունեությունը ծավալեցին գրողներ Մարկո Վովչոկը, Իվան Ֆրանկոն, Պանաս Միրնին:

Մարկո Վովչոկը՝ Մարիա Ալեքսանդրովնա Վիլինսկի Մարկովիչի (1834-1907) կեղծանունն է, որի ստեղծագործությունը մեծ ազդեցություն ունեցավ ուկրաինական գրականության զարգացման վրա: Ուկրաինական գյուղացիների կենցաղի ու բարքերի հիանալի իմացությունը նրան դարձրեց փայլուն գրող, իսկ նրա պատմվածքները լայնորեն Հայտնի դարձան ուկրաինական ժողովրդին: Իվան Տուրգենևը Վովչոկի «Ուկրաինական ժողովրդական պատմվածքները» թարգմանեց ուսերեն: Ուկրաինացի գրող և Հասարակական գործիչ Իվան Ֆրանկոն (1856-1916) ծնվել է Գալիցիայում, որն այդ ժամանակ մտնում էր Ավստրո-Հունգարական կայսրության մեջ, գյուղական դարձնի ընտանիքում: Նա հիանալի բանաստեղծ էր, վիպասան ու դրամատուրգ, նրա ստեղծագործությունները ներթափանցված են իր ժողովրդի նկատմամբ մեծ սիրով, նրա ճակատագրի վերաբերյալ խորհրդածություններով, նրա շահերի խոր ըմբռնմամբ: Ֆրանկոն ուկրաիներեն է թարգմանել ուսու և արևմտաեվրոպական գրողների շատ երկեր, Կարլ Մարքսի և Ֆրիդրիխ էնգելսի աշխատությունները:

Նրա ստեղծագործությունները արժանացել են ուսու մեծ գրող Մաքսիմ Գորկու ամենարարժր գնահատականին: Պանաս Միրնին (1849-1920) նույնպես նկատելի դեր խաղաց ուկրաինական գրականության զարգացման գործում:

Բելոռուս բանաստեղծներ Ֆ. Բոգուշևիչը և Ի. Նեյուլիսովսկին ստեղծեցին հիանալի երկեր ուսերեն ու բելոռուսերեն լեզուներով: Բելոռուսիայում լայն ճանաչում գտան Բոգուշևիչի «Բելոռուսական սրինգ» ու «Բելոռուսական աղեղ» բանաստեղծությունների ժողովածուները: Յանկա Լուչինան (Ի. Նեյուլիսովսկի)՝ կրթությամբ ինժեներ, սովորել էր Պետերբուրգի տեխնոլոգիական ինստիտուտում: Սակայն նա Հայտնի դարձավ որպես բանաստեղծ իր հիանալի ստեղծագործությունների շնորհիվ: Մերձբալթիկայում դարի վերջին իրենց գործունեությունն են սկսում լատիշ բանաստեղծ Յան Ռայնիսը, լիտվացի կին գրող Յու. Ժեմայտեն, էստոնացի գրող է. Վիլզեն:

Շարունակում էր դարգացում ապրել վրաց ու Հայ գրականությունը: Իյա Ճավճավաձեն (1837-1907) կրթությունը ստացել է Պետերբուրգի Համալսարանում, կրել ուսական գրականության բարերար ազդեցությունը: «Մեր մեջ չկա, - գրել է նա, - ոչ մի Հասարակական և գրական գործիչ, որն իր վրա կրած չլինի ուսական գրականության ազդեցությունը»: Ակակի Մերեթելի (1840-1915) բանաստեղծությունները և պատմվածքները ներթափանցված են վրաց ժողովրդի նկատմամբ խոր սիրով: Հայ գրականության, Հրապարակախոսության և ամբողջ Անդրկովկասի ժողովուրդների մշակույթի զարգացման գործում մեծ նշանակություն ունեցան Միքայել Նալբանդյանի (1829-1866) բանաստեղծությունները, գրական ողջ ժառանգությունը: Մեծ էր Ռ. Պատկանյանի ու Գ. Սունդուկյանի գեղարվեստական Հարուստ ժառանգությունը Հայ մշակույթի զարգացման գործում:

Միջին Ասիայի ու Ղազախստանի միակցումը ուսական կայսրությանը նպաստեց ուզբեկ, տաջիկ, ղաղախ, թուրքմեն ժողովուրդների գրականության վերելքին: Նրանք Հնարավորություն ստացան Հաղորդակցվել ուսական ու եվրոպական գրականությանը և մշակույթին: Այս առումով հիշարժան են ուզբեկ խոշոր բանաստեղծ Ֆուրկաթի (1858-1909), ղաղախ բանաստեղծ և լուսավորիչ Աբայ Կունանբակի (1845-1904) գրական գործունեությունը:

19-րդ դարի երկրորդ կեսին զգալիորեն զարգացավ լեհական Հարուստ ավանդույթներ ունեցող գեղարվեստական գրականությունը: Գրողներ Բ. Պրուսի, է. Օժեկոյի, շ. Սենկևիչի ստեղծագործությունները խոշոր ներդրում էին Համաշխարհային գրականության գանձարանում:

§ 2. ՌՈՒՍԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՀԱՄԱՄԱՐԴԿԱՅԻՆ ԿՈՅՈՂՆԵՐԸ

Ռուս ականավոր հեղինակների գրական-գեղարվեստական գլուխգործոցները զգալիորեն նպաստեցին արվեստի բոլոր ճյուղերի համակողմանի զարգացմանն ու համամարդկային մակարդակի նոր նվաճումների արարմանը: Ռուս խոշորագույն երաժիշտ-կոմպոզիտորները հիանալիորեն օգտագործեցին գեղարվեստական կոթողները և ստեղծեցին իրենց օպերաներն ու բալետները, հաստատեցին սերտ ներդաշնակություն գրականությանն ու երաժշտության միջև: Դրանից ամբողջովին չահեց ազգային բազմահարուստ մշակույթը: Երաժշտության ծաղկումը գերազանցապես պայմանավորված էր ժողովրդի ստեղծած երաժշտական հարուստ ավանդույթները յուրացնելու ու կատարելագործելու հետ: «Երաժշտությունը ստեղծում է ժողովուրդը, – ասում էր ռուսական դասական երաժշտության հիմնադիր Միխայիլ Գլինկան (1804–1857), – իսկ մենք՝ արվեստագետներս, այն միայն վերամշակում ենք»: Գլինկան մեծագույն դեր խաղաց սիմֆոնիկ, օպերային, վոկալ լիրիկայի, կամերային-գործիքային երաժշտության ասպարեզում: Գլինկա՝ արվեստագետի գործունեության վառ տաղանդի մասին է վկայում 1836 թ. Պետերբուրգում բեմադրված «Կյանք հանուն ցարի» օպերան, որը խորհրդային ժամանակաշրջանի թատերահարթակներում բեմադրվում էր «Իվան Սուսանին» անունով: Օպերան հերոսական է, հայրենասիրական, նրա հերոս Իվան Սուսանինը 17-րդ դարի սկզբին լեհ նվաճողների դեմ պայքարող շարքային պյուղացի է, որը պատրաստ է գիտակցաբար զոհվել հանուն Ռուսաստանի: Գլինկան գովերգում է գեղեցկությունը և վեհությունը, հայրենիքի նկատմամբ սերը, հասարակ ժողովրդի սխրանքները: Գլինկայի «Իվան Սուսանին», «Ռուսլան և Լյուդմիլա» օպերաները իրենց երաժշտական բարձր արվեստով մտել են համաշխարհային երաժշտական մշակույթի ոսկե ֆոնդը և բեմադրվում են տարբեր թատրոններում: Գլինկայի երաժշտական արվեստը բարձր գնահատեցին եվրոպացի կոմպոզիտորներ Զ. Բերլիոզը և Ֆ. Լիստը:

Գլինկայի մտերիմ բարեկամ Ալեքսանդր Դարգոմիժսկին (1813–1869) վոկալ ու սիմֆոնիկ ստեղծագործությունների հետ միասին գրեց նաև օպերաներ՝ «Ռուսալկա» և «Քարեն Հյուրը»: Գլինկան ու Դարգոմիժսկին իրենց երաժշտական տաղանդով և հիանալի ստեղծագործություններով չստվերեցին աչքի ընկնող կոմպոզիտորներ Ա. Վառլամովին (1801–1848), Ա. Գուրիլևին (1803–1858), Ա. Ալաբևին (1787–1851), որոնք հարստացրին ազգային երաժշտությունը շատ հիանալի ողմաններով ու զրանով իսկ կատարեցին լուրջ ներդրում երաժշտական մշակույթի տարածման գործում: Երաժշտական արվեստի ողմանտիկական ուղղությունը ներկայաց-

նում էր Ա. Վերստովսկին՝ «Ասկուրդի գերեզմանը» հայտնի օպերայի հեղինակը:

19-րդ դարի առաջին կեսին բուռն զարգացում ապրեց դեղանկարչությունը, հանդես եկավ նկարիչների մի ամբողջ համաստեղություն, որի գլխավոր թեմաներն էին ժողովրդի հերոսության փառաբանումը, նրա հոգեկան զարթոնքի գաղափարը, ճորտատիրական Ռուսաստանի խոցների մերկացումը: Նկարիչ Ա. Վենեցիանովը (1780–1847), որ ճորտական ծագում ուներ, իր ստեղծագործությունը նվիրեց գյուղացիների կյանքի պատկերմանը, որով նա հատկապես խոշոր ներդրում կատարեց նկարչության մեջ կենցաղային թեմայի արծարծման գործում: Գյուղացիների կյանքը և կենցաղը նա ներկայացնում է իղեալականացված, գունազարդված՝ տուրք տալով սենտիմենտալիզմին: Գյուղական կյանքն ու կենցաղը պատկերող կտավներից հայտնի են «Կալը», «Հունձ: Ամառ», «Վար: Գարուն», «Տերեփուկներով գեղջկուհին», «Ճակնդեղի մաքրումը», «Կալվածատիրուհու առավոտը», «Բուրդ գզող գեղջկուհիներ», «Գեղջկուհին սունկերի հետ», «Գյուղացիների խումբը», «Քնած հովիվը», «Հնձվորները», «Գերանդիով ու փոցխով աղջիկը»: Այս կտավներում նկարիչը ներկայացնում է ռուս հասարակ մարդկանց՝ գեղջուկների ազնվությունը և դեղեցկությունը, նրանց արժանապատվությունը՝ անկախ սոցիալական կարգավիճակից: Ռուսական գեղանկարչության մեջ կլասիցիզմի խոշորագույն ներկայացուցիչ Կ. Բրյուլովը (1799–1852) հայտնի դարձավ դեռևս իր վաղ շրջանի կտավներով, որոնցից նշանավոր են «Իտալական կեսօրը», «Իտալական առավոտը», «Զիավարուհին»: Արվեստի մեծագույն ստեղծագործություն է Բրյուլովի «Պոմպեյի վերջին օրը» նկարը: Նա այցելեց հինավուրց քաղաքը, ուսումնասիրեց ավերակները, մտովի վերականգնեց այն ողբերգական գիշերը, երբ քաղաքը կործանվեց Վեզովի ժայթքման պատճառով: 1830 թ. սկսեց և մի քանի տարի հետո ավարտեց այդ աշխարհահռչակ կտավը՝ դրա մեջ դնելով իր մեծ տաղանդը, հիասքանչ արվեստը, նուրբ ճաշակը: Բրյուլովը գտել է հիանալի գույներ ժայթքող Վեզովի լավայի ու մոխրի տակ կործանվող հնագույն քաղաքի ողբերգությունը պատկերելու համար: Կտավը համակված է բարձր հումանիստական գաղափարներով, ներկայացնում մարդկանց ազնվությունը, սարսափելի աղետի ժամանակ նրանց անձնազոհությունը: Բրյուլովը տաղանդավոր նկարչի անուն վաստակեց ոչ միայն իր կոմպոզիցիոն նկարներով, այլև բարձրարվեստ դիմանկարներով:

19-րդ դարի առաջին կեսին ապրեց ու ստեղծագործեց Ալեքսանդր Անդրեևիչ Իվանովը (1806–1858): Նա իր ամբողջ կյանքը նվիրեց ժողովրդի հոգևոր զարթոնքի գաղափարին՝ այն մարմնավորելով «Քրիստոսի հայտնությունը ժողովրդին» կտավում, որի ստեղծման համար պահանջվեց

չուրջ 20 տարի (1837-1858 թթ): Չնայած նկարի կրոնական սյուժեին՝ այստեղ ժողովուրդը մղված է առաջին պլան և արտահայտված են նրա սպասելիքները՝ ազատագրվելու իր անմխիթար վիճակից: Հսկայական կտավի առաջին պլանում առանձնանում է Հովհաննես Մկրտչի առնական, անվեհեր կերպարը, որը մատնացույց է անում մոտեցող Քրիստոսին: Նրա դիմանկարը տրված է հեռավորության վրա, նա դեռևս չի եկել, բայց անպայման կգա, ասում է նկարիչը: Եվ լուսավորվում, պայծառանում ու մաքրվում են նրանց դեմքերը և հոգիները, նրանք սպասում են փրկչին: Այդ նկարում իվանովը, ինչպես ավելի ուշ ասել է Ի. Ռեպինը, ցույց տվեց «ազատության խոսքի ծարավ ճնշված ժողովրդին»:

Պավել Անդրեևիչ Ֆեդոտովը իր կարճատև (1815-1852), բայց բեղմնավոր ստեղծագործական կյանքի ընթացքում ներկայացրեց ճորտատիրական Ռուսաստանի խոցելի կողմերը, քննադատական դիրքորոշումը ռուսական իրականության նկատմամբ: Նրա «Նորաթուխ կավալերը» (1846 թ.), «Մայրի խնամախոսությունը» (1848 թ.) և ուրիշ նկարներ գոգոյան մերկացնող ուղղություն սկիզբն են նկարչության մեջ: Ֆեդոտովը իր վրձինով կատարեց այն, ինչ ռուս հայտնի քննադատ Վ. Ստասովի խոսքերով ասած, մի քանի տարի հետո կատարեց ռուս ականավոր դրամատուրգ Ա. Օստրովսկին իր բեմադրություններով: Բրյուլովը կտավը երկար դիտելուց հետո հեղինակին կիսալուրջ-կիսակատակ ասել է. «Շնորհավորում եմ ձեզ, դուք ինձ հաղթեցիք»: Իր ժամանակի ազգային կերպարվեստի երկու հիանալի ներկայացուցիչներ Օ. Կիպրենսկին (1782-1836) և Վ. Տրոպինինը (1776-1857) մեղ թողեցին Պուշկինի՝ կենդանության օրոք կատարված դիմանկարները: Կիպրենսկու կտավում Պուշկինը ներկայացված է հանդիսավոր, բանաստեղծական փառքի գագաթնակետին: «Դու ինձ սիրաշահում ես Օրեստ», - ասաց Պուշկինը նայելով ավարտված դիմանկարին: Տրոպինինի կտավում հմայիչ բանաստեղծը ներկայացված է տնային պայմաններում: Մինչև 47 տարեկան հասակը Տրոպինինը գտնվում էր ճորտական կարգավիճակում, հավանաբար այդ է պատճառը, որ նրա նկարներում շատ են հասարակ մարդիկ, աշխատավորները ընդհանրապես: Այս ամենը խտացված գույներով ներկայացված է «Ժանեկագործուհին» նկարում:

Գեղանկարչական արվեստի զարգացման գործում կարևոր դեր խաղաց դեռևս 1757 թ. Պետերբուրգում հիմնադրված Գեղարվեստների ակադեմիան, որը դարձավ խոշորագույն կենտրոն ոչ միայն ռուս նկարիչների, այլև Ռուսաստանի կադմի մեջ մտած մյուս ժողովուրդների պրոֆեսիոնալ նկարիչներ պատրաստելու գործում: 1852 թ. Ռուսաստանի մշակութային կյանքում տեղի ունեցավ նշանակալից իրադարձություն՝ իր ղոները բացեց էրմիտաժը, որտեղ հավաքված էին կայսերական ընտանիքի գեղար-

վեստական գանձերը: Ռուսաստանում բացվեց առաջին գեղարվեստական թանգարանը:

19-րդ դարի առաջին կեսին նկատելի առաջընթաց ապրեց ու որակական նոր աստիճանի բարձրացավ ռուսական թատրոնը, վերջնականապես ձևավորվեց պրոֆեսիոնալ ազգային թատրոնը իր պրոֆեսիոնալ դերասաններով, որոնք սկսեցին բեմադրել ինչպես ռուսական, այնպես էլ արևմտակարգական դասական հեղինակների ստեղծագործությունները: Նրանք համախմբված էին Մոսկվայի Մեծ ու Փոքր թատրոններում, որոնք, համապատասխանաբար, նախատեսված էին օպերաներ ու բալետներ, դրամատիկական երկեր բեմադրելու համար: Պետերբուրգում առավել հայտնի էր Ալեքսանդրյան թատրոնը: Թատրոններ բացվեցին նաև նահանգային ու գավառային կենտրոններում, որոնք նույնպես նպաստեցին, որպեսզի թատերասեր հասարակությունը ծանոթանա թատերական արվեստի գրուխործոցներին:

19-րդ դարի առաջին կեսին ռուս նշանավոր շատ դերասաններ ծագումով ճորտեր էին՝ Բելինսկու և Գերցենի բարեկամ Միխայիլ Սեմյոնովիչ Շչեպկինը (1788-1863) մինչև 33 տարեկանը ճորտ էր, Պավել Ստեպանովիչ Մոչալովը (1800-1848) մեծացել էր ճորտ դերասանի ընտանիքում: Մոչալովը դերասանին լայն ճանաչում ու մեծ հոգակ բերեցին Համլետի՝ Վ. Շեքսպիրի համանման ողբերգության ու Ֆերդինանդի (Ֆ. Շիլլերի «Պարզավանք և սեր» բեմադրության), փայլուն դերակատարումները: Բելինսկին նույնպես բարձր գնահատեց Մոչալովի Համլետը: Ռուսական բեմում Համլետի դերում փայլեց նաև նշանավոր դերասան Վասիլի Անդրեևիչ Կարատիգինը (1802-1853): Ազգային թատրոններում սկսեցին բեմադրել ռուս դասականներ Պուշկինի, Գրիբոյեդովի, Գոգոլի, Օստրովսկու ստեղծագործությունները: Մոսկվայի Փոքր թատրոնի մեծ դերասան Մ. Շչեպկինը Գոգոլի «Ռեկզորում» կատարեց քաղաքագլխի դերը: Ընդհանրապես «Ռեկզորի» բեմադրությունը խոշոր իրադարձություն էր Ռուսաստանի թատերական կյանքում, որը սկզբում բեմադրվեց Պետերբուրգի Ալեքսանդրյան թատրոնում, այնուհետև Մոսկվայի Փոքր թատրոնում: Շչեպկինը Փոքր թատրոնի բեմում հանդես է եկել 40 տարի և օրինաչափ է, որ այդ թատրոնը հաճախ անվանում են Շչեպկինի տուն: Գոգոլի «Ռեկզորում» քաղաքագլխի, Գրիբոյեդովի «Սելքից պատուհասում» Ֆամուսովի և շատ ուրիշ դերերի խոր ու անկեղծ կատարումով Շչեպկինը ռուսական թատրոնում զրեց ռեալիստական ուղղության հիմքերը: Նրա յուրաքանչյուր նոր դեր Փոքր թատրոնում Մոսկվայի համար դառնում էր խոշոր հասարակական իրադարձություն:

Հիանալի դերասան էր Ալեքսանդր Եվստաֆևիչ Մարտինովը, որի թատերական արվեստը սերտորեն կապված էր Պետերբուրգի Ալեքսանդրյան

Թատրոնի հետ: Նա վարպետությունը էր ներկայացնում իր ժամանակի «փոքր մարդու» ամենօրյա կենցաղը, կյանքի բարդությունները և դժվարությունները: Ազատագրման դարաշրջանը հսկայական ներգործություն ունեցավ մշակույթի դարգացման վրա: 19-րդ դարի երկրորդ կեսին Ռուսաստանի սոցիալ-տնտեսական ոլորտում կատարված արմատական տեղաշարժերը, հասարակական քաղաքական հարաբերություններում տեղի ունեցած հսկայական փոփոխությունները՝ ճորտատիրական իրավունքի վերացումը, 60-70-ական թթ. բարեփոխումները, գյուղացիական հուզումները և ընդվզումները, նարոդնիկական ու բանվորական կազմակերպությունները, ժողովրդագնացությունը, քաղաքական ահարկչությունները, գործադուլները, մարքսիզմի տարածումը, պահպանողական-միապետական գաղափարախոսությունը կանաչ ճանապարհ հարթեցին գեղանկարչության, երաժշտության, թատերական արվեստի համար:

Ռուսական ազգային երաժշտությունը, որի հիմնաքարերը դրել էր Գլինկան, դարի առաջին կեսին դեռևս լիովին ձևավորված չէր ու շարունակում էր իր կազմավորման գործընթացը: Օպերային բեմահարթակներում դեռևս եղանակ էին ստեղծում իտալական դերասանները, համերգային դահլիճներում գրեթե չէր հնչում կամ չափազանց թույլ էր հնչում ռուսական ազգային երաժշտությունը: 1860-ական թթ. Պետերբուրգում նշանավոր երաժիշտների մի խումբ խնդիր դրեց շարունակել Գլինկայի երաժշտական ավանդույթները: Նրա անդամները առանձնապես մեծ ուշադրություն էին դարձնում ժողովրդական երաժշտության ուսումնասիրությանը, որը դարձավ նրանց ոգեշնչման աղբյուրը: Հետագայում երաժիշտների ստեղծագործական այդ միավորումը ստացավ «Հզոր խումբ» անվանումը: Նրա ոգին, գլխավոր կազմակերպիչը և տեսարանը դարձավ Միլի Ալեքսեևիչ Բալակիրևը (1836-1910): Նա 1866 թ. հրատարակեց «Ռուսական ժողովրդական երգեր ժողովածուն»: «Հզոր խումբ» մեջ մտնում էին Մոդեստ Պետրովիչ Մուսորգսկին (1839-1881), Ալեքսանդր Պորֆիրևիչ Բորոդինը (1833-1887), Նիկոլայ Անդրեևիչ Ռիմսկի-Կորսակովը (1844-1908), Յեղար Անտոնովիչ Կյուին: Մ. Մուսորգսկու «Բորիս Գոդունով», «Սովանչինա» օպերաները ներթափանցված են ժողովրդի նկատմամբ անսահման սիրով: Մինչև կյանքի վերջը մեծ երաժիշտը հավատարիմ մնաց իր իսկ ձևակերպած սկզբունքներին՝ «Կյանք, որտեղ էլ որ արտահայտվի, ճշմարտություն, ինչքան էլ որ դառն լինի, համարձակ, անկեղծ խոսք՝ ուղղված մարդկանց... ահա իմ ուղղությունը, ահա ինչ եմ ուզում և ահա ինչու էի վախենում վրիպել»: 1874 թ. Պետերբուրգում «Բորիս Գոդունովը» բեմադրվեց Մարինյան թատրոնում: Սակայն օպերան հաջողություն չունեցավ: Իտալական օպերաներին սովոր հանդիսա-

տեսը պատրաստ չէր լիովին ընկալելու և յուրացնելու ռուսական ազգային երաժշտական ստեղծագործությունը: Մամուլը հեղեղվեց քննադատների սուր հոգվածներով, որոնցում գերազնահատված էին, չափազանցված օպերայի թիրությունները, անտեսված, լուծյան մատնված նրա առավելությունները: Մեծ երաժիշտը տևական հուսահատություն ապրեց, կասկած օպերան չընդունելու, մենակության, աղքատության հետ: Նա մահացավ դինավորական հոսպիտալում: Ռիմսկի-Կորսակովը կարգավորեց Մուսորգսկու ձեռագրերը և որոշ չափով լրացրեց: Մուսորգսկու «Բորիս Գոդունով» և «Սովանչինա» օպերաները հետագայում չիջան ռուսական (նաև օտար) օպերային բեմահարթակներից, մտան համաշխարհային գանձարանը: Ա. Բորոդինի սիմֆոնիաները, ողմանները և առանձնապես «Իլխան Իզոր» միակ օպերան, որը բեմադրվեց նրա մահից հետո, ներթափանցված են ջերմ հայրենասիրությամբ, ռուս ժողովրդի ազատության ծարավով, բռնության դատապարտմամբ: «Բորոդինի տաղանդը, - գրել է նրա մասին մի ժամանակակից, - Հզոր է և ապշեցուցիչ, ինչպես սիմֆոնիայում, այնպես էլ օպերայում և ողմանում»: Նրա գլխավոր հատկություններն են՝ վիթխարի ուժը և լայնքը, հսկայական թափը, սրընթացությունն ու պոռթկունությունը՝ միակցված ապշեցուցիչ կրքոտության, քնքշության և գեղեցկության հետ: Բորոդինը ոչ միայն նշանավոր երաժիշտ էր, այլև տաղանդավոր գիտնական՝ քիմիայի պրոֆեսոր:

Մեծ է և հարուստ երաժշտական գործիչ Ն. Ռիմսկի-Կորսակովի երաժշտական ժառանգությունը: Նա գրել է 15 օպերա, սիմֆոնիաներ, ողմաններ և այլ ժանրի երաժշտական ստեղծագործություններ: Ռիմսկի-Կորսակովի «Մաղկո», «Ձյունանուշիկը», «Մայիսյան գիշեր», «Թագավորի հարսնացուն» օպերաները մեծ ժողովրդականություն են վայելում ոչ միայն ռուսական օպերասեր հասարակության շրջանում, այլև արտասահմանում: 1873 թ. բեմադրվեց Ռիմսկի-Կորսակովի առաջին «Պսկովիտյանկա» օպերան, որը դարձավ նրա գլուխգործոցը և դասվեց Գլինկայի օպերաների շարքում: Ռիմսկի-Կորսակովը ոչ միայն նշանավոր երաժիշտ էր, այլև աչքի ընկնող մանկավարժ, որը դաստիարակեց երաժիշտների և դերասանների մի ամբողջ համաստեղություն: «Հզոր խումբ» երաժշտական գործունեությունը այնքան վառ իրադարձություն էր ռուսական ազգային մշակույթի մեջ, որ ժամանակակիցները խոսում էին 60-70-ական թթ. «երաժշտության հեղափոխության» մասին: «Հզոր խումբը» փայլուն կատարեց իր առաքելությունը և ռուսական մշակույթի պատմության մեջ վերջնականապես հաստատեց ազգային սկզբունքները: Զգալի տեղաշարժեր տեղի ունեցան երաժշտական կրթության համակարգում: Պետերբուրգում և Մոսկվայում 60-ական թվականներին բացվեցին ռուսական առա-

ջին կոնսերվատորիաները հիանալի երաժշտական գործիչներ՝ Անտոն Գրիգորևիչ և Նիկոլայ Գրիգորևիչ Ռուբինշտեյնների ղեկավարությամբ, որոնք զգալիորեն նպաստեցին երաժշտական մշակույթի զարգացմանը և տարածմանը:

Պետերբուրգում կոնսերվատորիան բացվեց 1862 թվականին, Մոսկվայում՝ 1866 թվականին:

Ռուսական ազգային ու համաշխարհային երաժշտության ամենակարևորուն գործիչներից մեկը՝ Պյոտր Իլյիչ Չայկովսկին (1840-1893) չէր մտնում «Հողոր խմբի» մեջ: Նրա վեց սիմֆոնիաները, օպերաները՝ «Եվգենի Օնեգին», «Պիկովայա դամա», «Մադեպա», «Օռլեանի կույսը», բալետները՝ «Կարապի լիճը», «Քնած գեղեցկուհին», «Շչեկուլուչիկ», ու մանսները դարձան ռուսական երաժշտական արվեստի գագաթնակետը: «Ինձ թվում է, - գրել է նա, - որ ես իրոք օժտված եմ այն ունակությամբ, որ երաժշտության միջոցով ճշմարտացի, անկեղծ և հասարակ կերպով արտահայտեմ այն զգացմունքները, տրամադրությունները և կերպարները, որոնք ներշնչում է տեքստը: Այդ իմաստով ես ունակ եմ և ընդհանուր մարդ»: Պ. Չայկովսկու օպերաները, բալետները, սիմֆոնիաները համաշխարհային ճանաչում ստացան, նրա ստեղծագործությունները շատ մեծ ժողովրդականություն են վայելում աշխարհի շատ երկրներում:

19-րդ դարի 80-90-ական թթ. աստիճանաբար ծաղկում էր ապրում երաժիշտների նոր սերնդի՝ Սերգեյ Իվանովիչ Տանենի, Ալեքսանդր Կոնստանտինովիչ Գլազունովի, Անատոլի Կոնստանտինովիչ Լյադովի, Անտոն Ստեպանովիչ Արենսկու ստեղծագործությունները: Լայն ճանաչում են ստանում երիտասարդ երաժիշտներ Սերգեյ Վասիլևիչ Ռախմանինովը և Ալեքսանդր Նիկոլաևիչ Սկրյաբինը: Երաժշտական մշակույթի աննախագեղ զարգացումը ուղեկցվում էր կատարողական արվեստի համարժեք վերելքով: Պետերբուրգի Մարինյան օպերային թատրոնը զարգարում էին նշանավոր երգիչներ Վ. Պետրովը, Ե. Լավրովսկայան, Դ. Լեոնովան, իսկ Մոսկվայի Մեծ թատրոնում երգում էին Պ. Նոլկովը, Բ. Կորսովը:

19-րդ դ. երկրորդ կեսին զեղանկարչական արվեստի մեջ նույնպես վերջնականապես հաստատվեց ուսուցիչները՝ ժողովրդի կյանքի ճշմարտացի և բազմակողմանի արտացոլումը: Արվեստի կենտրոնական թեման դարձավ ժողովուրդը, ոչ միայն հարստահարվող ու տառապող, այլև պատմություն կերտող, մարտիկ-ժողովուրդը, կյանքի ամեն լավագույնի ստեղծող ժողովուրդը: Արվեստի մեջ ուսուցիչների հաստատումը ընթանում էր պաշտոնական ուղղության դեմ մղվող համառ պայքարում: Այդ ուղղության ներկայացուցիչն էր Գեղարվեստների ակադեմիայի ղեկավարությունը, որն իր սաներին սովորեցնում էր, թե արվեստը բարձր է կյանքից, զեղանկարիչների ստեղծագործության համար առաջադրում Աստվա-

ծաշնչին վերաբերող առասպելական նյութեր և թեմաներ: 1863 թ. Ռուսաստանի զեղանկարչական կյանքում կատարվեց մի աննախագեղ իրադարձություն, որը վճռորոշ դեր խաղաց մշակույթի հետագա զարգացման գործում: Գեղարվեստների ակադեմիայի 14 շրջանավարտներ դիպլոմներ ստանալու համար հրաժարվեցին նկարել պարտադիր նկարներ սկանդինավյան դիցարանության սյուժեներով: Նրանք համոզված էին, որ ժամանակակից Ռուսաստանի կյանքում իրենց վրձինների համար առկա են ավելի հրատապ թեմաներ: Չստանալով ազատ ընտրության իրավունք՝ նրանք թողեցին Ակադեմիան և հիմնեցին Պետերբուրգի նկարիչների արտել, այն 1870 թ. վերանվանվեց գեղարվեստական շրջիկ ցուցահանդեսների ընկերություն՝ միավորելով Ռուսաստանի լավագույն նկարիչներին և մեծ դեր խաղալով կերպարվեստի զարգացման գործում: Այդ ցուցահանդեսները կոչվում էին շրջիկ-չարժական, որովհետև ցուցադրվում էին ոչ միայն Պետերբուրգում ու Մոսկվայում, այլև Ռուսաստանի տարբեր քաղաքներում: Դա ռուս նկարիչների կողմից կազմակերպված յուրատեսակ ժողովրդագնացություն էր, որը դարձավ խոշորագույն իրադարձություն ռուսական նահանգների ու գավառների մշակութային կյանքում: Շարժական ցուցահանդեսների ընկերության գաղափարական առաջնորդը դարձավ հիանալի նկարիչ և արվեստի տեսաբան Իվան Նիկոլաևիչ Կրամսկոյը (1837-1887), որը պայքարում էր, այսպես կոչված, «մաքուր արվեստի» դեմ: Եվ օրինաչափ է, որ այդ նկարչական կենտրոնը ստացավ «Կրամսկոյի ակադեմիա» անվանումը: Նա ռուսական զեղանկարչության պատմության մեջ մտավ իբրև դիմանկարների խոշորագույն վարպետ: Ստեղծեց ռուս գրողների, նկարիչների, հասարակական գործիչների՝ Լ. Տոլստոյի, Մ. Սալտիկով-Շչեդրինի, Ն. Նեկրասովի, Ի. Շիշկինի դիմանկարների մի ամբողջ պատկերասրահ: Ընկերության առաջին կանոնադրության տակ ստորագրել էին նշանավոր նկարիչներ ու տեսաբաններ Նիկոլայ Նիկոլաևիչ Գեն, Ալեքսեյ Կոնդրատևիչ Սավրասովը, Իվան Իվանովիչ Շիշկինը, Կոնստանտին Եգորովիչ և Վլադիմիր Եգորովիչ Մակովսկի եղբայրները, Վասիլի Գրիգորևիչ Պերովը, մի փոքր ուշ նրանց միացան Իլյա Եֆիմովիչ Ռեպինը, Վասիլի Իվանովիչ Սուրիկովը, Վիկտոր Միխայլովիչ և Ապպոլինարի Միխայլովիչ Վասնեցով եղբայրները, Նիկոլայ Ալեքսանդրովիչ Յարոշենկոն, Կոնստանտին Ապոլոնովիչ Սավիցկին: Իսկ 80-ական թթ. կեսերից ցուցահանդեսներին մասնակցեցին Վալենտին Ալեքսանդրովիչ Սերովը, Իսահակ Իլյիչ Լևիտանը, Վասիլի Դմիտրևիչ Պոլենովը: Այդ ժամանակի ականավոր նկարիչ էր Վասիլի Գրիգորևիչ Պերովը (1834-1882), որն իր ստեղծագործություններում մեծ վարպետությամբ և համոզիչ կերպով ցուցադրում է ժողովրդի ծանր կյանքը: «Ջատկի թափորը գյուղում» կտավում նկարիչը ստեղծել է ռուսական գյուղի

տոն օրը, աղքատությունը, անսթափ հարբեցողությունը, երգիծանքով պատկերել գյուղական հոգևորականությունը, սրբապատկերը շրջված տանող ծերուկին: Իր դրամատիզմով, անասման վշտով զարմացնում է Պերովի լավագույն նկարներից մեկը՝ «Հանգուցյալի հուղարկավորությունը», որը պատմում է առանց կերակրողի մնացած ընտանիքի ողբերգական ճակատագրի մասին: Մեծ հռչակ են վայելում նրա «Վերջին գինետունը ուղեկալի մոտ», «Ծերունի ծնողները որդու շիրմի մոտ» նկարները: Նուրբ հումորով ու լիրիզմով, բնության նկատմամբ սիրով են ներթափանցված «Ռոսորդները հանգստի պահին», «Զկնորություն» նկարները: Պերովի կտավները պատկանում են ռուսական ազգային արվեստի լավագույն նմուշներին:

19-րդ դարի երկրորդ կեսի նշանավոր գեղանկարիչների մեջ առանձնանում էին ռեալիստական ուղղության կարկառուն ներկայացուցիչներ Ի. Ռեպինը (1844-1930) ու Վ. Սուրիկովը (1848-1916), որոնց լավագույն կտավները ըստ արժանվույն դարձան համաշխարհային գեղարվեստի գանձարանի գլուխգործոցներ: Հասարակական առավել մեծ հնչեղություն ունեցան Ռեպինի բազմաթանր նկարները: Ռեպինը ծնվել է ուկրաինական ոչ մեծ քաղաք Չուգուևոյում, ղինվորական բնակավայրում ապրող ընտանիքում: Նրան հաջողվեց ընդունվել Գեղարվեստների ակադեմիան, որտեղ նրա ուսուցիչը դարձավ Հայտնի մանկավարժ Ի. Զիստյակովը, որի սաները տարբեր ժամանակ եղել են փայլուն գեղանկարիչներ Վ. Սուրիկովը, Վ. Վասնեցովը, Մ. Վրուբելը, Վ. Սերովը: Ռեպինը կրել է Կրամսկոյի ազդեցությունը: Քննադատելով «մաքուր արվեստի» կողմնակիցներին նա գրել է. «Շրջապատող կյանքն ինձ շատ է հուզում, հանգիստ չի տալիս, հարմար է կտավի համար, իրականությունը չափազանց վրդովեցուցիչ է հանգիստ խղճով նախընտրելի ասեղնագործելու համար, դա թողնենք բարեկիրթ օրիորդներին»: Ռեպինը դարձավ շարժական գեղանկարիչների («պերեդվիժնիկների») դրոշակակիրը, նրանց պարծանքը և փառքը: Նա գեղանկարչության բոլոր ժանրերի հիանալի վարպետ էր և յուրաքանչյուրում հասնում էր բարձունքի: Նրա ստեղծագործության կենտրոնական թեման ժողովուրդն էր, նրա կյանքը՝ իր բոլոր դժվարություններով, դրսևորումներով, առօրյայով: Մեծ նկարիչը ժողովրդին ներկայացնում է աշխատանքում ու պայքարում, փառաբանում ժողովրդի ազատության համար պայքարող գործիչներին: 1870 թ. երիտասարդ նկարիչը շրջագայեց Վոլգա գետով և բազմաթիվ էտյուդները օգտագործեց իր լավագույն ստեղծագործությունը՝ «Բուրլակները Վոլգայի վրա» կտավը նկարելու ժամանակ, որն ավարտեց 1872 թ.: Կտավն ընդունվեց որպես խոշոր իրադարձություն ռուսական ազգային գեղարվեստական կյանքում, դարձավ նոր ուղղության խորհրդանիշ կերպարվեստի մեջ: Ռեպինը գրել

է, որ դատավորն այժմ գեղջուկն է, դրա համար էլ «հարկավոր է վերարտադրել նրա պահանջները»: Հիանալի նկարների մի ամբողջ շարք Ռեպինը նվիրեց ռուսական հեղափոխական շարժմանը՝ «Պրոպագանդիստի ձեռքակալությունը», «Հավաքույթ», «Հրաժարում խոստովանությունից», «Զէին սպասում»: Կտավների մի շարք էլ նվիրված է պատմական թեմաներին՝ «Թագուհի Սոֆյա», «Իվան Ահեղը և նրա որդի Իվանը 1581 թ. նոյեմբերի 16-ին», «Զապորոժցիները գրում են պատասխան թուրքական սուլթանին»: Նա պատկերում է ժողովրդի դյուցազնական ուժը, նրա համախմբվածությունը, ազատասիրությունը: Ռեպինը ստեղծեց հիանալի դիմանկարների յուրատեսակ պատկերասրահ՝ գիտնականներ Պիրոգով, Սեչենով, գրողներ Տոլստոյ, Տուրգենև, Գարչին, Երաժիշտ-կոմպոզիտորներ Գլինկա, Մուսորգսկի, գեղանկարիչներ Կրամսկոյ, Սուրիկով՝ գտնելով յուրաքանչյուրի համար նոր գույներ և երանգներ: 20-րդ դարի սկզբին Ռեպինը ստացավ պատվեր՝ նկարելու «Պետական խորհրդի հանդիսավոր նիստի» խմբակային ամբողջական կտավը: Նա կարողացավ այդ մեծ կտավի վրա ներկայացնել պետական առանձին գործիչների բնավորությունը և քաղաքական դիմագծերը: Դրանց մեջ էին Հայտնի դեմքեր՝ Ս. Վիտտեն, Կ. Պրեդոնոսցևը, Պ. Սեմյոնով Տյան-Շանսկին: Թեև Նիկոլայ Երկրորդը քիչ նկատելի է, այնուամենայնիվ, ներկայացված է նրա ճաշակորեն և ամբողջացնում է նկարը: Վարպետությունը այնպիսին է, որ տեսանելի չէ վարպետությունը, ասում էր Լ. Տոլստոյը Ռեպինի մասին: Ռեպինի ստեղծագործությունը մի ամբողջ պատմափուլ է կերպարվեստի դարգացման մեջ: Նրա նկարները լուրջ ներդրում են ոչ միայն ռուսական ազգային, այլև համաշխարհային գեղարվեստի մշակույթում:

Վ. Սուրիկովը ծնվել է Կրասնոյարսկում, կողակային ընտանիքում: Նրա ստեղծագործական ծաղկման ժամանակաշրջանը համընկավ 19-րդ դարի 80-ականներին, երբ ստեղծեց իր ամենահայտնի պատմական նկարները՝ «Ստրելեցների մահապատժի առավոտը», «Մենչիկովը Բերյոզովում», «Բոյարուհի Մորոզովան», «Սիրիբի նվաճումը Երմակ Տիմոֆեևիչի կողմից», «Ստեփան Ռադին», որոնք դարձան ռուսական և համաշխարհային պատմական գեղանկարչության գլուխգործոցները: Սուրիկովին հետաքրքրում էր ռուս ժողովրդի դժվար ու բարդ ճակատագիրը, ոգևորում ժողովրդի հերոսական անցյալը: Վ. Վասնեցովի (1848-1926) ստեղծագործությունը սերտորեն կապված է ռուսական ժողովրդական հեթաթեմների, բիլինաների հետ, որոնց սյուժեները հիմք են դարձել նրա կտավների համար: Լավագույն նկարները՝ «Այլոնուշկան» և հատկապես «Դյուցազունները»՝ ռուսական բիլինային փյապզրոթյան սիրելի հերոսները հանդիսանում են բազմաթիվ թշնամիներից հայրենիքի ու հարազատ ժողովրդի պաշտպաններ: Երաժշտի որդի Վ. Սերովը (1865-1911)

գերազանցապես նկարել է անդուզական պեյզաժներ, պատմական թեմաներով կտավներ, միաժամանակ աշխատել որպես թատրոնի նկարիչ: Սակայն Սերովին փառք ու ճանաչում բերեցին նրա դիմանկարները: Մի քանի տարի Սերովը դասավանդեց Մոսկվայի գեղանկարչական ուսումնարանում: Նա պահանջկոտ մանկավարժ էր, վրձնի շատ նշանավոր և խոշորագույն վարպետներ իրենց համարում էին Սերովի աշակերտներ, այդ թվում՝ հայ գեղանկարչության նահապետ Մարտիրոս Սարյանը, Կուզնեցովը, Կ. Պետրով-Վոդկինը: Սերովի հիանալի դիմանկարներից են «Արևից լուսավորված աղջիկը», «Աղջիկը դեղձերի հետ», որոնք դասվեցին ուսական և համաշխարհային գեղանկարչության շարքը: Պեյզաժային գեղանկարչության առաջնիթացի գործում մեծ դեր խաղացին Ա. Սավրասովը (1830-1897), Ի. Շիշկինը (1832-1898), Ա. Կուլինջին (1841-1910): 19-րդ դարի ուսական պեյզաժային գեղանկարչությունը իր բարձրակետին հասավ Սավրասովի աշակերտ Ի. Լևիտանի (1860-1900) ստեղծագործության մեջ: Հիշարժան են կյանքից վաղաժամ հեռացած նկարչի «Ոսկե աշուն», «Անձրևից հետո», «Գիշերը Վոլգայի վրա» և այլ կտավներ: Կյանքի վերջին տարիներին Լևիտանը ուշադրություն դարձրեց Ֆրանսիայի նկարիչ-իմպրեսիոնիստների՝ է. Մանեի, Կ. Մոնեի, Կ. Պիսարրոյի ստեղծագործությունների վրա: Նա հասկացավ ու համոզվեց, որ իր և նրանց ստեղծագործության մեջ շատ են ընդհանրությունները, որ իրենց ստեղծագործական ուղիները ընթանում են միևնույն ճանապարհով: Համաշխարհային ճանաչման արժանացան ուսական նկարչական դպրոցի հանճարեղ ծովանկարիչ հայազգի Հովհաննես Այվազովսկու չգերազանցված կտավները:

Գրականության, երաժշտության, գեղանկարչության ասպարեզում ստեղծած համաշխարհային կոթողները նպաստեցին թատերական արվեստի հետագա զարգացմանը, քանզի նրա բոլոր ճյուղերը և ուղղությունները ներգործում էին միմյանց վրա, փոխկապակցվում, որից շահում էր ազգային մշակույթը: Եվ օրինաչափ է, որ թատերական արվեստը հասավ մեծ բարձրության: Ընդհանրապես հետոնֆորմյան ժամանակաշրջանից սկսեցին առանձնահատուկ տեղ հատկացնել թատերական արվեստին. թատրոնը դառնում էր հրապարակային միակ ու մեծ միջավայրը, որտեղ թատերասեր հանրությունը կարող էր ազատ և անկաշկանդ իր վերաբերմունքը արտահայտել այս կամ այն երևույթի նկատմամբ, ողջունել հայրենասիրությունը, ազնվությունը, մարդասիրությունը, դատապարտել խարդավանքը, կեղծիքը, խաբուսությունը, գործող հասարակական-քաղաքական համակարգի խոցելի ու անընդունելի կողմերը: Հատկապես նշանակելի էր թատրոնի դերը նահանգներում ու գավառներում, թատրոններ գործում էին ավելի քան 100 քաղաքներում: 19-րդ

դարի 60-ական թթ. վերջին գավառային թատրոններում բեմադրվեցին Ա. Օստրովսկու 23, Գոգոլի 6, Տուրգենևի 4 պիեսները: 1863 թ. ամենուր թույլատրեցին Ա. Գրիբոյեդովի «Նելքից պատուհաս» կատակերգության բեմադրությունը: 19-րդ դարի 80-90-ական թթ. սկսեցին բեմադրել Ֆ. Դոստոևսկու և Ա. Չեխովի ստեղծագործությունները: Շեքսպիրի պիեսներից բոլորից շատ բեմադրում էին «Համլետը», մեծ տեղ էին հատկացնում Շիլլերի, Հյուգոյի, Դյունմա-Հոր և արտասահմանյան այլ հեղինակների դրամաները: Մայրաքաղաքների թատերական կենտրոններից բացի, կենտրոններ էին համարվում նաև Կազանը, Սարատովը, Աստրախանը, Վորոնեժը: 19-րդ դ. երկրորդ կեսի ուսական թատրոնի պատմությունը սերտորեն կապված էր Ա. Օստրովսկու անվան հետ, որը ստեղծեց մոտ հիսուն պիես՝ «Ամպրոպ», «Անտառ», «Գայլեր և ոչխարներ», «Մեր մարդիկ են, յուր կգնանք», «Կատաղի փողեր», «Եկամտաբեր պաշտոն» և այլն, որոնցում նա խոր և ճշմարտացիորեն պատկերել է ուսական կյանքը, որոնք մինչև այսօր էլ բեմադրվում են: Ժամանակին Դորբոյուբովը բացահայտել է Օստրովսկու պիեսների հասարակական խոշոր նշանակությունը, որոնք անխնա խարազանել են կաշառակերների, գանձագողների, «մութ և խավարի թագավորությունը»: Օստրովսկու պիեսների բեմադրությունը փառք բերեց Մոսկվայի Փոքր թատրոնին: Փոքր թատրոնը անվիճելիորեն զբաղեցնում էր առաջնակարգ տեղ թատերական աշխարհում, որտեղ պիեսների բեմադրությունը ղեկավարում էր ինքը՝ Օստրովսկին: Ռուս նշանավոր գրող Ի. Գոնչարովը Օստրովսկուն ուղարկած նամակում գրում է. «Դուք մենակ կառուցել եք այն շենքը, որի անկյունաքարերը դրեցին Ֆոնվիզինը, Գրիբոյեդովը, Գոգոլը: Բայց միայն ձեզնից հետո մենք՝ ուսանելու, կարող ենք հպարտությանը ասել՝ մենք ունենք մեր ուսական, ազգային թատրոնը»: Օստրովսկին հանդես եկավ որպես նորարար դրամատուրգիայում, թատերական արվեստի տեսաբան, դերասանների դաստիարակ ու թատերական գործի կազմակերպիչ: Մեծ հաջողությամբ էր Պետերբուրգի Ալեքսանդրյան թատրոնը բեմադրում ուսական ու արևմտամետրոպոլիտանական հեղինակների պիեսները: Թատերական արվեստի գեղարվեստական նվաճումները սերտորեն առնչվեցին ուս մեծանուն դերասանների պրոֆեսիոնալ փայլուն դերակատարումների հետ, որոնք անմիջապես նվաճեցին թատերասեր հասարակայնության համակրանքը, հանդիսատեսի անկեղծ սերը: Թատերական աշխարհում ու դերասանական միջավայրում մեծ էր Սադովսկիների, Սամոյլովների, Վասիլենների գերդաստանների համբավը, որոնց ներկայացուցիչները հիացնում էին հանդիսատեսին, հատկապես Ա. Օստրովսկու պիեսների հերոսների դերակատարումներով: Ավելին, դրանք բեմադրվում էին նաև նահանգային ու գավառային բեմահարթակներում: Հիշարժան է դերասան

Ն. Ռիբակովը, որի մասին ինքը՝ Օստրովսկին խոսում էր հիացմունքով: 19-րդ դարի կեսերից Փոքր թատրոնում սկսեց վառ փայլատակել Պ. Սաղովսկու դերասանական տաղանդը: Նա իր դերասանական ուղին սկսեց նահանգում: Կազանի բեմահարթակում նրան տեսավ մեծանուն Շչեպկինը և հրավիրեց Փոքր թատրոն: Սաղովսկին անմիջապես գրավեց Մոսկվայի թատերասեր հասարակայնության անկեղծ համակրանքը: Շչեպկինը ասում էր, որ Սաղովսկին այն եզակի դերասաններից է, ով «յուրացրեց գոգոյան լեզվի գաղտնիքը»: Գոգոյի «Ռեկորդ»-ում Շչեպկինը խաղում էր քաղաքագլխի (Գորոդնիչևի), իսկ Սաղովսկին՝ Օսիպի դերը: 1863 թ. Շչեպկինը մահացավ և մեծ մասամբ Սաղովսկու շնորհիվ Փոքր թատրոնում պահպանվեցին ու կատարելագործվեցին չչեպկինյան լավագույն ավանդույթները: Փոքր թատրոնի բեմում հռչակվեցին հիանալի դերասաններ՝ Գ. Ֆեդոտովը, Ա. Յուժինը և առանձնապես հանդիսատեսների սիրելի մեծ դերասանուհի Մ. Երմոլովան (1853-1928), որի խաղը հիացնում էր նրանց, սեր առաջացնում հայրենիքի նկատմամբ, բողոք ընդդեմ ճնշման ու բռնության: Հատկանշական է, որ Ռեպինը և Երմոլովան այն եզակի արվեստագետներից էին, որոնք տեսան ոչ միայն ինքնակալության տապալումը, այլև հոկտեմբերյան հեղաշրջումը, գործեցին ու նպաստեցին արդեն խորհրդային ժամանակաշրջանի ուսական մշակույթի հետագա զարգացմանը: Երմոլովան փայլուն կատարեց Ա. Յարովսկու «Ամպրոպ» պիեսի հերոսուհի Կատերինայի դերը և միանգամից դարձավ հանդիսատեսի սիրելի ու հանրաճանաչ դերասանուհին: Երմոլովան 1876 թ. իր բենեֆիսի կապակցությամբ խաղաց Լաուրենսիայի դերը իսպանացի դրամատուրգ Լոպե դե Վեգայի հայտնի «Ոչխարի աղբյուր» («Овечьий источник») պիեսում: Հասարակ ազդեցություն, որը ժողովրդին բարձրացնում էր կեղեքիչների դեմ ապստամբության, ամբողջովին զրսևորվեց մեծ դերասանուհու տաղանդը: Բեմադրության հաջողությունը այնքան մեծ էր, որ իշխանությունները դրա մեջ տեսան քաղաքական ցույցի զրսևորումներ և պիեսը հանվեց բեմադրությունից: Երմոլովան բազում դժվարություններ ու խոչընդոտներ հաղթահարելուց հետո թույլտվություն ստացավ բեմադրելու Ֆ. Շիլլերի «Օդեսանի կույսը» պիեսը: 1884 թ. պրեմիերան վերջապես կայացավ և Երմոլովան խաղաց Ժաննա դը Արկի դերը շուրջ 18 տարի: Նրա դերասանական խաղացանկը բազմազան էր ու բազմաժանր՝ հերոսականից մինչև ողբերգական: Հատկապես մեծ փայլով էր նա կատարում կանանց դերերը՝ Կատերինան «Ամպրոպ»-ում, Օֆելիան «Համլետ»-ում: Եթե Սաղովսկին շարունակեց ու զարգացրեց Շչեպկինի, ապա Երմոլովան՝ Մոչալովի ավանդույթները: Թատերասեր հասարակայնության ուշադրության տեսադաշտից չվրիպեց մեծանուն դերասանուհի Պ. Ստրեպետովայի (1850-1903) անունը: Նրա

դերասանական կյանքը անցավ ոչ հարթ ու համաչափ, միայն Կազանում նրան վստահեցին Կատերինայի դերը «Ամպրոպ»-ում, որից հետո սկսվեց նրա ստեղծագործական վերելքը: «Ոչ թե խաղում է, այլ ապրում բեմի վրա», - ասում էին նրա մասին քննադատները: 1881 թ. Ստրեպետովային հրավիրեցին Պետերբուրգի Ալեքսանդրյան թատրոն: Այնտեղ նա խաղում էր Օստրովսկու և Ջեխովի պիեսներում: Սակայն իր ուղղամիտ ու կտրուկ բնավորության համար տնօրինության հետ ընդհանուր լեզու չգտավ և 1890 թ. նա հեռացավ թատրոնից և ստեղծագործական-դերասանական կյանքը ավարտեց Կազանի, Դոնի Ռոստովի և այլ թատրոնների բեմերում: 1898 թ. բացվեց Մոսկվայի գեղարվեստական թատրոնը, որը գլխավորեցին Կ. Ստանիսլավսկին և Վ. Նեմիրովիչ-Դանչենկոն: Թատրոնը ծաղկում ապրեց 20-րդ դարի առաջին տարիներին, երբ ուսական թատրոնի պատմության մեջ սկսվեցին նոր ժամանակներ, նոր փուլ:

Ռուսական ազգային մշակույթի և արվեստի նշանավոր գործիչների հիանալի ստեղծագործությունները, թատերական դասական բեմադրությունները, մեծանուն դերասանների փայլուն դերակատարումները անմիջապես դառնում էին հրապարակային քննարկումների առարկա պարբերական մամուլում ու անկախ իրարամերժ գնահատականներից և հակասական մեկնարանություններից՝ միապետական-պահպանողական գաղափարախոսությունից մինչև լիբերալ ազատականը, հեղափոխական-ժողովրդավարական մտքից մինչև մարքսիստական ուսմունքը ընդհանուր առմամբ ու ըստ էության նպաստում էին որպեսզի գեղարվեստական այդ կոթողները գտնվեն հասարակության ուշադրության կիզակետում: Ընդհանրապես պարբերական մամուլում հրապարակավ տպագրված հոդվածները, գրախոսությունները, գրաքննադատությունը և իհարկե գրաքննությունը չափազանց խիստ էր ու թերևս կանխակալ հատկապես թատրոնի դերասանների նկատմամբ, որոնցից պահանջում էին «ժամանակի ոգուն» համապատասխանող պիեսներ ու արվեստի ստեղծագործություններ:

19-րդ դարի առաջին կեսին հրատարակված ու տարբեր պատճառներով դադարեցված, կասեցված պարբերական մամուլին՝ «Վեստնիկ եվրոպի» (1802-1830 թթ.), «Մայակ» (1840-1845 թթ.), «Մոսկվիտյանին» (1841-1856 թթ.), «Մոսկովսկի տելեգրաֆ» (1825-1834 թթ.), «Տելեսկոպ» (1831-1836 թթ.) փոխարինելու եկան նոր պարբերականներ, հատկապես ամսագրեր, որոնց մեջ առանձնանում էին «Օտեչեստվեննիյե գապիսկին» ամսագրերը, որոնք ի դեպ հրատարակվում էին դարի կեսից: Այս ամսագրերը, հաղթահարելով գրաքննության խոչընդոտները, խոչոր դեր խաղացին ազգային մշակույթի, գրական լեզվի, գեղարվեստական գրա-

կանության զարգացման գործում: «Օտեչեստվեննիյե զապիսկի» Հանդեսում տարիներ շարունակ աշխատակցում էր Վ. Բելինսկին, որի նախաձեռնությամբ ամսագրին աշխատակցեցին Ա. Գերցենը, Ն. Օզարյովը, Տ. Գրանովսկին, Մ. Լերմոնտովը, Ն. Նեկրասովը, Ի. Տուրգենևը, Մ. Սալտիկով-Շչեղրինը: Ինչ վերաբերում է «Սովրեմեննիկին», ապա նրա առաջին հրատարակիչը դարձավ մեծ բանաստեղծ Ա. Պուշկինը: «Սովրեմեննիկը» հրատարակ եկավ որպես գրական ու հասարակական-քաղաքական Հանդես: Պուշկինի մահից հետո «Սովրեմեննիկի» հրատարակման իրավունքն անցավ Պ. Պլետնևին, Ի. Պանսևին, իսկ իրավական խմբագիր համարվում էր Պետերբուրգի համալսարանի պրոֆեսոր Ա. Նիկիտենկոն: 40-ական թթ. Հանդեսին աշխատակցում էին Գերցենը, Օզարյովը, Գոնչարովը, Տուրգենևը, Դոստոևսկին, նշանավոր պատմաբան Մ. Սոլովյովը:

«Սովրեմեննիկ»-ում տպագրվեց Չերնիշևսկու «Ի՞նչ անել» վեպը, Սալտիկով-Շչեղրինի, Ուսպենսկու, Շելգունովի, ուրիշ նշանավոր գրողների երկերը և հասարակական գործիչների հրատարակախոսական հոդվածները: «Սովրեմեննիկ»-ի տպաքանակը անցնում էր յոթ հազարից և այդ առումով ամսագիրը գերազանցում էր մյուս հանդեսներին: 1862 թ. «Սովրեմեննիկ»-ի հրատարակումը 8 ամսով կասեցվեց, իսկ 1863 թ. վերահրատարակումից հետո ամսագրում ղեկավար դերը անցավ Սալտիկով-Շչեղրինին: 1866 թ. Կարակոզովի կողմից Ալեքսանդր Երկրորդի կյանքի դեմ կատարած մահափորձից հետո «Սովրեմեննիկ»-ը վերջնականապես փակվեց: Իր 30-ամյա գոյության ընթացքում ամսագիրը մեծ ազդեցություն գործեց Ռուսաստանի մշակույթի զարգացման վրա, կարևոր դեր խաղաց ռուսական մամուլի պատմության մեջ:

1868 թ. Նեկրասովը և Սալտիկով-Շչեղրինը վարձակալեցին «Օտեչեստվեննիյե զապիսկին» և ամսագրի պատմության մեջ սկսվեց նոր վերելք, որտեղ տպագրվեցին Սալտիկով-Շչեղրինի ստեղծագործությունները, Նեկրասովի բանաստեղծությունները, Գ. Ուսպենսկու նոթերը, փայլատակեց Ն. Միխայլովսկու տաղանդը, որը Նեկրասովի մահից հետո 1877 թ. դարձավ ամսագրի խմբագիրներից մեկը: «Օտեչեստվեննիյե զապիսկի» ամսագրի ճանաչումը հասարակության մեջ այնքան մեծ էր, որ իշխանությունը մինչև 1884 թ. չհամարձակվեց փակել Հանդեսը: 1876 թ. Հիմնադրվեց «Ռուսսկոյե բոգատստվո» ամսագիրը, որը որդեգրեց նարոդնիկական ուղղվածություն, ևրը 1879 թ. ամսագրի զաղափարական ղեկավար դարձավ Միխայլովսկին: «Ռուսսկոյե բոգատստվո» ամսագրում տպագրվում էին Գ. Ուսպենսկու, Վ. Գարշինի, Վ. Կորոլենկոյի, Մ. Գորկու, Ա. Կուպրինի ստեղծագործությունները: Սակայն հասարակական կյանքում ամսագիրը, «Օտեչեստվեննիյե զապիսկի» Հանդեսի համեմատությամբ, խաղում էր ավելի համեստ դեր: Մինչև 1918 թ. ամսագիրը կարողացավ հետևողականորեն պաշտպանել իր հասարակական դիրքորոշումը,

որդեգրած քաղաքական գիծը, խուսափել ծայրահեղությունից, որի շնորհիվ «Ռուսսկոյե բոգատստվոն» չդարձավ ո՛չ կառավարության, ո՛չ էլ հասարակական կարծիքի կույր գործիքը:

19-րդ դ. 60-ական թթ. սկզբին Մոսկվայում Մ. Կատկովի խմբագրությամբ հրատարակվեց «Ռուսսկի վեստնիկ» ամսագիրը: Բանի դեռ ամսագիրը պաշտպանում էր սահմանադրություն ընդունելու պահանջը, նրան աշխատակցում էին լիբերալ-ազատական գաղափարներ դավանող Կ. Կավելինը, Ա. Ունկովսկին, Ս. Սոլովյովը, տպագրում էին իրենց ստեղծագործությունները Սալտիկով-Շչեղրինը, Տուրգենևը, Լ. Տոլստոյը: Բայց 1862 թ. ամսագիրը կտրուկ փոխեց իր հասարակական դիրքորոշումը, անցավ պահպանողականների ճամբարը ու կորցրեց իր նախկին ազդեցությունը: Միաժամանակ Կատկովը կառավարության անմիջական աջակցությամբ իրավունք ստացավ վարձակալելու Մոսկվայի համալսարանին պատկանող «Մոսկովսկիյե վեդոմոստի» թերթը, որից հետո պահանջեց երկրում հաստատել «ուժեղ իշխանություն», վճռական գործողություններով կործանիչ հարված հասցնել «նիհիլիստներին», այսինքն՝ հեղափոխականներին, մեղադրեց կառավարությանը անվճռականության մեջ: Կատկովը իրեն պահում էր իշխանությունից չափազանց անկախ, նրա թերթի ազդեցությունը հատկապես մեծ էր Ալեքսանդր Երրորդի թագավորության տարիներին: Կատկովը և օրեր-դատախազ Կ. Պորեդոնոսցևը դարձան միապետական համակարգի անհրաժեշտության համոզված տեսաբաններ, ինքնակալության պահպանման գաղափարական ջատագույններ: Պորեդոնոսցևը համոզված էր, որ Ռուսաստանում պետությունը և եկեղեցին պետք է մշտապես գտնվեն սերտ, անբաժանելի կապի մեջ, նրանց տարանջատումը, կազմալուծումը կործանարար է թե՛ պետության, թե՛ եկեղեցու համար, քանզի «անհավատ պետությունը» ոչ այլ ինչ է, եթե ոչ անիրագործելի ուտոպիա, որովհետև անհավատությունը պետության ուղղակի ժխտումն է: Օրեր-դատախազն ասում էր, որ կառավարությունը իր վրա է վերցնում եկեղեցու պաշտպանությունը, ապահովում է նրա գործունեության նյութական կողմը: Իր հերթին, եկեղեցին պետք է գործի պետության ներսում գոյություն ունեցող կանոններին համապատասխան ու ունկնդրի «իմացող անձանց կարծիքները»: Կատկովի ու Պորեդոնոսցևի զաղափարական հայացքները ակունքվում են «պաշտոնական ժողովրդայնության տեսության» հետ, որը ղեռնա ուներ ամուր Հիմքեր հասարակության շրջանում: «Իսկ ի՞նչ է Սահմանադրությունը, - հարցնում է Պորեդոնոսցևը և նշում, - դրա պատասխանը մեզ տալիս է Արևմտյան Եվրոպան: Այնտեղ գոյություն ունեցող Սահմանադրությունների գեների էությունը ամեն տեսակի ան-

ճշտությունն է, ամեն տեսակի բանասարկությունների դեմքը... Եվ մեզ համար անօգտակար արևմտյան տեսակի այդ կեղծիքը, ի դժբախտություն մեզ, ի կործանումն մեզ, ցանկանում են մտցնել և մեզ մոտ: Ռուսաստանը ուժեղ է եղել ինքնակալության շնորհիվ, ժողովրդի ու նրա թագավորի միջև անսահման վստահության և սերտ կապի շնորհիվ... Իսկ դրա փոխարեն մեզ առաջարկում են ստեղծել խոսարան... Մենք առանց այն էլ տառապում ենք խոսարաններից...»: «Մեր ժամանակի մեծ կեղծիքը» հայտնի հոդվածում Պրեզիդենտը նշում էր, որ քաղաքական սկզբունքի մեջ ամենամեծ կեղծիքներից մեկը ժողովրդաիրիշխանությունն է, այն գաղափարը, թե յուրաքանչյուր իշխանություն ըստ է ժողովրդից, որից էլ ձևավորվեց պառլամենտարիզմի տեսությունը, ինչը մինչև այժմ մոլորություն մեջ է գցում այսպես կոչված մտավորականությունը և դժբախտաբար թափանցել է ուսուսանման գլուխները: Պրեզիդենտը խստագույնս քննադատում է պառլամենտարիզմը, քանզի նրա դրոշի վրա գրված «Ամեն ինչ հանուն բարօրության» կարգախոսը ոչ այլ ինչ է, եթե ոչ ամենակեղծ բանաձև, պառլամենտարիզմը եսասիրության հաղթանակն է, նրա բարձագույն արտահայտությունը: Պառլամենտարիզմը խարկանք է, որովհետև այդ տեսության համաձայն պետք է գերակայի բանական մեծամասնությունը, գործնականում գերիշխում են կուսակցության հինգ-վեց ղեկավարներ, նրանք փոփոխվելով գրավում են իշխանությունը: Ավելին, այդ տեսության համաձայն համոզմունքը հաստատվում է պարզ դատողություններով, պառլամենտական քննարկումների ժամանակ, այն գործնականում բնավ էլ կախված չէ քննարկումներից, այլ ուղղորդվում են ղեկավարների կամքով և անձնական շահերի մտահղացումներով: Տեսության համաձայն ժողովրդական ներկայացուցիչները նկատի ունեն միայն ժողովրդական բարօրությունը, գործնականում՝ նրանք ժողովրդի բարօրության պատրվակով գերազանցապես նկատի ունեն իրենց անձնական և իրենց բարեկամների բարօրությունը: Տեսության համաձայն նրանք պետք է լինեն լավագույն, սիրված քաղաքացիներից, ընտրողը ձայնը տալու է իր թեկնածուին, որովհետև ճանաչում ու վստահում է նրան, գործնականում՝ ընտրողը ձայնը տալիս է այն մարդու օգտին, որին մեծ մասամբ բոլորովին չի ճանաչում, բայց նրա մասին լսել է շահագրգռված կուսակցության ճառերից ու գոռոցներից: Պրեզիդենտը այս մոտեցումները և մեկնաբանությունները ոչ միայն իրենց մեջ պարունակում էին ռացիոնալ հատիկ, այլև մոտ էին իրականությանը: Մեծ էր Պրեզիդենտի գաղափարական ազդեցությունը ռուսական հասարակական կարծիքի ձևավորման վրա, նրան դասավանդելու համար հրավիրեցին Մոսկվայի համալսարան՝ քաղաքացիական իրավունքի ամբիոն,

վստահվեց իրավագիտություն դասավանդել ապագա կայսր Ալեքսանդր Երրորդին, որի հետ նա կարողացավ հաստատել ջերմ ու մտերմիկ հարաբերություններ: Պրեզիդենտի համար խորթ էին ու անընդունելի ռուսաստանյան այն «նորարարությունները», որոնք պատճենավորված էին արևմտաեվրոպական երկրներից: Ավելին, նրա համոզմամբ Եվրոպայի քաղաքական կյանքի հիմքերը և սկզբունքները անընդունելի են ընդհանրապես, իսկ Ռուսաստանում՝ հատկապես, որ դրանք միայն առաջացնում են քաոս ու խռովություն: Պրեզիդենտը և Կատկովը մնալով միապետության պաշտպանության ամենահամոզված ու ամենահեղինակավոր ներկայացուցիչներ՝ հետևողական պայքար ծավալեցին ինքնակալական համակարգի դեմ հանդես եկող բոլոր տեսակի ուսումնառների, տեսությունների, գաղափարախոսությունների դեմ: Եվ օրինաչափ է, որ Կատկովի մահից հետո նրա խմբագրած «Մոսկովսկիյե վեդոմոստի»-ն չփոխեց իր գաղափարական ուղղվածությունը և մնաց միապետական-ինքնակալական համակարգի պահպանման ջատագով: Հենց Կատկովի հզոր գաղափարակից Պրեզիդենտի անմիջական նախաձեռնությամբ փակվեց Մ. Սալտիկով-Շչեդրինի «Օտեչեստվեննիյե գապիսկի» ամսագիրը: Այսուհանդերձ ի հակակշիռ «Մոսկովսկիյե վեդոմոստի» թերթի Մոսկվայում 1863 թ. սկսեց հրատարակվել «Ռուսկիյե վեդոմոստի» թերթը, որի շուրջ համախմբվեցին ղեմավայրի գործիչները և լիբերալ-ազատական պրոֆեսուրան: Տարբեր ժամանակ «Ռուսկիյե վեդոմոստիին» աշխատակցել են՝ Պ. Լավրովը, Լ. Տոլստոյը, Մ. Սալտիկով-Շչեդրինը, Ն. Միխայլովսկին: Պարբերական մամուլի և հրապարակախոսության դարգացումը նպաստում էր պատմագիտական մտքի առաջընթացին, մանավանդ որ մասնագետ պատմաբաններին վաղուց արդեն չէր բավարարում Ն. Կարամզինի «Ռուսաստանյան պետության պատմություն» բազմահատոր աշխատությունը: 1851 թ. հրատարակվեց և պարբերաբար շարունակվեց Մոսկվայի համալսարանի երիտասարդ պրոֆեսոր Ս. Սոլովյովի (1820-1879) «Ռուսաստանի պատմությունը հնագույն ժամանակներից» գրքի առաջին հատորը: Վերջին՝ 29-րդ հատորը լույս տեսավ 1880 թ.: Սոլովյովի մահից հետո: Ռուսաստանի պատմության ուսումնասիրությունը հեղինակը հասցրել է մինչև 1775 թ. ռազմաքաղաքական իրադարձությունները: Պատմահամեմատական դուգահեռներ անցկացնելով Ռուսաստանի ու Արևմտյան Եվրոպայի երկրների անցած պատմական ուղիների միջև՝ Սոլովյովը նրանց ճակատագրերում իրավամբ տեսնում է շատ ընդհանրություններ, միաժամանակ չի անտեսում Ռուսաստանի պատմական ուղու առանձնահատկությունները: Սոլովյովի ընդունելի կարծիքով դա պայմանավորված էր Եվրոպայի և Ասիայի միջև գտնվելու, միջանկյալ դիրք գրավելու հան-

գամանքով ու տափաստանային քոչվոր-խաչնարածների դեմ Հարկադրված դարավոր պայքարով: Սկզբում Հարձակվում և գրոհում էր Ասիան, իսկ մոտավորապես 16-րդ դարից ինչպես ներկայացնում է Սուլովյովը, Հարձակման անցավ Ռուսաստանը՝ Եվրոպայի առաջնային միջնաբերդը Արևելքում: Սուլովյովի նյութառատ ու բովանդակալից, Հիմնարար «Ռուսաստանի պատմությունը» գրված է պատմագիտական բարձր մակարդակով, մասնագիտական պատշաճ ոճով և օրինաչափ է, որ առայսօր էլ պատմաբանները օգտագործում են այն թե՛ աղբյուրագիտական և թե՛ պատմագիտական տեսանկյունից: Սակայն գրքի շարադրանքը մի փոքր չոր է, թերևս պաշտոնական ու միշտ չէ որ մատչելի է ընթերցասեր Հասարակությանը և այս առումով դիջում է Կարամզինի «Պատմությունը»: Բայց Սուլովյովը ընդլայնեց պատմական ժամանակագրությունը Հասցնելով մինչև 18-րդ դարի վերջին քառորդը, մինչդեռ Կարամզինը իր գիրքը ավարտում է 17-րդ դարի սկզբի ռազմաքաղաքական բարդ ու խառնակ իրադարձություններով:

Սուլովյովի աշակերտ Վ. Կյուչևսկին (1841-1911) փոխարինեց իր ուսուցչին Մոսկվայի Համալսարանի ուսաց պատմության ամբիոնում: Կյուչևսկին Սուլովյովի «Պատմությունը» գնահատել է որպես «Ռուսաստանի պատմության Հանրագիտարան»: Նրա «Ռուսաց պատմության դասընթացը», որի Հիմքում ընկած են Համալսարանական դասախոսությունները, մեր օրերում էլ առաջացնում են Հետաքրքրություն ընթերցողների շրջանում: Պատմական փաստերի առատությունը, ճոխ ու պատկերավոր շարադրանքը բնորոշ է ուսու մեծանուն պատմաբանի բոլոր աշխատություններին: «Գիտնականի ու գրողի կյանքում, - ասում էր Կյուչևսկին, - կենսագրական գլխավոր փաստերը գրքերն են, կարևորագույն իրադարձությունները՝ մտքերը»: Ինչպես Ռուսաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս, Հատկապես Եվրոպայում, լայն ճանաչում ստացան Համալսարանային պատմության Հիմնահարցերին վերաբերող ուսու պատմագիտական մտքի մյուս ներկայացուցիչների արժեքավոր աշխատությունները: Մ. Կովալևսկին (1851-1916) Հռչակվեց եվրոպական գյուղացիական Համայնքի պատմությանը նվիրված աշխատություններով: Ռուս ընթերցողի Համար Հատուկ նշանակություն ունեն նրա «Ժամանակակից ժողովրդավարության ծագումը» աշխատությունը, որտեղ քննախոսվում են 18-րդ դարի վերջին Եվրոպայի պատմության շրջադարձային էջերը և իրադարձությունները:

19-րդ դարի առաջին կեսը կարևորագույն ժամանակաշրջան էր ճարտարապետության ու քանդակագործության զարգացման Համար: Ազգային ճարտարապետության ականավոր դեմքեր են Մ. Կազակովը (1738-

1812), Ա. Վորոնիխինը (1760-1814), Ա. Զախարովը (1761-1811), Կ. Ռոսսին (1775-1849), որոնց նախագծերով կառուցվեցին մի շարք Հոյակերտ ճարտարապետական կոթողներ: Դարասկզբի խոշորագույն ճարտարապետի՝ Զախարովի լավագույն ստեղծագործությունը Մովակալության գլխավոր շենքն է Պետերբուրգում, որը խորհրդանշում էր ուսական կայսրության ռազմածովային հզորությունը, Ռուսաստանի մուտքը առաջատար ծովային տերությունների շարքը: Զախարովի աչքի ընկնող գործերից են Հոսպիտալը Ներսոնեսում, Անդրեևյան տաճարը՝ Կրոնշտադտում և այլ շենքեր: Ստրոգանովի նախկին ճորտ Վորոնիխինը դարձավ Կազանի տաճարի նախագծի Հեղինակը, նրա Համար օրինակ ծառայեց Հոմի Սուրբ Պետրոսի Հռչակավոր տաճարը՝ մեծն Միքելանջելոյի անմահ ստեղծագործությունը: 1812 թ. Հայրենական պատերազմից Հետո Պետերբուրգի Կազանի տաճարը դարձավ ուսական փառքի թանգարան, շենք-Հուշարձան: Այստեղ է թաղված Հայրենական պատերազմի Հերոս զորավար Կուտուզովը, այստեղ են պահվում պարտված նապոլեոնյան բանակից վերցված դրոշները: 30-ական թվականներին տաճարի առաջ կանգնեցվեցին Կուտուզովի և Հայրենական պատերազմի մեկ այլ Հերոս, տաղանդալատ գեներալ Բարկլայ դը Տոլիի Հիանալի Հուշարձանները, որոնք քանդակել էր Բ. Օրլովսկին (1739-1837): Այդ ճարտարապետական Համալիրը Հիացնում է ձևի կատարելությանը, ներդաշնակությանը ու վեհությունը: Ճարտարապետական մեծարժեք կոթող է Վորոնիխինի նախագծով կառուցված Լեոնային ինստիտուտի շենքը Պետերբուրգում և այլ կառույցներ Հյուսիսային մայրաքաղաքում, Պավլովսկում, Պետերգոֆում: Իտալացի պարուհու որդի Ռոսսին ծնվել և մեծացել է Ռուսաստանում: Նրա նախագծով կառուցվեցին Պետերբուրգի Սենատի ու Սինոդի շենքերը, Ալեքսանդրյան թատրոնը, Միխայլովյան դղյակը (այժմ Ռուսական թանգարանը), որոնք քաղաքի կենտրոնին տվեցին ներդաշնակ, Հոյակապ, գեղեցիկ տեսք: Մ. Կազակովի նախագծով են կառուցվել Մոսկվայում Կրեմլի մեծ պալատը, Գոլիցինյան Հիվանդանոցը, Մոսկվայի Համալսարանի Հին շենքը: 19-րդ դարի առաջին կեսին Ռուսաստանում կառուցված ամենամեծ շենքը՝ Պետերբուրգի Իսակիևյան տաճարը, իրավամբ դասվում է ճարտարապետական լավագույն կոթողների շարքը, որը կառուցվել է չորս տասնամյակի ընթացքում: Տաճարի ներսում կարող էր տեղավորվել 13 Հազար մարդ: Նախագիծը կազմել էր Փրանսիացի ճարտարապետ Օ. Մոնֆերանը (1786-1858), իսկ ներքին զարգարանքին մասնակցել էին քանդակագործ Պ. Կրոտը, նկարիչ Բրյուլովը: Տաճարը պետք է մարմնավորեր ինքնակալության հզորությունը և անասանու-

Թյունը, նրա սերտ կապը ուղղափառ եկեղեցու հետ: Մոնֆերանի նախագծով կառուցվեց 47 մ բարձրությամբ գրանիտե միաձուլ սյունը Դվորցովայա հրապարակում: Դա պատմական հուշարձան էր՝ նվիրված Ալեքսանդր Առաջինին, միաժամանակ վեհարձանը հավերժացնելու էր ռուսական զենքի հաղթանակը 1812 թ. Հայրենական պատերազմում: Խաչը պահած հրեշտակի քանդակը կերտել է Բ. Օրլովսկին: 19-րդ դարի սկզբին քանդակագործ Ի. Մարտոսը (1754-1835) պատվեր ստացավ կառուցելու Մինինի ու Պոժարսկու հուշարձանը Նիժնի Նովգորոդ քաղաքում: Նախապատրաստական աշխատանքները համընկան 1812 թ. Հայրենական պատերազմի հետ: Ի վերջո, հուշարձանը կառուցվեց Նապոլեոնյան արշավանքից դեռևս չապաքինված Մոսկվայի Կարմիր հրապարակում, իսկ Նիժնի Նովգորոդում վեր խոյացավ մեկ այլ վեհարձան: Գերմանացի ճարտարապետ Լեո Կլենցի նախագծով Պետերբուրգում կառուցվեց նոր էրմիտաժի շենքը՝ համաշխարհային արվեստի գլուխգործոցների պահպանման թանգարանը: Կ. Տոնը (1794-1881) իր ստեղծագործական աշխատանքով փորձեց վերականգնել հին ռուսական ճարտարապետության ավանդույթները: Տոնի ռուս-բյուզանդական ոճը շատերին թվում էր արհեստական: Իրականում նրանք դեռևս բավարար չափով չէին կարողացել գիտակցել ու յուրացնել հին ռուսական ճարտարապետության ժառանգությունը: Տոնի աշխատանքներին հավանություն տվեց Նիկոլայ Առաջինը: Ճարտարապետը ստացավ Մոսկվայի համար երկու մեծ պատվեր: 1838-1849 թթ. նրա ղեկավարությամբ կառուցվեց Կրեմլի Մեծ պալատը: 1839 թ. Մոսկվա գետի ափին դրվեց Քրիստոս Փրկչի եկեղեցու հիմքերը, ի հիշատակ նապոլեոնյան ներխուժումից Ռուսաստանի ազատագրման: Եկեղեցում տեղակայված են մարմարյա սալիկներ, սպանված ու վիրավորված սպանների անուններով, նշված է յուրաքանչյուր ճակատամարտում զոհված զինվորների թիվը: Տոնի նախագծով կառուցվեց հայտնի Ջինապալատը: Նիկոլայ Առաջինի հովանավորությամբ են բացատրվում Գերցենի և մյուս քննադատների կտրուկ գնահատականները: Խորհրդային իշխանության տարիներին Տոնի ստեղծագործությունը կամ անտեսվում էր, թերազնահատվում, կամ մոռացության մատնվում: Նրա կողմից կառուցված շատ եկեղեցիներ քանդվեցին: 1931 թ. պայթեցրին Փրկչի եկեղեցին: Զպայթեցրին Մոսկովյան կայարանը Պետերբուրգում և Պետերբուրգյան կայարանը Մոսկվայում, որոնք նույնպես կառուցվել էին Տոնի նախագծերով: Ճարտարապետական սքանչելի կոթողներ կառուցվեցին Նիժնի Նովգորոդում, Կազանում, Սիմբիրսկում: 19-րդ դարի 40-50-ական թթ. Պետերբուրգի Նևսկի պողոտան գար-

դարեցին Պ. Կլոդտի (1805-1867) բրոնզե քանդակները: Հիշարժան է հատկապես Անիչկով կամուրջի վրա «Զիերի սանձահարողները» քանդակը: Կլոդտի քանդակած բրոնզե ձիարձանները մինչև օրս էլ դարդարում են Պետերբուրգի ճարտարապետական ընդհանուր համալիրը: Կլոդտի մյուս աշխատանքը՝ Նիկոլայ Առաջինի արձանն է Պետերբուրգի Իսակիևյան հրապարակում: Քանդակագործական արվեստի մեջ Ֆ. Տոլստոյին (1783-1873) գերազանցապես հետաքրքրում էր Հայրենասիրության թեմատիկան: Տոլստոյը ստեղծեց մի շարք մեղալիոններ, որտեղ հավերժացվում է օտար նվաճողների դեմ մղած պայքարում ռուս ժողովրդի քաջությունը և խիզախությունը: Նրա ամենանշանավոր գործերից են 1812 թ. Հայրենական պատերազմին նվիրված 21 մեղալիոնները, որոնցով անմահացրել է ռուս ժողովրդի հերոսական պայքարը նապոլեոնյան բանակների դեմ: Տոլստոյը ռուս դինավորի քաջությունն ու սխրագործությունը հավերժացրել է նաև 1826-1828 թթ. ռուս-պարսկական և 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմներին նվիրված մեղալիոններով: Ռուսական մշակույթի ոսկե դարը իր բարերար ազդեցությունը ունեցավ նաև ճարտարապետության և քանդակագործության վրա:

§ 3. ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ,
ՌՈՒՍ ՆԵՎՆԱՎՈՐ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՆԵՐԸ
ԵՎ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

19-րդ դարի սկզբին ռուսաց կայսրությունում վերջնականապես ձևավորվեց բարձրագույն, միջնակարգ, տարրական կրթական համակարգը, որը վճռորոշ դեր խաղաց լուսավորության, գիտության, տեխնիկայի զարգացման գործում: 1803 թ. բարեփոխումը կրթության դաշտում հանգեցրեց յուրաքանչյուր նահանգային քաղաքում գիմնազիայի, իսկ գավառային քաղաքներում՝ գավառային ուսումնարանների ստեղծմանը: Ռուսաց կայսրությունը բաժանվեց ուսումնական վեց շրջանների, որոնցից յուրաքանչյուրում նախատեսվում էր բացել համալսարան: 1804 թ. բացվեց Կադանի, 1805 թ.՝ Նարկովի, 1819 թ.՝ Պետերբուրգի, 1834 թ.՝ Կիևի համալսարանները: Համալսարաններ բացվեցին Դորպատում (Տարտու), Վիլնոյում (Վիլնյուս), որոնք խոշոր դեր խաղացին նաև մասնագետների պատրաստման բնագավառում: Ավելին, համալսարանների շատ պրոֆեսորներ իրենց գիտական հայտնագործություններով լուրջ ներդրում ունեցան ոչ միայն ռուսական, այլև համաշխարհային գիտության ասպարեզում: Համալսարանական կրթական ծրագրերին մոտ գիտելիքներ էին տալիս լիցեյները, որտեղ կարող էին սովորել միայն ազնվական ծագում ունեցող երիտասարդները: 1811 թ. բացվեց Ցարսկոյե Սելոյի չիցեյը, որը 1844 թ. վերանվանվեց Արևքսանդրյան ու փոխադրվեց Պետերբուրգ: Լիցեյներ բացվեցին նաև Նիժնինում, Ցարոսլավլում, Օդեսայում: Դրանցից ամենահայտնին՝ Ցարսկոյե Սելոյի լիցեյը, տվեց շատ նշանավոր պրոֆեսորներ, այն ոչ միայն ամենահեղինակավոր ուսումնական հաստատությունն էր բոլոր լիցեյների մեջ, այլև՝ աղատախոհության գլխավոր կենտրոնը: Բացվեցին նաև մի շարք մասնագիտական բարձրագույն ուսումնական հաստատություններ: 19-րդ դարի սկզբին կայսրությունում միակ տեխնիկական բնույթի ուսումնական հաստատությունը՝ Լեոնային ինստիտուտը գործում էր Պետերբուրգում: Ալեքսանդր Առաջինի օրոք բացվեց Անտառային ինստիտուտը: Նիկոլայ Առաջինը հովանավորում էր ինժեներա-տեխնիկական և դինվորական կրթությունը: Նրա օրոք բացվեցին Պետերբուրգի տեխնոլոգիական ինստիտուտը, Մոսկվայի տեխնիկական ուսումնարանը, Գլխավոր շտաբի ակադեմիան, Ինժեներական և Հրանոթային ակադեմիաները: Միջին ուսումնական հաստատությունները՝ գիմնազիաները նույնպես նպաստեցին կրթության, լուսավորության, գիտության, տեխնիկայի առաջընթացին: 1824 թ. Ռուսաստանում գործում էին 49 գիմնազիաներ, որոնց թիվը 30 տարի անց հասավ 77-ի: Եթե ամբողջ Սիբիրում սկզբում

գործում էր մեկ գիմնազիա՝ Տորոյսկում, ապա մի քանի տասնամյակ անց արդեն գիմնազիաներ կային Տոմսկում և Իրկուտսկում: 19-րդ դարի առաջին կեսին շարունակվում էր կանանց կրթական համակարգի զարգացումը, որի հիմքը դրել էր Եկատերինա Երկրորդը: Ազնվական աղջիկների համար նոր ինստիտուտներ բացվեցին Պետերբուրգում, Մոսկվայում, Նիժնի Նովգորոդում, Կազանում, Աստրախանում, Սարատովում, Իրկուտսկում և այլ քաղաքներում:

1815 թ. հայկական հանրահայտ Լազարյան տոհմի ներկայացուցիչները իրենց միջոցներով Մոսկվայում հիմնադրեցին Արևելյան լեզուների ինստիտուտը, որը գոյատևեց շուրջ 100 տարի: Մեծ էր այս ինստիտուտի դերը դիվանագետներ նախապատրաստելու գործում, որոնց ուղարկում էին արևելյան երկրներ դիվանագիտական ծառայության: 19-րդ դարի առաջին կեսին Ռուսաստանում զգալի զարգացում ապրեց մաթեմատիկական գիտությունը: Այս գիտության մեջ ավելի քան երկու հազար տարի իշխում էր հին Հույն գիտնական էվկլիդեսի տեսությունը, որը համարվում էր արքսիոմա: Մեծատաղանդ մաթեմատիկոս Ն. Լոբաչևսկին (1792-1856) ստեղծեց ուսմունք ոչ էվկլիդեսյան երկրաչափության մասին: Դա մեծ նշանակություն ունեցող հայտնագործություն էր գիտության ու տեխնիկայի բնագավառում: Անգլիացի նշանավոր մաթեմատիկոս Կլիֆֆորդը Լոբաչևսկուն անվանեց «երկրաչափության Կոպեռնիկոս», իսկ նրա հայտնագործությունը մաթեմատիկայի պատմության մեջ ստացավ «Լոբաչևսկու համակարգ» անունը: Լոբաչևսկին ոչ միայն տազանդաշատ մաթեմատիկոս էր, որը փառք բերեց ռուսական ազգային գիտությանը, այլև հասարակական աչքի ընկնող գործիչ՝ նա հսկայական աշխատանք ծավալեց Ռուսաստանում խթանելու լուսավորությունը ու բարձրագույն կրթությունը: Քսան տարի շարունակ նա գլխավորեց Կազանի համալսարանը, որը նրա ղեկավարությամբ դարձավ երկրի գիտական ու մշակութային խոշորագույն կենտրոններից մեկը:

Կազանի համալսարանում այդ տարիներին աշխատում էր մեկ այլ ականավոր գիտնական Ն. Զինինը (1812-1880): Հետաքրքիր է նշել, որ նա ծնվել է Արցախի Շուշի քաղաքում: Զրկվելով ծնողներից տեղափոխվում է Սարատով՝ իր ազգականների մոտ: Միջնակարգ կրթությունը ստանում է Սարատովի գիմնազիայում, իսկ բարձրագույնը՝ Կազանի համալսարանում: Զինինի դերը մեծ է օրգանական քիմիայի և հատկապես անիլինների սինթեզի տեսության ստեղծման ասպարեզում: Նրա գիտական աշխատությունները երկար տարիներ որոշեցին օրգանական քիմիայի զարգացման ուղղությունը և հիմք դարձան ղեղազորական արտադրության զարգացման ու պայթուցիկ նյութերի պատրաստման համար: Զինինը Ա. Վոսկրեսենսկու՝ «Ռուսական քիմիայի նահապետի» Հետ միասին հիմք դրեց քիմիայի «ռուսական դպրոցին»: Վոսկրեսենսկին խոշոր դեր խաղաց Ռու-

ասատանում Համալսարանական կրթության զարգացման գործում: Նրա աշակերտներից էր աշխարհահռչակ քիմիկոս Գ. Մենդելեևը: Զինինը նույնպես պատրաստեց ուսուցանողական քիմիկոսների մի ամբողջ սերունդ: Նրա աշակերտներից էին Սոկոլովը, Մորկովիկովը, Բուսլերովը, Բեկետովը, Բորոդինը (որը նաև նշանավոր կոմպոզիտոր էր), որոնք խոշոր ծառայություն մատուցեցին քիմիայի՝ տեսական, օրգանական, անօրգանական ոլորտներում: Քիմիական գիտության զարգացման ասպարեզում մեծ էր Լիտվայում աշխատող Կ. Գրոտհոուսի, Կ. Կիրիսևոյի, Գ. Հեսսի, Պ. Սորոյեսկու, Վ. Լյուբարսկու և Յ. Ֆրիցչեի ներդրումը: Այս կարևոր նվաճումները քիմիական գիտության մեջ իրենց Հետագա զարգացումը գտան 19-րդ դարի երկրորդ կեսին ու 20-րդ դարի սկզբին:

Ֆիզիկայի բնագավառում կարևորագույն նշանակություն ունեցող Հայտնագործություններ կատարեցին Վ. Պետրովը (1761-1834) և Բ. Յակոբին (1801-1874), որոնցից առաջինը Հետազոտեց էլեկտրական աղեղը և էլեկտրական պարպումը նոսրացած գազում, իսկ երկրորդը խոշոր Հայտնագործություններ կատարեց էլեկտրական մեքենաների, էլեկտրաքիմիայի բնագավառում, Հայտնագործեց գալվանապատիկայի մեթոդը: Ռուսական էլեկտրատեխնիկայի Հայր Համարվող Պետրովը 1815 թ. ընտրվում է ակադեմիկոս, ստանում է նաև բժշկա-վիրաբուժական ակադեմիայի ակադեմիկոսի կոչում: Հայտնի գիտնական ու նշանավոր աստղագետ ակադեմիկոս Վ. Ստրուվեի (1793-1864) անմիջական նախաձեռնությամբ ու ղեկավարությամբ 1839 թ. Պետերբուրգի մոտ սկսեց գործել ռուսական առաջին՝ Պուլկովյան աստղադիտարանը: Վ. Ստրուվեն Հիմնեց «Պուլկովյան աստղագիտական դպրոցը», որը կարճ ժամանակում ստացավ Համաշխարհային ճանաչում և բարձր գնահատվեց Եվրոպայի խոշոր աստղագետների կողմից: Ականավոր գիտնական, ինժեներ Պ. Շիլինգը (1786-1837) 19-րդ դարի 30-ական թթ. ամերիկացի Մորգեից առաջ Հայտնագործեց էլեկտրամագնիսական Հեռագիրը: 1837 թ. նրան Հանձնարարվեց կառուցել Հեռագրագիծ, որը պետք է միացներ Պետերգոֆը Կրոնշտադտին, որը, սակայն, մնաց անավարտ գիտնականի մահվան պատճառով: Նրա մահից չորս տարի անց Մորգեն Հայտնագործեց էլեկտրամագնիսական Հեռագիրը, և նրա անունով էլ այդ Հայտնագործությունը մտավ պատմության մեջ: Լեոնային ինժեներներ Պ. Անտովը և Պ. Օրուխովը Հայտնագործեցին բարձրորակ պողպատի ձուլվածքի ստացման գիտական նորագույն մեթոդ, որը Հեղաշրջող նշանակություն ունեցավ մետաղամշակության և մետաղարդյունաբերության զարգացման գործում: Ֆրոլովը կատարեց արժեքավոր Հայտնագործություններ սև, գունավոր և թանկարժեք մետաղների մշակման ասպարեզում: Ռուսաստանում էլեկտրատեխնիկայի ու էլեկտրամագնիսական ինդուկցիայի ասպարեզում արժեքավոր է էստոնացի նշանավոր գիտնական է. Լենցի

(1804-1865) ներդրումը: Լենցը 1836 թ. հրավիրվում է աշխատելու Պետերբուրգի Համալսարանում որպես ֆիզիկայի և ֆիզիկական աշխարհագրության պրոֆեսոր:

19-րդ դարի 30-ական թթ. Դեմիդովների նախկին ճորտեր Հայր ու որդի Ե. և Մ. Ջերեպանովները Ռուսաստանում դարձան առաջին շոգեշարժիչի և երկաթուղու գյուտարարները: 1843 թ. սկսվեց Պետերբուրգ-Մոսկվա երկաթուղու կառուցումը: Մեծ բժշկ-վիրաբույժ, նշանավոր մանկավարժ Ն. Պիրոգովի (1810-1881) անունը ռուսական Հասարակության լայն շրջաններին Հայտնի դարձավ Ղրիմի (Արևելյան) պատերազմի տարիներին շրջապատված Սևաստոպոլում անձնագոհ ու Հայրենանվեր աշխատանքի շնորհիվ: Մեծ է Պիրոգովի դերը ռազմաբժշկական ծառայության կազմակերպման գործում, ուստի և օրինաչափ է, որ նրան Համարում են ռազմադաշտային վիրաբուժության և վիրաբուժական անատոմիայի Հիմնադիր: Նրա ջանքերի շնորհիվ Սևաստոպոլի պաշտպանության ժամանակ Հազարավոր վիրավորներ փրկվեցին մահից, շարունակեցին պայքարը շրջապատված Սևաստոպոլում: Հատկանշական է, որ Պիրոգովը փրկեց նաև Ջ. Գարիբալդու՝ իտալացի նշանավոր Հեղափոխականի, ազգային-ազատագրական շարժման ականավոր գործչի կյանքը՝ Հեռացնելով նրա մարմինը խոցած փամփուշտը: «Տեղագրական անատոմիա» աշխատությունը և ցավազրկման ուղղությունը Հետազոտությունները Պիրոգով գիտնականին բերեցին Համաշխարհային փառք:

Ռուսաստանում բավականաչափ առաջընթաց ապրեց բնագիտությունը: Ռուս գիտնականները Հարուստ նյութեր Հավաքեցին բուսաբանության և կենդանաբանության վերաբերյալ, որոնք պահանջում էին լրջորեն վերաիմաստավորել շատ տեսակետներ, գնահատականներ: Ի. Դվիգուբսկին 1806 թ. պնդում էր, որ երկրագունդը և այնտեղ գոյատևող էակները ժամանակի ընթացքում բնական գործողությունների Հետևանքով ենթարկվում են արմատական փոփոխության: Ի. Դյադկովսկին 1816 թ. առաջ քաշեց ու ապացուցեց, որ բնության մեջ բոլոր երևույթները պայմանավորված են բնական պատճառներով և ենթարկվում են զարգացման ընդհանուր օրենքներին: Նրա կարծիքով կյանքը ֆիզիկա-քիմիական անընդմեջ գործընթաց է, որը պաշտպանում էին ոռոս շատ բնագետներ, կենսաբաններ:

Կենդանի մարմինների զարգացման մասին պատկերացումների Հիմնավորման առումով մեծ առաջընթաց էր Կ. Բերի «Բնության զարգացման ընդհանուր օրենքը» գիրքը, որի շնորհիվ նա դարձավ Չ. Դարվինի ուսմունքի տարածման նախակարգաբար: Բնագիտության զարգացման Համար կարևոր նշանակություն ունեցավ 1812 թ. Հիմնված Ղրիմի բուսաբանական այգին, որը տասնյակ տարիներ շարունակ մնաց ռուսական բուսաբանության կենտրոններից մեկը:

Հեռավոր ծովային և օվկիանոսային տարածություններ դուրս եկան ուսուցիչական գործունեությունները, որոնք կատարեցին մի շարք շուրջերկրյա ճանապարհորդություններ: Այս առումով 19-րդ հարյուրամյակը ուսուցիչական գործունեության համար դարձավ աշխարհագրական խոշոր հայտնագործությունների ժամանակաշրջան, որոնք նպաստեցին նոր տարածքների յուրացմանը և կայսրության սահմանների ընդլայնմանը: 1803 թ. Ալեքսանդր Առաջինի կարգադրությամբ ձեռնարկվեց ուսական առաջին շուրջերկրյա ծովային գիտարշավը Կրոնշտադտից մինչև Կամչատկա ու Հյուսիսային Ամերիկայի ուսական տիրույթները: Ռուս ծովագնացները բաց օվկիանոս դուրս եկան «Նադեժդա» ու «Նևա» նավերով: Գիտարշավը շարունակվեց երեք տարի և ավարտվեց 1806 թ.: Այն գլխավորեց Պետերբուրգի Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Ի. Կրուզենշտեռնը (1770-1846)՝ ծովակալ, խոշոր ծովագնաց ու գիտնական-աշխարհագրագետ: Նա գլխավորեց «Նադեժդա» նավը: Մյուս ղեկավարը կապիտան Յ. Լիսյանսկին էր (1773-1837), որը հայտնագործեց Հավայան կղզիներից մեկը: Նավարկության ժամանակ ուսումնասիրվեցին Մարկիզյան ու Սանդվիչյան (Հավայան) կղզիները, Չինաստանը, Ճապոնիան, Սախալինը և Կամչատկան, Ալեուտյան կղզիները, Ալյասկան, Խաղաղ ու Սառուցյալ օվկիանոսների կղզիները, հավաքեցին արժեքավոր նյութեր, կազմվեցին քարտեզներ: Այդ հայտնագործություններն այնքան արժեքավոր էին, որ Կրուզենշտեռնին շնորհվեց ակադեմիկոսի կոչում: Նրա կազմած «Հարավային ծովի ատլասը» և բազմաթիվ քարտեզներ հարստացրին աշխարհագրական գիտությունը և նպաստեցին ծովագնացության զարգացմանը: 1845 թ. ծովակալ Կրուզենշտեռնը դարձավ Ռուսաստանյան աշխարհագրական ընկերության Հիմնադիր անդամներից մեկը: Նա դաստիարակեց ուսուցիչական գործունեության ու հետազոտողների մի ամբողջ համաստեղություն: Նրա աշակերտներից և հետևորդներից Ֆ. Բելինսկուզենը (1778-1852) մասնակցեց ուսական առաջին գիտարշավին: Հենց նրան՝ Բելինսկուզենին 1819-1821 թթ. հանձնարարվեց գլխավորել շուրջերկրյա նոր գիտարշավը «Վոստոկ» նավով: «Միրնի» նավի հրամանատարն էր Մ. Լադարևը (1788-1851): Նրանք երկու անգամ մոտեցան Անտարկտիդայի ափերին: Գիտարշավը ընթանում էր բավականին բարդ և ծանր պայմաններում, բավական է ասել, որ նավերը մի քանի անգամ հայտնվեցին կործանման եզրին: Արշավախումբը, ըստ էության, հայտնագործեց այդ մայրցամաքը, բազմաթիվ կղզիներ, ստեղծեց նոր քարտեզներ, կարևորագույն հետազոտություններ կատարեց օվկիանոսագիտության և օվկիանոսագրության բնագավառում: Աշխարհի հետազոտողների ուշադրության կիզակետում վաղուց էր գտնվում Հարավային բևեռի շուրջ չբացահայտված հիմնահարցեր: Ենթադրվում էր, որ այնտեղ




Ռուսական ռեալիստական գրականության հիմնադիր, մեծագույն բանաստեղծ Ա. Ս. Պուշկին (1799-1837 թթ.):



Ռուս հանձարեղ բանաստեղծ Մ. Յ. Լերմոնտով (1814-1841 թթ.):



Ռուս հանձարեղ գրող Ն. Վ. Գոգոլ (1809-1852 թթ.):



Ուկրաինացի նշանավոր գրող և բանաստեղծ Տ. Գ. Շևչենկո (1814-1861 թթ.):




Քերտուս բանաստեղծ, դրամատուրգ
Վ. Բ. Դունին-Մարցինսկի
(1807-1884 թթ.)




Հայ մեծ լրագրողիչ և գրող
Խ. Արտյան (1805-1848 թթ.)



Ռուս նշանավոր գրող
Ի. Ա. Գոնչարով (1812-1891 թթ.)



Ռուս հանճարեղ գրող
Լ. Ն. Տոլստոյ (1828-1910 թթ.)




Ռուս հանճարեղ գրող
Ֆ. Մ. Դոտտոսկի
(1821-1881 թթ.)



Ռուս հայտնի գրող
Մ. Ն. Մալախով-Շչեքին
(1826-1889 թթ.)



Ռուս խոշորագույն գրող
Ա. Դ. Չետով (1860-1904 թթ.)




Հիանալի նկարիչ և արվեստի տեսարան
Լ. Ն. Կրամսկոյ (1837-1887 թթ.)



Ականավոր նկարիչ
Վ. Գ. Դերյով (1834-1882 թթ.)



Ռուս պեայիստ նկարիչ
Ի. Ն. Ռեպին (1844-1930 թթ.)



Ռուս մեծանուն նկարիչ
Կ. Դ. Բրյուլով (1799-1852 թթ.)




Ռուս տաղանդավոր նկարիչ
Ա. Ա. Իվանով (1806-1858 թթ.)



Ռուս տաղանդավոր նկարիչ
Վ. Բ. Սուրիկով (1848-1916 թթ.)



Ռուս նշանավոր նկարիչ
Ա. Գ. Վենեցիանով (1780-1847 թթ.)




Ռուս տաղանդավոր նկարիչ
Դ. Ա. Ֆեդոտով (1815-1852 թթ.)



Ռուս նշանավոր նկարիչ
Վ. Ա. Սերով (1865-1911 թթ.)



Ալխարհահռչակ ծովանկարիչ
Հովհաննես Այվազովսկի
(1817-1900 թթ.)



Ռուս ականավոր նկարիչ
Պ. Մ. Տրետյակով
Մոսկվայի Տրետյակովյան
պատկերասրահի
հիմնադիրը (1832-1898 թթ.)



Ռուս նշանավոր գեղանկարիչ
Ի. Ի. Լևիտան (1860-1900 թթ.)



Ռուս նշանավոր նկարիչ
Վ. Ե. Մակովսկի (1846-1920 թթ.)



Ռուս ականավոր դրամատուրգ
Ա. Ն. Օստրովսկի (1823-1886 թթ.)




Ռուս հայտնի դերասանուհի
Մ. Ն. Երմոլովա (1853-1928 թթ.)



Ռուս ականավոր դերասան
Մ. Ա. Շչեպկին (1788-1863 թթ.)



Ռուս նշանավոր գրող,
հրապարակախոս, պատմաբան,
պաշտոնական պատմագիր
Ն. Մ. Կարամզին (1766-1826 թթ.)



Ռուսական պատմագրության խոշորագույն
ներկայացուցիչ, Մոսկվայի համալսարանի
ուսաց պատմության ամբիոնի վարիչ,
պատմաբանասիրական ֆակուլտետի
ղեկան, ապա Համալսարանի ռեկտոր
Ս. Մ. Սոլովյով (1820-1879 թթ.)



Ռուսական ազգային, դասական երաժշտության հիմնադիր, «Իվան Սուսանին» օպերայի հեղինակ Մ. Ի. Գլինկա (1804-1857 թթ.)



Ռուս խոշորագույն կոմպոզիտոր, «Եվգենի Օնեգին», «Պիկովայա դամա», «Մալեպպա», «Յուլեանի կույսը» օպերաների, «Կարապի լիճը», «Քնած գեղեցկուհին», «Շչեկունչիկ» բալետների հեղինակ Պ. Ի. Չայկովսկի (1840-1893 թթ.)



Ռուս հիանալի կոմպոզիտոր «Իշխան Իգոր» օպերայի հեղինակ և գիտնական քիմիայի պրոֆեսոր Ա. Պ. Բորոդին (1833-1887 թթ.)



Ռուս ճանաչված կոմպոզիտոր և երաժշտական գործիչ «Սադկո», «Զյունանուշիկ», «Մայիսյան գիշեր», «Թագավորի Հարանացուն», «Պսկովուհին» օպերաների հեղինակ Ն. Ա. Ռիմսկի-Կորսակով (1844-1908 թթ.)



Նշանավոր ճարտարապետ Կ. Ի. Ռոսսի (1775-1849 թթ.)



Ճանաչված ճարտարապետ Կ. Ա. Տոն (1794-1881 թթ.)

է գտնվում լայնածավալ Հարավային մայրցամաքը («Անտարկտիդա» անունը այն ժամանակ չէր գործածվում): Անգլիացի Հայտնի ծովագնաց Ջ. Կուկը 18-րդ դարի 70-ական թթ. անցավ Հարավային բևեռի շրջանը՝ բախվելով անանցանելի սառույցների: Նա Հայտարարեց, թե նավարկել դրանից Հարավ անհնար է, նրան հավատացին և 45 տարվա ընթացքում ոչ ոք այդ ուղղությամբ չձեռնարկեց արշավախումբ: Այնուամենայնիվ, Բելինսհաուզենին ու Լազարևին հաջողվեց Կուկից զգալիորեն առաջ անցնել Հարավում: 1820 թ. հունվարի 16-ին (նոր տոմարով 28-ին) «Վոստոկը» և «Միրնին» ընդհուպ մոտեցան Անտարկտիդային, բայց նավաստիները հնարավորություն չունեին դուրս գալ ափ և համոզվել, որ դա Հարավային մայրցամաք է և ոչ թե սառույցների կատարյալ կույտեր: Այդ պատճառով Բելինսհաուզենը, իրրև իսկական գիտնական, ազնիվ ու պարտաճանաչ անձնավորություն, տեղեկացրեց, թե տեսանելի էր «սառցե մայրցամաքը»: Այնուհանդերձ 1820 թ. հունվարի 16-ը (28-ը) համարվում է Անտարկտիդայի հայտնագործման օր: 1821 թ. արշավախումբը վերադարձավ Հայրենիք՝ կատարելով իր առջև դրված առաջադրանքը, 751 օրվա ընթացքում անցնելով 50 հազար կմ: Հետագայում Լազարևը Հայտնի դարձավ որպես մարտական քաջ ծովակալ, Հայրենիքը անսահման սիրող նավապետ: Նա ստեղծեց ռազմածովային արվեստի մի ամբողջ դպրոց ու դաստիարակեց ծովակալներ՝ Սևաստոպոլի պաշտպանությունների նախնիներ, Կունիլովին, Իստոմիրին:

1811 թ. ռուս նավաստիները կապիտան Վ. Գոլովինի (1776-1831) հրամանատարությամբ հետազոտեցին Կուրիլյան կղզիները, Կամչատկայի, Հարավային Ամերիկայի ափերը: Լիտվեն Հիմնեց ռուսական աշխարհագրական ընկերությունը, որը մեծ դեր խաղաց աշխարհագրական գիտությունների զարգացման գործում:

Աշխարհագրական խոշոր հայտնագործությունները Ռուսաստանի Հեռավոր Արևելքում կապված են Գ. Նևելսկոյի (1814-1876) անվան հետ, որը գլխավորեց Ամուրյան արշավախումբը և հայտնագործեց Ամուրի գետաբերանը, մայրցամաքի ու Սախալինի միջև ընկած նեղուցը և ապացուցեց, որ Սախալինը ոչ թե Թերակղզի է, ինչպես համարվում էր առաջ, այլ կղզի: Նա 1850 թ. հիմնադրեց Նիկոլաևսկ քաղաք հենակետը Ամուրի վրա, իսկ Ե. Պուտյատինը 1822-1825 թթ. կատարեց շուրջերկրյա ճանապարհորդություն և դարձավ առաջին ռուսը, որին հաջողվեց լինել ևլրոպացիների համար փակ և գրեթե անհայտ երկրում՝ Ճապոնիայում: Ավելին, նա նույնիսկ կարողացավ ճապոնացիների հետ 1855 թ. ստորագրել պայմանագիր: Ռուս ծովագնացների ու գիտնականների հայտնագործությունները նպաստեցին համաշխարհային աշխարհագրական գիտությունների զարգացմանը: Բազմաթիվ աշխարհագրական վայրեր, կղզիներ, նեղուցներ, ծոցեր կրում

են ուսական՝ Կուսուղովի, Սուվորովի, Ռուսյանցևի, Պյոտր Առաջինի կղզիներ, Ալեքսանդր Առաջինի ափ, Նևելսկոյի նեղուց անունները:

Այսական հայտնագործվեց 1741 թ. Վ. Բերինգի ու Ա. Չիրիկովի գլխավորած ուսական արշավախմբի կողմից, որից հետո սկսվեց եվրոպացիների անընդմեջ գանգվածային հոսքը, մանավանդ երբ այնտեղ հայտնաբերվեցին բնական հարստություններ, առաջին հերթին՝ ոսկու անսպառ պաշարներ: Ռուսական առաջին բնակավայրեր կազմավորվեցին 18-րդ դ. Ալեուտյան կղզիներում ու Այսակայում: 1799 թ. սիրիլյան վաճառականները, որոնք Այսակայում զբաղվում էին ձկնորսությամբ, միավորվեցին Ռուս-ամերիկյան ընկերության մեջ, որը մենաշնորհ իրավունք ստացավ օգտագործել Ռուսական Ամերիկայի բնական հարստությունները: Ընկերության վարչությունը գտնվում էր սկզբում Իրկուտսկում, իսկ հետո տեղափոխվեց Պետերբուրգ: Ընկերության եկամուտների հիմնական աղբյուր էր մորթիների վերամշակումը և վաճառքը: Ռուսական Այսակայի յուրացման գործում անուրանալի էր Կարգուպոլի վաճառական Ա. Բարանովի ծառայությունը, որը առևտրական կապեր էր հաստատել Արևելյան Սիրիի ու Հյուսիսարևմտյան Ամերիկայի հետ: Բարանովի գործունեությունը չափազանց բարդ էր ու վտանգավոր: Տեղական բնիկների՝ հնդիկների թշնամական դիրքորոշումը և անընդհատ հարձակումները և ասպատակությունները ուսական բնակավայրերի վրա ոչ միայն նյութական մեծ կորուստներ ու վնասներ էին պատճառում, այլև՝ մարդկային զոհեր: Միայն 1802 թ. Սիտկա կղզում նոր բնակավայր ստեղծելու ժամանակ սպանվեց շուրջ 200 ուս վերաբնակիչ: Այնուամենայնիվ, Բարանովին հաջողվեց Ռուսաստանին միակցել Հյուսիսային լայնածավալ տարածքները: 1804 թ. Բարանովը Սիտկա կղզու վրա հիմնադրեց Նովոարխանգելսկ քաղաքը, այնուհետև Ռոսս Ֆորտը: Իսկ 1815 թ. նա կազմակերպեց արշավախումբ դեպի Հավայան կղզիներ՝ դրանք Ռուսաստանին միացնելու նպատակով, որը հաջողություն չունեցավ: Ըստ արժանվույն գնահատելով Բարանովի գործունեությունը և ծառայությունը նրան 1799 թ. դարձրեցին Ռուս-ամերիկյան ընկերության կառավարիչ, իսկ 1803 թ. նշանակեցին Ամերիկայում Ռուսաստանյան դադուխների կառավարիչ: Այդ բարձր ու վտանգավոր պաշտոնը նա զբաղեցրեց մինչև իր կյանքի վերջը: Արդեն տարիքն առած և հիվանդ Բարանովը երեք անգամ խնդրեց ազատել իրեն զբաղեցրած պաշտոնից: Սակայն հաշվի առնելով նրա ծառայությունները և հեղինակությունը ղեկավար մարմինները չէին շտապում բավարարել նրա խնդրանքը: Միայն 1818 թ. ստացվեց դրական պատասխան՝ Ամերիկայից վերադառնալ հայրենիք: Ճանապարհին, Ցավա կղզում 1819 թ. Բարանովը մահացավ: Հատկանշական է, որ Բարանովը մեծացնելով Ռուս-ամերիկյան ընկերության կապիտալը և ընդլայնելով կայսրության տարածքները՝ մահացավ աղքատության մեջ: Բարանովի

մահվան կապակցությամբ ժամանակակիցներից մեկը իր օրագրում գրեց. «Բարանովը մահացավ, ափսոս որ մահացավ ազնիվ քաղաքացին, խելացի մարդը»:

Ռուսական բնակչությունը Ալեուտյան կղզիներում ու Այսակայում փոքրաթիվ էր՝ տարբեր տարիներին 500-ից մինչև 830 մարդ, իսկ ուսական Այսակայում ապրում էր մոտ 10 հազար մարդ, հիմնականում այնուտներ, Այսակայի առափնյա և կղզիների բնիկ բնակիչներ: Նրանք հաճույքով բարեկամանում էին ուսների հետ, ընդունում ուղղափառություն, սովորում տարբեր արհեստներ, իսկ աղջիկները նույնիսկ երազում էին ամուսնանալ ուսների հետ: Մոտ քառորդ դար ուսական Ամերիկայում անցկացրեց Ի. Վենիամինովը: Նա Նովոարխանգելսկ եկավ 1823 թ. իրրե երիտասարդ միսիոներ և անմիջապես սկսեց ուսումնասիրել այնուտյան լեզուն: Տեղափոխվելով Ունալաչկա կղզի՝ այնտեղ մնաց 10 տարի: Նրա ջանքերով կղզում կառուցվեց եկեղեցի, բացվեց դպրոց ու Հիվանդանոց: Վենիամինովը գրեց գիտական ու մշակութային արժեք ներկայացնող երկու գիրք՝ «Նոթեր Ունալաչկինյան հատվածի կղզիների մասին» և այնուտյան լեզվի քերականությունը: Դառնալով հոգևորական՝ Վենիամինովը ստացավ Իննոկենտի անունը: Շուտով նա դարձավ Կամչատկայի, Կուրիլյան և Ալեուտյան կղզիների եպիսկոպոս: Սակայն ուսական Այսակայի հիմնահարցը վերջնականապես լուծվեց ի վնաս Ռուսաստանի: 19-րդ դարի 50-ական թթ. ուսական կառավարությունը սկսեց հատուկ ուշադրություն դարձնել Մերձամուրի և Ուսուրական երկրամասի հետազոտմանը, իսկ ուսական Ամերիկայի նկատմամբ հետաքրքրությունը նկատելիորեն նվազեց: Ղրիմի (Արևելյան) պատերազմի ժամանակ ուսական Ամերիկյան հրաշքով փրկվեց անգլիացիների նվաճումից: Փաստորեն հեռավոր ուսական գաղութը մնում էր անպաշտպան: Ավելին, պատերազմի հետևանքով գրեթե դատարկված պետական գանձարանը դժվարությամբ էր ամենամյա գումարներ հատկացնում Ռուս-ամերիկյան ընկերությանը: Կայսերական կառավարությունը հարկադրված էր ընտրություն կատարել Պրիամուրյեի ու Պրիմորյեի և ուսական Ամերիկայի միջև: Հիմնախնդրի երկար քննարկումից հետո ի վերջո որոշվեց պայմանագիր կնքել ԱՄՆ-ի կառավարության հետ Այսական 7,2 մլն դոլարով նրան վաճառելու մասին: 1867 թ. Հոկտեմբերի 6-ին (նոր տոմարով 18-ին) Նորարխանգելսկում իջեցվեց ուսական ու բարձրացվեց ամերիկյան դրոշը, և Ռուսաստանը խաղաղ հեռացավ Այսակայից:

Ազատագրման դարաշրջանում հասարակական վերելքը նոր, բարենպաստ պայմաններ ստեղծեց ուսական մշակույթի ու գիտության զարգացման համար: Ռուսաստանյան համալսարանների շրջանավարտները կատարելագործման նպատակով սկսեցին ավելի հաճախ մեկնել արտասահմանյան գիտական կենտրոններ, ակտիվացան ուս գիտնականների

կապերը Արևմտյան Եվրոպայի իրենց գործընկերների հետ: Խոշոր մաթեմատիկոս Պ. Չերիչևը (1824-1894) հիմնադրեց Պետերբուրգի մաթեմատիկական դպրոցը, որից դուրս է եկել փայլուն գիտնականների մի ամբողջ համաստեղություն: Չերիչևի աշակերտ և գործի շարունակող Ա. Լյապունովի (1857-1918) Հայտնագործությունները հիմք դրեցին մաթեմատիկական գիտության մի շարք կարևորագույն ուղղությունների: Գիտության պատմության մեջ վառ երևույթ էր ու անհատականություն Ս. Կովալևսկայան (1850-1891): Ռուսական գիտության և Հասարակական շարժման փայլուն ներկայացուցիչ Կովալևսկայան տակավին փոքր հասակում դրսևորեց մաթեմատիկական արտասովոր ընդունակություններ, բայց Ռուսաստանում չէր կարող ստանալ սիստեմատիկ կրթություն, քանզի կանանց համար փակ էին Համալսարանների դռները: Մաթեմատիկա ուսումնասիրելու համար նա մեկնեց Գերմանիա: Մաթեմատիկական աչքի ընկնող աշխատությունների համար նա ստացավ գիտությունների դոկտորի աստիճան, բայց Ռուսաստանում պրոֆեսորի տեղ այդպես էլ չգտնվեց և ստիպված նորից մեկնեց արտասահման: Շվեդիայում նա դարձավ Ստոկհոլմի համալսարանի պրոֆեսոր, որտեղ մաթեմատիկայի վերաբերյալ կարդաց մի շարք փայլուն դասընթացներ: Կովալևսկայայի աշխատություններն ստացան համաշխարհային ճանաչում: Նրա Հայտնագործությունները և աշխատությունները կարևոր ավանդ էին, լուրջ ներդրում ուսական մշակույթի ու գիտության զարգացման գործում:

19-րդ դարի երկրորդ կեսին ռուս գիտնականները ղգալի հաջողություններ ձեռք բերեցին ֆիզիկայի բնագավառում: Այդ ժամանակի նշանավոր ֆիզիկոս Ա. Ստոլետովը (1839-1896) միաժամանակ աչքի ընկավ որպես մեծ մանկավարժ: Ավելի քան երեսուն տարի նա գլխավորեց Մոսկվայի համալսարանի ֆիզիկայի ամբիոնը: Այստեղ նա ստեղծեց ֆիզիկայի լաբորատորիա՝ փորձարարական աշխատանքների անցկացման և ուսանողների ուսուցման համար: Ստոլետովը դարձավ ֆիզիկոսների մոսկովյան հիանալի դպրոցի ղեկավարը, դաստիարակեց մեծ թվով տաղանդավոր աշակերտներ: Ֆիզիկայի զարգացման ասպարեզում որոշակի ներդրում ունեցան հիանալի գիտնականներ Պ. Յարլոչկովը և Ա. Լոդիգինը: Նրանք Հայտնագործեցին էլեկտրական լամպը, որը հեղաշրջում առաջ բերեց էլեկտրաէներգիայի հաղորդման, այն պահպանելու և բաշխելու տեխնիկայում: Ամբողջ աշխարհում էլեկտրական լուսավորությունն անվանում էին ռուսական լույս: Շուտով Յարլոչկովի լամպերը լուսավորեցին աշխարհի շատ քաղաքների փողոցներ և տներ:

19-րդ դարի 60-70-ական թթ. անվանում են ռուսական քիմիական գիտության «ոսկեդար»: Հենց այդ ժամանակաշրջանից սկսեց ծաղկել ականավոր քիմիկոս Դ. Մենդելեևի (1834-1907) գիտական գործունեությունը: Նա ծնվել է Տորոյսկում, գիմնազիայի տնօրենի ընտանիքում:

Սկզբում սովորել է Տորոյսկի գիմնազիայում, իսկ հետո՝ Պետերբուրգի գլխավոր մանկավարժական ինստիտուտում: Մենդելեևի տաղանդը գիտության ասպարեզում ծավալվեց Պետերբուրգի համալսարանում, որը դարձել էր ռուսական քիմիական գիտության կենտրոն: Մենդելեևը Հայտնագործելով քիմիական տարրերի պարբերական օրենքը՝ մեծագույն ծառայություն մատուցեց համաշխարհային գիտությանը: Այդ օրենքը Մենդելեևին հնարավորություն ընձեռեց քիմիայի պատմության մեջ առաջին անգամ կանխագուշակել նոր տարրերի գոյությունը և նույնիսկ որոշել նրանց ատոմային կշիռը: Հետագայում այդ տարրերն իրոք Հայտնագործվեցին ու ապացուցեցին մեծ գիտնականի հանճարեղ կոաչումները: Մենդելեևի «Քիմիայի հիմունքները» թարգմանվեց եվրոպական գրեթե բոլոր լեզուներով: Մենդելեևը Հասարակական խոշոր գործիչ էր, նա ապրում էր Ռուսաստանի ճակատագրով, մեծ տեղ էր հատկացնում գիտության և լուսավորության տարածմանը, բնական Հարստությունները լայնորեն օգտագործելուն: Իր մտորումները երկրի ներկայի ու ապագայի մասին շարադրեց «Նոթեր Ռուսաստանի ժողովրդական կրթության մասին», «Ռուսաստանի ճանաչման մատուցներում», «Նվիրական մտքեր» գրքերում: Մենդելեևը հիանալի դասախոս էր և մանկավարժական աշխատանքը համարում էր իր երկրորդ ծառայությունը Հայրենիքին ու ազգային գիտությանը:

Ռուսական գիտությանը, համաշխարհային փառք բերեց Ա. Պոպովի (1859-1905) ռադիոհեռագրի Հայտնագործությունը: Նա ծնվել է գյուղական հողերականի ընտանիքում, կրթությունը ստացել է Պետերբուրգի համալսարանում: Դեռևս համալսարանում նա հետաքրքրվում է էլեկտրատեխնիկայով, աշխատում է գիտական խմբակներում, էլեկտրականներում: Պրոֆեսոր Պոպովը 1895 թ. ապրիլի 25-ին ռուսական ֆիզիկական ընկերությունում հանդես եկավ Հրապարակային դասախոսությամբ, որի ժամանակ ցուցադրեց իր Հայտնագործած ռադիոընդունիչը: Այդ օրն էլ համարվում է ռադիոյի գյուտի օր: Պոպովը հետագայում զգալի չափով բարելավեց իր սարքը և այն օգտագործեց նավագնացության ժամանակ, նավերի միջև կապ հաստատելու համար: 1900 թ. Պոպովի ռադիոընդունիչը օգտագործվեց Ֆիննական ծոցում ձկնորսներին փրկելու համար: Ռուս գիտնականը իր Հայտնագործության համար 1900 թ. Փարիզի համաշխարհային ցուցահանդեսում պարգևատրվեց մեծ ոսկե մեդալով: Պոպովը աշխատում էր տնտեսական ծանր պայմաններում, չնայած դրան մերժեց արտասահմանում աշխատելու առաջարկը: Նա հայտարարեց, թե ինքը ռուս է և հպարտանում է, որ ոչ թե արտասահմանում, այլ Ռուսաստանում է Հայտնագործվել կապի նոր միջոցը:

Ռուսական ռազմածովային նավատորմի սպա Ա. Մոժայսկին (1825-1890) աշխարհում առաջին անգամ կառուցեց ինքնաթիռ, որի փորձարկու-

մը հաջողութիւն չունեցաւ: Այդ գյուտը նշանակում էր մարդու մեծագույն հաղթանակը բնութիւն ուժերի նկատմամբ: Մոծայսկին արտահայտեց այնպիսի գաղափարներ, որոնք հետագայում ընկան ինքնաթիռաչինութիւն հիմքում:

Սոչոր նվաճումներ արձանագրւեցին կենսաբանական դիտութիւն մեջ: Այդ ժամանակ բնագիտութիւն մեջ իշխում էր Զարլզ Դարվինի ուսմունքը: Մեծ են ուսու բնախույզ Ի. Սեչենովի (1829-1905) ծառայութիւնները, նա դարձավ ուսական ֆիզիոլոգիական դպրոցի հիմնադիրը: Սեչենովը սովորել է Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետում, ապա բժշկութիւն մեջ կատարելագործւելու նպատակով մեկնել արտասահման, որտեղ նա դարձավ գերմանացի հայտնի գիտնական, ֆիզիկոս, մաթեմատիկոս, ֆիզիոլոգ և հոգեբան Հ. Հելմհոլցի աշակերտը: Արտասահմանում նա պատրաստեց դոկտորական ատենախոսութիւնը և Ռուսաստան վերադառնալուց հետո գլխավորեց Պետերբուրգի Բժշկավիրարութեական ակադեմիայի ֆիզիոլոգիայի ամբիոնը, կազմակերպեց ֆիզիոլոգիական լաբորատորիա: Լայն ճանաչում գտան Սեչենովի աշխատութիւնները՝ «Գլխուղեղի ռեֆլեքսները», «Հոգեբանական էսյուզները», որոնք իսկական հեղաշրջում էին գիտութիւն մեջ: Սեչենովը նույնպէս հիանալի մանկավարժ էր ու մեծ քաղաքացի, հայրենասեր, ուսական գիտութիւն պարծանք, որի գաղափարները հետագայում հիմք ծառայեցին Ի. Մեչնիկովի, Կ. Տիմիրյազևի, Ի. Պավլովի և շատ ուրիշ գիտնականների հետազոտութիւնների համար:

Ի. Մեչնիկովը (1845-1916) իր ուսումնասիրութիւնները կենտրոնացրեց կենսաբանութիւն ու բժշկութիւն հիմնախնդիրների վրա: Նա 1887 թ. Ֆրանսիացի գիտնական Լուի Պաստերի հրավերով մեկնեց Փարիզ և գլխավորեց Պաստերյան ինստիտուտի լաբորատորիաներից մեկը: Նա մինչև կյանքի վերջը չկտրեց կապերը Ռուսաստանի հետ, նամակագրական սերտ կապեր էր պահպանում Սեչենովի, Մենդելևեի, մյուս գիտնականների հետ, հաճախ գալիս էր հայրենիք, օգնում ուս հետազոտողներին: Ռուս գիտնականների հետազոտութիւնները հատուկ նշանակութիւն ունեցան աշխարհագրութիւն ասպարեղում: Եթե 19-րդ դ. առաջին կեսին ձեռնարկվեցին ծովային խոչոր գիտարշավներ, որոնք նշանավորվեցին ուշագրավ հայտնագործութիւններով, ապա հարյուրամյակի երկրորդ կեսին եղան ոչ պակաս նշանավոր ցամաքային ճանապարհորդութիւններ: Նրանք իրենց գիտարշավներով ուսումնասիրեցին այնպիսի աշխարհագրական վայրեր ու երկրամասեր, որտեղ մինչ այդ ոտք չէր դրել ոչ մի օտարերկրացի ընդհանրապէս ու եվրոպացի մասնավորապէս: Ռուս ճանապարհորդների հետազոտութիւնները կենտրոնացվեցին Ասիայի խորքային շրջանների վրա: Այս առումով գիտարշավի սկիզբը դրեց աշ-

խարհագետ Պ. Սեմյոնով Տյան-Շանսկին (1827-1914), որը միաժամանակ վիճակագիր էր, բուսաբան և միջատաբան: Նա մի շարք ճանապարհորդութիւններ կատարեց դեպի Միջին Ասիայի բնոները, Տյան-Շան, անդրկասպյան տարածքով ու Թուրքեստանով: Գլխավորելով ուսական աշխարհագրական ընկերութիւնը՝ առաջատար դեր է խաղում նոր գիտարշավների ծրագրեր մշակելու գործում: Նրա մտահղացմամբ իրականացվեց Միջին ու Կենտրոնական Ասիայի գիտական հետախուզական լայնածավալ աշխատանքը: Հենց Սեմյոնով Տյան-Շանսկու նախաձեռնութիւնով ձեռնարկվեց «Ռուսաստան: Մեր հայրենիքի աշխարհագրական ամբողջական նկարագրութիւնը» հիանալի բազմահատոր հրատարակութիւնը:

Ռուսական աշխարհագրական ընկերութիւն հետ էր կապված ուս մյուս ճանապարհորդների՝ Պ. Կրոպոտկինի և Ն. Պրժևալսկու գործունեութիւնը: Կրոպոտկինը 1864-1866 թթ. ճանապարհորդութիւն կազմակերպեց Հյուսիսային Մանջուրիա, իսկ Պրժևալսկու (1839-1888) արշավախումբը՝ Ուսուրական երկրամաս և Կենտրոնական Ասիայի դժվարամատչելի շրջաններ: Նա մի քանի անգամ կտրել-անցել է Մոնղոլիան, Հյուսիսային Չինաստանը, հետազոտել է Գոբիի անապատը, Տյան-Շան բնոները, Արևմտյան Չինաստանը, Կենտրոնական Ասիայի շատ տարածքներ: Պրժևալսկու պատրաստած կենդանիների հերթաբերումները և հավաքածուները մեծ ավանդ էին ու լուրջ ներդրում կենդանաբանութիւն և բուսաբանութիւն դարգացման գործում: Նրա հետազոտութիւնները համաշխարհային ճանաչում ստացան: Նրանք եվրոպացիների համար հայտնագործեցին Կենտրոնական Ասիան, Տիբեթը, որոնք ինչպէս նշվեց, առաջնորդում գրեթե անհայտ էին նրանց: Պրժևալսկին մահացավ ճանապարհին, իր վերջին գիտարշավի սկզբին: Նրա մահվան առթիւ Ա. Չեխովը գրեց, որ այդպիսի մարդիկ «անհրաժեշտ են ինչպէս արևը»:

Աչքի ընկնող ճանապարհորդ ու գիտնական Ն. Միկլուխտ Մակլայը (1846-1888) ուսանողական ժողովներին մասնակցելու համար հեռացվեց Պետերբուրգի համալսարանից ու հարկադրված մեկնեց արտասահման, որտեղ էլ ավարտեց իր կրթութիւնը: Իր առաջին ճանապարհորդութիւնները նա կատարեց դեպի Կանարյան կղզիները, Մարոկկո, Կարմիր ծովի ափերը և արժեքավոր հետազոտութիւններ կատարեց կենդանաբանութիւն ու աշխարհագրութիւն ասպարեղում: Կյանքի մեծ մասը նա նվիրեց Ասիայի Հարավարևելյան, Ավստրալիայի, Խաղաղ օվկիանոսյան կղզիների ժողովուրդների կյանքի ուսումնասիրմանը: Երկու և կես տարի (1871-1872, 1876-1877, 1883) ապրեց պապուականների մեջ՝ Նոր Գվինեայի Հյուսիսարևելյան ափին (այդ ժամանակից ափը կոչվում է Մակլայի ափ): Տեղական բնակչութիւն նկատմամբ իր բարի, մարդասիրական վերաբերմուն-

քով ուս գիտնականը նվաճեց նրանց անկեղծ սերն ու անսահման վստահությունը: Այնուհետև նա ճանապարհորդեց Ֆիլիպիններում, Ինդոնեզիայում, Մալակկայում, ուսումնասիրեց Միկրոնեզիայի ու Մելանեզիայի ժողովուրդներին, ապրեց Ավստրալիայում, որտեղ հիմնադրեց կենսաբանական կայան: Պապուասների կենցաղի և բարքերի, տնտեսության ու նյութական մշակույթի մասին նրա նկարագրությունները մինչև այժմ չեն կորցրել իրենց գիտական նշանակությունը: Օկյանիայի ժողովուրդների ապրելակերպի նկարագրությունների զգալի մասը հրապարակվեց միայն գիտնականի մահից հետո: Միկլուսո Մակլայը կրքոտ ելույթներ էր ունենում գաղութային համակարգի ու ստրկավաճառության դեմ: 1881 թ. նա մշակեց նախագիծ Նոր Գվինեայում անկախ պետություն՝ Պապուասական Միություն ստեղծելու մասին: 1886 թ. անհաջող փորձ կատարեց ուսական կառավարությունից թույլտվություն ստանալու Նոր Գվինեայում կազմավորել «ազատ ուսական գաղութ»՝ կառուցված համայնական-արտելային սոցիալիզմի սկզբունքների վրա: Այդ տարիներին համաշխարհային աշխարհագրական գիտությունը, որպես կանոն, հենվում էր ուս հետազոտողների նվաճումների վրա: 19-րդ հարյուրամյակի վերջին ավարտվեց աշխարհագրական հայտնագործությունների դարաշրջանը: Եվ միայն Արկտիկայի ու Անտարկտիդայի սառցե լայնածավալ տարածքները չարունակում էին պահպանել իրենց գաղտնիքները: Աշխարհագրական վերջին հայտնագործությունները ուս հետազոտողների ակտիվ մասնակցությամբ տեղի ունեցան 20-րդ դարի սկզբին, որոնց շնորհիվ Մոսկվան ու Պետերբուրգը դասվեցին համաշխարհային գիտական կենտրոնների շարքը: 19-րդ դարի երկրորդ կեսին նկատելի հաջողության հասան ուս ճարտարապետները և քանդակագործները: Կառուցվեցին մի քանի թատերական շենքեր Ռիբինսկում, Իրկուտսկում և Նիժնի Նովգորոդում, խոշոր թանգարաններ: 1877 թ. Մոսկվայում բացվեց Պոլիտեխնիկական թանգարանը (ճարտարապետներ Ի. Մոնիգեստի և Ն. Շոխին): Ռուսաստանի մշակութային կյանքում խոշոր իրադարձություն էր Պատմության թանգարանի բացումը Կարմիր հրապարակում: Նրա շինարարությունը սկսվեց 1875 թ. և ավարտվեց 1883 թ.՝ նախագիծը մշակեց Վ. Շերվուդը՝ Հին Մոսկվայի գիտակ պատմաբան Ի. Զարեկինի մասնակցությամբ:

19-րդ դարի երկրորդ կեսի նշանավոր քանդակագործներից էր «պերեդվիժնիկների» հայացքները կիսող Մ. Անտոպոլսկին, որը ստեղծեց դիմաքանդակների մի ամբողջ պատկերասրահ՝ «Իվան Ահեղ», «Պյոտր I», «Յարոսլավ Իմաստուն», «Երմակ»: Ռուսական մշակույթի պատմության մեջ ընդհանրապես ու քանդակագործության ասպարեզում հատկապես



Ոսկե աշուն: Նկարիչ Իսահակ Իլյիչ Արշինով (1860-1900)



Տարեկան: Նկարիչ Իվան Իվանովիչ Շիշկին (1832-1898)



Անտառահատում
Նկարիչ Իվան Իվանովիչ Շիշկին (1832-1898)



Անտառապահ
Նկարիչ Իվան Նիկոլաևիչ Կրամսկոյ (1837-1887)



Ամպրոպից հետո
Նկարիչ Ֆյոդոր Ալեքսանդրովիչ
Վասիլև (1850-1873)



Սերմնաբազմերը վերադարձան
Նկարիչ Ալեքսեյ Կոնդրատևիչ
Սավրասով (1830-1897)



Տնային դաստիարակչուհու ժամանումը վաճառականի տուն
Նկարիչ Վասիլի Գրիգորևիչ Պերով (1834-1882)



Եղյակ: Նկարիչ Վասիլի Գրիգորևիչ Պերով (1834-1882)



Բտարական առավուտ: Նկարիչ Կարլ Պավլովիչ Բրյուլով (1799-1852)



Պոմպեյի վերջին օրը: Նկարիչ Կարլ Պավլովիչ Բրյուլով (1799-1852)



Քրիստոսի հալանությունը ժողովրդին
Նկարիչ Ալեքսանդր Անդրեևիչ Իվանով (1806-1858)



Կուզմա Մինինի կոչը
Նկարիչ Կ. Ն. Մակովսկի



Իվան Ահեղը և նրա որդի Իվանը
Նկարիչ Իվան Եֆիմովիչ Ռեպին
(1844-1930)



Բուդակները Վոլգայի վրա: Նկարիչ Իվան Եֆիմովիչ Ռեպին (1844-1930)




Ստրելեցների մահապատժի առավոտը
Նկարիչ Վասիլի Իվանովիչ Ստրիկով (1848-1916)



Բոլարուհի Մորոզովան: Նկարիչ Վասիլի Իվանովիչ Ստրիկով (1848-1916)



Պատերազմի ապոթեոզ: Նկարիչ Վ. Վ. Վերեշագին




Կալատուն



Գլխաշորով աղջիկը

Նկարիչ Ալեքսեյ Գավրիլովիչ Վենեցիանով (1780-1847)



Ժանեկագործուհին

Նկարիչ Վասիլի Անդրեևիչ Տրուպինին (1776-1857)



Որդու դիմանկարը



Նորաթուխ կավալերը



Ուսանողուհի
Նկարիչ Ն. Ա. Յարոշենկո



Նկարիչ Կ. Պ. Բոգդանով-Բելսկի



Մայրի խնամախոսությունը
Նկարիչ Պավել Անդրեևիչ Ֆեդոտով (1815-1852 թթ.)



Երեք դյուցազուններ Նկարիչ Վիկտոր Միխայլովիչ Վասնեցով (1848-1926 թթ.)



Մեծ խարսխակայան Կրոնշտադտում
Ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկի (1817-1900 թթ.)



Շիպկա-Շեյնովոյի ճակատամարտը: Նկարիչ Ա. Կիլչենկո



Շիպկա-Շեյնովո: Նկարիչ Վ. Վ. Վերեչագին



Սիբիրի նվաճումը Երմակ Տիմոֆեևիչի կողմից
Նկարիչ Վ. Ի. Ստրիկով (1846-1916 թթ.)



Որդու մոտ
Նկարիչ Կ. Վ. Լեբեդև



Այց աղբատներին: Նկարիչ Վ. Ե. Մակովսկի



Զեմաստվոն ճաշում է
Նկարիչ Գ. Գ. Մյասոյեդով



Պետերբուրգի մաթեմատիկական
դպրոցի հիմնադիրներից ակադեմիկոս
Մ. Վ. Օստրոգրադսկի (1801-1862 թթ.)



Նշանավոր աստղագետ, Պուլկովյան
աստղադիտարանի տնօրեն, ակադեմիկոս
Վ. Զ. Ստրուվե (1793-1864 թթ.)



Ռուսական քիմիայի նահապետ
Ա. Ա. Վսկրեսենսկի (1809-1880 թթ.)



Նշանավոր ֆիզիկոս, ակադեմիկոս
Բ. Ա. Յակոբի (1801-1874 թթ.)



Ռադիոհեռագրի
հայտնաբերողից
հեղինակ Ա. Ա. Պոպով
(1858-1905 թթ.)



Ի. Պ. Լիտկե (1797-1882 թթ.)
Ռուսական աշխարհագրական
ընկերության հիմնադիր, որը մեծ
ղեր խաղաց աշխարհագրական
ընկերության գործում



Ռուսական առաջին շորջերկրյա ծովային գիտարշավի ղեկավար, ծովագնաց և գիտնական
 Ի. Ֆ. Կրուպենշտեյն (1770-1846 թթ.)



Շորջերկրյա նավարկությունների ղեկավար ծովակալ
 Մ. Պ. Լազարև (1788-1851 թթ.)



Մովսիս աշխարհագրական շատ հայանագործությունների, շորջերկրյա նավարկությունների ղեկավար ծովակալ
 Ա. Մ. Գոյանին (1776-1831 թթ.)



Ռուս մեծ գիտնական, քիմիկոս, քիմիական տարրերի պարբերական օրենքի հայտնագործող
 Դ. Ի. Մենդելեև (1834-1907 թթ.)





խոշորագույն իրադարձություն էր 1880 թ. Մոսկվայի կենտրոնում բացված Ա. Պուշկինի հոյակապ արձանը, որը այսօր էլ զարդարում է Ռուսաստանի մայրաքաղաքը: Պուշկինի արձանը ճորտական ծագում ունեցող հայտնի քանդակագործ Ա. Օպեկուշինի (1838-1923) լավագույն ստեղծագործությունն է, որի բացմանը ներկա էին ուսական մշակույթի խոշորագույն ներկայացուցիչները: Ելույթ ունեցողների մեջ էր Ֆ. Գոստոնսկին: 19-րդ դարի 50-ական թթ. վերջին հայտարարվեց մրցույթ «Ռուսաստանի հազարամյակը» հուշարձանի կառուցման համար: Այն նախատեսվում էր կառուցել Նովոդեոկովո 1862 թ.՝ նվիրված նովոդեոկովինների կողմից Ռյուրիկին հրավիրելու հազարամյակին: Մրցույթի հաղթող ճանաչվեց Գեղարվեստների ակադեմիայի 25-ամյա շրջանավարտ Մ. Միկեշինը (1835-1896), որի ղեկավարությամբ հուշարձանի կառուցման աշխատանքներին մասնակցեցին մի ամբողջ խումբ քանդակագործներ, ներառյալ և Ա. Օպեկուշինը: Դիմաքանդակներով գոտևորված վեհարձանը ներկայացնում էր Ռուսաստանի պատմության կարևորագույն փուլերը և բեկումնային դարաշրջանները: Այնտեղ են մեծ իշխանների, թագավորների, կայսրերի, խոշորագույն զորահրամանատարների, ծովակալների, բանաստեղծների, գրողների, երաժիշտների ու Ռուսաստանի այլ փայլուն զավակների դիմաքանդակները: Առանց նրանց անհնարին է պատկերացնել ուսական հասարակությունը և երկրի հզորությունը: Ընդամենը ձուլվել է 129 դիմաքանդակ: Վեհարձանի գնդաձև վերին հատվածը խորհրդանշում է կայսերական վեհապետությունը՝ թագավորական իշխանության խորհրդանշանը: Իսկ գնդաձև վերին հատվածում ծնկաչոք կինը մարմնավորում է Ռուսաստանը: Նրան խաչով պաշտպանում, հովանավորում է թևավոր հրեշտակը: Հետագայում Միկեշինի նախագծով Պետերբուրգում կառուցվեց Եկատերինա Երկրորդի արձանը, իսկ Կիևում՝ Բոգդան Սմելնիցկու հուշարձանը:

19-րդ դարի ուսական մշակույթը իր ազգային ոճով, բովանդակությամբ, առանձնահատկություններով նշանակալի երևույթ է համամարդկային հարուստ մշակույթի զանձարանում:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ռուսական անծայրածիր բազմազգ կայսրության սոցիալ-տնտեսական, ռազմաքաղաքական, պատմադիվանագիտական, գիտության ու մշակույթի պատմության մեջ XIX հարյուրամյակում տեղի ունեցան կարևոր փոփոխություններ և էական տեղաշարժեր: Այդ դարաշրջանի գլխավոր, հիմնական հատկանիշը երկրի արագ զարգացումն էր, քանզի նոր հարյուրամյակ թևակոխելով որպես հիմնականում ագրարային երկիր՝ ավատատիրական, ճորտատիրական համակարգով, Ռուսաստանը արագ վերակառուցեց իր տնտեսությունը և XIX-XX դդ. սահմանազօին համախառն արտադրանքով գրավեց հինգերորդ տեղը՝ դառնալով արդյունաբերական միջին մակարդակ ունեցող կապիտալիստական տերություն: Այսուհանդերձ, Ռուսաստանի սոցիալ-տնտեսական ու քաղաքական կյանքում դեռևս պահպանվում էին ավատատիրական-ճորտատիրական մնացուկները՝ կալվածատիրական հողատիրությունը և ինքնակալությունը՝ բացարձակ միապետությունը, միահեծան ինքնակալությունը իր անսահմանափակ իրավունքով, բնակչության ցածր կենսամակարդակով:

XIX հարյուրամյակի ընթացքում կայսերական Ռուսաստանը կանգնած էր անխուսափելի այլընտրանքի առաջ՝ հեղափոխություն, թե բարեփոխում (ռեֆորմ): Ռուսաց միապետներ Ալեքսանդր Առաջինը և նրա եղբոր որդին՝ Ալեքսանդր Երկրորդը չէին կասկածում, քաջ գիտակցում էին, թերևս լիովին համոզված էին վերափոխումների անհրաժեշտության մեջ, նպատակ ունենալով դրանցով կանխել հնարավոր ու թերևս անխուսափելի խռովությունները, ապստամբությունները, արյունահեղությունը: Ալեքսանդր Առաջինը համոզված էր, որ հեղափոխությունը «ներքևից» հնարավոր է խուսափել հեղափոխություն «վերևից» անցկացնելու միջոցով: Սակայն այդ ուղղությամբ Ալեքսանդրի անհետևողական քայլերը մի կողմից և հատկապես անժամանակ, տարօրինակ հանգամանքներում մահը կասեցրին սկսված բարեփոխումների գործընթացը և դրանով իսկ նպաստեցին եղբայրասպան զինված արյունահեղ պայքարին, որը պատմազրույթի մեջ հայտնի է դեկաբրիստական շարժում անունով: Միաժամանակ երկրում մեծ ազդեցություն ունեին այն ուժերը, որոնք դեմ էին ցանկացած վերափոխման, նրանք՝ համոզված ճորտատեր-միապետականները, կայսրության հզորությունը տեսնում էին միայն ինքնակալության անսասանության մեջ: Սակայն Ալեքսանդր Երկրորդը, հաղթահարելով այդ ուժերի դիմադրությունը և հենվելով լիբերալ ազնվականության վրա, ստանալով նրանց աջակցությունը, համոզվելով, որ ճորտատիրա-

կան համակարգը իրեն վաղուց սպառել է, կատարեց վճռական քայլ ու անցկացրեց պատմական նշանակություն ունեցող վերափոխումներ՝ ճորտատիրական իրավունքի վերացումից մինչև դեմստվային, դատական, զինվորական բարեփոխումները: Ի դեպ XIX դարի 50-60-ական թթ. ճորտատիրական իրավունքի վերացման օգտին լիբերալ ազնվականների հետ միասին և ավելի վճռական պահանջով հանդես էին գալիս հեղափոխական-ժողովրդավարները: Ճորտատիրական իրավունքի վերացման օգտին հանդես էին գալիս սլավոնասերները և արևմտականները: Այն դարձավ Ալեքսանդր Երկրորդի կայսերական-պետական գործունեության թագը և պսակը: Եվ օրինաչափ է, որ նա Ռուսաստանի պատմության մեջ իրավամբ ստացավ կայսր-Ազատարար, իսկ վերափոխումները՝ «Մեծ բարեփոխումներ» անունները: Այս ամենի շնորհիվ ճանապարհ հարթվեց դեպի ինդուստրիալ հասարակություն, թեև բարեփոխումները անհետևողական էին, հակասական իրենց բոլոր խոցելի գծերով: Այդ պատմափուլում հասարակական-քաղաքական շարժման մեջ կազմակերպորեն ձևավորվեցին լիբերալ-ազատական, հեղափոխական-ժողովրդավարական և պահպանողական-միապետական ուղղությունները: Ռուսական հասարակության քաղաքական կյանքում նոր երևույթ է դառնում բանվորական շարժումը, որը պայմանավորված էր նոր ձևավորված պրոլետարիատի անմխիթար դրություն հետ: Դրա հետ մեկտեղ կարևորվում է դեմստվային շարժումը: Թե՛ հեղափոխական-ժողովրդավարների, թե՛ լիբերալ-ազատականների, թե՛ դեմստվային գործիչների առաջարկները և պահանջները տառապում էին միակողմանիությամբ, անտեսվում էին փոխադարձ զիջումները, որն էլ անհնարին էր դարձնում համագործակցությունը, առավել ևս դաշինքը, համատեղ պայքարի հնարավորությունը և թուլացնում էր ինքնակալության ընդդիմադիր ուժերին: Իսկ նարոդովոլականների 1881 թվականի մարտի 1-ին կազմակերպած քաղաքական ահաբեկչությունը Ալեքսանդր Երկրորդի դեմ, ոչ միայն ցնցեց հանրությունը, այլև կտրուկ փոխեց իրադրությունը երկրում: Նրանց ոչ հեռամետ, ըստ էության արկածախնդրային այս մարտավարությունը կատարեց քաղաքական բուժման գի դեր ու կրախի մատնեց այդ շարժումը: Սպանվեց Ալեքսանդր Երկրորդ կայսր Ազատարարը, որը տվեց էր իր համաձայնությունը մարտական գններալի, ռուս-թուրքական պատերազմի Կովկասյան ռազմաճակատի հերոս, նշանավոր պետական այրի՝ Լորիս-Մելիքովի մշակած սահմանադրական նախագծին, որը նախատեսում էր երկրի առաջընթացի ապահովում աստիճանական ուղիով, նիհիլիստ-հեղափոխականներին սոցիալական արմատներից կտրելու և զրկելու միջոցով քաղաքական լարվածությունը թուլացնելու նպատակներ: Սակայն թագավորասպանությունից հետո Ալեքսանդր Երկրորդ մերժեց այդ նախագիծը և առաջնորդվեց պահպանո-

զական Հոսանքի ամենաազդեցիկ ներկայացուցիչների Պորեդոնոսցևի ու Կատկովի քաղաքական մարտավարությունը, որի հիմքում ընկած էր ինքնակալության անսասանությունը՝ միապետի իրավունքների ոչ մի սահմանափակում, քանզի նրանք Ռուսաստանի հզորությունը պայմանավորում էին կայսրի անսահմանափակ իշխանության հետ, երկրի ներուժի կարևորագույն երաշխիքը տեսնում էին միահեծանության պահպանման մեջ: Պահպանողականները ըստ էության ղեկավարվում էին սլավոնասերների ուսմունքով, այն հարմարեցնելով նոր պայմաններին: Սակայն դա չթուլացրեց ինքնակալության դեմ ընդդիմադիր ուժերի հզոր շարժումը: Ռուսական հասարակության շրջանում սահմանադրական նախագծերի, քաղաքացիական իրավունքների ու ազատությունների հիմնահարցերի արծարծումները նշանակալից իրավաքաղաքական երևույթ էին XIX դարի համար, որոնք սակայն որպես կանոն քիչ էին ընկալվում ու ընդունվում պետության կողմից: Ինքնակալական համակարգը պահպանելու և փրկելու մտահղացումները մեջ կառավարությունը գերազանցապես հենվում էր հասարակության շրջանում դեռևս ուժեղ դիրքեր ունեցող պահպանողական ուժերի վրա, որոնք սակայն բնականաբար լիովին չէին արտահայտում հանրության բոլոր շերտերի շահերը, քանզի նրա մի հատվածը գիտակցում էր միապետության անկատարելությունը, տեսնում խոցելի կողմերը, հասկանում դրանց վերացման անհրաժեշտությունը: Թեև այդ ամենը մնաց թղթի վրա, որպես «մեռած տարր», այնուամենայնիվ, միապետական համակարգի ճակատագիրը կանխորոշված էր, բայց նրա անկումը ձգձգվում էր ընդդիմադիր ուժերի միջև ընթացող սուր և անհաշտ գաղափարաքաղաքական պայքարի պատճառով: Հասունանում էր Ռուսաստանի պատմության թերևս ամենաողորմական էջը, որը ավարտվելու էր եղբայրասպան արյունահեղությամբ և ավելի էր սրելու քաղաքական իրադրությունը երկրում: Պետության ու հանրության միջև առկա հակամարտությունը բնավ չէր նշանակում, թե հանրությունը ամբողջովին հրապուրված էր անարխիստական գաղափարներով, պաշտպանում էր նիհիլիստական-հեղափոխական ուսմունքները, քանզի նրա մի փոքր հատվածն էր միայն հանդես գալիս պետության վերացման, ինքնակալության տապալման, իշխանափոխության պահանջներով: Հասարակության ճնշող մեծամասնությունը գիտակցում էր, որ միայն պետության առկայության շնորհիվ է հնարավոր պաշտպանել երկրի սահմանների անվտանգությունը օտար ներխուժումներից, խուսափել ներքաղաքական քաոսից ու զանազան խռովություններից: Ռուսաստանի քաղաքական պատմության կարևորագույն հիմնահարցերից էր մարքսիստական տեսության տարածումը հասարակության շրջանում, որը գերազանցապես առնչվեց կապիտալիստական հարաբերությունների զարգացման և բան-

վոր դասակարգի իրբև ինքնուրույն քաղաքական ուժի կազմավորման հետ: XIX հարյուրամյակում ռուսական կայսրությունը միջազգային հարաբերությունների համակարգում վերջնականապես դարձավ համակրոպական մեծ տերություն, որի հիմքերը դրվել էին Պյոտրի, Եկատերինայի, Պավելի թագավորության տարիներին: Դա ձեռք բերվեց հաղթական պատերազմների շնորհիվ: Հատկապես հիշարժան էր 1812 թ. Հայրենական հաղթական պատերազմը նապոլեոնյան Ֆրանսիայի դեմ, որը ունեցավ համակրոպական նշանակություն: Անգամ անհաջող, դառը պարտությունը Ղրիմի (Արևելյան) պատերազմում հիմնականում չխախտեց Ռուսաստանի՝ որպես մեծ տերություն, կարգավիճակը, քանզի նախորդ պատմափուլի նման առանց նրա մասնակցության չէր կարող քննարկվել, առավել ևս լուծվել, համաշխարհային քաղաքականության որևէ հիմնական կետ: Ռուսաստանը Եվրոպայի երկրների հետ ձգտում էր պահպանել իրավահավասար, բարեկամական, միջպետական հարաբերություններ, հակամարտությունները կանխել կամ լուծել գերազանցապես խաղաղ եղանակով, դիվանագիտական խողովակներով: Ռուսական դիվանագիտության վճռական գործողությունների ու հստակ դիրքորոշմամբ ոչ միայն հնարավոր դարձավ փրկել Ֆրանսիան բիսմարկյան Գերմանիայի նոր հուժկու հարվածից, որի շնորհիվ Ֆրանսիան փրկվեց փաստացի ջախջախումից, այլև վերացնել «ռազմական վտանգը» և ըստ էության փրկել Եվրոպան մեծ պատերազմից: Ռուսական զինքի անվիճելի հաղթանակները Անդրկովկասում ու Բալկաններում առարկայորեն խաղացին առաջադիմական դեր քրիստոնյա՝ առաջին հերթին հայ ու սլավոն ժողովուրդների պատմական ճակատագրերում: Այս ամենը բարձրացնում էր Ռուսաստանի հեղինակությունը համաշխարհային հանրության շրջանում, ամրապնդում նրա դիրքերը միջազգային ասպարեզում: Կայսերական Ռուսաստանը դարձավ շրջում հանրապետական Ֆրանսիայի հետ կնքեց ռազմաքաղաքական դաշինք, միայն այն ժամանակ, երբ Եվրոպայի կենտրոնում ձևավորվեց ռազմաքաղաքական խմբակցություն (Գերմանիա, Ավստրո-Հունգարիա, Իտալիա), ուղղված Ռուսաստանի ու Ֆրանսիայի դեմ: Եվ օրինաչափ է, որ Ալեքսանդր Երրորդը ստացավ «կայսր-խաղաբարար» անունը, իսկ նրա որդու՝ Ռոմանովների արքայատան վերջին ներկայացուցիչ Նիկոլայ Երկրորդի առաջարկությամբ և նախաձեռնությամբ Ռուսաստանը առաջինը դրեց սպառազինությունների սահմանափակման հիմնահարցը և այդ առնչությամբ երկու անգամ հրավիրվեց միջազգային խորհրդաժողով Հաագայում:

XIX հարյուրամյակում բուն վերելք ու ծաղկում ապրեց ռուսական մշակույթը և գիտությունը՝ հատկապես պերճախոս և գրականության, պատմագրության, երաժշտության, գեղանկարչության, ճարտարապետու-

թյան, մյուս ճյուղերի նվաճումները: Ռուսական ոսկեդարյան արվեստը Եվրոպական Հարուստ մշակույթների ընտանիքում իրավամբ զբաղեցրեց իր պատվավոր ու արժանի տեղը, որի Համաշխարհային նշանակության կոթողները մեր օրերում էլ չեն կորցրել իրենց հնչեղությունը, թարմու-
թյունը և հրատապությունը:

Ն Ա Ր Յ Ե Ր ԵՎ Ա Ռ Ա Ջ Ի Ն Ի Բ Ա Ր Ե Փ Ո Ւ ՈՒ Մ Ն Ե Ր Ը ԵՎ

Ա Լ Ե Ք Ս Ա Ն Դ Ի Ա Ռ Ա Ջ Ի Ն Ի Բ Ա Ր Ե Փ Ո Ւ ՈՒ Մ Ն Ե Ր Ը ԵՎ Ա Ր Տ Ա Ք Ի Ն Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ը

1. Բնութագրե՛ք կայսերական Ռուսաստանի պետական-քաղաքական համակարգը XIX դարի սկզբին:
2. Բնութագրե՛ք Ալեքսանդր Առաջինի բարեփոխումները Ռուսաստանի սոցիալ-տնտեսական ու պետական-քաղաքական կյանքի համար:
3. Հիմնավորե՛ք, որ ճորտատիրական համակարգը Ռուսաստանում խոչընդոտում էր երկրի տնտեսական, քաղաքական հարևարությունների զարգացմանը:
4. Նշե՛ք ինչպես էին ժամանակակիցները գնահատում կայսր Ալեքսանդր Առաջինին: Բնութագրե՛ք Ալեքսանդրին իբրև պետական գործիչ ու դիվանագետ:
5. Ներկայացրե՛ք կայսերական Ռուսաստանի միջազգային դրուժյունը և արտաքին քաղաքականությունը XIX դ. առաջին քառորդում:
6. Բացատրե՛ք Նապոլեոնյան Ֆրանսիայի կենսագործած ցամաքային շրջափակման քաղաքականության էությունը և ինչպես այն անդրադարձավ Ռուսաստանի տնտեսության վրա:
7. Համեմատե՛ք 1812 թ. պատերազմի նախօրյակին Ռուսաստանի ու Ֆրանսիայի բանակների ուժերի հարաբերակցությունը:
8. Ապացուցե՛ք, որ 1812 թ. պատերազմը իր բնույթով Ռուսաստանի համար ժողովրդական էր, ազատագրական, հայրենական:
9. Ինչու՞ ռուսական բանակը ստիպված էր պատերազմի սկզբում նահանջել և ինչպե՞ս էր տեղի ունենում այդ նահանջը:
10. Ի՞նչ ռազմական մարտավարություն էին ընտրել Կուտուզովը և Բոնապարտը Բորոդինոյի ճակատամարտում: Պատմե՛ք այդ ճակատամարտի ընթացքի, նրա արդյունքների, իրարամերժ գնահատականների և ռազմաքաղաքական նշանակության մասին:
11. Ինչու՞ Կուտուզովը որոշեց թողնել Մոսկվան առանց նոր ճակատամարտի: Ձեր մոտեցումը ռուս զորավարի մարտավարության նկատմամբ:
12. Ներկայացրե՛ք ռուսական բանակի հակահարձակման ծրագիրը և թշնամու վտարումը կայսրության տարածքից:

13. Հիմնավորե՛ք ռուսական բանակի արտասահմանյան արշավանքի նպատակները և արդյունքները:

14. Ներկայացրե՛ք Ռուսաստանի մասնակցությունը Վիեննայի վեհաժողովում և ստորագրված եղբայրակից ակտի նշանակությունը:

15. Ի՞նչ դեր էր խաղում կայսերական Ռուսաստանը «Սրբազան դաշինքում», ներկայացրե՛ք 1812-1815 թթ. պատերազմի նշանակությունը և միջազգային քաղաքական արդյունքները:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՑԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ (XIX Դ. 20-50-ԱԿԱՆ ԹԹ.)

1. Հիմնավորե՛ք, թե քաղաքական ի՞նչ գործոններ նպաստեցին ազնվական-հեղափոխականների առաջին կազմակերպությունների առաջացման և հակաճորտատիրական հայացքների ձևավորմանը: Համեմատե՛ք առաջին երկու կազմակերպությունները՝ «Փրկության միությունը» և «Բարօրության միությունը»:

2. Մանրամասնորեն բնութագրե՛ք «Հարավային» և «Հյուսիսային» ընկերությունների ծրագրերը:

3. Ինչու՞ ազնվական հեղափոխականները, որոշեցին հանդես գալ 1825 թ. դեկտեմբերին և ինչպե՞ս նրանք նախապատրաստեցին ապստամբությունը:

4. Պատմե՛ք դեկաբրիստների ապստամբության ընթացքի մասին: Ի՞նչ ծրագրեր ունեին նրանք և ինչպե՞ս ղրանք իրականացվեցին:

5. Պատասխանե՛ք կարո՞ղ էին արդյոք դեկաբրիստները ժողովրդին բարձրացնել ապստամբության:

6. Տարբերել հեղափոխական շարժումները գյուղացիական ապստամբություններից:

7. Փաստարկե՛ք, որ դեկաբրիստները անտեսեցին ժողովրդին և ինչու՞ էր դա պայմանավորված:

8. Հիմնավորե՛ք դեկաբրիստական ապստամբության տեղը և նշանակությունը ռուսաստանյան հասարակական-քաղաքական մտքի պատմության մեջ:

9. Ինչպե՞ս անդրադարձավ դեկաբրիստների ապստամբության պարտությունը ռուսական հասարակական-քաղաքական մտքի վրա:

10. Բնութագրե՛ք «Պաշտոնական ժողովրդայնության տեսությունը», նրա գաղափարախոսության էությունը:

11. Ինչու՞ Ռուսաստանի զարգացման ուղիների մասին հիմնահարցը դրվեց XIX դ. 40-ական թթ. գաղափարական պայքարի կիզակետում:

12. Բնութագրե՛ք սլավոնասերների ու արևմտականների գաղափարական-քաղաքական հայացքները, նշե՛ք նրանց հայացքների նմանությունը և տարբերությունը:

13. Ներկայացրե՛ք Վ. Բելինսկու հայացքները և գործունեությունը, դրանց տեղը և նշանակությունը ռուսական հասարակական քաղաքական կյանքում:

14. Բնութագրե՛ք Ա. Գերցենի և նրա բարեկամ Ն. Օգարյովի հայացքներն ու գործունեությունը XIX դարի 40-ական և 50-ական թվականների սկզբին:

15. Մեկնարանե՛ք, թե ի՞նչ է ռուսական համայնքը և ինչու՞ էր Գերցենը այն համարում սոցիալիզմի սաղմը: Նշե՛ք Գերցենի սոցիալիստական ուստոպիայի ուսմունքի էությունը:

16. Գնահատե՛ք պետրաշևականների հայացքները, համեմատե՛ք Գերցենի ու Օգարյովի ծրագրերի հետ:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

XIX ԴԱՐԻ 20-50-ԱԿԱՆ ԹԹ.

1. Բացատրել, թե ի՞նչպիսին էր ռուսաց կայսրության արտաքին քաղաքականությունը Անդրկովկասում:

2. Նկարագրել՝ ինչպե՞ս և ե՞րբ տեղի ունեցավ Արևելյան Վրաստանի միակցումը Ռուսաստանին: Վերլուծել պատմագրության մեջ (ռուսական և վրացական) տարբեր ժամանակներում ձևավորված տեսակետները:

3. Բնութագրե՛ք Հյուսիսարևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, տվե՛ք ձեր պատմագիտական գնահատականը, նշե՛ք Թուրքմենչայի պայմանագրի հրատապությունը և արդիականությունը:

4. Պատմե՛ք Հյուսիսային Կովկասի ժողովուրդների մասին ձեր պատկերացումները: Ի՞նչ է մյուրիդիզմը:

5. Որո՞նք են կովկասյան պատերազմի պատճառները: Շամիլ: Ինչու՞ կովկասի նվաճումը ձգձգվեց տասնյակ տարիներ:

6. Բացատրե՛ք «Արևելյան Հարց» հասկացության միջազգային իրավական ու դիվանագիտական բովանդակությունը: Նշե՛ք Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը Մերձավոր Արևելքում ու Բալկաններում:

7. Ինչպե՞ս սկսվեց Ղրիմի (Արևելյան) պատերազմը: Պատմեցե՛ք պատերազմի առաջին փուլի մասին, հիմնավորե՛ք, թե ինչու՞ է պատերազմը կոչվում Ղրիմի և ոչ թե ռուս-թուրքական:

8. Ինչու՞ Անգլիան, Ֆրանսիան և Սարդինիական թագավորությունը մտան Արևելյան պատերազմի մեջ ու պատերազմ հայտարարեցին կայսերական Ռուսաստանին:

9. Նկարագրե՛ք Սևաստոպոլի պաշտպանությունը: Վ. Կոռնիլովը, Պ. Նախիմովը, Վ. Իստոմիրը, է. Տոսլեբենը Սևաստոպոլի պաշտպանության հերոսներ:

10. Պատմե՛ք ե՞րբ, որտե՞ղ և ի՞նչ պայմաններով կնքվեց Հալտուիթյան պայմանագիրը Ղրիմի պատերազմն ավարտելուց հետո:

ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅԱՆ

ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

1. Նշե՛ք XIX դ. առաջին կեսի ռուս նշանավոր գրողների ստեղծագործությունների հասարակական-քաղաքական և համաշխարհային նշանակությունը:

2. Թվե՛ք ռուս ամենախոշոր գրողներին և նրանց ստեղծագործությունները:

3. Հասարակության ինչպիսի՞ բարքերի ու արատների դեմ հանդես եկավ Ա. Գրիբոյեդովը «Սելքից պատուհաս» կատակերգությունում:

4. Հիմնավորե՛ք ռուսական գեղանկարչության, երաժշտության, թատրոնի հասարակական նշանակությունը:

5. Նկարագրե՛ք լուսավորության և գիտության զարգացման գործընթացը XIX դարի առաջին կեսին:

6. Ներկայացրե՛ք ռուս ճանապարհորդներին, նշե՛ք նրանց դերը աշխարհագրական գիտության ու աշխարհագրական հայտնագործությունների գործում:

7. Ի՞նչ նվաճումների հասավ ռուսական ճարտարապետությունը և քանդակագործությունը դարի առաջին կեսին:

8. Պատմեցե՛ք Ռուսաստանի ժողովուրդների մշակույթի մասին:

ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏՈՒՅՑՈՐՄՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

1. Ինչպե՞ս էք պատկերացնում Աղատաղրման դարաշրջան հասկացությունը և ճորտատիրական իրավունքի վերացման նշանակությունը:

2. Գնահատե՛ք Ալեքսանդր Երկրորդ Աղատարարին և ի՞նչ գիտեք նրա քաղաքական դիմանկարի մասին:

3. Ի՞նչ նախագծեր մշակվեցին ճորտատիրական իրավունքի վերացման մասին ռուսական Հասարակական-քաղաքական մտքի տարբեր ներկայացուցիչների կողմից և ձեր մոտեցումը դրանց նկատմամբ:

4. Գնահատե՛ք ճորտատիրական իրավունքի վերացման մասին կայսերական հրովարտակը և 1861 թ. փետրվարի 19-ի կանոնադրությունը:

5. Ինչպե՞ս էք պատկերացնում ճորտատիրական իրավունքի մնացուկների պահպանման մասին հասկացությունը:

6. Ի՞նչ իրավունքներ ստացան գյուղացիները, ի՞նչպես բաժանվեցին վարելահողերը և հանդակները կալվածատերերի և գյուղացիների միջև:

7. Ինչպե՞ս անցկացվեց Հողի ետզնումը գյուղացիների կողմից:

8. Գնահատե՛ք Ա. Գերցենի ու Ն. Չերնիշևսկու հասարակության վերակառուցման ուղիների մասին ուսմունքը և բացատրե՛ք, թե ինչու՞ էր այն անիրագործելի իբրև սոցիալիստական ուտոպիա:

9. Հիմնավորե՛ք, թե ինչու՞ էր անհրաժեշտ Ալեքսանդր Երկրորդի կառավարությանը անցկացնել վարչական (դեմստվային և քաղաքային), դատական, ռազմական վերափոխումներ, դրանց նշանակությունը:

10. Բացատրե՛ք Ա. Գերցենի («Կոլոկոլի») և Ն. Չերնիշևսկու («Սովրեմեննիկի») ուսմունքների ընդհանրությունը և տարբերությունը:

11. Ինչու՞ գյուղացիությունը ճորտատիրական իրավունքի ազատագրումից հետո երկրում հասարակական-քաղաքական շարժումը վերելք ապրեց:

**ՌՈՒՍԱՍՏԱՆՑԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ**

1. Նշե՛ք կայսերական Ռուսաստանի արտաքին քաղաքակա-
նությունների գլխավոր ուղղությունները XIX դարի երկրորդ կեսին:

2. Ի՞նչ նպատակներ էր հետապնդում կայսերական Ռուսաս-
տանը Ղազախստանը և Միջին Ասիան նվաճելու գործընթացում:

3. Բացատրե՛ք Ռուսաստանի հետապնդած արտաքին քաղա-
քական նպատակները Սիրիում և Հեռավոր Արևելքում:

4. Ինչպե՞ս փոխվեց Ռուսաստանի միջազգային դրությունը և
արտաքին քաղաքականությունը Ղրիմի պատերազմից հետո:

5. Ե՞րբ և ինչպե՞ս Ռուսաստանն ազատվեց Փարիզի հաշտու-
թյան պայմանագրի ամենածանր հոդվածներից:

6. Նշե՛լ այն ժողովուրդներին, որոնք ապրում էին Բալկանյան
թերակղզում և ինչպիսի՞ն էր նրանց դրությունը Օսմանյան կայս-
րության տիրապետության տակ:

7. Ինչպիսի՞ն էր ռուսական հասարակության վերաբերմունքը
սլավոնական ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի
նկատմամբ:

8. Որո՞նք են ռուս-թուրքական 1877-1878 թթ. պատերազմի
պատճառները: Պատմեցե՛ք պատերազմի ընթացքի և նրա արդ-
յունքների մասին:

9. Ինչու՞ Ռուսաստանին և Բալկանյան ժողովուրդներին չհա-
ջողվեց լրիվ չափով օգտվել հաղթանակի արդյունքներից:

10. Գնահատե՛ք Սան-Ստեֆանոյի պայմանագիրը Բեռլինի
դաշնագրի հետ: Ինչպիսի՞ փոփոխություններ մտցրեց Բեռլինի վե-
հաժողովը:

11. Ինչպիսի՞ երկու ռազմաքաղաքական հակադիր խմբավո-
րումներ ստեղծվեցին XIX դարի վերջին քառորդում Եվրոպայում:

**ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻՏՏՔԸ ԿԱՅՄԵՐԱԿԱՆ
ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ**

1. Նշե՛ք նարոդնիկության գաղափարախոսության ձևավորման
սոցիալ-տնտեսական ու քաղաքական գործոնները: Ի՞նչ ուղղու-
թյուններ (հոսանքներ) ձևավորվեցին նարոդնիկության շարժման
մեջ:

2. Ի՞նչ ընդհանուր նպատակներ էին հետապնդում նարոդնիկ-
ների տարբեր հոսանքները և ինչպիսի՞ ուղիով էր նրանցից յուրա-
քանչյուրը ձգտում հասնել հետապնդած նպատակին:

3. Ինչու՞ նարոդնիկների ուսմունքը սոցիալիստական ուտոպիա
էր, անիրագործելի տեսություն:

4. Ի՞նչ էր նշանակում «դեպի գյուղ» ժողովրդագնացությունը, և
ինչու՞ XIX դ. 70-ական թթ. հեղափոխականներին անվանեցին նա-
րոդնիկներ:

5. Նշե՛ք «Զեմլյա ի վոյսյա» ու «Նարոդնայա վոյսյա» նարոդնի-
կական կազմակերպությունների ծրագրերի մարտավարության և
ռազմավարության ընդհանրությունը և տարբերությունը:

6. Գնահատե՛ք քաղաքական ահաբեկչության մարտավարու-
թյունը և դրա հետևանքները:

7. Պատմե՛ք Ալեքսանդր Երկրորդի դեմ կազմակերպված նարոդ-
նիկների մահափորձերը: Հիմնավորե՛ք 1881 թ. մարտի 1-ի քաղաքա-
կան ահաբեկչության քաղաքական վնասակարությունը:

8. Գնահատե՛ք հեղափոխական նարոդնիկական շարժումը,
տարբերե՛ք լիբերալ նարոդնիկներից:

9. Ինչպե՞ս եք գնահատում Մ. Լորիս-Մելիքովի «Սրտի և մտքի»
դիկտատուրան, ո՞րն էր դրա էությունը և հակատագիրը:

10. Ե՞րբ և ինչպե՞ս ձևավորվեց բանվոր դասակարգը Ռուսաս-
տանում: Ինչու՞ է Մորոզովյան գործադուլը տարբերվում Ռու-
սաստանի նախորդ գործադուլներից: Նշե՛ք նրա նշանակությունը:

11. Բնութագրե՛ք առաջին բանվորական կազմակերպություն-
ները, նրանց գործունեությունը և ծրագրերը: Ինչու՞ էին նրանք
տարբերվում նարոդնիկական կազմակերպություններից:

12. Ինչու՞ մարքսիզմը մինչև XIX դարի 80-ական թթ. թույլ էր
տարածված Ռուսաստանում:

13. Ո՞վ, ե՞րբ, և որտե՞ղ ստեղծեց ռուսական առաջին մարքսիս-
տական խումբը, ինչպիսի՞ն էր նրա ծրագրի բովանդակությունը:

14. Բնութագրե՛ք մարքսիստական առաջին խմբակները:

15. Ինչու՞ էին տարբերվում Գ. Պլեխանովի մարքսիստական
հայացքները հեղափոխական և լիբերալ նարոդնիկության հայացք-
ներից:

16. Ե՞րբ սկսվեց Վ. Լենինի (Ուլյանովի) հեղափոխական գործու-
նեությունը, բացատրե՛ք «Պետերբուրգի բանվոր դասակարգի ազա-
տագրության պայքարի միության» նպատակները:

17. Ինչու՞ գաղափարական վճռական պայքար ծավալվեց մարքսիստների, լիբերալ նարոդնիկների, լեգալ մարքսիստների և էկոնոմիստների միջև:

18. Ներկայացրե՛ք լիբերալ-ազատական հոսանքը և պահպանողական գաղափարախոսությունը ուսական հասարակական-քաղաքական մտքի պատմության մեջ:

19. Ինչպիսի՞ն էր ուսական ուղղափառ եկեղեցու դերը ուսական հասարակական-քաղաքական կյանքում XIX դարի երկրորդ կեսին:

ՌՈՒՍԱԿԱՆ ՈՍԿԵԴԱՐՑԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈՒ ՏԵՆՆԻԿԱՅԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ XIX Դ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

1. Ինչու՞ է ուսական մշակույթը ստացել ոսկեդարյան անունը: Նշե՛ք ուս նշանավոր գրողներին, հիմնավորե՛ք նրանց գեղարվեստական աշխատությունների համաշխարհային հնչեղությունը:

2. Նշե՛ք ուսական ազգային արվեստի համամարդկային կոթողները: Նշե՛ք նշանավոր երաժիշտների, գեղանկարիչների, դերասանների, ճարտարապետների, քանդակագործների անուններ:

3. Հիմնավորե՛ք ուս ճանապարհորդների աշխարհագրական հայտնագործությունների նշանակությունը:

4. Ի՞նչ նվաճումների հասավ ուսական գիտությունը և տեխնիկական դարի երկրորդ կեսին:

5. Ներկայացրե՛ք Ռուսաստանի ժողովուրդների դերը մշակույթի, գիտության ու տեխնիկայի զարգացման գործում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐ

«Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа», ч. 1-3, М., 1833-1837.

«Письма графа М. М., Сперанского к Х. И. Лазареву», Спб, 1864.

Юзефович Т. П., Договоры России с Востоком, Спб, 1869.

«Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году», М., 1896.

Эзов Г. А., Сношения Петра Великого с армянским народом, Спб, 1898.

Документы опровергают. Против фальсификации истории русско-китайских отношений, М., 1982.

«Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում» պրոֆ. Ջ. Ս. Կիրակոսյանի խմբագրությամբ եր., 1972:

ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՏԱՁՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Глинка С. Н., Описание переселения армян аддербиджанских в пределы России, М., 1831.

Глинка С. Н., Обозрение истории армянского народа, М., 1832.

Шопен И., Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи, Спб., 1852.

Дубровин Н. Ф., История войны и владычества русских на Кавказе, тт. 1-4, Спб., 1871-1886.

Потто В., Кавказская война в отдельных очерках, эпизодах, легендах и биографиях, т. 1-3, Спб., 1886-1887.

Жигарев С., Русская политика в восточном вопросе, т. 1-2, М., 1896.

Татищев С. С., Император Александр II Его жизнь и царствование, т. 1-2, Спб, 1903.

Нечкина М. В., Движение декабристов т. 1-2, М., 1955.

Тарле Е. В., Крымская война т. 1-2, М-Л., 1960.

«История СССР», т. IV-V М., 1967-1968.

Зайончковский П. А., Отмена крепостного права в России, М., 1968.

Ш. М. Мунчаев, Политическая история Российского государства, М., 1998.

А. С. Орлов, В. А. Георгисв, Н. Г. Георгиева, Т. А. Самохина, История России, М., 2002.

Александр Боханов, Император Александр III, М., 2004.

Н. И. Павленко, И. Л. Андреев, В. А. Федоров, «История России с древнейших времен до 1861 года», М., 2006.

Տարլե Ե. Վ., Նապոլեոնի արշավանքը Ռուսաստան 1812 թ., Երևան, 1939:

Պարսամյան Վ. Ա., Ա. Ս. Գրիբոյեդովը և Հայ-ռուսական Հարաբերությունները, Երևան, 1947:

Ներսիսյան Մ. Գ., Դեկարրիստները Հայաստանում, Երևան, 1958:

Պողոսյան Ա. Մ., Ղրիմի պատերազմի կովկասյան ռազմաճակատը և Հայերի մասնակցությունը, Երևան, 1958:

Զ. Տ. Գրիգորյան, Դասախոսություններ ՍՍՀՄ պատմության (1801-1861 թթ.) Երևան, 1975:

Ա. Զ. Մանֆրեդ, Նապոլեոն Բոնապարտ, Երևան, 1975:

Մ. Մուրադյան, Է. Մինասյան, Ռուսաց ղիվանագիտությունը միջազգային Հարաբերությունների Համակարգում (XVIII-XIX դդ.) Երևան, 2005:

ՄԻՔԱՅԵԼ ԱԶԱՏԻ ՄՈՒՐԱԳՅԱԼ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱԼ

ՀԻՄԱՀԱՐՑԵՐ

(ՏԱՍԻՆՆԵՐՈՐԴ ԴԱՐ)

Կազմի և համ. ձևավորումը՝

Կարինե Սարգսյանի

Ստորագրված է տպագրության 17. 12. 2011 թ.:

Չափանք՝ 70x100 ¹/₁₆: Թուղթ՝ օֆսեթ:

Տպարանակ՝ 500:

ԵՊՀ տպագրատուն, Երևան, Արուսյան 52